Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԳԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ВИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

И. А. ГОНЧАРОВ

ОБЛОМОВ

ПЕРЕВОД
ЕРВАНДА ТЕР-МИНАСЯНА

ИЗДАТЕЛЬСТВО «СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН — 1981

Ի. Ա. ԳՈՆՉԱՐՈՎ

ՕԲԼՈՄՈՎ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1981

ԳՄԴ 84.Ռ1
Գ 776

Գոնչարով, Ի. Ա.
Գ 776 ՕԲԼՈՄՈՎ: Վեպ (թարգմ. Ե. Տեր-Միհասյան.—Եր.: Սովետ. գրող, 1981.— 648 էջ.— (Ռուս դասականների գ-րան).

«Ռուս դասականների գրադարանի» սույն հատորը ներկայացնում է ռուս գրականության ռեալիստական արձակի վարպետ Ի. Ա. Գոնչարովի «Օբլոմով» նշանավոր վեպը (1859 թ.)։ Այդ վեպը արտահայտում է ռուսական հասարակության հակաճորտատիրական ձգտումները, ռուսական կյանքի լճացումը, այդ կյանքն անհրաժեշտաբար բարեփոխելու գիտակցության արթնացումը։ Ն. Ա. Դոբրոլյուբովը այդ վեպը համարել է դատավճիռ ճորտատիրական կարգերին, իսկ Օբլոմովի կերպարը տիպական՝ հետամնաց իրականության, քարացած հոգեբանության և պարազիտային գոյության համար։

Գ 4603010100 (607) / 705 (01) 81 — 81 «Տ»
ISBN 5-250-00-000-0

ԳՄԴ 84, Ռ1
Գ1

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1981 թ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Գորոխովայա փողոցում, մեծ տներից մեկում, որի բնակչությունը կբավարարեր մի ամբողջ գավառական քաղաքի, առավոտյան իր բնակարանում անկողնում պառկած էր Իլյա Իլյիչ Օբլոմովը։

Դա երեսուներկու-երեսուներեք տարեկան մի մարդ էր, միջահասակ, հաճելի արտաքինով, մուգ գորշ աչքերով, բայց որի դիմագծերում բացակայում էր որևէ որոշակի գաղափար, որևէ կենտրոնացվածություն։ Միտքն ազատ թռչունի պես շրջում էր նրա դեմքին, ճախրում աչքերում, նստում կիսաբաց շրթունքներին, թաքնվում ճակատի ծալքերում, ապա բոլորովին կորչում, և ամբողջ դեմքի վրա ջերմորեն սփռվում էր անհոգության հավասար լույսը։ Անհոգությունը դեմքից անցնում էր մարմնի ողջ կեցվածքին, մինչև անգամ՝ խալաթի ծալքերին։

Երբեմն նրա հայացքը մթնում էր կարծես հոգնածության կամ ձանձրույթի արտահայտությունից, բայց ոչ հոգնածությունը, ոչ էլ ձանձրույթը չէին կարող թեկուզ մի րոպեով նրա դեմքից քշել մեղմությունը, որը ոչ միայն դեմքի, այլև ամբողջ հոգու տիրապետող և հիմնական արտահայտությունն էր, իսկ հոգին այնպես բացահայտ ու պարզ փայլում էր աչքերում, ժպիտի մեջ, գլխի, ձեռքի ամեն մի շարժումի մեջ։ Եվ մակերեսայնորեն դիտող, սառը մարդը, հարևանցի նայելով Օբլոմովին, կասեր. «Պետք է որ բարեհոգի լինի սա»

պա՞րզ։ Մի քիչ ավելի խոր և ավելի համակրելի մարդը, երբ կար դիտելով նրա դեմքը, կհեռանար հաճելի մտորումներով ժպտալով։

Իլյա Իլյիչի դեմքի գույնը ոչ կարմիր էր, ոչ թուխ, ոչ էլ դժգույն, այլ միապաղաղ էր, կամ այդպես թվում էր գուցե այն պատճառով, որ Օբլոմովը իր տարիքին անհամապատասխան մի տեսակ ուռել էր՝ շարժման կամ օդի պակասությունից, գուցե թե մեկից և մյուսից միաժամանակ։ Իսկ ընդհանրապես նրա մարմինը՝ դատելով պարանոցի փայլատ, ծայրահեղորեն սպիտակ գույնից, մանրիկ թմբլիկ ձեռքերից, փափուկ ուսերից, չափազանց քնքշացած էր թվում տղամարդու համար։

Շարժումները, մինչև անգամ, երբ նա հուզված էր լինում, նույնպես զսպվում էին մեղմությամբ և յուրատեսակ նազանիությունից ոչ զուրկ ծուլությամբ։ Եթե դեմքի վրա սփռվում էր հոգուց եկած հոգսի ամպը, հայացքը մշուշապատվում էր, ճակատի վրա ծալքեր էին երևում, սկսվում էր կասկածների, թախծի, երկյուղի խաղը. բայց այդ հուզմունքը հազվադեպ էր որոշակի գաղափարի մեջ քարանում, էլ ավելի հազվադեպ էր դիտավորության փոխվում։ Ամբողջ տագնապը ավարտվում էր հառաչանքով և մարում էր ապատիայի կամ նիրհի մեջ։

Ինչպե՞ս սազում էր Օբլոմովի տնային զգեստը դեմքի անդորր գծերին և քնքշացած մարմնին։ Հագին ուներ պարսկական կտորից մի խալաթ, իսկական արևելյան խալաթ, առանց Եվրոպայի ամենաչնչին ակնարկի, առանց ծոպերի, առանց թավշի, առանց գոտկատեղի, խիստ լայնատարած, այնպես որ նույնիսկ Օբլոմովը կարող էր երկու անգամ փաթաթվել դրանով։ Թևքերը ասիական անփոփոխ մոդայի համաձայն, մատներից դեպի ուսը գնալով, ավելի ու ավելի լայնանում էին։ Թեև այդ խալաթը կորցրել էր իր սկզբնական թարմությունը և տեղ-տեղ իր նախնական բնական փայլը փոխարինել այլ, ձեռքերովի փայլով, բայց այնուամենայնիվ դեռ պահպանում էր արևելյան գույների պայծառությունն ու գործվածքի ամրությունը։

Օբլոմովի աջքին խալաթն անհամար անգնահատելի արժանիքներ ուներ. փափուկ էր, ճկուն, մարմինն այն չէր

զգում իր վրա, իբրև մի հնազանդ սարուկ, ենթարկվում էր մարմնի ամենափոքրիկ շարժումին։

Օբլոմովը տանը միշտ առանց փողկապի և առանց բաճկոնի էր, որովհետև սիրում էր լայնարձակություն ու լիառատություն։ Նրա մաշիկները երկար էին, փափուկ ու լայն. երբ նա, առանց նայելու, ոտքերն անկողնից հատակին էր դնում, ապա անպատճառ միանգամից ընկնում էր դրանց մեջ։

Գառիելը Իլյա Իլյիչի համար ոչ անհրաժեշտություն էր, ինչպես հիվանդի կամ այն մարդու համար, որ քնել է ուզում, ոչ պատասխանատվություն, ինչպես հոգնածի համար, ոչ հաճույք, ինչպես ծույլի համար. դա նորմալ վիճակ էր։ Երբ նա տանն էր,— իսկ նա գրեթե միշտ տանն էր լինում,— միշտ պառկած էր, և միշտ միևնույն սենյակում, որտեղ մենք գտանք նրան, և որը նրան ենչարան ու քնդունարան էր ծառայում։ Նա երեք սենյակ էլ ուներ, բայց հազվադեպ էր այդ սենյակները մտնում, գուցե առավոտները, այն էլ ոչ ամեն օր՝ երբ սպասավորն ավլում էր նրա առանձնասենյակը, մի բան, որ ամեն օր չէր արվում։ Այդ սենյակներում կահ-կարասին ծածկված էր ծածկոցներով, վարագույրները քաշած էին թեղած։

Սենյակը, որտեղ պառկած էր Իլյա Իլյիչը, առաջին հայացքից հիանալի զարդարված էր թվում։ Այնտեղ դրված էր կարմիր փայտից պատրաստված բյուրոն, մետաքսե կտոր քաշած երկու բազմոց, գեղեցիկ առաջակալներ, որոնց վրա գործված էին բնության մեջ գոյություն չունեցող թռչուններ ու պտուղներ։ Այնտեղ կային մետաքսե վարագույրներ, գորգեր, մի քանի նկար, բրոնզ, հախճապակի և բազմաթիվ գեղեցիկ մանրուք։

Բայց աչքով ճաշակ ունեցող մարդու փորձված աչքը, աչատեղ եղած բոլոր բաների վրա մի թռուցիկ հայացք նետելով, կկարդար միայն անխուսափելի պատշաճավորությունների decorum-ը[1] մի կերպ պահպանելու ցանկություն՝ միայն թե կարողանար դրանցից գլուխն ազատել։ Օբլոմովն, իհարկե, միմիայն այդ մասին էր հոգում, երբ կարգի էր բերում

[1] Արտաքին տեսք (լատ.)։

իր առանձնասենյակը։ Նուրբ ճաշակը չէր բավարարվի կարմիր փայտից շինած այդ ծանր, անշնորհք աթոռներով, երեքուն գրադարակներով։ Բազմոցներից մեկի թիկնակը կախ էր ընկել, սոսնձած տախտակը տեղ-տեղ պոկվել էր։

Ճիշտ նույն բնույթն ունեին և նկարները, և սկահակները և մանրուքը։

Սակայն տերն ինքն իր առանձնասենյակի կահավորությանը այնպես սառը և ցրված էր նայում, կարծես աչքերով հարցնում էր. «Ո՞վ է այս ամենը քարշ տվել ու տեղավորել այստեղ»։ Իր սեփականության վերաբերյալ Օբլոմովի ունեցած այդպիսի սառը հայացքից, գուցե նաև նույն առարկայի մասին նրա սպասավոր Զախարի ունեցած էլ ավելի սառը հայացքից առանձնասենյակի տեսքը, եթե ամեն բան մի փոքր ավելի ուշադիր դիտեինք, ապշեցնում էր այստեղ տիրող թափթփվածությամբ ու անփութությամբ։

Պատերին, նկարների շուրջ ժանեկաձև քանդակվել էր փոշով լցված սարդոստայնը. հայելիները՝ առարկաներն արտացոլելու փոխարեն, ավելի շուտ կարող էին ծառայել իբրև տախտակներ՝ փոշու մեջ հիշելու համար որևէ նշում անելու։ Գորգերի վրա բծեր կային։ Բազմոցին ընկած էր մի մոռացված սրբիչ. հազվագյուտ առավոտ էր լինում, որ սեղանին երեկվա ընթրիքից աղամանով ու կրծած ոսկորով ափսե կամ հացի կտորներ մնացած չլինեին։

Եթե չլիներ այդ ափսեն կամ հենց նոր ծխած ծխամորճը՝ անկողնին հենած, կամ էլ նրա վրա պառկած տերն ինքը, ապա կարելի էր կարծել, որ այստեղ ոչ ոք չի ապրում,— այնպես էր ամեն ինչ փոշոտվել, խունացել և առհասարակ զուրկ դարձել մարդու ներկայության կենդանի հետքերից։ Ճիշտ է, գրադարակների վրա երկու-երեք բացած լրագիր էր ընկած, բյուրոյի վրա նաև փետրագրիչներով թանաքամաններ կային, բայց գրքերի բաց երեսները ծածկվել էին փոշով ու դեղնել. երևում էր, որ վաղուց էին դեն գրել այդ գրքերը. լրագրի համարը անցյալ տարվա էր, իսկ թանաքամանից, եթե նրա մեջ փետրագրիչը թաթախեիք, թերևս միայն վախեցած ճանճ տզզալով դուրս պրծներ։

Իլյա Իլյիչը, հակառակ սովորության, զարթնեց շատ վաղ, ժամը ութին։ Նա ինչ-որ բանով սաստիկ մտահոգված էր։

Դեմքի վրա փոփոխակի երևան էր գալիս ոչ այն է երկյուղ, ոչ այն է թախիծ ու սրտնեղություն։ Երևում էր, որ նրան հաղթահարում էր ներքին պայքարը, իսկ միտքը դեռ օգնության չէր հասնում։

Բանն այն էր, որ Օբլոմովը նախորդ օրը գյուղից, իր ստարոստայից անախորժ բովանդակությամբ նամակ էր ստացել։ Հայտնի է, թե ինչ անախորժություններ մասին կարող է գրել ստարոստան. անբերություն, ապառիկներ, եկամտի նվազում և այլն։ Թեև ստարոստան անցյալ տարի էլ, նախանցյալ տարի էլ իր բարինին ճիշտ նույն-նամակներն էր գրել, բայց այս վերջին նամակը այնպիսի ուժեղ ազդեցություն գործեց, ինչպես ամեն մի անախորժ անակնկալ։

Հե՞շտ բան է։ Պետք էր մտածել ձեռք առնելիք միջոցների մասին։ Սակայն, պետք է արդարացի լինել Իլյա Իլյիչի՝ իր գործերի մասին ունեցած հոգացողության վերաբերյալ։ Հենց նա մի քանի տարի առաջ ստարոստայից ստացավ առաջին անախորժ նամակը, արդեն սկսեց մտքում իր կալվածքը կառավարելու կարգի մեջ զանազան փոփոխություններ ու բարելավումներ մտցնելու պլան ստեղծել։

Այդ պլանի համաձայն ենթադրվում էր զանազան նոր տնտեսական, ոստիկանական և այլ միջոցառումներ մտցնել. Բայց պլանը դեռ հեռու էր ամբողջությամբ կշռադատված լինելուց, իսկ ստարոստայի անախորժ նամակներն ամեն տարի կրկնվում էին, նրան գործունեության էին դրդում և, հետևաբար, խանգարում էին հանգիստը։ Օբլոմովը գիտակցում էր պլանը վերջացնելուց առաջ որևէ վճռական բանի ձեռնարկելու անհրաժեշտությունը։

Զարթնելուն պես նա մտադրվեց վեր կենալ, լվացվել և թեյ խմելուց հետո մի լավ մտածել, որոշ բաներ կշռադատել, գրի առնել և ընդհանրապես այս գործով զբաղվել ինչպես հարկն է։

Նախ ժամի շափ նա պառկած էր դեռևս տանջվելով այդ մտադրությունից, բայց հետո մտածեց, որ կկարողանա դա անել նաև թեյից հետո, իսկ թեյը կարելի է խմել, ըստ սովորության, անկողնում, մանավանդ որ ոչինչ չի խանգարում նաև պառկած մտածել։

Այդպես էլ արեց։ Թեյից հետո նա արդեն մի քիչ բարձ-

բացում իր անկողնից և քիչ էր մնում վեր կենար. նայելով մաշիկներին, նա նույնիսկ սկսեց մի ոտքն անկողնից մեկնել դեպի դրանք, բայց իսկույնեանթ նորից ետ քաշեց։

Խփեց ժամը ինն անց կեսը, Իլյա Իլյիչը ցնցվեց։

— Այս ի՞նչ եմ անում իսկապես,— ասաց նա սրտնեղությամբ, բարձրաձայն։— Հարկավոր է խիղճ ունենալ. ժամանակն է գործի անցնել։ Միայն ազատություն տուր քեզ և...

— Զախա՞ր,— գոչեց նա։

Այն սենյակից, որը միայն մի փոքրիկ միջանցքով էր բաժանվում Իլյա Իլյիչի առանձնասենյակից, սկզբում լսվեց կարծես շղթայված շան գոմռոց, ապա ինչ-որ տեղից ցած թռչող ոտքերի ձայն։ Այդ Զախարն էր, որ ցած թռավ իր պառկելատեղից, որտեղ նա սովորաբար անց էր կացնում ժամանակը՝ նստած դիրքով նինջի մեջ ընկղմված։

Սենյակ մտավ տարիքով մի մարդ, հագին գորշ սերթուկ, թեի տակը պատռած, որտեղից դուրս էր ցցվել շապկի կտորը, նույնիսկ գորշ բաճկոն՝ պղնձե կոճակներով. ծնկի նման լերկ գանգով և անծայրածիր լայն ու խիտ, չալ ընկած շեկ այտամորուսներով, որոնցից յուրաքանչյուրը բավական կլիներ երեք մորուսի։

Զախարը չէր աշխատում փոխել ոչ միայն աստծուց իրեն տրված կերպարանքը, այլև իր զգեստը, որով ման էր գալիս գյուղում։ Նրա շորերը կարվում էին գյուղից բերված օրինակի համեմատ։ Գորշ սերթուկն ու բաճկոնը նրան դուր էին գալիս նաև այն պատճառով, որ այդ կիսահամազգեստային շորը իրեն հիշեցնում էր այն շքազգեստը, որ նա երբեմն կրում էր իր հանգուցյալ տերերին՝ եկեղեցի կամ հյուր գնալիս ուղեկցելու ժամանակ, իսկ շքազգեստը նրա հիշողություններում Օբլոմովների տան արժանիքի միակ վկան էր։

Էլ ուրիշ ոչ մի բան ծերունուն չէր հիշեցնում խորն ընկած գյուղի աղայական լայն ու հանգիստ կենցաղը։ Հին տերերը մեռել էին, ընտանեկան նկարները մնացել էին տանը և, երևի, հիմա ընկած են ձեղնահարկում. ընտանիքի հին կենցաղի և կարևորության ավանդույթներն ավելի ու ավելի մարում կամ ապրում են միմիայն սակավաթիվ, հենց գյուղում էլ մնացած ծերունիների հիշողության մեջ։ Այդ պատճառով էլ Զախարի համար թանկ էր գորշ սերթուկը. դրա մեջ, մեկ էլ

բարինի դեմքի ու շարժուձևերի մեջ պահպանված մի քանի հատկանիշներում, որ նրա ծնողներին էին հիշեցնում, և նրա քմահաճույքների մեջ, որոնց առթիվ նա և ինքն իրեն, և բարձրաձայն թեև գոմռում էր, բայց որոնք նա, այնուամենայնիվ, ներքուստ հարգում էր որպես աղայական կամքի, տիրական իրավունքի արտահայտություն, նա տեսնում էր անցած-գնացած վեհության թույլ ակնարկները։

Առանց այդ քմահաճույքների նա կարծես չէր զգում, որ իր գլխին բարին կա. առանց դրանց ոչ մի բան չէր վերակենդանացնում նրա երիտասարդությունը, գյուղը, որը նրանք թողել էին վաղուց, և ավանդույթներն այդ վաղեմի տան մասին, այն միակ ժամանակագրությունը, որ վարում էին հին ծառաները, ծծմայրերը, դայակները և որը սերնդից սերունդ էր ավանդվում։

Օբլոմովների տունը մի ժամանակ հարուստ և հռչակավոր էր իր կողմերում, բայց հետո, աստված գիտե թե ինչ պատճառով, ավելի ու ավելի աղքատացել, մանրացել էր և, վերջապես, աննկատելի կորել ազնվականական ոչ հնամենի տների մեջ։ Միմիայն տան սպիտակահեր ծառաներն էին պահպանում և միմյանց ավանդում անցյալի անձնվիրական հիշողությունը, թանկ գնահատելով այն որպես մի սրբություն։

Ահա ինչու Զախարն այնպես սիրում էր իր գորշ սերթուկը։ Գուցե իր այտամորուսներն էլ էր նա այն պատճառով թանկ գնահատում, որ իր մանկության ժամանակ այդ վաղեմի, արիստոկրատական զարդարանքով շատ հին սպասավորներ էր տեսել։

Իլյա Իլյիչը մտքերի մեջ ընկղմված, երկար ժամանակ Զախարին չէր նկատում։ Զախարը լուռ կանգնած էր նրա առաջ։ Վերջապես նա հազաց։

— Ի՞նչ կա,— հարցրեց Իլյա Իլյիչը։

— Չէ՞ որ դուք կանչեցիք։

— Կանչեցի՞։ Այդ ինչու եմ կանչել՝ չեմ հիշում,— պատասխանեց նա, ձգվելով։— Գնա առայժմ քո սենյակը, իսկ ես կհիշեմ։

Զախարը գնաց, իսկ Իլյա Իլյիչը շարունակում էր պառկած մնալ և մտածել անիծյալ նամակի մասին։

Անցավ մի քառորդ ժամ։

— Դեհ, բավական է պառկել,— ասաց նա։— Չէ՞ որ պետք է վեր կենալ... բայց արի մի անգամ էլ ուշադրությամբ կարդամ ստարոստայի նամակը, իսկ հետո արդեն վեր կկենամ։ Զախա՜ր։

Դարձյալ նույն թռիչքը և ավելի ուժգին գոմռոց։ Զախարը ներսն մտավ, իսկ Օբլոմովը նորից ընկղմվեց մտքերի մեջ։ Զախարը կանգնեց մեկ-երկու րոպե, անբարեհաճ, մի քիչ ծուռ նայելով բարինին և վերջապես դիմեց դեպի դուռը։

— Այդ ո՞ւր ես գնում,— հանկարծ հարցրեց Օբլոմովը։

— Դուք ոչինչ չեք ասում, էլ ինչի՞ զուր տեղը կանգնեմ այստեղ,— խռպոտ ձայնով ասաց Զախարը, ուրիշ ձայն չունենալու պատճառով. իր ասելով նա ձայնը կորցրել էր շներով որս անելու ժամանակ, երբ գնացել էր ծեր բարինի հետ և երբ ուժեղ քամին իբր փչել էր հենց նրա կոկորդին։

Նա կանգնած էր սենյակի մեջտեղը, կիսաշրջված և շարունակում էր ծուռ նայել Օբլոմովին։

— Իսկ քո ոտքերը չորացե՞լ են, ինչ է, որ չես կարող կանգնել։ Տեսնում ես, մտահոգված եմ, դու էլ սպասիր։ Այնտեղ պառկելուց չե՞ս կշտացել։ Գտիր այն նամակը, որ ես երեկ ստացա ստարոստայից։ Որտե՞ղ ես պահել։

— Ի՞նչ նամակ։ Ես ոչ մի նամակ չեմ տեսել,— ասաց Զախարը։

— Դու ինքդ նամակաբերից ընդունեցիր այն. մի կեղտոտ նամակ էր։

— Որտե՞ղ եք դրել, ես ի՞նչ իմանամ,— ասում էր Զախարը՝ ձեռքով շոշափելով թղթերն ու սեղանի վրա թափված զանազան իրերը։

— Դու երբեք ոչինչ չես իմանում։ Նայիր այնտեղ, զամբյուղի մեջ։ Կամ բազմոցի ետև ընկած չլինի՞։ Այ, բազմոցի թիկնակը մինչև այժմ նորոգված չէ. ի՞նչ է գնում քեզնից հյուսն կանչել և նորոգել տալ։ Չէ՞ որ դու ես կոտրել։ Ոչ մի բանի մասին չես մտածում։

— Ես չեմ կոտրել,— պատասխանում է Զախարը։— Ինքն իրեն է կոտրվել. հո դարերով չի մնալու. պետք է մի օր կոտրվի։

Իլյա Իլյիչը հարկ չհամարեց հակառակն ապացուցել։

— Գտա՞ր թե չէ,— հարցրեց նա միայն։

— Ահա ինչ-որ նամակներ։

— Դրանք չեն։

— Դե, էլ ուրիշը չկա,— ասում էր Զախարը։

— Լավ, գնա,— անհամբերությամբ ասաց Իլյա Իլյիչը։— Ես վեր կկենամ, ինքս կգտնեմ։

Զախարը գնաց իր սենյակը, բայց այն է, ուզում էր հենվել պառկելատեղին՝ վրան թռչելու համար, որ նորից լսվեց շտապ կանչը.

— Զախար, Զախա՜ր։

— Տեր աստված,— փնթփնթում էր Զախարը, նորից ուղևորվելով դեպի առանձնասենյակ։— Այս ի՞նչ տանջանք է։ Չեմ էլ մեռնում պրծնեմ։

— Ի՞նչ եք ուզում,— ասաց նա, մի ձեռքով բռնելով առանձնասենյակի դուռը և իբրև անբարեհաճության նշան՝ այնպես ծուռ նայելով Օբլոմովին, որ կես աչքով էր տեսնում նրան, իսկ բարինին երևում էր միայն մի անծայրածիր այտամորուսը, որից ուր-որ է, թվում է, երկու-երեք թռչուն դուրս կթռչի։

— Թաշկինակ տուր, շո՜ւտ։ Ինքդ պետք է կռահեիր, չե՞ս տեսնում,— խիստ կերպով նկատեց Իլյա Իլյիչը։

Զախարը ոչ մի առանձին տհաճություն կամ զարմանք չարտահայտեց բարինի այդ հրամանի կամ կշտամբանքի առթիվ, իր կողմից գտնելով, երևի, որ թե մեկը և թե մյուսը շատ բնական է։

— Է՜, ո՞վ գիտե, թե որտեղ է թաշկինակը,— փնթփնթում էր նա՝ շրջան կատարելով սենյակում և շոշափելով յուրաքանչյուր աթոռ, թեև այնպես էլ կարելի էր տեսնել, որ աթոռների վրա ոչինչ չկա։

— Ամեն ինչ կորցնում եք,— նկատեց նա, բաց անելով հյուրասենյակի դուռը, որպեսզի տեսնի, թե այնտեղ չի՞ արդյոք։

— Ո՞ւր ես գնում, այնտեղ փնտրիր։ Երեկ չէ առաջին օրվանից այնտեղ չեմ եղել։ Դե շուտ արա,— ասում էր Իլյա Իլյիչը։

— Որտե՞ղ է թաշկինակը։ Թաշկինակը չկա,— ասում էր

Զախարը, թափահարելով ձեռքերը և բոլոր անկյուններին նայելով։— Ահա,— հանկարծ խռպոտ ձայնով բարկացած ասաց նա,— ձեր տակն է։ Այ, ծայրը դուրս է ցցվել։ Ինքներդ պառկել եք վրան և թաշկինակ եք պահանջում։

Եվ, պատասխանի չսպասելով, Զախարն ուզում էր դուրս գալ։ Օբլոմովն իրեն մի քիչ անհարմար զգաց սեփական սխալի պատճառով։ Նա արագ մի ուրիշ ուղի գտավ՝ Զախարին մեղավոր դուրս բերելու։

— Ինչ մաքրություն է այստեղ. փոշի, կեղտ, տեր իմ աստված։ Այ, այ, անկյունները նայիր, ոչինչ չես անում։

— Թե որ ե՛ս բան չեմ անում...— խոսեց Զախարը վիրավորված ձայնով։— Ջանք եմ թափում, կյանքս չեմ խնայում։ Թե փոշին եմ սրբում, թե համարյա ամեն օր ավլում եմ...

Նա ցույց տվեց հատակի մեջտեղը և այն սեղանը, որի շուրջ Օբլոմովը ճաշում էր։

— Ահա, ահա՜,— ասում էր նա,— ամեն ինչ ավլած է, հավաքած, կարծես հարսանիքի համար... էլ ի՞նչ եք ուզում։

— Իսկ սա ի՞նչ է,— ընդհատեց Իլյա Իլյիչը, ցույց տալով պատերը և առաստաղը։— Իսկ սա՞։ Իսկ սա՞։

Նա ցույց տվեց թե՛ երեկվանից վեր գցած սրբիչը, թե՛ սեղանի վրա մոռացված ափսեն հացի կտորով։

— Դե լավ, դա կվերցնեմ,— ասաց Զախարը, վիշտոտաբար վերցնելով ափսեն։

— Մի՞միայն դա։ Իսկ պատերի փոշի՞ն, իսկ սարդոստայնը...— ասում էր Օբլոմովը, ցույց տալով պատերը։

— Դա ես ավագ շաբթին եմ կարգի բերելու, այդ ժամանակ մաքրում եմ սրբապատկերները, սարդոստայններն էլ սրբում։

— Իսկ գրքերը, պատկերները մաքրե՞լը...

— Գրքերն ու պատկերները ծննդից առաջ, այն ժամանակ Անիսյայի հետ բոլոր պահարանները կարգի կբերենք։ Իսկ հիմա ե՞րբ հավաքենք։ Դուք շարունակ տանն եք նստած։

— Ես երբեմն թատրոն եմ գնում կամ հյուր, ա՛յ այն ժամանակ...

— Դա ի՞նչ մաքրել կլինի, գիշերով...

Օբլոմովը կշտամբանքով նայեց նրան, գլուխը թափահարեց ու հառաչեց, Զախարը անտարբեր կերպով նայեց լուսամուտից դուրս և նույնպես հառաչեց։ Բարինը, կարծես, մտածում էր. «էհ, եղբայր, դու ավելի Օբլոմով ես, քան ես ինքս», իսկ Զախարը քիչ էր մնում մտածեր. «Ուստ ես ասում։ Դու վարպետ ես միայն խորիմաստ ու խղճալի խոսքեր ասելու, իսկ փոշու և սարդոստայնի հետ գործ չունես։

— Հասկանո՞ւմ ես արդյոք,— ասաց Իլյա Իլյիչը,— որ փոշուց ցեց է առաջ գալիս։ Ես երբեմն նույնիսկ փայտոջիլ եմ տեսնում պատի վրա։

— Ինձ մոտ լվեր էլ կան,— անտարբեր պատասխանեց Զախարը։

— Մի՞թե լավ է։ Չէ՞ որ դա զզվելի է,— նկատեց Օբլոմովը։

Զախարը քմծիծաղեց դեմքով մեկ, այնպես որ քմծիծաղը բռնեց նույնիսկ հոնքերն ու այտամորուսները, որոնք դրանից լայնացան, և ամբողջ դեմքով մինչև ճակատը տարածվեց կարմիր բիծը։

—Իսկ ես ինչո՞վ եմ մեղավոր, որ աշխարհում փայտոջիլ կա,— ասաց նա միամիտ զարմանքով։— Մի՞թե ես եմ նրանց հնարել։

— Այդ բոլորը կեղտոտությունից է,— ընդհատեց Օբլոմովը։— Ի՞նչ ես շարունակ փչում։

— Կեղտոտությունն էլ ես չեմ հնարել։

— Քեզ մոտ, ա՛յ այնտեղ, գիշերները մկներ են վազվզում, ես լսում եմ։

— Մկներն էլ ես չեմ հնարել։ Այդ անասուններից, մկներ լինեն թե կատուներ, թե փայտոջիլներ, ամեն տեղ էլ շատ կա։

— Հապա ինչպե՞ս է, որ ուրիշների մոտ ոչ ցեց է լինում, ոչ էլ փայտոջիլ։

Զախարի դեմքին փայլեց անվստահությունը, կամ ավելի լավ է ասել, անդորր վստահությունը, որ այդպիսի բան չի լինում։

— Ինձ մոտ ամեն բանից էլ շատ կա,— ասաց նա համա-

ռորեն,— ամեն մի փայտոջիլի հսկել չես կարող, նրա ետևից ճեղքը չես մտնի։

Իսկ ինքը, կարծես, մտածում էր. «է՜հ, առանց փայտոջիլի էլ քնե՞լ կլինի»։

— Դու ավլի՛ր, աղբն անկյունները հավաքիր և ոչինչ էլ չի լինի,— սովորեցնում էր Օբլոմովը։

— Կհավաքես, իսկ վաղն էլի կգոյանա,— ասում էր Զախարը։

— Չի գոյանա, —ընդհատեց բարինը,— չպետք է գոյանա։

— Կգոյանա, ես գիտեմ,— պնդում էր ծառան։

— Կգոյանա, դու էլ նորից մաքրիր։

— Ո՞նց թե։ Ամեն օր բոլոր անկյունները մաքրե՞մ,— հարցրեց Զախարը։— Այդ ի՞նչ կյանք կլինի որ։ Ավելի լավ է աստված հոգիս առնի։

— Ինչո՞ւ ուրիշների մոտ մաքուր է,— վրա բերեց Օբլոմովը։— Նայիր դիմացդ, Լարիչի մոտ. քեֆդ գալիս է, երբ նայում ես, և ընդամենը մի աղախին ունի...

— Գերմանացիները որտեղի՞ց աղբ կունենան,— հանկարծ վրա բերեց Զախարը։— Հապա մի նայեք, թե նրանք ինչպես են ապրում։ Ողջ ընտանիքը ամբողջ շաբաթ ոսկոր է կրծում։ Սերթուկը հոր ուսերից անցնում է որդուն, իսկ որդուց՝դարձյալ հորը։ Կնոջ և աղջիկների զգեստները կարճլիկ են. բոլորը ոտքները տակն են ծալում էգ սագերի նման... որտեղի՞ց նրանք աղբ կունենան։ Նրանց մոտ չկա այն, ինչ մեզ մոտ է. որ պահարաններում տարիներով ընկած լինի հին մաշված շորերի կույտը կամ ձմեռվա ընթացքում անկյունը հացի կտորներով լցվի... Նրանց մոտ հացի կտորն էլ զուր տեղը ընկած չի մնում. պաքսիմատ են շինում և գործ են ածում գարեջրի հետ։

Զախարը նույնիսկ ատամների արանքից թքեց, դատելով այդպիսի ժլատ կյանքի մասին։

— Հերիք խոսես,— վրա բերեց Իլյա Իլյիչը։— Ավելի լավ է մաքրիր։

— Մեկ-մեկ կմաքրեի էլ, բայց դուք ինքներդ չեք թողնում,— ասաց Զախարը։

— Սկսե՛ց։ Տեսնո՞ւմ եք, ես եմ շարունակ խանգարում։

— Իհարկե, դուք. շարունակ նստած եք տանը. ձեր ներ-

կայությամբ ինչպե՞ս մաքրեմ։ Ամբողջ օրով գնացեք, այն ժամանակ կմաքրեմ։

— Էլի՞ ինչ հնարեցիր՝ գնալ։ Ավելի լավ է՝ դու գնա քո սենյակը։

— Այո, ճիշտ եմ ասում,— պնդում էր Զախարը։— Ա՜յ, թեկուզ հենց այսօր գնայիք տնից, մենք Անիսյայի հետ ամեն ինչ կմաքրեինք, կարգի կբերեինք։ Հլա երկուսով էլ չենք կարող տակից դուրս գալ, պետք է էլի կանայք վարձել, ամեն ինչ լվանալ։

— Է, ի՞նչ օլիններ են՝ կանա՜յք։ Գնա՛ քո սենյակը,— ասում էր Իլյա Իլյիչը։

Նա արդեն փոշմանել էր, որ Զախարին դրդել էր այդ խոսակցությանը։ Նա շարունակ մոռանում էր, որ հենց այդ նույնը առարկային ձեռք տաս, էլ հոգսերից գլուխդ չես ազատի։

Օբլոմովը կուզենար, որ մաքրություն լիներ, բայց նա կուզենար, որ դա արվեր մի կերպ, այնպես, աննկատելի, ինքն իրեն. իսկ Զախարը միշտ վեճ էր սկսում, հենց նրանից սկսում էին պահանջել փոշին սրբել, հատակները լվանալ և այլն։ Այդ դեպքում նա սկսում էր ապացուցել ահագին գլխացավանքի անհրաժեշտությունը տան մեջ, շատ լավ իմանալով, որ այդ բանի միտքը միայն սարսափի մեջ էր գցում իր բարինին։

Զախարը դուրս եկավ, իսկ Օբլոմովն ընկղմվեց մտորմունքի մեջ։ Մի քանի րոպեից էլի կես ժամը խփեց։

— Սա ի՞նչ է,— համարյա սարսափով ասաց Իլյա Իլյիչը։— Շուտով ժամը տասնմեկը կլինի, իսկ ես դեռ չեմ վեր կացել, մինչև հիմա չեմ լվացվել։ Զախա՜ր, Զախա՜ր։

— Ա՜խ, տեր աստված։ Հը՛,— լսվեց նախասենյակից, և ապա հայտնի թռիչքը։

— Լվացվելու պարագաները պատրա՞ստ են,— հարցրեց Օբլոմովը։

— Վաղուց պատրաստ են,— պատասխանեց Զախարը։— Ինչո՞ւ չեք վեր կենում։

— Ինչո՞ւ չես ասում, թե պատրաստ է։ Ես արդեն վաղուց վեր կացած կլինեի։ Դե գնա, ես իսկույն քո ետևից կգամ։ Ես պետք է պարապեմ, ես պիտի նստեմ գրեմ։

Զախարը գնաց, բայց մի րոպեից վերադարձավ դրուած ու յուղոտ տետրակով և թղթի կտորներով։

— Ահա, քանի որ գրելու եք, հաճեցեք հաշիվներն էլ ստուգել, հարկավոր է փող վճարել։

— Ի՞նչ հաշիվներ։ Ի՞նչ փոզ,— տհաճութեամբ հարցրեց Իլյա Իլյիչը։

— Մսավաճառից, կանաչեղեն վաճառողից, լվացարարուհուց, հացավաճառից. բոլորը փող են խնդրում։

— Հոգսը հենց միայն փողն է,— քրթմնջում էր Իլյա Իլյիչը։— Իսկ դու ինչո՞ւ քիչ-քիչ չես տալիս հաշիվները, այլ բոլորը միանգամից։

— Չէ՞ որ դուք էիք ինձ շարունակ դուրս անում. վաղը հա վաղը...

— Է՛, իսկ հիմա էլ չի՞ կարելի մինչև վաղը։

— Ո՛չ։ Շատ են նեղում արդեն, այլևս պարտքով չեն տալիս։ Այսօր ամսի մեկն է։

— Ա՜խ,— թախիծով ասաց Օբլոմովը։— Նո՞ր հոգս։ Գե՜, ի՞նչ ես կանգնել։ Դի՛ր սեղանի վրա։ Ես իսկույն վեր կկենամ, կլվացվեմ և կնայեմ,— ասաց Իլյա Իլյիչը։— Ուրեմն, լվացվելու պարագաները պատրաստ են։

— Պատրաստ են,— ասաց Զախարը։

— Դե՜հ, հիմա...

Նա հենց այն է՝ ուզում էր տնքալով բարձրանալ անկողնում, որ վեր կենա։

— Ես մոռացա ձեզ ասել,— սկսեց Զախարը։— Քիչ առաջ, երբ դուք դեռ հանգստանում էիք, կառավարիչն ուղարկել էր դռնապանին, ասում է՝ անպայման պետք է գուրս գաք... բնակարանը հարկավոր է։

— Դե՜հ, ի՞նչ արած։ Եթե հարկավոր է, ապա, իհարկե, դուրս կգանք։ Ի՞նչ ես օձիքիցս պինդ բռնել։ Արդեն երրորդ անգամ է, որ ասում ես ինձ այդ մասին։

— Իմ օձիքից էլ են բռնում։

— Ասա՛, որ դուրս կգանք։

— Նրանք ասում են՝ մի ամիս կլինի, ասում են, խոստացել եք, բայց դեռ դուրս չեք գալիս. մենք, ասում են, ոմտիկանությանն իմաց կտանք։

— Թո՛ղ իմաց տան,— վճռականորեն ասաց Օբլոմովը։— Մենք հենց ինքներս էլ կտեղափոխվենք, երբ մի քիչ տաքերն ընկնեն, մի երեք շաբաթից։

— Ի՞նչ երեք շաբաթից։ Կառավարիչն ասում է, որ երկու շաբաթից հետո բանվորները գալու են. ամեն ինչ քանդելու են... «Դուրս եկեք, ասում է, վաղը կամ վաղը չէ մյուս օրը...»

— Է-է-է՛։ Զափազա՞նց շտապ է։ Հլա տե՛ս, ի՞նչ է ասում։ Չե՞ք հրամայի արդյոք հենց այժմ։ Իսկ գու չհամարձակվես նույնիսկ հիշեցնել ինձ բնակարանի մասին։ Ես արդեն մի անգամ արգելել եմ քեզ, իսկ դու դարձյալ։ Տես հա՛։

— Բայց ես ի՞նչ կարող եմ անել,— պատասխան տվեց Զախարը։

— Ինչ կարող ես անե՞լ։ Ահա թե ինչո՞վ է ուզում գրու

աղատել ինձանից,— պատասխանեց Իլյա Իլյիչը։— Նա ի՞նձ է հարցնում։ Իմ ի՞նչ գործն է։ Ինձ մի՛ անհանգստացրու, իսկ ինքդ ինչպես ուզում ես՝ այնպես էլ կարգադրիր, միայն թե չտեղափոխվենք։ Չի՛ կարող մի քիչ ջանք թափել բարիների համար։

— Ախր ես ինչպե՞ս կարող եմ կարգադրել, պարոն Իլյա Իլյիչ,— մեղմաձայն խոսաց Զախարը։— Տունն իմը չէ. ուրիշի անից ինչպե՞ս չփոխադրվես, երբ դուրս են անում։ Եթե տունն իմը լիներ, ապա ես մեծ հաճույքով...

— Չի՞ կարելի արդյոք նրանց որևէ կերպ համոզել. «որ՝ մենք ախր ապրում ենք վաղուց, կանոնավոր վճարում ենք»։

— Ասել եմ,— ասաց Զախարը։

— Դե, իսկ նրանք ի՞նչ ասացին։

— Ի՞նչ։ Նրանք էլի իրենցն են կրկնում. «Դուրս եկեք, ասում են, մենք պետք է բնակարանը ձևափոխենք»։ Ուզում են բժշկի և այս բնակարանից մի մեծ բնակարան սարքել տանտիրոջ որդու հարսանիքի առթիվ։

— Ա՜խ, տե՛ր իմ աստված,— սրտնեղությամբ ասաց Օբլոմովը։— Կան չէ՞ այնպիսի էշեր, որոնք ամուսնանում են։

Նա շուռ եկավ մեջքի վրա։

— Դուք մի նամակ գրեք, տեր իմ, տանտիրոջը,— ասաց Զախարը,— գուցե նա ձեզ ձեռք չտար, այլ հրամայեր նոր այն բնակարանը քանդել։

Ջախարն այս ասելիս ձեռքով ցույց տվեց դեպի աջ ինչ-որ տեղ։

— Դե լավ, հենց որ վեր կացա, կգրեմ... դու գնա քո սեյակը, իսկ ես կմտածեմ։ Դու ոչ մի բան անել չգիտես,— ավելացրեց նա,— նույնիսկ այս դատարկ բանը ես ինքս պետք է հոգամ։

Ջախարը գնաց, իսկ Օբլոմովը սկսեց մտածել։

Բայց նա դժվարանում էր, թե ինչի մասին մտածի. արդյոք ստարոստայի նամակի՞ մասին, նոր բնակարան փոխադրվելո՞ւ մասին, թե սկսի հաշիվները տեսնել։ Նա իրեն կորցրել էր կենցաղային հոգսերի հորձանքի մեջ և շարունակում էր պառկած մնալ, մի կողքից մյուս կողքին շուռ գալով։ Միայն երբեմնակի լսվում էին կցկտուր բացականչություններ.— Ա՜խ, աստված իմ։ Կյանքը հանգիստ չի տալիս, ամեն տեղ էլ հասնում է։

Հայտնի չէ, թե նա արդյոք դեռ երկար կմնար այս անվճռականության մեջ, բայց նախասենյակում հնչեց զանգը։

— Արդեն մա՞րդ եկավ,— ասաց Օբլոմովը, փաթաթվելով խալաթի մեջ։— Իսկ ես դեռ չեմ վեր կացել. խայտառակություն՝ ուրիշ ոչինչ։ Տեսնես ո՞վ կլինի այսպես վաղ։

Եվ նա, պառկած, հետաքրքրությամբ դռանն էր նայում։

II

Ներս մտավ քսանհինգ տարեկան մի երիտասարդ, փայլուն առողջությամբ, ծիծաղկոտ այտերով, շուրթերով և աչքերով։ Մարդու նախանձը շարժվում էր նրան նայելիս։

Նա սանրված և հագնված էր անթերի, շլացնում էր դեմքի, սպիտակեղենի, ձեռնոցների և ֆրակի թարմությամբ։ Բաճկոնի վրա կախ էր արված մի գեղեցիկ փոքրիկ շղթա՝ բազմաթիվ մանրագույն զարդերով։ Նա գրպանից հանեց ամենաուրբ բատիստե թաշկինակը, ներշնչեց Արևելքի բուրմունքները, ապա անփույթ կերպով այն քսեց երեսին, փայլուն գլխարկին և թափ տվեց լաքած կոշիկները։

— Ա՜, Վոլկով, բարև ձեզ,— ասաց Իլյա Իլյիչը։

— Բարև ձեզ, Օբլոմով,— խոսեց փայլուն պարոնը, մոտենալով նրան։

— Մի՛ մոտեցեք, մի՛ մոտեցեք, դուք ցրտի՞ց եք գալիս,— ասաց նա։

— Օ՜, փափկակյաց զրգամոլ,— ասում էր Վոլկովը, շուրջը նայելով, թե ուր դնի գլխարկը, և, ամենուր փոշի տեսնելով, ոչ մի տեղ չդրեց. ֆրակի երկու փեշն էլ ետ քաշեց, որ նստի, բայց ուշադրությամբ նայելով բազկաթոռին, մնաց ոտքի վրա կանգնած։

— Դուք դեռ վեր չե՞ք կացել։ Այդ ի՞նչ շլաֆրոկ է ձեր հագին։ Վաղուց դադարել են դրանք հագնել,— ամաչեցնում էր նա Օբլոմովին։

— Սա շլաֆրոկ չէ, այլ խալաթ է,— ասաց Օբլոմովը, (հաճույքով փաթաթվելով խալաթի լայն փեշերի մեջ։

— Դուք առո՞ղջ եք,— հարցրեց Վոլկովը։

— Ի՞նչ առողջ,— հորանջելով ասաց Օբլոմովը։— Վա՜տ եմ։ Արյան խոնումները հոգիս հանեցին։ Իսկ դո՞ւք ինչպես եք։

— Ե՞ս։ Ոչինչ, առողջ եմ և ուրախ, շա՜տ ուրախ,— ըզգացմունքով ավելացրեց երիտասարդը։

— Որտեղի՞ց եք գալիս այդպես վաղ,— հարցրեց Օբլոմովը։

— Դերձակի մոտից։ Նայե՛ք, ֆրակս լա՞վն է,— ասաց նա, պտույտ գալով Օբլոմովի առաջ։

— Հիանալի՜ է։ Կարված է մեծ ճաշակով,— ասաց Իլյա Իլյիչը։— Բայց ինչո՞ւ է ետևից այդքան լայն։

— Սա ռեյտ-ֆրակ է, ձի հեծնելու համար։

— Ա՜, ահա թե ինչ։ Մի՞թե դուք ձի եք հեծնում։

— Ինչպե՞ս չէ։ Հենց այսօրվա համար էլ դիտմամբ պատվիրել եմ ֆրակը։ Չէ՞ որ այսօր մայիսի մեկն է. Գորյունովի հետ գնում ենք Եկատերինհոֆ։ Ա՜խ։ Դուք չգիտե՞ք։ Գորյունով Միշայի աստիճանը բարձրացրել են, դրա համար էլ մենք այսօր աչքի ենք ընկնում,— հրճվանքով ավելացրեց Վոլկովը։

— Ա՜յ թե ինչ,— ասաց Օբլոմովը։

— Նրա ձին աշխետ է,— շարունակում էր Վոլկովը։— Նրանց գնդում աշխետ են, իսկ իմ ձին սևաթույր է։ Դուք ինչպես եք գալու, ոտքո՞վ թե կառքով։

— Ես... ոչ մի կերպ,— ասաց Օբլոմովը։

— Մայիսի մեկին Եկատերինհոֆում չլինե՞լ։ Ի՞նչ եք ասում, Իլյա Իլյիչ,— զարմանքով ասում էր Վոլկովը։— Այնտեղ կլինեն բոլո՞ր։

— Ինչպե՞ս բոլորը։ Ո՛չ, ո՛չ բոլորը,— ծուլությամբ նկատեց Օբլոմովը։

— Եկե՞ք, Իլյա Իլյիչ, հոգյա՞կս։ Սոֆիա Նիկոլաևնան Լիդիայի հետ կառքում երկուսով կլինեն, գիմացը կառքի մեջ տեղ կա. ա՛յ դուք նրանց հետ կլինեք...

— Ո՛չ, ես նստարանի վրա չեմ տեղավորվի։ Բացի այդ ի՞նչ պիտի անեմ ես այնտեղ։

— Է, ուզո՞ւմ եք, Միշան ձեզ ուրիշ ձի կտա։

— Աստված գիտե, թե ինչ կհնարի,— համարյա ինքն իրեն ասաց Օբլոմովը։— Ի՞նչ եք կպել Գորյունովներից։

— Ա՜խ,— կարմրատակելով արտասանեց Վոլկովը։— Ասե՞մ։

— Ասացե՛ք։

— Դուք ոչ ոքի չե՞ք ասի, ազնիվ խո՞սք,— շարունակում էր Վոլկովը, նստելով նրա մոտ բազմոցին։

— Չեմ ասի։

— Ես... սիրահարված եմ Լիդիային,— շշնջաց նա։

— Բրա՜վո։ Վաղո՞ւց է։ Նա, կարծեմ շատ սիրունիկն է։

— Ահա արդեն երե՞ք շաբաթ է,— խոր հառաչանքով ասաց Վոլկովը։— Իսկ Միշան սիրահարված է Դաշենկային։

— Ո՞ր Դաշենկային։

— Որտեղի՞ց եք, Օբլո՜մով։ Չի՞ ճանաչում Դաշենկային։ Ամբողջ քաղաքը գժված է նրա պարից։ Այսօր Միշայի հետ բալետ ենք գնալու, նա ծաղկեփունջ է նետելու։ Հարկավոր է նրան առաջնորդել. նա երկչոտ է, դեռ նորելուկ է... Ա՜խ, հարկավոր է գնալ քամելիաներ ճարել...

— Էլ ո՞ւր։ Բավական է, եկեք միասին ճաշենք. կզրուցեինք։ Ինձ երկու դժբախտություն է պատահել...

— Չեմ կարող. ես ճաշում եմ իշխան Տյումենևի մոտ. այնտեղ են լինելու բոլոր Գորյունովները և նա, նա... Լիդինկան,— ավելացրեց շշնջալով։— Ինչո՞ւ դուք այդպես լքեցիք իշխանին։ Ինչպիսի՜ ուրախ տուն է։ Ի՞նչ մեծավարի ապրուստ ունի։ Իսկ ամառանո՞ցը։ Կորա՞ծ ծաղիկների մեջ։

Դողջին սրահ են շինել, Gothique։ Ասում են՝ ամռանը պարեր, կենդանի պատկերներ են լինելու։ Դուք հաճախելո՞ւ եք։

— Ո՛չ, ես կարծում եմ, չեմ հաճախի։

— Ա՜խ, ինչպիսի՜ տուն է։ Այս ձմեռ շորեքշաբթի օրերը հիսունից պակաս մարդ չէր լինում, երբեմն էլ հավաքվում էին մինչև հարյուր հոգի։

— Տեր իմ աստված։ Երևի, դժոխայի՞ն ձանձրույթ կլիներ։

— Ինչպե՞ս կարելի է։ Ձանձրո՞ւյթ։ Քանի շատ են, այնքան ավելի ուրախ է։ Լիդիան լինում էր այնտեղ, ես նրան չէի նկատում, և հանկարծ...

Напрасно я забыть ее стараюсь
И страсть хочу рассудком победить[1]...

Երգեց նա և, մոռացության մեջ ընկնելով, նստեց բազկաթոռին, բայց հանկարծ վեր թռավ և սկսեց իր զգեստի փոշին մաքրել։

— Ի՞նչ փոշի է ձեզ մոտ,— ասաց սա։

— Ձախարի արածն է,— գանգատվեց Օբլոմովը։

— Դե, իմ գնալու ժամանակն է,— ասաց Վոլկովը։— Միշայի ծաղկեփնջի համար քամելիաներ ճարելու։

— Երեկոյան բալետից եկեք թեյ խմելու, կպատմեք, թե այնտեղ ինչը ինչոց էր,— հրավիրում էր Օբլոմովը։

— Չեմ կարող, խոսք եմ տվել Մուսինսկիների մոտ գընալ. այսօր նրանց օրն է։ Դուք էլ եկեք գնանք։ Ուզում եք, ես ձեզ կներկայացնեմ։

— Ոչ, ի՞նչ անեմ այնտեղ։

— Մուսինսկիների մո՞տ։ Ի՞նչ եք ասում, քաղաքի կեսն այնտեղ է լինում։ Ինչպե՞ս թե ինչ անեմ։ Դա այնպիսի մի տուն է, որտեղ ամեն բանի մասին խոսում են...

— Այ հենց դա է ձանձրալի, որ ամեն բանի մասին,— ասաց Օբլոմովը։

— Դե, այցելեցեք Մեզդրովներին,— ընդհատեց Վոլկովը,— այնտեղ արդեն միայն մի բանի մասին են խոսում՝

[1] Իզուր աշխատում եմ մոռանալ ես նրան
Եվ ուզում եմ դատողությամբ հաղթահարել կիրքը։

արվեստների վենետիկյան դպրոց, Բեթհովեն ու Բախ, Լեոնարդո դա Վինչի...

— Ամբողջ ժամանակ միևնույն բանի մասին. ինչպիսի՜ ձանձրույթ։ Երևի պեդանտ մարդիկ են,— հորանջելով ասաց Օբլոմովը։

— Ձեզ գոհացնելը դժվար է։ Լավ, քի՞չ տներ կան։ Հիմա բոլորն օրեր ունեն. Սավինովների մոտ ճաշում են հինգշաբթի օրերը, Մակլաշինների մոտ՝ ուրբաթ օրերը, Վյազնիկովների մոտ՝ կիրակի, իշխան Տյումենևի մոտ՝ չորեքշաբթի օրերը։ Իմ բոլոր օրերը զբաղված են,— փայլող աչքերով եղրափակեց Վոլկովը։

— Եվ դուք չե՞ք ծուլանում տառապել օրեցօր։

— Հ՛ը, ծուլություն։ Ի՞նչ ջուլություն։ Շա՜տ ուրախ է,— անփույթ ասաց նա։— Առավոտյան մի քիչ կարդում ես, պետք է ամեն բանի au courant[1] լինել, նորություններն իմանալ։ Փառք աստծու, իմ ծառայությունն այնպես է, որ հարկավոր չէ ծառայության տեղում լինել։ Միմիայն շաբաթը երկու անգամ լինում եմ գեներալի մոտ և ճաշում այնտեղ, իսկ հետո գնում եմ այցելություններ անելու, որտեղ վաղուց չեմ եղել, դե՜, մեկ էլ... նոր դերասանուհի, մերթ ռուսական, մերթ ֆրանսիական թատրոնում։ Այ, օպերան կբացվի, ես աբոնեմենտ կվերցնեմ։ Իսկ հիմա սիրահարված եմ... Սկըսվում է ամառը. Միշային խոստացել են արձակուրդ տալ, մի ամսով կգնանք նրանց գյուղը, զանազանակերպության համար։ Այնտեղ որս կա։ Նրանք հիանալի հարևաններ ունեն, տալիս են bals champêtres[2]. Լիդիայի հետ կղբոսնենք պուրակում, նավակով կսուրանք, ծաղիկ կքաղենք... Ա՜խ...— Եվ նա ուրախությունից շրջվեց։— Սակայն ժամանակն է... Մընանք բարով,— ասաց նա ապարդյուն կերպով ջանալով փոշոտված հայելու մեջ իրեն դիտել։

— Սպասեք,— պահում էր նրան Օբլոմովը,— ես ուզում էի ձեզ հետ խոսել գործերի մասին։

— Pardon, ժամանակ չունեմ,— շտապեց Վոլկովը,— Մի այլ անգամ։ Իսկ չե՞ք կամենա ինձ հետ ոստրե ուտել։ Այն ժամանակ էլ կպատմեք։ Գնանք, Միշան է հյուրասիրում։

— Ոչ, ասված ձեզ հետ,— ասաց Օբլոմովը։

— Գե՛, մնաք բարով։

Նա գնաց և վերադարձավ։

— Տեսե՞լ եք,— հարցրեց, ցույց տալով ձեռնոցների մեջ կարծես ձուլված ձեռքը։

— Դա ի՞նչ է,— հարցրեց Օբլոմովը տարակուսանքով։

— Նոր lacets[1]. տեսնում եք, ինչ հիանալի է ձգում. երկու մատ չես շարշարվում կոճակի վրա. քուղը քաշեցիր՝ պատրաստ է։ Հենց նոր է Փարիզից ստացվել։ Ուզո՞ւմ եք, ձեզ փորձի համար մի զույգ բերեմ։

— Լավ, բերեք,— ասաց Օբլոմովը։

— Ապա, սա նայեք, ճիշտ չէ՞, որ շատ սիրուն է,— ասաց նա՝ մանրազարդերի մեջ որոնելով մեկը։— Այցետոմս, անկյունը ծալած։

— Ձեմ կարողանում կարդալ, թե ինչ է գրված։

— Pr. prince M. Michel[2],— կարդաց Վոլկովը,— իսկ Տյումենև ազգանունը չի տեղավորվել. սա նվիրել է ինձ զատկին, ձվի փոխարեն։ Բայց մնաք բարով, au revoir, ես դեռ տասը տեղ ունեմ գնալու։ Աստված իմ, ի՞նչ ուրախ կյանք է աշխարհիս երեսին։

Եվ նա անհետացավ։

«Մի օրում տասը տեղ՝ դժբա՜խտ մարդ», մտածում էր Օբլոմովը։ «Եվ սա կյա՜նք է»։ Նա ուժգին թոթվեց ուսերը։ «Որտե՞ղ է այստեղ մարդը։ Ի՞նչ բանի համար է նա մասնատվում ու բաժան-բաժան լինում։ Իհարկե, վատ չէ և թատրոն գնալ, և սիրահարվել մի որևէ Լիդիայի... սիրունիկն է։ Գյուղում նրա հետ ծաղիկներ քաղել, զբոսնել՝ լավ բան է. բայց տասը տեղ մի օրում՝ դժբա՜խտ մարդ», եղրափակեց նա, շուռումուռ գալով մեջքի վրա և ուրախանալով, որ ինքն այդպիսի դատարկ ցանկություններ ու մտքեր չունի, որ չի տառապում, այլ պառկած է ահա այստեղ, պահպանելով իր մարդկային արժանապատվությունն ու հանգիստը։

---

[1] Տեղյակ լինել (Ֆր.)։

[2] Պարահանդեսներ բնության գրկում (Ֆր.)։

[1] Քուղեր (Ֆր.)։

[2] Իշխան Մ. Միշել (Ֆր.)։

Ջանգի նոր հնչյունն ընդհատեց նրա խոհերը։

Ներս մտավ մի նոր հյուր։

Դա մի պարոն էր՝ գերբավոր կոճակներով մուգ կանաչ ֆրակ հագած, մաքուր սափրված, դեմքը հավասար կերպով եղրապատած էր մուգ այտամորուսներով, խոնջացած, բայց անդորր, գիտակցված արտահայտություն աչքերում, խիստ տրորված դեմքով, մտախոհ ժպիտով։

— Բարե՞, Սուդբինսկի,— ուրախ ողջունեց Օբլոմովը։— Հապիվհաղ մտար հին ծառայակցիդ մոտ։ Մի՞ մոռանա, մի՞ մոռանա։ Դու ցրտից՞ ես գալիս։

— Բարև, Իլյա Իլյիչ։ Վաղուց էի ուզում քեզ մոտ գալ,— ասաց հյուրը,— բայց դու հո գիտես, թե ինչ դժոխային ծառայություն է մերը։ Ա՛յ, տես, ամբողջ մի ճամպրուկ եմ տանում զեկուցման։ Ա՛խխա, եթե այնտեղ որևէ բան հարցնեն, պատվիրել եմ սուրհանդակին այստեղ գալու։ Ոչ մի բոպե գլխիդ տերը չես։

— Դու նո՞ր ես ծառայության գնում։ Ինչո՞ւ այդպես ուշ,— հարցրեց Օբլոմովը։— Առաջները դու ժամը տասից...

— Առաջները՝ այո. խեղճ հիմա ուրիշ է. ժամը տասներկուսին եմ գնում կառքով։

Նա շեշտեց վերջին բառը։

— Ա՜հ։ Գլխի եմ ընկնում,— ասաց Օբլոմովը։— Ինչ՞ի պե՞տ։ Վաղո՞ւց է։

Սուդբինսկին նշանակալից կերպով թափահարեց գլուխը։

— Ավագ շաբթին,— ասաց նա։— Բայց որքա՞ն գործ կա, սարսափելի է։ Ժամը ութից մինչև տասներկուսը տանն եմ, տասներկուսից մինչև հինգը՝ գրասենյակում, դեռ երեկոներն էլ պարապում եմ։ Մարդկանցից բոլորովին ետ եմ վարժվել։

— Հը՞մ։ Բաժնի պետ. ահա՜ թե ինչ,— ասաց Օբլոմովը։— Շնորհավորում եմ։ Ո՞նց է։ Միասին ծառայում էինք որպես գրասենյակային չինովնիկներ։ Ես կարծում եմ, եկող տարի պետական խորհրդական կդառնաս։

— Հլա ո՞ւր է։ Տերը քեզ հետ։ Դեռ այս տարի պետք է ստանամ թագավարդ շքանշան. կարծում էի, թե գերազանց ծառայության համար կներկայացնեն, իսկ այժմ նոր պաշտոնի եմ անցել. երկու տարի իրար ետևից չի կարելի...

— Արի միասին ճաշենք, կխմենք պաշտոնիդ բարձրացման առթիվ,— ասաց Օբլոմովը։

— Ոչ, այսօր ճաշում եմ վիցե դիրեկտորի մոտ։ Հինգշաբթի օրվա համար հարկավոր է զեկուցում պատրաստել. դժոխային աշխատանք է։ Չի կարելի վստահել նահանգներից ներկայացրածներին։ Հարկավոր է, որ ինքներս ստուգենք ցուցակները։ Ֆոմա Ֆոմիչն այնպես դասկածամիտ է. ամեն ինչ ուզում է ինքն անել։ Ահա այսօր ճաշից հետո միասին նստելու ենք։

— Մի՞թե ճաշից հետո էլ,— հարցրեց Օբլոմովը կասկածելով։

— Հապա ի՞նչ ես կարծում։ Դեռ լավ է, եթե մի քիչ շուտ պրծնեմ ու կարողանամ Եկատերինհոֆ սլանալ... Հա՜, ես եկել եմ հարցնելու՝ արդյոք զբոսանքի չե՞ս գա։ Կառքով կը-գայի քո ետևից...

— Մի քիչ հիվանդ եմ, չե՞մ կարող,— կնճռոտվելով ասաց Օբլոմովը։— Բացի այդ՝ գործ էլ շատ ունեմ... ո՜չ, չե՞մ կարող։

— Ափսո՞ս,— ասաց Սուդբինսկին։— Լավ օր է։ Միայն այսօր , որ հույս ունեմ ազատ շունչ քաշել։

— Է՜հ, ի՞նչ նորություն կա ձեզ մոտ,— հարցրեց Օբլոմովը։

— Շատ բաներ. վերացրել են նամակներում «ամենախոնարհ ծառա» գրելը, գրում են՝ «ընդունեցեք հավաստիքը». ծառայության ցուցակները հրամայված չէ երկու օրինակ ներկայացնել։ Մեզ մոտ ավելացնում են երեք սեղան և երկու հատուկ հանձնարարությունների պաշտոնյա։ Մեր հանձնաժողովը փակեցին... Շա՜տ բան։

— Է՜հ, իսկ ինչպես են մեր նախկին ընկերները։

— Առայժմ ոչինչ. Սվինկինը գո՞ղծ է կորցրել։

— Իսկապե՞ս։ Իսկ դիրեկտորն ի՞նչ ասաց,— հարցրեց Օբլոմովը դողդոջուն ձայնով։

Նրան, հին հիշողության համաձայն, սարսափ պատեց։

— Հրամայեց պարգևը չտալ, մինչև գործը չգտնվի։ Կարևոր գործ է՝ «տուգանքների մասին»։ Դիրեկտորը կարծում է,— գրեթե շշնջալով ավելացրեց Սուդբինսկին,— որ նա գործը դիտմամբ է կորցրել։

— Չի՞ կարող պատահել,— ասաց Օբլոմովը։

— Ո՛չ, ո՛չ։ Զուր է,— կարևորություն տալով իր ասածին և հովանավորողի տոնով հաստատեց Սուդբինսկին։— Սվինկինը ցանցառի մեկն է։ Երբեմն սատանան գիտե, թե ինչ հանրագումարներ կանի, բոլոր տեղեկանքներն իրար կխառնի։ Ես շատ եմ տանջվել նրա ձեռքից. բայց այդ մեկը ոչ, նա չի նկատվել այդպիսի գործերի մեջ... Նա այդպիսի բան չի անի, ո՛չ, ո՛չ։ Գործը մի տեղ ընկել-մնացել է, հետո կըգտնվի։

— Ահա թե ինչ. շարունակ գործերի՞ մեջ ես,— ասում էր Օբլոմովը,— աշխատում ես։

— Սարսափելի՞ է, սարսափելի՞։ Դե՞, իհարկե, այնպիսի մարդու հետ, ինչպիսին Ֆոմա Ֆոմիչն է, հաճելի է ծառայել. առանց պարգևի չի թողնում. ով ոչինչ չի անում, նրանց էլ չի մոռանա։ Հենց որ գերազանց ստանալու ժամկետն անցնում է, իսկույն ներկայացնում է. ում ժամկետը աստիճանի համար դեռ չի եկել, խաչի է ներկայացնում, փող է միջնորդում...

— Դու ինչքա՞ն ես ստանում։

— Է՞հ, ի՞նչ. 1200 ռուբլի ռոճիկ, հատուկ սննդադրամ 750, բնակարանի համար 600, նպաստներ 900, շրջագայությունների համար 500, այլև պարգև մինչև 1000 ռուբլի։

— Թո՛ւհ, գրո՛ղը տանի,— անկողնից վեր թռչելով, ասաց Օբլոմովը.— քո ձա՞յնն է, լավ ,ինչ է։ Կարծես իտալացի երգի՞չ լինես։

— Դա դեռ ի՞նչ է որ։ Ա՛յ, Պերեսվետովը հավելյալ է ըստանում, իսկ գործ ինձանից ավելի քիչ է անում և ոչինչ էլ չի հասկանում։ Բայց, իհարկե, նա այն համբավը չունի։ Ինձ շատ են գնահատում,— համեստությամբ ավելացրեց նա, աչքերը խոնարհելով.— մինիստրը նորերս իմ մասին արտահայտվել է, թե ես «մինիստրության զարդն եմ»։

— Ապրե՞ս,— ասաց Օբլոմովը։— Բայց աշխատել ժամը ութից մինչև տասներկուսը, տասներկուսից մինչև հինգը և դեռ տանն էլ, ա՛յ-ա՛յ։

Նա թափահարեց գլուխը։

— Իսկ ես ուրիշ ի՞նչ պիտի անեի, եթե չծառայեի,— հարցրեց Սուդբինսկին։

— Քի՞չ բան կա անելու։ Կկարդայիր, կգրեիր...— ասաց Օբլոմովը։

— Ես հիմա էլ հենց միայն կարդում կամ գրում եմ։

— Բայց դա այն չէ. դու կտպագրեիր...

— Բոլորն էլ հո գրող չպետք է լինեն։ Ա՛յ, դու էլ հո չես գրում,— առարկեց Սուդբինսկին։

— Բայց դրա փոխարեն կալվածք կա իմ ձեռքին,— հառաչանքով ասաց Օբլոմովը։— Ես նոր պլան եմ մտմտում. զանազան բարելավումներ եմ մտցնում։ Տանջվում եմ, տանջվում... Իսկ դու չէ՞ որ ուրիշի գործն ես անում, ոչ քոնը։

— Ի՞նչ արած։ Պետք է աշխատել, երբ փող ես ստանում։ Ամռանը կհանգստանամ. Ֆոմա Ֆոմիչը խոստանում է հատկապես ինձ համար դիտմամբ գործուղում հնարել... ա՛յ, այն ժամանակ կստանամ ուղեղրամ հինգ ձիու հաշվով, օրապահիկ օրական երեք ռուբլի, հետո էլ՝ պարգև...

— Ա՛յ թե բոբոացնում են,— նախանձով ասաց Օբլոմովը. հետո հառաչեց ու մտածմունքի մեջ ընկավ։

— Փող է հարկավոր. աշնանն ամուսնանում եմ,— ավելացրեց Սուդբինսկին։

— Ի՞նչ ես ասում։ Իսկապե՞ս։ Ո՞ւմ հետ,— կարեկցությամբ ասաց Օբլոմովը։

— Առանց հանաքի, Մուրաշինայի հետ։ Հիշո՞ւմ ես, ամառանոցում ապրում էին իմ կողքին։ Դու ինձ մոտ թեյ էիր խմում և, կարծեմ, տեսել ես նրան։

— Ո՛չ, չեմ հիշում։ Սիրո՞ւն է,— հարցրեց Օբլոմովը։

— Այո՛, սիրունիկն է։ Եթե ուզում ես, գնանք նրանց մոտ ճաշելու։

Օբլոմովը կանգ առավ։

— Հա՛... լա՛վ, միայն...

— Եկող շաբաթ,— ասաց Սուդբինսկին։

— Այո՛, այո՛, եկող շաբաթ,— ուրախացավ Օբլոմովը,— իմ զգեստը դեռ պատրաստ չէ։ Է՛, ձեռնտո՞ւ ամուսնություն է։

— Այո՛, հայրը իսկական պետական խորհրդական է, տասը հազար է տալիս, բնակարանը պետական է։ Նա մեզ է հատկացրել բնակարանի կեսը՝ տասներկու սենյակ. կահ-

կարասին պետական է, վառելիքը, լուսավորությունը նույնպես. կարելի է ապրել...

— Այո՛, կարելի՛ է։ Իսկ՞ երկե։ Ահա թե ինչպիսի՛ն է Սուդբինսկին,— ավելացրեց Օբլոմովը ոչ առանց նախանձի։

— Պսակին, Իլյա Իլյիչ, քեզ խաչեղբայր եմ հրավիրում. տես հա՞...

— Իհարկե, անպատճա՞ռ,— ասաց Օբլոմովը։— Էհ, իսկ ի՞նչ են անում Կուզնեցովը, Վասիլևը, Մախովը։

— Կուզնեցովը վաղուց ամուսնացած է. Մախովն իմ պաշտոնն է ստանձնել, իսկ Վասիլևին փոխադրել են Լեհաստան։ Իվան Պետրովիչին Վլադիմիր են տվել։ Ալյոշկինը՝ նորին գերազանցություն է։

— Նա բարի՞ տղա է,— ասաց Օբլոմովը։

— Բարի է, բարի. արժանի է։

— Շատ բարի է, մեղմ, հավասարակշռված բնավորության տեր,— ասաց Օբլոմովը։

— Այնքան սիրալիր է,— ավելացրեց Սուդբինսկին,— և, գիտե՞ս ինչ, չունի բնավորություն քծնելու, վատություն անելու, ոտ գցելու, առաջ ընկնելու... ինչ կարողանում է, անում է։

— Շատ լավ մարդ է։ Պատահում էր, թղթի մեջ մի բան էիր խառնում, չէիր նկատում, զեկուցագրի մեջ կարծիքը կամ օրենքները շփոթում էիր, ոչինչ. հրամայում էր միայն, որ մի ուրիշը փոփոխի։ Հիանալի մարդ է,— եզրակացրեց Օբլոմովը։

— Իսկ ահա մեր Սեմյոն Սեմյոնովիչն այնպես անուղղելի է,— ասաց Սուդբինսկին։— Աչքերին թող փչելու վարպետ է միայն։ Նորերս գիտե՞ք ինչ արեց. նահանգներից առաջարկություն էր ստացվել մեր գերատեսչությանը պատկանող շենքերին կից շների բներ կառուցել՝ պետական գույքը կողոպտելուց պահպանելու համար. մեր ճարտարապետը, մի գործարար, գիտակ ու ազնիվ մարդ, շատ չափավոր մի նախահաշիվ էր կազմել. հանկարծ գա նրան մեծ թվաց, և նա սկսեց տեղեկանքներ հավաքել, թե ինչ կարող է նստել շան բնի կառուցումը։ Ինչ-որ մի տեղ գտավ, որ կարելի է երեսուն կոպեկով պակաս՝ անմիջապես զեկուցագիր պատրաստեց...

Նորից լռեց զանգը։

— Մնաս բարով,— ասաց չինովնիկը,— խոսքով ընկա, այնտեղ կարող են որևէ բան պետք ունենալ։

— Մի քիչ էլ նստիր,— պահում էր նրան Օբլոմովը։— Ի գնալ, ես կխորհրդակցեմ քեզ հետ. երկու դժբախտություն է պատահել ինձ...

— Ոչ, ոչ, ավելի լավ է՝ մոտ օրերս ես նորից անցնեմ,— ասաց նա՝ հեռանալով։

«Երվել է սիրելի բարեկամս, մինչև ականջները խրվել է», մտածում էր Օբլոմովը, աչքերով ճանապարհ գնելով նրան. «Մնացած բոլոր բաների համար աշխարհում և կույր է, և խուլ, և համր։ Բայց մարդ կդառնա, ժամանակին գործեր շուռ կտա և աստիճաններ կստանա... Մեզ մոտ սա էլ է կարիերա կոչվում։ Իսկ որքա՞ն քիչ է այստեղ հարկավոր մարդը— նրա խելքը, կամքը, զգացմունքը, ինչի՞ համար են դրանք։ Շռայլություն է։ Եվ նա կապրի իր ժամանակը, և շատ, շատ բան չի շարժվի նրա մեջ... Մինչդեռ աշխատում է տասներկուսից հինգը գրասենյակում, ութից տասներկուսը՝ տանը. դժբախտ մարդ»։

Նա անդորր ուրախության զգացում էր ապրում, որ իններից մինչև երեքը, ութից մինչև ինը կարող է մնալ իր սենյակում բազմոցի վրա, և հպարտանում էր, որ պետք չէ գնալ զեկուցում անելու, թղթեր գրելու, որ արձակ տարածություն կա նրա զգացմունքի, երևակայության համար։

Օբլոմովը փիլիսոփայում էր և չնկատեց, որ իր անկողնի մոտ կանգնած է մի շատ նիհար, սևուկ պարոն, ամբողջովին ծածկված այտամորուսներով, բեղերով և սրածայր մորուքով։ Հագնված էր միտումնավոր անփույթ։

— Բարև ձեզ, Իլյա Իլյիչ։

— Բարև ձեզ, Պենկին, մի՛ մոտեցեք, մի՛ մոտեցեք, դուք ցրտի՞ց եք գալիս,— ասում էր Օբլոմովը։

— Ախ դուք, տարօրինակ մարդ,— ասաց նա։— Շաբաթնակ նույն անուղղելի, անհոգ ծույլը։

— Այո, անհոգ,— ասաց Օբլոմովը։— Այ, ես քեզ իսկույն ցույց կտամ ստարոստայից ստացած նամակը. մարդ գլուխ է չարդում մտածելով, իսկ դուք ասում եք՝ անհոգ։ Որտեղի՞ց եք գալիս։

— Գրախանութից. գնացել էի իմանալու՝ լույս չե՞ն տեսել արդյոք ամսագրերը։ Կարդացե՞լ եք իմ հոդվածը։

— Ոչ։

— Ես ձեզ կուղարկեմ, կարդացեք։

— Ինչի՞ մասին է,— սաստիկ հորանջելով հարցրեց Օբլոմովը։

— Առևտրի մասին, կանանց ազատագրման մասին, ապրիլյան գեղեցիկ օրերի մասին, որ մեզ բաժին ընկան, և հրդեհների դեմ նոր գտնված բաղադրության մասին։ Այդ ինչպե՞ս է, որ դուք չեք կարդում։ Չէ՞ որ այստեղ մեր ամենօրյա կյանքն է։ Իսկ ամենից ավելի ես պայքարում եմ գրականության մեջ ռեալ ուղղության օգտին։

— Դուք շա՞տ գործ ունեք,— հարցրեց Օբլոմովը։

— Այո, բավական։ Ցուրաքանչյուր շաբաթ երկու հոդված լրագրում, արձակագիրներին եմ վերլուծում, մեկ էլ ահա մի պատմվածք եմ գրել...

— Ինչի՞ մասին։

— Այն մասին, թե ինչպես մի քաղաքում քաղաքապետը շարդում է քաղքենիների քիթն ու մռութը...

— Այո, դա իսկապես ռեալ ուղղություն է,— ասաց Օբլոմովը։

— Ճիշտ չէ՞ միթե,— ուրախացած հաստատեց գրականագետը։— Ահա թե ես ինչ միտք եմ արծարծում և գիտեմ, որ այն նոր է ու համարձակ։ Մի անցորդ վկա է եղել այդ ծեծերին ու նահանգապետի հետ տեսակցելիս գանգատվել է նրան։ Սա հրամայել է այնտեղ քննության գնացող չինովնիկին անցողակի կերպով հավաստիանալ այս բանին և առհասարակ տեղեկություններ հավաքել քաղաքապետի անձնավորության ու վարքագծի մասին։ Չինովնիկը կանչել է քաղքենիներին, իբր առևտրի մասին հարցուփորձ անելու, մինչդեռ նրա միտքն է եղել պարզել նաև այդ բանը։ Իսկ քաղքենիները։ Նրանք գլուխ են տալիս ու ծիծաղում են և գովեստներով փառաբանում քաղաքապետին։ Չինովնիկն սկսում է կողմնակի ճանապարհով տեղեկանալ և նրան ասում են, որ քաղքենիները սոսկալի խաբեբաներ են, փտած բաներ են վաճառում, կշեռքի ու չափի մեջ խաբում են նույնիսկ գան-

ձարանին, բոլորն անբարոյական են, այնպես որ այդ ծեծը արդար պատիժ է...

— Ուրեմն քաղաքապետի ծեծերը պատմվածքի մեջ հանդես են գալիս որպես հին ողբերգակների fatum[1],— ասաց Օբլոմովը։

— Հենց այդպես,— վրա բերեց Պենկինը։— Դուք չափի զգացում ունեք. Իլյա Իլյիչ, ձեզ վայել է գրելը։— Մինչդեռ ինձ հաջողվել է ցույց տալ և քաղաքապետի ինքնագլխությունը, և բարքերի այլասերումը հասարակ ժողովրդի մեջ, ստորադաս չինովնիկների գործողությունների վատ կազմակերպումը և խիստ, բայց օրինական միջոցառումների անհրաժեշտությունը... Ճիշտ չէ՞, որ այս միտքը... բավական նոր է։

— Այո՛, առանձնապես ինձ համար,— ասաց Օբլոմովը.— Ես այնքան քիչ եմ կարդում...

— Իսկապես, ձեզ մոտ գիրք չի երևում,— ասաց Պենկինը։— Բայց, աղաչում եմ ձեզ, կարդացե՛ք. պատրաստվում է, կարելի է ասել, մի հոյակապ պոեմ— «Կաշառակերի սերը դեպի ընկած կինը»։ Ես ձեզ չեմ կարող ասել, թե ով է Հեղինակը. դեռ գաղտնիք է։

— Իսկ ի՞նչ կա այնտեղ։

— Դրսևորված է մեր հասարակական շարժման ամբողջ մեխանիզմը, և ամեն ինչ բանաստեղծական գույներով։ Շոշափված են բոլոր զսպանակները, հասարակական սանդուղքի բոլոր աստիճանները հետազոտված են։ Հեղինակի կողմից կարծես դատարան են կանչված թե՛ թույլ, բայց ապականված ազնվատոհմիկը, թե՛ նրան խաբող կաշառակերների ամբողջ տոհմակը. վերլուծված են նաև ընկած կանանց բոլոր տարրակարգերը... Ֆրանսուհիները, գերմանուհիները, չուխոնուհիները և բոլորը, բոլորը... ապշեցուցիչ, կենսաբրթիռ ճշտությամբ... Ես հատվածներ եմ լսել— Հեղինակը մեծ մարդ է։ Նրա մեջ հնչում է մերթ Դանտեն, մերթ Շեքսպիրը...

— Այ թե ո՛ւր թռաք,— զարմացած ասաց Օբլոմովը՝ կիսով չափ տեղից վեր կենալով։

---

[1] Ճակատագիր (ֆր.)։

Պենկինը հանկարծ լռեց, տեսնելով, որ իրոք հեռու է գնացել։

— Կկարդաք, ինքներդ կտեսնեք,— ավելացրեց նա արդեն առանց տաքանալու։

— Ոչ, Պենկին, ես չեմ կարդա։

— Ինչո՞ւ։ Արդեն աղմուկ է բարձրացել, դրա մասին խոսում են...

— Ի՞նչ ուզում են՝ անեն։ Չէ՞ որ օմանք խոսելուց բացի ուրիշ ոչինչ չունեն անելու։ Այդպիսի կոչում կա։

— Դե, գոնե հետաքրքրությունից կարդացեք։

— Ի՞նչ կա այնտեղ, որ ես չեմ տեսել— ասում էր Օբլոմովը։— Ինչի՞ համար են նրանք գրում. միայն իրենց են մխիթարում...

— Ինչպես թե իրենց. ինչպիսի՞ ճշտություն է, ինչպիսի՞ ճշտություն։ Ծիծաղելու չափ նման է։ Կարծես կենդանի դիմանկարներ լինեն։ Վերցնում են մեկին, վաճառական լինի, չինովնիկ, սպա թե ոստիկանական պահակ, հենց կենդանի-կենդանի էլ դրոշմում։

— Իսկ ինչի՞ համար են նրանք ջանք գործ դնում. զվարճության համար, իբր ում էլ որ վերցնենք, ճի՞շտ դուրս կգա։ Իսկ կյանք ոչ մի բանի մեջ էլ չկա. չկա նրա ըմբռնումն ու կարեկցությունը, չկա այն, ինչ ձեզ մոտ հումանիտետ է կոչվում։ Միմիայն ետաիրություն է։ Նրանք նկարագրում են գողերին, ընկած կանանց, կարծես որսում են նրանց փողոցներում և բանտ են տանում։ Նրանց պատմվածքներում երևում են ոչ թե «անտեսանելի արցունքները», այլ լոկ տեսանելի, կոպիտ ծիծաղը, շարությունը...

— Էլ ի՞նչ է հարկավոր։ Եվ հիանալի է, դուք ինքներդ արտահայտվեցիք. դա եռուն շարություն է, մի մաղձոտ հալածանք մոլության նկատմամբ, արհամարհանքի ծիծաղ՝ ընկած մարդու վերաբերմամբ... այստեղ ամեն ինչ է։

— Ոչ, ամեն ինչ չէ,— հանկարծ բորբոքվելով ասաց Օբլոմովը։— Նկարագրիր գողին, ընկած կնոջը, խաբված հիմարին, բայց մարդուն էլ միաժամանակ մի մոռանա։ Իսկ որտե՞ղ է մարդկությունը։ Դուք ուզում եք միայն գլխով գրել,— գրեթե ֆշշաց Օբլոմովը։— Դուք կարծում եք, թե մաքի համար սիրտ պետք չէ։ Ոչ, միտքը բեղմնավորվում է

սիրով։ Ձեզ մեկնեցեք ընկած մարդուն՝ նրան բարձրացնելու համար, կամ դառն կերպով լաց եղեք նրա վրա, եթե կործանվում է, և ոչ թե ծաղրուծանակի ենթարկեցեք։ Սիրեցեք նրան, նրա մեջ հիշեցեք հենց ձեզ և վարվեցեք նրա հետ, ինչպես ինքներդ ձեզ հետ. այն ժամանակ ես կսկսեմ կարդալ ձեր գրածները և ձեր առաջ գլուխս կխոնարհեմ...— ասաց նա, նորից հանգիստ կերպով պառկելով բազմոցի վրա։— Նրանք պատկերում են գողին, ընկած կնոջը,— ասում էր նա,— իսկ մարդուն մոռանում են կամ չեն կարողանում պատկերել։ Ի՞նչ արվեստ է դա, ի՞նչ բանաստեղծական ներկեր եք գտել դուք։ Մերկացրեք այլասերումը, կեղտը, միայն թե, խնդրեմ, առանց պոեզիայի հավակնություն ունենալու։

— Ինչ է, կհրամայեք բնությո՞ւնը նկարագրել. վարդեր, սոխակներ կամ սառնամանիք առավոտ, մինչդեռ շուրջդ ամեն ինչ եռում է, շարժվում։ Մեզ հարկավոր է լոկ միայն հասարակության բնախոսությունը. մեզ այժմ երգերը չեն հետաքրքրում...

— Տվե՞ք ինձ մարդուն, մարդուն,— ասում էր Օբլոմովը.— սիրե՞ք նրան...

— Սիրել վաշխառուի՞ն, սուտ ճգնավորի՞ն, գողացող կամ բթամիտ չինովնիկի՞ն, լսո՞ւմ եք։ Այդ ի՞նչ եք ասում։ Եվ երևում է, որ դուք գրականությամբ չե՞ք զբաղվում,— տաքացավ Պենկինը։— Ո՛չ, նրանց հարկավոր է պատժել, դուրս շպրտել քաղաքացիական միջավայրից, հասարակությունից...

— Դո՞ւրս շպրտել քաղաքացիական միջավայրից,— հանկարծ ոգևորված վրա բերեց Օբլոմովը տեղից կանգնելով Պենկինի առաջ,— դա նշանակում է մոռանալ, որ այդ անպետք անոթի մեջ եղել է բարձրագույն սկզբունքը, որ նա փչացած մարդ է, բայց այնուամենայնիվ մարդ է, այսինքն՝ դուք ինքներդ։ Դո՞ւրս շպրտել։ Իսկ ինչպե՞ս դուրս կշպրտեք մարդկության շրջանից, բնության ծոցից, աստծու ողորմածությունից,— համարյա բղավեց նա բոցավառվող աչքերով։

— Ա՜յ թե ուր հասանք,— իր հերթին զարմացած ասաց Պենկինը։

Օբլոմովը տեսավ, որ ինքն էլ հեռու գնաց։ Նա հանկարծ

լոեց, մի բոպե կանգ առավ, հորանջեց և դանդաղորեն պառկեց բազմոցի վրա։

Երկուսն էլ խորասուզվեցին լռության մեջ։

— Հապա դո՞ւք ինչ եք կարդում,— հարցրեց Պենկինը։

— Ես... ավելի շատ՝ ճանապարհորդություններ միայն։ Դարձյալ լռություն։

— Ուրեմն պոեմը կկարդա՞ք, երբ լույս տեսնի։ Ես կբերեի...— հարցրեց Պենկինը։

Օբլոմովը գլուխը բացասաբար շարժեց։

— Դե՛, ես կուղարկեմ ձեզ իմ պատմվածքը։

Օբլոմովը գլխով համաձայնության նշան ցույց տվեց։

— Սակայն ժամանակն է, որ տպարա՞ն գնամ,— ասաց Պենկինը։— Դիտե՞ք, ինչու եմ ձեզ մոտ եկել։ Ուզում էի ձեզ առաջարկել Եկատերինհոֆ գնալ. ես կառք ունեմ։ Պետք է վաղը մի հոդված գրեմ զբոսանքի մասին. միասին կդիտեինք, ինչ որ չէի նկատի, դուք կհաղորդեիք ինձ. ավելի ուրախ կանցներ։ Գնանք...

— Ոչ, տկար եմ,— ասաց Օբլոմովը կնճռոտվելով ու վերմակը վրան քաշելով,— խոնավությունից վախենում եմ, հիմա դեռ չի չորացել։ Բայց եթե դուք այսօր ճաշելու գայիք, կզրուցեինք... ինձ երկու դժբախտություն է պատահել...

— Ո՛չ, մեր ամբողջ խմբագրությունն այսօր Սեն-Ժորժի մոտ է, այնտեղից էլ կգնանք զբոսանքը դիտելու։ Իսկ գիշերը կգրեմ և, հենց լույսը բացվի, տպարան կուղարկեմ։ Ցտեսություն։

— Ցտեսություն, Պենկին։

«Գիշերը գրել,— մտածում էր Օբլոմովը,— իսկ ե՞րբ քնել։ Բայց Ղարի ու տես, որ տարեկան հինգ հազար ռուբլի կվաստակի։ Դա հա՞ց է։ Բայց շարունակ գրել, միտքը, հոգին մանր-մունր բաների վրա ծախսել, փոխել համոզմունքները, վաճառքի հանել խելքն ու երևակայությունը, բռնանալ իր բնության վրա, հուզվել, եռալ, այրվել, հանգիստ չիմանալ և շարունակ շարժվել դեպի ինչ-որ տեղ... Եվ շարունակ գրել, շարունակ գրել, ինչպես անիվ, ինչպես մեքենա. գրիր վաղը, մյուս օրը. տոն կլինի, ամառը վրա կհասնի, իսկ նա պետք է շարունակ գրի՞։ Հապա ե՞րբ պետք է կանգ առնի ու հանգստանա։ Դժբա՞խտ մարդ։

Նա գլուխը դարձրեց դեպի սեղանը, որտեղ ամեն ինչ հարթ էր, թանաքն էլ չորացել էր, փետրագրիչն էլ չէր երևում, և ուրախանում էր, որ ինքը պառկած է, անհոգ է, ինչպես մի նորածին մանուկ, որ ինքը չի ցրվում, ոչինչ չի վաճառում...

«Իսկ ստարոստայի նամա՞կը, իսկ բնակարա՞նը»— հիշեց նա հանկարծ և մտքերի մեջ ընկավ։

Բայց ահա նորից զանգահարում են։

— Այս ի՞նչ ընդունելություն է այսօր,— ասաց Օբլոմովը և սպասում էր, թե ով կմտնի։

Ներս մտավ անորոշ տարիքի, անորոշ դեմք ունեցող մի մարդ, այնպիսի, երբ դժվար է լինում տարիքը գուշակել, ոչ գեղեցիկ և ոչ տգեղ, ոչ բարձրահասակ և ոչ կարճահասակ, ոչ շեկ և ոչ թուխ։ Բնությունը նրան չէր տվել ոչ մի սուր, նկատելի գիծ, ոչ վատ և ոչ էլ լավ։ Շատերը նրան կոչում էին Իվան Իվանիչ, ոմանք՝ Իվան Վասիլիչ, ուրիշները՝ Իվան Միխայլիչ։

Ազգանունն էլ տարբեր կերպ էին ասում. ոմանք, թե նա Իվանով է, ուրիշները կոչում էին Վասիլև կամ Անդրեև, երրորդները կարծում էին, թե նա Ալեքսեև է։ Եթե նրան առաջին անգամ տեսնող կողմնակի մարդուն ասես անունը, նա իսկույն կմոռանա, դեմքն էլ կմոռանա. նրա ասածն էլ չի նկատի։ Նրա ներկայությունը ոչինչ չի ավելացնի հասարակությանը, ինչպես և բացակայությունն էլ ոչինչ չի խլի նրանից։ Նրա մտքի մեջ չկան սրամտություն, ինքնատիպություն և այլ հատկություններ, ինչպես հատուկ նշաններ՝ մարմնի վրա։

Գուցե նա կկարողանար, գոնե, պատմել այն ամենը, ինչ տեսել ու լսել է և դրանով, թերևս, զբաղեցներ ուրիշներին; բայց նա ոչ մի տեղ չէր լինում. ինչպես ծնվել էր Պետերբուրգում, էլ չէր հեռացել այնտեղից, հետևաբար, տեսել էր ու լսել այն, ինչ ուրիշներն էլ գիտեին։

Արդյոք համակրելի՞ է այդպիսի մարդը։ Արդյոք նա սիրո՞ւմ է, ատում կամ տանջվո՞ւմ է։ Կարծես պետք է և՛ սիրեր, և՛ չսիրեր, և՛ տանջվեր, որովհետև ոչ ոք դրանից ազատ չէ։ Բայց նա մի կերպ հնար էր գտնում սիրելու բոլորին։ Գան այնպիսի մարդիկ, որոնց մեջ, ինչքան էլ շարշարվես, ոչ մի կերպ չես կարող ո՛չ թշնամության, ո՛չ վրեժ-

խընդրության և ոչ էլ այլ նման ոգի զարթեցնել։ Ինչպես ուզում ես վարվիր, նրանք շարունակ քծնում են։ Սակայն պետք է նրանց նկատմամբ արդարացի լինել. նրանց սերն էլ, եթե չերմաստիճանների բաժանենք, երբեք չի հասնում տաքության։ Թեև այդպիսի մարդկանց մասին ասում են, թե նրանք սիրում են բոլորին, և այդ պատճառով էլ բարի են, բայց իսկապես նրանք ոչ ոքի չեն սիրում և բարի են այն պատճառով միայն, որ չար չեն։

Եթե այդպիսի մարդու ներկայությամբ ուրիշներն աղքատին ողորմություն տան,— նա էլ կնետի իր կոպեկը, իսկ եթե հայհոյեն կամ վռնդեն, կամ ծաղրեն,— ապա նա էլ կհայհոյի և կծաղրի մյուսների հետ միասին։ Նրան չի կարելի հարուստ անվանել, որովհետև նա հարուստ չէ, այլ ավելի շուտ աղքատ է. բայց վճռականապես աղքատ էլ չի կարելի անվանել նրան, այն պատճառով, սակայն, որ նրանից ավելի աղքատներ շատ կան։

Նա ինչ-որ եկամուտ ունի՝ տարեկան երեք հարյուր ռուբլի և բացի այդ՝ ծառայում է աննշան պաշտոնով, աննշան էլ ոռճիկ է ստանում. կաբիքի մեջ չէ և ոչ ոքից փող պարտք չի վերցնում, իսկ նրանից պարտք վերցնելն էլ ոչ ոքի մտքով չի անցնում։

Ծառայության մեջ առանձին մշտական զբաղմունք չունի, որովհետև նրա ծառայակիցներն ու պետերը ոչ մի կերպ չէին կարողանում նկատել, թե ինչն է վատ անում, ինչը լավ, այնպես, որ կարելի լիներ որոշել, թե հատկապես ինչ բանի է ընդունակ նա։ Եթե նրան ասեն այս արա, և այն, նա այնպես կկատարի գործը, որ պետը միշտ կդժվարանա, թե ինչ կարծիք հայտնի նրա աշխատանքի մասին. կնայի, կնայի, կկարդա, կկարդա, և միայն կասի. «Թողեք մնա, ես հետո կնայեմ... այո, համարյա այնպես է, ինչպես պետք է»։

Երբեք նրա դեմքին չես գտնի հոգսի, երազանքի հետք, որ ցույց տա, թե այդ բոպեին նա զբաղվում է ինքն իր հետ, կամ երբեք չես տեսնի, որ նա իր քննախույզ հայացքը գցեր որևէ արտաքին առարկայի վրա, որ կամենար յուրացնել իր գործածության համար։

Փողոցում ծանոթ մարդ է հանդիպում նրան։— Ո՞ւր,— կհարցնի։— Էհ, գնում եմ ահա ծառայության, կամ խանութ։

կամ այցելելու մեկին։— Ավելի լավ է՝ գնանք ինձ հետ,— կասի նա, —փոստ կամ դերձակի մոտ, կամ էլ մի քիչ զբոսնենք,— և նա կգնա նրա հետ, կմտնի թե դերձակի մոտ, թե փոստ և կզբոսնի այն կողմի հակառակ ուղղությամբ, ուր ուզում էր գնալ։

Հազիվ թե մորից բացի ուրիշ մեկը նկատել է նրա լույս աշխարհ գալը, շատ քչերն են նկատում նրան կյանքի ընթացքում, բայց, անշուշտ, ոչ ոք չի նկատի, թե ինչպես կանհետանա նա աշխարհից. ոչ ոք չի հարցնի, չի ցավի նրա համար, և ոչ էլ մեկը կուրախանա նրա մահվան առթիվ։ Նա ոչ թշնամի ունի, ոչ բարեկամ, բայց ունի բազմաթիվ ծանոթներ։ Գուցե միայն հուղարկավորության թափորը գրավի անցորդի ուշադրությունը, որն առաջին անգամ այդ անորոշ անձին կպատվի նրան վայել պատվով խոր գլուխ տալով. գուցե նույնիսկ մի ուրիշ հետաքրքրվող մարդ կվազի հուղարկավորության առաջին շարքերը, իմանալու համար հանգուցյալի անունը, և տեղնուտեղն էլ կմոռանա նրան։

Այդ բոլոր Ալեքսեևը, Վասիլևը, Անդրեևը, կամ ինչպես կուզեք, մի ոչ լրիվ, անդեմ ակնարկ է մարդկային զանգվածի վերաբերմամբ, նրա խուլ արձագանքը, անորոշ արտացոլումը։

Նույնիսկ Զախարը, որը սրտաբաց խոսակցությունների ժամանակ, դարպասների մոտ ունեցած հավաքույթներում կամ խանութներում, տալիս էր իր բարինին այցելող բոլոր հյուրերի զանազան բնութագիրը, միշտ դժվարանում էր, երբ հերթը հասնում էր այդ... դիցուք թե Ալեքսեևին։ Նա երկար մտածում էր, երկար որոնում այդ անձի արտաքինի, շարժուձևի կամ բնավորության մեջ մի որևէ անկյունավոր գիծ, որից կարելի լիներ կառչել, և վերջապես, թափահարելով ձեռքը, այսպես էր արտահայտվում.— իսկ սա ոչ գույն ունի, ոչ շենք, ոչ շնորհք։

— Ա՜,— դիմավորեց նրան Օբլոմովը։— Այդ դո՞ւք եք, Ալեքսեև։ Բարև ձեզ։ Որտեղի՞ց։ Մի մոտեցեք, մի մոտեցեք. ես ձեռք չեմ տա ձեզ, դուք ցրտի՞ց եք գալիս։

— Ի՞նչ եք ասում, ի՞նչ ցուրտ։ Ես միտք չունեի այսօր ձեզ մոտ գալու,— ասաց Ալեքսեևը,— բայց Ոչինինը պա-

տահեց և իր մոտ տարավ։ Ես եկել եմ ձեր ետևից, Իլյա Իլյիչ։

— Այդ ո՞ւր։

— Գնանք Օվչինինի մոտ։ Այնտեղ են Մատվեյ Անդրեյիչ Ալյանովը, Կազիմիր Ալբերտովիչ Պխայլոն, Վասիլի Սևաստյանովիչ Կոլիմյագինը։

— Ինչո՞ւ են նրանք հավաքվել այնտեղ և ի՞նչ են ուզում ինձնից։

— Օվչինինը ձեզ հրավիրում է ճաշելու։

— Հը՛մ։ Ճաշելու...— կրկնեց Օբլոմովը միապաղաղ տոնով։

— Իսկ հետո բոլորը գնալու են Եկատերինհոֆ, նրանք պատվիրեցին ասել ձեզ, որ դուք կառք վարձեք։

— Իսկ ի՞նչ կա այնտեղ անելու։

— Ինչպե՞ս թե։ Այսօր զբոսանք կա այնտեղ։ Մի՞թե չը գիտեք. այսօր մայիսի մեկն է։

— Նստեք. կմտածենք...— ասաց Օբլոմովը։

— Դե՛, վե՛ր կացեք։ Ժամանակն է հագնվելու։

— Մի քիչ սպասեք. չէ՞ որ դեռ վաղ է։

— Ի՞նչ վաղ։ Նրանք խնդրել են ժամը տասներկուսին. կճաշենք մի քիչ շուտ, ժամը երկուսին, ապա զբոսնանք։ Դե շո՛ւտ գնանք։ Պատվիրե՞մ, որ ձեր հագուստները բերեն։

— Ի՞նչ հագնվել։ Ես դեռ չեմ լվացվել։

— Ուրեմն լվացվեք։

Ալեքսեևն սկսեց ետուառաջ քայլել սենյակում, հետո կանգ առավ նկարի առջև, որ առաջ հազար անգամ տեսել էր։ Հարևանցի նայեց լուսամուտից, վերցրեց դարակի վրայից ինչ-որ մի իր, շուռումուռ տվեց, ամեն կողմից դիտեց ու նորից տեղը դրեց, և սկսեց նորից քայլել, շվշվացնելով,— այդ բոլորը նրա համար, որպեսզի չխանգարի Օբլոմովին վեր կենալ ու լվացվել։ Այսպես անցավ մոտ տասը րոպե։

— Այդ ի՞նչ բանի եք,— հանկարծ հարցրեց Ալեքսեևը Իլյա Իլյիչին։

— Ի՞նչ։

— Դեռ շարունակում եք պառկե՞լ։

— Իսկ մի՞թե պետք է վեր կենալ։

— Իհարկե։ Մեզ սպասում են։ Դուք ուզում էիք գնալ։

— Ո՞ւր գնալ։ Ես չէի ուզում ոչ մի տեղ գնալ...

— Իլյա՛ Իլյիչ, չէ՞ որ հենց նոր ասում էիք, որ գնում ենք Օվչինինի մոտ ճաշելու, իսկ հետո՝ Եկատերինհոֆ...

— Ես պետք է խոնավ եղանակին գնա՞մ։ Իսկ ի՞նչ կա այնտեղ, որ ես չեմ տեսել։ Շուտով անձրև կգա, օրն ամպամած է,— ծույլ-ծույլ ասում էր Օբլոմովը։

— Երկնքի երեսին ոչ մի կտոր ամպ չկա, իսկ դուք անձրև հնարեցիք։ Ամպամած է այն պատճառով, որ ձեր լուսամուտները ո՞վ գիտե երբվանից չեն լվացվել։ Իսկ կե՞ղտը, հլա նրանց վրայի կե՞ղտը։ Բոլորովին բան չի երևում, դեռ մի վարագույրն էլ համարյա իջեցված է։

— Հապա մի գնացե՛ք, այդ մասին Զախարի մոտ խոսք բաց արեք. նա իսկույն կառաջարկի կանայք վարձել և տնից ամբողջ օրով դուրս կանի։

Օբլոմովը մտքերի մեջ ընկավ, իսկ Ալեքսեևը մատներով թխթխկացնում էր սեղանին, որի մոտ նստած էր, ցրված կերպով աչք ածելով պատերին ու առաստաղին։

— Դե, ինչպե՞ս։ Ի՞նչ անենք։ Հագնվելո՞ւ եք, թե այդպես եք մնալու,— հարցրեց նա մի քանի րոպեից։

— Ի՞նչ կա որ։

— Հապա Եկատերինհոֆը...

— Ի՞նչ եք կպել այդ Եկատերինհոֆից, իսկապես,— սրտնեղությամբ ասաց Օբլոմովը։— Չե՞ք կարողանում այստեղ մնալ։ Ցո՞ւրտ է սենյակում, թե վատ հոտ է գալիս, որ շարունակ դուրս եք նայում։

— Ոչ, ձեզ մոտ ես ինձ միշտ լավ եմ զգում. ես գոհ եմ,— ասաց Ալեքսեևը։

—Իսկ քանի որ այստեղ լավ է, էլ ի՞նչ կարիք կա ուրիշ տեղ ուզելու։ Ավելի լավ է մնացեք ինձ մոտ ամբողջ օրը, կճաշենք, իսկ երեկոյան՝ ասուված ձեզ հետ... Հա, ես մոռացել էի. ինչպե՞ս կարող եմ գնալ։ Տարանտևը գալու է ճաշի. այսօր շաբաթ է։

— Որ այդպես է... ես լավ... ինչպես դուք...— ասաց Ալեքսեևը։

— Իսկ իմ գործերի մասին ձեզ չե՞մ ասել,— աշխույժ հարցրեց Օբլոմովը։

— Ի՞նչ գործերի մասին։ Չգիտեմ,— պատասխանեց Ալեքսեևը, ամբողջ ուշադրությամբ նայելով նրան։

— Ինչո՞ւ ես այսքան երկար ժամանակ վեր չեմ կենում։ Չէ՞ որ շարունակ պառկել ու մտածում էի, թե ինչպես պրծնեմ փորձանքից։

—Ի՞նչ է պատահել,— հարցրեց Ալեքսեևը, աշխատելով վախեցած կերպարանք ընդունել։

— Երկու դժբախտություն։ Չգիտեմ, թե ինչ անեմ։

— Ի՞նչ դժբախտություններ են։

— Բնակարանից դուրս են անում. երևակայեցեք՝ բնակարանը պետք է փոխել. փոփոխություններ, գլխացավանք, սոսկալի է նույնիսկ մտածե՞լը։ Չէ՞ որ ութ տարի ապրել եմ այս բնակարանում։ Գլխիս փորձանք բերեց տանտերը. «որքան կարելի է շուտ հեռացեք, ասում է»։

— Եվ այն էլ՝ որքան կարելի է շո՞ւտ։ Շտապեցնում է, նշանակում է՝ պետք է։ Անտանելի բան է տեղափոխվելը. տեղափոխության հետ միշտ շատ հոգսեր են կապված,— ասաց Ալեքսեևը,— կկորցնեն, չարդուփշուր կանեն՝ շատ սրտնեղիչ բան է։ Իսկ ձեր բնակարանն այնքան լավն է... ի՞նչ եք վճարում։

— Որտե՞ղ կգտնես մի ուրիշ այդպիսի բնակարան,— ասում էր Օբլոմովը,— և այն էլ շտապ։ Բնակարանը չոր է, տաք, հանգիստ տուն է, թալանել են ընդամենը մեկ անգամ։ Այ, առաստաղը, կարծես, ամուր չէ, ծեփը կախ է ընկել, բայց դեռ ցած չի թափվում։

— Ասացե՛ք, խնդրեմ,— ասում էր Ալեքսեևը, թափահարելով գլուխը։

— Ինչպե՞ս անենք, որ... չտեղափոխվենք,— մտմտուքի մեջ, ինքն իրեն դատողություններ էր անում Օբլոմովը։

— Բնակարանը պայմանագրո՞վ է վարձված,— հարցրեց Ալեքսեևը, հայացք ձգելով սենյակի վրա՝ առաստաղից մինչև հատակը։

— Այո, միայն պայմանագրի ժամկետն անցել է, ես այսքան ժամանակ վճարում էի ամսահաշիվ... չեմ հիշում միայն, թե երբվանից։

— Հապա դուք ինչպե՞ս եք մտադիր վարվել,— հարցրեց Ալեքսեևը մի քիչ լռելուց հետո,— փոխադրվե՞լ, թե մնալ։

— Ոչինչ էլ մտադիր չեմ,— ասաց Օբլոմովը,— չեմ էլ ուզում այդ մասին մտածել։ Թող Զախարը մի բան մտածի։

— Իսկ այ, մի քանիսը այնպես սիրում են փոխադրվել,— ասաց Ալեքսեևը,— միայն նրա մեջ են հաճույք գտնում, թե ինչպես փոխեն բնակարանը...

— Դե, թող այդ «մի քանիսն» էլ փոխադրվեն։ Իսկ ես ոչ մի փոփոխություն տանել չեմ կարող։ Սա դեռ ի՞նչ է որ, բնակարա՞ն,— խոսեց կրկին Օբլոմովը։— Հապա մի տեսեք, թե ինչ է գրում ինձ ստարոստան։ Ես ձեզ իսկույն ցույց կըտամ նամակը... ո՞ւր է այն։ Զախար, Զախա՞ր։

— Ախ դու, երկնային տիրուհի,— խռպոտ ձայնով ասաց Զախարն իր սենյակում, ցած թռչելով վառարանի վրայից.— ե՞րբ պիտի աստված հոգիս առնի։

Նա ներս մտավ և պղտոր հայացքով նայեց բարիներին։

— Ի՞նչ է, նամակը դեռ չե՞ս գտել։

— Իսկ որտե՞ղ գտնեմ։ Ես ի՞նչ գիտեմ, թե ձեզ ինչ նամակ է հարկավոր։ Ես կարդալ չգիտեմ։

— Միևնույն է, փնտրի՛ր։

— Ինքներդ երեկ երեկոյան ինչ-որ նամակ էիք կարդում,— ասաց Զախարը,— իսկ հետո էլ չեմ տեսել։

— Որտե՞ղ է այն,— սրտնեղությամբ վրա բերեց Իլյա Իլյիչը։— ես կուլ չեմ տվել։ Շատ լավ հիշում եմ, որ դու վերցրիր մոտիցս և ահա այստեղ ինչ-որ տեղ դրիր։ Բայց թե որտեղ է այն, նայի՛ր։

Նա թափահարեց վերմակը. սրա ծալքերից գետնին ընկավ նամակը։

— Ա՛յ, դուք ամեն բան այդպե՞ս վրաս եք գցում...

— Դե՛, դե՛, գնա՛, գնա՛,— միաժամանակ իրար վրա գոռացին Օբլոմովն ու Զախարը։

Զախարը գնաց, իսկ Օբլոմովը սկսեց կարդալ նամակը, որ կարծես գրված էր կվասով, գորշ թղթի վրա, թխագույն գմուռսե կնիքով։ Ահագին դժգույն տառերը ձգվում էին հանդիսավոր երթով, չդիպչելով միմյանց, ուղղաձիգ գծով՝ վերևի անկյունից դեպի ներքևինը։ Երթը երբեմն խանգարվում էր դժգույն թանաքի մեծ բծով։

«Ողորմած տեր,— սկսեց Օբլոմովը,— Ձերդ ազնվություն, մեր հայր և բարերար Իլյա Իլյիչ...»

Այստեղ Օբլոմովը բաց թողեց ողջույնի և առողջության մաղթանքների մի քանի խոսքեր և շարունակեց մեջտեղից.

«Հաղորդում եմ քո աղայական ողորմածությանը, որ քեզ մոտ, քո հայրենական կալվածքում, մեր բարերար, ամեն ինչ լավ է։ Արդեն հինգերորդ շաբաթն է՝ անձրև չկա. երևի բարկացրել ենք տեր աստծուն, որ անձրև չի գալիս։ Այսպիսի երաշտ ծերունիները չեն հիշում. գարնանացանը խանձվում է, կարծես բոցի մեջ լինի։ Աշնանացանը, տեղեր կան, որ որդն է կերել, տեղեր էլ կան, որ վաղահաս սառնամանիքն է փչացրել. ուզեցինք նորից հերկել գարնանացանի համար, բայց չգիտենք, մի բան կբուսնի՞։ Գուցե ողորմած աստված գթա քո աղայական ողորմածությանը, իսկ մեր մասին չենք հոգում՝ թո՛ղ կոտորվենք։ Իվանի օրվա նախօրեին էլի երեք մուժիկ հեռացան. Լապտևը, Բալոշովը, առանձին հեռացավ Վասկան, դարբնի տղան։ Ես նրանց կանանց քշեցի ետևներից. այդ կանայք չվերադարձան, այլ, ասում են, ապրում են Զելկիում, իսկ Զելկի գնաց իմ Վերխլյովցի քավորը. կառավարիչը նրան ուղարկեց այնտեղ. լսել էինք, որ արտասահմանյան արոր էին բերել, կառավարիչն էլ քավորիս ուղարկեց տեսնելու այդ արորը։ Ես քավորիս պատվիրեցի փախած մուժիկների մասին. իսպրավնիկին խնդրել էր, նա ասել էր, «Թուղթ տուր, և այն ժամանակ բոլոր միջոցները ձեռք կառնվեն՝ գյուղացիներին իրենց բնակավայրերում ունեցած տնտեսությունները վերադարձնելու համար», և դրանից բացի էլ ոչինչ չասաց, ես նրա ոտներն ընկա ու սկսեցի արտասվալից աղաչել, իսկ նա ամբողջ ուժով գոռաց. «Գնա, գնա. քեզ ասացի, որ կկատարվի, թուղթ ներկայացրու»։ Բայց ես թուղթ չներկայացրի։ Իսկ այստեղ մարդ վարձել չի կարելի. բոլորը գնացել են Վոլգայի ափերը, բարկաների վրա աշխատելու— այնքան հիմարացել է այստեղ ժողովուրդը, բարերար տեր իմ Իլյա Իլյիչ։ Այս տարի մեր քաթանը տոնավաճառ չի դուրս գա. չորանոցն ու սպիտակարանը կողպեքով փակել եմ և Սիլուգին նշանակել, որ գիշեր-ցերեկ հսկի. զգաստ մուժիկ է, բայց որպեսզի տերունական որևէ բան չթողնի, գիշեր-ցերեկ հետևում եմ նրան։ Մյուսները սաստիկ հարբում են և ուզում են բահրային դառնալ։ Ապառքները լրիվ չեն հավաքվում. այս տարի եկամուտ կուղարկենք, մեր հայր, բարերար, մոտ երկու հազարով պակաս, քան անցած տարի, մենակ երաշտը վերջնականապես չավերի, իսկ

այն կուղարկենք, որ և առաջարկում ենք քո ողորմածությանը»։

Այնուհետև հետևում էին անձնվիրության արտահայտությունն ու ստորագրությունը. «Քո ստարոստա, ամենախոնարհ ստրուկ Պրոկոֆի Վիտյագուշկինը սեփական ձեռքը դրեց»։ Դիր չիմանալու պատճառով խաչ էր դրած։ «Իսկ այդ ստարոստայի բերանից գրեց նրա աներորդին, Դեմկա Կրիվոյը»։

Օբլոմովը նայեց նամակի վերջին։

— Ամսաթիվ և տարեթիվ չկա,— ասաց նա,— երևի նամակը ստարոստայի մոտ անցյալ տարվանից է ընկած մնացել. այստեղ և Իվանի օրը կա, և երաշտը։ Երբ է ուշքի եկել։

Մտածմունքի մեջ ընկավ։

— Հը՞,— շարունակեց նա։— Ինչպե՞ս է թվում ձեզ. առաջարկում է «երկու հազարով պակա՞ս»։ Ինչքա՞ն է մնում որ։ Հա՞, անցյալ տարի ես ինչքա՞ն ստացա,— հարցրեց նա, նայելով Ալեքսեևին։— Ես այն ժամանակ ձեզ չե՞մ ասել։

Ալեքսեևն աչքերը հառեց առաստաղին և մտածմունքի մեջ ընկավ։

— Պետք է Շտոլցին հարցնել, հենց որ գա,— շարունակեց Օբլոմովը։— Կարծեմ, յոթ-ութ հազար էր... Վա՜տ բան է չգրելը։ Ուրեմն նա ինձ հիմա վե՞ց հազարի է կապում։ Ախր ես քաղցից կմեռնե՞մ։ Ինչո՞վ ապրեմ այստեղ։

— Ի՞նչ հարկ կա այդպես տագնապի մեջ ընկնելու, Իլյա՜ Իլյիչ,— ասաց Ալեքսեևը։— Երբեք պետք չէ անձնատուր լինել հուսահատության. վերջը լավ կլինի։

— Դուք լսո՞ւմ եք՝ ինչ է գրում նա։ Փոխանակ փող ուղարկի, մի կերպ մխիթարի, նա, կարծես ծաղրելու համար, միայն անախորժություններ է պատճառում ինձ։ Եվ ախր ամե՞ն տարի է այսպես։ Ա՜յ, ես հիմա չգիտեմ, ինչ անեմ։ «Երկու հազարով պակա՞ս»։

— Այո, վնասը մեծ է,— ասաց Ալեքսեևը,— երկու հազա՞ր հանաք բան չէ։ Ա՜յ, Ալեքսեյ Լոգինը, ասում են, այս տարի նույնպես միայն տասներկու հազար կստանա, տասնութ հազարի փոխարե՞ն։

— Ուրեմն տասներկու բայց ոչ թե վեց,— ընդհատեց Օբլոմովը։— Ստարոստան բոլորովին գցեց իմ տրամադրու-

թյունը։ Եթե իսկապես էլ այդպես է՝ անբերություն և երաշտ, ինչի՞ համար նախօրոք վշտացնել։

— Այո՛... իսկապես...— սկսեց Ալեքսեևը,— կարիք չկար։ բայց ի՞նչ նրբազգաց վերաբերմունք կարելի է սպասել մուժիկից։ Այդ ժողովուրդը ոչինչ չի հասկանում։

— Լա՛վ, դուք իմ տեղն ի՞նչ կանեիք,— հարցրեց Օբլոմովը, հարցական հայացք գցելով Ալեքսեևի վրա, այն քաղցը հույսով, թե գուցե մի բան կհնարի, որով կհանգստացնի իրեն։

— Հարկավոր է մտածել, Իլյա Իլյիչ, հանկարծ վճռել չի կարելի,— ասաց Ալեքսեևը։

— Նահանգապետի՞ն գրեմ, ինչ է,— մտորմունքի մեջ ասում էր Իլյա Իլյիչը։

— Իսկ ո՞վ է ձեր նահանգապետը,— հարցրեց Ալեքսեևը։

Իլյա Իլյիչը չպատասխանեց և մտածմունքի մեջ ընկավ։ Ալեքսեևը լռեց և նույնպես ինչ-որ բանի մասին էր մտածում։

Օբլոմովը, նամակը ճխլտելով ձեռքի մեջ, գլուխը դրեց ձեռքերի վրա, իսկ արմունկները հենեց ծնկներին և այդպես նստած մնաց մի որոշ ժամանակ՝ տանջվելով անօգուտ մտքերի հորձանքից։

— Գոնե Շտո՛լցը շուտ գար,— ասաց։— Գրում է, թե շուտով այստեղ կլինի, իսկ ինքը, սատանան գիտե, թե որտեղերն է թափառում։ Կարգի կբերեր։

Նա նորից դարդոտվեց։ Երկուսն էլ երկար ժամանակ լուռ էին։ Վերջապես, Օբլոմովն առաջինն սթափվեց։

— Ահա՛ թե ինչ է հարկավոր այստեղ անել,— ասաց նա վճռականորեն և քիչ էր մնում անկողնից վեր կենա.— և անել պետք է որքան կարելի է շուտ, դանդաղել պետք չէ... Նախ...։

Այդ ժամանակ նախասենյակում կատաղի զանգ հնչեց։ այնպես որ Օբլոմովն ու Ալեքսեևը ցնցվեցին, իսկ Զախարը վայրկենապես ցած թռավ պառկելատեղից։

III

— Տա՞նն է,— բարձրաձայն և կոպիտ հարցրեց մեկը նախասենյակում։

— Ո՞ւր պիտի գնար այս ժամանակ,— է՛լ ավելի կոպիտ պատասխանեց Զախարը։

Ներս մտավ թառասուն տարեկանին մոտ, խոշոր տեսակին պատկանող, բարձրահասակ, թիկունքով ու ամբողջ մարմնով լայնածավալ, դեմքի խոշոր գծերով, մեծ գլխով, ամուր, կարճ վզով, մեծ դուրս պրծած աչքերով, հաստ շրթունքներով մի մարդ։ Հարևանցի հայացքն այդ մարդու վրա առաջացնում էր ինչ-որ կոպիտ ու անմաքուր բանի գաղափար։ Երևում էր, որ նա հետամուտ չէր զգեստի նրբագեղության։ Միշտ չէր հաջողվում նրան մաքուր սափրված տեսնել։ Բայց ըստ երևույթին նրա համար դա միևնույն էր։ Նա չէր քաշվում իր զգեստից և կրում էր այն մի ցինիկ արժանապատվությամբ։

Միխեյ Անդրեևիչ Տարանտևն էր դա, Օբլոմովի հայրենակիցը։

Տարանտևն ամեն բանի նայում էր մռայլությամբ, կիսաարհամարհանքով, բացահայտ անբարյացակամությամբ շքեղ ապատի նկատմամբ, պատրաստ հայհոյելու ամեն ինչ ու բոլորին աշխարհում, որպես մի ինչ-որ անարդարությունից վիրավորված կամ իր որևէ արժանիքը չճանաչված, վերջապես, բախտից հալածված ուժեղ բնավորության տեր մեկը, որն ակամա, անվհատ հպատակվում է այդ բախտին։

Նրա շարժումները համարձակ և մեծաթափ էին. նա խոսում էր բարձրաձայն, աշխույժ և համարյա միշտ բարկացած. եթե մի փոքր հեռվից լսեիր, կկարծեիր՝ երեք դատարկ սայլեր են անցնում կամուրջի վրայով։ Նա երբեք չէր քաշվում ոչ ոքի ներկայությունից, բառերի պակաս չէր զգում և ընդհանրապես միշտ կոպիտ էր իր վերաբերմունքի մեջ դեպի բոլորը, չբացառելով նաև բարեկամներին, կարծես ուզում էր զգացնել, որ մարդու հետ խոսելով, նույնիսկ նրա մոտ ճաշելով կամ ընթրելով՝ մեծ պատիվ է անում նրան։

Տարանտևը աշխույժ և խորամանկ խելքի տեր մարդ էր. ոչ ոք նրանից ավելի լավ չէր կարող լուծել որևէ ընդհանուր

առօրյա կյանքի հարց կամ իրավաբանական խճճված գործ. նա իսկույն գործողությունների թեորիա կկառուցեր այս կամ այն դեպքի համար և շատ նուրբ կերպով ապացույցներ կբերեր, իսկ իբրև եզրափակում՝ գրեթե միշտ էլ կոպիտ խոսքեր կասեր այն մարդուն, ով իր հետ որևէ բանի մասին խորհրդակցեր։

Մինչդեռ ինքը, ինչպես որ քսանհինգ տարի առաջ մի գրասենյակում գրագիր էր մտել, հենց այդ պաշտոնում էլ սպիտակեցրել էր մազերը։ Ոչ իր և ոչ էլ որևէ ուրիշ մեկի մտքով էլ չէր անցել, որ նրա պաշտոնը բարձրանա։

Բանն այն է, որ Տարանտևը վարպետ էր միայն խոսելու մեջ. խոսքերով նա ամեն ինչ վճռում էր պարզ ու հեշտ, մանավանդ երբ գործն ուրիշներին էր վերաբերում. բայց հենց որ պետք էր լինում մատը մատին խփել, տեղից շարժվել, մի խոսքով՝ հենց իր ստեղծած թեորիան գործադրել և նրան գործնական ընթացք տալ, կարգադրելու ընդունակություն, արագություն ցույց տալ, նա բոլորովին ուրիշ մարդ էր. այստեղ նրան մի բան պակասում էր. նա հանկարծ և՛ նեղ դրության մեջ էր ընկնում, և՛ տկարանում էր, մեկ անհարմար էր զգում, մեկ ուրիշ գործ էր պատահում, որին նույնպես չէր ձեռնարկում, իսկ եթե ձեռնարկել էր, աստված գիտե, թե ինչ դուրս կգար։ Կարծես երեխա լինի. մի տեղ աշքաթող կանի, մի այլ տեղ չի իմանա ինչ-որ դատարկ բան, մի երրորդ տեղ կուշանա, և կվերջացնի նրանով, որ գործի կեսին մի կողմ կնետի այն կամ կսկսի այդ գործը վերջից և այնպես կփչացնի ամեն ինչ, որ ոչ մի կերպ ուղղել չի լինի, դեռ հետո էլ ինքը կսկսի հայհոյել։

Նրա հայրը, հին ժամանակվա գավառական գրագիր, ուզում էր որդուն որպես ժառանգություն թողնել ուրիշների գործերը վարելու արվեստն ու փորձառությունը և ատենավայրում ծառայելու ճարպկորեն անցկացրած իր ասպարեզը. բայց ճակատագիրն այլ կերպ էր տնօրինել։ Հայրը, որ ժամանակին գռոշներով ռուսերեն էր սովորել, չէր ուզում, որ իր որդին ետ ընկնի ժամանակից և կամեցավ նրան, բացի գործեր վարելու խորիմաստ գիտությունից, որևէ բան սովորեցնել։ Նա մոտ երեք տարի ուղարկում էր որդուն քահանայի մոտ՝ լատիներեն սովորելու։

Թեոֆիլուսից ընդունակ մանուկը երեք տարվա ընթացքում անցավ լատիներեն քերականությունն ու համաձայնությունը և սկսել էր հասկանալ Կոռնելիոս Նեպոտին, բայց հայրը վճռեց, որ այնքանն էլ բավական է, ինչքան նա գիտե, որ այդ գիտելիքներն արդեն նրան ահագին առավելություն են տալիս հին սերնդի նկատմամբ և որ, վերջապես, հետագա պարապմունքները կարող են, թերևս, վնասել ծառայության գործին ատենավայրերում։

Տասնվեցամյա Միխեյը, չգիտենալով ինչ անել իր լատիներենի հետ, սկսեց ծնողների տանը մոռանալ այն, բայց դրա փոխարեն, սպասելով զեմստվային կամ գավառական դատարանին ներկա լինելու պատվին, առայժմ ներկա էր լինում հոր բոլոր քեֆերին, և հենց այդ դպրոցում էլ, անկեղծ զրույցների միջավայրում, նրբորեն զարգացավ երիտասարդ մարդու միտքը։

Երիտասարդական դյուրազգացությամբ նա ականջ էր դնում հոր և նրա ընկերների պատմություններին զանազան քաղաքացիական և քրեական գործերի մասին, որոնք անց էին կենում հին ժամանակվա այս բոլոր գրագիրների ձեռքով։

Բայց այս ամենը ոչ մի արդյունքի չհասցրեց։ Միխեյից գործարար ու պատրվակագործ մարդ դուրս չեկավ, թեև հոր բոլոր ջանքերն այդ ուղղությամբ էին և, իհարկե, հաջողությամբ կպսակվեին, եթե բախտը չխորտակեր ծերունու դիտավորությունները։ Միխեյն, իրոք, յուրացրել էր հոր զրույցների ամբողջ թեորիան. մնում էր միայն գործադրել այն, բայց հոր մահվան պատճառով նա չկարողացավ դատարան մտնել, և մի ինչ-որ բարերար նրան Պետերբուրգ տարավ, գրագրի տեղ գտավ մի դեպարտամենտում, իսկ հետո էլ նրա մասին մոռացավ։

Այսպես Տարանտևը ողջ կյանքի ընթացքում տեսաբան էլ մնաց։ Պետերբուրգի ծառայության մեջ նա բան չէր կարող անել իր լատիներենով և արդար ու անարդար գործերը քմահաճույքով վճռելու նուրբ թեորիայով. մինչդեռ նա իր մեջ կրում ու գիտակցում էր նիրհող ուժ, որն ընդմիշտ փակված է թշնամի պարագաների հետևանքով, առանց երևան գալու հույսի, ինչպես հեքիաթներում, նեղ կախարդված պարիսպների մեջ փակված էին լինում վնաս հասցնելու ուժից

զրկված չար ոգիները։ Դուցե, անօգուտ ուժի այդ գիտակցությունից էր, որ Տարանտևը իր վերաբերմունքի մեջ կոպիտ էր, անբարյացակամ, շարունակ բարկացած և կռվարար։

Նա դառնությամբ և արհամարհանքով էր նայում իր այժմյան զբաղմունքներին՝ թղթեր ստորագրելուն, գործեր կարելուն և այլն։ Հեռվում նրան ժպտում էր միայն մի վերջին հույս՝ ծառայության անցնել օղու վարձակալության մեջ։ Այս ուղու մեջ էր տեսնում նա այն ասպարեզի միակ շահավետ փոխարինությունը, որ նրան կտակել էր հայրը և որին չէր հասել։ Իսկ սրան սպասելով՝ հոր կողմից ստեղծված գործունեության և կյանքի պատրաստի թեորիան, կաշառքների և ենթամտության թեորիան, վրիպելով գլխավոր և իրեն արժանի գործունեության ասպարեզից գավառում, գործադրվում էր նրա շնչին գոյության բոլոր մանրուքների նկատմամբ Պետերբուրգում, սողոսկում էր նրա բոլոր բարեկամական հարաբերությունների մեջ, քանի որ պաշտոնական հարաբերություններ չուներ։

Նա հոգով, տեսությամբ կաշառակեր էր. գործեր ու խնդրատուներ չունենալով՝ հնար էր գտնում կաշառք վերցնելու իր ծառայակիցներից, բարեկամներից, աստված գիտի, թե ինչպես և ինչ բանի համար, ում որ միայն կարող էր, ստիպում էր մերթ խորամանկությամբ, մերթ պնդերեսությամբ, հյուրասիրել իրեն, բոլորից պահանջում էր հարգանք, առանց դրան արժանի լինելու, կռվախնդիր էր։ Նրան երբեք շփոթություն չէր պատճառում մաշվա՝ զգեստը, բայց նա հեռու չէր տագնապի մեջ ընկնելուց, եթե օրվա հեռանկարում չուներ մի լավ ճաշ՝ օղու և գինու պատշաճ քանակությամբ։

Այդ պատճառով նա իր ծանոթների շրջանում մեծ պահապան շան դեր էր կատարում, որը հաշում է բոլորի վրա, թույլ չի տալիս ոչ ոքի շարժվելու, բայց որը, միևնույն ժամանակ, ճանապարհին անպատճառ կհափշտակի ընկնող մսի կտորը, որտեղից և ուր էլ ընկնելիս լինի այն։

Այսպիսի մարդիկ էին Օբլոմովի երկու ամենաեռանդուն հաճախորդները։

Ինչի՞ համար էին այդ երկու ռուս պրոլետարները նրա մոտ գնում։ Նրանք շատ լավ գիտեին, թե ինչու— խմելու, ուտելու, լավ սիգարներ ծխելու համար։ Նրանք գտնում էին

ամենայն դեպս, անդորր ապաստան և միշտ միատեսակ, եթե ոչ սիրալիր, ապա անտարբեր ընդունելություն։

Բայց ինչու էր Օբլոմովը նրանց ընդունում. այս մասին նա հազիվ թե հաշիվ էր տալիս իրեն։ Սակայն, թվում է, նույն պատճառով, որով մինչև հիմա էլ մեր հեռավոր Օբլոմովկաներում, յուրաքանչյուր ունևոր տանը հավաքվում է երկու այդպիսի մարդկանց խումբ, մարդկանց, որոնք հաց չունեն, արհեստ չունեն, ձեռք չունեն արտադրողականության համար և ունեն միայն ստամոքս՝ սպառելու համար, բայց գրեթե միշտ էլ աստիճան ու կոչում ունեն։

Դեռևս կան այնպիսի գրգամոլներ, որոնց անհրաժեշտ են նման լրացումները կյանքում. նրանք ձանձրանում են առանց ավելորդ բանի աշխարհում։ Ո՞վ կմատուցի անկյունն ընկած ծխախոտի տուփը կամ կբարձրացնի հատակին ընկած թաշկինակը։ Ո՞ւմ կարելի է դանգատվել գլխացավից՝ իրավունք ունենալով կարեկցություն սպասելու, պատմել վատ երազը և պահանջել դրա բացատրությունը։ Ո՞վ պիտի քունը բերելու համար գիրք կարդա և օգնի նրան քնելու։ Իսկ երբեմն էլ այդպիսի պրոլետարին ուղարկում են մերձակա քաղաք գնումներ կատարելու, նա օգնում է տնտեսության մեջ. հոգեբանք չեն տանջվելու։

Տարանտևը շատ աղմուկ էր բարձրացնում, Օբլոմովին հանում էր անշարժ դրությունից և ձանձրույթից։ Նա բղավում էր, վիճում և ինչ-որ ներկայացում էր սարքում, ծույլ բարինին ազատելով խոսելու և գործելու անհրաժեշտությունից։ Այն սենյակը, որտեղ թագավորում էր քունն ու անդորրը, Տարանտևը բերում էր կյանք, շարժում, երբեմն էլ լուրեր դրսից։ Օբլոմովը կարող էր լսել, նայել, մատն անգամ չշարժելով այդ մի ժիր, շարժվող և իր առջև խոսող բանի վրա։ Բացի այդ, նա դեռ միամտություն էլ ուներ հավատալու, որ Տարանտևն իսկապես ընդունակ է իրեն որևէ խելքը գլխին բան խորհուրդ տալու։

Ալեքսեևի այցելությունը Օբլոմովը հանդուրժում էր մի այլ՝ ոչ պակաս կարևոր պատճառով։ Եթե նա ուզում էր ապրել իր ցանկացած ձևով, այսինքն՝ պառկել լուռ, ննջել կամ մտածել սենյակում, Ալեքսեևը կարծես այնտեղ չլիներ. նա էլ լռում էր, ննջում կամ գիրք էր նայում, արտասուքի հաս-

նող ծույլ հորանջոցով դիտում էր նկարներ ու մանր իրեր։ Նա կարող էր այդպես մնալ թեկուզ երեք օր։ Իսկ եթե Օբլոմովը ձանձրանում էր մենակ մնալուց և կարիք էր զգում արտահայտվելու, խոսելու, կարդալու, դատողություններ անելու, հուզմունք արտահայտելու, այստեղ միշտ կար հնազանդ ու պատրաստի ունկնդիրն ու մասնակիցը, որը միակերպ համաձայնությամբ բաժանում էր և՛ նրա լռությունը, և՛ նրա խոսակցությունը, և հուզմունքը, և մտածողության եղանակը, ինչպիսին էլ լիներ այն։

Ուրիշ հյուրեր հաճախ չէին գալիս, մտնում էին մի բոպեով, ինչպես առաջին երեք հյուրերը. նրանց բոլորի հետ գնալով խզվում էին կենդանի կապերը։ Օբլոմովը երբեմն հետաքրքրվում էր որևէ նորությամբ, հինգ բոպե տևող զրույցով, հետո, դրանով բավարարվելով, լռում էր։ Նրանց հարկավոր էր փոխադարձություն ցույց տալ, մասնակից լինել իրենց հետաքրքիր բաներին։ Նրանք լողում էին մարդկանց բազմության մեջ. ամեն մեկը կյանքը հասկանում էր յուրովի, ինչպես այն չէր ուզում հասկանալ Օբլոմովը, իսկ նրանք այդ կյանքի մեջ խճճում էին նաև նրան. այս ամենը գուր չէր գալիս, վանում էր նրան, սրտովը չէր։

Նրա սրտով էր մի մարդ. սա էլ նրան հանգիստ չէր տալիս. նա սիրում էր թե նորությունները, թե աշխարհը, թե գիտությունը, թե ամբողջ կյանքը, բայց կարծես ավելի խոր, ավելի անկեղծ, և Օբլոմովը թեև սիրալիր էր բոլորի հետ, բայց անկեղծորեն սիրում էր միայն նրան, հավատում միայն նրան, գուցե, այն պատճառով, որ մեծացել, սովորել և ապրել էր նրա հետ միասին։ Դա Անդրեյ Իվանովիչ Շտոլցն էր։

Նա բացակայում էր, բայց Օբլոմովը ժամեժամ սպասում էր նրան։

IV

— Բարև, հայրենակից,— ընդհատ-ընդհատ. ասաց Տարանտևը, մեկնելով Օբլոմովին իր մազոտ ձեռքը։— Ի՞նչ ես մինչև հիմա կոճղի պես պառկած մնացել։

— Մի՛ մոտենա, մի՛ մոտենա. դու ցրտի՞ց ես գալիս,— ասում էր Օբլոմովը, վերմակը քաշելով վրան։

— Է՞լ ինչ հնարեցիր, ցրտի՞ց,— բարձր ձայնով ասաց Տարանտևը։— Դե, դե՛, երբ ձեռք են տալիս, ձեռքդ տուր։ Շուտով ժամը տասներկուսը կլինի, իսկ նա դեռ թավալ է տալիս։

Ուզեց Օբլոմովին բարձրացնել անկողնից, բայց սա կանխեց նրան, ոտքերն արագ իջեցնելով և միանգամից դնելով երկու մաշիկի մեջ։

— Ես ինքս էլ հենց ուզում էի վեր կենալ,— ասաց նա՝ հորանջելով։

— Գիտեմ, ինչպես ես վեր կենում. դու այստեղ մինչև ճաշ թավալ կտայիր։ Է՛յ, Զախար։ Որտե՞ղ ես, հիմար ծերուկ։ Շուտ բեր բարինի հագնվելու պարագաները։

— Իսկ դուք մի առաջ ձեզ համար Զախար ճարեցեք, և ա՛յն ժամանակ հայհոյանք տվեք,— ասաց Զախարը՝ մտնելով սենյակ և շարացած նայելով Տարանտևին։— Ա՛յ, տրոր ել է, կարծես ցրի՞չ լինի,— ավելացրեց նա։

— Հլա դեռ խոսում էլ ե՞ս, դարձվո՛ր,— ասաց Տարանտևը և ոտքը բարձրացրեց, որ ետևից խփի մոտից անցնող Զախարին. բայց Զախարը կանգ առավ, շուռ եկավ դեպի նա ու սրտմտեց։

— Հապա մի ձեռք դիպցրե՛ք,— կատաղի խռպոցով ասաց նա։— Սա ի՞նչ բան է։ Ես կհեռանամ...— ասաց նա՝ ետ գնալով դեպի դռները։

— Դե բավական է, Միխե՛յ Անդրեյիչ, ի՞նչ անհանգիստ մարդ ես։ Ի՞նչ ես նրա հետ ընկնում,— ասաց Օբլոմովը։— Զախա՛ր, տո՛ւր, ինչ որ պետք է։

Զախարը վերադարձավ և, խեթ նայելով Տարանտևին, ճարպկորեն սուրաց նրա մոտով։

Օբլոմովը, հենվելով նրա վրա, ակամա, ինչպես մի շատ հոգնած մարդ, բարձրացավ անկողնից և, դժկամորեն էլ անցնելով դեպի մեծ բազկաթոռը, բազմեց նրա վրա ու ինչպես նստեց, այնպես էլ մնաց անշարժ։

Զախարը փոքրիկ սեղանի վրայից վերցրեց պոմադան, սանրը և խոզանակը, պոմադա քսեց նրա գլխին, բաժուկ սարքեց ու հետո սանրվածքը հարթեց խոզանակով։

— Հիմա կլվացվեք, չէ՞,— հարցրեց նա։

— Դեռ մի քիչ կսպասեմ,— պատասխանեց Օբլոմովը,— իսկ դու գնա՛։

— Ա՜խ, դուք էլ եք այստեղ,— հանկարծ ասաց Տարանտևը, դառնալով դեպի Ալեքսեևը այն ժամանակ, երբ Զախարը սանրում էր Օբլոմովին։— Ես ձեզ չնկատեցի էլ։ Ինչի՞ համար եք դուք այստեղ։ Ի՞նչ խոզն է ձեր այն ազգականը։ Ես ուզում էի ամեն ինչ ասել ձեզ...

— Ի՞նչ ազգական։ Ես ոչ մի ազգական չունեմ,— վեհերոտ պատասխանեց վախվորած Ալեքսեևը, աչքերը չռելով Տարանտևի վրա։

— Դե նա, որ դեռ ծառայում է այնտեղ, ի՞նչ է նրա... Աֆանասև են ասում։ Ինչպե՞ս թե ազգական չէ, ազգական է։

— Բայց ես Աֆանասև չեմ, ես Ալեքսեևն եմ,— ասաց Ալեքսեևը,— և ազգական չունեմ։

— Այ քեզ բան, ազգական չէ։ Նույնպիսի աննշան տեսք ունի, ինչպես դուք և նույնպես Վասիլի Նիկոլայիչ է կոչվում։

— Աստված վկա, ազգական չէ. ինձ Իվան Ալեքսեյիչ են ասում։

— Դե, միևնույն է, ձեզ նման է։ Միայն թե խոզի մեկն է. դուք ասացեք նրան, հենց որ տեսնեք։

— Ես նրան չեմ ճանաչում, երբեք չեմ տեսել,— ասաց Ալեքսեևը, բաց անելով ծխախոտի տուփը։

— Ապա ծխախոտ տվեք,— ասաց Տարանտևը։— Բայց ձեր ծխախոտը հասարա՞կ է, ֆրանսիական չէ՞։ Այդպես էլ կա,— ասաց նա հոտ քաշելով,— ինչո՞ւ ֆրանսիական չէ,— խստորեն ավելացրեց հետո։— Այո, ես այդպիսի խոզ մարդ չեմ տեսել, ինչպես ձեր ազգականն է,— շարունակում էր Տարանտևը։— Մի անգամ նրանից, երկու տարի կլինի արդեն, հիսուն ռուբլի պարտք վերցրի։ Է, մե՞ծ փող է հիսուն ռուբլին։ Ինչպե՞ս կարելի է, ասենք, չմոռանալ։ Ոչ, հիշում էի. մի ամիս հետո, որտեղ պատահում է, ասում է՝ «Իսկ պարտքն ի՞նչ եղավ»։ Գլուխս տարավ։ Դա դեռ քիչ է. երեկ եկավ մեզ մոտ՝ դեպարտամենտ. «Դուք, անշուշտ, ռոճիկ ստացել եք, հիմա կարող եք վերադարձնել»։ Ես նրան ռոճիկ ցույց տվի. բոլորի առաջ այնպես խայտառակեցի, որ հազիվ դուռը գտավ։ Ինչ մի հարուստ եմ, որ հիսուն-հիսուն ռուբլի հրամցնեմ նրան։ Է՜, հայրենակից, մի սիգար տուր։

— Սիգարներն ահա այնտեղ են, տուփիկի մեջ,— պատասխանեց Օբլոմովը՝ ցույց տալով դարակը։

Նա մտախոհ նստած էր բազկաթոռին, իր ծույլ-գեղեցիկ դիրքով, առանց նկատելու, թե ինչ է կատարվում շուրջը, առանց լսելու, թե ինչ է խոսվում։ Նա սիրով դիտում ու շոյում էր իր փոքրիկ սպիտակ ձեռքերը։

— Է՜։ Էլի նույն սիգարնե՞րն են,— խստորեն հարցրեց Տարանտևը, հանելով մի սիգար և նայելով Օբլոմովին։

— Այո, նույն սիգարներն են,— մեքենաբար պատասխանեց Օբլոմովը։

—Իսկ քեզ ասե՞լ եմ, որ ուրիշը գնես, արտասահմանյան։ Ահա թե ինչպե՞ս ես հիշում, թե ինչ են ասում քեզ։ Տե՛ս, որ առաջիկա շաբաթ օրն անպայման լինեն, ապա թե ոչ՝ երկար ժամանակ չեմ գա մոտդ։ Տես ի՞նչ անպետք են,— շարունակում էր նա ծխելով սիգարը և ծխի մի քուլան թողնելով օդի մեջ, իսկ մյուսը ներս քաշելով։— Անկարելի է ծխել։

— Դու այսօր շուտ ես եկել, Միխե՛յ Անդրեյիչ,— ասաց Օբլոմովը հորանջելով։

— Ինչ է, ձանձրացրի՞ քեզ, ինչ է։

— Ո՜չ, ես հենց այնպես նկատեցի. դու սովորաբար գալիս ես ուղիղ ճաշի ժամանակ, իսկ հիմա տասներկուսը դեռ նոր է անցել։

— Ես դիտմամբ շուտ եկա, որ իմանամ, թե ինչ ճաշ է լինելու։ Դու շարունակ անպետք բաներով ես կերակրում ինձ, ա՛յ, ես հիմա կիմանամ, ինչ ես պատվիրել պատրաստելու այսօր։

— Իմացիր այնտեղ, խոհանոցում, —ասաց Օբլոմովը։

Տարանտևը դուրս եկավ։

— Աստծո՛ւ սիրուն,— ասաց նա, վերադառնալով։— Տավարի ու հորթի մի՛ս։ Է՜հ, Օբլոմով եղբա՛յր, ապրել չգիտես, այնինչ կալվածատեր ես։ Ի՞նչ բարին ես դու։ Քաղքենու պես ես ապրում։ Չգիտես բարեկամիդ հյուրասիրել։ Էհ, իսկ մադերա գնվա՞ծ է։

— Չգիտեմ, հարցրո՛ւ Զախարին,— գրեթե առանց նրան լսելու, ասաց Օբլոմովը,— այնտեղ, անշուշտ, գինի կա։

— Այն նախկի՞նն ես ասում, գերմանացուց բերա՞ծը։ Ո՛չ, բարեհաճիր անգլիական գնել խանութում։

— Դե, սա էլ հերիք է,— ասաց Օբլոմովը,— մեկ էլ ուղարկե՞մ։

— Լա՛վ, սպասի՛ր, փող տուր, կողքով անցնելիս կբերեմ. դեռ պետք է մի քանի տեղ գնամ։

Օբլոմովը փնտրեց արկղում և հանեց այն ժամանակվա մի տասը ռուբլիանոց կարմիր թղթադրամ։

— Մադերան յոթ ռուբլի արժե,— ասաց Օբլոմովը,— իսկ սա տասը ռուբլի է։

— Տուր ամբողջը. այնտեղ մանրը կվերադարձնեն, մի՛ վախենա։

Նա Օբլոմովի ձեռքից խլեց թղթադրամը և արագությամբ գրպանը դրեց։

— Դե, ես գնամ,— ասաց Տարանտևը՝ գլխարկը ծածկելով,— իսկ ժամը հինգին այստեղ կլինեմ. ես մի երկու տեղ պետք է գնամ. պաշտոն եմ խոստացել օգնվաճառման գրասենյակում, պատվիրել են մտնել-հարցնել... Հա, մեկ էլ, Իլյա Իլյիչ. այսօր կառք չե՞ս վարձի Եկատերինհոֆ գնալու համար։ Ինձ էլ հետդ կվերցնեիր։

Օբլոմովը գլուխը շարժեց որպես բացասական նշան։

— Հը, ծուլանո՞ւմ ես, թե փողն ես ափսոսում. էխ, դու, տոպրակ,— ասաց նա։— Դե, առայժմ ցտեսություն...

— Սպասիր, Միխեյ Անդրեյիչ,— ընդհատեց Օբլոմովը,— ինձ պետք է մի երկու բանի մասին քեզ հետ խորհրդակցել։

— Էլի՞ ինչ կա։ Շուտ ասա, ես ժամանակ չունեմ։

— Գլխիս միանգամից երկու դժբախտություն է թափվել։ Բնակարանից վռնդում են։

— Երևի, չես վճարում, և տեղն է,— ասաց Տարանտևը և ուզում էր գնալ։

— Բանիդ կաց։ Ես միշտ նախօրոք եմ վճարում։ Ոչ։ Այստեղ ուզում են մի ուրիշ բնակարան սարքել... դե սպասիր։ Ո՞ւր ես շտապում։ Սովորեցրու՝ ինչ անեմ. շտապեցնում են, մի շաբաթից, ասում են, տեղափոխվեք...

— Ինձ էլ խորհրդակա՞ն ես ճարել... իզուր ես երևակայում...

— Ես ոչինչ էլ չեմ երևակայում,— ասաց Օբլոմովը,—

աղմուկ մի անի և մի գոռգոռա, այլ ավելի լավ է՝ մտածիր, թե ինչ անեմ։ Դու գործնական մարդ ես..

Տարանտևն արդեն չէր լսում նրան և մտածում էր ինչ-որ բանի մասին։

— Դե, թող այդպես էլ լինի, շնորհակալություն հայտնիր ինձ,— ասաց նա, վերցնելով գլխարկը և նստելով,— և պատվիրիր, որ ճաշին շամպայն տան. քո դործն արված է։

— Ինչպե՞ս,— հարցրեց Օբլոմովը։

— Շամպայն կլինի՞։

— Թերևս, եթե խորհուրդն արժենա...

— Ո՛չ, դու ինքդ խորհրդի արժանի չես։ Ես քեզ ձրի խորհուրդնե՞ր պիտի տամ, ինչ է։ Ա՛յ, հարցրու նրան,— ավելացրեց, ցույց տալով Ալեքսեևին,— կամ նրա ազգականին։

— Դե լավ, լավ,— խնդրում էր Օբլոմովը։

— Այ ինչ. հենց վաղը բարեհաճիր տեղափոխվել...

— Է՜, Ինչ հնար գտավ։ Ինքս էլ դա գիտեի...

— Սպասիր, մի ընդհատիր,— գոռաց Տարանտևը։— Վաղը փոխադրվիր իմ սանամոր բնակարանը, Վիբորգի քաղաքամասում...

— Սա ի՞նչ նորություն է։ Վիբորգի քաղաքամա՞սը։ Ախր այնտեղ ձմեռներն, ասում են, գայլեր են գալիս։

— Պատահում է, գալիս են կղզիներից, իսկ դու ի՞նչ գործ ունես դրա հետ։

— Այնտեղ տաղտկալի է, դատարկ, ոչ ոք չկա։

— Սուտ ես ասում։ Այնտեղ ապրում է իմ սանամերը. նա սեփական տուն ունի մեծ բանջարանոցով։ Ազնիվ կին է, երկու երեխայի տեր. նրա հետ ապրում է իր ամուրի եղբայրը. գլուխ ունի, ոչ այնպիսին, ինչպես այ սա, որ նստած է այստեղ սենյակում,— ասաց նա, ցույց տալով Ալեքսեևին,— մեզ երկուսիս էլ գրպա՞նը կդնի։

— Է՛հ, ե՞ս ինչ գործ ունեմ այդ ամեն հետ,— անհամբերությամբ ասաց Օբլոմովը։— Ես չեմ փոխադրվի այնտեղ։

— Դե ես հիմա կտեսնեմ, թե ինչպես չես փոխադրվի։ Ո՛չ, քանի որ խորհուրդ ես հարցրել, ապա ուրեմն լսիր, ինչ որ ասում են։

— Ես չեմ տեղափոխվի,— վճռաբար ասաց Օբլոմովը։

— Որ այդպես է, գրողը տանի քեզ,— պատասխանեց Տարանտևը, գլխարկն աչքերին քաշելով, և գնաց դեպի դուռը։

— Ի՞նչ տարօրինակ մարդ ես,— ետ գալով ասաց Տարանտևը։— Ի՞նչն է քեզ այստեղ քաղցր թվում։

— Ինչպե՞ս թե ինչը։ Ամեն ինչին մոտ է,— ասում էր Օբլոմովը,— այստեղ են և՛ խանութները, և՛ թատրոնը, և՛ ծանոթները... քաղաքի կենտրոնն է, ամեն ինչ...

— Ի-ի՞նչ,— ընդհատեց Տարանտևը։— Հլա մի ասա, իսկ դու վաղո՞ւց ես բակիցդ դուրս եկել։ Վաղո՞ւց ես թատրոնում եղել։ Ո՞ր ծանոթներիդ մոտ ես գնում։ Ինչի՞ է քեզ հարկավոր այս կենտրոնը, թույլ տուր հարցնել։

— Ինչպե՞ս թե ինչի։ Քի՜չ բան կա։

— Տեսնո՜ւմ ես, ինքդ էլ չգիտես։ Իսկ այնտեղ, մտածի՜ր, դու կապրես իմ սանամոր, մի ազնիվ կնոջ մոտ, հանգիստ, խաղաղ. ոչ ոք քեզ ձեռք չի տա. ոչ ազմուկ, ոչ ազաղակ, մաքուր, կոկիկ։ Մի նայի՜ր, կարծես քարվանսարայում ապրելիս լինես, մինչդեռ բարին ես, կալվածատեր։ Իսկ այնտեղ մաքուր է, անդորր։ Կարող ես նաև մեկի հետ զրույց անել, երբ ձանձրանաս։ Բացի ինձնից քեզ մոտ էլ ոչ ոք չի գա։ Երկու երեխա կա. խա՜ղ արա հետները, ինչքան կցանկանաս։ Էլ ի՞նչ ես ուզում։ Իսկ օգուտը, օգո՜ւտը։ Այստեղ ի՞նչ ես վճարում։

— Հազար հինգ հարյուր։

— Իսկ այնտեղ հազար ռուբլի համարյա ամբողջ տան համար։ Եվ ի՜նչ լուսավոր, սիրուն սենյակներ են։ Սանամերս վաղուց էր ուզում հանգիստ, ճշտապահ կենվոր ունենալ։ Ես էլ քեզ եմ նշանակում...

Օբլոմովը ցրված, բացասաբար թափ էր տալիս գլուխը։

—Սուտ ես ասում, կտեղափոխվես,— ասաց Տարանտևը։— Ինքդ մտածիր, չէ՞ որ սա քեզ վրա երկու անգամ ավելի էժան կնստի. միայն բնակարանի մեջ հինգ հարյուր ռուբլու օգուտ ունես։ Քո ճաշը երկու անգամ ավելի լավ ու ավելի մաքուր կլինի. ոչ խոհարաքուհին, ոչ էլ Զախարը չեն գողանա...

Նախասենյակում մոթմոթոց լսվեց։

— Կարգուկանոնն էլ ավելի կլինի,— շարունակում էր Տարանտևը։— Չէ՞ որ հիմա քեզ մոտ զզվելի է սեղան նստելը։ Գդպեղ ես ուզում՝ չկա, քացախ չի գնված, դանակները մաքրված չեն. դու ասում ես՝ սպիտակեղենը կորչում է, մի խոսքով՝ գարշելի է։ Իսկ այնտեղ տնտեսությունը կվարի կինարմատը. ոչ քեզ, ոչ էլ քո հիմարին, Զախարին...

Նախասենյակում մոթմոթոցն ավելի սաստկացավ։

— Այդ պառավ շունը,— շարունակում էր Տարանտևը,— կարիք չի ունենա ոչ մի բանի մասին մտածելու. կապրես՝ ամեն ինչ պատրաստ ունենալով։ Ի՞նչ մտածելու բան կա այստեղ։ Տեղափոխվիր և վերջ...

— Այդ ինչպե՞ս ե՛ս, ոչ այս, ոչ այն, հանկարծ Վիբորգի քաղաքամասը...

— Արի ու սրան բան հասկացրու,— ասում էր Տարանտևը, սրբելով երեսի քրտինքը։— Հիմա ամառ է, այնտեղ ոնց որ ամառանոց լինի։ Ի՞նչ ես Գորոխովայայում փտում ամառանը... Այնտեղ է Բեզբորոդկոյի այգին, Օխտան կողքիդ է, Նևան երկու քայլի վրա, սեփական բանջարանոց. ոչ փոշի, ոչ տոթ։ Մտածելու ոչինչ չկա. իսկույնևեթ մինչև ճաշ՝ կբռնչեմ սանամորս մոտ.— դու ինձ կառքի փող տուր,— և վաղն էլ հենց կտեղափոխվես...

— Այս ի՞նչ տեսակ մարդ է,— ասաց Օբլոմովը։— Սատանան գիտե, թե հանկարծ ինչ կհնարի՝ Վիբորգի քաղաքամասը... Դա դժվար չի հնարել։ Ոչ, այ, դու հնար գտիր, որ այստեղ մնանք։ Ես ութ տարի է ապրում եմ, դրա համար էլ փոխվել չեմ ուզում...

— Վերջացած է, դու կփոխադրվես։ Ես հիմա գնում եմ սանամորս մոտ, պաշտոնի մասին մի ուրիշ անգամ կտեղեկանամ...

Նա ուզում էր գնալ։

— Կաց, կաց։ Ո՞ւր ես շտապում,— կանգնեցրեց նրան Օբլոմովը։— Ես էլի ավելի կարևոր գործ ունեմ։ Տես, ինչպիսի նամակ եմ ստացել ստարոստայից, և վճռիր, թե ինչ պետք է անեմ։

— Հո տեսնո՜ւմ ես, թե ինչ տեսակ մարդ ես ծնվել,— վրա բերեց Տարանտևը։— Ոչինչ չես կարողանում ինքդ անել։ Ամեն բան ես ու միայն ես պիտի անեմ։ Ինչի՞ ես պետք դու։ Մարդ չես, այլ պարզապես փալաս։

— Նամակը որտե՞ղ է։ Զախա՜ր, Զախա՜ր։ Նորից ինչ-որ տեղ է գցել,— ասում էր Օբլոմովը։

— Ահա ստարոստայի նամակը,— ասաց Ալեքսեևը, վերցնելով ճիլտված նամակը։

— Այո, ահա այն,— կրկնեց Օբլոմովը և սկսեց բարձրաձայն կարդալ։

— Ի՞նչ կասես։ Ի՞նչ անեմ,— կարդալուց հետո հարցրեց Իլյա Իլյիչը։— Երաշտ, ապառքներ...

— Կորած, բոլորովին կորած մարդ ես,— ասում էր Տարանտևը։

— Ինչո՞ւ կորած։

— Հապա ինչպե՞ս չկորած։

— Դե, եթե կորած եմ, ապա ասա, թե ի՞նչ պետք է անել։

— Իսկ դրա համար ի՞նչ կտաս։

— Չէ՞ որ ասված է, շամպայն կլինի. էլ ի՞նչ ես ուզում։

— Շամպայն՝ բնակարան գտնելու համար. չէ՞ որ ես քեզ բարերարություն արեցի, իսկ դու դա չես զգում, դեռ վիճում էլ ես. ապերա՜խտ։ Մի գնա, ինքդ բնակարան գտիր։ Բնակարանը հո չէ՞ բանը։ Գլխավորը, ինչպիսի անդորր կլինի քեզ համար. միևնույն է, թե հարազատ քրոջդ մոտ լինես։ Երկու երեխա, ամուրի եղբայր, ես ամեն օր կգամ...

— Դե լավ, լավ,— ընդհատեց Օբլոմովը,— այ, դու հիմա ասա, թե ես ինչպե՞ս վարվեմ ստարոստայի հետ։

— Ոչ, ճաշի համար պորտեր ավելացրու, այն ժամանակ կասեմ։

— Հիմա էլ պորտեր։ Քիչ էր քեզ...

— Որ այդպես է, մնաս բարով,— ասաց Տարանտևը, նորից գլխարկը դնելով։

— Ա՜խ, տեր աստված։ Այստեղ ստարոստան գրում է, որ եկամուտը «երկու հազարով պակաս կլինի», իսկ նա պորտերն էլ ավելացրեց։ Դե լավ, պորտեր էլ գնիր։

— Էլի փող տո՛ւր,— ասաց Տարանտևը։

— Չէ՞ որ քեզ մոտ կարմիր տասանոցից մանր կմնա։

— Իսկ կառքին՝ Վիբորգի քաղաքամասը գնալու համա՞ր,— պատասխանեց Տարանտևը։

Օբլոմովը հանեց մի արծաթ մանեթ էլ և սրտնեղությամբ խոթեց նրա ձեռքը։

— Քո ստարոստան խաբեբայի մեկն է, այ թե ինչ կասեմ քեզ,— սկսեց Տարանտևը, արծաթ մանեթանոցը գրպանը դնելով,— իսկ դու, բերանդ բաց արած, հավատում ես նրան։ Տեսնում ես՝ ինչ երգ է երգում։ Երաշտ, անբերություն, ապառքներ, մուժիկներն էլ փախել են։ Ստում է, բոլորը սուտ է ասում։ Ես լսել եմ, որ մեր կողմերում, Շումիլովյան վոտչինայում, անցյալ տարվա բերքով վճարել են բոլոր պարտքերը, իսկ քեզ մոտ հանկարծ երաշտ է ու անբերություն։ Շումիլովսկոյեն քեզանից ընդամենը հիսուն վերստի վրա է. ինչո՞ւ այնտեղ երաշտից հացահատիկը չի փչացել։ Ապառքներն էլ է հնարել։ Իսկ ինքն ի՞նչ էր անում։ Ինչո՞ւ էր անուշադիր թողել։ Որտեղի՞ց են այդ ապառքները։ Ինչ է, մեր կողմերում աշխատանք չկա, թե վաճառք։ Ախ, նա ավազակ է, ես նրան դաս կտայի։ Իսկ մուժիկները ցրիվ են եկել այն պատճառով, որ նա ինքը, երևի, նրանցից բան է պլոկել, ապա բաց թողել, իսկ իսպրավնիկին չի էլ մտածել գանգատվի։

— Չի կարող պատահել,— ասում էր Օբլոմովը,— նա նամակում նույնիսկ իսպրավնիկի պատասխանն է հաղորդում այնքան բնական...

— Ա՜խ, դու։ Ոչինչ չգիտես։ Բոլոր խաբեբաներն էլ բնական են գրում, հավատա ինձ։ Այ, օրինակ,— շարունակեց նա, ցույց տալով Ալեքսեևին,— նստած է մի ազնիվ հոգի, ոչխարի պես միամիտ, նա արդյոք բնական ձևով կգրի՞, երբե՛ք։ Իսկ նրա ազգականը, թեև խոզի ու սատանայի մեկն է, բայց կգրի։ Դու էլ չես կարող բնական գրել։ Հետևաբար քո ստարոստան հենց այն պատճառով է սատանայի մեկը, որ ճարպկորեն ու բնական է գրել։ Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է բերել խոսքը խոսքին. «Վերադարձնել բնակության վայրը»։

— Բայց ինչպե՞ս պետք է վարվել նրա հետ,— հարցրեց Օբլոմովը։

— Խսկույնևեթ փոխիր նրան։

— Իսկ ո՞ւմ նշանակեմ։ Ես ի՞նչ եմ ճանաչում մուժիկներին։ Մի ուրիշը, գուցե, ավելի վատ կլինի։ Տասներկու տարի է, ես այնտեղ չեմ եղել։

— Ինքդ գնա գյուղ, առանց դրա չի կարելի. ամառն

անցկացրու այնտեղ, իսկ աշնանն ուղղակի նոր բնակարանն արի։ Ես կհոգամ, որ այն պատրաստ լինի։

— Նոր բնակարա՞ն, գյո՛ւղ, ի՞նչ։ Դու ի՞նչ համարձակ միջոցներ ես առաջարկում շարունակ,— դժգոհությամբ ասաց Օբլոմովը։— Չի լինում, որ խուսափես չափազանցություններից ու միջին գիծը բռնես...

— Է՛հ, եղբայր Իլյա Իլյիչ, դու բոլորովին կկորչես։ Ես, օրինակ, քո տեղը լինեի, վաղուց գրավ գրած կլինեի կալվածքը և ուրիշը կգնեի կամ մի տուն այստեղ, լավ տեղում, քո գյուղից լավ կլիներ։ Եվ ապա տունն էլ գրավ կգնեի ու կգնեի ուրիշը... Ինձ տային քո կալվածքը, կտեսնեիր, որ ժողովրդի մեջ իմ մասին կխոսեին։

— Դագարի՛ր պարծենալ և մտածի՛ր, թե ինչպես անենք, որ բնակարանից չտեղափոխվենք, գյուղ էլ չգնանք, իսկ գործը արվի...— նկատեց Օբլոմովը։

— Լավ, դու երբևիցե տեղիցդ շարժվելո՞ւ ես,— ասում էր Տարանտևը։— Հլա մի վրդ նայիր. ինչի՞ ես պետք։ Քեզանից ի՞նչ օգուտ կա հայրենիքին։ Չի՞ կարող գյուղ գնալ։

— Հիմա ինձ համար դեռ շուտ է գնալը,— պատասխանում էր Իլյա Իլյիչը,— նախ թող վերջացնեմ այն բարեփոխությունների պլանը, որ ես մտադիր եմ մտցնելու կալվածքումս... Գիտե՞ս ինչ, Միխե՛յ Անդրեյիչ,— հանկարծ ասաց Օբլոմովը։— Արի դո՛ւ գնա։ Դու գործը գիտես, տեղը քեզ նույնպես հայտնի է. իսկ ես ծախսերը չեմ խնայի։

— Ես քո կառավարի՞չն եմ, ինչ է,— զոռոզաբար վրա բերեց Տարանտևը։— Բացի այդ՝ մոռացել եմ մուժիկների հետ վարվելը...

— Ի՞նչ անեմ,— ասաց Օբլոմովը մտախոհ։— Ճշմարիտ՝ չգիտեմ։

— Դե, գրի՛ր իսպրավնիկին. հարցրու նրան՝ արդյոք ստարոստան հետը խոսել է թրև եկող մուժիկների մասին,— խորհուրդ տվեց Տարանտևը,— և խնդրիր, որ գնա գյուղը. հետո նահանգապետին գրիր, որ իսպրավնիկին հրամայի՝ զեկուցելու ստարոստայի վարքագծի մասին։ «Ձերդ գերազանցություն, այսպես ասած, հայրական մասնակցություն ցույց տվեք, և ողորմած աչքով նայեցեք ինձ տպառնացող անխուսափելի, ամենասոսկալի դժբախտությանը, որ առաջ է գալիս ստարոստայի կատաղի վարմունքից, և այն ծայրահեղ ավերմանը, որին ես անխուսափելիորեն պետք է ենթարկվեմ կնոջս և առանց որևէ խնամքի ու հացի պատառի մնացող մանկահասակ տասներկու երեխաներիս հետ...»

Օբլոմովը ծիծաղեց։

— Որտեղի՞ց այդքան երեխա հավաքեմ, եթե խնդրեն նրանց ցույց տալ,— ասաց նա։

— Սուտ ես ասում, գրի՛ր. տասներկու հոգի երեխաներով. այն կթռնի-կանցնի ակնեշների մոտով, տեղեկություններ չեն հավաքի, բայց փոխարենը «բնական» կլինի... Նահանգապետը նամակդ կտա քարտուղարին, իսկ դու միևնույն ժամանակ նրան էլ կգրես, իհարկե ներդրմամբ, նա էլ կարգադրություն կանի։ Եվ խնդրի՛ր հարևանիդ. ո՞վ կա այնտեղ։

— Դոբրինինը մոտ է,— ասաց Օբլոմովը,— ես այստեղ նրա հետ հաճախ եմ տեսնվել. նա հիմա այնտեղ է։

— Նրան էլ գրիր, լավ խնդրիր. «Դրանով ինձ, այսպես ասած, մեծ շնորհ կանեք և կպարտավորեցնեք իբրև քրիստոնյա, իբրև բարեկամ և իբրև հարևան»։ Բացի այդ, նամակիդ կցիր որևէ Պետերբուրգյան նվեր... օրինակ՝ սիգարներ։ Ա՛յ թե ինչպես վարվես, թե չէ՝ դու ոչինչ չես հասկանում։ Կորա՞ծ մարդ ես։ Ես ստարոստային վեր-վեր թռցնել կտայի. ես նրան ցո՛ւյց կտայի։ Փոստը ե՞րբ է մեկնում այնտեղ։

— Վաղը չէ մյուս օրը,— ասաց Օբլոմովը։

— Դե նստիր ու խոսույն գրի՛ր։

— Չէ՞ որ մյուս օրն է, էլ ինչո՞ւ խսկույն,— նկատեց Օբլոմովը։— Կարելի է և վաղը։ Թայլ լսի՛ր, Միխե՛յ Անդրեյիչ,— ավելացրեց նա,— քո «բարեգործությունները» արի գրացրո՛ւ, թող այդպես էլ լինի. ճաշի համար կավելացնեմ ձուկ կամ որևէ թռչուն։

— Էլ ի՞նչ ես ուզում,— հարցրեց Տարանտևը։

— Նստիր ու գրիր։ Երկա՞ր ժամանակ կվալի քեզանից երեք նամակ գրելը։ Դու այնքան «բնական» ես պատմում...— ավելացրեց նա, աշխատելով ժպիտը թաքցնել,— իսկ, այ, Իվան Ալեքսեևիչը կարտագրեր...

— Է՛, ինչի՞ր ես հնարում,— պատասխանեց Տարանտևը։— Ե՞ս պիտի ոչնչում գրել։ Ես պաշտոնատեղումս էլ որդին

երեք օր է չեմ գրում. հենց որ նստում եմ, ձախ աչքիցս սկսում է արտասուք գալ. ինչպես երևում է՝ քաջի է առել։ Երբ կռանում եմ, գլխիս էլ արյուն է տալիս... ծույլ ես, ծույլ կկոչես, եղբայր Իլյա Իլյիչ, չնչին բանի համար։

— Ա՜խ, գոնե Անդրեյը շուտ գար,— ասաց Օբլոմովը,— նա ամեն ինչ կհարթեր...

— Ա՜յ թե բարերար գտավ,— ընդհատեց նրան Տարանտևը։— Նզովված գերմանացի՜ն, ստահակ խաբեբա՜ն։

Տարանտևն ինչ-որ բնազդական նողկանք էր տածում դեպի օտարերկրացիները։ Նրա աչքին ֆրանսիացին, գերմանացին, անգլիացին հոմանիշ էին սրիկայի, խաբեբայի, խոբամանկի կամ ավազակի։ Նա նույնիսկ տարբերություն չէր դնում ազգերի միջև. նրա աչքին բոլորը միատեսակ էին։

— Լսիր, Միխեյ Անդրեյիչ,— խստորեն սկսեց Օբլոմովը,— ես քեզ խնդրել եմ ավելի զուսպ լեզու բանեցնել, մանավանդ ինձ մոտիկ մարդու վերաբերյալ...

— Մոտիկ մարդու վերաբերյա՜լ,— ատելությամբ վրաբերեց Տարանտևը։— Նա քեզ ի՞նչ ազգական։ Հայտնի է, որ գերմանացի է։

— Ամեն տեսակ ազգականից էլ մոտ է. ես նրա հետ միասին եմ մեծացել, սովորել և հանդուգն խոսքեր թույլ չեմ տա...

Տարանտևը բարկությունից կարմրատակեց։

— Ա՜, եթե դու ինձ փոխում ես գերմանացու հետ,— ասաց նա,— այն ժամանակ ոտքս այլևս քո շեմքը չեմ դնի։

Նա գլխարկը ծածկեց և գնաց դեպի դուռը։ Օբլոմովը վայրկենապես մեղմացավ։

— Դու պետք է նրա մեջ հարգես իմ բարեկամին և ավելի զգույշ արտահայտվես նրա մասին, ահա այն ամենը, ինչ ես պահանջում եմ։ Կարծեմ, մեծ ծառայություն չէ,— ասաց նա։

— Հարգել գերմանացո՞ւն,— ամենամեծ արհամարհանքով ասաց Տարանտևը։— Ինչի՞ համար։

— Ես քեզ արդեն ասացի, թեկուզ այն բանի համար, որ նա մեծացել և սովորել է ինձ հետ միասին։

— Մե՜ծ բան է։ Քի՞չ մարդիկ են իրար հետ սովորել։

— Այ եթե նա այստեղ լիներ, վազուց ինձ ազատած կլի-

նեիր ամեն տեսակ հոգսերից, չպահանջեիր ոչ պորտեր, ոչ շամպայն...— ասաց Օբլոմովը։

— Ա՜, դու երեսո՜վս ես տալիս։ Գրո՜ղը տանի քեզ էլ, քո պորտերն ու շամպայնն էլ։ Առ, վերցրո՜ւ քո փողերը... Ո՞ւր եմ դրել։ Բոլորովին մոռացել եմ, թե ուր եմ ճխտել նզովվածները։

Նա հանեց մի յուղոտ, գրոտած թղթի կտոր։

— Ոչ, դրանք չեն,— ասում էր նա։— Ո՞ւր եմ դրանք...

Նա գրպաններն էր խառնշտորում։

— Մի շարշարվիր, մի հանիր,— ասաց Օբլոմովը.— ես քեզ չեմ կշտամբում, այլ միայն խնդրում եմ ավելի վայելուչ արտահայտվել այն մարդու մասին, որ ինձ մտերիմ է և որն այնքան շատ բան է արել ինձ համար...

— Շատ,— չարությամբ առարկեց Տարանտևը։— Սպասիր, դեռ ավելի շատ բան կանի, դու լսիր նրան։

— Ինչի՞ ես դա ասում ինձ,— հարցրեց Օբլոմովը։

— Նրա համար եմ ասում, որ երբ քո գերմանացին պլոկի քեզ, այն ժամանակ կիմանաս, թե ինչ է նշանակում փոխել հայրենակցին, ռուս մարդուն, ինչ-որ մի թափառաշրջիկի հետ...

— Լսի՜ր, Միխեյ Անդրեյիչ...— սկսեց Օբլոմովը։

— Էլ բան չկա լսելու. շատ լսեցի, շատ վիշտ կրեցի քեզնից։ Աստված տեսնում է, թե որքան վիրավորանք կրեցի... Երևի Սաքսոնիայում նրա հայրը հացի երես էլ չի տեսել, իսկ եկել է այստեղ՝ քիթը վեր ցցելու։

— Ի՞նչ ես մեռելներին անհանգիստ անում։ Հա՞յրն ինչ մեղք ունի։

— Երկուսն էլ մեղավոր են, թե հայրը և թե որդին,— մռայլությամբ ասաց Տարանտևը՝ ձեռքը թափ տալով։— Զուր չէր, որ հայրս խորհուրդ էր տալիս զգուշանալ այդ գերմանացիներից, իսկ նա չէ՞ որ ամեն տեսակ մարդու պատահել էր իր կյանքում։

— Օրինակ, հայրն ինչո՞վ դուր չի գալիս,— հարցրեց Իլյա Իլյիչը։

— Նրանով, որ մեր նահանգը եկավ սեպտեմբերին մի սերթուկով ու քոշերով, և հանկարծ որդուն ժառանգություն թողեց. դա ի՞նչ է նշանակում։

— Նա որդուն ժառանգություն է թողել ընդամենը քառասուն հազար։ Որոշ բան ստացավ որպես կնոջ օժիտ, իսկ մնացածը ձեռք բերեց նրանով, որ սովորեցնում էր երեխաներին և կառավարում էր կալվածքը. լավ ոռճիկ էր ստանում։ Տեսնում ես, որ հայրը մեղավոր չէ։ Ի՞նչ մեղք ունի այժմ որդին։

— Լա՜վ տղա է։ Հանկարծ հայրական քառասուն հազարը դարձրեց երեք հարյուր հազարի կապիտալ, ծառայության մեջ էլ արդեն արքունի խորհրդականի աստիճանն անցել է, գիտնական էլ է... հիմա էլ ճանապարհորդում է։ Ջարաճճին ամեն տեղ հասնում է։ Կարգին ռուսը մի՞թե այդ բոլոր բաները կանի։ Ռուս մարդը կընտրի մի բան, և այն էլ առանց շտապելու, կամաց ու դանդաղ, մի կերպ, թե չէ՝ այ, արի ու տես։ Լավ էր, եթե վարձակալության մեջ մտներ, դե, հասկանալի է, թե ինչից հարստացավ. թե չէ՝ ոչ մի բան, հենց այնպես, թեթևակի։ Մաքուր չէ գործը։ Ես այդպիսիներին դատի կտայի։ Այ, հիմա էլ սատանան գիտե, թե որտեղ է թրև գալիս,— շարունակում էր Տարանտևը։— Ինչո՞ւ է նա օտար երկրներում թափառում։

— Ուզում է սովորել, ամեն բան տեսնել, գիտենալ։

— Սովորել։ Դեռ քիչ են սովորեցրել նրան։ Այդ ի՞նչ է սովորում։ Սուտ է ասում նա, մի՛ հավատա. նա քեզ խաբում է, ինչպես մի փոքրիկ երեխայի։ Մի՞թե մեծերը որևէ բան են սովորում։ Լսո՞ւմ եք, ինչեր է պատմում։ Արքունի խորհրդականը բա՞ն կսովորի։ Այ, դու սովորել ես դպրոցում, այժմ է՞լ միթե սովորում ես։ Իսկ նա (Տարանտևը ցույց տվեց Ալեքսեևին) սովորո՞ւմ է։ Նրա ազգականը՝ սովորո՞ւմ է։ Կարգին մարդկանցից ո՞վ է սովորում։ Նա այնտեղ, գերմանական դպրոցում նստած՝ դասե՞րն է սովորում, ինչ է։ Սուտ է ասում։ Ես լսել եմ, որ նա գնացել է մի ինչ-որ մեքենա տեսնելու և պատվիրելու, անշուշտ, մի մամլակ՝ ռուսական փողերի համար։ Ես նրան բանտ կնետեի... Ինչ-որ ակցիաներ... Ա՜խ, այդ ակցիաները, այնպես շփոթեցնում են միտքը։

Օբլոմովը քահ-քահ ծիծաղեց։

— Ի՞նչ ես ատամներդ ցույց տալիս։ Ճիշտ չե՞մ ասում, ինչ է,— ասաց Տարանտևը։

— Լավ, թողնենք,— ընդհատեց նրան Իլյա Իլյիչը։— Տերն ընդ քեզ, դու գնա, ուր որ ուզում էիր, իսկ ես ահա Իվան Ալեքսեևիչի հետ կգրեմ բոլոր նամակները, նաև կաշխատեմ շուտով գրի առնել իմ պլանն էլ. ի դեպ՝ երկուսը միասին կարվի...

Տարանտևն այն է՝ գնում էր դեպի նախասենյակ, բայց հանկարծ նորից հետ դարձավ։

— Բոլորովին մոռացել էի։ Առավոտից քեզ մոտ եկել եմ գործով,— սկսեց նա արդեն ոչ կոպիտ։— Վաղը հարսանիք եմ հրավիրված. Ռոկոտովն ամուսնանում է։ Հայրենակից, տուր հագնեմ քո ֆրակը. իմը, տեսնում ես, մի քիչ մաշվել է...

— Ինչպե՞ս կարելի է,— ասաց Օբլոմովը, մոայլվելով այդ նոր պահանջի առթիվ։— Իմ ֆրակը քեզ վրա չի գա...

— Կգա, ո՞նց թե չի գա,— ընդհատեց Տարանտևը։— Չե՞ս հիշում, ես փորձել եմ քո սերթուկը. կարծես վրաս կարված լինի։ Զախա՛ր, Զախա՛ր։ Մի այստեղ արի, պառա՛վ անասուն,— գոռաց Տարանտևը։

Զախարը արջի պես մռնչաց, բայց ներս չեկավ։

— Կանչիր նրան, Իլյա Իլյիչ։ Այդ ի՞նչ տեսակ է նա,— դանդատվեց Տարանտևը։

— Զախա՛ր,— ձայն տվեց Օբլոմովը։

— Օ՜, գրողը տանի ձեզ,— լսվեց նախասենյակում, ոտքերի թռիչքի հետ միասին։

— Դե, ի՞նչ եք ուզում,— հարցրեց նա, դիմելով Տարանտևին։

— Բեր այստեղ իմ սև ֆրակը,— հրամայեց Իլյա Իլյիչը։— Ա՜յ, Միխեյ Անդրեյիչը փորձելու է՝ վրան կգա՞ թե ոչ. վաղը հարկավոր է նրան հարսանիքի համար...

— Ֆրակը չեմ տա,— վճռականորեն ասաց Զախարը։

— Ինչպե՞ս ես համարձակվում, երբ բարինը հրամայում է,— բղավեց Տարանտևը։— Ինչո՞ւ, Իլյա Իլյիչ, նրան բռնատուն չես ուղարկում։

— Հենց դա էր պակաս՝ ծերունուն բռնատուն ուղարկել,— ասաց Օբլոմովը։— Զախա՛ր, տուր ֆրակը, մի՛ համառի։

— Չեմ տա,— սառնորեն պատասխանեց Զախարը։— Թող նա առաջ ետ բերի բաճկոնն ու մեր շապիկը. հինգերորդ

ամիսն է՝ նրա մոտ հյուր է։ Հենց այս ձևով էլ վերցրեց տոնախմբության համար և հիմա փնտրի, որ գտնես. բաճկոնը թավշյա էր, իսկ շապիկը՝ նուրբ, հոլանդական. քսանհինգ ռուբլի արժե։ Ֆրակը չե՛մ տա։

— Դե, մնաք բարով։ Առայժմ սատանան ձեզ հետ,— զայրացած եզրափակեց Տարանտևը, գնալով և Զախարին բռունցքով սպառնալով։— Տես հա՞, Իլյա Իլյիչ, ես քեզ համար բնակարան կվարձեմ, լսո՞ւմ ես,— ավելացրեց նա։

— Դե լավ, լավ,— անհամբերությամբ ասում էր Օբլոմովը, որպեսզի միայն ազատվի նրանից։

— Իսկ դու գրիր այստեղ, ինչ հարկավոր է,— շարունակում էր Տարանտևը,— և չմոռանաս նահանգապետին գրել, որ տասներկու երեխա ունես, «մեկը մյուսից փոքր»... Իսկ ժամը հինգին՝ ապուրը սեղանի՛ն լինի. հա՞, Ինչո՞ւ չես կարգադրել կարկանդակ պատրաստեն։

Բայց Օբլոմովը լուռ էր. նա վաղուց արդեն չէր լսում նրան և, աչքերը փակած, ուրիշ բանի մասին էր մտածում։

Տարանտևի գնալուց հետո սենյակում մոտ տասը րոպե անխախտելի լռություն տիրեց։

Օբլոմովի տրամադրությունը վատ էր թե՛ ստարոստայի նամակից, թե բնակարանի առաջիկա տեղափոխության պատճառով, մասամբ էլ հոգնել էր Տարանտևի ճռճռոցից։ Վերջապես նա հառաչեց։

— Ինչո՞ւ չեք գրում, —հարցրեց Ալեքսեևը մեղմիկ։— Ես ձեզ համար փետրագրիչ կսրեի։

— Սրե՛ք, և տերը ձեզ հետ, որևէ տեղ գնացեք,—ասաց Օբլոմովը։— Ես ինքս կզբաղվեմ դրանով, իսկ դուք ճաշից հետո կարտագրեք։

— Շատ լավ,— պատասխանեց Ալեքսեևը։— Իսկապես, կարող եմ խանգարել... Իսկ ես առայժմ կգնամ, կասեմ, որ մեզ Եկատերինհոֆ գնալու համար չսպասեն։ Մնաք բարով, Իլյա Իլյիչ։

Բայց Իլյա Իլյիչը նրան չէր լսում. նա, ոտքերը տակը ծալելով, համարյա պառկել էր բազկաթոռի մեջ և վշտաբեկ ընկղմվել ոչ այն է նիրհի, ոչ այն է մտախոհության մեջ։

Օբլոմովը, ծննդյամբ ազնվական, աստիճանով կոլեգիական քարտուղար, տասներկուերորդ տարին է, որ ապրում է Պետերբուրգում՝ առանց այնտեղից դուրս գալու։

Սկզբում, ծնողների կենդանության ժամանակ, ավելի սեղմ էր ապրում, տեղավորվում էր երկու սենյակում, բավարարվում էր միմիայն գյուղից իր հետ բերած ծառայով՝ Զախարով. բայց հոր ու մոր մահից հետո նա դարձավ հեռավոր նահանգներից մեկում, գրեթե Ասիայում, իրեն ժառանգություն մնացած երեք հարյուր հիսուն հոգու միակ սեփականատերը։

Հինգ հազարի փոխարեն նա արդեն եկամուտ էր ստանում յոթից մինչև տասը հազար ռուբլի՝ ասիգնացիաներով. այն ժամանակ նրա կյանքն էլ այլ, ավելի լայն չափեր ընդունեց։ Նա վարձեց ավելի մեծ բնակարան, իր հաստիքներին ավելացրեց մի խոհարար էլ, և ուզում էր մի զույգ էլ ձի առնել։

Այն ժամանակ նա դեռ երիտասարդ էր և, եթե չի կարելի ասել, թե աշխույժ էր, ապա, գոնե, ավելի աշխույժ էր, քան հիմա. նա դեռ լի՛ էր զանազան ձգտումներով, շարունակ մի բանի հույս ուներ, բախտից և ինքն իրենից շատ բան էր սպասում. շարունակ պատրաստվում էր գործունեության ասպարեզի, դերի— ամենից առաջ, իհարկե, ծառայության մեջ, որը և նրա Պետերբուրգ գալու նպատակն էր։ Մտածում էր նաև հասարակության մեջ կատարելիք դերի մասին. վերջապես, իբրև հեռավոր հեռանկար, երիտասարդությունից հասուն տարիներին անցնելու շրջադարձին, նրա երևակայության մեջ նշմարվում ու ժպտում էր ընտանեկան երջանկությունը։

Բայց օրերն անցնում էին օրերի ետևից, տարիներին փոխարինում էին տարիները, աղվամազը դարձել էր կոշտ մորուք, աչքերի ճառագայթների տեղ՝ երկու աղոտ կետ, իրանը կլորացել էր, մազերն սկսել էին անողորմ կերպով թափվել, լրացել էր երեսուն տարին, իսկ նա դեռ ոչ մի քայլ առաջ չէր գնացել ոչ մի ասպարեզում և շարունակում էր դեռ կանգնած մնալ իր ասպարեզի շեմին, այնտեղ, որտեղ տասը տարի առաջ էր գտնվում։

Բայց նա դեռ էլի մտադրվում ու պատրաստվում էր կյանք

սկսելու, մտքում շարունակ գծագրում էր իր ապագայի զարդանկարը. բայց իր գլխով արագ անցնող յուրաքանչյուր տարու հետ նա ստիպված էր որևէ բան փոփոխել և դեն գցել այդ զարդանկարից։

Կյանքը նրա կարծիքով երկու մասի էր բաժանվում. մեկը բաղկացած էր աշխատանքից ու ձանձրույթից. սրանք հոմանիշներ էին, մյուս մասը—անդորր ու խաղաղ ուրախությունից։ Այդ պատճառով գլխավոր ասպարեզը՝ ծառայությունը, ամենաանդուրեկան կերպով մտահոգեց նրան սկզբում։

Կրթված լինելով գավառի խորքերում; ծննդավայրի հեզ ու ջերմ բարքերի ու սովորությունների մեջ, քսան տարի շարունակ անցնելով հարազատների, բարեկամների ու ծանոթների գրկից գիրկը, նա այնքան էր տոգորված ընտանեկան սկզբունքով, որ ապագա ծառայությունն էլ նրան պատկերանում էր ինչ-որ ընտանեկան զբաղմունքի կերպարանքով. օրինակ, մուտքն ու ելքը ծուլաբար տեսրակում գրանցելու նման, ինչպես անում էր նրա հայրը։

Նա կարծում էր, թե մի տեղի չինովնիկները միմյանց հետ համերաշխ, սերտ ընտանիք են կազմում, որոնք միշտ արթուն կերպով հոգում են փոխադարձ հանգստության ու զբաղվածությունների մասին, թե ատենավայր հաճախելը ամենևին պարտադիր սովորություն չէ, որ պետք է կատարել ամեն օր, և թե ցեխը, շոգը կամ պարզապես տրամադրություն չունենալը միշտ բավարար և օրինական պատրվակ կծառայեն պաշտոնատեղ չգնալու համար։

Բայց ինչպես վշտացավ նա, երբ տեսավ, որ հարկավոր է, առնվազն, երկրաշարժ լինի, որպեսզի առողջ չինովնիկը ծառայության չգա, իսկ երկրաշարժ, դժբախտաբար, Պետերբուրգում չի լինում. իհարկե, հեղեղն էլ կարող էր խոչընդոտ ծառայել, բայց դա էլ հազվադեպ է պատահում։

Ավելի մտքերի մեջ ընկավ Օբլոմովը, երբ նրա աչքերի առաջ առկայծեցին ծրարները կարևոր և ճույժ կարևոր մակագրություններով, երբ նրան հարկադրում էին զանազան տեղեկանքներ կազմել, արտագրել, գործերի մեջ փնտրտել, երկու մատի հաստությամբ տետրակներ գրել, որոնք, կարծես ծաղրի համար, դիտողություններ էին կոչվում. և այն էլ՝ բոլորը պահանջում էին շուտ, բոլորն էլ շտապում էին ինչ-որ

տեղ, ոչ մի բանի վրա կանգ չէին առնում. հազիվ մի գործը պրծած, կատաղորեն մի ուրիշ գործի էին կանչում, կարծես ամբողջ ուժը հենց դրա մեջ էր, և, վերջացնելով այն, մոռանում ու երրորդ գործի վրա նետվում. և սրան վերջ չկա՞ երբեք։

Մի երկու անգամ գիշերը նրան վեր կացրին տեղից և ստիպեցին «դիտողություններ» գրել, մի քանի անգամ սուրհանդակի միջոցով նրան բերեցին հյուր գնացած տեղից՝ դարձյալ հենց նույն այդ դիտողությունների պատճառով։ Այս բոլորը նրան երկյուղ և մեծ ձանձրույթ պատճառեց։

— Հապա ե՞րբ պետք է ապրել։ Ե՞րբ պետք է ապրել,— կրկնում էր նա։

Պետի մասին նա իր տանը լսել էր, որ դա ստորադրյալների հայրն է, և այդ պատճառով էլ այդ անձի մասին իր համար կազմել էր ամենավարդագույն, ամենաընտանեկան հասկացողությունը։ Նա այդ անձին պատկերացնում էր որպես երկրորդ հոր, որը հենց միայն գործի համար է ապրում, թե ինչպես իր ստորադրյալներին պարգևատրի, և հոգս քաշի ոչ միայն նրանց կարիքների, այլ նաև զվարճությունների համար։

Իլյա Իլյիչը կարծում էր, թե պետը մինչև այն աստիճան է մտնում իր ստորադրյալի դրության մեջ, որ հոգացողությամբ հարցուփորձ կանի նրան. գիշերն ինչպե՞ս է քնել, ինչո՞ւ նրա աչքերը պղտոր են և գլուխն արդյոք չի՞ ցավում։

Բայց նա դառնապես հիասթափվեց իր ծառայության հենց առաջին օրը։ Պետի գալուն պես սկսվեց վազվզոց, իրարանցում, բոլորը շփոթվում էին, իրար զարկվում, ոմանք ձիգ տալով ուղղում էին իրենց, վախենալով, որ իրենք բավական լավ տեսք չունեն՝ պետին ներկայանալու համար։

Ինչպես Օբլոմովը հետագայում նկատեց, դա տեղի էր ունենում այն պատճառով, որ կան այնպիսի պետեր, որոնք իրենց ընդառաջ թռչող ստորադրյալի հիմարանալու չափ վախեցած դեմքի մեջ տեսնում են ոչ միայն հարգանք իրենց նկատմամբ, այլ նույնիսկ նախանձախնդրություն, իսկ երբեմն՝ էլ՝ ծառայության ընդունակություն։

Իլյա Իլյիչը հարկ չուներ վախենալու իր պետից, որը մի

բարի և վարվեցողությամբ հաճելի մարդ էր. նա երբեք ոչ ոքի վատ բան չէր արել, ստորադրյալներն ավելի քան գոհ էին և ավելին էլ չէին ուզում։ Ոչ ոք նրանից երբեք տհաճ խոսք չէր լսել, ոչ աղաղակ, ոչ աղմուկ. նա երբեք ոչինչ չի պահանջում, այլ շարունակ խնդրում է։ Գործ անել է պետք՝ խնդրում է, իր տուն հրավիրել՝ խնդրում է, կալանքի տակ նստել՝ խնդրում է։ Նա երբեք ոչ ոքի ԴՈՒ չի ասել, բոլորին՝ ԴՈՒՔ, թե մի չինովնիկին, և թե բոլորին միասին։

Բայց բոլոր ստորադրյալները ինչ-որ վախ էին զգում պետի ներկայությունից. սրա սիրալիր հարցին նրանք պատասխանում էին ոչ իրենց, այլ ինչ-որ մի ուրիշ ձայնով, որով մյուսների հետ չէին խոսում։

Իլյա Իլյիչը, ինքն էլ չիմանալով ինչից, հանկարծ վախվորում էր, երբ պետը մտնում էր սենյակ. նա էլ կորցնում էր իր ձայնը, և երևան էր գալիս ուրիշ, բարակ ու զզվելի մի ձայն, հենց որ նրա հետ խոսել էր սկսում պետը։

Իլյա Իլյիչը ծառայության մեջ վախից ու անձկությունից տանջվեց, հալից ընկավ, նույնիսկ բարի, զիջող պետ ունենալով։ Աստված գիտի, թե ինչ կլիներ նրա բանը, եթե ընկներ խիստ ու պահանջկոտ պետի մոտ։

Օբլոմովը մի կերպ ծառայեց երկու տարի. գուցե նա երրոդ տարին էլ ավարտեր, մինչև աստիճան ստանալը, բայց մի հատուկ դեպք նրան ստիպեց ավելի շուտ թողնել ծառայությունը։

Մի անգամ նա ինչ-որ մի հարկավոր գրություն Աստրախանի փոխարեն Արխանգելսկ ուղարկեց։ Գործը բացվեց. սկսեցին փնտրել մեղավորին։

Բոլոր մյուսները հետաքրքրությամբ սպասում էին, թե ինչպես պետը կկանչի Օբլոմովին, ինչպես սառն ու հանգիստ կհարցնի. «Նա՞ է արդյոք գրությունն Արխանգելսկ ուղարկել», և բոլորը տարակուսում էին, թե ինչ ձայնով կպատասխանի նրան Իլյա Իլյիչը։

Ոմանք կարծում էին, թե նա ամենևին չի պատասխանի, չի կարողանա պատասխանել։

Ուրիշներին նայելով, Իլյա Իլյիչն ինքն էլ վախեցավ, շնայած և՛ ինքը, և՛ մյուսները գիտեին, որ պետը նկատողություն անելով կսահմանափակվի. բայց սեփական խիղճը շատ ավելի խիստ էր, քան հանդիմանությունը։

Օբլոմովը չսպասեց արժանի պատժին, տուն գնաց և բժշկական վկայական ուղարկեց։

Վկայականում ասված էր. «Ես, ներքոստորագրյալս, վկայում եմ, սեփական կնիքի դրոշմամբ, որ կոլեգիական քարտուղար Իլյա Օբլոմովը տառապում է սրտի ճաստացմամբ և նրա ձախ արտախորշի լայնացմամբ (Hypertrophia cordis cum dilatatione ejus ventriculi sinistri), ինչպես նաև լյարդի (hepatis) խրոնիկ ցավերով, որոնք սպառնում են հիվանդի առողջության ու կյանքի համար վտանգավոր զարգացում ստանալ, որպիսի նոպաները տեղի են ունենում, ինչպես պետք է կարծել, ամեն օր պաշտոնատեղի գնալուց։ Ուստի, կանխելու համար հիվանդագին նոպաների կրկնությունն ու ուժեղացումը, ես հարկավոր եմ համարում, որ պ. Օբլոմովն առժամանակ դադարեցնի ծառայության գնալը և առհասարակ կարգադրում եմ հեռու մնալ մտավոր զբաղմունքից և ամեն գործունեությունից»։

Բայց սա օգնեց միայն առժամանակ. հո պետք էր առողջանալ, իսկ դրան հետևում էր դարձյալ ամեն օր ծառայության գնալը։ Օբլոմովը չդիմացավ և հրաժարական տվեց։ Այսպես վերջացավ և հետո այլևս չնորոգվեց նրա պետական գործունեությունը։

Հասարակության մեջ դեր կատարելը կարծես թե ավելի հաջողվեց նրան։

Պետերբուրգում ապրելու առաջին տարիներին, նրա վաղ երիտասարդ տարիներին դեմքի խաղաղ գծերն ավելի հաճախ էին աշխուժանում, աչքերը երկար փայլում էին կյանքի հրով, նրանցից թափվում էին լույսի, հույսի, ուժի ճառագայթներ։ Նա հուզվում էր, ինչպես բոլորը, հույսեր ուներ, ուրախանում էր դատարկ բաներով և դատարկ բաների պատճառով էլ տանջվում էր։

Բայց այդ բոլորը վազուց էր, դեռ այն քնքուշ ժամանակները, երբ մարդն ամեն մի ուրիշ մարդու մեջ ենթադրում է անկեղծ բարեկամ գտնել և սիրահարվում է համարյա ամեն կնոջ և պատրաստ է ամեն մեկին առաջարկելու ձեռքն ու սիրտը, որ և ոմանց նույնիսկ հաջողվում է կատարել, հա-

ճախ ցավ պատճառելով ամբողջ հետագա մնացած կյանքի ընթացքում։

Այդ երանելի օրերին Իլյա Իլյիչին էլ բաժին ընկան ոչ սակավ մեղմ, թավշյա, մինչև անգամ կրքոտ հայացքներ գեղեցկուհիների բազմության միջից, շատ բան խոստացող ժպիտների անթիվ քանակություն, երկու-երեք չարտոնված համբույր և էլ ավելի շատ բարեկամական ձեռքսեղմում, արտասուքի հասնող ցավով։

Սակայն, նա երբեք գերի չէր ընկնում գեղեցկուհիների ձեռքը, երբեք նրանց ստրուկը, նույնիսկ շատ ջանասեր երկրպագուն չէր եղել, այն պատճառով թեկուզ, որ կանանց մերձենալը մեծ հոգսեր է առաջ բերում։ Օբլոմովն ավելի շուտ սահմանափակվում էր մեծարանք ցույց տալով հեռվից, պատշաճ տարածությունից։

Թախտը հազվագեպ էր նրան հասարակության մեջ այն աստիճան մոտեցնում որևէ կնոջ, որ նա կարողանար մի քանի օրով բոցավառվել և իրեն սիրահարված համարել։ Այդ պատճառով էլ նրա սիրային կապերը չէին ծավալվում՝ սիրավեպ դառնում. նրանք կանգ էին առնում հենց սկզբում և իրենց անմեղությամբ, պարզությամբ՝ ու մաքրությամբ ետ չէին մնում պատշաճ հասակին հասած որևէ պանսիոներուհու սիրո պատմվածքներից։

Ամենից ավելի նա խույս էր տալիս այն դժգույն, վշտագեմ աղջիկներից, որոնք մեծ մասամբ սևաչյա են, և այդ աչքերի մեջ փայլում են «տանջալից օրերն ու մեղավոր գիշերները», բոլոր մարդկանց համար անհայտ վշտեր ու ուրախություններ ունեցող աղջիկներից, որոնք միշտ ինչ-որ քան ունեն հաղորդելու, ասելու, և երբ հարկավոր է ասել, ցընցվում են, հանկարծակի մրտասուք թափում, հետո հանկարծ փաթաթվում են բարեկամի պարանոցով, երկայն նայում են աչքերին հետո երկնքին, ասում են, թե նրանց կյանքը նզովքի է դատապարտված, և երբեմն էլ ուշաթափվում են։ Նա երկյուղով հեռու էր մնում այդպիսի աղջիկներից։ Նրա հոգին դեռ մաքուր էր և կուսական այդ հոգին, գուցե, սպասում էր իր սիրուն, իր հենարանին, իր խանդալից կրքին, իսկ հետո, տարիներ անց կարծես դադարեց սպասելուց և հուսահատվեց։

Իլյա Իլյիչն է՛լ ավելի սառն հրաժեշտ տվեց բարեկամների բազմությանը։ Ապառքների ու անբերության մասին ստորոստայից ստացած առաջին նամակից անմիջապես հետո նա իր առաջին բարեկամին՝ խոհարարին, փոխարինեց խոհարարուհիով, հետո ծախեց ձիերը, և, վերջապես, արձակեց մյուս «բարեկամներին»։

Տնից դուրս նրան գրեթե ոչինչ չէր հրապուրում և նա օրեցօր ավելի ու ավելի ամուր ու հաստատուն կերպով էր բնակություն հաստատում իր բնակարանում։

Սկզբում նրա համար ծանր էր ամբողջ օրը հագնված մնալ, հետո ծուլանում էր ճաշել ուրիշի մոտ, բայի մոտիկ ծանոթներից, ավելի՝ ամուրի տներից, որտեղ կարելի է փողկապը հանել, բաճկոնն արձակել և որտեղ կարելի է նույնիսկ մի ժամի չափ «պառկել» կամ քնել։

Շուտով երեկույթներն էլ ձանձրացրին նրան. հարկավոր է ֆրակ հագնել, ամեն օր սափրվել։

Ինչ-որ տեղ նա կարդացել էր, որ միմիայն առավոտյան գոլորշիներն են օգտակար, իսկ երեկոյանները վնասակար են, և սկսեց վախենալ խոնավությունից։

Չնայած այդ բոլոր տարօրինակություններին, նրա բարեկամ Շտոլցին հաջողվում էր մարդամեջ դուրս բերել նրան, բայց Շտոլցը հաճախ բացակայում էր Պետերբուրգից Մոսկվա, Նիժնի, Ղրիմ, հետո էլ արտասահման և առանց նրա Օբլոմովը նորից մինչև ականջները թաղվում էր իր միայնակության ու առանձնության մեջ, որից նրան կարող էր դուրս բերել միմիայն կյանքի ամենօրյա երևույթների կարգից դուրս եղած որևէ արտասովոր բան. բայց նման ոչ մի բան չկար և առաջիկայում չէր նախատեսվում։

Այս ամենի հետ միասին, տարիների ընթացքում, վերադարձավ ինչ-որ երեխայական մի վախ, վտանգի և շարժի սպասում ամեն բանից, ինչ որ չէր հանդիպում նրա ամենօրյա կենցաղի ոլորտում, արտաքին բազմազան երևույթներից հեռացած լինելու հետևանք։

Նրան չէր վախեցնում, օրինակ ննջարանի առաստաղի ճեղքվածքը. նա սովորել էր դրան. նրա մտքով չէր անցնում նաև, որ սենյակի խեղդող օդը և շարունակ նստած մնալը գրեթե ավելի կործանարար են առողջության համար, քան

թե գիշերային խոնավությունը. որ ստամոքսն ամեն օր չաս-
փից ավելի լցնելը մի յուրատեսակ աստիճանական ինքնա-
սպանություն է. բայց նա դրան սովորել էր և չէր վախենում։

Նա չվարժվեց շարժմանը, կյանքին, բազմությանը, իրար-
անցմանը։

Խիտ ամբոխի մեջ նրա համար խեղդուկ էր, նա նավակ
էր նստում՝ բարեհաջող կերպով մյուս ափ հասնելու ան-
հաստատ հույսով, կառքով գնում էր՝ սպասելով, որ ձիերը
սրընթաց կքշեն և ջարդուփշուր կանեն։

Երբեմն նրան նյարդային սարսափ էր պատում. նա վա-
խենում էր իրեն շրջապատող լռությունից կամ, պարզապես,
ինքն էլ չգիտեր ինչից՝ մարմնով սարսուռ էր անցնում։ Եր-
բեմն նա վախը սրտում նայում էր մութ անկյանը, սպա-
սելով, որ երևակայությունը գլխին խաղ կխաղա և գերբնա-
կան տեսիլ ցույց կտա։

Այսպես խաղացվեց նրա դերը հասարակության մեջ։ Նա
ձեռքը ծուլորեն թափ տվեց այն բոլոր երիտասարդական հույս-
երի վրա, որոնք խաբել էին իրեն կամ որոնք ինքը չէր ար-
դարացրել, այն բոլոր քնքուշ, տխրալի, լուսավոր հիշողու-
թյունների վրա, որոնցից ծերության օրերին էլ ոմանց սիրտը
բաբախում է։

VI

Իսկ ի՞նչ էր անում նա տանը։ Կարդո՞ւմ էր։ Գրո՞ւմ էր։
Սովորո՞ւմ էր։

Այո՛. եթե նրա ձեռքը գիրք, լրագիր էր ընկնում, կար-
դում էր։

Մի որևէ երևելի երկի մասին լսելիս նրա մեջ ձգտում էր
առաջանում ծանոթանալու դրան. նա փնտրում էր, խնդրում
գիրքը և, եթե շուտ էին բերում, սկսում էր կարդալ. նրա մեջ
սկսում էր գաղափար ձևավորվել առարկայի մասին. մի քայլ
էլ՝ և նա կտիրապետեր դրան, բայց մեկ էլ տեսար, արդեն
պառկած է, անտարբեր նայելով առաստաղին, իսկ գիրքն
ընկած է նրա մոտ մինչև վերջ չկարդացած, չհասկացված։

Նա ավելի արագ սառչում էր, քան կհրապուրվեր. և այլևս
երբեք չէր վերադառնում լքած գրքին։

Մինչդեռ, նա էլ, ինչպես ուրիշները, այսինքն՝ ինչպես
բոլորը, մինչև տասնհինգ տարեկան հասակը սովորել էր
պանսիոնում. այնուհետև ծերունի Օբլոմովները, երկարատև
պայքարից հետո որոշեցին Իլյուշային Մոսկվա ուղարկել,
որտեղ նա, կամա-ակամա, մինչև վերջ անցավ գիտություն-
ների դասընթացը։

Վեհերոտ, անտարբեր բնավորությունը նրան խանգարում
էր ամբողջովին երևան բերելու իր ծուլությունն ու քմահա-
ճույքները օտար մարդկանց մոտ, դպրոցում, որտեղ բացա-
ռություններ չէին անում երես առած որդյակների օգտին։
Անհրաժեշտությունից հարկադրված՝ նա դասարանում նստում
էր ուղիղ, լսում էր ուսուցիչներին, որովհետև ուրիշ ոչ մի
բան անել չէր կարելի, և դժվարությամբ, քրտնելով, հոգոց
հանելով սովորում էր իրեն տրված դասերը։

Առհասարակ նա այս բոլորը համարում էր պատիժ, որ
ուղարկել էր երկինքը մեր մեղքերի պատճառով։

Այն տողից ցած, որի տակ ուսուցիչը, դասը հանձնա-
բարելիս եղունգով գիծ էր քաշում, Օբլոմովը չէր նայում,
հարցուփորձ չէր անում նրան և պարզաբանումներ չէր պա-
հանջում։ Նա բավարարվում էր տետրում գրվածով և ձանձ-
րույթ պատճառող հետաքրքրություն երևան չէր բերում մինչև
անգամ այն ժամանակ, երբ ամեն բան չէր հասկանում, ինչ
լսում էր ու սովորում։

Եթե նրան որևէ ձևով հաջողվում էր հաղթահարել վիճա-
կագրություն, պատմություն, քաղաքատնտեսություն կոչվող
գիրքը, նա միանգամայն գոհ էր լինում։

Իսկ երբ Շտոլցը նրա համար գրքեր էր բերում, որոնք
պետք էր, դասագրքերից բացի, կարդալ, Օբլոմովը երկար ու
լուռ նայում էր նրան։

— Դու էլ, Բրուտո՛ս, իմ դեմ,— ասում էր նա, հառա-
ջանքով ձեռնարկելով գրքերի ընթերցանությանը։

Նրան անբնական և ծանր էր թվում այդ անչափավոր
ընթերցանությունը։

Ինչի՞ համար են այդ բոլոր տետրերը, որոնց վրա ահագին
քանակությամբ թուղթ, ժամանակ ու թանաք ես բանեցնում։
Ինչի՞ համար են դասագրքերը։ Ինչի՞ համար է, վերջապես,
վեց-յոթ տարվա փակված կյանքը, բոլոր խստությունները,

ությունները, դասերի գլխին նստելն ու տանջվելը, վազելու, շարունակ անելու, ուրախանալու արգելքը, երբ ամեն ինչ դեռ վերջացած չէ։

«Էլ ե՞րբ պիտի ապրենք», դարձյալ հարցնում էր նա ինքն իրեն։ «Ե՞րբ պետք է, վերջապես, շրջանառության մեջ դնենք գիտությունների այդ կապիտալը, գիտություններ, որոնց մեծ մասը ոչ մի բանի էլ պետք չի գալու կյանքում։ Օրինակ, քաղաքատնտեսություն, հանրահաշիվ, երկրաչափություն. ի՞նչ պիտի անեմ ես դրանք Օբլոմովկայում»։

Պատմությունն էլ լոկ անձկության մեջ է գցում մարդուս. սովորում ես, կարդում։ Թէ ահա վրա հասավ աղետների տարին, դժբախտ է մարդը, ահա նա ուժերն է հավաքում, աշխատում է, իրեն այցուայն կողմ է գցում, սաստիկ նեղություն է կրում և տնքում է, շարունակ պայծառ օրեր է պատրաստում։ Ահա եկավ այդ օրերը՝ գոնե այստեղ պատմությունը հանգիստ առներ. ոչ, նորից ամպեր երևացին, նորից շենքը խորտակվեց, նորից աշխատել, նորից գեսուդեն ընկնել... Պարզ օրերը կանգ չեն առնում, վազում-գնում են, և կյանքը շարունակ հոսում ու հոսում է, շարունակ բեկում է հա բեկում։

Լուրջ ընթերցումը հոգնեցնում էր Օբլոմովին։ Փիլիսոփաներին չհաջողվեց նրա մեջ ծարավ առաջացնել դեպի մտահայեցական ճշմարտությունները...

Փոխարենը բանաստեղծները կպան նրա ամենանուրբ թելերին. նա այնպիսի երիտասարդ դարձավ, ինչպես բոլորը։ Նրա համար էլ եկավ կյանքի, ուժերի ծաղկման ժամանակը։ Հույսի, բարիք ցանկանալու, առաքինության, գործունեության երջանիկ, ոչ ոքի չդիմադրող, բոլորին ժպտացող պահը, սրտի ուժգին բաբախման, զարկերակի, տարսուր խանդավառ ճառերի ու քաղցր արտասուքների ժամանակաշրջանը։ Միտքն ու սիրտը պայծառացան. նա թոթափեց նընջկոտությունը, հոգին գործունեության պահանջ զգաց։

Շտոլցն օգնեց նրան երկարացնելու այդ պահը, որքան հնարավոր էր դա այնպիսի մի բնավորության համար, ինչպիսին նրա բարեկամի բնավորությունն էր։ Նա Օբլոմովին գրավեց բանաստեղծներով և տարիուկես նրան պահում էր մտքի ու գիտության իշխանության տակ։

Օգտվելով ջահել երազների խանդավառ թռիչքից, նա բացի հաճույքից բանաստեղծների ընթերցանության մեջ ուրիշ նպատակներ դրեց, ավելի խստորեն սկսեց ցույց տալ հեռվում իր և Օբլոմովի կյանքի ուղիները, և գրավում էր նրան դեպի ապագան։ Երկուսն էլ հուզվում, լաց էին լինում, միմյանց հանդիսավոր խոստումներ էին տալիս՝ բնական և լուսավոր ճանապարհով գնալու։

Շտոլցի պատանեկան ավյունը վարակում էր Օբլոմովին, և նա այրվում էր աշխատանքի ծարավից, հեռավոր, բայց հմայիչ նպատակի ծարավից։

Սակայն կյանքի ծաղիկը բացվեց և պտուղներ չտվեց։ Օբլոմովն զգաստացավ և միայն երբեմն, Շտոլցի ցուցումով, Օբլոմովն զգաստացավ և միայն երբեմն, Շտոլցի ցուցումով, թերևս, կարդում էր այս կամ այն գիրքը, բայց ոչ միանգամից, չշտապելով, առանց ագահության, այլ ծուլաբար աչքերն անց էր կացնում տողերի վրայով։

Որքան էլ հետաքրքրական լիներ այն տեղը, որտեղ նա կանգ էր առնում, բայց եթե այդ պահին հասներ նրա ճաշի կամ քնի ժամը, նա գիրքը վայր կդներ կազմը դեպի վեր և կգնար ճաշելու կամ կհանգցներ ճրագը ու կքներ։

Եթե նրան տալիս էին առաջին հատորը, կարդալուց հետո երկրորդը չէր խնդրում, իսկ եթե բերում էին, դանդաղ սկսում էր ընթերցել։

Հետագայում նա առաջին հատորն էլ չէր հաղթահարում, իսկ ազատ ժամանակի մեծ մասն անց էր կացնում արմունկը դնելով սեղանին, իսկ արմունկի վրա՝ գլուխը. երբեմն արմունկի փոխարեն գործ էր ածում այն գիրքը, որ Շտոլցը նրա վզին էր փաթաթել՝ կարդալու համար։

Այսպես ավարտեց իր ուսման ընթացքն Օբլոմովը։ Այն թիվը, երբ նա լսեց վերջին դասախոսությունը, նրա գիտանականության հերկուլեսյան սյուներն եղավ։ Հաստատության պետը վկայականի վրա դրած իր ստորագրությամբ մի գիծ անցկացրեց, ինչպես առաջ ուսուցիչը եղունգով՝ գրքի վրա, որից այն կողմ մեր հերոսը հարկ չհամարեց տարածել իր գիտական ձգտումները։

Նրա գլուխը ներկայացնում էր մեռած գործերի, անձերի, դարաշրջանների, թվերի, կրոնների, իրար հետ ոչնչով չկապված քաղաքական-տնտեսական, մաթեմատիկական կամ այլ

ճշմարտությունների, խնդիրների, դրույթների և այլնի մի բարդ արխիվ։

Կարծես դա մի գրադարան լիներ, կազմված լոկ բաժանբաժան հատորներից՝ գիտության զանազան մասերի վերաբերյալ։

Ուսումը տարօրինակ ներգործություն ունեցավ Իլյա Իլյիչի վրա. ըստ նրա՝ գիտության և կյանքի միջև մի ամբողջ անդունդ էր ընկած, որ ինքը չէր փորձում անց կենալ։ Կյանքը նրա համար ընթանում էր ինքնին, գիտությունն էլ՝ ինքնին։

Նա սովորեց բոլոր գոյություն ունեցող և վաղուց գոյություն չունեցող իրավունքները, անցավ նաև գործնական դատավարության դասընթացը, իսկ երբ տանը պատահած ինչ-որ գողության առթիվ պետք եղավ մի գրություն ուղղել ոստիկանությանը, նա վերցրեց թուղթ, փետրագրիչ, մտածեց, մտածեց և ապա ուղարկեց գրագրի ետևից։

Գյուղում հաշիվները ստարոստան էր անում։ «Ի՞նչ պիտի անի այդտեղ գիտությունը», դատում էր նա տարակուսանքով։

Եվ նա վերադարձավ իր առանձնությանը՝ առանց այնպիսի գիտելիքների, որոնք կարողանային ուղղություն տալ գլխում ազատ շրջող կամ պարապ նիրհող մտքին։

Իսկ ի՞նչ էր անում նա։ Անդադար շարունակում էր իր սեփական կյանքի զարդանկարը գծագրել։ Այդ կյանքի մեջ նա, ոչ առանց հիմքի, այնքան խորիմաստություն ու բանաստեղծություն էր գտնում, որ չես կարող երբեք սպառել առանց գրքերի ու գիտնականության։

Դավաճանելով ծառայությանն ու հասպրակությանը, նա այլ կերպ սկսեց լուծել գոյության խնդիրը, խորասուզվեց իր կոչման մեջ և, վերջապես, հայտնագործեց, որ սեփական գործունեության և կյանք ու կենցաղի հորիզոնը հենց իր մեջ է թաքնված։

Նա հասկացավ, որ իրեն բաժին է ընկել ընտանեկան երջանկություն ու հոգսեր կալվածքի մասին։ Մինչ այդ նա կարգին չգիտեր էլ իր գործերի մասին. իր փոխարեն երբեմն հոգում էր Շտոլցը։ Նա լավ չգիտեր ոչ իր եկամուտը, ոչ ծախսը, երբեք չէր կազմում բյուջե. ոչինչ։

Ծերունի Օբլոմովը, ինչպես որ կալվածքն ընդունել էր իր հորից, այնպես էլ հանձնեց որդուն։ Թեև նա ամբողջ կյանքն անց էր կացրել գյուղում, բայց խելքին զոռ չէր անում, զբաղվում էր հայտնագործելով նորահնար բաների վրա, ինչպես այդ անում են այժմյան կալվածատերերը. թե ինչպես հայտնագործեն հողերի արտադրողականության նոր աղբյուրներ կամ տարածեն ու ուժեղացնեն հները և այլն։ Ինչպես և ինչով որ ցանվում էին հանդերը պապի ժամանակ, դաշտային մթերքների վաճառահանման ինչպիսի ճանապարհներ որ կային, նույնը մնաց նաև նրա օրոք։

Ի դեպ ծերուկը շատ գոհ էր լինում, եթե լավ բերքը կամ բարձրացած գինն անցյալ տարվանից ավելի էր եկամուտ տալիս. նա դա անվանում էր աստվածային օրհնություն։ Նա միայն չէր սիրում փող ձեռք բերելու համար կատարվող հնարամտություններն ու ձգձգումները։

— Հայրերս ու պապերս մեզանից հիմար չէին,— ասում էր նա որպես պատասխան որևէ, իր կարծիքով վնասակար, խորհրդի դեպքում,— և իրենց կյանքը երջանիկ ապրեցին. մե՛նք էլ կապրենք. աստված կտա, կուշտ կլինենք։

Առանց խորամանկամիտ հնարքների կալվածքից ստանալով այնքան եկամուտ, որքան հարկավոր էր իրեն ընտանիքի և զանազան հյուրերի հետ ամեն օր առանց չափավորության ճաշելու և ընթրելու համար, նա շնորհակալություն էր հայտնում աստծուն և ավելին ձեռք բերելու համար աշխատելը մեղք էր համարում։

Եթե գործակատարը բերում էր նրան երկու հազար, երրորդ հազարն իր գրպանը դնելով, և արտասվալից աչքերով պատճառ էր բերում. կարկուտը, երաշտը, անբերրիությունը, ծերունի Օբլոմովը խաչակնքում էր երեսը և նույնպես ասում արտասվալից.

— Աստծո կամքն է. աստծու հետ վեճի բռնվել չի՞ լինի։ Պետք է շնորհակալ լինել տիրոջից այն բանի համար, ինչ կա։

Ծերունիների մահվանից հետո տնտեսական գործերը գյուղում ո՛չ միայն չբարելավվեցին, այլ, ինչպես երևում է ստարոստայի նամակից, է՛լ ավելի վատանում էին։ Պարզ է,

որ Իլյա Իլյիչն ինքը պետք է գյուղ գնար և տեղնուտեղը փընտրեր եկամուտների հետզհետե պակասելու պատճառը։

Նա հենց պատրաստվում էր դա անել, բայց շարունակ հետաձգում էր, մասամբ նաև այն պատճառով, որ ուղևորությունը նրա համար սխրագործություն էր, գրեթե նոր ու անհայտ սխրագործություն։

Նա կյանքում միայն մի ճանապարհորդություն էր արել իր անփոփոխ ձիերով, փետրե ներքնակների, արկղերի, ճամպրուկների, խոզաղդրերի, բուլկիների, ամեն տեսակ տապակած ու խաշած անասունների ու թռչունների մեջ և մի քանի ծառաների ուղեկցությամբ։

Այսպես նա կատարեց միակ ուղևորությունն իր գյուղից մինչև Մոսկվա, և այդ ուղևորությունը նորմա էր համարում առհասարակ բոլոր ճանապարհորդությունների համար։ Իսկ հիմա, լսել էր, որ այդպես չեն ճանապարհորդում, հարկավոր է գլուխ ջարդելով սլանալ։

Հետո Իլյա Իլյիչն իր ուղևորությունը հետաձգում էր նաև այն պատճառով, որ չէր պատրաստվել, ինչպես պետք է, զբաղվելու իր գործերով։

Նա արդեն ոչ հորն էր նման, ոչ պապին։ Նա ուսում էր առել, ապրում էր հասարակության մեջ. այս ամենը հացնում էին նրանց համար օտար զանազան ըմբռնումների։ Նա հասկանում էր, որ ձեռքբերումը ոչ միայն մեղք չէ, այլ որ յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է ազնիվ աշխատանքներով նպաստել ընդհանուր բարօրությանը։

Այդ պատճառով էլ մենության մեջ գծագրած կյանքի զարդանկարի մեծ մասը բռնում էր կալվածքը կարգավորելու և գյուղացիներին կառավարելու նոր, թարմ, ժամանակի պահանջներին համապատասխան պլանը։

Պլանի հիմնական գաղափարը, տեղադրումը, գլխավոր մասերը, ամեն ինչ վաղուց պատրաստ է նրա գլխում, մընացել են միայն մանրամասնությունները, նախահաշիվները և թվերը։

Մի քանի տարի է ինչ նա անխոնջ աշխատում է պլանի վրա, մտածում է, կշռադատում թե՛ ման գալիս, թե՛ պառկած, թե՛ մարդկանց մեջ. մերթ լրացնում է, մերթ փոփոխում տարբեր հոդվածները, մերթ հիշողության մեջ վերականգնում է

Երեկ մտածածն ու գիշերվա ընթացքում մոռացածը. երբեմն էլ հանկարծ, կայծակի նման կփայլատակի մի նոր, անսպասելի միտք ու կեռա նրա գլխում՝ և աշխատանքն առաջ կգնա։

Նա ուրիշի, պատրաստի մտքի ինչ-որ մանր կատարածու չէ. ինքն է իր գաղափարների ստեղծագործողը և ինքն է նրանց կատարածուն։

Հենց առավոտյան վեր է կենում անկողնից, թեյից հետո իսկույն պառկում է բազմոցի վրա, ձեռքը հենակ անում գլխին և առանց իր ուժերը խնայելու մտածում է այնքան ժամանակ, մինչև, վերջապես, գլուխը հոգնում է ծանր աշխատանքից և մինչև խիղճը ասում է՝ բավական բան է արված այսօր ընդհանուր բարօրության համար։

Այդ ժամանակ միայն նա սիրտ է անում հանգստանալու աշխատանքներից և հոգատար դիրքը փոխելու մի այլ, ավելի պակաս գործարար ու խիստ, երազանքների ու գրգանքի համար ավելի հարմար դիրքի։

Գործին վերաբերող հոգսերից ազատվելով՝ Օբլոմովը սիրում էր ամփոփվել ինքն իր մեջ և ապրել իր իսկ ստեղծած աշխարհում։

Նրան մատչելի էր բարձր դիտավորությունների բերկրանքը, նրան խորթ չէին ընդհանուր մարդկային վշտերը։ Նա հոգու խորքում գառնապես լաց էր լինում, երբեմն, մարդկության դժբախտությունների վրա, զգում էր անհայտ, անանուն տանջանք, և՛ անձկություն, և՛ ձգտում դեպի հեռուն, այնտեղ, հավանորեն այն աշխարհը, ուր նրան մի ժամանակ հրապուրում էր Շտոլցը...

Քաղցր արցունքներ էին հոսում նրա այտերի վրայով...

Պատահում էր նաև, որ նա արհամարհանքով էր լցվում դեպի մարդկային արատը, դեպի սուտը, դեպի զրպարտությունը, դեպի աշխարհով մեկ լցված չարիքը, և վառվում էր ցանկությամբ՝ ցույց տալու մարդուն նրա խոցերը, ու հանկարծ բոցավառվում էին նրա մտքերը, շրջում էին ու պտտվում գլխի մեջ, ինչպես ալիքները ծովում, հետո աճումդառնում էին դիտավորություններ, եռացնում արյունը, մկանները շարժման մեջ ընկնում, լարվում էին ջլերը, դիտավորությունները ձգտման էին կերպարանափոխվում։ Բարո-

յական ուժից մղված՝ նա մի բոպեում արագությամբ երկուերեք դիրք էր փոխում, փայլուն աչքերով կիսով չափ բարձրանում էր անկողնում, մեկնում ձեռքը և ոգեշնչված նայում շուրջը... Ահա շուտով ձգտումը կիրականանա, սխրագործություն կդառնա... և այն ժամանակ, տե՜ր աստված, ինչպիսի՜ հրաշքներ, ինչպիսի՜ լավ հետևանքներ կարելի էր սպասել այդպիսի ջանքերից...

Բայց, մեկ էլ տեսար, առավոտը թռավ, օրը սկսեց երեկոյանալ, դրա հետ միասին հանգստին դիմեցին նաև Օբլոմովի հոգնած ուժերը. փոթորիկն ու հուզումները հանդարտվեցին հոգում, գլուխն զգաստացավ մտքերից, արյունն սկսեց ավելի դանդաղ շարժվել երակներում։ Օբլոմովը կամացուկ, մտախոհ շուռ եկավ մեջքի վրա և, տխուր հայացքը սևեռելով լուսամուտին, դեպի երկինք, սկսեց աչքերով տրտմագին ուղեկցել արևին, որ հոյակապորեն մայր էր մտնում ինչ-որ մեկի չորսհարկանի տան ետև։

Եվ քանի՜-քանի անգամ է նա այդպես ուղեկցել արևի մայրամուտը։

Առավոտյան նորից կյանք, նորից հուզումներ, երազանք։ Նա սիրում էր երբեմն երևակայել իրեն որևէ մի անպարտելի զորավար, որի առաջ ոչ միայն Նապոլեոնը, այլև Երուսլան Լազարևիչն էլ ոչ մի նշանակություն չուներ. հնարում էր պատերազմ ու նրա պատճառը. օրինակ, ժողովուրդներն Աֆրիկայից խուժում էին Եվրոպա, կամ նա նոր խաչակրաց արշավանքներ էր սարքում և պատերազմում, վճռում էր ժողովուրդների բախտը, ավերում քաղաքները, խնայում էր, մահապատժի ենթարկում, բարության և մեծահոգության սխրագործություններ կատարում։

Կամ էլ ընտրում էր մտածողի, մեծ արվեստագետի ասպարեզ. բոլորը խոնարհվում էին նրա առջև. նա դափնիներ էր վաստակում. ամբոխը վազում էր նրա ետևից, բացականչելով.

— Տեսե՛ք, տեսե՛ք, ահա գալիս է Օբլոմովը, մեր նշանավոր Իլյա Իլյիչը։

Դառը բոպեներին նա տառապում էր հոգսերից. մի կողքից շրջվում էր մյուս կողքին, պառկում երեսնիվար, երբեմն նույնիսկ բոլորովին կորցնում իրեն. այդ ժամանակ նա վեր

էր կենում անկողնից, ծունկ չոքում և սկսում էր ջերմորեն, եռանդագին աղոթել, աղաչելով երկնքին՝ խափանել որևէ սպառնացող փոթորիկ։

Ապա, իր վիճակի հոգացողությունը հանձնելով երկնքին, նա դառնում էր հանգիստ ու անտարբեր աշխարհում ամեն ինչի նկատմամբ, իսկ փոթորիկն ինչ ուզում է՝ թող անի։

Այսպես էր գործի դնում նա իր բարոյական ուժերը, այսպես էր հուզվում հաճախ ամբողջ օրերով և այն ժամանակ միայն խոր հոգող քաշելով սթափվում կախարդիչ երազանքից կամ տանջալից հոգսից, երբ օրն երեկոյանում էր և արևն իբրև մի հսկայական գունդ՝ հոյակապորեն իջնում էր չորսհարկանի տան ետև։

Այդ ժամանակ նա դարձյալ ուղեկցում էր նրան մտախոհ հայացքով ու տխուր ժպիտով և խաղաղ կերպով հանգչում հուզմունքներից։

Ոչ ոք չգիտեր և չէր տեսել Իլյա Իլյիչի այս ներքին կյանքը. բոլորը կարծում էին, թե Օբլոմովը հենց այնպես, միայն պառկում է և ուտում իր քեֆի համար, և թե նրանից էլ ոչինչ չի կարելի սպասել. հազիվ թե նրա գլխում մտքեր հյուսվեն։ Հենց այդպես էլ խոսում էին նրա մասին ամենուրեք, որտեղ ճանաչում էին։

Նրա ընդունակությունների, հրաբորբոք գլխի, մարդասեր սրտի այդ ներքին հրաբխային աշխատանքի մասին մանրամասն գիտեր և կարող էր վկայել Շտոլցը, բայց Շտոլցը Համարյա երբեք Պետերբուրգում չէր լինում։

Միայն Զախարը, որ ամբողջ կյանքն անց էր կացրել իր բարինի կողքին, էլ ավելի մանրամասն գիտեր նրա ամբողջ ներքին կենցաղը. բայց համոզված էր, որ իրենք բարինի հետ միասին գործ են անում ու ապրում նորմալ, ինչպես հարկն է, և ուրիշ կերպ ապրել պետք էլ չէ։

VII

Զախարը հիսունից անց էր։ Նա արդեն անմիջական ժառանգը՝ չէր այն ռուս կալեբների, ծառայանոցի վախից ու կշտամբանքից ազատ ասպետների, որոնք լի էին անձնուրացության հասնող հավատարմությամբ դեպի իրենց տերե-

բը, որոնք աչքի էին ընկնում բոլոր առաքինություններով և ոչ մի արատ չունեին։

Այս ասպետը և վախ ուներ, և կշտամբանք։ Նա պատկանում էր երկու դարաշրջաններին, և երկուսն էլ նրա վրա իրենց կնիքն էին դրել։ Մեկից նրան ժառանգաբար անցել էր անսահման անձնվիրությունը Օբլոմովների տան հանդեպ, իսկ մյուսից՝ նորագույնից, բարքերի նրբացածությունն ու այլասերությունը։

Լինելով կրքոտության չափ անձնվեր դեպի իր բարինը, նա, սակայն, օր չէր անցնի, որ մի սուտ չասեր նրան։ Հին ժամանակվա ծառան, լինում էր, բարինին ետ էր պահում վատնելուց և անժուժկալությունից, իսկ Զախարն ինքն էր սիրում աղայի հաշվին կոնծել բարեկամների հետ. նախկին ծառան ներքինիի պես ողջախոհ էր, իսկ սա շարունակ վազում էր կասկածելի հատկություններ ունեցող սանամոր մոտ։ Նա ամեն մի սնդուկից ավելի ամուր կպահեր բարինի փողերը, իսկ Զախարը որևէ ծախս անելիս, առիթ էր փնտրում տասը կոպեկով խաբելու բարինին և անպատճառ կյուրացներ սեղանի վրա ընկած պղնձե տասը կամ հինգ կոպեկանոցը։ Ճիշտ նույնպես, եթե Իլյա Իլյիչը մոռանար մանրը պահանջել Զախարից, այդ մանրն այլևս երբեք չէր վերադառնա նրան։

Ավելի մեծ գումարներ նա չէր գողանում, գուցե այն պատճառով, որ իր պահանջները չափում էր տասը կոպեկանոցներով կամ վախենում էր նկատվելուց, բայց համենայնդեպս, ոչ ազնվության առատությունից։

Վաղեմի Կալեբն ավելի շուտ կմեռներ իրեն հանձնարարված ուտելիքի կողքին, որպես մի հիանալի վարժեցրած որսի շուն, քան ձեռք կտար դրան. իսկ սա միայն նայում էր, թե ինչպես ուտի ու խմի անգամ այն, ինչ իրեն չեն հանձնարարում. նա հոգում էր միայն այն մասին, որ բարինը շատ ուտեր և թախծում էր, երբ բարինը չէր ուտում, իսկ սա թախծում էր, երբ բարինը մինչև վերջ ուտում էր այն ամենը, ինչ դնում էր ափսեի մեջ։

Բացի այդ, Զախարը նաև բամբասող էր. խոհանոցում, խանութում, դարպասի մոտ կայացող հավաքույթներում նա ամեն օր գանգատվում էր, որ օր, ու դադար չունի, որ այդպիսի վատ բարին դեռ չի եղել. նա և կամակոր է, և՛ ժլատ, և՛ բարկացկոտ, և որ ինքը ոչ մի բանով նրան սիրաշահել չի կարող, որ, մի խոսքով, ավելի լավ է մեռնել, քան թե նրա մոտ ապրել։

Զախարն այս բաները անում էր ոչ չարությունից և ոչ էլ բարինին վնասելու ցանկությունից, այլ հենց այնպես, ըստ սովորության, որ նա ժառանգություն էր ստացել իր պապից ու հորից՝ ամեն հարմար դեպքում հայհոյել բարինին։

Նա երբեմն ձանձրույթից, խոսակցության նյութի պակասից կամ իրեն լսող հասարակությանն ավելի մեծ հետաքրքրություն ներշնչելու համար հանկարծ իր տիրոջ մասին որևէ մտացածին բան էր տարածում։

— Իմ բարինը սովորություն է դարձրել ա՛յ այն այրու մոտ գնալ։— խռպոտ ձայնով, կամացուկ ասում էր նա,— երեկ տոմսակ ուղարկեց նրան։

Կամ հայտարարում էր, թե իր բարինն այնպիսի թղթամոլ ու հարբեցող է, որպիսին աշխարհը չի ծնել. թե բոլոր գիշերներն անընդհատ մինչև լույս թուղթ է խաղում և օղի խմում։

Բայց նման բան չկար. Իլյա Իլյիչը չէր գնում այրու մոտ, գիշերները հանգիստ քնում էր, խաղաթուղթ ձեռքը չէր առնում։

Զախարը փնթի էր։ Նա հազվադեպ էր սափրվում և թեև ձեռքերն ու երեսը լվանում էր, բայց, կարծես, ավելի շուտ ձևացնում էր թե լվանում է. ասենք՝ ոչ մի օճառով էլ չէիր կարող կեղտը մաքրել։ Երբ նա բաղնիք էր գնում, ձեռքերը երկու ժամով միայն սևից դառնում էին կարմիր, իսկ հետո՝ նորից սև։

Նա շատ անճարակ մարդ էր. երբ սկսում էր բաց անել դարպասը կամ դռները, մի կեսը բաց էր անում, մյուս կեսը փակվում էր, վազում էր այն բացելու, սա էր փակվում։

Նա երբեք միանգամից չէր բարձրացնի հատակից թաշկինակը կամ որևէ այլ իր. միշտ մի երեք անգամ կռանում էր, կարծես որսում էր այն, և միայն չորրորդ անգամ բարձրացնում էր, սակայն դա էլ երբեմն նորից ցած էր գցում։

Եթե նա սենյակի միջով ամանեղենի կամ այլ իրերի մի կույտ էր տանում, ապա հենց առաջին քայլից վերևի

իրերը սկսում էին թափվել հատակին։ Սկզբում ընկնում էր մեկը. նա հանկարծ ուշացած ու անօգուտ շարժում էր անում, որպեսզի խանգարի ցած ընկնելու, ու մի բան էլ գցում։ Նա, զարմանքից բերանը բաց, նայում էր ընկնող իրերին, այլ ոչ դեռ իր ձեռքում մնացածներին, այդ պատճառով էլ մատուցարանը թեք էր բռնում, իսկ իրերը շարունակում էին վայր ընկնել. և այսպես նա սենյակի մյուս դայրն էր հասցնում մի գավաթ կամ ափսե, իսկ երբեմն էլ հայհոյանքով ու նզովքներով ինքն էր վայր նետում այն վերջինը, որ մնացել էր իր ձեռքում։

Սենյակով անցնելիս՝ մերթ ոտքով, մերթ կողքով դիպչում էր սեղանին, աթոռին, միշտ չէ, որ կարողանում էր ընկնել ուղղակի դռան բաց արած կեսի մեջ, այլ ուսով խփում էր մյուս կեսին և այդ առթիվ հայհոյում երկու կեսերն էլ կամ տանտիրոջը, կամ նրանց շինող ատաղձագործին։

Օբլոմովի առանձնասենյակում ջարդոտված կամ կոտրատված էին գրեթե բոլոր իրերը, առանձնապես մանրերը, որոնք զգուշություն էին պահանջում, և այդ ամենը՝ Զախարի շընորհիվ։ Նա առարկան ձեռքը վերցնելու իր ընդունակությունը միակերպ էր գործադրում բոլոր իրերի վերաբերյալ, ոչ մի տարբերություն չդնելով այս կամ այն իրի հետ վարվելու եղանակի մեջ։

Օրինակ, պատվիրում էին մոմը մաքրել կամ բաժակի մեջ ջուր լցնել. նա դրա վրա այնքան ուժ կգործադրեր, որքան հարկավոր է՝ դարպասը բաց անելու համար։

Աստված չանի, Զախարը բարինին սիրաշահելու եռանդով բորբոքվի և մտքում դնի ամեն ինչ հավաքել, մաքրել, տեղավորել, աշխույժ, միանգամից կարգի բերել։ Վերջ չէր լինում աղետներին ու վնասներին. հազիվ թե տուն ներխուժած թշնամի զինվորն այդքան վնաս հասցներ։ Իսկույն զանազան իրեր ցած կթափվեին, ամանեղեն կջարդոտվեր, աթոռները շուռ կգային. կվերջանար այն բանով, որ պետք կլիներ դուրս անել նրան սենյակից կամ էլ ինքը կհեռանար հայհոյանքով ու նզովքներով։

Բարեբախտաբար, նա շատ հազվադեպ էր այդպիսի եռանդով բորբոքվում։

Այդ ամենը տեղի էր ունենում, իհարկե, այն պատճառով,

որ նա կրթություն էր ստացել ու շարժումներ ձեռք բերել ոչ թե շքեղ, քմահաճորեն զարդարված առանձնասենյակների ու թաղուարների նեղվածքի և կիսախավարի մեջ, որտեղ, սատանան գիտե թե ինչեր են դրված, այլ գյուղում, անդորրի, լայնարձակության և ազատ օդի մեջ։

Այնտեղ նա սովորել էր ծառայել մեծածավալ իրերի շուրջ՝ ոչ մի բանով չսահմանափակելով իր շարժումները. գործ էր ունենում ավելի շատ ծավալուն ու պատկառելի գործիքների հետ, ինչպես՝ բահ, նիգ, դռների երկաթե բռնակներ և այնպիսի աթոռներ, որոնք տեղից շարժել չես կարող։

Որևէ մի իր՝ մոմակալ, լամպ, տողաչափ, ծծանակալ, երեք-չորս տարի մնում էր տեղում՝ և ոչինչ. բայց հենց նա ձեռքն առներ այն, մեկ էլ տեսար՝ կոտրվեց։

— Ա՜խ,— երբեմն զարմանքով ասում էր նա Օբլոմովին։— Տեսեք, պարոն, ինչ տարօրինակ բան է. հենց ձեռքս առա այս բանը, փշրվեց։

Կամ ոչինչ էլ չէր ասի, այլ ծածուկ նորից իր տեղը կդներ և հետո կհավատացներ բարինին, որ նա է կոտրել. իսկ երբեմն էլ արդարանում էր, ինչպես տեսանք պատմվածքի սկզբում, այն բանով, որ իրն էլ վերջ ունի, թեկուզ երկաթից լինի, որ հավիտյան չի կարող ապրել։

Առաջին երկու դեպքում դեռ կարելի էր վիճել նրա հետ, բայց երբ նա, ծայրահեղության մեջ ընկած, զինվում էր վերջին փաստարկով, այլևս անօգուտ էր ամեն մի հակաճառություն, և նա արդար էր մնում առանց բողոքարկման։

Իր համար Զախարը մեկընդմիշտ գծագրել էր գործունեության որոշ շրջան, որից այն կողմ կամավոր կերպով երբեք չէր անցնում։

Առավոտյան նա ինքնաեռ էր դնում, մաքրում կոշիկներն ու զգեստը, որ պահանջում էր բարինը, բայց ոչ երբեք այն, որը չէր պահանջում, թեկուզ տասը տարի էլ կախված մնար։

Հետո նա ավլում էր,— սակայն ոչ ամեն օր,— սենյակի մեջտեղը, չհասնելով անկյունները, և մաքրում էր լոկ սեղանի փոշին, որի վրա ոչինչ չկար դրած. որպեսզի իրերը չվերցնի։

Այնուհետև նա իրավունք էր համարում ննջել պառկելատեղում կամ շաղակրատել Անիսյայի հետ խոհանոցում, կամ

ծառաների ու աղախինների հետ դարպասի մոտ՝ ոչ մի բանի մասին հոգ չտանելով։

Եթե նրան հրամայում էին սրանից դուրս որևէ բան էլ անել, նա դժկամորեն էր կատարում հրամանը, այդ հրամանի անօգուտ և այն կատարելու անհնարին լինելու մասին վիճաբանելուց ու համոզելուց հետո։

Ոչ մի կերպ չի կարելի ստիպել նրան, որ իր համար իսկ գծագրած զբաղմունքների շրջանում նոր մշտական հոգված մտցնի։

Եթե նրան հրամայում էին մաքրել, լվանալ որևէ իր կամ տանել այս բանը, բերել այն, նա, ըստ սովորության, քրքջալով էր կատարում հրամանը, բայց եթե մեկն ուզենար, որ նա հետո այդ նույնն աներ մշտապես, դրան անկարելի էր հասնել։

Հետևյալ օրը, երրորդ օրը և այնուհետև պետք էր նույնը նորից պատվիրել և նորից նրա հետ անհաճո բացատրություններին մեջ մտնել։

Չնայած այս ամենին, այսինքն՝ որ Զախարը սիրում էր խմել, բամբասել, վերցնում էր Օբլոմովից հինգկոպեկանոցներն ու տասկոպեկանոցները, կոտրում ու ջարդում էր զանազան իրեր և ծուլանում էր, այնուամենայնիվ, դուրս էր գալիս, որ նա խորապես անձնվեր ծառա է իր բարինի համար։

Նա չէր հապաղի նրա համար կրակն ընկնել կամ խեղդվել, զարմանքի կամ որևէ պարգևի արժանի սխրագործություն չհամարելով այդ։ Նա դրան նայում էր որպես մի բնական, ուրիշ կերպ վարելի չեղող գործի, կամ, ավելի լավ է ասել, ոչ մի կերպ էլ չէր նայում, այլ այդպես էր վարվում առանց որևէ մտահայեցության։

Այդ առթիվ նա ոչ մի տեսություն չուներ։ Նրա մտքով երբեք չէր անցնում վերլուծման ենթարկել իր զգացմունքներն ու հարաբերությունները դեպի Իլյա Իլյիչը. նա ինքը չէր հնարել դրանք. դրանք անցել էին հորից, պապից, եղբայրներից, ծառա ու աղախիններից, որոնց մեջ նա ծնվել ու կրթվել էր, դառնալով մարմին ու արյուն։

Զախարը կմեռներ բարինի փոխարեն՝ դա համարելով իր անխուսափելի և բնական պարտքը, և նույնիսկ ոչինչ չհամարելով, այլ ուղղակի մահվան բերանը կընկներ, ճիշտ այնպես, ինչպես շունը, որը անտառում գաղանի պատահելիս՝ հարձակվում է վրան, առանց կշռադատելու, թե ինչու ինքը պետի հարձակվի և ոչ թե իր տերը։

Բայց դրա փոխարեն, եթե պետք լինի, օրինակ, ամբողջ գիշեր նստել բարինի անկողնի մոտ, առանց աչք կպցնելու, և դրանից կախված լինի բարինի առողջությունն ու նույնիսկ կյանքը, Զախարը անպատճառ կքնի։

Արտաքուստ նա ոչ միայն ստրկամտություն չէր ցույց տալիս բարինին, այլ մինչև անգամ կոպիտ, ընտանեվարի էր վարվում նրա հետ, ամեն մի դատարկ բանի համար լրջորեն բարկանում էր վրան, և մինչև իսկ, ինչպես ասացինք, շարախոսում էր նրան դարպասի մոտ. սակայն դրանով միայն առժամանակ ստվերի տակ էր դրվում, բայց ոչ ամենևին նվազում նրա անձնվիրության հարազատ զգացումը ոչ թե իսկապես Իլյա Իլյիչի նկատմամբ, այլ դեպի այն ամենը, ինչ Օբլոմով անուն էր կրում, ինչ մոտիկ էր, սիրելի ու թանկ նրա համար։

Գուցե այդ զգացումը մինչև անգամ հակասում էր Զախարի սեփական հայացքներին Օբլոմովի անձնավորության վերաբերյալ, գուցե բարինի բնավորության ուսումնասիրությունը Զախարին ուրիշ համոզմունքներ էր ներշնչում։ Հավանորեն, Զախարը, եթե նրան բացատրեին իր կապվածության աստիճանը Իլյա Իլյիչի հետ, կսկսեր վիճարկել այն։

Զախարն Օբլոմովկան սիրում էր, ինչպես կատուն իր ձեղնահարկը, ձին՝ ախոռը, շունը՝ այն բունը, որի մեջ ծնվել ու մեծացել է։ Այդ կապվածության ոլորտում նրա մեջ արդեն մշակվում էին իր հատուկ, անձնական տպավորությունները։

Օրինակ, օբլոմովյան կառապանին նա ավելի էր սիրում, քան խոհարարին, անասնապահուհի վարվառային՝ նրանց երկուսից էլ ավելի։ Իսկ Իլյա Իլյիչին՝ ամենից քիչ. բայց այնուամենայնիվ, օբլոմովյան խոհարարը նրա համար աշխարհի բոլոր մյուս խոհարարներից լավ էր ու բարձր, իսկ Իլյա Իլյիչը բարձր էր բոլոր կալվածատերերից։

Բուֆետապան Տարասկային նա տանել չէր կարողանում, բայց այդ Տարասկային նա չէր փոխի ամենալավ մարդու

հետ ամբողջ աշխարհում, այն պատճառով միմիայն, որ Տաբասկան օբլոմովյան էր։

Նա ընտանեվարի ու կոպիտ էր վարվում Օբլոմովի հետ, ճիշտ այնպես, ինչպես շամանն է կոպիտ ու ընտանեվարի վարվում իր կուռքի հետ. նա և ավլում էր, և վայր գցում, երբեմն, գուցե, նաև սրտնեղությունից խփում, բայց այնուամենայնիվ նրա հոգում շարունակ կար այդ կուռքի բնության գերազանցության գիտակցությունը իր բնության հանդեպ։

Ամենափոքրիկ առիթը բավական էր, որ Զախարի հոգու խորքից դուրս քաշեր այդ զգացմունքը և նրան հարկադրեր ակնածությամբ նայելու բարինին, երբեմն էլ, մինչև անգամ՝ խանդաղատանքից արտասուք թափելու։ Աստված չանի, որ նա մի որևէ այլ բարինի ոչ թե ավելի բարձր, մինչև անգամ հավասար դասեր իր բարինին։ Աստված չանի, եթե այդպես մտածեր անել և մեկ ուրիշը։

Զախարը Օբլոմովի մոտ եկող բոլոր մյուս պարոններին ու հյուրերին մի փոքր բարձրից էր նայում և ինչ-որ զիջողամտությամբ էր ծառայում նրանց, թեյ տալիս և այլն, կարծես ուզում էր նրանց զգացնել տալ այն պատիվը, որ վայելում են նրանք՝ գտնվելով իր բարինի մոտ։ Նրանց մերժում էր կոպիտ ձևով։

— Բարինը հանգստանում է,— ասում էր նա, ոտքից գլուխ գոռոզաբար գիտելով եկողին։

Երբեմն, փոխանակ բամբասանքի ու շարախոսության, նա հանկարծ սիրում էր փառաբանել Իլյա Իլյիչին խանութներում ու դարպասի մոտի հավաքույթներում, և այն ժամանակ ոգևորությանը վերջ չկար։ Նա հանկարծ սկսում էր թվարկել բարինի բարեմասնությունները. խելք. քնքշանք. առատաձեռնություն, բարություն. և եթե նրա բարինին պակասեին հատկություններ ներբողի համար, նա փոխ կվերցներ ուրիշներից և նրան կվերագրեր մեծաշարմություն, հարստություն կամ անսովոր հզորություն։

Եթե պետք էր վախեցնել դոնապանին, տան կառավարչին, նույնիսկ հենց տնտիրոջը, նա միշտ վախեցնում էր բարինով. «Այ, սպասիր, ես կասեմ բարինին», ասում էր նա սպառնալիքով. «Նա քո հախից կգա»։ Նա չէր էլ ենթադրում, թե ավելի ուժեղ հեզինակություն կա աշխարհում։

Բայց Օբլոմովի ու Զախարի արտաքին հարաբերությունները միշտ մի տեսակ թշնամական էին։ Նրանք, ապրելով երկուսով, ձանձրացրել էին միմյանց։ Մարդու մտերմական, ամենօրյա մերձեցումն ուրիշ մարդու հետ իզուր չի անցնում ոչ մեկի և ոչ մյուսի համար. թե մեկ և թե մյուս կողմից շատ կենսական փորձ, տրամաբանություն ու սրտի ջերմություն է հարկավոր, որպեսզի միայն արժանիքներից հրճվելով՝ չխոցես և չխոցվես փոխադարձ պակասություններով։

Իլյա Իլյիչն արդեն գիտեր Զախարի մի անընդգրկելի արժանիքը. անձնվիրությունը դեպի իրեն, և սովորել էր նրան, իր կողմից նույնպես համարելով, որ դա չի կարող և չպետք է ուրիշ կերպ լինի, իսկ մեկընդմիշտ վարժվելով արժանիքին, նա այլևս դրանով չէր հրճվում, մինչդեռ չէր կարող, նույնիսկ իր անտարբերությամբ դեպի ամեն ինչ, համբերությամբ տանել Զախարի բազմաթիվ մանր պակասությունները։

Եթե Զախարը հոգու խորքում հին ծառաներին հատուկ անձնվիրություն տածելով դեպի բարինը, նրանցից տարբերվում էր ժամանակակից պակասություններով, Իլյա Իլյիչն էլ, իր կողմից, ներքուստ գնահատելով նրա անձնվիրությունը, արդեն չուներ այն բարեկամական, գրեթե ազգակցական հակվածությունը, որ նախկին տերերը տածում էին դեպի ծառաները։ Նա իրեն երբեմն թույլ էր տալիս խիստ բախվել Զախարի հետ։

Ինքն էլ Զախարին էր ձանձրացնում։ Զախարը, երիտասարդ ժամանակ լաքեյական ծառայությունը լրացնելով բարինի տանը, նշանակվել էր Իլյա Իլյիչին հսկիչ և այդ ժամանակից սկսել էր իրեն միայն շռայլության առարկա համարել, տան արիստոկրատական պատկանելություն, որ նշանակված է հին ընտանիքի լրությունն ու փայլը պահպանելու համար, և ոչ թե անհրաժեշտ առարկա։ Այդ պատճառով էլ նա առավոտները բարինին հագցնելուց և զգեստը երեկոյան հանելուց հետո բացարձակապես ոչինչ չէր անում։

Բնությունից ծույլ լինելով՝ նա ծույլ էր նաև իր լաքեյական դաստիարակությամբ։ Նա իրեն կարևոր դիրք էր տալիս ծառաների ու աղախինների մեջ, իրեն նեղություն չէր տալիս ոչ ինքնաեռ պատրաստելու և ոչ էլ հատակներն ավլելու։ Նա

կամ նիրհում էր նախասենյակում, կամ գնում էր շաղակրատելու ծառայասենյակում, խոհանոցում. կամ էլ ժամերով, ձեռքերը կրծքին ծալած, կանգնած էր լինում դարպասի մոտ և քնկոտ մտածկոտությամբ նայում էր չորս կողմը։

Եվ այսպիսի կյանքից հետո հանկարծ նրա վրա գցեցին իր ուսերին կրելու ամբողջ տան ծառայության ծանր բեռը։ Նա և պետք է ծառայեր բարինին, և ավլեր, և մաքրեր, նաև պետք է դեսուդեն վազեր՝ հանձնարարությունները կատարելու համար։ Այս բոլորից նրա հոգու մեջ մռայլություն ընկավ, իսկ վարվեցողության մեջ երևան եկավ կոպտություն ու դաժանություն. դրանից էր, որ նա ամեն անգամ մրթմրթում էր, երբ բարինի ձայնը նրան ստիպում էր թողնել պառկելատեղը։

Սակայն, չնայած այդ արտաքին մռայլությանն ու վայրենությանը, Զախարը բավական փափուկ ու բարի սիրտ ուներ։ Նա մինչև անգամ սիրում էր ժամանակ անցկացնել երեխաների հետ։ Բակում, դարպասի մոտ նրան հաճախ տեսնում էին շատ երեխաների հետ։ Նա հաշտեցնում էր նրանց, տնազանում, խաղեր էր սարքում կամ, պարզապես նստում էր նրանց հետ՝ մեկին վերցնելով մի ծնկին, մյուսին՝ մյուս, իսկ ետևից նրա վզին էր փաթաթվում մի ուրիշ չարաճճի կամ քաշքշում նրա այտամորուսները։

Այդպես Օբլոմովը խանգարում էր Զախարին ապրել, որովհետև ամեն րոպե նրանից ծառայություն և իր մոտ լինել էր պահանջում, մինչդեռ սիրտը, զրուցասեր բնավորությունը, և ծամելու հավիտենական, երբեք չդադարող պահանջը Զախարին քարշ էին տալիս մերթ սանամոր մոտ, մերթ խոհանոց, մերթ խանութ, մերթ դարպասի մոտ։

Նրանք վազուց էին ճանաչում միմյանց և վաղուց էին միասին ապրում։ Զախարն իր ձեռքերի վրա էր խնամել-մեծացրել Օբլոմովին, իսկ Օբլոմովը հիշում էր նրան իբրև երիտասարդ, ճարպիկ, ագահ ու խորամանկ տղայի։

Վաղեմի կապն անջնջելի էր նրանց միջև։ Ինչպես որ Իլյա Իլյիչը չէր կարող ոչ վեր կենալ, ոչ պառկել քնելու, ոչ սանրվել ու կոշիկներն հագնել, ոչ էլ ճաշել առանց Զախարի օգնության, այդպես էլ Զախարը չէր կարող իրեն ուրիշ բաներին պատկերացնել, բացի Իլյա Իլյիչից, ուրիշ գոյություն

պատկերացնել, բացի նրան հագցնելուց, կերակրելուց, նրան կոպտելուց, նենգամտելուց, ստելուց և միևնույն ժամանակ նրա առջև ներքին ակնածանք ցուցադրելուց։

VIII

Տարանտևի և Ալեքսեևի ետևից դուռը փակելով, Զախարը չբարձրացավ պառկելատեղը, սպասելով, որ բարինն իսկույն իրեն կկանչի, որովհետև նա լսեց, որ սա պատրաստվում էր բան գրել։ Բայց Օբլոմովի առանձնասենյակում ամեն ինչ հանգիստ էր, ինչպես գերեզմանում։

Զախարը նայեց ճեղքից և ի՞նչ տեսնի։ Իլյա Իլյիչը պառկած էր իր համար բազմոցին, գլուխը հենելով ձեռքի ափին. նրա առջև ընկած էր գիրքը։ Զախարը բաց արեց դուռը։

— Էդ ինչո՞ւ եք նորից պառկել,— հարցրեց նա։

— Մի՛ խանգարի. տեսնում ես կարդում եմ,— ընդհատ-ընդհատ ասաց Օբլոմովը։

— Ժամանակն է լվացվելու և գրելու,— ասում էր պոկ չեկող Զախարը։

— Այո, իսկապես ժամանակն է,— սթափվեց Իլյա Իլյիչը։

— Իսկույն, դու գնա։ Ես կմտածեմ։

— Այդ ե՞րբ հասցրեց նորից պառկել,— քրթմնջում էր Զախարը, թոչելով վառարանի վրա։— Ճարպիկն է, հա՞։

Բայց և այնպես Օբլոմովը կարողացավ կարդալ ժամանակի ընթացքում դեղնած այն էջը, որի վրա ընթերցումը ընդհատվել էր մոտ մի ամիս առաջ։ Նա գիրքը տեղը դրեց և հորանջեց, հետո խորասուզվեց իրենից պոկ չեկող մտքի մեջ «երկու դժբախտությունների մասին»։

— Որպիսի՜ տաղտկություն,— շշնջում էր նա, մեկ ձգելով, մեկ հավաքելով ոտքերը։

Նրան գրավում էին քնքշանքն ու երազանքները. նա աչքերը դարձնում էր դեպի երկինք, փնտրում էր իր լուսատուին, բայց նա հենց զենիթի վրա էր և շլացուցիչ փայլ էր թափում այն տան կրե պատին, որի ետև էր անցնում երեկոները Օբլոմովի աչքի առաջ։ «Ոչ, նախ գործը», խստորեն մտածեց նա, իսկ հետո...»

Գյուղական առավոտը վաղուց էր անցել, Պետերբուրգինը՝

անցնելու վրա էր։ Բակից Իլյա Իլյիչին էր հասնում մարդկային և ոչ մարդկային ձայների աղմուկը՝ թափառող արտիստների երգը, որ ուղեկցվում էր մեծ մասամբ շների հաչոցով։ Գալիս էին ցույց տալու նաև ծովային գազան, բերում և զանազան ձայներով ամեն տեսակ մթերքներ էին առաջարկում։

Նա պառկեց մեջքի վրա և երկու ձեռքն էլ դրեց գլխատակը։ Իլյա Իլյիչն զբաղվեց կալվածքի պլանի մշակմամբ։ Նա մտքով արագ անցկացրեց մի քանի լուրջ, արմատական հոդվածներ բահրայի, հերկի մասին, հնարեց մի նոր, ավելի խիստ միջոց գյուղացիների ծուլության ու թափառաշրջիկության դեմ և անցավ սեփական օր ու ապրուստի կազմակերպմանը գյուղում։

Նրան զբաղեցնում էր գյուղական տան կառուցումը. նա հաճույքով մի քանի րոպե կանգ առավ սենյակների դասավորման վրա, որոշեց սեղանատան, բիլյարդասենյակի երկրությունն ու լայնությունը, մտածեց նաև այն մասին, թե դեպի ուր պիտի նայեն իր առանձնասենյակի լուսամուտները. հիշեց մինչև անգամ կահկարասիքի ու գորգերի մասին։

Դրանից հետո դասավորեց տան կողաշենքերը, հաշվի առնելով հյուրերի այն քանակությունը, որ նա մտադրվում էր ընդունել, տեղ հատկացրեց ախոռների, սարայների, ծառայատների և զանազան այլ սպասաշենքերի համար։

Վերջապես անցավ պարտեզին. նա վճռեց բոլոր հին լորենիներն ու կաղնի ծառերը թողնել այնպես, ինչպես կան, իսկ խնձորենիներն ու տանձենիները ոչնչացնել և դրանց փոխարեն ակացիներ տնկել. ուզեց մտածել նաև զբոսայգու մասին, բայց մտքում ծախսերի մոտավոր նախահաշիվը կազմելով գտավ, որ թանկ է և, հետաձգելով մի ուրիշ ժամանակի, անցավ ծաղկանոցներին ու ջերմոցներին։

Այստեղ նրա աչքերի առաջ այնքան հրապուրիչ կերպով առկայծեց ապագա պտուղների միտքը, որ նա հանկարծ մի քանի տարով տեղափոխվեց գյուղ, երբ կալվածքն արդեն սարքված է իր պլանի համաձայն և նա այնտեղ է ապրում մշտակաց։

Նրան պատկերացավ, թե ինչպես ինքն ամառվա երեկոյան նստած է տեռասում, թեյի սեղանի մոտ, արևի համար

անթափանցելի ծառածածկի տակ, երկար ծխամորճով, և ծուլաբար ներս է քաշում ծուխը, մտախոհ հրճվելով ծառերի այն կողմը բացվող տեսարանով, զովությամբ, անդորրությամբ, իսկ հեռվում դեղնում են հանդերը, արևն իջնում է ծանոթ մատղաշ կեչուտի ետև և կարմրեցնում հայելու նման հարթ լճակը։ դաշտերից գոլորշի է բարձրանում. օրը զովանում է, վրա է հասնում մթնշաղը. գյուղացիները խումբ-խումբ տուն են գնում։

Կալվածքի սպասավորների պարապ խումբը նստած է դարպասի մոտ. լսվում են ուրախ ձայներ, հռհռոց, բալալայկա, աղջիկները բռնելախաղ են խաղում, հենց իր շուրջը թռչկոտում են իր երեխաները, բարձրանում են ծնկներին, կախ ընկնում վզից. ինքնաեռի կողքին նստած է... ողջ շրջապատի թագուհին, նրա աստվածությունը... մի կինարմատ, նրա կինը։ Այդ միջոցին նրբագեղ պարզությամբ զարդարված սեղանատանը պայծառ փայլում են ակնապարար լույսերը, պատրաստվում է մեծ կլոր սեղանը. ծառայապետի աստիճանի բարձրացած Զախարը, ամբողջովին ճերմակած այտամորուսներով, սեղան է գցում, հաճելի զնգզնգոցով տեղավորում է բյուրեղապակին և դասավորում արծաթե իրերը. ամեն րոպե հատակին գցելով մերթ բաժակը, մերթ պատառաքաղը, առատ ընթրիքի են նստում. այդտեղ է նաև նրա մանկության ընկերը, նրա անդավաճան բարեկամ Շտոլցը և ուրիշներ, բոլորը ծանոթ դեմքեր. հետո գնում են քնելու...

Օբլոմովի դեմքը հանկարծ երջանկությունից կարմրեց. երազանքն այնքան պայծառ էր, կենդանի, բանաստեղծական, որ նա վայրկենապես երեսը դարձրեց դեպի բարձր։ Հանկարծ զգաց սիրո, անդորր երջանկության մի անորոշ ցանկություն, հանկարծ կարոտեց իր հայրենի դաշտերին ու բլուրներին, իր տանը, կնոջն ու երեխաներին...

Հինգ րոպեի չափ պառկելով երեսնիվար՝ նա նորից դանդաղորեն շուռ եկավ մեջքի վրա։ Դեմքը փայլում էր հեզ, սրտառուչ զգացումից. նա երջանիկ էր։

Օբլոմովը հրճվանքով, դանդաղ մեկնեց ոտքերը, որից վարտիքը մի քիչ վեր քաշվեց, բայց նա չէր էլ նկատում այդ փոքրիկ անկարգությունը։ Հաճոյակատար երազանքը նրան թռցնում տանում էր դեպի թեթև ու ազատ, հեռու ապագան։

Այժմ նրան կլանեց իր սիրած միտքը. նա մտածում էր բարեկամների փոքրիկ գաղութի մասին, որոնք կբնակվեն մանր գյուղերում ու ֆերմաներում, իր գյուղի շուրջ՝ տասնհինգ կամ քսան վերստ հեռավորության վրա, ինչպես ամեն օր հերթով միմյանց հյուր կգնան՝ ճաշելու, ընթրելու, պարելու. նրան երևում են շարունակ պայծառ օրեր, պայծառ դեմքեր, առանց հոգսերի ու խորշոմների, ծիծաղկոտ, կլոր, պայծառ կարմիրը այտերին, կրկնակզակով դեմքեր: երբեք չվատացող ախորժակով. հավիտենական ամառ կլինի, հավիտենական ուրախություն, քաղցր ուտելիք ու քաղցր ծուլություն...

— Աստված, աստվա՜ծ,— արտասանեց նա երջանկությամբ լի և սթափվեց։

Հանկարծ բակից լսվեց հինգ ձայնով. «Կարտոֆի՜լ։ Ավազ, ավազ պետք չէ՞։ Ածո՜ւխ։ Ածո՜ւխ... Նվիրաբերեք, գթասիրտ պարոններ, տիրոջ տաճարի կառուցման համար»։ Իսկ նոր կառուցվող հարևան տնից լսվում էր կացինների թխկթխկոց, բանվորների աղաղակ։

— Ա՜խ,— դառնությամբ բարձրաձայն հառաչեց Իլյա Իլյիչը։ «Սա ի՜նչ կյանք է։ Ինչ անտանելի է այս մայրաքաղաքային աղմուկը։ Ե՞րբ պիտի գնամ հանգերը, հարազատ անտառները,— մտածում էր նա։— Մարդ պառկեր հիմա խոտի վրա, ծառի տակ և ճյուղերի արանքից նայեր արևին ու հաշվեր, թե ճյուղերի վրա քանի թռչնակ է նստում ու նորից թռչում։ Մեկ էլ խոտի վրա քեզ ճաշ, նախաճաշ կբերի որևէ կարմրաթշիկ սպասուհի՝ մերկ, կլոր ու փափուկ արմունկներով ու արևից այրված պարանոցով. անպիտանը հայացքը գետնին է գցում և ժպտում... Ե՞րբ պիտի գա այդ ժամանակը...»

«Իսկ պլա՞նը, իսկ ստարոստա՞ն, իսկ բնակարա՞նը»,— հանկարծ հնչեց նրա հիշողության մեջ։

— Այո՛, այո՛,— շտապով խոսեց Իլյա Իլյիչը։— Խնդրույն, ա՜յս րոպեիս։

Օբլոմովն արագ բարձրացավ և նստեց բազմոցի վրա, ապա ոտքերը կախեց հատակին, միանգամից դրեց երկու մաշիկների մեջ և այդպես նստած մնաց։ Հետո լրիվ վեր կացավ և մտախոհ կանգնեց մի երկու րոպե։

— Զախար, Զախա՜ր,— բղավեց նա բարձր, նայելով սեղանին և թանաքամանին։

— Էլի ի՞նչ կա,— լսվեց թռիչքի հետ միասին։— Թե ո՞նց են կարողանում ոտքերս քարշ տալ ինձ,— խռպոտ շշնջոցով ավելացրեց Զախարը։

— Զախա՜ր,— կրկնեց Իլյա Իլյիչը մտախոհ, աչքը չհեռացնելով սեղանից։— Այ թե ինչ, եղբայրս...— սկսեց նա, ցույց տալով թանաքամանը, բայց նախադասությունը չվերջացրած՝ նորից մտքերի մեջ ընկավ։

Նրա ձեռքերն սկսեցին դեպի վեր ձգվել, ծնկները ծալվել, նա սկսեց ճմլկոտալ, հորանջել...

— Այնտեղ մնացել է,— ասաց նա, շարունակ ճմլկոտալով, ընդմիջումներով,— պանիր և... մաղերա տուր. մինչև ճաշը շատ ժամանակ կա, ես մի փոքր կնախաճաշեմ...

— Որտե՞ղ է պանիր մնացել,— ասաց Զախարը,— ոչինչ էլ չի մնացել։

— Ինչպե՞ս չի մնացել,— ընդհատեց նրան Իլյա Իլյիչը։— Ես շատ լավ հիշում եմ. այ այսպիսի կտոր էր...

— Չկա, չկա՜։ Ոչ մի կտոր էլ չկար,— համառորեն պնդում էր Զախարը։

— Կար,— ասաց Իլյա Իլյիչը։

— Չկար,— պատասխանում էր Զախարը։

— Դե, որ այդպես է, գնիր։

— Փող տվեք։

— Այ այնտեղ մանր փող կա, վերցրու։

— Այստեղ միայն մի ռուբլի քառասուն կոպեկ է, իսկ հարկավոր է մի ռուբլի վաթսուն կոպեկ։

— Այնտեղ սև փող էլ կար։

— Ես չեմ տեսել,— ասաց Զախարը, կուլուգիդ անելով։— Արծաթ փող կար, ահա, իսկ սև փող չկար։

— Կար. երեկ ցրիչը հենց ձեռքս դրեց։

— Նա իմ ներկայությամբ տվեց,— ասաց Զախարը,— ես տեսա, որ մանր տվեց, իսկ սև փող չեմ տեսել...

«Արդյոք Տարանտևը չի՞ վերցրել»,— տատանվելով մտածեց Իլյա Իլյիչը։ «Ոչ», նա մանրն էլ կվերցներ»։

— Լավ, էլ ուրիշ ի՞նչ կա այնտեղ,— հարցրեց նա։

— Ոչինչ էլ չկա։ Իսկ երեկվա ապուխտից կա՞, պետք է

հարցնել Անիսյային,— ասաց Զախարը։— Կուզե՞ք՝ բերեմ։

— Բեր, ինչ որ կա։ Բայց ինչպե՞ս թե չկա։

— Չկա էլի,— ասաց Զախարն ու գնաց։

Իսկ Իլյա Իլյիչը դանդաղ ու մտախոհ ման էր գալիս առանձնասենյակում։

— Այո, շատ հոգսեր կան,— ասում էր նա ցած ձայնով։— Այ թեկուզ պլանի վերաբերյալ, դեռ անապատ աշխատանք կա անելու... Իսկ պանիր հո մնացել էր,— ավելացրեց նա մտախոհ,— այդ Զախարն է կերել, ու ասում է, թե չկար։ Իսկ ո՞ւր կորան սև փողերը,— ասաց նա, ձեռքով փնտրելով սեղանի վրա։

Քառորդ ժամ հետո Զախարը դուռը բաց արեց մատուցարանով, որ բռնել էր երկու ձեռքով, և ֆենյակ մտնելով՝ ուզում էր դուռը ոտքով ծածկել, բայց վրիպեց և ոտքով դատարկ տեղի խփեց. գավաթը ընկավ, հետն էլ ջրամանի խցանը և բուլկին։

— Առանց դրա ոչ մի քայլ չես կարող անել,— ասաց Իլյա Իլյիչը։— Դե, գոնե բարձրացրու, ինչ գցել ես. կանգնել՝ հիանում է։

Զախարը, մատուցարանը ձեռքին, ուզեց կռանալ՝ բուլկին վերցնելու, բայց պպզելով՝ հանկարծ նկատեց, որ երկու ձեռքն էլ զբաղված են և վերցնել չի կարող։

— Դե, վերցրու,— ծաղրանքով ասում էր Իլյա Իլյիչը։— Ի՞նչ ես անում։ Ինչո՞ւ չես կարողանում։

— Օ՜, գրողը տանի ձեզ, նզովվածներ,— կատաղած բղավեց Զախարը՝ դիմելով ընկած իրերին։— Ո՞վ է տեսել նախաճաշել ճաշից անմիջապես առաջ։

Եվ, մատուցարանը ցած դնելով, նա հատակից վերցրեց, ինչ որ վայր էր գցել. վերցրեց բուլկին, փչեց և դրեց սեղանի վրա։

Իլյա Իլյիչն սկսեց նախաճաշել, իսկ Զախարը կանգնել էր նրանից որոշ հեռավորության վրա, կողքից նայում էր և, ըստ երևույթին, մտադրվում էր մի բան ասել։

Բայց Օբլոմովը նախաճաշում էր, ամենաչնչին ուշադրություն անգամ չդարձնելով նրա վրա։

Զախարը երկու անգամ հազաց։

Օբլոմովը շարունակում էր ոչ մի ուշադրություն չդարձնել։

— Կառավարիչը հենց նոր դարձյալ մարդ էր ուղարկել,— վեհերոտ սկսեց խոսել վերջապես Զախարը,— կապալառուն եղել է նրա մոտ, ասում է՝ չի՞ կարելի ձեր բնակարանը տեսնել։ Դարձյալ նույն ձևափոխման մասին է...

Իլյա Իլյիչն ուտում էր, չպատասխանելով ոչ մի բառ։

— Իլյա՛ Իլյիչ,— մի քիչ լռելուց հետո ավելի ցածր ձայնով ասաց Զախարը։

Իլյա Իլյիչը ձևացրեց, թե չի լսում։

— Պատվիրում են եկող շաբաթ փոխադրվել,— խռպոտ ձայնով ասաց Զախարը։

Օբլոմովը մի գավաթ գինի խմեց և լուռ էր։

— Ինչպե՞ս անենք, Իլյա Իլյիչ,— գրեթե փսփսալով հարցրեց Զախարը։

— Իսկ ես քեզ արգելել եմ խոսել ինձ հետ դրա մասին,— խստորեն ասաց Իլյա Իլյիչը և, տեղից բարձրանալով՝ մոտեցավ Զախարին։

Սա ետ ընկրկեց։

— Ի՞նչ թունոտ մարդ ես, Զախար,— ավելացրեց Օբլոմովը սրտնեղած։

Զախարը վիրավորվեց։

— Ը՞հը՛,— ասաց նա,— թունոտ եմ։ Ինչո՞ւ եմ թունոտ։ Ես ոչ ոքի չեմ սպանել։

— Ինչպե՞ս թե թունոտ չես,— կրկնեց Իլյա Իլյիչը։— Դու թունավորում ես իմ կյանքը։

— Ես թունոտ չե՞մ,— պնդում էր Զախարը։

— Ի՞նչ ես ինձ խեղդում բնակարանի հարցով։

— Բա ի՞նչ անեմ։

— Իսկ ե՞ս ինչ անեմ։

— Դուք չէ՞ որ ուզում էիք տանտիրոջը նամակ գրել։

— Եվ կգրեմ. համբերիր, հո չի կարելի հանկարծ։

— Այ, հենց հիմա գրեք։

— Հիմա, հիմա։ Ես դեռ ավելի կարևոր գործ ունեմ։ Կարծում ես՝ փայտ կոտրե՞լ է դա, ինչ է։ Շրխկ ու թրխկ։ Ցե՞ս,— ասաց Օբլոմովը, չոր փետրագրիչը շարժելով թանաքամանի մեջ,— թանաք էլ չկա։ Ինչպե՞ս գրեմ։

— Իսկ ես իսկույն կվասով բաց կանեմ,— ասաց Զա-

խարը և, վերցնելով թանաքամանը, արագ գնաց նախասենյակ, իսկ Օբլոմովն սկսեց թուղթ փնտրել։

— Երևում է, թուղթ էլ չկա,— ասում էր նա ինքն իրեն, փնտրելով արկղի մեջ և շոշափելով սեղանը։— Իսկապես որ չկա։ Ա՜խ, այդ Զախարը, կյանք չկա նրա ձեռքից։

— Դե ինչպե՞ս թունոտ մարդ չես,— ասաց Իլյա Իլյիչը ներս մտնող Զախարին.— ոչ մի բանի ուշք չես դարձնում։ Ինչպե՞ս կարելի է տանը թուղթ չունենալ։

— Սա ի՞նչ պատիժ է, Իլյա Իլյիչ։ Ես քրիստոնյա եմ. ի՞նչ եք հայհոյում ինձ թունոտ բառով։ Հավանել եք՝ թունոտ։ Մենք ծնվել ու մեծացել ենք ծերունի բարինի օրոք, նա բարեհաճում էր հայհոյել՝ շան լակոտ անվանելով ու ականջներս էր քաշում, բայց այդպիսի բառ չենք լսել, հնարված չէր։ Շա՞տ հեռու է մեղքից։ Այ թուղթ, համեցե՛ք։

Դարակի վրայից վերցրեց և նրան տվեց կես թերթ գորշ թուղթ։

— Մի՞թե կարելի է սրա վրա գրել,— հարցրեց Օբլոմովը՝ դեն գցելով թուղթը։— Ես սրանով գիշերը ծածկել էի բաժակը, որպեսզի նրա մեջ որևէ... թունավոր բան չընկնի։

Զախարը շուռ եկավ և պատին էր նայում։

— Դե, բան չկա. տուր այստեղ, ես սևագրություն կանեմ, իսկ Ալեքսեևը կարտագրի։

Իլյա Իլյիչը նստեց սեղանի մոտ և արագ գրեց. «Ողորմած տեր...»

— Ինչ վատ թանաք է,— ասաց Օբլոմովը։ Ուրիշ անգամ ուշքդ վրադ պահիր, Զախար, և-քո գործն արա, ինչպես պետք է։

Նա մի փոքր մտածեց և սկսեց գրել։

«Այն բնակարանը, որը ես զբաղեցնում եմ տան երկրորդ հարկում, որտեղ դուք մտադրվել եք մի քանի փոփոխություններ մտցնել, լիովին համապատասխանում է իմ կյանքի բնույթին և այս տանը երկար մնալու հետևանքով ձեռք բերած սովորություններին։ Տեղեկություն ստանալով իմ ճորտ սպասավոր Զախար Տրոֆիմովի միջոցով, որ դուք պատվիրել եք հաղորդել ինձ, որ իմ զբաղեցրած բնակարանը...»

Օբլոմովը կանգ առավ և կարդաց գրածը։

— Հարթ չէ,— ասաց նա,— այստեղ երկու անգամ իրար ետևից գրված է որ (что), իսկ այնտեղ երկու անգամ որը (который)։

Նա շշնջաց և բառերը տեղափոխեց, գուրս եկավ, որ որը (который) վերաբերում է հարկին. դարձյալ անհարմար է։ Մի կերպ ուղղեց և սկսեց մտածել, թե ինչպես անի, որ խուսափի երկու անգամ որ (что) բառից։

Նա մեկ ջնջում էր, մեկ էլ նորից մի բառ գրում։ Մի երեք անգամ տեղափոխեց որ (что) բառը, բայց գուրս էր գալիս կամ անհեթեթություն, կամ հարևանություն մի ուրիշ որ (что) բառի հետ։

— Չես էլ կարողանում պրծնել այդ մյուս որ (что) բառից,— ասաց նա անհամբերությամբ։— է՜, գրողի ծոցը գնա այդ նամակը։ Գլուխ կոտրել այդպիսի գատա՜րկ բանների համար։ Ես մոռացել եմ գործի վերաբերող նամակներ գրելը։ Ա՜յ, արդեն ժամը երեքն է գալիս։

— Զախա՜ր, ա՜ռ քեզ, ա՜յ։

Նա պատռեց, չորս կտոր արեց նամակը և նետեց հատակին։

— Տեսա՞ր,— հարցրեց նա։

— Տեսա,— պատասխանեց Զախարը՝ հավաքելով թղթի կտորները։

— Ուրեմն էլ օձիքս չբռնես բնակարանի հարցով։ Իսկ այդ ի՞նչ է ձեռքիդ։

— Հաշիվներ են։

— Ախ, տե՜ր աստված։ Դու ինձ բոլորովին հալից կգցես։ Դե՜, որքան է, շո՜ւտ ասա։

— Ա՜յ, մսագործին 86 ռ. 54 կ.։

Իլյա Իլյիչը ձեռքերն իրար խփեց։

— Գժվե՜լ ես, ինչ է։ Միմիայն մսագործին այդքան շատ կլի՞ի։

— Երեք ամիս է, չեք վճարել, իհարկե, շա՜տ կլինի։ Ա՜յ, այստեղ գրված է, հո չե՜ն գողացել։

— Դե ինչպե՞ս թունոտ չես,— ասաց Օբլոմովը։— Մի միլիոնի՜ տավարի մի՜ս ես գնել։ Ինչի՞ է պետք քեզ այդ։ Գոնե մի բանի ծառայեր։

— Ե՜ս չեմ կերել,— կոպիտ պատասխանեց Զախարը։

— Ո՞չ, Ձե՞ս կերել։

— Ի՞նչ եք կերածս հացը երեսովս տալիս։ Այ, տեսեք։

Եվ նրա առաջ դրեց հաշիվները։

— Է՞լ ում,— ասում էր Իլյա Իլյիչը՝ սրտնեղությամբ դեն հրելով յուղոտված տետրակները։

— Էլի 121 ռ. 18 կ. հացագործին ու կանաչավաճառին։

— Սա սնանկացում է։ Սա ոչ մի բանի նման չէ,— ասում էր Օբլոմովը համբերությունը սպառած։— Ինչ է, կո՞վ ես, ինչ է, որ այդքան կանաչի ուտես...

— Ոչ։ Ես թունոտ մարդ եմ,— դառնորեն նկատեց Զախարը՝ շրջվելով բարինից։— Եթե Միխեյ Անդրեևիչին ներս չթողնեիք, ծախսն ավելի քիչ կլիներ,— ավելացրեց նա։

— Լավ, այդ բոլորն ինչքան կլինի, հաշվիր,— ասաց Իլյա Իլյիչը և ինքն սկսեց հաշվել։

Զախարը նույն հաշիվն անում էր մատներով։

— Սատանան գիտե, թե ինչ անմիտ բան է դուրս գալիս. ամեն անգամ տարբեր,— ասաց Օբլոմովը։— Դե՛հ, քեզ մոտ որքա՞ն դուրս եկավ։ Երկու հարյո՞ւր է, ինչ է։

— Մի քիչ համբերեք, ժամանակ տվեք,— ասում էր Զախարը աչքերը կկոցելով և քրթմնջալով։— Ութ տասնյակ և տասը տասնյակ՝ տասնութ տասնյակ, երկու տասնյակ էլ...

— Էհ, դու այդ երբեք չես վերջացնի,— ասաց Իլյա Իլյիչը։— Գնա քո սենյակը, իսկ հաշիվները վաղը տուր ինձ, մեկ էլ՝ հոգ տար թղթի ու թանաքի մասին... Այդքան շատ փող-Ասել եմ, որ քիչ-քիչ վճարես. չէ, բոլորը միանգամից... ժողովուրդ է։

— Երկու հարյուր հինգ ռուբլի յոթանասուներկու կոպեկ։ — ասաց Զախարը՝ հաշիվը վերջացնելով։— Հաճեցեք փողը տալ։

— Ոնց չէ, իսկո՛ւյն։ Մի քիչ սպասիր. վաղը կստուգեմ...

— Ձեր կամքն է, Իլյա Իլյիչ, նրանք խնդրում են...

— Դե, դե, ձեռ քաշիր։ Ասացի, վաղը, ուրեմն վաղն էլ կստանաս։ Գնա քո սենյակը, իսկ ես կզբաղվեմ. ես ավելի կարևոր հոգս ունեմ։

Իլյա Իլյիչը նստեց աթոռի վրա, ոտքերը տակը քաշեց գեռ չէր ընկել մտածմունքի մեջ, երբ զանգի ձայն լսվեց։

Ներս մտավ մի կարճահասակ մարդ, չափավոր փորով,

սպիտակ դեմքով, կարմիր այտերով և ճաղատ գլխով, որը ծոծրակի կողմից ծոպերի նման շրջապատում էին սև խիտ մազերը։ Ճաղատ գլուխը կլոր էր, մաքուր և այնպես էր պսպղում, կարծես փղոսկրից լիներ հղկած։ Հյուրի դեմքը աչքի էր ընկնում հոգատար-ուշադիր արտահայտությամբ դեպի այն ամենը, ինչին նայում էր. զսպված հայացքով, չափավոր ժպիտով և համեստ-պաշտոնական վայելչությամբ։

Նա հագել էր արձակ ֆրակ, որը մի դիպչելուց դարպասի նման բացվում էր լայն ու հարմար։ Նրա սպիտակեղենը ուղղակի փայլում էր ճերմակությունից. կարծես ճաղատ գլխին հարմարվելով։ Աջ ձեռքի ցուցամատի վրա կար մի մեծ զանգվածեղ մատանի՝ մուգ գույնի քարով։

— Բժի՜շկ։ Ո՞ր քամին է ձեզ բերել,— բացականչեց Օբլոմովը, մի ձեռքը մեկնելով հյուրին, իսկ մյուսով աթոռը մոտեցնելով։

— Կարոտել եմ, դուք միշտ առողջ եք, չեք կանչում, ինքս եկա,— ասաց բժիշկը կատակով։— Ո՛չ,— ավելացրեց նա հետո լրջորեն,— ես վերևն էի, ձեր հարևանի մոտ, և եկա այցելելու ձեզ։

— Շնորհակալ եմ։ Իսկ հարևանս ինչպե՞ս է։

— Ինչպե՞ս. երեք-չորս շաբաթ, դուցեև մինչև աշունը քաշի, իսկ հետո... ջրգողություն կրծքում. վերջը պարզ է։ Է՜հ, դո՞ւք ինչպես եք։

Օբլոմովը տխուր թափահարեց գլուխը։

— Վատ եմ, բժիշկ։ Ես ինքս էլ մտածում էի խորհրդակցել ձեզ հետ։ Չգիտեմ ինչ անեմ։ Ստամոքսս համարյա չի մարսում, սրտագրգռիս տակ ծանրություն եմ զգում, այրոցը հոգիս հանել է, շնչառությունս ծանր է...— ասում էր Օբլոմովը խղճալի դեմքով։

— Տվեք ձեր ձեռքը,— ասաց բժիշկը, բռնեց զարկերակը և մի բոպեով փակեց աչքերը։— Իսկ հազո՞ւմ եք,— հարցրեց նա։

— Գիշերները, մանավանդ երբ ընթրում եմ։

— Հը՜մ։ Սրտի խփոց ունենո՞ւմ եք։ Գլուխը ցավո՞ւմ է։

Եվ բժիշկն էլի մի քանի նման հարցեր տվեց, հետո խոնարհեց իր ճաղատ գլուխն ու խոր մտածմունքի մեջ ընկավ։

Երկու բոպեից հանկարծ բարձրացրեց գլուխը և վճռական ձայնով ասաց.

— Եթե դուք էլի մի երկու-երեք տարի ապրեք այս կլիմայում և շարունակ պառկած մնաք, ուտեք ճարպոտ և ծանր բաներ, կաթվածից կմեռնեք։

Օբլոմովը ցնցվեց։

— Ի՞նչ անեմ։ Սովորեցրեք, ի՞նչ աստծու,— հարցրեց նա։

— Այն, ինչ անում են նաև ուրիշները. գնացեք արտասահման։

— Արտասահմա՞ն,— զարմանքով կրկնեց Օբլոմովը։

— Այո, ի՞նչ կա որ։

— Ի՞նչ եք ասում, բժիշկ, արտասահմա՞ն։ Ինչպե՞ս կարելի է։

— Իսկ ինչո՞ւ չի կարելի։

Օբլոմովը լուռ զննեց ինքն իրեն, հետո իր առանձնասենյակը և մեքենայորեն կրկնեց.

— Արտասահմա՞ն։

— Ի՞նչն է ձեզ խանգարում։

— Ինչպե՞ս թե ինչը։ Ամեն ինչ...

— Ի՞նչ ամեն ինչ։ Փող չունե՞ք, ինչ է։

— Այո, այո, հենց փողն է, որ իսկապես չունեմ,— աշխույժ վրա բերեց Օբլոմովը, ուրախացած այդ ամենաբնական արգելքի համար, որի ետև նա կարող էր ամբողջությամբ պահ մտնել։— Այ, նայեք, թե ինչ է գրում ինձ ստարոստան... Որտե՞ղ է նամակը. ո՞ւր եմ դրել այն։ Զախա՞ր։

— Լավ, լավ,— ասաց բժիշկը,— գա իմ գործը չէ. իմ պարտքն է ասել ձեզ, որ դուք պետք է փոխեք ձեր ապրելու եղանակը, տեղը, օդը, զբաղմունքը, ամեն, ամեն ինչ։

— Լավ, կմտածեմ,— ասաց Օբլոմովը։— Բայց ո՞ւր գնամ և ի՞նչ անեմ,— հարցրեց նա։

— Գնացեք Քիսինգեն կամ Էմս,— սկսեց բժիշկը,— այնտեղ կանցկացնեք հունիսն ու հուլիսը. շուր խմեք. հետո ուղևորվեք Շվեյցարիա կամ Տիրոլ՝ խաղողով բուժվելու համար։ Այնտեղ կանցկացնեք սեպտեմբերն ու հոկտեմբերը...

— Ցատանան գիտե, թե ինչ, Տիրո՞լ,— հազիվ լսելի ձայնով շշնջաց Իլյա Իլյիչը։

— Հետո որևէ մի շոր վայր, թեկուզ Եգիպտոս...

«Այ թե ո՞ւր»,— մտածեց Օբլոմովը։

— Հեռացրեք ձեզնից հոգսերն ու դառնությունները...

— Ձեզ համար հեշտ է այդպես խոսել,— նկատեց Օբլոմովը,— դուք ստարոստայից այդպիսի նամակներ չեք ստանում...

— Հարկավոր է խուսափել նաև մտածմունքներից,— շարունակում էր բժիշկը։

— Մտածմունքնե՞ր։

— Այո, մտավոր լարվածությունից։

— Իսկ կալվածքի կարգավորման պլա՞նը։ Ի՞նչ եք ասում, մի՞թե ես բարդու քոթուկ եմ...

— Դե, ինչպես կամենաք։ Իմ գործն է միայն նախազգուշացնել ձեզ։ Մոլորություններից նույնպես պետք է հեռու մնալ. դրանք վնասում են բուժմանը։ Պետք է աշխատել զբաղվել ձիավարությամբ, պարերով, չափավոր շարժումներով մաքուր օդում, հաճելի զրույցներով, մանավանդ կանանց հետ, որպեսզի սիրտը բաբախի թեթևակի և միմիայն՝ հաճելի զգացումներից։

Օբլոմովը լսում էր նրան՝ գլուխը կախ գցած։

— Հետո՞,— հարցրեց նա։

— Հետո՝ աստված հեռու պահի ձեզ կարգալուց, գրելուց։ Մի վիպակ վարձեք, լուսամուտները դեպի հարավ, ծաղիկ՝ որքան կարելի է շատ, որ ձեր շուրջ լինեն երաժշտություն ու կանայք...

— Իսկ ինչպիսի՞ սնունդ է պետք։

— Մսից և առհասարակ կենդանական սննդից խուսափեք, խմորեղենից և պաղ կերակուրներից նույնպես։ Կարող եք ուտել թեթև արդանյակ, կանաչի. միայն զգույշ կացեք. հիմա ամեն տեղ խոլերա կա, հարկավոր է ավելի զգույշ... Մանդալ կարող եք օրական ութ ժամ։ Հրացան ձեռք բերեք...

— Տեր աստված...— տնքաց Օբլոմովը։

— Վերջապես,— եզրափակեց բժիշկը,— ձմռան մոտերքը գնացեք Փարիզ և այնտեղ, կյանքի մրրիկում, զվարճացեք-զբաղվեք, մտորմունքը մի կողմ դրեք. թատրոնից պարահանդես, դիմակահանդես, քաղաքից դուրս այցելություններ, այնպես որ ձեր շուրջ լինեն բարեկամներ, աղմուկ, ծիծաղ...

— Էլ ուրիշ բան հարկավոր չէ՞ արդյոք,— հարցրեց Օբլոմովը համարյա սրտնեղությամբ։

Բժիշկը մտածմունքի մեջ ընկավ...

— Դուցե օգտվեք ծովային օդից. Անգլիայում շոգենավ նստեք ու սլացեք մինչև Ամերիկա...

Նա վեր կացավ և սկսեց հրաժեշտ տալ։

— Եթե դուք այս բոլորն իսկությամբ կատարեք...— ասում էր նա...

— Լա՛վ, լա՛վ, անպայման կկատարեմ,— կծու պատասխանեց Օբլոմովը, ճանապարհ դնելով նրան։

Բժիշկը գնաց, Օբլոմովին թողնելով ամենաողորմելի վիճակի մեջ։ Նա փակեց աչքերը, երկու ձեռքն էլ դրեց գլխին, կուչ եկավ աթոռի վրա և այդպես նստեց՝ ոչ մի տեղ չնայելով, ոչինչ չզգալով։

Նրա ետևից լսվեց մի վեհերոտ կանչ։

— Իլյա՛ Իլյիչ։

— Հը՞,— արձագանքեց նա։

— Բա ի՞նչ ասեմ կառավարչին։

— Ինչի՞ մասին։

— Ա՛յ, տնից տեղափոխվելու մասին։

— Դու դարձյալ դրա մասի՞ն ես խոսում,— զարմանքով հարցրեց Օբլոմովը։

— Լա՛վ, ախր ես ո՞նց անեմ, պարոն Իլյա Իլյիչ։ Ինքներդ դատեք. առանց այն էլ կյանքս դառն է, մի ոտս գերեզմանում է...

— Ո՛չ, դու, ինչպես երևում է, քո տեղափոխվելով ուզում ես ինձ գերեզման տանել,— ասաց Օբլոմովը։— Լսի՛ր մի, թե ի՞նչ է ասում բժիշկը։

Զախարը չիմացավ ինչ ասի, միայն այնպես հառաչեց, որ վզի թաշկինակի ծայրերը դողդողացին կրծքի վրա։

— Դու որոշել ես սպանե՞լ ինձ, ինչ է,— նորից հարցրեց Օբլոմովը։— գլուխդ տարել եմ, հա՞։ Դե ասա, է՞։

— Տե՛ր ձեզ հետ։ Ապրեք՝ ինչքան կուզեք։ Ո՞վ է ձեզ վատ բան ցանկանում,— քրթմնջում էր Զախարը, շփոթված այն ողբերգական եղանակից, որ սկսում էր ընդունել խոսակցությունը։

— Դո՛ւ,— ասաց Իլյա Իլյիչը։— Ես քեզ արգելեցի ծպտուն հանել տեղափոխության մասին, իսկ դու, օր չի անցնի, որ հինգ անգամ չհիշեցնես ինձ. չէ՞ որ դա փչացնում է իմ տրամադրությունը, հասկացի՛ր։ Առանց այն էլ առողջությունս բանի պետք չէ։

— Ես կարծում էի, տեր իմ, որ... ինչի՞ համար չտեղափոխվենք,— հոգեկան տագնապից դողացող ձայնով ասաց Զախարը։

— Ինչի համար չտեղափոխվե՞նք։ Դու այնքան հե՞շտ ես դատում դրա մասին,— ասաց Օբլոմովը՝ բազկաթոռի հետ մեկտեղ շրջվելով դեպի Զախարը։— Դու լավ հասկացե՞լ ես, թե ինչ է նշանակում տեղափոխվել, հա՞։ Անշուշտ, չես հասկացել։

— Ձե՞մ էլ հասկացել,— հեզությամբ պատասխանեց Զախարը, որը պատրաստ էր ամեն բանում համաձայնել բարինին, միայն թե բանը հուզիչ տեսարանների չհասնի, մի բան, որ նրա համար դառն բողկից էլ վատ էր։

— Չես հասկացել, ուրեմն լսիր և դատի՛ր, կարելի՞ է, արդյոք, տեղափոխվել, թե ոչ։ Ի՞նչ է նշանակում տեղափոխվել։ Դա նշանակում է՝ բարինն առավոտից ամբողջ օրը հագնված ման գա դրսում...

— Ի՞նչ կա որ, թեկուզև գնա,— նկատեց Զախարը։— Ինչի՞ համար ամբողջ օրով չբացակայել։ Չէ՞ որ առողջությանը վնաս է տանը նստելը։ Այ տեսեք ինչ վատ է դարձել ձեր տեսքը։ Առաջ դուք վարունգի պես էիք, իսկ այժմ, որ տանն եք նստում, աստված գիտի, թե ինչի եք նման։ Անց կկենաք փողոցներով, կնայեք ժողովրդին կամ մի՝ այլ բանի...

— Բավական է դատարկ-մատարկ դուրս տաս, ավելի լավ է՝ լսիր,— ասաց Օբլոմովը։— Ման գալ փողոցներո՞ւմ։

— Այո՛, ճիշտ եմ ասում,— շարունակում էր Զախարը մեծ ոգևորությամբ։— Այ, ասում են թե ինչ-որ չլսված-չտեսնված հրեշ են բերել, կնայեիք։ Թատրոն կամ դիմակահանդես կգնայիք, մենք էլ առանց ձեզ կտեղափոխվեինք։

— Դատարկ բաներ մի՛ խոսի։ Կարծես մտածում ես բարինի հանգստության մասին։ Ասում ես, թափառեմ ամբողջ օրը. քո հոգը չէ, թե ես ո՞վ գիտե որտեղ կճաշեմ և ճաշից հետո չեմ պառկի հանգստանալու... Առանց ինձ նրանք կտե-

զափոխե՞ն Զհսկես, նրանք կտեղափոխեն՝ կտորտա՞նք։ Ես գիտեմ,— անոգ համոզվածությամբ ասում էր Օբլոմովը,— թե ի՞նչ է նշանակում տեղափոխություն։ Դա նշանակում է ջարդոց, աղմուկ. բոլոր իրերը կկիտեն հատակին, այստեղ են և ճամպրուկը, և բազմոցի մեջքը, և նկարները և շիբուխները, և գրքերը, և ինչ-որ սրվակներ, որոնք ուրիշ ժամանակ չեն էլ երևա, իսկ հիմա սատանան գիտե թե որտեղից՝ կհայտնվեն։ Հետևիր ամեն բանի, որ չկորցնեն ու չկոտրատեն... Կեսն այնտեղ է, մյուս կեսը՝ սալի վրա կամ նոր բնակարանում. կուզենաս ծխել, կվերցնես ծխամոռը, իսկ ծխախոտն արդեն գնացել է... Կուզես նստել, բայց բան չկա, որ վրան նստես. ինչի էլ ձեռք տաս՝ կկեղտոտվես. ամեն ինչ փոշոտ է, լվացվել չես կարող, գե՞ տրի մնա այնպիսի ձեռքերով, ինչպես քանն են...

— Իմ ձեռքերը մաքուր են,— նկատեց Զախարը, ձեռքերի փոխարեն ինչ-որ նեբբաններ ցույց տալով։

— Դե, գոնե մի՛ ցույց տուր,— ասաց Իլյա Իլյիչը՝ երեսը շուռ տալով։— Եվ եթե ուզենաս ջուր խմել,— շարունակում էր Օբլոմովը,— ջրամանը վերցնես, բաժակ չի լինի...

— Կարելի է ջրամանից էլ խմել,— բարեհոգությամբ ավելացրեց Զախարը։

— Ա՛յ, ձեզ համար միշտ այդպես է. կարելի է և շավել, և փոշին չմաքրել, և գորգերը թափ չտալ։ Իսկ նոր բնակարանում,— շարունակում էր Իլյա Իլյիչը, ինքն էլ հրապուրվելով տեղափոխության այն աշխույժ պատկերով, որ կանգնել էր նրա առաջ,— երեք օրից էլ չեն իմանա, թե ինչը որտեղ պիտի լինի, ոչ մի բան իր տեղում չի. նկարները պատերի տակ, հատակի վրա, կրկնակոշիկներն անկողնի վրա, ճրագավոր կոշիկները թեյի ու պոմադի հետ միևնույն կապոցում։ Մեկ տեսար՝ բազկաթոռի ոտքն է կոտրված, կամ նկարի ապակին է ջարդված, կամ բազմոցն է կեղտոտված։ Ինչ էլ ուզես՝ չկա, ոչ ոք չգիտե, թե ուր է. կամ կորցրել են, կամ մոռացել են Հին բնակարանում. վազի՞ր այնտեղ...

— Պատահում է, որ երբեմն տասն անգամ դեսուդեն ես վազում,— ընդհատեց Զախարը։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես,— շարունակում էր Օբլոմովը։— Ջեր ես կենում առավոտյան նոր բնակարանում. ի՞նչ ձանձրույթ։ Ոչ ջուր կա, ոչ ածուխ, իսկ ձմռանը ցրտի մեջ նստած կմնաս, սենյակները կսառչեն, իսկ փայտ չկա. գե՞ վազիր, փո՞խ առ...

— Էն էլ տեսնենք՝ ասուված ինչպիսի հարեաներ կտա,— գարձյալ նկատեց Զախարը։— Այնպիսիները կան, որոնցից ոչ թե մի կապուկ փայտ, մի ման ջուր էլ չես կարող ստանալ։

— Բա որ ասո՞ւմ եմ,— ասաց Իլյա Իլյիչը։— Տեղափոխվեցիր, երեկոյան կարծես հոգսերից պրծար. ոչ, դեռ երիտ ջարաթի չափ էլ քարշ պիտի գան։ Թվում է, թե ամեն ինչ գաստավորված է... մեկ էլ տեսար՝ մի բան մնաց. վարագույրները կախ տալ, նկարները խփել, հոգիդ դուրս է գալիս, ապրել չես ուզում այլևս... Իսկ ծախսերը, ծախսերը...

— Էն անգամ, ութ տարի առաջ, երկու հարյուր ռուբլի նստեց, էսօրվա պես միտս է,— հաստատեց Զախարը։

— Դե ասա՛, հանե՛ք բան է,— ասում էր Իլյա Իլյիչը։— Իսկ ինչ անսովոր բան է սկզբում նոր բնակարանում ապրելը։ Շո՞ւտ կընտելանաս։ Ես առնվազն հինգ գիշեր չեմ քնի նոր տեղում. անձկությունը կկրծոտի ինձ, երբ վեր կենամ ու տեսնեմ ահա այն խառատի ցուցանակի փոխարեն մի ուրիշ բան դիմացս, կամ այ, եթե ճաշից առաջ լուսամուտից դուրս ընդայի այն մազերը խուզած պառավը, իսկույն կսկսեմ ձանձրանալ... Հիմա ինքդ էլ տեսնո՞ւմ ես, թե ուր հասցրիր բարինիդ, հը՞,— կշտամբանքով հարցրեց Իլյա Իլյիչը։

— Տեսնում եմ,— հեզորեն շշնջաց Զախարը։

— Ինչո՞ւ էիր ինձ առաջարկում տեղափոխվել։ Մարդկային ուժը կպատի՞ այս բոլորին դիմանալու։

— Ես մտածում էի, թե ուրիշներն, այ, մեզանից վատ չեն, բայց տեղափոխվում են, ուրեմն մեզ էլ կարելի է...— ասաց Զախարը։

— Ի՞նչ, ի՞նչ,— հանկարծ զարմանքով հարցրեց Իլյա Իլյիչը, կիսով չափ վեր բարձրանալով բազկաթոռից։— Ինչ ասացի՞ր։

Զախարը հանկարծ շփոթվեց, չիմանալով, թե նա ինչով առիթ տվեց բարինին զգայացունց բացականչություն ու շարժում անելու։ Նա լուռ էր։

— Ուրիշները մեզնից վատ չե՞ն,— սարսափով կրկնեց

Իլյա Իլյիչը։— Ահա թե բանն ո՞ւր հասցրեց։ Այնուհետև կիմանամ, որ ես քեզ համար նույնն եմ, ինչ «ուրի՛շը»։

Օբլոմովը հեգնորեն գլուխ տվեց Զախարին և վերին աստիճանի վիրավորված կերպարանք ընդունեց։

— Ներեցեք, Իլյա՛ Իլյիչ, մի՞թե ես հավասար եմ դասում ձեզ որևէ մեկին...

— Հեռո՛ւ աչքիցս,— հրամայական եղանակով ասաց Օբլոմովը, ձեռքով ցույց տալով դուռը։— Ես չեմ կարող քեզ տեսնել։ Ա՛, «ուրիշնե՞րը»։ Լա՛վ։

Զախարը խոր հառաչելով գնաց իր սենյակը։

— Էս ի՞նչ կյանք է իմ կյանքը,— փնթփնթաց նա՝ նստելով պառկելատեղի վրա։

— Աստվա՞ծ իմ,— տնքում էր նաև Օբլոմովը։— Ահա՛ ուզում էի առավոտը նվիրել գործարար աշխատանքի, իսկ տրամադրությունս ամբո՞ղջ օրով փչացրին։ Եվ ո՞վ, սեփական ծառաս, անձնվեր, փորձված ծառաս, և ի՞նչ ասաց։ Եվ ինչպե՞ս կարողացավ նա ասել այդ։

Օբլոմովը երկար ժամանակ չէր կարողանում հանգստանալ, նա պառկում էր, վեր էր կենում, ման էր գալիս սենյակում և նորից էր պառկում։ Նա Զախարի կողմից իրեն «ուրիշների» աստիճանին իջեցնելը համարում էր իր այն իրավունքների խախտում, որոնց համաձայն Զախարը բարինի անձը պետք է բացառիկորեն վեր դասեր ամենքից ու յուրաքանչյուրից։

Նա խորամուխ էր լինում այդ համեմատության խորքերը և վերլուծում, թե ինչ են ուրիշները և ինչ է նա ինքը, որ աստիճանի հնարավոր և արդարացի է այդ զուգահեռը և որքան ծանր է այն վիրավորանքը, որ Զախարը հասցրել է նրան. վերջապես, Զախարն արդյոք գիտակցաբա՞ր վիրավորեց նրան, այսինքն՝ նա արդյոք համոզվա՞ծ էր, թե Իլյա Իլյիչը նույնն է, ինչ որ «մի ուրիշը», թե՞ դա նրա բերանից հենց այնպես դուրս թռավ, առանց գլխի մասնակցության։ Այս ամենը դիպել էր Օբլոմովի ինքնասիրությանը, և նա վճռեց ցույց տալ Զախարին տարբերությունն իր և այն մարդկանց միջև, որոնց հասկանում էր Զախարը «ուրիշներ» ասելով, և նրան զգալ տալ իր վարմունքի ամբողջ գարշելիությունը։

— Զախա՞ր,— երկարաձիգ ու հանդիսավոր ձայն տվեց նա։

Լսելով այս կանչը՝ Զախարն, ըստ սովորության, պառկելատեղից ցած թռչելով՝ ոտքերով թխկացնելով, չքրթմնջաց. նա դանդաղ իջավ վառարանից և գնաց՝ թե՛ ձեռքերով և թե՛ կողերով դիպչելով ամեն բանի, հանդարտ, դժկամորեն, ինչպես այն շունը, որը տիրոջ ձայնից զգում է, որ նրա ստահակությունը բացվել է և նրան կանչում են դատաստան անելու։

Զախարը կիսով չափ բաց արեց դուռը, բայց սիրտ չէր անում ներս մտնելու։

— Նե՛րս մտիր,— ասաց Իլյա Իլյիչը։

Թեև դուռը բացվում էր ազատորեն, բայց Զախարն այնպես էր բաց անում, կարծես թե չէր կարելի մտնել, և այդ պատճառով էլ մնաց դռան արանքում, բայց ներս չմտավ։

Օբլոմովը նստած էր անկողնի եզրին։

— Այստե՛ղ արի,— համառորեն ասաց նա։

Զախարը դժվարությամբ ազատվեց դռնից, բայց իսկույն-ևթ ծածկեց այն իր ետևից և մեջքն ամուր դեմ արեց դռանը։

— Այստե՛ղ,— ասում էր Իլյա Իլյիչը, մատով տեղ ցույց տալով իր կողքին։

Զախարը կես քայլ արեց և մատնանշված տեղից երկու ոտժեն հեռու կանգնեց։

— Էլի՞,— ասում էր Օբլոմովը։

Զախարն այնպես ձևացրեց, իբր քայլ արավ, իսկ ինքը միայն տարուբերվեց, ոտքը թխկացրեց և մնաց տեղում կանգնած։

Իլյա Իլյիչը՝ տեսնելով, որ իրեն այս անգամ ոչ մի կերպ չի հաջողվում Զախարին ավելի մոտ քաշել, թողեց նրան այնտեղ, որտեղ կանգնած էր, և միաժամանակ նրան էր նայում լուռ, կշտամբանքով։

Զախարը, զգալով իր անձն այդպես անձայն դիտելու անհարմարությունը, ձևացրեց, թե չի նկատում բարինին, և ավելի քան երբևիցե, իր կողքն էր արել նրան, ու այդ րոպեին մինչև անգամ իր միակողմանի հայացքը չէր գցում Իլյա Իլյիչի վրա։

Նա սկսեց համառորեն նայել դեպի ձախ, մյուս կողմը. այնտեղ տեսավ իրեն վաղուց ծանոթ առարկան. սարդոստայ-

նի ծոպերը նկարների մոտ, և սարդոստայնը՝ իբրև մի կենդանի կշտամբանք իր անփութության համար։

— Զախա՞ր,— հանդարտ և արժանապատվությամբ արտասանեց Իլյա Իլյիչը։

Զախարը չէր պատասխանում. նա կարծես, մտածում էր. «Դե, ի՞նչ ես ուզում։ Ուրիշ Զախա՞ր ես ուզում, ինչ է։ Չէ՞ որ ես այստեղ կանգնած եմ», և առանց բարինին նայելու, հայացքը ծախից աջ տարավ. այնտեղ նրան իր մասին էր հիշեցնում հայելին, որ ծածկված էր մարմարի պես թանձր փոշով. նրա միջից վայրենաբար, աչքի տակով, ասես մառախուղի միջից իրեն էր նայում հենց իր սեփական մռայլ ու տգեղ դեմքը։

Նա տհաճությամբ հայացքը դարձրեց այդ տխուր, իրեն չափազանց ծանոթ առարկայից և սիրտ արեց մի բոպե հայացքն ուղղել Իլյա Իլյիչի վրա։ Նրանց հայացքները հանդիպեցին իրար։

Զախարը չդիմացավ բարինի աչքերում գրված կշտամբանքին և իր հայացքը գցեց ցած, ոտքերի տակ. այստեղ նա դարձյալ փոշու և բծերի մեջ կորած գորգի մեջ կարդաց դեպի տերունական ծառայությունն ունեցած իր նուռնդի տխուր վկայականը։

— Զախա՞ր,— կրկնեց Իլյա Իլյիչը զգացված։

— Ի՞նչ եք ցանկանում,— հազիվ լսելի ձայնով շշնջաց Զախարը և անհանգիստ դեռպով ցնցվեց՝ նախազգալով պաթետիկ խոստակցությունը։

— Կվաս տուր ինձ,— ասաց Իլյա Իլյիչը։

Զախարի սիրտը թնթնացավ, նա, ուրախությունից, երեխայի պես արագ վազեց դեպի բուֆետը և բերեց կվասը։

— Հը, ինչպե՞ս է դրությունդ,— հեզաբար հարցրեց Իլյա Իլյիչը, խմելով բաժակից և այն ձեռքում պահելով։— Լավ չէ, հը՞։

Զախարի դեմքի վայրենի արտահայտությունը մի ակնթարթում մեղմացավ նրա գիմագծերում փայլող զղջման ճառագայթից։ Զախարն զգաց կրծքում արթնացող և սրտին մոտեցող բարինի նկատմամբ ունեցած ակնածալից զգացմունքի առաջին նշանները, և հանկարծ սկսեց ուղիղ նրա աչքերի մեջ նայել։

— Զգո՞ւմ ես արդյոք քո հանցանքը,— հարցրեց Իլյա Իլյիչը։

«Այդ ի՞նչ «հանցանք» է որ,— մտածում էր Զախարը դառնությամբ։ «Ինչ-որ խղճալի բան է. ախր, ակամա լաց ես լինում, երբ նա սկսում է այդ ձևով գաղել»։

— Ի՞նչ կա որ, Իլյա՛ Իլյիչ,— սկսեց Զախարն իր դիապազոնի ամենացածր նոտայից,— ես ոչինչ չասացի, բացի այն, որ, ա՛յ...

— Ո՛չ, սպասի՛ր,— ընդհատեց Օբլոմովը։— Դու հասկանո՞ւմ ես, արդյոք, թե ինչ արիր։ Ա՛հ, բաժակը դիր սեղանին և պատասխանի՛ր։

Զախարը ոչինչ չէր պատասխանում և բացարձակապես չէր հասկանում, թե ի՞նչ է արել, բայց դա չէր խանգարում նրան ակնածությամբ նայելու բարինի վրա. նա նույնիսկ մի քիչ գլուխը կախեց՝ գիտակցելով իր մեղքը։

— Էլ ինչպե՞ս թե թունոտ մարդ չես,— ասում էր Օբլոմովը։

Զախարը շարունակում էր լուռ մնալ, միայն մի եզ՝ անգամ աչքերն ուժգին թարթեց։

— Դու վշտացրի՞ր բարինիդ,— հատ-հատ արտասանեց Իլյա Իլյիչը և սևեռակի նայեց Զախարին՝ հրճվելով [illegible] չփոթմունքից։

Զախարը չգիտեր, թե ուր կորչեր ամենությունից։

— Չէ՞ որ վշտացրիր,— հարցրեց Իլյա Իլյիչը։

— Վշտացրի՛,— շշնջում էր Զախարը՝ իրեն բոլորովին կորցրած այդ նոր խղճալի խոսքից։

Նա հայացք էր նետում դեպի աջ, դեպի ձախ և ուղիղ, որևէ բանի մեջ փրկություն որոնելով. դարձյալ աչքերի առաջ առկայծեցին և՛ սարդոստայնը, և՛ փոշին, և՝ սեփական արտացոլումը, և՛ բարինի դեմքը։

«Գոնե գետինն անցնեի՛։ Ա՛խ, ինչո՞ւ մահը չի տանում ինձ,— մտածեց նա, տեսնելով, որ ինչպես էլ շուռ գա, պաթետիկ տեսարանից չի ազատվելու։ Եվ նա զգում էր, որ ավելի ու ավելի հաճախ է թարթում աչքերը, ու մեկ էլ տեսար, արտասուքները կթափվեն։

Վերջապես նա պատասխանեց բարինին հոյանի երգով, միայն արձակ։

— Ինչո՞վ վշտացրի ձեզ, Իլյա Իլյիչ,— համարյա լաց լինելով ասաց նա։

— Ինչո՞վ,— կրկնեց Օբլոմովը։— Դու մտածե՞լ ես, թե ի՞նչ բան է ուրիշը։

Նա կանգ առավ՝ շարունակելով նայել Զախարին։

— Ասեմ քեզ, թե ինչ բան է դա։

Զախարը շուռ եկավ, ինչպես արջը որջի մեջ, և հառաչեց ամբողջ սենյակով մեկ։

— Ուրիշը, որի մասին դու խոսում ես,— նզովված բոկոտնի մեկն է, կոպիտ, անկիրթ մարդ, ապրում է կեղտոտ, աղքատ, ձեղնահարկում. նա նույնիսկ քունն առնում է թաղիքի վրա որևէ տեղ բակում։ Այդպիսի մարդուն ի՞նչ կլինի։ Ոչինչ։ Նա խժռում է կարտոֆիլ ու սելյոդկա։ Կարիքը նրան մի անկյունից մյուսն է նետում, նա էլ վազվզում է օրնիբուն։ Նա, թերևս, նոր բնակարան էլ կտեղափոխվի։ Այ, կյագաևը, քանոնը կանատակը կդնի, երկու շապիկ կապոց կանի ու կգնա... «Այդ ո՞ւր ես գնում»։ «Տեղափոխվում եմ»,— ասում է։ Այ, սա է «ուրիշը»։ Իսկ ես, քո ասածով, «ուրիշ եմ», հա՞։

Զախարը նայեց բարինին, կանգնած տեղը ոտքը փոխեց և լուռ էր։

— Ինչ է ուրիշը,— շարունակեց Օբլոմովը։— Ուրիշն այնպիսի մի մարդ է, որն ինքն է իր կոշիկները սրբում, ինքն է հագնվում, թեև երբեմն իրեն բարին է ցույց տալիս, բայց ստում է, նա մինչև անգամ չգիտե, թե ինչ բան է սպասավորը. մարդ չունի, որ տեղ ուղարկի. ինքը կվազի այն բանի ետևից, ինչ իրեն հարկավոր է. վառարանի փայտերն էլ ինքը կխառնի, երբեմն էլ փոշին կսրբի...

— Գերմանացիների մեջ այդպիսիները շատ կան,— մռայլ կերպով ասաց Զախարը։

— Հենց այդ է։ Իսկ ե՞ս։ Ի՞նչ ես կարծում, ես «ուրի՞շ» եմ։

— Դուք բոլորովին ուրիշ եք,— աղիողորմ ձայնով ասաց Զախարը, որ դեռ չէր հասկանում, թե ինչ է ուզում ասել բարինը։— Աստված գիտե, թե ինչ է անցել ձեր մտքով...

— Ես բոլորովին ուրիշ եմ, հա՞։ Սպասիր, տես, թե ինչ ես խոսում։ Դու ըմբռնիր, թե «այդ ուրիշն» ինչպես է ապրում։ «Ուրիշն» աշխատում է անդուլ. վազվզում է, իրարանցման

մեջ,— շարունակում էր Օբլոմովը,— չի աշխատի, չի էլ ուտի։ «Ուրիշը» գլուխ է խոնարհում, «ուրիշը» խնդրում է, ստորանում է... Իսկ ե՞ս։ Դե հիմա վճռի՛ր. ի՞նչ ես կարծում, ես «ուրիշ» եմ հա՞։

— Դե բավակա՞ն է, պարոն, տանջել ինձ խղճալի խոսքերով,— աղաչում էր Զախարը։— Ա՜խ, տեր-աստված։

— Ես «ուրի՞շ» եմ։ Մի՞թե ես դեսուդեն եմ ընկնում, մի՞թե ես աշխատում եմ։ Ի՞նչ եմ ուտում, ինչ է։ Նիհար եմ կամ խղճալի կերպարանքով։ Մի՞թե որևէ բան է պակասում ինձ։ Կարծեմ կա՞ն մարդիկ, որոնք մատուցանում են, գործ են անում։ Ես, փա՜ռք աստծու, քանի կամ, ոչ մի անգամ գուլպաներս ինքս չեմ քաշել ոտքերս։ Ես պետք է անհանգստանա՞մ։ Ինչո՞ւ պետք է անհանգստանամ։ Եվ ո՞ւմ եմ ասում ես այս։ Դու չե՞ս արդյոք, իմ երեխայությունից խնամել ինձ։ Դու այս բոլորը գիտես, տեսել ես, որ ես քնքշաբար եմ դաստիարակված, որ ես երբեք ո՛չ ցուրտ եմ տեսել, ո՛չ քաղց եմ կրել, կարիք չեմ իմացել, հաց չեմ վաստակել ինձ համար և առհասարակ սև գործով չեմ զբաղվել։ Այդ բոլորից հետո դու ինչպե՞ս սիրտ արիր հավասարեցնելու ինձ ուրիշների հետ։ Մի՞թե այնպիսի առողջություն ունեմ, ինչպես այդ «ուրիշները»։ Մի՞թե ես կարող եմ այդ ամենն անել և դիմանալ։

Զախարը վճռականապես կորցրել էր Օբլոմովի ասածները հասկանալու ամեն մի ընդունակություն, բայց նրա շրթունքներն ուռել էին ներքին հուզմունքից. զգայացունց տեսարանն ամպի նման որոտում էր նրա գլխի վրա։ Նա լուռ էր։

— Զախա՞ր,— կրկնեց Իլյա Իլյիչը։

— Ի՞նչ եք ցանկանում,— հազիվ լսելի ձայնով ֆշշաց Զախարը։

— Էլի կվաս տուր։

Զախարը կվասը բերեց, և երբ Իլյա Իլյիչը, խմելուց հետո, բաժակը նրան տվեց, նա ուզեց արագորեն իր սենյակը գնալ։

— Ո՛չ, ո՛չ, սպասի՛ր,— նորից սկսեց Օբլոմովը։— Ես հարցնում եմ քեզ. ինչպե՞ս կարողացար դու այդպես դառն կերպով վիրավորել բարինիդ, որին երեխա ժամանակ մանելիս ածել քո ձեռքերի վրա, որին ամբողջ կյանքդ ծառայում ես և որը բարերարություն է անում քեզ։

Զախարը չդիմացավ. բարեբարություն է անում բառերը նրա հոգին բերա՞նը բերին։ Նա սկսեց ավելի ու ավելի արագ թարթել աչքերը։ Որքան ավելի քիչ էր հասկանում, թե ի՞նչ է ասում իրեն հուզումնալից ճառի մեջ Իլյա Իլյիչը, այնքան ավելի տխրում էր նա։

— Ներողություն, Իլյա Իլյիչ,— սկսեց նա խռպոտ ձայնով և զղջալով,— ես դա հիմարությունից, ճիշտ եմ ասում, հիմարությունից...

Եվ Զախարը չհասկանալով, թե ինչ է արել, չգիտեր՝ ինչ բայ գործածի իր խոսքի վերջում։

— Իսկ ես,— շարունակեց Օբլոմովը վիրավորված և ըստ արժանվույն չգնահատված մարդու ձայնով,— դեռ օր ու գիշեր հոգում եմ, չանք եմ թափում, երբեմն գլուխս այրվում է, տիրտս մարում, գիշերները չեմ քնում, շուռումուռ եմ գալիս, շարունակ մտածում եմ՝ ինչպես անեմ, որ ավելի լավ լինի... ո՞ւմ մասին։ Ո՞ւմ համար։ Բոլորը ձեզ համար, գյուղացիներիդ համար, հետևաբար նաև քեզ համար։ Դու, դուցե, կարծում ես՝ նայելով, թե ինչպես երբեմն գլխիս եմ քաշում վերմակը, որ պառկած եմ ու կոճղի նման քնած. ո՛չ, ես քնած չեմ, այլ շարունակ խոր մտածում եմ, որ գյուղացիները ոչ մի բանի կարիք չզգան, որ չնախանձեն ուրիշներին, որ Ահեղ Դատաստանի օրը ինձնից գանգատ չանեն աստծուն, այլ աղոթեն և լավս հիշեն։ Ապերախտնե՞ր,— դառն կըշտամբանքով եզրափակեց Օբլոմովը։

Զախարը վերջնականապես հուզվեց վերջին խղճալի խոսքերից։ Նա սկսեց կամաց-կամաց հեծկլտալ։ Խռպոցն ու խզզոցն այս անգամ ձուլվեցին իրար և որևէ երաժշտական գործիքի համար անկարելի մի նոտա դարձան, դուցե միայն որևէ չինական գոնգ կամ հնդկական տամ-տամ կարողանային այդ ձայնը հանել։

— Տե՛ր իմ, Իլյա՛ Իլյիչ,— աղաչում էր նա,— Հերի՞ք է։ Տերը ձեզ հետ, այդ ինչե՞ր եք ասում դուք։ Ա՜խ դու, սուրբ մայր աստվածածի՜ն։ Այս ի՞նչ աղետ էր անապասելի, անակընկալ...

— Իսկ դու,— առանց նրան լսելու շարունակում էր Օբլոմովը,— դու պետք է ամաչեի՞ր այդպիսի բան ասել։ Ահա թե ինչպիսի՞ օգ եմ տաքացրել կրծքիս։

— Օ՜ձ,— արտասանեց Զախարը, ձեռքերն իրար խփելով, և այնպիսի լաց դրեց, կարծես մի երկու տասնյակ բզեզ լցվեցին սենյակն ու սկսեցին բզզալ։— Ե՞րբ եմ ես օձի անուն տվել,— ասում էր նա հեկեկանքների միջից։— Ես սկի երազո՞ւմս էլ չեմ տեսնում նրան, այդ զզվելիին։

Նրանք երկուսն էլ դադարել էին իրար հասկանալուց, և վերջապես, յուրաքանչյուրն իրեն էլ չէր հասկանում։

— Ախր լեզուդ ինչպե՞ս դարձավ բերանիդ մեջ,— շարունակում էր Իլյա Իլյիչը։— Իսկ ես իմ պլանում դեռ նրա համար հատուկ տուն եմ որոշել, բանջարանոց, հացահատիկ եմ բաժին հանել, ոռճի՞կ եմ նշանակել։ Դու ինձ մոռ և՛ կառավարիչ ես, և՛ ծառայապետ, գործերի հավատարմատար։ Մուժիկները քեզ խոր գլուխ են տալիս, բոլորը քեզ ասում են՝ Զախա՞ր Տրոֆիմիչ, Զախա՞ր Տրոֆիմիչ։ Իսկ նա դեռ էլի գժգոհ է, ինձ «ուրիշ» դարձրեց։ Ա՜յ քեզ հատուցում։ Փառավո՞ր պատիվ է տալիս բարինին։

Զախարը շարունակում էր հեծկլտալ, և Իլյա Իլյիչն ինքն էլ հուզված էր։ Զախարին խրատելով, նա այդ բոպեին խորապես տոգորվեց գյուղացիներին ցույց տված իր բարերարություններով, և վերջին կշտամբանքներն արտասանեց դողդողուն ձայնով, արտանուքն աչքերին։

— Դե՛հ, հիմա տեր ընդ քեզ,— ասաց նա հաշտարար տոնով Զախարին։— Բայց սպասի՞ր, էլի կվաս տո՛ւր։ Կոկորդս տոլորովին չորացել է, ինչ հասկանայիր, տեսնո՞ւմ ես՝ բարձրանք խոսոտել է։ Մինչև ո՞ւր հասցրիր։

— Հուսով եմ, որ հանցանքդ հասկացար,— ասաց Իլյա Իլյիչը, երբ Զախարը բերեց կվասը,— և այսուհետև բարինիդ չես համեմատի ուրիշների հետ։ Մեղքդ քավելու համար դու գործը մի կերպ կարգավորիր տանտիրոջ հետ, որպեսզի ես չտեղափոխվեմ։ Ահա թե ինչպես ես պահպանում բարինիդ հանգիստը. տրամադրությունս բոլորովին փչացրիր և զրկեցիր ինձ որևէ նոր, օգտակար մտքից։ Իսկ ումի՞ց խլեցիր այդ։ Հեռաց քեզնից. ձեզ եմ նվիրել ես ինձ ամբողջովին, ձե՛զ համար պաշտոնից հրաժարվեցի, նստում եմ փակված... Է՛հ, աստվա՞ծ քեզ հետ։ Ահա ժամը երե՞քն է խփում։ Մինչև ճաշ միայն երկու ժամ կա, ի՞նչ կարող ես անել երկու ժա-

մում։ Ոչինչ։ Իսկ գործերը շատ-շատ են։ Թող այդպես էլ լինի, նամակը կհետաձգեմ մինչև հետևյալ փոստը, իսկ պլանը կուրվագրեմ վաղը։ Է՜հ, իսկ հիմա մի քիչ պառկեմ. հոգիս դուրս եկավ. վարագույրները բաց թող և դռներն ամուր փակիր վրաս, որ չխանգարեն. գուցե՝ մի ժամի չափ քնեմ էլ. իսկ շորսն անց կեսին արթնացրու։

Զախարն սկսեց բարինին փակել առանձնասենյակում. սկզբում ծածկեց նրան և վերմակը խրեց տակը, հետո ցած թողեց վարագույրները, ամուր փակեց դռներն ու գնաց իր սենյակը։

— Սատկես դու, դևի մեկը,— քրթմնջում էր նա՝ սրբելով արցունքի հետքերն ու բարձրանալով պառկելատեղը։— Իսկը որ, դևի մեկն է։ Հատուկ տուն, բանջարանոց, ռոճիկ,— ասում էր Զախարը, որ միայն վերջին բառերն էր հասկացել։— Վարպետ է խղճալի խոսքեր ասելու մեջ. կարծես մարդու սիրտը դանակով կտրատեն... Ահա այստեղ է իմ տունն էլ, բանջարանոցն էլ, այստեղ էլ հոգիս կտամ,— ասում էր նա, ցասումով խփելով պառկելատեղին։— Ռոճի՜կ։ Եթե չյուրացնես տասկոպեկանոցներն ու հինգկոպեկանոցները, ծխախոտ գնելու փող էլ չես ունենա, խնամուն էլ հյուրասիրել չես կարող։ Ոչուփուշ լինես դու... Մի տեսեք է՜, չեմ էլ մեռնում։

Իլյա Իլյիչը պառկեց մեջքի վրա, բայց իսկույն չքնեց։ Նա մտածում էր, մտածում, հուզվում էր, հուզվում...

— Երկու դժբախտություն միանգամից,— ասում էր նա, մինչև գլուխը փաթաթվելով վերմակի մեջ։— Արի ու դիմացիր։

Բայց իրոք այդ երկու դժբախտությունը, այսինքն՝ ստարոստայի չարագուշակ նամակը և նոր բնակարան տեղափոխվելը, դադարել էին Օբլոմովին անհանգստացնել և արդեն անցել էին անհանգիստ հիշողությունների շարքը։

«Դեռ հեռու են այն աղետները, որոնցով սպառնում է ստարոստան», մտածում էր նա. «մինչև այն ժամանակ շատ բան կարող է փոխվել. գուցե անձրևներն օգնեն ցանքսին. գուցե ապառքները լրացնի ստարոստան. փախած մուժիկներին «իրենց բնակավայրերը կբերեն», ինչպես գրում է նա»։

Իսկ ո՞ւր են փախել բոլոր այդ մուժիկները»,— մտածում էր նա և խորասուզվեց այդ պարագայի ավելի շատ գեղարվեստական քննարկման մեջ։ «Ով գիտե գիշերն են փախել, խոնավ ժամանակ, անհաց։ Որտե՞ղ պիտի քնեն նրանք։ Մի՞թե անտառում։ Չեն կարողանում տեղները նստել։ Խրճիթում թեև վատ հոտ է գալիս, բայց, գոնե, տաք է...»

«Եվ ի՞նչ կարիք կա անհանգստանալու», մտածում էր նա։ «Շուտով պլանն էլ կհասնի. ի՞նչ կարիք կա նախապես վախենալու։ Է՜հ, ես...»

Բնակարանից փոխադրվելու հարցը նրան մի փոքր ավելի էր անհանգստացնում։ Դա ավելի թարմ, ամենավերջին դժբախտությունն էր. բայց Օբլոմովի հանգստացուցիչ հոգու մեջ այդ փաստի համար էլ արդեն պատմություն էր սկսվում։ Թեև նա մութ կերպով նախատեսում էր դժբախտության անխուսափելիությունը, մանավանդ որ այդ գործին խառնվեց Տարանտևը, բայց նա մտքով իր կյանքի այդ տագնապալից դեպքը հետաձգեց թեկուզ մի շաբաթով. և ահա մի ամբողջ շաբաթ հանգստություն է ձեռք բերված։

Գուցեև Զախարն էլ աշխատի գործն այնպես կարգի բերել, որ ամենևին կարիք չլինի փոխադրվելու, թերևս խուխուսափենք։ Վերակառուցումը կհետաձգեն մինչև եկող ամառ կամ բոլորովին մեջտեղից կհանեն. դե, մի կերպ կանեն, էլի։ Հո չի կարելի, իրոք... տեղափոխվել»...

Այսպես նա մեջընդմեջ հուզվում էր ու հանգստանում և, վերջապես, այդ թերևս, գուցե և մի կերպ հաշտեցուցիչ ու հանգստացուցիչ բառերի մեջ Օբլոմովն այս անգամ էլ գտավ, ինչպես գտնում էր միշտ, հույսերի ու մխիթարությունների մի ամբողջ տապան, ինչպես մեր հայրերի կտակարանի տապանում, և այս բոպեիս կարողացավ նրանով պաշտպանել իրեն երկու դժբախտությունից։

Թեթև, հաճելի թմրությունն արդեն անցավ նրա անդամների միջով և սկսել էր քնով հազիվ միգապատել նրա զգացմունքները, ինչպես առաջին, վեհերոտ սառնամանիքները միգապատում են ջրերի մակերևույթը. մի բոպե էլ՝ և գիտակցությունը, աստված գիտե, թե ուր կթռչեր, բայց հանկարծ Իլյա Իլյիչը սթափվեց և բաց աչքերը։

— Բայց ախր ես չեմ լվացվել։ Ինչպե՞ս կարելի է։ Եվ

ոչ մի բան էլ չեմ արել,— շշնջաց նա։— Ուզում էի պլանը գրի առնել, չառա, խոպրավնիկին չգրեցի, նահանգապետին նույնպես, տանտիրոջն ասեցի նամակ գրել ու լվերշացրի, հաշիվները չտուգեցի և փողերը չտվեցի. առավոտս հենց այնպես էլ անցավ։

Նա մտածմունքի մեջ ընկավ...

«Սա ի՞նչ բան է։ Իսկ ուրիշը այս բոլորը կանե՞ր,— անցավ նրա մտքով։ «Ուրիշը, ուրիշը... Ի՞նչ բան է այդ ուրիշը»։

Նա խորացավ իրեն «ուրիշի» հետ համեմատելու մեջ։ Սկսեց մտածել, մտածել, և այժմ նրա մեջ ձևակերպվեց մի գաղափար, որ բոլորովին հակոտնյա էր այն գաղափարին, որ նա տվեց Զախարին ուրիշի մասին։

Նա ստիպված էր խոստովանել, որ ուրիշը կհասցներ բոլոր նամակները գրել. այնպես, որ որը (который) և որ (что) բառերը ոչ մի անգամ իրար չէին բախվի, ուրիշը նոր բնակարան էլ կտեղափոխվեր, պլանն էլ կկատարեր, գյուղ էլ կգնար...

«Ախր ես էլ կարող էի այդ բոլորը»...— անցնում էր նրա մտքով, «չէ՞ որ ես էլ, կարծեմ, գրել գիտեմ. պատահում էր, որ գրում էի ոչ թե նամակներ, այլ դրանից ավելի խորիմաստ բաներ։ Ո՞ւր գնացին այդ բոլորը։ Տեղափոխվելն էլ ի՞նչ մի բան է որ։ Բավական է միայն ցանկանալ։ «Ուրիշը» խալաթ էլ երբեք չի հագնում», այս ևս ավելացավ ուրիշի բնութագրությանը. «ուրիշը»... այստեղ նա հորանջեց... «համարյա չի քնում... ուրիշը զվարճանում է կյանքով, ամեն տեղ լինում է, ամեն ինչ տեսնում է, ամեն բանով հետաքրքրվում է... Իսկ ե՞ս. ես... «ուրիշ» չե՞մ,— արդեն թախիծով ասաց նա և խոր մտածմունքի մեջ ընկավ։ Նա նույնիսկ գլուխն ազատեց վերմակի տակից։

Օբլոմովի կյանքում վրա հասավ պարզ գիտակցական րոպեներից մեկը։ Ինչպիսի՜ սարսափ զգաց նա, երբ հանկարծ հոգում ծագեց կենդանի ու պարզ պատկերացում մարդկային բախտի ու կոչման մասին, և երբ նրա մտքում փայլատակեց զուգահեռը այդ կոչման և իր սեփական կյանքի միջև, երբ նրա գլխում մեկը մյուսի հետևից զարթնեցին զանազան կենսական հարցեր, և անկարգ, վախվխելով սլա-

նում էին ինչպես ավերակների մեջ նիրհող թռչուններ, որոնց զարթեցնում է արևի հանկարծական ճառագայթը։

Նա տրտմեց և ցավ զգաց իր անզարգացածության, բարոյական ուժերի աճման կանգառման համար, ամեն բանի խանգարող ծանրության համար, և նախանձը կրծում էր նրան, որ ուրիշներն այնպես լրիվ ու լայն են ապրում, իսկ իր մոտ կարծես մի ծանր քար է գցված նրա գոյության նեղ ու խղճուկ շավղի վրա։

Նրա վեհերոտ հոգում մշակվում էր այն տանջալից գիտակցությունը, թե իր բնության շատ կողմերն ամենևին չեն արթնանում, մյուսները հազիվհազ են տեղից շարժվել, և ոչ մեկն էլ մինչև վերջ մշակված չէ։

Մինչդեռ նա հիվանդագին կերպով զգում էր, որ իր մեջ՝ որպես գերեզմանում, թաղված է ինչ-որ մի լավ, լուսավոր սկզբունք, որ այժմ, գուցե, արդեն մեռել է կամ ոսկու նման ընկած է լեռան ընդերքում, և վաղուց ժամանակն է, որ այդ ոսկին ջրջուն դրամ դառնա։

Բայց գանձը խորն ու ծանր թաղված է անպետքությունների, դրսից բերած աղբի տակ։ Կարծես մեկը գոդացել և նրա սեփական հոգում թաղել էր աշխարհի և կյանքի կողմից նրան նվեր տված թանկագին գանձերը։ Ինչ-որ բան խանգարեց նրան խոյանալու կյանքի ասպարեզ և այնտեղ սավառնելու՝ իր խելքի ու կամքի բոլոր առագաստները պարզած։ Ինչ-որ մի գաղտնի թշնամի ճանապարհի սկզբին դրել էր նրա վրա իր ծանր ձեռքը և հեռու չպրտել մարդկային անմիջական կոչումից...

Եվ, թվում է, թե նա այլևս չի կարող խուլ անկյունից ու վայրենությունից ուղիղ ճանապարհ դուրս գալ։ Անտառը նրա շուրջը և նրա հոգում ավելի ու ավելի խիտ ու մթին էր դառնում, շավիղն ավելի ու ավելի ծածկվում խոտով. լուսավոր գիտակցությունն ավելի ու ավելի հազվադեպ արթնանում և միայն մի ակնթարթով զարթեցնում էր քնած ուժերը։ Միտքն ու կամքը վաղուց ջլատված են, և թվում է, թե՝ անվերադարձ կերպով։

Նրա կյանքի դեպքերը փոքրացել էին մանրադիտակի չափերով, բայց այդ դեպքերից էլ չէր կարողանում նա գլուխ հանել. նա չի անցնում մեկից մյուսին, այլ տարուբերվում

է նրանց մեջ, ինչպես մի ալիքի վրայից մյուսը. նա ուժ չունի մեկին հակադրել կամքի ճկունությունը կամ բանականությամբ հրապուրվել մյուսի ետևից։

Նա դառնությամբ էր լցվում այս գազանի խոստովանությունից ինքն իր առաջ։ Անպտուղ ափսոսանքն անցածի մասին, խղճի տոչորող կշտամբանքները խոցում էին նրան ասեղների նման, և նա ամբողջ ուժով աշխատում էր իր վրայից գցել այդ կշտամբանքների բեռը, գտնել մեղավորին իրենից դուրս և նրա վրա դարձնել նրանց խայթոցը։ Բայց ո՞ւմ վրա։

— Այդ ամենը... Զախա՞րն է,— շշնջաց նա։

Նա հիշեց Զախարի հետ ունեցած տեսարանի մանրամասնությունները, և նրա դեմքը բռնկվեց ամոթի հրդեհով։

«Ի՞նչ կլինի, եթե որևէ մեկը լսած լինի այդ»...— մտածում էր նա, սարսռելով այդ մտքից։ «Փա՜ռք աստծու, որ Զախարը ոչ ոքի չի կարողանա պատմել. ասենք՝ չեն էլ հավատա, փա՜ռք աստծուն»։

Նա հառաչում էր, նզովում էր իրեն, կողքից կողք էր շուռ գալիս, փնտրում էր մեղավորին և չէր գտնում։ Նրա ախուվախերն ու հառաչանքները հասան մինչև անգամ Զախարի ականջներին։

— Ո՞նց է կվասը նրան ուռցնում,— բարկացած քրթմնջում էր Զախարը։

«Ինչի՞ց է, որ ես այսպես եմ»,— համարյա արցունքով հարցրեց ինքն իրեն Օբլոմովը և գլուխը նորից կոխեց վերմակի տակ, «իսկապե՞ս»։

Ապարդյուն փնտրելով թշնամական սկզբունքը, որ խանգարում էր նրան ապրել ինչպես պետք է, ինչպես ապրում են «ուրիշները», նա հառաչեց, փակեց աչքերը, և մի քանի րոպեից նիրհը դարձյալ սկսեց հետզհետե շղթայել նրա ըզգացմունքները։

— Ես էլ... կկամենայի...— ասում էր նա, դժվարությամբ թարթելով աչքերը,— մի այնպիսի բան... Մի՞թե բնությունն ինձ այնքան զրկել է... դե, ո՛չ, փառք աստծու... չենք դժգոհում...

Սրան հետևեց հաշտարար հառաչանքը։ Նա հուզմունքից անցնում էր իր նորմալ գրությանը՝ անդորրությանն ու անտարբերությանը։

— Երևի, բա՞խտս է այսպես։ Ի՞նչ կարող եմ անել...— նազիվ շշնջում էր նա՝ քնից հաղթահարված։

«Երկու հազարի չափ ավելի պակաս եկամուտ»...— ասաց նա հանկարծ բարձրաձայն զառանցանքի մեջ։— Իսկույն, իսկույն, սպասի՛ր... և կիսով չափ սթափվեց։

— Սակայն... հետաքրքրական կլիներ իմանալ... ինչի՞ց է, որ ես... այսպես եմ...— ասաց նա դարձյալ շշնջալով։ Նրա կոպերը լրիվ փակվեցին։— Այո՛, ինչի՞ց է... Գուցե... դա... նրանից է...— ջանում էր նա արտասանել և չկարողացավ արտասանել։

Այդպես էլ նա չհասցրեց պատճառը գտնել. լեզուն ու շրթունքները վայրկենապես մարեցին խոսքի կեսին և մնացին կիսաբաց, ինչպես կային։ Քառի փոխարեն լսվեց էլի մի հառաչանք, իսկ դրանից հետո սկսեց հնչել անվրդով քնած մարդու համաչափ խռմփոցը։

Քունը կանգնեցրեց նրա մտքերի դանդաղ ու ծույլ հոսանքը և մի ակնթարթում փոխադրեց նրան մի այլ դարաշրջան, ուրիշ մարդկանց մոտ, ուրիշ տեղ, ուր հետևյալ գլխում կփոխադրվենք նաև մենք՝ ընթերցողի հետ։

IX

Օբլոմովի երազը

Որտե՞ղ ենք մենք։ Երկրի ո՞ր օրհնած անկյունն է տեղափոխել մեզ Օբլոմովի երազը։ Այս ի՞նչ հրաշալի երկիր է։

Ծիշտ է, այնտեղ ծով չկա, չկան բարձր լեռներ, ժայռեր ու անդունդներ, ոչ էլ թավ անտառներ, չկա ոչ մի վեհատեսիլ, վայրենի ու մռայլ բան։

Եվ ինչի՞ համար է այդ վայրենի ու վեհատեսիլ բանը։ Ծովն օրինակ։ Աստվա՛ծ նրա հետ։ Նա մարդուն միայն թախիծ է բերում, նրան նայելիս՝ մարդ ուզում է լաց լինել։ Ջրերի անծայրածիր փռվածքի առաջ մարդու սիրտը վրդովվում է երկյուղից, և անեզր տեսարանի միօրինակությունից տանջված հայացքը հանգիստ առնելու տեղ չի գտնում։

Ալիքների մռնչյունն ու կատաղի որոտը թույլ լսողությունը

չեն շոյում. նրանք աշխարհի սկզբից շարունակ իրենց նույն մռայլ ու անմեկնելի բովանդակություն ունեցող երգն են կրկնում, և նրա մեջ շարունակ լսվում են կարծես տանջանքի կրկնում, և նրա մեջ շարունակ լսվում են կարծես տանջանքի դատապարտված հրեշի միևնույն հառաչը, միևնույն գանգատները և ինչ-որ արարածների զիլ, շարագուշակ ձայներ։ Ճուրջը թռչուններ չեն ծլվլում. միայն լուռ ճայերն են, որ դատապարտվածների նման, վհատ սուրում են ափերի մոտով և պտույտներ են գործում ջրի վրա։

Գազանի մռնչյունն անզոր է բնության այդ հեծկլտանքների հանդեպ, ոչինչ է նաև մարդու ձայնը, և ինքը մարդն այնքան փոքր է, թույլ, այնպես աննշմար չքանում է ընդարձակ պատկերի փոքրիկ մանրամասնությունների մեջ։ Այս է պատճառը գուցե, որ նրա համար այնքան ծանր է ծովին նայելը։

Ո՛չ, ասված այդ ծովի հետ։ Նրա անդորրությունն ու անշարժությունն) իսկ հոգու մեջ սփոփիչ զգացում չեն ծնում. շրջապատի զանգվածի հաղիվ նշմարելի տատանման մեջ մարդ շարունակ տեսնում է նույն անհուն, թեև քնած ուժը, որը երբեմն այնպես թունոտ կերպով ծաղրում է նրա հպարտ կամքը և այնքան խորն է պահում նրա անվեհեր մտահղացումները, նրա բոլոր ճիգերն ու ջանքերը։

Լեռներն ու անդունդներն էլ մարդուն ուրախացնելու համար չեն ստեղծված։ Նրանք ահարկու են, սարսափելի, ինչպես մարդու վրա ուղղված վայրի գազանի մագիլներ ու ատամներ. նրանք չափազանց կենդանի են մեզ հիշեցնում մեր անցավոր մարմինը և կյանքը կորցնելու երկյուղի ու անձկության մեջ են պահում մեզ։ Երկինքն էլ այնտեղ ժայռերի ու անդունդների վրա այնքան հեռու և անհասանելի է թվում, որ նա, կարծես, հրաժարվել է մարդկանցից։

Սրա նման չէր այն խաղաղ անկյունը, որտեղ հանկարծ երևաց մեր հերոսը։

Ընդհակառակը, երկինքն այնտեղ, կարծես, ավելի մոտ է հպվում երկրին, ոչ թե նրա համար, որ նետերն ավելի ուժեղ արձակի, այլ, թերևս, որպեսզի ուժգին ու սիրով գրկի նրան։ Նա տարածվել է գլխավերևում այնպես ցած, ինչպես ծնողական հուսալի հարկը, կարծես ընտրյալ անկյունը ամեն տեսակ արհավիրքներից պահպանելու համար։

Արևն այնտեղ պայծառ ու ջերմ լուսավորում է մոտ կես տարի և հետո հեռանում այնտեղից ոչ միանգամից, այլ կարծես ակամա, կարծես շրջվում է մեկ կամ երկու անգամ էլ նայելու սիրած տեղին և աշնանը, վատ եղանակներին, նրան մի տաք ու պայծառ օր էլ պարգևելու։

Լեռներն այնտեղ, կարծես, միայն մոդելներն են այն տոկալի, ինչ-որ տեղ կանգնեցրած լեռների, որոնք սարսռեցնում են մարդու երևակայությունը։ Սա թեք բլուրների մի շարք է, որոնցից հաճելի է խաղալով մեջքի վրա գլորվել կամ այնտեղ նստած՝ մտախոհ նայել մայր մտնող արևին։

Զարահճի խաղով ուրախ վազում է գետը. նա մերթ ափերից դուրս գալով լայն լճակ է կազմում, մերթ թելանման սլանում է արագ, կամ կարծես, մտքի հետ ընկած, հանգըստանում է ու հանդարտիկ սողում քարերի վրայից, չորս կողմը թողնելով կայտառ վտակներ, որոնց խոխոջյունը քաղցր նիրհ է բերում մարդուն։

Ամբողջ անկյունը տասնհինգ կամ քսան վերստ տարածությամբ ներկայացնում էր մի շարք գեղանկար էտյուդներ, ուրախ, ժպտուն դաշտանկարներ։ Վհիտ գետակի ավազոտ և թեք ափերը, բլրից դեպի ջուրը ձգվող մանր մացառուտը, թեքալանջ ձորակը՝ վտակը հատակին և կեչու պուրակը, բոլորը, կարծես դիտմամբ սազացրած լինեին մեկը մյուսին և վարպետորեն նկարած։

Հուզումներից տանջված կամ սրանց անծանոթ սիրտը ձգտում է հենց թաքնվել բոլորից մոռացված այդ անկյունում և ապրել բոլորին անհայտ մի երջանկությամբ։ Ամեն ինչ այնտեղ խոստանում է անդորր, երկարատև կյանք՝ մինչև մազերի դեղնելը, և աննկատելի, քնի նման մահ։

Տարին այնտեղ իր շրջանը բոլորում է կանոնավոր և անվրդով։

Ըստ օրացույցի մարտին կգա գարուն, բլուրներից կվազեն պղտոր առուները, գետինը կլկի և տաք գոլորշի կբարձրացնի. գյուղացին կհանի կիսաքուրքը, շապկանց դուրս կելնի և, ձեռքով աչքերին հովանի արած՝ երկար կզմայլվի արևով՝ բավականությամբ թոթվելով ուսերը. հետո կքաշքշի ջուտ տված սայլի այս կամ այն լծափայտից, կամ կտնտղի ու

ուրքով կհարվածի չարդախի տակ պարապ ընկած արորին՝ պատրաստվելով սովորական աշխատանքներին։

Գարնանը հանկարծական բուքերը չեն վերադառնում, չեն ծածկում դաշտերը և ծառերը ձյունից չեն ջարդվում։

Ձմեռը սառը անմատչելի գեղեցկուհու նման պահպանում է իր բնավորությունը ճիշտ մինչև տաքության օրինաստհման ժամանակը. չի գրգռում անակնկալ հալհլոցով և կուչուձիգ չի ածում չլսված սառնամանիքներով. ամեն ինչ ընթանում է բնության նախագծած ընդհանուր, սովորական կարգով։

Նոյեմբերին սկսվում է ձյունն ու սառնամանիքը, որը չրօրհնեքի մոտերքն այնքան է սաստկանում, որ գյուղացին, մի բոպե խրճիթից դուրս գալով, վերադառնում է անպատճառ եղյամապատ մորուքով. իսկ փետրվարին զգայուն քիթն արդեն օդի մեջ առնում է մոտալուտ գարնան շունչը։

Բայց ամառը, ամառն այդ կողմերում առանձնապես զմայլելի է։ Այնտեղ պետք է որոնել թարմ, չոր օդ՝ ծծված ոչ թե կիտրոնի ու դափնու, այլ բարձվենյակի, մայրու, և թխենու բուրմունքով. այնտեղ պետք է որոնել պարզ օրեր, արևի թեթև այրող, բայց ոչ կիզիչ ճառագայթներ և գրեթե երեք ամիս շարունակվող անամպ երկինք։

Պարզ օրերն էլ որ սկսվում են, տևում են երեք-չորս շաբաթ. երկոն էլ տաք է այնտեղ և գիշերը հեղձուցիչ։ Աստղերն այնպես սիրալիր, բարեկամաբար են քթթում երկնքից։

Եթե անձրև էլ է գալիս՝ որպիսի՜ բարերար ամառնային անձրև։ Թափվում է աշխույժ, առատ, ուրախ թռչկոտում, կարծես հանկարծակի ուրախացած մարդու խոշոր և տաք արցունք լինի. բայց հենց դադարում է, արևն արդեն նորից՝ սիրո պարզ ժպիտով դիտում ու ցամաքեցնում է դաշտերն ու բլրակները և ողջ երկիրն, ի պատասխան արևի, նորից ժպտում է երջանիկ։

Գյուղացին ուրախ ողջունում է անձրևը։ Անձրևը կթրջի, արևը կչորացնի,— ասում է նա, հաճույքով տաք հորդ անձրևին դեմ անելով երեսը, ուսերն ու մեջքը։

Մրրիկները սարսափելի չեն, այլ միայն բարեբեր են այնտեղ. շարունակ լինում են միևնույն սահմանված ժամանակ, գրեթե երբեք չմոռանալով Եղիա մարգարեի օրը, կարծես ժողովրդի մեջ հայտնի ավանդությունը պահպանելու

համար։ Թե քանակը, թե հարվածների ուժը ամեն տարի, թվում է, նույնն են, կարծես գանձարանից ամբողջ երկրամասին մի տարվա համար բաց է թողնվում էլեկտրականության որոշակի չափ։

Այդ երկրամասում լսված չեն ոչ սարսափելի փոթորիկներ, ոչ էլ ավերածություն։

Լրագրերում ոչ ոք երբեք առիթ չի ունեցել այդպիսի բան կարդալու աստծու օրհնած այդ անկյան մասին։ Եվ երբեք էլ ոչինչ տպագրված չէր լինի և չէին լսի այդ երկրի մասին, եթե միայն այրի գեղջկուհի 29-ամյա Մարինա Կուլկովան միանգամից չորս երեխա չծներ. մի բան, որի մասին լռել այլևս ոչ մի կերպ չէր կարելի։

Աստված այդ կողմերին չէր պատժում ո՛չ եգիպտական և ո՛չ էլ հասարակ խոցերով։ Բնակիչներից ոչ ոք չէր տեսել և չի հիշում ոչ մի երկնային սարսափելի նշան. ո՛չ հրեղեն գնդեր, ոչ հանկարծական մթություն. այնտեղ թունավոր սողուններ չեն ապրում, մորեխը չի հասնում այնտեղ, չկան ո՛չ մռնչացող առյուծներ, ո՛չ ոռնացող վագրեր, ո՛չ նույնիսկ արջեր ու գայլեր, որովհետև անտառներ չկան։ Դաշտերում և գյուղում թափառում են միայն բազմաթիվ որոճացող կովեր, մայող ոչխարներ և կչկչացող հավեր։

Աստված գիտե՝ կբավարարվե՞ր, արդյոք, այս խաղաղ անկյան բնությամբ բանաստեղծը կամ երազողը։ Ինչպես հայտնի է, այդ պարոնները սիրում են զմայլված նայել լուսնին ու ականջ դնել սոխակների դայլայլիկին։ Նրանք սիրում են սեթևեթ լուսինը, որ զուգված լինի բաց դեղնագույն ամպերով և խորհրդավոր կերպով թափանցի ծառերի ճյուղերի արանքով, կամ արծաթե ճառագայթների խուրձեր լցնի իր երկրպագուների աչքերը։

Իսկ այս կողմերում ոչ ոք չգիտեր էլ, թե ի՛նչ է լուսին ասածը, բոլորը նրան ամիս անունն էին տալիս։ Նա մի տեսակ բարեսրտությամբ, լայն բաց արած աչքերով նայում էր գյուղերին ու դաշտերին և շատ էր նման պղնձե մաքրած կոնքի։

Բանաստեղծն իզուր կնայեր նրան խանդավառ հայացքով, նա նույն պարզասրտությամբ կնայեր և բանաստեղծին, ինչպես գյուղացի կլորադեմ գեղեցկուհին է նայում ի պատաս-

խան քաղաքացի կնամոլի կրքոտ ու պերճախոս հայացքներին։

Սոխակի ձայն էլ չի լսվում այդ կողմերում, գուցե այն պատճառով, որ այնտեղ սաղարթախիտ ապաստաններ ու վարդեր չկան։ Բայց դրա փոխարեն՝ լորերի ի՜նչ առատություն։ Ամառը հացը հավաքելիս՝ տղաները ձեռքով են բռնում նրանց։

Չեն մտածում, սակայն, որ լորերին այնտեղ գաստրոնոմիական պերճանքի ահարկա դարձնեն. ո՛չ, այդպիսի ապականում դեռ չի մտել այն երկրամասի բնակիչների բարքերի մեջ. լորը մի թռչուն է, որ կանոնադրությամբ սննդի մեջ չի մտցրած։ Նա այնտեղ իր երգով քաղցրացնում է մարդկային լսելիքը. այդ է պատճառը, որ համարյա ամեն տան տանիքի տակ, թելից վանդակի մեջ, լոր է կախ տված։

Բանաստեղծն ու երազողը գոհ չէին մնա մինչև անգամ այդ համեստ ու անշուք վայրի ընդհանուր տեսարանից։ Նրանց չէր հաջողվի այնտեղ որևէ երեկո տեսնել շվեյցարական կամ շոտլանդական ճաշակով, երբ ամբողջ բնությունը, և անտառը, և ջուրը, և խրճիթների պատերը, և ավազոտ բլուրները,— ամեն ինչ վառվում է, կարծես, բոսորային ցոլքով, երբ այդ ծիրանագույն ֆոնի վրա որոշակի նշագծվում է ավազոտ, ոլորապտույտ ճանապարհով գնացող տղամարդկանց կավալկադան, որոնք ուղեկցում են որևէ լեգիի դեպի մռայլ ավերակը և շտապում են ամուր դղյակը, որտեղ նրանց սպասում է պապի պատմած միջադեպը երկու վարդերի պատերազմի մասին, ընթրիքին՝ վայրի այծ և դեռատի օրիորդի երգած բալլադը՝ տավղի հնչյունների նվագակցությամբ,— պատկերներ, որոնցով այնքան առատորեն լցրել է մեր երևակայությունը Վալտեր Սքոթի գրիչը։

Ոչ, ոչ մի այսպիսի բան չկար մեր կողմերում։

Ինչպե՞ս ամեն ինչ անդորր, ամեն ինչ քնակոլոլ է այդ անկյունը կազմող երեք-չորս գյուղերում։ Մեկը մյուսից հեռու չէին ընկած, կարծես վիթխարի ձեռք պատահմամբ շպրտել էր նրանց ու նրանք ցրիվ էին եկել զանազան կողմեր, և այդպես էլ մնացել։

Խրճիթներից մեկը, ինչպես որ ընկել էր ձորակի զառիվայրի վրա, այնպես էլ մնացել էր այնտեղ անհիշելի ժամա-

նակներից ի վեր, մի կիսով օդում կախված և երեք ձողերի վրա հենված։ Երեք-չորս սերունդ խաղաղ ու երջանիկ ապրել են այնտեղ։

Հավն էլ, թվում է, թե կվախենար այդ տունը մտնել. այնինչ այնտեղ իր կնոջ հետ բնակվում էր Օնիսիմ Սուսլովը, մի պատկառելի տղամարդ, որն իր բնակարանում ամբողջ հասակով չի տեղավորվի։

Ամեն մարդ էլ չի կարող մտնել Օնիսիմի խրճիթը. թերևս հնարավոր լինի, եթե այցելուն խնդրի խրճիթին՝ ետևն անտառին անել, իսկ ճակատը՝ իրեն։

Պատշգամբը կախ էր ընկած ձորակի վրա և վրան ոտք դնելու համար մի ձեռքդ պիտի գցեիր խոտերին, մյուսը՝ խրճիթի կտուրին և ապա ոտքը դնեիր ուղղակի պատշգամբի վրա։

Մյուս խրճիթը ծիծեռնակի բնի պես կառչել էր բլրակի լանջից. այնտեղ երեքը պատահաբար իրար կողքի էին հայտնվել, իսկ երկուսը կանգնած էին ձորակի հենց հատակին։

Խաղաղ ու քնկոտ է ամեն ինչ գյուղում. լուռ խրճիթների դռները կրնկի վրա բաց են, ոչ ոք չի երևում, միայն ճանճերի ամպն է թռչում ու բզզում հեղձուցիչ օդում։

Խրճիթ մտնողն իզուր կկանչի բարձրաձայն. մեռելային լռությունը կլինի պատասխանը. քիչ խրճիթներում, թերևս, վառարանի վրա իր վերջին օրերը հաշվող մի պառավի հիվանդագին տնքոցը կամ խուլ հազը կլսվի որպես պատասխան, կամ միջնորմի ետևից շապկանց դուրս կգա մի բոբիկ, երկարամազ, երեքամյա երեխա, լուռ, շեշտակի կնայի ներս մտնողին և վախվխելով նորից կթաքնվի։

Նույն խոր անդորրն ու խաղաղությունն է տարածվում նաև դաշտերում. տեղ-տեղ լոկ մրջյունի նման սև արտի մեջ, արորին զոռ տալով անդադար աշխատում է քափ ու քրտինք մտած արևակեզ մաճկալը։

Այդ կողմերի մարդկանց բարքերի մեջ էլ թագավորում են խաղաղությունն ու անվրդով հանգիստը։ Ոչ կողոպուտ, ոչ սպանություն, ոչ մի սարսափելի պատահար չէր լինում այնտեղ. ոչ ուժեղ կրքեր, ոչ խիզախ ձեռնարկումներ չէին հուզում նրանց։

Եվ ի՞նչ կրքեր ու ձեռնարկումներ կարող էին վրդովել նրանց։ Ամեն մարդ այնտեղ գիտեր ինքն իրեն։ Այդ կողմերի բնակիչներն ուրիշ մարդկանցից հեռու են ապրում։ Մոտակա գյուղերը և գավառական քաղաքը գտնվում էին քսան-հինգ և երեսուն վերստի վրա։

Գյուղացիները մի որոշ ժամանակ հացահատիկ էին կրում դեպի Վոլգայի մերձավորագույն նավահանգիստը, որ նրանց համար Կոլխիդա և Հերկուլեսյան սյուներ էին, տարին մի անգամ էլ ոմանք տոնավաճառ էին գնում, և այլևս ոչ ոքի հետ ոչ մի հարաբերություն չունեին։

Նրանց շահերը կենտրոնացած էին հենց իրենց վրա, չէին խաչաձևվում և չէին բախվում ոչ ոքի շահերի հետ։

Նրանք գիտեին, որ իրենցից ութսուն վերստի վրա է «նահանգը», այսինքն՝ նահանգական քաղաքը, բայց քչերն էին գնում այնտեղ։ Այնուհետև գիտեին, որ ավելի հեռու գրանից այն կողմ Սարատովն է կամ Նիժնին. լսել էին, որ կա Մոսկվա և Պիտեր, որ Պիտերից դեն ապրում են ֆրանսիացիները կամ գերմանացիները։ Նրանց համար, ինչպես հնագույն մարդկանց համար, սկսվում էր մութ աշխարհը՝ հրեշներով, երկգլխանի մարդկանցով, հսկաներով բնակված անհայտ երկրները. հետո գալիս էր խավարը, և վերջապես, այս բոլորը վերջանում էր այն ձկով, որն իր վրա է պահում երկիրը։

Եվ որովհետև նրանց կողմերով գրեթե անցուդարձ չկար, այդ պատճառով էլ նրանք ոչ մի տեղից չէին կարող նորագույն տեղեկություններ քաղել այն մասին, թե ինչ է կատարվում աշխարհում. փայտե ամաններ տեղափոխող սայլապանները ապրում էին քսան վերստի վրա և նրանցից ավելի բան չգիտեին։ Չկար նույնիսկ մի բան, որի հետ իրենց նիստուկացը համեմատեին. լա՞վ են ապրում, թե ոչ, հարո՞ւստ են, թե աղքատ, կարելի՞ է արդյոք ցանկանալ որևէ բան, ինչ ուրիշներն ունեն։

Այդ երջանիկ մարդիկ ապրում էին, կարծելով, որ ուրիշ կերպ չպետք է լինի և չի էլ կարող լինել, հավատացած, որ ուրիշներն էլ հենց այդպես են ապրում և ուրիշ կերպ ապրելը մեղք է։

Նրանք չէին էլ հավատա, եթե իրենց ասեին, որ ուրիշները որևէ այլ կերպ են վար անում, ցանում, հնձում, ծախում։ Ի՞նչ կրքեր ու հուզումներ կարող էին ունենալ նրանք։

Նրանք, ինչպես և բոլոր մարդիկ, ունեին և հոգսեր, և թուլություններ, հարբեր կամ բահրա, ծուլություն և քուն. բայց այս բոլորը նրանց վրա էժան էր նստում, առանց արյուն պղտորելու։

Վերջին հինգ տարվա ընթացքում մի քանի հարյուր հոգուց ոչ ոք չէր մեռել, ոչ միայն բռնի, այլ նույնիսկ բնական մահով։

Իսկ եթե մեկնումեկը ծերությունից կամ որևէ անբուժելի հիվանդությունից հանգչում էր հավիտենական քնով, երկար ժամանակ չէին դադարում այդպիսի անսովոր երևույթի վրա զարմանալուց։

Մինչդեռ ամենևին զարմանալի չթվաց, երբ, օրինակ, դարբին Տարասը բաղնիքում քիչ մնաց գոլորշիով մահվան դուռը հասցներ իրեն, այն աստիճան, որ կարիք եղավ ջրով ուշքի բերել նրան։

Հանցանքներից մեկը, այն է՝ սիսեռի, գազարի և շաղգամի գողությունը բանջարանոցներից, շատ տարածված էր. բայց մի անգամ էլ անսպասելի անհետացան երկու խոճկոր ու մի հավ. դեպքը վրդովեց ամբողջ շրջակայքը և միաձայն վերագրվեց նախընթաց օրը տոնավաճառ գնացող վայտե ամաններով բեռնված սայլախմբին։ Թե չէ, ընդհանրապես, ամեն տեսակի պատահարները շատ հազվադեպ էին։

Ասենք, մի անգամ էլ, գյուղից դուրս, կամրջի մոտ, առվի մեջ գտան մի պառկած մարդ, որն, ըստ երևույթին, ետ էր մնացել քաղաք գնացող խմբից։

Առաջինը երեխաները նկատեցին նրան և սարսափահար գյուղ վազեցին՝ լուր բերելով ինչ-որ ահարկու օձի թե մարդագայլի մասին, որը պառկած է առվի մեջ, ավելացնելով, որ նա իրենց ետևից ընկավ ու քիչ էր մնում՝ Կուզկային ուտեր։

Գյուղացիներից ավելի սրտոտները զինվեցին եղաններով ու կացիններով և բազմությամբ գնացին դեպի առուն։

— Ո՞ւր եք գնում,— կանգնեցնում էին ծերերը։— Գլխներիցդ ձե՞ռ եք քաշել։ Ի՞նչ եք ուզում։ Մի շարշարվեք, ձեզ ստիպող չկա։

Բայց գյուղացիները գնացին և հիսուն սաժեն հեռավորությունից սկսեցին ձայն տալ հրեշին զանազան կանչերով. պատասխան չկար, նրանք կանգ առան. ապա նորից շարժվեցին առաջ։

Առվի մեջ, գլուխը թմբին հենած, պառկած էր մի գյուղացի. կողքին ընկած էր տոպրակը և փայտը, որի վրա կախված էր երկու զույգ տրեխ։

Գյուղացիները չէին համարձակվում ոչ մոտենալ, ոչ ձեռք տալ։

— Է՛յ, ախպերացո՛ւ,— ձայն էին տալիս նրանք հերթով, քորելով ո՛րը ծոծրակը, ո՛րը մեջքը։— Անունդ ի՞նչ է։ Է՛յ գո՛ւ ի՞նչ ես անում այդտեղ։

Անցորդը շարժում արեց, որ գլուխը բարձրացնի, բայց չկարողացավ. նա, ըստ երևույթին, հիվանդ էր կամ շատ հոգնած։

Մեկը սիրտ առած՝ ուզում էր եղանով բզել նրան։

— Մի՛ նեղացնի, մի՛ նեղացնի,— բղավեցին շատերը։— Ի՞նչ իմանաս՝ ի՞նչ մարդ է. տեսնում ես՝ ծպտուն չի հանում. ով գիտե, մի ինչ-որ... մի՛ նեղացրեք նրան, տղե՛րք։

— Գնա՛նք,— ասում էին մի քանիսը,— ճիշտ ես ասում՝ գնանք. մեր ի՞նչն է որ, քեռի՛ն է, ինչ է։ Դրանից խաթա կգա։

Եվ բոլորը հետ գնացին գյուղ, պատմեցին ծերերին, որ այնտեղ պառկած է մի օտար մարդ, ոչինչ չի խոսում, և աստված գիտե, թե միտքն ինչ է...

— Որ օտար է, մի՛ նեղացրեք,— ասում էին հողաթմբերի վրա նստոտած և արմունկները ծնկներին դրած ծերունիները։— Հանգի՛ստ թողեք։ Դուք սկի չպիտի էլ գնայիք։

Այսպես էր այն անկյունը, ուր հանկարծ երազում տեղափոխվեց Օբլոմովը։

Այնտեղ ցրված երեք-չորս գյուղերից մեկը Սոսնովկան էր, մյուսը՝ Վավիլովկան, միմյանցից մի վերստ հեռավորության վրա։

Սոսնովկան ու Վավիլովկան Օբլոմովների տոհմի ժառանգական պապենական կալվածն էին, ուստի և հայտնի էին Օբլոմովկա ընդհանուր անունով։

Սոսնովկայում էր գտնվում կալվածատիրոջ տունն ու բնա-

կատեզը։ Սոսնովկայից մոտ հինգ վերստ հեռավորության վրա գտնվում էր Վերխլյովո գյուղը, որը մի ժամանակ նույնպես պատկանում եր Օբլոմովների տոհմին և վաղուց անցել էր ուրիշի ձեռքը, նաև մի քանի այստեղ-այնտեղ ցրված խրճիթներ, որ նույնպես համարվում էին նույն գյուղինը։

Գյուղը պատկանում էր մի հարուստ կալվածատիրոջ, որն իր կալվածում երբեք չէր երևում։ Կալվածը կառավարում էր գերմանացի կառավարիչը։

Ահա և այդ անկյունի ողջ աշխարհագրությունը։

Իլյա Իլյիչն առավոտյան արթնացավ իր փոքրիկ անկողնում։ Նա յոթ տարեկան է։ Զվարթ է և ուրախ։

Ի՞նչ լավիկն է նա, կարմիր, լիքը։ Թշիկներն այնպես կլորիկ են, որ եթե որևէ շարաճճի դիտմամբ փքվի, էլի այդպիսի թշեր չի կարող սարքել։

Դայակն սպասում է նրա արթնանալուն։ Սկսում է հագցընել գուլպաները. սա չի հնազանդվում, շարություն է անում, թափահարում է ոտքերը. դայակը բռնում է նրան, և երկուսն էլ հոհոում են։

Վերջապես դայակին հաջողվեց նրան ոտքի կանգնեցնել. լվաց երեխայի երեսը, սանրեց գլուխը ու տարավ մոր մոտ։

Տեսնելով վաղուց մեռած մորը, Օբլոմովը երազում անգամ ցնցվեց ուրախությունից, դեպի նա ունեցած ջերմ սիրուց. քնած տեղը նրա արտևանունքների տակից դանդաղ հոսեցին երկու տաք արտասուք ու անշարժացան։

Մայրն սկսեց նրան բուռն կերպով համբուրել, հետո զննեց ագահ, հոգատար աչքերով՝ պղտորված չե՞ն արդյոք աչիկները, հարցրեց՝ ոչ մի տեղը չի՞ ցավում, հարցուփորձ արեց դայակին՝ արդյոք հանգի՞ստ է քնել, գիշերը չի՞ արթնացել, քնած տեղը շուռումուռ չի՞ եկել, տաքություն չի՞ ունեցել։ Հետո բռնեց ձեռքը և տարավ սրբապատկերի մոտ։

Այնտեղ ծունկ չոքելով ու մի ձեռքով փաթաթվելով երեխային՝ նա թելադրում էր նրան աղոթքի խոսքերը։

Մանուկը ցրված կրկնում էր այդ խոսքերը՝ նայելով պատուհանից դուրս, որտեղից սենյակն էր լցվում զովն ու յասամանի բուրմունքը։

— Մայրի՛կ, այսօր մենք զբոսնելու կգնա՞նք,— հարցնում էր հանկարծ աղոթքի ժամանակ։

— Կգնանք, հոգյա՛կս,— շտապով ասում էր մայրը, աչքերը չհեռացնելով սրբապատկերից և շտապելով վերջացնել սուրբ խոսքերը։

Մանուկն ալարկոտ կրկնում էր այդ խոսքերը, բայց մայրը գրանց մեջ իր ողջ հոգին էր դնում։

Հետո գնում էին հոր մոտ, ապա՝ թեյ խմելու։

Թեյի սեղանի շուրջ Օբլոմովը տեսավ իրենց տանն ապրող ութսունամյա զառամյալ մորաքրոջը, որ շարունակ փնթփնթում էր իր աղախնի վրա. սա նրա ետևում կանգնած, ծնրադրելով գլուխը ցնցելով սպասարկում էր նրան։ Այնտեղ էին նաև նրա հոր հեռավոր ազգականներից՝ երեք հասակավոր աղջիկ, նրա մոր մի քիչ ցնդած տագրը, իրենց մոտ հյուր եկած յոթ շունչ ունեցող կալվածատեր Զեկմենյովը և էլի ինչ-որ պառավներ ու ծերուկներ։

Օբլոմովների տան այս ամբողջ կազմն ու շքախումբը վրա պրծավ Իլյա Իլյիչին և սկսեց փաղաքշանքներ ու գովեստներ թափել. մանուկը հազիվ էր կարողանում սրբել չխնգրած համբույրների հետքերը։

Այնուհետև սկսում էին նրան կերակրել շաքարահացով, պաքսիմատով, ներով։

Հետո մայրը, նորից փաղաքշելով նրան, թույլ էր տալիս զբոսնել պարտեզում, բակում, մարգագետնում, դայակին խստիվ պատվիրելով՝ մանուկին մենակ չթողնել, թույլ չտալ մոտենալ ձիերին, շներին, այծին. տնից շատ չհեռանալ և, որ գլխավորն է, չթողնել նրան ձորակը, որպես վատ համբավ ունեցող ամենասարսափելի տեղը շրջակայքում։

Մի անգամ այնտեղ մի շուն գտան, որը կատաղած համարվեց միայն այն պատճառով, որ մարդկանցից խույս տվեց, երբ նրանք վրա տվեցին եղաններով ու կացիններով, և անհետացավ սարի ետև։ Ձորն էին շարտում լեշերը. ենթադրվում էր, որ ձորակում կան և ավազակներ, և գայլեր, և զանազան ուրիշ արարածներ, որոնք կամ այդ կողմերում, կամ էլ աշխարհում բնավ գոյություն չունեին։

Երեխան չապասեց մոր նախազգուշացումների վերջանալուն. նա վազուց արդեն բակում էր։

Ուրախ զարմանքով, կարծես առաջին անգամ լիներ, նա զննեց ու վազեվազ պտտվեց ծնողական տան շուրջը, կողքի թեքված դարպասով, մեջտեղից իջած փայտե տնակով, որի վրա բուսել էր հաճելի կանաչ մամուռ, երերուն պատշգամբով, վերից ու կողքերից կցած զանազան շենքերով ու անխնամ պարտեզով։

Նա սաստիկ ցանկանում է բարձրանալ ամբողջ տան շուրջը կախված պատշգամբը՝ այնտեղից գետակին նայելու համար. բայց պատշգամբը հին է, հազիվ դիմանում է, և վրան ման գալ թույլատրվում է միայն ծառաներին, իսկ պարոնները ման չեն գալիս։

Նա ականջ էր դնում մոր արգելքներին և հենց ուզում էր ուղղվել դեպի գայթակղիչ աստիճանները, պատշգամբում հայտնվեց դայակը և մի կերպ բռնեց նրան։

Նրա ձեռքից դուրս պրծավ դիք սանդուղքով խոտանոցը բարձրանալու դիտավորությամբ. հազիվ էր դայակը կարողանում հասնել խոտանոցին, որ հարկավոր էր լինում շտապել արգելել նրա աղավնատուն բարձրանալը, անասնաբակ և, աստվա՜ծ չանի, մանավանդ ձորակը մտնելու դիտավորությունները։

— Տե՜ր իմ աստված, սա ինչ երեխա է, հոլ է, հո՛լ։ Ախր խելոք պիտի կենա՞ս, թե չէ, պարոն։ Ամոթ է,— ասում էր դայակը։

Դայակի ողջ օրը և բոլոր օրերն ու գիշերներն իրարանցման ու վազվզուքի մեջ էր անցնում. նա մերթ տանջվում էր, մերթ խիստ ուրախանում երեխայի համար, մերթ երկյուղ էր կրում, թե նա վայր կընկնի և քիթ ու պռունկը կջարդի, մերթ մանկական անկեղծ փաղաքշանքներն էին նրան հուզում կամ երեխայի հեռավոր ապագայի մասին անորոշ թախիծն էր նրան պատում. սրանով էր միայն բարախում նրա սիրտը, այս հուզումներով էր տաքանում պառավի արյունը, և սրանով էր մի կերպ պահպանվում նրա քնակոլոլ կյանքը, որն առանց սրան, գուցե, շատ վաղուց մարած կլիներ։

Երեխան, սակայն, միշտ թավոռուն չէ. նա երբեմն հանկարծ հանդարտվում է՝ դայակի մոտ նստած, և սեեռուն աչքերով նայում ամեն բանին։ Մանկան միտքը դիտում է իր առջև կատարվող երևույթները. սրանք խոր տպավորվում են նրա հոգու մեջ, ապա աճում ու հասունանում նրա հետ միասին։

Առավոտը հրաշալի է, օդը զով, արևը դեռ շատ չի բարձրացել։ Տան, ծառերի, աղավնատան, պատշգամբի և ամեն բանի երկար ստվերները փռվեցին հեռու։ Պարտեզում և բակում գոյացան զով անկյուններ, որոնք հրավիրում են մտախոհության և քնի։ Միայն հեռվում աշորայի դաշտը, կարծես, վառվում է կրակի նման, և գետակն այնպես է փայլում ու պսպղում արևի տակ, որ աչք է ծակում։

— Դայա՛կ, ինչի՞ց է, որ այստեղ մութ է, իսկ այնտեղ լույս. իսկ հետո այնտեղ է՞լ լույս կլինի,— հարցնում է երեխան։

— Այն պատճառով, սիրելի՛ս, որ արևը լուսնին ընդառաջ է գնում ու չի տեսնում նրան, դրա համար էլ կնճռոտվում է. իսկ հետո, երբ տեսնում է հեռվից, իսկույն պայծառանում է։

Մտածմունքի մեջ է ընկնում երեխան և շարունակ շուրջն է նայում, նա տեսնում է, թե ինչպես Անտիպը գնաց ջրի, իսկ գետնի վրա, նրա կողքից, գնում է մի ուրիշ Անտիպ, իսկականից տասն անգամ ավելի մեծ. տակառն էլ տան չափ է թվում, իսկ ձիու ստվերը ծածկել էր ամբողջ մարգագետինը. ստվերը միայն երկու քայլ արեց մարգագետնի վրա և միանգամից անցավ սարի ետև, այնինչ Անտիպը դեռ բակից չէր էլ դուրս եկել։

Երեխան էլ մի երկու քայլ արավ. մի քայլ ևս և նա կանցնի սարի էն կողմը։

Նա կուզենար գնալ դեպի սարը, տեսնելու, թե ինչ եղավ ձին։ Նա ուղղվեց դեպի դարբասը, բայց պատուհանից լսվեց մոր ձայնը։

— Դայա՛կ։ Չե՞ս տեսնում, որ երեխան վազեց արևի տակ։ Հով տեղ տար նրան. արևը գլխին կխփի կհիվանդանա, սիրտը կխառնի, էլ բան չի ուտի։ Այդպես թողնես՝ նա հոձորը կգնա։

— Օ՜ֆ, լկտվա՜ծ,— կամաց փնթփնթում է դայակը, քարշ տալով նրան դեպի պատշգամբը։

Նայում է երեխան և դիտում սուր ու մտառու հայացքով, թե ինչպե՛ս և ի՛նչ են անում չափահասները, ինչի են նվիրում նրանք առավոտը։

Ոչ մի աննշան բան, ոչ մի գիծ չի վրիպում երեխայի զննող ուշադրությունից. տան նիստուկացի պատկերն անջնջելի կերպով մխրճվում է նրա հոգու մեջ. ճկուն միտքը ներծծում է կենդանի օրինակները և անգիտակցաբար գծում իր կյանքի ծրագիրը՝ իրեն շրջապատող կյանքի համաձայն։

Չի կարելի ասել, թե առավոտն Օբլոմովների տանն իզուր էր անցնում։ Խոհանոցում կոտլետ և կանաչի ծեծող դանակների ձայնը նույնիսկ գյուղն էր հասնում։

Սպասավորների սենյակից լսվում էր ճախարակի վզզոցը և գեղջկուհու ցած, բարակ ձայնը. դժվար էր որոշել՝ լաց է լինում նա, թե հանպատրաստից երգում է թախծոտ մի երգ՝ առանց խոսքերի։

Հենց որ Անտիպը վերադարձավ, բակի զանազան անկյուններից տակառին մոտեցան կանայք և կառապանները՝ դույլերը, տաշտերն ու կժերը ձեռքներին։

Ահա մի պառավ կին շտեմարանից խոհանոց է տանում ամանով ալյուր և մեծ քանակությամբ ձու. ահա խոհարարը պատուհանից հանկարծ ջուր է դուրս թափում և թրջում Արապկային, որն ամբողջ առավոտ, աչքերը չհեռացնելով, նայում է պատուհանին, սիրալիր շարժելով պոչը և լպստելով դունչը։

Ինքը՝ ծերունի Օբլոմովն էլ առանց զբաղմունքի չէ։ Նա ամբողջ առավոտ նստած է պատուհանի առաջ և անվրեպ հետևվում է այն ամենին, ինչ կատարվում է բակում։

— Է՜յ, Իգնա՜շկա։ Ի՞նչ ես տանում, տխմա՜ր,— կհարցնի նա բակով անցնող սպասավորին։

— Դանակները տանում եմ սպասավորների սենյակը՝ սրելու,— պատասխանում է նա առանց բարձրանալու նայելու։

— Լա՜վ, տա՜ր, տա՜ր, բայց տես, լավ սրի, հա՜։

Հետո կկանգնեցնի գեղջկուհուն.

— Է՜յ, աղջի՜։ Աղջի՜։ Ո՞ւր էիր գնացել։

— Ներքնատուն, տեր իմ,— ասում է նա կանգնելով և ձեռքն աչքերի մոտ պահած՝ նայում է պատուհանին,— ճաշի համար կաթ բերելու։

— Դե, գնա՜, գնա՜,— պատասխանում էր բարձրը։— Բայց զգույշ կաց՝ կաթը չթափես։ Իսկ դո՛ւ, Զախարկա, թոկից փախած. էլի ո՞ւր ես վազում,— բղավում էր նա հետո։— Ես քեզ վազել ցույց կտամ։ Ես տեսնում եմ, որ դու արդեն երրորդ անգամն ես վազում։ Ետ կորի՛ր նախասենյակ։

Եվ Զախարկան գնում էր նախասենյակում նորից նիրհելու։

Կովերը գային դաշտից, ծերունին առաջինն էր, որ հոգում էր նրանց ջրելու մասին։ Պատուհանից տեսներ, որ շունը հալածում է հավին, իսկույն խիստ միջոցներ ձեռք կառներ անկարգությունների դեմ։

Նրա կինն էլ շատ է զբաղված. նա երեք ժամի չափ բացատրում է դերձակ Ավերկային, թե ինչպես ամուսնու ֆուֆայկայից Իլյուշայի համար բաճկոնակ դուրս բերի, ինքը գծում է կավճով և հսկում է, որպեսզի Ավերկան մահուդից չգողանա. հետո կանցնի կանանց բաժինը, կպատվիրի ամեն մի աղջկա, թե որքան ժանյակ պիտի գործի նա մի օրում. հետո կկանչի Նաստասյա Իվանովնային կամ Ստեպանիդա Ագապովնային, կամ իր շքախմբից մի ուրիշին՝ պարտեզում գործնական նպատակով իր հետ զբոսնելու, նայելու, թե ինչպես է լցվում-հասունանում խնձորը, երեկվանը, արդեն հասածը արդյոք վայր չի՞ ընկել, մի տեղ պատվաստել, մի տեղ հատել է պետք և այլն։

Բայց գլխավոր հոգսը խոհանոցն ու ճաշն էր։ Ճաշի մասին ամբողջ տնով էին խորհրդակցում. զառամյալ մորաքույրն էլ էր հրավիրվում խորհրդակցության։ Ամեն մեկն առաջարկում էր իր ճաշատեսակը. մեկը փորոտիքից ապուր, մեկը լապշա կամ ստամոքս, մեկը թափանախորտիկ, որը կարմիր, որը սպիտակ սոուսի համար։

Ամեն խորհուրդ հաշվի էր առնվում, կշռադատվում հանգամանորեն և ապա ընդունվում կամ մերժվում էր տանտիկնոջ վերջնական դատավճռով։

Անդադար խոհանոց էին ուղարկվում մերթ Նաստասյա Պետրովնան, մերթ Ստեպանիդա Իվանովնան՝ հիշեցնելու, որ ա՛յս ավելացնեն կամ ա՛յն փոխեն, կերակրի համար շաքար, մեղր, գինի տանեն և նայեն՝ արդյո՞ք խոհարարը բոլոր ուղարկածը գործ է ածում կերակրի մեջ, թե ոչ։

Օբլոմովկայում առաջին և գլխավոր կենսական հոգսը սննդի հոգսն էր։ Ի՞նչ հորթեր էին գիրացնում այնտեղ՝ տարեկան տոների համար։ Ի՞նչ թռչուններ էին սնուցանում։ Որքա՞ն նուրբ նկատառումներ, որքա՞ն հմտություն և հոգատարություն նրանց խնամելու համար։ Հնդուհավերն ու

ճտերը, որոնք հատկացվում էին անվանակոչության և այլ հանդիսավոր օրերի համար, գիրացվում էին ընկույզով. սագերին զրկում էին զբոսանքից, տոներից մի քանի օր առաջ հարկադրում էին անշարժ կախված մնալ տոպրակի մեջ, որ ճարպակալեն։ Ի՞նչ պաշար կար այնտեղ մուրաբաների, աղածոների, թխվածքների։ Ի՞նչ մեղրի օշարակներ, ի՞նչ կվասներ էին եփվում, ի՞նչ կարկանդակներ էին թխվում Օբլոմովկայում։

Եվ այսպես, մինչև կեսօր ամեն ինչ իրարանցման ու հոգսերի մեջ էր, ամեն ինչ ապրում էր այսպիսի լիակատար, մրջնային, այսպիսի նկատելի կյանքով։

Կիրակի և տոն օրերին էլ դադար չունեին այդ աշխատասեր մրջյունները. այդ ժամանակ դանակների թխկթխկոցը խոհանոցում ուժեղանում և ավելի հաճախակի էր դառնում։ Սպասավորուհին մի քանի անգամ էր ճանապարհորդություն կատարում շտեմարանից խոհանոց՝ ալյուրի և ձվերի կրկնակի քանակությամբ. թռչնանոցում հառաչանքն ու արյունահեղությունը շատանում էր։ Թխում էին հսկայական կարկանդակ, որն իրենք պարոնները երկրորդ օրն էլ էին ուտում. երրորդ և չորրորդ օրը մնացորդներն անցնում էին կանանց բաժինը։ Կարկանդակն իր գոյությունը պահպանում էր մինչև ուրբաթ, այնպես որ նրա միայն բոլորովին չոր կողը, առանց որևէ միջուկի, իբրև մի առանձին շնորհ, հասնում էր Անտիպին, որը երեսը խաչակնքելով, ճռճռոցով, անվեհերությամբ ջարդուփշուր էր անում այդ հետաքրքրական կարծրությունը, հաճույք ստանալով ավելի այն գիտակցությունից, որ աղայական կարկանդակ է ուտում, քան թե բուն կարկանդակից, ինչպես հնագետը, որը հաճույքով խմում է անպետք գինին որևէ հազարամյա անոթի կտորտանքից։

Իսկ երեխան ոչ մի բան բաց չթողնող իր մանկական խելքով շարունակ նայում ու շարունակ դիտում էր։ Նա տեսնում էր, թե ինչպես օգտակար և հոգսերով լի առավոտին հաջորդում էին կեսօրը և ճաշը։

Կեսօրը շոգ է։ Երկնքի երեսին ոչ մի ամպիկ չկա։ Արևն անշարժ կանգնած է գլխավերևում և խանձում է խոտը։ Օդի հոսանքը դադարել է և անշարժ կանգնած է։ Ո՛չ ծառը, ո՛չ ջուրը չեն շարժվում. գյուղի և դաշտի վրա տարածվում է

անվրդով խաղաղություն, կարծես ամեն ինչ մեռած լինի։ Ամայության մեջ մարդկային ձայնը լսվում է զիլ ու հեռու։ Բզեզի թռիչքն ու բզզոցը լսվում է քսան սաժեն տարածության վրա և խիտ խոտերի մեջ լսվում է ինչ-որ խոմփոց, կարծես մեկն այնտեղ ընկել ու քնել է քաղցր քնով։

Տանն էլ մեռելային լռություն տիրեց։ Հասավ ընդհանուր հետաճաշյա քնի ժամը։

Երեխան տեսնում է, որ և հայրը, և՛ մայրը, և՛ պառավ մորաքույրը, և՛ շքախումբը, բոլորը ցրվեցին իրենց անկյունները։ Իսկ ով անկյուն չուներ, գնում էր խոհանոց, մյուսը՝ պարտեզ, երրորդը զովություն էր որոնում սրահում, որն էլ գեմքը թաշկինակով ճանճերից ծածկելով՝ քնում էր տեղնուտեղը, որտեղ շոգը նրան թուլացրել և ծանր ճաշը գետնով էր տվել։ Պարտիզպանն էլ ձգվեց թփի տակ պարտեզում իր թագուշակի մոտ, և կառապանը քնեց պխոռում։

Իլյա Իլյիչը ներս նայեց սպասավորների սենյակը. այնտեղ բոլորը թափված-պառկոտած էին ո՛րը երկար նստարանների, ո՛րը հատակի վրա՝ սրահում թողնելով երեխաներին իրենց կամքին. երեխաները սողում էին բակում և փորփրում ավազը։ Շներն էլ քաշվել էին բների խորքը, ասենք՝ մարդ էլ չկար, որ վրան հաչեին։

Կարելի էր ողջ տունը անցնել ծայրեծայր և ոչ մեկի չհանդիպել. հեշտ էր ամեն ինչ հավաքել-գողանալ և սայլերով դուրս հանել բակից. ոչ ոք չէր խանգարի, եթե միայն գողեր լինեին այդ կողմերում։

Սա մի ամեն ինչ կլանող, անհաղթելի՝քուն էր, իսկական մահվան պես մի բան։ Ամեն ինչ մեռած է. միայն բոլոր անկյուններից լսվում է տարբեր ելևէջի և ներդաշնակության խոմփոց։

Երբեմն մեկը քնած տեղից հանկարծ բարձրացնում է գլուխը, անմիտ կերպով, զարմացած նայում է այս ու այն կողմ և շուռ գալիս մյուս կողքի վրա, կամ՝ առանց աչքերը բանալու, քնակոլոլ թքում է և շրթունքները չփչփացնելով կամ քթի տակին մի բան փնթփնթալով՝ նորից քնում։

Իսկ մի ուրիշը արագ, առանց որևէ նախապատրաստության, երկու ոտքով վեր է թռչում քնատեղից, կարծես վախենալով կորցնել թանկագին րոպեները, վերցնում է գավաթով կվասը, և փչելով երեսին լողացող ճանճերին, որպեսզի նրանք անցնեն մյուս կողմը,— որից մինչև այդ անշարժ ճանճերն սկսում են սաստիկ շարժվել, հուսալով մի քիչ լավացնել իրենց դրությունը,— թրջում է կոկորդը և ապա գնդակահարվածի պես նորից ընկնում անկողնի վրա։

Իսկ երեխան շարունակ դիտում էր ու դիտում։

Ճաշից հետո նա դայակի հետ նորից դուրս էր գալիս մաքուր օդ։ Բայց դայակն էլ, չնայելով տիրուհու խիստ պատվերներին և իր սեփական կամքին, չէր կարողանում դիմադրել քնի հմայքին։ Նա էլ վարակվում էր Օբլոմովկայում տիրող այդ համաճարակներով։

Սկզբում նա աչալուրջ հսկում էր երեխային, չէր թողնում, որ իրենից հեռու գնա, նրա կայտառության պատճառով խիստ փնթփնթում էր, հետո՝ զգալով մոտալուտ վարակման նշանները, սկսում էր խնդրել, որ դուրս չգնա դարպասից, ձեռք չտա այծին, չմագլցի աղավնատուն կամ պատշգամբ։

Ինքը նստում է որևէ հով տեղ՝ պատշգամբում, ներքնատան շեմին կամ ուղղակի խոտերի վրա, ըստ երևույթին, գուլպա գործելու և երեխային հսկելու համար։ Բայց շուտով թուլացած սաստում է նրան գլխի շարժումներով։

«Կբարձրանա, ա՜խ, անպատճառ կբարձրանա այդ հոլը,— մտածում է նա համարյա քնի միջից,— կամ... գուցե ձորակը»...

Այստեղ պառավի գլուխը թեքվում է ծնկների վրա, գուլպան ընկնում է ձեռքից։ Նա մանուկին կորցնում է տեսադաշտից ու, բերանը մի քիչ բաց, թեթև խոմփոց արձակում։

Իսկ երեխան անհամբերությամբ սպասում էր այդ վայրկյանին, որից սկսվում էր նրա ինքնուրույն կյանքը։

Նա կարծես մենակ էր ամբողջ աշխարհում. ոտքերի ծայրերի վրա հեռացավ դայակից, տնտղեց բոլորին, ով որտեղ է քնած. կանգ առավ, աչքերը հառած նայեց՝ ինչպես մեկը սթափվում, թքում է և երազում ինչ-որ մրթմրթում. հետո սիրտը թրթռալով բարձրացավ սրահ, պտույտ գործեց ճռնչացող տախտակների վրայով, մագլցեց աղավնատուն, մտավ պարտեզի խորքերը, ականջ դրեց բզեզի բզզոցին և դիտեց հեռու օդում նրա թռիչքը։ Ականջ դրեց, թե ինչպես մեկն

անդադար ճկճկում էր խոտերի մեջ, որոնց և գտավ այդ անդորրը խանգարողներին, բռնեց ճպուռին, պոկեց թևերը և նայեց, թե ինչ կլինի, կամ նրա մարմնի մեջ ծղոտ խրեց ու հետևեց, թե նա ինչպես է թռչում այդ հավելումով։ Հրճվանքով, շունչը պահած դիտում էր սարդին, թե ինչպես է նա ծծում բռնած ճանճի արյունը, ինչպես խեղճ զոհը դեսուդեն է ընկնում և բզզում նրա ճանկերում։ Եքեխան բանը վերջացրեց նրանով, որ սպանեց թե զոհին, թե տանջողին։

Այնուհետև նա մտավ առուն, փորփրեց-գտավ ինչ-որ արմատներ, մաքրեց կեղևը և մեծ բավականությամբ կերավ, գերադասելով մոր տված խնձորներից ու մուրաբայից։

Բակից էլ դուրս վազեց. կուզենար կեչուտը գնալ. նրան ջատ մոտ էր թվում այն, հինգ րոպեում կհասներ, ոչ թե ճանապարհով շրջան կատարելով, այլ ուղիղ առվի, ցանկապատերի և փոսերի վրայով. բայց վախենում էր. այնտեղ, ասում են, և չարքեր, և ավազակներ, և սարսափելի գազաններ կան։

Նա ուզում էր դեպի ձորակն էլ վազել. հեռավորությունը պարտեզից մոտ հիսուն սաժեն է. մանուկն արդեն հասել էր եզրին, կուլ էր տալիս աչքերը, ուզում էր նայել որպես հրաբխի խառնարանի... բայց հանկարծ նրա միտն ընկան բոլոր զրույցներն ու ավանդություններն այդ ձորակի մասին. սարսափը պատեց նրան, և նա ոչ մեռած, ոչ կենդանի, ետ փախավ ու երկյուղից դողալով՝ վազեց դեպի դայակը ու արթնացրեց պառավին։

Դայակը վեր թռավ քնից, ուղղեց գլխաշորը, մատով նրա տակ հավաքեց սպիտակ մազերի փնջերը և ձևացնելով, թե բոլորովին էլ քնած չի եղել, կասկածելով նայեց Իլյուշային, ապա բարինի տան լուսամուտներին, և դողդոջուն մատներով սկսեց ծնկների վրա ընկած գուլպայի ճաղերը բզել։

Այնինչ շոգն սկսեց կամաց-կամաց թուլանալ. բնության մեջ ամեն ինչ սկսեց կենդանանալ. արևն արդեն մոտեցել էր անտառին։

Տանն էլ քիչ-քիչ հանդարտվեց անդորրը. ինչ-որ տեղ դուռը ճռռաց, բակում ոտնաձայն լսվեց, խոտանոցում մեկը փռշտաց։

Տառան, ծանրությունից կուացած, խոհանոցից շուտով

բերեց ահագին ինքնաեռը։ Սկսեցին թեյի հավաքվել։ Մեկի դեմքն է ճմրթված ու աչքերն արտասվակալած, մյուսի այտին ու քունքին կարմրագույն բծեր են կազմվել, երրորդն էլ քնակոլոլ խոսում է օտարոտի ձայնով։ Բոլորը փնչում են, ախուվախ քաշում, հորանջում, գլուխը քորում և ճմլկոտում՝ դժվարությամբ ուշքի գալով։

Ճաշն ու քունն անհագ ծարավ էին առաջ բերել։ Ծարավն այրում էր կոկորդը. ամեն մեկը խմեց մոտ տասներկու բաժակ թեյ, բայց դա չօգնեց. լսվում է ախուվախ, հառաչանք. դիմում էին հապալասի, տանձի օշարակի, կվասի օգնությանը, ոմանք էլ նույնիսկ բժշկական միջոցների, միայն թե կարողանային շորությունը թրջել։

Բոլորն էլ ծարավից փրկություն էին որոնում, որպես մի աստվածային պատժից։ Բոլորը դեսուդեն ընկնում, բոլորը պապակվում էին, որպես Արաբիայի անապատում ճամփորդների քարավանից, որը ոչ մի տեղ աղբյուր չի գտնում։

Երեխան այստեղ է, մայրիկի մոտ. նա նայում է շրջապատող տարօրինակ դեմքերին, ականջ դնում նրանց քնաթաթախ ու թմրած խոսակցությանը։ Նրա համար զվարճություն է նրանց նայելը. նրանց ասած ամեն մի անմտություն հետաքրքրական է թվում նրան։

Թեյից հետո բոլորն էլ զբաղվում են որևէ բանով. մեկը գնում է գետափ և հանդարտ թափառում, ոտքով քարերը հրելով ջրի մեջ, մյուսը նստում է պատուհանի մոտ և հայացքով կլանում ամեն մի մոտանցիկ երևույթ. կատու անցնի բակով թե ճայեկը թռչի՝ դիտողը թե՛ սրան և թե՛ նրան հետևում է հայացքով և իր քթի ծայրով, գլուխը դարձնելով մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ։ Երբեմն շներն են այսպես սիրում արևկող արած նստել պատուհանի առաջ ամբողջ օրերով և ուշի-ուշով դիտել ամեն մի անցորդի։

Մայրն Իլյուշայի գլուխն առնում-դնում է ծնկներին և կամաց սանրում է մազերը, հիանալով նրանց նրբությամբ և հարկադրելով հիանալու թե՛ Նաստասյա Իվանովնային, թե՛ Ստեպանիդա Տիխոնովնային, ու զրուցում է նրանց հետ Իլյուշայի ապագայի մասին, նրան դարձնում իր հնարած որևէ փայլուն դյուցազներգության հերոս։ Նրանք էլ Իլյուշային ոսկե սարեր են գուշակում։

Բայց ահա սկսում է մթնել։ Խոհանոցում դարձյալ ճրթճրթում է կրակը, նորից լսվում է դանակների թխկթխկոցը. ընթրիք է պատրաստվում։

Ծառաները հավաքվել են դարբասի մոտ. այնտեղ հնչում է բալալայկան, լսվում է հոհոց։ Սպասավորները բռնելախաղ են խաղում։

Իսկ արևն արդեն իջնում էր անտառի ետև. նա արձակում էր մի քանի հազիվ տաք ճառագայթներ, որոնք բոցեղեն շերտով թափանցում էին ամբողջ անտառով՝ պայծառ ոսկեզօծելով մայրիների կատարները։ Այնուհետև ճառագայթները մարում էին մեկը մյուսի ետևից. վերջին ճառագայթը երկար էր մնում. այն բարակ ասեղի նման խրվել էր տերևների խտության մեջ. բայց դա էլ հանգավ։

Առարկաները կորցնում էին իրենց ձևը. ամեն ինչ ձուլվում դառնում էր նախ գորշ, ապա մթին զանգված։ Թռչունների երգն աստիճանաբար թուլանում էր. շուտով նրանք բոլորովին լռեցին, բացի մի կամակորից, որը կարծես հակառակ մյուս բոլորի, համատարած լռության մեջ, ընդհատումներով միապաղաղ ճկճկում էր, բայց ավելի ու ավելի հազվադեպ, և նա էլ, վերջապես, սուլեց թույլ, վերջին անգամ, թափահարեց՝ կամաց շարժելով տերևներն իր շուրջը... և քնեց։

Ամեն ինչ լռեց։ Միայն ծղրիդներն իրար հետ մրցելով՝ ավելի ուժգին էին ճկճկում։ Գետնից սպիտակ գոլորշի բարձրացավ և սփռվեց մարգագետնի ու գետի վրա։ Գետն էլ հանդարտվեց. քիչ անց նրա մեջ էլ հանկարծ մեկը ճողփաց վերջին անգամ, և գետն էլ անշարժացավ։

Խոնավություն զգացվեց։ Քանի գնում, այնքան ավելի մթնում էր։ Ծառերի խմբավորումները հրեշային կերպարանք ստացան. անտառն ահռելի դարձավ, ճռնչոց լսվեց, կարծես հրեշներից մեկը տեղափոխվեց մի այլ տեղ և չոր ճյուղերն ասես ճթճթացին նրա ոտքերի տակ։

Երկնքում կենդանի աչքի նման վառ պսպղաց առաջին աստղը, և տան պատուհաններում պլպլացին կրակները։

Հասան բնության ընդհանուր հանդիսավոր անդորրության բոլորները, այն բոպեները, երբ ստեղծագործող միտքն ավելի թափով է աշխատում, երբ ավելի կրքով են եռում բանաստեղծական խոհերը, երբ սրտի մեջ կիրքն ավելի աշխուժորեն է բռնկվում, կամ թախիծն ավելի ցավագին նվվում, երբ վայրագ հոգու մեջ հանցավոր մտքի հատիկն ավելի անվրդով ու ուժգին է սկսում հասունանալ, և երբ... Օբլոմովկայում բոլորն այնպես խորն ու հանգիստ են քնում։

— Գնանք, մայրիկ, ճբոսնենք,— ասում էր Իլյուշան։

— Ի՞նչ ես ասում, աստված չանի։ Հիմա ղբոսնե՞լ,— պատասխանում է մայրը,— խոնավ է, ոտիկներդ կմրսեցնես, և սարսափելի է. այժմ անտառում անտառոգին է ման գալիս. նա փախցնում է փոքր երեխաներին։

— Ո՞ւր է փախցնում։ Նա ի՞նչ տեսակ է լինում։ Որտե՞ղ է ապրում,— հարցնում է երեխան։

Եվ մայրն ազատություն էր տալիս իր անզուսպ երևակայությանը։

Երեխան աչքերը բացուխուփ անելով լսում էր նրան, մինչև վերջապես, քունը նրան բոլորովին կթուլացներ։ Գալիս էր դայակը և, վերցնելով նրան մոր ծնկներից, քնաթաթախ, գլուխն իր ուսին կախ՝ տանում էր անկողին։

— Ահա օրն էլ անցավ, և փառք աստծո,— ասում էին օբլոմովցիները անկողին մտնելով, տնքտնքալով և երեսներին խաչ հանելով։— Հաջողակ ապրեցինք. այսպիսի ապրուստ էգուց էլ տա աստված։ Փառք քեզ, տեր, փառք քեզ։

Այնուհետև Օբլոմովը երազում տեսավ մի այլ ժամանակ, ձմեռային անվերջ երեկոյին նա երկչոտությամբ սեղմվում է դայակին, իսկ սա փսփսալով պատմում է նրան ինչ-որ անծանոթ երկրի մասին, որտեղ ոչ գիշեր կա, և ոչ ցուրտ, որտեղ շարունակ հրաշքներ են կատարվում, որտեղ մեղրի և կաթի գետեր են հոսում, որտեղ տարին բոլոր ոչ ոք ոչինչ չի անում, այլ Իլյա Իլյիչի նման ջահելներ են զբոսնում օրնիբուն և այնպիսի գեղեցկուհիներ կան, որ ոչ հեքիաթներում են եղել, ոչ էլ գրչով կարելի է նկարագրել։

Այնտեղ կա նաև մի բարի կախարդուհի, որ մեզ մոտ երբեմն հայտնվում է գայլաձկան կերպարանքով, իր համար ընտրում որևէ սիրելի՝ հանդարտ, անշառ, ուրիշ խոսքով՝ որևէ ծույլի, որին բոլորը վիրավորում են, և ինքնաբերաբար նրա գլխին է թափվում զանազան բարիք, իսկ նա իր քեֆին ուտում է ու զուգվում պատրաստի հագուստով և ապա

ամուսնանում է ոմն չնաշխարհիկ գեղեցկուհու՝ Միլիտրիսա Կիրբիտևնայի հետ։

Երեխան, ականջներն ու աչքերը սրած, ամբողջովին հետաքրքրություն դարձած, ականջ էր դնում պատմությանը։

Դայակը կամ ավանդությունը այնպես վարպետորեն խուսափում էին պատմության մեջ այն բոլորից, ինչ իսկապես գոյություն ունի, որ երևակայությունն ու միտքը, տոգորվելով հերյուրանքով, արդեն մինչև ծերություն նրա ձեռքին ստրուկ էին մնում։ Դայակը բարեսրտությամբ պատմում էր Եմելյա-հիմարի հեքիաթը, այս չարամիտ ու նենգ երգիծանքը մեր պապերի, գուցե, նաև մոր մասին։

Հասակն առած Իլյա Իլյիչը թեև հետո իմանում է, որ մեղրի ու կաթի գետեր չկան, չկան բարի կախարդներ, թեև նա ժպտալով ծաղրում է դայակի զրույցները, բայց այդ ժպիտն անկեղծ չէ, նրան ուղեկցում է գաղտնի հառաչանքը. նրա մեջ հեքիաթը խառնվել է կյանքին, և նա երբեմն, անգիտակցաբար, վշտանում է, թե ինչու հեքիաթը կյանք չէ և կյանքը՝ հեքիաթ։

Նա ակամա երազում է Միլիտրիսա Կիրբիտևնայի մասին. նրան շարունակ քաշում է այն կողմը, որտեղ միակ գործն զբոսնելն է, որտեղ հոգս ու վիշտ չկա. նրա մեջ ընդմիշտ մնում է վառարանի վրա պառկելու, պատրաստ, չդատած հագուստով ման գալու և բարի կախարդուհու հաշվին ուտելու հակումը։

Թե՛ ծերունի Օբլոմովը, թե՛ պապը մանուկ հասակում լսել էին նույն հեքիաթները, որոնք դայակների և սպասավորների բերանով հնության ստերեոտիպ հրատարակությամբ անցել էին դարերի ու սերունդների միջով։

Այնինչ դայակը երեխայի երևակայության առաջ արդեն այլ պատկեր է նկարում։

Նա պատմում է նրան մեր Աքիլեսների և Ուլիսների սխրագործությունների մասին, Իլյա Մուրոմեցի, Դոբրինյա Նիկիտիչի, Ալյոշա Պոպովիչի կտրիճության մասին, Պոլկանիկայի, Կալիչիշչև անցորդի մասին, այն մասին, թե ինչպես նրանք շրջում էին Ռուսիայում, կոտորում էին անհավատների անհամար հրոսակախմբերը, մրցում էին, թե ով մի շնչում մի գավաթ օղի կխմի ու դեմքը չի թթվեցնի.

Հետո խոսում էր չար ավազակների մասին, քնած արքայադուստրերի, քարացած քաղաքների և մարդկանց մասին, վերջապես անցնում էր մեր դևաբանությանը, մեռելներին, հրեշներին ու մարդագելերին։

Նա Հոմերոսի պարզությամբ ու բարեհոգությամբ, մանրամասնությունների նույն կենսաթրթիռ հարազատությամբ և պատկերների ցցունությամբ, մանկան հիշողության ու երևակայության մեջ մտցնում էր ռուսական կյանքի Իլիականը, որ ստեղծել էին այն մշուշապատ ժամանակների մեր հոմերականները, երբ մարդը դեռևս չէր հաղթահարել բնության և կյանքի վտանգներն ու գաղտնիքները, երբ նա դողում էր և մարդագելերի, և անտառոգու առաջ, և Ալյոշա Պոպովիչի մոտ էր պաշտպանություն որոնում իրեն շրջապատող վտանգներից, երբ օդում, ջրում, անտառում ու դաշտում հրաշքներն էին թագավորում։

Սարսափելի և անհաստատ էր այն ժամանակվա մարդու կյանքը. դռան շեմքից դուրս գալը վտանգավոր էր նրա համար. մեկ էլ տեսար՝ գազանը կպատառոտի նրան, ավազակը կմորթի, չար թաթարը կխլի նրանից ամեն ինչ, կամ մարդ անլուր կկորչի, առանց որևէ հետքի։

Մեկ-մեկ էլ հանկարծ երկնային նշաններ կերևան՝ կրակե սյուներ ու գնդեր. կամ թարմ շիրմի վրա կրակ կբռնկի, կամ էլ անտառում ինչ-որ մեկն է զբոսնում լապտերով, սարսափելի հոհոում է և մթության մեջ աչքերը պսպղացնում։

Մարդու հետ էլ շատ անհասկանալի բաներ էին կատարվում. ապրում էր նա երկար ու լավ, ոչինչ չկար, բայց հանկարծ սկսում է գլխից դուրս տալ կամ օտարոտի ձայնով բղավել, կամ գիշերները քնկոտ թափառել. մի ուրիշը հանկարծ սկսում էր կծկվել և գետնով տալ իրեն։ Իսկ այդ բոլորից առաջ՝ հենց նոր հավը կանչեց աքաղաղի նման, և ագռավը կոկոցաց կտրի վրա։

Սարսափով շրջահայելով կյանքի մեջ, թույլ մարդը կորցնում էր գլուխը և երևակայության մեջ որոնում իրեն շրջապատող և իր սեփական բնության մեջ գտնվող գաղտնիքների բանալին։

Բայց, գուցե, քունը, թառամած կյանքի մշտնջենական խաղաղությունը և շարժման ու ամեն մի իրական երկյուղի,

արկածների ու վտանգների բացակայությունը հարկադրում էին մարդուն բնական աշխարհի մեջ ստեղծել մի ուրիշ, անիրական աշխարհ, և նրա մեջ որոնել սանձարձակություն ու զվարճություն պարապ երևակայության համար, կամ հանգամանքների սովորական կապակցության և երևույթի պատճառների լուծումը՝ բուն երևույթից դուրս։

Խարխափելով էին ապրում մեր խեղճ նախահայրերը. նրանք չէին թևավորում և չէին զսպում իրենց կամքը, իսկ հետո միամտորեն զարմանում կամ սարսափում էին անհարմարությունից, չարից, և բնության համար ու մթին հիերոգլիֆներից էին պատճառների մասին հարցուփորձ անում։

Նրանց մոտ մահը պատահում էր այն բանից, որ դրանից առաջ մեռելին տանից դուրս էին բերել ոչ թե ոտքերը, այլ գլուխը դեպի առաջ, հրդեհը՝ որ շունը երեք գիշեր ոռնում էր պատուհանի տակ։ Եվ նրանք աշխատում էին, որպեսզի մեռելին ոտքերը դեպի առաջ դուրս բերեն դռնից, իսկ ուտում էին նույնը կ նույնքան, առաջվա նման քնում էին լոկ խոտի վրա, ոռնացող շանը ծեծում էին կամ քշում բակից, իսկ մարխի կայծերն այնուամենայնիվ գցում էին փտած հատակի ճեղքերի մեջ։

Ու մինչև հիմա էլ ռուս մարդը՝ նրան շրջապատող խիստ. հերյուրանքներից զուրկ իրականության մեջ, սիրում է հպվատալ հնի հրապուրիչ ավանդույթներին և դեռևս, գուցե, երկար ժամանակ չի կարողանա հրաժարվել այդ հավատից։

Լսելով դայակից հեքիաթներ մեր ասկեգեղմի—Հազարան բլբուլի մասին, կախարդական ամրոցի արգելարանների ու գաղտնարանների մասին, մանուկը մերթ արիանում էր, երևակայելով իրեն սխրագործության հերոս, և նրա մեջքով սարսուռ էր անցնում, մերթ տանջվում էր քաջի անհաջողությունների համար։

Պատմությունները հետևում էին մեկը մյուսին։ Դայակը պատմում էր ավյունով, նկարչորեն, հրապուրվելով, տեղ-տեղ ոգևորված, որովհետև ինքն էլ կիսով չափ հավատում էր պատմություններին։ Պառավի աչքերը հուր էին առկայծում, գլուխը դողում էր հուզմունքից, ձայնը բարձրանում, անսովոր նոտաների էր հասնում։

Երեխան՝ անծանոթ սարսափով բռնված, արտասուքն աչքերին հպվում էր նրան։

Խոսքը լիներ մեռելների մասին, որոնք կեսգիշերին դուրս են գալիս գերեզմաններից, թե հրեշի մոտ գերության մեջ տանջվող զոհերի մասին, թե փայտե ոտքով արջի մասին, որը ման է գալիս ավաններում ու գյուղերում՝ որոնելու իր կորած բնական ոտքը, երեխայի մազերը սարսափից ճտճտում էին գլխին. մանկական երևակայությունը մերթ սառչում, մերթ եռում էր։ նա ապրում էր տանջող, քաղցր-հիվանդագին պրոցես։ Նյարդերը ձգվում էին լարերի նման։

Երբ դայակը մռայլ կրկնում էր արջի խոսքերը՝ «ճռնչա՛, ճռնչա՛, լորենի ոտք. ես ավաններով եմ անցել, գյուղով եմ անցել, բոլոր կանայք քնած են, մի կին քնած չէ, իմ մորթու վրա է նստած, իմ միսն է եփում, իմ բուրդն է մանում» և այլն, երբ արջը վերջապես մտնում էր խրճիթն ու պատրաստվում բռնել իր ոտքը հափշտակողին, երեխան չէր դիմանում. նա դողդողալով և ծղրտոցով ընկնում էր դայակի ձեռքերի վրա, աչքերից ցայտում էին Երկյուղի արցունքներ, և միաժամանակ հոհոում էր ուրախությունից, որ ինքը գազանի ճիրանների մեջ չէ, այլ պառկելատեղում, դայակի կողքին։

Տղայի երևակայությունը լցվել էր տարօրինակ ուրվականներով. ահն ու թախիծը բուն էին դրել նրա հոգու մեջ երկար ժամանակով, գուցեև ընդմիշտ։ Նա տխրությամբ իր շուրջն է նայում և շարունակ կյանքի մեջ տեսնում է վնաս, ազետ, շարունակ երազում է այն կախարդական երկրի մասին, որտեղ չկա չարիք, հոգս, վիշտ, որտեղ ապրում է Միլիտրիսա Կիրբիտևնան, որտեղ այնպես լավ կերակրում և հագցրնում են ձրիաբար...

Հեքիաթն Օբլոմովկայում ո՛չ միայն երեխաների, այլև Հասակավորների վրա մինչև կյանքի վերջը պահպանում էր իր իշխանությունը։ Բոլորը, թե՛ տանը և թե գյուղում, սկսած բարինից, նրա կնոջից, մինչև պնդակազմ դարբին Տարասը, մութ երեկոյին ինչ-որ բանից դողում են, ամեն մի ծառ այն ժամանակ փոխվում էր հսկայի, ամեն մի թուփ՝ ավազակային որջի։

Պատուհանի փեղկի թխկոցը և քամու ոռնոցը ծխնելուղում ստիպում էին գունատվել թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց,

թե՛ երեխաներին։ Ջրօրհնեքին երեկոյան ժամը տասից հետո ոչ ոք դուրս չի գա դարբասից. ամեն մեկը կվախենա զատկի գիշերը գնալ ախոռ՝ երկյուղ կրելով, որ այնտեղ տնային ոգու կհանդիպի։

Օբլոմովկայում հավատում էին ամեն ինչի՝ և՛ մարդագելերի, և՛ մեռելների։ Եթե պատմեն, թե խոտի դեզը ման էր դալիս դաշտում, նրանք առանց կասկածելու կհավատան. եթե մեկը լուր բաց թողնի, թե սա խոյ չէ, այլ ինչ-որ ուրիշ բան, կամ այսինչ Մարֆան կամ Ստեպանիդան վհուկ է, նրանք կսկսեն վախենալ և խոյից, և Մարֆայից. նրանց մտքով էլ չի անցնի հարցնել, թե ինչու խոյը դարձավ ոչ խոյ, իսկ Մարֆան դարձավ վհուկ, և դեռ կհարձակվեն նրա վրա, ով կփորձեր տարակուսել այն բանի մասին. այնքան ուժեղ է Օբլոմովկայում հավատը դեպի հրաշքը։

Իլյա Իլյիչը հետագայում կտեսնի էլ, որ աշխարհը պարզ է կառուցված, որ մեռելները գերեզմաններից դուրս չեն գալիս, որ հսկաներին, հենց երևան գան, իսկույն բալագան են գնում, իսկ ավազակներին՝ բանտ։ Բայց եթե կորչում էլ է բուն հավատը դեպի ուրվականները, այն ժամանակ մնում է երկյուղի և անբացատրելի թախիծի մի նստվածք։

Իլյա Իլյիչն իմացավ, որ հրեշներից դժբախտություն չկա, իսկ թե ինչպիսիները կան, հազիվ թե գիտե, և ամեն քայլափոխի շարունակ ինչ-որ սարսափելի բանի է սպասում ու վախենում։ Եվ դեռ այժմ էլ, մութ սենյակում մնալիս կամ մեռել տեսնելիս, նա դողում է մանուկ հասակում հոգու մեջ ընկած շարագուշակ թախիծից. առավոտյան ծիծաղելով իր վախի վրա՝ նա նորից գունատվում է երեկոյան։

Այնուհետև, Իլյա Իլյիչը հանկարծ իրեն տասներեք-տասնչորս տարեկան տղա տեսավ։

Նա արդեն սովորում էր Վերխլյովո գյուղում, Օբլոմովկայից մոտ հինգ վերստ հեռու, այնտեղի կառավարիչ՝ գերմանացի Շտոլցի մոտ, որը շրջակայքի ազնվականների երեխաների համար մի փոքրիկ պանսիոն էր հիմնել։

Նա ինքն էլ մի որդի ուներ, Անդրեյ անունով։ Օբլոմովին հասակակից. նրան մի տղա էլ էին տվել, որը գրեթե երբեք չէր սովորում, այլ ավելի շատ տառապում էր գեղձախտով, ամբողջ մանկությունն անց էր կացնում շարունակ փաթաթված աչքերով կամ ականջներով և միշտ կամացուկ լալիս էր այն բանի համար, որ տատի մոտ չի ապրում, այլ օտար տանը, շարագործների մեջ, և որ իրեն ոչ մի փայփայող էլ չկա և ոչ ոք նրա սիրած կարկանդակը չի թխի։

Բացի այս երեխաներից՝ ուրիշներ դեռ չկային պանսիոնում։

Ճար չկար, հայրն ու մայրը երես առած Իլյուշայի ձեռքը գիրք տվեցին։ Է՛լ արտասուքներ, է՛լ հեծկլտոցներ, քմահաճույքներ։ Վերջապես տարան։

Գերմանացին բանիմաց ու խիստ մարդ էր, ինչպես համարյա բոլոր գերմանացիները։ Գուցե Իլյուշան կարողանար նրա մոտ որևէ բան լավ սովորել, եթե Օբլոմովկան հինգ հարյուր վերստաչափ հեռու չլիներ Վերխլյովոյից։ Դե, արի՛ ու սովորի։ Օբլոմովյան մթնոլորտի, կենսաեղանակի և սովորությունների հմայքը տարածվում էր նաև Վերխլյովոյի վրա. չէ՞ որ նա էլ մի ժամանակ Օբլոմովկա էր եղել։ Այնտեղ, բացի Շտոլցի տնից, ամեն ինչ շնչում էր նույն նախնադարյան ծուլությամբ, բարիքի պարզությամբ, անդորրությամբ ու անշարժությամբ։

Երեխայի միտքն ու սիրտը լցվել էին այդ կենցաղի բոլոր պատկերներով, տեսարաններով ու բարքերով՝ նախքան նա կտեսներ առաջին գիրքը։ Իսկ ո՞վ գիտե, որքան շուտ է սկսվում մանկան ուղեղում մտավոր հատիկի զարգացումը։ Ինչպե՞ս հետամուտ լինես մանկան հոգու մեջ ծնվող առաջին հասկացողություններ ու տպավորությունների ծագմանը։

Գուցե, երբ մանուկը դեռ հազիվ բառեր էր արտասանում, գուցեև դեռ բոլորովին էլ չէր արտասանում, մինչև անգամ դեռ ման չէր գալիս, այլ միայն ամեն ինչին նայում էր այն սևեռուն համ մանկական հայացքով, որը հասակավորները բութ են անվանում, նա արդեն տեսնում ու կռահում էր իրեն շրջապատող միջավայրի երևույթների նշանակությունն ու նրանց կապը, բայց միայն այդ բանը չէր խոստովանում ո՛չ իրեն, ոչ էլ ուրիշներին։

Գուցե Իլյուշան արդեն վաղուց նկատում և հասկանում էր, թե ի՛նչ են խոսում և անում նրա մոտ. ինչպես նրա հայրիկը պլիսե անդրավարտիքով, դարչնագույն մահուդե բամբակած բաճկոնով, ամբողջ օրը հենց միայն այն է անում, որ ձեռ-

քերը քամակին դրած՝ անկյունից անկյուն է անցնում, քթաձ խոտ է քաշում ու խնչում, իսկ մայրիկը սուրճից անցնում է թեյի և թեյից ճաշի, որ ծնողը մտքովն էլ չի անցկացնի ստուգել, թե քանի բարդ է հնձած և պատժել զանցառության համար, բայց հապա փորձիր նրան ուշ տալ թաշկինակը, նա աղաղակ կբարձրացնի անկարգությունների համար և ամբողջ տունը գլխիվայր շուռ կտա։

Գուցե նրա մանկական միտքը վաղուց վճռել էր, որ այսպես և ոչ թե ուրիշ կերպ պետք է ապրել, ինչպես ապրում են նրա շուրջ հասակավորները։ Եվ ուրիշ ի՞նչ կերպ կհրամայեք նրան վճռել։ Բայց ինչպե՞ս էին ապրում Օբլոմովկայում հասակավորները։

Նրանք հարց տալի՞ս էին իրենց՝ ինչի համար է տրված կյանքը։ Աստված գիտե։ Եվ ինչպե՞ս էին պատասխանում հարցին։ Հավանորեն՝ ոչ մի կերպ. այս բանը նրանց շատ հասարակ ու պարզ էր թվում։

Նրանք չէին էլ լսել այսպես կոչված բազմաշխատ կյանքի մասին, այն մարդկանց մասին, որոնք իրենց կրծքի մեջ մաշող հոգսեր են կրում, որոնք երկրի երեսին, չգիտես ինչու, անկյունից անկյուն են ընկնում կամ կյանքը տալիս են մշտնջենական, անվերջանալի աշխատանքին։

Օբլոմովցիներն այնքան էլ չէին հավատում նաև հոգեկան տագնապներին. կյանք չէին համարում ինչ-որ տեղ, ինչ-որ բանի ուղղված հավիտենական ձգտումների շրջապտույտը. կրակի պես վախենում էին կրքերով տարվելուց. և ինչպես ուրիշ տեղ մարդկանց մարմինն արագ այրվում էր ներքին, հոգեկան կրակի հրաբխային աշխատանքից, այնպես էլ օբլոմովցիների հոգին խաղաղ, անարգել թաղվում էր փափուկ մարմնի մեջ։

Կյանքը նրանց, ինչպես ուրիշներին, չէր խարանում ո՛չ վաղաժամ կնճիռներով, ո՛չ բարոյական քայքայիչ հարվածներով ու հիվանդություններով։

Բարի մարդիկ կյանքը հասկանում էին ոչ այլ կերպ, բայց եթե իբրև իդեալ հանգստի ու անգործության, որ ժամանակ առ ժամանակ խախտվում էր զանազան անդուրեկան պատահարներով, ինչպես՝ հիվանդություններով, վնասներով, գժտություններով և, իմիջիայլոց, աշխատանքով։

Նրանք աշխատանքը հանդուրժում էին որպես պատիժ՝ դրված դեռևս մեր նախահայրերի վրա, բայց սիրել չէին կարող և, երբ հնարավոր էր լինում, միշտ նրանից ազատվում էին, գտնելով դա հնարավոր և հարկավոր։

Նրանք երբեք իրենց չէին խոովում մշուշոտ մտավոր ու բարոյական հարցերով. այս պատճառով միշտ ծաղկուն առողջություն և ուրախություն ունեին, այս պատճառով այնտեղ երկար էին ապրում։ Քառասունամյա տղամարդիկ նման էին պատանիների. ծերերը ծանր, տանջող մահվան հետ չէին պայքարում, այլ ապրելով մինչև անհնարինություն, մեռնում էին կարծես թե գաղտագողի, հանդարտ սառելով և աննկատելի կերպով փչելով վերջին շունչը։ Այս պատճառով էլ ասում են, թե առաջ մարդիկ ավելի դիմացկուն էին։

Այո՛, իրոք որ դիմացկուն էին. առաջ չէին շտապում երեխային հասկացնելու կյանքի նշանակությունը և նրան կյանքի, որպես ինչ-որ խորիմաստ լուրջ բանի պատրաստելու. չէին հոգնեցնում նրան գրքերով, որոնք գլխում ծնեցնում են անհամար հարցեր, իսկ հարցերը կրծում են միտքն ու սիրտը և կրճատում կյանքը։

Կյանքի նորման պատրաստ էր և դա նրանց տվել էին ծնողները, սրանք էլ նույնպես պատրաստ ստացել էին պապից, իսկ պապը՝ նախապապից՝ այդ նորմայի ամբողջությունը և անձեռնմխելիությունը Վեստայի կրակի նման պահպանելու ավանդով։ Ինչպես որ բանն արվում էր պապերի և հայրերի ժամանակ, այնպես էլ Իլյա Իլյիչի հոր օրոք, այնպես էլ, գուցե, արվում է հիմա էլ Օբլոմովկայում։

Էլ նրանք ինչի՞ մասին պիտի մտածեին և ինչո՞վ հուզվեին, ի՞նչ իմանային, ի՞նչ նպատակների հետամտեին։

Ոչինչ պետք չէ. կյանքը հանդարտ գետի նման հոսում էր անցնում նրանց մոտով. նրանց մնում էր միայն նստել այդ գետի ափին և դիտել անխուսափելի երևույթները, որոնք հերթով, առանց կանչելու, կանգնում էին նրանցից յուրաքանչյուրի առաջ։

Եվ ահա քնած Իլյա Իլյիչի երևակայության առաջ, նույնպես հերթով, կենդանի պատկերների նման, սկսեցին բացվել նախ կյանքի երեք գլխավոր գործողությունները, որ խաղաց-

վել են ինչպես նրանց ընտանիքում, այնպես էլ ազգական-ների և ծանոթների մոտ՝ ծնունդ, հարսանիք, թաղում։

Այնուհետև անցնում է նրա ուրախ և տխուր ստորաբաժա-նումների՝ մկրտության, անվանակոչության, ընտանեկան տոների, բարեկենդանի, թաթախման, աղմկալի ճաշերի, ազգակցական հավաքույթների, ողջույնների, շնորհավորանք-ների, պաշտոնական արտասուքների ու ժպիտների խայտա-բղետ թափորը։

Ամեն ինչ կատարվում էր այնպե՞ս ճշգրիտ, այնպե՞ս վայելչակերպ ու հանդիսավոր։

Նրա առաջ պատկերանում էին նույնիսկ ծանոթ անձեր և նրանց դեմքերի արտահայտությունը զանազան ծեսերի ժամանակ, նրանց հոգատարությունն ու նրանց իրարանցումը։ Տվեք նրանց որպիսի փափուկ խնամախոսություն կուզեք, որպիսի հանդիսավոր հարսանիք կամ անվանակոչություն կուզեք՝ կկատարեն բոլոր կանոններով, առանց ամենափոք-րիկ զանցառության։ Ում որտեղ նստեցնել, ինչպես մատուցանել, արարողության ժամանակ ով ում հետ գնա, պատշաճ նշանները պահպանել, այս բոլորի մեջ Օբլոմով-կայում ոչ ոք երբեք ամենափոքրիկ սխալ չէր կատարում։

Այնտեղ երեխա խնամե՞լ չգիտեն։ Բավական է միայն նա-յել, թե ինչպե՞ս վարդագույն և տառուզ կուպիդոններ են տա-նում կամ իրենց հետ ման ածում այնտեղի մայրերը։ Նրանք աշխատում են, որ երեխաները լինեն հաստլիկ, սպիտակ և առողջ։

Նրանք կհրաժարվեն գարնանից, ճանաչել անգամ չեն ուզենա այն, եթե գարնանամուտին արտույտ չխորովեն։ Ինչ-պե՞ս կարելի է, որ նրանք չգիտենան և չկատարեն դա։

Սրա մեջ է նրանց ամբողջ կյանքն ու գիտությունը, այս-տեղ է նրանց բոլոր վշտերն ու ուրախությունները. այս պատ-ճառով նրանք իրենցից հեռացնում են ամեն մի ուրիշ հոգս ու վիշտ և ուրիշ ուրախություն չեն ճանաչում։ Նրանց կյանքը լեփ-լեցուն է բացառապես այս արմատական և անխուսա-փելի անցքերով, որոնք և անվերջ սնունդ էին տալիս նրանց մտքին ու սրտին։

Նրանք հուզմունքից թրթռացող սրտով սպասում էին ծեսի, խնջույքի, արարողության և ապա՝ մարդուն մկրտելուց,

ամուսնացնելուց և թաղելուց հետո մոռանում էին մարդուն իրեն և նրա վիճակը ու ընկղմվում էին սովորական անզգա-ության մեջ, որից նրանց դուրս էր բերում նույնպիսի մի նոր գեպք՝ անվանակոչություն, հարսանիք և այլն։

Հենց երեխան ծնվում էր, ծնողների առաջին հոգսն էր լինում, որքան կարելի է ճշգրիտ, առանց ամենափոքրիկ զանցառությունների, նրա վերաբերմամբ կատարել պատշա-ճության պահանջած բոլոր ծեսերը, այսինքն՝ մկրտությունից հետո խնջույք սարքել. այնուհետև սկսվում էր նրա հոգատար խնամքը։

Մայրն իր ու դայակի խնդիրն էր դարձնում՝ սնել առողջ երեխա, պաշտպանել նրան մրսելուց, չար աչքից և ուրիշ թշնամական հանգամանքներից։ Ցառանդով հոգում էին, որ երեխան միշտ ուրախ լինի և շատ ուտի։

Հազիվ միայն ոտքի էին կանգնեցնում ջահելին, այսին-քն՝ երբ դայակն այլևս նրան պետք չէ, մոր սիրտն արդեն ցանկություն էր սողոսկում՝ նրա համար ընկերուհի գտնել, նույնպես որքան կարելի է առողջ, որքան կարելի է կար-միր։

Նորից գալիս էր ծեսերի, խնջույքների շրջանը, և վեր-ջապես, հարսանիքը. սրա վրա էլ կենտրոնանում էր կյանքի ամբողջ խանդավառությունը։

Այնուհետև արդեն սկսվում էին կրկնությունները. երեխա-ների ծնունդը, ծեսերը, խնջույքները, մինչև որ թաղումները կփոխեն դեկորացիաները, բայց ոչ երկար ժամանակով. ոմանք իրենց տեղը զիջում են մյուսներին, մանուկները դառ-նում են պատանիներ և միաժամանակ փեսացուներ, ամուս-նանում են, արտադրում են իրենց նմաններին,— և այսպես այս ծրագրով կյանքը ձգվում է անընդհատ միանման հյուս-վածքով, աննշմարելի կերպով կտրվելով հենց գերեզմանի մոտ։

Ճիշտ է, երբեմն նրանց վզին փաթաթվում էին նաև այլ հոգսեր, բայց օբլոմովցիները մեծ մասամբ նրանց հանդի-պում էին ստոյիկյան անշարժությամբ, և հոգսերը՝ պտտվելով նրանց գլխին, սլանում-անցնում էին նրանց կողքից, ինչպես թռչուններ, որոնք մոտ են թռչում հարթ պատին և, ապաս-

տանելու տեղ չգտնելով, ամուր քարի մոտ իզուր թափահարում են թևերը և հեռու թռչում։

Այսպես, օրինակ, մի անգամ պատշգամբի մի մասը հանկարծ խորտակվեց և փլատակների տակ թաղեց Թուխսին՝ ճուտերի հետ. պիտի տուժեր նաև Անտիպի կին Ակսինյան, որն ուզում էր նստել պատշգամբի տակ գործ անելու, բայց այդ ժամանակ իր բախտից գնաց վուշ բերելու։

Տանը աղմուկ բարձրացավ. մեծ ու փոքր բոլորը մոտ վազեցին և զարհուրեցին, երևակայելով, որ Թուխսի և ճուտերի փոխարեն այստեղ կարող էր մանգալիս լիներ ինքը տիրուհին՝ Իլյա Իլյիչի հետ։

Բոլորն ախ քաշեցին և սկսեցին մեկը մյուսին կշտամբել, թե ինչպես վաղուց չեն մտածել՝ մեկը հիշեցնի, մյուսը հրամայի նորոգել և երրորդը՝ նորոգի։

Բոլորը զարմանում էին, որ պատշգամբը փուլ եկավ, իսկ նախորդ օրը զարմանում էին, թե ինչպես է, այսքան երկար ժամանակ կանգուն է մնում։

Սկսվեցին հոգսեր ու խոսակցություններ, թե ինչպես ուղղեն բանը. ցավեցին Թուխսի ու ճտերի համար և դանդաղ ցրվեցին իրենց տեղերը, խստիվ արգելելով՝ պատշգամբում նստեցնել Իլյա Իլյիչին։

Այնուհետև, մի շաբաթ հետո, հրամայեցին Անդրյուշկային, Պետրուշկային, Վասկային՝ փուլ եկած տախտակներն ու ճաղերը քարշ տալ դեպի սրահը, որպեսզի դրանք թափված չլինեն ճանապարհի վրա։ Այստեղ դրանք ընկած մնացին մինչև գարուն։

Մերունի Օբլոմովն ամեն անգամ, երբ պատուհանից տեսնում էր դրանք, իսկույն հոգատարվում էր նորոգելու մտքով. կանչում էր ատաղձագործին, սկսում էր խորհրդակցել, թե ինչպես լավ կլինի անել. նոր պատշգամբ շինել, թե՞ մնացածն էլ քանդել։ Հետո տուն էր ուղարկում նրան՝ ասելով.

— Գնա բանիդ, իսկ ես դեռ կմտածեմ։

Սա տևեց այնքան, մինչև Վասկան թե Մոտկան հաղորդեց բարինին, որ այ, երբ ինքը՝ Մոտկան, այս առավոտ բարձրացել էր պատշգամբի մնացորդների վրա, տեսել էր, որ անկյունները բոլորովին բաժանվել են պատերից և մեկ էլ տեսար՝ նորից փուլ կգան։

Այն ժամանակ ատաղձագործին կանչեցին վերջնական խորհրդակցության, որի հետևանքով որոշվեց պատշգամբի կանգուն մնացած մասին առայժմ նեցուկ տալ հին փայտի կտորներով, որ և արվեց նույն ամսի վերջին։

— Է՜հ, կասես թե պատշգամբն էլի նորից կբանի,— ասաց — ծերունին կնոջը։— Տես, Ֆեդոտն ինչ գեղեցիկ է շարել դերանները, կարծես ազնվականության պարագլխի տան սյունաշարք լինի։ Այ, հիմա լավ եղավ, էլի երկար կդիմանա։

Մեկը հիշեցրեց նրան, թե իդեպ, լավ կլիներ ուղղել նաև դարպասը, նորոգել պատշգամբը, ապա թե ոչ՝ աստիճանների արանքով ոչ միայն կատուները, այլև խոզերն են մտնում նկուղը։

— Այո, այո, պետք է,— հոգատարությամբ պատասխանում էր Իլյա Իվանովիչը և իսկույն գնում էր զննելու պատշգամբը։

— Իսկապես, տեսնո՜ւմ ես, թե ինչպես է բոլորովին խախտացել,— ասում էր նա՝ ոտներով օրորոցի նման ճոճելով պատշգամբը։

— Դե, սա հենց նոր շինած ժամանակ էլ շարժվում էր,— նկատեց մեկը։

— Հետո՞ ինչ, որ շարժվում էր,— պատասխանում էր Օբլոմովը։— Ա՜յ, տե՛ս, որ փուլ եկավ, չնայած, որ տասնվեց տարի կանգուն է առանց նորոգելու։ Այն ժամանակ Լուկան հիանալի՜ շինեց...Ի՜նչ ատաղձագործ էր... մեռավ, աստվա՜ծ ողորմի հոգուն։ Հիմա երես են առել. էլ այնպես չեն շինի։

Եվ նա աչքերը դարձնում էր ուրիշ կողմ, իսկ պատշգամբը, ասում են, մինչև այժմ էլ շարժվում է և դեռևս փուլ չի եկել։

Երևում է, իսկապես որ հիանալի ատաղձագործ է եղել այդ Լուկան։

Պետք է, սակայն, արդարացի լինել տերերի նկատմամբ— երբեմն դժբախտության կամ անհարմարության դեպքում նրանք շատ են անհանգստանում, մինչև անգամ տաքանում են և բարկանում։

Ինչպե՞ս կարելի է բարձիթող անել կամ մոռացության տալ այս կամ այն բանը։ Իսկույն պետք է միջոցներ ձեռք առնել։ Եվ խոսում են միայն այն մասին, թե ինչպես մի կերպ

կամուրջը նորոգեն կամ ցանկապատեն պարտեզը մի տեղում, որ անասունները ծառերը չփչացնեն, որովհետև ցանկապատի մի մասը մի տեղում բոլորովին պառկած է գետնին։

Իլյա Իվանովիչն իր հոգատարությունը հասցրեց նույնիսկ մինչև այն տեղը, որ մի անգամ, պարտեզում զբոսնելիս, տնքալով և ախ ու վախ անելով, սեփական ձեռքերով բարձրացրեց ցանկապատը և պարտիզպանին հրամայեց շուտով երկու ձող դեմ տալ։ Օբլոմովի այս տնօրինության շնորհիվ ցանկապատն ամբողջ ամառն այսպես կանգուն մնաց և միայն ձմեռը ձույնը նրան նորից վայր գցեց։

Վերջապես բանը նույնիսկ այնտեղ հասավ, որ կամուրջի վրա երեք նոր տախտակ դրին իսկույն, հենց որ Անտիպը ձիու և տակառի հետ միասին կամուրջից առուն ընկավ։ Նրա ջարդվածքները դեռ չէին լավացել, բայց կամուրջն արդեն նորոգված էր։

Ցանկապատի նորից ընկնելուց հետո պարտեզում կովերի ու այծերի բերանը էլ շատ բան չընկավ. նրանք կերան միայն հաղարջի թփերը և սկսեցին կեղևահան անել տասներորդ լորենին, իսկ խնձորենիներին չհասան էլ, երբ կարգադրություն եղավ՝ ինչպես հարկն է կանգնեցնել ցանկապատը և մինչև անգամ երկու կողմից առու փորել։

Գործի վրա բռնված երկու կովն ու այծն էլ լավ տուժեցին. հիանալի դնքսեցին կողերը։

Իլյա Իլյիչը դարձյալ տեսնում է երազում ծնողական տան մեծ խավար ընդունարանը, հնադարյան հացենի բազկաթոռներով, որոնք մշտապես ծածկոցապատ են. այնտեղ դրված է նաև ահագին, անշնորհք և կոշտ բազմոցը՝ պատած գունաթափ երկնագույն կեղտոտ թավիշով, այլև մի մեծ կաշվե բազկաթոռ։

Գալիս է ձմեռային երկար երեկոն։

Մայրը ծալապատիկ նստած է բազմոցին և ծուլորեն երեխայի գուլպա է գործում, մերթընդմերթ հորանջելով և շյուղով գլուխը քորելով։

Նրա մոտ նստած են Նաստասյա Իվանովնան և Պելագեյա Իգնատևնան, և քթները խրած աշխատանքի մեջ՝ չանասիրությամբ մի բան են կարում տոնի առթիվ Իլյուշայի, նրա հոր կամ հենց իրենց համար։

Հայրը, ձեռքերը ետևին դրած, կատարյալ գոհունակության մեջ, գնում-գալիս է սենյակում, կամ նստում է բազկաթոռի մեջ, և, մի քիչ նստած մնալով, սկսում է նորից մտան գալ, ուշադրությամբ ականջ դնելով սեփական քայլերի ձայնին։ Հետո քթախոտ է քաշում, խնչում է և նորից քաշում։

Սենյակում աղոտ վառվում է մի ճարպե մոմ, այդ էլ թույլ էր տրվում միայն ձմեռային և աշնանային գիշերներին։ Ամառային ամիսներին բոլորն աշխատում էին պառկել և վեր կենալ առանց մոմի, ցերեկվա լույսով։

Դա արվում էր մասամբ ըստ սովորության, մասամբ՝ խնայողությունից։

Ամեն մի իրի նկատմամբ, որ տանը չէր արտադրվում, այլ գնում էին, օբլոմովցիները ծայրաստիճան ժլատ էին։

Նրանք սրտաբաց կերպով հյուրի գալստյան առթիվ կմորթեին լավագույն հնդուհավը կամ մի դյուժին ճուտ, բայց կերակրի մեջ մի ավելորդ չամիչ չեն դնի և կգունատվեն, երբ նույն հյուրը ինքնագլուխ կերպով իր բաժակը գինի լցնի։

Սակայն, այսպիսի ապականություն այնտեղ համարյա չէր պատահում. այսպիսի բան գուցե կանի որևէ թոկից փախած, ընդհանուրի կարծիքով՝ կորած մարդ. այդպիսի հյուրին բակն էլ չեն թողնի։

Ո՜չ, բարքերն այդպես չէին այնտեղ. հյուրն այնտեղ, նախքան եռակի հրավերը, ոչ մի բանի ձեռք էլ չի տա։ Նա շատ լավ գիտե, որ մի անգամ հրավիրելը հաճախ իր մեջ պարունակում է առաջարկված խորտիկից կամ գինուց հրաժարվելու, քան այն ճաշակելու խնդիրը։

Ամեն մեկի համար էլ երկու մոմ չեն վառի. մոմը գնում էին քաղաքում՝ փողով և, ինչպես բոլոր գնած իրերը, պահվում էր տանտիրուհու փակի տակ։ Կիսայրված մոմերի մնացորդները խնամքով հաշվվում և պահվում էին։

Առհասարակ այնտեղ փող ծախսել չէին սիրում, և որքան էլ անհրաժեշտ իր լիներ, փողը մեծ ափսոսանքով էր տրվում, այն էլ այն դեպքում, երբ ծախսն աննշան էր։ Իսկ խոշոր ծախսերն ուղեկցվում էին հառաչանքով, լաց ու կոծով ու հայհոյանքով։

Օբլոմովցիներն ավելի լավ էին համարում ամեն անհար-

մարություն կրել, մինչև անգամ վարժվել էին գրանք անհարմարություն չհամարել, քան փող ծախսել։

Սա է պատճառը, որ ընդունարանի բազմոցը շատ վաղուց ամբողջովին ծածկված էր բծերով, սա է պատճառը, որ Իլյա Իվանովիչի կաշվե բազկաթոռը կոչվում է միայն կաշվե, բայց իրոք նա ոչ այն է՝ ճիլոպից է, ոչ այն է՝ թոկից. միայն մեջքին է մի կտոր կաշի մնացել, իսկ մնացածն արդեն հինգ տարի է, ինչ քրքրվել ու թափվել է։ Գուցե սա է պատճառը նույնի է, ինչ քրքրվել ու թափվել է։ Գուցե սա է պատճառը նույնպես, որ բոլոր դարբասները ծռված են և պատշգամբը երերվում է։ Բայց վճարել որևէ, թեկուզ ամենաանհրաժեշտ բանի համար միանգամից երկու, երեք, հինգ հարյուր ռուբլի՝ նրանց դա սպանություն էր թվում։

Լսելով, որ շրջակայքի երիտասարդ կալվածատերերից մեկը գնացել է Մոսկվա և այնտեղ վճարել մի դյուժին շապկին երեք հարյուր ռուբլի, քսանհինգ ռուբլի կոշիկներին և քառասուն ռուբլի հարսանեկան ժիլետին, ծերունի Օբլոմովը երեսը խաչակնքեց և, սարսափի արտահայտությունը դեմքին, արագ-արագ վրա բերեց, թե «այդպիսի զուշաղին բանտ պետք է նստեցնել»։

Առհասարակ նրանք խուլ էին կապիտալների արագ և կենդանի շրջանառության անհրաժեշտության, մթերքների ուժեղացրած արտադրողականության ու փոխանակման քաղաքաքանտեսական ճշմարտությունների վերաբերմամբ։ Նրանք հոգու պարզությամբ հասկանում և ի կատար էին ածում կապիտալների միայն մեկ գործադրությունը՝ անգործում պահելը։

Ընդունարանում բազկաթոռների մեջ զանազան դիրքերով նստած՝ փնչացնում են տան բնակիչները կամ սովորական այցելուները։

Խոսակիցների միջև մեծ մասամբ խորին լռություն է տիրում. բոլորն էլ ամեն օր տեսնվում են իրար հետ. մասավոր գանձերը փոխադարձաբար սպառված և հետախուզված են, իսկ դրսից նորություններ քիչ են ստացվում։

Անդորր է. լսվում է միայն Իլյա Իվանովիչի տանը կարած ծանր կոշիկների խուլ ձայնը, մեկ էլ պատյանի մեջ դրված պատի ժամացույցի ճոճանակն է խուլ չիկչիկում և Պելագեյա Իվանովնայի կամ Նաստասյա Իվանովնայի ժամանակ առ ժամանակ ձեռքով կամ ատամով կտրած թելն է խախտում խորին անդորրը...

Այսպես երբեմն անցնում էր կես ժամ, երբ միայն մեկնումեկը բարձրաձայն կհորանջեր և կխաչակնքեր բերանը, ավելացնելով՝ տե՛ր ողորմյա։

Նրանից հետո կհորանջեր հարևանը, հետո մյուսը դանդաղ, կարծես հրամանով, բաց կաներ բերանը և այսպես շարունակ, թոքերի մեջ օդի վարակիչ խաղը կանցներ բոլորին, և որևէ մեկի աչքերն էլ կշրջակալեին։

Կամ Իլյա Իվանովիչը կմոռանար լուսամուտին, կնայեր և կասեր մի քիչ զարմանքով.

— Դեռ ժամը հինգն է միայն, բայց արդեն ի՞նչ մութ է գուրսը։

— Այո՛,— կպատասխանի որևէ մեկը,— այս ժամանակ միշտ մութ է լինում, երկար երեկոներն սկսվում են։

Իսկ գարնանը կզարմանան և կուրախանան, որ սկսում են երկար օրերը։ Բայց մի հարցրեք, թե նրանց ինչին են պետք այդ երկար օրերը, իրենք էլ չգիտեն։

Եվ նորից կլռեն։

Ապա մեկը կուզենա մոմի ծայրը հարդարել, և հանկարծ կհանդցնի։ Բոլորը կցնցվեն։

— Անակնկալ հյո՛ւր,— կասի անպատճառ մեկը։

Սրանով երբեմն խոսակցություն կբացվի։

— Ո՞վ կարող է լինել այդ հյուրը,— կասի տանտիրուհին։— Նաստասյա Ֆադեևնան չլինի՞։ Ա՜խ, տա՛ աստված։ Բայց ոչ, նա տունից առաջ չի գա։ Ա՛յ կուրախանայինք, հա՛։ Ա՛յ կփարվեինք իրար ու մի կուշտ լաց կլինեինք երկուսով։ Թե՛ առավոտյան ժամերգության և թե՛ պատարագին էլ միասին կեթթայինք... Բայց ե՞ս որտեղ, նա՛ որտեղ. թեպետև նրանից շահել եմ, բայց այդքան կանգնել չե՞մ կարող։

— Բա էն ե՞րբ էր, որ նա այստեղից. գնաց,— հարցրեց Իլյա Իվանովիչը.— կարծեմ Եղիա մարգարեի օրվանից հետո էր։

— Ի՞նչ ես ասում, Իլյա՛ Իվանովիչ, միշտ շփոթում ես։ Նա հոգեգալստին էլ լսպասեց,— ուղղեց կինը։

— Նա, կարծեմ, Պողոս—Պետրոսի պահին այստեղ էր,— առարկում է Իլյա Իվանովիչը։

— Դու միշտ այդպես ես,— կշտամբելով կասեր Կինը։— Վիճում ես ու միայն խայտառակվում...

— Ախր, ո՞նց թե պասին չկար։ Այն ժամանակ կարկանդակները շարունակ սունկով էինք թխում. նա սիրում է...

— Դե, դա Մարիա Օնիսիմովնան է. նա է սիրում սունկով կարկանդակ, ինչպե՞ս չես հիշում։ Մարիա Օնիսիմովնան էլ ո՞չ թե մինչև Եղիա մարգարեի, այլ մինչև Պրոխորի և Նիկանորի օրն էր հյուր։

Ժամանակի հաշիվը նրանք պահում էին տոներով, տարվա եղանակներով, ընտանեկան և տնային զանազան դեպքերով, չդիմելով երբեք ո՛չ ամիսներին, ո՛չ ամսաթվերին։ Սառաջ էր գալիս, գուցե, մասամբ նրանից, որ բացի Օբլոմովից, մնացած բոլորը շփոթում էին թե՛ ամիսների անունները, թե՛ ամսաթվերի կարգը։

Պարտված Իլյա Իվանովիչը կլուր և ամբողջ հասարակությունը նորից կընկղմվեր նիրհի մեջ։ Իլյուշան մոր ուսով կախ ընկած՝ նույնպես նիրհում է, երբեմն էլ քնում։

— Հա՜,— խոր հառաչանքով կասեր հետո հյուրերից մեկը։

— ա՛յ, Մարիա Օնիսիմովնայի ամուսինը, հանգուցյալ Վասիլ Ֆոմիչը, տերը նրա հետ, որքա՜ն առողջ մարդ էր, բայց մեռավ։ Վաթսուն տարի էլ չապրեց. այդպիսին հարյուր տարի պիտի ապրի։

— Բոլորս էլ կմեռնենք, ով երբ՝ աստծու կամքն է,— առարկում է հառաչանքով Պելագեյա Իգնատևնան։— Մեռնողը մեռնում է, բայց ահա խլոպովների մոտ չեն հասցնում մկրտել. ասում են Աննա Անդրեևնան նորից երեխա է բերել. այս արդեն վեցերորդն է։

— Մենակ Աննա Անդրե՞ևնան,— ասաց տանտիրուհին։— Ա՛յ, նրա եղբորն էլ որ ամուսնացնեն ու երեխաներ ունենա,— դու այն ժամանակ տես գլխացավանքը։ Փոքրերն էլ հասնում, փեսացու են դառնում, աղջիկներին մարդի տուր, իսկ այստեղ փեսացուներ որտեղի՞ց կճարես։ Հիմա բոլորն էլ օժիտ են ուզում, այն էլ՝ փող...

— Այդ ի՞նչ եք ասում,— մոտ գալով զրուցողներին՝ հարցրեց Իլյա Իվանովիչը։

— Այն ենք ասում, որ...

Եվ պատմությունը կրկնում են նրա համար։

— Ահա քեզ մարդկային կյանքը,— խրատական եղանակով արտասանեց Իլյա Իվանովիչը։— Մեկը մեռնում է, մյուսը ծնվում, երրորդն ամուսնանում, իսկ մենք ահա շարունակ ծերանում ենք, ո՛չ թե տարեցտարի, այլ օրեցօր։ Ինչո՞ւ է այսպես։ Ի՞նչ լավ կլիներ, որ ամեն օրը նման լիներ երեկվան և երեկը վաղվան... Տխուր բան է, երբ միտք ես անում...

— Ծերը ծերանո՞ւմ է, իսկ ջահելը մեծանում,— քնկոտ ձայնով ասաց մեկն անկյունից։

— Պետք է ավելի շատ աղոթել աստծուն և ոչնչի մասին չմտածել,— խստորեն նկատեց տիրուհին։

— Ճիշտ է, ճիշտ է,— երկչոտ, արագ-արագ արձագանքեց Իլյա Իվանովիչը, որը մտադրվել էր փիլիսոփայել, և նորից սկսեց ման գալ ետուառաջ։

Երկար ժամանակ էլի լուռ են. ասեղով ետուառաջ անցկացող թելերն են միայն խզզում։ Երբեմն տանտիրուհին խախտում է լռությունը։

— Հա, մութն է դուրսը,— ասում է նա։— Թե աստված տա՝ ջրօրհնեքին հասնեք, մերոնք հյուր կգան. ա՛յ ավելի ուրախ կլինի և չենք զգա, թե ինչպես կանցնեն երեկոները։ Ա՛յ, թե Մելանյա Պետրովնան գա՜ր. ի՞նչ գժություններ կարքի, ի՞նչ օյիններ ասես, որ չի հանի։ Է՛լ կլայեկ թափել, էլ մոմ հալել, է՛լ դարբասից դուրս վազել. իմ բոլոր աղախիններին ճամփից կհանի։ Ջանազան խաղեր կհնարի... Շա՜տ ուրիշն է։

— Այո՛, աշխարհի՛կ տիկին է,— նկատեց խոսակիցներից մեկը։— Երկու տարի առաջ խելքին փչեց սարից էլ սահել. այդ այն ժամանակ էր, երբ Լուկա Սավիչը հոնքը վնասեց...

Հանկարծ բոլորը ցնցվեցին, նայեցին Լուկա Սավիչին և բարձրաձայն հոհոացին։

— Այդ ինչպե՞ս էր Լուկա Սավիչ, ապա մի, ապա պատմիր,— ասում է Իլյա Իվանովիչը և ծիծաղից մեռնում։

Բոլորը շարունակում են հոհոալ. Իլյուշան էլ արթնացավ. նա էլ է հոհոում։

— Է՛հ, ի՞նչ կա պատմելու որ,— ասում է շփոթված Լուկա Սավիչը։— Այդ բոլորն, ա՛յ, Ալեքսեյ Նաումիչի հնարածն է. ոչինչ էլ չի պատահել։

— Էհե՛,— խմբով ձայնեցին բոլորը։— Ինչպե՞ս թե ոչինչ

չի պատահել։ Մենք հո չենք մեռել... Բա ճակատագ, ճակա՛տագ ինչ է. ա՛յ, մինչև հիմա էլ սպին երևում է...

Եվ հոհոացին։

— Ախր ինչի՞ եք ծիծաղում,— աշխատում էր արտասանել ծիծաղի ընդմիջումներին Լուկա Սավիչը։— Ես չէի էլ... այս բոլորը ավազակ Վասկան... հին սահնակ էր տվել... տակիս քանդվեց... ես էլ այն...

Ընդհանուր քրքիջը խլացրեց նրա ձայնը։ Իզուր էր աշխատում նա վերջացնել իր վերընկնելու պատմությունը. քրքիջը տարածվեց ամբողջ հասարակության մեջ, անցավ նախասենյակ և աղախինների սենյակը, բռնեց ամբողջ տունը. բոլորը հիշեցին զվարճալի դեպքը, ու հոհոում էին երկար, խմբով, անասելի՝ ինչպես օլիմպիական աստվածներ։ Հենց որ սկսեն ձայները կտրել, մեկը նորից կսկսի, ու նորից նույն պատմությունը։

Վերջապես մի կերպ հանգստացան։

— Հը՛, այս տարի չրօրհնեքին պիտի սահե՞ս, Լուկա Սավիչ,— մի փոքր լռելուց հետո հարցրեց Իլյա Իվանովիչը։

Նորից քրքիջի ընդհանուր պայթյուն, որ տևեց մոտ տասը րոպե։

— Չպատվիրե՞նք, աղջիկ, Անտիպկային, պասին մի սառցաբլուր շինի,— հանկարծ նորից հարցրեց Օբլոմովը։— Լուկա Սավիչը մեծ սեր ունի, կասենք, չի կարողանում համբերել...

Ամբողջ խմբի հոհոացը թույլ չտվեց նրան վերջացնել։

— Գոնե դեռ կա՞... այն սահնակը,— ծիծաղի միջից հազիվ արտասանեց խոսակիցներից մեկը։

Նորից ծիծաղ։

Երկար ծիծաղում էին բոլորը, վերջապես սկսեցին քիչ-քիչ հանդարտվել. որն արտասուքն էր սրբում, որը խնչում էր, որը մոլեգին հազում էր, թքում ու դժվարությամբ արտասանում.

— Ա՛խ, տեր աստված. խորխը բոլորովին խեղդեց... լավ ծիծաղեցինք էն ժամանակ, հա՛, աստված վկա։ Մեղքի տակ քնկանք։ Ոնց էր նա մեջքը դեպի վեր, իսկ բաճկոնի փեշերը փռված...

Այս բանի վրա վերջնականապես բարձրացավ վերջին, ամենաերկարատև հոհոացը, և այնուհետև ամեն ինչ լռեց։

Մեկը հառաչեց, մյուսը բարձր հորանչեց՝ խոսք կցելով, և ամեն ինչ ընկղմվեց լռության մեջ։

Առաջվա նման լսվում է միայն ճռճռանակի ձայնը, Օբլոմովի կոշիկների կտկտոցը և կծած թելի թեթև հթթոցը։

Հանկարծ Իլյա Իվանովիչը խռովահույզ դեմքով կանգնեց սենյակի մեջտեղ, բռնելով քթի ծայրը։

— Սա ի՞նչ գժբախտություն է։ Ապա նայիր,— ասաց նա։— Մարդ պիտի մեռնի. քթիս ծայրը շարունակ քոր է գալիս...

— Ա՜խ, տեր իմ աստված,— ձեռքերն իրար զարկելով ասաց կինը։— Էլ ի՞նչ մեռել, եթե քթի ծայրն է քոր գալիս։ Մեռել կլինի, երբ քթարմատն է քոր գալիս։ Է՜, Իլյա Իվանիչ, տերը քեզ հետ, ինչ վատ հիշողություն ունես։ Այ, էդպիսի բան կասես մարդկանց մեջ կամ հյուրերի մոտ, ամոթ կլինի։

— Ուրեմն ի՞նչ կնշանակի, երբ ծայրն է քոր գալիս,— հարցրեց Իլյա Իվանովիչը՝ անհարմար դրության մեջ ընկնելով։

— Գավաթի մեջ նայել։ Թե չէ, ինչպե՞ս կարելի է— մեռե՞լ։

— Ամեն ինչ շփոթում եմ,— ասաց Իլյա Իվանովիչը։— Ո՞ր մեկը հիշես, քիթը կամ կողքից է քոր գալիս, կամ ծայրից, կամ հոնքերը...

— Կողքից,— միջամտեց Պելագեյա Իվանովնան,— կնշանակի լուրեր. հոնքերն են քոր գալիս՝ արտասուք. ճակատը՝ գլուխ տալ է նշանակում. եթե աջ կողմից է քոր գալիս՝ տղամարդուն գլուխ տալ, եթե ձախ կողմից՝ կնոջը. ականջների քոր գալը կնշանակի անձրև է լինելու, շրթունքները՝ համբուրվել, ընչանցքը՝ քաղցրավենիք ուտել, արմունկը՝ նոր տեղում քնել, ներբանը՝ ճանապարհ...

— Է՜հ, կեցցե՛ս, Պելագեյա Իվանովնա,— ասաց Իլյա Իվանովիչը։— Բա որ յուղը էժան լինի, ծոծրա՞կը պիտի քոր գա, ինչ...

Տիկիններն սկսեցին ծիծաղել ու փսփսալ. տղամարդկանցից մի քանիսը ժպտում էին. քրքիջի նոր պոռթկում էր պատրաստվում, բայց այդ րոպեին սենյակում միաժամանակ լսվեց կարծես շան մռռոց և կատվի ֆշշոց, երբ նրանք պատրաստվում են հարձակվելու միմյանց վրա։ Ժամացույցի զրնգոցն էր։

— Է՛, արդեն ժամը ինն է,— ուրախ զարմանքով արտասանեց Իլյա Իվանովիչը։— Տե՛ս, է՛, չի էլ երևում, թե ժամանակն ինչպես է անցել։ Է՛յ, Վա՛սկա, Վա՛նկա, Մո՛տկա։

Երևացին երեք քնաթաթախ կերպարանք։

— Ինչո՞ւ չեք սեղան գցում,— զարմանքով և տհաճությամբ հարցրեց Օբլոմովը։— Ամենևին չե՞ք մտածում պարոնների մասին, ինչ է։ Է, ի՞նչ եք կանգնել։ Շո՛ւտ, օղի՛։

— Այ թե ինչու էր քթի ծայրը քոր գալիս,— արագ ասաց Պելագեյա Իվանովնան։— Օղի կխմեք և գավաթի մեջ կնայեք։

Ընթրիքից հետո, համբուրվելով և միմյանց խաչակնքելով, բոլորը ցրվում են իրենց անկողինները, և քունը թագավորում է անհոգ գլուխների վրա։

Իլյա Իլյիչը երազում այդպիսի երեկոներից տեսնում է ո՛չ թե մեկը, երկուսը, այլ այնպես անցկացրած օրերի և երեկոների ամբողջ շաբաթներ, ամիսներ ու տարիներ։

Ոչինչ չէր խախտում այս կյանքի միօրինակությունը, և իրենք՝ օբլոմովցիները դրանից չէին նեղվում, որովհետև ուրիշ նիստուկաց չէին էլ պատկերացնում. իսկ եթե կարողանային էլ պատկերացնել, զարհուրանքով երես կդարձնեին նրանից։

Ուրիշ կյանք նրանք ո՛չ կցանկանային և ոչ էլ կսիրեին։ Նրանք կցավեին, եթե հանգամանքները փոփոխություն մտցնեին իրենց կենցաղի մեջ, ինչ փոփոխություն ուզում է լինի։ Թախիծը նրանց կկրծոտեր, եթե էգուցն այսօրվա նման չլիներ, և հաջորդ օրը՝ էգուցվան։

Նրանց ինչի՛ն է պետք զանազանակերպությունը, փոփոխությունները, պատահականությունները, որոնց ձգտում են ուրիշները։ Թո՛ղ ուրեմն ուրիշներն էլ դատարկեն այդ բաժակը. իսկ իրենք՝ օբլոմովցիները, ոչ մի բանի հետ գործ չունեն։ Ուրիշները թող ապրեն, ինչպես ուզում են։

Չէ՞ որ պատահականությունները, թեկուզ որևէ տեսակի օգուտները, անհանգստացնող են. նրանք պահանջում են դխացավանք, հոգսեր, վազվզոց, տեղդ մի՛ նստի, առևտուր արա՛ կամ գրի՛ր, մի խոսքով՝ շարժվի՛ր. հանա՞ք բան է։

Նրանք շարունակում էին ամբողջ տասնամյակներով փրնջացնել, ննջել ու հորանջել կամ բարեսիրտ կերպով ծիծաղել

գյուղական հումորից, կամ խմբվելով՝ պատմում էին, թե գիշերը երազում ով ինչ է տեսել։

Եթե երազը սարսափելի էր լինում, բոլորը մտահոգվում էին, լուրջ կերպով վախենում. եթե մարգարեական էր լինում, բոլորն անկեղծորեն ուրախանում կամ տխրում էին, նայելով, երազում տեսածը վշտալի թե մխիթարական էր։ Եթե երազը պահանջեր սնոտիապաշտական որոշ նշաններ պահել, դրա համար անմիջապես եռանդուն միջոցներ էին ձեռք առնվում։

Եթե այս էլ չէր լինում, այն ժամանակ խաղում էին դուռչկի, կոզիրախաղ, իսկ տոներին հյուրերի հետ՝ բոստոն կամ գրանպասյանս էին բաց անում, գուշակում էին փոսիկի թագավորի ու խաչի աղջկա վրա, հարսանիք էին նախագուշակում։

Երբեմն մի երկու շաբաթով հյուր կգար որևէ Նատալիա Ֆադեևնա։ Պառավները նախևառաջ կքրքրեն ամբողջ շրջակայքը՝ ո՛վ ինչպես է ապրում, ո՛վ ինչ է անում. նրանք կթափանցեն ո՛չ միայն ընտանեկան կենցաղի, անդրկուլիսային կյանքի մեջ, այլև ամեն մեկի գաղտնի մտքերի ու դիտավորությունների մեջ, մարդու սրտի մեջ կմտնեն, կհայհոյեն, կդատապարտեն անարժաններին, ամենից շատ անհավատարիմ ամուսիններին, հետո կհաշվեն զանազան դեպքեր՝ անվանակոչություններ, մկրտություններ, ծնունդներ, ո՛վ ինչով է հյուրասիրել, ո՛ւմ է կանչել, ո՛ւմ ոչ։

Սրանից հոգնելով՝ կսկսեն ցույց տալ նոր հագուստները, շորերը, վերնազգեստները, սալոպները, նույնիսկ շրջազգեստներն ու գուլպաները։ Տանտիրուհին կպարծենա տանը պատրաստած ինչ-ինչ քաթաններով, թելերով, հաշիաներով։

Բայց կսպառվի և այս։ Այնուհետև ժամանակ էին անցկացնում սուրճով, թեյերով ու մուրաբաներով։ Հետո արդեն անցնում էին լռության։

Նստում էին երկար, մեկը մյուսին նայելով, ժամանակ առ ժամանակ ինչ-որ բանի համար խոր հառաչում։ Երբեմն նրանցից մեկը լաց էր լինում։

— Ի՞նչ կա, քույրս,— կհարցներ տագնապով մյուսը։

— Օ՞ֆ, սիրտս տխո՞ւր է, աղավնյա՛կս,— ծանր հառաչանքով պատասխանում էր հյուրը։— Ձայրացրել ենք տեր աստծուն, անիծյալներս։ Վերջը լավ չի լինելու։

— Ա՜խ, մի՛ վախեցնի, մի՛ սարսափեցնի, հոգյա՛կս,— խոսքը կտրում էր տանտիրուհին։

— Այո՛, այո՛,— շարունակում էր մյուսը։— Վերջին օրերը հասել են. կելնի ազգ ազգի վրա, թագավորություն թագավորության վրա... կհասնի աշխարհի վե՛րջը,— արտասանում էր վերջապես Նատալիա Ֆադեևնան, և երկուսն էլ դառնապես լաց էին լինում։

Նատալիա Ֆադեևնան այսպիսի եզրակացության գալու ոչ մի հիմք չուներ, ոչ ոք ոչի գեմ չէր դուրս եկել, մինչև անգամ այդ տարին գեսավոր չէր երևացել, բայց պառավները երբեմն մութ նախազգացումներ էին ունենում։

Միմիայն հազվագեպ որևէ անակնկալ պատահար խախտում էր այս ժամանցը, երբ, օրինակ, ամբողջ տունը, մեծից մինչև փոքր, շմոլով թունավորվում էր։

Տանը և գյուղում ուրիշ հիվանդություններին մասին հարց մարյա չէր էլ լսվում. պատահում էր, որևէ մեկը մթության մեջ ընկներ ցցի վրա, կամ գիրքվեր թալվարից, կամ կտրեր սախտակ ընկներ ու գլխին դիպչեր։

Բայց այս բոլորը քիչ էր պատահում, և այսպիսի անակնկալների դեմ գործ էին ածում տնային փորձված միջոցները. ջարդված տեղը շփում էին գետասպունդով կամ այլ բուներ. ջարդված տեղը խմեցնում էին խամեցնով, օրհնած ջուր էին խմեցնում, կամ աղոթք էին շշնջում. և ամեն ինչ անցնում էր։

Բայց շմոլով թունավորվել հաճախ էր պատահում։ Այս գեպքում բոլորը պառկած են անկողիններում, լսվում է ախուվախ, հառաչանք. մեկը գլխին վարունգ է շարում և սրբիչով կապում. մյուսն ականջներին հապալասի պտուղներ է դնում և ծովաքողկ հոտոտում, երրորդը շապկանց սառնամանիք է դուրս գալիս, չորրորդն ուղղակի անզգա ընկած է հատակին։

Սա պատահում էր պարբերաբար, ամսական մեկ կամ երկու անգամ, որովհետև չէին սիրում տաքությունն իզուր տեղը ծախսելուցով դուրս թողնել և վառարանները փակում էին, երբ նրանց մեջ այնպիսի բոցեր էին պլպլում, ինչպես «Ռոբերտ Դևիլ» մեջ։ Ոչ մի փոքր, ոչ մի վառարանի չէր՝ կարելի ձեռք կպցնել. մեկ էլ տեսար՝ բշտեց։

Մի անգամ միայն նրանց կենցաղի միօրինակությունը խախտվեց իսկապես որ անակնկալ մի գեպքով։

Երբ, ծանր ճաշից հետո հանգստացած, բոլորը հավաքվել էին թեյի, հանկարծ եկավ քաղաքից վերադարձած օբլոմովյան մի մուժիկ, որ ձեռքը ծոցում երկար խառնելուց հետո՝ հազիվ հանեց մի ճխլտած նամակ Իլյա Իլիանովիչ Օբլոմովի անունով։

Բոլորն ապշեցին. տանտիրուհու դեմքը մինչև անգամ մի քիչ այլայլվեց. բոլորն աչքերը հառեցին և քթերը երկարեցրին նամակի ուղղությամբ։

— Սա ի՞նչ տարօրինակ բան է։ Ումի՞ց է,— ուշքի գալով, վերջապես ասաց տանտիկինը։

Օբլոմովն առավ նամակը և տարակուսանքով շուռումուռ էր տալիս ձեռքին, չիմանալով թե ինչ անի այն։

— Որտեղի՞ց վերցրիր,— հարցրեց նա մուժիկին։— Ո՞վ տվեց քեզ։

— Էն պանդոկում, որտեղ քաղաքում իջևանել էի, գիտե՞ս,— պատասխանեց մուժիկը,— ասացին, որ փոշտից երկու անգամ եկել-հարցրել են՝ օբլոմովյան մուժիկ չկա՞, հասկանո՞ւմ ես, բարինին նամակ կա, ասել էին։

— Հետո՞...

— Հետո, ես առաջ հլա թաքնվեցի, զինվորը հեռացավ նամակը հետը։ Բայց Վերխլյովի տիրացուն տեսավ ինձ, նա էլ իմաց տվեց։ Մեն էլ էկավ։ Հենց որ մին էլ էկան՝ ուշունց տվին և նամակը տվին, հլա դեռ մի շահի էլ առան։ Ես հարցրի՝ թե ի՞նչ անեմ այն, ո՞ւր տանեմ։ Հրամայեցին ձեր ողորմածությանը հանձնել։

— Իսկ դու չվերցնե՞ր,— բարկացած նկատեց տիկինը։

— Ես չէի էլ վերցնում։ Մեր ինչի՞ն է պետք, ասում եմ, նամակը, մեզ հարկավոր չէ։ Մեզ, ասում եմ, չեն պատվիրել նամակներ վերցնել, ես իրավունք չունեմ. կորեք ձեր նամակով։ Համա զինվորն սկսեց թունդ ուշունց տալ. ուզում էր իշխանությանը գանգատվի. ես էլ վերցրի։

— Հիմա՛ր,— ասաց տիկինը։

— Ումի՞ց կարող է լինել,— մտախոհ ասում էր Օբլոմովը, նայելով հասցեին։— Ձեռքը կարծե՞ս թե ծանոթ է, ճիշտն ասեմ։

Եվ նամակը ձեռքից-ձեռք անցավ։ Սկսվեցին զրույցներ ու ենթադրություններ՝ ումի՞ց և ինչի՞ մասին կարող էր լինել։ Վերջապես, բոլորը շվարեցին։

Իլյա Իվանովիչը հրամայեց գտնել ակնոցը։ Որոնում էին մոտ ժամուկես։ Նա դրեց ակնոցը և արդեն մտադիր էր բաց անել նամակը։

— Թո՛ղ, մի՛ բաց անի, Իլյա Իվանովիչ,— ահով կանգնեցրեց նրան կինը,— ո՞վ գիտե՝ թե ինչ նամակ է. կարելի է մի զարհուրելի բան է, մի որևէ դժբախտություն։ Չե՞ս տեսնում՝ հիմա մարդիկ ինչ են դարձել։ Վաղը կամ մյուս օրը բաց կանես, չի ուշանա, քեզնից չի փախչի։

Եվ նամակն ակնոցի հետ միասին դրին փակի տակ։ Բոլորը թեյով զբաղվեցին։ Նամակն այնտեղ տարիներով կմնար, եթե չափազանց անսովոր երևույթ չլիներ և չհուզեր օբլոմովցիների մտքերը։ Թեյի ժամանակ և մյուս օրն էլ բոլորի խոսակցությունը նամակի մասին էր։

Վերջապես, չդիմացան, և չորրորդ օրը խմբվելով՝ շփոթված բաց արին։ Օբլոմովը նայեց ստորագրությանը։

— «Ռադիշչև»— կարդաց նա։— Է՛, ախր սա Ֆիլիպ Մատվեևիչի՛ց է։

— Հա՛, է՛, ա՛յ թե ումից է,— ձայն բարձրացավ ամեն կողմից։— Ինչպե՞ս է, որ նա մինչև հիմա կենդանի է։ Հլա տե՛ս, դեռ չի՞մեռել։ Էհ, փա՛ռք աստծու։ Ի՞նչ է գրում։

Օբլոմովն սկսեց բարձր կարդալ։ Բանից դուրս եկավ, որ Ֆիլիպ Մատվեևիչը խնդրում է ուղարկել գարեջրի ռեցեպտը, որ Օբլոմովկայում առանձնապես լավ էին եփում։

— Ուղարկե՛լ, ուղարկե՛լ նրան,— ասացին բոլորը։— Նամակ պիտի գրվի։

Այսպես մոտ երկու շաբաթ անցավ։

— Պետք է, պետք է գրել,— ասում էր Իլյա Իվանովիչը կնոջը։— Բայց ո՞ւր է ռեցեպտը։

— Ի՞նչ իմանամ ուր է,— պատասխանում էր կինը։— Դեռ պետք է փնտրել-գտնել։ Սպասի՛ր, ի՞նչ ես շտապում։ Ա՛յ, աստված կտա, տոներին կհասնենք, կթաթախվենք, այն ժամանակ էլ կգրես, չի փախչի...

— Իսկապես, տոնին ավելի լավ կգրեմ,— ասաց Իլյա Իվանովիչը։

Տոնին նորից խոսք բացվեց նամակի մասին։ Իլյա Իվանովիչը բոլորովին պատրաստվեց գրելու։ Նա գնաց առանձնասենյակ, ակնոցը դրեց և նստեց սեղանի առաջ։

Տանը խորին անդորրություն թագավորեց. ծառաներին հրամայվեց ոտներով չդոփել և աղմուկ չհանել։— Բարինը գրում է,— ասում էին բոլորն այնպիսի երկչոտ հարգանքի ձայնով, որով խոսում են, երբ տանը մեռել կա։

Դանդաղորեն, ծուռումուռ, դողդոջուն ձեռքերով և այնպիսի զգուշությամբ, կարծես, ինչ-որ վտանգավոր գործ էր կատարում, նա հազիվ էր դուրս բերել «ողորմած տեր», երբ նրա մոտ եկավ կինը։

— Փնտրեցի, փնտրեցի, ռեցեպտը չկա,— ասաց նա։— Պետք է ննջարանի պահարանում էլ փնտրել։ Բայց նամակն ինչպե՞ս պետք է ուղարկենք։

— Փոստով պետք է ուղարկել,— պատասխանեց Իլյա Իվանովիչը։

— Իսկ որքա՞ն արժե մինչև այնտեղ։

Օբլոմովը հանեց հին օրացույցը։

— Քառասուն կոպեկ,— ասաց նա։

— Ա՛յ քեզ բան, քառասուն կոպեկ էլ պետք է դատարկ բանի համար դեն գցել,— նկատեց կինը։— Ավելի լավ է՝ սպասենք, գուցե հարմար դեպք լինի քաղաքից դեպի այն կողմերը։ Պատվիրիր մուժիկներին, թող տեղեկանան։

— Եվ իրոք, դիպվածով ավելի լավ կլինի,— պատասխանեց Իլյա Իվանովիչը և գրիչը սեղանին շրխկացնելով, կոխեց թանաքամանի մեջ և վերցրեց ակնոցը։

— Ճիշտ, ավելի լավ կլինի,— եզրափակեց նա— Դեռ չի փախչի, կուղարկենք։

Հայտնի չէ՝ Ֆիլիպ Մատվեևիչն սպասած ռեցեպտն ստացավ, թե ոչ։

Իլյա Իվանովիչը երբեմն գիրք էլ էր վերցնում ձեռքը,— Նրա համար միևնույն է,— որևէ մի գիրք։ Նա ընթերցանության էական պահանջ չէր զգում, այլ համարում էր այն շռայլություն, այնպիսի գործ, առանց որի էլ կարելի է հեշտությամբ յոլա գնալ, ճիշտ այնպես, ինչպես կարելի է պատին նկար ունենալ և կարելի է չունենալ. զբոսնելու կարելի է գնալ և կարելի է չգնալ. այս պատճառով նրա համար միևնույն է՝ ինչ գիրք ուզում է լինի. նա գրքին նայում էր որպես մի իրի, որ կոչված է ձանձրույթը ցրելու և պարապությունը լցնելու համար։

— Վազուց գիրք չեմ կարդացել,— ասում է նա, կամ երբեմն, դարձվածքը փոխելով,— արի մի գիրք կարդամ,— կասի, կամ պարզապես մոտով անցնելիս պատահմամբ կտեսնի եղբորից մնացած գրքերի ոչ մեծ կույտը և, առանց ընտրելու, կհանի, ինչ որ ձեռքն ընկնի։ Գոլիկովը կընկնի ձեռքը, թե նորագույն Նուազանանը, Խերասկովի Ռոսիադան, թե Սումարոկովի ողբերգությունը, կամ թե, վերջապես, երկու տարի առաջ լույս տեսած Վեղոմոստի լրագրերը,— նա ամեն ինչ կարդում է հավասար քավականությամբ, ժամանակ առ ժամանակ կցնցվով.

— Տե՛ս, ի՞նչ է հնարել։ Ա՛յ ավազակ։ Գրողք տանի քեզ, հա՞։

Այս բացականչությունները վերաբերում էին հեղինակներին, մի կոշում, որ նրա աչքին ոչ մի հարգ չուներ. մինչև անգամ նա յուրացրել էր դեպի գրողներն այն կիսարհամարհանքը, որ հին ժամանակվա մարդիկ տածում էին նրանց նկատմամբ։ Նա, ինչպես շատերն այն ժամանակ, հեղինակին համարում էր ոչ այլ ինչ, եթե ոչ ուրախ մարդ, քեֆ անող, հարբեցող ու մասխարա, պարասեր մարդու նման մի բան։

Նա, երբեմն բարձր ձայնով, բոլորի համար կարդում էր երկու տարի առաջ լույս տեսած լրագրերից, կամ նրանց հենց այնպես տեղեկություններ էր հաղորդում։

— Ահա Հաագայից գրում են,— կասի նա,— որ նորին մեծություն թագավորը բարեհաճեց հաջող կերպով պալատ վերադառնալ—կարճատև ճանապարհորդությունից,— և ակնոցի վերևից կնայի բոլոր լսողներին։

Կամ՝

— Վիեննայում այսինչ դեսպանը հանձնեց իր հավատարմագրերը։

— Ահա այստեղ գրում են,— կարդում էր նա նորից,— որ տեղին ժանլիսի հեղինակությունները թարգմանվել են ռուսերեն լեզվով։

— Այս բոլորը, հավանորեն, նրա համար են թարգմանում, որ մեզ նման ազնվականներից փող կորզեն,— նկատում էր լսողներից մեկը, մի մաղր կալվածատեր։

Իսկ խեղճ Իլյուշան գնո՞ւմ էր Շաուլցի մոտ սովորելու։

Երկուշաբթի օրը հենց նա զարթնում էր, վրան թախիծ էր գալիս։ Նա լսում էր Վասկայի զիլ ձայնը, որը պատշգամբից բղավում էր.

— Անտիպկա՛, չալ ձին լծիր՝ փոքր աղային գերմանացու մոտ տանելու։

Նրա սիրտը դողում էր։ Նա տխուր գալիս էր մոր մոտ։ Սա գիտեր ինչի համար և սկսում էր գլուխը յուղել, ինքն էլ գաղտնի հոգոց հանելով՝ մի ամբողջ շաբաթ նրանից անջատվելու համար։

Զգիտի, թե այդ առավոտ ինչպե՞ս կերակրի նրան։ Նրա համար բուլկի, կրենդել կթխեն, հետը դնելու են աղը դրած մթերքներ, թխվածքներ, մուրաբաներ, զանազան պաստիլներ և այլ ամեն տեսակի չոր ու թաց անուշեղեն և, մինչև անգամ, ոտեստի պաշար։ Այս բոլորը արվում էր այն նկատառումով, որ գերմանացու մոտ առատ չէին կերակրում։

— Այնտեղ չես լիանա,— ասում էին օբլոմովցիները,— ճաշին սուպ, տապակած ու կարտոֆիլ կտան, թեյին կարագ, իսկ ընթրիքին՝ մորգեն ֆրի՝ քթիդ քսի։

Ծակայն Իլյա Իլյիչը երազում ավելի տեսնում էր այնպիսի երկուշաբթիներ, երբ նա Վասկայի ձայնը չի լսում, որ հրամայում է լծել չալչիկին, և երբ մայրը թեյի ժամանակ նրան հանդիպում է ժպիտով ու հաճելի նորությամբ.

— Այսօր չես գնա. հինգշաբթի օրը մեծ տոն է. արժե՞ միթե երեք օրվա համար գնալ ու գալ։

Կամ երբեմն հանկարծ կհայտարարի.

— Այսօր ծնողների հիշատակի շաբաթն է, սովորելու ժամանակը չէ, բլինի պիտի պատրաստենք։

Երբեմն էլ կպատահի, որ մայրը երկուշաբթի առավոտյան շեշտակի կնայի նրան և կասի.

— Այսօր աչքերդ մի տեսակ թարմ չեն։ Առո՞ղջ ես արդյոք,— և գլուխը կտարուբերի։

Խորամանկ տղան առողջ է, բայց լռում է։

— Ապա մի այս շաբաթ տանը նստի,— կասի մայրը,— իսկ հետո կտեսնենք՝ ատված ի՞նչ կտա։

Եվ տանը բոլորն այն համոզմունքով էին տոգորված, որ ուտումը և ծնողների հիշատակի շաբաթը ոչ մի կերպ չպետք է միմյանց զուգադիպեն և կամ հինգշաբթի օրվա տոնը անհաղթելի արգելք է ամբողջ շաբաթը սովորելուն։

Երբեմն միայն սպասավորը կամ սպասուհին, որոնք տուժել էին փոքր աղայի պատճառով, կփնթփնթան։

— Ո՜ւֆ, լկտվա՜ծ։ Երբ պիտի կորչես ՝քո գերմանացու մոտ։

Մեկ-մեկ էլ հանկարծ շաբաթվա կեսին կամ սկզբին գերմանացու մոտ կհայտնվի Անտիպկան ծանոթ չալիկի հետ՝ Իլյա Իլյիչին տուն տանելու։

— Հյուր են եկել, հրեն, Մարիա Սավիշնան, կամ Նատալիա Ֆաղեևնան, կամ Կուզովկովներն իրենց երեխաներով, ուրեմն համեցե՛ք տուն։

Եվ մոտ երեք շաբաթ Իլյուշան հյուր էր մնում տանը, իսկ հետո, մեկ էլ տեսար՝ Զարշարանաց շաբաթը, հետո էլ տոն է գալիս, տնեցիներից մեկն էլ, չգիտես ինչու, որոշում է, որ կարմիր կիրակիի շաբաթին չեն սովորի. մինչև ամառ էլ միերկու շաբաթ է մնում, չարժե գնալ, իսկ ամռանն ինքը գերմանացին էլ է հանգստանում, ուրեմն՝ ավելի լավ է մինչև աշուն հետաձգել։

Մեկ էլ տեսնում ես՝ կես տարվա ընթացքում Իլյա Իլյիչը կազդուրվում է, և ինչպե՜ս աճում է նա այդ ժամանակամիջոցում։ Ինչպե՜ս հաստանում է։ Ի՜նչ փառավոր քնում է։ Տանը նրա վրա նայելուց չեն կշտանում, նկատելով, հակառակը, որ շաբաթ օրերը գերմանացու մոտից վերադառնալիս՝ երեխան գունատ և լղար է լինում։

— Աստված աղատի չարիքից,— ասում էին հայրն ու մայրը։— Ուսումը չի փախչի, բայց առողջությունը չես գնի. առողջությունը կյանքում ամեն ինչից թանկ է։ Տեսնո՞ւմ ես, նա ուսումից այնպես է վերադառնում, ինչպես հիվանդանոցից. գիրությունն ամբողջովին կորչում է, փոխում է մի տեսակ... չարաճճի էլ է. շարունակ հենց վազվզել է ուզում։

— Այո՛,— կնկատի հայրը,— հանաք բան չէ ուսումը. ում ասես երկու տակ կանի։

Եվ քնքուշ ծնողները շարունակում էին՝ առիթներ որոնել որդուն տանը պահելու համար։ Բացի տոներից էլ առիթներ որքան ասես լինում էին։ Ամռանը ցուրտ էր թվում նրանց, ամռանն էլ շոգի պատճառով չարժե գնալ, երբեմն էլ անձրև կգա, աշնանը ցեխն է խանգարում։ Երբեմն Անտիպկան ինչոր կասկածելի կթվա. հարբած է՝ հարբած չէ, բայց ինչ-որ

օտարոտի հայացք ունի. դժբախտություն կարող է պատահել, կխրվի կմնա կամ կգլորվի որևէ տեղ։

Օբլոմովներն աշխատում էին, սակայն, այդ առիթներին որքան-հնարավոր է ավելի օրինականություն տալ թե՛ իրենց սեփական աչքում և թե՛ մանավանդ Շտոլցի աչքում, որը թե՛ ծնողների երեսին և թե՛ ետևից դոննեռվետտերներ չէր խնայում այսպես երես տալու համար։

Պրոստակովների ու Սկոտինինների ժամանակները վաղուց անցել էին։ Այն առածը, թե՝ գիտությունը լույս է, անգիտությունը խավար, հին գրքեր վաճառողների տարածած գրքերի հետ արդեն թափառում էր ավաններում և գյուղերում։

Տերերը հասկանում էին լուսավորության օգուտը, բայց միայն նրա արտաքին օգուտը։ Նրանք տեսնում էին, որ բոլորը մարդ են դառնում, այսինքն՝ ձեռք են բերում աստիճաններ, խաչեր և փող ոչ այլ կերպ, բայց եթե միայն ուսման միջոցով. որ ծառայության մեջ հին գրագիրների, վաղեմի սովորույթների, չակերտների և նենգությունների մեջ ծերացած, կորդացած գործաբարների դրությունը վատանում էր։

Սկսեցին չարագուշակ լուրեր պտտել ո՛չ միայն գրագիտության անհրաժեշտության, այլև ուրիշ, մինչ այդ կենցաղում լսված, գիտությունների մասին։ Տիտղոսակիր խորհրդականի և կոլեգիական ասեսորի միջև անդունդ բացվեց, որոնց միջև որպես կամուրջ ծառայում էր ինչ-որ դիպլոմ։

Հին ծառայողները, սովորույթի զավակներն ու կաշառքի սաներն սկսել էին անհետանալ։ Շատերին, որոնք ժամանակին չէին մեռել, հեռացրին անբարեհուսության համար, մյուսներին դատի տվեցին. ամենաբախտավորները նրանք էին, ովքեր իրերի նոր դրության վրա ձեռք թափ տալով, ողջառողջ քաշվեցին սեփական ջանքերով ձեռք բերված անկյունները։

Օբլոմովները կռահում էին դա և հասկանում կրթության օգուտը, բայց միայն այս ակնհայտ օգուտը։ Ուսման ներքին պահանջի մասին նրանք դեռևս մութ ու հեռավոր հասկացողություն ունեն, և այս պատճառով ուզում էին իրենց Իլյուշայի համար առայժմ մի քանի փայլուն առավելություններ ձեռք բերել։

Նրա համար երազում էին և ասեղնագործ համազգեստ, նրան երևակայում էին պալատի խորհրդական, իսկ մայրը՝ նույնիսկ նահանգապետ. բայց այդ բոլորին նրանք կուզեին հասնել որքան կարելի է էժան գնով, զանազան խորամանկություններով, գաղտագողի խուսափել լուսավորության և փառք ու պատիվների ճանապարհի զանազան քարերից. ու խոչընդոտներից, առանց նրանց վրայից թռչելու նեղության, այսինքն օրինակ՝ սովորել թեթևակի, առանց հոգին ու մարմինը մաշելու, առանց երեխա ժամանակ ձեռք բերած օրհնված գիրությունը կորցնելու, այլ այնպես, որ միայն պահպանվի հրահանգված ձևը և մի կերպ վկայական ձեռք բերվի, որտեղ ասված լինի, թե Իլյուշկան անցել է բոլոր գիտություններն ու արվեստները։

Դատարակության օրլոմովյան այս ամբողջ սիստեմը խիստ գիմազրության հանդիպեց Շտոլցի սիստեմի կողմից։ Պայքարը երկուստեք համառ էր։ Շտոլցն ուղղակի, բացեիբաց և հաստատակամորեն հաթվածում էր հակառակորդներին, իսկ նրանք հաթվածներից խուսափում էին վերը նշված և այլ խորամանկություններով։

Հաղթության թախտը ոչ մի կերպ չէր որոշվում. գուցեև գերմանական հաստատակամությունը հաղթեր էլ օբլոմովցիների համառությանն ու անշարժությանը, բայց գերմանացին գժվարությունների հանդիպեց իր սեփական բանակում, և հաղթությանը վիճակված չէր վճռել ո՛չ այս և ոչ էլ այն կողմը։ Բանն այն է, որ Շտոլցի որդին երես էր տալիս Օբլոմովին, մերթ ծածուկ թելադրելով նրան դասերը, մերթ նրա փոխարեն թարգմանություններ կատարում։

Իլյա Իլյիչը պարզ տեսնում է և՛ իր տնային կենցաղը, և՛ ապրուստը Շտոլցի մոտ։

Երբ զարթնում էր իրենց տանը, անկողնի մոտ արդեն կանգնած էր Զախարկան, հետապտչում նրա հուլակազմ սենեկապետ Զախար Տրոֆիմիչը։

Զախարը, ինչպես առաջներում գայլակը, նրա ոտներին էր քաշում գուլպաները, հագցնում էր կոշիկները, իսկ Իլյուշան, որ արդեն տասնչորս տարեկան տղա էր, պառկած՝ նրան դեմ էր անում մեկ այս, մեկ մյուս ոտքը. իսկ հենց որևէ բան մի

ցիչ լավ չթվար, այն ժամանակ ոտքով կթրխկացներ Զախարկայի քթին։

Եթե գժգոհ Զախարկան մարդուն անցկացներ գանգատվել, դեռ մեծերից էլ հարվածներ կստանար։

Հետո Զախարկան սանրում էր նրա գլուխը, հագցնում բաճկոնը, Իլյա Իլյիչի թևերը զգուշությամբ անցկացնելով թևքերի մեջ, որպեսզի նրան շատ չանհանգստացնի, և հիշեցնում էր Իլյա Իլյիչին, որ պիտի այս անի, այն անի; առավոտյան վեր կենալուց հետո լվացվի և այլն։

Հենց որ Իլյա Իլյիչը որևէ բան ցանկանար, բավական է աչքով անի, երեք-չորս ծառա կնետվեն նրա ցանկությունը կատարելու. եթե բան վայր գցի կամ պետք լինի որևէ բան ճաթել և չճաթի, մի բան բերել, մի բանի ետևից վազել։ Նա, որպես կայտառ տղա, երբեմն ուզում էր առաջ նետվել և ամեն ինչ ինքն անել, բայց այստեղ էլ հայրն ու մայրը և երեք մորթուրերն էին հինգ ձայնով բղավում։

— Ինչի՞։ Ո՞ր։ Իսկ Վասկան, իսկ Վանկան, իսկ Զախարկան ինչի՞ համար են։ Է՛յ, Վասկա՜, Վանկա՜, Զախարկա՜։ Ի՞նչ եք նայում, բացբերանե՛ր։ Ա՛յ, ես ձեզ...

Եվ Իլյա Իլյիչին ոչ մի կերպ չի հաջողվի իր համար որևէ գործ անել։ Հետո նա գտավ, որ այսպես ավելի հանգիստ է, և ինքն էլ սովորեց բղավել. «Է՛յ, Վասկա՜, Վանկա։ Ա՛յս տուր, ա՛յն տուր։ Այս չեմ ուզում, ա՛յն եմ ուզում։ Վազիր, բե՛ր։

Երբեմն ծնողների քնքուշ հոգատարությունը ձանձրացնում էր նրան։

Սանդուղքով վազի թե բակում, հանկարծ նրա ետևից տասը հուսահատ ձայներ կլսվեն. «Ա՜խ, ա՜խ։ Բռնեցեք, կանգնեցրեք։ Կընկնի, կջարդվի... կանգնիր, կանգնի՛ր»։

Փորձ անի ձմռանը դուրս թռչել նախասենյակ կամ օդանցք բանալ, նորից աղաղակներ.— օյ, ու՞ր։ Ինչպե՞ս կարելի է։ Մի վազի, մի գնա, մի բանա, կջարդվես, կմրսես...

Եվ Իլյուշան տրտմությամբ մնում էր տանը, փայփայված, որպես արքայադարձային ծաղիկը ջերմոցում, և ինչպես ապակու տակ՝ նա աճում էր գանդաղ ու թարշամած։ Դրսևորում որոնող ուժերը դառնում էին գեպի ներս և դալկանալով քնկճվում։

Իսկ երբեմն նա արթնանում էր այնպես կայտառ, թարմ,

ուրախ. զգում էր՝ իր մեջ ինչ-որ բան է խաղում, եռում, կարծես մեջը դևի ճուտ է բուն դրել, որ նրան շարունակ հրահրում է կամ կտուրը բարձրանալ, կամ հեծնել սավրասկան ու սլանալ դեպի մարգագետինները, որտեղ խոտ են հնձում, կամ նստել ցանկապատի վրա, կամ գյուղական շներին քսի տալ. կամ հանկարծ ցանկություն առաջ կգա՝ վազելով անցնել գյուղամեջը, հետո դաշտը, հեղեղատների վրայով կեչու պուրակը և երկու-երեք թռիչքով ընկնել ձորակի հատակը, կամ միանալ երեխաներին՝ ձնագնդի խաղալու, ուժերը փորձելու։

Դևի ճուտը շարունակ գրգռում էր նրան։ Նա դիմանում էր, դիմանում, վերջապես չհամբերեց և, հանկարծ, առանց գլխարկի, ձմեռը, պատշգամբից բակ թռավ, այնտեղից դարպասով դուրս, մի-մի ձնագունդ առած և վազեց դեպի երեխաների խումբը։

Պաղ քամին ուղղակի կտրում էր նրա երեսը, սառնամանիքը կծում էր ականջները, ցուրտը լցվում էր բերանն ու կոկորդը, իսկ կուրծքը լցվում էր ուրախությամբ. ինչքան ոտքերում ուժ կա՝ վազում էր, ինքն էլ ճղղում ու հռհռում։

Ահա և տղաները. ձնագունդը գցեց՝ չդիպավ, վարժված չէ։ Ուզում էր էլի ձյուն վերցնել, նրա երեսը մի մեծ ձնագունդ ծեփվեց. նա ընկավ. անսովորությունից և ցավ էր զգում, և ուրախ էր, և հռհռում էր, և աչքերին արտասուք կար...

Իսկ տանն աղմուկ է բարձրացել։ Իլյուշան չկա՝։ Աղմուկ, աղաղակ։ Զախարկան դուրս թռավ բակ, նրա ետևից Վասկան, Միտկան, Վանկան. բոլորը գլուխները կորցրած վազում են բակում։

Նրանց ետևներից ընկան երկու շուն, որոնք, ինչպես հայտնի է, սառնասիրտ կերպով վազող մարդ տեսնել չեն կարող։

Մարդիկ աղաղակներով ու կանչերով, շները հաչոցով՝ վազում են գյուղամիջով։

Վերջապես վրա վազեցին երեխաներին ու սկսեցին դատաստան տեսնել. որի մազերից քաշեցին, որի ականջներից, որի վզակոթին տվեցին. սպառնացին նաև նրանց հայրերին։

Հետո արդեն ձեռք գցեցին փոքրիկ բարինին, փաթաթեցին հետները վերցրած քուրքի, հետո հոր մուշտակի, հետո երկու

վերմակի մեջ և հանդիսավոր կերպով, ձեռքների վրա տուն բերեցին։

Նրան կործանված համարելով՝ տանն արդեն նրան տեսնելու հույսը կտրել էին. բայց կենդանի ու անվնաս տեսնելով՝ ծնողների ուրախությունն աննկարագրելի եղավ։ Փառք տվին աստծուն, հետո նրան դաղձ և շամբուկ խմեցրին, երեկոյան էլ ազնվամորի, և երեք օր անկողնում պահեցին. իսկ նրան միայն մի բան կարող էր օգտակար լինել— նորից ձնագնդի խաղալ...

X

Հենց որ Իլյա Իլլիչի խոմփոցը հասավ Զախարի ականջին, նա զգուշությամբ, առանց աղմուկի ցած թռավ պառկելատեղից, մատների ծայրերի վրա դուրս եկավ նախասենյակ, դուռը բանալիով փակեց բարինի վրա և ուղղվեց դեպի գարբասը։

— Ա՜, Զախա՜ր Տրոֆիմիչ. բարո՜վ եկաք։ Վաղուց է չե՜ք երևում,— ասացին զանազան ձայներով կառապանները, լակեյները, աղախիններն ու երեխաները դարբասի մոտ։

— Հը՜, ի՞նչ եղավ ձերը։ Տնից դո՞ւրս եկավ, ինչ է,— հարցրեց դռնապանը։

— Շնթռել է,— մռայլ կերպով ասաց Զախարը։

— Այդ ինչպե՞ս,— հարցրեց կառապանը։— Կարծես թե վաղ է, այս ժամանակ... երևի հիվա՞նդ է։

— է, ի՞նչ հիվանդ։ Սաստիկ հարբե՛լ է,— ասաց Զախարը այնպիսի ձայնով, կարծես ինքն էլ համոզված էր դրանում։— Հավատո՞ւմ եք։ Մենակ մեկուկես շիշ մադերա խմեց, երկու շտոֆ էլ կվաս ու հիմա էլ վեր է ընկել։

— Ի՞նչ ես ասում,— նախանձով ասաց կառապանը։

— Էդ ի՞նչ է նա հիմա այդպես խարաբ եղել,— հարցրեց կանանցից մեկը։

— Ո՛չ, Տատյանա Իվանովնա,— պատասխանեց Զախարը, իր միակողմանի հայացքը նետելով նրա վրա,— ո՛չ թե հիմա. բոլորովին անպետք է դարձել, խոսելն անգամ զզվելի՜ է։

— Ինչպես երևում է, իմի նմա՞ն է,— հառաչելով նկատեց Տատյանա Իվանովնան։

— Իսկ ի՞նչ ես կարծում, Տատյանա Իվանովնա, տիրուհիդ այսօր որևէ տեղ կգնա՞,— հարցրեց կառապանը։— Ինձ հարկավոր է այստեղ մի մոտիկ տեղ հանդիպել։

— Ու՞ր պիտի կորչի,— պատասխանեց Տատյանան։— Նստած է իր աննմանի հետ և չեն կշտանում իրար նայելուց։

— Նա հաճախ է գալիս ձեզ մոտ,— ասաց դռնապանը,— նզովվածը գլուխս տարել է գիշերները. բոլորն արդեն գնացած են լինում, բոլորը տուն եկած, նա միշտ վերջինն է, դեռ հայհոյում էլ է, թե ինչու գլխավոր մուտքը փակված է... Ես այստեղ նրա համար պետք է մուտքի պահապան կանգնեմ։

— Ի՞նչ հիմարն է, եղբայրներ,— ասաց Տատյանան,— ա՛յ այդպիսին գտնես։ Ի՞նչ ասես, որ չի նվիրում տիրուհուն։ Սա էլ զարդարվում է սիրամարգի նման և մտն է գալիս մեծ կարևորություն տալով իրեն. բայց թե որ մեկը նայեր, ինչպիսի շրջազգեստ ու ինչպիսի գուլպաներ է հագնում, խայտառակություն կլիներ նայելը։ Վիզը երկու շաբաթը մի անգամ չի լվանում, իսկ երեսին քսում է... Մեկ-մեկ հոգուդ մեղք ես անում, ճիշտ եմ ասում, մտքովդ անց է կենում. «Ախ դու, թշվա՞ռ։ Գլխիդ գլխաշոր կապեիր և գնայիր վանք, ուխտագնացության...»

Բոլորը, բացի Զախարից, ծիծաղեցին։

— Ա՛յ քեզ Տատյանա Իվանովնա, իսկի չի վրիպի նշանից,— ասում էին հավանություն տվող ձայները։

— Այո, ճիշտ եմ ասում,— շարունակում էր Տատյանան։— Էդ ինչպե՞ս է, որ պարոնները թույլ են տալիս իրենց հետ էդպիսինին...

— Էդ ո՞ւր էիք ուզում գնալ,— հարցրեց նրան մեկը։— Էդ ի՞նչ կապոց է։

— Զգեստն եմ տանում դերձակուհու մոտ. իմ պճնամոլուհին է ուղարկել. իբր թե լայն է։ Իսկ երբ սկսում ենք Դունյաշայի հետ ձիգ տալ նրա հաստ մարմինը, հետո եքեք օր ձեռքով ոչինչ անել չենք կարողանում. կոտրատում ենք։ Դե, ես գնացի։ Մնաք բարով, առայժմ։

— Գնաք բարով, գնաք բարով,— ասացին մի քանիսը։

— Գնաք բարով, Տատյանա Իվանովնա,— ասաց կառապանը։— Ի՞նչ կլինի՝ երեկոյան դաք։

— Չգիտեմ, ինչպես կլինի. գուցե՝ գամ, թե չէ ինչպես... մնաք բարով։

— Դե, գնաք բարով,— ասացին բոլորը։

— Մնաք բարո՛վ... բախտավոր մնաք,— պատասխանեց նա՝ հեռանալով։

— Գնաք բարո՛վ, Տատյանա Իվանովնա,— կանչեց նրա ետևից կառապանը։

— Մնաք բարո՛վ,— բարձրաձայն կանչեց նա հեռվից։

Երբ նա հեռացավ, Զախարը կարծես սպասում էր իր հերթին, որ խոսի։ Նա նստեց թուջե փոքրիկ սյան վրա դարբասի մոտ և սկսեց ոտքերը թափահարել, մռայլորեն ու ցրված նայելով ոտքով ու կառքերով անցնողների վրա։

— Էհ, քո բարի՞նը ոնց է այսօր, Զախար Տրոֆիմիչ,— հարցրեց դռնապանը։

— Դե , ինչպես միշտ. փարթամ կյանքից կատաղում է,— ասաց Զախարը,— բայց քո փոխարեն, քո շնորհիվ ես քիչ վիշտ չեմ կրել. անվերջ բնակարանի՝ մասին է։ Կատաղում է, բոլորովին չի ուզում տեղափոխվել...

— Ե՞ս ինչ մեղավոր եմ,— ասաց դռնապանը։— Ինձ մնա, կուզես ամբողջ կյանքդ ապրիր այնտեղ. մի՞թե ես այստեղ տեր եմ։ Ինձ հրամայում են... թե որ ես լինեի տերը, բայց ես չեմ տերը...

— Ի՞նչ է, նա հայհոյում է, հա՞,— հարցրեց մեկի կառապանը։

— Այնպես է հայհոյում, որ միայն աստվա՞ծ է ուժ տալիս դիմանալու։

— Էհ, ի՞նչ կա որ։ Դա բարին է, եթե շարունակ հայհոյո՞ւմ է,— ասաց մի լակեյ դանդաղ, ճռռոցով բաց արեց քթախոտի տուփը, և բոլորի ձեռքերը, բացի Զախարի ձեռքերից, մեկնվեցին դեպի քթախոտը։ Սկսեցին քթախոտ քաշել, փռշտալ և թքել։

— Եթե հայհոյում է, ապա լավ է,— շարունակեց այն լակեյը,— որքան ավելի թունդ է հայհոյում, այնքան ավելի լավ. գոնե չի ծեծի, եթե հայհոյում է։ Բայց ա՛յ, ես ապրում էի մեկի մոտ. դու դեռ չգիտես թե ինչի համար, իսկ նա, մեկ էլ տեսար, արդեն բռնել է մազերիցդ։

Զախարն արհամարհանքով լի սպասում էր, մինչև սա

վերջացներ իր ճառը, և դառնալով դեպի կառապանը, շարունակեց.

— Այդպես ուրեմն, մարդու առանց որևէ պատճառի խայտառակ անելը,— ասում էր նա,— նրա համար ոչի՞նչ բան է։

— Ինչպես երևում է, անհաճ մարդ է,— հարցրեց դռնապանը։

— Օ՜,— խռպոտ ձայնով ասաց Զախարը նշանակալիորեն, կկոցելով աչքերը։— Այնքա՜ն անհաճ է, որ ասել չի լինի։ Այս այնպես չէ, այն էլ այնպես չէ, ման գալ էլ չգիտես, մատուցել էլ չես իմանում, ամեն ինչ կոտրատում ես, չես էլ սրբում, գոզանում ես, ուտում ես... Թուհ, գրո՜ղը քեզ տանի... Այսօր վրա էր պրծել, խայտառակությո՜ւն էր լսելը։ Իսկ ինչի՞ համար։ Մի կտոր պանիր էր մնացել դեռ անցյալ շաբաթվանից,— ամոթ է նույնիսկ շանը գցել,— բայց չէ, սպասավորը մտքո՜վն էլ չպետք է անցկացնի ուտել։ Հարցրեց, ասացի՝ չկա, և սկսեց. «Քեզ, ասում է, հարկավոր է կախե՜լ, քեզ, ասում է, հարկավոր է եռացող կուպրի մեջ խաշե՜լ և շիկացած ունելիով միսդ պոկե՜լ. քեզ հարկավոր է, ասում է, բարդու ցցի վրա՜ նստեցնել»։ Իսկ ինքը հենց վրա է գալիս, հենց վրա է գալիս... Ի՞նչ եք կարծում, ախպեր։ Մոտ օրերս, չգիտեմ ինչպես եղավ, ես նրա ոտը եռացրած ջրով խաշեցի, մի տեսնեիք՝ ինչպե՜ս էր բղավում։ Եթե ես մի կողմ չթռչեի, նա բռունցքով կրծքիս կխփեր... կարծես առիթ է փնտրում։ Իսկապես կխփեր...

Կառապանը գլուխը տարուբերեց, իսկ դռնապանն ասաց.

— Տեսնո՞ւմ ես, ուժեղ բարին է. զիջողություն չի՞ անում։

— Դե՜, քանի որ հայհոյում է, ուրեմն հիանալի բարին է,— սառնարյուն կերպով ասում էր միևնույն լակեյը։— Ուրիշ չհայհոյողն ավելի վատ է լինում. կնայի, կնայի, մեկ էլ հանկարծ մազերիցդ կբռնի, իսկ դու դեռ գլխի՜ էլ չես ընկել, թե ինչի համար։

— Իզուր չէ որ,— ասաց Զախարը, դարձյալ ոչ մի ուշադրություն չդարձնելով իր խոսքը կտրող լակեյի ասածներին,— նրա ոտքը դեռ մինչև հիմա էլ չի սաղացել. շարունակ սպեղանի է քսում. այդպե՜ս է պետք նրան.

— Զարմացք բարին է,— ասաց դռնապանը։

— Եվ աստվա՜ծ չանի,— շարունակում էր Զախարը.—

մի օր կխփի մարդ կսպանի. աստվա՜ծ վկա, կխփի՜ կսպանի։ Եվ ախր ամեն մի դատարկ բանի համար սովորություն է արել հայհոյել քաշալ... էլ չեմ ուզում մինչև վերջն ասել։ Իսկ այսօր էլ, ա՜յ, նոր բան է գտել. ասում է՝ «թունո՜տ»։ Ոնց էլ լեզուն դառնո՜ւմ է...

— Է՜հ, այդ ի՞նչ է որ,— ասում էր միևնույն լակեյը։— Եթե հայհոյում է, ապա փա՜ռք աստծու, աստված այդպիսի բարինին առողջություն տա... Իսկ երբ շարունակ լռում է. դու կողքով անց ես կենում, իսկ նա նայում, նայում ու մազերիցդ բռնում է, այ ինչպես նա, որի մոտ ես ապրում էի։ Իսկ եթե հայհոյում է, այդ ոչինչ...

— Տեղն է քեզ,— նկատեց Զախարը, զայրացած՝ անկոչ առարկություններից,— ես քեզ ավելի շատ կանեի։

— Ինչպե՞ս է նա «քաշալ» հայհոյում, Զախար Տրոֆիմիչ,— հարցրեց մոտ տասնհինգ տարեկան մի սպասավոր,— քաշալ սատանա՞, թե ինչպես։

Զախարն անմիջապես գլուխը շրջեց դեպի նա և վրան հառեց իր պղտոր հայացքը։

— Ձափդ ճանաչի՜ր,— ասաց նա հետո կծու։— Ջահել ես, ախպեր, շա՜տ ես թունդ։ Ես չեմ նայի, թե գեներալի սպասավոր ես. քաքուլի՜ցդ կբռնեմ։ Գնա՜ տեղդ։

Սպասավորը մի-երկու քայլ հեռացավ, կանգ առավ և ժպտալով նայում էր Զախարին։

— Ի՞նչ ես ատամներդ բաց անում,— խռպոտ ձայնով կատաղած ասաց Զախարը։— Սպասի՜ր, ձեռքս կընկնես, ականջներդ այնպես կդզեմ, որ ատամնե՜րդ ցույց կտաս ինձ։

Այդ ժամանակ տան մուտքից դուրս վազեց մի ահագին լակեյ, լիվրեի ֆրակի կոճակները բաց, ակսելբանտներով և կիսակոշիկներով։ Նա մոտեցավ սպասավորին, սկզբում նրան մի ապտակ խփեց, հետո հիմար անվանեց։

— Ի՞նչ եք անում, Մատվեյ Մոսեյիչ, ինչի՞ համար,— ասաց շվարած ու ամոթահար սպասավորը, բռնելով այտը և ջղաձգորեն թարթելով աչքերը։

— Ա՜։ Դու դեռ խոսո՞ւմ էլ ես,— պատասխանեց լակեյը։— Ետևիցդ վազում են ամբողջ տնով, իսկ դու այստե՜ղ ես։

Նա մի ձեռքով բռնեց նրա մազերից, կռացրեց գլուխը և

երեք անգամ մեքենագիրորեն, հավասար ու գանգազ կերպով բառնցքի հարվածներ հասցրեց նրա վզին։

— Բարինը հինգ անգամ զանգահարեց,— ավելացրեց նա իբրև բարոյախրատ,— իսկ քո պատճառով, լակոտի մե՛կը, ինձ են հայհոյում։ Կորի՛ր։

Եվ նա հրամայաբար նրան ցույց տվեց սանդուղքը։ Տղան մի բոպեի չափ կանգնեց տարակուսած, աչքերը մի երկու անգամ թարթեց, նայեց լակեյին և, տեսնելով, որ նրանց այլևս սպասելու ուրիշ բան չկա, բացի նույն բանի կրկնությունից, մազերը թափահարեց և գնաց դեպի սանդուղքը բոլորովին սթափվածի նման։

Ինչպիսի՜ հաղթանակ Զախարի համար։

— Մի լա՛վ նրան, մի լա՛վ, Մատվե՛յ Մոսեյիչ։ Էլի՛, էլի՛,— ասում էր նա, շարամտորեն ուրախանալով։— Է՜հ, քիչ եղավ։ Ապրե՛ս դու, Մատվե՛յ Մոսեյիչ։ Շնորհակալությո՛ւն։ Թե չէ՝ շատ թունդ է... Ա՛ռ քեզ «քաշալ սատանա»։ Առամներդ էլի բաց կանե՞ս։

Սառաների խումբը հոհոում էր, միահամուռ կերպով համակրանք ցույց տալով թե՛ սպասավորին ծեծող լակեյին, և թե՛ այդ բանի համար շարամտորեն ուրախացող Զախարին։ Միայն սպասավորին ոչ ոք չէր ցավակցում։

— Ա՛յ, ա՛յ հենց այդպես, չգիտես ինչու, երբեմն իմ նախկին բարինը,— նորից սկսեց այն նույն լակեյը, որ շարունակ ընդհատում էր Զախարին,— դու, պատահում էր, մտածում ես, թե ինչպես ուրախություն անես, իսկ նա հանկարծ, կարծես գուշակում է, թե ինչ էիր մտածում, անց է կենում կողքովդ և հենց այնպես բռնում մազերիցդ, ինչպես Մատվեյ Մոսեյիչը Անդրյուշկային։ Իսկ դա ի՞նչ է որ, եթե միայն հայհոյո՛ւմ է։ Մե՛ծ բան է, «քաշալ սատանա» է ասել։

— Քո մազերից, գուցե, նրա բարինն էլ բռներ,— պատասխանեց նրան կառապանը, ցույց տալով Զախարի վրա,— տեսնո՞ւմ ես, ինչ քիչա է զլխիդ։ Իսկ Զախար Տրոֆիմիչի ինչի՞ց պիտի բռնի։ Գլուխը, կարծես, դդում լինի... Գուցե միայն այդ երկու մորուքներից բռնի, ա՛յ այտերի վրա, ա՛յ, այդտեղ բռնելու բան կա՛...

Բոլորը հոհոացին, իսկ Զախարին ծանր հարվածի նման

ջղմեցրեց կառապանի արարքը, որի հետ միայն նա մինչև այժմ բարեկամական զրույց էր անում։

— Ա՛յ ես հիմա իմ բարինին կասեմ,— սկսեց նա խռպոտ ձայնով ու կատաղիորեն, դառնալով կառապանին,— նա կգտնի արդեն, թե որտեղիցդ բռնի. նա քո միրուքը կհարթուկի. տեսնո՞ւմ ես, լուլա-լուլա կախ է ընկել։

— Ուժեղ է քո բարինը, թե պետք է ուրիշների կառապանների մորուքները հարթի։ Չէ՛, դուք ձեր սեփականն ունեցեք, այն ժամանակ էլ հարթեցեք, թե շա՛տ ճարպիկ է։

— Քեզ չվերցնե՞նք կառապանի տեղ, ժուլիկի մեկը,— խռպոտ ձայնով ասաց Զախարը— Դու սկի արժանի էլ չես, որ հենց քե՛զ լծենք իմ բարինի համար։

— Դե՜, ամա բարին է, հա՜,— կծու նկատեց կառապանը։— Որտե՞ղ գտար այդպիսին։

Թե՛ ինքը, թե՛ դռնապանը, թե՛ սափրիչը, թե՛ լակեյը և թե հայհոյանքների սիստեմի պաշտպանը, բոլորն էլ հոհոացին։

— Ծիծաղե՛ք, ծիծաղե՛ք, իսկ ես, ա՛յ, բարինին կասեմ,— խզզացրեց Զախարը։— Իսկ դու,— ասաց նա դառնալով դռնապանին,— պետք է այս ավազակներին զսպեիր և ոչ թե ծիծաղեիր։ Դու ինչի՞ համար ես դրված այստեղ։ Ամեն կարգ ու կանոն պահպանելու համար։ Իսկ դու ի՞նչ ես անում։ Ա՛յ, ես կասեմ բարինին, դու սպասի՛ր, կտեսնե՞ս։

— Դե լա՛վ, լա՛վ, Զախար Տրոֆիմիչ,— ասում էր դռնապանը, աշխատելով հանգստացնել նրան.— ի՞նչ արավ նա քեզ որ։

— Ինչպե՞ս է համարձակվում նա այդպես խոսել իմ բարինի մասին,— առարկեց Զախարը ջերմորեն, մատնանշելով կառապանին։— Գիտե՞, արդյոք, նա, թե ով է իմ բարինը,— ակնածալից հարցրեց նա։— Ախր դու,— ասում էր նա՝ դիմելով կառապանին,— երազումդ էլ այդպիսի բարին տեսնել չես կարող. բարի՜, խելո՜ք, գեղեցի՜կ։ Իսկ քոնը, կարծես, սոված յարո՞ւ լինի։ Խայտառակություն է նայելը, թե ինչպե՞ս եք բակից դուրս գալիս դարչնագույն զամբիկը լծած, կարծես՝ մուրացկաններ լինեք։ Կերածներդ էլ բողկ է կվասով։ Վրայիդ արխալուղին նայի՛ր՝ ծակերին հաշիվ չկա՛...

Պետք է նկատել, որ կառապանի արխալուղի վրա ոչ մի ծակ էլ չկար։

— Հա՛, այդպիսին էլ չես գտնի,— ընդհատեց կառապանը և ճարպկությամբ դուրս քաշեց Զախարի թևատակից դուրս ցցված շապկի կտորը։

— Բավակա՞ն է, հերի՞ք եղավ ձեզ,— կրկնում էր դռնապանը՝ մեկնելով ձեռքերը նրանց միջև։

— Ա՜։ Դու իմ շորը պատռե՞ս,— բղավեց Զախարը, է՛լ ավելի դուրս քաշելով շապիկը։— Սպասի՛ր, ես բարինին ցույց տա՜մ։ Ա՛յ, նայեցե՛ք, ախպեր, թե ինչ արավ նա. պատռեց իմ շորը...

— Ախր, ե՞ս,— ասում էր կառապանը, մի քիչ վախեցած։— Երևի բարինն է գզգզել...

— Էդպիսի բարինը կգզգզի՞,— ասում էր Զախարը։— Էնպիսի բարի հոգի ունեցողը. ախր նա ոսկի է և ոչ թե բարին, աստված առողջությո՞ւն տա նրան։ Ես նրա մոտ ապրում եմ ինչպես երկնային արքայության մեջ. ոչ մի կարիք չեմ տեսել, ծնվածս օրից հիմար չի ասել. ապրում եմ առատության, անդորրության մեջ, ուտում եմ նրա սեղանից, գնում եմ՝ ուր ուզում եմ, ա՛յ թե ինչ... Իսկ գյուղում ես հատուկ տուն ունեմ, հատուկ բանջարանոց, ձրի տրվող հաց. բոլոր մուժիկները խոր գլուխ են տալիս ինձ։ Ես թե՛ կառավարի՞չ եմ, թե՛ մոժեդոմ։ Իսկ դուք ձեր...

Զայրույթից նրա ձայնը կտրվեց, որպեսզի կարողանար վերջնականապես ոչնչացնել իր հակառակորդին։ Նա մի բոպե կանգ առավ, որ ուժերը հավաքի և մի թունոտ խոսք գտնի, բայց կուտակված մաղձի առատությունից չկարողացավ գտնել։

— Դու մի սպասի, թե ինչ պատասխան պիտի տաս շորիս համար. քեզ շոր պատռե՞լ ցույց կտան...— արտասանեց նա վերջապես։

Դիպչելով բարինին, ծանր կերպով վիրավորում էին նաև Զախարին։ Շարժեցին նրա թե՛ պատվասիրությունը, թե՛ ինքնասիրությունը. անձնվիրությունն արթնացավ և արտահայտվեց ամբողջ ուժով։ Նա պատրաստ էր մաղձի թույնը թափել ո՛չ միայն իր հակառակորդի, այլև նրա բարինի, այդ բարինի ազգականների վրա, թեև նույնիսկ չգիտեր էլ, թե

կան այդպիսի ազգականներ, ինչպես և՝ ծանոթների վրա։ Այստեղ նա զարմանալի ճշգրտությամբ կրկնում էր այն բոլոր զրպարտություններն ու չարախոսությունները տերերի մասին, որ նա քաղել էր կառապանի հետ ունեցած նախկին զրույցներից։

— Իսկ դուք հո ձեր բարինի հետ, նզովված տկլորնե՞ր, չհուդնե՞ր, գերմանացուց էլ վա՞տ եք,— ասում էր նա։— Ես գիտեմ, թե ձեր պապն ով է եղել. գործակատար՝ հնոտիների շուկայում։ Երեկ երեկոյան հյուրեր էին դուրս գալիս ձեր մոտից, կարծեցի, թե ավազակներ են տուն մտել. մարդ մե՞ղք է գալիս նայելիս։ Մայրդ էլ հնոտիների շուկայում գողացած ու մաշված շորեր էր վաճառում։

— Բավակա՞ն է, հերի՞ք եղավ ձեզ...— հանդարտեցնում էր դռնապանը։

— Այո՛,— ասում էր Զախարը։— իմ բարինը հո, փա՞ռք աստծու, տոհմական ազնվական է. բարեկամներն էլ՝ գենեռալներ, կոմսեր ու իշխաններ։ Հլա ամեն կոմսի էլ կողքին չի նստեցնի. այնպիսիները կան, որ գալիս են ու երկար ըսպասում նախասենյակում... Գալիս են բոլոր հեղինակները...

— Այդ ի՞նչ մարդիկ են, ախպեր ջան, այդ հեղինակները,— հարցրեց դռնապանը, կամենալով վերջ տալ գժտությանը։— Ջինովնիկնե՞ր են, ինչ է։

— Ո՛չ, դրանք այնպիսի պարոններ են, որոնք իրենք են հնարում, ինչ որ իրենց պետք լինի,— բացատրեց Զախարը։

—Իսկ ի՞նչ են անում նրանք ձեզ մոտ,— հարցրեց դռնապանը։

— Ի՞նչ։ Մեկը ծխամորճ է պահանջում, մյուսը՝ խերես...— ասաց Զախարն ու կանգ առավ, նկատելով, որ համարյա բոլորն էլ հեգնորեն ժպտում են։

— Իսկ դուք բոլորդ այստեղ, որքան որ կաք, սրիկանե՞ր եք,— շատ արագ ասաց նա, միակողմանի հայացք գցելով բոլորի վրա։— Քեզ ցո՛ւյց կտան ուրիշի շոր պատռել։ Ես գնամ բարինին ասե՛մ,— ավելացրեց նա և արագ տուն գնաց։

—Հերի՞ք եղավ քեզ։ Կա՜ց, կա՜ց,— բղավում էր դռնապանը։— Զախա՞ր Տրոֆիմիչ։ Գնանք գարեջրատուն, խընդրում եմ, գնանք...

Զախարը կանգ առավ ճանապարհին, արագ շուռ եկավ և,

առանց ծառաների խոնարհն նայելու, էլ ավելի արագ քշեց դեպի փողոց։ Նա, առանց շրջվելու դեպի որևէ մեկը, հասավ զարհուրատան դռանը, որը գտնվում էր դիմացը. այստեղ նա շուտ եկավ, մոայլ հայացք նետեց ամբողջ հասարակության վրա և էլ ավելի մոայլ բոլորին նշան արավ ձեռքերով, որ գնան իր ետևից, և ներս մտավ դռնից։

Մյուսները նույնպես ցրվեցին ո՛րը զարհուրատուն, ո՛րը տուն. մնաց միմիայն լակեյը։

— Լա՛վ, ի՞նչ պիտի լինի, եթե նույնիսկ բարինին տար էլ,— ինքն իրեն մտախոհ, ստանդարտ կերպով ասում էր նա, դանդաղորեն բաց անելով ծխախոտատուփը։— Լավ բարին է, ամեն բանից երևում է, կհայհոյի՞ միայն։ Այդ ի՞նչ է որ, եթե կհայհոյի՞։ Թե չէ՝ այնպիսիները կան, որ կնայեն կնայեն, մեկ էլ տեսար՝ մազերից բռնեցին...

XI

Ժամը չորսից մի քիչ անց Զախարն զգուշությամբ, առանց աղմուկի, բաց արեց նախասենյակը և մատների ծայրերի վրա անցավ իր սենյակը. այնտեղ նա մոտեցավ բարինի առանձնասենյակի դռանը և սկզբում ականջը մոտեցրեց, հետո պպզեց և փականքի ծակից ներս նայեց։

Առանձնասենյակում լավում էր ներդաշնակ խումփոցը։

— Քնած է,— շշնջաց նա,— պետք է արթնացնել. շուտով չորս և կեսը կլինի։

Նա հաղաց և մտավ առանձնասենյակ։

— Իլյա՛ Իլյիչ։ Ա՛յ Իլյա Իլյիչ,— տիսեց նա մեղմ, կանգնած Օբլոմովի գլխավերևը։

Խումփոցը շարունակվում էր։

— Ի՞նչ ամուր է քնած,— ասաց Զախարը.— կարծես քարտաշ լինի։ Իլյա՛ Իլյիչ։

Զախարը թեթև շոշափեց Օբլոմովի թևքը։

— Վե՛ր կացեք. չորս և կեսն է։

Իլյա Իլյիչը երբև պատասխան, միայն մռմռաց բայց չզարթնեց։

— Դե վե՛ր կացեք, Իլյա Իլյիչ։ Այս ի՞նչ խայտառակություն է,— ասում էր Զախարը՝ բարձրացնելով ձայնը։

Պատասխան չկար։

— Իլյա Իլյիչ՛,— կրկնում էր Զախարը, շոշափելով բարինի թևքը։

Օբլոմովը գլուխը մի փոքր շուռ տվեց և Զախարին նայեց, դժվարությամբ բաց անելով մի աչքը, որի մեջ արտահայտություն էր գտել կաթվածը։

— Ո՞վ է այստեղ,— հարցրեց նա խռպոտ ձայնով։

— Ես եմ։ Վե՛ր կացեք։

— Գնա, կորի՛ր,— փնթփնթաց Իլյա Իլյիչը և նորից խորասուզվեց ծանր քնի մեջ։

Խումփոցի փոխարեն հնչեց տուլոցը քթի մեջ։ Զախարը քաշեց նրա փեշից։

— Ի՞նչ ես ուզում,— սպառնալիորեն հարցրեց Օբլոմովը, հանկարծ երկու աչքն էլ բաց անելով։

— Դուք պատվիրեցիք արթնացնել ձեզ։

— Լա՛վ, գիտեմ։ Դու քո պարտքը կատարեցիր և կորի՛ր։ Մնացածն իմ գործն է...

— Չեմ գնա,— ասում էր Զախարը, նորից ձեռք տալով նրա թևքին։

— Դե ասում եմ, ձեռք մի՛ տա,— հեգնությամբ ասաց Իլյա Իլյիչը և, գլուխը թաղելով բարձի մեջ, հենց այն է՝ ուզում էր խումփուլ։

— Չի կարելի, Իլյա Իլյիչ,— ասում էր Զախարը,— ես շատ ու շատ ուրախ կլինեի, բայց ամենևին չի կարելի։

Թվ թևքը ձեռքով շարժում էր բարինին։

— Դե՛, շնորհ արա, խնդրում եմ, մի՛ խանգարիր,— համոզկեր եղանակով ասում էր Օբլոմովը՝ բաց անելով աչքերը։

— Հա՛, մարդ շնորհ անի ձեզ, իսկ հետո թեքներդ կզայրանաք, որ չեմ արթնացրել...

— Ա՜խ, տե՛ր աստված։ Սա ի՞նչ մարդ է,— ասում էր Օբլոմովը։— Դե, թող մի՛ րոպե գոնե քնեմ, լա՛վ, ի՞նչ բան է, մի՛ րոպե։ Ես ինքս գիտեմ...

Իլյա Իլյիչը հանկարծ լռեց՝ անակնկալ կերպով հաղթահարված քնից։

— Գիտե՞ս շնթռելը,— ասում էր Զախարը, վստահ, որ բարինը չի լսում։— Տես, շնթռե՞լ է, կարծես բարդու քոթուկ

լինի։ Ինչի՞ համար ես դու լույս աշխարհ եկել։ Դե վե՛ր կաց, ասում եմ քեզ...— ուզում էր գոռալ Զախարը։

— Ի՞նչ, ի՞նչ,— սպառնագին ասաց Օբլոմովը, գլուխը բարձրացնելով։

— Ինչո՞ւ, պարոն, չեք վեր կենում,— մեղմ պատասխանեց Զախարը։

— Ո՛չ, ինչպե՞ս ասացիր. հը՞։ Ինչպե՞ս ես համարձակվում այդպես, հը՞։

— Ինչպե՞ս։

— Կոպիտ խոսե՞լ։

— Այդ ձեզ երազում է թվացել... ասված վկա, երազում։

— Դու կարծում ես, ես քնա՞ծ եմ։ Ես քնած չեմ, ես ամեն բան լսում եմ...— Իսկ ինքն արդեն դարձյալ քնած էր։

— Դե,— ասում էր Զախարը հուսահատված,— ա՜խ դու, գլխո՜ւկ։ Ի՞նչ ես կոճղի նման վեր ընկել։ Մարդու սիրտ է խառնում վրադ նայելիս։ Նայեցե՛ք մի, բարի մարդիկ... Թո՜ւհ։

— Վե՛ր կացեք, վեր կացեք,— հանկարծ, վախեցած ձայնով, ասաց նա։— Իլյա՛ Իլյիչ։ Նայեցե՛ք, թե ինչ է կատարվում ձեր շուրջը...

Օբլոմովը արագ բարձրացրեց գլուխը, շուրջը նայեց և նորից պառկեց, խոր հառաչելով։

— Հանգի՛ստ թող ինձ,— ասաց նա գոռոզաբար։— Ես հրամայել եմ քեզ զարթնեցնել ինձ, իսկ հիմա հրամանս վերացնում եմ, լսո՞ւմ ես։ Ես ինքս կարթնանամ, երբ քեֆս տա։

Երբեմն Զախարը ձեռք էր քաշում նրանից՝ ասելով.

— Դե շնթռի՛ր, գրողի ծո՛ցը գնաս։

Իսկ ուրիշ անգամ էլ կպնդեր իրենը, այժմ էլ պնդում էր։

— Վե՛ր կացեք, վե՛ր կացեք,— ամբողջ կոկորդով մեկ բղավեց նա և երկու ձեռքով բռնեց Օբլոմովի փեշից ու թևքից։

Օբլոմովը հանկարծ, անսպասելի կերպով թռավ, ոտքի կանգնեց և քշեց Զախարի վրա։

— Դե, սպասի՛ր, ա՛յ, ես քեզ կսովորեցնեմ, թե ի՞նչ է նշանակում անհանգստացնել բարինին, երբ նա հանգստանա՞լ է ուզում,— ասում էր նա։

Զախարն ինչքան ուժ ուներ խույս տվեց նրանից, բայց Օբլոմովը երրորդ քայլը չարած՝ քնից բոլորովին սթափվեց և սկսեց ճմլկոտալ՝ հորանջելով։

— Կվաս... տուր...— ասում էր նա հորանջումների ընդմիջումներին։

Հենց այստեղ էլ, Զախարի ետևից մեկը զիլ փոթկոց բարձրացրեց։ Երկուսն էլ ետ նայեցին։

— Շտո՞լց, Շտո՞լց,— բերկրալից բղավում էր Օբլոմովը՝ նետվելով դեպի հյուրը։

— Անդրեյ Իվանի՞չ,— ժպտադեմ ասում էր Զախարը։

Շտոլցը շարունակում էր ծիծաղից փորը բռնել. նա ակամա էր եղել տեղի ունեցող ողջ տեսարանին։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1

Շտոլցը գերմանացի էր միայն կիսով չափ, հոր կողմից. նրա մայրը ռուս էր։ Նա ուղղափառ դավանության էր, մայրենի լեզուն ռուսերենն էր, որ նա սովորել էր մորից և գրքերից, համալսարանի լսարանում և գյուղական տղաների հետ խաղալիս, նրանց հայրերի հետ զրուցելիս և Մոսկվայի շուկաներում։ Իսկ գերմաներենը նա ժառանգել էր հորից ու սովորել գրքերից։

Շտոլցը մեծացել ու կրթվել էր Վերխլյովո գյուղում, որտեղ նրա հայրը կառավարիչ էր։ Ութ տարեկան հասակից նա հոր հետ զբաղվում էր աշխարհագրական քարտեզներով, հեգելով կարդում էր Հերդերի, Վիլանդի գրվածքները, Աստվածաշնչի տները և հանրագումար էր տալիս գյուղացիների, քաղքենիների ու գործարանային բանվորների անգրագետ հաշիվներին, իսկ մոր հետ կարդում էր սրբազան պատմությունը, սովորում էր Կռիլովի առակները և հեգելով կարդում էր «Տելեմաքը»։

Ցուցափայտից ազատվելով, նա տղաների հետ վազում էր քանդելու թռչունների բները, և հաճախ, դասի ժամին կամ աղոթքի միջոցին, նրա գրպանից հնչում էր ագռավաճտերի ծվծվոցը։

Պատահում էր նաև, որ հայրը ճաշից հետո նստած էր լինում պարտեզում ծառի տակ և ծխամորճ էր քաշում, իսկ մայրը որևէ ֆուֆայկա էր գործում կամ հենքի վրա ասեղնագործում. հանկարծ փողոցից լսվում էր աղմուկ, աղաղակ և մարդկանց ամբողջ մի բազմություն տուն էր խուժում։

— Ի՞նչ է պատահել,— հարցնում էր վախեցած մայրը։

— Երևի, դարձյալ Անդրեյին են բերում,— սառնասիրտ կերպով ասում էր հայրը։

Դռները լայն բացվում էին և գյուղացիների, գեղջկուհիների, տղաների բազմությունը ներխուժում էր պարտեզ։ Իսկապես որ, բերել են Անդրեյին, բայց ի՞նչ դրությամբ. առանց կոշիկների, պատառոտված շորերով և՝ կամ ի՞ր քիթը ջարդած, կամ ուրիշ տղայի։

Մայրը միշտ անհանգստությամբ էր նայում, թե ինչպես Անդրյուշան մի կես օրով անհետանում էր տնից, և եթե միայն հոր որոշակի պատվերը չլիներ՝ նրան չխանգարելու մասին, մայրը նրան իր կողքին կպահեր։

Մայրը լողացնում էր նրան, փոխում սպիտակեղենը, շորերը, և Անդրյուշան մի կես օր ման էր գալիս մաքուր, բարեկիրթ տղայի նման, իսկ երեկոյան դեմ, երբեմն և առավոտյան դեմ, դարձյալ մեկն ու մեկը քարշ էր տալիս նրան ցեխոտված, գզգզված, անճանաչելի, կամ գյուղացիներն էին բերում նրան սայլով խոտի հետ, կամ վերջապես, գալիս էր ձկնորսների հետ՝ նավակով, ուլկանի վրա քնած։

Մայրն սկսում էր լաց լինել, իսկ հայրը ոչինչ՝ դեռ ծիծաղում էլ էր։

— Լա՜վ բուրշ կլինի, լա՜վ բուրշ,— ասում էր երբեմն։

— Ի սեր աստծո, Իվան Բոգդանիչ,— տրտնջում էր մայրը,— օր չի անցնում, որ նա առանց կապտուկի վերադառնա, իսկ նորերս էլ քիթն էր ջարդել, արյունոտել։

— Ի՞նչ երեխա է, որ ոչ մի անգամ իր կամ մի ուրիշի քիթը չջարդի,— ասում էր հայրը ծիծաղելով։

Մայրը լաց կլիներ, լաց կլիներ, հետո կնստեր դաշնամուրի առջև և Գերցով տարվելով՝ կմոռանար. արտասուքներն իրար ետևից կթափվեին ստեղների վրա։ Բայց ահա գալիս է Անդրյուշան կամ նրան բերում են. նա կսկսեր պատմել այնպես աշխույժ, այնպես կենդանի, որ մորն էլ կզվարճացներ. բացի այդ՝ այնքա՜ն հասկացող է։ Շուտով նա սկսեց «Տելեմաքն» այնպես կարդալ, ինչպես մայրն ինքը, և նրա հետ միասին շորս ձեռքով նվագել։

Մի անգամ նա անհետացավ արդեն ամբողջ շաբաթով. մայրը լաց լինելով կուրացավ, իսկ հայրը ոչինչ, ման էր գալիս պարտեզում և ծխում։

— Այ, եթե Օբլոմովի որդի՞ն կորչեր,— ասաց նա իր պատասխան կնոջ առաջարկին՝ գնալու-փնտրելու Անդրեյին,— ես ամբողջ գյուղն ու զեմսկիի ոստիկանությունը ոտքի կհանեի, իսկ Անդրեյը կգա։ Օ՜, լավ բուրշ է։

Հետևյալ օրն Անդրեյին գտան հանգիստ քնած իր անկողնում, իսկ մահճակալի տակ դրած էր մեկի հրացանը և մի ֆունտ վառոդ ու կոտորակ։

— Ո՞ւր էիր կորել։ Որտեղի՞ց ես վերցրել հրացանը,— հարցերի տարափ տեղաց մայրը։— Ի՞նչ ես ձայնդ կտրել։

— Այնպե՞ս,— այս էր լինում միայն պատասխանը։

Հայրը հարցրեց՝ պատրաստե՞լ է Կոռնելիոս Նեպոտից տրված թարգմանությունը գերմաներեն լեզվով։

— Ոչ,— պատասխանեց նա։

Հայրը մի ձեռքով բռնեց նրա օձիքից, հանեց դարպասից դուրս, գլխարկը դրեց նրա գլխին և ետևից այնպես հրեց, որ վայր գցեց։

— Գնա՛, որտեղից եկել ես,— ավելացրեց նա,— և նորից արի թարգմանությունը հետդ, մի գլխի փոխարեն երկու գլուխ կթարգմանես, իսկ մորդ համար կսովորես ֆրանսիական կատակերգությունից նրա տված դերը. առանց այդ անելու՝ չերևա՛ս։

Անդրեյը վերադարձավ մի շաբաթից և բերեց թե՛ թարգմանությունը, և թե՛ սովորած դերը։

Երբ մի քիչ մեծացավ, հայրը նրան իր հետ նստեցնում էր զսպանակավոր սայլակը, երասանակները տալիս նրան և պատվիրում էր տանել գործարան, հետո դաշտերը, հետո քաղաք, վաճառականների մոտ, ատյանները, հետո նայելու որևէ կավ, որ նա վերցնում էր մատի վրա, հոտոտում, երբեմն լեզվին կպցնում, տալիս էր նաև որդուն հոտոտելու և բացատրում էր, թե ինչպիսի կավ է, ինչի պետք կգա, կամ թե չէ՝ կգնար դիտելու, թե ինչպես են պոտաշ կամ կուպր ստանում, ճարպ հալում։

Տասնչորս-տասնհինգ տարեկանում տղան հաճախ մենակ, սայլակով կամ ձիով, պայուսակը թամբին կապած, հոր

ձանձնարարություններով քաղաք էր ուղևորվում, և երբեք չէր պատահում, որ նա որևէ բան մոռանար, այլ կերպ աներ, աչքից փախցներ, սխալվեր։

— Recht gut, mein lieber lunge!— ասում էր հայրը, լսելով նրա հաշվետվությունը և ձեռքի լայն ափով խփելով նրա մեջքին, տալիս էր երկու-երեք ռուբլի, նայելով հանձնարարության կարևորությանը։

Մայրը դրանից հետո Անդրյուշայի վրայից երկար լմանում էր մուրը, կեղտը, կավը և ճարպը։

Նրան այնքան էլ դուր չէր գալիս այդ աշխատանքային, գործնական դաստիարակությունը։ Նա վախենում էր, թե իր որդին էլ այնպիսի գերմանացի բյուրգեր կդառնա, ինչպիսիներից սերում էր նրա հայրը։ Ամբողջ գերմանական ազգի վրա նա նայում էր որպես պատենտավոր քաղքենիների ամբոխի, չէր սիրում այն կոպտությունը, ինքնուրույնությունն ու ամբարտավանությունը, որոնցով գերմանական մասսան ամենուրեք առաջադրում է հազարամյակի ընթացքում մշակված իր բյուրգերական իրավունքները, ինչպես որ կռվը կրում է իր եղջյուրները, ի դեպ՝ չկարողանալով թաքցնել այն։

Նրա կարծիքով ամբողջ գերմանական ազգի մեջ չկար և չէր կարող լինել ոչ մի ջենտլմեն։ Նա գերմանական բնավորության մեջ չէր նկատում ոչ մի մեղմություն, նուրբ քաղաքավարություն, զիջողություն, ոչ մի այնպիսի բան, որ կյանքն այնքան հաճելի է դարձնում լավ հասարակության մեջ, որով կարելի է շրջանցել որևէ կանոն, խախտել ընդհանուր սովորությունը, չենթարկվել կանոնադրությանը։

Ո՜չ, այդ անկիրթները պահանջում են, պնդում են այն, ինչ նրանց մոտ հաստատված է, ինչ մտքներում դնում են, պատրաստ են նույնիսկ պատը ճեղքել ճակատով, միայն թե կանոնների համաձայն վարվեն։

Նա որպես դաստիարակչուհի ապրել էր հարուստ տան մեջ և առիթ էր ունեցել լինելու արտասահմանում, անցել էր ամբողջ Գերմանիայով և բոլոր գերմանացիներին իրար խառնել-դարձրել էր կարճ ծխամորճեր ծխող և ատամների արանքից թքող գործակատարների, ուրհեստավորների, վաճառա-

1 Շատ լավ, իմ սիրելի տղա (գեր.)։

Ֆաբրիների, գինվորների կերպարանք ունեցող ու գավազանի նման ձիգ սպաների և առօրյա դեմք ունեցող պաշտոնյաների մի ամբոխ, որոնք ընդունակ են միայն սև աշխատանքի, շարքաշ կերպով փող դատելու, գռեհիկ կարգերի, կյանքի տաղտկալի կանոնավորության և պարտականությունների ծծախնդիր կատարման. այդ բոլոր բյուրգերները, կոշտուկոպիտ վարվելաձևերով, մեծ կոպիտ ձեռքերով, դեմքի քաղքենիական թարմությամբ ու կոպիտ խոսելակերպով։

«Ինչպես էլ զարդարես գերմանացուն», մտածում էր նա, ինչպիսի նուրբ ու սպիտակ շապիկ էլ նա հագնի, թող լաքած կոշիկներ հագնի, նույնիսկ դեղին ձեռնոցներ հագնի, այնուամենայնիվ, նա կարծես կոշկի կաշուց լինի ձևած. սպիտակ մանժետների տակից շարունակ դուրս են ցցվում նրա կոշտ ու կարմրավուն ձեռքերը, իսկ նրբագեղ հագուստի տակից երևում է եթե ոչ բուլկեգործը, ապա բուֆետապանը։ Այդ կոշտ ձեռքերը հենց այնպես էլ ուզում են բզով գործ անել կամ շատ-շատ՝ նվագախմբում կնտնտոց բռնել»։

Իսկ որդու մեջ նրան պատկերանում էր բարինի իդեալը, թեև ճնշված դրությունից նոր դուրս եկած, բյուրգեր-հորից ծնված, բայց այնուամենայնիվ, ռուս ազնվականուհու որդու, այնուամենայնիվ սպիտակ, հիանալի կազմվածք ունեցող տղայի, փոքրիկ ձեռքերով ու ոտերով, մաքուր երեսով, պարզ, ժիր հայացքով, այնպիսին, որպիսիներին նա տեսել-հիացել էր ռուսական հարուստ տներում, և նմանապես արտասահմանում, իհարկե ո՞չ գերմանացիների մոտ։

Եվ հանկարծ նրա որդին համարյա թե ինքը պետք է դարձնի ջրաղացքարերը, ֆաբրիկաներից ու դաշտերից տուն վերադառնա, ինչպես նրա հայրը, ճարպի, թրիքի մեջ թաթախված, կարմիր-կեղտոտ, կոշտացած ձեռքերով, գայլի՞ ախորժակով։

Նա նետվում էր կտրատելու Անդրյուշայի եղունգները, խուճուճելու գանգուրները, կարելու նրբագեղ օձիքներ ու կրծքակալներ. պատվիրում էր քաղաքում փոքրիկ բաճկոններ. սովորեցնում էր նրան ականջ դնելու Գերցի մտախոհ հնչյուններին, երգում էր նրան ծաղիկների մասին, կյանքի պոեզիայի մասին, շշնջում էր մերթ զինվորի, մերթ գրողի փայլուն կոչման մասին, նրա հետ միասին երազում էր այն բարձր դերի մասին, որ բաժին է ընկնում ոմանց...

Եվ այս ամբողջ հեռանկարը պետք է խորտակվի համրիչի՞ չիչխկոցից, գյուղացիների յուղոտված ստացագրե՞րը կարդալուց, գործարանային բանվորի՞ հետ գործ ունենալուց։

Նա ատեց մինչև անգամ այն սայլակը, որով Անդրյուշան քաղաք էր գնում, ինչպես և այն մոմլաթե վերարկուն, որ նրան հայրն էր ընծայել, և զամշե կանաչ ձեռնոցները՝ աշխատանքային կյանքի այդ բոլոր կոպիտ ատրիբուտները։

Դժբախտաբար, Անդրյուշան հիանալի էր սովորում, և հայրը նրան ռեպետիտոր դարձրեց իր փոքրիկ պանսիոնում։

Լավ, թող այդպես լիներ. բայց հայրը նրան ոռճիկ նշանակեց, ինչպես մի աշխատավորի, իսկ և իսկ գերմանացիների նման, ամսական տասը ռուբլի, և նրան ստիպում էր ստորագրել գրքում։

Մխիթարվի՞ր, բարի մայր. քո որդին մեծացավ ռուսական հողի վրա, ոչ սովորական ամբոխի մեջ, բյուրգերական կովային եղջյուրներով, ջրաղացքարեր պտտեցնող ձեռքերով։ Մոտերքում գտնվում էր Օբլոմովկան. այնտեղ հավիտենական՞ տոն է։ Այնտեղ աշխատանքն իրենց վրայից դեն են գցում, ինչպես մի լուծ. այնտեղ բարինը լույսը ծագելուն պես տեղից վեր չի կենում և գործարանները չի շրջում, ճարպով ու յուղով օծված անիվների ու զսպանակների մեջ։

Վերխլյովում է կանգնած, թեև տարվա մեծ մասը դատարկ, փակված տունը, բայց չարաճճի տղան հաճախ մտնում էր այդ տունը և տեսնում էր այնտեղ երկար դահլիճներ ու սրահներ, մութ նկարներ պատերին, ոչ կոպիտ թարմությամբ, ոչ կոշտ մեծ ձեռքերով, տեսնում էր նվաղկոտ երկնագույն աչքեր, պուդրի ցանած մազեր, սպիտակ, քնքշացած դեմքեր, պարարտ կրծքեր, կապույտ ջղեր ունեցող քնքուշ ձեռքեր՝ հպարտությամբ սրի երախակալին դրած դողդոջուն մանժետներով. տեսնում էր ազնիվ անօգուտ գրգանքներ, դիպակի, թավշի և հաշիանների մեջ անցկացրած սերունդներ։

Նա այդ դեմքերով էր անցնում փառավոր ժամանակների, ճակատամարտերի, անունների պատմությունը. կարդում էր պատմվածքը հին ժամանակների մասին, ոչ այնպիսին, ինչպիսին պատմում էր հայրը ծխամորճ քաշելով, հարյուր անգամ թքելով, Սաքսոնիայում անցկացրած կյանքի մասին՝

ջաղգամի ու կարտոֆիլի միջև, շուկայի և բանջարանոցի միջև...

Երեք տարին մի անգամ այդ դղյակը հանկարծ լցվում էր ժողովրդով, եռում էր կյանքը, տոները, պարահանդեսները։ Երկարաձիգ սրահներում գիշերները լույս էր փայլփլում։

Գալիս էին իշխանն ու իշխանուհին ընտանիքի հետ միասին. իշխանը, մի ալեհեր ծերունի, թառամած մագաղաթե գեմքով, դուրս պրծած աղոտ աչքերով և մեծ ճաղատ ճակատով, երեք աստղ կրծքին, ոսկե ծխախոտատուփով, հակինթե գլուխ ունեցող գավազանով, թավշե կոշիկներ հագած. իշխանուհին՝ գեղեցկությամբ, բոյով ու ծավալով վեհատեսիլ մի կին, որին, կարծես, ոչ ոք երբեք չէր մոտեցել, չէր գբրկել, չէր համբուրել, նույնիսկ իշխանն ինքը, թեև այդ կինը հինգ երեխա ուներ։

Նա բարձր էր թվում այն աշխարհից, ուր երեք տարին մի անգամ բարեհաճում էր լինել. ոչ ոքի հետ չէր խոսում, ոչ մի տեղ չէր գնում, այլ նստում էր անկյունի կանաչ սենյակում երեք պառավների հետ, մեկ էլ ոտքով, պարտեզի միջով, ծածկված սրահով եկեղեցի էր գնում և նստում աթոռի վրա շիրմայի ետև։

Դրա փոխարեն տանը, բացի իշխանից և իշխանուհուց, կար մի այնպիսի ուրախ ու աշխույժ աշխարհ, որ Անդրյուշան իր մանկական կանաչավուն աչիկներով միանգամից տեսնում էր երեք կամ չորս զանազան ոլորտներ, ժիր մտքով ագահորեն և անգիտակցաբար դիտում էր այդ այլազան ամբոխի տիպերը, որպես դիմակահանդեսի խայտաբղետ երևույթներ։

Այնտեղ էին Պիեռ և Միշել իշխանները, որոնցից առաջինը Անդրյուշային իսկույն սովորեցրեց, թե ինչպես են ցայգանվագ հնչեցնում հեծելազորի և հետևակազորի մեջ, ինչպիսին են լինում հուսարների և ինչպիսին դրագունների սրերն ու խթանները, ինչ գույնի են լինում յուրաքանչյուր գնդի ձիերը և ուսումից հետո ո՞ւր պետք է անպատճառ մրտնել՝ չխայտառակվելու համար։

Մյուսը, Միշելը, հենց որ ծանոթացավ Անդրյուշայի հետ, նրան դիրք կանգնեցրեց և սկսեց բռունցքներով զարմանալի

բաներ անել՝ հարվածելով Անդրյուշայի մերթ քթին, մերթ փորին, հետո էլ ասաց, թե սա անգլիական կռիվ է։

Երկու-երեք օր հետո Անդրեյը, միմիայն գյուղական թարմության շնորհիվ և մկանուտ ձեռքերի օգնությամբ նրա քիթը ջարդեց թե՛ անգլիական և թե՛ ռուսական եղանակով, առանց որևէ գիտության, և հեղինակություն ձեռք բերեց երկու իշխանների մոտ էլ։

Կային երկու իշխանազնուհիներ էլ, տասնմեկ և տասներկու տարեկան աղջիկներ, բարձրահասակ, բարեկազմ, շքեղ հագնված, որոնք ոչ մեկի հետ չէին խոսում, ոչ մեկի չէին բարևում և վախենում էին մուժիկներից։

Կար նրանց դաստիարակչուհին, m-lle Ernestine-ը, որ գնում էր Անդրյուշայի մոր մոտ՝ սուրճ խմելու և նրան սովորեցրեց Անդրյուշային գանգուրներ սարքել։ Դաստիարակչուհին երբեմն վերցնում էր նրա գլուխը, դնում ծնկներին և թղթով մազերը ոլորում մինչև սաստիկ ցավ պատճառելը, հետո սպիտակ ձեռքերով բռնում էր նրա երկու այտերից և այնպե՜ս փաղաքշանքով համբուրում։

Այնուհետև կար մի գերմանացի, որ հաստոցի վրա ծրխախոտատուփեր ու կոճակներ էր ճախարակում, հետո՝ երաժշտության ուսուցիչը, որը հարբում էր կիրակի օրվանից մինչև մյուս կիրակին, հետո՝ ամբողջ մի խումբ աղախիններ, վերջապես, շների ու շնիկների մի ոհմակ։

Այս ամենը տունն ու գյուղը լցնում էր աղմուկով, աղաղակով, թխթխկոցով, կանչերով ու երաժշտությամբ։

Մի կողմից՝ Օբլոմովկան, մյուս կողմից՝ իշխանական դղյակը, աղայական կյանքի լայնարձակ լիառատությամբ, հանդիպեցին գերմանական տարրի հետ, և Անդրեյից ա՜ղ լավ բուրշ դուրս եկավ, ո՜չ էլ նույնիսկ ֆիլիստեր։

Անդրյուշայի հայրը գյուղատնտես էր, տեխնոլոգ, ուսուցիչ։ Նա իր ֆերմեր հորից գյուղատնտեսության գործնական դասեր էր առել, սաքսոնական գործարաններում ուսումնասիրել էր տեխնոլոգիան, իսկ մերձակա համալսարանում, որտեղ մոտ քառասուն պրոֆեսոր կար, կոչում էր ստացել դասավանդելու այն, որ մի կերպ կարողացել էին նրան բացատրել այդ քառասուն իմաստունները։

Նա ավելի հեռու չգնաց, այլ համառությամբ ետ դարձավ՝ վճռելով, որ հարկավոր է գործ անել, և վերադարձավ հոր մոտ։ Սա տվեց նրան հարյուր թալեր, մի նոր մախաղ և ազատ թողեց՝ որ կողմն ուզում է գնա։

Այն ժամանակվանից Իվան Բոգդանովիչը ոչ հայրենիքն էր տեսել, ոչ հորը։ Վեց տարի թափառեց նա Շվեյցարիայում, Ավստրիայում, իսկ քսան տարի է՝ ապրում է Ռուսաստանում և օրհնում է իր բախտը։

Նա եղել էր համալսարանում և վճռեց, որ իր որդին էլ պետք է լինի այնտեղ. վնաս չունի, որ դա գերմանական համալսարան չի լինի, վնաս չունի, որ ռուսական համալսարանը պետք է նրա որդու կյանքի մեջ հեղաշրջում առաջ բերի և շատ հեռու տանի այն աղուրից, որը մտքով գծում էր հայրը որդու համար։

Իսկ նա այդ արեց շատ հասարակ կերպ, վերցրեց աղուրը իր պապից և գծեց այն, կարծես քանոնով, մինչև իր ապագա թոռը, և հանգիստ էր, չկասկածելով, որ Գերցի վարիացիաները, մոր երազանքներն ու պատմվածքները, իշխանական դղյակի սրահն ու բուդուարը գերմանական նեղ աղուրն այնպիսի լայն ճանապարհի կփոխարկեն, որ երազում էլ չեն տեսել ո՞չ նրա պապը, ո՞չ հայրը, ոչ էլ հենց ինքը։

Սակայն նա մանրախնդիր չէր այս դեպքում և իրենը չէր պնդի. պարզապես չէր կարողանա իր մտքում ուրիշ ճանապարհ գծել որդու համար։

Այդ մասին նա քիչ էր հոգում։ Երբ որդին վերադարձավ համալսարանից և երեք ամիս ապրեց տանը, հայրն ասաց, որ նա Վերխլյովում այլևս անելիք չունի, որ, ա՛յ, նույնիսկ Օբլոմովին արդեն Պետերբուրգ են ուղարկել, որ, հետևապես, նրա համար էլ ժամանակը հասել է։

Իսկ թե ինչու է նրան հարկավոր Պետերբուրգ գնալ, ինչու նա չէր կարող Վերխլյովում մնալ և օգնել կալվածքը կառավարելու գործում, այդ մասին ծերունին իրեն հարց չէր տալիս. նա հիշում էր միայն, որ երբ ինքը վերջացրեց ուսման դասընթացը, հայրը նրան հեռացրեց իրենից։

Եվ նա որդուն ուղարկեց. այդպես է սովորությունը Գերմանիայում։ Մայրը կենդանի չէր և հակառակող չկար։

Մեկնելու օրը Իվան Բոգդանովիչը որդուն տվեց հարյուր ռուբլի ասիգնացիաներով։

— Դու ձիով կգնաս մինչև նահանգական քաղաք,— ասաց նա,—այնտեղ Կալինինիկովից կառանաս երեք հարյուր հիսուն ռուբլի, իսկ ձին կթողնես մոտը։ Եթե նա այնտեղ չլինի, ծախիր ձին. շուտով տոնավաճառ է լինելու այնտեղ. չորս հարյուր ռուբլի կտան, ով էլ լինի առնողը։ Մինչև Մոսկվա հասնելը քեզ կնստի քառասուն ռուբլի, այնտեղից Պետերբուրգ՝ յոթանասունհինգ, բավականաչափ կմնա։ Այնուհետև՝ ինչպես կուզես։ Դու ինձ հետ գործ ես արել, հեռատեսությամբ գիտես, որ ես որոշ կապիտալ ունեմ. բայց դրա վրա մինչև իմ մահը հույս մի՛ դնի, իսկ ես, հավանորեն, դեռ, քսան տարի էլ կապրեմ, եթե միայն քար չընկնի գլխիս։ Լապտերը վառվում է պայծառ և ձեթ շատ կա նրա մեջ։ Դու լավ կրթություն ես ստացել, քո առջև բաց են բոլոր կարիերաները. կարող ես ծառայել, առևտուր անել, թեկուզ հեղինակել, թերևս ես չգիտեմ, թե դու ի՞նչ կընտրես, ի՞նչ բանի ավելի սեր ունես...

— Դե ես կտեսնեմ՝ չի՞ կարելի արդյոք բոլորն էլ միանգամից,— ասաց Անդրեյը։

Հայրը հոհոաց ամբողջ ուժով և սկսեց այնպես խփել որդու ուսին, որ ձին էլ չէր դիմանա։ Իսկ Անդրեյը՝ ոչինչ։

— Է՛հ, իսկ եթե շնորհք չես ունենա, չես կարողանա գտնել քո ճանապարհը, հարկավոր կլինի խորհրդակցել, հարցուփորձ անել. գնա Ռեյնգոլդի մոտ, նա կսովորեցնի։ Օ՜,— ավելացրեց նա, մատները վերև բարձրացնելով և գլուխը թափահարելով։— Այդ... այդ... (նա ուզեց գովել և խոսք չգտավ)։ Մենք միասին ենք եկել Սաքսոնիայից։ Նա չորսհարկանի տուն ունի։ Ես հասցեն կասեմ քեզ...

— Պետք չէ, մի՛ ասա,— առարկեց Անդրեյը,— ես նրա մոտ կգնամ, երբ չորսհարկանի տուն կունենամ, իսկ այժմ առանց նրա յալա կգնամ...

Հայրը նորից խփեց նրա ուսին։

Անդրեյը թռավ ձիու վրա։ Թամբին կապած էր երկու պայուսակ. մեկի մեջ դրված էր մոմլաթե թիկնոցը և երևում էին հատ, տակը մեխեր խփած կոշիկները ու մի քանի շապիկ Վերխլյովի քաթանից, իրեր, որոնք գնված և վերցված

էին հոր հարկադրանքով, իսկ մյուսի մեջ դրված էր բարակ մահուդից կարած նրբագեղ ֆրակը, բրդոտ վերարկուն, մի գյուժին Մոսկվայում պատվիրված նուրբ շապիկներ ու կոշիկներ, ի հիշատակ մոր խրատների։

— Դե՞հ,— ասաց հայրը։

— Դե՛հ,— ասաց որդին։

— Վե՞րջ,— հարցրեց հայրը։

— Վե՛րջ,— պատասխանեց որդին։

Նրանք լուռ նայեցին իրար, կարծես հայացքով մեկը մյուսի խորքն էր թափանցում։

Այդ միջոցին հավաքվել էր հետաքրքրասեր հարևանների մի խումբ՝ բերանները բաց արած նայելու, թե ինչպես է կառավարիչը որդուն օտարություն ուղարկում։

Հայր ու որդի միմյանց ձեռք սեղմեցին։ Անդրեյը ձին շարժեց խոշոր քայլերով։

— Այ քեզ լակո՛տ, ո՞չ մի կաթիլ արտասուք,— ասում էին հարևանները։— Ա՛յ, երկու ագռավ իրար կողքի են եկել, կռռում են ցանկապատի վրա. հլա համբերի՛, նրանք կոկռալով դժբախտություն կբերեն տղայի գլխին...

— Ի՞նչ է նրա համար ագռավը։ Նա Հովհաննես Մկրտչի տոնին գիշերները մենակ թափառում է անտառում. այդ բանը նրանց չի կպչի, ախպե՛ր։ Ռուսն անվնաս չէ՞ր պրծնի...

— Ծերուկ դևն էլ լա՞վն է,— նկատեց մի մայր։— Կարծես կատվի ճուտ է փողոց նետում. չգրկե՞ց, չհեկեկա՞ց։

— Կա՛ց, կա՛ց, Անդրեյ,— կանչեց ծերունին։

Անդրեյը ձին կանգնեցրեց։

— Ա՛, երևում է՝ սիրտը չդիմացա՞վ,— հավանություն տալով ասացին ամբոխի մեջ։

— Հը՞,— հարցրեց Անդրեյը։

— Փորքաշը թույլ է, պետք է ձիգ տալ։

— Հասնեմ Շամշևկա, ինքս կուղղեմ։ Կարիք չկա ժամանակ կորցնելու, հարկավոր է լուսով տեղ հասնել։

— Դե՛հ,— ասաց հայրը՝ թափահարելով ձեռքը։

— Դե՛հ,— գլուխը հակելով կրկնեց որդին և մի քիչ կռանալով ուզում էր միայն ձին խթանել։

— Ա՛խ, դուք շներ, ճիշտ որ՝ կարծես շնե՞ր լինեն։ Կարծես օտա՞ր են իրար,— ասում էին հարևանները։

Բայց հանկարծ ամբոխի մեջ բարձր լացի ձայն լսվեց։ Ինչ-որ մի կին չդիմացավ։

— Աչքի՞ս լույս, պարոնի՞կս,— ասում էր նա, գլխաշորի ծայրով սրբելով աչքերը։— Խե՞ղճ որբ։ Չկա քո հարազատ մայրը, ո՞վ պետք է օրհնի քեզ... Արի գոնե ես խաչակնքեմ քեզ, ի՛մ գեղեցիկս...

Անդրեյը մոտեցավ նրան, ցած թռավ ձիուց, գրկեց պառավին, հետո ուզում էր գնալ և հանկարծ լաց եղավ, մինչ պառավը խաչակնքում ու համբուրում էր նրան։ Պառավի ջերմ խոսքերի մեջ նա, կարծես, լսում էր մոր ձայնը, մի րոպե նրա առաջ արձանացավ մոր քնքուշ պատկերը։

Նա է՛լ ավելի պինդ գրկեց կնոջը, արագ սրբեց արտասուքը և թռավ ձիու վրա։ Հարվածեց ձիու կողերին և անհետացավ փոշու ամպի մեջ. նրա ետևից կատաղի հաչոցով նետվեցին երեք բակապահ շներ։

II

Շտոլցը հասակակից է Օբլոմովին. նա էլ արդեն երեսունն անց է։ Նա ծառայության մտավ, հրաժարական տալով դուրս եկավ ծառայությունից, իր գործերով զբաղվեց և իրոք տան ու փողի տեր դարձավ։ Նա մասնակից էր արտասահման ապրանք ուղարկող ինչ-որ մի ընկերության։

Անընդհատ շարժման մեջ էր, եթե ընկերությանը հարկավոր է գործակալ ուղարկել Բելգիա կամ Անգլիա, նրան են ուղարկում. եթե պետք է որևէ նախագիծ կազմել կամ մի նոր գաղափար գործ դարձնել, նրան են ընտրում։ Մինչդեռ նա և՛ հասարակության մեջ է, և՛ կարդում է. ե՞րբ է հասցնում՝ աստված գիտե։

Նա ամբողջովին կազմված է ոսկորներից, մկաններից ու նյարդերից, ինչպես ազնվացեղ անգլիական ձի։ Նիհար է, այտեր գրեթե բոլորովին չունի, այսինքն՝ ունի ոսկոր ու մկան, բայց գեր կլորության ոչ մի նշան. դեմքի գույնը միապաղաղ է, թուխ և ոչ մի կարմրություն չկա. աչքերը թեև մի փոքր կանաչավուն են, բայց արտահայտիչ են։

Ավելորդ շարժումներ նա չուներ։ Եթե նստած էր՝ նստած

էր հանգիստ, իսկ եթե գործում էր, ապա դեմքի այնքան շարժումներ էր գործադրում, որքան հարկավոր էր։

Ինչպես որ օրգանիզմի մեջ նա ոչ մի ավելորդ բան չուներ, այնպես էլ իր կյանքի բարոյական գործառնությունների մեջ ձգտում էր գործնական կողմերը հավասարակշռել հոգու նուրբ պահանջների հետ։ Երկու կողմերն ընթանում էին զուգահեռ, խաչաձևվելով և վերահյուսվելով ճանապարհին, բայց երբեք չէին խճճվում և ծանր, անլուծելի հանգույցներ չէին կազմում։

Նա առաջ էր գնում հաստատապես, առույգ կերպով. նա ապրում էր բյուջեով, աշխատելով յուրաքանչյուր օրը ծախսել ինչպես յուրաքանչյուր ռուբլին, ամեն րոպե երբեք չնիրհող կոնտրոլի ենթարկելով ծախսած ժամանակը, աշխատանքը, հոգու և արտի ուժերը։

Կարծես թե՛ տխրությունները, և՛ ուրախությունները նա կառավարում էր ինչպես իր ձեռքերի շարժումը, ինչպես իր ոտքերի քայլերը, կամ ինչպես վերաբերում էր վատ և լավ եղանակներին։

Նա բաց էր պահում Ղազանոցը, քանի անձրև էր գալիս, այսինքն՝ տանջվում էր, քանի տևում էր վիշտը, և այն էլ՝ տանջվում էր առանց վեհերոտ հլության, այլ ավելի շուտ սրտնեղությամբ, հպարտությամբ, և համբերությամբ տանում էր նրա համար միայն, որովհետև ամեն մի տանջանքի պատճառ իրենն էր համարում և ոչ թե բաճկոնի նման ուրիշի մեխից կախում։

Ուրախությունն էլ վայելում էր որպես ճանապարհին քաղած ծաղիկ, մինչև որ այն կթառամեր իր ձեռքում, առանց երբեք պարպելու գավաթը մինչև դառնության այն կաթիլը, որն ընկած է ամեն մի հաճույքի վերջում։

Պարզ, այսինքն՝ ուղիղ, իսկական հայացք կյանքի վրա, ահա՛ թե ինչն էր նրա մշտական խնդիրը, և աստիճանաբար հասնելով նրա լուծմանը, հասկանում էր դրա ամբողջ դժվարությունը և ներքուստ հպարտ ու երջանիկ էր ամեն անգամ, երբ առիթ էր ունենում նկատելու ծռությունն իր ճանապարհի վրա և ուղիղ քայլ անելու։

«Խորհրդաստ և դժվար է պարզ ապրելը»,— ասում էր նա հաճախ ինքն իրեն և շտապ հայացքով նայում էր՝ որտեղ է

Ցուն, որտեղ է թեք, որտեղ է սկսում կյանքի թելը խճճվել և անկանոն, բարդ հանգույց կազմել։

Ամենից ավելի նա վախենում էր երևակայությունից, կեսբարեկամական, կես թշնամական դեմքով այդ երկերեսանի ուղեկցից, որը բարեկամ է, քանի քիչ ես հավատում նրան, և թշնամի, երբ դյուրահավատությամբ ընում ես նրա քաղցր փսփսոցի ներքո։

Նա վախենում էր ամեն մի երազանքից, կամ, եթե թևակոխում էր նրա բնագավառը, ապա թևակոխում էր այնպես, ինչպես քարանձավն են մտնում, որի վրա մակագրված է՝ ma solitude, mon hermitage, mon repos[1], գիտենալով այն ժամն ու րոպեն, երբ դուրս ես գալու այնտեղից։

Նրա հոգում տեղ չուներ երազանքը, առեղծվածայինը, խորհրդավորը։ Այն, ինչ չէր ենթարկվում փորձի, գործնական ճշմարտության վերլուծմանը, նրա աչքին տեսողության պատրանք էր, ճառագայթների և գույների այս կամ այն արտացոլումը տեսողության օրգանի ցանցի վրա կամ թե, վերջապես, մի փաստ, որին դեռ չի հասել փորձի հերթը։

Նա չուներ նաև այն դիլետանտությունը, որը սիրում էր թեև գալ հրաշալիի մարզում կամ հազար տարի առաջուց գոնե կիխոտություն անել գուշակությունների ու հայտնագործությունների ասպարեզում։ Նա համառորեն կանգ էր առնում գաղտնիքի շեմքին, չդրսևորելով ո՛չ երեխայի հավատ, ո՛չ էլ թեթևսոլիկ մարդու կասկածներ, այլ սպասում էր օրենքի, իսկ դրա հետ նաև գաղտնիքի բանալիի երևալուն։

Նույնպիսի նրբությամբ ու զգուշությամբ, ինչպես երևակայությանը, նա հետևում էր սրտին։ Այստեղ հաճախ սայթաքելով, նա պետք է խոստովաներ, որ սրտի գործառնությունների ոլորտը դեռևս terra incognita էր։

Նա ջերմագին շնորհակալություն էր հայտնում բախտին, եթե այդ անհայտ բնագավառում իրեն հաջողվում էր վաղորոք տարբերել կարմիր ներկած սուտը դժգույն ճշմարտությունից. արդեն չէր գանգատվում, երբ, ծաղիկներով վարպետորեն քողարկված խարեության պատճառով, նա սխալ քայլ էր

[1] Իմ մենությունն, իմ օթևանն, իմ հանգիստ (Ֆր.)։

անում, և ոչ թե վեր ընկնում, եթե միայն տենդորեն ու ուժգին բաբախում էր սիրտը, և շատ ու շատ ուրախ էր լինում, եթե սիրտը չէր արյունոտվում, եթե ճակատին սառը քրտինք չէր դուրս տալիս և հետո երկարաձիգ ստվերը երկար ժամանակով չէր ընկնում նրա կյանքի վրա։

Նա իրեն երջանիկ էր համարում արդեն նրանով իսկ, որ կարողանում էր միևնույն բարձրության վրա մնալ, և արշավելով զգացմունքի ձիուկով, չէր սուրում-անցնում այն նուրբ գիծը, որը բաժանում է զգացմունքների աշխարհը ստի և սենտիմենտալության աշխարհից, ճշմարտության աշխարհը ծիծաղելիի աշխարհից, կամ, չէր սուրում-անցնում կոշտ ու կոպտության, իմաստակության, անվստահության, մանրուքի, սրտի ներքինացման ավազոտ, չոր հողը։

Նա հրապուրանքի ժամանակ էլ հող էր զգում իր ոտքերի տակ և բավականաչափ ուժ իր մեջ, որպեսզի ծայրահեղության դեպքում թափ տա իրեն և ազատվի։ Նա չէր շլանում գեղեցկությամբ և այդ պատճառով էլ չէր մոռանում, չէր նվաստացնում տղամարդու արժանապատվությունը, ստրուկ չէր, գեղեցկուհիների «ոտքերի տակ ընկած չէր լինում», թեև հրաբորբոք հրճվանքներ էլ չէր ապրում։

Նա կուռքեր չուներ, դրա փոխարեն պահպանել էր հոգու ուժը, մարմնի ամրությունը, դրա փոխարեն նա ողջախոհորեն հպարտ էր. նրանից ինչ-որ թարմություն և ուժ էր փչում, որի առաջ ակամայից շփոթվում էին նաև չքաշվող կանայք։

Նա գիտեր այդ հազվագյուտ և թանկագին հատկությունների գինը և այնքան ժլատորեն էր ծախսում դրանք, որ նրան եսասեր, անզգա էին անվանում։ Նրա զսպվածությունը հուզանքների հանդեպ, հոգու ազատ կացության, բնականի սահմաններից դուրս չգալու կարողությունը կշտամբանքներով էին նշավակում և տեղն ու տեղը, երբեմն նախանձով ու զարմանքով, արդարացնում էին մի ուրիշին, որն ամբողջ թափով ճահիճն էր նետվել և խորտակել էր թե՛ իր և թե՛ ուրիշի գոյությունը։

— Կրքերը, կրքերն արդարացնում են ամեն ինչ,— ասում էին նրա շուրջ,— իսկ դուք ձեր եսասիրությամբ միմիայն ձեզ եք պահպանում, տեսնենք՝ ում համար։

— Անշուշտ մեկի համար պահելիս կլինեմ,— ասում էր

նա մտախոհ, կարծես նայելով հեռուն, և շարունակում էր չհավատալ կրքերի պոեզիային, չէր հիանում նրանց բուռն դրսևորումներով ու քայքայիչ հետքերով, այլ գոյության և մարդու ձգտման իդեալը շարունակ ուզում էր կյանքի խիստ ըմբռնման ու կատարման մեջ տեսնել։

Եվ քանի շատ էին վիճարկում նրա կարծիքները, այնքան ավելի խորապես նա «քարանում» էր իր համառության մեջ, մինչև անգամ ընկնում էր, գոնե վեճերի ժամանակ, պուրիտանական մոլեռանդության մեջ։ Նա ասում էր, որ «մարդու նորմալ կոչումն է՝ ապրել տարվա չորս եղանակները, այսինքն՝ չորս հասակը, առանց թռիչքների, և կյանքի անոթը հասցնել մինչև վերջին օրը, ոչ մի կաթիլ իզուր չթափելով, և որ կրակի հավասար ու դանդաղ այրվելը փոթորկալից հրդեհներից ավելի լավ է, ինչպիսի պոեզիա էլ հրավառվելիս լինի նրանց մեջ»։ Իբրև եզրափակում ավելացնում էր, որ նա «երջանիկ կլինի, եթե իրեն հաջողվեր արդարացնել իր համոզմունքը, բայց որ հույս չունի դրան հասնելու, որովհետև դա շատ դժվար է»։

Իսկ ինքը համառորեն գնում էր ու գնում ընտրած ուղեղով։ Տեսնված չէր, որ նա որևէ բանի մասին հիվանդագին կամ տանջալից կերպով մտածի. ըստ երևույթին՝ նրան չէին մաշում հոգնած սրտի խայթոցները, նրա հոգին առողջ էր, նա երբեք իրեն չէր կորցնում բարդ, դժվար կամ նոր պարագաներում, այլ մոտենում էր նրանց իբրև հին ծանոթների, կարծես երկրորդ անգամն էր ապրում, ծանոթ վայրերով էր անց կենում։

Ինչ էլ որ պատահեր, նա խկույն այն եղանակն էր գործածում, որը պետք էր այդ երևույթի համար, ինչպես մառանապետուհին իր գոտուց կախ արած բանալիների կույտից միանգամից հենց այն բանալին է ընտրում, որ հարկավոր է այս կամ այն դռան համար։

Նպատակներին հասնելու գործում նա ամենից ավելի բարձր էր դասում հաստատակամությունը. նրա աչքին դա բնավորության տեր լինելու նշան էր, և այդպիսի հաստատակամություն ունեցող մարդկանց նա երբեք չէր զլանում իր հարգանքը, որքան էլ անկարևոր լինեին նրանց նպատակները։

— Դրանք մարդի՞կ են,— ասում էր նա։

Հարկավո՞ր է, արդյոք, ավելացնել, որ նա ինքը դեպի իր նպատակն էր գնում, քաջաբար անցնելով բոլոր արգելքների վրայից, և միայն այն դեպքում էր հրաժարվում առաջադրած խնդրից, երբ իր ճանապարհին պարիսպ էր կանգնում կամ մի անանցանելի անդունդ բացվում։

Բայց նա անընդունակ էր զինվելու այն անվեհերությամբ, որը, աչքերը փակելով՝ կթռչի անդունդի վրայից կամ բախտաբերի կհարձակվի պարսպի վրա։ Նա կչափի անդունդը կամ պարիսպը, և եթե հաղթահարելու անվրեպ միջոց չկա, ետ կքաշվի, ինչ էլ ասելու լինեն նրա մասին։

Նման բնավորության համար, գուցե, հենց հարկավոր էին այնպիսի խառն տարրեր, որոնցից կազմվել էր Շտոլցը։ Վաղուց ի վեր գործիչները մեղանում ձուլվում էին հինգ-վեց ստերեոտիպ ձևերով, ծուլորեն, կիսախուփ աչքերով նայելով շուրջը, ձեռքը դնում էին հասարակական մեքենայի վրա և նիրհելով՝ այն առաջ շարժում սովորական հունով, ուրը դնելով նախորդի թողած հետքի վրա։ Բայց ահա աչքերը բացվեցին նիրհից, լսվեցին ժիր, լայն քայլեր, կենդանի ձայներ... Քանի՞-քանի՞ Շտոլցներ պիտի երևան գան ռուսական անուններով։

Ինչպե՞ս կարող է այդպիսի մարդը մոտիկ լինել Օբլոմովին, որի յուրաքանչյուր գիծը, յուրաքանչյուր քայլը, ամբողջ գոյությունը մի ազազակող բողոք էր Շտոլցի կյանքի դեմ։ Կարծեմ, արդեն վճռված հարց է, որ հակադիր ծայրահեղությունները, եթե համակրության առիթ չեն էլ ծառայում, ինչպես կարծում էին առաջները, ապա ամենևին արգելք չեն հանդիսանում դրան։

Բացի այդ, նրանց կապում էր մանկությունն ու դպրոցը. երկու ուժեղ զսպանակներ, հետո՝ Օբլոմովների ընտանիքում գերմանացի երեխայի վրա առատորեն թափված սիրալիր, առատ գգվանքները, այնուհետև՝ ուժեղի դերը, որ գրավում էր Շտոլցն Օբլոմովի նկատմամբ թե՛ ֆիզիկական, և թե բարոյական տեսակետից, բայց վերջապես, և ամենից ավելի, Օբլոմովի բնության հիմքում ընկած էր մաքուր, լուսավոր և բարի սկզբունքը, որ խոր համակրանքով է լցված լինում դեպի այն ամենը, ինչ լավ է և ինչ միայն բացվում ու արձգանք էր տալիս այդ պարզ, խորամանկությունից զուրկ, միշտ գյուղահավատ սրտի կանչին։

Ով լոկ պատահաբար և դիտմամբ նայում էր այդ լուսավոր, մանկական հոգու մեջ, թեկուզև մոայլ, չար լիներ նա, նա արդեն չէր կարող մերժել նրա փոխադարձությունը կամ, եթե հանգամանքներն արգելք էին հանդիսանում մերձեցմանը, ապա գոնե բարի և հաստատուն հիշողություն պահել նրա մասին։

Անդրեյը հաճախ, կտրվելով գործերից կամ բարձրաշխարհիկ բազմությունից, երեկույթից, պարահանդեսից, գալիս էր նստելու Օբլոմովի լայն բազմոցին և ծույլ զրույցով ցրելու ու հանգստացնելու տագնապալից կամ հոգնած հոգին, և միշտ այն հանգստացուցիչ զգացմունքն էր ունենում, որ մարդ զգում է, երբ հոյակապ դահլիճներից գալիս է իր սեփական համեստ հարկի տակ կամ հարավային բնության գեղեցկություններից վերադառնում է կելու այն պուրակը, որտեղ մանչ է եկել դեռ երեխա ժամանակ։

III

— Բարև, Իլյա։ Որքա՞ն ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ։ Հը, ի՞նչ կա, ինչպե՞ս ես։ Առո՞ղջ ես արդյոք,— հարցրեց Շտոլցը։

— Է՜հ, ոչ, վատ եմ, Անդրեյ եղբայր,— հառաչելով ասաց Օբլոմովը,— ի՞նչ առողջություն։

— Ի՞նչ է որ, հիվա՞նդ ես,— հոգացողությամբ հարցրեց Շտոլցը։

— Աչքերիս գարեհատերը հոգիս հանեցին. անցյալ շաբաթ միայն մեկն անհետացավ աջ աչքիցս, իսկ հիմա ա՛յ, ուրիշն է երևում։

Շտոլցը ծիծաղեց։

— Այդքա՞նը,— հարցրեց նա։— Դա շատ քնելուց է։

— Ինչպե՞ս «այդքանը». այրոցը տանջում է։ Դումի լսեիր, թե քիչ առաջ ինչ ասաց բժիշկը։ «Գնացեք, ասում է, արտասահման, թե չէ վատ կլինի. կարող եք կաթված ստանալ»։

— Է՜հ, իսկ դո՞ւ ինչ ես մտածում։

— Չեմ գնա։

— Ինչո՞ւ։

— Ի՞նչ ես ասում։ Դու լսիր, թե նա այստեղ ինչեր ասաց։ «Ես պիտի ապրեմ ինչ-որ տեղ սարի վրա, գնամ Եգիպտոս կամ Ամերիկա...»

— Ի՞նչ կա որ,— սառնասրտորեն ասաց Շտոլցը։— Երկու շաբաթից կլինես Եգիպտոսում, Ամերիկայում կլինես երեք շաբաթից։

— Է՛հ, Անդրե՛յ եղբայր, դո՞ւ էլ։ Միայն մի խելքը գլխին մարդ կար, նա էլ է խելագարվել։ Ո՞վ է գնում Ամերիկա և Եգիպտոս։ Անգլիացիները. դե նրանց աստված հենց այդպես է ստեղծել. բացի այդ, նրանք իրենց երկրում ապրելու տեղ չունեն։ Իսկ մեզանից ո՞վ կգնա։ Գուցե գլխից ձեռք քաշածի մեկը, որի համար կյանքը ոչ մի արժեք չունի։

— Իսկապես, ինչ մի սխրագործություն է. նստիր կառք կամ նավ, մաքուր օդ շնչիր, տե՛ս օտար երկրներ, քաղաքներ, սովորություններ, հրաշալիքներ... Ա՜խ, դու։ Դեհ, ասա՛, ինչպե՞ս են գործերդ, ի՞նչ կա Օբլոմովկայում։

— Ա՜խ...— արտասանեց Օբլոմովը՝ ձեռքը թափահարելով։

— Ի՞նչ է պատահել։

— Դե ի՞նչ, զահլես գնացել է։

— Եվ փա՞ռք աստծու,— ասաց Շտոլցը։

— Ինչպե՞ս թե փառք աստծու։ Եթե կյանքը շարունակ մարդու գլուխը շոյեր, թե չէ՝ կպչում է, ինչպես երբեմն դպրոցում կովարար աշակերտներն էին կպչում հեզ աշակերտներին. մերթ կմթում է գաղտուկ, մերթ հանկարծ վրա է տալիս ճակատիդ և ավազ լցնում գլխիդ... ուժ չունեմ դիմանալու։

— Դու էլ չափազանց հեզ ես։ Ի՞նչ է պատահել որ,— հարցրեց Շտոլցը։

— Երկու դժբախտություն։

— Ի՞նչ դժբախտություն։

— Բոլորովին ավերվել եմ։

— Ինչպե՞ս։

— Ա՛յ կկարդամ քեզ, թե ի՞նչ է գրում ստարոստան... որտե՞ղ է նամակը։ Զախա՞ր, Զախա՞ր։

Զախարը գտավ նամակը։ Շտոլցն աչքի անցկացրեց այն և ծիծաղեց, երևի, ստարոստայի ոճի պատճառով։

— Ի՞նչ խաբեբան է այդ ստարոստան,— ասաց նա։— Գյուղացիների սանձը ձեռից թողել է ու գանգատվո՞ւմ էլ է։ Ավելի լավ կլիներ նրանց անցագրեր տալ և թողնել՝ ուր ուզում են գնան։

— Ի՞նչ ես ասում. այդպես թերևս բոլորն էլ կամենան,— առարկեց Օբլոմովը։

— Թո՞ղ գնան,— անհոգ ասաց Շտոլցը։— Ում համար իր տեղում լավ է և օգտավետ, նա չի գնա. իսկ եթե նրան օգտավետ չէ, քեզ էլ օգտավետ չէ. էլ ինչի պահել։

— Այ թե ի՞նչ հնարեց,— ասում էր Իլյա Իլյիչը։— Օբլոմովկայում մուժիկները հանգարտաբարո՞ են, տանը նստողներ։ Ի՞նչ գործ ունեն նրանք թափառելու...

—Իսկ դու չգիտես,— ընդհատեց Շտոլցը,— Վերխլյովում ուզում են նավահանգիստ շինել և ենթադրություն կա խճուղի անցկացնելու, այնպես որ Օբլոմովկան էլ մեծ ճանապարհից հեռու չի լինի, իսկ քաղաքում շուկա են հիմնում։

— Ա՜խ, տե՛ր աստված,— ասաց Օբլոմովը։— Հենց ա՛յդ էր պակաս։ Օբլոմովկան այնպիսի՜ անդորրության մեջ էր։ մի կողմ ընկած, իսկ հիմա շուկա՜, մե՜ծ ճանապարհ։ Մուժիկները սովորություն կդարձնեն քաղաք գնալը, մեզ մոտ թրև կգան վաճառականները, կորա՜վ ամեն ինչ։ Դժբախտությո՜ւն։

Շտոլցը ծիծաղեց։

— Ինչպե՞ս դժբախտություն չէ,— շարունակում էր Օբլոմովը։— Մուժիկները, ոչինչ, լավ էին, ոչինչ չի լավում՝ ոչ լավ, ո՛չ վատ, կատարում են իրենց գործը և ոչ մի բանի հետևից չեն ընկնում. իսկ հիմա կփչանա՜ն։ Մեջտեղ կգան թելը, սուրճը, թավշե շալվարները, հարմոնիկաները, յուղովի ճոքակոշիկները... դրանից օգուտ չի՞ գա։

— Այո՛, եթե դա այդպես է, իհարկե, քիչ օգուտ կգա,— նկատեց Շտոլցը։— Իսկ դու դպրոց բաց արա գյուղում...

— Շուտ չէ՞ արդյոք,— ասաց Օբլոմովը։— Գրագիտությունը վնասակար է մուժիկին. նրան գիր սովորեցրու, նա, թերևս, էլ վար անել էլ չուզենա...

— Ախր մուժիկները կկարդան այն մասին, թե ինչպես պետք է վարել, տարօրինո՛ւկ մարդ։ Սակայն լսի՛ր. հանաքը մի կողմ, դու պետք է այս տարի ինքդ գյուղ գնաս։

— Այո՛, ճիշտ է. միայն թե իմ պլանը դեռևս ամբողջո՛ վին...— վեհերոտ կերպով նկատեց Օբլոմովը։

— Ոչ մի պլա՞ն էլ հարկավոր չէ,— ասաց Շտոլցը։— Միայն գնա, տեղնուտեղը կտեսնես, թե ինչ պետք է անել։ Կարծեմ, վաղուց է, որ զբաղվում ես այդ պլանով. մի՞թե դեռ ամեն ինչ պատրաստ չէ։ Հապա ի՞նչ ես անում դու։

— Ա՛խ, եղբայր իմ։ Դու կարծում ես իմ գործերը հենց միայն կալվածքին են վերաբերում։ Հապա մյո՞ւս դժբախտությունը։

— Ի՞նչ դժբախտություն։

— Բնակարանից քշում են։

—Ինչպե՞ս թե քշում են։

— Այնպես. ասում են՝ տեղափոխվիր, և ուրիշ ոչինչ։

— Լա՛վ, հետո ի՞նչ։

— Ինչպե՞ս թե ինչ։ Ես այդ հոգսերից շուռումուռ գալով մեջքս ու կողերս տրորել եմ։ Չէ՞ որ մենակ եմ. այս էլ է պետք, այն էլ, այստեղ պետք է հաշիվները նայել, այնտեղ վճարել, այստեղ վճարել, դրան ավելանում է տեղափոխությո՛ւնը։ Սոսկալի շատ փող է ծախսվում, ինքս էլ չգիտեմ, թե ինչի՞ վրա։ Մեկ էլ տեսար՝ առանց կոպեկի մնացիր...

— Ա՛յ թե ինչպես է քնքշացել մարդը. դժվա՞ր է բնակարանը փոխել,— զարմանքով արտասանեց Շտոլցը։— Ի դեպ՝ փողի մասին, շա՞տ փող ունես։ Տո՛ւր ինձ հինգ հարյուր ռուբլի, շտապ հարկավոր է ուղարկել. վաղը կվերցնեմ մեր գրասենյակից...

— Սպասի՛ր։ Թող հիշեմ... Վերջերս գյուղից ուղարկել էին հազար ռուբլի, իսկ հիմա մնացել է... ա՛յ, սպասի՛ր...

Օբլոմովը սկսեց քրքրել արկղները։

— Ահա այստեղ, տասը, քսան, ահա երկու հարյուր ռուբլի... ահա էլի քսան։ Պղնձե փողեր էլ կային այստեղ... Զախա՛ր, Զախա՛ր։

Զախարն առաջվա կարգով ցած թռավ պառկելատեղից և սենյակ մտավ։

—Այստեղ սեղանի վրա երկու տասկոպեկանոց կար, ո՞ւր են։ Երեկ ես եմ դրել...

— Իլյա՛ Իլյիչ, ի՞նչ եք կպել այդ երկու տասկոպեկանոց-

ներից։ Ես արդեն զեկուցեցի ձեզ, որ այդտեղ ոչ մի երկու տասկոպեկանոց էլ չի եղել...

— Ինչպե՞ս թե չի եղել։ Նարինջ առնելիս մանր տվին...

— Տվել եք որևէ մեկին և մոռացել,— ասաց Զախարը, շուռ գալով դեպի դուռը։

Շտոլցը ծիծաղեց։

— Ա՛խ, դուք, օբլոմովցիներ,— կշտամբեց նա։— Չգիտե՞ն թե գրպանում որքան փող ունեն։

— Իսկ նորերս Միխեյ Անդրեյիչին ի՞նչ փող տվիք,— հիշեցրեց Զախարը։

— Ա՛խ, հա, ա՛յ, Տարանտևն էլ վերցրեց տասը ռուբլի,— աշխույժ դարձավ Օբլոմովը Շտոլցին,— ես մոռացել էի...

— Ինչո՞ւ ես այդ անասունին ներս թողնում քեզ մոտ,— նկատեց Շտոլցը։

— Ի՞նչ ներս թողնել,— միջամտեց Զախարը։— Գալիս է այնպես, կարծես իր տունը կամ գինետուն լինի։ Վերցրել է բարինի շապիկն ու ժիլետը, և սպասի՛ր, թե ետ կբերի։ Քիչ առաջ էլ ֆրակի համար էր եկել. «տո՛ւր հագնե՛մ»։ Գոնե դուք, պարոն Անդրեյ Իվանիչ, զսպեք նրան...

— Քո գործը չէ, Զախա՛ր։ Գնա՛ քո սենյակը,— խստորեն նկատեց Օբլոմովը։

— Մի թերթ փոստի թուղթ տուր,— պահանջեց Շտոլցը,— մի տոմս պետք է գրեմ։

— Զախա՛ր, թուղթ տուր. ա՛յ, Անդրեյ Իվանիչին պետք է...— ասաց Օբլոմովը։

— Ախր թուղթ չունե՛նք։ Քիչ առաջ փնտրեցինք,— ձայն տվեց Զախարը նախասենյակից և նույնիսկ սենյակ էլ չմտավ։

— Թղթի մի որևէ կտո՛ր տուր,— ձեռք չէր քաշում Շտոլցը։

Օբլոմովը փնտրեց սեղանի վրա. թղթի կտոր էլ չկար։

— Լա՛վ, տուր գոնե մի այցետոմս։

— Վաղուց է, որ ես այցետոմսեր չունեմ,— ասաց Օբլոմովը։

— Այդ ի՞նչ է պատահել քեզ,— հեգնորեն վրա բերեց Շտոլցը։— Իսկ մտադիր ես գործ անել, պլան ես գրում։ Ասա՛յ

խնդրեմ, որևէ տեղ գնո՞ւմ ես, ո՞ւմ մոտ ես լինում։ Ո՞ւմ հետ ես տեսնվում։

— Ուր եմ լինո՞ւմ։ Քիչ եմ տեղ գնում, շարունակ նստած եմ տանը. ա՛յ, ինձ անհանգստացնում է պլանի հարցը, դրա վրա ավելացել է և բնակարանը... Շնորհակալ եմ, Տարանտևն ուզում էր աշխատել, գտնել...

— Որևէ մեկը լինո՞ւմ է քեզ մոտ։

— Լինում է... ա՛յ, Տարանտևը, մեկ էլ Ալեքսեևը։ Մի քիչ առաջ բժիշկը ներս մտավ... Պենկինն եկավ, Սուդբինսկին, Վոլկովը...

— Ես քեզ մոտ գրքեր էլ չեմ տեսնում,— ասաց Շտոլցը։

— Ահա՛ գիրք,— նկատեց Օբլոմովը, ցույց տալով սեղանի վրա դրված գիրքը։

— Ի՞նչ գիրք է,— հարցրեց Շտոլցը, նայելով գրքին,— «Ճանապարհորդություն Աֆրիկայում»։ Եվ այն էջը, որի վրա կանգ ես առել, բորբոսնել է։ Ոչ մի լրագիր էլ չի երևում... Լրագրեր կարդո՞ւմ ես արդյոք։

— Ո՛չ, տառերը մանր են, աչք են փչացնում... և կարիք էլ չկա. եթե որևէ բան լինի, ամբողջ օրը բոլոր կողմերից հենց միայն այդ էլ կլսես։

— Շնորհ արա, Իլյա՛,— ասաց Շտոլցը՝ զարմանքով լի հայացք գցելով Օբլոմովի վրա։— Հապա դու ինքդ ի՞նչ ես անում։ Խմորի գնդի նման կծկվել ես ու պառկել։

— Ճիշտ է, Անդրեյ, գնդի նման,— տրտմությամբ արձագանքեց Օբլոմովը։

— Բայց մի՞թե խոստովանելի արդարացում է։

— Ոչ, դա միայն քո խոսքերի պատասխանն է. ես չեմ արդարանում,— հառաչելով պատասխանեց Օբլոմովը։

— Պետք է չէ՞ դուրս գալ այդ քնած վիճակից։

— Առաջները փորձեցի, չհաջողվեց, իսկ այժմ... ինչի՞ համար։ Ոչինչ չի գրավում, հոգիս առաջ չի ձգտում, միտքս հանգի՞ստ քնած է,— հազիվ նկատելի դառնությամբ եզրափակեց նա։— Բավական է այդ մասին... Ավելի լավ է՝ ասա, որտեղի՞ց ես գալիս այժմ։

— Կիևից։ Մի երկու շաբաթից արտասահման եմ գնալու։ Դու էլ արի...

— Լավ, թերևս...— վճռեց Օբլոմովը։

— Դե նստի՛ր, խնդիր գրի՛ր, վաղն էլ կտաս...

— Ահա քեզ, վա՛ղն արդեն,— սկսեց Օբլոմովը՝ հանկարծ սթափվելով։— Ինչպե՞ս շտապում են տրանը յաղթես մեկը նեռներից է ընկել։ Կմտածենք, կխոսենք. իսկ հետո՝ ինչ աստված տա։ Ա՛յ, գուցե առաջ գյուղ գնամ, իսկ արտասահման... հետո...

— Ինչո՞ւ հետո։ Չէ՞ որ բժիշկը պատվիրել է։ Նախ և առաջ ճարպիցդ ազատվիր, դեն գցիր մարմնիդ ծանրությունը, այն ժամանակ հոգուդ քունն էլ կթռնի-կհեռանա քեզնից։ Հարկավոր է թե՛ մարմնի և թե՛ հոգու մարզանք։

— Ո՛չ, Անդրեյ, այդ բոլորն ինձ կհոգնեցնի. ախր իմ առողջությունը վատ է։ Ո՛չ, ավելի լավ է՝ հանգիստ թող ինձ, գնա քեզ համար մենակ...

Շտոլցը նայեց պառկած Օբլոմովին, Օբլոմովը նայեց նրան։

Շտոլցը տարուբերեց գլուխը, իսկ Օբլոմովը հառաչեց։

— Կարծեմ՝ դու նույնիսկ ապրե՞լ ծուլանում ես,— հարցրեց Շտոլցը։

— Ի՞նչ ասեմ, դա էլ հո ճշմարիտ է. ծուլանո՞ւմ եմ, Անդրե՛յ։

Անդրեյը մտովի ծանրութեթև էր անում, թե ինչ կենդանի բան է մնացել նրա մեջ, որից բռնելով կարելի է նրան շարժել, և որտեղ է այդ կենդանի բանը, միևնույն ժամանակ լուռ դիտում էր նրան. հանկարծ ծիծաղեց։

— Այդ ի՞նչ է, քո մի գուլպան քաթանից է, իսկ մյուսը՝ բամբակից,— հանկարծ նկատեց նա, ցույց տալով Օբլոմովի ոտքերը։— Շապիկն էլ թարս ես հագել։

Օբլոմովը նայեց ոտքերին, հետո շապկին։

— Իսկապես,— շփոթվելով խոստովանեց նա։— Այդ Զախարը պատի՞ժ է ուղարկված ինձ համար։ Դու չես հավատա, թե ինչպե՞ս է նա իմ հոգին հանում։ Վիճո՞ւմ է, կոպիտ է վարվում, իսկ գործ մի՛ պահանջիր։

— Ա՜խ, Իլյա՛, Իլյա,— ասաց Շտոլցը։— Ո՛չ, ես քեզ այդպես չեմ թողնի։ Մի շաբաթից հետո ինքդ քեզ չես ճանաչի։ Երեկոյան արդեն կհաղորդեմ քեզ մանրամասն պլան այն մասին, թե ի՞նչ եմ ուզում անել ինձ և քեզ հետ, իսկ

այժմ հագնվիր։ Սպասի՛ր, ես քեզ թափ կտամ։ Զախա՞ր։— կանչեց նա։— Իլյա Իլյիչին հարկավոր է հագնվել։

— Շնորհ արա՛, ո՞ւր, ի՞նչ ես ասում։ Հիմա կգան Տարանտեն ու Ալեքսեևը ճաշելու։ Հետո ուզում էինք, որ...

— Զախա՛ր,— ասաց Շտոլցը առանց նրան լսելու,— տո՛ւր նրա զգեստները։

— Իսկույն, պարոն, Անդրեյ Իվանիչ, էս է կոշիկները սրբեմ,— հաճույքով ասաց Զախարը։

— Ինչպե՞ս։ Դու կոշիկները մինչև ժամը հինգը չե՞ս սրբել։

— Սրբելը՝ սրբել եմ, դեռ անցյալ շաբաթ, բայց բարինը տնից դուրս չի եկել, նրանց փայլը նորից գնացել է...

— Լա՛վ, տուր ինչպես կան։ Իմ ճամպրուկը տար հյուրասենյակ. իջևանում եմ ձեզ մոտ։ Ես իսկույն կհագնվեմ, դու էլ պատրաստ եղիր, Իլյա՛։ Մենք կճաշենք ճանապարհին որևէ տեղ, հետո կգնանք մի երկու-երեք տուն, և...

— Դե, դու այն... ինչպե՞ս կլինի հանկարծ... սպասի՛ր... թող մտածեմ... ես ախր սափրված էլ չեմ...

— Մտածելու և ծոծրակ քորելու ոչինչ էլ չկա... Ճանապարհին կսափրվես. ես քեզ կտանեմ՝ ուր պետք է։

— Այդ ի՞նչ տներ պետք է գնանք մենք,— ցավագին բացականչեց Օբլոմովը։— Անծանոթ մարդկանց մո՞տ։ Տես ի՞նչ հնարեց։ Ավելի լավ է՝ գնամ Իվան Գերասիմովիչի մոտ, երեք օր կլինի՝ չեմ եղել։

— Այդ-ո՞վ է Իվան Գերասիմիչը։

— Նա, որ առաջ ծառայում էր ինձ հետ...

— Ա՜։ Այն ալեհեր էկզեկուտորը. ի՞նչ ես գտել նրա մոտ։ Եվ ի՞նչ բուռն ցանկություն է՝ ժամանակն սպանել այդ ապուշի հետ։

— Որքան խիստ ես արտահայտվում դու երբեմն մարդկանց մասին, Անդրե՛յ, աստված սիրես. բայց չէ՞ որ նա լավ մարդ է. միայն հոլանդական շապիկ չի հագնում...

— Ի՞նչ ես անում նրա մոտ։ Ինչի՞ մասին ես խոսում նրա հետ,— հարցրեց Շտոլցը։

— Գիտե՞ս, նրա տանը ամեն ինչ մի տեսակ կանոնավոր է, հարմար։ Սենյակները մանրիկ են, բազմոցներն այնպես խոր, ոտքով-գլխով թաղվում ես մեջը։ Լուսամուտները փակում են բաղեղներն ու կակտուսները, մի դյուժինից ավելի

գեղձանիկ կա, երեք շուն, այնքա՞ն բարի։ Խորտիկը սեղանից չի պակասում։ Բոլոր փորագրությունները ընտանեկան տեսարաններ են պատկերում։ Գալիս ես, և էլ հեռանալ չես ուզում։ Նստած ես, առանց հոգալու, ոչ մի բանի մասին չմտածելով, գիտես, որ կողքիդ մարդ կա... իհարկե, իմաստուն մարդ չէ, նրա հետ գաղափարների փոխանակություն կատարելու մասին մտքով էլ չի կարելի անցկացնել, բայց դրա փոխարեն խորամանկ չէ, բարի է, սրտաբաց, առանց հավակնությունների և թիկունքիդ չի խայթի քեզ։

— Է՜, ի՞նչ եք անում դուք։

— Ի՞նչ։ Ա՜յ, ես գալիս եմ, նստում ենք իրար դիմաց բազմոցների վրա ծալապատիկ. նա ծխում է...

— Է՜, իսկ դո՞ւ։

— Ես էլ եմ ծխում, լսում եմ՝ ինչպես են ճռվողում դեղձանիկները։ Հետո Մարֆան բերում է ինքնաեռը։

— Տարանտե՛, Իվան Գերա՜սիմիչ,— ասում էր Շտոլցը՝ ուսերը թոթվելով։— Դե՛հ, շո՛ւտ հագնվիր,— շտապեցնում էր նա։— Իսկ Տարանտեին կասես, հենց որ գա,— ավելացրեց նա՝ դառնալով Զախարին,— որ մենք տանը չենք ճաշելու և որ Իլյա Իլյիչն ամբողջ ամառը տանը չի ճաշելու, իսկ աշնանը նա շատ գործ է ունենալու, և որ նրա հետ տեսնվել չի հաջողվի...

— Կասեմ, չեմ մոռանա, ամեն ինչ կասեմ,— արձագանքեց Զախարը,— իսկ ի՞նչ կհրամայեք անել ճաշը։

— Որևէ մեկի հետ կվայելես այն։

— Լսում եմ, պարո՛ն։

Տասը րոպեից Շտոլցը դուրս եկավ հագնված, սափրված, սանրված, իսկ Օբլոմովը մելամաղձորեն նստած էր անկողնի վրա, դանդաղ կոճկելով շապիկի կուրծքը և կոճակները չգտնելով։ Նրա առջև, մի ծնկի վրա կանգնած էր Զախարը, սրբած կոշիկը իբրև խորտիկ ձեռքին պահած, պատրաստվելով հագցնել այն և սպասելով, թե բարինը երբ կբարձրացնի կուրծքը կոճկելը։

— Դու դեռ կոշիկնե՞րդ էլ չես հագել,— զարմանքով ասաց Շտոլցը։— Դե՜հ, շո՛ւտ, Իլյա՛, շո՛ւտ։

— Ախր ո՞ւր։ Ախր ինչի՞ համար,— թախծալից ասում

էր Օբլոմովը։— Ի՞նչ կա այնտեղ, որ ես չեմ տեսել։ Ես ետ եմ մնացել, չեմ ուզում...

— Շո՛ւտ, շո՛ւտ,— շտապեցնում էր Շտոլցը։

IV

Թեև արդեն վաղ չէր, բայց նրանք կարողացան գործով ինչ-որ տեղ գնալ, այնուհետև Շտոլցը իր հետ ճաշելու վերցրեց մի ոսկի արդյունաբերողի, ապա գնացին այս վերջինի ամառանոցը՝ թեյ խմելու, մեծ հասարակության հանդիպեցին այնտեղ, և Օբլոմովը կատարյալ միայնությունից հանկարծ ընկավ մարդկանց բազմության մեջ։ Նրանք տուն վերադարձան ուշ գիշերով։

Հետևյալ օրը, երրորդ օրը նույնպես, և ամբողջ շաբաթն աննկատելի անցավ։ Օբլոմովը բողոքում էր, գանգատվում, վիճում, բայց ընկերը նրան քարշ էր տալիս և նա ուղեկցում էր նրան ամենուրեք։

Մի անգամ, ինչ-որ տեղից ուշ վերադառնալով, նա առանձնապես ըմբոստացավ այդ իրարանցման դեմ։

— Ամբողջ օրերով,— քրթմնջում էր Օբլոմովը՝ հագնելով խալաթը,— կոշիկներդ չես հանում, ոտքերդ այնպե՛ս քոր են գալիս։ Ինձ դուր չի գալիս ձեր այս պետերբուրգյա՛ն կյանքը,— շարունակում էր նա՝ պառկելով բազմոցին։

— Իսկ ինչպիսի՞ կյանքն է քեզ դուր գալիս,— հարցրեց Շտոլցը։

— Ոչ այնպիսին, ինչպիսին այստեղ է։

— Հատկապես ի՞նչն այստեղ այդպես դուր չեկավ քեզ։

— Ամեն ինչ. այդ անվերջ վազքը, դատարկ մանր կրքերի, հատկապես ագահության, իրար ճանապարհ խլելու հավիտենական խաղը, բամբասանքները, չարախոսությունները, միմյանց հարվածելը, ոտքից գլուխ տնտղելը. երբ լսում ես, թե ինչ են խոսում, գլուխդ պտտվում է, ապուշ ես կտրում։ Թվում է, մարդիկ արտաքուստ այնպես խելոք են, այնպիսի արժանապատվություն կա դեմքներին. շարունակ լսում ես, թե «Սրան տվել են այսինչ բանը, նա ստացել է վարձակալություն»։— «Շնորհ արեք, ինչի՞ համար», բղավում է որևէ մեկը։ «Սա երեկ տանուլ տվեց ակումբում, նա վերցնում է

երեք հարյուր հազա՛ր»։ Ձանձրո՛ւյթ, ձանձրո՛ւյթ, ձանձրո՛ւյթ... Ո՞ւր է այստեղ մարդը։ Ո՞ւր է նրա ամբողջականությունը։ Ո՞ւր կորավ նա, ինչպե՞ս մանր-մունր բաների ետևից է ընկել՝ մանրացել։

— Չէ՞ որ մի բան պետք է զբաղեցնի հասարակությանը,— ասաց Շտոլցը,— ամեն մեկն իր հետաքրքրությունն ունի։ Դրան կյանք կասեն...

— Հասարակությո՞ւն։ Անդրե՛յ, դու, երևի, դիտմամբ ես ինձ ուղարկում այդ հասարակության մեջ, որպեսզի փախցընես այնտեղ լինելու ցանկությունը։ Կյա՞նք. լա՛վ կյանք է։ Ի՞նչ պետք է որոնել այնտեղ։ Մտքի, սրտի հետաքրքրությո՞ւն։ Նայիր մի, որտե՞ղ է այն կենտրոնը, որի շուրջն է պտտվում այդ ամենը. չկա այդպիսի կենտրոն, չկա ոչ մի խոր, մարդուն խորապես շարժող բան։ Դրանք բոլորը մեռելնե՞ր են, քնած մարդիկ, ինձանից ավելի վատթար, շրջանների ու հասարակության այդ անդամնե՞րը։ Ի՞նչն է նրանց ղեկավարում կյանքում։ Ա՛յ, նրանք պառկած չեն, այլ ամբողջ օրը ճանճերի նման դեսուդեն են ընկնում, ետուառաջ են վազվզում, իսկ օգուտն ի՞նչ է։ Մտնում ես դահլիճ և աչքդ չի կշտանում տեսնելով, թե ինչպես համաչափորեն են տեղավորված հյուրերը, ինչպես հանդարտ ու խորիմաստ կերպով նստած են՝ թուղթ են խաղում։ Խոսք չկա, կյանքի հիանալի՜ նպատակ է։ Գերազա՞նց օրինակ է մտքի շարժում փնտրողի համար։ Մի՞թե դրանք դիակներ չեն։ Մի՞թե նրանք ամբողջ կյանքը քնած չեն նստած տեղները։ Ինչո՞վ եմ ես նրանցից ավելի մեղավոր, որ պառկած եմ տանս և գլուխս չեմ վարակում երեքնոցներով ու վալետներով։

— Այդ բոլորը հին բաներ են, դրանց մասին հազար անգամ խոսել ենք,— նկատեց Շտոլցը։— Ուրիշ ավելի նոր բան չունե՞ս։

— Իսկ մեր լավագույն երիտասարդությունը, ի՞նչ է անում նա։ Մի՞թե քնած չէ՝ ման գալով, կառքերով անցնելով Նևսկիով, պարելով։ Օրերի ամենօրյա դատա՞րկ տեղափոխում։ Իսկ մի տես, թե ինչպիսի հպարտությամբ ու անիմանալի արժանապատվությամբ, վանող հայացքով են նրանք նայում՝ ով որ նրանց նման չի հագնված, նրանց անուններն ու կոչումները չի կրում։ Եվ այդ դժբախտները երևակայում են, թե

նրանք դեռ ամբոխից բարձր են։ «Մենք, տես՝ ծառայում ենք, որտեղ բացի մեզնից ոչ ոք չի ծառայում. մենք բազկաթոռների առաջին շարքում ենք, մենք պարահանդես էինք գնացել իշխան N-ի մոտ, ուր միայն մեզ են թողնում»... Իսկ երբ հանդիպում են միմյանց, հարբում ու կռիվ են անում վայրենիների նման։ Մի՞թե դրանք կենդանի, արթուն մարդիկ են։ Եվ այն էլ՝ ոչ միայն երիտասարդությունը. նայի՛ր հասակավորներին։ Հավաքվում են, կերակրում միմյանց, ո՛չ սրտաբացություն կա, ո՛չ բարություն, ո՛չ փոխադարձ հակում։ Հավաքվում են ճաշի, երեկույթի, կարծես պաշտոնի են գընում, առանց ուրախության, սառը, որպեսզի պարծենան խոհարարով, սալոնով, և հետո թաքուն ծաղրեն, իրար ոտք գցեն։ Մի երկու օր առաջ ճաշի ժամանակ, ես չգիտեի՝ ուր նայեմ, քիչ մնաց սեղանի տակ մտնեի, երբ սկսվեց բացակայողների համբավի վատաբանումը. «նա հիմար է, սա՝ ստոր, մյուսը գող է, երրորդը՝ ծիծաղելի»— իսկակա՛ն հալածանք։ Այդ ասելով՝ իրար են նայում նույնպիսի աչքերով. «Ա՛յ, մի դուռը ետևիցդ փակի՛ր, քո մասին էլ նույնը կասենք»... Ինչո՞ւ են նրանք հավաքվում, եթե այդպիսի մարդիկ են։ Ինչո՞ւ են այդպես ամուր միմյանց ձեռք սեղմում։ Ո՛չ անկեղծ ծիծաղ կա, ոչ էլ համակրանքի նշո՛ւյլ։ Աշխատում են բարձր ատիճան, անուն կորզել։ «Ինձ մոտ էր այսինչը, իսկ ես այնինչի մոտ էի»— պարծենում են հետո... Ի՞նչ կյանք է գա։ Ես չեմ ուզում այդ կյանքը։ Ի՞նչ պիտի սովորեմ ես այնտեղ, ի՞նչ պիտի քաղեմ այնտեղից։

— Գիտե՞ս ինչ, Իլյա՛,— ասաց Շտոլցը։— Դու դատում ես այնպես, ինչպես մի հին մարդ. հին գրքերում հենց այդպես էին ամեն բան գրում։ Սակայն, այսպես էլ լավ է. գոնե գատում ես, քնած չես։ Է՛հ, հետո էլ ի՞նչ։ Շարունակի՛ր։

— Էլ ի՞նչ շարունակեմ։ Նայիր, այստեղ ոչ ոք թարմ, աղուոր կերպարանք չունի։

— Կլիման է այդպես,— ընդհատեց Շտոլցը։— Ա՛յ, քո երեսն էլ արորված է, իսկ գու գեսուդեն չես վազում, շարունակ պառկած ես։

— Ոչ ոք պարզ, հանգիստ հայացք չունի,— շարունակում էր Օբլոմովը,— բոլորը վարակվում են իրարից ինչ-որ մի տանջալից հոգսով, անձկությամբ, հիվանդագին ինչ-որ

բան են որոնում։ Եվ ի՞նչ լավ կլիներ, եթե ճշմարտություն, բարիք որոնեին իրենց և ուրիշների համար. ո՛չ, նրանք ընկերաց հաջողությունը տեսնելով՝ գունատվում են։ Մեկի հոգսը սա է. վազը պետք է մտնել ատենավայրը, գործը հինգերորդ տարին է՝ ձգձգվում է, հակառակ կողմը հաղթահարում է և նա հինգ տարի շարունակ գլխում մի միտք է կրում, մի ցանկություն ունի՝ վայր գցել մյուսին և նրա անկման վրա կառուցել իր բարեկեցությունը։ Հինգ տարի գնալ-գալ, նստել և հոգոց հանել ընդունարանում.— ահա՛ կյանքի իդեալն ու նպատակը։ Մի ուրիշը տանջվում է, որ դատապարտված է ամեն օր ծառայության գնալու և մինչև ժամը հինգը նստելու, իսկ մի երրորդը ծանր հառաչում է, որ նրան այդպիսի շնորհ չի վիճակված...

— Դու փիլիսոփա ես, Իլյա՛,— ասաց Շտոլցը։— Բոլորը դեսուդեն են ընկնում, միայն քեզ ոչի՞նչ հարկավոր չէ։

— Ա՛յ, այն ակնոցավոր դեղին պարոնը,— շարունակում էր Օբլոմովը,— օձիքիցս բռնել էր՝ կարդացե՛լ եմ արդյոք այսինչ պատգամավորի ճառը, և աչքերը չռեց վրաս, երբ ես ասացի, թե լրագիր չեմ կարդում։ Եվ սկսեց Լյուդովիկոս Ֆիլիպի մասին խոսել, կարծես նա իր հարազատ հայրը լինի։ Հետո պոկ չէր գալիս ինձանից, թե ես ինչ եմ կարծում, ֆրանսիական դեսպանն ինչո՞ւ է Հռոմից հեռացել։ Ինչպե՞ս, դատապարտես քեզ ամբողջ կյանքդ ամեն օր լցնելու ողջ աշխարհի վերաբերյալ նորություններով, ամբողջ շաբաթը բղավե՞ս, մինչև ձայնդ կտրվի։ Այսօր Մահմեդ-Ալին նավ է ուղարկել Կոստանդնուպոլիս, իսկ նա գլուխը ջարդում է՝ ինչո՞ւ է ուղարկել։ Վազը Դոն-Կառլոսն անհաջողության է հանդիպում, և նա սոսկալի տագնապի մեջ է։ Այնտեղ ջրանցք է փորում, այստեղ մի զորաբաժին են ուղարկել գեպի արևելք. տե՛ր աստված, բոբբոքվե՛ց։ Կերպարանք չկա վրան, վազում է, բղավում, կարծես՝ զորքը հենց նրա վրա է գալիս։ Դատում են, ձախ ու ծուռ նկատառումներ մեջ բերում, և հենց իրենց համար էլ ձանձրալի է, այդ նրանց չի հետաքրքրում, այդ աղաղակների միջից երևում է խորո՞ւնկ քունը։ Դրանք նրանց համար կոզմնակի բաներ են. նրանք իրենց հետաքրքրող կյանքով չեն ապրում։ Իրենց սեփական գործը չունեն, այդ պատճառով էլ ցրիվ են եկել ամեն կողմ, ոչ մի

բանի վրա չեն ուղղել իրենց հայացքը։ Այդ համայնապարփակության ներքո թաքնված է դատարկությունը, համակրության բացակայությունը դեպի ամեն ինչ։ Իսկ ընտրել համեստ, աշխատանքային մի շավիղ և ընթանալ նրանով, խոր աղուր փորել՝ դա ձանձրալի է, աննկատելի, այդտեղ ամենագիտությունը չի օգնի և մարդ չկա, որի աչքերին թոզ փչես։

— Դե՛, ես ու դու ցրիվ չենք եկել, Իլյա՛։ Հապա ո՞ւր է մեր համեստ, աշխատանքային շավիղը,— հարցրեց Շտոլցը։

Օբլոմովը հանկարծ լռեց։

— Ա՛յ, ես միայն վերջացնեմ... պլանը...— ասաց նա։— Տե՛ր նրանց հետ,— սրտնեղությամբ ավելացրեց հետո։— Ես նրանց չեմ դիպչում, ոչինչ չեմ փնտրում. ես պարզապես նորմալ կյանք չեմ տեսնում։ Ո՛չ, դա կյանք չէ, այլ կյանքի նորմայի, իդեալի խեղաթյուրում, այն իդեալի, որ բնությունն իբրև նպատակ է մատնանշել մարդուն...

— Այդ ի՞նչ իդեալ է, կյանքի նորմա։

Օբլոմովը չէր պատասխանում։

— Դե, ասա՛ ինձ, ինչպիսի՞ կյանք կգծեիր դու քեզ համար,— շարունակում էր հարցնել Շտոլցը։

— Ես արդեն գծել եմ։

— Ի՞նչ բան է դա։ Պատմի՛ր, խնդրեմ, ինչպե՞ս։

— Ինչպե՞ս,— ասաց Օբլոմովը, շուռ գալով մեջքի վրա և նայելով առաստաղին։— Ինչպե՞ս։ Գյուղ կգնայի։

— Իսկ ի՞նչն է քեզ խանգարում։

— Պլանը չեմ վերջացրել։ Հետո, ես կգնայի ոչ թե մենակ, այլ կնոջս հետ...

— Ա՛։ Ահա թե ինչ։ Դե՛, ասված քեզ հետ։ Էլ ինչի ես սպասում։ Էլի երեք-չորս տարի և այլևս ոչ ոք քեզ չի առնի։

— Ի՞նչ արած, ճակատագրի բան է,— ասաց Օբլոմովը հառաչելով։— Կարողությունս թույլ չի տալիս։

— Ի սեր աստծո, իսկ Օբլո՞մովկան։ Երեք հարյուր շո՞ւնչ։

— Էհ, ի՞նչ անենք։ Ինչո՞վ ապրեմ կնոջս հետ։

— Երկու հոգո՞վ ինչով ապրես։

—Իսկ որ երեխանե՞ր ունենանք։

— Երեխաներին կկրթես, իրենք իրենց ապրուստը կգտնեն։ գիտցիր միայն նրանց այնպիսի ուղղություն տալ...

— Ո՛չ, ազնվականներին արհեստավոր դարձնե՞լ,— չոր-

չոր ընդհատեց Օբլոմովը։ Եվ բացի երեխաները, որտեղի՞ց կլինենք երկուսով։ Այդպես միայն ասվում է, կնոջ հետ երկուսով, բայց դեռ նոր ես ամուսնացել, ինչ-որ կնիկներ են սողոսկում տունդ։ Նայիր ո՛ր ընտանիքը կուզես. ազգականուհիներ, ոչ ազգականուհիներ և ոչ տնտեսուհիներ, եթե տանդ չեն էլ ապրում, ապա ամեն օր գալիս են սուրճ խմելու, ճաշելու... Ինչպե՞ս կարելի է երեք հարյուր շնչով կերակրել այդպիսի պանսիոնը։

— Դե լա՛վ. ասենք թե քեզ նվիրեցին էլի երեք հարյուր հազար, ի՞նչ կանեիր դու,— հարցնում էր Շտոլցը՝ սաստիկ հետաքրքրված։

— Անմիջապես լոմբարդ կտանեի,— ասաց Օբլոմովը,— և տոկոսով կապրեի։

— Ախր տոկոսները քիչ կլինեին. ինչո՞ւ չէիր դնի որևէ ընկերության, ա՛յ թեկուզ, մեր ընկերության մեջ։

— Ո՛չ, Անդրեյ, ինձ չես խաբի։

— Ինչպե՞ս, դու ինձ է՞լ չէիր հավատա։

— Ո՛չ մի դեպքում. ո՛չ թե քեզ, այլ ամեն բան կարող է պատահել. է՛հ, որ պայթի, ես հո առանց կոպեկի կմնամ։ Ափսոս չէ՞ բանկը։

— Դե՛, լավ. ի՞նչ կանեիր դու։

— Է՛հ, կգայի նոր, հանգստավետ սարքված տունը... Շրջակայքում կապրեին լավ հարևաններ, օրինակ դու... Բայց ո՛չ, դու մի տեղ նստել չես կարող...

— Իսկ դու մի՞թե շարունակ կնստեիր։ Ոչ մի տեղ չէի՞ր գնա։

— Ո՛չ մի գնով։

— Էլ ինչո՞ւ են հոգս քաշում ամեն տեղ երկաթուղիներ, շոգենավեր կառուցելու, եթե կյանքի իդեալը մի տեղում նստելն է։ Արի՛, Իլյա՛, նախագիծ ներկայացնենք, որ կանգ առնեն. չէ՞ որ մենք ոչ մի տեղ չենք գնա։

— Առանց մեզ էլ շատ մարդիկ կան. քի՞չ կան կառավարիչներ, գործակատարներ, վաճառականներ, չինովնիկներ, պարապ ճանապարհորդներ, որոնք անկյուն չունեն։ Թո՞ղ ճանապարհորդեն։

— Իսկ դո՞ւ ով ես։

Օբլոմովը լռում էր։

— Հասարակության ո՞ր տարրակարգում ես հաշվում դու քեզ։

— Հարցրու Զախարին,— ասաց Օբլոմովը։

Շտոլցը տառացիորեն կատարեց Օբլոմովի ցանկությունը։

— Զախա՜ր,— կանչեց նա։

Եկավ Զախարը, քնաթաթախ աչքերով։

— Այս ո՞վ է պառկած,— հարցրեց Շտոլցը։

Զախարը հանկարծ արթնացավ և ծուռ, կասկածանքով նայեց Շտոլցին, հետո Օբլոմովին։

— Ինչպե՞ս թե ով։ Դուք մի՞թե չեք տեսնում։

— Չեմ տեսնում,— ասաց Շտոլցը։

— Ի՞նչ տարօրինակ բան։ Դա բարին Իլյա Իլյիչն է։

Նա քմծիծաղ տվեց։

— Լա՜վ, գնա՜։

— Բա՜րին,— կրկնեց Շտոլցն ու հռհռացը գցեց։

— Դե՜, ջենտլմեն,— օրտնեղությամբ ուղղեց Օբլոմովը։

— Ո՜չ, ո՜չ, դու բա՜րին ես,— շարունակում էր Շտոլցը հռհռալով։

— Իսկ ո՞րն է տարբերությունը,— ասաց Օբլոմովը։— Ջենտլմենը նույնպիսի բարին է։

— Ջենտլմենն այնպիսի բարին է,— բնորոշեց Շտոլցը,— որն ինքն է հագնում գուլպաները և ինքն էլ հանում է կոշիկները։

— Այո՜, անգլիացին՝ ինքը, որովհետև նրանք այնքան էլ շատ սպասավորներ չունեն, իսկ ռուսը...

— Դե, շարունակիր մինչև վերջ քո կյանքի իդեալի նկարագրությունը... է, շուրջդ լավ բարեկամներ, հետո՞, Օրերդ ինչպե՞ս կանցկացնեիր։

— Ա՜յ, վեր կկենայի առավոտյան,— սկսեց Օբլոմովը, ձեռքերը դնելով գլխի տակ, և դեմքի վրա սփռվեց անդորրության արտահայտությունը. նա մտքով արդեն գյուղում էր։— Եղանակը հիանալի է, երկինքը՝ կապույտ-կապուտակ, ո՜չ մի ամպ,— ասում էր նա,— պլանում տան մի կողմը, պատշգամբով ուղղված է դեպի արևելք, դեպի պարտեզ, հանդերը, մյուս կողմը՝ դեպի գյուղ։ Մինչ կզարթներ կինս, ես կհագնեի խալաթը և ման կգայի պարտեզում՝ շնչելով առավոտյան գոլորշիները. հենց այնտեղ էլ կգտնեի պարտիզպանին, միասին կշրեինք ծաղիկները, կիուզեինք թփերը, ծառերը։ Ես ծաղկեփունջ կկազմեի կնոջս համար։ Հետո կգնայի լոգանք ընդունելու կամ գետը՝ լողանալու; կվերադառնայի. պատշգամբն արդեն բաց է, կինս բլուզով է, թեթև չեպչիկով, որ հազիվ է գլխին մնում, ուզում է վայր ընկնել... Նա սպասում է ինձ։ «Թեյը պատրաստ է», ասում է։ Ինչպիսի՜ համբույր։ Ինչպիսի՜ թեյ։ Ինչպիսի՜ հանգիստ բազկաթոռ։ Նստում եմ սեղանի մոտ, վրան դրված է պաքսիմատ, սեր, թարմ կարագ...

— Հետո՞։

— Հետո, հագնելով լայնարձակ սերթուկը կամ որևէ բաճկոն, գրկելով կնոջս մեջքը, խորանալ նրա հետ միասին անվերջ, մութ ծառուղիների մեջ, գնալ հանգարտ, մտախոհ, լուռ կամ մտածել բարձրաձայն, երազել, հաշվել երջանկության պահերը, ինչպես զարկերակի խփոցը. լսել, թե ինչպես է բաբախում սիրտն ու մարում. բնության մեջ կարեկցություն փնտրել... և աննկատելի կերպով դուրս գալ գետակի ափը, հանդը... գետը թեթևակի ճողփում է. հասկերն ալեկոծվում են թեթև քամուց, շոգ է... նավակ նստել, կինս թիավարում է, հազիվ բարձրացնում է թիակը...

— Դու բանաստեղծ ես, Իլյա՜,— ընդհատեց Շտոլցը։

— Այո՜, բանաստեղծ կյանքի մեջ, որովհետև կյանքը բանաստեղծություն է։ Մարդիկ իրենց թույլ են տալիս աղճատե՜լ այն։ Ապա կարելի է մտնել ջերմոց,— շարունակում էր Օբլոմովը, ինքն էլ հափշտակվելով իր նկարագրած երջանկության իդեալով։

Նա իր երևակայությունից դուրս էր բերում պատրաստի, վաղուց արդեն իր նկարած պատկերները և այդ պատճառով էլ խոսում էր ոգևորված, առանց կանգ առնելու։

— Դիտել դեղձերը, խաղողը,— ասում էր նա,— ասել, թե ինչ պետք է մատուցել ճաշին, հետո վերադառնալ, թեթև նախաճաշ անել և սպասել հյուրերի... Մերթ կինս տոմսակ է ստանում որևէ Մարիա Պետրովնայից, գրքի, նոտաների հետ միասին, մերթ անանաս են ուղարկել ընծա կամ հենց մեր ջերմոցում հասել է ահռելի մի ձմերուկ. կուղարկես լավ բարեկամիդ՝ վաղվա ճաշի համար, ինքդ էլ կուղևորվես այնտեղ... Իսկ խոհանոցում այդ նույն ժամանակ կյանքը եռում է. խո-

հարարը ձյունի նման սպիտակ գոգնոցով ու թասակով դես ու դեն է ընկնում. վրա է դնում մի կաթսան, վերցնում է մյուսը, այնտեղ խառնում է, այստեղ սկսում է խմոր թավալել, այնտեղ ջուր դուրս թափել... դանակները հա զրնգում են... կանաչի են մանրում... այնտեղ պաղպաղակ են պտտեցնում... Հաճելի է մինչև ճաշ խոհանոց մտնել, բաց անել կաթսան, հոտ քաշել, նայել, թե ինչպես են ոլորում կարկանդակները, սեր հարում։ Հետո պառկել թախտին. կինս կարդում է բարձրաձայն ինչ-որ նոր բան. մենք կանգ ենք առնում, վիճում ենք... Բայց գալիս են հյուրեր, օրինակ, դու՝ կնոջդ հետ։

— Բա, դու ինձ է՞լ ես ամուսնացնում։

— Անպայմա՛ն։ Էլի երկու-երեք բարեկամներ, միշտ միևնույն անձինք։ Կսկսենք երեկվա, չվերջացած խոսակցությունը, կսկսվեն կատակները կամ մեջտեղ կգա պերճախոս լռություն, մտախոհություն. ո՛չ թե տեղը կորցնելու պատճառով, ո՛չ թե սենատային գործի պատճառով, այլ բավարարված ցանկությունների լրության պատճառով, վայելքի մտորում... Կատաղած ֆիլիպպիկա չես լսի բացակայողի հասցեին, չես նկատի քեզ վրա գցված հայացքը քեզ էլ նույնպես վերաբերելու խոստումով՝ հենց որ ոտդ դռնից դուրս դնես։ Ում որ չես սիրում, ով լավ մարդ չէ, նրա հետ աղուհաց էլ չես ուտի։ Զրուցակիցների աչքերում համակրություն ես տեսնում, կատակի մեջ՝ անկեղծ, ոչ չարամիտ ծիծաղ... Ամեն բանում անկեղծություն։ Ինչ որ աչքերում է, բառերի մեջ, նույնն է նաև սրտո՛ւմ։ Ճաշից հետո մոկկա, հավանա տեռասում...

— Դու ինձ նկարագրում ես նույնը, ինչ եղել է մեր պապերի ու հայրերի ժամանակ։

— Ո՛չ, ոչ նույնը,— պատասխանեց Օբլոմովը՝ գրեթե վիրավորվելով,— ո՞ւր է թե նույնը։ Մի՞թե իմ կինը կզբաղվեր մուրաբաներով ու սնկերով։ Մի՞թե կհաշվեր կաժերը և կբռնտղեր գյուղական քաթանը։ Մի՞թե սպասուհիների երեսին ապտակ կզարկեր։ Դու լսո՞ւմ ես՝ նոտաներ, գրքեր, դաշնամուր, նրբագեղ կահավորություն։

— Լավ, իսկ դու ի՞նքդ։

— Ես ինքս էլ անցյալ տարվա լրագրները չէի կարդա, ծանրակառքով չէի շրջի, արիշտա ու սագ չէի ուտի, այլ խոհարարիս կսովորեցնեի անգլիական ակումբում կամ դեսպանի մոտ։

— Է՞, հետո՞։

— Հետո, շոգը որ ընկներ, սայլը՝ ինքնաեռով, ազանդերով կուղարկեինք կեչու պուրակը, կամ թե չէ՝ հանդը, նոր հնձած խոտի վրա, դեզերի արանքին գորգեր կփռեինք և երանություն կքաշեինք ընդհուպ մինչև օկրոշկան ու բիֆշտեքսը։ Գյուղացիները գալիս են հանդից՝ գերանդիներն ուսներին. այնտեղ դանդաղ շարժվում է խոտ բարձած սայլը՝ ծածկելով ամբողջ սայլն ու ձին. վերևում, կույտի միջից դուրս է ցցված գյուղացու ծաղիկներով զարդարված գլխարկը, ինչպես և երեխայի գլուխը. այնտեղ ձայները գլուխներն են գրցել մանգաղավոր բոկոտն կանայք... Հանկարծ նկատեցին աղաներին, ձայները կտրեցին, խոր գլուխ են տալիս։ Նրանցից մեկը, արևառ պարանոցով, մերկ բազուկներով՝ վեհերոտ ցած-գցած, բայց խորամանկ աչքերով, շատ չնչին չափով, միմիայն արտաքուստ պաշտպանվում է պղայի փաղաքշանքից, իսկ ինքը երջանիկ է... սո՛ւս... կինս չտեսնի՞, աստծո՞ւ սիրուն։

Թե՛ Օբլոմովը և թե՛ Շտոլցը ծիծաղից թուլացան։

— Հանդում խոնավ է,— եզրակացրեց Օբլոմովը,— մութ է, մառախուղը, որպես շրջված ծով, կախված է աշորայի վրա. ձիերը թափահարում են իրենց և դոփում սմբակներով. ժամանակն է տուն գնալ։ Տանն արդեն վառվեցին ճրագները, խոհանոցում չխչխկում են բոլոր դանակները, սնկերի թավաները, կոտլետները, պտուղներ... երաժշտություն... Casta diva... Casta diva!—սկսեց երգել Օբլոմովը։— Չեմ կարող անտարբեր կերպով հիշել Casta diva-ն, ասաց նա՝ երգելով կավատինայի սկիզբը։— Ինչպե՞ս է լալիս այդ կինը։ Ինչպիսի՞ վիշտ է դրված այդ հնչյունների մեջ... Եվ շուրջը ոչ ոք ոչինչ չգիտե... Նա միայնակ է... Գաղտնիքը տանջում է նրան, նա գաղտնիքը հանձնում է լուսնին...

— Դու սիրո՞ւմ ես այդ արիան։ Շատ ուրախ եմ. այդ արիան հիանալի երգում է Օլգա Իլյինսկայան։ Ես կծանոթացնեմ քեզ. ա՛յ ձայն, ա՛յ երգ։ Ինքն էլ մի սքանչելի երեխա է։ Սակայն զուցե աչառու եմ դատում. նրա նկատմամբ

ես անտարբեր չեմ... Բայց և այնպես, նյութից մի՛ հեռացիր, նյութից մի՛ հեռացիր,— ավելացրեց Շտոլցը,— պատմի՛ր։

— Դեհ,— շարունակում էր Օբլոմովը,— էլ ի՞նչ պատմեմ... սա է բոլորը... հյուրերը ցրվում են կողմնաշենքերը, պավիլիոնները. իսկ վաղը... ամեն մեկը մի կողմ՝ մեկը ձուկ է որսում, մյուսը հրացանը ձեռքին որսի է գնում, որն էլ հենց այնպես, պարզապես նստած է իր համար...

— Հենց այնպե՞ս, ոչինչ չկա՞ ձեռքին,— հարցրեց Շտոլցը։

— Էլ ի՞նչ է պետք քեզ։ Լավ, գուցե, թաշկինակ։ Ի՞նչ է, չէի՞ր ուզենա այդպես ապրել,— հարցրեց Օբլոմովը։— Հը՞ Կյանք չէ՞ դա։

— Եվ ամբողջ կյանքն այդպե՞ս,— հարցրեց Շտոլցը։

— Մինչև մազերն սպիտակելը, մինչև մահը։ Ա՛յ, սա՛ է կյանքը։

— Ո՛չ, դա կյանք չէ։

— Ինչպե՞ս թե կյանք չէ։ Ի՞նչ չկա այստեղ։ Մտածի՛ր դու, որ չէիր տեսնի ոչ մի դժգույն, տանջված դեմք, ոչ մի հոգս, ոչ մի հարց սենատի մասին, բորսայի մասին, ակցիաների մասին, զեկուցումների մասին, մինիստրի ընդունելության մասին, աստիճանների, սենդադրամի հավելման մասին։ Այլ միայն սրտաշահ խոսակցություններ։ Դու երբեք կաքիք չէիր ունենա բնակարանից տեղափոխվելու. հենց սա միայն ի՞նչ արժե։ Մի՞թե սա կյանք չէ։

— Դա կյա՞նք չէ,— համառորեն կրկնեց Շտոլցը։

— Իսկ ի՞նչ է, քո կարծիքով։

— Դա... (Շտոլցը մտածմունքի մեջ ընկավ և բառ էր որոնում, թե ինչպես անվանի այդ կյանքը)։ Ինչ-որ... օբլոմովականություն է,— ասաց նա վերջապես։

— Օբ-լո-մովականությո՞ւն,— դանդաղորեն արտասանեց Իլյա Իլյիչը, զարմանալով այդ տարօրինակ բառի վրա և վերլուծելով այն ըստ վանկերի։— Օբ-լո-մո-վա-կա-նությո՞ւն։

Նա տարօրինակ ու սևեռուն հայացքով նայում էր Շտոլցին։

— Որտե՞ղ է, քո կարծիքով, կյանքի իդեալը։ Եվ ի՞նչը օբլոմովականություն չէ,— առանց հափշտակության հարցրեց նա վեհերոտ։— Մի՞թե բոլորն էլ այն բանին չեն ձգտում,

որի մասին երազում եմ ես։ Շնորհ արա՞,— ավելացրեց նա ավելի համարձակորեն։— Մի՞թե մեր ամբողջ վազվզոցի, կրքերի, պատերազմների, առևտրի ու քաղաքականության նպատակը հանգստություն գտնելը չէ, ձգտումը չէ դեպի կորուսյալ դրախտի այդ իդեալը։

— Քո ուտոպիան էլ է օբլոմովական,— առարկեց Շտոլցը։

— Բոլորն էլ հանգիստ ու անդորր են փնտրում,— պաշտպանվում էր Օբլոմովը։

— Ոչ բոլորը. դու ինքդ էլ տասը տարի ա՛յդ չէիր փընտրում կյանքում։

— Հապա ի՞նչ էի փնտրում,— տարակուսանքով հարցրեց Օբլոմովը՝ մտքով խորասուզվելով անցյալի մեջ։

— Մտաբերի՛ր, մտածի՛ր։ Որտե՞ղ են քո գրքերը, թարգմանությունները։

— Զախարը ինչ-որ տեղ դրած կլինի,— պատասխանում էր Օբլոմովը,— այստեղ անկյունում մի տեղ ընկած կլինեն։

— Անկյունո՞ւմ,— կշտամբանքով ասաց Շտոլցը։— Հենց այդ անկյունում էլ ընկած են նաև քո մտադրությունները՝ «ծառայել, քանի ուժ ունես, որովհետև Ռուսաստանին ձեռքեր ու գլուխներ են հարկավոր անսպառ աղբյուրները մշակելու համար (քո խոսքերն են), աշխատել՝ ավելի հաճելի հանգստանալու համար, իսկ հանգստանալ, նշանակում է ապրել կյանքի մի այլ, արտիստական, նրբագեղ կողմով, գեղարվեստագետների, բանաստեղծների կյանքի»։ Այս բոլոր մտքերդ նույնպե՞ս Զախարը գցել է անկյունը։ Հիշո՞ւմ ես, դու ուզում էիր գրքերից հետո, ուղևորվել օտար երկրներ, որպեսզի քո երկիրն ավելի լավ ճանաչես ու սիրես։ «Ամբողջ կյանքը միտք է և աշխատանք», պնդում էիր դու այն ժամանակ, «թեև անհայտ, խավար աշխատանք, բայց անդադար, և մեռնել այն գիտակցությամբ, որ կատարել ես քո գործը»։ Հը՞։ Ո՞ր անկյունն ես գցել դա։

— Այո՛... այո՛...— ասում էր Օբլոմովը՝ անհանգիստ հետևելով Շտոլցի յուրաքանչյուր բառին,— հիշում եմ, որ ես իսկապես... կարծեմ... Ինչպե՞ս չէ,— ասաց նա հանկարծ՝ մտաբերելով անցյալը,— չէ՞ որ, Անդրե՛յ, մենք ուզում էինք սկզբում ճանապարհորդել ամբողջ Եվրոպայով մեկ, Շվեյ-

ցարիա, պտտել ոտքով, ոտքներս այրել Վեզուվի վրա, իջնել Հերկուլանում։ Քիչ էր մնում՝ գժվեինք։ Ինչքա՞ն հիմարություններ...

— Հիմարությունե՞ր,— կշտամբանքով կրկնեց Շտոլցը։— Դու չէի՞ր, որ Ռաֆայելի մադոննաների «Կորրեջիոյի գիշերվա», «Բելվեդերյան Ապոլլոնի» փորագրություններին նայելով՝ արտասվելով ասում էիր՝ «Տե՞ր աստված, մի՞թե երսեք չի հաջողվելու բնօրինակները տեսնել և համբանալ երկյուղած, որովհետև կանգնած ես Միքելանջելոյի, Տիցիանի գործի առջև և տրորում ես Հռոմի հողը։ Մի՞թե պետք է կյանքներս անցկացնենք և ջերմոցներում տեսնենք այս մրտենիները, կիպարիսները, նարնջենիները և ոչ թե իրենց հայրենիքում։ Զշնչե՞լ Իտալիայի օդը, չհափշտակվե՞լ երկնի կապույտով»։ Եվ բառերի ի՞նչ հրաշալի հեղեղ էիր թափում։ Հիմարությունե՞ր։

— Այո՛, այո՛, հիշում եմ,— ասում էր Օբլոմովը՝ մտասուզվելով անցյալի մեջ։— Դու դեռ ձեռքս էլ բռնեցիր ու ասացիր. «Խոստում տանք չմեռնել, առանց այդ բոլորը տեսնելու»...

— Հիշում եմ,— շարունակում էր Շտոլցը,— ինչպես դու մի անգամ բերիր ինձ Սեյից արած թարգմանությունը՝ անվանակոչությանս առթիվ ինձ նվիրած. թարգմանությունը մինչև այժմ էլ ինձ մոտ է։ Իսկ ինչպե՞ս էիր դու համառորեն վիճում մաթեմատիկայի ուսուցչի հետ. ուզում էիր անպատճառ հասկանալ, թե ինչիդ է պետք գիտենալ շրջաններն ու քառակուսիները, բայց կեսից մի կողմ նետեցիր և ոչնչի չհասար։ Սկսեցիր անգլերե՞ն սովորել... և մինչև վերջը չհասցրիր։ Իսկ երբ ես կազմեցի արտասահման ուղևորվելու պլանը, հրավիրում էի գնալ-նայել գերմանական համալսարանները, դու վեր թռար, գրկեցիր ինձ և հանդիսավոր կերպով ձեռքդ տվեցիր. «Ես քոնն եմ, Անդրե՛յ, քեզ հետ ամեն տեղ». սրանք քո խոսքերն են։ Դու միշտ էլ մի քիչ դերասան էիր։ Հետո ի՞նչ եղավ, Իլյա՛։ Ես երկու անգամ եղել եմ արտասահմանում, մեր խորհրդաստությունից հետո հեղուությամբ նստում էի ուսանողական նստարաններին Բոննում, Ենայում, Էրլանգենում, հետո ուսումնասիրեցի Եվրոպան, ինչպես իմ կալվածքը։ Բայց ենթադրենք, ճանապարհորդությունը շռայլություն է, և ամեն մարդ ի վիճակի ու պարտավոր չէ օգտագործելու այդ միջոցը. իսկ Ռուսաստա՞նը։ Ես Ռուսաստանը տեսել եմ լայնքով ու երկայնքով։ Աշխատում եմ...

— Երբևիցե հո կդադարես աշխատելուց,— նկատեց Օբլոմովը։

— Երբեք չեմ դադարի։ Ինչի՞ համար։

— Երբ կրկնապատկես քո կապիտալները,— ասաց Օբլոմովը։

— Երբ քառապատկեմ, այն ժամանակ էլ չեմ դադարի...

— Լավ, հապա ինչի՞ համար ես չարչարվում,— ասաց նա մի քիչ լռելուց հետո,— եթե քո նպատակը չէ քեզ ընդմիշտ ապահովել և ապա աշխատանքից հրաժարվել, հանգստանալ...

— Գյուղակա՞ն օբլոմովականություն,— ասաց Շտոլցը։

— Կամ ծառայությամբ հասարակության մեջ նշանակություն ու դիրք ձեռք բերել և ապա պատվավոր անգործության մեջ վայելել արժանի հանգիստը...

— Պետերբուրգյա՞ն օբլոմովականություն,— առարկեց Շտոլցը։

— Լավ, էլ ե՞րբ պետք է ապրես,— սրտնեղելով Շտոլցի դիտողություններից՝ վրա բերեց Օբլոմովը։— Ինչի՞ համար պետք է մարդ ամբողջ կյանքը չարչարվի։

— Հենց աշխատանքի, ուրիշ ոչ մի բանի համար։ Աշխատանքն է կյանքի, գոնե իմ կյանքի ձևը, բովանդակությունը, տարերքն ու նպատակը։ Ա՛յ, դու կյանքից դուրս ես մղել աշխատանքը. ինչի՞ է նման քո կյանքը։ Ես կփորձեմ, գուցե վերջին անգամ, բարձրացնելու քեզ։ Եթե դու սրանից հետո էլ ա՛յ այստեղ նստած մնաս, տարանտևների ու ալեքսեևնեի հետ, բոլորովին կկորչես, նույնիսկ ինքդ քեզ համար ծանրություն կդառնաս։ Այժմ կամ երբե՛ք,— եզրափակեց նա։

Օբլոմովը լսում էր, նայելով նրան անհագստացած աչքերով։ Ընկերը, կարծես, հայելի դրեց նրա առաջ, և նա վախեցավ՝ ճանաչել իրեն։

— Ինձ մի՛ նախատիր, Անդրե՛յ, այլ ավելի լավ է՝ օգ-

նի՛ր,— սկսեց նա հառաչելով։— Ես ինքս տանջվում եմ դրանից. և եթե դու նայեիր ու լսեիր ինձ, ա՛յ, թեկուզ այսօր, թե ինչպես եմ ես ինքս ինձ համար գերեզման փորում և ողբում ինձ, քո լեզվից կշտամբանքի բառ չէր դուրս թռնի։ Ամեն բան գիտեմ, ամեն ինչ հասկանում եմ, բայց ուժ ու կամք չունեմ։ Տո՛ւր ինձ քո կամքն ու խելքը և տա՛ր ինձ՝ ուր ուզում ես։ Քո ետևից ես, գուցե, գամ, իսկ մենակ տեղից չեմ շարժվի։ Դու ճիշտ ես ասում. «Այժմ կամ երբեք այլևս»։ Մի տարի էլ, և ո՛ւշ կլինի։

— Դո՞ւ ես այդ, Իլյա՛,— ասում էր Անդրեյը։— Իսկ ես հիշում եմ քեզ իբրև մի բարակ, աշխույժ տղա, ինչպես էիր ամեն օր Պրեչիստենկայից գնում Կուդրինո. այնտեղ, փոքրիկ պարտեզում... դու չե՞ս մոռացել երկու քույրերին։ Չե՞ս մոռացել Ռուսոն, Շիլլերը, Գյոթեն, Բայրոնը, որ տանում էիր նրանց համար և ձեռքներից առնում Կոտտենի, Ժանլիսի ռոմանները... փքվում էիր նրանց առջև, ուզում էիր մաքրել նրանց ճաշակը։

Օբլոմովը վեր թռավ անկողնից։

— Ինչպե՞ս, դու ա՞յդ էլ ես հիշում, Անդրե՛յ։ Ինչպե՞ս չէ։ Ես երազում էի նրանց հետ միասին, հույսեր էի ներշընչում ապագայի վերաբերյալ, պլաններ, մտքեր և... զգացմունքներ էի զարգացնում, քեզնից թաքուն, որպեսզի դու չծաղրես։ Հենց այնտեղ էլ այդ ամենը մեռավ, այլևս երբե՞ք չկրկնվեց։ Լա՛վ, ո՞ւր կորավ ամեն բան, ինչո՞ւ հանգավ։ Անըմբռնելի՞ է։ Չէ՞ որ ես ո՛չ փոթորիկներ ունեցա և ոչ էլ ցնցումներ. ես ոչինչ չկորցրեցի, ոչ մի ծանրություն չի ճընշում իմ խիղճը, ապակու նման մաքուր է այն, ոչ մի հարված չսպանեց իմ ինքնասիրությունը, այլ հենց այնպես, աստվա՞ծ գիտե թե ինչից, ամեն ինչ կորչում է։

Նա հառաչեց։

— Գիտե՞ս, Անդրեյ, չէ՞ որ կյանքում երբեք չի բորբոքվել ոչ մի, ո՛չ փրկիչ և ոչ էլ խորտակիչ կրակ։ Իմ կյանքը նման չի եղել առավոտին, որի վրա աստիճանաբար թափվում են գույները, կրակը, որը հետո օրվա է փոխարկվում, ինչպես ուրիշների մոտ, և բոցավառվում է ջերմագին, և ամեն ինչ եռում է, շարժվում պայծառ կեսօրի մեջ, իսկ ապա շարունակ ավելի ու ավելի հանդարտ, ավելի ու ավելի դրժ-

գույն է դառնում, և ամեն ինչ բնականորեն ու հետզհետե մարում երեկոյան դեմ։ Ո՛չ, իմ կյանքն սկսել է մարելուց։ Տարօրինա՞կ է, բայց այդպես է։ Առաջին բոպեից, երբ ինքս ինձ գիտակցեցի, զգացի, որ արդեն մարում եմ։ Ես սկսեցի մարել գրասենյակում թղթեր գրելով, մարում էի հետագայում՝ գրքերում այնպիսի ճշմարտություններ կարդալով, որ չգիտեի՝ ինչպես վարվեմ կյանքում, մարում էի բարեկամներիս հետ՝ լսելով ասեկոսեներ, բամբասանքներ, ծաղր, չարանենգ ու սառը խոսակցություններ, դատարկություն, դիտելով այն բարեկամությունը, որ պահպանվում է աննպատակ, առանց համակրության հավաքույթներում, մարում և ուժերս վատնում էի Մինայի հետ. վճարում էի նրան եկամտիս կեսից ավելին և երևակայում, թե սիրում եմ նրան. մարում էի Նևսկի պողոտայով վհատ ու ծույլ ման գալով, ջրարջենու մուշտակների ու կուղբենու օձիքների մեջ, երեկույթներում, ընդունելության օրերին, երբ ինձ սիրալիր ընդունելություն էին ցույց տալիս որպես տանելի փեսացուի, մարում և կյանքս ու խելքս ծախում էի քիչ-քիչ, տեղափոխվելով քաղաքից ամառանոց, ամառանոցից Գորոխովայա, գարունը որոշում էի ոստրեների և օմարների երևալով, աշունն ու ձմեռը՝ նշանակված օրերով, ամառը՝ զբոսանքներով և ամբողջ կյանքը՝ ծույլ ու անդորր նիրհով, ինչպես ուրիշները... Մինչև իսկ ինքնասիրությունը. ինչի՞ վրա էր վատնվում այն։ Որ զգեստը պատվիրենք հայտնի դերձակի՞ն։ Որ կարողանանք հայտնի տո՞ւն ընկնել։ Որ իշխան Պ-ն ձեռքս սեղմի՞։ Իսկ չէ՞ որ ինքնասիրությունը կյանքի համն է։ Ո՞ւր կորավ այն։ Կամ ե՞ս չեմ հասկացել այս կյանքը, կամ կյանքը ոչ մի բանի պետք չէ. իսկ ավելի լավ չեմ իմացել ոչինչ, չեմ տեսել, ոչ ոք այն ցույց չի տվել ինձ։ Դու երևում ու անհետանում էիր գիսավորի նման, պայծառ, արագ, և ես այս ամենը մոռանում էի ու մարում...

Շտոլցն այլևս անփույթ ծաղրով չէր պատասխանում Օբլոմովին։ Նա լսում էր ու մռայլված լռում։

— Դու քիչ առաջ ասացիր, որ իմ դեմքը բոլորովին թարմ չէ, տրորված է,— շարունակում էր Օբլոմովը,— այո՛, ես մի թափթփված, հին, մաշված բաճկոն եմ, բայց ո՛չ թե կլիմայից, ո՛չ թե աշխատանքից, այլ նրանից, որ տասներկու

տարի է՝ իմ մեջ փակված է լույսը, որը ելք էր փնտրում, բայց միայն այրեց իր բանտը, չկարողացավ դուրս պրծնել դեպի ազատություն և հանգավ։ Այդպես ուրեմն, տասներկու տարի է անցել, ի՛մ սիրելի Անդրեյ. ես այլևս չէի ուզում արթնանալ։

— Իսկ դու ինչո՞ւ դուրս չպրծար, մի տեղ չփախար, այլ լուռ կործանվում էիր,— անհամբերությամբ հարցրեց Շտոլցը։

— Ո՞ւր։

— Ո՞ւր։ Թեկուզ հենց քո մուժիկների հետ՝ Վոլգայի ափերը. այնտեղ էլ ավելի շարժում կա, որոշ շահեր կան, նպատակ, աշխատանք կա։ Ես կգնայի Սիբիր, Սիտխա։

— Ա՜յ թե դու ինչպիսի ուժեղ միջոցներ ես պատվիրում,— վհատ կերպով նկատեց Օբլոմովը։— Միայն ե՞ս եմ որ։ Նայի՛ր. Միխայլովը, Պետրովը, Սեմյոնովը, Ալեքսեևը, Ստեպանովը... համրել չի կարելի, մեր անունը լեգեո՞ն է։

Շտոլցը դեռ այդ խոսակցության տպավորության տակ էր և լռում էր։ Հետո հառաչեց։

— Այո՛, շա՜տ ջուր է հոսել,— ասաց նա։— Ես քեզ այդպես չեմ թողնի, ես քեզ այստեղից կտանեմ, նախ՝ արտասահման, ապա՝ գյուղ. մի քիչ կնիհարես, կդադարես թախծել, հետո գործ էլ կգտնենք...

— Այո՛, հեռանանք այստեղից որևէ մի տեղ,— դուրս թռավ Օբլոմովի բերանից։

— Վաղը կսկսենք հոգալ արտասահմանյան անցագրի մասին, հետո կսկսենք պատրաստվել... Ես պոկ չեմ գա, լսո՞ւմ ես, Իլյա՛։

— Դու էլ ամեն ինչ վա՜ղը,— առարկեց Օբլոմովը, կարծես ամպերից ցած ընկած։

— Իսկ դու կուզենայի՞ր «վաղվան չհետաձգել այն, ինչ կարելի է այսօր անել»։ Ի՞նչ շատ ես շտապում։ Հիմա ուշ է,— ավելացրեց Շտոլցը,— բայց երկու շաբաթից մենք հեռու կլինենք...

— Ի՞նչ ես ասում, եղբայր իմ, երկու շաբաթից, աստված սիրես, հանկարծ այդպես...— ասում էր Օբլոմովը։— Թող մի լավ մտածենք ու պատրաստվենք... Հարկավոր է մի որևէ տարանտաս... գուցե մի երեք ամսից։

— Բա՞ն հնարեց՝ տարանտաս։ Մինչև սահմանը մենք կգնանք փոստային կառքով, կամ շոգենավով մինչև Լյուբեկ։

ինչպես որ ավելի հարմար լինի, իսկ այնտեղ շատ վայրերում երկաթուղիներ կան։

— Իսկ բնակարա՞նը, իսկ Զախա՞րը, իսկ Օբլոմովկա՞ն։ Չէ՞ որ հարկավոր է կարգադրել,— պաշտպանվում էր Օբլոմովը։

— Օբլոմովականությո՞ւն, օբլոմովականությո՞ւն,— ասաց Շտոլցը ծիծաղելով, հետո վերցրեց մոմը, Օբլոմովին բարի գիշեր ցանկացավ և գնաց քնելու։— Այժմ կամ երբեք՝ հիշի՛ր,— ավելացրեց նա, դառնալով դեպի Օբլոմովը և իր ետևից դուռը ծածկելով։

V

«Այժմ կամ երբե՛ք». Օբլոմովի աչքերին երևացին այս ահավոր խոսքերը, հենց որ նա զարթնեց առավոտյան։

Անկողնից վեր կացավ, երկու-երեք անգամ անցավ սենյակի միջով, նայեց հյուրասենյակը. Շտոլցը նստել ու գրում էր։

— Զախա՞ր,— ձայն տվեց նա։

Չի լսվում վառարանից ցած թռչելու ձայնը. Զախարը չի գալիս. Շտոլցը նրան ուղարկել է փոստ։

Օբլոմովը մոտեցավ իր փոշոտված սեղանին, նստեց, վերցրեց փետրագրիչը, թաթախեց թանաքամանի մեջ, բայց թանաք չկար, թուղթ փնտրեց՝ նույնպես չկար։

Նա մտածմունքի մեջ ընկավ և սկսեց մեքենայորեն մատով փոշու մեջ գծագրել, հետո նայեց, թե ի՞նչ է գրել. դուրս եկավ Օբլոմովականություն։

Նա շտապ թևքով ջնջեց գրածը։ Այդ բառը երազում երևացել էր նրան՝ պատերի վրա կրակով գրված, ինչպես Բաղդասարին՝ խնջույքի ժամանակ։

Եկավ Զախարը և, գտնելով Օբլոմովին ոչ իր անկողնում, մութ աչքերով նայեց բարինին՝ զարմանալով, որ նա ոտքի վրա է։ Զարմանքի այդ բութ հայացքի մեջ գրված էր. «Օբլոմովականությո՞ւն»։

«Մի բառ է», մտածում էր Իլյա Իլյիչը, «բայց ի՞նչ թունոտ բառ է...»

Զախարն ըստ սովորության վերցրեց սանրը, խոզանակը, սրբիչը և ուզեց մոտենալ Իլյա Իլյիչին՝ սանրելու։

— Կորի՛ր գրողի ծոցը,— բարկացած ասաց Օբլոմովը և խլեց նրա ձեռքից խոզանակը, Զախարն էլ սանրը վեր գցեց հատակին։

— Հո նորից չե՞ք պառկելու,— հարցրեց Զախարը։— Ես անկողինը կուզղեի։

— Բե՛ր ինձ թանաք ու թուղթ,— պատասխանեց Օբլոմովը։

Օբլոմովը մտմտաց «Ա՛յժմ կամ երբե՛ք» բառերի վրա։

Ականջ դնելով բանականության և ուժի այդ հուսահատ կոչին, նա գիտակցում էր ու կշռում, թե ի՛նչ է մնացել իր մեջ դեռևս կամքի մնացորդից և ինքն այդ խղճուկ մնացորդը ուր կտանի, ինչի մեջ կդնի։

Տանջալից մտածմունքից հետո նա արագ վերցրեց գրիչը, անկյունից դուրս քաշեց գիրքը և ուզում էր մի ժամում կարդալ, գրել և մտմտալ այն ամենը, ինչ որ չէր կարդացել, չէր գրել ու չէր մտմտացել տասը տարվա ընթացքում։

Ի՞նչ պետք է անի նա այժմ։ Առա՞ջ գնա, թե կանգ առնի։ Օբլոմովյան այս հարցը նրա համար համլետյան հարցից խոր էր։ Առաջ գնալ՝ նշանակում է հանկարծ դեն գցել լայն խալաթը ո՛չ միայն ուսերից, այլև հոգուց, մտքից, պատերի վրա եղած փոշու և սարդոստայնի հետ միասին սրբել սարդոստայնն աչքերի վրայից և տեսնե՛լ։

Ի՞նչ առաջին քայլ անել դրա համար։ Ինչի՞ց սկսել։ Չգիտեմ, չեմ կարող... ո՛չ... խորամանկություն եմ անում, գիտեմ և... Շտոլցն էլ այստեղ է, կողքիս. նա իսկույն կասի։

Իսկ ի՞նչ կասի նա։ «Մի շաբաթում, կասի, մանրամասն հրահանգ գրել հավատարմատարին և նրան գյուղ ուղարկել, Օբլոմովկան գրավ դնել, հողեր գնել, ուղարկել շենքերի պլանը, բնակարանը հանձնել, անցագիր վերցնել և կես տարով արտասահման գնալ, ավելորդ ճարպը մեկդի նետել, ծանրությունից ազատվել, հոգին թարմացնել այն օդով, որի մասին մի ժամանակ երազում էր բարեկամի հետ, ապրել առանց խալաթի, առանց Զախարի և Տարանտևի, ինքնուրույն կերպով հագնել գուլպաները և հանել կոշիկները, քնել միայն գիշերները, գնալ՝ ուր ամենքն են գնում, երկաթուղիներով, շոգենավերով, հետո... Հետո... բնակվել Օբլոմովկայում,

իմանալ, թե ինչ է ցանքը և կալտությունը, ինչից է մուժիկը աղքատ լինում և հարուստ. հանդ գնալ, ընտրություններին մասնակցել, գնալ գործարան, ջրաղացները, նավահանգիստ։ Միևնույն ժամանակ կարդալ լրագրեր, գրքեր, անհանգստանալ այն բանի համար, թե ինչու են՝ անգլիացիները նավ ուղարկել դեպի Արևելք...»

Ա՜յ թե ինչ կասի նա։ Սա կնշանակի առաջ գնալ... Եվ այսպես ամբողջ կյանքը։ Մնա՞ս բարով, կյանքի բանաստեղծական իդեալ։ Սա ինչ-որ մի դարբնոց է և ոչ թե կյանք. այստեղ շարունակ բոց է, շխկշխկոց, շոգ, աղմուկ... իսկ ե՞րբ պետք է ապրել։ Ավելի լավ չէ՞ մնալ։

Մնալ՝ նշանակում է շապիկը թարս հագնել, լսել Զախարի վառարանից ցած թռչելու ձայնը, ճաշել Տարանտևի հետ, ամեն բանի մասին շատ չմտածել, մինչև վերջ չկարդալ «Ճանապարհորդություն դեպի Աֆրիկան», հանգիստ ծերանալ Տարանտևի սանամոր բնակարանում...

«Այժմ կամ երբե՛ք», «Լինե՛լ թե չլինե՛լ»։ Օբլոմովն ուզում էր վեր կենալ բազկաթոռից, բայց ոտքը միանգամից մաշիկի մեջ չընկավ, և նա նորից նստեց։

Երկու շաբաթ անց Շտոլցն արդեն գնաց Անգլիա՝ Օբլոմովից խոսք առնելով, որ սա ուղիղ Փարիզ կգա։ Իլյա Իլյիչի անցագիրն էլ արդեն պատրաստ էր, նա մինչև անգամ իր համար ճանապարհի վերարկու պատվիրեց, գլխարկ գնեց։ Այ թե ուր էր հասել գործը։

Զախարն արդեն խորիմաստ կերպով ապացուցում էր, որ բավական էր մի զույգ կոշիկ պատվիրել, իսկ մյուս զույգին կարկատան գցել։ Օբլոմովը գնեց վերմակ, բրդե ֆուֆայկա, ճանապարհի նեսեսսեր, ուզում էր պարենի տոպրակ էլ գընել, բայց տասը հոգի ասացին, որ արտասահմանում հետները մթերք չեն տանում։

Զախարը վազվզում էր արհեստանոցները, խանութները, ամբողջովին քրտինքի մեջ, և եթե խանութներից ստացած մանրից շատ տասկոպեկանոցներ ու հինգկոպեկանոցներ էր իր գրպանը դրել, բայց անիծում էր թե՛ Անդրեյ Իվանովիչին, թե՛ այն բոլորին, ովքեր հնարել էին ճանապարհորդությունը։

— Ի՞նչ պիտի անի այնտեղ մենակ,— ասում էր նա

խանութում։— Ինչպես լսել եմ՝ այնտեղ պարոններին սպասավորում են միշտ աղջիկները։ Աղջիկը ո՞նց պետք է կոշիկ քաշի։ Եվ նա ինչպե՞ս պետք է գուլպա հագցնի բարինի մերկ ոտներին...

Նա նույնիսկ քմծիծաղ տվեց, այնպես որ այտամորուսները տարածվեցին դեպի կողքերը, և գլուխը տարուբերեց։ Օբլոմովը չծուլացավ, գրեց, թե ի՞նչ պետք է իր հետ վերցնի և ինչ տանը թողնի։ Կահկարասին և այլ իրերը հանձնարարվեցին Տարանտևին փոխադրելու իր սանամոր բնակարանը՝ Վիբորգյան քաղաքամասում, փակել դրանք երեք սենյակում և պահել մինչև արտասահմանից վերադառնալը։

Արդեն Օբլոմովի ծանոթները, ո՛րը չհավատալով, ո՛րը ծիծաղելով, որն էլ ինչ-որ վախով, ասում էին.— Գնում է. երևակայեցեք, Օբլոմովը տեղից շարժվե՞լ է։

Բայց Օբլոմովը չգնաց ո՛չ մի ամիս, ո՛չ երեք ամիս հետո։

Մեկնելու նախօրեի գիշերը նրա շրթունքն ուռեց։

— Ճանճը կծել է, հո չի՞ կարելի այդպիսի շրթունքով ծովը մտնել,— ասաց նա և սկսեց ուրիշ շոգենավի սպասել։

Ահա արդեն օգոստոսն է, Շտոլցը վաղուց Փարիզում է, նրան մոլեգին նամակներ է գրում, բայց պատասխան չի ստանում։

Ի՞նչ է պատճառը։ Երևի թանա՞քն է չորացել թանաքամանում և թո՞ւղթ չկա։ Կամ գուցե պատճառն այն է, որ օբլոմովյան ոճով հաճախ են բախվում որը (который) և որ (что) բառերը, կամ, վերջապես, Իլյա Իլյիչը այժմ կամ երբեմ ահեղ կանչի մեջ կանգ է առել վերջինի վրա, ձեռքերը դրել է գլխատակը, և իզուր է զարթեցնում նրան Զախարը։

Ո՛չ, նրա թանաքամանը լի է թանաքով, սեղանին ընկած են նամակներ, թուղթ, մինչև անգամ դրոշմաթուղթ, այն էլ՝ նրա ձեռքով գրոտված։

Գրելով մի քանի էջ, նա ոչ մի տեղ երկու անգամ որը (который) չգրեց. շարահյուսությունը հոսում էր ազատ և տեղ-տեղ արտահայտիչ էր ու պերճախոս, ինչպես «այն օրերը», երբ Շտոլցի հետ միասին երազում էր աշխատանքային կյանքի, ճանապարհորդությունների մասին։

Նա վեր էր կենում ժամը յոթին, կարդում էր, ինչ-որ տեղ տանում գրքերը։ Դեմքին ոչ քուն կա, ոչ հոգնածություն, ոչ

ձանձրույթ։ Նույնիսկ գույն հրևաց դեմքին, աչքերում՝ փայլ, ինչ-որ խիզախություն կամ, գոնե, ինքնավստահություն։ Խալաթ չկար հագին. Տարանտևը մյուս իրերի հետ այն էլ էր տարել սանամոր մոտ։

Օբլոմովը նստած է գիրքը ձեռքին կամ տնային վերարկուն հագին գրում է. թեթև վզկապ է կապել, շապկի օձիքները բաց են թողած փողկապի վրա և ձյունի նման փայլում են։ Տնից դուրս է գալիս հիանալի կարած սերթուկով, պճնամոլի գլխարկով... Նա ուրախ է, երգում է... Ինչի՞ց է դա...

Ահա նա նստած է իր ամառանոցի պատուհանի մոտ (նա ապրում է ամառանոցում, քաղաքից մի քանի վերստ հեռու), կողքին ընկած է մի ծաղկեփունջ։ Ինչ-որ բան է գրում արագարագ, անընդհատ նայում է թփերի միջով դեպի ճանապարհը, ու նորից շտապում է գրել։

Հանկարծ ճանապարհին թեթև քայլերից խշրտաց ավազը. Օբլոմովը մեկդի նետեց գրիչը, արագ վերցրեց ծաղկեփունջը և վազեց պատուհանի մոտ։

— Դու՞ք եք, Օլգա Սերգեևնա։ Իսկո՛ւյն, իսկո՛ւյն,— ասաց նա, վերցրեց գլխարկը, ձեռնափայտը, վազեց դրոնակից դուրս, ձեռք տվեց մի ինչ-որ գեղեցիկ կնոջ և նրա հետ միասին անհետացավ անտառում, ահագին եղևնիների ստվերում...

Զախարը դուրս եկավ մի անկյունից, նայեց նրա ետևից, սենյակը փակեց և անցավ խոհանոց։

— Գնա՞ց,— ասաց նա Անիսյային։

— Իսկ ճաշելո՞ւ է։

— Ի՞նչ իմանաս,— քնակոլոլ պատասխանեց Զախարը։

Զախարը միշտ նույնն է. նույն ահագին այտամորուսները, չսափրված մորուքը, նույն գորշ ժիլետը և ճեղքը սերթուկի վրա, բայց նա ամուսնացած է Անիսյայի հետ, սանամոր հետ գժտվելու հետևանքով թե այնպես, այն համոզմամբ, որ մարդ ամուսնացած պետք է լինի. նա ամուսնացավ և, հակառակ առածի, չփոխվեց։

Շտոլցն Օբլոմովին ծանոթացրեց Օլգայի և նրա մորաքրոջ հետ։ Երբ Շտոլցն առաջին անգամ Օբլոմովին բերեց Օլգայի մորաքրոջ տուն, այնտեղ հյուրեր կային։ Օբլոմովի համար

դա ծանր էր և, ըստ սովորության նա իրեն անհարմար էր զգում։

«Լավ կլիներ՝ ձեռնոցներս հանեի», մտածում էր նա, «չէ՞ որ սենյակում տաք է։ Որքա՜ն ետ եմ մնացել ամեն ինչից...»

Շտոլցը նստեց Օլգայի կողքին, որ նստել էր մենակ, լամպի տակ, թեյի սեղանից հեռու, մեջքը հենած բազկաթոռին, և քիչ էր հետաքրքրվում, թե ինչ է կատարվում իր շուրջը։

Օլգան շատ ուրախացավ Շտոլցին տեսնելով. թեև նրա աչքերը չվառվեցին փայլով, այտերը չբռնկվեցին կարմրությամբ, բայց ամբողջ դեմքը լցվեց հավասար, անդորր լույսով, և ժպիտ երևաց։

Օլգան Շտոլցին անվանում էր բարեկամ, սիրում էր նրան, այն բանի համար, որ նա իրեն միշտ զվարճացնում էր և չէր թողնում, որ ձանձրանա, բայց մի քիչ էլ վախենում էր, որովհետև զգում էր, որ ինքը նրա մոտ դեռ երեխա է։

Երբ մտքում հարց էր ծագում, տարակուսանքի մեջ էր ընկնում, միանգամից սիրտ չէր անում դիմելու Շտոլցին. նա իրենից չափազանց առաջ էր, իրենից չափազանց բարձր էր, այնպես որ նրա ինքնասիրությունը երբեմն վիրավորվում էր այդ անհասունությունից, իրենց խելքի և տարիների միջև եղած այդ տարածությունից։

Շտոլցը նույնպես անշահախնդրորեն հրճվում էր նրանով, որպես մի հրաշալի էակով, որ մտքի ու զգացմունքների անուշաբույր թարմություն ունի։ Օլգան Շտոլցի աչքում լոկ մի սքանչելի, մեծ հույսեր տվող երեխա էր։

Սակայն Շտոլցը նրա հետ ավելի սիրով և ավելի հաճախ էր խոսում, քան ուրիշ կանանց հետ, որովհետև նա, թեև անգիտակցաբար, բայց ընթանում էր կյանքի պարզ, բնական ուղիով և իր երջանիկ բնության, առողջ, անխորամանկամիտ կրթության շնորհիվ, խույս չէր տալիս մտքի, զգացմունքի, կամքի բնական արտահայտումից, մինչև անգամ աչքերի, շրթունքների, ձեռքի ամենաչնչին, հազիվ նկատելի շարժումից։

Արդյոք այն պատճառով չէր նա այդպես վստահ կերպով ընթանում այդ ուղիով, որ ժամանակ առ ժամանակ իր կողքին լսում էր ուրիշ, իր «բարեկամի» է՛լ ավելի վստահ քայլերը, բարեկամի, որին հավատում էր և որի հետ համաչափում էր իր քայլը։

Ինչևիցե, քիչ աղջիկների մեջ կգտնես հայացքի, խոսքի, վարմունքի այդպիսի պարզություն և բնական ազատություն։ Նրա աչքերում երբեք չես կարդա՝ «Ես հիմա քիչ կսեղմեմ շրթունքս և մտքի մեջ կընկնեմ. ես այսպես լավիկն եմ։ Կնայեմ այնտեղ և կվախենամ, մի թեթև կճչամ, իսկույն ինձ մոտ կվազեն։ Կնստեմ դաշնամուրի մոտ և ոտքիս ծայրը մի քիչ դուրս կհանեմ»...

Ոչ սեթևեթանք, ոչ կոտրատվել, ոչ մի կեղծիք, ոչ մի արտաքին փայլ, ոչ մի դիտավորություն։ Դրա համար էլ նրան գնահատում էր համարյա միայն Շտոլցը, դրա համար էլ շատ մազուրկաների ժամանակ նա մնում էր մենակ նստած՝ առանց թաքցնելու իր ձանձրույթը. դրա համար էլ նրան նայելիս երիտասարդ մարդկանցից ամենասիրալիրներն անզգուշասեր էին դառնում, չմանալով, թե ի՞նչ և ինչպե՞ս ասեն նրան...

Ոմանք նրան համարում էին հասարակ, սահմանափակ, ոչ խոր, որովհետև նրա լեզվից ո՞չ իմաստուն ասացվածքներ էին թափվում կյանքի, սիրո մասին, ո՞չ արագ, անակնկալ և համարձակ ռեպլիկներ, ոչ էլ գրքերում կարդացած կամ ուրիշներից լսած դատողություններ երաժշտության ու գրականության մասին. նա քիչ էր խոսում, և այն էլ իրենը, անկարևոր բաներ. և խելոք ու ժիր «կավալերները» նրան զանց էին անում. ոչ ժիր կավալերներն, ընդհակառակը, նրան չափազանց տարօրինակ էին համարում և մի քիչ վախենում էին։ Միայն Շտոլցն էր, որ անդադար խոսում էր նրա հետ և զվարճացնում էր նրան։

Օլգան սիրում էր երաժշտությունը, բայց մեծ մասամբ երգում էր թաքուն, կամ Շտոլցի, կամ պանսիոնի որևէ ընկերուհու համար. իսկ նա երգում էր, Շտոլցի ասելով, այնպես, ինչպես չէր երգում ոչ մի երգչուհի։

Հենց նոր էր Շտոլցը նստել նրա կողքին, որ սենյակում լսվեց Օլգայի ծիծաղը, որն այնքան հնչուն էր, այնքան անկեղծ ու վարակիչ, որ ով էլ լսեր այդ ծիծաղը, անպայման ինքն էլ կծիծաղեր, առանց պատճառն իմանալու։

Բայց Շտոլցը միայն չէր զվարճացնում նրան. կես ժամ

հետո Օլգան հետաքրքրությամբ լսում էր Շտոլցին, և կրկնակի հետաքրքրությամբ աչքերը դարձնում էր Օբլոմովին, իսկ Օբլոմովն այդ հայացքներից ավելի լավ կհամարեր գետնի տակն անցնել։

«Այդ ի՞նչ են խոսում իմ մասին», մտածում էր նա, անհանգստությամբ ծուռ նայելով նրանց վրա։ Արդեն ուզում էր գնալ, բայց Օլգայի մորաքույրը նրան սեղանի մոտ հրավիրեց և նստեցրեց իր կողքին, բոլոր զրուցակիցների խաչաձևող հայացքների տակ։

Օբլոմովը վախվորած շրջվեց դեպի Շտոլցը՝ նա արդեն չկար, նայեց Օլգային և հանդիպեց իր վրա սևեռված նույն հետաքրքիր հայացքին։

«Դեռ շարունակո՞ւմ է նայել», մտածեց, շփոթված դիտելով իր զգեստը։

Նա մինչև անգամ դեմքը թաշկինակով սրբեց, մտածելով՝ չլինի թե քիթը կեղտոտվել է, շոշափեց փողկապը՝ չլինի թե արձակվել է, այդպիսի բան երբեմն պատահում է նրան. ոչ, կարծես ամեն ինչ կարգին է, իսկ նա նայո՞ւմ է։

Բայց սպասավորը մատուցեց նրան մի բաժակ թեյ և կրենդելներ։ Նա ուզում էր հաղթահարել իր շփոթմունքը, համարձակ լինել և այդ համարձակության մեջ վերցրեց պաքսիմատի, բիսկվիտների, կրենդելների այնպիսի մի կույտ, որ կողքին նստած աղջիկը ծիծաղեց։ Մյուսները հետաքրքրությամբ նայում էին այդ կույտին։

«Տե՛ր աստված, նա էլ է նայում», մտածեց Օբլոմովը։ «Ի՞նչ պիտի անեմ ես այս կույտը»։

Նա առանց նայելու էլ տեսավ, որ Օլգան իր տեղից վեր կացավ և մյուս անկյունը գնաց։ Նրա սիրտը հանգստացավ։

Իսկ աղջիկն աչքերը սրած նրան էր նայում, զարմանալով, թե ի՞նչ կանի պաքսիմատները։

«Որքան կարելի է շուտ ուտեմ», մտածեց նա և սկսեց արագ-արագ մաքրազարդել բիսկվիտները. բարեբախտաբար նրանք հենց բերանում հալվում էին։

Մնում էր միայն երկու պաքսիմատ. նա ազատ շունչ քաշեց և վճռեց նայել այնտեղ, ուր գնացել էր Օլգան...

Տե՛ր աստված։ Նա կանգնած է կիսանդրիի մոտ, պատվանդանին հենված և աչքերով հետևում է իրեն։ Նա իր անկյունից կարծես հեռացել էր, որպեսզի ավելի ազատ նայի։ Օլգան նկատեց իր շփոթմունքը պաքսիմատների կապակցությամբ։

Ընթրիքի ժամանակ Օլգան նստած էր սեղանի մյուս ծայրին, խոսում էր, ուտում էր և, այնպես էր թվում, թե ամենևին չի զբաղվում նրանով։ Բայց հենց Օբլոմովը վախվխելով շուռ էր գալիս նրա կողմը, հույս ունենալով, թե նա չի նայում, իսկույն հանդիպում էր նրա հայացքին, որ լի էր հետաքրքրությամբ, բայց միաժամանակ այնքան բարի էր...

Ընթրիքից հետո Օբլոմովն սկսեց շտապ մնաք բարով ասել մորաքրոջը, սա հրավիրեց նրան հետևյալ օրը ճաշի և խնդրեց Շտոլցին էլ հայտնել նույն հրավերը։ Իլյա Իլյիչը գլուխ տվեց և, առանց աչքերը բարձրացնելու, անցավ ամբողջ դահլիճով։ Ա՜յ, դաշնամուրի ետև անմիջապես վարագույրներն են և դուռը։ Նայեց՝ դաշնամուրի առջև նստած էր Օլգան և մեծ հետաքրքրությամբ նրան էր նայում։ Թվաց, թե Օլգան ժպտում էր։

«Երևի, Անդրեյը պատմել է, որ երեկ իմ հագին տարբե՛ր գուլպաներ էին և շապիկս էլ թա՞րս էի հագել», եզրակացրեց նա և տուն վերադարձավ վատ տրամադրությամբ թե՛ այդ ենթադրության և թե է՛լ ավելի ճաշի հրավիրվելու պատճառով, որին նա պատասխանեց գլուխ տալով, նշանակում է՝ ընդունեց։

Այդ րոպեից Օլգայի համառ հայացքը Օբլոմովի մտքից չէր հեռանում։ Իզուր էր նա ամբողջ հասակով մեկ պառկում մեջքի վրա, իզուր էր ամենածույլ և ամենահանգիստ դիրքեր ընդունում. քունը չի տանում ու չի տանում։ Թե՛ խալաթն էր նրան զզվելի թվում, թե՛ Զախարը՝ հիմար ու անտանելի, թե՛ փոշին ու սարդոստայնը՝ անհանդուրժելի։

Նա հրամայեց դուրս տանել մի քանի անպետք նկար, որ նրա վզին էր փաթաթել աղքատ արվեստագետների մի ինչոր հովանավոր. ինքն ուղղեց շտորը, որ վաղուց է՝ չէր բարձրանում, կանչեց Անիսյային և պատվիրեց մաքրել լուսամուտները, սրբել սարդոստայնը, իսկ հետո պառկեց կողքի և մի ժամի չափ մտածում էր՝ Օլգայի մասին։

Սկզբում լարված զբաղվեց նրա արտաքինով. հիշողության մեջ շարունակ նկարում էր նրա պատկերը։

Օլգան, խիստ ասած՝ գեղեցկուհի չէր, այսինքն՝ նա ո՛չ ճերմակ էր, ոչ էլ այտերի ու շրթունքների պայծառ երանգավորում ուներ, աչքերն էլ չէին վառվում ներքին կրակի ճառագայթներից. ո՛չ մարջաններ կային շուրթերին, ո՛չ մարգարիտներ՝ բերանում, ո՛չ մանրիկ ձեռքեր, ինչպես ունենում են հնգամյա երեխաները՝ խաղողաձև մատներով։

Բայց եթե նրան արձան դարձնեինք, նա կլիներ շնորհալիության ու ներդաշնակության արձան։ Մի փոքր բարձր հասակին խստորեն համապատասխանում էր գլխի մեծությունը՝ դեմքի ձվաձևությունն ու չափերը. այդ ամենն, իր հերթին, ներդաշնակում էր ուսերին, ուսերը՝ իրանին...

Ով էլ նրան հանդիպեր, նույնիսկ ցրված մեկը, մի վայրկյան կանգ կառներ այդպես խիստ ու մտածված, գեղարվեստորեն ստեղծված այդ էակի առջև։

Քիթը կազմում էր հազիվ նկատելի ցցուն, գեղանազ մի գիծ, շուրթերը բարակ էին և մեծ մասամբ սեղմված՝ անընդհատ որևէ բանի վրա սևեռած մտքի նշան։ Խոսուն մտքի այդ նույն ներկայությունը շողշողում էր մութ, գորշ կապտագույն աչքերի սրատես, միշտ կայտառ, ոչ մի բան բաց չթողնող աչքերի նայվածքում։ Հոնքերը հատուկ գեղեցկություն էին տալիս աչքերին. նրանք աղեղնաձև չէին, աչքը չէին կըլորացնում երկու բարակ, մատներով պոկած թելերի նման. ո՛չ, դրանք երկու շեկ, խավոտ, համարյա ուղիղ շերտիկներ էին, որոնք հազվադեպ էին համագիր լինում. մեկը մյուսից մի գծաչափ բարձր էր, այդ պատճառով էլ հոնքի վերևը մի փոքրիկ ծալք կար, որի մեջ կարծես ինչ-որ բան էր խոսում, կարծես այնտեղ միտք էր թաքնված։

Օլգան ման էր գալիս մի քիչ առաջ թեքված գլխով, որն այնպես բարեկազմ, ազնվաբար հանգչում էր նուրբ, հպարտ պարանոցին. շարժվում էր ամբողջ մարմնով հավասարաչափ, քայլելով թեթև, գրեթե աննշմարելի...

«Ինչո՞ւ էր նա երեկ այդպես սևեռակի ինձ նայում», մտածում էր Օբլոմովը։ «Անդրեյը երդվում է, որ գուլպաների և շապկի մասին չի խոսել, այլ խոսել է իր բարեկամության մասին ինձ հետ, այն մասին, թե ինչպես ենք մենք մեծացել, սովորել, այն ամենն, ինչ լավ էր, և միևնույն ժամանակ (այս էլ է պատմել), թե ինչպես դժբախտ է Օբլոմովը, ինչպես ամեն բարի բան կորչում է նրա մեջ մասնակցության, գործունեության պակասից, ինչպես թույլ է առկայծում կյանքը և ինչպես...»

«Իսկ ի՞նչ կար ժպտալու»,— շարունակում էր մտածել Օբլոմովը։ «Եթե նա փոքրիշատե սիրտ ունի, այդ սիրտը պետք է մարեր, արյունով լցվեր խղճալուց, իսկ նա... է՜հ, տերը նրա հետ։ Կդադարե՛մ մտածելուց։ Ա՛յ, այսօր միայն կգնամ, կճաշեմ և այլևս ոտք չեմ դնի»։

Անցնում էին օրերն օրերի ետևից. նա այնտեղ էր թե՛ երկու ոտքով, թե՛ ձեռքերով և թե՛ գլխով։

Մի գեղեցիկ առավոտ Տարանտևը նրա ամբողջ տունը տեղափոխեց իր սանամոր մոտ, Վիբորգի քաղաքամասում գտնվող նրբափողոցը, և Օբլոմովը երեք օր անցկացրեց այնպես, ինչպես վաղուց չէր անցկացրել. առանց անկողնի, առանց բազմոցի, ճաշում էր Օլգայի մորաքրոջ մոտ։

Հանկարծ պարզվեց, որ նրանց ամառանոցի դիմաց կա մի ազատ ամառանոց։ Օբլոմովը առանց տեսնելու վարձեց այն և ապրում էր այնտեղ։ Նա Օլգայի հետ էր առավոտից մինչև երեկո. կարդում էր նրա հետ, ծաղիկներ էր ուղարկում, նավակով զբոսնում էր լճի վրա, զբոսնում լեռներում... նաև Օբլոմովը։

Ի՞նչ չի պատահում աշխարհում։ Ինչպե՞ս եղավ, որ պատահեց այդ։ Այ թե ինչպես։

Երբ նրանք Շտոլցի հետ միասին ճաշում էին մորաքրոջ մոտ, Օբլոմովը ճաշի ժամանակ նույն տանջանքն էր ապրում, ինչ նախորդ օրը. ծամում էր նրա հայացքի տակ, խոսում էր՝ գիտենալով, զգալով, որ իր վերև արևի պես կախվել է այդ հայացքը, այրում է նրան, անհանգստացնում, շարժում նյարդերը, արյունը։ Հազիվ պատշգամբում սիգար ծխելիս, ծխի ետև հաջողվեց նրան մի վայրկյան ծածկվել այդ անմոունչ համառ հայացքից։

— Սա ի՞նչ բան է,— ասում էր նա, բոլոր կողմերը նայելով։— Չէ որ սա տանջա՜նք է։ Ես նրա ծաղրի առարկա՞ եմ, ինչ է։ Ուրիշ ոչ ոքի վրա այդպես չի նայում, չի համարձակվում։ Ես ավելի հեզ եմ, ահա նա էլ... Ես կխոսեմ նրա հետ,— վճռեց Օբլոմովը,— և ավելի լավ է՝ ինքս բառերով

ասեմ այն, ինչ նա իր աչքերով ձիգ է տալիս, հանում իմ հոգու խորքից։

Հանկարծ Օլգան կանգնեց նրա առջև պատշգամբի շեմքին. Օբլոմովը աթոռ առաջարկեց, և Օլգան նստեց նրա կողքին։

— Ճի՞շտ է, որ դուք շատ եք ձանձրանում,— հարցրեց Օլգան։

— Ճիշտ է,— պատասխանեց նա,— բայց միայն ոչ շատ... ես զբաղմունք ունեմ։

— Անդրեյ Իվանովիչն ասում էր, թե դուք ինչ-որ պլա՞ն եք գրում։

— Այո՛, ես ուզում եմ գյուղ գնալ ապրելու, դրա համար էլ քիչ-քիչ նախապատրաստվում եմ։

— Իսկ արտասահման կգնա՞ք։

— Այո՛, անպայման, ա՛յ, հենց որ Անդրեյ Իվանիչը պատրաստ լինի։

— Դուք սիրո՞վ եք գնում,— հարցրեց Օլգան։

— Այո՛, ես շատ սիրով...

Օբլոմովը նայեց. ժպիտը հենց այնպես սահում էր նրա դեմքով, մերթ լուսավորում էր աչքերը, մերթ այտերով մեկ տարածվում, միայն շուրթերն են սեղմված, ինչպես միշտ։ Նա քաջություն չունեցավ հանգիստ կերպով ստելու։

— Ես մի քիչ... ծույլ եմ...— ասաց նա,— բայց...

Նա միևնույն ժամանակ սրտնեղություն զգաց, որ Օլգան այնպես հեշտությամբ, գրեթե լռությամբ, իրենից խոստովանություն դուրս կորզեց ծուլության մասին։ «Նա իմ ի՞նչն է, որ։ Վախենո՞ւմ եմ նրանից, ինչ է», մտածում էր Օբլոմովը։

— Ծո՛ւյլ եք,— վրա բերեց նա հազիվ նկատելի խորամանկությամբ։— Մի՞թե կարող է այդպիսի բան լինել։ Տղամարդը ծույլ. ես դա չեմ հասկանում։

«Ի՞նչ կա այստեղ չհասկանալու,— մտածեց Օբլոմովը,— կարծեմ, պարզ է»։

— Ես ավելի շատ տանն եմ նստում, այդ պատճառով էլ Անդրեյը կարծում է, թե ես...

— Բայց դուք, երևի, շատ եք գրում,— ասաց նա,— կարդում եք։ Դուք կարդացե՞լ եք...

Օլգան նայում էր նրան այնպես սևեռակի։

— Ո՛չ, չեմ կարդացել,— Հանկարծ վախից դուրս թռավ նրա բերանից, որպեսզի Օլգան մտքով չանցկացնի նրան քննել։

— Ի՞նչը,— ծիծաղելով հարցրեց Օլգան։

Օբլոմովն էլ ծիծաղեց։

— Ես կարծում էի, թե դուք ուզում եք ինձ որևէ վեպի մասին հարցնել. ես վեպեր չեմ կարդում։

— Զգուշակեցիք. ես ուզում էի հարցնել ճանապարհորդությունների մասին...

Օբլոմովն ուշիմ նայեց նրան. նրա ամբողջ դեմքը ծիծաղում էր, բայց շուրթերը՝ ոչ...

«Օ՜։ Սա... սրա հետ պետք է զգույշ լինել...»— մտածում էր Օբլոմովը։

— Հապա ի՞նչ եք կարդում դուք,— հետաքրքրությամբ հարցրեց Օլգան։

— Ճիշտ է, ես ավելի շատ սիրում եմ ճանապարհորդությունները...

— Դեպի Աֆրիկա՞,— նենգորեն ու մեղմ հարցրեց Օլգան։ Օբլոմովը կարմրեց, ոչ առանց հիմքի կռահելով, որ Օլգային հայտնի էր ո՛չ միայն այն, ինչ նա կարդում է, այլև այն, թե ինչպես է կարդում։

— Դուք երաժի՞շտ եք,— հարցրեց Օլգան, նրան շփոթմունքից հանելու համար։

Այդ ժամանակ մոտեցավ Շտոլցը։

— Իլյա՛։ Ա՛յ, ես Օլգա Սերգեևնային ասել եմ, որ դու սաստիկ սիրում ես երաժշտություն, խնդրել եմ մի բան երգել... Casta diva.

— Ինչո՞ւ ես իմ մասին բաներ հնարում,— պատասխանեց Օբլոմովը։— Ես բոլորովին էլ սաստիկ չեմ սիրում երաժշտություն...

— Ի՞նչ մարդ է,— ընդհատեց Շտոլցը։— Կարծես թե վիրավորվե՞ց։ Ես հանձնարարում եմ նրան որպես կարգին մարդու, իսկ նա շտապում է հիասթափեցնե՞լ։

— Ես միայն խույս եմ տալիս սիրողի դերից. դա կասկածելի և միաժամանակ դժվա՞ր դեր է։

— Իսկ ինչպիսի՞ երաժշտությունն է ձեզ ավելի դուր գալիս,— հարցրեց Օլգան։

— Դժվա՞ր է այդ հարցին պատասխանել։ Ամե՞ն երաժշտություն։ Երբեմն ես հաճույքով լսում եմ խոպոտ շարմանկան, որևէ մի եղանակ, որ մտքումս է մնացել. մի այլ անգամ հեռանում եմ օպերայի կեսից. մերթ Մեյերբերն է շարժում սիրտս, մինչև անգամ բարկայի վրա երգվող երգը. նայած տրամադրությա՞նս։ Երբեմն ականջներդ փակում ես Մոցարտ լսելիս...

— Նշանակում է, դուք իսկապես սիրում եք երաժշտություն։

— Դե, մի բան երգեցեք, Օլգա Սերգեևնա,— խնդրեց Շտոլցը։

— Իսկ եթե մսյո Օբլոմովն այժմ այնպիսի տրամադրություն ունի, որ ականջները փակի՞,— ասաց Օլգան, դառնալով Օբլոմովին։

— Այստեղ հարկավոր է որևէ հաճոյախոսություն ասել,— պատասխանեց Օբլոմովը։— Ես չգիտեմ, եթե իմանայի էլ, սիրտ չէի անի...

— Իսկ ինչու՞։

— Իսկ եթե դուք վա՞տ եք երգում,— միամտորեն նկատեց Օբլոմովը։— Հետո ես ինձ այնպես անհարմար կզգայի...

— Ինչպես երեկ պաքսիմատների պատճառով...— հանկարծ դուրս թռավ Օլգայի բերանից և նա ինքն էլ կարմրեց. աստված գիտի, թե ինչ կտար՝ այդ բանը չասելու համար,— Ներեցե՛ք— մեղավո՞ր եմ...— ասաց նա։

Օբլոմովը բոլորովին չէր սպասում և իրեն կորցրեց։

— Դա նենգ դավաճանությո՞ւն է,— ասաց նա կիսաձայն։

— Ո՛չ, գուցե մի փոքրիկ վրիժառություն, և այն էլ, աստված վկա, առանց դիտավորության, այն բանի համար, որ ձեզ մոտ նույնիսկ հաճոյախոսություն էլ չգտնվեց ինձ համար։

— Գուցե գտնեմ, երբ որ լսեմ։

— Իսկ դուք ուզո՞ւմ եք, որ ես երգեմ,— հարցրեց Օլգան։

— Ո՛չ, այդ նա է ուզում,— պատասխանեց Օբլոմովը՝ մատնանշելով Շտոլցին։

— Իսկ դո՞ւք։

Օբլոմովը բացասաբար շարժեց գլուխը։

— Ես չեմ կարող ցանկանալ, ինչ որ չգիտեմ։

— Դու կոպիտի մեկն ես, Իլյա՛,— նկատեց Շտոլցը։— Ահա թե ինչ է նշանակում տանը վեր ընկած մնալ և գուլպաները հագնել...

— Ի սեր աստծու, Անդրեյ,— աշխուժով ընդհատեց Օբլոմովը՝ թույլ չտալով նրան վերջացնել ասելիքը,— ինձ համար ոչինչ չարժե ասել. «ա՜խ, ես շատ ուրախ կլինեմ, երջանիկ, դուք, իհարկե, հիանալի եք երգում...», շարունակում էր նա, դառնալով Օլգային, «դա ինձ կպատճառի» և այլն։ Բայց մի՞թե հարկավոր է։

— Բայց դուք կարող էիք, գոնե, ցանկանալ, որ ես երգեմ... թեկուզ հետաքրքրությունից։

— Չեմ համաձայնվում,— պատասխանեց Օբլոմովը,— դուք դերասանուհի չեք...

— Լավ, ես ձե՛զ համար կերգեմ,— ասաց նա Շտոլցին։

— Իլյա՛, պատրաստի՛ր հաճոյախոսությունը։

Մինչ այս մինչ այն վրա հասավ երեկոն։ Վառեցին լամպը. որը լուսնի նման լույս էր արձակում բաղեղապատ վանդակապատում։ Աղջամուղջը ծածկեց Օլգայի դեմքի ու մարմնի գծագրությունը և նրա վրա, կարծես, կրեպե ծածկոց գցեց. դեմքը սուվերի մեջ էր. լսվում էր միմիայն փափուկ, բայց ուժեղ ձայնը, զգացմունքի նյարդային դողով։

Օլգան, Շտոլցի ցուցումով, շատ արիաներ ու ռոմանսներ երգեց. դրանից մի քանիսի մեջ արտահայտվում էր տանջանք, երջանկության աղոտ կանխազգացությամբ, մյուսների մեջ ուրախություն, բայց այդ հնչյունների մեջ թաքնված էր արդեն տրտմության սաղմը։

Այդ խոսքերից, հնչյուններից, այդ հստակ, ուժեղ կանացի ձայնից մարդու սիրտ էր բաբախում, դողում էին նյարդերը, կայծկլտում էին աչքերն ու արտասուքով լցվում։ Միևնույն պահին մարդ ուզում էր մեռնել, չսթափվել այդ հնչյուններից, և իսկույն ևեթ սիրտը նորից կյանք էր տենչում...

Օբլոմովը բորբոքվում էր, ուժասպառվում, դժվարությամբ էր պահում արտասուքները և է՛լ ավելի դժվար էր նրա համար խեղդել հրճվանքի ճիչը, որ պատրաստ էր դուրս թռչելու նրա հոգուց։ Վաղուց էր, որ նա այդպիսի կայտառություն, այդպիսի ուժ չէր զգացել, որը, կարծես թե, բարձրա-

նում էր հոգու խորքից՝ պատրաստ սխրագործության համար։

Նա այդ րոպեին նույնիսկ արտասահման կգնար, եթե նստել ու գնալը միայն մնացած լիներ իրեն։

Իբրև եզրափակում, Օլգան երգեց Casta diva-ն. բոլոր բերկրանքները, կայծակի նման գլխով անցնող մտքերը, դողը, որ ասեղների նման ծակծկում էր ամբողջ մարմինը, այս ամենը ոչնչացրեց Օբլոմովին. նա ուժասպառ եղավ։

— Դուք գո՞հ եք ինձնից այսօր,— հանկարծ հարցրեց Օլգան Շտոլցին, դադարելով երգել.

— Հարցրեք Օբլոմովին, ի՞նչ կասի նա,— ասաց Շտոլցը։

— Ա՜խ,— դուրս թռավ Օբլոմովի բերանից։

Նա հանկարծ այն է՝ ուզում էր բռնել Օլգայի ձեռքը, բայց իսկույնևեթ թողեց և սաստիկ շփոթվեց։

— Ներեցեք...— փնթփնթաց նա։

— Լսո՞ւմ եք,— ասաց Օլգային Շտոլցը,— խղճով ասա, Իլյա՛, որքա՞ն ժամանակ է, որ քեզ հետ այդպիսի բան չէր պատահել։

— Դա կարող էր պատահել այսօր առավոտ, եթե պատուհանների տակից անցներ խոպոտ շարմանկան...— միջամտեց Օլգան այնպիսի բարեսրտությամբ, այնպես մեղմ, որ հանեց սարկազմի խայթը։

Օբլոմովը կշտամբանքով նայեց Օլգային։

— Նրա լուսամուտները մինչև այժմ էլ բացված չեն. չի լսվի, թե ինչ է կատարվում դրսում,— ավելացրեց Շտոլցը։

Օբլոմովը կշտամբանքով նայեց Շտոլցին։

Շտոլցը վերցրեց Օլգայի ձեռքը։

— Չգիտեմ, ինչին վերագրել, որ դուք այսօր այնպես երգեցիք, ինչպես երբեք չեք երգել, Օլգա Սերգեևնա, գոնե ես վաղուց չեմ լսել։ Ահա՛ իմ հաճոյախոսությունը,— ասաց նա՝ համբուրելով նրա յուրաքանչյուր մատը։

Շտոլցը գնաց։ Օբլոմովն էլ էր ուզում գնալ, բայց Շտոլցն ու Օլգան նրան չթողեցին։

— Ես գործ ունեմ,— նկատեց Շտոլցը,— իսկ դու գնալու ես քնես... դեռ վաղ է...

— Անդրե՛յ, Անդրե՛յ,— աղերսական ձայնով ասաց Օբլոմովը։— Ո՛չ, ես այսօր մնալ չեմ կարող, ես գնո՞ւմ եմ,— ավելացրեց նա և գնաց։

Նա ամբողջ գիշեր չքնեց. տխուր, մտախոհ անցուդարձ էր անում սենյակում. արշալույսին տնից դուրս եկավ, ման եկավ Նևայի մոտերքը, փողոցներում, աստված գիտե ինչ զգալով, ինչի մասին մտածելով...

Երեք օր անց նա նորից այնտեղ էր և երեկոյան, երբ մյուս հյուրերը նստեցին թուղթ խաղալու, նրանք երկուսով, Օլգայի հետ, դաշնամուրի մոտ էին կանգնած։ Մորաքրոջ գլխի ցավը բռնել էր. նա նստած էր առանձնասենյակում և սպիրտ էր հոտոտում։

— Ուզո՞ւմ եք, ես ձեզ ցույց տամ նկարների այն հավաքածուն, որ Անդրեյ Իվանիչը բերել է ինձ համար Օդեսայից,— հարցրեց Օլգան։— Նա ձեզ ցույց չի՞ տվել։

— Դուք, կարծեմ, աշխատում եք, որպես պատշաճ է տանտիրուհուն, ինձ զբաղեցնե՞լ,— հարցրեց Օբլոմովը։— Իզո՞ւր։

— Ինչո՞ւ իզուր։ Ես ուզում եմ, որ ձեզ համար ձանձրալի չլինի, որ դուք այստեղ ձեզ այնպես զգաք, ինչպես ձեր տանը, որ ձեզ հարմար լինի, ազատ, թեթև և որ դուք չգնաք... պառկելու։

«Սա մի չա՜ր, ծաղրասե՛ր էակ է», մտմտաց Օբլոմովը, հակառակ իր կամքի հրճվելով նրա յուրաքանչյուր շարժումով։

— Դուք ուզում եք, որ ես ինձ թեթև, ազատ զգամ և ինձ համար ձանձրալի չլինի՞,— կրկնեց նա։

— Այո՛,—պատասխանեց Օլգան, նայելով նրան երեկվա նման, բայց հետաքրքրության ու բարեսրտության էլ ավելի մեծ արտահայտությամբ։

— Դրա համար, նախ, ինձ վրա մի՛ նայեք այնպես, ինչպես այժմ և ինչպես նայում էիք մի քանի օր առաջ...

Հետաքրքրությունը կրկնապատկվեց նրա աչքերում։

— Ա՛յ հենց այդ հայացքից ես ինձ շատ անհարմար եմ զգում... Ո՞ւր է իմ գլխարկը։

— Ինչո՞ւ եք անհարմար զգում,— մեղմորեն հարցրեց Օլգան և նրա հայացքը կորցրեց հետաքրքրության արտա-

հայտությունը։ Այդ հայացքը միայն բարի ու սիրալիր դարձավ։

— Չգիտեմ. միայն ինձ թվում է, թե դուք այդ հայացքով ինձնից դուրս եք քաշում այն ամենը, ինչ ես չեմ ուզում, որ ուրիշներն իմանային, առանձնապես դուք...

— Ինչո՞ւ։ Դուք Անդրեյ Իվանիչի բարեկամն եք, իսկ նա իմ բարեկամն է, հետևաբար...

— Հետևաբար, պատճառ չկա, որ դուք իմանաք իմ մասին այն ամենը, ինչ որ գիտե Անդրեյ Իվանիչը,— վերջացրեց նա։

— Պատճառ չկա, այլ հնարավորություն կա...

— Շնորհիվ իմ բարեկամի բացսրտության, նրա կողմից վա՞տ ծառայություն է այդ...

— Մի՞թե դուք գաղտնիքներ ունեք,— հարցրեց Օլգան։— Գուցե՝ ոճրագործություններ՞,— ավելացրեց նա՝ ծիծաղելով ու նրանից հեռու քաշվելով։

— Գուցե,— հառաչելով ասաց նա։

— Այո՛, ծանրակշիռ ոճրագործություն է,— ասաց նա վեհերոտ և մեղմիկ,— տարբեր գուլպաներ հագնելը։

Օբլոմովն արագ վերցրեց գլխարկը։

— Էլ ուժ չկա՛,— ասաց նա։— Եվ դուք ուզում եք, որ ես ինձ հարմար զգամ։ Ես կդադարեմ Անդրեյին սիրելուց... Նա ա՞յդ էլ է ասել ձեզ։

— Այսօր նա դրանով սաստիկ ծիծաղեցրեց ինձ,— ավելացրեց Օլգան,— նա շարունակ ծիծաղեցնում է։ Ներեցեք, էլ չեմ ասի, էլ չեմ անի, և կաշխատեմ ձեզ վրա ուրիշ տեսակ նայել...

Օլգան նենգավոր-լուրջ կերպարանք ընդունեց։

— Այդ բոլորը դեռ, նախևառաջ,— շարունակեց նա,— լա՛վ, ես երեկվա նման չեմ նայում, հետևաբար, դուք այժմ ձեզ ազատ, թեթև եք զգում։ Հետևում է, երկրորդ, ի՞նչ է հարկավոր անել, որպեսզի դուք չձանձրանաք։

Օբլոմովը նայում էր ուղղակի նրա գորշ կապտագույն, սիրալիր աչքերի մեջ։

— Ա՛յ, հիմա դուք ինքներդ եք ինձ մի տեսակ օտարոտի նայում...— ասաց Օլգան։

Նա իսկապես նայում էր Օլգային, կարծես, ո՛չ թե աչքերով, այլ մտքով, իր ամբողջ կամքով, մագնիսացնողի նման, բայց նայում էր ակամա, ուժ չունենալով, որ չնայի։

«Տե՛ր աստված, որքա՞ն լավիկն է նա։ Հո լինո՞ւմ են այդպիսիներն աշխարհում», մտածում էր նա, համարյա վախեցած աչքերով նայելով նրան։ «Այդ ճերմակությո՞ւնը, այդ աչքե՞րը, որտեղ, ինչպես հորձանուտի մեջ, մութ է և միաժամանակ փայլում է ինչ-որ մի բան, երևի՝ հոգին է։ Ժպիտը կարելի է կարդալ, ինչպես գիրք. ժպիտի ետև այդ ատամները և ամբողջ գլուխը... որքան քնքշորեն է հանգչում այն ուսերի վրա, կարծես երերվում է՝ ծաղկի նման, բուրմունք է արձակում»...

«Այո՛, ես ինչ-որ մի բան եմ դուրս քաշում նրանից», մտածում էր Օբլոմովը, «ինչ-որ մի բան նրանից անցնում է իմ մեջ։ Սրտիս մոտ, ահա այստեղ, կարծես սկսում է եռալ ու բաբախել... Այստեղ ես զգում եմ ինչ-որ մի ավելորդ բան, ինչ որ, ինձ թվում է, առաջ չկար... Աստվա՛ծ իմ, ի՞նչ երջանկություն է նրան նայելը։ Մինչև անգամ ծանր է շունչ քաշելը»։

Նրա գլխում մրրիկի նման սլանում էին այս մտքերը, և նա շարունակ նայում է Օլգային այնպես, ինչպես նայում են անսահման հեռուն, անհատակ անդունդը՝ ինքնամոռացությամբ, զրգանքով։

— Դե բավական է, մսյո Օբլոմով, հիմա ինչպե՞ս եք նայում ինձ,— ասում էր նա՝ ամոթխածությամբ գլուխը շուռ տալով, բայց հետաքրքրությունը հաղթանակում էր, և Օլգան աչքը չէր հեռացնում նրա դեմքից։

Օբլոմովը ոչինչ չէր լսում։

Նա իրոք շարունակ նայում էր և չէր լսում Օլգայի խոսքերը, և լուռ ստուգում էր, թե ինչ է կատարվում իր մեջ. շոշափեց գլուխը— այնտեղ էլ է մի բան հուզվում, արագությամբ սլանում։ Նա չի կարողանում բռնել մտքերից ոչ մեկը. թռչունների երամի նման սավառնեցին նրանք, իսկ սրտի մոտ, ձախ կողքում, նա կարծես ցավ է զգում։

— Դե ինձ այդպես տարօրինակ մի՛ նայեք,— ասաց նա,— ես էլ անհարմար եմ զգում ինձ... դուք էլ, անշուշտ, ուզում եք իմ հոգուց ինչ-որ մի բան դուրս քաշել...

— Ես ի՞նչ կարող եմ դուրս քաշել ձեզնից,— մեքենայորեն հարցրեց Օբլոմովը։

— Ես էլ սկսած ու չվերջացրած պլաններ ունեմ,— պատասխանեց Օլգան։

Նա ուշքի եկավ իր չավարտած պլանի մասին արած նրա ակնարկից։

— Տարօրինակ բան է,— նկատեց Օբլոմովը։— Դուք շարեք, իսկ ձեր հայացքը բարի է։ Իզուր չեն ասում, թե կանանց չի կարելի հավատալ. նրանք ստում են և՛ դիտավորությամբ՝ լեզվով, և՛ առանց դիտավորության՝ հայացքով, ժպիտով, կարմրելով, մինչև իսկ ուշագնացություններով։

Օլգան թույլ չտվեց, որ տպավորությունն ուժեղանա, հանդարտորեն վերցրեց նրանից գլխարկը և ինքն էլ նստեց աթոռին։

— Էլ չեմ անի, էլ չեմ անի,— աշխուժով կրկնում էր Օլգան։ — Ա՜խ, ներեցե՛ք, անտանելի լեզու է։ Բայց, աստված վկա, սա ծաղր չէ՛,— գրեթե երգեց նա և այդ ֆրազը երգելու մեջ զգացմունքը դողաց։

Օբլոմովը հանգստացավ։

— Այդ Անդրե՛յը...— կշտամբանքով արտասանեց նա։

— Դե՛, երկրորդ, ասացեք, ի՞նչ անենք, որպեսզի դուք չձանձրանաք,— հարցրեց Օլգան։

— Երգե՛ք,— ասաց Օբլոմովը։

— Ահա այն, հաճոյախոսությունը, որ ես սպասո՛ւմ էի,— ուրախությունից բռնկվելով ընդհատեց նա։— Գիտե՛ք ինչ,— աշխուժով շարունակեց հետո, —եթե դուք երկու օր առաջ իմ երգելուց հետո այդ «ախը» չասեիք, ես երևի, գիշերը չքնեի, գուցե, լաց լինեի։

— Ինչո՞ւ,— զարմանքով հարցրեց Օբլոմովը։

Օլգան մտածմունքի մեջ ընկավ։

— Ինքս էլ չգիտեմ,— ասաց նա հետո։

— Դուք ինքնասեր եք, դրանից է։

— Այո՛, իհարկե, դրանից է,— ասում էր Օլգան՝ մտքերի մեջ ընկնելով և մի ձեռքով շոշափելով ստեղները,— բայց չէ՞ որ ինքնասիրություն ամեն տեղ կա, և շատ։ Անդրեյ Իվանիչն ասում է՝ դա գրեթե միակ շարժիչն է, որ կառավարում

Ձ կամքը։ Ա՜յ, դուք, երևի, չունեք այն, այդ պատճառով էլ շարունակ...

Նա իր ասելիքը չվերջացրեց։

— Ի՞նչ,— հարցրեց Օբլոմովը։

— Ո՜չ, հենց այնպես, ոչինչ,— կոծկեց Օլգան։— Ես սիրում եմ Անդրեյ Իվանիչին,— շարունակեց նա,— ո՜չ միայն այն բանի համար, որ նա ծիծաղեցնում է ինձ, երբեմն նա խոսում է— ես լաց եմ լինում, և ոչ էլ այն բանի համար, որ նա սիրում է ինձ, այլ, կարծեմ, այն բանի համար... որ նա ինձ ավելի է սիրում, քան ուրիշներին. տեսնո՞ւմ եք ուր է սողոսկել ինքնասիրությունը։

— Դուք սիրո՞ւմ եք Անդրեյին,— հարցրեց նրան Օբլոմովը և լարված, փորձող հայացքը խորասուզեց նրա աչքերի մեջ։

— Այո՛, իհարկե, եթե նա ինձ ավելի է սիրում, քան ուրիշներին, ես նրան առավել ևս,— պատասխանում էր Օլգան լրջորեն։

Օբլոմովը լուռ նայում էր նրան. Օլգան պատասխանեց նրան պարզ, անմոռնչ հայացքով։

— Նա սիրում է Աննա Վասիլևնային էլ, Զինաիդա Միխայլովնային էլ, բայց այդ բոլորն այն չէ,— շարունակում էր նա,— Անդրեյ Իվանիչը նրանց հետ երկու ժամ չի նստի, նրանց չի ծիծաղեցնի և ի սրտե ոչ մի բան չի պատմի. նա խոսում է գործերի մասին, թատրոնի մասին, նորությունների մասին, իսկ ինձ հետ խոսում է ինչպես քրոջ... ո՜չ, ինչպես իր դստեր հետ,— շտապով ավելացրեց նա,— երբեմն մինչև իսկ նախատում է, եթե ես որևէ բան հանկարծ չեմ հասկանում կամ չեմ լսում նրան, չեմ համաձայնում նրա հետ։ Իսկ նրանց չի նախատում, և ես, կարծեմ, այդ բանի համար նրան է՛լ ավելի եմ սիրում։ Ինքնասիրությո՞ւն,— ավելացրեց նա մտախոհ։— Բայց ես չգիտեմ, թե այն ինչպե՞ս ընկավ այստեղ, իմ երգի մեջ։ Այդ երգի մասին ինձ վաղուց շատ լավ բաներ են ասում, իսկ դուք մինչև իսկ չկամեցաք լսել ինձ, ձեզ գրեթե զոռով հարկադրեցին լսել։ Եվ եթե դուք դրանից հետո հեռանայիք, առանց ինձ մի խոսք ասելու, եթե ձեր դեմքի վրա ես ոչինչ չնկատեի... ես, երևի, հիվանդանայի... այո՛, իսկապես որ դա ինքնասիրությո՛ւն է,— վճռաբար եզրափակեց Օլգան։

— Իսկ դուք մի՞թե որևէ բան նկատեցիք իմ դեմքի վրա,— հարցրեց նա։

— Արցունքներ, թեև դուք ծածկում էիք այն. դա տղամարդկանց վատ գիծն է— ամաչել իրենց սրտից։ Այդ էլ է ինքնասիրություն, միայն թե կեղծ ինքնասիրություն է։ Ավելի լավ կլիներ՝ նրանք երբեմն ամաչեին իրենց խելքից. այն հաճախ սխալվում է։ Նույնիսկ Անդրեյ Իվանիչն էլ ամաչկոտ է սրտի կողմից։ Ես դա ասել եմ նրան և նա համաձայնեց ինձ հետ։ Իսկ դո՞ւք։

— Ինչի՞ չես համաձայնի, նայելով ձեզ,— ասաց Օբլոմովը։

— Դարձյա՛լ հաճոյախոսություն։ Այն էլ ինչպիսի՞։

Օլգան դժվարացավ խոսք գտնել։

— Գոեհի՛կ,— վերջացրեց Օբլոմովը՝ առանց աչքերը նրանից հեռացնելու։

Օլգան ժպիտով հաստատեց խոսքի նշանակությունը։

— Այ ես հենց դրանից էի վախենում, երբ չէի ուզում խնդրել ձեզ, որ երգեք... Ի՞նչ կարող ես ասել՝ առաջին անգամ լսելով։ Իսկ ասել պետք է։ Դժվար է խելոք ու անկեղծ լինել միաժամանակ, հատկապես զգացմունքի մեջ, այնպիսի տպավորության ազդեցության տակ, ինչպես այն ժամանակ...

— Իսկ ես այն ժամանակ իրոք այնպես երգեցի, ինչպես վաղուց չեմ երգել, մինչև անգամ, կարծեմ, երբեք չեմ երգել... Մի՛ խնդրեք ինձ երգել, ես այլևս այնպես չեմ երգի... Սպասե՛ք, մի բան էլ կերգեմ...— ասաց նա, և նույն րոպեին նրա դեմքը կարծես բռնկվեց, աչքերը վառվեցին, նա նայեց աթոռին, ուժգին երկու-երեք ակորդ վերցրեց և սկսեց երգել։

Աստվա՛ծ իմ, ի՞նչ էր լսվում այդ երգի մեջ։ Հույսեր, փոթորիկների աղոտ վախ, փոթորիկներ, երջանկության խոյանքներ— այս ամենը հնչում էր ո՛չ թե երգի, այլ նրա ձայնի մեջ։

Նա երգեց երկար, ժամանակ առ ժամանակ նայելով նրան, երեխայի նման հարցնելով.

— Բավակա՞ն է։ Ոչ, ա՛յ, սա էլ,— և նորից երգում էր։

Նրա այտերն ու ականջները շառագունել էին հուզմունքից. երբեմն նրա թարմ դեմքի վրա փայլատակում էր սրտային կայծակների խաղը, բռնկում էր այնպիսի հասուն կրքի ճառագայթ, կարծես թե նա սրտով վերապրում էր կյանքի հեռավոր ապագան և հանկարծ նորից մարում՝ այդ վայրկենական ճառագայթը, ձայնը նորից հնչում էր թարմ ու արծաթանման։

Եվ Օբլոմովի մեջ էլ նույնպիսի կյանք էր խաղում. նրան թվում էր, թե ապրում ու զգում է այդ ամենը— ո՛չ թե մի ժամ, երկու ժամ, այլ ամբողջ տարիներ...

Նրանք երկուսն էլ, արտաքուստ անշարժ, կտոր-կտոր էին լինում ներքին կրակից, դողում էին միևնույն սարսուռով. աչքերում միանման տրամադրության առաջացրած արցունքներն էին։ Դրանք բոլորն այն կրքերի հայտանիշներն էին, որոնք պետք է, ըստ երևույթին, մի ժամանակ իրենց խաղն սկսեին Օլգայի երիտասարդ հոգու մեջ, որն այժմ ենթակա էր կյանքի քնած ուժերի միմիայն ժամանակավոր, թռուցիկ ակնարկներին ու բռնկումներին։

Օլգան վերջացրեց մի երկարատև հնչեղ ակորդով, և նրա ձայնը կորավ այդ ակորդի մեջ։ Նա հանկարծ կանգ առավ, ձեռքերը դրեց ծնկներին և, սրտաշարժված, հուզված՝ նայեց Օբլոմովին, թե նա ի՞նչ է անում։

Օբլոմովի դեմքին փայլում էր արթնացած, հոգու խորքից բարձրացած երջանկության արշալույսը. արտասուքներով լի հայացքն ուղղված էր Օլգային։

Այստեղ արդեն Օլգան, ինչպես Օբլոմովը, նույնպես ակամա բռնեց նրա ձեռքը։

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց նա։— Ի՞նչ է դարձել ձեր դեմքը։ Ինչի՞ց է այդ։

Բայց նա գիտեր, թե ինչից է Օբլոմովի դեմքն այդպես, և ներքուստ համեստորեն հաղթանակում էր, հրճվելով իր ուժի այդ արտահայտությամբ։

— Հայելուն նայեք,— շարունակում էր նա՝ ժպիտով ցույց տալով հայելում նրա իսկ դեմքը։— Ձեր աչքերը փայլում են, աստվա՛ծ իմ, նրանք լի՛ են արցունքով։ Որքա՞ն խորն եք զգում դուք երաժշտությունը...

— Ո՛չ, ես զգում եմ... ո՛չ թե երաժշտությունը... այլ... սե՞ր,— ասաց Օբլոմովը մեղմիկ։

Օլգան վայրկենապես բաց թողեց նրա ձեռքը և դեմքը փոխվեց։ Նրա հայացքը հանդիպեց Օբլոմովի՝ իրեն. սևեռած հայացքին. այդ հայացքն անշարժ էր, գրեթե խելագար. նրա միջից նայում էր ո՛չ թե Օբլոմովը, այլ կիրքը։

Օլգան հասկացավ, որ այդ բառը ակամա դուրս թռավ նրա բերանից, որ նա ուժ չունի դրա նկատմամբ և որ դա ճշմարտություն է։

Օբլոմովն սթափվեց, վերցրեց գլխարկը և, առանց ետ նայելու, դուրս վազեց սենյակից։ Օլգան արդեն չէր ուղեկցում նրան հետաքրքրվող հայացքով. նա երկար, առանց շարժվելու, կանգնած էր դաշնամուրի մոտ, որպես մի արձան, և համառորեն ցած էր նայում. միմիայն ուժգին բարձրանում ու իջնում էր նրա կուրծքը...

VI

Ցույլ դիրքերում ծուլորեն պառկելու մեջ, բութ նիրհի և ոգեշնչված խոյանքների մեջ Օբլոմովին առաջին պլանում միշտ պատկերանում էր կինն իբրև ամուսին և երբեմն՝ իբրև սիրուհի։

Երազանքներում նրա առջև անցնում էր բարձրահասակ, բարեկազմ կնոջ պատկերը, ձեռքերը հանգիստ կերպով կրծքին ծալած, անդորր, բայց հպարտ հայացքով, անփույթ կերպով նստած զբոսապարտեզում բաղեղների մեջ, թեթև քայլելիս գորգի վրա, ծառուղու ավազի վրա, տարուբերվող իրանով, գլուխը նազելի կերպով ուսերին դրած, մտախոհ արտահայտությամբ՝ որպես մի իդեալ, որպես գրգանքով ու հանդիսավոր անդորրությամբ լցված ամբողջ կյանքի մարմնացում, որպես անդորրությունն ինքը։

Նա կնոջը երազում էր սկզբում անմիջապես ծաղիկների մեջ, բեմի առջև, երկար ծածկոցով, հետո ամուսնական անկողնի գլխավերևում, աչքերն ամոթխածորեն ցած գցած, վերջապես, մայր, մի խումբ երեխաների մեջ։

Նրան պատկերանում էր կնոջ շուրթերին իջած ժպիտը՝ ոչ կրքոտ, աչքերը ոչ թաց ցանկություններից, այլ մի ժպիտ,

որ համակրական է դեպի ամուսինը, և զիջող դեպի բոլոր մյուսները. մի հայացք, որ բարեհաճ է միմիայն դեպի նա և ամոթխած, նույնիսկ խիստ՝ դեպի մյուսները։

Նա երբեք չէր ուզում դող տեսնել նրա մեջ, լսել ջերմ երազանքներ, անակնկալ արցունքներ, տանջանք, ուժասպառում և հետո կատաղի անցումն դեպի ուրախությունը։ Պետք չեն ո՛չ լուսինը և ոչ էլ տրտմությունը։ Նա չպետք է հանկարծակի գունատվի, ուշաթափվի, ցնցող բռնկումներ զգա...

— Այդպիսի կանայք սիրեկաններ են ունենում,— ասում էր նա,— գլխացավանքն էլ շատ է. բժիշկներ, ջրեր և անհամար այլ տարօրինակություններ։ Հանգիստ քնել էլ չի՞ կարելի։

Իսկ հպարտ-ամոթխած, հանգիստ ընկերուհու կողքին մարդ անհոգ է քնում։ Նա քնում է այն վստահությամբ, որ արթնանալով՝ կհանդիպի նույն հեզ, համակրական հայացքին։ Եվ քսան, երեսուն տարի հետո էլ նա իր ջերմ հայացքին որպես պատասխան նրա աչքերում կհանդիպեր համակրության նույն հեզ, խաղաղ առկայծող ճառագայթին։ Եվ այդպես մինչև գերեզմա՞ն։

«Եվ մի՞թե ամեն տղամարդու և կնոջ գաղտնի նպատակը չէ իր ընկերոջ մեջ գտնել անդորրության անփոփոխ կերպարանքը, զգացմունքի հավիտենական և միապաղաղ հոսուրանքը։ Չէ՞ որ սա է սիրո նորման, և հենց որ մի բան շեղվում է նրանից, փոխվում, սառչում,— մենք տանջվում ենք։ Ուրեմն, իմ իդեալը ընդհանո՞ւր իդեալ է», մտածում էր նա։ «Այդ չէ՞ արդյոք երկու սեռերի փոխադարձ հարաբերությունների մշակվածության, պարզաբանման պսակը»։

Կրքին օրինական ելք տալ, մատնանշել ընթացքի կարգը, ինչպես գետի վերաբերյալ՝ ամբողջ երկրամասի բարօրության համար,— սա համամարդկային խնդիր է, սա առաջադիմության գագաթնակետն է, որի վրա են բարձրանում այդ բոլոր ժորժ զանդները, բայց մի կողմ են շեղվում։ Խնդիրը լուծելուց հետո արդեն չկա ո՛չ դավաճանություն, ո՛չ սառչել, այլ անդորր-երջանիկ սրտի հավիտենապես հավասար բաբախում, հետևապես, միշտ լիքը կյանք, կյանքի հավիտենական հյութ, հավիտենական բարոյական առողջություն։

Այդպիսի բարիքի օրինակներ կան, բայց նրանք հազվա-

դեպ եկ. նրանց վրա մատնանշում են իբրև բացառիկ երևույթների։ Ասում են՝ պետք է դրա համար ծնված լինել։ Բայց ասված գիտե, թե պետք չէ՞ արդյոք կրթվել, գիտակցորեն ընթանալ դեպի այդ։

Կի՞րքը։ Այդ ամենը լավ է ոտանավորների մեջ, մեկ էլ թեմի վրա, որտեղ թիկնոցներն ուսերին, դանակները ձեռքներին ման են գալիս դերասանները, իսկ հետո՝ թե՛ սպանվածները և թե՛ սպանողները գնում են միասին ընթրելու...

Լավ կլիներ, եթե կրքերն էլ այդպես վերջանային, թե չէ՝ նրանից հետո մնում է ծուխ, գարշահոտություն, իսկ երջանկություն չկա՞։ Հիշողությունները— միմիայն ամոթ է ու մազերի պռճոկում։

Վերջապես, եթե պատահում է այդպիսի դժբախտություն՝ կիրք, ապա այդ միևնույն է, թե մարդ ընկնի տրորված, լեռնոտ, անտանելի ճանապարհ, որտեղ թե՛ ձիերն են վայր ընկնում, թե՛ հեծյալն է ուժասպառ լինում, իսկ հայրենի գյուղն արդեն երևում է. պետք չէ աչքից թողնել այն և շուտով դուրս գալ վտանգավոր տեղից...

Այո՛, կիրքը պետք է սահմանափակել, ճնշել ու խեղդել ամուսնությամբ...

Նա սարսափով հեռու կփախչեր կնոջից, եթե սա հանկարծ ուտեր նրան աչքերով կամ ինքը սկսեր հառաչել, ընկներ նրա ուսին՝ փակված աչքերով, հետո սթափվեր և պարանոցին փաթաթվեր ու մինչև խեղդելը սեղմեր... Դա հրավառություն է, վառոդի տակառի պայթյուն. իսկ հետո ի՞նչ է լինում։ Ելացո՞ւմ, ջլացո՞ւմ և խանձված մազե՞ր։

Բայց տեսնենք, թե ինչպիսի՞ կին է Օլգան։

Խոստովանությունը բերանից թռցնելուց հետո երկար ժամանակ նրանք միայնակ չէին տեսնվում։ Նա թաքնվում էր դպրոցական աշակերտի նման, հենց որ տեսնում էր Օլգային։ Սա էլ փոխել էր վերաբերմունքը նրա նկատմամբ, բայց չէր փախչում, սառը չէր, այլ միայն ավելի մտածկոտ էր դարձել։

Կարծես թե Օլգան ցավում էր, որ այնպիսի մի բան էր պատահել, որը իրեն խանգարում էր Օբլոմովին տանջել նրա վրա սևեռած հետաքրքրվող հայացքով և բարեհոգությամբ խոցել նրան՝ ծաղրելով նրա պառկելը, ծուլությունը, անշնորհքությունը...

Օլգայի մեջ առաջ եկավ կոմիզմ, բայց դա մոր կոմիզմ էր, որը չի կարող չժպտալ՝ նայելով որդու ծիծաղելի արդուզարդին։ Շտոլցը գնացել էր և նրա համար ձանձրալի էր, որ չկար մեկը, որի համար երգեր. նրա դաշնամուրը փակված էր, մի խոսքով՝ նրանք երկուսն էլ հարկադրված վիճակի, կապանքների մեջ ընկան, և իրենց անհարմար էին զգում։

Իսկ ի՞նչ լավ սկսվեց։ Ի՞նչ հասարակ ձևով ծանոթացան նրանք։ Ի՞նչ ազատ մտերմացան։ Օբլոմովն ավելի պարզ էր, քան Շտոլցը և նրանից ավելի բարի էր, թեև Օլգային այնպես չէր ծիծաղեցնում, կամ ծիծաղեցնում էր իր անձով և այնպես հեշտությամբ էլ ներում էր ծաղրանքները։

Այնուհետև, Շտոլցն էլ, մեկնելով, Օբլոմովին կտակել էր Օլգային, խնդրել էր հետևել նրան, խանգարել նրան, որ տանը նստի։ Օլգայի խելոք, սիրուն գլխում արդեն մի մանրամասն պլան էր առաջ եկել, թե ինչպես պետք է ինքը Օբլոմովին չթողնի ճաշերից հետո քնել, և ո՛չ միայն քնել,— նա թույլ չի տա նրան ցերեկով նույնիսկ բազմոցի վրա պառկել. նրանից խոսք կառնի։

Օլգան երազում էր, թե ինչպես «կհրամայի նրան կարդալ այն գրքերը», որ թողել էր Շտոլցը, հետո ամեն օր կարդալ ընթերցվածը և իրեն պատմել նորությունները, նամակներ գրել գյուղ, կալվածքի կարգավորման պլանը գրել-վերջացնել, պատրաստվել արտասահման մեկնելու,— մի խոսքով՝ նա Օլգայի ձեռքում ննջելու ժամանակ չի ունենա. նա նրան նպատակ ցույց կտա, կստիպի նորից սիրելու այն ամենը, ինչ դադարել է սիրելուց, և Շտոլցը, վերադառնալով արտասահմանից, նրան չի ճանաչի։

Եվ այս ամբողջ հրաշքը կգործի նա, մի քաշվող, լռակյաց աղջիկ, որին մինչև այժմ ոչ ոք չի՞ լսել, որը դեռ չի սկսել ապրել։ Նա՞ է այդպիսի փոխակերպման պատճառը։

Այդ փոխակերպումն արդեն սկսված է. հազիվ Օլգան ընկավ երգել՝ Օբլոմովն այլևս այն չէր...

Նա կապրի, կգործի, կօրհնի կյանքն ու Օլգային։ Վերադարձնելու մարդուն դեպի կյանքը— որպիսի՞ փառք բժշկին։

երբ նա փրկում է անհուսալի հիվանդին։ Իսկ փրկել բարոյական պես կործանվող մի՞տքը, հոգի՞ն...

Օլգան նույնիսկ ցնցվում էր հպարտ, բերկրալից դողից. նա այդ համարում էր վերևից նշանակված մի դաս։ Նա մրտքով Օբլոմովին դարձնում էր իր քարտուղարը, գրադարանապետը։

Եվ հանկարծ այս ամենը պետք է վերջանա՞։ Նա չգիտեր, թե ինչպես պետք է վարվի ինքը, ուստիև լռում էր, երբ հանդիպում էր Օբլոմովին։

Օբլոմովը տանջվում էր այս բանից, որ վախեցրեց, վիրավորեց նրան, և սպասում էր կայծակնացայտ հայացքների, սառը խստության, և նրան տեսնելով՝ ճանապարհը ծռում էր։

Մինչ այս մինչ այն նա տեղափոխվեց ամառանոց և մոտ երեք օր կոշտերի վրայով միշտ մենակ անցնում էր ճահճով դեպի անտառ կամ գնում էր գյուղ և պարապ նստում գյուղացիների դարբասների մոտ՝ դիտելով, թե ինչպես են վազվզում երեխաները, հորթերը, ինչպես են բադերը չիչիփացնում լճակում։

Ամառանոցի կողքին կար մի լիճ, ահագին զբոսայգի, նա վախենում էր այնտեղ գնալ, որպեսզի Օլգային մենակ չպատահի։

«Ինչպե՞ս դուրս թռավ բերանից», մտածում էր նա և մինչև անգամ իրեն չէր հարցնում, թե իսկապես ճշմարտությունը դուրս թռավ բերանից, թե՞ դա միայն երաժշտության վայրկենական ազդեցությունն էր նյարդերի վրա։

Անհարմարության, ամոթի, կամ, ինչպես նա էր արտահայտվում, իր կատարած «խայտառակության» զգացմունքը խանգարում էր նրան ըմբռնել, թե դա ինչ պոռթկում էր և առհասարակ ինչ է նրա համար Օլգան։ Նա արդեն չէր վերլուծում, որ սրտի վրա մի ավելորդ բան է ավելացել, ինչ-որ մի գունդ, որ առաջ չկար։ Բոլոր զգացմունքները նրա մեջ վեր էին ածվել մի գնդի՝ ամոթի։

Իսկ երբ նա բոպեապես երևում էր իր երևակայության մեջ, այնտեղ ծնվում էր նաև այն պատկերը, մարմնացած անդորրության, կյանքի երջանկության այն իդեալը. այդ իդեալն իսկ և իսկ Օլգան էր։ Երկու պատկերները համընկնում և միաձուլվում էին։

— Ա՜խ, ի՞նչ արի ես,— ասում էր նա։— Ամե՞ն ինչ փչացրի։ Փառք աստծո, որ Շտոլցը գնացել է. Օլգան նրան չկարողացավ ասել, թե չէ՝ գետինն անցնելո՞ւ բան կլիներ։ Սեր, արցունքներ— սաղակա՞ն են դրանք ինձ։ Օլգայի մորաքույրն էլ մարդ չի ուղարկում, իրոմոտ չի կանչում. երևի, Օլգան ասել է... աստվա՜ծ իմ...

Այսպես էր մտածում նա՝ ավելի խոր մտնելով զբոսայգի, կողքի ծառուղին։

Օլգան դժվարանում էր միայն, թե ինչպես պիտի հանդիպի նրան, ինչպես է անցնելու այդ դիպվածը՝ լռությա՞մբ, արդյոք, կարծես ոչինչ չի եղել, թե՞ պետք է նրան որևէ բան ասել։

Իսկ ի՞նչ ասել։ Դաժան կերպարանք ընդունել, նայել նրան հպարտ կամ նույնիսկ բոլորովին չնայել, այլ գոռոզաբար և չոր ձևով նկատել, որ ինքը «բոլորովին չէր սպասում նրանից այդպիսի վարմունք. ո՞ւմ տեղ է դնում Օբլոմովը նրան, որ այդպիսի հանդգնություն թույլ տվեց իրեն...» Այդպես է պատասխանել Սոնեչկան մազուրկայում մի կոռնետի, թեև ինքն էր ամբողջ ուժով ջանք թափում, որ նրա գլուխը պտտեցնի։

« Լա՜վ, ի՞նչ հանդուգն բան կա այստեղ», հարցրեց նա իրեն։ «Դե, եթե նա իրոք զգում է, ինչո՞ւ չասի... Սակայն, այդ ինչպե՞ս հանկարծ, հազիվ էր ծանոթացել... Այդ բանը ոչ մի ուրիշ մարդ ոչ մի կերպ չէր ասի մի կնոջ, որին տեսնում է երկրորդ, երրորդ անգամ. բացի այդ՝ ոչ ոք այդպես շուտ սեր չէր էլ զգա։ Դա կարող էր միայն Օբլոմովը...»

Բայց Օլգան հիշեց, որ լսել ու կարդացել է, թե ինչպես սերը երբեմն հանկարծ է գալիս։

«Դա նրա մեջ պոռթկում էր, հրապուրանք. հիմա նա չի ուզում երևալ. ամաչում է. ուրեմն՝ հանդգնություն չէ այդ։ Իսկ ո՞վ է մեղավորը», մտածեց նա էլի։ «Իհարկե Անդրեյ. Իվանիչը, որովհետև հարկադրեց իրեն երգել»։

Բայց Օբլոմովն սկզբում լսել չէր ուզում— դա Օլգային արտնեղություն պատճառեց և նա... ջանաց... նա սաստիկ կարմրեց— այո՛, բոլոր ուժերով ջանաց շարժել նրան։

Շտոլցը նրա մասին ասաց, որ նա ապատիկ է, որ ոչ մի բան նրան չի զբաղեցնում, որ ամեն ինչ մարել է նրա մեջ...

Ահա դրա համար էլ նա կամեցավ տեսնել՝ արդյոք ամեն բան մարե՞լ է, և նա երգեց, երգեց... ինչպես երբեք...

«Աստվա՜ծ իմ։ Չէ՞ որ ե՛ս եմ մեղավորը. ես նրանից նեղություն կխնդրեմ... Իսկ ի՞նչի համար»— հարցրեց նա հետո։ «Ի՞նչ կասեմ ես նրան. մսյո Օբլո՛մով, ես մեղավոր եմ, ես հրապուրեցի... ի՜նչ ամոթ։ Դա ճիշտ չէ»— ասաց նա կարմրատակելով և ոտքերը գետնին խփելով. «Ո՞վ կհամարձակվի այդպես մտածել... Մի՞թե ես գիտեի, թե ինչ դուրս կգա։ Իսկ եթե այդ չլիներ, եթե նրա բերանից դուրս չթռներ... այն ժամանակ ի՞նչ...»— հարցրեց նա։ «Չգիտեմ...»— մտածում էր նա։

Այն օրվանից նրա սիրտը մի տեսակ տարօրինակ է... երևի նրան շատ է վշտացնում... Նույնիսկ տաքություն է գալիս վրան, այտերին կարմրին են տալիս երկու վարդագույն բծեր...

— Հուզմունք... փոքրիկ տենդ,— ասում էր բժիշկը։

«Ի՞նչ արեց այդ Օբլոմովը։ Օ՜, նրան պետք է դաս տալ, որ այսուհետև այդպիսի բան չլինի։ Կխնդրեմ ma tante-ին հրաժարվել նրան ընդունելուց. նա չպետք է ինքն իրեն մոռանա... ինչպե՜ս համարձակվեց նա...»— մտածում էր Օլգան՝ անցնելով զբոսայգով. նրա աչքերն այրվում էին...

Հանկարծ նա՝ Օլգան լսեց, որ մեկը գալիս է։

«Մեկը գալիս է...»— մտածեց Օբլոմովը։

Եվ դեմ առ դեմ դուրս եկան։

— Օլգա Սերգե՛ևնա,— ասաց նա՝ տերևի նման դողալով։

— Իլյա՜ Իլյիչ,— պատասխանեց նա վեհերոտ, և երկուսն էլ կանգ առան։

— Բարև ձեզ,— ասաց Օբլոմովը։

— Բարև ձեզ,— պատասխանեց Օլգան։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց Օբլոմովը։

— Հենց այնպես...— ասաց Օլգան՝ առանց աչքերը վեր բարձրացնելու։

— Ես ձեզ խանգարո՞ւմ եմ։

— Օ՜, ամենևին...— պատասխանեց Օլգան՝ արագ և հետաքրքրությամբ նայելով նրան։

— Կարո՞ղ եմ գալ ձեզ հետ,— հարցրեց նա հանկարծ՝ քննախույզ հայացք գցելով Օլգայի վրա։

Նրանք լուռ անցան կածանով։ Ո՛չ ուսուցչի քանոնից, ո՛չ էլ դիրեկտորի հոնքերից իր կյանքում երբեք այնպես չէր բաբախել Օբլոմովի սիրտը, ինչպես այժմ։ Նա ուզում էր մի բան ասել, ուժ էր գործ դնում իր վրա, բայց խոսք չէր կարողանում արտասանել. միայն սիրտն էր անհավատալի կերպով բաբախում, ինչպես աղետից առաջ։

— Նամակ չե՞ք ստացել Անդրեյ Իվանիչից,— հարցրեց Օլգան։

— Ստացել եմ,— պատասխանեց Օբլոմովը։

— Ի՞նչ է գրում։

— Փարիզ է կանչում։

— Իսկ դուք ի՞նչ եք մտադիր։

— Գնալու եմ։

— Ե՞րբ։

— Արդեն... ո՛չ, վաղը... երբ պատրաստ լինեմ։

— Ինչո՞ւ այդպես շուտ,— հարցրեց Օլգան։

Օբլոմովը լուռ էր։

— Ամառանոցը ձեզ դուր չի՞ գալիս, թե... ասացե՛ք, ինչո՞ւ եք ուզում գնալ։

«Հանդո՛ւգն։ Նա դեռ գնա՛լ է ուզում»,— մտածեց Օլգան։

— Չգիտեմ ինչից ես ինձ վատ, անհարմար եմ զգում, ինչ որ բան այրում է ինձ,— շշնջաց Օբլոմովը՝ առանց նրան նայելու։

Օլգան լուռ էր, նա պոկեց յասամանի ճյուղը և հոտոտում էր այն՝ ծածկելով դեմքն ու քիթը։

— Հոտ քաշեք, ի՜նչ լավ հոտ ունի,— ասաց Օլգան և նրա քիթն էլ ծածկեց։

— Ա՜յ, տեսեք, հովտաշուշան։ Սպասեք, քաղեմ,— ասաց նա, կռանալով դեպի խոտը,— սրանք ավելի լավ են բուրում. հանդերի, պուրակի հոտ է փչում. ավելի շատ բնություն կա մեջները։ Իսկ յասամանը միշտ տների մոտ է աճում, ճյուղերը քիչ է մնում լուսամուտներից ներս մտնեն, հոտը անհաճո է։ Ա՜յ, ցողը դեռ չի չորացել հովտաշուշանի վրա։

Օբլոմովը մատուցեց նրան մի քանի հովտաշուշան։

— Իսկ հափրուկ սիրո՞ւմ եք,— հարցրեց Օլգան։

— Ո՛չ, չափազանց ուժեղ հոտ ունի. չեմ սիրում ո՛չ հափ-
րուկ, ո՛չ վարդ։ Ես առհասարակ ծաղիկ չեմ սիրում. հան-
դում էլի ոչինչ, իսկ սենյակում— ինչքան հոգացողություն
է պետք նրանց համար... կեղտ։

— Իսկ դուք սիրո՞ւմ եք, որ սենյակը մաքո՞ւր լինի,—
հարցրեց Օլգան՝ խորամանկորեն նայելով նրան։— Կեղտ
չե՞ք հանդուրժում։

— Այո՛. բայց իմ սպասավորն այնպիսին է...— փընթ-
փնթաց նա։— «Օ՛, ի՞նչ չարն է»— ավելացրեց ինքն իրեն։

— Դուք ուղղակի Փարի՞զ կգնաք,— հարցրեց նա։

— Այո՛. Շտոլցը վաղուց է՝ ինձ է սպասում։

— Նամակ տարեք նրան. ես կգրեմ,— ասաց Օլգան։

— Ուրեմն հենց այսօր տվեք. ես վաղը կտեղափոխվեմ
քաղաք։

— Վա՞ղը,— հարցրեց նա։— Ինչո՞ւ այդքան շուտ։ Կար-
ծես մեկը ձեզ քշում է այստեղից։

— Եվ ինչպե՞ս է քշում...

— Իսկ ո՞վ է քշողը...

— Ամոթը...— շշնջաց նա։

— Ամո՞թը,— կրկնեց Օլգան մեքենաբար։— «Ա՛յ հիմա
կասեմ նրան. մսյո Օբլոմով, ես ամենևին չէի սպասում...».

— Այո՛, Օլգա Սերգեևնա,— վերջապես հաղթահարեց նա
ինքն իրեն,— դուք, կարծեմ, զարմանում եք... զայրանում
եք...

«Դե՛, ժամանակն է..., ա՛յ իսկական րոպեն»։ Օլգայի
սիրտը սաստիկ բաբախում էր։ «Չե՞մ կարող, աստվա՞ծ իմ»։

Օբլոմովն աշխատում էր նրա դեմքին նայել, իմանալ, թե
նա ինչ է անում. բայց նա հոտոտում էր հովտաշուշաններն
ու յասամանները և ինքն էլ չգիտեր, թե ինչպես անի... ինչ
պիտի ասի, ինչ պիտի անի։

«Ա՛խ, Սոնեչկան իսկույնևեթ մի բան կհնարեր, իսկ ես
այնպե՞ս հիմար եմ. ոչինչ չեմ կարողանում... տանջանք է»,—
մտածում էր նա։

— Ես բոլորովին մոռացել էի...— ասաց Օլգան։

— Հավատացե՛ք ինձ, դա ակամայից եղավ... ես չկա-
րողացա ինձ զսպել...— վրա բերեց նա՝ հետզհետե համար-
ձակություն առնելով։— Եթե այն ժամանակ կայծակը որո-

նոտար, քար ընկներ գլխիս, ես այնուամենայնիվ կասեի։ Դա
հնարավոր չէր՞ ոչ մի ուժով զսպել... աստծու սիրուն, մրտք-
ներովդ չանցկացնեք, թե ես ուզում էի... Ես ինքս մի րոպեից
հետո աստված գիտե թե ինչ կտայի, որպեսզի վերադարձ-
նեմ անզգույշ խոսքը...

Օլգան գնում էր գլուխը կախ գցած և հոտոտելով ծաղիկ-
ները։

— Մոռացե՛ք, խնդրեմ,— շարունակում էր Օբլոմովը,—
մոռացե՛ք, մանավանդ որ ճշմարիտ չէ...

— Ճշմարիտ չէ՞,— հանկարծ կրկնեց Օլգան, ուղղվեց և
ծաղիկները ցած գցեց։

Նրա աչքերը հանկարծ լայն բացվեցին և զարմանքից
փայլեցին...

— Ինչպե՞ս թե ճշմարիտ չէ,— կրկնեց Օլգան դարձյալ։

— Այո՛, աստծու սիրուն, մի՛ զայրանաք և մոռացե՛ք։
Հավատացնում եմ ձեզ, դա միայն րոպեական հրապուրանք
էր... երաժշտության պատճառով։

— Միայն երաժշտությա՞ն պատճառով...

Օլգայի դեմքը փոխվեց. երկու վարդագույն բծերը կորան
և աչքերը փայլը կորցրին։

«Ահա, այլևս ոչի՞նչ չկա. ահա նա ետ վերցրեց անզգո՞ւյշ
խոսքը, և բարկանալ պետք չէ՞... Հիմա լավ է... հիմա հան-
գիստ է... Կարելի է առաջվա նման խոսել, կատակներ անել...»,
—մտածում էր Օլգան և անցնելիս՝ սաստիկ ձիգ տվեց ծառի
ճյուղը, շրթունքներով մի տերև պոկեց և հետո իսկույն ճա-
նապարհի վրա նետեց ճյուղն ու տերևը։

— Դուք չե՞ք բարկանում։ Մոռացե՞լ եք,— ասում էր Օբ-
լոմովը՝ կռանալով դեպի Օլգան։

— Դե, ի՞նչ է պատահել։ Ինչի՞ մասին եք խնդրում դուք,—
հուզմունքով, գրեթե սրտնեղությամբ պատասխանեց աղ-
ջիկը՝ շրջվելով նրանից։— Ես ամեն ինչ մոռացել եմ... ես
այնպե՞ս մոռացկոտ եմ։

Օբլոմովը լռեց և չգիտեր ինչ անել։ Նա տեսնում էր միայն
հանկարծական սրտնեղությունը և պատճառը չէր հասկանում։

«Աստվա՞ծ իմ»,— մտածում էր Օլգան։ «Ա՛յ ամեն ինչ
կարգի ընկավ. այդ տեսարանը կարծես չի էլ եղել, փա՞ռք

աստծու էլ ի՞նչ կա... Ա՜խ, աստվա՜ծ իմ։ Սա ի՞նչ բան է։ Ա՜խ, Սո՜նեչկա, Սո՜նեչկա։ Որքա՜ն երջանիկ ես դուս։

— Ես տուն եմ գնում, —հանկարծ ասաց Օլգան՝ արագացնելով քայլերը և թեքվելով դեպի մյուս ծառուղին։

Արցունքները մնացել էին նրա կոկորդում։ Նա վախենում էր, թե լաց կլինի։

— Ոչ այնտեղ, այստեղ ավելի մոտիկ է,— նկատեց Օբլոմովը։— «Ապուշ», ասաց նա ինքն իրեն վհատ կերպով, «Հարկավոր էր բացատրվե՞լ։ Հիմա ավելի խիստ վիրավորեցի։ Պետք չէր հիշեցնել. այդ հենց այնպես էլ կանցներ, ինքն իրեն կմոռացվեր։ Ի՞նչ արած, այժմ պետք է թախանձելով ներողության արժանանալ»։

«Ես սրտնեղեցի, գուցե այն պատճառով,— մտածում էր Օլգան,— որ չկարողացա ասել նրան— մսյո՜ Օբլոմով, ես ամենևին չէի սպասում, որ դուք Թույլ տայիք... Նա կանխեց ինձ... «Ճշմարիտ չէ՞»։ Ասացե՜ք, խնդրեմ, նա դեռ սո՜ւտ էլ է ասում։ Ախր ինչպե՞ս համարձակվեց նա»։

— Իսկապե՞ս մոռացել եք,— հարցրեց Օբլոմովը մեղմ։

— Մոռացե՜լ եմ, ամեն ինչ մոռացե՜լ եմ,— արագ վրա ավեց նա՝ շտապելով տուն գնալ։

— Տվեք ձեր ձեռքն ի նշան, որ չեք բարկանում։

Օլգան, առանց նայելու, նրան տվեց իր մատների ծայրերը և, հազիվ էր Օբլոմովը շոշափել դրանք, իսկույն ձեռքը ետ քաշեց։

— Ո՜չ, դուք բարկանո՜ւմ եք,— ասաց նա հառաչելով։— Ինչպե՞ս հավատացնեմ ձեզ, որ դա մի հրապուրանք էր, որ ես Թույլ չէի տա ինձ մոռանալու... Ո՜չ, իհարկե, այլևս չեմ լսի ձեր երգը...

— Ոչ մի կերպ մի՜ հավատացրեք. ինձ պետք չեն ձեր հավաստիացումները...— աշխույժով ասաց Օլգան։— Ես ի՞նքս է՞լ չեմ երգի։

— Լա՜վ, ես կլռեմ,— ասաց Օբլոմովը,— միայն թե, ի սեր աստծու, այդպես մի՜ հեռանաք; ապա թե ոչ՝ իմ սրտի վրա այնպիսի մի ծանրություն կմնա...

Օլգան սկսեց ավելի դանդաղ քայլել և լարված ականջ դնել նրա խոսքերին։

— Եթե ճիշտ է, որ դուք լաց կլինեիք, եթե լսեիք, թե

ինչպես ես ախ քաշեցի ձեր երգից, ապա այժմ, եթե դուք այդպես գնաք, եթե չժպտաք, բարեկամաբար ձեռք չտաք ինձ, ես... խղճացե՛ք, Օ՛լգա Սերգեևնա։ Ես կհիվանդանամ, իմ ծնկները դողում են, ես հազիվ եմ ոտքերիս վրա կանգնած...

— Ինչո՞ւ,— հանկարծ հարցրեց Օլգան՝ նայելով նրան։

— Ես ինքս էլ չգիտեմ,— ասաց նա,— ամոթս հիմա անցել է. ես իմ խոսքից չեմ ամաչում... ինձ թվում է, թե նրա մեջ...

Նորից սարսուռ անցավ Օբլոմովի սրտի վրայով. նորից դարս եկավ, որ մի ավելորդ բան կա այնտեղ. Օլգայի սիրալիր ու հետաքրքիր հայացքը նորից սկսեց այրել նրան։ Նա այնպիսի նազանիությամբ շուռ եկավ դեպի Օբլոմովը, այնպիսի անհանգստությամբ էր սպասում նրա պատասխանին։

— Ի՞նչ է նրա մեջ,— անհամբեր կերպով հարցրեց Օլգան։

— Ո՜չ, վախենում եմ ասել. դուք նորից կբարկանաք։

— Խոսե՜ք,— ասաց նա հրամայական եղանակով։

Օբլոմովը լուռ էր։

— Հը՞։

— Իմ լացը նորից գալիս է՝ նայելով ձեզ... Տեսնում եք, ես ինքնասիրություն չունեմ, սրտիցս չեմ ամաչում...

— Իսկ ինչո՞ւ լաց լինել,— հարցրեց Օլգան, և նրա այտերի-վրա երևաց երկու վարդագույն բիծ։

— Ես շարունակ ձեր ձայնն եմ լսում... ես նորից զգում եմ...

— Ի՞նչ,— ասաց Օլգան, և արցունքները նահանջեցին նրա կրծքից. նա սպասում էր լարված։

Նրանք մոտեցան տան մուտքին։

— Զգում եմ...— շտապեց ասել-վերջացնել Օբլոմովն ու կանգ առավ։

Օլգան դանդաղ, կարծես դժվարությամբ, բարձրանում էր աստիճաններով։

— Նույն երաժշտությունը... նույն... հուզմունքը... նույն... զգաց... ներեցե՜ք— աստված վկա, չեմ կարողանում ինքս ինձ զսպել...

— Մ-ր Օբլոմով...— խստորեն ասաց նա, հետո գեմքը հանկարծ լուսավորվեց ժպիտի ճառագայթով,— ես չեմ բար-

կանում, ներում եմ,— ավելացրեց նա մեղմ,— միայն թե այնուհետև...

Օլգան, առանց շրջվելու նրան մեկնեց իր ձեռքը. Օբլոմովը բռնեց այն, համբուրեց ձեռքի ափը։ Նա մեղմ սեղմեց նրա շրթունքները և վայրկենապես ճախրեց ապակե դռնով ներս, իսկ Օբլոմովը մնաց քար կտրած։

VII

Օբլոմովը երկար նայում էլ Օլգայի ետևից մեծ աչքերով, բերանը բաց արած, երկար ժամանակ աչք էր ածում թփերին...

Անցկացան օտար մարդիկ, թռավ-գնաց մի թռչուն։ Մի կին կողքից անցնելով, հարցրեց, արդյոք նրան հատապտուղներ պետք չեն,— քարացումը դեռ շարունակվում էր։

Նա նորից հանդարտ կերպով գնաց նույն ծառուղով և հանդարտորեն հասավ նրա կեսին, հանդիպեց Օլգայի վայր գցած հովտաշուշաններին, յասամանի ճյուղին, որ Օլգան պոկել էր ու սրտնեղությամբ դեն նետել։

«Ինչո՞ւ նա արեց այդ»,— սկսեց մտմտալ, մտաբերել...

— Հիմա՞ր, հիմա՞ր,— հանկարծ ասաց նա բարձրաձայն, հավաքելով հովտաշուշանները, ճյուղը և գրեթե վազելով անցավ ծառուղին,— ներողություն խնդրեցի, իսկ նա... ա՜խ, մի՞թե... որպիսի՞ միտք։

Երջանիկ, պայծառադեմ, կարծես «լուսնյակ լինի ճակատին», դայակի արտահայտությամբ ասած, նա տուն եկավ, նստեց բազմոցի անկյունում և փոշու մեջ խոշոր տառերով արագ գծագրեց՝ «Օլգա»։

— Ա՜խ, ի՞նչ փոշի է,— հրճվանքից սթափված նկատեց նա։— Զախա՜ր, Զախա՜ր,— երկար կանչում էր նա, որովհետև Զախարը կառապանների հետ նստած էր դեպի նըրբանցք բացվող դարպասի մոտ։

— Գնա՛ է՛,— ահավոր շշնջոցով ասում էր Անիսյան՝ քաշելով նրա թևից։— Բարինը վաղուց է՝ քեզ է կանչում։

— Նայի՛ր, Զախար, սա ի՞նչ բան է,— ասաց Իլյա Իլյիչը, բայց ասաց մեղմ, բարությամբ. նա հիմա ի վիճակի չէր բարկանալու։— Դու այստեղ է՞լ ես ուզում նույնպիսի ան-

կարգություն մտցնել՝ փոշի, սարդոստայն։ Ո՞չ, ների՛ր, ես թույլ չեմ տա։ Առանց այն էլ Օլգա Սերգեևնան հանգիստ չի տալիս ինձ. «Դուք, ասում է, սիրում եք կեղտոտությունը»։

— Այո՛, նրանց համար հեշտ է խոսելը. նրանք հինգ ծառա ունեն,— նկատեց Զախարը՝ շուռ գալով դեպի դուռը։

— Ո՞ւր են գնում։ Վերցրո՛ւ և մաքրի՛ր. այստեղ ո՞չ նստել կարելի է, ո՞չ էլ թիկն տալ... ախր զզվելի բան է սա, սա... օբլոմովականությո՛ւն է։

Զախարը ուռեց և կողքից նայում էր բարինին։

«Ա՜հ քեզ»— միտք էր անում նա։ «Էլի մի խղճալի՜ խոսք հնարեց։ Բայց ծանո՛թ խոսք է»։

— Դե՛, մաքրիր, ի՞նչ ես կանգնել,— ասաց Օբլոմովը։

— Ի՞նչը մաքրեմ։ Ես այսօր մաքրել եմ,— համառորեն պատասխանեց Զախարը։

— Իսկ որտեղի՞ց է փոշին, եթե մաքրել ես։ Նայի՛ր, ա՛յ, ա՛յ։ Այսուհետև չլինի՜։ Իսկույնևեթ մաքրի՛ր։

— Ես մաքրել եմ,— պնդում էր Զախարը,— հո չե՞մ կարող տասն անգամ մաքրել։ Իսկ փոշին փողոցից է գալիս... այստեղ դաշտ է, ամառանոց. փողոցում փոշին շատ է։

— Ախր դու, Զախար Տրոֆիմիչ,— սկսեց Անիսյան՝ հանկարծ ներս նայելով մյուս սենյակից,— իզուր ես նախ հատակն ավլում, իսկ հետո սեղանները սրբում. փոշին նորից նստում է... Դու նախ և առաջ...

— Դո՞ւ ինչ ես եկել այստեղ բան սովորեցնելու,— կատաղած ու խոպոտ ձայնով ասաց Զախարը։— Գնա՛ քո տեղը...

— Ո՞վ է տեսել՝ նախ հատակը մաքրել, հետո սեղանները կարգի բերել... Բարինը դրա համար էլ բարկանում է...

— Դե՛-դե՛-դե՛,— գոռաց Զախարը՝ արմունկը վրա բերելով Անիսյայի կրծքին։

Անիսյան քմծիծաղ տվեց ու թաքնվեց։ Օբլոմովը նրան էլ ձեռքով նշան արավ, որ դուրս գնա։ Ինքը գլուխը դրեց ասեղնագործ բարձին, ձեռը տարավ սրտին և սկսեց լսել, թե ինչպես է բաբախում այն։

— «Չէ՞ որ սա վնասակար է, ասաց նա ինքն իրեն։ «Ի՞նչ անեմ։ Եթե խորհրդակցեմ բժշկի հետ, նա, թերևս, Հաբեշստա՞ն ուղարկի ինձ»։

Քանի Զախարն ու Անիսյան դեռ ամուսնացած չէին, նրան-

ցից յուրաքանչյուրն զբաղվում էր իր մասով և մյուս գործին չէր խառնվում, այսինքն՝ Անիսյան գիտեր շուկան ու խոհանոցը և սենյակները մաքրելուն տարին միայն մեկ անգամ էր մասնակցում, երբ լվանում էր հատակները։

Բայց ամուսնանալուց հետո նրա մուտքը բարինի սենյակներն ավելի ազատ դարձավ։ Նա օգնում էր Զախարին, և սենյակներն ավելի մաքուր դարձան, և առհասարակ ամուսնու մի քանի պարտականությունները նա իր վրա վերցրեց, մասամբ հոժարակամ, մասամբ էլ այն պատճառով, որ Զախարը բռնակալորեն այդ պարտականությունները նրա վրա դրեց։

— Ա՛ռ ահա, թափ տուր գորգը,— խուլ ձայնով հրամայում էր նա,— կամ լավ կլիներ՝ դուրս հանեիր, ինչ որ կիտվել է անկյունում, և ավելորդը խոհանոց տաներիր,— ասում էր նա։

Այսպիսի երանության մեջ էր նա մոտ մի ամիս. սենյակները մաքուր են, բարինը չի տրտնջում, «խղճալի խոսքեր»» չի ասում, և նա, Զախարը, ոչինչ չի անում։ Բայց այդ երանությունն անցավ-գնաց,— և ահա թե ինչ պատճառով։

Հենց որ նրանք միասին սկսեցին գործ անել բարինի սենյակներում, Զախարն ինչ որ անում էր, հիմարություն էր դուրս գալիս։ Նրա յուրաքանչյուր քայլը— այն չէր և այնպես չէր։ Հիսունհինգ տարի նա ապրել էր լույս աշխարհում այն համոզմունքով, թե այն ամենը, ինչ ինքն անում է, այլ կերպ և ավելի լավ արվել չի կարող։

Եվ հանկարծ հիմա երկու շաբաթվա ընթացքում Անիսյան ապացուցեց նրան, որ նա— դեն գցելու է, և այն էլ՝ Անիսյան այդ անում էր պյնպիսի վիրավորական զիջողականությամբ, այնպես մեղմ, ինչպես վարվում են միայն ծերեխաների կամ կատարյալ հիմարների հետ, դեռ քմծիծաղ էլ է տալիս՝ նրան նայելով։

— Դու, Զախար Տրոֆիմիչ,— քաղցրությամբ ասում էր նա,— իզուր ես նախ խողովակը փակում, իսկ ապա օդանցքը բաց անում. նորից սառցնում ես սենյակները։

— Իսկ քո ասելով ինչպե՞ս պետք է արվի,— ամուսնու կոպտությամբ հարցնում էր Զախարը։— Իսկ ե՞րբ պետք է բաց անել։

— Երբ վառում ես. թե՛ օդը դուրս կքաշի, թե՛ նորից կտաքանա,— պատասխանում էր Անիսյան հանդարտ։

— Ա՛յ քեզ հիմա՛ր,— ասում էր Զախարը։— Քանի տարի ես այսպես եմ արել, քեզ հյմար պետք է փոխե՞մ...

Պահարանի դարակում նա միասին էր պահում թեյը, շաքարը, լիմոնը, արծաթեղենը, նույն տեղում էին նաև վաքսը, խոզանակներն ու օճառը։

Մի անգամ նա տուն եկավ և հանկարծ տեսավ, որ օճառը դրված է լվացվելու սեղանի վրա, խոզանակներն ու վաքսը խոհանոցի լուսամուտին, իսկ թեյն ու շաքարը կամոդի առանձին արկղում։

— Էս ի՞նչ ես քո ուզածի պես ամեն ինչ իրար խառնում, հը՞,— հարցրեց նա սպառնալից։— Ես դիտմամբ ամեն բան մի անկյունում էի դրել, որ ձեռքիս տակ լինեն, իսկ դու ամեն բան ցրիվ ես տվել զանազան տեղեր։

— Որպեսզի թեյից օճառի հոտ չգա,— հեզությամբ նկատեց Անիսյան։

Մի ուրիշ անգամ նա Զախարին ցույց տվեց երկու-երեք ցեցակեր ծակեր բարինի զգեստի վրա և ասաց, որ շաբաթը մի անգամ անպայման հարկավոր է շորերը թափ տալ ու մաքրել։

— Տո՛ւր, ես փոքրիկ ավելով թափ տամ,— քաղցրությամբ եզրափակեց նա։

Զախարը խլեց նրա ձեռքից ավելիկն ու ֆրակը, որ նա ուզում էր վերցնել, և դրեց նախկին տեղը։

Մի անգամ էլ, երբ նա, ըստ իր սովորության, սկսեց գանգատվել բարինից, որ նա իզուր տեղը նախատում է իրեն ուտիճների պատճառով, որ «ինքը չի հնարել նրանց», Անիսյան լուռ վերցրեց դարակի վրայից անհիշատակ ժամանակներից այնտեղ թափված սև հացի կտորտանքը, մաքրեց ու լվաց պահարանները, ամանեղենը,— և ուտիճները համարյա բոլորովին անհետացան։

Զախարը դեռ չէր կարողանում լավ հասկանալ, թե բանն ինչ է, և դա վերագրում էր միայն Անիսյայի եռանդին։ Բայց երբ մի անգամ Զախարը տանում էր մատուցարանը թասերով ու բաժակներով, կոտրեց երկու բաժակ և սկսեց, ըստ սովորության, հայհոյել և ուզում էր հատակին նետել

նաև ամբողջ մատուցարանը, Անիսյան մատուցարանն առավ նրա ձեռքից. ուրիշ բաժակներ դրեց վրան, նաև շաքարամանը, հաց և ամեն բան այնպես դարսեց, որ ոչ մի թաս չշարժվեց, և հետո ցույց տվեց նրան, թե ինչպես պետք է մի ձեռքով վերցնել մատուցարանը, ինչպես ամուր պահել մյուսով, հետո երկու անգամ անցավ սենյակով, մատուցարանն աջ ու ձախ պտտեցնելով, և ոչ մի գդալիկ տեղից չշարժվեց նրա վրա, հանկարծ Զախարի համար պարզվեց, որ Անիսյան իրենից խելո՞ք է։

Զախարը նրա ձեռքից խլեց մատուցարանը, դեսուդեն դցեց բաժակները և այն ժամանակից սկսած չէր կարողանում ներքել նրան այդ։

— Ա՜, տեսնո՞ւմ ես, ինչպես է պետք,— հանդարտիկ ավելացրեց Անիսյան։

Զախարը նայեց նրան բուռ ամբարտավանությամբ, իսկ նա քմծիծաղ էր տալիս։

— Ա՜խ դու, կնիկարմատ, սալդաթի կնկա մեկը, դու ուզում ես խելքիդ զո՞ռ անել։ Մի՞թե Օբլոմովկայում մենք այսպիսի տուն ունեինք։ Ամեն բան ինձ վրա էր. միայն լակեյների թիվը՝ սպասավոր տղաների հետ միասին՝ տասնհի՞նգ էր։ Իսկ ձեզպեսներին, կանանց, սկի անուն-անուն չէիր կարող իմանալ... Իսկ դու այստեղ... Ա՜խ, դու...

—Չէ՞ որ ես լավդ եմ ուզում,— սկսեց Անիսյան։

— Դե՛, դե՛, դե՛,— խոպոտ ձայնով ասաց Զախարը՝ արմունկով սպառնական շարժում անելով դեպի նրա կուրծքը։— Կորի՛ր բարինի սենյակներից՝ խոհանոց... քո կանացի գործն իմացի՛ր։

Անիսյան քմծիծաղ տվեց և հեռացավ, իսկ Զախարը մոայլված շեղակի նայում էր նրա ետևից։

Նրա հպարտությունը վիրավորվում էր, և նա մոայլ էր վերաբերվում կնոջը։ Սակայն, երբ պատահում էր, որ Իլյա Իլյիչը որևէ իր էր պահանջում, իսկ այդ իրը չկար կամ կոտրվել էր, և առհասարակ երբ տանն անկարգություն էր պատահում և Զախարի գլխին փոթորիկ էր կուտակվում, «խըղճալի խոսքերի» ուղեկցությամբ, Զախարն աչքով էր անում Անիսյային, գլխով ցույց էր տալիս բարինի առանձնասենյակը

Եվ, բթամատով ցույց տալով այնտեղ՝ հրամայական շշնջյունով ասում էր.

— Գնա՛ բարինի մոտ. տե՛ս՝ ի՞նչ է ուզում։

Անիսյան ներս էր գնում, և փոթորիկը միշտ վերջանում էր հասարակ բացատրությամբ։ Զախարն ինքն էլ, հենց որ Օբլոմովի խոսքերի մեջ «խղճալի բառեր» էին սողոսկում։ առաջարկում էր կանչել Անիսյային։

Այդպիսով, Օբլոմովի սենյակներում ամեն ինչ նորից կամայանար, եթե Անիսյան չլիներ. նա իրեն արդեն համարում էր Օբլոմովի տան անդամ, անգիտակցաբար բաժանում էր իր ամուսնու անխզելի կապը Իլյա Իլյիչի կյանքի, տան և անձնավորության հետ, և նրա կանացի աչքն ու հոգացող ձեռքը միշտ արթուն էին բարձիթողի արված սենյակներում։

Հենց որ Զախարը մի տեղ էր գնում, Անիսյան մաքրում էր սեղանների, բազմոցների փոշին, բաց էր անում օդանցքը, ուղղում շտորները, իր տեղն էր դնում սենյակի մեջտեղ գցած կոշիկները, բազկաթոռների վրա կախ արած շալվարը, թափ էր տալիս բոլոր շորերը, նույնիսկ սեղանի վրայի թղթերը, մատիտները, գրշահատը, գրիչները— ամեն ինչ կարգի էր բերում. թափահարում էր տրորված անկողինը, ուղղում բարձերը— և այս բոլորը շատ արագ։ Հետո էլի թուցիկ հայացք կդցեր ամբողջ սենյակի վրա, որևէ աթոռ կմոտեցներ, ներս կհրեր կամոդի կիսաբաց արկղը, սեղանից կվերցներ անձեռոցիկը, և լսելով Զախարի ճռճռան կոշիկների ձայնը՝ արագ կանցներ խոհանոց։

Նա աշխույժ, ժիր կին էր, մոտ քառասունյոթ տարեկան, հոգածու ժպիտով, աշխուժորեն ամեն կողմ նայող աչքերով, ամուր պարանոցով ու կրծքով և կարմիր, կառչուն, երբեք չհոգնող ձեռքերով։

Դեմք նա համարյա բոլորովին չուներ. հենց միայն քիթն էր նկատվում. թեև քիթը փոքր էր, բայց կարծես պոկվել էր երեսից կամ անհարմար կերպով էր դրվել տեղը, բացի այդ՝ նրա ներքևի մասը ձգված էր դեպի վերև, այդ պատճառով էլ դեմքը նրա ետևից աննկատելի էր. այդ դեմքն այնպես էր քաշվել, թառամել, որ նրա քթի մասին արդեն պարզ գաղափար ես կազմում, իսկ դեմքը դեռ էլի չես նկատում։

Աշխարհում շատ կան այնպիսի ամուսիններ, ինչպիսին

Զախարն է։ Երբեմն դիվանագետը անտարբեր կերպով լսում է կնոջ խորհուրդը, թոթվում է ուսերը— և լռիկ գրում է նրա խորհրդի համաձայն։

Երբեմն ադմինիստրատորը, շվշվացնելով, ցավ արտահայտող ծամածռությամբ է պատասխանում կնոջ շաղակրատանքին կարևոր գործի մասին, իսկ վաղը այդ շաղակրատանքը փքված զեկուցում է մինիստրին։

Այդ պարոնները կանանց վերաբերվում են նույնիսկ մոայլությամբ կամ թեթևությամբ, հազիվ արժանացնում են հետևները խոսելու, համարելով նրանց եթե ոչ կնիկարմատ, ինչպես Զախարը, ապա ծաղիկներ՝ գործարար, լուրջ կյանքից հետո զվարճանալու համար...

Կեսօրն արդեն վաղուց վառ կերպով այրում էր զբոսայգու ուղիները։ Բոլորը նստած էին ստվերների մեջ, քաթանե ծածկերի տակ. միայն դայակներն էին, որ երեխաների հետ, խմբերով, համարձակորեն գնում ու նստում էին խոտերի վրա, կեսօրվա ճառագայթների տակ։

Օբլոմովը դեռ պառկած էր բազմոցի վրա, հավատալով ու չհավատալով Օլգայի հետ ունեցած առավոտյան խոսակցության իմաստին։

— Նա սիրում է ինձ, նրա մեջ զգացմունք է զարթնել դեպի ինձ։ Հնարավո՞ր բան է։ Նա երազում է իմ մասին. ինձ համար երգեց նա այդպես կրքոտ, և՝ երաժշտությունը մեզ երկուսին էլ վարակել է համակրությամբ։

Նրա մեջ առաջ եկավ հպարտություն, փայլեց կյանքը, նրա կախարդական հեռուները, բոլոր գույներն ու ճառագայթները, որոնք քիչ առաջ դեռ չկային։ Նա տեսնում էր իրեն Օլգայի հետ արտասահմանում, Շվեյցարիայում, լճերի ափին, Իտալիայում, շրջում էր Հռոմի ավերակների մեջ, զբոսնում գոնդոլով, հետո կորչում էր Փարիզի, Լոնդոնի ամբոխի մեջ, հետո... հետո իր երկրային դրախտում՝ Օբլոմովկայում։

— Օլգան աստվածություն է, այդ սիրելի թոթովանքով, այդ նրբագեղ սպիտակ դեմքով, բարակ, քնքուշ պարանոցով...

Գյուղացիները երբեք չեն տեսել ոչ մի նման բան, նրանք ծունկ են չոքում այդ հրեշտակի առաջ։ Օլգան մեղմիկ քայլում է խոտի վրա, իր հետ միասին ման է գալիս կեչուտի ստվերների մեջ. նա երգում է Օբլոմովի համար...

Եվ Օբլոմովն զգում էր կյանքը, նրա հանդարտ ընթացքը, նրա քաղցր շիթերը, ճղփյունը... նա մտախոհության մեջ էր ընկնում բավարարված ցանկություններից, երջանկության լիությունից...

Հանկարծ նրա դեմքը մռայլվեց։

— Ո՛չ, այդ չի կարող լինել,— բարձրաձայն արտասանեց նա, վեր կենալով բազմոցից և ման գալով սենյակում։— Սիրել ինձ, ծաղրելի մեկին՝ քնկոտ հայացքով, տրորված այտերով... Օլգան շարունակ ծիծաղում է վրաս...

Նա կանգնեց հայելու առջև և երկար դիտում էր իրեն, սկզբում անբարեհաճ կերպով, հետո հայացքը պարզվեց. նա նույնիսկ ժպտաց։

— Կարծես թե ավելի լավ եմ, ավելի թարմ, քան երբ գտնվում էի քաղաքում,— ասաց նա,— աչքերս՝ աղոտ չեն... Ա՛յ, ուզում էր գարեհատ դուրս գալ աչքիս, բայց անհետացավ... Երևի, այստեղի օդից է. շատ եմ ման գալիս, գինի բոլորովին չեմ խմում, չեմ պառկում... Եգիպտոս գնալ էլ հարկավոր չէ...

Օլգայի մորաքույր Մարիա Միխայլովնայի կողմից սպասավոր եկավ նրան ճաշի կանչելու։

— Գալի՛ս եմ, գալի՛ս եմ,— ասաց Օբլոմովը։

Սպասավորը գնաց։

— Սպասի՛ր։ Վերցրո՛ւ։

Նա փողը տվեց նրան։

Նա ուրախ է, սիրտը թեթև։ Բնությունն այնպես պարզ է։ Մարդիկ բոլորը բարի են, բոլորը վայելում են. բոլորի դեմքերին երջանկություն է տիրում։ Միայն Զախարն է մռայլ, շարունակ շեղակի է նայում բարինին. դրա փոխարեն Անիսյան է այնպես բարեհոգությամբ քմծիծաղ տալիս։

«Շուն կպահեմ», վճռեց Օբլոմովը, «կամ կատու... ավելի լավ է՝ կատու. կատուները սիրալիր մռռում են»։

Նա շտապեց Օլգայի մոտ։

«Բայց, այնուամենայնիվ... Օլգան սիրո՞ւմ է ինձ»,— մտածում էր նա ճանապարհին։ «Ա՜յդ չահել, թա՞րմ էակը։ Նրա երևակայության առաջ հիմա բաց է կյանքի ամենաբանաս-

տեղծական ոլորտը. նա երազների մեջ պետք է տեսնի սև գանգուրներով երիտասարդներ, վայելչակազմ, բարձրահասակ, դեմքին մտախոհ, թաքնված ուժ, խիզախություն, հպարտ ժպիտով, աչքերի այն կայծով, որը սուզվում է ու դողդողում հայացքի մեջ և այնպես հեշտությամբ հասնում մինչև սիրտը. մեղմ ու թարմ ձայնով, որը հնչում է որպես մետաղե լար։ Վերջապես, սիրում են նաև ոչ երիտասարդներին, ոչ խիզախությունը դեմքի վրա, ոչ ճկունությունը մազուրկայի ժամանակ, ոչ ձիով արշավելը... Ասենք՝ Օլգան սովորական աղջիկ չէ, որի սիրտը կարելի է խտտեցնել բեղերով, լսողության վրա ազդել սրի շաչյունով. բայց այդ դեպքում էլ չէ՞ որ ուրիշ բան է հարկավոր... մտքի ուժ, օրինակ, որպեսզի կինը հնազանդվի ու գլուխ խոնարհի այդ մտքի առաջ, որպեսզի հասարակությունն էլ խոնարհվի նրա առաջ... Կամ հռչակավոր արտիստ... Իսկ ես ի՞նչ եմ։ Օբլոմով— ուրիշ ոչինչ։ Ա՛յ Շտոլցն ուրիշ բան է. Շտոլցը— խելք է, ուժ, իրեն, ուրիշներին, բախտը կառավարելու կարողություն։ Ուր էլ գնում է, ում էլ պատահում է— մեկ էլ տեսար՝ արդեն տիրապետել է, կարծես գործիքի վրա է նվագում... Իսկ ե՞ս... Զախարին էլ չեմ կարողանում կառավարել... և ինձ էլ... ես— Օբլոմո՛վ եմ։ Շտո՛լց։ Աստվա՛ծ իմ... Չէ՞ որ Օլգան նրան սիրում է», սարսափահար մտածեց նա, «ինքն ասաց. որպես բարեկամի, ասաց նա. բայց դա սուտ է, գուցե, անգիտակցական... Տղամարդու և կնոջ միջև բարեկամություն չի լինում...»

Նա գնում էր հանդարտ, ավելի հանդարտ, ավելի հանդարտ՝ կասկածներից հաղթահարված։

«Իսկ եթե Օլգան ինձ հետ կոկետությո՞ւն է անում... Եթե միայն...»

Նա կանգ առավ, մի րոպե քարացավ։

«Ի՞նչ կլինի, եթե այստեղ խարդավանք, դավադրություն լինի... Եվ ինչի՞ց եզրակացրի, թե նա ինձ սիրում է։ Նա ինքը չասաց. դա ինքնասիրության դիվական փսփսո՞ցն է։ Անդրե՛յ։ Մի՞թե... Չի կարող լինել. Օլգան այնպիսի, այնպիսի... Ահա՛ թե ինչպիսի՞ն է»,— հանկարծ ասաց նա հրճվանքով՝ նկատելով իրեն ընդառաջ եկող Օլգային։

Օլգան ուրախ ժպիտով ձեռքը մեկնեց նրան։

«Ո՛չ, նա այնպիսին չէ, նա խաբեբա չէ», վճռեց Օբլոմովը, «խաբեբաներն այդպիսի սիրալիր հայացքով չեն նայում. նրանք այդպես անկեղծ կերպով չեն ծիծաղում... նրանք շարունակ ճղճղում են... Բայց... նա, այնուամենայնիվ, չասաց, թե սիրո՞ւմ է»,— հանկարծ նորից մտածեց նա վախեցած. այդ բանն ինքն է իրեն այդպես բացատրել... «Իսկ սրտնեղությո՞ւնն ինչից է... Տե՛ր աստված, ի՞նչ փորձանքի մեջ եմ ընկել»։

— Այդ ի՞նչ է ձեր ձեռքին,— հարցրեց Օլգան։

— Ճյուղ։

— Ի՞նչ ճյուղ։

— Դուք տեսնում եք՝ յասամանի։

— Որտեղի՞ց եք վերցրել։ Այստեղ յասաման չկա։ Որտե՞ղ էիք ման գալիս։

— Այս դուք առաջ պոկեցիք ու դեն գցեցիք։

— Իսկ դուք ինչո՞ւ վերցրիք այն։

— Հենց այնպես, ինձ դուր եկավ, որ դուք... սրտնեղությամբ դեն նետեցիք այն։

— Սրտնեղությունը դուր է գալիս. դա նորությո՞ւն է։ Ինչո՞ւ։

— Չեմ ասի։

— Շնորհ արեք, ասացե՛ք, ես խնդրում եմ...

— Ո՛չ մի կերպ, ոչ մի պայմանո՞վ։

— Աղաչում եմ ձեզ։

Օբլոմովը բացասաբար շարժեց գլուխը։

— Իսկ եթե երգե՞մ։

— Այն ժամանակ... գուցե....

— Ուրեմն միայն երաժշտությո՞ւնն է ազդում ձեզ վրա,— ասաց նա մռայլված հոնքերով։— Ուրեմն դա ճշմարի՞տ է։

— Այո՛, երաժշտությունը, որ հաղորդվում է ձեր միջոցով...

— Դեհ, ես կերգեմ... Casta diva, Casta di...— հնչեցրեց նա Նորմայի կոչը և կանգ առավ։

— Դե, հիմա ասացեք,— ասաց Օլգան։

Օբլոմովը որոշ ժամանակ պայքարում էր ինքն իրեն հետ։

— Ո՛չ, ո՛չ,— առաջվանից է՛լ ավելի վճռականորեն եզրափակեց նա։— Ո՛չ մի դեպքում... Երբե՛ք։ Եթե ճիշտ չէ՞, եթե ինձ այդպես թվացե՞լ է... Երբե՛ք, երբե՛ք։

—Այդ ի՞նչ բան է։ Որևէ սարսափելի բան,— ասում էր

Օլգան՝ հառելով միտքն այդ հարցերին, իսկ հարցախույզ հայացքը՝ նրան։

Հետո Օլգայի դեմքը հետզհետե լցվում էր գիտակցությամբ. յուրաքանչյուր դիմագծի մեջ թափանցում էր մտքի, ենթադրության ճառագայթը, և հանկարծ ամբողջ դեմքը գիտակցությամբ լուսավորվեց... Արևն էլ, հենց այդպես երբեմն դուրս գալով ամպերի տակից, հետզհետե լուսավորում է մի թուփ, մյուսը, տանիքը և հանկարծ լույսի մեջ ողողում է ամբողջ բնակարանը։ Նա արդեն գիտեր Օբլոմովի միտքը։

— Ո՛չ, ո՛չ, լեզուս չի դառնա...— պնդում էր Օբլոմովը,— մի՛ էլ հարցրեք։

— Ես ձեզ չեմ հարցնում,— պատասխանեց Օլգան անտարբեր։

— Ինչպե՞ս թե։ Հենց նոր դուք...

— Գնանք տուն,— լրջորեն, առանց նրան լսելու ասաց Օլգան,— ma tante սպասում է։

Օլգան առաջ ընկավ, թողեց նրան մորաքրոջ հետ մենակ և գնաց ուղիղ իր սենյակը։

VIII

Այդ ամբողջ օրը Օբլոմովի համար աստիճանական հիասթափման օր էր։ Նա այդ օրն անցկացրեց Օլգայի մորաքրոջ հետ, մի շատ խելացի վայելուչ կին, որ միշտ հագնված էր շատ գեղեցիկ, միշտ մետաքսե նոր զգեստով էր լինում, որը հիանալի նստում էր նրա վրա, միշտ այնպիսի նրբագեղ ժանեկի օձիքներով, գլխադիրը նույնպես ճաշակով պատրաստված, և ժապավենները էլ ընտրված էին կոկետորեն նրա գրեթե հիսնամյա, բայց դեռևս թարմ դեմքին համապատասխան։ Շղթայից կախված է ոսկե լորնետը։

Նրա կեցվածքը, շարժումները լի են արժանապատվությամբ. նա շատ ճարպիկորեն հարդարվում է շքեղ շալի մեջ, այնպես հարմար արմունկը հենում է ասեղնագործ բարձին, այնպես վեհորեն ձգվում է բազմոցի վրա։ Նրան երբեք գործ անելիս չես տեսնի. կռանալը, կամ անելը, մանր-մունր բաներով զբաղվելը նրա դեմքին, վեհ կերպարանքին չի նա-

զում։ Նա ծառաներին ու աղախիններին հրամաններն էլ տալիս էր անփույթ տոնով, կարճ ու շոր-շոր։

Նա երբեմն կարդում էր, երբեք չէր գրում, բայց լավ էր խոսում, սակայն մեծ մասամբ ֆրանսերեն։ Բայց և այնպես նա իսկույնևեթ նկատեց, որ Օբլոմովը բոլորովին ազատ չի տիրապետում ֆրանսերեն լեզվին, և երկրորդ օրվանից անցավ ռուսերենին։

Խոսակցության ժամանակ նա չի երազում և խելքին զոռ չի անում. նրա գլխում, կարծես, մի խիստ գիծ է անցկացրած, որից այն կողմ միտքը երբեք չէր անցնում։ Ամեն բանից երևում էր, որ զգացմունքը, ամեն մի համակրություն, շրջանցելով նաև սերը, մտնում են կամ մտել էին նրա կյանքի մեջ մյուս տարրերին համահավասար կերպով, մինչդեռ ուրիշ կանանց մոտ միանգամից կտեսնես, որ սերը, եթե ոչ գործով, գոնե խոսքերով մասնակցում է կյանքի բոլոր հարցերում և որ մնացած բոլորը մեջտեղ են գալիս կողմնակիորեն, այնքան, որքան սիրուց ազատ տեղ է մնում։

Այս կնոջ մոտ առաջինը տեղ էր բռնում ապրելու, իրեն կառավարելու, միտքը դիտավորության հետ, դիտավորությունը կատարման հետ հավասարակշռված պահելու ունակությունը։ Չէր կարելի նրան անպատրաստ գտնել, հանկարծակի բերել, ինչպես արթուն-թշնամու, որին երբ էլ գարանակալեք, միշտ էլ կհանդիպեք ձեզ վրա սևեռված սպասողական հայացքի։

Նրա տարերքը հասարակությունն էր, և այդ պատճառով էլ տակտը, զգուշությունը ամեն մտքից, յուրաքանչյուր խոսքից ու շարժումից նախադաս էր։

Նա ոչ ոքի առաջ երբեք չի բացում սրտի գաղտնախորհուրդ շարժումները, ոչ ոքի չի վստահում հոգեկան գաղտնիքները. նրա մոտ չես տեսնի լավ բարեկամուհի պառավ կնոջ, որի հետ փսփսալիս լիներ մի բաժակ սուրճ խմելիս։ Միայն բարոն ֆոն Լանգվագենի հետ է նա հաճախ միայնակ մնում, երեկոները բարոնը երբեմն նստում է մինչև կես գիշեր, բայց համարյա միշտ Օլգայի ներկայությամբ. և այն էլ՝ նրանք ավելի շատ լռում են, բայց լռում են մի տեսակ նշանակալից ու խելացի կերպով, կարծես՝ այնպիսի մի բան գիտեն, որ ուրիշները չգիտեն, բայց միայն այդքան։

Ըստ երևույթին, նրանք սիրում են միասին լինել. ահա միակ եզրակացությունը, որ կարելի է հանել՝ նրանց նայելով. նա բարոնի հետ էլ այնպես է վարվում, ինչպես ուրիշների հետ,— բարեհաճ, սիրալիր, բայց նույնչափ հավասար ու հանդարտ։

Չար լեզուներն ուզում էին օգտվել դրանից և սկսեցին ակնարկներ անել ինչ-որ մի հին բարեկամության մասին, միասին արտասահմանում ճանապարհորդելու մասին. բայց նրա հարաբերությունների մեջ դեպի բարոնը ստվերն անգամ չէր երևում որևէ թաքնված առանձին համակրության, իսկ դա անշուշտ դուրս կժայթքեր։

Մինչդեռ բարոնը Օլգայի մի փոքրիկ կալվածքի խնամակալն էր, որ մի կապալի ժամանակ մի անգամ գրավ էր դրվել և այդպես էլ մնացել։

Բարոնը դատ էր վարում, այսինքն՝ ինչ-որ մի չինովնիկի ստիպում էր թղթեր գրել, կարդում էր դրանք լորնետի օգնությամբ, ստորագրում էր և նույն չինովնիկին այդ թղթերի հետ ուղարկում էր ատենավայրերը, իսկ ինքը հասարակության-մեջ ունեցած իր կապերի միջոցով այդ դատավարությանը գոհացուցիչ ընթացք էր տալիս։ Նա հույսեր էր տալիս, որ գործը շուտով նպաստավոր վախճան կունենա։ Այս բանը գադարեցրեց չարամիտ զրույցները, և բարոնին սովորեցին տանը տեսնել իբրև ազգականի։

Նա մոտ հիսուն տարեկան էր, բայց շատ թարմ էր, միայն ներկում էր բեղերը և քիչ կաղում էր մի ոտքից։ Նա քաղաքավարի էր նրբազգացության աստիճան, երբեք չէր ծխում կանանց ներկայությամբ, մի ոտը մյուսի վրա չէր դնում և խստորեն նախատում էր այն երիտասարդներին, որոնք իրենց թույլ են տալիս հասարակության մեջ թեք ընկնել բազկաթոռին և ծունկն ու կոշիկները բարձրացնել իրենց քթին հավասար։ Նա սենյակում էլ ձեռնոցներով էր նստում և հանում էր դրանք միայն այն ժամանակ, երբ ճաշի էր նստում։

Հագնված էր լինում վերջին ճաշակով և ֆրակի մերակում բազմաթիվ ժապավեններ էր կրում։ Ման էր գալիս միշտ կառքերով և չափազանց խնայում էր ձիերին. կառք նստելիս՝ նա նախ կպտտեր դրա շուրջը, կնայեր ձիասարքին, մինչև

անգամ ձիերի սմբակներին, իսկ երբեմն էլ կհաներ սպիտակ թաշկինակը և կշփեր նրանով ձիերի ուսը կամ ողնաշարը, որպեսզի տեսնի՝ արդյոք նրանք լա՞վ են մաքրված։

Ծանոթ մարդուն նա հանդիպում էր բարեհաճ քաղաքավարի ժպիտով, անծանոթին՝ սկզբում սառը. բայց երբ անծանոթին ներկայացնում էին նրան, սառնությունը նույնպես ժպիտի էր փոխարկվում և ներկայացվողն արդեն միշտ կարող էր այդ ժպիտը սպասել նրանից։

Նա դատողություն էր անում միատեսակ պարզ ու հստակ ամեն բանի մասին. թե՛ առաքինության, թե՛ թանկության, թե՛ գիտությունների և թե՛ հասարակության մասին. իր կարծիքն արտահայտում էր պարզ և լիավարտ ֆրազներով, կարծես թե խոսում էր արդեն պատրաստի սենտենցներով, որոնք գրի են առնված որևէ դասընթացի մեջ և լույս են ընծայված ընդհանուր գործածության համար։

Օլգայի հարաբերություններն իր մորաքրոջ հետ մինչև այժմ շատ պարզ էին և հանգիստ. քնքշության մեջ նրանք երբեք չէին անցնում շափավորության սահմանները, նրանց միջև երբեք անբավականության ստվերն անգամ չէր անցնում։

Դա առաջ էր գալիս մասամբ Օլգայի մորաքույր Մարիա Միխայլովնայի բնավորությունից, մասամբ էլ երկուսի համար իրենց այլ կերպ պահելու ամեն մի առիթի լիակատար բացակայությունից։ Մորաքրոջ մտքով չէր անցնում Օլգայից որևէ այնպիսի բան սպահանջել, որը խիստ կերպով հակասեր վերջինիս ցանկություններին. Օլգան երազում էլ չէր պատկերացնի չկատարել մորաքրոջ ցանկությունները, չհետևել նրա խորհրդին։

Եվ ինչո՞ւմ էին արտահայտվում այդ ցանկությունները. զգեստ ընտրելու, սանրվածքի մեջ, այն բանում, օրինակ, ֆրանսիական թատրո՞ն գնալ, արդյոք, թե՞ օպերա։

Օլգան լսում էր այնչափով, որչափով մորաքույրը ցանկություն էր արտահայտում կամ խորհուրդ էր տալիս, ամենևին ոչ ավելի, —իսկ նա արտահայտում էր այն շորության հասնող չափավորությամբ, որքան թույլ էին տալիս մորաքրոջ իրավունքները, երբե՞ք դրանից ավելի։

Այդ հարաբերություններն այնքան անգույն էին, որ ամե-

նին չէր կարելի որոշել՝ արդյոք մորաքրոջ բնավորության մեջ որևէ պահանջ կա՞ր Օլգայի հնազանդության, նրա առանձին քնքշության վերաբերմամբ, թե՞ Օլգայի բնավորության մեջ կար հնազանդություն դեպի մորաքույրը և առանձին քնքշություն դեպի նա։

Դրա փոխարեն, առաջին անգամից նրանց միասին տեսնելով՝ կարելի էր որոշել, որ նրանք մորաքույր և քրոջ աղջիկ են, և ոչ թե մայր ու աղջիկ։

— Ես խանութ եմ գնում. քեզ որևէ բան հարկավոր չէ՞,— հարցնում էր մորաքույրը։

— Այո՛, ma tante, ինձ հարկավոր է փոխել բաց մանիշակագույն զգեստս,— ասում էր Օլգան, և նրանք գնում էին միասին, կամ,— ո՛չ, ma tante,— կասեր Օլգան,— ես նորերս եղել եմ այնտեղ։

Մորաքույրը երկու մատով կբռներ նրա երկու այտերը, կհամբուրեր ճակատը, իսկ սա կհամբուրեր մորաքրոջ ձեռքը, և նա կգնար, իսկ սա կմնար։

— Մենք էլի նո՞ւյն ամառանոցն ենք վարձելու,— կասեր մորաքույրը ո՛չ հարցական, ո՛չ դրական, այլ հենց այնպես, կարծես դատում է ինքն իրեն և չի կարողանում վճռել։

— Այո՛, այնտեղ շատ լավ է,— ասում է Օլգան։

Եվ ամառանոցը վարձում էին։

Իսկ եթե Օլգան ասեր՝

— Ա՛խ, ma tante, մի՞թե ձեզ չեն ձանձրացրել այդ անտառն ու ավազը։ Ավելի լավ չի՞ լինի մի ուրիշ կողմ փընտրենք։

— Տեսնենք,— ասում էր մորաքույրը։— Օլենկա, գնա՞նք թատրոն,— ասում էր մորաքույրը,— վաղուց է ազմկում են այդ պիեսի մասին։

— Հաճույքով,— պատասխանում էր Օլգան, բայց առանց հաճոյանալու հապճեպ ցանկության, առանց հնազանդության արտահայտության։

Երբեմն էլ նրանք մի թեթև վիճում էին։

— Ասա՛ խնդրեմ, ma chrère, քեզ կասեղնե՞ն կանաչ ժապավենները,— ասում էր մորաքույրը։— Վերցրո՛ւ հարդագույն ժապավենները։

— Ա՛խ, ma tante! Ես արդեն վեցերորդ անգամ է հարդագույն եմ կապել, վերջապես ձանձրացնում են։

— Դե վերցրու pensée[1].

— Իսկ դրանք ձեզ դո՞ւր են գալիս։

Մորաքույրը դիտում էր և դանդաղորեն գլուխը շաքժում։

— Ինչպես ուզում ես, ma chère, ես քո տեղը լինեի, կվերցնեի pense՛e կամ հարդագույն։

— Ո՛չ, ma tante, ավելի լավ է՝ ես սրանք կվերցնեմ,— ասում էր Օլգան մեղմիկ և վերցնում այն, ինչ որ ինքն էր ցանկանում։

Օլգան մորաքրոջից խորհուրդ էր հարցնում, ո՛չ թե որպես հեղինակությունից, որի դատավճիռը օրենք պիտի լինի նրա համար, այլ այնպես, ինչպես խորհուրդ կհարցներ ամեն մի ուրիշ՝ իրենից ավելի փորձված կնոջից։

— Ma tante, դուք այդ գիրքը կարդացե՞լ եք, ի՞նչ բան է,— հարցնում էր նա։

— Ա՛խ, ի՞նչ զզվելի բան,— ասում էր մորաքույրը, մի կողմ հրելով, բայց չթաքցնելով գիրքը և ոչ մի միջոց ձեռք չառնելով, որ Օլգան չկարդա այն։

Եվ Օլգայի մտքով երբեք չէր անցնի կարդալ այն։ Եթե նրանք երկուսն էլ դժվարանում էին, նույն հարցը տրվում էր բարոն ֆոն Լանգվագենին կամ Շտոլցին, երբ նա ներկա էր լինում և գիրքը կարդացվում էր կամ չէր կարդացվում՝ նրանց դատավճռի համաձայն։

— Ma chère Օլգա,— կասեր երբեմն մորաքույրը։— Այդ երիտասարդ մարդու մասին, որ հաճախ մոտենում է քեզ Զավադսկիների մոտ, երեկ ինձ ինչ-որ բան էին պատմում, ինչ-որ մի հիմար պատմություն։

Եվ միայն այսքան։ Իսկ Օլգան հետո ինչպես ինքը կամենա՝ խոսի կամ չխոսի նրա հետ։

Օբլոմովի երևան գալը նրանց առանք ոչ մի հարց, ոչ մի առանձին ուշադրություն չառաջացրեց, ո՛չ մորաքրոջ, ո՛չ բարոնի, ոչ էլ նույնիսկ Շտոլցի մեջ։ Վերջինս ուզում էր իր բարեկամին այնպիսի մի տան հետ ծանոթացնել, որտեղ

[1] մեզ մանիշակագույն (ֆր.)։

ամեն ինչ մի փոքր նազկտոցով էր, որտեղ ո՛չ միայն չեն առաջարկի ճաշից հետո քնել, այլ որտեղ նույնիսկ անհարմար է ոտքը ոտքի վրա դնելը, որտեղ հարկավոր է միշտ մի-քուր-նոր հագնված լինել, հիշել, թե ինչի մասին ես խոսում,— մի խոսքով՝ չի կարելի ո՛չ ննջել, ո՛չ թափթփված լինել, և որտեղ շարունակ կենդանի, ժամանակակից խոսակցություն էր տեղի ունենում։

Եվ հետո Շտոլցը կարծում էր, որ եթե Օբլոմովի քնկոտ կյանքի մեջ մտնի ջահել, համակրելի, խելոք, աշխույժ և մասամբ ծաղրասեր կնոջ ներկայություն, դա միևնույն է, թե մութ սենյակը լամպ տանես, որից դեպի բոլոր մութ անկյունները հավասար լույս, մի քանի աստիճան ջերմություն կտարածվի, և սենյակն ավելի ուրախ տեսք կստանա։

Ահա այն ամբողջ արդյունքը, որին նա ձգտում էր՝ ծանոթացնելով իր բարեկամին Օլգայի հետ։ Նա չէր կանխատեսում, որ հրախաղություն է մտցնում, է՛լ ավելի պակաս կանխատեսում էին այդ բանը Օլգան ու Օբլոմովը։

Իլյա Իլյիչը մոտ երկու ժամ նստեց մորաքրոջ հետ վայելուչ կերպով, ոչ մի անգամ մի ոտքը մյուսի վրա չդնելով, ամեն բանի մասին խոսելով վայելուչ կերպով. մինչև իսկ երկու անգամ ճարպկությամբ նրա ոտքերի տակ հրեց ոտնաթոռիկը։

Եկավ բարոնը, քաղաքավարի ժպտաց և սիրալիր կերպով սեղմեց նրա ձեռը։

Օբլոմովն իրեն ավելի ու ավելի վայելուչ էր պահում, և երեքն էլ ըստ ամենայնի գոհ էին միմյանցից։

Մորաքույրը Օբլոմովի և Օլգայի՝ անկյուններում ունեցած խոսակցություններին, զրոսանքներին նայում էր... կամ, ավելի լավ է ասել, ոչ մի կերպ էլ չէր նայում։

Զրոսնել երիտասարդ մարդու, պճնամոլ մարդու հետ՝ դա ուրիշ բան է. մորաքույրն այն ժամանակ էլ ոչինչ չէր ասի, բայց, իրեն հատուկ տակտով, մի տեսակ աննկատելի կերպով ուրիշ կարգ կսահմաներ. ինքը կգնար նրանց հետ մի կամ երկու անգամ, որևէ երրորդ անձի կուղարկեր, և զրոսանքներն իրենք իրենց կվերջանային։

Բայց զրոսնել «մսյո Օբլոմովի հետ», նստել նրա հետ

մեծ դահլիճի անկյունում, պատշգամբում... ի՞նչ կա որ։ Նա երեսունից անց է. հո չի սկսի Օլգային դատարկ բաներ ասել, զանազան գրքեր տալ... Այդպիսի բան ոչ ոքի մտքովն անգամ չէր անցնում։

Բացի այդ, մորաքույրը լսեց, թե ինչպես Շտոլցը մեկնելու նախօրյակին Օլգային ասում էր, որ նա թույլ չտա Օբլոմովին թմրելու, որ արգելի քնել, տանջի նրան, բռնանա նրա վրա, նրան զանազան հանձնարարություններ տա— մի խոսքով՝ վարվի նրա հետ, ինչպես ուզում է։ Իրեն էլ խնդրեց՝ Օբլոմովին աչքից չթողնել, ավելի հաճախ հրավիրել իրենց տուն, մասնակից դարձնել զրոսանքներին, շրջագայություններին, ամեն կերպ շարժել նրանց, եթե նա արտասահման չգնա։

Օլգան չերևաց, քանի նա նստած էր մորաքրոջ հետ և ժամանակը դանդաղ էր անցնում։ Օբլոմովն իրեն դարձյալ ասեղների վրա էր զգում։ Հիմա նա արդեն կռահում էր Օլգայի այդ փոփոխության պատճառը։ Այդ փոփոխությունը նրա համար, չգիտես ինչու, առաջվանից ավելի ծանր էր։

Առաջվա սխալը նրան միայն սարսափ ու ամոթ էր պատճառում, իսկ այժմ նա իրեն անհարմար էր զգում, ստոր, սիրտը ճմլված, ինչպես Խոնավ, անձրևային եղանակի ժամանակ։ Նա հասկացրեց Օլգային, որ կռահել է նրա սիրո մասին և այն էլ՝ գուցե կռահել է անտեղի։ Սա արդեն իրոք վիրավորանք էր, որ հազիվ թե կարելի է ուղղել։ Եթե նույնիսկ տեղին էլ էր, որքա՜ն անշնորհք կերպով արեց նա այդ։ Նա ուղղակի ֆատ է։

Նա կարող է խրտնեցնել այն զգացմունքը, որ վեհերոտ կերպով ուզում է ներս թափանցել երիտասարդ, կուսական սիրտը, նստել զգույշ ու թեթև, ինչպես թռչնիկն է նստում ծառի ճյուղին. կողմնակի մի ձայն, շրշյուն՝ և նա կթռնի։

Նա նվաղուն սարսուռով սպասում էր, թե երբ պետք է Օլգան ցած գա ճաշի, ի՞նչ և ինչպե՞ս է խոսելու, ինչպե՞ս է նայելու իրեն...

Օլգան ցած եկավ, և նա զարմանքից ապշեց՝ նրան նայելով. նա հազիվ ճանաչեց Օլգային։ Դեմքը փոխվել էր, նույնիսկ ձայնն ուրիշ էր։

Երիտասարդ, միամիտ, գրեթե երեխայական քմծիծաղը

ոչ մի անգամ չերևաց նրա շուրթերին, ոչ մի անգամ նա չնայեց այնպես լայն, բաց աչքերով, այնպիսի աչքերով, երբ նրանց մեջ արտահայտվում է կա՛մ հարց, կա՛մ տարակուսանք, կա՛մ պարզամիտ հետաքրքրություն, կարծես թե նա այլևս բա՛ն չուներ հարցնելու, բա՛ն չուներ իմանալու, բա՛ն չուներ զարմանալու։

Նրա հայացքը չէր հետամտում Օբլոմովին, ինչպես առաջ։ Նա նայում էր նրան, կարծես վաղուց ծանոթ էր նրան, ուսումնասիրել էր նրան, վերջապես, կարծես նա իր համար ոչինչ էր, ճիշտ այնպես, ինչպես բարոնը,— մի խոսքով, Օբլոմովը կարծես մի տարի է՝ չէր տեսել նրան, և նա մի տարով հասունացել էր։

Չկար դաժանություն, երեկվա սրտնեղությունը, նա կատակներ էր անում և մինչև անգամ ծիծաղում, մանրամասն պատասխաններ էր տալիս այն հարցերին, որոնց առաջ ոչինչ չէր պատասխանի։ Երևում էր, որ նա վճռել էր հարկադրել իրեն անելու այն, ինչ անում են ուրիշները, այն, ինչ որ առաջ չէր անում։ Արդեն չկար այն ազատությունը, անբռնազբոսիկությունը, որ նրան թույլ էր տալիս արտահայտելու այն ամենը, ինչ որ անցնում էր մտքով։ Ո՞ւր էին կորել հանկարծ այդ բոլորը։

Ճաշից հետո Օբլոմովը մոտեցավ նրան հարցնելու՝ արդյոք զբոսնելու չի՞ գնա։ Օլգան, առանց նրան պատասխանելու, դիմեց մորաքրոջը հետևյալ հարցով.

— Գնալո՞ւ ենք մենք զբոսնելու։

— Միայն թե մոտիկ տեղ,— ասաց մորաքույրը։— Պատվիրի՛ր ինձ հովանոց տան։

Եվ բոլորը գնացին։ Ման էին գալիս դանդաղ, նայում էին հեռուները, Պետերբուրգին, հասան մինչև անտառ և վերադարձան պատշգամբ։

— Դուք, երևում է, այսօր տրամադրված չե՞ք երգելու։ Ես խնդրել անգամ վախենում եմ,— հարցրեց Օբլոմովը, սպասելով, թե չի՞ վերջանա, արդյոք, այդ բռնազբոսիկությունը, նրան չի՞ վերադառնա, արդյոք ուրախությունը, արդյոք գեթ որևէ մի բառի, ժպիտի, վերջապես, երգեցողության մեջ չի՞ առկայծի անկեղծության, միամտության և դյուրահավատության ճառագայթը։

— Շո՞գ է,— նկատեց մորաքույրը։

— Ոչինչ, ես կփորձեմ,— ասաց Օլգան և մի ռոմանս երգեց։

Օբլոմովը լսում էր և իր ականջներին չէր հավատում։ Սա Օլգան չէ. ո՞ւր է առաջվա կրքոտ հնչյունը։

Նա երգում էր այնպես մաքուր, այնպես ճիշտ և միևնույն ժամանակ այնպես... այնպես... ինչպես երգում են բոլոր աղջիկները, երբ նրանց խնդրում են երգել հասարակության մեջ. առանց հափշտակվելու։ Նա հանել էր իր հոգին երգի միջից և լսողի մեջ էլ ոչ մի նյարդ չէր շարժվում։

Խորամանկությո՞ւն է բանեցնում, ի՞նչ է, ձևացնո՞ւմ է, զայրանու՞մ է։ Ոչինչ կռահել չի կարելի. նա նայում է սիրալիր կերպով, հաճույքով խոսում է, բայց խոսում է այնպես, ինչպես երգում է, ինչպես բոլորը... Ի՞նչ բան է սա։

Օբլոմովը՝ չսպասելով թեյի, վերցրեց գլխարկն ու հրաժեշտ տվեց։

— Ավելի հաճախակի եկեք,— ասաց մորաքույրը,— լի օրերը մենք միշտ մենակ ենք, եթե ձեզ համար ձանձրալի չէ, իսկ կիրակի օրերը մեզ մոտ մարդ է լինում— չեք ձանձրանա։

Բարոնը քաղաքավարի կերպով վեր կացավ և գլուխ տվեց նրան։

Օլգան գլխի շարժումով հրաժեշտ տվեց նրան, ինչպես լավ ծանոթի, և երբ նա գնաց, շուտ եկավ դեպի լուսամուտը, նայում էր այն կողմը և անտարբերությամբ լսում Օբլոմովի հեռացող քայլերի ձայնը։

Այդ երկու ժամը և հետևյալ երեք-չորս օրը, ամենաշատը շաբաթը, Օլգայի վրա խոր ազդեցություն գործեցին, նրան շատ առաջ շարժեցին։ Միմիայն կանայք են ընդունակ ուժերի ծաղկման, հոգու բոլոր կողմերի զարգացման այդպիսի արագության։

Նա, կարծես, կյանքի դասընթաց էր լսում ո՞չ թե օրերով, այլ ժամերով։ Եվ ամենաչնչին, հազիվ նկատելի փորձի, դեպքի յուրաքանչյուր ժամը, որ թռչունի նման թռչում-անցնում է տղամարդու քթի առջևից, անբացատրելի արագությամբ ըմբռնվում է աղջկա կողմից. սա հետևում է նրա թռիչքին դեպի հեռուները,— և թռիչքի կատարած կոր գիծը

մնում է աղջկա հիշողության մեջ իբրև մի անջնջելի նշան, ցուցում, դաս։

Այնտեղ, որտեղ տղամարդու համար հարկավոր է վերստանալ տնկել մակագրությամբ, աղջկա համար բավական է շշնջացող քամին, օդի դողդոջուն, ականջի համար հազիվ լսելի ցնցումը։

Ինչի՞ց է, ի՞նչ պատճառների հետևանքով է, որ հանկարծ այն աղջկա դեմքին, որը դեռ անցյալ շաբաթ այնպես անհոգ էր, այնպես ծիծաղելիության չափ միամիտ կերպարանք ուներ, հանկարծ մի խիստ միտք է երևում։ Եվ ի՞նչ միտք է այդ։ Ինչի՞ մասին։ Թվում է, թե ամեն ինչ կա այդ մտքի մեջ, տղամարդու ամբողջ տրամաբանությունը, ամբողջ մտահայեցական ու փոքձնական փիլիսոփայությունը, կյանքի ամբո՞ղջ սիստեմը։

-Cousin-ը, որ նրան դեռ նորերս աղջիկ էր թողել, վերջացրել է իր ուսման ընթացքը, և ուսադիրներ է դրել, նրան տեսնելով՝ ուրախ մոտ է վազում այն դիտավորությամբ, որ առաջվա նման ուսերին խփի, ձեռքերը բռնած պտույտ գա, արշավի աթոռների, բազմոցների վրայով... Հանկարծ, սևեռակի նայելով նրա դեմքին՝ քաշվում է, շփոթված հեռանում է և ըմբռնում, որ ինքը դեռ մանուկ է, իսկ նա արդեն կի՞ն է։

Որտեղի՞ց։ Ի՞նչ պատահեց։ Դրամա՞։ Մեծադողորդ դե՞պք։ Որևէ մի նորությո՞ւն, որի մասին ամբողջ քաղաքը գիտե։

Ոչինչ, ո՛չ maman-ը, ո՛չ mon oncle-ը, ո՛չ ma tante-ը, ո՛չ դայակը, ո՛չ աղախինը— ոչ ոք չգիտե։ Եվ ժամանակ էլ չկար, որ բան պատահեր. նա պարել է երկու մազուրկա, մի քանի կոնտրդանս, մեկ էլ՝ գլուխը մի քիչ ցավել է. գիշերը չի քնել...

Իսկ հետո էլի ամեն բան անցել է, միայն թե դեմքի վրա արդեն ինչ-որ նոր բան է ավելացել. նա այլ կերպ է նայում, դադարել է բարձր ծիծաղելուց, միանգամից մի ամբողջ տանձ չի ուտում, չի պատմում, թե «ինչպես է իրենց պանսիոնում»... Նա էլ է դասընթացը վերջացրել։

Օբլոմովը երկրորդ, երրորդ օրը, ինչպես cousin-ը, հազիվ ճանաչեց Օլգային և նրան նայում էր վեհերոտ, իսկ Օլգան նրան՝ պարզ կերպով, միայն թե առանց նախկին հեռաքրքրության, առանց փաղաքշանքի, այլ այնպես, ինչպես ուրիշները։

«Այդ ի՞նչ է պատահել նրան։ Նա հիմա ի՞նչ է մտածում, զգում»,— տանջվում էր Օբլոմովն այս հարցերից։ «Աստված վկա, ոչի՞նչ չեմ հասկանում»։

Եվ որտեղի՞ց պիտի հասկանար նա, որ Օլգայի հետ պատահել է այն, ինչ կատարվում է տղամարդու հետ քսանհինգ տարեկան հասակում՝ քսան և հինգ պրոֆեսորների, գրադարանների օգնությամբ, աշխարհում թափառելուց հետո, երբեմն նույնիսկ հոդու բարոյական բույրը, մտքի ու մազերի թարմությունը որոշ չափով կորցնելու օգնությամբ, այսինքն՝ որ նա մտել է գիտակցության ոլորտը։ Այդ մուտքը Օլգայի համար շատ էժան ու թեթև է անցել։

— Ո՛չ, սա ծա՞նր է, տաղտկալի՞,— եզրափակեց Օբլոմովը։— Կտեղափոխվեմ Վիբորգի քաղաքամաս, կզբաղվեմ, կկարդամ, կգնամ Օբլոմովկա... մենա՞կ,— ավելացրեց հետո խոր վհատությամբ։ —Առա՞նց նրան։ Մնաս բարով, ի՛մ դրախտ, կյանքի իմ լուսավո՞ր, անդո՞ր իդեալ։

Նա չգնաց ոչ չորրորդ, ոչ էլ հինգերորդ օրը. չէր կարդում, չէր գրում, փորձեց զբոսնելու գնալ, դուրս եկավ փոշոտ ճանապարհը, այնուհետև պետք էր դեպի վերև բարձրանալ։

«Ա՛յ քեզ ախորժա՞կ՝ քարշ գալ այս շոգին»,— ասաց նա ինքն իրեն, հորանջեց և վերադարձավ, պառկեց բազմոցին ու քնեց ծանր քնով, այնպես, ինչպես երբեմն քնում էր Գորոխովայա փողոցում, փոշոտ վարագույրները ցած թողած սենյակում։

Այնպիսի՞ խառն երազներ էր տեսնում։ Զարթնեց՝ առջևը սեղան էր բաց արած, սառը բանջարապուր, ծեծած միս։ Զախարը կանգնած է և քնկոտ աչքերով նայում է լուսամուտից դուրս. մյուս սենյակում Անիսյան է աղմկում ափսեներով։

Նա ճաշեց, նստեց լուսամուտի մոտ։ Ձանձրալի՞ է, անհեթե՞թ, շարունա՞կ միևնույնը։ Նա նորից ո՞չ մի տեղ և ոչի՞նչ չի ուզում։

— Այ, նայեցե՛ք, բարին, հարևանները կատվի ճուտ են ուղարկել. պետք չէ՞ արդյոք։ Դուք երեկ հարցնում էիք,—

ասաց Անիսյան, մտածելով զվարճացնել նրան, և կատվի ճուտը դրեց նրա ծնկներին։

Օբլոմովն սկսեց շոյել կատվի ճուտին. կատվի ճուտն է՛լ է ձանձրալի։

— Զախա՜ր,— ասաց նա։

— Ի՞նչ եք կամենում,— ալարելով արձագանքեց Զախարը։

— Ես գուցե, քաղաք տեղափոխվեմ,— ասաց Օբլոմովը։

— Քաղաք որտե՞ղ։ Բնակարան չունեք։

— Վիբորգյան քաղաքամասը։

— Այդ ի՞նչ կլինի, մի ամառանոցից մյո՞ւսը պիտի տեղափոխվեք,— պատասխանեց նա։— Այնտեղի ինչի՞ն ենք կարոտ։ Միխեյ Անդրեյիչի՞ն, ի՞նչ է։

— Ախր այստեղ անհարմար է։.

— Դեռ պետք է տեղափոխվե՞նք։ Տե՛ր աստված։ Այստեղ էլ արդեն բոլորովին հալից ընկել ենք. ա՛յ, երկու գավաթ և հատակի խոզանակը չեմ կարողանում գտնել. եթե Միխեյ Անդրեյիչը չի տարել այնտեղ, ուրեմն կորել են։

Օբլոմովը լուռ էր։ Զախարը գնաց և իսկույն վերադարձավ՝ քարշ տալով իր ետևից ճամպրուկն ու ուղետոպրակը։

— Իսկ սրա՞նք ինչ անենք, գուցե ծախեիք, հը՞,— ասաց նա, ոտքով խփելով ճամպրուկին։

— Ի՞նչ ես ասում, գժվե՞լ ես։ Ես մեռ օրերս արտասահման եմ գնալու,— սրտնեղությամբ ընդհատեց Օբլոմովը։

— Արտասահմա՞ն,— հանկարծ, քմծիծաղ տալով, ասաց Զախարը։— Լավ է խոսեցինք, թե չէ՝ արտասահմա՞ն։

— Քեզ համար ի՞նչ տարօրինակ բան կա այստեղ։ Կգնամ և վերջ... Անցագիրս էլ արդեն պատրաստ է,— ասաց Օբլոմովը։

— Էհ, այնտեղ ո՞վ պիտի հանի ձեր կոշիկները,— հեգնորեն նկատեց Զախարը։— Աղախիննե՞րը, հա՞։ Ախր դուք այնտեղ առանց ինձ կկորչե՞ք։

Նա նորից քմծիծաղ տվեց, որից այտամորուսներն ու հոնքերը զանազան կողմեր գնացին։

— Դու շարունակ հիմար բանե՞ր ես ասում։ Դուրս տար սրանք և գնա՛,— սրտնեղությամբ պատասխանեց Օբլոմովը։

Հետևյալ օրը, հենց որ Օբլոմովը զարթնեց առավոտյան

ժամը իններից հետո, Զախարը, թեյ տալով նրան ասաց, որ երբ գնացել է հացագործարանը, այնտեղ պատահել է օրիորդին։

— Ի՞նչ օրիորդի,— հարցրեց Օբլոմովը։

— Ի՞նչ։ Իլյինսկայա օրիորդին, Օլգա Սերգեևնային։

— Դե՞,— անհամբերությամբ հարցրեց Օբլոմովը։

— Է՛, պատվիրեց բարևել, հարցնում էր, թե դուք առո՞ղջ եք, ի՞նչ եք անում։

— Իսկ դու ի՞նչ ասացիր։

— Ասացի, որ առողջ եք. ի՞նչ պիտի լինի նրան որ...— պատասխանեց Զախարը։

— Ինչո՞ւ ես քո հիմար դատողություններն ավելացնում,— նկատեց Օբլոմովը։— «Ի՞նչ պիտի լինի նրան որ»։ Դու ի՞նչ գիտես, թե ինչ է կատարվում ինձ հետ։ Է՛, հետո էլ ի՞նչ։

— Հարցրեց, թե երեկ որտե՞ղ եք ճաշել։

— Դե՞...

— Ես ասացի՝ տանը, և ընթրել էլ եք տանը։ «Իսկ նա մի՞թե ընթրում է»,— հարցրեց օրիորդը։— Միայն երկու ճուտ եք կերել...

— Ախ-խ-խմա՜խ,— ուժգին արտասանեց Օբլոմովը։

— Ինչի՞ ախմախ։ Մի՞թե սուտ է,— ասաց Զախարը։— Ա՛, ուզում եք ոսկորներն էլ ցույց տամ...

— Ճշմարիտ որ, ախմա՜խ,— կրկնեց Օբլոմովը։— Է՛, իսկ նա՞ ինչ ասաց։

— Քմծիծաղ տվեց։ «Ինչո՞ւ այդքան քիչ», հարեց մի քիչ հետո։

— Այ քեզ ախմա՜խ,— պնդում էր Օբլոմովը։— Պատմիր և այն, որ դու շապիկը թարս ես հագցնում ինձ։

— Չհարցրեց, դրա համար էլ չասացի,— պատասխանեց Զախարը։

— Էլ ուրիշ ի՞նչ հարցրեց։

— Հարցրեց, թե այս օրերն ի՞նչ էիք անում։

— Է՛, իսկ դո՞ւ ինչ ասացիր։

— Ասացի՝ ոչինչ չի անում, շարունակ պառկած է։

— Ա՜խ...— ուժգին սրտնեղությամբ ասաց Օբլոմովը, բռունցքները տանելով դեպի քներակները։— Դո՜ւրս կորիր,—

ավելացրեց նա սպառնալից։— Եթե դու երբևիցե համարձակվես իմ մասին այդպիսի հիմարություններ պատմել, տե՛ս, թե ի՞նչ կանեմ ես քո գլխին։ Ի՞նչ թույն է այս մարդը։

— Ի՞նչ է, ուզում եք, որ ծեր հասակումս սո՞ւտ ասեմ,— արդարանում էր Զախարը։

— Դո՛ւրս գնա,— կրկնեց Իլյա Իլյիչը։

Նախատելը Զախարի համար ոչինչ էր, միայն թե բարինը «խղճալի խոսքեր» չասեր։

— Ես ասացի, որ դուք ուզում եք Վիբորգի քաղաքամասը տեղափոխվել,— եզրափակեց Զախարը։

— Գնա՛,— հրամայաբար գոչեց Օբլոմովը։

Զախարը հեռացավ և հոգոց հանեց ամբողջ նախասենյակով մեկ, իսկ Օբլոմովը սկսեց թեյ խմել։

Նա խմեց թեյը և բուլկիների ու կրենդելների ահագին պաշարից միմիայն մի բուլկի կերավ, երկյուղ կրելով նորից Զախարի անհամեստությունից։ Այնուհետև վառեց սիգարը և նստեց սեղանի մոտ, ինչ-որ գիրք բաց արեց, մի թերթ կարդաց, ուզում էր շուտ տալ, գիրքը գուրս եկավ չկտրատված։

Օբլոմովը թերթերը պատռեց մատով. դրանից թերթերի ծայրերին ժանյակներ կազմվեցին, իսկ գիրքն ուրիշի էր, Շտոլցինը, որն այնպիսի խիստ և տաղտկալի կարգերի էր հետևում, մանավանդ գրքերի վերաբերմամբ, որ աստվա՜ծ հեռու տանի։ Թղթերը, մատիտները, բոլոր մանր-մունր բաները այնպես պիտի մնան, ինչպես որ դրել է։

Պետք էր վերցնել թերթկտրիչը, բայց չկա այն. կարելի է, իհարկե, հացի դանակ էլ պահանջել, բայց Օբլոմովը գերադասեց գիրքն իր տեղը դնել և շարժվել դեպի բազմոցը. նա նոր էր հենց հենվել ասեղնագործ բարձին, որպեսզի ավելի ճարպկորեն հարմարեցնի պառկելը, որ Զախարը ներս մտավ սենյակը։

— Բայց ախր օրիորդը խնդրեց ձեզ գնալ այն... ինչպես են ասում... օ՜ֆ...— զեկուցեց նա։

— Հապա ինչո՞ւ այն ժամանակ, երկու ժամ առաջ չասացիր,— շտապով հարցրեց Օբլոմովը։

— Պատվիրեցիք դուրս գնալ, չթողիք, որ ասեի...— առարկեց Զախարը։

— Դու ինձ կործանո՞ւմ ես, Զախա՜ր,— պաթետիկ կերպով արտասանեց Օբլոմովը։

«Ըհը, էլի սկսե՞ց իրենը»,— մտածում էր Զախարը՝ բարինի կողմը դարձնելով ձախ այտամորուսը և պատին նայելով. «ինչպես նորերս էր... մի բառ կգտնի՞»։

— Ո՞ւր գնալ,— հարցրեց Օբլոմովը։

— Ա՛յ հենց այն, ի՞նչ են ասում։ Պարտեզ է, ինչ է...

— Զբոսայգի՞ն,— հարցրեց Օբլոմովը։

— Զբոսայգին, այո՛, այո՛, «զբոսնելու, եթե ուզում եք, ես այնտեղ կլինեմ»...

— Զգեստնե՞րս բեր։

Օբլոմովը ման եկավ ամբողջ զբոսայգին, նայեց բոլոր թմբերը, տաղավարները՝ Օլգան չկար։ Նա անցավ այն ծառուղին, որտեղ բացատրություն էր տեղի ունեցել, և նրան գտավ այնտեղ, նստարանին նստած, ոչ հեռու այն տեղից, որտեղ նա պոկել էր ճյուղն ու դեն գցել։

— Ես կարծում էի, թե դուք այլևս չեք գա,— ասաց նրան Օլգան սիրալիրությամբ։

— Վաղուց է, որ ես ամբողջ զբոսայգում ձեզ եմ փընտրում,— պատասխանեց նա։

— Ես գիտեի, որ դուք կփնտրեք, և դիտմամբ այստեղ նստեցի, այս ծառուղում. մտածում էի, որ դուք անպատճառ կանցնեք այստեղով։

Օբլոմովն ուզում էր հարցնել՝ «ինչո՞ւ էիք այդպես մտածում»,— բայց նայեց նրան և չհարցրեց։

Օլգայի դեմքը փոխված էր, առաջվանը չէր, երբ նրանք զբոսնում էին այստեղ, այլ այն դեմքն էր, որով Օբլոմովը թողեց նրան վերջին անգամ և որն այնպիսի տագնապ պատճառեց նրան։ Սիրալիրությունն էլ մի տեսակ զուսպ էր, դեմքի ամբողջ արտահայտությունն այնպես կենտրոնացած, այնպես որոշակի։ Օբլոմովը տեսնում էր, որ նրա հետ կռահումներ անելով, ակնարկներով խոսելով ու միամիտ հարցեր տալով խաղ անել չի կարելի, որ այդ երեխայական, ուրախ ծկնթարթն արդեն անցած է։

Շատ բան, որ մինչև վերջն ասված չէ, որին կարելի է խորամանկ հարցով մոտենալ, նրանց միջև վճռված էր առանց

խոսքերի, առանց բացատրությունների, ասված գիտե՝ ինչպես, բայց դրան վերադառնալ այլևս չէր կարելի։

— Ի՞նչ է պատահել, որ ձեզ վաղուց է չենք տեսնում,— հարցրեց Օլգան։

Օբլոմովը լուռ էր։ Նա ուզում էր դարձյալ, մի տեսակ կողմնակի կերպով, Օլգային հասկացնել, որ նրանց հարաբերությունների գաղտնի հրապույրն արդեն անհետացել է, որ իրեն ծանրություն է պատճառում այն կենտրոնացածությունը, որով Օլգան ինչպես ամպով շրջապատել է իրեն, կարծես ամփոփվել է իր մեջ և Օբլոմովը չգիտի, թե ինչ անի, ինչպես պահի իրեն նրա հետ։

Բայց նա զգում էր, որ ամենափոքրիկ ակնարկն այդ մասին զարմանքի հայացք կառաջացնի Օլգայի մեջ, հետո կավելացնի վերաբերմունքի սառնությունը, գուցեև բոլորովին կկորչի կարեկցության այն կայծը, որ Օբլոմովն ինքն այնքան անզգույշ կերպով մարեց հենց սկզբում։ Հարկավոր է այն բորբոքել նորից, մեղմ ու զգույշ կերպով, բայց ինչպե՞ս. նա ամենևին չգիտեր։

Օբլոմովն աղոտ կերպով հասկանում էր, որ Օլգան մեծացել է և համարյա իրենից անցել, որ այսուհետև վերադարձ չկա դեպի մանկական դյուրահավատությունը, որ նրանց առջև Ռուբիկոն է և կորցրած երջանկությունն արդեն մյուս ափին է. հարկավոր է անցնել այնտեղ։

Բայց ինչպե՞ս։ Է՛, եթե Օբլոմովը մենակ անցնի՞։

Օլգան նրանից ավելի պարզ էր հասկանում, թե ինչ է կատարվում նրա մեջ, և այդ պատճառով էլ գերակշռությունը նրա կողմն էր։ Նա բաց ու արձակ կերպով նայում էր Օբլոմովի հոգու մեջ, տեսնում էր, թե ինչպես էր ծնվում զգացմունքը նրա հոգու խորքում, ինչպես էր խաղում ու դուրս ցայտում այն, տեսնում էր, որ նրա համար կանացի խորամանկությունը, նենգավորությունը, կոկետությունը,— Սոնեչկայի այդ զենքերը,— ավելորդ կլինեին, որովհետև պայքար չէր սպասվում։

Օլգան մինչև անգամ այն էլ էր տեսնում, որ, չնայելով իր ջահելությանը՝ իրեն է պատկանում առաջին և գլխավոր դերն այս համակրության մեջ, որ Օբլոմովից կարելի էր սպասել միայն խոր տպավորություն, բուռն-ծույլ հնազանդու-

թյուն, հավիտենական ներդաշնակություն Օլգայի զարկերակի ամեն մի խփոցի հետ, բայց կամքի ո՛չ մի շարժում, ո՛չ մի ակտիվ միտք։

Օլգան մի ակնթարթում կշռեց իր ունեցած իշխանությունը նրա վրա, և նրան դուր՝ էր գալիս ուղեցույց աստղի, լույսի ճառագայթի այդ դերը, լույս, որ նա կսփռեր կանգնած լճի վրա և կարտացոլեր նրա մեջ։ Նա բազմազանորեն էր տոնում իր առաջնության հաղթանակն այդ մենամարտի մեջ։

Այդ կատակերգության կամ ողբերգության մեջ, նայելով հանգամանքներին, երկու գործող անձերն էլ համարյա միշտ միատեսակ բնավորությամբ են հանդես գալիս՝ տանջողի կամ տանջող կնոջ և զոհի։

Օլգան, ինչպես ամեն մի կին առաջնություն վայելող դերի մեջ, այսինքն՝ տանջող կնոջ դերի, իհարկե, ուրիշներից ավելի քիչ և անգիտակցորեն, բայց չէր կարող իրեն զրկել նրա հետ մի քիչ կատվի նման խաղալու հաճույքից. երբեմն նրա մեջ դուրս էր ժայթքում, ինչպես կայծակ, ինչպես մի անակնկալ քմահաճույք, զգացմունքի մի շող, իսկ հետո, հանկարծ, նա նորից կկենտրոնանար, կամփոփվեր ինքն իր մեջ. բայց ավելի շատ և ամենից ավելի հաճախ նրան առաջ, ավելի հեռու էր մղում, գիտենալով, որ Օբլոմովն ինքը - ոչ մի քայլ չի անի և անշարժ կմնա այնտեղ, որտեղ Օլգան թողնի նրան։

— Դուք զբաղվա՞ծ էիք,— հարցրեց Օլգան, կարելով կանվայի ինչ-որ մի կտոր։

«Կասեի՝ զբաղված էի, բայց այդ Զախա՛րը»,— հեծեծեց նրա կրծքում։

— Այո՛, ես բան էի կարդում,— անփույթ կերպով արձագանքեց նա։

— Ի՞նչ էիք կարդում, սիրավե՞ղ,— հարցրեց նա և աչքերը բարձրացրեց, որպեսզի նայի, թե նա ինչպիսի երեսով է սուտ ասելու։

— Ոչ, ես սիրավեպ գրեթե չեմ կարդում,— պատասխանեց նա շատ հանգիստ,— ես կարդում էի «Գյուտերի և հայտնագործությունների պատմությունը»։

«Փառք աստծո, որ ես այսօր աչքի՞ անցկացրի այդ գրքից մի թերթ», մտածեց նա։

— Ռուսերե՞ն է,— հարցրեց Օլգան։

— Ո՛չ, անգլերեն է։

— Իսկ դուք անգլերեն կարդո՞ւմ եք։

— Դժվարությամբ, բայց կարդում եմ։ Իսկ դուք քաղաքում որևէ տեղ չե՞ք եղել,— հարցրեց Օբլոմովն ավելի շատ նրա համար, որ կոծկի խոսակցությունը գրքերի մասին։

— Ո՛չ, շարունակ տանն եմ։ Ես միշտ այստեղ եմ աշխատում, այս ծառուղում։

— Միշտ այստե՞ղ։

— Այո՛, ինձ շատ է դուր գալիս այս ծառուղին, ես շնորհակալ եմ ձեզնից, որ ինձ ցույց տվեցիք այն. այստեղ համարյա ոչ ոք ման չի գալիս...

— Ես չեմ ձեզ այն ցույց տվել,— ընդհատեց Օբլոմովը,— հիշո՞ւմ եք, պատահաբար երկուսս հանդիպեցինք այստեղ։

— Այո՛, իսկապես։

Նրանք լռեցին։

— Ձեր գարեհատը բոլորովին անցե՞լ է,— հարցրեց Օլգան, նայելով ուղիղ աչքին։

Օբլոմովը կարմրեց։

—Հիմա անցել է, փառք աստծո,— ասաց նա։

— Հասարակ գինով թրջոց դրեք, հենց որ աչքը քոր գա,— շարունակում էր Օլգան,— այն ժամանակ գարեհատ չի դուրս գա։ Դայակս է սովորեցրել։

«Ի՞նչ է նա շարունակ գարեհատերից խոսում», մտածեց Օբլոմովը։

— Եվ մի՛ ընթրեք,— ավելացրեց նա լրջորեն։

«Զախա՜ր,— կատաղի մի կոչ շարժվեց նրա կոկորդում Զախարին ուղղված։

— Բավական է լավ ընթրիք անեք,— շարունակում էր Օլգան՝ առանց աչքերն աշխատանքից բարձրացնելու,— և երբեք մի պառկեք, մանավանդ մեջքի վրա, անպայման գարեհատ դուրս կգա։

«Ախ...մ...մ...ա՜խ»,— որոտաց Օբլոմովի ներսում դիմումը դեպի Զախարը։

— Այդ ինչի՞ վրա եք աշխատում,— հարցրեց Օբլոմովը՝ խոսակցությունը փոխելու համար։

— Սոնետկայի,— ասաց Օլգան, բաց անելով կանվայի փաթթոցը և ցույց տալով նրան նախշը,— բարոնի համար։ Լա՞վ է։

— Այո՛, շատ լավ է, նախշը շատ սիրուն է։ Դա յասամանի ճյո՞ւղ է։

— Կարծեմ... այո՛,— անփույթ կերպով պատասխանեց Օլգան։— Ես ընտրել եմ պատահական...

Եվ մի փոքր կարմրելով՝ արագությամբ փաթաթեց կանվան։

«Սակայն ձանձրալի է, եթե այսպես շարունակվի, եթե նրանից ոչինչ կարելի չլինի դուրս բերել», մտածում էր նա, «մի ուրիշը— Շտոլցն, օրինակ, դուրս կբերեր, իսկ ես չեմ կարողանում»։

Նա մռայլվեց և քնահար շուրջը նայեց։ Օլգան նայեց նրան, հետո աշխատանքը դրեց զամբյուղի մեջ։

— Գնանք մինչև պուրակը,— ասաց Օլգան՝ նրա ձեռքը տալով զամբյուղը, ինքը բաց արեց հովանոցը, ուղղեց զգեստը և առաջ շարժվեց։— Ինչո՞ւ տխուր եք,— հարցրեց նա։

— Չգիտեմ, Օլգա Սերգեևնա։ Եվ ինչի՞ վրա ուրախանամ։ Եվ ինչպե՞ս։

— Զբաղվեցե՛ք, հաճախ եղեք մարդկանց հետ։

— Զբաղվե՞լ։ Զբաղվել կարելի է, երբ նպատակ կա։ Ես ի՞նչ նպատակ ունեմ։ Չկա նպատակ։

— Նպատակն ապրելն է։

— Երբ չգիտես, թե ինչի համար ես ապրում, ապա ապրում ես որևէ կերպ, օրեցօր, ուրախանում եմ, որ օրն անցավ, որ եկավ գիշերը և քնի մեջ ես սուզում այն տաղտկալի հարցը, թե ինչու ապրեցիր այդ օրը, ինչու պիտի ապրես վաղը։

Օլգան լսում էր լուռ, խիստ հայացքով. կիտած հոնքերի մեջ դաժանություն էր թաքնված, շրթունքների ծայրին օձի նման սողում էր ոչ այն է անվստահություն, ոչ այն է արհամարհանք...

— Ինչու ապրեցի՛ր,— կրկնեց Օլգան։— Մի՞թե կարող է որևէ մեկի գոյությունը անպետք լինել։

— Կարող է։ Օրինակ, իմը,— ասաց Օբլոմովը։

— Դուք մինչև այժմ չգիտե՞ք, թե որտեղ է ձեր կյանքի

նպատակը,— հարցրեց Օլգան՝ կանգ առնելով։— Ես չեմ հավատում, դուք զրպարտում եք ձեզ, ապա թե ոչ՝ արժանի չէիք լինի կյանքի...

— Ես արդեն անցել եմ այն տեղը, որտեղ այդ կյանքը պետք է լինի, և առջևում այլևս ոչինչ չկա։

Օբլոմովը հառաչեց, իսկ Օլգան ժպտաց։

— Ոչինչ չկա՞,—կրկնեց Օլգան հարցական ձևով, բայց աշխույժ, ուրախ, ծիծաղելով, կարծես՝ չհավատալով նրան և կանխատեսելով, որ առջևում դեռ ինչ-որ բան է սպասում նրան։

— Ծիծաղեք,— շարունակում էր նա,— բայց դա այդպե՞ս է։

Օլգան հանդարտ առաջ էր գնում, գլուխը կախ գցած։

— Ինչի՞ համար, ո՞ւմ համար պետք է ապրեմ ես,— ասում էր Օբլոմովը՝ գնալով նրա ետևից։— Ի՞նչ պետք է փնտրեմ, ինչի՞ վրա ուղղեմ միտքս, դիտավորություններս։ Կյանքի ծաղիկն արդեն թափվել է, մնացել են միայն փշերը։

Նրանք քայլում էին հանդարտ. Օլգան լսում էր ցրված, կողքից անցնելիս պոկեց յասամանի ճյուղը և, առանց նայելու, տվեց նրան։

—Ի՞նչ է սա,— հարցրեց նա՝ վարանած։

— Դուք տեսնում եք՝ ճյուղ է։

— Ի՞նչ ճյուղ,— ասում էր նա, ամբողջ ուշադրությամբ նայելով նրան։

— Յասամանի։

— Գիտեմ... բայց ի՞նչ է նշանակում սա։

— Կյանքի ծաղիկը և...

Օբլոմովը կանգ առավ, Օլգան նույնպես։

— Ե՞վ...— կրկնեց Օբլոմովը հարցականորեն։

— Իմ սրտնեղությունը,— ասաց Օլգան՝ նայելով նրան ուղիղ, կենտրոնացած հայացքով, և ժպիտն ասում էր, որ Օլգան գիտե, թե ինչ է անում։

Անթափանցիկության ամպը թռավ նրա վրայից։ Նրա հայացքը խոսուն էր և հասկանալի։ Նա կարծես դիտմամբ բաց էր արել գրքի որոշ էջը և թույլ էր տալիս կարդալու նվիրական տեղը։

— Ուրեմն, ես կարող եմ հուսալ...— հանկարծ, ուրախությունից կարմրատակելով ասաց Օբլոմովը։

— Ամե՛ն բան։ Բայց...

Օլգան լռեց։

Օբլոմովը հանկարծ վերակենդանացավ։ Եվ Օլգան, իր հերթին, չճանաչեց Օբլոմովին. աղոտ, քնկոտ դեմքը վայրկենապես պայծառացավ, աչքերը բացվեցին. այտերը գույն առան. շարժվեցին մտքերը, աչքերում փայլատակեցին ցանկությունն ու կամքը։ Օլգան նույնպես պարզորեն կարդաց դեմքի այդ մունջ խաղում, որ Օբլոմովի մեջ մի ակնթարթում հանդես եկավ կյանքի նպատակը։

— Կյանքը, կյանքը նորից բացվում է ինձ համար,— ասում էր նա, ինչպես զառանցանքի մեջ,— ահա այն, ձեր աչքերի մեջ, ժպիտի մեջ, այս ճյուղի մեջ, Casta diva-ում... ամեն ինչ այստեղ...

Օլգան տարուբերեց իր գլուխը։

— Ո՛չ, ոչ ամեն ինչ... կեսը։

— Լավագո՞ւյն կեսը։

— Թերևս,— ասաց Օլգան։

— Իսկ որտե՞ղ է մյուս կեսը։ Դրանից հետո էլ ի՞նչ։

— Որոնեցե՛ք։

— Ինչի՞ համար։

— Որպեսզի առաջին կեսը չկորցնեք,— ասաց-վերջացրեց Օլգան, ձեռքը տվեց նրան, և նրանք գնացին տուն։

Օբլոմովը մերթ հրճվանքով, մերթ գաղտագողի հայացք էր գցում նրա գլխի, իրանի, գանգուրների վրա, մեկ սեղմում էր ճյուղը։

— Այս բոլորն ի՞մն է։ Ի՞մն է,— մտախոհ պնդում էր նա և ինքն իրեն չէր հավատում։

— Դուք Վիբորգյան քաղաքամասը չե՞ք տեղափոխվի,— հարցրեց Օլգան, երբ Օբլոմովը տուն էր գնում։

Նա ծիծաղեց և Զախարին նույնիսկ ախմախ չանվանեց։

IX

Այդ օրվանից Օլգայի մեջ հանկարծական փոփոխություններ չէին լինում։ Նա հավասարակշռված էր։ Հանդարտ՝

մորաքրոջ հետ, հասարակության մեջ, բայց ապրում ու կյանքն զգում էր միմիայն Օբլոմովի հետ։ Նա այլևս ոչ ոքի չէր հարցնում, թե ինչ անի, ինչպես վարվի, մտքում Սոնեչկայի հեղինակության վրա չէր հենվում։

Կյանքի փուլերն, այսինքն զգացմունքներն իր առջև բացվելուն զուգընթաց՝ նա ուշիմ կերպով դիտում էր երևույթները, զգայուն կերպով ականջ էր դնում իր բնազդի ձայնին և թեթևակի ստուգում-համեմատում էր իր ունեցած սակավաթիվ դիտողությունների հետ, և ընթանում էր զգուշաբար; ստուգելով այն հողը, որի վրա պետք է ոտք դներ։

Մարդ էլ չկար, որից նա խորհուրդ հարցներ։ Մորաքրո՞ջը։ Բայց նա այդպիսի հարցերի վրայից այնքան հեշտությամբ ու ճարպկորեն է սահում-անցնում, որ Օլգային երբեք չէր հաջողվում նրա կարծիքները որևէ սենտենցի վերածել և հիշողության մեջ մեխել։ Շտոլցը չկար։ Օբլոմովի՞ն։ Բայց դա ինչ-որ մի Գալատեա էր, որի վերաբերյալ Օլգան ինքը պետք է Պիգմալիոն լիներ։

Օլգայի կյանքը լցվում էր այնպես հանդարտ, բոլորի համար աննկատելի կերպով, որ նա իր նոր ոլորտում ապրում էր՝ առանց ուշադրություն գրավելու, առանց շոշափելի հուզանքների ու տագնապների։ Նա նույնն էր անում բոլոր մյուսների համար, ինչ որ առաջ, բայց ամեն ինչ մի՛ կերպ էր անում։

Նա գնում էր նաև ֆրանսիական թատրոն, բայց պիեսի բովանդակությունը ինչ-որ կապ էր ձեռք բերում իր կյանքի հետ. գիրք էր կարդում, և գրքում անպայման լինում էին տողեր նրա մտքի նշույլներով, տեղ-տեղ առկայծում էր նրա զգացմունքների կրակը, գրված էին լինում երեկ ասված խոսքերը, կարծես թե հեղինակն ականջ էր դրել, թե հիմա ինչպես է բաբախում նրա սիրտը։

Անտառում նույն ծառերն էին, բայց նրանց շաչյունի մեջ հատուկ իմաստ էր հանդես գալիս. նրանց և Օլգայի միջև կենդանի համաձայնություն էր կայանում։ Թռչունները ո՛չ թե պարզապես ծլվլում են ու ճռվողում, այլ շարունակ ինչ-որ բան են խոսում միմյանց հետ. և շուրջն ամեն ինչ խոսում է, ամեն ինչ համապատասխանում է նրա տրամադրությանը։

ծաղիկը բացվում է և ինքը կարծես զգում է նրա շնչառությունը։

Երազների մեջ էլ երևան եկավ իր կյանքը. նրանք լցվեցին ինչ-որ տեսիլներով, պատկերներով, որոնց հետ նա երբեմն խոսում էր բարձրաձայն... նրանք ինչ-որ բան են պատմում նրան, բայց այնքան աղոտ, որ նա չի հասկանում, ջանք է գործ դնում խոսելու նրանց հետ, հարցնելու, և նույնպես խոսում է ինչ-որ անհասկանալի մի բան։ Միայն Կատյան առավոտները կասի, որ նա զառանցում էր։

Նա հիշեց Շտոլցի նախազգուշակումները. նա հաճախ ասում էր Օլգային, թե դեռ չի սկսել ապրել և Օլգան երբեմն վիրավորվում էր, թե ինչու է նա իրեն փոքրիկ աղջկա տեղ դնում, քանի որ ինքն արդեն քսան տարեկան է։ Բայց հիմա նա հասկացավ, որ Շտոլցն իրավացի էր, որ ինքը նոր միայն սկսել է ապրել։

— Ա՜յ, երբ կբացվեն բոլոր ուժերը ձեր օրգանիզմում, այն ժամանակ կբացվի նաև կյանքը ձեր շուրջը, և դուք կըտեսնեք այն, որի համար ձեր աչքերն այժմ փակ են, կլսեք այն, ինչ հիմա չեք կարող լսել. կհնչի նյարդերի երաժշտությունը, կլսեք ոլորտների աղմուկը, ականջ կդնեք խոտի աճմանը։ Համբերեցե՛ք, մի՛ շտապեք, ինքն իրե՛ն կգա,— սպառնում էր նա։

Եվ այն եկավ։

— Երևի, բացվել են ուժերը, օրգանիզմը զարթնել է... — ասում է Օլգան Շտոլցի բառերով, զգայունորեն ականջ դնելով չտեսնված սարսուռին, աշալրջությամբ ու վեհերոտությամբ դիտելով արթնացող նոր ուժի յուրաքանչյուր նոր դրսևորումը։

Նա երազկոտության մեջ չէր ընկնում, չէր հպատակվում տերևների հանկարծական սարսուռին, գիշերային տեսիլներին, խորհրդավոր շշնջոցին, երբ կարծես թե մեկը գիշերով կռանում է նրա ականջին և ինչ-որ անորոշ ու անհասկանալի բան է ասում։

— Նյարդե՛ր,— կրկնում էր նա երբեմն ժպտալով, արտասվելով, հազիվ հաղթահարելով սարսափն ու դիմանալով արթնացող ուժերի դեմ դեռ չամրապնդված նյարդերի պայքարին։

Օլգան վեր կկենար անկողնից, մի բաժակ ջուր կխմեր, բաց կաներ լուսամուտը, թաշկինակով հով կաներ դեմքին և կսթափվեր իրական ու երազական ցնորքներից։

Իսկ Օբլոմովը, հենց որ զարթնում էր առավոտյան, առաջին պատկերը երևակայության մեջ Օլգան էր ամբողջ հասակով, յասամանի ճյուղը ձեռքին։ Նա քնում էր մտածելով Օլգայի մասին, գնում էր զբոսնելու, կարդում էր՝ Օլգան միշտ նրա առջևն էր։

Նա մտքում անվերջ խոսակցություն էր ունենում Օլգայի հետ թե՛ ցերեկը, թե՛ գիշերը։ Գյուտերի և Հայտնագործությունների Պատմությանը նա շարունակ խառնում էր որևէ նոր հայտնագործում Օլգայի արտաքինի կամ բնավորության մեջ, ուրիշ էր հնարում անակնկալ հանդիպելու նրա հետ, գիրք ուղարկելու, սյուրպրիզ անելու։

Խոսելով Օլգայի հետ տեսակցության ժամանակ՝ նա գրույցը շարունակում էր տանը, այնպես որ երբեմն կմտներ Զախարը, իսկ նա չափազանց քնքուշ ու մեղմ տոնով, ինչպես որ մտքում էր խոսում Օլգայի հետ, կասեր նրան.

— Դո՛ւ, ճաղատ սատանա, նորերս ինձ դարձյալ չմաքրված կոշիկներ տվիր. տե՛ս, որ քո հախից չգամ...

Բայց անհոգությունը հենց այն րոպեից թողեց նրան, երբ Օլգան առաջին անգամ երգեց նրա համար։ Նա արդեն առաջվա կյանքով չէր ապրում, երբ միևնույն էր, պառկել արդյոք մեջքի վրա և պատին նայել, նստած է արդյոք նրա մոտ Ալեքսեևը, թե ինքն է նստած Իվան Գերասիմովիչի մոտ, այն օրերին, երբ նա ոչ ոքի և ոչինչ չէր սպասում ո՛չ ցերեկվանից, ոչ էլ գիշերվանից։

Հիմա թե՛ ցերեկը, թե՛ գիշերը, առավոտյան և երեկոյան ամեն մի ժամը իր կերպարանքն էր ստանում և կամ լցված էր լինում ծիածանի փայլով, կամ անգույն ու մռայլ էր լինում, նայած թե այդ ժամը լցվում էր Օլգայի ներկայությա՞մբ, թե առանց նրա էր անց կենում և, հետևաբար, անց էր կենում թարշամած ու տաղտկալի։

Այս ամենն արտացոլվում էր Օբլոմովի էության մեջ. նրա գլխում կար ամենօրյա, ամեն րոպեի կշռադատություններ, ենթադրություններ, կանխատեսություններ, անհայտության տվայտանքների մի ցանց, և այդ ամենն այն

հարցերի պատճառով, թե այսօր նա կտեսնի՞, թե չի տեսնի Օլգային։ Ի՞նչ կասի կամ կանի Օլգան։ Ինչպե՞ս կնայի, ի՞նչ հանձնարարություն կանի իրեն, ինչի՞ մասին կհարցնի, գո՞հ կլինի, թե ոչ։ Այս բոլոր կշռադատությունները նրա կյանքի կենսական հարցերը դարձան։

«Ա՜խ, եթե կարելի լիներ զգալ միայն սիրո այս ջերմությունը և չզգալ նրա տագնապնե՞րը»— երազում էր նա։ «Ո՛չ, կյանքը հուզում է մարդու, ուր էլ գնաս՝ այրո՞ւմ է։ Որքա՞ն նոր շարժում, զբաղմունքնե՞ր հանկարծ խցկվեցին նրա մեջ։ Սերը կյանքի ամենադժվար դպրո՞ցն է»։

Նա արդեն կարդացել է մի քանի գիրք. Օլգան խնդրեց նրան բովանդակությունը պատմել և անհավատալի համբերությամբ լսում էր նրա պատմածը։ Նա մի քանի նամակ գրեց գյուղ, փոխեց ստարոստային և հարաբերության մեջ մտավ հարևաններից մեկի հետ՝ Շտոլցի միջոցով։ Նա նույնիսկ գյուղ էլ գնացած կլիներ, եթե հնարավոր համարեր Օլգայից հեռանալ։

Նա ընթրիք չէր անում և ահա արդեն երկու շաբաթ է՝ չգիտի, թե ինչ է նշանակում ցերեկները պառկել։

Երկու-երեք շաբաթում նրանք շրջեցին Պետերբուրգի ամբողջ շրջակայքը։ Մորաքույրն Օլգայի հետ, բարոնն ու Օբլոմովը գնում էին քաղաքի ծայրամասերում տրվող համերգները, մեծ տոնակատարություններին։ Խոսք էին գցում Ֆինլանդիա գնալու, Իմատրան տեսնելու մասին։

Ինչ վերաբերում է Օբլոմովին, նա զբոսայգուց այն կողմ ամենևին չէր գնա, բայց Օլգան շարունակ հնարում էր, և հենց որ նա որևէ տեղ գնալու հրավերին պատասխանը կմկմացնում էր, զբոսանքն անպատճառ իրագործվում էր։ Եվ այն ժամանակ Օլգայի ժպիտներին վերջ չէր լինում։ Ամառանոցի շուրջ հինգ վերստ տարածությամբ մի բլրակ չէր մնացել, որի վրա Օբլոմովը մի քանի անգամ բարձրացած չլիներ։

Մինչ այս մինչ այն, նրանց փոխադարձ համակրությունն աճում էր, զարգանում ու երևան գալիս իր անսասան օրենքների համաձայն։ Օլգան ծաղկում էր զգացմունքի հետ միասին։ Աչքերում ավելացել էր շողը, շարժումների մեջ՝ նա-

զելիությունը, նրա կուրծքն այնպես փարթամ զարգացել էր, այնպես համաչափ ալեկոծվում էր։

— Դու գեղեցկացել ես ամառանոցում, Օլգա,— ասում էր նրան մորաքույրը։ Բարոնի ժպիտի մեջ էլ արտահայտվում էր նույն հաճոյախոսությունը։

Օլգան, կարմրատակելով, գլուխը դնում էր մորաքրոջ ուսին. սա փաղաքշանքով շփում էր նրա այտը։

— Օ՛լգա, Օ՛լգա,— զգուշությամբ, համարյա շշնջալով, կանչեց մի անգամ Օբլոմովն Օլգային սարի ներքևում, որտեղ Օլգան ժամադիր էր եղել հանդիպելու, որպեսզի զբոսնելու գնան։

Պատասխան չկա։ Օբլոմովը նայեց ժամացույցին։

— Օ՛լգա Սերգեևնա,— հետո ավելացրեց նա բարձր։

Լռություն։

Օլգան նստած էր սարի գլխին, լսում էր կանչը և, ծիծաղը զսպելով, լռում էր։ Նա ուզում էր Օբլոմովին ստիպել, որ սարը բարձրանա։

— Օ՛լգա Սերգեևնա,— կանչում էր նա, թփերի միջից անցնելով լեռան կեսը և դեպի վերև նայելով։ «Նա ժամադիր եղավ հինգ և կեսին»— ասում էր նա ինքն իրեն։

— Օ՛լգա՛, Օ՛լգա՛։ Ա՜խ, դուք այդտե՛ղ եք,— ասաց նա և բարձրացավ սարը։

— Օ՜ֆ։ Ի՜նչ հաճույք է թաքնվել սարի կատարին։— Նա նստեց Օլգայի կողքին.— ինձ շարշարելու համար դուք ինքներդ էլ եք շարշարվում։

— Որտեղի՞ց եք գալիս։ Ուղիղ տնի՞ց,— հարցրեց Օլգան։

— Ոչ, ես ձեր տուն մտա. այնտեղ ասացին, որ դուք գնացել եք։

— Այսօր ի՞նչ եք արել,— հարցրեց Օլգան։

— Այսօր...

— Կովել եք Զախարի հետ,— վերջացրեց նա։

Օբլոմովը ծիծաղեց դրա վրա իբրև մի բոլորովին անկարելի բանի վրա։

— Ո՛չ, ես կարդում էի Revue-ն։ Բայց, լսեցե՛ք, Օ՛լգա...

Բայց նա ոչինչ չասաց, միայն նստեց Օլգայի կողքին և խորասուզվեց նրա պրոֆիլի. գլխի, ձեռքի հետ ու առաջ

շարժվելու հայեցողության մեջ, ինչպես՝ էր նա ասեղնանցկացնում կանվայի մեջ և հանում։ Նա սևեռել էր իր հայացքն Օլգայի վրա, որպես կիզապակի, և չէր կարողանում աչքերն հեռացնել նրանից։

Օբլոմովն ինքը չէր շարժվում, միայն նրա հայացքն էր շուռ գալիս մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ, մերթ ներքև, նայելով, թե ինչպես էր շարժվում ձեռքը։ Նրա մեջ գործուն աշխատանք կար՝ արյան ուժեղ շրջանառություն, զարկերակի կրկնակի խփոց և եռում՝ սրտի մեջ. այս ամենն այնքան ուժեղ էր ներգործում, որ նա դանդաղ ու ծանր էր շնչում, ինչպես շնչում են մահապատժից առաջ և հոգու բարձրագույն գրգռանքի պահին։

Նա համր էր և չէր կարողանում նույնիսկ շարժվել, միայն խանդաղատանքից խոնավ աչքերը անվանելիորեն սևեռված էին Օլգայի վրա։

Օլգան ժամանակ առ ժամանակ նրա վրա խոր հայացք էր նետում, կարդում էր նրա դեմքին գծագրված անխորհրդավոր միտքը և մտածում. «Աստվա՜ծ իմ։ Ինչպե՜ս սիրում է նա։ Ինչպե՜ս քնքուշ է նա, ինչպե՜ս քնքուշ»։ Եվ հրճվում էր, հպարտանում էր այդ՝ ի՜ր իսկ ուժով իր ոտքերն ընկած՝ մարդով։

Սիմվոլիկ ակնարկների, նշանակալից ժպիտների, յասամանի ճյուղերի պահն անցել էր անվերադարձ կերպով։ Սերը դառնում էր ավելի խիստ, ավելի պահանջկոտ, սկսում էր ինչ-որ պարտականություն դառնալ. երևան եկան փոխադարձ իրավունքները։ Երկու կողմերն էլ ավելի ու ավելի էին բացվում։* Թյուրիմացությունները, կասկածներն անհետացան կամ տեղի տվին ավելի պարզ և դրական հարցերի առաջ։

Օլգան շարունակ խոցում էր նրան թեթև սարկազմներով պարապ մեռցրած տարիների համար, դաժան դատավճիռ էր կարդում, նրա ապատիան ավելի խոր, ավելի ներգործուն կերպով էր մահապատժում, քան Շտոլցը. ապա, նրա հետ մերձենալուն զուգընթաց, Օբլոմովի ալարկոտ, թուլամորթ գոյության վերաբերյալ սարկազմներից Օլգան անցավ կամքի բռնակալական արտահայտմանը, համարձակորեն հիշեցնում էր նրան կյանքի ու պարտականությունների նպատակը և խստորեն պահանջում էր շարժում, անընդհատ դուրս

էր քաշում նրա միտքը, մերթ խճճելով նրան մի նուրբ, կենսական, իրեն ծանոթ հարցի մեջ, մերթ հենց ինքն էր գնում Օբլոմովի մոտ որևէ մութ, իր համար անմատչելի հարցով։

Եվ Օբլոմովը շարշարվում էր, գլուխ էր կոտրում, ելք էր որոնում, որպեսզի Օլգայի աչքերում իր գինը ծանրապես չկորցնի կամ որպեսզի օգնի նրան պարզաբանելու որևէ հանգույց, կամ թե չէ՝ հերոսաբար կտրի այն։

Օլգայի ամբողջ կանացի տակտիկան տոգորված էր քընքուշ համակրությամբ. նրա մտքի շարժումներին հասնելու Օբլոմովի բոլոր ձգտումները կիրք էին շնչում։

Բայց ավելի հաճախ նա ուժասպառ էր լինում, պառկում էր Օլգայի ոտքերի մոտ, ձեռքը դնում էր սրտին ու լսում, թե ինչպես է բաբախում այն, առանց Օլգայից հեռացնելու իր անշարժ, զարմացած, զմայլված հայացքը։

«Ինչպե՞ս սիրում է նա ինձ»— կրկնում էր Օլգան այդպիսի բոպեներին՝ սքանչանալով նրանով։ Իսկ եթե երբեմն նա նկատում էր Օբլոմովի հոգում նախկին թաքնված գծերը,— իսկ Օլգան գիտեր խոր նայել նրա հոգու մեջ,— ամենաչնչին հոգնածություն, կյանքի հազիվ նկատելի թմրածություն, Օբլոմովի գլխին թափվում էին կշտամբանքներ, որոնց երբեմն խառնվում էր զղջման դառնությունը, սխալված լինելու երկյուղը։

Երբեմն նա հենց կպատրաստվեր հորանջելու, բայց կաներ բերանը, Օլգայի զարմացած հայացքը կհարվածեր նրան. նա իսկույնևեթ կփակեր բերանը, այնպես որ ատամներն իրար կառնեին։ Օլգան հետապնդում էր քնկոտության ամենաչնչին ստվերն անգամ նրա դեմքին։ Նա հարցնում էր ո՞չ միայն այն, թե նա ի՞նչ է անում, այլև ի՞նչ է անելու։

Կշտամբանքներից է՛լ ավելի ուժգին նրա մեջ արթնանում էր զգաստությունը, երբ նկատում էր, որ իր հոգնածությունից հոգնում է նաև Օլգան, դառնում է անփույթ, սառը։ Այդ ժամանակ նրա մեջ երևան էր գալիս կյանքի, ուժերի, գործունեության տենդը, և ստվերն անհետանում էր նորից, և համակրանքը դարձյալ հորդում էր ուժեղ ու հստակ աղբյուրի նման։

Բայց այդ բոլոր հոգսերն առայժմ դուրս չէին գալիս օբլոմոգական շրջանակից. Օբլոմովի գործունեությունը բացասական էր. նա չի քնում, կարդում է՛, երբեմն մտմտում է պլանն էլ գրել, շատ ման է գալիս ոտքով, ձիով։ Իսկ հետագա ուղղությունը, կյանքի բուն իմաստը, գործը մնում են դեռ որպես մտադրություններ։

— Էլ ի՞նչ կյանք ու գործունեություն է ուզում Անդրեյը,— ասում էր Օբլոմովը՝ ճաշից հետո աչքերը չռելով, որպեսզի չքնի։— Մի՞թե սա կյանք չէ։ Մի՞թե սերը ծառայություն չէ։ Թող մի փորձե՛ր նա։ Ամեն օր՝ տասական վերստ ոտքո՛վ։ Երեկ քնել եմ քաղաքում, անպետք պանդոկում, շորերս հագիս, միայն կոշիկներս եմ հանել, Զախարն էլ չկար. այս բոլորը Օլգայի հանձնարարությունների՛ շնորհիվ։

Ամենից ավելի տանջալից էր նրա համար, երբ Օլգան մասնագիտական հարց էր տալիս և պահանջում լիակատար բավարարում, կարծես նա պրոֆեսոր լիներ. իսկ այդ բանը նա հաճախ էր անում, ոչ ամենևին պեդանտությունից, այլ պարզապես ցանկանալով իմանալ, թե բանն ինչ է։ Նա մինչև անգամ հաճախ մոռանում էր իր նպատակներն Օբլոմովի վերաբերյալ և տարվում էր բուն հարցով։

— Ինչո՞ւ մեզ բանը չեն սովորեցնում,— մտախոհ սքանչեղությամբ ասում էր Օլգան, երբեմն ագահությամբ, ընդհատումներով, լսելով խոսակցություն մի որևէ բանի մասին, որ սովորել չէին կնոջ համար անպետք համարել։

Մի անգամ Օլգան հանկարծ նրան հարցեր տվեց կրիկնակի աստղերի մասին. նա անզգուշություն ունեցավ Հերշելին վկայակոչելու, և ուղարկվեց քաղաք, ստիպված եղավ կարդալ գիրքը և Օլգային պատմել, մինչև որ նա բավարարվեց։

Մի ուրիշ անգամ, դարձյալ անզգուշությունից, նա բարոնի հետ խոսելիս՝ բերանից մի երկու խոսք թռցրեց կերպարվեստի դպրոցների մասին. նորից մի շաբաթվա աշխատանք ստացվեց նրա համար՝ կարդալ, պատմել. դրանից հետո էլ դեռ էրմիտաժ գնացին, և նա այնտեղ ստիպված էր կարդացածը գործով էլ հաստատել։

Եթե նա մի բան ասեր առանց մտածելու, Օլգան իսկույն կնկատեր այդ և էլ օձիքը բաց չէր թողնի։

Հետո նա ստիպված եղավ մոտ մի շաբաթ խանութներն

ընկնել, լավագույն նկարներից պատրաստած փորագրություններ փնտրելու համար։

Խեղճ Օբլոմովը մերթ հին բաներն էր կրկնում, մերթ վազում էր գրախանութները՝ նոր երկեր գտնելու և ամբողջ գիշեր չէր քնում, փորփրում էր, կարդում էր, որպեսզի առավոտյան, իբր թե պատահմամբ, երեկվա հարցին պատասխանի հիշողության արխիվից հանած գիտությամբ։

Օլգան այդ հարցերն առաջարկում էր ո՛չ թե կանացի ցրվածությամբ, ո՛չ թե այս կամ այն բանն իմանալու բոպեական քմահաճույքի ներշնչմամբ, այլ համառորեն, անհամբերությամբ, և Օբլոմովի լռելու դեպքում նրան պատժում էր երկարատև, քննող հայացքով։ Ինչպե՞ս դողում էր նա այդ հայացքից։

— Ինչու՞ ոչինչ չեք ասում, լռում եք,— հարցրեց Օլգան։— Կարելի է կարծել, որ ձեզ համար տաղտկալի է։

— Ա՜խ,— արտասանեց նա, կարծես ուշաթափությունից ուշքի գալով։— Ինչպե՞ս սիրում եմ ձեզ։

— Իսկապե՞ս։ Բայց եթե ես չհարցնեմ, կարծես նման բան չլինի էլ,— ասաց Օլգան։

— Մի՞թե դուք չեք զգում, թե ի՞նչ է կատարվում իմ մեջ,— սկսեց նա։— Գիտեք, ինձ համար մինչև իսկ ծանր է խոսելը։ Ահա այստեղ... տվեք ձեր ձեռքը, ինչ-որ բան խանգարում է, կարծես մի ծանր բան է ընկած, քարի նման, ինչպես լինում է խոր վշտի ժամանակ, մինչդեռ տարօրինակ է, թե՛ վշտի և թե՛ երջանկության ժամանակ օրգանիզմում միևնույն պրոցեսն է կատարվում. շնչելը ծանր է, որթեթ ցավագին, մարդ ուզում է լա՛ց լինել։ Եթե լաց լինեի, իսկապես վշտի ժամանակ՝ արտասուքներից ինձ թեթև կզգայի...

Օլգան լուռ նայեց, կարծես ստուգում էր նրա խոսքերը, համեմատում այն բանի հետ, ինչ գրված է նրա դեմքին և ժպտաց. ստուգումը բավարար դուրս եկավ։ Օլգայի դեմքը լցված էր երջանկության շնչով, բայց անդորր երջանկության, որը թվում էր, թե ոչնչով չես կարող վրդովել։ Երևում էր, որ նրա սրտի վրա ծանրություն չկար, այլ նա իրեն միայն լավ էր զգում, ինչպես լավ էր բնության մեջ այդ խաղաղ առավոտյան։

— Ի՞նչ է պատահել ինձ,— մտախոհ կերպով կարծես ինքն իրեն հարցրեց Օբլոմովը։

— Ասե՞մ՝ ինչ։

— Ասացե՛ք։

— Դուք սիրահարված եք։

— Այո՛, իհարկե,— հաստատեց նա՝ ետ քաշելով Օլգայի ձեռքը կանվայից, և չհամբերեց, այլ միայն երկար սեղմեց նրա մատները շրթունքներին և, կարծես թե, տրամադիր էր երկար այդպես պահել։

Օլգան փորձեց հանդարտ կերպով ձեռքը ետ քաշել, բայց նա ամուր բռնել էր։

— Դե՛հ, բաց թողեք, բավական է,— ասաց Օլգան։

— Իսկ դո՞ւք,— հարցրեց նա։— Դուք... սիրահարված չե՞ք...

— Սիրահարված՝ ո՛չ... ես այդ չեմ սիրում. ես սիրո՞ւմ եմ ձեզ,— ասաց նա և նայեց նրան երկար, կարծես՝ ստուգում էր նաև իրեն, թե իրո՞ք սիրում է։

— Սի...րո՞ւմ եմ,— արտասանեց Օբլոմովը։— Բայց ախր կարելի է սիրել մորը, հորը, դայակին, նույնիսկ շնիկին. այդ բոլորը ամփոփվում է «սիրում եմ» ընդհանուր, հավաքական հասկացողությամբ, որպես հին...

— Խալաթո՞վ,— ասաց նա ծաղրանքով։— A propos, որտեղ է ձեր խալաթը։

— Ի՞նչ խալաթ։ Ես ոչ մի խալաթ չեմ ունեցել։

Օլգան կշտամբանքի ժպիտով նրան նայեց։

— Այ, դուք հին խալաթի մասին եք խոսում,— ասաց Օբլոմովը։— Ես սպասում եմ, հոգիս մարել է անհամբերությունից լսելու, թե ինչպես է ձեր սրտից դուրս ցայտում զգացմունքը, ինչ անունով եք դուք կոչում այդ հուզանքները, իսկ դուք... տերը ձեզ հետ, Օ՛լգա։ Այո՛, ես սիրահարված եմ ձեզ և ասում եմ, որ առանց դրա ուղղակի սեր էլ չկա. ո՛չ հորը, ո՛չ մորը ո՛չ դայակին չեն սիրահարվում, այլ նրանց սիրում են։

— Չգիտեմ,— ասում էր Օլգան մտախոհ, կարծես թափանցելով ինքն իր մեջ և աշխատելով ըմբռնել, թե ի՞նչ է կատարվում իր մեջ։— Չգիտեմ, սիրահարված եմ արդյոք ձեզ. եթե

Ոչ, ապա, գուցե, բոպեն դեռ չի հասել. միայն մի բան գիտեմ, որ ես այսպես չեմ սիրել ո՛չ հորս, ո՛չ մորս, ո՛չ դայակին...

— Ի՞նչ տարբերություն կա։ Դուք որևէ առանձին բա՞ն եք զգում,— փորփրում էր նա։

— Իսկ դուք ուզո՞ւմ եք իմանալ,— հարցրեց Օլգան նենգորեն։

— Այո՛, այո՛, այո՛։ Մի՞թե դուք կարիք չեք զգում արտահայտվելու։

— Իսկ ինչո՞ւ եք ուզում իմանալ։

— Որպեսզի ամեն բոպե դրանով ապրեմ. այսօր ամբողջ գիշերը, վաղը, մինչև նոր տեսակցություն... ես միայն դրանով էլ ապրում եմ։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, ձեզ հարկավոր է ամեն օր նորոգել ձեր քնքշության պաշարը։ Ահա որտեղ է տարբերությունը սիրահարվածի և սիրողի միջև։ Ես...

— Դո՞ւք...— անհամբերությամբ սպասում էր նա։

— Ես այլ կերպ եմ սիրում,— ասաց Օլգան՝ մեջքը հենելով նստարանին և աչքերը հածելով սլացող ամպերի մեջ։— Ինձ համար առանց ձեզ տաղտկալի է. ձեզնից կարճ ժամանակով բաժանվել՝ ափսոսում եմ, երկար ժամանակով բաժանվելը ցավ է պատճառում։ Ես մի անգամ ընդմիշտ իմացա, տեսա և հավատում եմ, որ դուք ինձ սիրում եք, և ես երջանիկ եմ, թեկուզև երբեք չկրկնեք, թե սիրում եք ինձ։ Ավելի շատ և ավելի լավ սիրել ես չեմ կարող։

«Դրանք... կարծես Կորդելիայի խոսքերն են», մտածեց Օբլոմովը՝ կրքոտ նայելով Օլգային...

— Եթե դուք... մեռնեք,— կմկմալով շարունակեց նա,— ես ընդմիշտ սգավոր զգեստ կհագնեմ ձեր պատճառով և այլևս երբեք չեմ ժպտա կյանքում։ Եթե ուրիշին սիրեք, չեմ տրտնջա, չեմ նզովի, այլ ինքս իմ մեջ ձեզ երջանկություն կցանկանամ... Ինձ համար սերը, միևնույն է, թե... կյանքը։ իսկ կյանքը...

Օլգան արտահայտություն էր որոնում։

— Իսկ ի՞նչ է կյանքը, ձեր կարծիքով,— հարցրեց Օբլոմովը։

— Կյանքը՝ պարտք, պարտականություն, հետևաբար՝ սերը նույնպես պարտք է. կարծես աստված է ուղարկել ինձ այն,—

ավարտեց նա՝ աչքերն ուղղելով դեպի երկինք,— և հրամայել է սիրել։

— Կորդե՛լիա,— բարձր արտասանեց Օբլոմովը։— Եվ նա քսանմե՛կ տարեկան է։ Ահա թե ի՞նչ է սերը, ձեր կարծիքով,— ավելացրեց նա մտախոհ։

— Այո՛, և թվում է, թե ես ուժ կունենամ ապրելու և սիրելու ամբողջ կյանքումս...

«Ո՞վ է ներշնչել նրան այդ բանը», մտածում էր Օբլոմովը՝ գրեթե երկյուղածությամբ նայելով նրան։ «Նա հո փորձի, տվայտանքների, հրո ու ծխի շնորհիվ չի հասել կյանքի և սիրո այդ պարզ ու հասարակ հասկացողությանը»։

— Իսկ կա՞ կենդանի ուրախություն, կա՞ն կրքեր,— խոսեց Օբլոմովը։

— Չգիտեմ,— ասաց Օլգան,— ես չեմ զգացել և չեմ հասկանում, թե ի՞նչ բան է այդ։

— Օ՜, ինչպե՜ս հասկանում եմ ես հիմա։

— Գուցե, ես էլ ժամանակին կզգամ, գուցե, ես էլ կունենամ այն հուզանքները, ինչ որ դուք ունեք, ես էլ ձեզ հանդիպելիս այդպես կնայեմ ձեզ, և չեմ հավատա, թե իրոք դուք եք իմ առջև... Իսկ պետք է, որ շա՜տ ծիծաղելի լինի,— ուրախ-ուրախ ավելացրեց նա։— Ի՞նչ հայացքներ եք նետում դուք երբեմն. ես կարծում եմ՝ ma tante-ը նկատում է։

— Իսկ ինչի՞ մեջ է ձեզ համար սիրո երջանկությունը,— հարցրեց Օբլոմովը,— եթե չունեք այն կենդանի բերկրանքները, որ ես եմ զգում...

— Ինչի՞ մեջ։ Ա՛յ թե ինչի մեջ,— ասում էր Օլգան՝ մատնանշելով նրան, իրեն, իրենց շրջապատող միայնությունը։— Մի՞թե երջանկությունը չէ, մի՞թե ես երբևիցե այսպես ապրել եմ։ Առաջ ես այստեղ քառորդ ժամ էլ մենակ չէի նստի այս ծառերի մեջ առանց գրքի, առանց երաժշտության։ Խոսել տղամարդու հետ, բացի Անդրեյ Իվանիչից, ինձ համար ձանձրալի էր, ես նյութ չէի գտնում. շարունակ մտածում էի, թե ինչպես անեմ, որ մենակ մնամ... Իսկ հիմա... երկու հոգով լռե՛լն էլ է ուրախ։

Օլգան աչք ածեց շուրջը, ծառերին, կանաչին, հետո հայացքն ուղղեց նրան, ժպտաց և ձեռքը տվեց նրան։

— Մի՞թե ինձ արդեն ցավ չի պատճառի, երբ դուք գնաք,—

ավելացրեց Օլգան։— Մի՞թե ես չեմ շուտպի շուտով պատկել, որպեսզի քնեմ և տաղտկալի գիշերը չտեսնեմ։ Մի՞թե վաղն առավոտյան ձեզ մոտ չեմ ուղարկի։ Մի՞թե...

Յուրաքանչյուր «միթե»-ի հետ Օբլոմովի դեմքը բացվում էր, հայացքը լցվում էր ճառագայթներով։

— Այո՛, այո՛,— կրկնում էր Օբլոմովը,— ես էլ եմ առավոտյան սպասում, ինձ համար էլ տաղտկալի է գիշերը, ես էլ վաղը կուղարկեմ ձեզ մոտ ո՛չ թե գործի համար, այլ որպեսզի միայն մի ավելորդ անգամ էլ արտասանեմ և լսեմ, թե ինչպես է հնչում ձեր անունը, մարդկանցից որևէ մանրամասնություն իմանամ ձեր մասին, նախանձեմ, որ նրանք արդեն տեսել են ձեզ... Մենք մտածում, սպասում և ապրում ենք միատեսակ և միևնույն հույսերն ունենք։ Ներեցե՛ք, Օլգա, իմ կասկածները. ես համոզվում եմ, որ դուք սիրում եք ինձ այնպես, ինչպես չեք սիրել ո՛չ ձեր հորը, ո՛չ մորաքրոջը, ո՛չ...

— Ոչ էլ շնիկին,— ասաց Օլգան և ծիծաղեց։

— Հավատացեք ինձ,— եղրափակեց Օլգան,— ինչպես ե՛ս եմ ձեզ հավատում, և մի՛ կասկածեք, դատարկ կասկածներով մի՛ խռովեք այս երջանկությունը, ապա թե ոչ՝ այն կթռչի։ Ինչ որ ես մի անգամ իմն եմ անվանել, այն այլևս ետ չեմ տա, եթե չխլեն ինձնից։ Ես այդ գիտեմ, վնաս չունի, որ երիտասարդ եմ, բայց... Գիտե՞ք արդյոք,— ասաց նա վստահ ձայնով,— մի ամսվա մեջ, այն օրվանից, որ ձեզ ճանաչում եմ, շատ բաների մասին եմ մտածել ու շատ բաներ զգացել, կարծես մի մեծ գիրք կարդացած լինեմ, այնպես, ինքն ինձ, հետզհետե... դե մի՛ կասկածեք...

— Չեմ կարող չկասկածել,— ընդհատեց Օբլոմովը,— մի՛ պահանջեք այդ։ Հիմա, ձեր ներկայությամբ, ես ամեն բանում վստահ եմ. ձեր հայացքը, ձայնը, ամեն ինչ ասում է։ Դուք այնպես եք նայում ինձ, կարծես խոսում եք. ինձ բառեր հարկավոր չեն, ես կարողանում եմ ձեր հայացքները կարդալ։ Բայց երբ դուք չկաք, սկսվում է կասկածների, հարցերի այնպիսի՞ մի տանջալից խաղ, և ես նորից պետք եմ զգում ձեր մոտ վազելու, նորից նայելու ձեզ, առանց դրա չեմ հավատում։ Ի՞նչ բան է սա։

— Իսկ ես ձեզ հավատում եմ, ինչի՞ց է,— հարցրեց Օլգան։

—Եվ ինչպե՞ս կարող էիք չհավատալ։ Ձեր առջև է կրքով վարակված մի խելագա՞ր։ Ես կարծում եմ, իմ աչքերում դուք տեսնում եք ձեզ, ինչպես հայելում։ Բացի այդ, դուք քսան տարեկան եք. մի ձեզ նայեցեք. կարո՞ղ է տղամարդը, հանդիպելով ձեզ, հիացմունքի տուրք չվճարել ձեզ... թեկուզ հայացքով։ Իսկ ճանաչել ձեզ, լսել, երկար ժամանակ նայել ձեզ, սիրել՝ օ՜, այստեղ արդեն կարելի է խելագարվե՛լ։ Իսկ դուք այնպես միակերպ եք, հանդարտ. և եթե մի օր, երկու օր անցնի, և ես չլսեմ ձեզնից «սիրում եմ...», այստեղ տագնապ է սկսվում...

Օբլոմովը ցույց տվեց սիրտը։

— Սիրում եմ. սիրում եմ. ահա ձեզ երեք օրվա պաշա՞ր,— ասաց Օլգան՝ վեր կենալով նստարանից։

— Դուք շարունակ կատակ եք անում, իսկ իմ վիճակն ի՞նչ է,— հառաչելով նկատեց նա՝ Օլգայի հետ միասին իջնելով սարից։

Այսպես նրանց միջև շարունակ միևնույն մոտիվն էր նվագվում՝ բազմազան վարիացիաներով։ Տեսակցություններ, խոսակցություններ, այս բոլորը մի երգ, մի հնչյուն էր, մի լույս էր, որ վառվում էր պայծառ, և միայն ճառագայթները բեկվում ու կոտորակվում էին վարդագույն, կանաչ, հարդագույն ճառագայթների և թրթռում էին իրենց շրջապատող մթնոլորտում։ Յուրաքանչյուր օրն ու ժամը նոր հնչյուններ ու ճառագայթներ էր բերում, բայց մի լույս էր վառվում, մոտիվը միևնույնն էր հնչում։

Թե՛ Օբլոմովը, թե՛ Օլգան ականջ էին դնում այդ հնչյուններին՝ որսալով նրանց, և շտապում էին միմյանց մոտ երգել այն, ինչ նրանցից յուրաքանչյուրը լսում էր, առանց կասկածելու, որ վաղն ուրիշ հնչյուններ կհնչեն, ուրիշ ճառագայթներ երևան կգան, և հետևյալ օրը, մոռանալով, որ երեկ ուրիշ երգեցողություն էր։

Օլգան սրտի զեղումները պատկերում էր այն ներկերով, որով վառվում էր նրա երևակայությունը ներկա պահին, և հավատում էր, որ նրանք հավատարիմ են բնությանը, և շտապում էր, անմեղ ու անգիտակցական կոկետությամբ, հիանալի զարդարանքով երևալ իր բարեկամի աչքերին։

Օբլոմովն է՛լ ավելի էր հավատում այդ կախարդական

հնչյուններին, հմայիչ լույսին և շտապում էր Օլգայի առաջ կանգնել կրքի ամբողջ սպառազինությամբ, ցույց տալ նրան այն կրկնակի ամբողջ փայլն ու ամբողջ ուժը, որ լափում էր նրա հոգին։

Նրանք չէին ստում ո՛չ իրենց առաջ, ո՛չ միմյանց առաջ, նրանք արտահայտում էին այն, ինչ ասում էր սիրտը, իսկ սրտի ձայնն անցնում էր երևակայության միջով։

Ըստ էության՝ Օբլոմովի հոգը չէր, թե Օլգան Կորդելիա էր հանդիսանում արդյոք և հավատարիմ էր մնում այդ պատկերին, թե ուրիշ շավղով կընթանար և մի այլ տեսիլի կփոխարկվեր, միայն թե նա երևան գար այն ներկերով ու ճառագայթներով, որոնցով նա ապրում էր Օբլոմովի սրտում, միայն թե Օբլոմովն իրեն լավ զգար։

Եվ Օլգան էլ չէր հարցնում՝ արդյոք նրա կրքոտ բարեկամը կբարձրացնի նրա ձեռնոցը, եթե նա գցի առյուծի բերանը, նրա համար իրեն անդունդը կնետի՞ արդյոք, միայն թե տեսնի այդ կրքի հայտանիշերը, միայն թե Օբլոմովը հավատարիմ մնա տղամարդու իդեալին, և այն էլ այն տղամարդու, որ Օլգայի միջոցով է արթնացել կյանքի համար, միայն թե Օլգայի հայացքի ճառագայթից, նրա ժպիտից. Օբլոմովի մեջ վառվի կայտառության կրակը և նա չդադարեր Օլգայի մեջ տեսնել կյանքի նպատակը։

Եվ այդ պատճառով էլ՝ Կորդելիայի գծագրվող պատկերում, Օբլոմովի կրքի կրակում, արտացոլեց սիրո միայն մի ակնթարթ, մի վաղանցիկ շունչ, նրա մի առավոտը, մի քմահաճ նախշը։ Իսկ վաղը, վաղը կփայլի արդեն մի ուրիշը, գուցե, նույնքան հիանալի, բայց այնուամենայնիվ ուրիշը։

X

Օբլոմովը մի դրության մեջ էր, ինչ այն մարդը, որը հենց նոր աչքերով ճանապարհ է դնում մայր մտնող ամառային արեգակին և հրճվում նրա կարմիր նշույլներով, հայացքը չհեռացնելով վերջալույսից, ետ չշրջվելով դեպի այն կողմը, որտեղից գիշերն է գալիս, մտածելով միայն տաքության և լույսի վաղվան վերադարձի մասին։

Նա պառկած էր մեջքի վրա և հրճվում էր երեկվա տեսակցության վերջին նշույլներով։ «Սիրում եմ, սիրում եմ, սիրում

եմ», դեռ դողում էր նրա ականջներում Օլգայի ամեն տեսակ երգեցողությունից էլ լավ. նրա վրա դեռ հանգչում էին Օլգայի խոր հայացքի վերջին ճառագայթները։ Նա կարդում-լրացնում էր նրա իմաստը, որոշում Օլգայի սիրո աստիճանը և հենց այն է՝ ուզում էր քնի մեջ ընկղմվել, երբ հանկարծ...

Հետևյալ առավոտյան Օբլոմովը վեր կացավ դժգույն ու մռայլ, դեմքին՝ անքնության հետքեր. ճակատն ամբողջովին խորշոմապատված. աչքերում կրակ չկա, ցանկություններ չկան։ Հպարտությունը, ուրախ, աշխույժ հայացքը, զբաղված մարդու շարժումների չափավոր, գիտակցական հապճեպությունը— ամեն ինչ կորել էր։

Նա ալարելով թեյ խմեց, ոչ մի գրքի ձեռք չտվեց, սեղանի մոտ չնստեց, մտախոհ ծխեց սիգարը և նստեց բազմոցին։ Առաջները նա կպառկեր, բայց այժմ այլևս սովոր չէր և բարձը նույնիսկ չէր ձգում նրան. բայց և այնպես նա արմունկը հենեց բարձին, մի հատկանիշ, որ ակնարկում էր նրա նախկին հակումները։

Նա մռայլ էր, երբեմն հառաչում էր, հանկարծ թոթվում էր ուսերը, մորմոքված շարժում գլուխը։

Ինչ-որ բան սաստիկ աշխատում է նրա մեջ, բայց ոչ սերը։ Օլգայի պատկերը նրա առջև է, բայց այդ պատկերը, կարծես, սավառնում է հեռվում, մշուշի մեջ, անճառագայթ, որպես Օբլոմովի համար օտար մի բան. նա նայում է այդ պատկերին հիվանդագին հայացքով և հառաչում է։

«Ապրիր, ինչպես աստված է հրամայում, և ոչ թե ինչպես դու ես ուզում. իմաստուն կանոն է, բայց...»

Եվ նա մտքերի մեջ ընկավ։

«Այո՛, չի կարելի այնպես ապրել, ինչպես ուզում ես, դա պարզ է», սկսեց նրա մեջ խոսել ինչ-որ մռայլ, ըմբոստ ձայն, «կընկնես այնպիսի հակասությունների քաոսի մեջ, որոնցից ելք չի գտնի լոկ մարդկային միտքը, որքան էլ այն խո՛ր, որքան էլ հանդո՛ւգն լինի»։ Երեկ ցանկացար, այսօր ձեռք ես բերում ցանկացածդ կրքով, ուժասպառության հասնելով, իսկ վաղը չէ մյուս օրը կարմրում ես, ցանկանում էիր, հետո նզովում ես կյանքդ, թե ինչու կատարվեց,— ահա թե ի՛նչ է դուրս գալիս կյանքում ինքնուրույն ու հանդուգն կերպով քայլելուց, քմահաճ ուզում եմ-ից։ Պետք է գնալ խարխափելով, շատ

բաների վերաբերյալ աչք փակել և չդառանցել երջանկությունից, չհամարձակվել տրտնջալ, որ ձեռքիցդ գնում է այն,— ահա՜ կյանքը։ Ո՞վ է հնարել, որ կյանքը երջանկություն է, հաճույք։ Անմիտնե՜ր։ «Կյանքը կյանք է, պարտք», ասում է Օլգան, «պարտականություն, իսկ պարտականությունը ծանր է լինում։ Ուրեմն, կատարեք պարտքը»...

Նա հառաչեց։

— Ջտեննվել Օլգայի հետ... աստվա՜ծ իմ։ Դու բաց արիր իմ աչքերը և ցույց տվիր պարտքը,— ասում էր նա երկնքին նայելով,— բայց որտեղի՞ց ուժ ստանանք։ Բաժանվե՜լ։ Հիմա դեռ հնարավորություն կա, թեպետև ցավելով, բայց դրա փոխարեն հետո քեզ չես նզովի. թե ինչո՞ւ չբաժանվեցիր։ Իսկ Օլգայի մոտից իսկույն մարդ կգա, նա ուզում էր ուղարկել... Նա չի սպասում...

Պատճառն ի՞նչ էր։ Ի՞նչ քամի էր փչել հանկարծ Օբլոմովի վրա։ Ի՞նչ ամպեր էր կուտակել։ Եվ ինչո՞ւ է նա այդքան տխուր լուծ վերցնում։ Իսկ թվում է, դեռ երեկ նա նայում էր Օլգայի հոգու մեջ և այնտեղ տեսնում լուսավոր աշխարհ ու լուսավոր բախտ, կարդում էր իր և նրա հորոսկոպը։ Ի՞նչ էր պատահել։

Երևի, նա ընթրիք էր արել կամ պառկել էր մեջքի վրա, և բանաստեղծական տրամադրությունը տեղի էր տվել ինչ-որ սարսափների առաջ։

Հաճախ է պատահում ամռանը քնել խաղաղ, անամպ երեկոյին, երբ աստղերը շողշողում են, մտածել, թե վաղն ինչքա՞ն գեղեցիկ կլինի դաշտը՝ առավոտյան պայծառ գույների ժամանակ։ Որքա՞ն ուրախալի կլինի խորանալ անտառի թավուտը և թաքնվել շոգից... Եվ հանկարծ՝ զարթնում ես անձրևի թխկթխկոցից, գորշ մռայլ ամպերից. ցուրտ է, խոնավ...

Օբլոմովն, ըստ սովորության, երեկոյից ականջ էր դնում իր սրտի բաբախմանը, այնուհետև ձեռքերով շոշափեց այն, ստուգեց, արդյոք մեծացե՞լ է կարծրացածությունն այնտեղ, վերջապես, խորասուզվեց իր երջանկության վերլուծության մեջ և հանկարծ պատահեց մի կաթիլ դառնության ու թունավորվեց։

Թույնը ներգործեց ուժգնորեն և արագությամբ։ Նա մտքով

անցկացրեց իր ամբողջ կյանքը. հարյուրերորդ անգամ զննումն ու ուշացած ափսոսանքն անցյալի վերաբերյալ պատում էին նրա սիրտը։ Նա պատկերացրեց, թե ինչ կլիներ ինքն այժմ, եթե ժրությամբ առաջ գնար, ինչպես ավելի լրիվ ու բազմակողմանի կերպով կապրեր, եթե գործունյա լիներ, և անցավ այն հարցին, թե ի՞նչ է ինքն այժմ և ինչպե՞ս կարող էր, ինչպե՞ս կարող է սիրել նրան Օլգան և ինչի՞ համար։

Սխալ չէ՞ արդյոք սա. հանկարծ անցավ նրա մտքով, կայծակի նման, և այդ կայծակն ընկավ ուղիղ սրտի մեջ ու խորտակեց նրան։ Նա տնքաց։ «Սխա՜լ է։ Այո՛... այ թե ինչ»,— պտտվում էր նրա գլխում։

«Սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ,», հանկարծ նորից հնչեց նրա հիշողության մեջ, և սիրտն սկսեց ջերմանալ, բայց հանկարծ նորից սառեց։ Եվ ի՞նչ է Օլգայի այդ եռակի «սիրում եմ»-ը։ Նրա աչքերի պատրանքը, դեռևս պարապ սրտի նենգավոր շշնջոցը. ո՛չ թե սերը, այլ միայն սիրո նախազգացո՜ւմը։

Այդ ձայնը երբևիցե կհնչի, բայց այնպես ուժգին կհնչի, այնպիսի ակորդով կորոտա, որ ամբողջ աշխա՜րհը կցնցվի։ Կիմանա թե՛ մորաքույրը, թե՛ բարոնը, և հեռու՛ կտարածվի այդ ձայնի դղրդոցը։ Այն զգացմունքն այնպես հանդարտ չի առաջ գնա, ինչպես առվակը, թաքնվելով խոտերի մեջ, հազիվ լսելի խոխոջյունով։

Օլգան այժմ սիրում է այնպես, ինչպես կարում է կանվայի վրա. հանգիստ, ծուլորեն ստացվում է նախշը, Օլգան է՛լ ավելի ծուլորեն բաց է անում այն, հրճվում է, հետո ցած կգնի ու կմոռանա։ Այո՛, դա միայն նախապատրաստությունն է, փորձ է սիրո համար, իսկ Օբլոմովն այն սուբյեկտն է, որ առաջինը հանդիպեց, փորձի համար մի քիչ տանելի, պատահմամբ...

Չէ՞ որ պատահմունքը հանդիպեցրեց ու մերձեցրեց նրանց։ Օլգան նրան չէր էլ նկատի. Շտոլցը մատնացույց արեց նրան, վարակեց ջահել, դյուրազգաց սիրտն իր ցավակցությամբ, երևան եկավ կարեկցություն դեպի նրա դրությունը, ինքնահաճ հոգացողություն՝ թափ տալու քունը ծույլ հոգուց, ապաքելու նրան։

— Ա՜յ թե ինչ,— սարսափով ասում էր Օբլոմովը, վեր

կենալով անկողնից և դողդոջուն ձեռքով վառելով մոմը։— Ուրիշ ոչի՞չ չկա այստեղ և չի՞ եղել։ Օլգան պատրաստ էր սեր չնդունելու, նրա սիրուն սպասում էր երբազգացորեն, և անակնկալ կերպով պատահեց Օբլոմովը, սխալմամբ մեջ ընկավ.— Մեկ ուրիշը լոկ երևա, Օլգան սարսափո՞վ կսթափվի սխալից։ Այն ժամանակ ինչպե՞ս կնայի նա Օբլոմովին, ինչպե՞ս երեսը շուռ կտա... սոսկալի՞ է։ Ես հափշտակում եմ ուրիշի՞նը։ Ես գո՞ղ եմ։ Ի՞նչ եմ անում ես, ի՞նչ եմ անում ես։ Որքա՞ն կուրացել եմ, աստվա՞ծ իմ։

Օբլոմովը հայելու մեջ նայեց. դժգույն է, դեղնած, աչքերը մութ են։ Նա հիշեց այն երիտասարդ երշանիկ մարդկանց, խոնավ, մտախոհ, բայց ուժեղ ու խոր հայացքով, ինչպիսին Օլգան ունի, թրթռացող կայծն աչքերում, հաղթության վստահության ժպիտով, այնպիսի ժիր քայլվածքով, պարզահնչուն ձայնով։ Եվ Օբլոմովն այդ օրին կհասնի՞, երբ նրանցից մեկը երևան կգա. Օլգան հանկարծ կբռնկվի, կնայի նրա, Օբլոմովի վրա, և կհոհոա՞։

Նա նորից նայեց հայելու մեջ։

— Այսպիսիներին չե՞ն սիրում,— ասաց նա։

Հետո պառկեց և երեսը դեմ արեց բարձին։

— Մնաս բարով, Օլգա՛, բախտավոր եղիր,— եզրափակեց նա։

— Զախա՞ր,— ձայն տվեց նա առավոտյան։— Թե Իլյինսկայաներից մարդ գա իմ ետևից, ասա՛, որ տանը չեմ, քաղաք եմ գնացել։

— Լսում եմ։

«Ախ... ո՛չ, ավելի լավ է՝ նամակ գրեմ Օլգային»,— ասաց նա ինքն իրեն, «ապա թե ոչ՝ վայրենի բան կթվա նրան, որ ես հանկարծ անհետացա։ Բացատրությունն անհրաժեշտ է»։

Նա նստեց սեղանի մոտ և սկսեց գրել արագ, եռանդով, տենդային հապճեպով, ոչ այնպես, ինչպես մայիսի սկզբին գրում էր տանտիրոջը։ Ոչ մի անգամ երկու որը (который) և երկու որ (что) բառերի մոտիկ ու անախորժ հանդիպում տեղի չունեցավ։

«Ձեզ համար տարօրինակ է, Օլգա Սերգեևնա (գրում էր նա), իմ փոխարեն այս նամակն ստանալ, երբ մենք այնպես հաճախ տեսնվում ենք։ Կարդացեք մինչև վերջ և դուք կտեսնեք,

որ ես այլ կերպ վարվել չեմ կարող։ Հարկավոր էր հենց այս նամակից սկսել. այն ժամանակ մենք երկուսս էլ ազատված կլինեինք խղճի առաջիկա բազմաթիվ կշտամբանքներից. բայց այժմ էլ ուշ չէ։ Մենք սիրեցինք իրար այնքան անսպասելի, այնքան արագ, կարծես երկուսս էլ հանկարծ հիվանդացանք, և այդ բանը խանգարեց ինձ ավելի սթափվելու։ Բացի այդ՝ նայելով ձեզ, ամբողջ ժամերով լսելով ձեզ, ո՞վ կցանկանար հոժարակամ կերպով ծանր պարտականություն վերցնել իր վրա՝ զգաստանալ սքանչացումից։ Որտեղի՞ց կարող ես ամեն վայրկյան աշխուժություն և կամքի ուժ հավաքել, որ ամեն թեքության առաջ կանգ առնես ու նրա լանջով վայր չգլորվես։ Եվ ես ամեն օր մտածում էի՝ «Այլևս չեմ հրապուրվի, կանգ կառնեմ, ինձնից է կախված» և հրապուրվեցի, և այժմ վրա է հասնում պայքարը, որի մեջ ես ձեր օգնությունն եմ պահանջում։ Ես միայն այսօր, այս գիշեր, հասկացա, թե ինչպես արագ են սահում իմ ոտքերը, միայն երեկ հաջողվեց ինձ ավելի խոր նայել այն անդունդի մեջ, ուր ես ընկնում եմ, և ես վճռեցի կանգ առնել։

«Ես խոսում եմ միայն իմ մասին ո՛չ թե եսասիրությունից, այլ այն պատճառով, որ երբ պառկած կլինեմ այդ անդունդի հատակին, դուք կշարունակեք բարձր թռչել, որպես մաքուր հրեշտակ. և ես չգիտեմ՝ կկամենա՞ք արդյոք մի հայացք գցել այնտեղ։ Լսե՛ք, առանց որևէ ակնարկի՝ կասեմ ուղղակի և պարզ կերպով. դուք ինձ չեք սիրում և չեք կարող սիրել։ Լսեք իմ փորձառությանը և անպայման հավատացեք։ Չէ՞ որ իմ սիրտը դադարել է սկսել բարախել. ասենք՝ բարախել է կեղծ կենդանի, անտեղի, բայց հենց դա ինձ սովորեցրեց տարբերել նրա կանոնավոր բարախումը պատահականից։ Ձեզ չի կարելի, բայց ինձ կարելի է գիտենալ և ես պետք է գիտենամ, թե որտեղ է ճշմարտությունը, որտեղ մոլորությունը, և ինձ վրա պարտականություն է ընկնում նախազգուշացնել նրան, ով դեռ չի կարողացել իմանալ այդ։ Եվ ահա ես նախազգուշացնում եմ ձեզ. դուք մոլորության մեջ եք, նայեք ձեր շո՛ւրջը։

«Քանի դեռ սերը մեր մեջ երևան էր գալիս թեթև, ժպտացող տեսիլքի կերպարանքով, քանի այն հնչում էր Casta diva-ի մեջ, օրանում յասամանի ճյուղի բույրի մեջ, շարտահայտված կարեկցության, ամոթխած հայացքի մեջ, ես նրան

չէի վստահում, այն ընդունում էի որպես երևակայության խաղ և ինքնասիրության շշնջոց։ Բայց չարաճճիություններն անցան, ես սիրո հիվանդություն ստացա, զգացի կրքի ախտանիշերը. դուք դարձաք մտախոհ, լուրջ. ինձ նվիրեցիք ձեր պարապ ժամերը. ձեր նյարդերը խոսեցին. դուք սկսեցիք հուզմունքի մեջ ընկնել և այդ ժամանակ, այսինքն այժմ միայն, ես վախեցա և զգացի, որ ինձ վրա պարտականություն է ընկնում՝ կանգ առնել և ասել, թե ի՞նչ է սա։

«Ես ձեզ ասացի, թե սիրում եմ ձեզ, դուք պատասխանեցիք նույնը. լսո՞ւմ եք, արդյոք, թե ինչպիսի անհերդաշնակություն է հնչում դրա մեջ։ Չե՞ք լսում։ Ուրեմն հետո կլսեք, երբ ես անդունդում կլինեմ։ Նայեցեք ինձ, մտասուզվեք իմ գոյությանն մեջ. կարելի՞ է, որ դուք ինձ սիրեք, սիրո՞ւմ եք, արդյոք, դուք ինձ։ «Սիրու՞մ եմ, սիրու՞մ եմ, սիրու՞մ եմ»— ասացիք դուք երեկ։ Ո՞չ, ո՞չ, ո՞չ, հաստատուն կերպով պատասխանում եմ ես։

«Դուք ինձ չեք սիրում, բայց դուք չեք ստում, շտապում եմ ավելացնել, չեք խաբում ինձ. դուք չեք կարող այդ ասել, երբ ձեր մեջ խոսում է ոչը։ Ես ուզում եմ միայն ապացուցել ձեզ, որ ձեր այժմյան «սիրում եմ»-ը ներկա սերը չէ, այլ ապագա. դա միայն սիրելու անգիտակցական պահանջն է, որը, իսկական սննդի պակասության պատճառով, կրակի բացակայության պատճառով, այրվում է կեղծ, չջերմացնող լույսով, արտահայտվում է կանանց մոտ երբեմն փաղաքշանքի մեջ դեպի երեխան, դեպի մի այլ կին, նույնիսկ պարզապես արտասուքների ու հիստերիկ նվաղումների մեջ։ Ես պետք է հենց սկզբից խստորեն ասեի ձեզ. «Դուք չսխալվել եք, ձեր առաջ նա չէ, որին դուք սպասում էիք, որի մասին երազում էիք։ Սպասեք, նա կգա, և այն ժամանակ կսթափվեք. դուք կսրտնեղեք և կամաչեք ձեր սխալի համար, իսկ ինձ այդ սրտնեղությունն ու ամոթը ցավ կպատճառեն»— ահա թե ի՞նչ պետք է ասեի ես ձեզ, եթե բնությունից Ոտքով ավելի խորաթափանց և հոգով ավելի արի լինեի, եթե, վերջապես, ավելի անկեղծ լինեի... Ես ասում էլ էի, բայց հիշո՞ւմ եք, ինչպես, վախենալով, որ դուք չհավատաք, որ դա տեղի չունենա. ես առաջուց ասում էի այն ամենը, ի՞նչ որ կարող են հետո ուրիշներն ասել, որպեսզի նախապատրաստեմ ձեզ լսելու և չհավատալու, իսկ ինքս շտապում էի տեսնվել ձեզ հետ և մտածում էի «մի ժամանակ պետք է մի ուրիշը գա, իսկ ես առայժմ երջանիկ եմ»։ Ահա այն, հրապուրվելու և կրքերի տրամաբանությունը։

«Այժմ արդեն ես այլ կերպ եմ մտածում։ Իսկ ի՞նչ կլինի, երբ ես կապվեմ նրա հետ, երբ տեսնվելը ո՞չ թե կյանքի շռայլություն դառնա, այլ անհրաժեշտություն, երբ սերը մեխվի սրտի մեջ (իզուր չէ, որ ես այնտեղ կարծրացածություն եմ զգում)։ Այն ժամանակ ինչպե՞ս պոկվեմ։ Կկարողանա՞մ արդյոք հաղթահարել այս ցավը։ Վատ կլինի իմ դրությունը։ Ես հիմա էլ չեմ կարող առանց սարսափի մտածել այդ մասին։ Եթե դուք ավելի փորձված, ավելի մեծ լինեիք, այն ժամանակ ես կօրհնեի իմ երջանկությունը և ընդմիշտ ձեռքս ձեզ կտայի։ Թե չէ...

«Ինչո՞ւ եմ գրում։ Ինչո՞ւ չեկա ուղղակի ինքս ասելու, որ ձեզ հետ տեսնվելու ցանկությունն օրեցօր աճում է, իսկ տեսնվել պետք չէ։ Արդյունք կունենայի՞ այդ բանն ասելու ձեր երեսին, ինքներդ դատեցեք։ Օրբեմն ուզում էլ եմ դրա նման մի բան ասել, բայց բոլորովին ուրիշ բան եմ ասում։ Գուցե, ձեր դեմքի վրա՝ արտահայտվեր տխրություն (եթե ճիշտ է, որ ձեզ համար տաղտկալի չէր ինձ հետ լինելը), կամ դուք, չհասկանալով իմ բարի մտադրությունները, վիրավորվեիք. ո՞չ մեկին և ո՞չ մյուսին ես դիմանալ չեմ կարող, դարձյալ կասեմ ոչ այն, ինչ պետք է և ազնիվ մտադրություններս հօդս կցնդեն ու կվերջանան հետևյալ օրը տեսնվելու պայմանով։ Այժմ, առանց ձեզ բոլորովին այն չէ. ձեր աչքերը, բարի, սիրունիկ դեմքը չկան իմ առջև. թուղթը հանգուրժում է ու լռում, և ես գրում եմ հանգիստ (ստում եմ)— մենք այլևս չենք տեսնվի (չեմ ստում)։

«Ուրիշը կավելացներ՝ գրում եմ և արցունք եմ թափում, բայց ես ձեր առաջ չեմ կոտրատվում, չեմ հարդարվում իմ վշտի մեջ, որովհետև չեմ ուզում ուժեղացնել ցավը, բորբոքել ափսոսանքը, տրտմությունը։ Այդ բոլոր հարդարանքը սովորաբար թաքցնում է զգացմունքի հողի վրա ավելի խոր արմատներ գցելու դիտավորություն, իսկ ես ուզում եմ նրա սաղմերը ոչնչացնել թե՛ ձեր և թե՛ իմ մեջ։ Բացի այդ՝ լաց լինելն էլ սաղ կգար կամ գայթակղիչներին, որոնք ջանք են

գործ դնում ֆրազներով ոլսալու կնոջ անզգույշ ինքնասիրություններ, կամ նվաղկոտ երազներին։ Ես սա ասում եմ հրաժեշտ տալով, ինչպես հրաժեշտ են տալիս լավ բարեկամին՝ հեռավոր ճանապարհ ուղարկելով նրան։ Մի երեք շաբաթ, մի ամիս հետո ուշ կլիներ, դժվար կլիներ. սերն անհավատալի առաջադիմություններ է անում, դա հոգեկան փտախտ է։ Ես հիմա էլ արդեն ոչ մի բանի նման չեմ, ժամերն ու վարկյանները չեմ հաշվում, չգիտեմ արևի ծագումն ու մայր մտնելը, այլ համարում եմ— տեսել եմ՝ չեմ տեսել, կտեսնեմ՝ չեմ տեսնի, եկավ՝ չեկավ, կգա... Այս բոլորը սաղդական է երիտասարդությանը, որը հեշտությամբ է տանում թե՛ հաճելի և թե՛ անախորժ հուզմունքները. իսկ ինձ սաղդական է անդորրը, թեկուզև տաղտկալի, քնկոտ անդորրը, բայց այն ինձ ծանոթ է. իսկ փոթորիկներից ես գլուխ չեմ հանի։

«Շատերը կզարմանային իմ վարմունքի վրա. ինչո՞ւ է դախչում՝ կասեն. ուրիշները կծիծաղեն ինձ վրա. թերևս, ես էլ սիրտ կանեմ։ Եթե ես արդեն սիրտ եմ անում ձեզ հետ շտեսնվել, նշանակում է՝ սիրտ եմ անում ամեն բանի։

«Իմ խորին անձկության մեջ մի փոքր մխիթարվում եմ նրանով, որ մեր կյանքը այս կարճատև միջադեպը իմ մեջ ընդմիշտ մի այնպիսի մաքուր, այնպիսի անուշաբույր հիշողություն կթողնի, որ միայն սա բավական կլինի, որպեսզի չթաղվեմ հոգուս նախկին քնի մեջ, իսկ ձեզ, առանց վնաս հասցնելու, որպես զեկավարություն կծառայի ապագա, նորմալ կյանքում։ Մնաք բարով, հրեշտա՜կ, թռեք շուտով, ինչպես վախեցած թռչնիկն է թռչում այն ճյուղից, որի վրա նստել էր սխալմամբ, թռեք նույնքան հեշտությամբ, արիությամբ և ուրախ, ինչպես նա, այն ճյուղից, որի վրա նստել էիք պատահմամբ»։

Օբլոմովը գրում էր ոգևորված. գրիչը թռչում էր էջերի վրայով։ Աչքերը փայլում էին, այտերը վառվում։ Նամակը դուրս եկավ երկար, ինչպես բոլոր սիրային նամակները. սիրահարները սոսկալի շատախոս են լինում։

«Տարօրինյա՜կ է։ Ինձ համար այլևս տաղտկալի չէ՞, ծանր չէ՞»,— մտածում էր նա։ «Ես համարյա երջանիկ եմ... Ինչի՞ց է սա։ Երևի, նրանից է, որ հոգուս բեռը թափեցի նամակի մեջ»։

Նա նորից կարդաց նամակը, ծռարեց և կնքեց։

— Զախա՛ր,— ասաց նա։— Երբ մարդ գա, այս նամակը տուր՝ տանեն օրիորդին։

— Լսում եմ,— ասաց Զախարը։

Օբլոմովն իրոք որ համարյա ուրախ տրամադրության մեջ ընկավ։ Նա ոտքերով նստեց բազմոցի վրա և նույնիսկ հարցրեց՝ նախաճաշելու համար մի բան չկա՞։ Երկու ձու կերավ և վառեց սիգարը։ Նրա սիրտն էլ, գլուխն էլ լցված էին. նա ապրում էր։ Նա պատկերացնում էր իրեն, թե ինչպես Օլգան կնստանա նամակը, ինչպես կզարմանա, ինչպիսի դեմք կընդունի, երբ կարդա նամակը։ Ի՞նչ կլինի հետո...

Նա հրճվում էր այդ օրվա հեռանկարով, դրության նորությամբ... Նա, սիրտը մարելով, ականջ էր դնում դռան թխկոցին, արդյոք մարդ չի՞ եկել, արդյոք Օլգան արդեն չի՞ կարդում նամակը... Ո՛չ, նախասենյակում հանգիստ է։

«Ի՞նչ կարող է նշանակել դա,— անհանգստությամբ մտածում էր նա։ «Ոչ ոք չի եկել. այդ ինչպե՞ս»։

Հենց այստեղ էլ գաղտնի մի ձայն շշնջում էր նրան. «Ինչո՞ւ ես անհանգստանում։ Չէ՞ որ քեզ հենց այդ է հարկավոր, որ ոչ ոք չգա, որ հարաբերություններդ խզես»։ Բայց նա խլացնում էր այդ ձայնը։

Կես ժամից հետո Զախարին կանչել տվեց բակից, որտեղ նա նստած էր կառապանի հետ։

— Ոչ ոք չի՞ եկել,— հարցրեց նա։— Մարդ չեկա՞վ։

— Եկան,— պատասխանեց Զախարը։

— Իսկ դու ի՞նչ ասացիր։

— Ասացի, որ դուք տանը չեք, իբր թե քաղաք եք գնացել։

Օբլոմովն աչքերը չռեց նրա վրա։

— Ինչո՞ւ ասացիր այդ,— հարցրեց նա։— Ես ի՞նչ պատվիրեցի քեզ անել, երբ մարդ գա։

— Դե մարդ չի եկել, աղախինն էր,— անվրդով սառնասրտությամբ պատասխանեց Զախարը։

— Իսկ նամակը տվի՞ր։

— Ամենևին, չէ՞ որ դուք նախ պատվիրեցիք ասել, որ տանը չեք, իսկ հետո տալ նամակը։ Ա՛յ, հենց որ մարդ գա, կտամ։

— Ո՛չ, ո՛չ, դու... Մարդասպա՞ն ես։ Որտե՞ղ է նամակը։ Տո՛ւր այստեղ,— ասաց Օբլոմովը։

Զախարը բերեց նամակը, որ արդեն բավական կեղտոտված էր։

— Ձեռքերդ լվա՛, տե՛ս,— չարացած ասաց Օբլոմովը, ցույց տալով բիծը։

— Իմ ձեռքերը մաքուր են,— պատասխանեց Զախարը՝ մի կողմ նայելով։

— Անի՛սյա, Անի՛սյա,— գոչեց Օբլոմովը։

Անիսյան նախասենյակից կիսով չափ ներս եկավ։

— Տե՛ս, ի՞նչ է անում Զախարը,— գանգատվեց նա Անիսյային։— Ա՛յ, ա՛ռ նամակը և տո՛ւր ծառային կամ աղախնին, որ գալու լինի Իլյինսկայաներից, թող տան օրիորդին, լսեցի՞ք։

— Լսեցի, պարոն։ Շնորհ արեք, կտամ։

Բայց հենց որ նա նախասենյակ դուրս եկավ, Զախարը նամակը խլեց ձեռքից։

— Գնա՛, գնա՛,— բղավեց նա,— քո կենկա գործի՞դ կաց։

Շուտով կրկին եկավ աղախինը։ Զախարն սկսեց դուռը բաց անել նրա համար, իսկ Անիսյան ուզեց մոտենալ նրան, բայց Զախարը կատաղորեն նայեց նրան։

— Դո՞ւ ինչ ես ուզում այստեղ,— հարցրեց նա խռպոտ ձայնով։

— Ես եկա միայն լսելու, թե դու ինչպես ես...

— Դե՛, դե՛, դե՛,— որոտաց նա, վրա բերելով արմունկը։— Տե՛ղդ գնա։

Անիսյան քմծիծաղ տվեց և գնաց, բայց մյուս սենյակի ճեղքից նայում էր, թե Զախարն ա՞յն կանի՞, ինչ որ պատվիրեց բարինը։

Իլյա Իլյիչը, լսելով աղմուկը, ինքը դուրս թռավ։

— Ի՞նչ կա, կա՛տյա,— հարցրեց նա։

— Օրիորդը պատվիրեց հարցնել, թե ո՞ւր եք գնացել։ Իսկ դուք չե՞ք գնացել, տա՞նն եք։ Վազեմ՝ ասեմ,— ասաց նա և ուզում էր գնալ։

— Ես տանն եմ։ Այդ սա է շարունակ սուտ խոսում,— ասաց Օբլոմովը։— Առ այս նամակը տուր օրիորդին։

— Լսում եմ, կտա՛մ։

— Որտե՞ղ է այժմ օրիորդը։

— Նա գնաց գյուղամիջով, պատվիրեց ասել, որ եթե դուք գիրքը վերջացրել եք, շնորհ բերեք պարտեզ ժամը մեկից անց։

Աղախինը գնաց։

«Ո՛չ, չեմ գնա... ինչո՞ւ զրգռեմ զգացմունքս, երբ ամեն ինչ պետք է վերջանա...», մտածում էր Օբլոմովը՝ ուղղվելով դեպի գյուղը։

Նա հեռվից տեսավ, թե ինչպես էր Օլգան դեպի սարը բարձրանում, ինչպես Կատյան հասավ նրա ետևից և տվեց նամակը. տեսավ, թե ինչպես Օլգան մի բոպե կանգ առավ, նամակին նայեց, մտածեց, հետո գլխով արեց Կատյային և մտավ զբոսայգու ծառուղին։

Օբլոմովը շրջանց կատարեց սարի կողքով, մյուս ծայրից մտավ նույն ծառուղին և հասնելով մեջտեղը, նստեց խոտի մեջ թփերի արանքում, և սպասում էր։

«Օլգան անց կկենա այստեղից», մտածում էր նա, «ես միայն աննկատելի կերպով կնայեմ, թե ի՞նչ է անում նա, և ընդմիշտ կհեռանամ»։

Նա մարող սրտով սպասում էր Օլգայի քայլերին։ Ո՛չ, հանգիստ է։ Բնությունն ապրում էր գործուն կյանքով. շուրջը եռում էր անտեսանելի, մանր աշխատանքը, իսկ թվում էր, թե ամեն ինչ հանդիսավոր հանգստի մեջ է ընկղմված։

Մինչդեռ խոտի մեջ ամեն ինչ շարժվում էր, սողում, իրար անցնում։ Ահա մրջյունները վազում են զանազան կողմեր, այնպիսի բազմահոգությամբ ու իրարանցումով, թախվում են միմյանց, ցրվում, շտապում ճիշտ այնպես, ինչպես եթե բարձունքից նայես մարդկանց որևէ շուկայի. նույն խմբիկները, նույն իրարանցումը, նույն կերպով վխտում է ժողովուրդը։

Ահա բոռը տզզում է ծաղկի մոտ և ներս սողում նրա բաժակի մեջ. ահա ճանճերը կույտերով կպել են լորենու ճեղքից դուրս եկած հյութի կաթիլին. ահա թռչունը մի տեղ թավուտում վազուց է կրկնում է միևնույն հնչյունը, գուցե մյուսին է կանչում։

Ահա երկու թիթեռնիկ, իրար շուրջ պտտվելով օդի մեջ, շտապով, ինչպես վալս պարելիս, սլանում են ծառերի գագաթների

շուրջը։ Խոտը բուրում է ուժգին. նրա միջից անլսելի ճկճկոց է գալիս...

«Ի՞նչ անհանգիստ է այստեղ», մտածում էր Օբլոմովը, դիտելով այդ իրարանցումը և ականջ դնելով բնության մանր աղմուկին։ «Իսկ արտաքուստ ամեն ինչ այնպես լո՞ւ է, հանգի՞ստ...»

— Բայց քայլերի ձայն դեռ չի լսվում։ Վերջապես, ահա... «Օ՞խ»,— հառաչեց Օբլոմովը, կամացուկ ետ տանելով ճյուղերը։ «Ե՞ա է, նա է... Այդ ի՞նչ է, լա՞ց է լինում։ Աստվա՞ծ իմ»։

Օլգան գնում էր հանդարտ և թաշկինակով սրբում արցունքները, բայց հազիվ սրբում էր, նորերն էին գալիս։ Նա ամաչում է, կուզ է տալիս դրանք, ուզում է մինչև իսկ ծառերից թաքցնել, և չի կարողանում։ Օբլոմովը երբեք չէր տեսել Օլգայի արցունքները. նա այդ չէր սպասում, և արցունքները կարծես այրեցին նրան, բայց այնպես, որ դրանցից նա շոգ չէր զգում, այլ տաքություն։

Օբլոմովն արագ գնաց նրա ետևից։

—Օ՛լգա, Օ՛լգա,— քնքշությամբ ասում էր նա, հետևելով նրան։

Օլգան ցնցվեց, ետ նայեց, զարմացած հայացք գցեց նրա վրա, հետո շուռ եկավ և շարունակեց ճանապարհը։

Օբլոմովը գնում էր նրա կողքից։

— Դուք լա՞ց եք լինում,— ասաց նա։

Նրա արցունքներն ավելի ուժգին թափվեցին։ Նա այլևս չկարողացավ զսպել դրանք և թաշկինակը սեղմեց դեմքին, հեկեկաց և նստեց առաջին պատահած նստարանին։

— Այս ի՞նչ արի ես,— շշնջում էր Օբլոմովը սարսափով բռնելով նրա ձեռքը և աշխատելով ետ քաշել դեմքից։

— Թողե՛ք ինձ,— արտասանեց նա։— Հեռացե՛ք։ Ինչո՞ւ եք եկել այստեղ։ Ես գիտեմ, որ չպետք է լաց լինեմ, ինչի՞ համար լաց լինել։ Դուք իրավացի՛ եք. այո՛, ամեն բան կարող է պատահել։

— Ի՞նչ անեմ, որ այդ արցունքները չլինեն,— հարցնում էր Օբլոմովը, ծնկի գալով նրա առջև։— Ասացե՛ք, հրամայե՛ք. ես ամեն բանի պատրաստ եմ...

— Դուք այնպես արիք, որ արցունքներ լինեն, իսկ նրանց կանգնեցնելը ձեր իշխանությունից վեր է... Դուք այդքան

ուժեղ չեք։ Թողե՛ք,— ասում էր Օլգան, թաշկինակով հով անելով իր երեսին։

Օբլոմովը նայեց նրան և մտքում նզովքներ էր կարդում իր հասցեին։

— «Դժբա՞խտ նամակ»,— արտասանեց նա զղջումով։

Օլգան բաց արեց աշխատասենյակի դուռը, հանեց նամակը և տվեց նրան։

— Վերցրե՛ք,— ասաց նա,— և ձեզ հետ տարեք, որպեսզի ես էլ երկար լաց չլինեմ, նրա վրա նայելով։

Օբլոմովը լուռ գրպանը դրեց նամակը և նստած էր նրա կողքին՝ գլուխը կախ։

— Գոնե դուք իմ մտադրությունների արդարացիությունն զգո՞ւմ եք, Օ՛լգա,— մեղմ ասում էր նա։— Դա ապացույց է, թե որքան թանկ է ինձ համար ձեր երջանկությունը։

— Այո՛, թանկ է,— հառաչելով ասաց Օլգան։— Ո՛չ, Իլյա Իլյիչ, դուք, երևի, նախանձեցիք, որ ես այնպես հանդարտ երջանիկ էի, և շտապեցիք վրդովելու երջանկությունը։

— Վրդովելու՞։ Ուրեմն դուք իմ նամակը չե՞ք կարդացել։ Ես կկրկնեմ ձեզ...

— Ես մինչև վերջ չկարդացի, որովհետև աչքերս արտասուքով լցվեցին. ես դեռ հիմա՛ր եմ։ Բայց գուշակեցի մնացածը. մի կրկնեք, որպեսզի այլևս լաց չլինեմ...

Նորից թափվեցին արցունքները։

— Մի՞թե ես նրա համար չեմ հրաժարվում ձեզնից,— սկսեց Օբլոմովը,— որ նախազգում եմ ձեր երջանկությունն առաջիկայում, որ ինձ զոհում եմ այդ երջանկությանը... Մի՞թե ես այդ սառնասիրտ կերպով եմ անում։ Մի՞թե իմ ամբողջ նեքսը լաց չի լինում։ Հապա ինչո՞ւ եմ ես այս անում։

— Ինչո՞ւ,— կրկնեց Օլգան, հանկարծ գագաթելով լաց լինել և շուռ գալով դեպի Օբլոմովը։— Հենց նրա համար, ինչի համար որ այժմ թաքնվել էիք թփերի մեջ, որպեսզի գաղտնի նայեք, թե ես արդյոք լաց կլինե՞մ և ինչպե՞ս լաց կլինեմ— ահա թե ինչի՞ համար։ Եթե դուք անկեղծորեն ցանկանում էիք այն, ինչ որ գրված է նամակում, եթե դուք համոզված լինեիք, թե պետք է բաժանվել, դուք արտասահման կգնայիք՝ առանց ինձ հետ տեսնվելու։

— Որպիսի՞ միտք...— Վրա բերեց Օբլոմովը հշտամբանքով և չվերջացրեց։

Նրան ապշեցրեց այդ ենթադրությունը, որովհետև նրա համար հանկարծ պարզ դարձավ, որ այդ ճիշտ է։

— Այո՛,— հաստատեց Օլգան,— երեկ ձեզ հարկավոր էր իմ սիրում եմ-ը, այսօր ձեզ պետք էին իմ արցունքները, իսկ վաղը, գուցե, դուք կուզենաք տեսնել, թե ես ինչպես եմ մեռնում։

— Օլգա, մի՞թե կարելի է այդպես վիրավորել ինձ։ Մի՞թե դուք չեք հավատում, որ ես հիմա կյանքիս կեսը կտայի, որպեսզի լսեի ձեր ծիծաղը և չտեսնեի արցունքները...

— Այո՛, հիմա, գուցե, երբ արդեն տեսաք, թե ինչպես է լաց լինում ձեզ համար կինը... Ո՛չ,— տվեալացրեց նա,— դուք սիրտ չունեք։ Դուք ասում եք, որ իմ արցունքները չէիք ուզում, եթե չուզենայիք, այդպես չէիք էլ անի...

— Բայց մի՞թե ես գիտեի,— հարցնելով ու բացականչությունը ձայնի մեջ ասաց Օբլոմովը, երկու ձեռքն էլ դնելով կրծքին։

— Սիրտը, երբ սիրում է, իր խելքն ունի,— առարկեց Օլգան,— նա գիտե, թե ինչ է ուզում և նախապես գիտե, թե ինչ հյուրեր եկան, բայց ես գիտեի, որ դուք կտանջվեիք, սպասելով ինձ, գուցե վատ կքնեիք. ես եկա, որովհետև չէի ուզում ձեր տանջանքը... Իսկ դուք... դուք ուրախ եք, ես լաց եմ լինում։ Նայեցե՛ք, հրճվեցե՛ք...

Եվ Օլգան նորից լաց եղավ։

— Ես առանց այն էլ վատ եմ քնել, Օլգա, ես տանջվում եմ գիշերը...

— Եվ դուք նախանձեցիք, որ ես լավ եմ քնել, որ ես չեմ տանջվում, ճիշտ չէ՞,— ընդհատեց նա։— Եթե ես հիմա լաց լինեի, դուք այսօր էլ վատ կքնեիք։

— Ի՞նչ անեմ հիմա. ներողությո՞ւն խնդրեմ,— հլու քնքշությամբ ասաց նա։

— Ներողություն են խնդրում երեխաները կամ երբ ամբոխի մեջ տրորում են մեկի ոտքը, իսկ այստեղ ներողությունը չի օգնի,— ասում էր Օլգան՝ նորից թաշկինակով հով անելով իր երեսին։

— Սակայն, Օլգա, եթե դա ճշմարի՞տ է։ Եթե իմ միտքն

արդարացի է, իսկ ձեր սերը՝ սխա՞լ։ Եթե դուք ուրիշին սիրեք և, այն ժամանակ ինձ նայելով, կարմրե՞ք...

— Հետո ի՞նչ կա որ,— հարցրեց Օլգան՝ նայելով նրան այնպիսի հեգնական խոր, թափանցող հայացքով, որ նա շփոթվեց։

«Նա ուզում է ինչ-որ բան դուրս կորզել ինձնից», մտածեց Օբլոմովը։ «Ամուր կա՛ց, Իլյա՛ Իլյիչ»։

— Ինչպես թե «ի՞նչ կա որ,— մեքենայորեն կրկնեց նա՝ անհանգիստ կերպով նայելով Օլգային և չկռահելով, թե ինչպիսի միտք է ձևավորում նրա գլխում, ինչպես է արդարացնելու նա իր ինչ կա որ-ը, երբ ակներև է, որ չի կարելի արդարացնել այդ սիրո հետևանքները, եթե այդ սերը սխալ է։

Օլգան նայում էր նրան այնպե՞ս գիտակցորեն, այնպիսի՞ վստահությամբ, այնպե՞ս, ըստ երևույթին, տիրապետում էր իր մտքին։

— Դուք վախենում եք,— վրա բերեց Օլգան կծու կերպով,— ընկնել «անդունդի հատակը». ձեզ վախեցնում է ապագա վիրավորանքը, որ՞ես կդադարե՞մ ձեզ սիրելուց... «Իմ դրությունը վատ կլինի», գրում եք դուք...

Օբլոմովը դեռևս լավ չէր հասկանում։

— Չէ՞ որ այն ժամանակ ես ինձ լավ կզգամ, եթե ուրիշին սիրեմ. նշանակում է՝ ես երջանի՞կ կլինեմ։ Իսկ դուք ասում եք, որ «նախատեսում եք իմ երջանկությունն առաջիկայում և պատրաստ եք ինձ համար զոհ բերել ամեն ինչ, մինչև իսկ կյա՞նքը»։

Օբլոմովը նայում էր Օլգային սևեռած հայացքով և հազվադեպ ու լայն թարթում էր աչքերը։

— Ա՛յ թե ինչ տրամաբանություն դուրս եկավ,— շշնջում էր Օբլոմովը։— Ճիշտն ասած՝ ես չէի սպասում...

Իսկ Օլգան այնպես թունոտ կերպով ոտքից մինչև գլուխ դիտում էր նրան։

— Իսկ այն երջանկությո՞ւնը, որից դուք խելքահան եք լինում,— շարունակում էր Օլգան։— Իսկ այս առավոտներն ու երեկոները, այս զբոսայգին, իսկ իմ սիրում եմ-ը,— այս ամենը ոչինչ չարժե՞, ոչ մի գին չունի՞, ոչ մի զոհաբերություն, ոչ մի տանջանք չարժե՞։

«Ա՜խ, ի՞նչ կլիներ՝ գետինն անցնեի»։ մտածում էր Օբ-

լոմովը, ներքուստ տանջվելով, երբ Օլգայի միտքը միանգամ մայն պարզվում էր նրա համար։

— Իսկ եթե,— այս հարցով ջերմորեն սկսեց Օլգան,— դուք հոգնեք այդ սիրուց, ինչպես հոգնել եք գրքերից, ծառայությունից, հասարակությունից. եթե, որոշ ժամանակից հետո, առանց մրցակցության, առանց այլ սիրո, հանկարծ քնեք իմ կողքին, ինչպես ձեզ մոտ բազմոցի վրա, և իմ ձայնը չզարթեցնի ձեզ. եթե ձեր սրտի մոտ գոյացած ուռուցքն անցնի, եթե նույնիսկ ո՛չ թե մի ուրիշ կին, այլ ձեր խալաթն ավելի թանկ դառնա ձեզ համա՞ր...

— Օ՛լգա, դա անկարելի՛ է,— ընդհատեց նա անբավականությամբ, հեռու քաշվելով նրանից։

— Ինչո՞ւ է անկարելի,— հարցրեց Օլգան։— Դուք ասում եք, որ ես «սխալվում եմ, որ ես կսիրեմ ուրիշին», իսկ ես երբեմն կարծում եմ, որ դուք պարզապես կդադարեք ինձ սիրելուց։ Եվ ի՞նչ կլինի այն ժամանակ։ Ինչպե՞ս կարդարացնեմ ես ինձ այն բանի համար, ինչ անում եմ այժմ։ Եթե չլինեին էլ մարդիկ, հասարակությունը, ինքս ինձ ի՞նչ կասեմ... Եվ ես էլ երբեմն չեմ քնում դրանից, բայց ձեզ չեմ տանջում ապագայի մասին գուշակություններ անելով, որովհետև հավատում եմ լավագույնին։ Իմ մեջ երջանկությունը հաղթահարում է երկյուղին։ Ինձ համար մի բան արժե, երբ իմ պատճառով փայլում են ձեր աչքերը, երբ դուք ինձ եք փընտրում՝ մագլցելով բլուրները, մոռանում եք ծուլությունը, և շոգին քաղաք եք շտապում ինձ համար, ծաղկեփունջ, գիրք բերելու. երբ տեսնում եմ, որ ես ստիպում եմ ձեզ ժպտալ, կյանքը ցանկանալ... Ես սպասում, որոնում՝ եմ մի բան՝ երջանկություն, և հավատում եմ, որ գտել եմ։ Եթե սխալվեմ, եթե ճիշտ է, որ ես լաց կլինեմ իմ սխալի վրա, գոնե այստեղ զգում եմ (նա ձեռքի ափը դրեց սրտին), որ այդ բանում ես մեղավոր չեմ. նշանակում է, բախտը չէր կամենում այդ, աստված չտվեց։ Բայց ես չեմ վախենում ապագա արցունքների պատճառով. ես իզուր տեղը լաց չեմ լինի. ես նրանցով մի բան գնել եմ... Ես ինձ այնքան.. լա՛վ էի զգում...— ավելացրեց նա։

—Թող նորի՞ց լավ լինի,— աղերսում էր Օբլոմովը։

— Իսկ դուք առաջիկայում միայն մոայլն եք տեսնում.

ձեզ համար երջանկությունը ոչինչ է... Դա ապերախտություն է,— շարունակում էր նա,— դա սեր չէ, դա...

— Ծաստիրությո՞ւն է,— վերջացրեց Օբլոմովը և չհամարձակվեց նայել Օլգային, չհամարձակվեց խոսել, չհամարձակվեց ներողություն խնդրել։

— Գնացեք,— ասաց նա Վանդարտ,— ուր որ ուզում էիք գնալ։

Օբլոմովը նայեց նրան։ Օլգայի աչքերը ցամաքել էին։ Նա մտախոհ նայում էր ցած և հովանոցով գծագրում էր ավազի վրա։

— Նորից պառկեք մեջքի վրա,— ավելացրեց հետո,— չեք սխալվի, «անդունդը չեք ընկնի»։

— Ես թունավորվեցի և ձեզ էլ թունավորեցի, փոխանակ պարզապես և ուղղակի երջանիկ լինելու...— մրթմրթաց նա զղջումով։

— Կվաս խմեք՝ չեք թունավորվի,— խայթեց Օլգան։

— Օ՛լգա։ Դա մեծահոգի վարմունք չէ՛,— ասաց նա։— Այն բանից հետո, երբ ինքս պատժեցի ինձ խոստովանությամբ...

— Այո՛, բառերով դուք պատժում եք ձեզ, նետվում եք անդունդը, տալիս եք ձեր կյանքի կեսը, իսկ հետո կգա կասկածը, անքուն գիշերը. որքա՞ն քնքուշ եք դառնում դուք դեպի ձեզ, զգույշ, հոգատար, որքա՞ն հեռուն եք տեսնում առաջներդ...

«Որպեսի՞ ճշմարտություն և որքա՞ն պարզ է այն»,— մտածեց Օբլոմովը, բայց ամաչեց բարձրաձայն ասել։

Իսկ ինչո՞ւ նա ինքը իրեն չհասկացրեց այդ ճշմարտությունը, այլ նոր ապրել սկսող մի կին։ Եվ ինչպե՞ս արագ կարողացավ նա։ Դեռ նորերս երեխայի տեսք ուներ։

— Մենք այլևս խոսելիք չունենք,— եզրափակեց Օլգան՝ տեղից վեր կենալով։— Մնաք բարով, Իլյա՛ Իլյիչ, և եզեք... հանգիստ. չէ՞ որ ձեր երջանկությունն այդ է։

— Օ՛լգա, ո՛չ, ի սեր աստծո, ո՛չ։ Այժմ, երբ ամեն բան դարձյալ պարզվել է, մի՛ քշեք ինձ...— ասում էր Օբլոմովը՝ բռնելով նրա ձեռքից։

— Ի՞նչ եք ուզում ինձնից։ Դուք կասկածում եք՝ սխալ

չէ՞ արդյոք իմ սերը դեպի ձեզ. ես չեմ կարող փարատել ձեր կասկածը. գուցե սխալ է, չգիտեմ...

Օբլոմովը բաց թողեց նրա ձեռքը։ Նորից դանակը բարձրացված էր նրա գլխին։

—Ինչպե՞ս թե չգիտեք։ Մի՞թե դուք չեք զգում,— հարցրեց նա՝ դեմքի վրա դարձյալ տարակուսանք արտահայտելով։— Մի՞թե դուք երկմտում եք...

— Ես ոչինչ չեմ երկմտում. ես ձեզ երեկ ասացի, թե ի՞նչ եմ զգում, իսկ թե ի՞նչ կլինի մի տարի հետո, չգիտեմ։ Եվ մի՞թե մի երջանկությունից հետո երկրորդն էլ է լինում, հետո երրորդը, նույնպիսի՞ն,— հարցնում էր Օլգան՝ սեռոուն աչքերով նայելով նրան։— Խոսե՛ք, դուք ինձնից ավելի փորձված եք։

Բայց Օբլոմովն այլևս չէր ուզում նրան հաստատել այդ մտքի մեջ, և լռում էր՝ մի ձեռքով թափահարելով ակացիան։

— Ո՛չ, սիրում են միայն մի՛ անգամ,— կրկնեց նա դասը սերտած աշակերտի նման։

— Ա՛յ, տեսնում եք. ես էլ եմ հավատում դրան,— ավելացրեց նա։— Իսկ եթե դա այդպես չէ, ապա, գուցե ես էլ դադարեի ձեզ սիրելուց, գուցե ինձ սխալը ցավ պատճառե, և ձեզ էլ նույնպես. գուցե մենք բաժանվե՞նք միմյանցից... Սիրել երկու-երեք անգամ... ո՛չ, ո՛չ... ես չե՞մ ուզում հավատալ դրան։

Օբլոմովը հառաչեց։ Այդ գուցեն շուտ էր տալիս նրա հոգին, և նա մտախոհ քարշ էր գալիս Օլգայի ետևից։ Բայց ամեն քայլափոխի հետ նա իրեն ավելի ու ավելի թեթև էր զգում. գիշերը նրա հնարած սխալը այնպես հեռավոր ապագա էր... «Չէ՞ որ ո՛չ միայն սերը, չէ՞ որ ամբողջ կյանքն էլ այդպես...»— հանկարծ անցավ նրա մտքով։ «Եվ եթե ամեն դեպք վանենք իրրև սխալ, էլ ե՞րբ կգա— ոչ-սխալը։ Ի՞նչ է պատահել ինձ։ Կարծես կուրացել եմ...»

— Օլգա,— ասաց նա, երկու մատով հազիվ դիպչելով նրա մեջքին (Օլգան կանգ առավ),— դուք ինձնից խելոք եք։

Օլգան շարժեց գլուխը։

— Ո՛չ, ավելի պարզ եմ ու ավելի համարձակ։ Ինչի՞ց եք վախենում։ Մի՞թե դուք լրջորեն կարծում եք, թե կարելի է սիրելուց դադարել,— հպարտ վստահությամբ հարցրեց նա։

— Հիմա ե՛ս էլ չեմ վախենում,— աշխուժորեն ասաց Օբլոմովը։— Ճակատագիրը սարսափելի չէ՞ ձեզ հետ միասին։

—Այդ բառերը ես նորերս կարդացել եմ մի տեղ... կարծեմ Սյուի մոտ,— հանկարծ ասաց Օլգան հեգնանքով՝ շուռ գալով դեպի նա,— միայն թե այնտեղ այդ ասում է կինը տղամարդուն...

Օբլոմովի դեմքը շառագունեց։

— Օ՛լգա։ Թո՛ղ ամեն ինչ երեկվա նման լինի,— աղաչում էր նա,— ես սխալներից չեմ վախենում։

Օլգան լռում էր։

— Այո՞,— վեհերոտ կերպով հարցնում էր Օբլոմովը։

Օլգան լուռ էր։

— Դեհ, եթե չեք ուզում ասել, որևէ նշան տվեք... յասամանի ճյուղ...

— Յասամանները... անցե՛լ են, կորե՛լ,— պատասխանեց Օլգան։— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, ինչպիսիներն են մնացել— թառամածնե՛րը։

— Անցե՛լ են, թառամե՛լ են,— կրկնեց Օբլոմովը՝ նայելով յասամաններին։— Նամակն էլ է անցե՛լ— հանկարծ ասաց նա։

Օլգան բացասաբար շարժեց գլուխը։ Օբլոմովը գնում էր նրա ետևից և իր համար դատողություններ տալիս նամակի, երեկվա երջանկության, թառամած յասամանի մասին։

«Իսկապես, յասամանները թառամած են», մտածում էր նա։ «Ինչի՞ համար էր այդ նամակը։ Ինչո՞ւ ես ամբողջ գիշերը չքնեցի, գրում էի առավոտյան։ Ա՛յ հիմա, երբ սիրտս նորից հանգստացավ... (նա հորանջեց)... սարսափելի քնել եմ ուզում։ Իսկ եթե նամակը չլիներ, այս բոլորն էլ չէր լինի. Օլգան լաց չէր լինի, ամեն ինչ երեկվա նման կլիներ. հանգիստ կնստեինք հենց այստեղ, ծառուղում, կնայեինք իրար, կխոսեինք երջանկության մասին։ Եվ այսօր էլ այդպես է, և վաղն էլ...» Նա հորանջեց՝ բաց անելով ամբողջ բերանը։

Հետո հանկարծ նրա մտքով անցավ, թե ի՞նչ կլիներ, եթե նամակը նպատակին հասներ, եթե Օլգան համամիտ լիներ իր հետ, վախենար, ինչպես Օբլոմովն ինքը, սխալներից ու ապագա հեռավոր փոթորիկներից, եթե ականջ դներ Օբլոմովի այսպես կոչված, փորձառությանը, խոհեմությանը և համաձայներ բաժանվելու, միմյանց մոռանալու։

Աստված չանի՝։ Հրաժեշտ տա՛լ, գնալ քաղաք, նոր բնակարա՞նը։ Դրա ետևից կգար երկար գիշերը, տաղտկալի վաղը, անտանելի վաղը չէ մյուս օրը և մի շարք օրեր ավելի ու ավելի դժգույն, ավելի ու ավելի դժգույն...

Ինչպե՞ս կարելի է։ Դա մա՞հ կլիներ։ Բայց չէ՞ որ այդպես կլիներ։ Ինքը կհիվանդանար։ Նա չէր էլ ուզում բաժանվել։ Նա չէր տանի այդ բաժանումը, կգար աղաչելու, որ տեսնվեն։ «Ինչո՞ւ գրեցի նամակը»,— հարցնում էր նա իրեն։

— Օ՛լգա Սերգեևնա,— ասաց նա։

— Ի՞նչ եք ուզում։

— Իմ բոլոր խոստովանություններին ես պետք է մեկն էլ ավելացնեմ...

— Ի՞նչ խոստովանություն։

— Չէ՞ որ այդ նամակը բոլորովին հարկավոր չէր...

— Ճիշտ չէ, այն անհրաժեշտ էր,— վճռեց Օլգան։

Օլգան ետ նայեց և ծիծաղեց՝ տեսնելով նրա դեմքը և թե ինչպես հանկարծ նրա քունը փախավ, ինչպես նրա աչքերը զարմանքից բացվեցին։

— Անհրաժե՞շտ էր,— կրկնեց նա դանդաղ, զարմացած հայացքը սևեռելով նրա մեջքին։

Բայց այնտեղ կային միայն թիկնոցի երկու ծոպեր։

«Հապա ի՞նչ են նշանակում այդ արցունքները, կշտամբանքները։ Մի՞թե խորամանկություն են»։ Բայց Օլգան խորամանկ չէ. Օբլոմովն այդ պարզ տեսնում էր։

Խորամանկություն են անում և խորամանկությամբ զբաղվում են միայն ավելի կամ պակաս չափով սահմանափակ կանայք։ Նրանք, շիտակ խելքի բացակայության պատճառով՝ ամենօրյա մանր կյանքի զսպանակները շարժում են խորամանկության միջոցով, հաշիայի նման հյուսում են իրենց տնային քաղաքականությունը, չնկատելով, թե նրանց շուրջն ինչպես են դասավորված կյանքի գլխավոր գծերը, դեպի ուր են ուղղվում նրանք և որտեղ են միանում։

Խորամանկությունը նույնն է, ինչ մանր դրամը, որով շատ բան գնել չես կարող։ Ինչպես որ մանր դրամով կարելի է ապրել մեկ-երկու ժամ, այնպես էլ խորամանկությամբ կարելի է այնտեղ մի բան սրողել, այստեղ խաբել, այլակերպել, բայց այն բավական չի լինի հեռավոր հորիզոնը շրջահայելու

համար, խոշոր, գլխավոր անցքի սկիզբն ու վերջը իրար բերելու համար։

Խորամանկությունը կարճատես է. լավ է տեսնում միմիայն ոչ քթի տակ, և ոչ թե հեռուն, և այդ պատճառով էլ հաճախ ինքն է ընկնում այն թակարդի մեջ, որ դրել էր ուրիշների համար։

Օլգան պարզապես խելացի է. ա՛յ թեկուզ այսօրվա հարցը, ինչպե՞ս հեշտությամբ ու պարզ լուծեց նա, և ամե՞ն մի այլ հարց։ Նա իսկույն աչք տեսնում է անցքի ուղիղ խմաստը և ուղիղ ճանապարհով մոտենում է նրան։

Իսկ խորամանկությունը մկան է նման. կվազի շուրջանակի, թաք կկենա... Եվ Օլգայի բնավորությունն էլ այդպես չէ։ Այս ի՞նչ բան է։ Այս ի՞նչ նորություն է էլի։

— Ինչո՞ւ նամակն անհրաժեշտ էր,— հարցրեց Օբլոմովը։

— Ինչո՞ւ,— կրկնեց Օլգան և արագությամբ շուռ եկավ դեպի նա ուրախ դեմքով, հրճվելով այն բանով, որ կարողանում է նրան ամեն քայլափոխում նեղը լծել։— Նրա համար,— հատ-հատ սկսեց Օլգան հետո,— որ դուք գիշերը չեք քնել, գրել եք բոլորն ինձ համար. ես էլ եսասե՞ր եմ։ Այդ, նախ և առաջ...

— Իսկ ի՞նչ բանի համար էիք դուք ինձ այս բոպեիս կշտամբում, եթե հիմա ինքներդ համաձայնում եք ինձ հետ,— ընդհատեց Օբլոմովը։

— Նրա համար, որ դուք տանջանքներ եք հնարել։ Ես տանջանքներ չէի հնարում, նրանք պատահեցին, և ես հրճվում եմ նրանով, որ նրանք արդեն անցել են, իսկ դուք պատրաստում եք դրանք և վաղօրոք հրճվում։ Դուք— չա՞ր եք. դրա համար էլ ես ձեզ կշտամբում էի։ Հետո... ձեր նամակում խաղում է միտքը, զգացմունքը... դուք ապրել եք այս գիշեր և առավոտյան ո՛չ թե ձեր ուզածի պես, այլ այնպես եք ապրել, ինչպես ցանկանում էր ձեր բարեկամը և ցանկանում էի ես— այս երկրորդ. վերջապես երրորդ...

Օլգան այնքան մոտեցավ նրան, որ աթյունը ավեց Օբլոմովի սիրտն ու գլուխը. նա սկսեց շնչել ծանր, հուզմունքով։ Իսկ Օլգան նայում է ճիշտ նրա աչքերի մեջ։

— Երրորդ, նրա համար, որ այդ նամակում, ինչպես հայելու մեջ, երևում է ձեր քնքշությունը, ձեր զգուշությունը,

հոգացողությունն իմ մասին, երկյուղն իմ երջանկության համար, ձեր մաքուր խիղճը... այն ամենը, ինչ մատնանշել է ինձ Անդրեյ Իվանիչը ձեր նկատմամբ և ինչ որ ես սիրել եմ, որի պատճառով մոռանում եմ ձեր ծուլությունը... ապաթիան... Դուք այնտեղ արտահայտվել եք ակամայից. դուք եսասեր չեք, Իլյա Իլյիչ, դուք ամենևին նրա համար չեք գրել նամակը, որպեսզի բաժանվեք,— դուք այդ չէիք ուզում, այլ նրա համար եք գրել, որովհետև վախենում էիք խաբել ինձ... այդտեղ խոսում էր ազնվությունը, հակառակ դեպքում նամակը կվիրավորեր ինձ և ես լաց չէի լինի— հպարտությունի՞ց։ Տեսնու՞մ եք, գիտեմ, թե ինչո՞ւ եմ սիրում ձեզ, և սխալից չեմ վախենում. ես ձեր վերաբերմամբ չեմ սխալվում...

Օլգան Օբլոմովին երևում էր փայլի, ճաճանչների մեջ, երբ ասում էր այդ։ Նրա աչքերը փայլում էին սիրո այնպիսի՞ հաղթանակով, իր ուժի գիտակցությամբ. այտերի վրա կարմրին էին տալիս երկու վարդագույն բծեր։ Եվ նա, Օբլոմովն էր դրա պատճա՞ռը։ Իր ազնիվ սրտի հույզով նա էր Օլգայի հոգու մեջ նետել այդ հուրը, այդ խաղը, այդ փայլը։

— Օ՛լգա... Դուք... բոլոր կանանցից լավ եք, դուք առաջին կի՞նն եք աշխարհում,— ասաց նա հիացած և, իրեն կորցրնելով, մեկնեց ձեռքերը, թեքվեց դեպի Օլգան։— Աստծու սիրուն... մի համբույր, որպես անասելի երջանկության գրավական,— շշնջաց նա կարծես զառանցելով։

Օլգան մի քայլ ետ գնաց. հանդիսավոր փայլն ու գույները թռան դեմքի վրայից. հեզ աչքերից փոթորիկ էր փայլատակում։

— Երբե՞ք։ Երբե՞ք։ Մի՛ մոտեցեք,— վախեցած, գրեթե սարսափահար ասաց Օլգան, երկու ձեռքն ու հովանոցը մեկնելով նրա և իր միջև, և կանգ առավ որպես մեխված, քար կտրած, առանց շնչելու, ահավոր դիրքով, ահավոր հայացքով, կիսաշրջան արած։

Օբլոմովը հանկարծ խեղճացավ. նրա առաջ ո՛չ թե հեզ Օլգան էր, այլ հպարտության ու բարկության վիրավորված աստվածուհին՝ սեղմված շրթունքներով, կայծակն աչքերում։

— Ներեցե՛ք...— մրթմրթում էր նա շփոթված, ոչնչացված։

Օլգան դանդաղորեն շուռ եկավ և գնաց, երկյուղով նայելով թիկունքի վրայից, թե ի՞նչ կանի նա։ Իսկ նա ոչինչ չի անում. գնում է հանդարտ, կարծես քաշ է տալիս պոչը, այն շան նման, որի վրա բարկացել են։

Օլգան ուզում էր քայլերն արագացնել, բայց, տեսնելով նրա դեմքը, ժպիտը խեղդեց և գնաց ավելի հանդարտ, երբիմնակի միայն ցնցվելով։ Վարդագույն բիծը երևում էր մերթ մեկ, մերթ մյուս այտին։

Գնալուն զուգընթաց Օլգայի դեմքը բացվում էր, շնչառությունը դանդաղում և ավելի հանդարտվում, և նա նորից սկսեց հավասար քայլերով գնալ։ Նա տեսավ, թե որքան սուրբ է Օբլոմովի համար նրա «երբեքը», և բարկության հուզանքը կամաց-կամաց հանդարտվում ու տեղի էր տալիս կարեկցությանը։ Նա գնում էր ավելի հանդարտ ու հանդարտ...

Օլգան ուզում էր մեղմել իր բռնկումը. նա խոսակցություն սկսելու առիթ էր փնտրում։

«Ամե՞ն ինչ փչացրի։ Ա՛յ իսկական սխա՞լը։ «Երբե՞ք»։ Տե՞ր աստված։ Յասամանները թառամել են», մտածում էր Օբլոմովը, նայելով կախ ընկած յասամաններին, «երեկը թառամել է, նամակը թառամել է նույնպես, և այս վայրկյանն էլ, լավագույնն իմ կյանքում, երբ կինն առաջին անգամ ինչպես երկնքից եկող ձայն ասաց ինձ, թե ի՞նչ լավ բան կա իմ մեջ, այս վայրկյանն էլ թառամե՞լ է...»

Նա նայեց Օլգային. սա կանգնել ու սպասում է նրան՝ աչքերը վայր հակած։

— Ինձ տվեք նամա՞կը...— ասաց Օլգան մեղմիկ։

— Այն թառամե՞լ է,— տխուր ասաց Օբլոմովը՝ տալով նամակը։

Օլգան նորից մոտեցավ նրան և դեռ գլուխն էլ հակեց. կոպերը բոլորովին ցած էին իջած... նա համարյա դողում էր։ Օբլոմովը տվեց նամակը. Օլգան գլուխը չէր բարձրացնում, չէր հեռանում։

— Դուք վախեցրիք ինձ,— ավելացրեց նա մեղմորեն։

— Ներեցե՛ք, Օ՛լգա,— մրթմրթում էր նա։

Օլգան լուռ էր։

— Այդ ահեղ «երբե՞քը»...— ասաց Օբլոմովը տխուր և հառաչեց։

— Կթառամի՞,— հազիվ լսելի ձայնով շշնջաց Օլգան՝ կարմրելով։

Օլգան նրա վրա ամոթխած, շոյող հայացք գցեց, բռնեց նրա երկու ձեռքը, ամուր սեղմեց իր ձեռքերի մեջ, հետո դրեց իր սրտին։

— Զգո՞ւմ եք, ինչպե՞ս է բաբախում,— ասաց նա։— Դուք ինձ վախեցրի՞ք։ Բա՛ց թողեք։

Եվ առանց նրան նայելու՝ շուտ եկավ և արագ անցավ ուղիով, առջևից մի փոքր բարձրացնելով զգեստը։

— Այդ ու՞ր այդպես,— ասում էր Օբլոմովը։— Ես հոգնել եմ, չեմ կարող ձեր հետևից...

— Թողե՛ք ինձ։ Ես վազում եմ՝ երգե՛մ, երգե՛մ, երգե՛մ,— կրկնում էր նա բոցավառ դեմքով։— Կուրծքս նեղ է գալիս ինձ, համարյա ցա՛վ է պատճառում։

Օբլոմովը տեղում կանգ առավ և երկար նայում էր նրա ետևից, որպես թռչող հրեշտակի ետևից։

«Մի՞թե այս վայրկյանն էլ է թառամելու»,— գրեթե տխուր մտածեց նա և ինքն էլ չէր զգում՝ գնում է, թե տեղում կանգնած է։

«Ցասմաններն անցան», կրկին մտածում էր նա, «երեկն անցավ, և ուրվականներով, հեղձուկով լի գիշերը նույնպես անցավ... Այո՛, և այս վայրկյա՛նն էլ կանցնի, ինչպես յասամանները։ Բայց երբ անցնում էր այսօրվա գիշերը, այդ ժամանակ արդեն ծաղկում էր այս առավոտը...»։

— Սա ի՞նչ բան է— բարձրաձայն ասաց նա մոռացության մեջ ընկած։— Եվ ո՞երն է՞լ... սերը։ Իսկ ես կարծում էի, թե սերը, որպես տոթակեզ կեսօր, կախ է ընկնելու սիրողների գլխին և ոչինչ չի շարժվի ու չի անշնչանա նրա մթնոլորտում. սիրո մեջ էլ հանգիստ չկա, նա էլ է շարունակ առաջ շարժվում դեպի ինչ-որ տեղ, առաջ... «ինչպես ամբողջ կյանքը», ասում է Շտոլցը։ Եվ դեռ չի ծնվել Հեսու Նավյան, որը նրան ասեր. «Կանգնի՛ր և մի՛ շարժվիր»։ Ի՞նչ է լինում վաղը,— տագնապով հարցրեց նա իրեն և մտախոհ, ծուլաբար տուն գնաց։

Օլգայի լուսամուտների մոտից անցնելիս՝ նա լսեց, թե ինչպես նրա սեղմված կուրծքը թեթևանում էր Շուբերտի հնչյուններով, կարծես թե երջանկությունից հեկեկում էր։

Աստվա՜ծ իմ։ Որքա՜ն լավ է այս աշխարհում ապրելը։

Օբլոմովը տանը Շտոլցից էլ նամակ ստացավ, որն սկսվում և վերջանում էր «Այժմ կամ երբե՞ք» բառերով, ապա լի էր

կշտամբանքներով անշարժության մասին, հետո հրավիրում էր անպայման Շվեյցարիա գալ, ուր ուզում էր գնալ Շտոլցը, և վերջապես, Իտալիա։

Իսկ եթե դա չլիներ, ապա Շտոլցն Օբլոմովին գյուղ էր կանչում՝ ստուգելու իր գործերը, թափահարելու մուժիկների բարձիթողի արած կյանքը, ստուգելու և որոշելու իր եկամուտը և իր ներկայությամբ կարգադրելու նոր տան կառուցումը։

«Հիշի՛ր մեր պայմանը՝ այժմ կամ երբեք», վերջացնում էր նա։

— Ա՜յժմ, ա՜յժմ, ա՜յժմ,— կրկնում էր Օբլոմովը։— Անդրեյը լգիտե, թե ինչպիսի պոեմ է տեղի ունենում իմ կյանքում։ Էլ ուրիշ ի՞նչ գործի մասին է խոսում նա։ Մի՞թե ես կարող եմ երբևէ և որևէ բանով այսպես զբաղված լինել։ Թող մի ինքը փորձե՞ր։ Ա՛յ, կարդում ես ֆրանսիացիների, անգլիացիների մասին, իբր թե նրանք բոլո՞ր աշխատում են, իբր թե մտքներումը շարունա՞կ գործն է։ Ճանապարհորդում են իրենց համար ամբողջ Եվրոպայով մեկ, ոմանք նույնիսկ Ասիա ու Աֆրիկա են գնում, հենց այնպես, առանց որևէ գործի— ՝ը ալբոմ նկարելու կամ հնություններ պեղելու, ո՛ր առյուծ սպանելու կամ օձ որսալու համար։ Ապա թե ոչ, նստում են տանը ազնվական պարապության մեջ. նախաճաշում են, ճաշում են բարեկամների, կանանց հետ, ահա և ամբողջ գործը։ Ի՞նչ է, ես տաժանակի՞ր եմ։ Անդրեյն է միայն հնարել «Աշխատի՛ր ձիու նման»։ Ինչու՞։ Ես կուշտ եմ, հագուստ ունեմ։ Սակայն Օլգան դարձյալ հարցնում էր, թե ես արդյոք մտադի՞ր եմ Օբլոմովկա գնալ...

Նա շտապեց գրել, կշռադատել, մինչև անգամ ճարտարապետի մոտ գնաց։ Շուտով նրա փոքրիկ սեղանի վրա տեղավորված էր տան, պարտեզի պլանը։ Մի ընտանեկան, ընդարձակ տուն, երկու պատշգամբներով։

«Այստեղ ես, այստեղ Օլգան, այստեղ ննջարանը, «երեխաների սենյակը»... ժպտալով մտածում էր նա։ «Բայց մուժիկները, մուժիկները»... և ժպիտն անհետանում էր, հոգսը կնճռոտում էր նրա ճակատը։ «Հարևանը գրում է, մանրամասնությունների մեջ է մտնում, խոսում է հերկի, կալսույթի մասին... Ա՛յ ձանձրալի բան։ Դեռ առաջարկում է ընդհանուր հաշվով ճանապարհ անցկացնել դեպի մեծ առևտրական

գյուղը, կամուրջ շինելով գետի վրա, երեք հազար ռուբլի փող է խնդրում, ուզում է, որ ես գրավ դնեմ Օբլոմովկան... Իսկ ես ի՞նչ գիտեմ, հարկավո՞ր է արդյոք այդ... Բան դուրս կգա՞։ Արդյոք նա չի՞ խաբում... Ենթադրենք՝ նա ազնիվ մարդ է. Շտոլցը նրան ճանաչում է, բայց չէ՞ որ նա էլ կարող է սխալվել, իսկ իմ փողերը կթոնե՞ն։ Երեք հազար. այդքան շա՞տ։ Որտեղի՞ց գտնեմ։ Ո՛չ, սարսափելի է։ Դեռ գրում էլ է, որ մի քանի մուժիկների տեղափոխենք պարապուտները, և շուտով պատասխան է պահանջում— ամեն բան շուտով։ Նա հանձն է առնում խորհուրդ ուղարկելու կալվածքը գրավ դնելու բոլոր փաստաթղթերը։ «Ես պետք է նրան հավատարմագիր ուղարկեմ, գնամ պալատը վավերացնելու»— ա՛յ, թե ի՞նչ է ուզում։ Իսկ ես չգիտեմ էլ, թե պալատը որտեղ է, ինչպես են բացվում այնտեղի դռները»։

Արդեն երկրորդ շաբաթն է՝ Օբլոմովը նրան չի պատասխանում, մինչդեռ նույնիսկ Օլգան էլ է հարցնում, թե արդյոք եղե՞լ է պալատում։ Նորերս Շտոլցը նույնպես նամակ էր ուղարկել թե՛ իրեն և թե՛ Օլգային, հարցնում էր՝ «Ի՞նչ է անում Օբլոմովը»։

Սակայն, Օլգան միայն մակերեսորեն կարող էր դիտել իր բարեկամի գործունեությունը, և այն էլ՝ իր համար մատչելի ոլորտում։ Արդյոք նա ուրա՞խ է, սիրո՞վ է հաճախում ամենուրեք, պայմանադրված ժամին պուրակ գալի՞ս է, որքա՞ն է զբաղեցնում նրան քաղաքային նորությունը, ընդհանուր խոսակցությունը։ Ամենից ավելի մեծ խանդով Օլգան հետևում է, թե արդյոք նա աշքաթող չի՞ անում կյանքի գլխավոր նպատակը։ Եթե Օլգան նրան պալատի մասին հարցրեց էլ, ապա այն պատճառով, որպեսզի Շտոլցին որևէ բան պատասխանի նրա բարեկամի գործերի մասին։

Ամառվա ամենաեռուն ժամանակն է. հուլիսն անցնում է, եղանակը հիանալի է. Օբլոմովն Օլգայից համարյա չի բաժանվում։ Պարզկա օրը նա զբոսայգում է, շոգ կեսօրին Օլգայի հետ միասին պուրակի խորքերն է մտնում, սոճիների մեջ նստում, նստում է նրա ոտքերի մոտ, կարդում է նրա համար. Օլգան արդեն կանվայի երկրորդ կտորն է ասեղնագործում նրա համար։

Նրանց մոտ էլ է շոգ ամառ. երբեմն կուտակվում են ամպերն ու անցնում։

Եթե նա երբեմն ծանր երազներ էլ է տեսնում, և կասկածներ են ընկնում սիրտը, Օլգան հրեշտակի նման պահապան է կանգնած. նա կնայի Օբլոմովի երեսին իր պայծառ աչքերով, կիմանա՝ ինչ կա նրա սրտում,— և դարձյալ ամեն ինչ խաղաղ է, և զգացմունքը դարձյալ հոսում է սահուն կերպով, գետի նման, արտացոլելով երկնքի նոր նախշերը։

Օլգայի հայացքը կյանքի, սիրո, ամեն բանի մասին էլ ավելի պարզ, ավելի որոշ դարձավ։ Նա առաջվանից ավելի վստահորեն է նայում իր շուրջը, չի շփոթվում ապագայի վերաբերմամբ. նրա մեջ բացվեցին մտքի նոր կողմեր, բնավորության նոր գծեր։ Այն արտահայտվում է մերթ բանաստեղծորեն բազմազան, խոր, մերթ կանոնավոր, պարզ, աստիճանաբար և բնականորեն...

Օլգան մի ինչ-որ հաստատակամություն ունի, որը ո՛չ միայն հաղթահարում է բախտի բոլոր մրրիկները, այլև նույնիսկ Օբլոմովի ծուլությունն ու ապաթիան։ Հենց որևէ մտադրություն ծագի նրա մեջ, գործը կսկսի եռալ։ Շարունակ դրա մասին կլսես միայն։ Եթե չես էլ լսի, ապա կտեսնես, որ նրա մտքում շարունակ նույն բանն է, որ նա չի մոռանա, ձեռք չի քաշի, իրեն չի կորցնի, ամեն ինչ կկշռադատի և ձեռք կբերի այն, ինչ փնտրում էր։

Օբլոմովը չէր կարողանում հասկանալ, թե որտեղից է երևան գալիս նրա մեջ այդ ուժը, այդ տակտը՝ գիտենա՛լ և կարողանա՛լ, ինչպես և ի՛նչ անել, ինչ էլ որ պատահի։

«Նրանից է», մտածում էր Օբլոմովը, «որ նրա հոնքերից մեկը երբեք ուղիղ չի լինում ընկած, այլ միշտ մի փոքր վեր է բարձրացած, և նրա վերև մի այնպիսի բարալիկ, հպիվ նկատելի ծալ կա... Այդ ծալի մեջ է բնակված Օլգայի համառությունը»։

Ինչպիսի անդորր, պայծառ արտահայտություն էլ ստանա Օլգայի դեմքը, այդ ծալը չի հարթվում և հոնքը հավասար չի նստում։ Բայց նա չունի արտաքին ուժ, կտրուկ եղանակներ ու հակումներ։ Մտադրությունների հաստատականությունն ու համառությունը ոչ մի քայլ նրան դուրս չեն քաշում կանացի ոլորտից։

Նա չի ուզում առյուծուհի լինել, կարուկ խոսքերով շշպռել անշնորհք երկրպագուին, սրամտությամբ զարմացնել ամբողջ հյուրասենյակի բազմությանը, որպեսզի որևէ մեկը անկյունից կանչի՝ «բռա՜վո, բռա՜վո»։

Նա նույնիսկ վեհերոտություն ունի, որ հատուկ է շատ կանանց. ճիշտ է՝ նա չի դողա մկնիկ տեսնելով, ուշագնաց չի լինի աթոռի վայր ընկնելուց, բայց կվախենա տնից քիչ հեռու գնալ, կվերադառնա՝ տեսնելով իրեն կասկածելի թվացող մուժիկին, գիշերը կփակի լուսամուտը, որպեսզի գողերը ներս չմտնեն. ամեն ինչ կանացիաբար։

Այնուհետև, նրան այնպես մատչելի է կարեկցությա՞ն, խղճալու՞ զգացմունքը։ Դժվար չէ նրանից արտասուք կորզելը. հեշտ է նրա սրտին մոտենալը։ Սիրո մեջ նա այնքան քնքուշ է. նրա բոլոր հարաբերությունների մեջ գեպի ամենքը այնքան փափկություն, սիրալիր ուշադրություն կա, մի խոսքով՝ նա կի՞ն է։

Երբեմն նրա խոսքում փայլատակում է սարկազմի կայծը, բայց այնտեղ այնպիսի նազելիություն, այնպիսի հեզ, սիրելի խելք է շողում, որ ամեն մեկն ուրախությամբ իր ճակատը դեմ կանի դրան։

Դրա փոխարեն նա չի վախենում միջանցիկ քամուց, ման է գալիս աղջամուղջին թեթև հագած, նրա համար դա ոչի՞նչ է։ Նա վաղվուն առողջության տեր է. ուտում է ախորժակով. սիրելի կերակուրներ ունի. նա ինքն էլ գիտե, թե ինչպես պետք է պատրաստել այդ կերակուրները։

Ասենք՝ այս ամենը շատերը գիտեն, բայց շատերը չգիտեն, թե ի՞նչ պետք է անել այս կամ այն դեպքում, իսկ եթե գիտեն էլ, ապա միայն սովորած, լսած բաներ, և չգիտեն, թե ինչու այս կերպ և ոչ թե այլ կերպ են վարվում նրանք, իսկույն վկայակոչում են մորաքրոջ, քեռու աղջկա հեղինակությունը...

Շատերը նույնիսկ իրենք չգիտեն, թե ինչ ցանկանան, իսկ եթե սիրտ էլ անում են, ապա ալարելով են անում, այնպես որ, գուցե պետք է, գուցեն պետք չէ։ Սա, երևի, նրանից է, որ նրանց հոնքերն հավասար են, աղեղնաձև, մատներով հարդարված և նրանց ճակատին ծալ չկա։

Օլգայի և Օբլոմովի միջև հաստատվել էին գաղտնի, ուրիշների համար անտեսանելի հարաբերություններ. ամեն մի

Հայացք, ուրիշների մոտ ասված ամեն մի աննշան խոսք նրանց համար իր իմաստն ուներ։ Նրանք ամեն բանի մեջ սիրո ակնարկ էին տեսնում։

Եվ Օլգան երբեմն կարմրատակում էր, չնայած նրա իր վրա ունեցած ամբողջ վստահությանը, երբ ճաշի ժամանակ պատմում էին որևէ մեկի սիրո պատմությունը, որ նման էր իր սիրո պատմությանը. իսկ որովհետև սիրո բոլոր պատմությունները շատ նման են իրար, ուստի նա հաճախ ստիպված էր լինում կարմրել։

Եվ Օբլոմովն էլ, այդ մասին ակնարկ լսելիս, հանկարծ թեյի ժամանակ շփոթությունից այնքան շատ պաքսիմատ կվերցներ, որ որևէ մեկն անպայման կծիծաղեր։

Նրանք դարձան երբազգաց և զգույշ։ Երբեմն Օլգան մոթաքրոջը չէր ասի, թե տեսել է Օբլոմովին, իսկ սա տանը կհայտարարեր, թե քաղաք է գնում, բայց ինքը կգնար զբոսայգին։

Բայց և այնպես, որքան էլ պարզ էր Օլգայի միտքը, որքան էլ գիտակցորեն էր նայում նա իր շուրջը, որքան էլ թարմ էր, առողջ, բայց նրա մեջ էլ սկսեցին ինչ-որ նոր հիվանդագին ախտանիշեր երևան գալ։ Ժամանակ առ ժամանակ մի անհանգստություն էր տիրում նրան, որի վրա միտք էր անում և չգիտեր, թե ինչպես բացատրի իրեն համար։

Երբեմն, Օբլոմովի հետ թևանցուկ, շոգ կեսօրին ման գալիս, նա ծուլորեն հենվում էր Օբլոմովի ուսին և մեքենայաբար գնում էր, ինչ-որ մի ուժասպառ վիճակում, համառորեն լռում էր։ Նրա ժրությունը կորչում է. հայացքը հոգնած է, անկենդան, անշարժ է դառնում, սևեռվում որևէ տեղ մի կետի վրա և նա ծուլանում է հայացքը մի ուրիշ առարկայի դարձնել։

Նա վատ է զգում իրեն, ինչ-որ բան ճնշում է նրա կուրծքը, անհանգստացնում է։ Նա կվերցներ թիկնոցը, թաշկինակը ուսերից, բայց այդ էլ չի օգնում. շարունակ ճնշում է, շարունակ նեղում։ Նա կպառկեր ծառի տակ և ամբողջ ժամերով այդպես կմնար։

Օբլոմովը կորցնում է իրեն, ճյուղով հով է անում նրա դեմքին, բայց նա անհամբեր մի նշանով մի կողմ է քշում նրա հոգացողություններն ու տառապում է։

Հետո հանկարծ կհառաչի, գիտակցորեն իր շուրջը կնայի, Օբլոմովին կնայի, ձեռքը կսեղմի, կժպտա, և նորից կվերադառնա ժրությունը, ծիծաղը, և նա արդեն տիրապետում է իրեն։

Առանձնապես մի անգամ երեկոյան Օլգան ընկավ այդ տագնապալից դրության մեջ, սիրո մի ինչ-որ լուսնոտության մեջ և նոր լույսով երևցավ Օբլոմովին։

Օրը խեղդող էր, շոգ. անտառից խուլ կերպով աղմկում էր ջերմ քամին, երկինքը ծածկվում էր թանձր ամպերով։ Ավելի ու ավելի մթնում էր։

— Անձրև կգա,— ասաց բարոնը և տուն գնաց։

Մորաքույրը քաշվեց իր սենյակը։ Օլգան երկար, մտախոհ կերպով դաշնամուր էր նվագում, բայց հետո թողեց այդ։

— Չեմ կարող, մատներս դողում են, կարծես տոթը խեղդում է ինձ,— ասաց նա Օբլոմովին։— Մանք գանք պարտեզում։

Նրանք երկար լուռ մտան էին գալիս ծառուղիներով թևանցուկ արած։ Օլգայի ձեռքերը խոնավ են և փափուկ։ Նրանք մտան պարկը։

Ծառերն ու թփերը խառնվեցին և մի մռայլ զանգված կազմեցին. երկու քայլի վրա ոչինչ չէր կարելի տեսնել. միայն սպիտակավուն շերտերով օձի նման ձգվում էին ավազով ծածկված շավիղները։

Օլգան սևեռուն հայացքով նայում էր մթության մեջ և կպչում Օբլոմովին։ Լուռ թափառում էին նրանք։

— Ես սարսափում եմ,— հանկարծ ասաց Օլգան ցնցվելով, երբ նրանք գրեթե խարխափելով անցնում էին նեղ ծառուղով, անտառի երկու սև, անթափանցելի պատերի միջև։

— Ինչի՞ց,— հարցրեց Օբլոմովը։— Մի՛ վախենա, Օ՛լգա, ես քեզ հետ եմ։

— Ես քեզանի՞ց էլ եմ սարսափում,— ասում էր Օլգան շշնջալով։— Բայց մի տեսակ հաճելի սարսա՞փ է։ Սիրտս մարում է։ Ձեռքդ բեր, տե՛ս, թե ինչպես է բաբախում այն։

Իսկ ինքը ցնցվում ու շուրջն էր նայում։

— Տեսնու՞մ ես, տեսնու՞մ ես,— ցնցվելով շշնջում էր նա, երկու ձեռքերով ամուր բռնելով նրա ուսից։— Դու չե՞ս տեսնում, մի մարդ է երևում խավարի մեջ...

Օլգան ավելի ամուր էր կպչում նրան։

— Ոչ ոք չկա...— ասում էր Օբլոմովը. բայց նրա մարմնով էլ սարսուռ էր անցնում։

— Շու՛տ արա՝ աչքերս մի բանով ծածկի՛ր... ավելի պինդ— ասում էր Օլգան շշնջալով... Դեհ, հիմա ոչինչ... նյարդերից է,— ավելացրեց նա հուզված։— Ահա կրկի՞ն։ Տե՛ս, ո՞վ է այն։ Նստենք որևէ տեղ նստարանի վրա...

Նա շոշափելով մի նստարան գտավ և Օլգային նստեցրեց։

— Տուն գնանք, Օ՛լգա,— հորդորում էր նա,— դու հիվանդ ես։

Օլգան գլուխը դրեց նրա ուսին։

— Ո՛չ, օդն այստեղ ավելի թարմ է,— ասաց նա,— նեղություն եմ զգում այստեղ, սրտիս մոտ։

Նրա տաք շունչը դիպչում էր Օբլոմովի այտին։

Նա ձեռքով շոշափեց Օլգայի գլուխը. գլուխն էլ տաք է, կուրծքը շնչում է ծանր և թեթևանում է հաճախակի հառաչանքներից։

— Ավելի լավ չէ՞ տուն գնանք— պնդում էր Օբլոմովն անհանգստացած։— Հարկավոր է պառկել...

— Ո՛չ, ո՛չ, թո՛ղ ինձ, ձեռք մի՛ տա...— ասում էր Օլգան նվաղկոտ, հազիվ լսելի ձայնով։— Ա՛յ, այստեղ այրվում է...— ցույց էր տալիս նա իր կուրծքը։

— Իսկապես, տուն գնանք...— շտապեցնում էր Օբլոմովը։

— Ո՛չ, սպասի՛ր, կանցնի...

Օլգան սեղմում էր նրա ձեռքը և ժամանակ առ ժամանակ մոտիկից նայում նրա աչքերի մեջ ու երկար լռում։ Հետո սկսեց լաց լինել, սկզբում մեղմիկ, հետո հեծկլտալով։ Օբլոմովն իրեն կորցրեց։

— Ի սեր աստծու, Օ՛լգա, շու՛տ տուն գնանք,— անհանգստացած ասում էր նա։

— Ոչինչ,— պատասխանում էր Օլգան՝ հեկեկալով,— մի՛ խանգարի, թող մի կուշտ լաց լինեմ... կրակը դուրս կգա արցունքների հետ, սիրտն կթեթևանա. այս բոլորը նյարդերի խաղեր են...

Օբլոմովը լսում էր մթության մեջ, թե ինչպես ծանր է շնչում Օլգան, զգում էր, թե ինչպես են իր ձեռքի վրա կա-

թում նրա տաք արցունքները, ինչպես ջղաձգորեն սեղմում է նա Օբլոմովի ձեռքը։

Օբլոմովը չէր շարժվում ամենևին, չէր շնչում։ Իսկ Օլգայի գլուխն ընկած էր նրա ուսին, նրա շնչառությունը ջերմացնում էր Օբլոմովի այտը... Օբլոմովն էլ էր ցնցվում, բայց չէր համարձակվում շրթունքները կպցնել նրա այտին։

Հետո Օլգան հետզհետե ավելի ու ավելի հանդարտվեց, շնչառությունը հավասար դարձավ... Նա լռեց։ Օբլոմովը կարծեց, թե նա քնած է, և վախենում էր շարժվել տեղից։

— Օ՛լգա,— շշնջալով ձայն տվեց նա։

— Ի՞նչ է,— նույնպես շշնջալով պատասխանեց նա և հառաչեց լսելի ձայնով։

— Ա՛յ, հիմա... անցավ...— ասաց Օլգան նվաղկոտ,— հիմա լավ եմ, ազատ եմ շնչում։

— Գնանք,— ասում էր Օբլոմովը։

— Գնա՞նք,— շուշեանալով կրկնում էր Օլգան։— Ի՞մ սիրեցյալ,— գգվանքով շշնջաց հետո՝ սեղմելով նրա ձեռքը և, հենվելով նրա ուսին, անհաստատ քայլերով տուն հասավ։

Օբլոմովը դահլիճում նայեց նրան. նա թույլ էր, բայց ժպտում էր մի տարօրինակ, անգիտակցական ժպիտով, կարծես թե անուրջի ազդեցության տակ։

Նա նստեցրեց Օլգային բազմոցի վրա, կողքին ծունկ չոքեց և մի քանի անգամ, խորին գորովանքով, համբուրեց նրա ձեռքը։

Օլգան շարունակ նույն ժպիտով նայում էր նրան, տալով երկու ձեռքն էլ, և աչքերով ճանապարհ դրեց նրան մինչև դռները։

Դռների մոտ Օբլոմովը շուռ եկավ, Օլգան շարունակում էր նայել նրա ետևից, դեմքին նույն ուժասպառությունը, նույն ջերմ ժպիտը, կարծես թե չի կարողանում հաղթահարել այն...

Օբլոմովը գնաց մառոմունքի մեջ ընկած։ Նա ինչ-որ տեղ տեսել էր այդ ժպիտը. մտաբերեց մի նկար, որի վրա պատկերված էր այդպիսի ժպիտ ունեցող մի կին... միայն թե ոչ Կորդելիան...

Հաջորդ օրը նա մարդ ուղարկեց՝ առողջությունը հարցնելու։ Պատվիրել էին ասել.

— Փառք աստծու, և խնդրում են այսօր ճաշի, իսկ երեկոյան բոլորը բարեհաճում են հրախաղության գնալ, հինգ վերստ հեռավորության վրա։

Օբլոմովը չհավատաց և ինքը գնաց այնտեղ։ Օլգան թարմ էր, ինչպես ծաղիկ. աչքերում փայլ, առույգություն, այտերին կարմրին են տալիս երկու վարդագույն բծեր. ձայնն այնպես հնչու՞ն է։ Բայց նա հանկարծ շփոթվեց, քիչ էր մնում՝ ճիչ արձակեր, երբ Օբլոմովը մոտեցավ նրան, և ամբողջովին կարմրատակեց, երբ նա հարցրեց, թե ինչպես է զգում իրեն երեկվանից հետո։

— Այդ մի փոքրիկ նյարդային խանգարում էր,— շտապշտապ ասաց Օլգան։— Ma tante-ն ասում է, թե պետք է վաղ պառկել քնելու։ Այդ միայն վերջերս է ինձ պատահում...

Նա չվերջացրեց և շուռ եկավ, կարծես՝ գթություն էր հայցում։ Իսկ թե ինչից շփոթվեց նա, ինքն էլ չգիտե։ Ինչու՞ էր նրան կրծոտում ու այրում հիշողությունը երեկ երեկոյի մասին, այդ խանգարման մասին։

Նա և՛ ամաչում էր ինչ-որ բանից, և արտնեզում էր մեկի վրա։ ոչ այն է՝ իր վրա, ոչ այն է՝ Օբլոմովի վրա։ Իսկ որոշ րոպեների էլ նրան այնպես էր թվում, որ Օբլոմովն իր համար ավելի սիրելի, ավելի մոտիկ է դարձել, որ ինքը համակրություն է զգում դեպի նա արտասվելու չափ, կարծես թե երեկ երեկոյից Օբլոմովի հետ ինչ-որ խորհրդավոր ազգակցության մեջ է մտել...

Օլգան երկար ժամանակ չէր քնում, առավոտյան հուզված երկար ման էր գալիս ծառուղում, զբոսայգուց մինչև տուն և ետ, շարունակ մտածում էր, մտածում, ենթադրություններից գլուխ չէր հանում, մերթ մռայլվում էր, մերթ հանկարծ կարմրատակում ու ժպտում ինչ-որ բանի համար, բայց և չէր կարողանում ոչինչ վճռել։

«Ա՜խ, Սոնեչկա»— մտածում էր նա արտնեզելով։ «Որքա՞ն երջանիկ է նա։ Իսկու՞ն կվճռեր»։

Իսկ Օբլո՞մովը։ Ինչո՞ւ նա երեկ համր ու անշարժ էր իր հետ, չնայելով, որ իր շունչը ջերմություն էր փչում նրա այտին, որ իր ջերմ արցունքները կաթում էին նրա ձեռքի վրա, որ նա իրեն համարյա գրկած տուն բերեց, լսում էր իր

սրտի անհամեստ շշնջոցը... Իսկ մեկ ուրի՞շը։ Ուրիշներն այնպես հանդուգն են նայում...

Թեև Օբլոմովն ապրել էր իր երիտասարդությունը ամենագետ, բոլոր կենսական հարցերը վաղուց վճռած, ոչ մի բանի չհավատացող և ամեն ինչ սառն, խելացի վերլուծության ենթարկող երիտասարդների շրջանում, բայց նրա հոգու մեջ ջերմ հավատ կար դեպի բարեկամությունը, սերը, մարդկային ազնվությունը, և որքան էլ նա սխալվում էր մարդկանց վերաբերյալ, որքան էլ դեռ էլի սխալվեր, տառապեր նրա սիրտը, բայց ոչ մի անգամ չխախտվեց բարու հիմունքը և նրա հավատը։ Նա գաղտնի երկրպագում էր կնոջ մաքրությանը, ընդունում էր նրա իշխանությունն ու իրավունքները և նրան զոհեր էր բերում։

Բայց նրան պակասում էր բնավորությունը՝ բացահայտորեն ընդունելու բարու ուսմունքը և հարգանքը դեպի անմեղությունը։ Նա հանդարտ արքենում էր նրա բույրով, բայց բացահայտորեն երբեմն միանում էր ցինիկների խմբին, որոնք դողդողում էին նույնիսկ կասկածից ողջախոհության վերաբերմամբ կամ նրան հարգանք ցույց տալիս, և այդ ցինիկների մոլեգին խմբերգին ավելացնում էր նաև իր թեթևամիտ խոսքը։

Նա երբեք պարզապես չէր թափանցում այն բանի մեջ, թե որքան շատ է կշռում մարդկային ճառերի հեղեղների մեջ նետված բարու, ճշմարտության, մաքրության խոսքը, թե ինչպիսի խոր գալար է բաց անում այն. նա չէր մտածում, որ արիությամբ ու բարձրաձայն, առանց կեղծ ամոթի, այլ խիզախորեն ասված լինելով՝ այն չի խեղդվի աշխարհիկ սատիրների այլանդակ աղաղակների մեջ, այլ ինչպես մարգարիտ կխորասուզվի հասարակական կյանքի հորձանուտի մեջ և միշտ նրա համար մի խեցի կգտնվի։

Շատերը կմկմում են լավ խոսք ասելիս, կարմրելով ամոթից, և համարձակ, բարձր արտասանում են թեթևամիտ խոսքը, չկասկածելով, որ այն ևս, դժբախտաբար, իզուր-չի կորչում և չարիքի, երբեմն անջնջելի, երկար հետք է թողնում։

Դրա փոխարեն Օբլոմովը գործով արդար էր. նրա խղճի վրա չկար ոչ մի բիծ, կշտամբանք՝ սառն, անհոգի ցինիզմի վերաբերմամբ, որ ասված լիներ առանց հրապուրվելու և

առանց պայքարի։ Նա չէր կարողանում լսել ամենօրյա պատմություններն այն մասին, թե ինչպես մեկը փոխել է իր ձիերը, կահկարասիքը, իսկ մյուսը՝ կնոջը... և ինչ ծախսեր են նստել այդ փոփոխությունները...

Շատ անգամ էր նա տանջվել, երբ տղամարդը կորցրել էր իր արժանապատվությունն ու պատիվը, լաց էր եղել իրեն օտար կնոջ կեղտոտ անկման համար, բայց լռում էր՝ վախենալով հասարակությունից։

Հարկավոր էր կոահել այս. Օլգան կոահում էր։

Տղամարդիկ ծիծաղում են այդպիսի տարօրինակ մարդկանց վրա, բայց կանայք միանգամից ճանաչում են դրանց. մաքուր, ողջախոհ կանայք սիրում են նրանց —համազգացության հետևանքով. փչացածները մերձեցնում են փնտրում նրանց հետ, որպեսզի փչացածությունից թարմանան։

Ամառն առաջ էր գնում, անցնում էր։ Առավոտներն ու երեկոները մութ ու խոնավ էին դառնում։ Ո՛չ միայն յասամանները, այլև լորիներն էլ թառամել էին, հատապտուղները վերջացել։ Օբլոմովն ու Օլգան տեսնվում էին ամեն օր։

Օբլոմովը հասնում էր կյանքի ետևից, այսինքն՝ յուրացնում էր կրկին այն ամենը, ինչից վաղուց ետ էր ընկել. գիտեր, թե ինչու ֆրանսիական դեսպանը հեռացել է Հռոմից, ինչու են անգլիացիները զորք ու նավեր ուղարկում Արևելք. հետաքրքրվում էր, թե երբ նոր ճանապարհ կգցեն Գերմանիայում կամ Ֆրանսիայում։ Բայց Օբլոմովկայի միջով դեպի մեծ գյուղը տանող ճանապարհի մասին չէր մտածում, պալատում հավատարմագիրը չվավերացրեց և Շտոլցի նամակներին պատասխան չուղարկեց։

Նա յուրացրեց միայն այն, ինչ պտտվում էր Օլգայի տան ամենօրյա խոսակցությունների շրջանում, ինչ որ կատարվում էր նրանց մոտ ստացվող թերթերում և, շնորհիվ Օլգայի հաստատակամության, բավական ջանասիրությամբ հետևում էր ընթացիկ օտարերկրյա գրականությանը։ Մնացած բոլորը սուզվում էր մաքուր սիրո ոլորտում։

Չնայած այդ վարդագույն մթնոլորտի հաճախակի կերպափոխություններին, գլխավոր հիմքը հորիզոնի անամպությունն էր։ Եթե Օլգան երբեմն հարկադրված էր լինում խորհելու Օբլոմովի վրա, իր սիրո վրա դեպի նա, եթե այդ սի-

ռուց ազատ ժամանակ էր մնում և ազատ տեղ սրտում, երբ Օլգայի ոչ բոլոր հարցերն էին լիակատար ու միշտ պատրաստի պատասխան գտնում Օբլոմովի գլխում և Օբլոմովի կամքը պատասխան չէր տալիս Օլգայի կամքի կանչին, և Օլգայի աշխուժությանն ու կենսաստիպությանը նա միայն անշարժ-կրքոտ հայացքով էր պատասխանում,— Օլգան ծանր մտորումների մեջ էր ընկնում. ինչ-որ մի սառը բան, օձի նման, սողում էր նրա սիրտը, դուրս բերում նրան երազանքից, և սիրո տաքուկ, հեքիաթային աշխարհը փոխարկվում էր ինչ-որ աշնանային մի օրվա, երբ բոլոր առաթկանները էլ գորշ են երևում։

Օլգան փնտրում էր՝ ինչի՞ց է առաջ գալիս եռջանկությանն այդ անկատարությունը, անբավարարվածությունը։ Ի՞նչ է պակասում իրեն։ Էլ ի՞նչ է հարկավոր։ Չէ՞ որ ճակատագիր է, կոչում՝ սիրել Օբլոմովին։ Այդ սերն արդարանում է նրա հեզությամբ, մաքուր հավատով գեղի բարին, իսկ ամենից ավելին այն քնքշությամբ, որով նա Օլգան երբեք չի տեսել ոգևորության աչքերում։

Ի՞նչ անենք, որ նա Օլգայի ամեն մի հայացքին էլ հասկանալի հայացքով չի պատասխանում, որ երբեմն նրա ձայնի մեջ այն չի հնչում, ինչ կարծես մի անգամ արդեն հնչել էր նրա համար, չգիտես՝ երազում, չգիտես՝ իրոք... Դա երևակայություն է, նյարդերն են. ի՞նչ կարիք կա զուրկ երազից և խնդրին գրա տալու։

Եվ վերջապես, երբ Օլգան ուզենար էլ հեռանալ այդ սիրուց, ինչպե՞ս հեռանար։ Գործը արված է. նա արդեն սիրում էր, և քմահաճորեն, զգեստի նման, սերն իր վրայից դեն նետել չի կարելի։ «Կյանքում երկու անգամ չեն սիրում», մտածում էր նա, «ասում են՝ դա անբարոյական բան է»...

Այսպես էր սովորում Օլգան սիրել, փորձում էր այդ սերը և ամեն մի նոր քայլի հանդիպում էր արտաստրով կամ ժպիտով, մտմտում էր նրա մասին։ Հետո արդեն երևան էր գալիս այն կենտրոնացած արտահայտությունը, որի տակ թաքնվում էին թե՛ արտասուքները, թե՛ ժպիտը, որն այնպես վախեցնում էր Օբլոմովին։

Բայց այդ մտմտուքի մասին, այդ պայքարի մասին նա Օբլոմովին ակնարկ էլ չէր անում։

Օբլոմովը սիրել չէր սովորում, նա ենթում էր անուշիկ թմբիրության մեջ, որի մասին մի ժամանակ բարձրաձայն երազում էր Շտոլցի ներկայությամբ։ Ժամանակ առ ժամանակ նա սկսում էր հավատալ կյանքի մշտական անամպամածությանը, և նրան դարձյալ երազում էր Օբլոմովկան՝ բնակված բարի, թաքնկամ ու անհոգ մարդկանցով, տեսասի վրա նրա տեսը, քավաքաքված եռջանկությանից դուրս առաջացած մտորումը։

Նա հիմա էլ երբեմն ենթարկվում էր այդ մտորմանը և նույնիսկ, Օլգայից գաղանք, մի երկու անգամ քնեց անուսամ, սպասելով Օլգայի ուշացած գալուստանը... երբ հանկարծ անակնկալ ֆերպով ամպ երևաց երկնակամարում։

Մի անգամ նրանք երկուսով վերադառնում էին մի տեղից ծուլորեն, լուռ, և ուզում էին մեծ ճանապարհն անցնել, երբ նրանց դիմաց ելավ փոշու մի ամպ, իսկ ամպի մեջ սլանում էր մի կառք. կառքում նստած էր Սոնեչկան իր ամուսնու հետ, էլի մի ինչ-որ պարոն, դարձյալ մի ինչ-որ տիկին...

— Օ՛լգա՜, Օ՛լգա, Օ՛լգա Սերգեևնա,— լսվեցին բացականչությունները։

Կառքը կանգ առավ։ Այդ բոլոր պարոններն ու տիկինները ցած իջան, շրջապատեցին Օլգային, սկսեցին ողջագուրվել, համբուրվել, բոլորն սկսեցին միանգամից խոսել՝ երկար ժամանակ չնկատելով Օբլոմովին։ Հետո հանկարծ բոլորը նայեցին նրա վրա, պարոններից մեկը լորնետով։

— Ո՞վ է,— ցած ձայնով հարցրեց Սոնեչկան։

— Իլյա Իլյիչ Օբլո՛մով,— ներկայացրեց նրան Օլգան։

Բոլորը մինչև տուն գնացին ոտքով։ Օբլոմովն իրեն անհարմար էր զգում. նա ետ ընկավ հասարակությունից և ուզում էր ցանկապատի այն կողմն անցնել, որպեսզի աշորայի միջով տուն ճողոպրի։ Օլգան իր հայացքով ետ դարձրեց նրան։

Գա վնաս չուներ, բայց այդ բոլոր պարոններն ու տիկիններն նրան այնպես տարօրինակ էին նայում. ասենք՝ այդ էլ ոչինչ։ Առաջները պատահում էր՝ նրան այլ կերպ չէին էլ նայում, շնորհիվ նրա քնքուշ, ձանձրույթով լի հայացքի՝ անփույթ կերպով հագնվելու։

Բայց պարոններն ու տիկինները նույն տարօրինակ հայացքը նրանից փոխադրում էին նաև Օլգայի վրա։ Օլգայի

վրա գցված այդ կասկածավոր հայացքից նրա սիրտը հանկարծ սառեց. ինչ-որ մի բան սկսեց կրծել նրան, բայց այնպես ցավագին, այնպես տանջալից, որ նա չդիմացավ ու տուն գնաց, և մտազբաղ էր, մռայլ։

Հետևյալ օրը Օլգայի հաճելի շաղակրատանքն ու սիրալիր շարաճճիությունը չկարողացան նրան ուրախացնել։ Օլգայի համառ հարցերին նա ստիպված եղավ արձագանքել՝ գլխացավը պատճառ բերելով և համբերությամբ թույլ տվեց, որ իր գլխին յոթանասունհինգ կոպեկի օդեկոլոն լցնեն։

Հետո, երրորդ օրը, երբ նրանք ուշ տուն վերադարձան, մորաքույրը մի տեսակ՝ չափազանց խելամտորեն նայեց նրանց, հատկապես Օբլոմովին, ապա ցած գցեց իր մեծ, մի փոքր ուռած կոպերը, իսկ աչքերը, կարծես, շարունակ նայում էին նաև կոպերի միջից, և մի րոպեի չափ մտազբաղ սպիրտ էր հոտոտում։

Օբլոմովը տանջվում էր, բայց լուռ էր։ Նա սիրտ չէր անում իր կասկածները հաղորդել Օլգային՝ վախենալով անհանգստացնել, վրդովել նրան, և, պետք է ճշմարիտն ասել, վախենում էր նաև իր համար, վախենում էր վրդովել այդ անվրդով, անամպ աշխարհը խիստ կարևորություն ունեցող այդպիսի հարցով։

Դա արդեն այն հարցը չէր, թե նա արդյոք սխալմա՞մբ է սիրել Օբլոմովին, այլ այն հարցը, թե արդյոք սխա՞լ չի նրանց ամբողջ սերը, այդ տեսակցություններն անտառում, միայնակ, երբեմն ուշ երեկոյան։

«Ես համբույր քաղելու ոտնձգություն արեցի», սարսափով մտածում էր նա, «իսկ չէ՞ որ դա քրեական հանցանք է բարոյականության օրենսգրքում, և առաջին, սակավ կարևորություն ունեցող հանցանք չէ՞։ Դեռ մինչև այն էլ շատ շատ աստիճաններ կան. ձեռք սեղմել, խոստովանություն, նամակ... Այդ բոլոր աստիճանները մենք անցել ենք։ Սակայն», մտածում էր նա այնուհետև, ուղղելով գլուխը, «իմ մտադրություններն ազնիվ են, ես...»

Եվ հանկարծ ամպն անհետացավ, նրա առջև բացվեց տոն օրվա նման պայծառ Օբլոմովկան, ամբողջովին փայլփլուն, արևի ճառագայթների մեջ, կանաչ բլուրներով, արծաթե գետակով. նա գնում է Օլգայի հետ մտախոհ երկար ծառուղով,

բռնած նրա մեջքից, նստած է տաղավարում, տեռասի վրա...

Օլգայի շուրջ բոլորը գլուխ են խոնարհում՝ պաշտելով նրան, մի խոսքով՝ այն ամենը, ինչ նա ասում էր Շտոլցին։

«Այո՛, այո՛. բայց չէ՞ որ հենց դրանի՞ց պետք էր սկսել», մտածում էր նա նորից վախով։ «Եռակի սիրում եմ բառերը, յասամանի ճյուղը, խոստովանությունը, այդ բոլորը պետք է ամբողջ կյանքի երջանկության գրավականը լինի և չկրկնվի մաքուր կնոջ մոտ։ Իսկ ես ի՞նչ եմ։ Ո՞վ եմ ես»,— մուրճի նման հարվածում էր այս բանը նրա գլխում։

«Ես գայթակղեցնող եմ, կնամոլի մե՞կը։ Պակասում է միայն այն, որ ես, ինչպես այն վատահոգի, ճարպակալած աչքերով ու կարմրաքիթ հին սելադոնը, կոճականցքիս մեջ խրեմ կնոջից գողացած վարդը և բարեկամիս ականջին փրփրսամ հաղթանակի մասին, որ... որ... Ա՜խ, աստված իմ, ու՞ր եմ հասել։ Ահա՛ որտեղ է անդունդը։ Եվ Օլգան բարձր չի թռչում նրա վրա,՝նա այդ անդունդի հատակին է... ինչո՞ւ, ինչի՞ համար...»։

Նա ուժասպառ էր լինում, երեխայի նման լաց լինում այն բանի համար, որ հանկարծ դժգունեցին նրա կյանքի վարդագույն ներկերը, այն բանի համար, որ Օլգան գոհ է բառնալու։ Օբլոմովի ամբողջ սերը ոճրագործություն է, մի բիծ նրա խղճի վրա։

Հետո նրա վրդովված միտքը մի րոպեով բացվում էր, երբ Օբլոմովը գիտակցում էր, որ այդ բոլորի համար կա օրինական ելք. Օլգային մեկնել ձեռքը՝ մատանիով...

— Այո՛, այո՛,— հրճվալից սարսուռով ասում էր նա,— և պատասխանը կլինի ամոթխած համաձայնության հայացքը... Օլգան ոչ մի խոսք չի ասի, նա կկարմրատակի, կժպտա մինչև հոգու խորքը, հետո նրա հայացքը կլցվի արցունքներով...

Արցունքներ և ժպիտ, լուռ մեկնված ձեռք, հետո կենդանի, աշխույժ հրճվանք, երջանիկ հապճեպություն շարժումների մեջ, ապա երկար- երկար խոսակցություն, փսփսոց՝ առանձնացած դրությամբ, հոգիների այդ դյուրահավատ շշնջո՛ց, խորհրդավոր պայմանագրությու՛ն՝ երկու կյանքն ի մի ձուլելու։

Դատարկ բաներում, ղրույցներում առօրյա բաների մա-

սին. երևան է գալու բացի իրենցից ուրիշ որևէ մեկի համար անտեսանելի սերը։ Եվ ոչ ոք չի համարձակվի հայացքով վիրավորելու նրանց։

Հանկարծ Օբլոմովի դեմքը դարձավ այնպես խիստ, լուրջ։

«Այո», խոսում էր նա ինքն իր հետ, «ահա թե որտե՞ղ է այն, ուղիղ, ազնիվ ու հաստատուն երջանկության աշխարհը։ Ես ամաչում էի մինչև այժմ թաքցնել այդ ծաղիկները, սավառնել սիրո բուրմունքի մեջ, ինչպես երեխա, տեսակցություններ փնտրել, լույսի լույսով ման գալ, ականջ դնել աղջկա սրտի բաբախմանը, որսալ նրա երազանքի սարսուռը... աստվա՞ծ իմ»։

Նա մինչև ականջները կարմրեց։

«Հենց այսօր երեկոյան Օլգան կլիմանա, թե ինչպիսի խիստ պարտավորություններ է դնում սերը. այսօր վերջին միայնակ տեսակցությունը կլինի, այսօր...»

Նա ձեռքը դրեց սրտին այն բաբախում էր ուժգին, բայց համաչափ, ինչպես որ պետք է բաբախի ազնիվ մարդկանց սիրտը։ Նա դարձյալ հուզվում է այն մտքից, թե ինչպես Օլգան սկզբում կտխրի, երբ ինքը կասի, որ հարկավոր չէ տեսնվել. հետո Օբլոմովը վախվխելով կհայտարարի նրան իր մտադրության մասին, բայց նախ կփորձի իմանալ նրա մտածելակերպը, կհրճվի նրա շփոթմունքով, իսկ այնուհետև...

Այնուհետև նա շարունակ երազում է Օլգայի ամոթխած համաձայնությունը, ժպիտն ու արցունքները, լուռ մեկնած ձեռքը, երկար, խորհրդավոր շշնջոցը և համբույրները՝ ամբողջ աշխարհի առա

XII

Նա վազեց փնտրելու Օլգային։ Տանն ասացին, որ գնացել է. վազեց գյուղ՝ չկա։ Տեսավ, Օլգան հեռվում հրեշտակի նման երկինք է բարձրանում, գնում է սարը, այնպես թեթև է հենվում ոտքով, այնպես երերվում է նրա իրանը։

Օբլոմովը գնում էր նրա ետևից, բայց Օլգան հազիվ էր դիպչում կանաչին և իրոք կարծես թե թռչում է։ Օբլոմովը սարի կեսին հասնելով՝ սկսեց կանչել նրան։

Օլգան սպասում էր նրան, և հենց որ նա մոտեցավ և մի երկու սաժեն էր մնում, Օլգան առաջ շարժվեց և նորից մեծ տարածություն թողեց նրա և իր միջև, կանգ առավ ու սկսեց ծիծաղել։

Օբլոմովը, վերջապես, կանգ առավ, վստահ, որ Օլգան այլևս չի փախչի իրենից։ Եվ Օլգան մի քանի քայլ վազեց դեպի նա, ձեռքը տվեց և, ծիծաղելով, քարշ տվեց իր ետևից։

Նրանք մտան պուրակը. Օբլոմովը վերցրեց գլխարկը, իսկ Օլգան թաշկինակով սրբեց նրա ճակատը և սկսեց հովանոցով հով անել նրա դեմքին։

Օլգան առանձնապես զվարթ էր, շատախոս, աշխույժ կամ հանկարծ տարվում էր քնքույշ խոյանքով, հետո հանկարծ ընկնում մտախոհության մեջ։

— Գուշակիր, թե ինչ եմ արել երեկ,— հարցրեց Օլգան, երբ նրանք նստեցին ստվերոտ մի տեղ։

— Կարդո՞ւմ էիր։

Օլգան բացասաբար թափահարեց գլուխը։

— Գրո՞ւմ էիր։

— Ո՛չ։

— Երգո՞ւմ էիր։

— Ո՛չ։ Գուշակել էի տալիս։ Երեկ եկել էր կոմսուհու տընտեսուհին. նա գիտե թղթախաղով գուշակություններ անել, և ես խնդրեցի։

— Էհ, հետո ի՞նչ։

— Ոչինչ։ Դուրս եկավ ճանապարհ, հետո ինչ-որ ամբոխ և ամենուրեք շեկ տղամարդը, ամենուրեք... Ես ամբողջովին կարմրեցի, երբ նա Կատյայի ներկայությամբ հանկարծ ասաց, որ իմ մասին է մտածում փոսիկի թագավորը։ Երբ նա ուզում էր ասել, թե ում մասին եմ մտածում, ես թղթերը խառնեցի ու փախա։ Դու իմ մասի՞ն ես մտածում— հանկարծ հարցրեց Օլգան։

— Ա՜խ,— ասաց Օբլոմովը։— Եթե կարելի լիներ ավելի քի՞չ մտածել։

— Հապա ե՞ս,— մտախոհ ասում էր Օլգան։— Ես արդեն մոռացել եմ, թե ինչպես են ուրիշ կերպ ապրում։ Երբ դու անցյալ շաբաթվա մեջ նեղացար և երկու օր չերևացիր,— հիշո՞ւմ ես, բարկացե՞լ էիր,— ես հանկարծ փոխվեցի, չար

էի դարձել։ Կռիվ եմ անում Կատյայի հետ, ինչպես դու Զախարի հետ. տեսնում եմ, թե ինչպես նա գաղտնի լաց է լինում, և ամենևին չեմ խղճում նրան։ Պատասխան չեմ տալիս ma tante-ին, չեմ լսում, թե ինչ է ասում նա, ոչինչ չեմ անում, ոչ մի տեղ չեմ ուզում գնալ։ Բայց հենց որ դու եկար, հանկարծ բոլորովին ուրիշ մարդ դարձա։ Կատյային ընծայեցի բաց մանիշակագույն զգեստս...

— Սե՞րն է դա,— արտասանեց Օբլոմովը զգայացունց կերպով։

— Ի՞նչը։ Բացմանիշակագույն զգե՞ստը։

— Ամե՞ն ինչ։ Քո խոսքերի մեջ ես ինձ եմ տեսնում. ես էլ առանց քեզ օր ու կյանք չունեմ, գիշերը երազում ինչ-որ ծաղկած հովիտներ եմ տեսնում։ Տեսնում եմ քեզ— ես քարի եմ, գործուն . չեմ տեսնում՝ տաղտկալի է, ծուլանում եմ, ուզում եմ պառկել և ոչ մի բանի մասին չմտածել... Սիրի՛ր, մի՛ ամաչիր քո սիրուց...

Հանկարծ Օբլոմովը լռեց։ «Այս ի՞նչ եմ ասում ես. չէ՞ որ ես դրա՛ համար չեմ եկել»,— մտածեց և սկսեց հազալ. ուզում էր հոնքերը կիտել։

— Իսկ եթե ես հանկարծ մեռնե՞մ,— հարցրեց Օլգան։

— Որպիսի՞ միտք,— անփութորեն ասաց նա։

— Այո՛,— ասում էր Օլգան,— ես կմրսեմ, կսկսվի տենդ. դու կգաս այստեղ՝ ես չկամ, կգնաս մեզ մոտ, կասեն՝ հիվանդ է. վաղը՝ նույնպես. իմ փակոցափեղկերը փակ են. բժիշկը տարուբերում է գլուխը. Կատյան դուրս է գալիս քեզ մոտ լաց լինելով, ոտքերի մատների ծայրերի վրա և շշնջում է՝ հիվանդ է, մեռնում է...

— Ա՜խ...— ասաց Օբլոմովը հանկարծ։

Օլգան ծիծաղեց։

— Ի՞նչ կլինի այն ժամանակ քո դրությունը,— հարցրեց Օլգան՝ նայելով նրա երեսին։

— Ի՞նչ։ Կգժվեմ կամ ինձ կսպանեմ, իսկ դու հանկարծ կառողջանա՞ս։

— Ո՛չ, ո՛չ, հերի՞ք է,— ասում էր Օլգան վախեցած։— Ա՛յ թե ու՞ր հասցրինք բանը։ Միայն թե դու ինձ մոտ չգաս մեռած. ես մեռելներից վախենում եմ...

Օբլոմովը ծիծաղեց և Օլգան նույնպես։

— Աստված իմ, ինչպիսի՞ երեխաներ ենք մենք,— ասաց Օլգան՝ սթափվելով այդ շաղակրատանքից։

Օբլոմովը դարձյալ հազաց։

—Լսի՛ր... ես ուզում էի ասել։

— Ի՞նչ,— հարցրեց Օլգան՝ արագ շուռ գալով դեպի նա։

Օբլոմովը վախվորած լռում էր։

— Դե ասա՛,— հարցնում էր Օլգան՝ թեթևակի քաշելով նրա թևքից։

— Ոչինչ, այնպես...— ասաց նա քաշվելով։

— Ո՛չ, քո մտքում ինչ-որ բա՞ն կա։

Օբլոմովը լուռ էր։

— Եթե որևէ սարսափելի բան է, ապա ավելի լավ է՝ չասես,— ասաց Օլգան։— Ո՛չ, ասա՛,— հանկարծ ավելացրեց նա կրկին։

— Ոչինչ էլ չկա, անմիտ բան է։

— Ո՛չ, ո՛չ, ինչ-որ մի բան կա, ասա՛,— ձեռք չէր քաշում Օլգան, ամուր բռնելով սերթուկի երկու եզրերից, և այնպես մոտ էր բռնել, որ Օբլոմովը պետք է դեմքը մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ շուռ տար, որպեսզի չհամբուրեր նրան։

Նա դեմքը չէր շրջում, բայց ականջներում որոտում էր Օլգայի ահեղ «երբեք»-ը։

— Դե ասա՛...— ձեռք չէր քաշում Օլգան։

— Չեմ կարող, պետք չէ...— խուսափում էր Օբլոմովը։

— Հապա ինչպե՞ս էիր քարոզում, թե «փոխադարձ վստահությունը փոխադարձ երջանկության հիմքն է», թե «սրտի մեջ ոչ մի ծալք չպետք է լինի, որը չկարդա բարեկամի աչքը»։ Սրանք ու՞մ խոսքերն են։

— Ես ուզում էի ասել միայն,— սկսեց Օբլոմովը դանդաղ,— որ ես քեզ այնպես եմ սիրում, այնպես եմ սիրում, որ եթե...

Նա հապաղում էր։

— Հը՞,— հարցրեց Օլգան անհամբեր։

— Որ եթե դու հիմա ուրիշին սիրեիր և նա ավելի ընդունակ լիներ քեզ երջանկացնելու, ես... լուռ կուլ կտայի իմ վիշտը և տեղը կզիջեի նրան։

Օլգան հանկարծ ձեռքից բաց թողեց նրա սերթուկը։

— Ինչու՞,— զարմացած հարցրեց Օլգան։— Ես այդ չեմ

հասկանում։ Ես քեզ ոչ ոքի չէի վիճի. ես չեմ ուզում, որ դու ուրիշի հետ երջանիկ լինես։ Դա ինչ-որ խորիմաստ բան է, ես չեմ հասկանում։

Օլգայի հայացքը մտախոհ կերպով ծառից ծառ էր թռչում։

— Նշանակում է, դու ինձ չե՞ս սիրում,— հարցրեց Օլգան հետո։

— Ընդհակառակը, ես քեզ սիրում եմ ինքնուրացության չափ, եթե պատրաստ եմ ինձ զոհ բերել։

— Բայց ինչի՞ համար։ Ո՞վ է քեզ խնդրում։

— Ես ասում եմ՝ այն դեպքում, եթե դու սիրեիր ուրիշին։

— Ուրիշի՞ն։ Դու գժվե՞լ ես։ Ինչու՞, եթե ես քեզ եմ սիրում։ Մի՞թե դու ուրիշին կսիրես։

— Ի՞նչ ես լսում ինձ։ Ասված գիտե, թե ես ինչ եմ ասում, իսկ դու հավատում ես։ Ես այդ էլ չէի ուզում ասել ամենևին...

— Հապա ի՞նչ էիր ուզում ասել։

— Ես ուզում էի ասել, որ մեղավոր եմ քո առաջ, վաղուց մեղավոր եմ...

— Ի՞նչ բանում։ Ինչպե՞ս,— հարցնում էր Օլգան։— Չե՞ս սիրում։ Կառնա՞կ ես արել, գուցե։ Շու՛տ, ասա։

— Ո՛չ, ո՛չ, ամենևին այդ չէ,— ասում էր Օբլոմովն անձկությամբ։— Ա՛յ, տեսնում ես՝ ինչ...— սկսեց նա անվճռական կերպով,— մենք տեսնվում ենք միմյանց հետ... գաղտնի...

— Գաղտնի՞։ Ինչու՞ գաղտնի։ Ես համարյա ամեն անգամ ma tante-ին ասում եմ, որ տեսել եմ քեզ...

— Մի՞թե ամեն անգամ,— անհանգստությամբ հարցրեց Օբլոմովը։

— Ի՞նչ վատ բան կա դրանում։

— Ես մեղավոր եմ. ես պարտավոր էի վաղուց ասել քեզ, որ այդ... անելու բան չէ...

— Դու ասել ես,— ասաց Օլգան։

— Ասե՞լ եմ։ Ա՜։ Իբրև ես ախր... ակնարկ արել եմ։ Ուրեմքն, նշանակում է, ես իմ անելիքն արել եմ։

Օբլոմովը սրտապնդվեց և ուրախ էր, որ Օլգան այնպես հեշտությամբ նրա վրայից վերցրեց պատասխանատվության բեռը։

— Էլ ի՞նչ,— հարցրեց Օլգան։

— Էլ... միայն այդ,— պատասխանեց Օբլոմովը։

— Ճիշտ չէ՞,— հաստատապես նկատեց Օլգան։— Ինչ-որ մի բան էլ կա. դու ամեն ինչ չես ասել։

— Մեկ էլ՝ ես մտածում էի...— սկսեց Օբլոմովը, կամենալով խոսքերին անփույթ տոն տալ,— որ...

Օբլոմովը կանգ առավ։ Օլգան սպասում էր։

— Որ մենք պետք է ավելի սակավ տեսնվենք իրար հետ...— Նա վեհերոտ նայեց Օլգային։

Օլգան լուռ էր։

— Ինչո՞ւ,— հարցրեց հետո Օլգան՝ մտածելով։

— Ինձ կրծում է օձը. դա խիղճն է... Մենք այնքան երկար ենք մնում միայնակ. ես հուզվում եմ, սիրտս մարում է. դու նույնպես անհանգիստ ես... ես վախենում եմ...— դժվարությամբ վերջացրեց նա։

— Ինչի՞ց։

— Դու չահել ես և չգիտես բոլոր վտանգները, Օ՛լգա։ Երբեմն մարդն իր տերը չէ. նրա մեջ ինչ-որ դժոխային ուժ է մտնում, սիրտը ծածկվում է խավարով, իսկ աչքերի մեջ կայծակներ են փայլատակում։ Մտքի պայծառությունն աղոտանում է, հարգանքը դեպի մաքրությունն ու անմեղությունը— ամեն ինչ սրբում-տանում է մրրիկը. մարդն իրեն չի հիշում. կիրքն է շնչում նրա մեջ, նա դադարում է իրեն տիրապետելուց, և այն ժամանակ ոտքերի տակ բացվում է անդունդը։

Օբլոմովը մինչև անգամ ցնցվեց։

— Է՜հ, ի՞նչ կա որ։ Թո՛ղ բացվի,— ասաց Օլգան՝ լայն բացած աչքերով նայելով նրան։

Օբլոմովը լուռ էր. կամ այլևս բան չկար ասելու, կամ հարկավոր չէր ասել։

Օլգան երկար նայում էր նրան, կարծես կարդում էր նրա ճակատի ծալքերում, ինչպես գրված տողերում, և ինքն էլ հիշում էր նրա ամեն մի խոսքը, հայացքը, մտքում վերհիշեց իր սիրո ամբողջ պատմությունը, հասավ մինչև երեկոն այդում և հանկարծ կարմրեց։

— Դու շարունակ հիմարություններ ես խոսում,— տրտարտաղ նկատեց նա՝ մի կողմ նայելով։— Ես ոչ մի կայծակ էլ չեմ տեսել քո աչքերում... դու ինձ վրա մեծ մասամբ նա-

յում ես, ինչպես... իմ դայակ Կուզմինիչնան,— ավելացրեց նա և ծիծաղեց։

— Դու կատակ ես անում, Օ՛լգա, իսկ ես առանց կատակի ասում եմ... և դեռ բոլորը չեմ ասել։

— Էլ ի՞նչ կա,— հարցրեց Օլգան։— Էլի ինչպիսի՞ անգունդ կա։

Օբլոմովը հառաչեց։

— Այն, որ պետք չէ մեզ տեսնվել միմյանց հետ... առանձնացած...

— Ինչու՞։

— Լավ չէ...

Օլգան մտքերի մեջ ընկավ։

— Այո՛, ասում են, դա լավ չէ,— ասաց Օլգան, մտորման մեջ ընկած,— բայց ինչու՞։

— Ի՞նչ կասեն, երբ իմանան, երբ տարածվի...

— Ո՞վ կասի։ Ես մայր չունեմ. միայն նա կարող էր ինձ հարցնել, թե ինչու եմ ես քեզ հետ տեսնվում, և միմիայն նրա առաջ ես իբրև պատասխան լաց կլինեի և կասեի, որ ես ոչ մի վատ բան չեմ անում, և դու նույնպես։ Նա կհավատար։ Էլ ուրիշ ո՞վ,— հարցրեց Օլգան։

— Մորաքույրդ,— ասաց Օբլոմովը։

— Մորաքույրս։

Օլգան վշտալի և բացասաբար շարժեց գլուխը։

— Նա երբեք չի հարցնի։ Եթե ես բոլորովին հեռանայի էլ, նա չէր գնա որոնելու և ինձ հարցնելու, և ես էլ այլևս չէի գնա նրան ասելու, թե որտեղ եմ եղել և ինչ եմ արել։ Էլ ո՞վ։

— Ուրիշները, բոլորը... Նորերս Սոնեչկան նայում էր քեզ ու ինձ, ժպտում, և նրա հետ եղած այն բոլոր պարոններն ու տիկինները նույնպես։

Օբլոմովը պատմեց Օլգային այն ամբողջ տագնապը, որ նա ապրել էր այն ժամանակվանից։

— Քանի Սոնեչկան միայն ինձ էր նայում,— ավելացրեց նա,— ես ոչինչ, բայց երբ այդ նույն հայացքն ընկավ քեզ վրա, ձեռքերս ու ոտքերս սառույց կտրեցին։

— Է՞...— հարցրեց Օլգան սառն։

— Այ, այն ժամանակվանից ես ահա տանջվում եմ օր ու գիշեր, գլուխ եմ կոտրում, թե ինչպես կանխենք տարածումը։

Հոգում էի, որպեսզի քեզ չվախեցնեն... Ես վաղուց ուզում էի քեզ հետ խոսել...

— Իզո՞ւր հոգս,— վրա բերեց Օլգան։— Ես առանց քեզ էլ գիտեի...

— Ինչպե՞ս թե գիտեիր,— հարցրեց Օբլոմովը զարմացած։

— Այնպես։ Սոնեչկան խոսեց ինձ հետ, ուզում էր ինձնից խոսք դուրս քաշել, կծում էր, մինչև անգամ սովորեցնում, թե ինձ ինչպես պահեմ քեզ հետ...

— Դու ինձ ո՛չ մի խոսք չես ասել, Օ՛լգա,— կշտամբեց նա։

— Դու նույնպես մինչև հիմա ինձ ոչինչ չես ասել քո հոգսի՞ մասին։

— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր նրան,— հարցրեց Օբլոմովը։

— Ոչի՞նչ։ Ի՞նչ պիտի պատասխանեի դրան։ Միայն կարմրեցի։

— Աստվա՞ծ իմ։ Բանը որտե՞ղ է հասել. դու կարմրու՞մ ես, — սարսափով ասաց Օբլոմովը։— Ինչպե՞ս անզգույշ ենք մենք։ Ի՞նչ դուրս կգա սրանից։

Օբլոմովը հարցական հայացք գցեց նրա վրա։

— Չգիտեմ,— ասաց Օլգան հեզությամբ։

Օբլոմովը մտածում էր հանգստանալ՝ բաժանելով հոգսն Օլգայի հետ, նրա աչքերից և պարզ խոսքերից կամքի ուժ քաղել, և հանկարծ, զվարթ ու վճռական պատասխան չգտնելով, վհատվեց։

Նրա դեմքը ծածկվեց անվճռականությամբ, հայացքը վշտալից թափառում էր շուրջը։ Նրա ներսում արդեն մի թեթև տենդ էր սկսվել։ Նա համարյա մոռացավ Օլգայի մասին, նրա առջև խռնվել էին Սոնեչկան իր ամուսնու հետ, հյուրերը, լսվում էր նրանց խոսակցությունը, ծիծաղը։

Օլգան, փոխանակ իր սովորական հնարագիտության, լռում էր, սառն նայում նրա վրա և էլ ավելի սառն ասում էր «չգիտեմը»։ Իսկ Օբլոմովը ջանք չգործադրեց կամ չկարողացավ թափանցել այդ «չգիտեմի» խորհրդավոր իմաստի մեջ։

Եվ Օբլոմովը լուռ էր, առանց ուրիշի օգնության նրա միտքը կամ դիտավորությունը չէր հասունանա և երբեք իբրև

հատած խնձոր ինքն իրեն վայր չէր ընկնի. հարկավոր է քաղել այն։

Օլգան մի քանի րոպե նայեց նրան, հետո հագավ թիկնոցը, ճյուղից վերցրեց գլխակապը, առանց շտապելու կապեց գլուխը և վերցրեց հովանոցը։

— Ա՞ր։ Այդպես վա՞ղ,— հանկարծ, սթափվելով, հարցրեց Օբլոմովը։

—Ո՛չ, ուշ է։ Դու ճիշտ ասացիր,— մասխոհ թախիծով ասում էր նա,— մենք հեռու ենք գնացել, իսկ ելք չկա. պետք է շուտով բաժանվել և անցյալի հետքը կորցնել։ Մնա՞ս բարով,— ավելացրեց նա շոր-շոր, դառնությամբ և, գլուխը վայր հակելով, ուզում էր գնալ շավղով։

— Օ՛լգա, բարի եղիր, ասածս սիրու՞ն։ Ինչպե՞ս թե չտեսնվենք։ Չէ՞ որ ես... Օ՛լգա։

Օլգան չէր լսում և հեռանում էր արագ. ավազը շոր ճռռում էր նրա կոշիկների տակ։

— Օ՛լգա Սերգեևնա,— կանչեց նա։

Չի լսում, գնում է։

— Աստծու սիրուն, վերադարձի՛ր,— ո՛չ թե ձայնով, այլ արցունքներով կանչեց Օբլոմովը։— Չէ՞ որ ոճրագործին էլ պետք է լսել... Աստվա՞ծ իմ։ Միրտ ունի՞ նա արդյոք... Այ կանա՛չ։

Օբլոմովը նստեց և երկու ձեռքով աչքերը ծածկեց։ Քայլերի ձայնն այլևս չէր լսվում։

— Գնա՞ց,— ասաց նա, գրեթե սարսափահար, և գլուխը բարձրացրեց։

Օլգան կանգնած է նրա առաջ։

Նա բերկրանքով բռնեց Օլգայի ձեռքը։

— Դու չգնացի՞ր, չե՞ս գնա...— ասում էր նա։— Մի՛ գնա. հիշի՛ր, որ եթե դու հեռանաս, ես մեռա՞ծ մարդ եմ։

— Իսկ եթե չհեռանամ, ոճրագործ եմ, և դու նույնպես. հիշի՛ր այս, Իլյա։

— Ա՜խ, ո՛չ...

— Ինչպե՞ս թե ոչ։ Եթե Սոնեչկան իր ամուսնու հետ մի անգամ էլ միասին տեսնեն ինձ, ես կսպանվեմ։

Օբլոմովը ցնցվեց։

— Լսի՛ր,— շտապով և կապ ընկնելով սկսեց նա,— ես դեռ բոլորը չեմ ասել...— և կանգ առավ։

Այն, ինչ տանը նրան այնպես հասարակ, բնական անհրաժեշտ էր թվում, այնպես ժպտում էր նրան, ինչ որ նրա երջանկությունն էր կազմում, հանկարծ մի անդունդ դարձավ նրա շունչը չէր հերիքում այդ անդունդի վրայից անցնել։ Մի վճռական, համարձակ քայլ պիտի աներ նա։

— Մեկը գալիս է,— ասաց Օլգան։

Կողքի շավղից քայլեր լսվեցին։

— Սոնեչկան չէ՞ արդյոք,— հարցրեց Օբլոմովը՝ ստրսափից անշարժացած աչքերով։

Անցան երկու տղամարդ մի տիկնոջ հետ, անծանոթ էին։ Օբլոմովի սիրտը թեթևացավ։

— Օ՛լգա,— հապճեպ սկսեց նա և բռնեց նրա ձեռքը,— այստեղից գնանք ա՛յ այնտեղ, որտեղ ոչ ոք չկա։ Նստենք այստեղ։

Նա Օլգային նստեցրեց նստարանի վրա, իսկ ինքը նստեց խոտի վրա՝ նրա կողքին։

— Դու բռնկվեցիր ու գնացիր, իսկ ես ամեն բան չեմ ասել, Օ՛լգա,— սկսեց Օբլոմովը։

— Եվ դարձյալ կգնամ և այլևս չեմ վերադառնա, եթե դու խաղ անես ինձ հետ,— խոսեց Օլգան։— Քեզ մի անգամ դուր եկան իմ արցունքները, հիմա, գուցե, դու կուզենայիր տեսնել ինձ քո ոտքերի տակ և այդպես, կամաց-կամաց, ինձ քո ստրուկը դարձնել, քմահաճություններ անել, բարոյախոսություն կարդալ գլխիս, հետո լաց լինել, վախենալ, ինձ վախեցնել, իսկ հետո հարցնել, թե ի՛նչ անենք մենք։ Հիշեցեք, Իլյա Իլյիչ,— հանկարծ ավելացրեց նա ճպարտությամբ, վեր կենալով նստարանից,— որ ես շատ եմ աճել այն ժամանակվանից, ինչ ճանաչել եմ ձեզ և գիտեմ, թե ինչպես է կոչվում այն խաղը, որ դուք եք խաղում... բայց դուք իմ արցունքներն այլևս չեք տեսնի...

— Ա՜խ, ասածդ վկա, ես խաղ չե՞մ անում,— ասաց Օբլոմովը համոզեցուցիչ եղանակով։

— Ավելի ևս վատ ձեզ համար,— շոր-շոր նկատեց Օլգան։— Ձեր բոլոր երկյուղներին, նախազգուշացումներին և գուշակություններին իբրև պատասխան ես մի՛ բան կասեմ. մինչև

այս տեսակցությունը ես սիրում էի ձեզ և չգիտեի, թե ինչ անեմ. հիմա գիտեմ,— վճռականորեն եզրափակեց նա՝ պատրաստվելով հեռանալ,— և ձեզ հետ չեմ խորհրդակցի։

— Ես էլ գիտեմ,— ասաց Օբլոմովը, պահելով նրան ձեռքից բռնած և նստեցնելով նստարանի վրա, և մի րոպե լռեց՝ սիրտ առնելով։— Երևակայի՛ր— սկսեց նա,— իմ սիրտը լցված է մի ցանկությամբ, գլուխս՝ մի մտքով, բայց կամքս, լեզուս ինձ չեն հնազանդվում. ուզում եմ խոսել, և բերանիցս խոսքերը դուրս չեն գալիս։ Բայց չէ՞ որ ինչքան պարզ է, ինչպես... Օգնի՛ր ինձ, Օ՛լգա։

— Ես չգիտեմ, թե ինչ կա ձեր մտքում...

— Օ՜, ի սեր աստծու, առանց այդ դուքի. քո հպարտ հայացքն սպանում է ինձ, յուրաքանչյուր խոսքդ սառնամանիքի նման սառցնում է...

Օլգան ծիծաղեց։

— Դու խելագա՜ր ես,— ասաց նա՝ ձեռքը դնելով Օբլոմովի գլխին։

— Ա՜յ այդպես, ա՜յ, ես հիմա մտածելու և խոսելու ձի՜րք ստացա։ Օ՛լգա,— ասաց նա՝ ծունկ չոքելով նրա առջև,— եղի՛ր իմ կինը։

Օլգան լուռ էր և շուռ եկավ նրանից հակադիր կողմը։

— Օ՛լգա, տու՛ր ինձ ձեռքդ,— շարունակում էր նա։

Օլգան չէր տալիս։ Օբլոմովն ինքը բռնեց ձեռքը և հպեց իր շրթունքներին։ Օլգան ետ չքաշեց։ Ձեռքը տաք էր, փափուկ և մի քիչ խոնավ։ Օբլոմովը փորձեց նրա դեմքին նայել, Օլգան ավելի շրջվեց հակառակ կողմը։

— Լռությո՞ն,— ասաց Օբլոմովը տագնապալից և հարցական եղանակով՝ համբուրելով նրա ձեռքը։

— Համաձայնության նշա՞ն է,— խոսքը վերջացրեց Օլգան մեղմիկ, դեռևս չնայելով նրա վրա։

— Այժմ դու ի՞նչ ես զգում։ Ի՞նչ ես մտածում,— հարցրեց Օբլոմովը՝ հիշելով իր երազանքը ամոթխած համաձայնության մասին, արցունքների մասին։

— Նույնը, ինչ որ դու,— պատասխանեց նա՝ շարունակելով նայել անտառի կողմը, միայն կրծքի հուզմունքը ցույց էր տալիս, որ նա զսպում է իրեն։

«Աբդյոք նրա աչքերում արտասուք կա՞»,— մտածում էր Օբլոմովը, բայց Օլգան համառորեն ցած էր նայում։

— Դու անտարբե՞ր ես, դու հանգի՞ստ ես,— ասում էր Օբլոմովը՝ ջանալով նրան ձեռքից բռնած քաշել դեպի ինքը։

— Անտարբեր չեմ, բայց հանգիստ եմ։

— Ինչի՞ց է այդ։

— Նրանից, որ վաղուց էի նախատեսում և վարժվել էի այս մտքին։

— Վաղու՞ց,— զարմացած կրկնեց նա։

— Այո՛, այն րոպեից, երբ տվեցի քեզ յասամանի ճյուղը... Ես մտքումս քեզ անվանեցի...

Օլգան խոսքը չվերջացրեց։

— Այն րոպեի՞ց։

Օբլոմովն ուզում էր գիրկը լայն բաց անել և Օլգային իր գրկի մեջ առնել։

— Անդո՞ւնդ է բացվում, կայծակնե՞ր են փայլատակում... ավելի՞ զգույշ եղեք,— նենգորեն ասաց Օլգան, ճարպկությամբ խուսափելով գրկախառնությունից և նրա ձեռքը հովանոցով մի կողմ հրելով։

Օբլոմովը հիշեց ահավոր «երբեքը» և խեղճացավ։

— Բայց դու երբեք չէիր ասում, նույնիսկ ոչնչով չարտահայտեցիր...— ասում էր Օբլոմովը։

— Մենք չենք ամուսնանում, այլ մեզ մարդու են տալիս կամ առնում են։

— Այն րոպեից... մի՞թե...— մտախոհ կրկնեց նա։

— Դու կարծում էիր, թե ես, առանց քեզ հասկանալու այստեղ կլինեի քեզ հետ մենակ, երեկոները կնստեի տաղավարում, կլսեի ու կվստահեի՞ քեզ,— ասաց Օլգան հպարտությամբ։

— Ուրեմն այդ...— սկսեց նա՝ գույնը գցելով և նրա ձեռքը բաց թողնելով։

Տարօրինակ միտք ծագեց նրա գլխում։ Օլգան նայում էր նրան հանդարտ հպարտությամբ և համառ կերպով սպասում էր. իսկ Օբլոմովն այդ րոպեին ո՞չ թե հպարտություն ու համառություն էր զգում, այլ արցունքներ, կիրք, արբեցնող երջանկություն, գոնե մի րոպեով, իսկ հետո արդեն թող կյանքն ընթանա՝ անվրդո՞վ հանդստությամբ։

Եվ հանկարծ, ո՛չ բուռն արցունքներ՝ անակնկալ երջանկությունից, ոչ էլ ամոթխած համաձայնություն։ Ինչպե՞ս հասկանալ այս։

Նրա սրտում արթնացավ ու շարժվեց կասկածի օձը... Արդյոք սիրու՞մ է Օլգան, թե միայն մարդու է գնում։

— Բայց ուրիշ ուղի կա դեպի երջանկությունը,— ասաց Օբլոմովը։

— Ինչպիսի՞,— հարցրեց Օլգան։

— Երբեմն սերը չի սպասում, չի համբերում, հաշիվներ չի անում... Կինն ամբողջովին կրակի, սարսուռի մեջ է, միաժամանակ զգում է տանջանք ու այնպիսի բերկրանք, որպիսի...

— Ես չգիտեմ, թե այդ ինչ ուղի է։

— Այն ուղին, երբ կինը զոհաբերում է ամեն ինչ. հանգստություն, համբավ, հարգանք և պարգևը գտնում է սիրո մեջ... սերը փոխարինում է նրան ամեն բան։

— Մի՞թե մեզ հարկավոր է այդ ուղին։

— Ո՞չ։

— Դու կկամենայի՞ր այդ ուղիով երջանկություն փնտրել՝ իմ հանգստության, հարգանքը կորցնելու հաշվին։

— Օ ո՛չ, ո՛չ։ Աստվա՛ծ վկա, ո՛չ մի պայմանով,— ջերմորեն ասաց Օբլոմովը։

— Իսկ ինչու՞ դու խոսք բաց արիր այդ մասին։

— Ճշմարիտը, ինքս էլ չգիտեմ...

— Իսկ ես գիտեմ. դու կուզենայիր իմանալ՝ ես քեզ համար կզոհեի՞ իմ հանգստությունը, քեզ հետ կգնայի՞ այդ ուղիով։ Ճիշտ է, չէ՞։

— Այո՛, կարծես, դու կռահեցիր... է՛, ի՞նչ։

— Երբե՛ք, ո՛չ մի պայմանով,— հաստատապես ասաց Օլգան։

Օբլոմովը մտածմունքի մեջ ընկավ, հետո հառաչեց։

— Այո՛, սոսկալի ուղի է այն, և շատ մեծ սեր է հարկավոր, որպեսզի կինը այդ ուղիով գնա տղամարդու ետևից, կործանվի և շարունակ սիրի։

Օբլոմովը հարցական նայեց Օլգայի երեսին. Օլգան ոչինչ չասաց. միմիայն հոնքի վրայի ծալքը շարժեց, իսկ դեմքը հանգիստ էր։

— Պատկերացրո՛ւ,— ասում էր Օբլոմովը,— որ Սոնեչկան, որ քո ճկույթն էլ չարժե. հանկարծ քեզ չճանաչե՞ր հանդիպելիս։

Օլգան ժպտաց, և նրա հայացքն էլի նույնքան պարզ էր։ Իսկ Օբլոմովը տարվում էր ինքնասիրության պահանջով՝ Օլգայի սրտից զոհաբերություն կորզելու և դրանով հագենալու։

— Պատկերացրո՛ւ, որ տղամարդիկ քեզ մոտենալիս երկյուղած հարգանքով աչքերը ցած չգցեին, այլ նայեին քեզ համարձակ ու ենթ ժպիտով...

Օբլոմովը նայեց Օլգային. նա հովանոցով ջանասիրությամբ մանր քարերն էր այս ու այն կողմ շարժում։

— Դու մտնեիր դահլիճ, և մի քանի աբլա վրդովմունքից իրար անցնեին. նրանցից որևէ մեկը քո կողքից հեռանար՝ ուրիշ տեղ նստեր... իսկ քո հպարտությունն էլի նույնը կլիներ, դու պարզ գիտակցեիր, որ դու նրանցից ավելի բարձր ես և ավելի լավ։

— Ինչու՞ ես դու ինձ այդ սարսափելի բաներն ասում,— ասաց Օլգան հանդարտ։— Ես երբեք այդ ուղիով չեմ գնա։

— Երբե՞ք,— թախիծով հարցրեց Օբլոմովը։

— Երբե՞ք,— կրկնեց Օլգան։

— Այո՛,— ասում էր Օբլոմովը մտածկոտ,— դու ուժ չէիր ունենա ամոթի աչքերի մեջ նայելու։ Գուցե, դու մահից չվախենայիր. ո՛չ թե մահապատիժն է սարսափելի, այլ դրան նախապատրաստվելը, ամեն ժամ կրկնվող տանջանքները. դու չէիր դիմանա և կհյուծվեիր, այո՞։

Օբլոմովը շարունակ նայում էր Օլգայի աչքերին, թե նա ի՞նչ է մտածում։

Օլգայի հայացքը զվարթ էր. սարսափի պատկերը նրան չշփոթեցրեց. նրա շրթունքներին թեթև ժպիտ էր խաղում։

— Ես չեմ ուզում ո՛չ հյուծվել, ոչ էլ մեռնել։ Այդ բոլորն այն չէ,— ասաց նա,— կարելի է այն ճանապարհով չգնալ և սիրել է՛լ ավելի ուժգին...

— Ինչո՞ւ դու չէիր գնա այդ ճանապարհով,— հարցնում էր Օբլոմովը համառորեն, գրեթե սրտնեղությամբ,— եթե քեզ համար սարսափելի չէ...

— Այն պատճառով չէի գնա, որովհետև այդ ճանապարհին

... հետագայում միշտ... բաժանվում են,— ասաց Օլգան,— իսկ ես... բաժանվե՞լ քեզնից...

Օլգան կանգ առավ, ձեռքը դրեց նրա ուսին, երկար նայեց նրան և հանկարծ, մի կողմ նետելով հովանոցը, արագ ու ջերմորեն փաթաթվեց նրա պարանոցով, համբուրեց, հետո ամբողջովին կարմրատակեց, դեմքը կպցրեց նրա կրծքին և մեղմիկ ավելացրեց.

— Երբե՞ք։

Օբլոմովը հրճվալից մի ճիչ արձակեց և կանաչի վրա ընկավ՝ նրա ոտքերի մոտ։

1857 թ.

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Օբլոմովը փայլում էր տուն գնալիս։ Նրա արյունը եռ էր գալիս, աչքերը պսպղում էին։ Նրան թվում էր, որ նույնիսկ մազերն են այրվում։ Հենց այդպես էլ սենյակ մտավ ու հանկարծ փայլն անհետացավ, աչքերը տհաճ զարմանքով անշարժացան մի կետի վրա. նրա բազկաթոռում նստած էր Տարանտևը։

— Սա ի՞նչ է, էլ քեզ տեսնել չի լինում։ Որտե՞ղ ես թափառում,— խստորեն հարցրեց Տարանտևը՝ նրան մեկնելով իր մազոտ ձեռքը։—Քո պառավ դևն էլ բոլորովին չափը կորցրել է. նախաճաշ եմ պահանջում, օղի՝ դա էլ չտվեց։

— Զբոսնում էի պուրակում,— ասաց Օբլոմովն անփույթ, դեռ ուշքի չեկած այն վիրավորանքից, որ հասցրել էր նրան ճայրենակցի հայտնվելը, այն էլ՝ ի՞նչ բոպեի։

Օբլոմովը մոռացել էր այն մռայլ շրջանը, որտեղ ապրել էր երկար, և նրա խեղդող օդն այլևս անսովոր էր նրա համար։ Տարանտևը մի ակնթարթում կարծես երկնքից քարշ տվեց նրան ճահիճը։ Օբլոմովը տանջագին հարց էր տալիս իրեն. ինչո՞ւ է եկել Տարանտևը, երկա՞ր ժամանակով է եկել։ Տանջվում էր այն ենթադրությունից, թե գուցե, նա մնա ճաշելու և այն ժամանակ իրեն չի հաջողվի գնալ Իլյինսկայաների մոտ։ Ինչպես ազատվել նրանից, թեկուզ դա նույնիսկ որոշ ծախսեր պահանջի. ահա այն միակ միտքը, որ

զբաղեցնում էր Օբլոմովին։ Նա լուռ ու մռայլ սպասում էր, թե ինչ կասի Տարանտևը։

— Ի՞նչ է, հայրենակից, չե՞ս ուզում բնակարանդ մի անգամ տեսնել,— հարցրեց Տարանտևը։

— Հիմա այլևս հարկավոր չէ,— ասաց Օբլոմովը՝ աշխատելով չնայել Տարանտևին։— Ես... չեմ տեղափոխվի այնտեղ։

— Ի՞նչ։ Ինչպե՞ս չես տեղափոխվի,— սպառնալից առարկեց Տարանտևը։— Վարձել ես ու չե՞ս տեղափոխվի։ Իսկ պայմանագի՞րը։

— Ի՞նչ պայմանագիր։

— Դու արդեն մոռացե՞լ ես։ Ամբողջ տարով պայմանագիր ես ստորագրել։ Տո՛ւր ութ հարյուր ռուբլի ասիգնացիաներով ու գնա՝ ուր ուզում ես։ Չորս կենվորներ նայեցին, ուզում էին վարձել. բոլորին մերժեցին։ Մեկը երեք տարով էր վարձում։

Օբլոմովն այժմ միայն հիշեց, որ հենց ամառանոց տեղափոխվելու օրը Տարանտևը նրան թուղթ բերեց, իսկ ինքը շտապ-շտապ, առանց կարդալու ստորագրեց։

«Ա՜խ, աստված, ի՞նչ եմ արել ես»— մտածում էր նա։

— Հա, ինձ բնակարան հարկավոր չէ,— ասաց Օբլոմովը,— ես արտասահման եմ գնում...

— Արտասահմա՞ն— ընդհատեց Տարանտևը։— Եվ այդ գիրմանացու հե՞տ։ Քո ի՞նչ բանն է, չե՞ս գնա։

— Ինչո՞ւ չեմ գնա։ Անցագիր էլ ունեմ. ա՛յ ցույց կըտամ։ Ճամպրուկն էլ գնված է։

— Չե՞ս գնա,— անտարբեր կրկնում էր Տարանտևը։— Դու ավելի լավ է, կես տարվա փողը սկզբից տուր։

— Փող չունեմ։

— Որտեղից ուզում ես՝ ճարիր. սանամորս եղբայրը, Իվան Մատվեևիչը, կատակ անել չի սիրում։ Իսկույն դատի կտա, ձեռից չես ազատվի։ Հետո, ես իմ փողերն եմ տվել, վերադարձրու ինձ։

— Որտեղի՞ց ես այդքան փող վերցրել,— հարցրեց Օբլոմովը։

— Քո ի՞նչ գործն է։ Հին պարտք կար՝ ստացել եմ։ Փողե՛րս տուր։ Ես դրա համար եմ եկել։

— Լավ, մոտ օրերս կգամ ու բնակարանն ուրիշի կհանձնեմ, իսկ այժմ շտապում եմ։

Նա սկսեց սերթուկը կոճկել։

— Իսկ քեզ ինչպիսի՞ բնակարան է հարկավոր։ Դրանից լավն ամբողջ քաղաքում չես գտնի։ Չէ՞ որ դեռ չես տեսել— ասաց Տարանտևը։

— Չեմ էլ ուզում տեսնել,— պատասխանեց Օբլոմովը,— Ինչո՞ւ պիտի ես այնտեղ տեղափոխվեմ։ Ինձ համար հեռու է...

— Ինչի՞ց,— կոպիտ հարցրեց Տարանտևը։

Բայց Օբլոմովը չասաց, թե ինչից։

— Կենտրոնից,— ավելացրեց նա հետո։

— Որ կենտրոնից։ Քո ինչի՞ն է պետք կենտրոնը։ Պառկելու համա՞ր։

— Ո՛չ, ես հիմա արդեն չեմ պառկում։

— Ո՞նց թե։

— Այնպես։ Ես... այսօր...— սկսեց Օբլոմովը։

— Ի՞նչ,— ընդհատեց Տարանտևը։

— Տանը չեմ ճաշում...

— Դու փող տո՛ւր, հետո գրողի ծոցը գնա։

— Ի՞նչ փող,— անհամբերությամբ կրկնեց Օբլոմովը։— Ես մոտ օրերս կգնամ բնակարանը, կբանակցեմ տանտիրուհու հետ։

— Ի՞նչ տանտիրուհի։ Սանամե՞րս։ Նա ի՞նչ գիտի։ Կնիկարմատի մեկը։ Ո՛չ, դու խոսիր նրա եղբոր հետ ու ա՛յ կտեսնե՞ս։

— Դե լավ. ես կգնամ և կբանակցեմ։

— Հա՛, նստեմ ու քեզ սպասեմ։ Դու փող տուր ու գնա բանիդ։

— Ես փող չունեմ, պետք է փոխ առնեմ։

— Դե, գոնե, կառապանին վճարիր,— օձիքը չէր թողնում Տարանտևը,— երեք արծաթ մանեթանոց։

—Ո՞ւր է քո կառապանը։ Եվ ինչի՞ համար երեք արծաթ մանեթանոց։

— Ես նրան արձակեցի։ Ինչպե՞ս թե ինչի համար։ Դեռ չէր ուզում բերել. ասում էր՝ «ավազների վրայո՞վ»։ Այստեղից էլ՝ երեք արծաթ մանեթանոց՝ ահա՛ քսաներկու ռուբլի։

— Այստեղից դիլիժանսը գնում է հիսուն կոպեկով,— ասաց Օբլոմովը,— ա՛ռ։

Օբլոմովը տվեց նրան չորս արծաթ մանեթանոց։ Տարանտևը դրանք գրպանը դրեց։

— Պարտք մնացիր յոթ ռուբլի ասիգնացիաներով,— ավելացրեց նա։— Ճաշի փող էլ տո՛ւր։

— Ի՞նչ ճաշի փող։

— Ես հիմա քաղաք չեմ հասնի. հարկ կլինի ճանապարհին պանդոկում ճաշել. այստեղ ամեն բան թանկ է. հինգ ռուբլու չափ կպոկեն։

Օբլոմովը լուռ հանեց մի արծաթ. մանեթանոց և նետեց նրան։ Նա անհամբերությունից չէր նստում, որպեսզի Տարանտևը շուտ գնա, բայց նա չէր գնում։

— Հրամայի՛ր, որ ինձ ուտելու բան տան,— ասաց նա։

— Չէ որ դու ուզում էիր պանդոկում ճաշել,— նկատեց Օբլոմովը։

— Ճաշել, այո՛։ Իսկ հիմա ընդամենը մեկն անց է։

Օբլոմովը հրամայեց Զախարին որևէ բան տալ։

— Ոչինչ չկա, չենք պատրաստել,— չոր-չոր արտասանեց Զախարը, մռայլ նայելով Տարանտևին։— Է՛հ, Միխեյ Անդրեևիչ, ե՞րբ պիտի բերեք բարինի շապիկն ու ժիլետը...

— Ի՞նչ շապիկ ու ժիլետ ես ուզում,— խուսափողական պատասխան տվեց Տարանտևը։— Վաղուց վերադարձրել եմ։

— Էդ ե՞րբ,— հարցրեց Զախարը։

— Հենց քեզ անձամբ չհանձնեցի՞, երբ տեղափոխվում էիք։ Իսկ դու ինչ-որ կապոցի մեջ ճխտեցիր, դեռ հարցնում էլ ես...

Զախարը սառած մնաց։

— Ա՜խ, տե՛ր աստված։ Սա ի՞նչ խայտառակություն է, Իլյա Իլյիչ,— աղաղակեց նա՝ դիմելով Օբլոմովին։

— Երգի՛ր, երգի՛ր երգդ,— վրա բերեց Տարանտևը։— Երևի արաղի ես տվել, հիմա էլ պահանջում ես...

— Ո՛չ, ես ծնվածս օրից բարինի դիրքերով բան չեմ առել-խմել,— խռպոտ ձայնով ասաց Զախարը։— Այ դուք...

— Վե՛րջ տուր, Զախա՛ր,— խիստ ձայնով ընդհատեց Օբլոմովը։

— Դուք եք մեզնից տարել հատակի խոզանակն ու երկու թաս,— նորից հասցրեց Զախարը։

— Ի՞նչ խոզանակ,— որոտաց Տարանտևը։— Ախ դու, ծեր խաբեբա։ Ավելի լավ է՝ ուտելու բան տուր։

— Լսո՞ւմ եք, ինչպես է հայհոյում, Իլյա Իլյիչ,— ասաց Զախարը.— Ուտելու բան չկա, նույնիսկ հաց չկա տանը, Անիսյան էլ տնից գնացել է,— վերջացրեց Զախարն ու գընաց։

— Որտե՞ղ ես ճաշում դու,— հարցրեց Տարանտևը։— Զարմանք բան է, ճշմարիտ. Օբլոմովն զբոսնում է պուրակում, տանը չի ճաշում... Ե՞րբ ես գալու բնակարանդ տեսնես։ Չէ՞ որ մոտ է աշունը։ Արի տես։

— Լավ, լավ, մոտ օրերս...

— Զմոռանաս, փողն էլ բերել։

— Այո՛, այո՛, այո՛...— անհամբերությամբ ասում էր Օբլոմովը։

— Էհ, որևէ բան պետք չէ՞ բնակարանում։ Այնտեղ, եղբայր, քեզ համար ներկել են հատակն ու առաստաղը, լուսամուտները, դռները, ամեն ինչ. հարյուր ռուբլուց ավելի արժե։

— Այո՛, այո՛, լավ... Ախ, այ ինչ էի ուզում ասել քեզ,— հանկարծ հիշեց Օբլոմովը,— խնդրում եմ, գնաս պալատ, պետք է հավատարմագիրը վավերացնել տալ...

— Ես քո փաստաբա՞ն եմ, ինչ է,— վրա բերեց Տարանտևը։

— Ճաշիդ համար փող կավելացնեմ,— ասաց Օբլոմովը։

— Ավելի շատ կոշիկ կմաշես այնտեղ, քան թե կավելացնես։

— Կառքով գնա, կվճարեմ։

— Ես չեմ կարող պալատ գնալ,— մռայլված ասաց Տարանտևը։

— Ինչո՞ւ։

— Թշնամիներ ունեմ, դաղդաղած են ինձ վրա, դավեր են նյութում, որ կործանեն։

— Դե լավ, ես ինքս կգնամ,— ասաց Օբլոմովն ու գլխարկը վերցրեց։

— Ա՜յ, հենց որ տեղափոխվես բնակարանդ, Իվան Մատ-

վեյքն ամեն ինչ կանի քեզ համար։ Նա ոսկի մարդ է, եղբայր, որևէ դուրսպրծած գերմանացու թայը չէ՞։ Իսկական ռուս ծառայող է, երեսուն տարի է՝ նստած է միևնույն աթոռին, շուռ է տալիս ամբողջ ատյանը, փող էլ ունի, բայց կառապան չի վարձի, ֆրակն իմից լավը չի. ինքը սուսիկ-փուսիկ մարդ է, խոսելիս՝ ձայնը հազիվ է լսվում, օտար երկրներում չի թափառում, ինչպես քո այդ...

— Տարանտե՛,— բղավեց Օբլոմովը, բռունցքը խփելով սեղանին։— Լռի՛ր, որ չես հասկանում։

Տարանտեն աչքերը չռեց Օբլոմովի այդ անակնկալ արարքի վրա և մինչև անգամ մոռացավ վիրավորվել այն բանից, որ իրեն Շտոլցից ցած դասեցին։

— Ա՜յ թե ինչպիսին ես դու հիմա...— մրթմրթաց նա՝ վերցնելով շլյապան,— որպիսի՞ կտրիճություն։

Նա թեքով հարդարեց իր շլյապան, հետո նայեց իր ու Օբլոմովի շլյապային, որ դրված էր դարակի վրա։

— Դու շլյապա չես ծածկում, այ, գլխարկ ունես,— ասաց նա, վերցնելով Օբլոմովի շլյապան և փորձելով իր գլխին,— տո՛ւր ինձ, եղբայր, ամառվա համար։

Օբլոմովը լուռ հանեց նրա գլխից իր շլյապան և դրեց նախկին տեղը, հետո ձեռքերը խաչեց կրծքին և սպասում էր, որ Տարանտևը գնա։

— Դեհ գրողը տանի քեզ,— ասում էր Տարանտևը, անշնորհք կերպով դուրս գալով դռնից։— Դու, եղբա՛յր, հիմա ինչ-որ... մի տեսակ... Ա՜յ, խոսիր Իվան Մատվեյիչի հետ և փորձիր փողը չբերել։

II

Նա գնաց, իսկ Օբլոմովը անհաճո տրամադրությամբ նստեց բազկաթոռի մեջ և երկար-երկար աշխատում էր ազատվել կոպիտ տպավորությունից։ Վերջապես նա հիշեց այսօրվա առավոտը, և Տարանտևի այլանգակ այցը թռավ նրա հիշողությունից. դեմքի վրա նորից ժպիտ երևաց։

Նա կանգնել էր հայելու առաջ, երբ ուղղում էր փողկապը, երկար ժպտում, նայում այտին, արդյոք նրա վրա չկա՞ Օլգայի ջերմ համբույրի հետքը։

— Երկու «բերբեր»,— ասաց նա հանդարտ, բերիբալից հուզմունքով,— և ինչպիսի տարբերություն նրանց միջև. մեկն արդեն թառամել է, իսկ մյուսն այնպես փարթամ ծաղկել...

Հետո նա սկսեց մտմտալ, մտմտում էր ավելի ու ավելի խոր։ Նա զգում էր, որ սիրո պայծառ, անամպ տոնն արդեն անցել է, որ սերն իրոք պարտք էր դառնում, որ այն խառնվում էր կյանքին, մտնում նրա սովորական գործառնությունների կազմի մեջ և սկսում էր թառամել, կորցնել ծիածանագույն ներկերը։

Գուցե, այսօր առավոտ ստիպեց նրա վերջին վարդագույն ճառագայթը, որ հետո այլևս այդպես պայծառ չի փայլի, այլ անտեսանելի կերպով կջերմացնի կյանքը. կյանքը կկլանի այն, և դա կլինի կյանքի, իհարկե, ուժեղ, բայց թաքնված զսպանակը։ Եվ այսուհետև նրա արտահայտումները կլինեն այնպես հասարակ, սովորական։

Պոեզիան անցնում է, և սկսվում է խիստ պատմությունը. պալատ, հետո ուղևորություն դեպի Օբլոմովկա, տան կառուցում, գրավ դնելը խորհրդում, ճանապարհի անցկացում, գործերի անվերջ քննում մուժիկների հետ, աշխատանքների կարգ, հունձ, կալսում, հաշիվ գցել համբիչի վրա, գործակատարի հոգսով լի դեմք, աղնվականական ընտրություններ, նիստ դատարանում։

Միայն տեղ-տեղ, հազվադեպ, կփայլի Օլգայի հայացքը, կհնչի Casta diva-ն, կլսվի շտապ համբույր, իսկ հետո՝ նորից աշխատանքի գնալ, քաղաք գնալ, այնուհետև նորից գործակատարը, նորից համբիչի չխչխկոցը։

Հյուրեր են եկել, դա էլ մի հաճույք չէ. կսկսեն խոսել, թե ով որքան օրի է քաշել գործարանում, ով քանի արշին մահուդ է մատակարարում պետությանը... Սա ի՞նչ բան է։ Մի՞թե սա էր սպասում նա կյանքից։ Մի՞թե սա կյանք է... Մինչդեռ այդպես ապրում են, կարծես դրա մեջ է ամբողջ կյանքը։ Եվ դա Անդրեյին դո՞ւր է գալիս։

Բայց ամուսնությունը, հարսանիքը այնուամենայնիվ, կյանքի պոեզիան է դա, մի պատրաստի, բացված ծաղիկ։ Նա պատկերացրեց, թե ինչպես է Օլգային դեպի եկեղեցու բեմը տանում. Օլգան՝ նարնջենու ճյուղը գլխին, երկար ծած-

կոցով։ Ամբոխի մեջ զարմանքի շշուկ։ Նա ամոթխած կերպով, հանդարտ հուզվող կրծքով, իր հպարտ ու նազելիորեն հակած գլխով, ձեռքը տալիս է Օբլոմովին և չգիտե, թե ինչպես նայի բոլորին։ Մերթ ժպիտն է փայլում նրա դեմքին, մերթ արցունք է երևում, մերթ ինչ-որ միտք շարժում է հոնքի ծալը։

Տանը, հյուրերի գնալուց հետո, նա, դեռևս շքեղ հանդերձներով, կնստվի նրա կրծքին, ինչպես այսօր...

«Ո՜չ, վազեմ Օլգայի մոտ, չեմ կարող մենակ մտածել ու զգալ», երազում էր Օբլոմովը։ «Կպատմեմ բոլորին, ամբողջ աշխարհին... ո՜չ նախ՝ մորաքրոջը, հետո՝ բարոնին, կգրեմ Շտոլցին, ա՜յ թե կզարմանա։ Հետո կասեմ Զախարին. նա մինչև գետին գլուխ կտա և ուրախությունից կճչա. ես նրան քսանհինգ ռուբլի կտամ։ Կգա Անիսյան, ձեռքս կփնտրի-կբռնի՝ համբուրելու համար. նրան տասը ռուբլի կտամ... հետո... հետո ուրախությունից կաղաղակեմ ամբողջ աշխարհով մեկ, այնպես կաղաղակեմ, որ աշխարհը կասի. «Օբլոմովը երջանի՜կ է, Օբլոմովն ամուսնանո՜ւմ է»։ Հիմա վազեմ Օլգայի մոտ. այնտեղ ինձ սպասում է երկարատև շշնջոց, խորհրդավոր պայմանագրություն՝ երկու կյանքն ի մի ձուլելու...»

Նա վազեց Օլգայի մոտ։ Օլգան ժպտալով լսեց նրա երազանքները. բայց հենց նա վեր թռավ, որ գնա մորաքրոջը հայտնի, Օլգայի հոնքերն այնպես սեղմվեցին, որ Օբլոմովը վախեցավ։

— Ոչ ոքի ո՜չ մի խոսք,— ասաց Օլգան՝ մատը դնելով շուրթերին և սպառնալով նրան, որ ցած խոսի, որպեսզի մորաքույրը մյուս սենյակից չլսի։— Դեռ ժամանա՜կը չէ։

— Էլ ե՞րբ է ժամանակը, երբ մեր մեջ ամեն ինչ վճռված է,— անհամբերությամբ հարցրեց նա։— Ի՞նչ անենք հապա այժմ։ Ինչի՞ց սկսենք,— հարցնում էր Օբլոմովը։— Հո չէ՞ պետք է ձեռքերս ծալած նստենք։ Սկսվում է պարտականությունը, լուրջ կյանքը...

— Այո՜, սկսվում է,— կրկնեց Օլգան՝ սևեռուն աչքերով նայելով նրան։

— Դե, ես էլ ուզեցի առաջին քայլն անել, գնալ մորաքրոջ մոտ...

— Դա վերջին քայլն է։

— Հապա ո՞րն է առաջինը։

— Առաջի՞նը... պալատ գնալ. չէ՞ որ հարկավոր է ինչ-որ թուղթ գրել։

— Այո՜... ես վաղը...

— Ինչո՞ւ ոչ այսօր։

— Այսօր... այսօր այնպիսի օր է, և քեզնից հեռանա՞լ Օ՜լգա։

— Դե լավ, վաղը։ Իսկ հետո՞։

— Հետո, ասել մորաքրոջը, գրել Շտոլցին։

— Ո՜չ, հետո գնալ Օբլոմովկա... Չէ՞ որ Անդրեյ Իվանիչը գրել է, թե ի՜նչ պետք է անել գյուղում, ես չգիտեմ՝ ինչ գործեր ունեք դուք այնտեղ, շինությո՞ւն է, ինչ է,— հարցրեց Օլգան՝ նայելով նրա երեսին։

— Աստվա՜ծ իմ,— ասում էր Օբլոմովը։— Եթե Շտոլցին լսելու լինենք, բանը երբեք մորաքրոջը չի՜ հասնի։ Նա ասում է, որ հարկավոր է սկսել տուն կառուցել, ապա ճանապարհ, գպրոցներ բաց անել... Այդ բոլորն ամբողջ կյանքումդ չես վերջացնի։ Օ՜լգա, մենք միասին կգնանք, և այն ժամանակ...

— Իսկ ո՞ւր կգնանք մենք։ Այնտեղ տուն կա՞։

— Ո՜չ, հինը վատն է. պատշգամբը, կարծեմ, բոլորովին խարխլվել է...

— Հապա ո՞ւր կգնանք մենք,— հարցրեց Օլգան։

— Հարկավոր է այստեղ բնակարան փնտրել։

— Դրա համար էլ հարկավոր է քաղաք գնալ,— նկատեց Օլգան,— դա երկրորդ քայլն է...

— Հետո...— սկսեց Օբլոմովը։

— Դու դեռ երկու քայլ փոխիր, հետո...

«Սա ի՞նչ բան է»— տխուր մտածում էր Օբլոմովը։ «Ո՜չ երկարատև շշնջոց կա, ոչ խորհրդավոր պայմանագրություն՝ երկու կյանքն ի մի՜ ձուլելու։ Ամեն բան մի տեսակ այլ կերպ է, ուրիշ կերպ։ Ի՞նչ տարօրինակ է այդ Օլգան։ Նա կանգ չի առնում մի տեղ, քաղցրորեն չի մտախոհվում բանաստեղծական բոպեով, կարծես թե բոլորովին երազանք չունի, պահանջմունք չունի՝ սուզվելո՜ւ մտորումների մեջ։ Իսկույնևեթ գնա պալատ, բնակարան, կարծես Անդրեյը լինի։ Ի՞նչ են բոլորը, կարծես, պայմանավորվել շտապելու ապրե՞լ»։

Հետևյալ օրը նա, մի թերթ դրոշմաթուղթ ձեռքին, ուղևոր-

վեց քաղաք, նախ՝ պալատ, և գնում էր ակամա, հորանջելով ու շոր կոշիկ նայելով։ Նա կարգին չգիտեր, թե որտեղ է պալատը, և մտավ Իվան Գերասիմիչի մոտ՝ հարցնելու, թե ո՞ր դեպարտամենտում պետք է վավերացներ տալ։

Սա ուրախացավ Օբլոմովին տեսնելով և չէր ուզում առանց նախաճաշի թաց թողնել։ Հետս ուղարկեց էլի մի բարեկամի ետևից, որպեսզի հարցուփորձ անի, թե ինչպես է արվում այդ գործը, որովհետև ինքը վաղուց հեռացած էր գործերից։

Նախաճաշն ու խորհրդակցությունը վերջացան ժամը երեքին, պալատ գնալու համար ուշ էր, իսկ վաղը շաբաթ օր դուրս եկավ. ատյան չկա, պետք եղավ հետաձգել մինչև երկուշաբթի։

Օբլոմովն ուղևորվեց Վիբորգյան քաղաքամասը, իր նոր բնակարանը։ Նա երկար գնում էր կառքով նրբափողոցների երկար ցանկապատերի միջով։ Վերջապես գտան մի պահակի. ասաց, որ նրանց ուղած տունը մյուս թաղամասում է, ա՜յ այս փողոցի կողքին, և ցույց տվեց էլի մի փողոց առանց տների, ցանկապատերով, ծածկված խոտով ու ցեխի շորացած աղուրներով։

Օբլոմովն էլի շարունակեց ճանապարհը, հրճվելով ցանկապատերի տակի եղինջով և ցանկապատերի ետևից երևացող արոսաթփերով։ Վերջապես պահակը ցույց տվեց բակի մեջ գտնվող մի հին տնակ, ավելացնելով.

— Այ հենց սա է։

«Կոլեգիական քարտուղար Պշենիցինի այրու տունը»— կարդաց Օբլոմովը դարբասի վրա և պատվիրեց քշել-մտնել բակը։

Բակը մի սենյակի մեծություն ուներ, այնպես որ կառքի առեղը դիպավ անկյունին և վախեցրեց բազմաթիվ հավերին, որոնք ճչկչալով արընթաց, մի քանիսը նույնիսկ թռչելով, զանազան կողմեր նետվեցին. մեկ էլ՝ շղթայով կապած մեծ սև շունն սկսեց աջ ու ձախ վազել սոսկալի հաչոցով, աշխատելով հասնել ձիերի դնչերին։

Օբլոմովը նստած էր կառքում լուսամուտներին հավասար և դժվարանում էր իջնել։ Հափշտակիչներով, թաշկոնակիներով և վաղինակներով զարդարված լուսամուտների մեջ գրլուխներ շարժվեցին։ Օբլոմովը մի կերպ ցած իջավ կառքից. շունն սկսեց է՛լ ավելի կատաղի հաչել։

Օբլոմովը բարձրացավ սրտատանդուղք և բախվեց կընճռապատ, սարաֆանը հագին, փեշը գոտիչխրած մի պառավի։

— Ո՞ւմ եք ուզում,— հարցրեց պառավը։

— Տանտիրուհուն, տիկին Պշենիցինային։

Պառավը տարակուսանքով գլուխը կախ գցեց։

— Չլինի՞ ձեզ Իվան Մատվեյիչն է պետք,— հարցրեց նա։— Նա տանը չէ, ծառայությունից դեռ չի վերադարձել։

— Ես տանտիրուհուն եմ ուզում,— ասաց Օբլոմովը։

Մինչդեռ տան իրարանցումը շարունակվում էր։ Մերթ մեկ, մերթ մյուս լուսամուտից դուրս էր նայում մի գլուխ. պառավի ետևից դուռը մի փոքր բացվում և փակվում էր, այնտեղից դուրս էին նայում զանազան դեմքեր։

Օբլոմովը շուռ եկավ. բակում երկու երեխա՝ մի տղա ու մի աղջիկ, հետաքրքրությամբ նրան էին նայում։

Որտեղից որտեղ երևաց մի քնակոլոլ մուժիկ՝ քուրքը հագին և, ձեռքով աչքերին հովանի անելով, ալարկոտ նայում էր Օբլոմովին ու կառքին։

Շունը շարունակում էր հաչել քիթոք ու քնդհատ-ընդհատ, և հենց Օբլոմովը շարժվում էր դամ ձին սանձակով դոփում գետինը, սկսվում էր վազքը շղթայի երկարությամբ և անընդհատ հաչոցը։

Ցանկապատի մյուս կողմում, դեպի աջ, Օբլոմովը տեսավ մի անվերջանալի բանջարանոց՝ կարտոֆիլով, ձախ, ցանկապատից դենը՝ երևում էին մի քանի ծառ և մի փայտե կանաչ տաղավար։

— Ձեզ Ագաֆյա Մատվե՞ևնան է պետք,— հարցրեց պառավը։— Ինչի՞ համար։

— Ասա տանտիրուհուն,— խոսեց Օբլոմովը,— որ ես ուզում եմ նրա հետ տեսնվել. ես այստեղ բնակարան եմ վարձել։

— Գուք, ուրեմն, նոր կենվո՞ր եք, Միխեյ Անդրեյիչի ծանոթը։ Այ մի քիչ սպասեք, կասեմ։

Նա բաց արեց դուռը, և դռնից ետ թռան մի քանի հոգի ու վազեցին սենյակները։ Նա հասցրեց տեսնել մի կնոջ՝ մերկ պարանոցով ու արմունկներով, առանց գլխաշորի, սպի-

տակ, բավական գեր, որը քմծիծաղ տվեց, որ իրեն կողմնակի մարդ տեսավ և նույնպես հեռու փախավ դռներից։

— Համեցեք սենյակ,— վերադառնալով ասաց պառավը, Օբլոմովին փաքրիկ նախասենյակով տարավ մի բավական ընդարձակ սենյակ և խնդրեց սպասել։— Տանտիրուհին իսկույն կգա,— ավելացրեց նա։

«Իսկ շունը դեռ շարունակում է հաչել», մտածեց Օբլոմովը, դիտելով սենյակը։

Հանկարծ նրա աչքերը կանգ առան ծանոթ առարկաների վրա. ամբողջ սենյակը լցված էր իր իրերով։ Սեղանները փոշու մեջ, աթոռները կույտի նման գցված մահճակալի վրա, ներքնակները, ամանեղենը անկարգ թափված, պահարանները։

— Սա ի՞նչ բան է։ Եվ չի՞ դասավորված, կարգի չի՞ բերված,— ասաց նա։— Որքա՞ն զզվելի է։

Հանկարծ նրա ետևից ճռռաց դուռը և սենյակ մտավ այն կինը, որին նա տեսել էր մերկ պարանոցով ու արմունկներով։

Կինը կլիներ երեսուն տարեկան։ Նա շատ սպիտակ էր և դեմքով գիրուկ, այնպես որ կարմրությունը, կարծես թե, չէր կարողանում դուրս թափանցել այտի միջից։ Հոնքեր նա գրեթե բոլորովին չուներ, իսկ նրանց տեղ կային երկու մի քիչ կարծես ուռած, փայլող շերտեր՝ նոսր շեկ մազերով։ Աչքերը գորշավուն պարզամիտ էին, ինչպես և դեմքի ամբողջ արտահայտությունը. ձեռքերն սպիտակ էին, բայց կոշտ, կապույտ ջղերի դուրս ցցված խոշոր հանգույցներով։

Հագուստը կիպ էր նստած վրան. երևում էր, որ նա ոչ մի արվեստի չէր դիմում, մինչև իսկ ավելորդ շրջազգեստի, որպեսզի ավելացնի աղդրերի ծավալը, և փոքրացնի իրանը։ Այդ պատճառով էլ նույնիսկ ծածկված կուրծքը, երբ առանց շալի էր, կարող էր նկարչին կամ քանդակագործին ուժեղ առողջ կրծքի մոդել ծառայել, առանց դիպչելու նրա համեստությանը։ Նրա զգեստը՝ համեմատած շքեղ շալի և հանդիսական գլխակապի հետ՝ հին և մաշված էր երևում։

Կինը հյուրերի չէր սպասում, և երբ Օբլոմովը կամեցավ նրան տեսնել, նա իր տնային ամենօրյա զգեստի վրա գցեց կիրակնօրյա շալը, իսկ գլուխը ծածկեց գլխակապով։ Նա

նստավ վեհերոտ և կանգ առավ՝ ամաչկոտ նայելով Օբլոմովին։

Օբլոմովը տեղից վեր կացավ և ողջունեց։

— Տիկին Պշենիցինային տեսնելու պատի՞վն ունեմ,— հարցրեց նա։

— Այո՛,— պատասխանեց տիկինը։— Գուցե, ձեզ հարկավոր է եղբորս հե՞տ խոսել,— անվճռաբար հարցրեց նա։— Նա ծառայության տեղում է, ժամը հինգից շուտ տուն չի գալիս։

— Ո՛չ, ես ուզում էի ձեզ տեսնել,— սկսեց Օբլոմովը, երբ կինը նստեց բազմոցի վրա, Օբլոմովից որքան կարելի է հեռու, և նայում էր իր շալի ծայրերին, որը ծածկոցի նման ծածկում էր նրան մինչև հատակ։ Նա ձեռքերն էլ պահում էր շալի տակ։

— Ես բնակարան եմ վարձել. այժմ, հանգամանքներն այնպես են, որ բնակարան պետք է փնտրեմ քաղաքի մի այլ մասում, ուստի եկել եմ ձեզ հետ խոսելու...

Կինը բութ կերպով լսեց և բութ կերպով էլ մտածմունքի մեջ ընկավ։

— Եղբայրս հիմա այստեղ չէ,— ասաց նա հետո։

— Բայց չէ՞ որ այս տունը ձերն է,— հարցրեց Օբլոմովը։

— Իմն է,— կարճ պատասխանեց նա։

— Դրա համար էլ ես կարծում էի, թե դուք ինքներդ կարող եք վճռել...

— Բայց եղբայրս չկա տեղը. նա է մեր բոլոր գործերը վարում,— ասաց տանտիրուհին միապաղաղ ձայնով, առաջին անգամ ուղիղ նայելով Օբլոմովին և աչքերը նորից շալին գցելով։

«Նա հասարակ, բայց հաճելի դեմք ունի», դիջողաբար վճռեց Օբլոմովը, «երևի, բարի՞ կին է»։

Այդ միջոցին աղջկա գլուխ ներս ցցվեց դռան միջից։ Ագաֆյա Մատվեևնան սպառնալից թաքուն գլխով նրան արեց, և նա անհետացավ։

— Իսկ որտե՞ղ է ծառայում ձեր եղբայրը։

— Գրասենյակում։

— Ո՞ր։

— Որտեղ գրի են առնում մուժիկներին... ես չգիտեմ՝ ինչպես է կոչվում այն։

Տանտիրուհին պարզամտորեն քմծիծաղ տվեց, և նույն

բոպեին նրա դեմքը նորից իր սովորական արտահայտությունն ստացավ։

— Դուք մենա՞կ չեք ապրում այստեղ ձեր եղբոր հետ,— հարցրեց Օբլոմովը։

— Ո՛չ, ինձ հետ են երկու երեխաներս հանգուցյալ ամուսնուցս. տղաս ութի մեջ է, իսկ աղջիկս՝ վեցի,— բավական զրուցասեր եղանակով սկսեց տանտիրուհին, և նրա դեմքն ավելի կենդանացավ,— հետո մեր հիվանդ տատիկը, հազիվ է ման գալիս, այն էլ միայն եկեղեցի է գնում. առաջ Ակուլինայի հետ շուկա էր գնում, իսկ հիմա Նիկոլայի տոնից սկսած դադարել է, ոտքերն ուռչում են։ Եկեղեցում էլ ավելի շատ նստում է աստիճանների վրա։ Այսքանը։ Երբեմն տալիս է գալիս հյուր, մեկ էլ Միխեյ Անդրեյիչը։

— Իսկ Միխեյ Անդրեյիչը հաճա՞խ է լինում ձեզ մոտ,— հարցրեց Օբլոմովը։

— Երբեմն ամսով հյուր է մնում. նա եղբորս հետ բարեկամ է, շարունակ միասին են։

Եվ լռեց, սպառելով մտքերի ու բառերի ամբողջ պաշարը։

— Ի՞նչ խաղաղ է այստեղ,— ասաց Օբլոմովը։— Եթե շունը չհաչեր, կարելի էր կարծել, թե այստեղ ոչ մի կենդանի շունչ չկա։

Տանտիրուհին պատասխանի տեղ քմծիծաղ տվեց։

— Դուք հաճա՞խ եք տնից դուրս գնում,— հարցրեց Օբլոմովը։

— Ամառը պատահում է։ Ա՛յ, նորերս, Եղիա մարգարեի շաբաթվա ուրբաթ օրը, գնացել էինք Պորոխովիե Զավոդի։

— Է՛, շա՞տ մարդ է լինում այնտեղ,— հարցրեց Օբլոմովը, լայն բացված շալի տակից նայելով նրա բարձրադիր, բազմոցի բարձի նման ամուր, Ներքեք չթպրտացող կրծքին։

— Ո՛չ, այս տարի շատ չէին. առավոտից անձրև էր գալիս, ինչ հետո եղանակը բացվեց։ Թե չէ, շատ մարդ է լինում։

— Ուրիշ էլ որտե՞ղ եք լինում։

— Մենք քիչ տեղեր ենք լինում։ Եղբայրս ու Միխեյ Անդրեյիչը ձկնարան են գնում, այնտեղ ձկնապուր են տալիս, իսկ մենք շարունակ տանն ենք։

— Մի՞թե միշտ տանն եք։

— Աստված վկա, ճիշտ եմ ասում։ Անցյալ տարի գնացել էինք Կոլպինո, երբեմն էլ այստեղ մոտիկ պուրակն ենք գնում։ Հունիսի 24-ին եղբորս անվանակոչության օրն է, ճաշ ենք սարքում, գրասենյակի բոլոր չինովնիկները մեզ մոտ են ճաշում։

— Իսկ հյուր գնո՞ւմ եք։

— Եղբայրս գնում է, իսկ ես երեխաների հետ միայն զատկի կյուրակե օրը, մեկ էլ ծննդին ճաշում եմ ամուսնուս աղգականների մոտ։

Խոսելու բան այլևս չէր մնացել։

— Ձեզ մոտ ծաղիկներ կան. դուք ծաղիկ սիրո՞ւմ եք,— հարցրեց Օբլոմովը։

Նա քմծիծաղ տվեց։

— Ո՛չ,— ասաց նա,— մենք ծաղիկներով զբաղվելու ժամանակ չունենք։ Երեխաներն Ակուլինայի հետ գնացել էին կոմսի պարտեզը, այնտեղ պարտիզպանն էր տվել, իսկ խորդենին ու հալվեն վաղուց, դեռ ամուսնուս ժամանակից, կային այստեղ։

Այդ ժամանակ հանկարծ սենյակ խուժեց Ակուլինան. նրա ձեռքերում թևերը թափ էր տալիս և հուսահատ կչկչում էր մի մեծ աքաղաղ։

— Ագա՛ֆյա Մատվեևնա, ա՞յս աքաղաղը պետք է տալ խանութպանին,— հարցրեց նա։

— Ի՞նչ ես անում, ի՞նչ ես անում, գնա՛,— ասաց տանտիրուհին ամաչելով։— Տեսնո՞ւմ ես, հյուր կա։

— Ես միայն հարցնել էի ուզում,— ասում էր Ակուլինան՝ բռնելով աքաղաղի ոտներից, գլուխը ներքև,— յոթանասուն կոպեկ է տալիս։

— Գնա՛, գնա՛ խոհանոց,— ասում էր Ագաֆյա Մատվեևնան։— Ո՛չ թե այդ, այլ բծեր ունեցող գորշը,— շտապ ավելացրեց նա, և ինքն էլ ամաչեց, ձեռքերը պահեց շալի տակ ու սկսեց ցած նայել։

— Տնտեսությո՛ւն,— ասաց Օբլոմովը։

— Այո՛, մենք շատ հավ ունենք. վաճառում ենք ձու և ճտեր։ Այստեղ, այս փողոցում, ամառանոցներում և կոմսի տանը բոլորը մեզնից են տանում,— պատասխանեց նա, շատ ավելի համարձակ նայելով Օբլոմովին։

— Եվ նրա դեմքը գործիմաց ու հոգածու արտահայտություն էր ընդունում. անհետանում էր մինչև անգամ բթությունը, երբ նա խոսում էր իրեն ծանոթ առարկայի մասին։ Իսկ ամեն մի այլ հարցի, որ չէր վերաբերում որևէ դրական, իրեն հայտնի նպատակի, նա քմծիծաղով ու լռությամբ էր պատասխանում։

— Պետք էր սա կարգավորել,— նկատեց Օբլոմովը՝ ցույց տալով իր իրերի կույտը։

— Մենք ուզում էինք դա անել, բայց եղբայրս չթողեց — աշխույժ ընդհատեց նա և արդեն միանգամայն համարձակ նայեց Օբլոմովին.— «Աստված գիտե, թե ինչեր կան նրա սեղանների ու պահարանների մեջ... ասաց եղբայրս,— հետո կկորչի, մեր օձիքից կբռնեն...»

Նա կանգ առավ և ծիծաղեց։

— Որքան զգույշ է ձեր եղբայրը,— ավելացրեց Օբլոմովը։

Նա կրկին թեթև քմծիծաղ տվեց և դարձյալ իր սովորական արտահայտությունն ընդունեց։

Նրա քմծիծաղն ավելի շուտ մի ընդունված ձև էր, որով ծածկում էր իր անգիտությունը, թե ինչ պետք է ասել կամ անել այս կամ այն դեպքում։

— Ես նրա վերադարձին սպասելու ժամանակ չունեմ,— ասաց Օբլոմովը.— գուցե դուք կհաղորդեք նրան, որ հանգամանքների բերումով ես բնակարանի կարիքը չունեմ և այդ պատճառով էլ խնդրում եմ այն ուրիշ կենվորի հանձնել, իսկ ես, իմ կողմից, նույնպես ցանկացող կփնտրեմ։

Նա լսում էր, բութ հայացքով, աչքերը հավասար թարթելով։

— Պայմանագրի մասին նեղություն կրեցեք ասելու...

— Ախր նա հիմա տանը չէ,— կրկնում էր կինը,— ավելի լավ է՝ դուք վաղը նորից գաք. վաղը շաբաթ է, նա ատյան չի գնալու...

— Ես սոսկալի զբաղված եմ, ոչ մի ազատ րոպե չունեմ,— խուսափողական պատասխան էր տալիս Օբլոմովը,— Դուք նեղություն կրեք միայն ասելու, քանի որ կանխավճարը ձեր օգտին է մնում, իսկ կենվոր ես կգտնեմ, ապա...

— Եղբայրս չկա,— ասում էր նա միապաղաղ,— չգիտեմ

ինչու՝ չի գալիս... —Եվ նայեց փողոց։— Այ, նա այստեղով է անցնում, լուսամուտների մոտով. երբ գալիս է, երևում է, բայց հիմա չկա՞։

— Դե՞, ես գնում եմ...— ասաց Օբլոմովը։

— Իսկ եղբայրս որ գա, ի՞նչ ասեմ, ե՞րբ կփոխադրվեք,— հարցրեց նա՝ վեր կենալով բազմոցից։

— Դուք նրան հաղորդեցեք, ինչ որ խնդրեցի,— ասում էր Օբլոմովը,— որ հանգամանքների բերումով...

— Լավ կլիներ՝ դուք վաղն ինքներդ գայիք և նրա հետ խոսեիք...— կրկնեց նա։

— Վաղը ես չեմ կարող։

— Լա՛վ, մյուս օրը, կիրակի. պատարագից հետո մեզ մոտ օդի և ուտելիք կլինի։ Միխեյ Անդրեյիչն էլ է գալիս։

— Մի՞թե Միխեյ Անդրեյիչն էլ է գալիս,— հարցրեց Օբլոմովը։

— Աստված վկա ճիշտ եմ ասում,— ավելացրեց տանտիրուհին։

— Վաղը՝ չէ մյուս օրն էլ չեմ կարող,— անհամբերությամբ պատրվակում էր Օբլոմովը։

— Դե այն ժամանակ եկող շաբաթ...— ասաց նա։— Իսկ ե՞րբ կտեղափոխվեք։ Ես կկարգադրեի հատակները լվանալ և փոշին մաքրել,— հարցրեց նա։

— Ես չեմ տեղափոխվելու,— ասաց Օբլոմովը։

— Ինչպե՞ս թե։ Իսկ ձեր իրերը որտե՞ղ պահենք։

— Դուք նեղություն կրեք ձեր եղբորն ասելու,— սկսեց խոսել Օբլոմովն ընդհատ-ընդհատ՝ աչքերը գցելով ուղիղ նրա կրծքին,— որ հանգամանքների բերումով...

— Բայց չգիտեմ ինչու՝ այսքան ուշանում է,— ասաց նա միօրինակաբար, նայելով փողոցը բակից բաժանող ցանկապատին։— Ես նրա քայլերն էլ եմ ճանաչում. փայտե սալարկի վրա լսվում է, երբ մեկը գալիս է։ Այստեղ քիչ են մարդ գալիս...

— Ուրեմն դուք նրան կհաղորդե՞ք, ինչ որ ես ձեզ խնդրեցի,— հրաժեշտ տալով ասաց Օբլոմովը։

— Ա՛յ, կես ժամից հետո նա ինքը կգա...— ասում էր տանտիրուհին՝ իրեն ոչ հատուկ անհանգստությամբ կարծես՝ աշխատելով իր ձայնով ետ պահել Օբլոմովին։

— Ես չեմ կարող այլևս սպասել,— վճռեց նա, բաց անելով դուռը։

Շունը տեսնելով նրան մուտքի վրա, հաչոցը դրեց և սկսեց նորից շղթայով այս ու այն կողմ վազել։ Արմունկներին հենված քնած կառապանն սկսեց ետ քաշել ձիերին. հավերը նորից տագնապալից զանազան կողմեր փախան. լուսամուտից դուրս նայեց մի քանի գլուխ։

— Ուրեմն ես կասեմ եղբորս, որ դուք եկել եք,— անհանգստությամբ ավելացրեց տանտիրուհին, երբ Օբլոմովը կառք նստեց։

— Այո՛, և ասացե՛ք, որ ես, հանգամանքների բերումով, չեմ կարող բնակարանն ինձ պահել և որ ես այն ուրիշի կհանձնեմ կամ որպեսզի նա... փնտրի...

— Նա այս ժամանակ միշտ գալիս է...— ասում էր տանտիրուհին, ցրված լսելով նրան։— Ես նրան կասեմ, որ դուք ուզում էիք նորից գալ։

— Այո՛, մոտ օրերս ես նորից կգամ,— ասաց Օբլոմովը։

Շան կատաղի հաչոցի ուղեկցությամբ կառքը դուրս եկավ բակից և սկսեց տարուբերվել չսալարկված նրբափողոցի չոքացած կոշտերի վրայով։

Նրբափողոցի ծայրին երևաց մաշված վերարկու հագած մի ինչ-որ տարիքի մարդ, մի մեծ թղթե ծրար կոնատակին, հաստ ձեռնափայտով ու ռետինե կրկնակոշիկներով, չնայած շոր ու շոգ օրվան։

Նա գալիս էր արագ, նայում էր շորս կողմը և քայլում էր այնպես, կարծես ուզում էր փայտե մայթը փոս գցել։ Օբլոմովը նայեց և տեսավ, որ նա Պշենիցինայի դարպասով ներս մտավ։

«Ահա, երևի, եղբա՛յրն էլ եկավ», եզրափակեց նա։ «Է՛հ, գրողը տանի նրան։ Մի ժամի չափ պիտի հետը խոսես, իսկ ես ուտել եմ ուզում, և շոգ է։ Օլգան էլ ինձ սպասում է... Մյո՛ւս անգամ»։

— Արա՛գ,— ասաց նա կառապանին։

«Իսկ ուրիշ բնակարան տեսնելը,— հանկարծ հիշեց նա, նայելով շորս կողմը, ցանկապատերին։ Հարկավոր է նորից

ձերադառնալ, Մորսկայա կամ Գոնյուշեննայա փողոցները... Մյո՛ւս անգամ»,— վճռեց նա։

— Արա՛գ քշիր։

III

Օգոստոսի վերջերին անձրևներ սկսվեցին, և ամառանոցներում, որտեղ վառարաններ կային, ծխնելույզները ծխացին, իսկ որտեղ վառարաններ չկային, այնտեղ բնակիչները ման էին գալիս կապտած այտերով, ու վերջապես, հետզհետե, ամառանոցները դատարկվեցին։

Օբլոմովը քաղաք չէր գնում, և մի առավոտ նրա լուսամուտի առջևով անցկացրին ու տարան Իլյինսկայաների կահկարասին։ Թեև այժմ նրան այլևս սխրագործություն չէր թվում բնակարանից տեղափոխվելը, որտեղ տեղում անցողակի ճաշելը և ամբողջ օրվա ընթացքում չպառկելը, բայց նա չգիտեր, թե գիշերը որտեղ պիտի դնի իր գլուխը։

Նրան միանգամայն անկարելի էր թվում ամառանոցում մենակ մնալ, երբ դատարկվել էին զբոսայգին ու պուրակը, երբ ծածկվեցին Օլգայի լուսամուտների փայտափեղկերը։

Նա շրջեց Օլգայի դատարկ սենյակներով, պտտեց զբոսայգում, իջավ սարից. թախիծը նեղում էր նրա սիրտը։

Նա հրամայեց Զախարին ու Անիսյային գնալ Վիբորգյան քաղաքամասը, որտեղ վճռեց մնալ մինչև նոր բնակարան գտնելը, իսկ ինքը գնաց քաղաք, շտապ ճաշեց պանդոկում և երեկոն անցկացրեց Օլգայի մոտ։

Բայց աշնանային երեկոները քաղաքում նման չէին զբոսայգու պուրակի երկար, պայծառ օրերին ու երեկոներին։ Այստեղ Օբլոմովն արդեն չէր կարող օրական երեք անգամ տեսնել Օլգային. այստեղ նրա մոտ չի վազի Կատյան և նա Զախարի հետ տոմսակ չի ուղարկի հինգ վերստի վրա։ Եվ սիրո այդ ամբողջ ամառային, ծաղկուն պոեմը կարծես կանգ առավ, սկսեց ավելի դանդաղ ընթանալ, կարծես նրա բովանդակությունը պակասել էր։

Նրանք երբեմն կես ժամ լուռ էին մնում։ Օլգան խորանում էր աշխատանքի մեջ, ասեղով մտքում հաշվում զարդի

վանդակները, իսկ Օբլոմովը խորանում էր իր մտքերի քաղցր մեջ և ապրում ներկա պահից շատ ավելի հեռու կյանքով։

Երբեմն միայն, սևեռուն հայացքով նայելով Օլգային, նա ցնցվում էր կրքով, կամ Օլգան էր նայում նրան հարևանցի ու ժպտում, որսալով նրա աչքերում քնքուշ հնազանդության, անխոս երջանկության ճառագայթը։

Երեք օր անընդմեջ նա քաղաք էր գնում Օլգայի մոտ ճաշում նրանց մոտ, այն պատրվակով, որ իր բնակարանը դեռ կարգի չի բերված, որ այս շաբաթ տեղափոխվելու է, այդ պատճառով էլ նոր բնակարանում իրեն չի զգում այնպես, ինչպես տանը։

Բայց չորրորդ օրը նա արդեն անհարմար զգաց գալ, և թափառելով Իլյինսկայաների տան շուրջը՝ հառաչելով տուն գնաց։

Հինգերորդ օրը Իլյինսկայաները տանը չճաշեցին։

Վեցերորդ ջրը Օլգան նրան ասաց, որ գա մի ինչ-որ խանութ, որ ինքն այնտեղ կլինի, իսկ հետո նա կարող է Օլգային մինչև տուն ուղեկցել ոտքով, իսկ կառքը կգա ետևից։

Այդպես անհարմար էր, թե՛ Օբլոմովին և թե՛ Օլգային ծանոթներ էին պատահում, բարևում էին, ոմանք կանգ էին առնում խոսելու։

— Ա՜խ, տեր իմ աստված, ի՜նչ տանջանք,— ասում էր Օբլոմովը՝ երկյուղից ու անհարմար դրությունից ամբողջովին քրտնած։

Մորաքույրն էլ նայում էր նրան իր նվաղկոտ մեծ աչքերով և մտախոհ հոտոտում իր սպիրտը, կարծես Օբլոմովը գլխացավ էր պատճառում նրան։ Իսկ որքա՜ն հեռու պետք է նա գնար ու գար։ Գնում ես, գնում Վիբորգյան քաղաքամասից, երեկոյան էլ վերադառնում՝ երեք ժամ է տևում։

— Ասենք մորաքրոջդ,— պնդում էր Օբլոմովը,— այն ժամանակ ես կարող եմ առավոտից ձեզ մոտ մնալ, և ոչ ոք չի խոսի...

— Իսկ դու պալատում եղա՞ր,— հարցրեց Օլգան։

Օբլոմովին կարծես մեկը դրդում էր ասելու՝ «եղա և ամեն ինչ արեցի», բայց նա գիտեր, որ Օլգան այնպիսի սևեռուն հայացք կգցի վրան, որ սուտն իսկույն կկարդա դեմքին։ Պատասխանի փոխարեն հառաչեց Օբլոմովը։

— Ա՜խ, եթե դու իմանայիր, թե որքա՜ն դժվար է,— ասաց նա։

— Իսկ տանտիրուհու եղբոր հետ խոսե՞լ ես։ Բնակարանը գտա՞ր,— հարցրեց Օլգան հետո, առանց աչքերը բարձրացնելու։

— Առավոտները նա երբեք տանը չի լինում, իսկ երեկոները շարունակ այստեղ եմ,— ասաց Օբլոմովը, ուրախանալով, որ բավարար պատրվակ կա։

Հիմա հառաչեց Օլգան, բայց ոչինչ չասաց։

—Վաղն անպատճառ կխոսեմ տանտիրուհու եղբոր հետ,— հանգստացնում էր նրան Օբլոմովը,— վաղը կիրակի է, նա տոյան չի գնա։

— Մինչև այդ բոլորը չդասավորվի,— ասաց Օլգան մտախոհ,— ma tante- ին ասել չի կարելի, տեսնվել էլ պետք է ավելի ուշ-ուշ...

— Այո՛, այո՛... ճիշտ է,— վախենալով ավելացրեց Օբլոմովը։

— Դու մեզ մոտ ճաշիր կիրակի, մեր օրը, հետո էլ թեկուզ չորեքշաբթի, մենակ,— վճռեց Օլգան։— Իսկ հետո մենք կարող ենք տեսնվել թատրոնում, կիմանաս, թե մենք երբ ենք գնում, դու էլ արի։

— Այո՛, ճշմարիտ է,— ասաց Օբլոմովը ուրախացած, որ Օլգան իր վրա վերցրեց տեսակցությունների կարգի հոգացողությունը։

— Եթե լավ օր լինի,— վերջացրեց նա,— ես կգնամ Ամառային այգին զբոսնելու, դու էլ կարող ես գալ. դա մեզ կըհիշեցնի...— կրկնեց նա հուզմունքով։

Օբլոմովը լուռ համբուրեց նրա ձեռքը և հրաժեշտ տվեց մինչև կիրակի։ Օլգան թախծոտ ճանապարհ դրեց նրան աչքերով, հետո նստեց դաշնամուրի մոտ և ամբողջովին խորասուզվեց հնչյունների մեջ։ Նրա սիրտը լալիս էր ինչ-որ մի բանի համար, ողբում էին նաև հնչյունները։ Ուզում էր երգել՝ չի՛ստացվում։

Հետևյալ օրն Օբլոմովը վեր կացավ և հագավ իր տարօրինակ սերթուկը, որ հագնում էր ամառանոցում։ Խալաթին նա վաղուց հրաժեշտ էր տվել և պատվիրել էր պահարանում փակել։

Զախարն, ըստ սովորության, տարուբերելով մատուցարանը, անշնորհք կերպով մոտենում էր սեղանին՝ բերելով սուր և կրենդելներ։ Զախարի ետևից, ըստ սովորության, մինչև կեսը դռնից ներս էր խոթվում Անիսյան, դիտելու համար թե արդյոք Զախարը գավաթները մինչև սեղանը կհասցնի՞, և իսկույն, առանց աղմուկի, անհետանում էր, եթե Զախարը մատուցարանը բարեհաջող կերպով սեղանի վրա էր դնում, կամ սրընթաց նրա մոտ էր թռչում, երբ մատուցարանից մի բան էր վայր ընկնում, որպեսզի պահի մյուսները։ Այդ ժամանակ Զախարը հայհոյանք էր թափում նախ իրերի, հետո կնոջ վրա և արմունկը վրա բերում նրա կրծքին։

— Ի՞նչ հիանալի սուրճ է։ Ո՞վ է եփում,— հարցրեց Օբլոմովը։

— Տանտիրուհին ինքը,— ասաց Զախարը,— վեցերորդ օրն է, շարունակ նա է եփում։ «Դուք, ասում է, շատ եք գընում, և լավ չեք եփում։ Տվեք ե՛ս եփեմ»։

— Հիանալի՞ է,— կրկնեց Օբլոմովը, լցնելով երկրորդ գավաթը։— Շնորհակալություն հայտնիր նրան։

— Ահա և ինքը,— ասաց Զախարը, ցույց տալով կողքի սենյակի կիսաբաց դուռը։— Սա նրանց բուֆետն է, ինչ է. նա հենց այստեղ էլ գործ է անում, այստեղ է նրանց թեյը, շաքարը, սուրճը և ամանեղենը։

Օբլոմովը տեսնում էր տանտիրուհու միմիայն մեջքը, ծոծրակը և սպիտակ պարանոցի մի մասն ու մերկ արմունկները։

— Այդ ի՞նչ է նա արմունկներն այդպես ժիր շարժում,— հարցրեց Օբլոմովը։

— Ո՞վ գիտե։ Հաշիա է արդուկում, ինչ է։

Օբլոմովը հետևում էր, թե ինչպես էին շարժվում արմունկները, ինչպես էր մեջքը թեքվում և նորից ուղղվում։

Երբ նա կռանում էր, ցածից երևում էին մաքուր կիսաշրջազգեստը, մաքուր գուլպաներն ու կլոր, գիրուկ ոտքերը։

«Զինովնիկի կին է, իսկ արմունկները սաղ կգային թեկուզ որևէ կոմսուհու. հլա փոսիկնե՞ր էլ ունի»,— մտածեց Օբլոմովը։

Կեսօրին Զախարը եկավ հարցնելու, չի՞ բարեհաճի արդյոք փորձելու նրանց կարկանդակը. տանտիրուհին պատվիրել է առաջարկել։

— Այսօր կիրակի է, նրանք կարկանդակ են թխում։

— Դե, ես կարծում եմ, որ կարկանդակը լա՞վն է,— անփութորեն ասաց Օբլոմովը։— Սոխով ու մեկ էլ գազարով...

— Կարկանդակը մեր օբլոմովյան կարկանդակներից վատ չէ,— նկատեց Զախարը,— ճտերով ու թարմ սնկով։

— Ախ, երևի լավը կլինի, բե՛ր։ Ո՞վ է թխում նրանց մոտ։ Այն կեղտոտ կի՞նը։

— Ի՞նչ նրա բանն է,— արհամարհանքով ասաց Զախարը։— Եթե տանտիրուհին չլինի, նա թթխմոր դնել էլ չի կարողանա։ Տանտիրուհին ինքը շարունակ խոհանոցում է։ Իսկ կարկանդակը նրանք Անիսյայի հետ երկուսով թխեցին։

Հինգ րոպեից կողքի սենյակից Օբլոմովին մեկնվեց նրա արդեն տեսած շալով հագիվ ծածկված մի մերկ ձեռք՝ ափսեով, որի վրա տաք գոլորշի էր արձակում կարկանդակի մի մեծ կտոր։

— Խորապես շնորհակալ եմ,— սիրալիր կերպով ձայն տվեց Օբլոմովը, ընդունելով կարկանդակը և, նայելով դռան մեջ, հայացքը սևեռեց բարձր կրծքին ու մերկ ուսերին։

Դուռը շտապ փակվեց։

— Օղի չեի՞ք ցանկանա,— հարցրեց ձայնը։

— Ես չեմ խմում, խորապես շնորհակալ եմ,— է՛լ ավելի սիրալիր ասաց Օբլոմովը,— ի՞նչ օղի է ձերը։

— Սեփական, տանու. ինքներս ենք պատրաստում՝ հաղարջի տերևից,— ասում էր ձայնը։

— Հաղարջի տերևից օղի ես երբե՞ք չեմ խմել, թույլ տվեք փորձել։

Մերկ ձեռքը նորից մեկնվեց ափսեով և մի գավաթ օղիով։ Օբլոմովը խմեց, շատ հավանեց։

— Շատ շնորհակալ եմ,— ասաց նա՝ ջանալով նայել դռան միջից, բայց դուռը փակվեց։

— Ինչո՞ւ չեք թողնում, որ նայեմ ձեզ վրա, ձեզ բարի լույս ցանկանամ,— կշտամբեց Օբլոմովը։

Տանտիրուհին քմծիծաղ տվեց դռան ետևից։

— Ես դեռ առօրյա շորերով եմ, ամբողջ ժամանակ խո-

Հանոցում էի։ Իսկույն կհագնվեմ, եղբայրս շուտով պիտաց բագից կգա,— պատասխանեց նա։

— Ա՜խ, á propos ձեր եղբոր մասին,— նկատեց Օբլոմովը,— ես պետք է նրա հետ խոսեմ։ Խնդրեք նրան անցնել ինձ մոտ։

— Լավ, կասեմ, հենց որ գա։

—Իսկ այդ ո՞վ է հազում ձեզ մոտ։ Այդ չոր հազն ո՞ւմն է,— հարցրեց Օբլոմովը։

— Մեր տատիկն է. նա ութերորդ տարին է արդեն, որ հազում է։

Եվ դուռը փակվեց։

«Ի՜նչ... պարզ է նա», մտածեց Օբլոմովը, «իսկ նրա մեջ ինչ-որ բան կա... Եվ իրեն մաքո՜ւր է պահում»։

Մինչև այժմ նա դեռ չէր կարողացել ծանոթանալ տանտիրուհու «եղբոր» հետ։ Նա տեսնում էր անկողնից, այն էլ հազվադեպ, թե ինչպես վաղ առավոտյան ցանկապատի արանքից երևում էր մի մարդ, մեծ թղթե ծրարը կռնատակին և անհետանում էր նրբափողոցում, իսկ հետո էլ, ժամը 5-ին նորից երևում էր նույն ծրարով լուսամուտների առաջ, վերադառնալիս, նույն մարդը, և անհետանում էր տան մուտքի մեջ։ Նրա ձայնը չէր լսվում տանը։

Մինչդեռ նկատելի էր, որ այնտեղ մարդիկ էին ապրում, հատկապես առավոտները. խոհանոցում չխկչխկում էին դանակները։ լուսամուտից լսվում էր, թե ինչպես մի կին ինչ-որ բան էր ողողում անկյունում, ինչպես դռնապանը փայտ էր կոտորում, կամ երկու անիվների վրա տակառով ջուր բերում. պատի ետև լաց էին լինում երեխաները կամ լսվում էր պառավի համառ, չոր հազը։

Օբլոմովը չորս սենյակ ուներ, այսինքն՝ բոլոր շքասենյակները։ Տանտիրուհին ընտանիքի հետ միասին տեղավորվել էր երկու ոչ շքասենյակներում, իսկ եղբայրն ապրում էր վերևում, այսպես կոչված՝ վերնատանը։

Օբլոմովի առանձնասենյակի և ննջարանի լուսամուտները բացվում էին՝ դեպի բակ, հյուրասենյակինը՝ դեպի փոքրիկ պարտեզ, իսկ դահլիճինը՝ դեպի կաղամբի ու կարտոֆիլի մեծ բանջարանոց։ Հյուրասենյակի լուսամուտներին կախված էին գույնը գցած չթե վարագույրներ։

Պատերի տակ դրված էին հասարակ, ընկուզենով պատած աթոռներ, հայելու տակ դրված էր թղթախաղի սեղանը, լուսամուտների գոգերին շարված էին խորդենու և թավշածաղկի ամանները և կախ էին տրված չորս վանդակ՝ ազնվասարեկներով ու դեղձանիկներով։

Եղբայրը ներս մտավ մատների ծայրերի վրա և եռակի խոնարհումով պատասխանեց Օբլոմովի ողջույնին։ Նրա վիցմունդիրի բոլոր կոճակները գցած էին, այնպես որ չէր կարելի իմանալ, արդյոք սպիտակեղեն ունի՞ հագին, թե ոչ. փողկապը կապած էր պարզ հանգույցքով, ծայրերը՝ ներքև։

Նա կլիներ քառասուն տարեկան. մի ուղիղ մազափունջ ճակատին և երկու նույնպիսի, անփույթ կերպով քամուն թողած մազափնջեր քներակների վրա, որ նման էին միջին մեծության շնականջների։ Գորշ աչքերը միանգամից չէին նայում առարկային, այլ սկզբում նայում էին թաքուն, իսկ երկրորդ անգամ արդեն կանգ էին առնում։

Նա կարծես ամաչում էր իր ձեռքերից, և խոսելիս աշխատում էր կամ երկու ձեռքն էլ մեջքին դրած պահել, կամ մեկը թևի տակ ու մյուսը մեջքին։ Պետին թուղթ տալիս և բացատրելիս՝ նա մի ձեռքը պահում էր մեջքին, իսկ մյուս ձեռքի միջամատով, եղունգը դեպի ներքև, զգուշությամբ ցույց էր տալիս որևէ տող կամ բառ և ցույց տալուց հետո, ձեռքն իսկույն ետ էր քաշում-պահում, գուցե այն պատճառով, որ մատները հաստ էին, կարմրավուն և մի քիչ դողում էին և առանց պատճառի չէր, որ նրան թվում էր, թե վայելուչ չէ իր մատները հաճախ ցուցադրել։

— Դուք բարեհաճել եք,— սկսեց նա՝ իր երկակի հայացքն ուղղելով Օբլոմովին,— հրամայել, որ ես գամ ձեզ մոտ։

— Այո՛, ես ուզում էի ձեզ հետ խոսել բնակարանի մասին։ Խնդրեմ նստեք,— քաղաքավարությամբ պատասխանեց Օբլոմովը։

Իվան Մատվեևիչը, կրկնակի հրավերից հետո սիրտ արեց նստել, ամբողջ մարմնով թեքվելով առաջ և ձեռքերը թևքերի մեջ ծալելով։

— Հանգամանքների բերումով, ես պետք է ուրիշ բնակարան փնտրեմ,— ասաց Օբլոմովը,— այդ պատճառով կուզենայի այս բնակարանը ուրիշի հանձնել։

— Այժմ դժվար է ուրիշի հանձնել,— հազալով մատների մեջ և դրանք ճարպկորեն թևքի մեջ պահելով պատասխանեց Իվան Մատվեևիչը,— եթե ամառվա վերջին գայիք, այն ժամանակ շատերն էին գալիս տեսնելու։

— Ես եկա, բայց դուք չկայիք,— ընդհատեց Օբլոմովը։

— Քույրս ասաց ինձ,— ավելացրեց չինովնիկը։— Բայց դուք մի՛ անհանգստացեք բնակարանի համար. այստեղ ձեզ հարմար կլինի։ Գուցե, ձեզ անհանգստացնում են թռչունները։

— Ի՞նչ թռչուններ։

— Հավերը։

Օբլոմովը թեև վաղ առավոտից լուսամուտների տակ շարունակ լսում էր թխսամոր կոթկոթոցը և ճտերի ծվծվոցը, բայց դա նրա ի՞նչ հոգն է։ Նրա առջև էր Օլգայի պատկերը, և նա հազիվ էր նկատում շրջապատը։

— Ո՛չ, դա ոչինչ,— ասաց նա,— ես կարծում էի, թե դուք դեղձանիկների մասին եք խոսում. նրանք առավոտից սկսում են ճթճթալ։

— Մենք դուրս կտանենք նրանց,— պատասխանեց Իվան Մատվեևիչը։

— Այդ էլ ոչինչ,— նկատեց Օբլոմովը,— բայց ես, հանգամանքների բերումով, մնալ չեմ կարող։

— Ինչպես կամենաք,— պատասխանեց Իվան Մատվեևիչը։— Իսկ եթե կենվոր չգտնեք, ի՞նչ կանեք պայմանագրի վերաբերյալ։ Կբավարարե՞ք... Ձեզ վնաս կլինի։

— Իսկ որքա՞ն պետք կլինի վճարել,— հարցրեց Օբլոմովը։

— Այ, ես կբերեմ հաշիվը։

Նա բերեց պայմանագիրը և Համրիչը։

— Այ, բնակարանի համար ութ հարյուր ռուբլի ասիգնացիաներով. ստացված է հարյուր ռուբլի կանխավճար, մնում է յոթ հարյուր ռուբլի,— ասաց նա։

— Լա՛վ, մի՞թե դուք ուզում եք ինձանից ամբողջ տարվա համար վերցնել, երբ ես ձեզ մոտ երկու շաբաթ էլ չեմ ապրել,— ընդհատեց նրան Օբլոմովը։

— Ուրիշ ինչպե՞ս կարելի է,— հեզաբար ու խղճմտորեն առարկեց Իվան Մատվեևիչը։— Քույրս անարդարացի կերպով վնաս կկրի։ Նա մի խեղճ այրի է, ապրում է միայն նրանով, ինչ ստանում է տնից, մեկ էլ գուցե ճտերից ու ձվերից է մի բան ձեռք գցում երեխաների հագուստի համար։

— Շնորհ արեք, ես չեմ կարող,— խոսեց Օբլոմովը,— ինքներդ դատեք, երկու շաբաթ էլ չեմ ապրել։ Ի՞նչ բան է, ինչի՞ համար։

— Ա՛յ, պայմանագրում ասված է,— խոսեց Իվան Մատվեևիչը, միջամատով ցույց տալով երկու տող և մատը թաքցրնելով ձեռքի մեջ,— հաճեցեք կարդալ. «Իսկ եթե ես, Օբլոմովս, կամենամ ժամանակից առաջ տեղափոխվել բնակարանից, ապա պարտավոր եմ այն միևնույն պայմաններով հանձնել ուրիշ անձի կամ, հակառակ դեպքում, բավարարել Պշենիցինային՝ ամբողջ տարվա լրիվ վարձով, մինչև եկող տարվա հունիսի մեկը», կարդաց Օբլոմովը։

— Ինչպե՞ս կարելի է,— ասաց նա։— Դա անարդարացի է։

— Օրենքով այդպես է,— նկատեց Իվան Մատվեևիչը։— Ինքներդ եք բարեհաճել ստորագրել. ահա՛ ստորագրությունը։

Ստորագրության տակ դարձյալ երևաց մատը և նորից անհետացավ։

— Ուրեմն որքա՞ն,— հարցրեց Օբլոմովը։

— Յոթ հարյուր ռուբլի,— սկսեց չխկացնել Իվան Մատվեևիչը նույն մատով, ամեն անգամ ճարպկորեն ծռելով այն բռունցքի մեջ,— հետո ախոռի և սարայի համար հարյուր հիսուն ռուբլի։

Եվ նորից չխկացրեց։

— Ի՞նչ եք ասում, ես ձի չունեմ, ես ձիեր չեմ պահում. ինչի՞ս են պետք ախոռն ու սարայը,— թշխուժով առարկեց Օբլոմովը։

— Պայմանագրում կա,— նկատեց Իվան Մատվեևիչը՝ մատով ցույց տալով տողը։— Միխեյ Անդրեյիչն ասում էր, որ դուք ձիեր եք ունենալու։

— Սո՞ւտ է ասում Միխեյ Անդրեյիչը,— սրտնեղած ասաց Օբլոմովը։— Տվե՛ք ինձ պայմանագիրը։

— Ահա հաճեցեք ստանալ պատճենը, իսկ պայմանագիրը պատկանում է քրոջս,— մեղմորեն ասաց Իվան Մատվեևիչը, պայմանագիրն առնելով ձեռքը։— Բացի այդ, բանջարա-

նոցի և այնտեղից իբրև պարեն ստացվող կաղամբի, շաղ-գամի ու այլ բանջարեղենի համար, հաշվելով մի մարդուն,— կարդում էր Իվան Մատվեևիչը,— մոտավորապես երկու հարյուր հիսուն ռուբլի...

Եվ նա ուզում էր գցել համրիչի վրա։

— Ի՞նչ բանջարանոց։ Ի՞նչ կաղամբ։ Ես ամենևին չգիտեմ էլ, թե դուք ի՞նչ եք ասում,— համարյա ահեղորեն առարկում էր Օբլոմովը։

— Ա՛յ, պայմանագրում. Միխեյ Անդրեյիչն ասաց, որ դուք այդ պայմանով եք վարձում...

— Սա ի՞նչ բան է, դուք առանց ինձ իմ սեղանի հարցն է՞լ եք որոշում։ Ես չեմ ուզում ո՛չ կաղամբ, ո՛չ շաղգամ...— ասաց Օբլոմովը՝ վեր կենալով։

Իվան Մատվեևիչն էլ վեր կացավ։

— Շնորհ արեք,ինչպե՞ս կարելի է առանց ձեզ. ա՛յ, ստորագրություն կա,— առարկեց նա։

Եվ դարձյալ հաստ մատը դողաց ստորագրության վրա և ամբողջ թուղթն էլ դողում էր նրա ձեռքում։

— Ընդամենը որքա՞ն եք հաշվում,— հարցրեց Օբլոմովն անհամբեր։

— Եվս առաստաղն ու դռները ներկելու, խոհանոցի լուսամուտները նորոգելու, դռների նոր կեռիկների համար՝ հարյուր հիսունչորս ռուբլի քսանութ կոպեկ ասիգնացիաներով։

— Ինչպե՞ս, դա՞ էլ է իմ հաշվին,— զարմանքով հարցրեց Օբլոմովը։— Այդ արվում է միշտ տանտիրոջ հաշվին։ Ո՞վ է չնորոգված բնակարան փոխադրվում...

— Ահա՛, պայմանագրում ասված է, որ ձեր հաշվին է,— ասաց Իվան Մատվեևիչը, հեռվից մատով ցույց տալով թղթի վրա այն տեղը, որտեղ ասված է այդ մասին։— Ընդամենը հազար երեք հարյուր հիսունչորս ռուբլի քսանութ կոպեկ ասիգնացիաներով,— հեզաբար վերջացրեց նա՝ երկու ձեռքն էլ պայմանագրի հետ միասին պահելով ետևը։

— Է՞, ես որտեղի՞ց վերցնեմ։ Փող չունեմ,— առարկեց Օբլոմովը՝ ման գալով սենյակում։— Շա՞տ պետքս է ձեր շաղգամն ու կաղամբը։

— Ինչպես կամենա՞ք,— մեղմ ավելացրեց Իվան Մատվեևիչը։— Բայց մի՛ անհանգստացեք, այստեղ ձեզ հարմար

կլինի,— ավելացրեց նա։— Իսկ փողերը... քույրս կսպասի։

— Չի՛ կարելի, հանգամանքների բերումով ես չե՞մ կարող։ Լսո՞ւմ եք։

— Լսում եմ։ Ինչպես կամենաք,— հնազանդությամբ պատասխանում էր Իվան Մատվեևիչը՝ մի քայլ ետ գնալով։

— Լա՛վ, ես կմտածեմ և կաշխատեմ բնակարանն ուրիշի հանձնել,— ասաց Օբլոմովը, գլուխ տալով չինովնիկին։

— Դժվար բան է, սակայն, ինչպե՛ս կամենաք,— վերջացրեց Իվան Մատվեևիչը և, երեք անգամ գլուխ տալով, դուրս եկավ։

Օբլոմովը հանեց դրամապանակը և հաշվեց փողերը. ընդամենը երեք հարյուր հինգ ռուբլի։ Նա քարացավ։

«Ի՞նչ եմ արել փողերս»,— զարմանքով, համարյա սարսափով ինքն իրեն հարցրեց Օբլոմովը։ «Ամառվա սկզբին գյուղից ուղարկեցին հազար երկու հարյուր ռուբլի, իսկ հիմա ընդամենը երեք հարյո՞ւր կա»։

Նա սկսեց հաշվել, միտը բերել բոլոր ծախսերը և կարողացավ մտաբերել միայն երկու հարյուր հիսուն ռուբլին։

— Որտե՞ղ են ծախսվել փողերս,— ասում էր նա։

— Զախա՞ր, Զախա՞ր։

— Ի՞նչ եք ցանկանում։

— Այս որտե՞ղ են ծախսվել մեր բոլոր փողերը։ Ախր մենք այլևս փող չունե՞նք,— հարցրեց նա։

Զախարն սկսեց փնտրել գրպանները, հանեց մի հիսուն կոպեկանոց, մի տասը կոպեկանոց և դրեց սեղանի վրա։

— Ահա, մոռացել էի տալ ձեզ, տեղափոխությունից են մնացել,— ասաց նա։

— Ի՞նչ ես մանրը խոթում աչքս։ Դու ասա՛, ո՞ւր է ութհարյուր ռուբլին։

— Ես ի՞նչ գիտեմ։ Մի՞թե ես գիտեմ, թե դուք որտեղ եք ծախսում։ Ի՞նչ եք վճարում կառապանին։

— Այո՛, ա՛յ, կառքերի շատ փող է ծախսվել,— մտաբերեց Օբլոմովը, նայելով Զախարին։— Արդյոք չե՞ս հիշում, ամառանոցում որքան տվեցինք կառապանին։

— Ո՞նց հիշեմ,— ձայն տվեց Զախարը։— Մի անգամ դուք պատվիրեցիք ինձ՝ երեսուն ռուբլի տալ, դա հիշում եմ։

— Ի՞նչ կլիներ՝ գրի առնեիր,— կշտամբեց նրան Օբլոմովը։— Վա՞տ բան է անգրագետ լինելը։

— Ամբողջ կյանքս ապրել եմ առանց գիր գիտենալու, և փառք աստծու, ուրիշներից ավելի վատ չե՞մ ապրել,— առարկեց Զախարը, մի կողմ նայելով։

«Ճիշտ է ասում Շտոլցը, թե գյուղում հարկավո՞ր է դպրոց բանալ»,— մտածեց Օբլոմովը։

— Ա՛յ, մարդիկ ասում էին, որ Իլյինսկայաները գրագետ ծառա են ունեցել,— շարունակում էր Զախարը,— և բուֆետից գողացել է արծաթեղենը։

«Շատ շնորհակալ եմ»,— վախվորած մտածեց Օբլոմովը։ «Իսկապես, այդ գրագետները բոլորն էլ անբարոյական մարդիկ են. պանդոկներում, հարմոնիկայով, մեկ էլ թեյի... Ո՛չ, դեռ վա՞ղ է դպրոցներ բանալ...»

— Լա՛վ, է՞լ որտեղ են ծախսվել փողերս,— հարցրեց նա։

— Ես ի՞նչ գիտեմ։ Ա՛յ, ամառանոցում Միխեյ Անդրեյիչին տվիք...

— Իսկապես,— ուրախացավ Օբլոմովը, միտը բերելով այդ փողերը։— Այդպես, ուրեմն, կառապանին երեսուն, հետո կարծեմ քսան ռուբլի Տարանտևին... Է՞լ որտեղ։

Նա մտախոհ ու հարցական նայում էր Զախարին։ Զախարն էլ մռայլ նրան էր նայում։

— Արդյոք Անիսյան չի՞ հիշում,— հարցրեց Օբլոմովը։

— Ո՞նց պիտի հիշի տխմարը։ Կնիկարմատն ի՞նչ գիտե որ,— արհամարհանքով ասաց Զախարը։

— Միտս չի՞ գալիս,— թախծալից եզրափակեց Օբլոմովը։— Արդյոք գող չի՞ մտել տուն։

— Եթե գող մտած լիներ, ամեն ինչ կտաներ,— ասաց Զախարը, դուրս գնալով սենյակից։

Օբլոմովը նստեց բազկաթոռին և մտքերի մեջ ընկավ։ «Որտեղի՞ց փող գտնեմ»,— մտածում էր նա, մինչև որ սառը քրտինքը պատեց նրան։ «Ե՞րբ կուղարկեն գյուղից և որքա՞ն կուղարկեն»։

Նա նայեց ժամացույցին.- ժամը երկուսն է, ժամանակն է Օլգայի մոտ գնալու։ Այսօր ճաշելու համար որոշված օրն է։ Նա կամաց-կամաց զվարթացավ, պատվիրեց կառք բերել և գնաց Մորսկայա փողոցը։

IV

Օբլոմովը Օլգային ասաց, որ խոսել է տանտիրուհու եղբոր հետ, և շտապ-շտապ իր կողմից ավելացրեց, որ հույս կա եկող շաբաթ բնակարանն ուրիշի հանձնելու։

Օլգան մինչև ճաշը մորաքրոջ հետ միասին գնաց այցելության, իսկ Օբլոմովը գնաց մոտակայքում բնակարան տեսնելու։ Մտավ երկու տուն. մեկում մի բնակարան գտավ չորս սենյակից, վարձը չորս հազար ռուբլի ասիգնացիաներով, մյուսում՝ հինգ սենյակի համար պահանջում էին վեց հազար ռուբլի։

— Սարսափելի՜ է։ Սարսափելի՜ է,— կրկնում էր նա՝ ականջները խցելով և հեռու փախչելով զարմացած դռնապաններից։ Այդ գումարներին ավելացնելով հազարից ավելի ռուբլիները, որ պետք էր վճարել Պշենիցինային, նա սարսափեց, չկարողացավ ընդհանուր գումարի վերածել և միայն քայլերն արագացրեց ու Օլգայի մոտ վազեց։

Այնտեղ հասարակություն կար։ Օլգան ոգևորված էր, խոսում էր, երգում ու ֆուրոր էր հանում։ Միայն Օբլոմովն էր, որ լսում էր ցրված, իսկ Օլգան խոսում ու երգում էր նրա համար, որպեսզի նա չնստի քիթը կախած, կոպերը ցած գցած, որպեսզի հենց նրա մեջ ամեն բան անընդհատ խոսի ու երգի։

— Վաղն արի թատրոն, մենք օթյակ ունենք,— ասաց Օլգան։

«Երեկոյան, ցեխով, այդքա՞ն հեռու տեղ»,— մտածեց Օբլոմովը, բայց, նայելով Օլգայի աչքերին, նրա ժպիտին պատասխանեց համաձայնության ժպիտով։

— Բազկաթոռի աբոնեմենտ վերցրու,— ավելացրեց Օլգան,— եկող շաբաթ գալիս են Մաևսկիները. ma tante-ը նրանց հրավիրել է մեր օթյակը։

Եվ Օլգան նայում էր նրա աչքերին, որպեսզի իմանա, թե ինչպես կուրախանա նա։

«Տե՜ր աստված»,— մտածեց Օբլոմովը, սարսափով։ «Իսկ ես ընդամենը երեք հարյուր ռուբլի փող ունեմ»։

— Ա՛յ, խնդրիր բարոնին. նա այնտեղ բոլորի հետ ծանոթ է, հենց վաղը կուղարկի բազկաթոռների համար։

Եվ Օլգան նորից ժպտաց, Օբլոմովն էլ ժպտաց նրան նայելով և ժպտալով խնդրեց բարոնին. սա, նույնպես ժպտալով, հանձն առավ ուղարկել տոմսերի ետևից։

— Հիմա բազկաթոռում, իսկ հետո, երբ կվերջացնես գործերդ,— ավելացրեց Օլգան,— արդեն իրավունքով քո տեղը կգրավես մեր օթյակում։

Եվ վերջապես ժպտաց Օլգան այնպես, ինչպես ժպտում էր, երբ միանգամայն երջանիկ էր։

Օ՜, ի՜նչ երջանկություն եկավ նրա վրա, երբ Օլգան մի փոքր բարձրացրեց հմայիչ հեռավորության վարագույրը, հեռավորություն, որ ժպիտներով էր ծածկված, ինչպես ծաղիկներով։

Օբլոմովը-մոռացավ նաև փողի մասին. միայն երբ հետևյալ օրն առավոտյան տեսավ լուսամուտների մոտով անցնող եղբոր ծրարը, մտաբերեց հավատարմագիրը և խնդրեց Իվան Մատվեևիչին՝ այն վավերացնել տալ պալատում։ Սա կարդաց հավատարմագիրը, հայտարարեց, որ այնտեղ մի մութ կետ կա, և սկսեց պարզել։

Թուղթը նորից արտագրվեց, վերջապես վավերացվեց և փոստ ուղարկվեց։ Օբլոմովը հանդիսավոր կերպով հայտարարեց այդ մասին Օլգային և երկար ժամանակով հանգըստացավ։

Նա ուրախանում էր, որ մինչև պատասխան ստանալը կարիք չի լինի բնակարան փնտրելու և փողերը կամաց-կամաց կծախսվեն։

«Այստեղ էլ կարելի է ապրել,— մտածում էր նա,— բայց ամեն ինչից հեռու է, իսկ նրանց տանը խիստ կարգուկանոն կա և տնտեսությունը փառավոր է գնում»։

Իրոք, տնտեսությունը հիանալի էր գնում։ Թեև Օբլոմովի ճաշը առանձին էր պատրաստվում, բայց տանտիրուհու աչքը հսկում էր նաև նրա խոհանոցը։

Իլյա Իլյիչը մի անգամ մտավ խոհանոց և Ագաֆյա Մատվեևնային գտավ Անիսյայի հետ գրեթե գրկախառնված։

Եթե կա հոգիների համակրություն, եթե ազգակից սրտերն իրար զգում են հեռվից, ապա այդ բանը երբեք այնպես ակնբախորեն չի ապացուցվել, ինչպես Ագաֆյա Մատվեևնայի և Անիսյայի համակրության օրինակով։ Առաջին հայացքից, բառից ու շարժումից նրանք հասկացան ու գնահատեցին միմյանց։

Անիսյայի շարժուձևից, այն բանից, թե ինչպես նա զինված կրակխառնիչով ու թոզաշորով, թևքերը քշտած, հինգ րոպեում կարգի բերեց կես տարի չվառած խոհանոցը, ինչպես խոզանակով միանգամից թափ տվեց փոշին դարակների, պատերի ու սեղանի վրայից, ինչպիսի լայն թափով էր շարժում նա իր ավելը հատակի ու նստարանների վրա, ինչպես վայրկենաբար դուրս հանեց մոխիրը վառարանից, Ագաֆյա Մատվեևնան գնահատեց, թե ինչ է Անիսյան և ինչ մեծ օժանդակիչ կլիներ նա իր տնտեսական կարգադրություններին։ Նա այդ ժամանակվանից Անիսյային տեղ տվեց իր սրտում։

Անիսյան էլ, իր հերթին, միայն մի անգամ տեսնելով, թե ինչպես է Ագաֆյա Մատվեևնան թագավորում խոհանոցում, ինչպես է բազեի աչքերով, առանց հոնքերի, տեսնում գժվարաշարժ Ակուլինայի յուրաքանչյուր անշնորհք շարժումը, ինչպես է հրամաններ որոտում՝ հանել, դնել, տաքացնել, աղ անել, ինչպես է շուկայում մի հայացքով և շատ-շատ մատի շոշափումով անսխալ վճռում, թե հավը քանի ամսական է, ձուկն արդյոք վաղուց է բռնված, երբ է քաղած մարգից մաղադանոսը կամ սալաթը, նա զարմանքով ու հարգալից երկյուղով աչքերը տնկեց նրա վրա և վճռեց, որ ինքը, Անիսյան, վրիպել է իր կոչումից, որ իր ասպարեզը Օբլոմովի խոհանոցը չէ, ուր նրա փութաջանությունը, շարժումների մշտապես դուրս ցայտող, նյարդային տենդոտությունը միայն այն բանին էր ուղղված, որ ցած ընկնելիս բռնի Զախարի վեր դցած ափսեն կամ բաժակը, և որտեղ նրա փորձառությունն ու կշռադատումների նրբությունը ճնշվում են ամուսնու մռայլ նախանձով ու կոպիտ ամբարտավանությամբ։ Երկու կանայք հասկացան միմյանց և անբաժանելի դարձան։

Երբ Օբլոմովը տանը չէր ճաշում, Անիսյան լինում էր տանտիրուհու խոհանոցում և, գործի սիրուց, նետվում էր մի անկյունից մյուսը, դնում, հանում էր պուտուկները, համարյա նույն ակնթարթում բաց էր անում պահարանը, հանում էր ինչ հարկավոր էր և փակում ավելի վաղ, քան Ակուլինան կարողանում էր հասկանալ, թե բանն ինչ է։

Դրա փոխարեն Անիսյան պարգև էր ստանում ճաշ, վեց գավաթ սուրճ առավոտյան և նույնքան էլ երեկոյան և անկեղծ, երկարատև խոսակցություն, երբեմն մտերմական շըշընջոց հենց տանտիրուհու հետ։

Երբ Օբլոմովը տանն էր ճաշում, տանտիրուհին օգնում էր Անիսյային, այսինքն՝ ցույց էր տալիս, խոսքով կամ մատով, արդյոք ժամանա՞կն է, թե վաղ է հանել տապակն, հարկավո՞ր է արդյոք սոուսին ավելացնել մի քիչ կարմիր գինի կամ թթվասեր, կամ ձուկը պետք է ո՛չ թե այդպես խաշել, այլ ա՛յ այսպես...

Եվ աստված իմ, ինչպիսի՜ գիտելիքներ էին փոխանակում նրանք տնտեսական գործերում, ո՛չ միայն խոհարարային մասի վերաբերմամբ, այլև քաթանի, թելերի, կարելու, սպիտակեղեն լվանալու, զգեստների մետաքսե ժանյակները, հաշիները, ձեռնոցները մաքրելու, զանազան կտորեղենների վրայից բծերը հանելու, ինչպես նաև զանազան տանու դեղերի, խոտերի գործածության վերաբերյալ. այն ամենի, ինչ կյանքի որոշ ոլորտի մեջ մտցրել էին դիտող խելքն ու դարավոր փորձը։

Իլյա Իլյիչը վեր կկենար առավոտյան ժամը իններին, երբեմն ցանկապատի վանդակի միջից կտեսներ պաշտոնատեղի գնացող եղբորը, որի կոնատակին կերևար թղթե ծրարը, հետո կնստեր սուրճ խմելու։ Սուրճը շարունակ այնպե՜ս փառավոր էր, թանձր սերուցքով, բուլկիները կաթնահունց, դյուրափխրուն։

Հետո նա ձեռքը կառներ սիգարը և ուշադրությամբ կլսեր, թե ինչպես ծանր կոթկոթում էր թխսամերը, ինչպես ծվծրվում են ճտերը, ինչպես են ճթճթում դեղձանիկներն ու ազնվասարեկները։ Նա թույլ չտվեց հեռացնել դրանց։

— Գյուղն են հիշեցնում, Օբլոմովկան,— ասաց նա։

Հետո կնստեր կարդալու-վերջացնելու ամառանոցում ըսկըսած գրքերը, երբեմն անփութորեն գիրքը ձեռքին կպառկեր բազմոցի վրա և կկարդար։

Անդորրությունն իդեալական է. երբեմն գուցե մի որևէ զինվոր կանցնի փողոցով կամ մուժիկների մի խումբ՝ կացինները գոտիների մեջ։ Շատ հազվադեպ այդ խուլ տեղը կհասնի մանրավաճառը և կանգ առնելով վանդակավոր ցան-

կապատի առաջ՝ կես ժամի չափ կբղավի. «խնձոր, Աստրախանի ձմերուկ»— այնպես որ ակամայից մի բան կգնես։

Երբեմն նրա մոտ է գալիս Մաշան, տանտիրուհու աղջիկը, մոր կողմից ասելու նրան, թե պղպեղասունկ կամ ագարիկոն են ծախում, արդյոք նա չի՞ կարգադրի, որ իր համար էլ մի կիսատակառիկ վերցնեն. կամ կկանչեր իր մոտ Վանյային, տանտիրուհու որդուն, կհարցներ՝ թե ինչ է սովորել, կստիպեր կարդալ կամ գրել և կնայեր, թե արդյոք լա՞վ է գրում ու կարդում նա։

Եթե երեխաները դուռն իրենց ետևից չեն փակում, նա տեսնում է տանտիրուհու մերկ պարանոցը և փայլփլուն, անվերջ շարժվող արմունկներն ու մեջքը։

Տանտիրուհին շարունակ աշխատանքի է, շարունակ որևէ բան է արդուկում, ծեծում, տրորում և արդեն նազ չի անում, շալ չի գցում վրան, երբ նկատում է, որ Օբլոմովը տեսնում է իրեն կիսաբաց դռան միջով, միայն քմծիծաղ է տալիս ու նորից խնամքով ծեծում, արդուկում ու տրորում է մեծ սեղանի վրա։

Օբլոմովը երբեմն գիրքը ձեռքին մոտենում էր դռանը, ներս էր նայում և զրույց սկսում տանտիրուհու հետ։

— Դուք շարունակ աշխատո՞ւմ եք,— ասաց Օբլոմովը նրան մի անգամ։

Նա քմծիծաղ տվեց և նորից սկսեց խնամքով պտտեցնել սրճաղացի կոթը, և նրա արմունկն այնպիսի արագությամբ էր շրջանակ գծում, որ Օբլոմովի աչքերը շաղվում էին։

— Ախր կհոգնեք.— շարունակում էր Օբլոմովը։

— Ո՛չ, սովոր եմ,— պատասխանում էր նա՝ աղացը չթչթացնելով։

— Իսկ երբ աշխատանք չկա, ի՞նչ եք անում։

— Ինչպե՞ս թե աշխատանք չկա։ Աշխատանք միշտ կա,— ասաց նա։— Առավոտյան ճաշ պատրաստել, ճաշից հետո կար անել, իսկ երեկոյան՝ ընթրիք։

— Մի՞թե դուք ընթրում եք։

— Ինչպե՞ս կարելի է առանց ընթրիքի, ընթրում ենք։ Տոների նախօրյակին երեկոյան ժամասացության ենք գնում։

— Այդ լավ է,— գովեց Օբլոմովը։— Ո՞ր եկեղեցին եք գնում։

— Ննդյան եկեղեցին. դա մեր համայնքն է։

— Իսկ որևէ բան կարդո՞ւմ եք։

Նա բութ հայացքով և լուռ նայեց Օբլոմովին։

— Գրքեր ունե՞ք,— հարցրեց նա։

— Եղբայրս ունի, բայց չի կարդում։ Լրագրեր վերցնում ենք պանդոկից, և եղբայրս երբեմն բարձրաձայն կարդում է... մեկ էլ՝ ա՛յ Վանիչկան շատ գրքեր ունի։

— Մի՞թե դուք երբեք չեք հանգստանում։

— Աստված վկա, ճիշտ եմ ասում։

— Թատրոնո՞ւմ էլ չեք լինում։

— Եղբայրս ծննդյան տոներին լինում է։

— Իսկ դո՞ւք։

— Ես ե՞րբ ժամանակ ունեմ որ։ Հապա ընթրիքն ինչպես կլինի,— հարցրեց նա, կողքից նայելով Օբլոմովին։

— Խոհարարուհին կարող է պատրաստել առանց ձեզ...

— Ակուլի՞նան,— զարմանքով առարկեց նա։— Ինչպե՞ս կարելի է։ Նա ի՞նչ կարող է անել առանց ինձ։ Ընթրիքը վաղն էլ չի հասնի։ Բոլոր բանալիներն ինձ մոտ են։

Լռություն։ Օբլոմովը հրճվում էր նրա գիրուկ, կլոր արմունկներով։

— Ի՜նչ լավ ձեռքեր ունեք,— հանկարծ ասաց Օբլոմովը,— իսկույն կարելի է նկարել։

Նա քմծիծաղ տվեց և մի քիչ ամաչեց։

— Թևքերով հարմար չէ,— արդարանում էր նա,— հիմա պիր տեսեք ինչպիսի զգեստներ են լույս ընկել, բոլոր թևքերը կկեղտոտես։

Եվ լռեց։ Օբլոմովը նույնպես լուռ էր։

— Ա՛յ, սուրճն աղամ-վերջացնեմ,— փսփսում էր տանտիրուհին ինքն իրեն,— պետք է շաքար կոտրտեմ։ Հլա չմոռանամ դարչնի էլ ուղարկել։

— Ձեզ հարկավոր է մարդու գնալ,— ասաց Օբլոմովը,— դուք հիանալի տանտիկին եք։

Նա քմծիծաղ տվեց և սկսեց սուրճը լցնել մեծ ապակե բանկայի մեջ։

— Ճշմարիտ եմ ասում,— ավելացրեց Օբլոմովը։

— Ո՞վ կառնի ինձ երեխաներիս հետ միասին,— պատասխանեց նա և սկսեց ինչ-որ բան հաշվել մտքում։— Երկու

տասնյակ...— Մտախոհ ասում էր նա,— մի՞թե նա այս բոլորը կգցի։

Եվ, բանկան դնելով պահարանը, վազեց խոհանոց։ Իսկ Օբլոմովը գնաց իր սենյակը և սկսեց գիրք կարդալ...

— Ի՜նչ թարմ, առողջ կին է դեռ, և ինչպիսի՜ տանտիկին է։ Ճշմարիտ, մարդու գնալ է պետք նրան...— ասում էր նա ինքն իրեն և խորասուզվում մտքերի մեջ... Օլգայի մասին։

Օբլոմովը լավ եղանակին դնում էր գլխարկը և ման գալիս շրջակայքը. այնտեղ ընկնում էր ցեխի մեջ, մի այլ տեղ շների հետ անհաճո հարաբերության մեջ մտնում և տուն վերադառնում։

Իսկ տանն արդեն սեղանը գցած էր և կերակուրն այնքա՜ն համեղ, մաքուր մատուցված։ Երբեմն դռան միջից մեկնվում է մերկ ձեռքն ափսեով. խնդրում են փորձել տանտիրուհու կարկանդակը։

— Այս կողմերում խաղաղ է, լավ է, միայն թե տաղտկալի՜ է,— ասում էր Օբլոմովը՝ օպերա գնալով։

Մի անգամ, թատրոնից ուշ տուն վերադառնալով, նա կառապանի հետ միասին համարյա մի ժամ ծեծեց դռները, շունը շղթայի վրայով այս ու այն կողմ վազվզելով և հաչելուց ձայնը խորացրեց։ Օբլոմովը մրսեց ու զայրացավ, հայտարարելով, որ վաղնևթ կփոխադրվի այդ բնակարանից։ Բայց վաղն էլ անցավ, մյուս օրն էլ, շաբաթն էլ, նա դեռ չէր փոխադրվում։

Նրա համար շատ ձանձրալի էր Օլգային չտեսնել չսահմանված օրերը, նրա ձայնը չլսել, աչքերում չկարդալ շարունակ նույն անփոփոխ փաղաքշանքը, սերը, երջանկությունը։

Դրա փոխարեն սահմանված օրերը նա ապրում էր ամառվա նման, հիանալով լսում էր Օլգայի երգեցողությունը կամ նայում նրա աչքերի մեջ. իսկ վկաների ներկայությամբ նրան բավական էր լինում Օլգայի մի հայացքը, որ անտարբեր էր բոլորի համար, բայց խորն ու նշանակալից էր իր համար։

Սակայն, բանը ձմռանը մոտենալուն զուգընթաց՝ նրանց տեսակցությունները ավելի ու ավելի հազվադեպ էին դառնում։ Իլյինսկայաների մոտ սկսեցին հյուրեր գալ, և Օբլո-

մովին ամբողջ օրերով չէր հաջողվում նրա հետ երկու խոսք փոխանակել։ Նրանք հայացքներ էին փոխանակում։ Օլգայի հայացքը երբեմն հոգնածություն և անհամբերություն էր արտահայտում։

Օլգան կիտած հոնքերով էր նայում հյուրերի վրա։ Օբլոմովը մի երկու անգամ նույնիսկ ձանձրացավ և մի անգամ ճաշից հետո ուզում էր գլխարկը վերցնել-գնալ։

— Ո՞ւր,— հանկարծ զարմանքով հարցրեց Օլգան, հայտնվելով նրա կողքին ու գլխարկից բռնելով։

— Թույլ տվեք տուն գնամ...

— Ինչո՞ւ,— հարցրեց Օլգան։ Նրա մի հոնքը մյուսից բարձր էր։— Ի՞նչ պիտի անեք այնտեղ։

— Ես այնպես...— ասում էր նա, աչքերը հազիվ բաց անելով քնից։

— Ո՞վ թույլ կտա ձեզ։ Չլինի՞ թե պատրաստվում եք քնելու,— հարցնում էր նա, խստորեն նայելով փոփոխակի մեկ նրա մի աչքին, մեկ՝ մյուս աչքին։

— Ի՞նչ եք ասում,— աշխույժ վրա բերեց Օբլոմովը։— Ցերեկով քնե՞լ։ Ես պարզապես ձանձրանում եմ։

Եվ նա տվեց գլխարկը։

— Այսօր թատրոն կգաք,— ասաց Օլգան։

— Միասին չենք լինի օթյակում, —ավելացրեց Օբլոմովը հառաչելով։

— Ի՞նչ կա որ։ Իսկ մի՞թե ոչինչ է այն, որ մենք տեսնում ենք միմյանց, որ դու ընդմիջումի ժամանակ կմտնես մեզ մոտ, թատրոնից մեկնելիս կմոտենաս, ձեռքդ կտաս մինչև կառքը... Կբարեհաճեք գա՛լ,— հրամայաբար ավելացրեց նա։— Սա ի՞նչ նորություն է։

Ոչինչ չէր կարելի անել, նա գնում էր թատրոն, հորանչում, կարծես ուզում էր միանգամից կուլ տալ բեմը, ծոծրակն էր քորում և մի ոտքը դնում էր մյուսի վրա։

«Ա՜խ, մի շուտ վերջացնեի ու նրա հետ կողք-կողքի նստեի։ այսքան հեռո՞ւ քարշ չգայի այստեղ»,— մտածում էր նա։ «Թե չէ, այդպիսի ամառվանից հետո տեսնվել ընդհատումներով, գողտուկ, սիրահարված տղայի դեր խաղալ... Ճշմարիտն ասած, ես այսօր թատրոն չէի գնա՝ եթե արդեն

ամուսնացած լինեի. վերջերորդ անգամն եմ լսում այդ օպերան...»

Դադարի ժամանակ նա գնաց օթյակ Օլգայի մոտ և մի կերպ անցնելով ինչ-որ ֆրանտների արանքով, հասավ նրան։ Հինգ րոպեից նա ծլկեց և կանգ առավ բազկաթոռների մուտքի մոտ, բազմության մեջ։ Գործողությունն սկսվել էր, և բոլորն շտապում էին իրենց տեղերը։ Օլգայի օթյակում եղած ֆրանտներն էլ այնտեղ էին և Օբլոմովին չէին տեսնում

— Այդ ի՞նչ պարոն էր հիմա Իլյինսկայաների օթյակում,— հարցրեց մեկը մյուսին։

— Ինչ-որ Օբլոմով,— անփութորեն պատասխանեց մյուսը։

— Այդ ի՞նչ Օբլոմով է։

— Նա... կալվածատեր է, Շտոլցի բարեկամը։

— Ա՜,— նշանակալից շեշտով արտասանեց մյուսը։— Շտոլցի բարեկամը։ Իսկ ի՞նչ է անում նա այստեղ։

— Dieu sait!— պատասխանեց մյուսը և բոլորը ցրվեցին իրենց տեղերը։ Բայց Օբլոմովն իրեն կորցրեց այդ չնչին խոսակցությունից։

«Այդ ի՞նչ պարոն է... ինչ-որ Օբլոմով... ի՞նչ է անում նա այնտեղ... Dieu sait»,— այս բոլորը թխթխկում էր նրա գլխում։

«Ի՞նչ-որ», «Ի՞նչ եմ անում ես այստեղ»։ Ինչպե՞ս թե ինչ։ Սիրում եմ Օլգային. ես նրա... Սակայն, հասարակության մեջ ահա հարց է ծագել. ի՞նչ եմ անում ես այստեղ։ Նկատել են... Ա՜խ, աստված իմ։ Ինչպես, պետք է մի բան...»

Նա արդեն չէր տեսնում, թե ինչ է կատարվում բեմի վրա, ինչ ասպետներ ու կանայք են դուրս գալիս, նվագախումբը որոտում է, իսկ նա չի էլ լսում։ Շուրջն է նայում և հաշվում է, թե քանի ծանոթ մարդ կա թատրոնում. ա՛յ այստեղ, այնտեղ, ամեն տեղ նստած են, բոլորը հարցնում են. «Այդ ի՞նչ պարոն էր, որ մտավ օթյակ Օլգայի մոտ...»— «Ինչ-որ Օբլո՛մով»,— ասում են բոլորը։

«Այո, ես «ի՞նչ-որ մեկն եմ»,— մտածում էր նա վեհերոտ վհատության մեջ։ «Ինձ ճանաչում են, որովհետև Շտոլցի

բարեկամն եմ։ Ինչի՞ համար եմ ես Օլգայի մոտ։— «Dieu sait...» Ահա, այն ֆրանտները նայում են ինձ վրա, հետո Օլգայի օթյակին»։

Նա նայեց օթյակին. Օլգայի հեռադիտակն ուղղված էր իր կողմը։

«Ա՜խ, տեր աստված,— մտածում էր նա։— Իսկ Օլգան աչքը չի հեռացնում ինձնից։ Ի՞նչ է գտել նա իմ մեջ։ Ի՞նչ գանձ է կարծում։ Ա՜յ, հիմա բեմն է ցույց տալիս... Ֆրանտները, կարծես, ծիծաղում են, նայում են ինձ... Տե՜ր աստված, տե՜ր աստված»։

Նա հուզմունքի մեջ նորից կատաղի քորեց ծոծրակը, նորից ոտքը ոտքին դրեց։

Օլգան ֆրանտներին հրավիրեց ներկայացումից հետո թեյ խմելու, խոստացավ կրկնել կավատինը և նրան էլ հրամայեց գալ։

«Ո՜չ, այսօր արդեն չեմ գնա. հարկավոր է գործը շուտ վճռել, և հետո... Այդ ինչո՞ւ հավատարմատարը գյուղից պատասխան չի ուղարկում... Ես վաղուց գնացած կլինեի, մեկնելուց առաջ կնշանադրվեի Օլգայի հետ... Ա՜խ, իսկ նա շարունակ ինձ է նայում։ Դժբախտություն է, ճշմարի՜տ»։

Նա տուն գնաց, չսպասելով օպերայի ավարտին։ Հետզհետե նրա տպավորությունն անհետացավ, և նա նորից երջանկության սարսուռով էր նայում Օլգային միայնակ ժամանակ, հրճվանքի զսպված արցունքներով էր լսում նրա երգեցողությունը բոլորի ներկայությամբ և, տուն վերադառնալով, պառկում էր բազմոցի վրա, առանց Օլգայի գիտության, բայց պառկում էր ո՛չ թե քնելու, ո՛չ թե անշարժ կոճղի նման վեր ընկնելու, այլ նրա մասին երազելու, մտքով երջանկություն խաղալու և հուզվելու համար, հայացք գցելով իր ընտանեկան, խաղաղ կյանքի ապագա հեռանկարին, որտեղ փայլելու է Օլգան, և ամեն ինչ փայլելու է նրա շուրջ։ Հայացք գցելով ապագայի վրա, նա երբեմն ակամայից, երբեմն դիտավորյալ նայում էր կիսաբաց դռնից ներս, տանտիրուհու երևացող արմունկներին։

Մի անգամ իդեալական անդորր էր բնության մեջ և տանը. ո՛չ կառքերի աղմուկ և ոչ էլ դռների շխկոց, նախասենյակում համաչափ տարուբերվում էր ժամացույցի ճոճանակը։

Մեկ էլ երգում էին դեղձանիկները. բայց դա չէր խանգարում անդորրը, այլ միայն կյանքի որոշ երանգ էր տալիս։

Իլյա Իլյիչը անփույթ պառկած էր բազմոցի վրա, խաղալով մաշիկի հետ, այն գցում էր հատակին, բարձրացնում օդի մեջ, պտտեցնում, այն ցած էր ընկնում, իսկ նա բռնում էր ոտքով... Ներս մտավ Զախարը և կանգնեց դռան մոտ։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց Օբլոմովն անփույթ։

Զախարը լուռ էր և գրեթե ուղիղ, ոչ շեղակի, նայում էր նրան։

— Հ՞ը,— հարցրեց Օբլոմովը, զարմանքով նայելով նրան,— կարկանդա՞կն է արդյոք պատրաստ։

— Բնակարան գտա՞ք,— իր հերթին հարցրեց Զախարը։

— Դեռ ոչ։ Ի՞նչ կա որ։

— Ախր ես ամեն բան կարգի չեմ բերել. ամանեղենը, հագուստը, սնդուկները. ամեն ինչ նկուղում դեռ սարի պես կիտված է իրար վրա։ Կարգի բերե՞մ, թե ոչ։

— Համբերի՛ր,— ցրված կերպով ասաց Օբլոմովը,— գյուղից պատասխան եմ սպասում։

— Ուրեմն, հարսանիքը ծննդից հետո՞ է լինելու,— ավելացրեց Զախարը։

— Ի՞նչ հարսանիք,— հանկարծ վեր կենալով հարցրեց Օբլոմովը։

— Հայտնի է, թե ինչ. ձե՜ր հարսանիքը,— պատասխանեց Զախարը հաստատապես, որպես վաղուց արդեն վճռված գործի մասին։— Չէ՞ որ դուք ամուսնանում եք։

— Ես ամուս-նա-նո՜ւմ եմ։ Ո՞ւմ հետ,— սարսափով հարցրեց Օբլոմովը, զարմացած աչքերով կուլ տալով Զախարին։

— Իլյինսկայա օրիորդ...— Զախարը դեռ խոսքը չէր վերջացրել, իսկ Օբլոմովն արդեն կիպ կանգնած էր նրա առաջ։

— Այդ ի՞նչ ես ասում, թշվառակա՜ն, ո՞վ է ներշնչել քեզ այդ միտքը,— պաթետիկ, զսպված ձայնով բացականչեց Օբլոմովը, ավելի մոտենալով Զախարին։

— Էլ ի՞նչ թշվառական եք ասում ինձ։ Փա՜ռք քեզ, աստված, — ասում էր Զախարը՝ ետ-ետ գնալով դեպի դուռը։—

Ո՞վ։ Իլյինսկայաների ծառաները դեռ ամառն էին խոսում այդ մասին։

— Սս՜սս...— ֆշշաց նրա վրա Օբլոմովը՝ մատը դեպի վեր բարձրացնելով և սպառնալով Զախարին։— Այլևս ո՞չ մի խոսք։

— Մի՞թե ես եմ հնարել,— ասում էր Զախարը։

— Ո՞չ մի խոսք,— կրկնեց Օբլոմովը՝ ահեղ հայացքով նայելով և ցույց տվեց նրան դուռը։

Զախարը հեռացավ և բոլոր սենյակներով մեկ հառաչեց։

Օբլոմովը չէր կարողանում ուշքի գալ. նա շարունակ կանգնած էր միևնույն դիրքով, սարսափով նայելով այն տեղին, որտեղ կանգնած էր Զախարը, հետո հուսահատությամբ ձեռքերը գլխին դրեց և նստեց բազկաթոռին։

«Սպասավորները գիտե՞ն»,— պտտվում էր նրա գլխում։ «Խոսո՞ւմ են ծառայանոցներում, խոհանոցներում։ Ահա՞ թե բանն ուր է հասել։ Նա համարձակվեց հարցնել, թե երբ է հարսանիքը։ Իսկ մորաքույրը դեռ չի էլ կասկածում, կամ, եթե կասկածում է, ապա, գուցե, մի ուրիշ, ոչ լրիվ բան...։ Այ-այ-այ, ի՞նչ կարող է մտածել նա։ Իսկ ե՞ս։ Իսկ Օլգա՞ն»։

— Թշվառակա՞ն, այս ի՞նչ արի ես,— ասում էր նա՝ բազմոցի վրա դեմքը դեպի բարձը շուռ տալով։— Հարսանի՞ք։ Սիրահարների կյանքի այդ բանաստեղծական պահը, երջանկության պսակը. այդ մասին սկսել են խոսել սպասավորները, կառապանները, երբ դեռևս ոչինչ չի վճռված, երբ գյուղից պատասխան չկա, երբ գրպանումս փող չկա, երբ բնակարան չի գտնված...

Նա սկսեց վերլուծել բանաստեղծական պահը, որը հանկարծ կորցրեց իր գույները, հենց դրա մասին խոսեց Զախարը։ Օբլոմովն սկսեց տեսնել մեղալի մյուս երեսը և տանջագին շուռ էր գալիս մի կողմից մյուս կողքի, պառկում մեջքի վրա, հանկարծ վեր էր թռչում, երեք քայլ անում սենյակում և նորից պառկում։

«Էհ, լավ բան չի՞ լինելու»,— վախեցած մտածում էր Զախարը նախասենյակում։ «Սատանա՞ն դրդեց ինձ ասել դա»։

— Ո՞րտեղից իմացան նրանք,— պնդում էր Օբլոմովը։— Օլգան լուռ էր, ես չէի համարձակվում նույնիսկ բարձրաձայն մտածել, իսկ նախասենյակում ամեն ինչ վճռե՞լ են։ Ահա

թե ինչ են նշանակում առանձնացած տեսակցությունները, արշալույսների ու վերջալույսների պոեզիան, կրքոտ հայացքներն ու հմայիչ երգեցողությունը։ Ա՜խ, սիրո այդ պոեմները երբեք լավ վախճան չեն ունենում։ Հարկավոր է նախ պսակվել և այն ժամանակ լողալ վարդագույն մթնոլորտում... Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ։ Պետք է վազել մորաքրոջ մոտ, բռնել Օլգայի ձեռքը և ասել՝ «Ահա՜ իմ հարսնացուն»։ Բայց դեռ ոչինչ պատրաստ չէ, գյուղից պատասխան չկա, փող չկա, բնակարան չկա։ Ո՜չ, նախ հարկավոր է Զախարի գլխից հանել այդ միտքը, մարել լուրերը, բոցի նման, որպեսզի չտարածվի, որպեսզի կրակ ու ծուխ չլինի... Հարսանի՜ք։ Ի՞նչ բան է հարսանիքը...

Նա այն է՝ ուզում էր ժպտալ, հիշելով հարսանիքի վերաբերյալ ունեցած իր բանաստեղծական իդեալը, երկար ծածկոցը, նարնջենու ճյուղը, ամբոխի փսփսոցը...

Բայց գույներն արդեն այն չէին. հենց այդտեղ, ամբոխի մեջ էր կոպիտ,թափթփված Զախարը և Իլյինսկայաների բոլոր սպասավորները, մի շարք կառքեր, օտար, սառը հետաքրքրասեր դեմքեր։ Հետո, հետո, նրա աչքին երևում էին տաղտկալի, սարսափելի բաներ...

«Հարկավոր է Զախարի գլխից հանել այդ միտքը, որպեսզի նա այդ բանն անհեթեթություն համարի»,— վճռեց նա, մերթ ջղաձգորեն հուզվելով, մերթ տանջագին մտմբտալով։

Մի ժամից նա ձայն տվեց Զախարին։

Զախարը ձևացրեց, թե չի լսում, ուզում էր սուսուփուս խոհանոց ծլկել։ Նա արդեն առանց ճռճռացնելու բաց էր արել դուռը, բայց կողքով չմտավ դռան մի կեսի մեջ և ուսով այնպես խփեց մյուս կեսին, որ երկու կեսերն էլ ղղրդյունով բացվեցին։

— Զախա՜ր,— հրամայական տոնով կանչեց Օբլոմովը։

— Ի՞նչ եք ուզում,— նախասենյակից արձագանքեց Զախարը։

— Այստե՜ղ արի,— ասաց Իլյա Իլյիչը։

— Որևէ բա՞ն է պետք, ինչ է։ Դե ասացեք, տա՜մ,— պատասխանեց նա։

— Այստե՞ղ արի,— ընդհատ-ընդհատ և հարկադրական տոնով արտասանեց Օբլոմովը։

— Ա՜խ, չեմ էլ մեռնում,— խռպոտ ձայնով ասաց Զախարը՝ սենյակ մտնելով։— Հը, ի՞նչ եք ուզում,— հարցրեց նա՝ դռների մեջ կպած մնալով։

— Մո՛տ արի այստեղ,— հանդիսավոր-խորհրդավոր ձայնով ասաց Օբլոմովը՝ ցույց տալով Զախարին, թե որտեղ պետք է կանգնի, և այնքան մոտիկ ցույց տվեց, որ նա ստիպված էր լինելու բարինի համարյա ծնկներին նստելու։

— Ինչպե՞ս գամ այդտեղ։ Այդտեղ նեղ է, ես այստեղից էլ լսում եմ,— խուսափում էր Զախարը, համառորեն կանգնած մնալով դռան մոտ։

— Քեզ ասում են՝ մոտեցի՛ր,— ահեղ ձայնով ասաց Օբլոմովը։

Զախարը մի քայլ արեց և արձանի նման կանգնած մնաց՝ լուսամուտից նայելով այսուայն կողմ ընկնող հավերին և բարինին դեմ անելով իր խոզանակի նման այտամորուսը։ Իլյա Իլյիչը մի ժամի ընթացքում հուզմունքից փոխվել էր, կարծես դեմքը նիհարել էր, աչքերը խաղում էին անհանգիստ։

«Ա՛յ, հիմա կսկսվի՞»,— մտածեց Զախարն ավելի ու ավելի մռայլվելով։

— Ինչպե՞ս կարողացար դու այդպիսի անհեթեթ հարց տալ բարինին,— հարցրեց Օբլոմովը։

«Ահա՜, սկսվե՞ց»,— մտածեց Զախարը՝ աչքերը լայն թարթելով և սպասելով վշտահար «խղճալի խոսքերի»։

— Ես քեզ հարցնում եմ՝ ինչպե՞ս կարողացար դու այդպիսի անհեթեթ բան մտցնել գլուխդ,— կրկնեց Օբլոմովը։

Զախարը լուռ էր։

— Լսո՞ւմ ես, Զախար։ Ինչո՞ւ դու քեզ թույլ ես տալիս ո՛չ միայն մտածել, այլ նույնիսկ խոսել...

— Թույլ տվեք, Իլյա Իլյիչ, ավելի լավ է՝ Անիսյային կանչեմ...— պատասխանեց Զախարը և ուզում էր քայլերն ուղղել դեպի դուռը։

— Ես քեզ հետ եմ ուզում խոսել, և ոչ Անիսյայի,— առարկեց Օբլոմովը։— Ինչի՞ համար ես այդպիսի անհեթեթություն հնարել։

— Ես չեմ հնարել,— ասաց Զախարը։— Իլյինսկայաների ծառաներն էին խոսում։

— Իսկ նրանց ո՞վ ասաց։

— Ես ի՞նչ գիտեմ։ Կատյան ասել է Սեմյոնին, Սեմյոնը՝ Նիկիտային, Նիկիտան՝ Վասիլիսային, Վասիլիսան՝ Անիսյային, իսկ Անիսյան՝ ինձ...— ասաց Զախարը։

— Տե՞ր աստված, տե՞ր աստված։ Բոլո՞ր,— սարսափած արտասանեց Օբլոմովը։— Այդ բոլորը հիմարություն է, անհեթեթություն, սուտ, զրպարտանք, լսո՞ւմ ես,— բռունցքը սեղանին խփելով ասաց Օբլոմովը։— Այդպիսի բան չի՞ կարող լինել։

— Ինչո՞ւ չի կարող լինել,— անտարբեր կերպով ընդհատեց Զախարը։— Սովորակա՞ն բան է՝ հարսանիք։ Մենակ դուք հո չեք, բոլորն էլ ամուսնանում են։

— Բոլո՞ր,— ասաց Օբլոմովը։— Դու վարպե՞տ ես ինձ ուրիշներին ու բոլորին հավասարեցնելու։ Այդպիսի բան չի՞ կարող լինել։ Եվ չկա ու չի՞ եղել։ Հարսանիքը սովորական բան է՝ լսո՞ւմ եք։ Ի՞նչ բան է հարսանիքը։

Զախարն ուզում էր Օբլոմովին նայել, բայց տեսավ իր վրա կատաղորեն սևեռած աչքեր և հայացքն իսկույն դեպի աջ, դեպի անկյունը դարձրեց։

— Լսի՛ր, ես քեզ բացատրեմ, թե ինչ է դա։ «Հարսանիք, հարսանիք»,— կսկսեն խոսել պարապ մարդիկ, զանազան կանայք, երեխաներ, ծառայանոցներում, խանութներում, շուկաներում։ Մարդը դադարում է Իլյա Իլյիչ կամ Պյոտր Պետրովիչ կոչվել, այլ անվանվում է «փեսացու»։ Երեկ նրա վրա ոչ ոք նայել էլ չէր ուզում, իսկ վաղը բոլորն աչքերը կչռեն վրան, կարծես խարդախի մեկը լինի։ Ո՛չ թատրոնում, ո՛չ փողոցում, չեն թողնի՝ հանգիստ անց կենա։ «Ահա՜, ահա՜ փեսացուն»,— փսփսում են բոլորը։ Իսկ օրական քանի մարդ պատահի նրան, ամեն մեկը առիթ կգտնի ըստ կարելույն հիմար ռեխ ցույց տալու, ա՛յ, ինչպես դու հիմա (Զախարն արագորեն հայացքը դեպի բակը դարձրեց), և որևէ ավելի անհեթեթ բան ասելու,— շարունակում էր Օբլոմովը։— Ահա՜ թե ինչպիսին կլինի սկիզբը։ Իսկ դու ամեն օր, առավոտվանից, նզզոված պես գնա հարսնացուիդ մոտ, այն էլ շարունակ հարդագույն ձեռնոցներով, զգեստդ

պիտի անթերի լինի, տխուր չերևաս, չուտես ու չխմես հանգամանորեն, ինչպես պետք է, այլ այնպե՞ս, քամիներով ապրես, մեկ էլ ծաղկեփնջերով։ Եվ այսպես երեք, չորս ամի՛ս։ Տեսնո՞ւմ ես։ Այդ ինչպե՞ս կարող եմ անել ես։

Օբլոմովը կանգ առավ և նայեց, թե արդյոք Զախարի վրա ազդեցություն թողնո՞ւմ է ամուսնության անհարմարությունների այս նկարագրությունը։

— Ի՞նչ եք ասում, գնա՞մ,— հարցրեց Զախարը՝ դառնալով դեպի դուռը։

— Ո՛չ, դեռ կաց։ Դու սուտ լուրեր տարածելու վարպետ ես, ուրեմն իմացի՛ր, թե ինչու են դրանք սուտ։

— Ի՞նչ պիտի իմանամ, — ասում էր Զախարը՝ դիտելով սենյակի պատերը։

— Դու մոռացել ես, թե ինչ վազվզոցի, իրարանցման մեջ են թե՛ փեսացուն և թե՛ հարսնացուն։ Իսկ ինձ մոտ ո՞վ, դո՞ւ պիտի վազես դերձակների, կոշկակարների, կահ-կարասի վաճառողի մոտ։ Ես մենակ հո չեմ կարող մի քանի կտոր լինել։ Քաղաքում բոլորը կիմանան։ «Օբլոմովն ամուսնանում է— լսե՞լ եք»։— «Մի՞թե։ Ո՞ւմ հետ։ Ո՞վ է հարսնացուն։ Ե՞րբ է հարսանիքը», ասում էր Օբլոմովը զանազան ձայներով։— Մի գլուխ խոսակցությո՞ւն է լինելու։ Իմ հոգին դուրս կգա, ես դրանից միայն կհիվանդանամ, իսկ դու հնարե՞լ ես՝ հարսանի՞ք։

Նա նորից նայեց Զախարին։

— Գուցե, Անի՞սյային կանչեմ,— հարցրեց Զախարը։

— Ինչո՞ւ Անիսյային։ Այդ չմտածված ենթադրությունը թույլ ես տվել դու, և ոչ թե Անիսյան։

— Է՛հ, ինչի՞ համար է այսօր ասված ինձ պատժել,— շշնջաց Զախարը այնպիսի մի հոգոց հանելով, որ նույնիսկ նրա ուսերը վեր բարձրացան։

— Իսկ ի՞նչ ծախքեր են պետք,— շարունակում էր Օբլոմովը։— Իսկ փող որտեղի՞ց։ Դու տեսա՞ր, որքան փող ունեմ ես,— համարյա ահեղաձայն հարցրեց Օբլոմովը։— Իսկ բնակարա՞նը ուր է։ Այստեղ հարկավոր է հազար ռուբլի վճարել և մի այլ բնակարան վարձել, երեք հազար տալ, իսկ սարքավորելու որքան պետք կլինի վճարել։ Հետո՝ կա՞ռք, խոհարա՞ր, ապրուստի՞։ Որտեղի՞ց ճարեմ։

— Երեք հարյուր հոգի ունենալով ուրիշներն ինչպե՞ս են ամուսնանում,— ասաց Զախարը, բայց ինքն էլ զղջաց, որովհետև բարինը այնպես վեր-վեր թռավ բազկաթոռի մեջ, որ քիչ մնաց ընկներ։

— Նորի՞ց «ուրիշներ» ասացիր։ Տե՛ս,— ասաց նա, մատով սպառնալով։— Ուրիշները երկու, ամենաշատը երեք սենյակում են ապրում. թե՛ սեղանատունը, թե՛ հյուրասենյակը նույնն է. ոմանք հենց այնտեղ էլ քնում են. երեխաները կողքը. ամբողջ տանը սպասավորում է մի աղախին։ Ինքը՝ տանտիրուհին շուկա է գնում։ Իսկ Օլգա Սերգեևնան շուկա կգնա՞։

— Շուկա ես էլ կարող եմ գնալ,— նշեց Զախարը։

— Գիտե՞ս որքան եկամուտ ենք ստանում Օբլոմովկայից,— հարցրեց Օբլոմովը։— Լսո՞ւմ ես, ինչ է գրում ստարոստան։ Եկամուտը «մոտ երկու հազարով պակաս կլինի»։ Դեռ հլա ճանապարհ պետք է շինել, դպրոցներ բանալ, Օբլոմովկա գնալ. այնտեղ ապրելու տեղ չկա, դեռ տուն չկա... Ի՞նչ հարսանիք։ Ի՞նչ ես հնարել։

Օբլոմովը կանգ առավ։ Նա ինքը սարսափեց այդ ահեղ, անմխիթարական հեռանկարից։ Վարդերը, նարնջածաղիկները, տոնի փայլը, զարմանքի շշուկը ամբոխի մեջ, այս ամենը հանկարծ թառամեց։

Նրա դեմքը փոխվեց, և մտածմունքի մեջ ընկավ նա։ Հետո կամաց-կամաց սթափվեց, շուրջը նայեց և տեսավ Զախարին։

— Ի՞նչ ես ուզում,— հարցրեց նա մռայլորեն։

— Չէ՞ որ դուք պատվիրեցիք սպասել,— ասաց Զախարը։

— Գնա՛,— անհամբերությամբ ձեռքով նշան արեց Օբլոմովը։

Զախարն արագորեն քայլերն ուղղեց դեպի դուռը։

— Ո՛չ, կա՛ց,— հանկարծ նրան կանգնեցրեց Օբլոմովը։

— Մեկ գնա՛, մեկ կա՛ց,— մրթմրթում էր Զախարը՝ ձեռքով բռնելով դուռը։

— Ինչպե՞ս համարձակվեցիր իմ մասին այդպիսի անհեթեթ լուրեր տարածել,— տագնապալից շշուկով հարցրեց Օբլոմովը։

— Իլյա՛ Իլյիչ, այդ ե՞րբ եմ տարածել։ Ո՛չ թե ես, այլ

Իլլինսկայաների ծառաներն էին ասում, թե բարինն, իբր, առաջարկություն է արել...

— Սս՜սս,— ֆշշաց Օբլոմովը՝ ապառնագին շարժելով ձեռքը,— ո՛չ մի խոսք, երբե՛ք։ Լսո՞ւմ ես։

— Լսում եմ,— վախվորած պատասխանեց Զախարը։

— Չե՞ս տարածի այդ անհեթեթությունը...

— Չեմ տարածի,—ցած ձայնով պատասխանեց Զախարը՝ չհասկանալով բառերի կեսը և միայն իմանալով, որ դրանք «խղճալի» են։

— Դե տե՛ս, հենց կլսես, որ խոսում են դրա մասին, կհարցնեն, ասա՝ դա անհեթեթություն է, երբե՛ք չի եղել և չի՛ էլ կարող լինել,— շշուկով ավելացրեց Օբլոմովը։

— Լսում եմ,— հազիվ լսելի ձայնով շշնջաց Զախարը։

Օբլոմովը շուռ եկավ և մատով սպառնաց նրան։ Զախարը թարթում էր վախեցած աչքերը և այն է՝ ուզում էր մատների ծայրերին դեպի դուռը գնալ։

— Առաջինն ո՞վ է խոսել այդ մասին,— ետևից հասնելով հարցրեց Օբլոմովը։

— Կատյան ասել է Սեմյոնին, Սեմյոնը՝ Նիկիտային,— շշնջում էր Զախարը,— Նիկիտան՝ Վասիլիսային...

— Իսկ դու դո՞ւրս ես տվել բոլորին։ Ես քեզ ցո՞ւյց կըտամ,— ահեղ ֆշշաց Օբլոմովը,— զրպարտություն տարածել բարինի՞ մասին։ Հա՞։

— Ի՞նչ եք ինձ տանջում խղճալի խոսքերով,— ասաց Զախարը։— Ես կկանչեմ Անիսյային, նա ամեն բան գիտե...

— Ի՞նչ գիտե նա։ Ասա՛, ասա՛ իսկույն...

Զախարը վայրկենապես դուրս եկավ դռնից և արտասովոր արագությամբ խոհանոց մտավ։

— Թավան մի կողմ դիր, գնա՛ բարինի մոտ,— ասաց նա Անիսյային՝ բթամատով ցույց տալով դուռը։ Անիսյան թավան տվեց Ակուլինային, գոտկից դուրս քաշեց փեշը, ձեռքերով խփեց ազդրերին և ցուցամատով քիթը սրբելով, գնաց բարինի մոտ։ Նա հինգ րոպեում հանգստացրեց Իլյա Իլյիչին, ասելով նրան, թե ոչ ոք հարսանիքի մասին բան չի ասել. կարելի է նույնիսկ երդվել և նույնիսկ սրբերին վկա կանչել։ և որ նա ինքն առաջին անգամ է այդ մասին լսում. ընդհակառակը, բոլորովին ուրիշ բան էին խոսում, իբր թե բարոնը առաջարկություն է արել օրիորդին...

— Ինչպե՞ս թե բարոնը,— հանկարծ տեղից ցատկելով հարցրեց Իլյա Իլյիչը, և նրա ո՛չ միայն սիրտը սառեց, այլև ձեռքերն ու ոտքերը։

— Դա էլ հիմա՞ր բան է,— շտապեց ասել Անիսյան, տեսնելով, որ նա կրակից դուրս եկավ՝ բոցերի մեջ ընկավ.— այդ բանը Կատյան ասել է միայն Սեմյոնին, Սեմյոնը՝ Մարֆային, Մարֆան ամեն բան սուտ ու սխալ ասել է Նիկիտային, իսկ Նիկիտան ասել է, թե «Լավ կլիներ, որ ձեր բարինը, Իլյա Իլյիչը, առաջարկություն աներ օրիորդին...»

— Ի՞նչ հիմարն է այդ Նիկիտան,— նկատեց Օբլոմովը։

— Իսկապես որ հիմար է,— հաստատեց Անիսյան,— երբ կառեթի ետևից գնում է, կարծես քնած է։ Բայց Վասիլիսան էլ չի հավատացել,— շտապ-շտապ շարունակեց նա,— նա դեռ վերափոխման օրն է ասել իրեն, իսկ Վասիլիսային պատմել է դայակն ինքը, որ օրիորդի մտքովն էլ չի անցնում մարդու գնալ, որ կարելի՞ բան է, որ ձեր բարինը վաղուց իր համար հարսնացու չգտներ, եթե ուզենար ամուսնանալ, և որ դեռ նորերս նա տեսել է Սամոյլոյին, որը նույնիսկ ծիծաղել է այդ բանի վրա, այսինքն՝ թե ի՞նչ հարսանիք, ի՞նչ բան։ Եվ ո՛չ թե հարսանիքի է նման, այլ ավելի շուտ թաղման, որ մորաքրոջ գլուխը շարունակ ցավում է, իսկ օրիորդը լաց է լինում և լռում. տանն էլ օժիտ չեն պատրաստում. օրիորդն անհամար չկարկատած գուլպաներ ունի, նույնիսկ դրանք էլ չեն սկսել կարկատել. որ անցյալ շաբաթ նույնիսկ արծաթեղենները գրավ դրին...

«Արծաթեղենը գրավ դրի՞ն։ Նրանք է՞լ փող չունեն»,— մտածեց Օբլոմովը՝ սարսափով աչքերը պտտեցնելով պատերին և գցելով Անիսյայի քթի վրա, որովհետև էլ ուրիշ բան չկար, որի վրա գցեր։ Անիսյան, կարծես, այդ բոլորն ասում էր ո՛չ թե բերանով, այլ քթով։

— Տե՛ս հա՞, դատարկ բաներ դուրս չտա՞ս,— նկատեց Օբլոմովը՝ մատով սպառնալով նրան։

— Ի՞նչ դուրս տալ, ի՞նչ բան։ Մտքովս էլ չեմ անցկացնում, ոչ միայն դուրս տալ,— ճթճթում էր Անիսյան, կարծես մարխ էր ճղում,— և ոչ մի բան էլ չկա, առաջին անգամ

այսօր եմ լսում, ա՛յ, թող աստված վկա լինի, գետինն անցնեմ, թե սուտ եմ ասում։ Զարմացա, հենց բարինն ասաց ինձ, վախեցա, մինչև անգամ ամբողջովին դողդողացի։ Ինչպե՞ս կարելի է։ Ի՞նչ հարանիք։ Ոչ ոք երազում էլ չի տեսել։ Ես ոչ ոքի հետ ոչինչ չեմ խոսում, շարունակ նստած եմ խոհանոցում։ Իլյինսկայաների ծառաների հետ մի ամիս կլինի չեմ տեսնվել, մոռացել եմ նույնիսկ նրանց անունները։ Իսկ այստեղ ո՞ւմ հետ կարելի է խոսել։ Տանտիրուհու հետ կարելի է խոսել միայն տնտեսության մասին. տատի հետ խոսել չի լինի. նա հազում է, ականջներն էլ ծանր են լսում. Ակուլինան կատարյալ հիմար է, իսկ դունապանը՝ հարբեցող. մնում են միայն երեխաները. նրանց հետ ի՞նչ խոսես։ Ես օրիորդի դեմքն անգամ մոռացել եմ...

— Դե, դե, դե,— ասում էր Օբլոմովը՝ անհամբերությամբ նրան ձեռքով նշան անելով, որ գնա։

— Ինչպե՞ս կարելի է խոսել մի բանի մասին, որ չկա,— վերջացնում էր իր խոսքն Անիսյան՝ հեռանալով։— Իսկ որ Նիկիտան ասել է, ի՞նչ անենք, հիմարների համար օրենք չկա։ Իմ մտքովն էլ այդպիսի բան չի անցնի. ամբողջ օրը ասանջվում ես, տանջվում— հոգսդ ա՞յդ է միթե։ Աստված գիտե, թե ի՞նչ է այդ։ Վկա թող լինի պատից կախված սրբապատկերը...— Եվ դրանից անմիջապես հետո խոսող քիթն անհետացավ դռան ետևում, բայց խոսակցությունը մի բոպեի չափ դեռ լսվում էր դռան ետևից։

— Ահա թե ի՞նչ. Անիսյան էլ է պնդում՝ կարելի՞ բան է այդ,— ասում էր շշնջալով Օբլոմովը՝ ձեռքի ափերն իրար բերելով։

— Երջանկությո՞ւն, երջանկությո՞ւն,— կծու ասաց նա հետո։— Որքա՞ն փխրուն ես դու, որքա՞ն անհուսալի։ Ծածկո՞ց, պսա՞կ, սե՞ր, սե՞ր։ Իսկ ո՞ւր է փողը։ Իսկ ինչո՞վ պետք է ապրենք։ Քեզ էլ է հարկավոր գնել, սե՞ր, զուտ, օրինական բարի՞ք։

Այդ բոպեից երազանքներն ու հանգստությունը լքեցին Օբլոմովին։ Նա վատ էր քնում, քիչ էր ուտում, ամեն բանի նայում էր ցրված և մռայլ։

Նա ուզում էր Զախարին վախեցնել և ինքը նրանից ավելի վախեցավ, երբ թափանցեց հարսանիքի վերաբերյալ հարցի

գործնական կողմի մեջ և տեսավ, որ դա իհարկե, մի բանաձև տեղծական, բայց դրա հետ մեկտեղ նաև գործնական, պաշտոնական քայլ է դեպի էական ու լուրջ իրականությունը և դեպի մի շարք խիստ պարտականություններ։

Իսկ նա այդպես չէր պատկերացնում Զախարի հետ ունենալիք խոսակցությունը։ Նա հիշեց, թե ինչ հանդիսավորությամբ էր ուզում այդ բանը հայտարարել Զախարին, ինչպես պիտի Զախարն ուրախությունից աղաղակեր ու իր ոտքերն ընկներ. նա Զախարին քսանհինգ ռուբլի պիտի տար, իսկ Անիսյային՝ տասը...

Հիշեց ամեն ինչ, նաև երջանկության այն ժամանակվա սարսուռը, Օլգայի ձեռքը, նրա թուն համբույրը... և սառած մնաց. «Թառամե՞ց անցա՞վ»— հնչեց նրա ներսում։

— Ի՞նչ պետք է անել այժմ...

V

Օբլոմովը չգիտեր, թե ինչ աչքերով կերևա Օլգային, ինչ կասի նա, ինչ կասի ինքը, և որոշեց չգնալ նրա մոտ չորեքշաբթի օրը, այլ տեսակցությունը հետաձգել մինչև կիրակի, երբ նրանց մոտ շատ մարդ է լինում և իրենց չի հաջողվի միայնակ խոսել։

Նա չէր ուզում Օլգային ասել մարդկանց հիմար խոսակցությունների մասին, որպեսզի նրան անուղղելի չարիքով անհանգիստ չանի, բայց չասելն էլ դժվար էր. Օլգայի հետ իրեն կեղծել նա չի կարողանա. Օլգան անպատճառ նրանից դուրս կքաշի ամեն բան, ինչ էլ որ նա իր հոգու ամենախորին անդունդներում պահելիս լինի։

Կանգ առնելով այդ վճռի վրա, նա արդեն մի քիչ հանգստացավ և մի ուրիշ նամակ գրեց գյուղ՝ իր հավատարմատարին, թախանձագին խնդրելով նրան շտապեցնել ըստ կարելույն բավարար պատասխանը։

Հետո սկսեց միտ անել, թե ինչպես անցկացնի այդ երկար, անտանելի վաղը չէ մյուս օրը, որ այնպես լիքն էր լինելու Օլգայի ներկայությամբ, նրանց հոգիների անտեսանելի զրույցով, Օլգայի երգեցողությամբ։ Իսկ այստեղ հանկարծ Զախարի խելքին փչեց այնպե՞ս անտեղի անհանգստացնել նրան։

Նա վճռեց գնալ Իվան Գերասիմիչի մոտ և այնտեղ ճաշել, որպեսզի որքան կարելի է ավելի քիչ նկատի այդ անտանելի օրը։ Իսկ այնուհետև, կիրակի օրվա համար, նա կկարողանա նախապատրաստվել, և, գուցե, մինչ այդ պատապխան էլ կգա գյուղից։

Եկավ նաև վաղը չէ մյուս օրը։

Նրան արթնացրեց շան կատաղի վազվզոցը շղթայով և հաչոցը։ Մի մարդ մտավ բակ, մեկին հարցրեց։ Դռնապանը դուրս կանչեց Զախարին։ Զախարը քաղաքային փոստով եկած մի նամակ բերեց Օբլոմովին։

— Իլյինսկայա օրիորդից,— ասաց Զախարը։

— Դու որտեղի՞ց գիտես,— բարկացած հարցրեց Օբլոմովը։— Սո՞ւտ ես ասում։

— Բոլոր այդպիսի նամակներն ամառանոցում նրանից էին բերում,— իրենն էր պնդում Զախարը։

«Արդյոք առո՞ղջ է նա։ Ի՞նչ է նշանակում սա»— մտածում էր Օբլոմովը՝ բաց անելով նամակը։

«Չեմ ուզում չորեքշաբթի օրվան սպասել (գրում էր Օլգան). ինձ համար այնքան ձանձրալի է երկար ժամանակ ձեզ հետ չտեսնվելը, որ ես վաղն անպայման ժամը երեքին կսպասեմ ձեզ Ամառային Այգում»։

Միայն այսքանը։

Կրկին տագնապ սկսեց բարձրանալ նրա հոգու խորքից, կրկին նա սկսեց անհանգստությունից դեսուդեն ընկնել, թե ինչպես պիտի խոսի Օլգայի հետ, ինչպիսի դեմք ընդունի։

— Չեմ իմանում, չեմ կարող,— ասում էր նա։— Գնա՛, իմացի՛ր Շտոլցից։

Բայց նա իրեն հանգստացրեց այն բանով, որ հավանորեն, Օլգան կգա մորաքրոջ կամ մի ուրիշ տիկնոջ՝ Մարիա Սեմյոնովնայի հետ, որն այնքան է սիրում նրան, որ չի կշտանում նրան նայելուց։ Նրանց ներկայությամբ Օբլոմովը հույս ուներ որևէ կերպ թաքցնել իր շփոթվածությունը և պատրաստվում էր զրուցասեր ու սիրալիր լինելու։

«Եվ հենց ճաշի ժամանակ. ժամանա՛կ է գտել»— մտածում էր նա, ոչ առանց ալարկոտության ուղղվելով դեպի Ամառային Այգի։

Հենց նա մտավ երկար ծառուղին, տեսավ, թե ինչպես

մի նստարանից վեր կացավ և իրեն ընդառաջ եկավ քողով ծածկված մի կին։

Նա սրան ամենևին Օլգայի տեղը չդրեց. միայնա՞կ։ Չի՞ կարող պատահել։ Նա սիրտ չի անի, և պատրվակ էլ չկա տնից դուրս գալու։

Սակայն... քայլվածքը կարծես նրանն է. այնպես թեթև ու արագ են սահում ոտքերը, որ՞ կարծես նրանք քայլեր չեն անում, այլ շարժվում են. նույնպիսի մի փոքր դեպի առաջ հակված վիզ ու գլուխ, կարծես, նա աչքերով շարունակ ինչ-որ բան է փնտրում իր ոտքերի տակ։

Մեկ ուրիշը գլխարկից, զգեստից կնկատեր, բայց նա ամբողջ առավոտ նստելով Օլգայի հետ՝ չէր կարող հետո երբեք ասել, թե նա ինչ զգեստով էր ու գլխարկով։

Այգում համարյա ոչ ոք չկա, մի հասակավոր պարոն արագ-արագ ման էր գալիս, երևի՝ զբոսանք էր կատարում առողջության համար, և մեկ էլ՝ երկու... ո՛չ թե տիկիններ, այլ կանայք, մի դայակ՝ դեմքերը կապտելու չափ սառած երկու երեխաների հետ։

Տերևները թափվել են, ամեն ինչ երևում է ծայրից-ծայր. ագռավները ծառերի վրա այնպե՞ս անախորժ կռկռում են։ Սակայն, պարզ է, լավ օր է, և եթե լավ փաթաթվես, տաք էլ է։

Քողավոր կինն ավելի ու ավելի մոտենում է...

— Նա՛ է— ասաց Օբլոմովը և սարսափահար կանգ առավ՝ չհավատալով իր աչքերին։

— Ինչպե՞ս, դո՞ւ ես։ Սա ի՞նչ է— հարցրեց նա՝ բռնելով նրա ձեռքից։

— Որքա՞ն ուրախ եմ, որ եկար,— ասում էր Օլգան՝ չպատասխանելով նրա հարցին,— ես կարծում էի, թե դու չես գա, սկսում էի վախենալ։

— Ինչպե՞ս ես եկել այստեղ, ի՞նչ ձևով,— հարցնում էր Օբլոմովը՝ կորցնելով իրեն։

— Թո՛ղ; սա ի՞նչ բան է, ի՞նչ հարցուփորձ է։ Տաղտկալի՞ է։ Ես ուզում էի տեսնել քեզ և եկա, ահա՞ բոլորը։

Օլգան ամուր սեղմում էր նրա ձեռքը և ուրախ, անհոգ նրան նայում, այնպես ակնբախ ու բացահայտորեն հրճվելով բախտից գողացած վայրկյանով, որ Օբլոմովի նույնիսկ նա-

խանձը շարժվեց, որ ինքն էլ նրա աշխույժ տրամադրությունը չունի։ Սակայն, որքան էլ նա մտահոգված էր, բայց չէր կարող մի րոպեով չմոռանալ իրեն՝ տեսնելով Օլգայի դեմքը, որը զուրկ էր մտքի այն կենտրոնացվածությունից, որ խաղում էր նրա հոնքերի հետ, լցվում նրա ճակատի ծալքում. այժմ նա հանդես էր գալիս առանց դիմագծերի հիանալի հասունության, որ հաճախ շփոթության մեջ էր գցել Օբլոմովին։

Այդ րոպեներին Օլգայի դեմքը արտահայտում էր մանկական դյուրահավատություն դեպի բախտը, դեպի երջանկությունը, դեպի Օբլոմովը... Օլգան շատ հմայիչ էր։

— Ա՜խ, որքա՜ն ուրախ եմ։ Որքա՜ն ուրախ եմ,— կրկնում էր նա ժպտալով և նրա վրա նայելով— Ես կարծում էի, թե քեզ այսօր չեմ տեսնի։ Երեկ ինձ հանկարծ այնպի՜ սանձրույթ պատեց, չգիտեմ ինչից, և ես նամակ գրեցի։ Դու ուրա՜խ ես։

Օլգան նայեց Օբլոմովի երեսին։

— Ինչո՞ւ այդպես մռայլ ես այսօր։ Վռա՞մ ես։ Դու ուրախ չե՞ս։ Ես կարծում էի, թե ուրախությունից կխելագարվես, իսկ նա կարծես քնած է։ Արթնացե՛ք, պարոն, Օլգան է ձեզ հետ։

Օլգան կշտամբանքով մի փոքր ետ հրեց նրան։

— Դու հիվա՞նդ ես։ Ի՞նչ է պատահել քեզ,— օձիքը քաշ չէր թողնում Օլգան։

— Ո՛չ, ես առողջ եմ և երջանիկ,— շտապեց ասել նա, որպեսզի բանը չհասնի նրա հոգուց գաղտնիքները դուրս քաշելուն։— Ես անհանգստանում եմ միայն, թե ինչպես դու մենակ...

— Դա արդեն իմ գործն է,— ասաց Օլգան անհամբերությամբ։— Մի՞թե ավելի լավ կլիներ, եթե ես ma tante-ի հետ գայի։

— Ավելի լավ կլիներ, Օ՛լգա...

— Եթե իմանայի, կխնդրեի նրան,— վիրավորված ձայնով ընդհատեց Օլգան՝ թողնելով նրա ձեռքը։— Ես կարծում էի, թե քեզ համար ավելի մեծ երջանկություն չկա, քան ինձ հետ լինելը։

— Եվ չկա, և չի էլ կարող լինե՛լ,— փրա բերեց Օբլոմովը։— Բայց ինչպե՞ս է, որ դու մենակ...

— Կարիք էլ չկա երկար խոսելու դրա մասին. ավելի լավ է՝ ուրիշ բանի մասին խոսենք,— ասաց Օլգան անհոգ կերպով։

— Լսի՛ր... Ա՜խ, ես մի բան էի ուզում ասել, բայց մոռացա...

— Այս մասին չէ՞, արդյոք, թե ինչպես ես դու միայնակ այստեղ եկել,— ասաց նա՝ անհանգիստ կերպով շուրջը նայելով։

— Ա՜խ, ո՛չ։ Դու էլի քո՞նն ես կրկնում։ Ինչպես չես ձանձրանում։ Ի՞նչ էի ուզում ասել... Լավ, միևնույն է, հետո միտս կընկնի։ Ա՜խ, ի՞նչ լավ է այստեղ. բոլոր տերևները թափվել են, feuilles d'automne[1]— հիշո՞ւմ ես Հյուգոյին։ Ա՛յ այնտեղ արև է, Նևան... Գնանք դեպի Նևան, նավակ նստենք...

— Ի՞նչ ես ասում։ Աստվա՞ծ սիրես։ Այնպես ցուրտ է, իսկ ես միայն բամբակե շինելով եմ...

— Ես էլ բամբակե զգեստով եմ։ Ի՞նչ կլինի որ։ Գնանք, գնանք։

Նա վազում էր, քարշ էր տալիս նաև Օբլոմովին։ Սա դիմադրում էր ու քրթմնջում։ Բայց և այնպես, հարկ եղավ նավակ նստել ու գնալ։

— Այդ ինչպե՞ս եղավ, որ դու միայնակ ընկար այստեղ,— կրկնում էր տագնապով Օբլոմովը։

— Ասե՞մ ինչպես,— նենգորեն բարկացնում էր Օլգան, երբ նրանք հասել էին գետի մեջտեղը։— Հիմա կարելի է. դու այստեղից չես՝ գնա, իսկ այնտեղ կփախչեիր...

— Ի՞նչ է որ— վախեցած ասաց նա։

— Վաղը կգա՞ս մեզ մոտ,— պատասխանի փոխարեն հարցրեց Օլգան։

«Ա՜խ, աստվա՞ծ իմ»— մտածեց Օբլոմովը։ «Նա կարծես կարդացել է մտքերս, որ չէի ուզում գնալ»։

— Կգամ,— պատասխանեց նա բարձր։

— Առավոտից, ամբողջ օրո՛վ։

Օբլոմովը կմկմաց։

— Թե այդպես է, չեմ ասի,— ասաց Օլգան։

— Կգամ ամբողջ օրով։

[1] Աշնան տերևներ (Ֆր.)։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես...— սկսեց Օլգան լրջորեն,— ես քեզ այսօր կանչել եմ այստեղ, որպեսզի ասեմ...

— Ի՞նչ,— վախեցած հարցրեց Օբլոմովը։

— Որպեսզի դու... վաղը գաս մեզ մոտ...

— Ա՜խ, տե՛ր իմ աստված,— անհամբերությամբ ընդհատեց Օբլոմովը։— Բայց դու ինչպե՞ս ընկար այստեղ։

— Այստե՞ղ,— կրկնեց նա ցրված։— Ինչպե՞ս ընկա այստե՞ղ։ Ա՛յ, այսպես, եկա... Կա՞ց... ի՞նչ կարիք կա դրա մասին խոսելու։

Օլգան բռով ջուր վերցրեց և ցանեց նրա երեսին։ Օբլոմովն աչքերը կկոցեց, ցնցվեց, իսկ նա ծիծաղում էր։

— Ի՞նչ սառը ջուր է, ձեռքս բոլորովին սառեց։ Աստվա՜ծ իմ։ Որքա՜ն ուրախ է, որքա՜ն լավ,— շարունակում էր Օլգան, չորս կողմը նայելով։— Վաղն էլ գանք, բայց արդեն ուղիղ տնից...

— Իսկ հիմա մի՞թե ուղիղ տնից չես գալիս։ Հապա որտեղի՞ց ես գալիս,— շտապ հարցրեց Օբլոմովը։

— Խանութից,— պատասխանեց Օլգան։

— Ո՞ր խանութից։

— Ինչպե՞ս թե որ։ Ես դեռ այգում ասացի, թե որ...

— Դե, ո՛չ, չես ասել...— անհամբերությամբ ասաց նա։

— Չեմ ասե՞լ։ Որքա՜ն տարօրինակ է։ Մոռացել եմ։ Ես տնից դուրս եկա սպասավորի հետ, եղա ոսկերչի մոտ...

— Հետո՞։

— Հետո այ... Այն ի՞նչ եկեղեցի է,— հանկարծ հարցրեց Օլգան նավավարին՝ ցույց տալով հեռուն։

— Ո՞րը։ Այ է՞ն,— հարցրեց նավավարը մի անգամ էլ։

— Սմո՛լնի,— անհամբերությամբ ասաց Օբլոմովը։— Լա՛վ, հետո ի՞նչ, գնացիր խանութ, իսկ այնտե՞ղ։

— Այնտեղ... հիանալի բաներ կան... Ա՜խ, ինչպիսի՜ ապարանջան եմ տեսել ես։

— Խոսքն ապարանջանի մասին չէ,— ընդհատեց Օբլոմովը։— Իսկ հետո ի՞նչ եղավ։

— Այդ է բոլորը,— ավելացրեց Օլգան ցրված և ուշադրությամբ դիտում էր շուրջն ընկած վայրը։

— Հապա ո՞ւր է սպասավորը,— ձեռք չէր քաշում Օբլոմովը։

— Տուն գնաց,— հազիվհազ պատասխանում էր Օլգան, դիտելով հակադիր ափին գտնվող շենքերը։

— Իսկ դու ինչպե՞ս,— ասաց Օբլոմովը։

— Ինչքա՜ն լավ է այնտեղ։ Արդյոք չի՞ կարելի այնտեղ գնալ,— հարցրեց Օլգան, հովանոցով ցույց տալով հակադիր կողմը։— Չէ՞ որ դու այնտեղ ես ապրում։

— Այո՛։

— Ո՞ր փողոցում, ցույց տուր։

— Իսկ սպասավորն ի՞նչ եղավ,— հարցնում էր Օբլոմովը։

— Սպասավո՞րը,— անփութորեն պատասխանում էր Օլգան,— ես նրան ուղարկեցի ապարանջանի ետևից։ Նա տուն գնաց, իսկ ես եկա այստեղ։

— Այդ ինչպե՞ս արիր դու,— ասաց Օբլոմովը՝ աչքերը շռելով նրա վրա։

Օբլոմովը վախեցած կերպարանք ընդունեց։ Օլգան էլ դիտմամբ նույնպիսի կերպարանք ընդունեց։

— Լուրջ խոսիր, Օ՛լգա, բավական է կատակ անես։

— Ես կատակ չեմ անում. ճիշտ եմ ասում, այդպես է,— ասաց նա հանգստությամբ։— Ես դիտմամբ տանը մոռացա ապարանջանը, իսկ ma tante-ը խնդրեց ինձ մտնել խանութ։ Դու ոչ մի դեպքում այդպիսի բան չե՞ս հնարի,— ավելացրեց Օլգան հպարտությամբ, կարծես թե գործ էր արել։

— Իսկ եթե սպասավորը վերադառնա՞,— հարցրեց Օբլոմովը։

— Ես պատվիրեցի ասել, որ սպասի ինձ, որ ես ուրիշ խանութ եմ գնացել, իսկ ինքս եկա այստեղ...

— Իսկ եթե Մարիա Միխայլովնան հարցնի, թե ուրիշ ի՞նչ խանութ ես գնացել։

— Կասեմ, թե դերձակուհու մոտ եմ եղել։

— Իսկ երբ նա դերձակուհուն հարցնի՞։

— Իսկ եթե Նևան հանկարծ ամբողջովին ծովը հոսի, իսկ եթե նավակը շուռ գա, իսկ եթե Մորսկայան ու մեր տունը քարուքանդ լինեն, իսկ եթե դու հանկարծ դադարես ինձ սիրելուց...— ասաց նա և նորից ջուր ցանեց նրա երեսին։

— Չէ՞ որ սպասավորն արդեն վերադարձել է, սպասում է...— ասաց Օբլոմովը՝ երեսը սրբելով։— Է՛յ, նավավար, դեպի ա՞փը։

— Հարկավոր չէ՞, հարկավոր չէ՞,— հրամայում էր Օլգան նավավարին։

— Դեպի ա՞փը։ Սպասավորն արդեն վերադարձել է,— պնդում էր Օբլոմովը։

— Ի՞նչ ուզում է լինի։ Հարկավոր չէ՞։

Բայց Օբլոմովն իր խոսքն արեց և Օլգայի հետ շտապով գնաց պարտեզով, իսկ Օլգան, ընդհակառակը, գնում էր դանդաղ՝ հենվելով նրա ձեռքի վրա։

— Ի՞նչ ես շտապում,— ասում էր Օլգան։— Սպասի՛ր, ես ուզում եմ քեզ հետ լինել։

Օլգան ավելի դանդաղ էր քայլում, հպվում էր նրա ուսին և մոտիկից նայում երեսին, իսկ Օբլոմովը ծանրորեն ու տաղտկալիորեն խոսում էր նրա հետ պարտականությունների մասին, պարտքի մասին։ Օլգան լսում էր ցրված նվաղկոտ ժպիտով, գլուխը վայրահակ, նայելով դեպի ցած և նորից մոտիկից նրա դեմքին, ու մտածում էր ուրիշ բանի մասին։

— Լսի՛ր, Օ՛լգա,— խոսեց նա վերջապես հանդիսավոր կերպով,— երկյուղ կրելով քո մեջ սրտնեղություն հարուցելու, կշտամբանքներ բարդելու ինձ վրա, ես պետք է, այնուամենայնիվ, ասեմ վճռականապես, որ մենք շատ հեռու ենք գնացել։ Իմ պարտքը, իմ պարտավորությունն է ասել քեզ այդ։

— Ի՞նչ ասել,— հարցրեց Օլգան անհամբերությամբ։

— Որ մենք շատ վատ բան ենք անում, որ տեսնվում ենք գաղտնի։

— Այդ բանը դու ասում էիր դեռ ամառանոցում եղած ժամանակ,— ասաց Օլգան մտածմունքի մեջ ընկած։

— Այո՛, բայց ես այն ժամանակ հրապուրվում էի. մի ձեռքով ետ էի հրում, իսկ մյուսով պահում էի։ Դու գյուրահավատ էիր, իսկ ես... կարծես... խաբում էի քեզ։ Այն ժամանակ զգացմունքը դեռ նոր էր...

— Իսկ այժմ այն արդեն նորություն չէ, և դու սկսում ես ձանձրանալ...

— Ա՜խ, ո՛չ, Օ՛լգա։ Դու անարդարացի ես։ Նոր էր, ասում եմ ես, և այդ պատճառով էլ ժամանակ չկար, անհնար էր խելքի գալ։ Խիղճս ինձ սպանում է. դու ջահել ես, քիչ ես ճանաչում աշխարհն ու մարդկանց, բացի այդ դու այնքան

մաքուր ես, այնպես սրբությամբ ես սիրում, որ մտքով անգամ չի անցնում, թե ինչպիսի խիստ պարսավանքի ենք ենթարկվում մենք երկուսս էլ այն բանի համար, ինչ անում ենք, ամենից ավելի ես։

— Ի՞նչ ենք անում մենք,— կանգ առնելով՝ հարցրեց Օլգան։

— Ինչպե՞ս թե ինչ։ Դու խաբում ես մորաքրոջը, տնից դուրս ես գալիս գաղտնի, միայնակ տեսնվում ես տղամարդու հետ... Փորձի՛ր այդ բոլորը կիրակի օրն ասել հյուրերի ներկայությամբ...

— Եվ ինչո՞ւ չասել,— արտասանեց Օլգան հանդարտ։— Թերևս և կասեմ...

— Եվ կտեսնես,— շարունակում էր Օբլոմովը,— որ քո մորաքույրն իրեն վատ կզգա, տիկինները կհեռանան իսկույն, իսկ տղամարդիկ նենգամտորեն ու համարձակ կնայեն քեզ վրա...

Օլգան մտածմունքի մեջ ընկավ։

— Բայց չէ՞ որ մենք փնատցու և հարսնացու ենք,— առարկեց Օլգան։

— Այո՛, այո՛, սիրելի Օլգա,— ասում էր Օբլոմովը՝ սեղմելով նրա երկու ձեռքը,— և ավելի ևս խիստ պետք է լինենք մենք, ավելի ևս աչալուրջ յուրաքանչյուր քայլափոխին։ Ես ուզում եմ հպարտությամբ քեզ թևանցուկ տանել այս ծառուղիով; ամբողջ հասարակության առջև, և ոչ թե գաղտնի, որպեսզի մարդկանց հայացքը քո առաջ հարգանքով դեպի ցած խոնարհվեն և ո՛չ թե քեզ վրա հառվեն համարձակ ու նենգամիտ կերպով, որպեսզի ոչ ոքի գլխում չհանդգնի կասկած ծագել, որ դու, հպա՛ռտ աղջիկ, գլուխդ կորցնելով, մոռանալով ամոթ ու դաստիարակություն, կարողացել ես հրապուրվել և խախտել պարտքդ...

— Ես չեմ մոռացել ո՛չ ամոթ, ո՛չ դաստիարակություն և ո՛չ պարտք,— պատասխանեց Օլգան հպարտությամբ՝ ձեռքը ետ քաշելով նրանից։

— Գիտեմ, գիտեմ, իմ անմեղ հրեշտակ, բայց այդ ե՞ս չեմ ասում. այդ կասեն մարդիկ, հասարակությունը, և երբեք չեն ների քեզ։ Ի սեր աստծո, հասկացի՛ր, թե ինչ եմ ուզում

ես։ Ես ուզում եմ, որ դու հասարակության աչքում էլ այնպես մաքուր և անբասիր լինես, ինչպես իսկապես կաս...

Օլգան գնում էր մտքերի մեջ ընկած։

— Հասկացի՛ր, թե ինչի համար եմ ասում քեզ սա. դու դժբախտ կլինես, և դրա ամբողջ պատասխանատվությունը միայն ինձ վրա կընկնի։ Կասեն՝ ես եմ հրապուրել, քեզնից դիտմամբ թաքցրել եմ անդունդը։ Դու ինձ հետ մաքուր ես և հանգիստ; բայց ո՞ւմ կհասկացնես։ Ո՞վ կհավատա։

— Ճշմարիտ է,— ասաց նա ցնցվելով։— Դե լսի՛ր,— ավելացրեց Օլգան վճռականորեն,— կասենք ամեն ինչ ma tante-ին, և նա թող վաղը մեզ օրհնի...

Օբլոմովը գունատվեց։

— Ի՞նչ ես ասում,— հարցրեց Օլգան։

— Սպասի՛ր, Օլգա, ինչո՞ւ այդպես շտապել...— հապճեպ ավելացրեց Օբլոմովը։

Նրա շրթունքները դողում էին։

— Դո՞ւ չէիր, որ երկու շաբաթ առաջ ինքդ էիր շտապեցնում ինձ,— հարցրեց Օլգան, շոր և ուշադիր կերպով նայելով նրան։

— Այո՛. ես այն ժամանակ չմտածեցի նախապատրաստությունների մասին, իսկ դրանք շա՞տ են,— ասաց Օբլոմովը հառաչելով։— Սպասենք միայն գյուղից եկող նամակին։

— Ինչո՞ւ սպասենք նամակին։ Մի՞թե այս կամ այն պատասխանը կարող է փոխել քո մտադրությունը,— հարցրեց Օլգան, ավելի ևս ուշադրությամբ նայելով նրան։

— Ա՜յ քեզ միտք։ Ո՛չ, բայց ամեն ինչ հարկավոր է կշռադատումների համար. չէ՞ որ պետք կլինի մորաքրոջդ ասել, թե երբ է հարսանիքը։ Նրա հետ մենք սիրո մասին չենք խոսելու, այլ այնպիսի գործերի, որոնց ես այժմ բոլորովին նախապատրաստված չեմ։

— Այն ժամանակ էլ կասենք, երբ կստանաս նամակը, իսկ մինչ այդ բոլորը կիմանան փեսացու և հարսնացու ենք, և ամեն օր կտեսնվենք։ Ես ձանձրանում եմ,— ավելացրեց նա,— ես տանջվում եմ այդ երկար օրերից. բոլորը նկատում են, ձեռ չեն քաշում ինձնից, նենգաբար ակնարկ են անում քեզ վրա... Այդ ամենը ինձ հոգնեցրել է։

— Ակնարկ են անում ինձ վրա՞,— հազիվ արտասանեց Օբլոմովը։

— Այո՛, Սոնեչկայի շնորհիվ։

— Ա՜յ, տեսնո՞ւմ ես։ Դու ինձ չլսեցի՛ր, ինձ վրա բարկացա՛ր այն ժամանակ։

— Էհ, ի՞նչ՝ տեսնում ես։ Ոչինչ էլ չեմ տեսնում, տեսնում եմ միայն, որ դու վախկոտ ես... Ես այդ ակնարկներից չեմ վախենում։

— Ո՛չ թե վախկոտ եմ, այլ զգույշ... բայց, անտծու սիրուն, գնանք այստեղից, Օ՛լգա. նայի՛ր, ահա մի կառք է մոտենում։ Արդյոք ծանոթներ չե՞ն։ Ա՜խ։ Քրտինք է գալիս վրաս... Գնանք, գնանք...— վախվորած ասաց Օբլոմովը և Օլգային էլ վարակեց երկյուղով։

— Այո՛, շուտ գնանք,— ասաց Օլգան էլ շշնջալով ու հապճեպ։

Եվ նրանք ծառուղիով համարյա վազեցին մինչև պարտեզի վերջը, ոչ մի խոսք չասելով, Օբլոմովը՝ անհանգիստ բոլոր կողմերը նայելով, իսկ Օլգան՝ գլուխը ներքև խոնարհելով և քողով ծածկվելով։

— Ուրեմն վա՜ղը,— ասաց Օլգան, երբ նրանք այն խաղուտի մոտ հասան, որտեղ նրան սպասում էր սպասավորը։

— Ո՛չ, ավելի լավ է՝ վաղը չէ մյուս օրը... կամ ո՛չ, ուրբաթ կամ շաբաթ օրը,— պատասխանեց Օբլոմովը։

— Իսկ ինչո՞ւ։

— Հա... տեսնո՞ւմ ես, Օլգա... ես շարունակ մտածում եմ, թե՝ նամակն արդյոք չի՞ հասնի։

— Թերևս։ Բայց վաղը հենց այնպես արի՛, ճաշին, լսո՞ւմ ես։

— Այո՛, այո՛, լա՛վ, լա՛վ,— շտապ ավելացրեց նա, իսկ Օլգան մտավ խանութ։

«Ա՜խ, աստված իմ, բանն ո՜ւր է հասել։ Ինչպիսի՜ ծանրություն ընկավ հանկարծ վրաս։ Հիմա ի՞նչ պիտի անեմ ես։ Սո՜նեչկան, Զախա՜րը, ֆրանտները...»։

VI

Օբլոմովը չնկատեց, որ Զախարը իրեն բոլորովին սառը ճաշ տվեց, չնկատեց, թե ինչպես դրանից հետո անկողին մտավ և քարի պես ամուր քնով քնեց։

Հետևյալ օրը նա սարսռաց Օլգայի մոտ գնալու մտքից. ինչպե՞ս կարելի է։ Նա կենդանի պատկերացրեց, թե ինչպես բոլորը կսկսեն նշանակալից կերպով իրեն նայել։

Առանց այն էլ շվեյցարը մի տեսակ հատուկ սիրալիրությամբ է դիմավորում նրան։ Սեմյոնը գլուխ կոտրելով առաջ է նետվում, երբ նա մի բաժակ ջուր է խնդրում։ Կատյան, դայակը նրան բարեկամական ժպիտով են ճանապարհ դնում։

«Փենացուն է, փենացո՞ւն է»— գրված է նրանց բոլորի ճակատին, իսկ նա դեռ մորաքրոջ համաձայնությունն էլ չի խնդրել, նա ոչ մի կոպեկ փող չունի և չգիտե էլ, թե երբ կունենա, չգիտեր մինչև անգամ, թե այս տարի որքան եկամուտ կստանա գյուղից. գյուղում տուն չունի՝ լա՞վ փենացու է։

Նա վճռեց, որ մինչև գյուղից դրական տեղեկություններ ստանալը Օլգայի հետ կտեսնվի միմիայն կիրակի օրերը, վկաների ներկայությամբ։ Այդ պատճառով էլ, երբ եկավ վաղը, նա չմտածեց Օլգայի մոտ գնալու համար առավոտից նախապատրաստվել։

Նա չէր սափրվում, չէր հագնվում, ծուլ-ծուլ թերթում էր անցյալ շաբաթ Իլյինսկայաներից վերցրած ֆրանսերեն լրագրերը, անընդհատ ժամացույցին չէր նայում և չէր մոռայլվում, որ սլաքը երկար առաջ չի շարժվում։

Զախարն ու Անիսյան կարծում էին, թե նա, ըստ սովորության, տանը չի ճաշի, և չէին հարցնում, թե ինչ պատրաստեն։

Նա նախատեց նրանց, հայտարարելով, որ ամենևին էլ բոլոր չորեքշաբթի օրերը Իլյինսկայաների մոտ չի ճաշել, որ դա «զրպարտություն» է, որ նա ճաշել է Իվան Գերասիմովիչի մոտ և որ այսուհետև, բացի միայն կիրակի, այն էլ ամեն կիրակի օրերից, տանն է ճաշելու։

Անիսյան գլխապատառ շուկա վազեց Օբլոմովի սիրելի ապուրի համար փորոտիք բերելու։

Նրա մոտ եկան տանտիրուհու երեխաները. նա ստուգեց վանյայի գումարումն ու հանումը և երկու սխալ գտավ։ Մաշայի համար տողատեց տետրակը և գրեց մեծ այբերը, հետո լսեց, թե ինչպես են կշկշում դեղձանիկները, և կիսաբաց դռնով նայում էր, թե ինչպես էին երևում ու շարժվում տանտիրուհու արմունկները։

Ծամը մեկից անց տանտիրուհին դռան ետևից հարցրեց, թե արդյոք նա չի՞ ուզում նախաճաշել. նրանք պանրակարկանդակ էին թխում։ Տվեցին պանրակարկանդակ և մի գավաթ հաղարջի օղի։

Իլյա Իլյիչի հուզմունքը մի փոքր նստեց և նրա վրա միայն բութ մտածկոտություն եկավ, որի մեջ մնաց համարյա մինչև ճաշը։

Ճաշից հետո հենց նոր էր նա սկսել, բազմոցի վրա պառկած, գլուխը վայրահակել՝ քունը տանելու պատճառով, երբ տանտիրուհու սենյակի դուռը բացվեց և այնտեղից երևաց Ագաֆյա Մատվեևնան՝ երկու ձեռքում գուլպաների երկու բուրգ բռնած։

Նա դրանք դրեց երկու աթոռի վրա, իսկ Օբլոմովը տեղից վեր թռավ և նրան առաջարկեց երրորդ աթոռը, բայց նա չնստեց. դա տանտիրուհու սովորությունների մեջ չէր մտնում. միշտ ոտքի վրա է, միշտ հոգսի ու շարժման մեջ։

— Ա՛յ, ես այսօր ջոկեցի ձեր գուլպաները,— ասաց նա,— հիսունհինգ զույգ է, բայց համարյա բոլորն էլ ծակոտված են...

— Որքա՞ն բարի եք դուք,— ասաց Օբլոմովը, մոտենալով նրան և կատակով թեթևակի բռնելով նրա արմունկներից։ Տանտիրուհին քմծիծաղ տվեց։

— Ի՞նչ եք անհանգստանում։ Ճշմարիտ, ես ամաչում եմ։

— Ոչինչ, մեր գործը տնտեսությունն է. դուք ոչ ոք չունեք, որ կարգի բերի, իսկ ես սիրով կանեմ,— շարունակում էր նա։— Ահա այս քսան զույգը բոլորովին անպետք է. դրանց ծակերը լցնելն էլ շարժե։

— Հարկավոր չէ, խնդրում եմ, բոլորը դեն նետեք։ Ի՞նչ

եք այդ անպետք բանով զբաղվում։ Կարելի է նորերը գնել...։

— Ինչպե՞ս թե դեն նետել, ինչո՞ւ։ Այ, սրանց բոլորի թաթերը կարելի է գործել,— և նա սկսեց աշխուժորեն հաշվել գուլպաները։

— Դե նստեք, խնդրեմ, ինչո՞ւ եք կանգնել,— առաջարկում էր նրան Օբլոմովը։

— Ո՛չ, խոնարհաբար շնորհակալ եմ, ձեռքերս ծալելու ժամանակ չունեմ,— պատասխանեց նա՝ նորից խուսափելով աթոռից։— Այսօր մենք լվացք ունենք. հարկավոր է ամբողջ սպիտակեղենը պատրաստել։

— Դուք հրա՞շք եք և ոչ թե տանտիկին,— ասում էր Օբլոմովը՝ աչքը տնկելով նրա կոկորդի և կրծքի վրա։

Նա քմծիծաղ տվեց։

— Ուրեմն, ի՞նչ կասեք,— հարցրեց նա,— գուլպաների թաթերը գործե՞նք։ Թել ես կպատվիրեմ։ Մեզ համար մի պառավ բերում է գյուղից, իսկ այստեղ չարժե գնել, բոլորը փտած է։

— Եթե դուք այդքան բարի եք, պարտավորեցրեք ինձ,— ասում էր Օբլոմովը,— բայց ես, ճշմարիտ, ամաչում եմ, որ դուք այդքան չարչարվում եք։

— Ոչինչ. ի՞նչ ունենք մենք անելու որ։ Ա՛յ, սա ես ինքս կգործեմ, սրանք կտամ տատին. վաղը տալս հյուր է գալու. երեկոները բան չենք ունենա անելու, և կգործենք։ Իմ Մաշան էլ արդեն սկսում է գործել, միայն ճաղերը շարունակ դուրս է գցում, մեծ են, նրա ձեռքերին հարմար չեն։

— Մի՞թե Մաշան էլ է սովորում,— հարցրեց Օբլոմովը։

— Աստված վկա, ճիշտ եմ ասում։

— Չգիտեմ, թե ինչպես շնորհակալություն հայտնեմ ձեզ,— ասում էր Օբլոմովը, նույնպիսի հայացքով նայելով նրան, ինչպես առավոտյան նայում էր տաք պանրակարկանդակին։— Շատ, շատ շնորհակալ եմ ձեզնից և պարտքի տակ չեմ մնա, հատկապես Մաշայի վերաբերմամբ. նրա համար մետաքսե զգեստներ կգնեմ, տիկնիկի նման կհագցնեմ։

— Ի՞նչ եք ասում։ Ի՞նչ շնորհակալություն։ Նրա ինչի՞ն են պետք մետաքսե շորերը։ Նրան չթե զգեստ էլ հագցնել չի լինում. ամեն բան մաշվում է նրա վրա, առանձնապես ոտնամանները. չենք հասցնում շուկայում գնել։

Նա վեր կացավ և վերցրեց գուլպաները։

— Ո՞ւր եք շտապում,— ասաց նա։— Նստե՛ք, ես զբաղված չեմ։

— Ուրիշ անգամ գուցե, մի տոն օր. դուք էլ, խնդրեմ, շնորհ արեք մեզ մոտ սուրճ խմելու։ Իսկ հիմա լվացք է. գնամ տեսնեմ՝ ինչ է անում Ակուլինան, սկսե՞լ է արդյոք...

— Դե՛հ, աստված ձեզ հետ, չեմ համարձակվում պահել ձեզ,— ասաց Օբլոմովը, նայելով նրա մեջքին ու արմունկներին։

— Ձեր խալաթն էլ հանել եմ,— շարունակում էր նա,— կարելի է կարկատել և լվանալ. կտորն այնպես լա՛վն է։ Երկար կդիմանա։

— Իզո՞ւր։ Այլևս չեմ հագնում, այն ինձ պետք չէ։

— Դե, միևնույն է, թող լվանան. գուցե երբևիցե կհագնեք... հարսանիքին,— վերջացրեց նա՝ քմծիծաղ տալով ու դուռը շրխկացնելով։

Հանկարծ Օբլոմովի քունն էլ թռավ, ականջներն էլ սրվեցին, աչքերն էլ շռեց։

— Նա էլ գիտեր, բոլո՞ր,— ասաց նա՝ նստելով տանտիրուհու համար պատրաստած աթոռին։— Օ՜ Զախա՜ր, Զախա՜ր։

Կրկին Զախարի գլխին թափվեցին «խղճալի» խոսքերը, կրկին Անիսյան խոսեց քթի միջից, թե «ինքն առաջին անգամ է տանտիրուհուց լսում հարսանիքի մասին, որ նրա հետ ունեցած խոսակցություններում խոսք էլ չի եղել, և հարսանիք չկա էլ, և հնարավո՞ր բան է դա։ Դա հնարել է, երևի, մարդկային ցեղի թշնամին, հենց հիմա ևեթ պատրաստ է գետինն անցնելու, և թե տանտիրուհին նույնպես պատրաստ է սրբապատկերներով երդվելու, որ նա օրիորդ Իլյինսկայայի մասին չի էլ լսել, այլ ուրիշ որևէ մի հարսնացու է հասկացել...»։

Եվ շատ խոսեց Անիսյան, այնպես որ Իլյա Իլյիչը ձեռքը թափ տվեց նրա վրա։ Զախարը հետևյալ օրը փորձեց խընդրել, որ թույլ տա հյուր գնալու հին տունը, Գորոխովայա փողոցը, բայց Օբլոմովը այնպես լվաց նրա գլուխը, նա հազիվ դուրս պրծավ նրա ձեռքից։

— Այնտեղ դեռ չգիտեն, ուրեմն հարկավոր է զրպար-

տությունը տարածել։ Տա՜նը նստիր,— ավելացրեց Օբլոմովն սպառնագին։

Անցավ չորեքշաբթին։ Հինգշաբթի օրը Օբլոմովը նորից քաղաքային փոստով նամակ ստացավ Օլգայից, որի մեջ հարցնում էր թե ի՞նչ է նշանակում, ի՞նչ է պատահել, որ նա չի եկել։ Օլգան գրում էր, որ ամբողջ երեկոն լաց է եղել և գիշերը գրեթե չի քնել։

— Լաց է լինում, չի՞ քնում հրեշտակը,— բացականչում էր Օբլոմովը։— Տե՜ր աստված, ինչո՞ւ է նա ինձ սիրում։ Ինչո՞ւ եմ ես նրան սիրում։ Ինչո՞ւ մենք հանդիպեցինք միմյանց։ Այս ամենը Անդրեյի արածն է. նա էր, որ մեզ երկուսիս էլ սեր պատվաստեց, ծաղկի նման։ Եվ ի՞նչ կյանք է սա, շարունակ հուզմո՞ւնք ու տագնա՞պ։ Ե՞րբ է լինելու խաղաղ երջանկություն, անդորր։

Նա բարձրաձայն հառաչանքներով պառկում էր, վեր կենում, նույնիսկ փողոց դուրս գալիս, և շարունակ փնտրում էր կյանքի նորմաները, այնպիսի գոյություն, որ և՛ բովանդակությամբ լցված լիներ, և՛ հոսեր հանդարտ, օրեցօր, կաթիլ կաթիլի ետևից, բնության համր հայեցողության և ընտանեկան, խաղաղ-բազմահոգ կյանքի անդորր, հազիվ սողացող երևույթների մեջ։ Նա չէր ցանկանում այդ կյանքը երևակայել որպես մի լայն, աղմկալից սուրացող գետ, եռուն ալիքներով, ինչպես երևակայում էր Շտոլցը։

— Դա հիվանդություն է,— ասում էր Օբլոմովը,— տենդ, ալանալ սահանքներով, թումբերը ճեղքելով, հեղեղումներով։

Նա Օլգային գրեց, որ Ամառային Այգում մի փոքր մրսել է, ստիպված էր տաք դեղ խմել և մի երկու օր տանը նստել, որ հիմա ամեն ինչ անցել է, և նա հույս ունի Օլգային կիրակի օրը տեսնելու։

Օլգան նրան պատասխան գրեց և գովեց, որ նա զգույշ է վարվել, խորհուրդ էր տալիս կիրակի օրն էլ տանը մնալ, եթե պետք լինի, և ավելացնում էր, թե ինքն ավելի լավ է մի ամբողջ շաբաթ տաղտուկ զգա, միայն թե նա իրեն պահպանի։

Պատասխանը բերեց Նիկիտան, հենց նա, որն, Անիսյայի ասելով, խոսք ու զրույցի գլխավոր հանցավորն էր։ Նա նոր գրքեր բերեց օրիորդից՝ հետևյալ հանձնարարությամբ,

կարդալ և տեսակցության ժամանակ ասել, թե տրե՞ արդյոք, որ Օլգան էլ կարդա գրանք։

Օլգան պատասխան էր պահանջում առողջության մասին։ Պատասխանը գրելով՝ Օբլոմովն ինքը տվեց այն Նիկիտային և ուղղակի նախասենյակից նրան քակ հանեց և աչքերով ճանապարհեց մինչև դռնակը, որպեսզի նրա մտքով չանցնի խոհանոց մտնել և այնտեղ կրկնել «զրպարտությունը», և որպեսզի Զախարը փողոց դուրս չգա նրան ուղեկցելու համար։

Նա ուրախացավ, որ Օլգան առաջարկում է պահպանել իրեն և կիրակի օրն էլ չգալ, և գրեց նրան, որ, իրոք, լիովին առողջանալու համար հարկավոր է մի քանի օր էլ տանը նստել։

Կիրակի օրը նա այցի գնաց տանտիրուհուն, սուրճ խմեց, տաք կարկանդակ կերավ և ճաշի ժամանակ Զախարին ուղարկեց քաղաք՝ պաղպաղակ և երեխաների համար քաղցրավենիք բերելու։

Զախարին դժվարությամբ անցկացրին գետը և ետ բերին։ Կամուրջներն արդեն հանել էին, և նեան սկսում էր սառչել։ Օբլոմովը չէր կարող մտածել շորեքշաբթի օրն էլ Օլգայի մոտ գնալու մասին։

Իհարկե, կարելի էր փակուղևթ մյուս կողմն անցնել, մի քանի օրով տեղավորվել Իվան Գերասիմովիչի մոտ և ամեն օր լինել, նույնիսկ ճաշել Օլգայի մոտ։

Պատրվակն օրինական էր. նեան բռնել էր նրան այն կողմում, չէր կարողացել գետն անցնել։

Օբլոմովի մեջ առաջինն այս միտքը շարժվեց, և նա արագությամբ ոտքերն իջեցրեց հատակին, բայց, մի քիչ մտածելուց հետո, հոգատար դեմքով ու հառաչանքով նորից դանդաղորեն պառկեց իր տեղում։

«Ո՜չ, թող խոսակցությունները դադարեն, թող Օլգայի հոունն այցելող կողմնակի անձերը մի քիչ մոռանան և նորից ամեն օր տեսնեն այնտեղ այն ժամանակ արդեն, երբ նրանք փեսացու և հարսնացու հայտարարված կլինեն»։

— Զանձրալի է սպասել, բայց ի՞նչ կարելի է անել,— ավելացրեց նա հառաչելով, ձեռնարկելով Օլգայի ուղարկած գրքերի ընթերցմանը։

Նա կարդաց մոտ տասնհինգ էջ։ Մաշան եկավ նրան կանչելու, հարցնելով՝ թե չի՞ ուզում արդյոք գնալ Նևան տեսնելու. բոլորը գնում են նայելու, թե ինչպես է գետը կանգ առնում։ Նա գնաց և վերադարձավ թեյի ժամանակ։

Այսպես անց էին կենում օրերը։ Իլյա Իլյիչը ձանձրանում էր, կարդում, շրջում էր փողոցում, իսկ տանը նայում էր տանտիրուհու սենյակը տանող դռանը, որպեսզի ձանձրույթից մի երկու խոսք ասի։ Նա մինչև իսկ մի անգամ տանտիրուհու համար մոտ երեք ֆունտ սուրճ աղաց այնպիսի եռանդով, որ ճակատը թրջվեց։

Նա այն է՝ ուզում էր տանտիրուհուն գիրք տալ կարդալու։ Սա, դանդաղորեն շարժելով շրթունքները, ինքն իր համար կարդաց վերնագիրը և գիրքը վերադարձրեց, ասելով, թե երբ կգան ծննդյան տոները, այն ժամանակ նա կվերցնի գիրքը և Վանյային կստիպի բարձրաձայն կարդալ. այն ժամանակ տատն էլ կլսի, իսկ հիմա ժամանակ չկա։

Մինչ այդ Նևայի վրա կամրջակներ էին գցել, և մի անգամ շան վազքը շղթայով և կատաղի հաչոցը ազդարարեցին Նիկիտայի երկրորդ գալուստը՝ տոմսակով, հարցով՝ առողջության մասին և գրքով։

Օբլոմովը վախենում էր, որ ինքն էլ ստիպված չլինի կամրջակներով գետի մյուս կողմն անցնելու, թաքնվեց Նիկիտայից՝ պատասխան գրելով, թե նա դեռ սիրտ չի անում տնից դուրս գալ և որ «դաժան ճակատագիրը դեռ մի քանի օր էլ նրան զրկում է աննման Օլգային տեսնելու երջանկությունից»։

Նա խստիվ պատվիրեց Զախարին՝ չհամարձակվել շատախոսելու Նիկիտայի հետ և կորից աչքերով ճանապարհեց նրան մինչև դռնակը, իսկ Անիսյային մատով սպառնաց, երբ նա՝ ուզում էր քիթը խոհանոցից դուրս հանել և ինչ-որ բան հարցնել Նիկիտային։

VII

Անցավ մի շաբաթ։ Օբլոմովը, առավոտները վեր կենալով, ամենից առաջ անհանգստությամբ հարցնում էր, թե արդյոք կամուրջները գցվա՞ծ են։

— Դեռ ոչ,— ասում էին նրան, և նա խաղաղ անց էր կացնում օրը, լսելով ճոճանակի չխչխկոցը, սրճաղացի ճրթճրթոցը և դեղձանիկների երգեցողությունը։

Ճտերն այլևս չէին ծվծվում, նրանք վաղուց հասակն առած հավեր էին դարձել և թաքնվում էին հավանոցներում։ Օլգայի ուղարկած գրքերը նա չէր կարողացել կարդալ-վերջացնել. ինչպես հարյուրհինգերորդ էջի վրա նա գիրքը ցած էր դրել կաղմը դեպի վեր, այնպես էլ այն մնացել էր դրված արդեն մի քանի օր։

Դրա փոխարեն նա ավելի հաճախ էր զբաղվում տանտիրուհու երեխաների հետ։ Վանյան այնքան բանիմաց տղա է, որ երեք անգամից միտը պահեց Եվրոպայի գլխավոր քաղաքները, և Իլյա Իլյիչը խոստացավ, հենց որ անցնի գետի մյուս ափը՝ նրան մի փոքրիկ գլոբուս նվիրել։ Իսկ Մաշենկան նրա համար երեք թաշկինակ շրջակտուր գործեց, ճիշտ է՝ վատ, բայց դրա փոխարեն նա այնքան ծիծաղելի էր աշխատում փոքրիկ ձեռիկներով և շարունակ վազում նրան մի շրջակտուր արած վերշոկը ցույց տալու։

Տանտիրուհու հետ նա անընդհատ խոսում էր, հենց որ կիսաբաց դռնից նկատում էր նրա արմունկները։ Նա արդեն արմունկների շարժումից սովորել էր իմանալ, թե ինչ է անում տանտիրուհին, մաղում է, աղում է, թե արդուկում։

Մինչև անգամ փորձեց խոսել տատի հետ, բայց սա ոչ մի կերպ չէր կարողանում վերջացնել խոսակցությունը. կանգ էր առնում բառի կիսում, բռունցքը հենում էր պատին, կուչ գալիս և սկսում էր հազալ, կարծես մի դժվար աշխատանք էր կատարում, հետո ախ էր քաշում, դրանով էլ վերջանում էր ամբողջ խոսակցությունը։

Միայն տանտիրուհու եղբորը նա բոլորովին չէր տեսնում կամ տեսնում էր, թե ինչպես էր մեծ ծրարը երևում լուսամուտների մոտ, իսկ նրա ձայնը տան մեջ կարծես բոլորովին էլ չէր լսվում։ Մինչև իսկ երբ Օբլոմովը պատահմամբ մտավ այն սենյակը, որտեղ նրանք սեղմ շրջան կազմած ճաշում էին, եղբայրը մատներով շտապով սրբեց շրթունքները ու անհետացավ իր սենյակը։

Մի անգամ, հենց որ Օբլոմովը անհոգ զարթնեց առա-

Վոտյան և սկսեց սուրճ խմել, հանկարծ Զախարը հաղորդեց, թե կամուրջները գցված են։ Օբլոմովի սիրտը խփեց։

— Իսկ վաղը կիրակի է,— ասաց նա,— պետք է գնալ Օլգայի մոտ, ամբողջ օրն արիությամբ տանել կողմնակի մարդկանց նշանակալից ու հետաքրքիր հայացքները, հետո հայտարարել նրան, թե երբ է մտադիր խոսելու մորաքրոջ հետ։ Իսկ ինքը դեռևս շարունակում է գտնվել առաջ շարժվելու անհնարինության նույն կետի վրա։

Նրան կենդանի կերպով պատկերացավ, թե ինչպես են իրեն փեսացու հայտարարում, ինչպես հետևյալ օրը, երրորդ օրը զանազան տիկիններ ու տղամարդիկ կգան, ինչպես ինքը հետաքրքրության առարկա կդառնա, ինչպես պաշտոնական ճաշ կտան, նրա կենացը կխմեն։ Հետո... հետո, փեսացուի իրավունքով ու պարտականությամբ՝ նա հարսնացուին նվեր կբերի...

— Նվե՞ր,— սոսկումով ասաց նա իրեն և հոհոաց դառն ծիծաղով։

Նվե՞ր։ Իսկ նրա գրպանում երկո՞ւ հարյուր ռուբլի կա։ Եթե փող ուղարկեն էլ, ապա կուղարկեն ծննդյան տոներին, գուցե և ավելի ուշ, երբ վաճառեն հացը, իսկ թե երբ կվաճառեն, որքան հաց կա այնտեղ և ինչպիսի խոշոր գումար կստացվի դրանից, այս բոլորը պետք է բացատրի նամակը, իսկ նամակ չկա։ Հապա ինչպե՞ս վարվել։ Մնա՞ս բարով երկշաբաթյա հանգստությունն։

Այս հոգսերի միջև գծագրվում էր Օլգայի հիանալի դեմքը, նրա թավ, խոսող հոնքերը և այդ խելոք գորշ կապտագույն աչքերը, և ամբողջ գլուխը, և հյուսը, որ նա մի տեսակ ցած էր թողնում ծոծրակի վրա, այնպես որ այն շարունակում ու լրացնում էր նրա ողջ կերպարանքի ազնվաշուքությունը՝ սկսած գլխից մինչև ուսերն ու իրանը։

Բայց հենց որ Օբլոմովը սիրո դող էր զգում, իսկույնևեթ քարի նման նրա գլխին էր ընկնում մի ծանր միտք. ինչպե՞ս վարվել, ի՞նչ անել, ինչպե՞ս սկսել հարսանիքի հարցը, որտեղի՞ց փող վերցնել, հետո ինչո՞վ ապրել...

«Էլի կսպասեմ. գուցե նամակը գա վաղը կամ մյուս օրը»։ Եվ նա սկսում էր հաշվել, թե երբ պետք է գյուղ հասներ նրա նամակը, որքան ժամանակ կարող է ուշացնել հարևանը և

որքան ժամանակ պետք կլինի պատասխան ուղարկելու համար։

«Այս երեք, ամենաշատը չորս օրվա մեջ պետք է գադեռ կսպասեմ ու Օլգայի մոտ չեմ գնա», վճռեց նա, առավել ևս, որ Օլգան հազիվ թե իմանա, որ կամուրջները գցված են...

— Կա՞տյա, կամուրջները գցե՞լ են,— նույն առավոտյան արթնանալով հարցրեց Օլգան իր աղախնին։

Եվ այդ հարցը կրկնում էր ամեն օր։ Օբլոմովը չէր ենթադրում դա։

— Չգիտեմ, օրիորդ։ դեռ չեմ տեսել ո՛չ կառապանին, ոչ էլ դռնապանին, իսկ Նիկիտան չգիտե։

— Դու երբեք չգիտես՝ ի՞նչ է հարկավոր ինձ,— տհաճությամբ ասաց Օլգան՝ անկողնում պառկած և զննելով վզի փոքրիկ շղթան։

— Ես իսկույն կիմանամ, օրիորդ։ Ես սիրտ չէի անում հեռանալ, կարծում էի, թե դուք կզարթնեք, թե չէ վաղուց վազած կլինեի։— Եվ Կատյան անհետացավ սենյակից։

Իսկ Օլգան դուրս քաշեց սեղանի արկղիկը և հանեց Օբլոմովի վերջին տոմսակը։ «Հիվանդ է, խեղճը», հոգացողությամբ մտածում էր նա, «մենակ է այնտեղ, ձանձրանում է... Ա՜խ, աստված իմ, շո՞ւտ կլինի արդյոք...»։

Նա դեռ միտքը չէր վերջացրել, իսկ կարմրատակած Կատյան ներս վազեց սենյակ։

— Գցված են, գցված են ա՜յս գիշեր,— հրճվանքով ասաց նա և անկողնից արագ դուրս թռչող օրիորդին ընդունեց իր ձեռքերի մեջ, բլուզը գցեց նրա վրա և մոտ քաշեց մանրիկ մաշիկները։ Օլգան արագ բաց արեց արկղը, այնտեղից մի բան հանեց և Կատյայի ձեռքը դրեց, իսկ Կատյան համբուրեց նրա ձեռքը։ Այդ բոլորը՝ թռիչքն անկողնից, փողը Կատյայի ձեռքը դնելը և օրիորդի ձեռքը համբուրելը, տեղի ունեցավ միևնույն րոպեին։ «Ա՜խ, վաղը կիրակի է, որքա՜ն տեղին է դա։ Նա կգա՜»,— մտածեց Օլգան և արագ հագնվեց, շտապ թեյ խմեց ու մորաքրոջ հետ խանութ գնաց։

— Ma tante, վաղը պատարագին Սմոլնի գնանք,— խնդրում էր նա։

Մորաքույրը մի փոքր կկոցեց աչքերը, մտածեց, հետո ասաց.

— Թերևս. բայց որքա՞ն հեռու է, ma chére. այդ ինչո՞ւ ուզեցիր այս ձմեռով։

Իսկ նա ուզեց այն պատճառով միայն, որ Օբլոմովն էր ցույց տվել նրան այդ եկեղեցին գետից, և Օլգան ցանկացավ այնտեղ աղոթել... Օբլոմովի համար, որ նա առողջ լինի, որ սիրի իրեն, որ իրենով երջանիկ լինի, որ... այդ անվճռականությունը, անորոշությունը շուտով վերջանա... Խե՜ղճ Օլգա։

Եկավ նաև կիրակին։ Օլգան կարողացավ մի կերպ վարպետորեն ամբողջ ճաշը սարքել Օբլոմովի ճաշակով։

Նա հագավ սպիտակ զգեստ, ժանյակների տակ թաքցրեց նրա նվիրած ապարանջանը, սանրվեց այնպես, ինչպես նա էր սիրում. նախօրեին պատվիրել էր լարել դաշնամուրը և առավոտյան փորձեց երգել Casta diva-ն։ Եվ ձայնն այնպես հնչեղ էր, ինչպես չէր եղել ամառանոցից հետո։ Եվ սկսեց սպասել։

Բարոնը նրան գտավ այդ սպասումի մեջ և ասաց, որ նա նորից սիրունացել է, ինչպես ամառն էր, բայց որ մի քիչ նիհարել է։

— Գյուղական օդի բացակայությունը և կենսաձևի մեջ առաջացած փոքրիկ անկարգությունը նկատելի կերպով ազդել է ձեզ վրա,— ասաց նա։— Ձեզ, սիրելի՜ Օլգա Սերգեևնա, հարկավոր է դաշտերի օդը և գյուղ։

Նա մի քանի անգամ համբուրեց Օլգայի ձեռքը, այնպես որ ներկած բեղերը նույնիսկ փոքրիկ բիծ թողեցին մատների վրա։

— Այո՜, գյուղ,— պատասխանեց նա մտախոհ, բայց ոչ թե բարոնին, այլ հենց այնպես մեկին, օդի մեջ։

— A propos գյուղի մասին,— ավելացրեց բարոնը,— հետևյալ ամսին ձեր գործը կվերջանա և ապրիլին դուք կարող եք գնալ ձեր կալվածքը։ Այն մեծ չէ, բայց տեղը հրաշալի՜ է։ Դուք գոհ կլինեք։ Ի՜նչ տուն է։ Պարտեզը։ Այնտեղ մի տաղավար կա սարի վրա. դուք կսիրեք այն։ Տեսարանը դեպի գետը... դուք չեք հիշում, դուք հինգ տարեկան էիք, երբ հայրիկը դուրս եկավ այնտեղից և ձեզ տարավ։

— Ա՜խ, ի՜նչ ուրախ կլինեմ ես, —ասաց Օլգան և մտածմունքի մեջ ընկավ։

«Հիմա արդեն վճռված է», մտածում էր նա, «մենք կգնանք այնտեղ, բայց նա այդ մասին կիմանա ոչ շուտ, քան...»

— Հետևյալ ամսի՞ն, բարո՜ն,— աշխույժ հարցրեց Օլգան։— Ճի՞շտ է դա։

— Ինչպես այն, որ դուք հիանալի եք առհասարակ, իսկ այսօր՝ առանձնապես,— ասաց բարոնը և գնաց մորաքրոջ մոտ։

Օլգան մնաց իր տեղում և սկսեց երազել մոտակա երջանկության մասին, բայց նա վճռեց չասել Օբլոմովին այդ նորության մասին, իր ապագա պլանների մասին։

Նա ուզում էր մինչև վերջ հետամտել, թե ինչպես Օբլոմովի ծույլ հոգու մեջ սերը հեղաշրջում կառաջացնի, ինչպես վերջնականապես նրա վրայից կընկնի ճնշումը, ինչպես նա չի դիմանա մոտակա երջանկությանը, բարենպաստ պատասխան կստանա գյուղից և պայծառացած դեմքով կվազի, կսլանա և այն կդնի Օլգայի ոտքերի առաջ, ինչպես նրանք երկուսով, իրար առաջը կտրելով՝ կվազեն մորաքրոջ մոտ, և հետո...

Հետո Օլգան հանկարծ կասի նրան, որ ինքն էլ գյուղ ունի, պարտեզ, տաղավար, տեսարան դեպի գետը և տունը, որ բոլորովին պատրաստ է բնակության համար, թե ինչպես հարկավոր է նախ այնտեղ գնալ, հետո Օբլոմովկա։

«Ո՜չ, բարենպաստ պատասխան չեմ ուզում», մտածեց նա, «նա կհպարտանա և նույնիսկ ուրախություն չի զգա, որ ես ունեմ իմ կալվածքը, տունը, պարտեզը... Ո՜չ, ավելի լավ է, թող նա գա տրամադրությունը փչացրած անհաճո նամակի պատճառով, որ գյուղում անկարգություն է, որ անհրաժեշտ է՝ ինքը գյուղ գնա։ Նա գլխապատառ կսլանա Օբլոմովկա, արագ-արագ բոլոր հարկավոր կարգադրությունները կանի։ Շատ բան կմոռանա, չի կարողանա, ամեն ինչ մի կերպ կանի և կսլանա ետ, ու հանկարծ կիմանա, որ հարկ չկար սլսնալու, որ կա տուն, պարտեզ և տաղավար տեսարանով, որ առանց նրա Օբլոմովկայի էլ ապրելու տեղ կա... Այո՜, այո՜, նա ոչ մի դեպքում չի ասի Օբլոմովին, մինչև վերջ կդիմանա,

թող նա գնա այնտեղ, թող մի քիչ շարժվի, աշխուժանա. ամեն ինչ Օլգայի համար, հանուն ապագա երջանկության՝ Կամ, ո՛չ. ինչո՞ւ ուղարկել նրան գյուղ, բաժանվել նրանից։ Ո՛չ, երբ նա ճանապարհի զգեստով կգա իր մոտ, սփրթնած, տրխուր, մի ամսով հրաժեշտ տալու համար, նա հանկարծ կասի Օբլոմովին, որ մինչև ամառ հարկավոր չէ գնալ. այն ժամանակ միասին կգնան...»

Այդպես էր երազում Օլգան. նա վազեց բարոնի մոտ և վարպետությամբ նախազգուշացրեց նրան, որ նա մինչև ժամանակը հասնելը ոչ ոքի, բացարձակապես ոչ ոքի բան չասի այդ նորության մասին։ Ոչ ոքի ասելով՝ նա հասկանում էր միմիայն Օբլոմովին։

— Այո՛, այո՛, ի՞նչ կարիք կա,— հաստատեց բարոնը։— գուցե միայն մայր Օբլոմովին, եթե խոսք բացվի...

Օլգան պահեց իրեն և անտարբեր կերպով ասաց.

— Ո՛չ, նրան էլ մի՛ ասեք։

— Դուք գիտեք, որ ձեր կամքն ինձ համար օրենք է...— սիրալիր կերպով ավելացրեց բարոնը։

Օլգան առանց խորամանկության չէր։ Եթե նա շատ էր ցանկանում վկաների ներկայությամբ նայել Օբլոմովին, նախ փոփոխակի կնայեր ուրիշ երեք հոգու, հետո արդեն նրան։

Որքա՞ն կշռադատություններ, բոլորն Օբլոմովի համար։ Քա՞նի անգամ երկու բիծ վառվեց նրա այտերին։ Քանի՞ անգամ նա շոշափեց մեկ այս, մեկ մյուս ստեղնը, որպեսզի իմանա, թե արդյոք չափազանց բարձր չի՞ լարված դաշնամուրը, կամ նոտաները մի տեղից մյուսը տեղափոխեց։ Եվ հանկարծ՝ նա չկա՞։ Ի՞նչ է նշանակում սա։

Ժամը երեքն է, չորսը՝ չկա՞, ու չկա՞։ Զորսակեսին նրա գեղեցկությունը, ծաղկումը սկսեցին անհետանալ. նա նկատելի կերպով սկսեց թառամել և սեղան նստեց դժգունած։

Իսկ մյուսները ոչինչ. ոչ ոք էլ չի նկատում. բոլորն ուտում են այն կերակուրները, որոնք պատրաստվել էին Օբլոմովի համար, զրուցում են այնպես ուրախ, անտարբեր։

Ճաշից հետո երեկոյան՝ նա չկա ու չկա։ Մինչև ժամը տասը Օլգան հուզվում էր հույսով, երկյուղով. ժամը տասին գնաց իր սենյակը։

Սկզբում նա իր արտում կուտակված ամբողջ մաղձը մատ-

վի թափեց նրա գլխին. չկար նրա լեքսիկոնում եղած ոչ մի կծու սարկազմ, թունդ խոսք, որոնցով նա մտավոր կերպով չպատժեր նրան։

Հետո հանկարծ նրա ամբողջ օրգանիզմը կարծես լցվեց կրակով, ապա սառույցով։

«Նա հիվանդ է. նա մենակ է. նա չի կարողանում մինչև իսկ գրել...»— փայլատակեց նրա գլխում։

Այդ համոզմունքը լիովին տիրապետեց նրան և թույլ չտվեց ամբողջ գիշերը քնելու։ Նա տենդորեն ննջեց երկու ժամ, գիշերը զառանցում էր, բայց հետո առավոտյան վեր կացավ թեպետ գունատ, բայց այնպես հանգիստ, վճռական։

Ծրկուշաբթի առավոտյան տանտիրուհին ներս նայեց Օբլոմովի առանձնասենյակը և ասաց.

— Ինչ-որ մի աղջիկ ձեզ է հարցնում։

— Ի՞նձ։ Չի՛ կարող պատահել,— պատասխանեց Օբլոմովը։

— Ո՞ւր է նա։

— Ա՛յ, այստեղ. նա սխալվել, մեր մուտքն է եկել։ Ներս թողնե՞մ։

Օբլոմովը դեռ չգիտեր, թե ինչ վճռեր, որ նրա առաջ կանգնեց Կատյան։ Տանտիրուհին հեռացավ։

— Կա՞տյա,— զարմանքով ասաց Օբլոմովը։— Այդ ինչպե՞ս։ Ինչո՞ւ դու։

— Օրիորդն այստեղ է,— շշնջալով պատասխանեց Կատյան,— պատվիրեց հարցնել...

Օբլոմովի դեմքը փոխվեց։

— Օլգա Սերգեևնա՞ն— շշնջաց նա սարսափած։— Ճիշտ չէ, Կատյա, դու կատա՞կ արիր։ Ինձ մի՛ տանջիր։

— Աստված վկա, ճիշտ է. վարձու կառքով, թեյի խանութում կանգ է առել, սպասում է, ուզում է այստեղ գալ։ Ինձ ուղարկեց ասելու, որ Զախարին որևէ տեղ ուղարկեք։ Նա կես ժամից հետո կգա։

— Ավելի լավ է, ես ինքս գնամ։ Ինչպե՞ս կարելի է, որ նա այստեղ գա— ասաց Օբլոմովը։

— Ձեզ հարցնի. նա ուր որ է ներս կմտնի. նա կարծում է, թե դուք հիվանդ եք։ Մնաք բարով, ես վազեմ-գնամ. նա մենակ է, ինձ է սպասում...

Եվ գնաց։

Օբլոմովն արտասովոր արագությամբ կապեց փողկապը, հագավ ժիլետը, կոշիկները և ձայն տվեց Զախարին։

— Զախա՜ր, դու նորերս թույլտվություն էիր ուզում ինձնից գետի՛ այն կողմը, Գորոխովայա փողոցը հյուր գնալու, դե հիմա գնա՛— տենդագին հուզմունքով ասում էր Օբլոմովը։

— Չեմ գնա,— վճռականորեն պատասխանեց Զախարը։

— Ո՛չ, գնա՛— թախանձագին ասում էր Օբլոմովը։

— Ի՞նչ հյուր լի օրը։ Չե՛մ գնա,— համառորեն ասաց Զախարը։

— Դե գնա՛, ուրախացի՛ր, համառություն մի՛ անի, երբ բարինը շնորհ է անում քեզ, թույլ է տալիս գնալու... Գնա՛ բարեկամներիդ մոտ։

— Կորչեն այդ բարեկամնե՛րը։

— Մի՞թե չես ուզում տեսնվել նրանց հետ։

— Այնպիսի սրիկաներ են բոլորը, որ երբեմն չես էլ ուզում երեսները տեսնել։

— Դե գնա՛, գնա՛,— համառորեն կրկնեց Օբլոմովը, և արյունը գլխին խփեց։

— Ո՛չ, այսօր ամբողջ օրը տանը կմնամ, իսկ ա՛յ կիրակի օրը գուցե գնամ,— անտարբերությամբ բացասական պատասխան էր տալիս Զախարը։

— Հենց ա՛յժմ, իսկո՛ւյն,— հուզված շտապեցնում էր նրան Օբլոմովը։— Դու պետք է...

— Ախր ինչի համար անտեղի չարչարվեմ— խուսափողական պատասխան էր տալիս Զախարը։

— Դե, գնա մի երկու ժամ՝ ման արի. տեսնում ես՝ ինչ քնկոտ ռեխ ունես, մի քիչ զվարթացիր։

— Ռեխս ռեխ է էլի՛. սովորական, ինչպես մեզ նման մարդիկ ունենում են,— ասաց Զախարը, ալարկոտ դուրս նայելով լուսամուտից։

«Ա՜խ, տե՛ր աստված, այս բոպեիս կգա»,— մտածում էր Օբլոմովը, սրբելով ճակատի քրտինքը։

— Դե, խնդրում եմ, գնա՛, զբոսնի՛ր, ասում եմ քեզ։ Ա՛ռ քեզ տասը կոպեկանոց. գարեջուր կխմես բարեկամիդ հետ։

— Ավելի լավ է՝ ես մուտքի մոտ մնամ, թե չէ այս սառ-

նամանիքին ո՞ւր գնամ։ Դարբասի մոտ կնստեմ, լա՛վ, այդ կարող եմ...

— Ո՛չ, դարբասից հեռու,— աշխուժորեն ասաց Օբլոմովը,— ուրիշ փողոց գնա, ա՛յ այնտեղ, դեպի ձախ, պարտեզի կողմը... գետի այն կողմը։

«Այս ի՞նչ զարմանք բան է»— մտածում էր Զախարը։ «Դուրս է անում, թե ման գալու գնա. այսպիսի բան չի պատահել»։

— Ավելի լավ է՝ ես կիրակի օրը գնամ, Իլյա Իլյիչ...

— Պիտի գնա՞ս, թե չէ,— ատամները սեղմելով ասաց Օբլոմովը՝ վրա քշելով Զախարին։

Զախարն անհետացավ, իսկ Օբլոմովը կանչեց Անիսյային։

— Շուկա գնա,— ասաց նա սրան, այնտեղ գնիր ճաշի համար...

— Ճաշի համար ամեն ինչ առնված է, շուտով պատրաստ կլինի...— սկսեց քիթը։

— Լռի՛ր և լսի՛ր,— բղավեց Օբլոմովը, այնպես որ Անիսյան վախեցավ։

— Գնի՛ր... թեկուզ ծնեբեկ...— վերջացրեց նա՝ միտք անելով և չիմանալով, թե ինչ բանի ուղարկի նրան։

— Հիմա ի՞նչ ծնեբեկ, պարո՛ն։ Համ էլ՝ այստեղ չես գտնի...

— Մա՜րշ,— բղավեց Օբլոմովը, և Անիսյան դուրս վազեց։— Վազի՛ր, ինչքան ուժ ունես,— բղավում էր Օբլոմովը նրա ետևից,— ու ետ մի՛ նայիր, իսկ այնտեղից որքան կարելի է, դանդաղ արի, երկու ժամից առաջ չհամարձակվես քիթդ ցույց տալ։

— Այս ի՞նչ տարօրինակ բան է,— ասաց Զախարը Անիսյային՝ հանդիպելով նրան դարբասի այն կողմը։— Վանդեց, որ գնամ ման գալու, տասը կոպեկ տվեց։ Ո՞ւր գնամ ման գալու։

— Աղայական գործ է,— նկատեց շուտ գլխի ընկնող Անիսյան,— դու գնա կոմսի կառապան Արտեմի մոտ, նրան թեյ խմացրու. նա միշտ խմացնում է քեզ, իսկ ես շուկա կվազեմ։

— Արտեմի, սա ի՞նչ տարօրինակ բան է,— ասաց Զա-

խարը նրան էլ։— Բարինը վոնդեց ման գալու և գարեջրի համար փող տվեց...

— Չլինի՞ թե մտածել է ինքն էլ լակել,— սրամտորեն գուշակեց Արտեմին,— քեզ էլ է տվել, որ չնախանձես։ Գնա՞նք։

Նա աչքերով նշան արեց Զախարին և գլխով ինչ-որ փողոց ցույց տվեց։

— Գնա՞նք,— կրկնեց Զախարը և նույնպես գլխով նույն փողոցը ցույց տվեց։

— Ա՛յ քեզ տարօրինակ բան. վոնդե՞ց ման գալու,— քըմծիծաղ տալով ու խոպոտ ձայնով ասում էր նա ինքն իրեն։

Նրանք գնացին, իսկ Անիսյան վազեց ու հասնելով մինչև փողոցի առաջին պատահող անկյունը՝ նստեց ցանկապատի ետև առվի մեջ և սպասում էր, թե ի՞նչ է լինելու։

Օբլոմովն ականջ էր դնում և սպասում էր. ահա մեկը բըռնեց գռնակի օղակը և նույն ակնթարթին լսվեց շան կատաղի հաչոցն ու սկսվեց նրա վազվզոցը շղթայի վրայով։

— Անիծվա՛ծ շուն— ատամները կրճտացրեց Օբլոմովը, վերցրեց գլխարկը և նետվեց դեպի դռնակը, բաց արեց այն և համարյա գրկած հասցրեց Օլգային մինչև մուտքը։

Օլգան մենակ էր։ Կատյան սպասում էր նրան կառքում դարբասից ոչ հեռու։

— Դու առո՞ղջ ես։ Պառկած չե՞ս։ Ի՞նչ է պատահել քեզ,— թուլիկ կերպով հարցրեց նա՝ չհանելով ո՛չ սալոպը, ո՛չ գլխարկը և զննելով նրան ոտքից գլուխ, երբ նրանք մտան առանձնասենյակ։

— Հիմա ես ինձ ավելի լավ եմ զգում, կոկորդիս ցավն անցել է... համարյա բոլորովին,— ասաց նա, ձեռքը տանելով դեպի կոկորդը ու թեթև հազալով։

— Ինչո՞ւ երեկ չեկար,— հարցրեց Օլգան՝ նայելով նրան այնպիսի հետախույզ հայացքով, որ նա ոչ մի խոսք չկարողացավ ասել։

— Ինչպե՞ս ես սիրտ արել, Օ՛լգա, այսպես վարվելու,— խոսեց Օբլոմովը սարսափով։— Դու գիտե՞ս արդյոք, թե ինչ ես անում...

— Դրա մասին հետո,— ընդհատեց Օլգան անհամբերու-

թյամբ։— Ես հարցնում եմ քեզ. ի՞նչ է նշանակում, որ դու չես երևում։

Օբլոմովը լուռ էր։

— Գարեհատ հո չի՞ դուրս եկել աչքիդ,— հարցրեց Օլգան։

Օբլոմովը լուռ էր։

— Դու հիվանդ չես եղել. քո կոկորդը չի ցավացել,— ասաց Օլգան՝ հոնքերը կիտելով։

— Չեմ եղել,— պատասխանեց Օբլոմովը աշակերտի ձայնով։

— Խաբե՞լ ես ինձ։— Օլգան զարմանքով նրան էր նայում։— Ինչո՞ւ։

— Ես ամեն բան կբացատրեմ քեզ, Օ՛լգա,— արտասանում էր նա,— մի կարևոր պատճառ ինձ հարկադրում էր երկու շաբաթ չլինել... ես վախենում էի...

— Ինչի՞ց,— հարցրեց Օլգան նստելով և հանելով գլխարկն ու սալոպը։

Օբլոմովը վերցրեց թե՛ մեկը և թե՛ մյուսը ու դրեց բազմոցի վրա։

— Խոսակցություններից, բամբասանքներից...

— Իսկ չէի՞ր վախենում, որ ես գիշերը չեմ քնել, ասված գիտե, թե ինչ եմ մտածել և քիչ էր մնում հիվանդանայի,— ասաց նա՝ փորձող հայացք ուղղելով նրա վրա։

— Դու չգիտես, Օլգա, թե ինչ է կատարվում այստեղ,— ասում էր Օբլոմովը, ցույց տալով սիրտն ու գլուխը,— ամբողջովին տագնապի մեջ եմ, կարծես կրակի մեջ լինեմ։ Դու չգիտե՞ս՝ ինչ է պատահել։

— Էլի ի՞նչ է պատահել,— հարցրեց նա սառն։

— Որքա՞ն հեռուն է տարածվել լուրը քո և իմ մասին։ Ես չէի ուզում քեզ անհանգիստ անել և վախենում էի աչքիդ երևալ։

Նա պատմեց Օլգային այն ամենը, ինչ լսել էր Զախարից, Անիսյայից, մտաբերեց Ֆրանտների խոսակցությունը և եզրափակեց, ասելով, որ այն ժամանակից սկսած ինքը չի քնում, որ յուրաքանչյուր հայացքի մեջ հարց է տեսնում, կամ կշտամբանք, կամ նենգամիտ ակնարկներ նրանց տեսակցությունների վերաբերմամբ։

— Բայց չէ՞ որ մենք որոշեցինք այս շաբաթ հայտնել ma tante-ին,— առարկեց Օլգան, այն ժամանակ այդ ասեկոսեները պետք է լռեն...

— Այո՛, բայց ես չէի ուզում մորաքրոջդ հետ խոսել մինչև այս շաբաթ, մինչև նամակ ստանալը։ Ես գիտեմ, նա ոչ թե իմ սիրո մասին կհարցնի, այլ կալվածքի մասին, կմտնի մանրամասնությունների մեջ, իսկ ես այդ բոլորը չեմ կարող բացատրել, մինչև որ պատասխան չստանամ հավատարմատարից։

Օլգան հոգոց հանեց։

— Եթե ես քեզ չճանաչեի,— ասաց Օլգան մտախոհ,— ստված գիտե, թե ինչ կարող էի մտածել։ Վախենո՞ւմ էիր ինձ անհանգստացնել լակեյների ասեկոսեներով, իսկ չէ՞իր վախենում ինձ տագնապի մեջ գցելուց։ Ես դադարում եմ քեզ հասկանալ։

— Ես կարծում էի, թե նրանց շաղակրատանքը կվրդովի քեզ։ Կատյան, Մարֆան, Սեմյոնը և այդ հիմար Նիկիտան ստված գիտե, թե ինչեր են խոսում...

— Ես վաղուց գիտեմ, թե ի՞նչ են խոսում նրանք,— ասաց Օլգան անտարբերությամբ։

— Ինչպե՞ս թե գիտես։

— Այնպես։ Կատյան ու դայակը վաղուց են տեղեկացրել ինձ այդ մասին, հարցրել քո մասին, ինձ շնորհավորել...

— Մի՞թե շնորհավորել են,— սարսափով հարցրեց նա։— Իսկ դու՞։

— Ես ոչինչ, շնորհակալություն հայտնեցի. դայակին թաշկինակ ընծայեցի, իսկ նա խոստացավ ոտքով ս. Սարգիս ուխտ գնալ։ Կատյայի համար՝ հանձն առա հոգալ, որ նա ամուսնանա հրուշակագործի հետ. նա իր ռոմանն ունի...

Օբլոմովը նայում էր նրան վախեցած ու զարմացած աչքերով։

— Դու ամեն օր լինում ես մեզ մոտ. շատ բնական է, որ սպասավորները խոսեն այդ մասին,— ավելացրեց Օլգան,— առաջինը նրանք են սկսում խոսել։ Նույնն եղավ նաև Սոնեչկայի վերաբերմամբ. ինչո՞ւ է այդ բանը քեզ այդպես վախեցնում։

— Այ թե որտեղի՞ց են, ուրեմն, այդ լուրերը,— ասաց նա երկարաձգելով։

— Մի՞թե դրանք անհիմն են։ Չէ՞ որ դա ճշմարիտ է։

— Ճշմարի՞տ է,— ո՛չ հարցական, ո՛չ բացասական ձևով կրկնեց Օբլոմովը։— Այո՛,— ավելացրեց նա հետո,— իրոք, դու իրավացի ես. միայն թե ես չեմ ուզում, որ նրանք իմանան մեր տեսակցությունների մասին, դրա համար էլ վախենում եմ...

— Դու վախենում ես, դողում ես, ինչպես մի երեխա... Չե՞մ հասկանում։ Մի՞թե դու ինձ գողանում ես։

Օբլոմովն իրեն անհարմար էր զգում. Օլգան ուշադրությամբ նրան էր նայում։

— Լսի՛ր,— ասաց Օլգան,— այստեղ ինչ-որ մի սուտ կա, ինչ-որ մի բան այնպես չէ... Մոտ արի և ասա այն ամենը, ինչ որ կիտված է քո հոգում։ Դու կարող էիր չգալ մի օր, երկու օր, թերևս, մի շաբաթ, զգուշությունից, բայց այնուամենայնիվ, դու ինձ կնախազգուշացնեիր, կգրեիր։ Դու գիտես, որ ես արդեն երեխա չեմ և ինձ այնքան էլ հեշտ չէ դատարկ բաներով շփոթեցնելը։ Ի՞նչ է նշանակում այս բոլորը։

Օբլոմովը մտքերի մեջ ընկավ, հետո համբուրեց նրա ձեռքը ու հառաչեց։

— Ա՛յ ինչ, Օ՛լգա, ես կարծում եմ,— ասաց Օբլոմովը,— այս ամբողջ ընթացքում իմ երևակայությունը այնպես է վախեցած սարսափներից քեզ համար, միտքս այնպես հոշոտվել է հոգսերով, սիրտս ցավել է մեկ իրականացող, մեկ անհետացող հույսերից, սպասումներից, որ իմ ամբողջ օրգանիզմը ցնցված է։ Այն թմրում է, գոնե ժամանակավոր հանգստություն է պահանջում...

— Իսկ ինչո՞ւ իմ օրգանիզմը չի թմրում, և ես հանգստություն եմ փնտրում միմիայն քո կողքին։

— Քո ուժերը երիտասարդ են, ամուր և դու սիրում ես պարզ, հանգիստ, իսկ ես... բայց դու գիտե՞ս, թե ինչպես եմ ես քեզ սիրում,— ասաց նա՝ իջնելով հատակին ու համբուրելով նրա ձեռքը։

— Դեռ ոչ, քիչ գիտեմ։ Դու այնքան տարօրինակ ես, որ ես ինձ կորցնում եմ դատողություններիս մեջ. իմ խելքն ու

հույսը մարում են... շուտով մենք կդադարենք միմյանց հասկանալուց. այն ժամանակ վա՜տ կլինի։

Նրանք լռեցին։

— Ի՞նչ էիր անում այս օրերին,— հարցրեց Օլգան, առաջին անգամ դիտելով սենյակը։— Քեզ մոտ լավ չէ. ի՞նչ ցածլիկ սենյակներ են։ Լուսամուտները փոքր են, պաստառները հին... էլ ի՞նչ սենյակներ ունես։

Նա առաջ նետվեց՝ Օլգային բնակարանը ցույց տալու, որպեսզի կոծկի այն հարցը, թե ի՞նչ էր անում այս օրերին։ Հետո Օլգան նստեց բազմոցին, Օբլոմովը կրկին տեղավորվեց գորգի վրա, նրա ոտքերի մոտ։

— Հապա ի՞նչ էիր անում այս երկու շաբաթը— հարցուփորձ էր անում Օլգան։

— Կարդում էի, գրում էի, մտածում էի քո մասին։

— Գրքերս կարդացի՞ր։ Ո՞ւր են։ Ես կվերցնեմ։

Նա սեղանից վերցրեց գիրքը և նայեց բաց արված էջին. էջը փոշոտվել էր։

— Դու չե՞ս կարդացել,— ասաց։

— Ո՛չ,— պատասխանեց Օբլոմովը։

Օլգան նայեց տրորված, ասեղնագործ բարձին, անկարգությանը, փոշոտված լուսամուտներին, գրասեղանին, թերթեց մի քանի փոշոտված թղթեր, գրիչը շարժեց չոր թանաքամանի մեջ և զարմանքով նայեց նրան։

— Հապա ի՞նչ էիր անում,— կրկնեց Օլգան։— Դու չէի՞ր գրում և չէի՞ր կարդում։

— Ժամանակ քիչ կար,— սկսեց նա կմկմալով,— առավոտյան վեր ես կենում, մաքրում են սենյակները, խանգարում են. հետո խոսակցություններ են սկսվում ճաշի մասին, տանտիրուհու երեխաներն են գալիս, խնդրում են ստուգել խնդիրը, և գալիս է ճաշը։ Ճաշից հետո... էլ ե՞րբ կարդաս։

— Դու ճաշից հետո քնում էիր,— ասաց Օլգան այնքան հաստատ, որ բոպեական տատանումից հետո Օբլոմովը ցածր ձայնով պատասխանեց.

— Քնում էի...

— Իսկ ինչո՞ւ։

— Որպեսզի չնկատեմ ժամանակը. դու ինձ հետ չէիր, Օ՛լգա, իսկ կյանքը ձանձրալի, անտանելի է առանց քեզ...

Նա կանգ առավ, իսկ Օլգան խստությամբ նայում էր նրան։

— Իլյա՛,— լրջորեն սկսեց խոսել Օլգան։— Հիշո՞ւմ ես զբոսայգում, երբ դու ասացիր, թե քո մեջ նորից վառվում է կյանքը, հավատացնում էիր, որ ես քո կյանքի նպատակն եմ, քո իդեալը, բռնեցիր ձեռքս ու ասացիր, թե այն քոնն է, հիշո՞ւմ ես՝ ինչպես համաձայնություն տվեցի ես քեզ։

— Մի՞թե կարելի է մոռանալ։ Մի՞թե դա չհեղաշրջեց իմ ամբողջ կյանքը։ Դու չե՞ս տեսնում, թե ինչ երջանիկ եմ ես։

— Ո՛չ, չեմ տեսնում, դու ինձ խաբեցիր,— ասաց Օլգան սառնությամբ,— դու նորից ցած ես իջնում...

— Խաբեցի՞։ Հոգուդ մեղք չե՞ս անում, Երդվում եմ աստծու անունով, ես իսկույնևեթ ինձ անդո՞ւնդը կնետեի...

— Այո՛, եթե անդունդն ա՛յ այստեղ լիներ, ոտքերիդ տակ, այս բոպեիս,— ընդհատեց Օլգան,— իսկ եթե երեք օրով հետաձգեիր, դու միտքդ կփոխեիր, կվախենայիր, մանավանդ եթե Զախարն ու Անիսյան սկսեին խոսել դրա մասին... Դա սեր չէ։

— Դու կասկածում ես իմ սիրուն,— ջերմորեն խոսեց Օբլոմովը։— Կարծում ես, թե ես դանդաղում եմ, վախենալով ինձ համար և ոչ թե քե՞զ համար։ Պարսպի նման չե՞մ պաշտպանում քո անունը, մոր նման արթուն չե՞մ հսկում, որ սասեկոսեները չհամարձակվեն քեզ կպչել... Ա՜, Օ՛լգա։ Ապացույցնե՞ր պահանջիր։ Կրկնում եմ, եթե դու ուրիշի հետ կարողանայիր ավելի երջանիկ լինել, ես անտրտունջ կզիջեի իմ իրավունքները։ Եթե պետք լիներ մեռնել քեզ համար, ես ուրախությա՛մբ կմեռնեի,— վերջացրեց նա արտասուքն աչքերին։

— Դրանցից ոչ մեկն էլ հարկավոր չէ՝, ոչ ոք չի՝ պահանջում։ Ինչի՞ս է պետք քո կյանքը։ Դու արա այն, ինչ հարկավոր է։ Դա նենգամիտ մարդկանց հնարանքն է՝ այնպիսի զոհաբերություններ առաջարկել, որոնք հարկավոր չեն կամ չի կարելի անել, որպեսզի հարկավոր զոհաբերությունները չանեն։ Դու նենգամիտ չես, ես գիտեմ, բայց...

— Դու չգիտես, թե որքա՞ն առողջություն խլեցին ինձնից

այդ տենչանքներն ու հոգսերը,— շարունակում էր Օբլոմովը։— Իմ գլխում ուրիշ միտք չկա այն ժամանակվանից, երբ ես ճանաչում եմ քեզ... Եվ հիմա էլ կկրկնեմ, որ դու ես իմ նպատակը, և միմիայն դու։ Ես իսկույն-ևեթ կմեռնեմ, կխելագարվեմ, եթե դու ինձ հետ չլինես։ Ես հիմա շնչում, նայում, մտածում և զգում եմ քեզանով։ Էլ ինչո՞ւ ես զարմանում, որ այն օրերը, երբ քեզ չեմ տեսնում, ես նիրհում եմ ու ցած ընկնում։ Ամեն ինչ ատելի է ինձ համար, ամեն ինչ ձանձրալի է։ Ես մեքենա եմ, մարդ եմ գալիս, գործ եմ անում և չեմ նկատում, թե ի՞նչ եմ անում։ Դու ես այդ մեքենայի հուրն ու ուժը,— ասում էր նա՝ ծնկի գալով և ուղղվելով։

Նրա աչքերը պսպղացին, ինչպես լինում էր զբոսայգում։ Նորից նրանց մեջ փայլեցին հպարտությունն ու կամքի ուժը։

— Ես այս րոպեիս պատրաստ եմ գնալու, ուր որ հրամայես, անելու, ի՞նչ կամենաս։ Ես զգում եմ, որ ապրում եմ, երբ դու նայում ես ինձ, խոսում ես, երգում ես...

Օլգան խստաշունչ մտախոհությամբ լսում էր կրքի այդ զեղումները։

— Լսի՞ր, Իլյա,— ասաց նա,— ես հավատում եմ քո սիրուն և իմ ուժին՝ քո նկատմամբ։ Բայց ինչո՞ւ ես վախեցնում ինձ քո անվճռականությամբ, հասցնում դասակծների։ Ես քո նպատակն եմ, ասում ես, և դու դեպի այդ նպատակն ես ընթանում այնպե՞ս վեհերոտ, դանդաղ. իսկ դու դեռ գնալու շատ ճանապարհ ունես. դու պետք է ինձնից բարձր դառնաս։ Ես այդ եմ սպասում քեզնից։ Ես տեսել եմ երջանիկ մարդկանց, ինչպես են նրանք սիրում,— ավելացրեց նա հոգոց հանելով,— նրանց մոտ եռում է ամեն ինչ և նրանց հանգստությունը քոնին նման չէ. նրանք չեն վհատվում, նրանց աչքերը բաց են, նրանք հազիվ թե քնում են, նրանք գործո՞ւմ են։ Իսկ դու... ո՞չ, նման չէ, որ սեր քինի, որ ես քո նպատակը լինեմ...

Օլգան տարակուսանքով թափահարեց գլուխը։

— Դո՜ւ, դո՜ւ,— ասում էր Օբլոմովը՝ դարձյալ համբուրելով նրա ձեռքերը ու հուզված նստելով նրա ոտքերի մոտ։ Միմիայն դո՜ւ։ Աստված իմ, ի՞նչ երջանկություն է,— կրկնում էր նա կարծես զառանցանքի մեջ։— Եվ դու կարծում ես, հնարավոր է խաբել քեզ, ենթել այսպիսի սթափումից

հետո, հերոս չդառնա՞լ։ Դուք կտեսնեք՝ դու և Անդրեյը,— շարունակում էր նա խանգարված աչքերով շուրջը նայելով,— թե ինչպիսի բարձրության է հասցնում մարդուն այնպիսի կնոջ սերը, ինչպիսին դո՞ւ ես։ Նայի՞ր, նայի՞ր ինձ. արդյոք ես հարություն չե՞մ առել, այս րոպեիս արդյոք չե՞մ ապրում։ Գնա՞նք այստեղից։ Դո՜ւրս, դո՜ւրս։ Ես չեմ կարող ոչ մի րոպե այստեղ մնալ. ես խեղդվո՜ւմ եմ, զզվանքս է գալիս,— ասում էր նա՝ անկեղծ զարշանքով շուրջը դիտելով։— Թող ինձ այսօր այս զգացմունքով ապրեմ... Ա՜խ, եթե այս կրակն ինձ վա՜ղն էլ, մի՛շտ էլ այնպես այրեր, ինչպես այժմ է այրում։ Թե չէ՝ երբ դու չես լինում, ես մարո՜ւմ եմ, քնկնո՜ւմ եմ։ Այժմ ես կենդանացա, հարություն առա։ Ինձ թվում է, թե ես... Օ՛լգա, Օ՛լգա— քեզանից ավելի գեղեցիկ բան չկա աշխարհում, դու առաջին կինն ես, դու... դու...

Նա հպվեց Օլգայի ձեռքին ու մարեց։ Այլևս չէր կարողանում խոսել։ Ձեռքը սեղմեց սրտին, որպեսզի զսպի հուզմունքը, Օլգայի վրա սևեռեց իր կրքոտ, թաց հայացքը և անշարժ մնաց։

«Քնքուշ է, քնքուշ է, քնքուշ է»,— մտքում կրկնում էր Օլգան, բայց հոգոց հանելով, ոչ այնպես, ինչպես զբոսայգում էր լինում, և ընկղմվեց մտորումների մեջ։

— Գնալու ժամանակն է,— սթափվելով սիրալիր ասաց Օլգան։

Օբլոմովը հանկարծ զգաստացավ։

— Դու այստե՞ղ ես, աստված իմ։ Ինձ մո՞տ,— ասում էր նա, և խանդավառ հայացքին փոխարինեցին վեհերոտ կերպով շուրջը նայելը։ Ջերմ խոսք այլևս դուրս չէր գալիս նրա բերանից։

Օբլոմովը հապճեպ վերցրեց գլխարկն ու սալոպը և իրարանցման մեջ ուզում էր սալոպը դնել նրա գլխին։

Օլգան ծիծաղեց։

— Ինձ համար մի՛ վախենա,— հանգստացնում էր նա,— ma tante-ը ամբողջ օրով գնացել է տնից. տանը միայն դայակը հիտե, որ ես այնտեղ չեմ, մեկ էլ՝ Կատյան։ Ուղեկցիր ինձ։

Նա իր ձեռքը տվեց Օբլոմովին և առանց սրտի դողի,

հանգիստ, ի՞ր անմեղության հպարտ գիտակցությամբ անցավ բակով շան կատաղի վազվզոցի ու հաչոցի ուղեկցությամբ, նստեց կառք և մեկնեց։

Տանտիրուհու սենյակների լուսամուտներից գլուխներ էին դուրս նայում. անկյունից, ցանկապատի այն կողմից, առվի միջից երևաց Անիսյայի գլուխը։

Երբ կառքը ծռվեց դեպի մյուս փողոցը, Անիսյան եկավ ու ասաց, որ ինքը ման է եկել ամբողջ շուկան և ծնեբեկ չի ճարել։ Զախարը վերադարձավ մոտ երեք ժամից և քնեց ամբողջ մի օր ու գիշեր։

Օբլոմովը երկար ժամանակ շրջում էր սենյակում՝ չըզգալով, որ ոտքերը գետնին են կպչում, իր սեփական քայլերը չէր լսում. նա ման էր գալիս ոտքերը գետնից կտրվածի նման։

Հենց որ ձյան վրա լռեց նրա կյանքն ու երջանկությունն իր հետ տանող կառքի անիվների ճռռոցը, նրա անհանգստությունն անցավ, նրա գլուխն ու մեջքն ուղղվեցին, ոգեշընչված փայլը վերադարձավ դեմքին, աչքերը թաց էին երջանկությունից, խանդաղատանքից։ Օրգանիզմի մեջ տարածվեց մի տեսակ ջերմություն, թարմություն, առույգություն։ Եվ նորից, ինչպես առաջները, նրա սիրտն ուզեց հանկարծ լինել ամենուրեք, որևէ հեռու տեղ. և՛ այնտեղ, Շտոլցի մոտ, Օլգայի հետ միասին, և՛ գյուղում՝ հանդերում, պուրակներում, նրա սիրտն ուզեց առանձնանալ իր առանձնասենյակում և ընկղմվել աշխատանքի մեջ, և՛ անձամբ գնալ Ռիբինսկի նավահանգիստը, և՛ ճանապարհ անցկացնել, և՛ կարդալ հենց վերջերս լույս տեսած նոր գիրքը, որի մասին խոսում են բոլորը, և՛ օպերա գնալ— այսօր...

Այո՛, այսօր Օլգան իր մոտ էր, ինքն էլ կգնա նրա մոտ, հետո կտեսնվեն օպերայում։ Ի՞նչ լիքն է օրը։ Ի՞նչ թեթև է նա շունչ քաշում այս կյանքում, Օլգայի շուրջ, նրա կուսական փայլի, կայտառ ուժերի, երիտասարդ, բայց նրբին ու խոր, առողջ մտքի ճառագայթներում։ Օբլոմովը ման է գալիս այնպես. կարծես թռչում է, կարծես նրան մեկը տանում է սենյակի միջով։

— Հառա՞ջ, հառա՞ջ,— ասում է Օլգան,— ավելի՞ բարձր, ավելի՞ բարձր, այնտեղ, դեպի այն գիծը. որտեղ քնքշության

ու նազելիության ուժը կորցնում է իր իրավունքները և որտեղ սկսվում է տղամարդու թագավորությունը։

Ի՞նչ պարզ է տեսնում կյանքն Օլգան։ Ինչպե՞ս է նա այդ խորիմաստ գրքում կարդում իր ուղին և բնազդով կռահում նաև Օբլոմովի ուղին։ Երկու կյանքերը երկու գետի նման պետք է միաձուլվեն. նա Օլգայի ղեկավա՞րն է, առաջնորդը։

Օլգան տեսնում է նրա ուժերը, ընդունակությունները, գիտե, թե նա ինչ կարողություն ունի և հնազանդ սպասում է նրա տիրապետությանը։ Հրաշալի՞ Օլգա։ Անվրդով, անվեհեր, պարզ, բայց վճռական կին, բնակա՞ն, ինչպես կյանքն ինքը։

— Իսկապես, որքա՞ն զզվելի է այստեղ,— ասում էր նա շուրջը նայելով։— Եվ այդ հրեշտակն իջա՞վ ճահիճը, սրբագործեց այն իր ներկայությամբ։

Նա սիրատոչոր նայեց այն աթոռին, որի վրա նստել էր Օլգան, և հանկարծ աչքերը փայլեցին. հատակին, սեղանի կողքին նա տեսավ մի փոքրիկ ձեռնոց։

— Գրավակա՞ն։ Նրա՞ ձեռքը. դա նախանշան է։ Օ՞...— հեծեց նա բուռն կրքով՝ շրթունքներին սեղմելով ձեռնոցը։

Տանտիրուհին դռնից ներս նայեց, առաջարկելով նայել քաթանը. բերել են ծախելու, արդյոք հարկավոր չէ՞։

Բայց Օբլոմովը չոր-չոր շնորհակալություն հայտնեց նրան, մտքով չանցկացրեց նայելու արմունկներին և ներողություն խնդրեց, որ շատ զբաղված է։ Հետո խորասուզվեց ամառվա հիշողությունների մեջ, մտքով անցկացրեց բոլոր մանրամասնությունները, հիշեց ամեն մի ծառ, թուփ, նստարան, ամեն մի ասված խոսք, և այդ բոլորն ավելի սիրելի գտավ, քան այն ժամանակ էր, երբ վայելում էր այդ ամենը։

Նա վճռապես դադարեց իրեն տիրապետելուց, երգում էր, սիրալիր խոսում Անիսյայի հետ, կատակներ էր անում, որ նա երեխաներ չունի, և խոստանում քավոր դառնալ, հենց որ երեխա ծնվի։ Մաշայի հետ այնպիսի իրարանցում սարքեց, որ տանտիրուհին ներս նայեց և Մաշային տուն քշեց, որպեսզի նա կենվորին չխանգարի «պարապել»։

Օրվա մնացած մասն ավելի ևս ուժեղացրեց խենթությունը, Օլգան ուրախ էր, երգում էր, հետո երգում էին օպերայում, ապա նա նրանց մոտ թեյ խմեց, և թեյի ժամանակ

այնպիսի մտերմական, անկեղծ խոսակցություն էր տեղի ունենում նրա, մորաքրոջ, բարոնի և Օլգայի միջև, որ Օբլոմովն իրեն լիովին այդ փոքրիկ ընտանիքի անդամ էր զգում։ Բավական է մենակ ապրել, նա հիմա անկյուն ունի, նա ամուր է կծկել իր կյանքի կծիկը, նա ունի լույս և ջերմություն. որքա՜ն լավ է դրանով ապրել։

Գիշերը նա քիչ քնեց, շարունակ կարդում էր Օլգայի ուղարկած գրքերը և մեկուկես հատոր կարդաց։

«Վաղը պետք է նամակ գա գյուղից»,— մտածում էր նա, և նրա սիրտը բաբախում էր... բաբախում էր... վերջապե՜ս։

VIII

Հետևյալ օրը Զախարը սենյակը կարգի բերելիս գրասեղանի վրա գտավ փոքրիկ ձեռնոցը, երկար դիտում էր այն, քմծիծաղ տվեց, հետո այն տվեց Օբլոմովին։

— Երևի օրիորդ Իլյինսկայան է մոռացել,— ասաց նա։

— Հրե՜շ,— որոտաց Իլյա Իլյիչը՝ խլելով նրա ձեռքից ձեռնոցը։

— Սու՜տ ես ասում։ Ի՞նչ օրիորդ Իլյինսկայա։ Դերձակուհին էր եկել խանութից՝ շապիկները փորձելու համար։ Ի՞նչպե՞ս ես համարձակում ստեր հնարել։

— Ի՞նչ հրեշ։ Ի՞նչ եմ հնարում։ Ա՛յ, արդեն անտիրուհու սենյակներում խոսում են...

— Ի՞նչ են խոսում,— հարցրեց Օբլոմովը։

— Ի՞նչ, ա՛յ որ, ասում են, օրիորդ Իլյինսկայան էր եկել աղախնի հետ...

— Աստվա՜ծ իմ,— սարսափով արտասանեց Օբլոմովը։— Իսկ նրանք որտեղի՞ց են ճանաչում օրիորդ Իլյինսկայային։ Գու կամ Անիսյան եք էլի դուրս տվել...

Հանկարծ Անիսյան նախասենյակի դռնից կիսով չափ ներս խցկվեց։

— Զախար Տրոֆիմիչ, ի՜նչ ես հոգուդ մեղք անում՝ գատարկ բաներ խոսելով։ Մի՛ լսեք նրան, պարոն,— ասաց Անիսյան,— ոչ ոք ո՛չ խոսել է, ոչ էլ գիտե, ասուված վկա...

— Ե՜-դե՜-դե՜,— խռպոտ ձայնով հարձակվեց նրա վրա

Զախարը, արմունկը վրա բերելով նրա կրծքին։— Քիթդ խոթում ես այնտեղ, որտեղ քեզ չեն հարցնում։

Անիսյան անհետացավ։ Օբլոմովը երկու բռունցքով սպառնաց Զախարին, այնուհետև արագ բաց արեց տանտիրուհու սենյակների դուռը։ Ագաֆյա Մատվեևնան նստած էր հատակին և ջոկչկում էր հին սնդուկում եղած հնոտիքը. նրա մոտ թափված էին կտորտանքների, բամբակի, հին շորերի, կոճակների ու մորթու կտորների կույտեր։

— Լսե՜ք,— սիրալիր, բայց հուզված ասաց Օբլոմովը,— իմ սպասավորները զանազան հիմարություններ են խոսում, դուք, ի սեր աստծու, չհավատաք նրանց։

— Ես ոչինչ չեմ լսել,— ասաց տանտիրուհին։— Ի՞նչ են խոսում նրանք։

—Երեկվա այցելության մասին,— շարունակում էր Օբլոմովը,— նրանք խոսում են, իբր թե ինչ-որ մի օրիորդ է եկել...

— Մեր ի՞նչ գործն է, թե ով է գալիս կենվորների մոտ,— ասաց տանտիրուհին։

— Չէ, դուք, խնդրեմ, չհավատաք. բացարձակ զրպարտությո՞ւն է։ Ոչ մի օրիորդ էլ չի եկել. եկել էր պարզապես դերձակուհին, որ շապիկներ է կարում։ Եկել էր չափը փորձելու...

— Իսկ դուք որտե՞ղ եք պատվիրել շապիկները։ Ո՞վ է կարում ձեզ համար,— աշխուժով հարցրեց տանտիրուհին։

— Ֆրանսիական խանութում...

— Ցույց տվեք, երբ որ բերեն. ինձ մոտ երկու աղջիկ կա, այնպես են կարում, այնպիսի թակալակար են տալիս, որ ոչ մի ֆրանսուհի՝ չի կարող անել։ Ես տեսել եմ, նրանք բերում էին ցույց տալու, կոմս Մեռլինսկու համար են կարում. ոչ ոք այդպես չի կարի։ Ու՞ր կմնան ձերոնք, որ ձեր հագին են։

— Շատ լավ, ես միտս կպահեմ։ Միայն դուք, ի սեր աստծու, մի՞ մտածեք, թե օրիորդ է եկել...

— Ի՞նձ ինչ, թե ով է գալիս կենվորի մոտ։ Թեկուզև օրիորդ...

— Ո՛չ, ո՛չ,— ժիտում էր Օբլոմովը։— Ի՞նչ եք ասում, այն օրիորդը, որի մասին դուրս է տալիս Զախարը, վիթխարի հասակ ունի, բաս ձայն, իսկ սա, այս դերձակու-

հին, երևի լսեցիք, թե ինչպիսի բարակ ձայնով է խոսում։ Նա հրաշալի ձայն ունի։ Խնդրում եմ, չմտածեք...

— Մեր ի՞նչ բանն է,— ասում էր տանտիրուհին, երբ Օբլոմովը գնում էր։— Ուրեմն չմոռանաք ինձ ասելու, երբ հարկավոր լինի շապիկներ կարել տալ. իմ ծանոթներն այնպիսի թակալակար են տալիս... Նրանց անուններն են՝ Լիզավետա Նիկոլավնա և Մարյա Նիկոլավնա։

— Լավ, լավ, չեմ մոռանա. միայն թե, խնդրում եմ, դուք չմտածեք։

Եվ նա դուրս եկավ, հետո հագնվեց ու գնաց Օլգայի մոտ։

Երեկոյան տուն վերադառնալով՝ նա իր սեղանի վրա նամակ գտավ գյուղից, հարևանից, իր հավատարմատարից։ Նա նետվեց դեպի լամպը, կարդաց՝ և ձեռքերը թուլացան։

«Խոնարհաբար խնդրում եմ հավատարմագիրն ուրիշ անձի հանձնել (գրում էր հարևանը), իսկ ինձ մոտ այնքան գործ է կուտակվել, որ, խղճով ասած, չեմ կարող ինչպես պետք է հսկել ձեր կալվածքին։ Ամենից լավն այն է, որ ինքներդ գաք այստեղ, իսկ դրանից էլ ավելի լավն այն է, որ կալվածքում բնակություն հաստատեք։ Կալվածքը լավն է, բայց սաստիկ բարձիթողի է արված։ Ամենից առաջ հարկավոր է ավելի ճիշտ բաշխել կոռն ու բահրան. առանց կալվածատիրոջ այդ անել չի կարելի. մուժիկները երես են առել, նոր ստարոստային չեն լսում, իսկ հինը խաբեբայի մեկն է, նրան պետք է հեռևել։ Եկամտի քանակը որոշել չի կարելի։ Այժմյան անկարգ վիճակում հազիվ թե երեք հազարից ավել ստանաք, և այն էլ, եթե ինքներդ գաք։ Ես հիշում եմ հացահատիկից ստացվող եկամուտը, իսկ բահրայի վրա հույս դնելը զուր է. հարկավոր է դրանք կարգի բերել և ապառքների հարցը որոշել. այդ բոլորի համար պետք Կլինի մոտ երեք ամիս։ Հացահատիկի գինն էլ լավ էր, և մարտին կամ ապրիլին դուք փող կստանաք, եթե ինքներդ հսկեք վաճառքին։ Իսկ այժմ կանխիկ փող ոչ մի կոպեկ չկա։ Ինչ վերաբերում է Վերխլյովոյի միջով անցնող ճանապարհին և կամուրջին, ապա, ձեզանից երկար ժամանակ պատասխան չստանալով, ես արդեն վճռեցի Օդոնցովի ու Բելովոդովի հետ անցկացնել ճանապարհը իմ գյուղից դեպի Նելկի, այնպես որ Օբլոմովկան բավականին հեռու է մնում ճանապարհից։ Ի վերջո, կրկնում

եմ խնդիրս՝ որքան կարելի է շուտ շնորհ բերել. մոտ երեք ամսվա ընթացքում կարելի է հայտնի դարձնել, թե ինչ կարելի է հուսալ եկող տարվա համար։ Ի դեպ, հիմա ընտրություններ են. չէի՞ք ցանկանա արդյոք քվեարկվել գավառական դատավորի պաշտոնի համար։ Շտապեցե՛ք։ Ձեր տունը շատ է խարխուլ (ավելացրած էր վերջում)։ Ես պատվիրեցի անասնախնամ կնոջը, ծեր կառապանին և երկու պառավ աղախիններին այնտեղից տեղափոխվել խրճիթ. վտանգավոր կլիներ ավելի մնալ այնտեղ»։

Նամակին կցված էր մի գրություն, թե քանի չեմպերտ հաց է հավաքված, կալսած որքանն է լցված խանութները, որքանն է հատկացված վաճառքի համար և նման տնտեսական-մանրամասնություններ։

«Ոչ մի կոպեկ փող չկա, երեք ամիս, ինքը գնա, քննի գյուղացիների գործերը, որոշի եկամտի քանակը, ընտրություններին մասնակցի և ծառայի»,— այս ամենը ուրվականների նման պարուրեցին Օբլոմովին։ Նա կարծես անտառ էր ընկել, գիշերով, երբ ամեն մի թփի ու ծառի մեջ ավազակ, դիակ, գազան է երևում աչքիդ։

— Բայց սա խայտառակությո՞ւն է. ես չե՞մ ենթարկվի,— կրկնում էր նա, աշխատելով ծանոթանալ այդ ուրվականների հետ, ինչպես վախկոտն էլ ջանում է կկոցած կոպերի միջով նայել ուրվականներին, և զգում է միայն, որ սիրտը սառչում է և ձեռքերն ու ոտքերը թուլանում։

Էլ ինչի՞ վրա էր Օբլոմովի հույսը։ Նա կարծում էր, թե նամակում որոշակի ասված կլինի, թե որքան եկամուտ կըստանա և, իհարկե, որքան կարելի է շատ, օրինակ՝ վեց, յոթ հազար. որ տունը դեռ լավն է, այնպես որ, կարիք եղած դեպքում, կարելի է ապրել այնտեղ, մինչև որ նորը շինվի. որ, վերջապես, հավատարմատարը երեք-չորս հազար կուղարկի. մի խոսքով, որ նա նամակում կկարդա նույն ծիծաղը, կյանքի խաղն ու սերը, ինչ որ կարդում էր Օլգայի նամակներում։

Նրա ոտքերն այլևս գետնից չէին կտրվում սենյակում մանգալիս, կատակներ չէր անում Անխոյայի հետ, երջանկության վերաբերյալ ունեցած հույսերով չէր հուզվում. այդ բոլորը պետք էր երեք ամսով հետաձգել. օ ո՜չ։ Երեք ամսում նա

միայն գործերը կքննի, կճանաչի իր կալվածքը, իսկ հարսանիքը...

— Հարսանիքի մասին մի տարուց շուտ չի էլ կարելի մտածել,—վախվորած ասաց նա,— այո՛, այո՛, մի տարուց ոչ շուտ։ Նա դեռ պետք է ավարտի իր պլանը, պետք է հարցը վճռել ճարտարապետի հետ, հետո... հետո...

Նա հառաչեց։

«Փո՛խ առնել»,— փայլատակեց նրա գլխում, բայց նա այդ միտքը ետ մղեց։

«Ինչպե՞ս կարելի է։ Իսկ եթե ժամկետին չվերադարձնե՞ս. եթե գործերը վատ գնան, այն ժամանակ գանձելու համար դատարան կդիմեն, և Օբլոմովի մինչև այժմ մաքուր, անձեռնմխելի անունը...» Աստվա՛ծ չանի։ Այն ժամանակ մնա՛ս բարով նրա անդորրություն, հպարտություն... ո՛չ, ո՛չ։ Ուրիշները պարտք են անում, իսկ հետո էլ դեսուդեն են ընկնում, աշխատում են, չեն քնում, կարծես սատանա է մտել մեջները։ Այո՛, պարտքը մի դե՛ է, սատանա՛ է, որին բացի փողից, ուրիշ ոչնչով չես կարող դուրս քշել։

Կան այնպիսի կտրիճներ, որոնք իրենց ամբողջ կյանքն ապրում են ուրիշի հաշվին, պարտք են հավաքում աջից ու ձախից, և ամենևին պետքնե՞րն էլ չի։ Ինչպե՞ս են նրանք կարողանում հանգիստ քնել, ինչպե՞ս են ճաշում, անհասկանալի է։ Պա՞րտք։ Նրա հետևանքներն են կա՛մ տաժանակիր անելանելի աշխատանքը, կա՛մ պատվաղրկությունը։

Գյուղը գրա՞վ դնել։ Մի՞թե միևնույն պարտքը չէ, միայն անողոք, անհետաձգելի, ցուրաքանչյուր տարի վճարի՛ր, թեև, ապրուստի փող չմնա։

Մի տարո՞վ էլ հետաձգվեց երջանկությունը։ Օբլոմովը հիվանդագին հեծեծեց և այն է՝ ուզում էր ընկնել անկողնի վրա, բայց հանկարծ սթափվեց ու վեր կացավ։ Իսկ ի՞նչ էր ասում Օլգան։ Ինչպե՞ս էր կոչ անում նրան որպես տղամարդու, վստահում նրա ուժերին։ Օլգան սպասում է, թե ինչպե՞ս ինքն առաջ կգնա և այն բարձունքի՞ն կհասնի, որտեղից ձեռք կմեկնի նրան և իր հետևից կտանի, նրան ուղի ցույց կտա։ Այո՛, այո՛։ Բայց ինչի՞ց սկսել։

Նա մտածեց, մտածեց, հետո հանկարծ ձեռքով խփեց իր ճակատին և գնաց տանտիրուհու սենյակը։

— Ձեր եղբայրը տա՞նն է,— հարցրեց նա տանտիրուհուն։

— Տանն է, բայց պառկել է քնելու։

— Որ այդպես է, վաղը խնդրեք նրան ինձ մոտ գա,— ասաց Օբլոմովը,— ինձ հարկավոր է տեսնվել նրա հետ։

IX

Եղբայրը նորից նույն կարգով ներս մտավ սենյակ, նույն ձևով զգուշորեն նստեց աթոռի վրա, ձեռքերը թևքերի մեջ քաշեց և սպասում էր, թե ինչ կասի Իլյա Իլյիչը։

— Շատ անախորժ նամակ եմ ստացել գյուղից, ի պատասխան ուղարկածս հավատարմագրի, հիշո՞ւմ եք։ Ահա՛, նեղություն կրեք կարդալու։

Իվան Մատվեևիչը վերցրեց նամակը և իր սովոր աչքերով սահեց նամակի տողերի վրա, իսկ նամակը մի փոքր դողդողում էր նրա մատների մեջ։ Կարդալուց հետո նա նամակը դրեց սեղանի վրա, իսկ ձեռքերը դրեց մեջքին։

— Ի՞նչ եք կարծում, այժմ ի՞նչ պետք է անել,— հարցրեց Օբլոմովը։

— Նա ձեզ խորհուրդ է տալիս գնալ այնտեղ,— ասաց Իվան Մատվեևիչը։— Ի՞նչ կա որ. հազար երկու հարյուր վերստը մի մե՛ծ բան չէ։ Մի շաբաթից հետո ճանապարհները կարգի կընկնեն, և դուք կկարողանայիք մեկնել։

— Ես բոլորովին մոռացել եմ ուղևորությունը, խամաքաշ, այն էլ ձմեռը, խոստովանում եմ, ինձ համար դժվար կլիներ, չէի ցանկանա... Բացի այդ էլ՝ գյուղում մենակ շատ ձանձրալի է։

— Իսկ ձեր բահրատուների թիվը մե՞ծ է,— հարցրեց Իվան Մատվեևիչը։

— Դե... չգիտեմ. վաղուց է՝ գյուղում չեմ եղել։

— Հարկավոր է իմանալ. առանց դրա ինչպե՞ս կարելի է։ Չի՞ կարելի տեղեկություն ձեռք բերել, թե որքան եկամուտ եք ստանում։

— Այո՛, պետք է,— կրկնեց Օբլոմովը,— հարևանս էլ գրում, բայց տես՝ ձմեռը մոտենում է։

— Իսկ որքա՞ն բահրա եք ենթադրում ստանալ։

— Բահրա՞։ Կարծեմ... ա՛յ, թույլ տվեք, ինձ մոտ մի տեղ կա ցուցակը... Շտոլցը դեռ այն ժամանակ կազմեց, բայց դժվար է գտնել. երևի Զախարը մի տեղ խոթել է։ Հետո ցույց կտամ... կարծեմ՝ երեսուն ռուբլի լծաբաժնից։

— Իսկ ձեր գյուղացիներն ինչպիսի՞ն են։ Ինչպե՞ս են ապրում,— հարցնում էր Իվան Մատվեևիչը։— հարո՞ւստ են, թե քայքայված, աղքատ։ Կո՞ռն ինչպիսի է։

— Լսե՛ք,— ասաց նրան մոտենալով Օբլոմովը, և մտերմաբար բռնեց վիցմունդիրի երկու փեշերից։

Իվան Մատվեևիչը արագ վեր կացավ, բայց Օբլոմովը նրան նորից նստեցրեց։

— Լսե՛ք,— կրկնեց նա ընդհատ-ընդհատ, գրեթե շշնջալով,— ես չգիտեմ, թե ի՛նչ է կորը, ի՛նչ բան է գյուղական աշխատանքը, ինչ է նշանակում աղքատ գյուղացի, ի՛նչ հարուստ, չգիտեմ, թե ի՛նչ է նշանակում աշորայի կամ վարսակի չետվերտը, ո՛ր ամսում այն ինչ արժե և ինչ են ցանում ու հնձում, ինչպես և երբ են վաճառում. չգիտեմ՝ հարուստ եմ, թե աղքատ, մի տարի հետո կո՞ւշտ կլինեմ, թե՞ մուրացկան կդառնամ. ես ոչի՛նչ չգիտեմ,— եզրափակեց նա վհատ, թողնելով վիցմունդիրի փեշերը և ետ քաշվելով Իվան Մատվեևիչից,— հետևաբար, խոսեք և խորհուրդ տրվեք ինձ, ինչպես երեխայի...

— Ինչպե՞ս կարելի է, պետք է գիտենալ. առանց դրա ոչինչ կշռադատել չի կարելի,— հլու ժպիտով ասաց Իվան Մատվեևիչը, տեղից վեր կենալով և ձեռքի մեկը մեջքին, իսկ մյուսը ծոցը դնելով։— Կալվածատերը պետք է գիտենա իր կալվածքը, ինչպես վարվի նրա հետ...— ասում էր նա խրատական եղանակով։

— Իսկ ես չգիտեմ։ Սովորեցրեք ինձ, եթե կարող եք։

— Ես ինքս այդ առարկայով չեմ զբաղվել, պետք է խորհրդակցել գիտակ մարդկանց հետ։ Դե ահա, նամակում ձեզ գրում են,— շարունակում էր Իվան Մատվեևիչը, միջամատով, եղունգը դեպի ցած բռնած, ցույց տալով նամակի էջը,— որ դուք ընտրություններին մասնակցեք և ծառայեք. ա՛յ, փառավո՞ր բան կլիներ։ Կապրեիք այնտեղ, կծառայեիք գավառական դատարանում և այդ միջոցին կծանոթանայիք նաև տնտեսությանը։

— Ես չգիտեմ, թե ի՛նչ բան է գավառական դատարանը, այնտեղ ի՛նչ են անում, ինչպե՛ս են ծառայում,— արտահայտիչ կերպով, բայց կիսաձայն դարձյալ ասում էր Օբլոմովը, մոտենալով կիպ Իվան Մատվեևիչի քթին։

— Կվարժվեք։ Դուք չէ՞ որ այստեղ, դեպարտամենտում ծառայել եք, գործն ամեն տեղ նույնն է, միայն ձևերի մեջ փոքրիկ տարբերություն կլինի։ Ամեն տեղ հրամանագրեր, գրություններ, արձանագրություն... Որ լավ քարտուղար լինի, ձեզ ի՞նչ հոգս կմնա։ Միայն ստորագրել։ Եթե գիտեք, թե դեպարտամենտներում ինչպես է գործ արվում...

— Ես չգիտեմ, թե ինչպես է գործ արվում դեպարտամենտներում,— միալար ձայնով ասաց Օբլոմովը։

Իվան Մատվեևիչն իր երկակի հայացքը նետեց Օբլոմովի վրա և լռեց։

— Երևի, բոլոր գրքերը կարդացե՞լ եք,— նույն հլու ժպիտով նկատեց նա։

— Գրքե՛րը,— դառնությամբ վրա բերեց Օբլոմովն ու կանգ առավ։

Սիրտ չարեց և պետք էլ չէր մինչև հոգու խորքը մերկանալ չինովնիկի առաջ։

« Ես գրքերն էլ չգիտեմ»,— շարժվեց նրա մեջ, բայց բերանից դուրս չեկավ և արտահայտվեց տխուր հոգոցով։

— Հո բարեհաճել եք որևէ բանով զբաղվել,— հեզությամբ ավելացրեց Իվան Մատվեևիչը, կարծես Օբլոմովի մտքում կարդալով նրա պատասխանը գրքերի մասին,— չի կարելի, որ...

— Կարելի է, Իվան Մատվեևիչ. ահա ձեզ կենդանի ապացույց՝ ե՛ս։ Ո՞վ եմ ես։ Ի՞նչ եմ ես։ Գնացեք հարցրեք Զախարին, և նա ձեզ կասի՝ «բա՛ռին»։ Այո՛, ես բարին եմ և ոչինչ անել չգիտե՞մ։ Արեք դուք, եթե գիտեք, և օգնեք՝ եթե կարող եք, իսկ աշխատանքի համար ձեզ վերցրեք, ինչ որ ուզում եք, գիտությունն էլ դրա համար է։

Նա սկսեց ման գալ սենյակում, իսկ Իվան Մատվեևիչը կանգնած էր իր տեղում և ամեն անգամ ամբողջ մարմնով շուռ էր գալիս դեպի այն անկյունը, ուր գնում էր Օբլոմովը։ Նրանք երկուսն էլ որոշ ժամանակ լուռ էին։

— Որտե՞ղ եք ուսում ստացել,— Հարցրեց Օբլոմովը՝ նորից կանգ առնելով նրա առաջ։

— Սկսել էի գիմնազիայում, բայց վեցերորդ դասարանից հայրս հանեց և պաշտոնի նշանակել տվեց վարչությունում։ Մեր գիտությունն ի՞նչ է որ։ Կարդալ, գրել, քերականություն, թվաբանություն, իսկ ավելի հեռուն չենք գնացել։ Մի կերպ հարմարվել եմ գործին և կամաց-կամաց յոլա եմ գնում։ Ձեր բանն ուրիշ է. դուք իսկական գիտություններ եք անցել...

— Այո՛,— հառաչելով հաստատեց Օբլոմովը,— ճիշտ է, ես անցել եմ թե՛ բարձրագույն հանրահաշիվ, թե՛ իրավաբանություն, բայց այնուամենայնիվ գործին չեմ հարմարվել։ Ա՛յ, տեսնում եք, բարձրագույն հանրահաշվովս չգիտեմ, թե որքան եկամուտ ունեմ։ Գնացի գյուղ, լսեցի, նայեցի, թե ինչպես էր գործն արվում տանը, և՛ կալվածքում, և՛ մեր շուրջը. բոլորովին այն իրավաբանությունը չէր։ Եկա այստեղ, մտածում էի քաղաքատնտեսությամբ մի կերպ մարդամեջ մտնել... Իսկ ինձ ասացին, թե գիտությունը պետք կգա ինձ ժամանակին, գուցե, ծերության օրերին, իսկ նախ հարկավոր է աստիճաններ ձեռք բերել, և դրա համար մի գիտություն է հարկավոր՝ թղթեր գրել։ Ահա և ես չհարմարվեցի գործին, այլ պարզապես բարին դարձա, իսկ դուք հարմարվեցիք։ Դե, որոշեք ուրեմն, թե սրա տակից ինչպես դուրս գանք։

— Կարելի է, ոչինչ, —ասաց, վերջապես, Իվան Մատվեևիչը։

Օբլոմովը կանգ առավ նրա առջև և սպասում էր, թե ի՞նչ կասի։

— Այդ բոլորը կարելի է հանձնարարել բանիմաց մարդու և հավատարմագիրն էլ փոխել նրա անունով,— ավելացրեց Իվան Մատվեևիչը։

— Իսկ այդպիսի մարդ որտեղի՞ց գտնենք,— հարցրեց Օբլոմովը։

— Ես մի պաշտոնակից ունեմ, Իսայ Ֆոմիչ Զատյորտի. նա մի քիչ կակազում է, բայց գործիմաց ու գիտակ մարդ է։ Երեք տարի մեծ կալվածք է կառավարել, բայց կալվածատերն արձակել է նրան հենց այն պատճառով, որ կակազում է։ Դրա համար էլ նա ծառայության մտավ մեզ մոտ։

— Բայց կարելի՞ է վստահել նրան։

— Ազնվագույն մարդ է, մի՛ անհանգստացեք։ Նա իր ունեցածը կծախսի, միայն թե գոհացնի հավատարմատուին։ Տասներկու տարի է՝ մեզ մոտ է ծառայում։

— Բայց նա ինչպե՞ս կգնա, եթե ծառայում է։

— Ոչինչ, չորս ամսով արձակուրդ կվերցնի։ Չէ՞ որ նա ձրի չի գնալու։

— Իհարկե, ո՛չ,— հաստատեց Օբլոմովը։

— Դուք հաճեցեք նրան ուղեգրամ նշանակել, ապրուստի դրամ տալ, որքան պետք կլինի օրական, իսկ այնուհետև, գործը վերջացնելուց հետո, վարձատրություն, համաձայն պայմանի։ Կգնա՞, ոչի՞նչ։

— Ես շատ շնորհակալ եմ ձեզնից. դուք ինձ մեծ հոգսերից եք ազատում,— ասաց Օբլոմովը՝ ձեռք տալով նրան։— Ի՞նչ է նրա...

— Իսայ Ֆոմիչ Զատյորտի,— կրկնեց Իվան Մատվեևիչը՝ ձեռքն արագ սրբելով մյուս թևքի ծալքով, և, մի բոպե բռնելով Օբլոմովի ձեռքը, իսկույն իր ձեռքը թաքցրեց թևքի մեջ։— Ես վաղը կխոսեմ նրա հետ և կբերեմ։

— Եկեք ճաշի, այնտեղ էլ կխոսենք։— Շա՛տ, շա՛տ շնորհակալ եմ ձեզնից,— ասում էր Օբլոմովը՝ Իվան Մատվեևիչին ճանապարհ դնելով մինչև դուռը։

X

Նույն օրը երեկոյան, մի երկհարկանի տան մեջ, որը մի կողմով այն փողոցն էր դուրս գալիս, որտեղ ապրում էր Օբլոմովը, իսկ մյուս կողմով՝ գետափ, վերին հարկի սենյակներից մեկում նստած էին Իվան Մատվեևիչն ու Տարանտեը։

Դա այսպես կոչված «պանդոկն» էր, որի դռների մոտ կանգնած էին լինում ընդամենը երկու-երեք դատարկ կառք, իսկ կառապանները նստած էին լինում ներքին հարկում՝ ափսեները ձեռներին։ Վերին հարկը հատկացված էր Վիբորգյան քաղաքամասի «պարոններին» համար։

Իվան Մատվեևիչի և Տարանտևի առջև դրված էր թեյ ու մի շիշ ռոմ։

— Ամենաիսկական ցամայկայի է,— ասաց Իվան Մատվեևիչը, դողդոջուն ձեռքերով իր բաժակը ռոմ լցնելով,— մի արհամարհիր հյուրասիրությունս, քավո՛ր։

— Խոստովանի՛ր, որ մի բան կա, որի համար արժե ինձ հյուրասիրե՛լ,— վրա բերեց Տարանտևը, —տունը կփտեր, բայց այդպիսի կենվոր չէիր տեսնի։

— Ճիշտ է, ճիշտ է,— ընդհատեց Իվան Մատվեևիչը։— Իսկ եթե մեր գործը գլուխ գա և Զատյորտին գնա դյուղ, մաղարի՛չ կլինի։

— Բայց դու ժլատ ես, սանահեր, քեզ հետ հարկավոր է սակարկել,— ասում էր Տարանտևը,— այդպիսի՛ կենվորի համար հիսուն ռուբլի։

— Վախենում եմ, սպառնում է տեղափոխվել,— նկատեց Իվան Մատվեևիչը։

— Ա՛յ դու, դեռ փորձված մարդ ես։ Ո՞ւր կտեղափոխվի։ Հիմա նրան վռնդել էլ չես կարող։

— Իսկ հարսանի՞քը։ Ասում են՝ ամուսնանում է։

Տարանտևը հռհռաց։

— Նա՛ է ամուսնանում։ Ուզո՞ւմ ես գրազ գանք, որ չի ամուսնանա,— առարկեց նա։— Նրան մինչև անգամ քնել Զախարն է օգնում, ի՞նչ ամուսնանալ։ Մինչև այժմ ես միշտ բարեգործություն եմ արել նրան. չէ՞ որ առանց ինձ, ախպերս, նա սովամահ կլիներ կամ բանտ կընկներ։ Հսկիչն է գալիս, տանտերն է որևէ բան հարցնում, ամենևին նրա պետքը չէ, ամեն բան ե՞ս եմ արել։ Ոչինչ չի հասկանում...

—Իսկապես որ ոչինչ. ասում է՝ չգիտեմ, թե ինչ են անում գավառական դատարանում, դեպարտամենտում՝ նույնպես. ինչպիսի գյուղացիներ ունի, չգիտե։ Ի՞նչ ապուշն է։ Մինչև անգամ ծիծա՞ղս եկավ...

— Իսկ պայմանագիրը, ինչպիսի՞ պայմանագիր կնքեցինք,— պարծեցավ Տարանտևը։— Վարպե՞տ ես, ախպեր, Իվան Մատվեևիչ, աստված վկա, թղթեր գրելու վարպե՞տ ես։ Հանգուցյալ հայրս է միտս գալիս։ Ես էլ հմուտ էի, բայց մոռացել եմ, աստված է վկա՝ մոռացել եմ։ Նստում եմ թե չէ՝ արտասուքները դուրս են ցայտում աչքերիցս։ Չկարդաց

հենց այնպես ստորագրե՞ց։ Իսկ այնտեղ գրված են և՛ բանջարանոցը, և՛ ախոռը, և՛ ամբարները։

— Այո՛, քավո՛ր, քանի դեռ Ռուսաստանում չեն վերացել տխմարները, որոնք ստորագրում են թղթերն առանց կարդալու, մեզպեսները կարող են ապրել։ Թե չէ շա՞տ, շա՞տ է վատացել բանը։ Եթե ծերունիներին լսես, այդպե՞ս չէր։ Քսանհինգ տարի ծառայելով ի՞նչ կապիտալ եմ կազմել։ Կարելի է ապրել Վիբորգյան քաղաքամասում, առանց լույս աշխարհ դուրս գալու. ուտելու մի լավ բան կլինի, չեմ գանգատվում, հացս էլ պակա՞ս չէ։ Բայց որ Լիտեյնու վրա բնակարան վարձես, գորգեր ունենաս ու հարուստ աղջկա հետ ամուսնանաս, երեխաներիդ երևելի մարդկանց շարքը դուրս բերես, դրա ժամանակն անցե՛լ է։ Ռեխս էլ, տեսնում ես, այն չէ, մատներս էլ կարմիր են, ինչո՞ւ ես արաղ խմում... Իսկ ինչպե՞ս չխմես։ Փորձի՛ր։ Լակեյից էլ վատ է, ասում են՝ հիմա լակեյն էլ այդպիսի կոշիկներ չի հագնում և ամեն օր փոխում է շապիկը։ Դաստիարակությունն այլևս այն չէ,— ամեն բան խլել են ձեռքներիցս կաթնակեր երեխաները, կոտրատվում են, կարդում ու խոսում են ֆրանսերեն...

— Իսկ գործից բան չեն հասկանում,— ավելացրեց Տարանտևը։

— Ա՛յ, ախպեր, հասկանում են. հիմա գործն էլ այնպես չէ. ամեն մեկն ուզում է, որ պարզ լինի այն, բոլորն էլ խանգարում են մեզ։ Այնպես չպետք է գրել, սա ավելորդ գրագրություն է, ժամանակի վատնում, կարելի է ավելի շուտ... խանգարո՞ւմ են։

— Բայց պայմանագիրը հո ստորագրված է. չխանգարեցի՞ն,— ասաց Տարանտևը։

— Այն, իհարկե, սուրբ է արդեն։ Խմե՛ք, քավո՛ր։ Ա՛յ, Զատյորտիին Օբլոմովկա կուղարկի, նա մի քիչ կքամի։ Թող դրանից հետո հասնի ժառանգներին...

— Թող,— նկատեց Տարանտևը։— Եվ ի՞նչ ժառանգներ են որ, երեք-չորս պորտ, նապաստակի ջրի ջուրը։

— Միայն հարսանիքի՞ց եմ վախենում,— ասաց Իվան Մատվեևիչը։

— Քեզ ասում են՝ մի՛ վախենա։ Ա՛յ, միտդ պահիր ասածս։

— Արդյո՞ք,— ուրախ առարկեց Իվան Մատվեևիչը։— Իսկ նա չէ՞ որ աչքը տնկել է քրոջս վրա...— շշուկով ավելացրեց նա։

— Ի՞նչ ես ասում,— զարմանքով ասաց Տարանտևը։

— Միայն թե սո՛ւս կաց։ Աստված վկա, այդպես է...

— Է՛հ, եղբայր,— զարմանում էր Տարանտևը՝ գոռով ուշքի գալով,— ես երազում էլ չէի կարող տեսնել։ Է՛հ, իսկ քույրդ ի՞նչ է անում։

— Ի՞նչ է անում։ Դու նրան ճանաչում ես, ա՛յ թե ինչ։

Նա բռունցքով թակեց սեղանին։

— Մի՞թե շնորհք ունի իր օգուտները պահելու։ Կով է, իսկական կով. ուզում ես խփիր նրան, ուզում ես գրկիր— միշտ ուրախանում է, ինչպես ձին վարսակ տեսնելիս։ Մեկ ուրիշը... օ՛յ-օ՛յ։ Բայց ես աչքս վրաներից չեմ հեռացնում, հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ հոտ է փչում դրանից։

XI

«Զո՞ւրտ ամիս։ Դեռ չորս ամիս էլ հարկադրանք, գաղտնի տեսակցություններ, կասկածոտ գեմքեր, ժպիտներ»,— մտածում էր Օբլոմովը՝ սանդուղքներով բարձրանալով Իլյինսկայաների բնակարանը։ «Աստվա՜ծ իմ, ե՞րբ պիտի վերջանա այս ամենը։ Իսկ Օլգան շտապեցնելու է այսօր, վաղը։ Նա այնքա՞ն հաստատակամ է, անհողդողդ։ Նրան դժվար է համոզել...»

Օբլոմովը հասավ համարյա մինչև Օլգայի սենյակը, չհանդիպելով ոչ ոքի։ Օլգան նստած էր իր փոքրիկ հյուրասենյակում, որ գտնվում էր ննջարանի առջև, և խորասուզված ինչոր գիրք էր կարդում։

Օբլոմովը հանկարծ կանգնեց նրա առջև, այնպես որ նա ցնցվեց, հետո սիրալիր կերպով, ժպիտն երեսին, ձեռքը մեկնեց նրան, բայց աչքերը դեռ կարծես շարունակում էին գիրքը կարդալ. նա նայում էր ցրված։

— Դու մենա՞կ ես,— հարցրեց Օբլոմովը։

— Այո՛, ma tante-ը մեկնեց Ցարսկոյե Սելո. ինձ էլ հրավիրում էր իր հետ գնալու։ Մենք համարյա մենակ ենք ճաշելու։ Միմիայն Մարյա Սեմյոնովնան կգա՝ այլ կերպ ես չէի կարողանա ընդունել քեզ։ Այսօր դու բացատրվել չես կա-

ռող։ Որքա՞ն տաղտկալի է այդ բոլորը։ Դրա փոխարեն՝ վազը...— ավելացրեց նա և ժպտաց։— Իսկ ի՞նչ կլիներ, եթե ես այսօր Ցարսկոյե Սելո գնայի,— հարցրեց նա կատակով։

Օբլոմովը լուռ էր։

— Դու մտահոգվա՞ծ ես,— շարունակում էր Օլգան։

— Գյուղից նամակ ստացա,— ասաց նա միօրինակաբար։

— Ո՞ւր է այն։ Քեզ մո՞տ է։

Նա նամակը տվեց Օլգային։

— Ոչինչ չեմ կարողանում հասկանալ,— ասաց Օլգան՝ նայելով թղթին։

Օբլոմովը վերցրեց նրանից նամակը և բարձրաձայն կարդաց։ Օլգան մտածմունքի մեջ ընկավ։

— Հիմա ի՞նչ ես անելու,— հարցրեց Օլգան՝ մի փոքր լռելուց հետո։

— Ես այսօր խորհրդակցեցի տանտիրուհու եղբոր հետ,— պատասխանեց Օբլոմովը,— և նա հանձնարարում է ինձ որպես հավատարմատարի Իսայ Ֆոմիչ Զատյորտիին. ես նրան կհանձնարարեմ այս բոլորը կարգի բերել...

— Օտա՞ր, անծանո՞թ մարդու,— զարմանքով առարկեց Օլգան։— Բահրա հավաքել, քննել գյուղացիներին, հսկել հացահատիկի վաճառքը...

— Նա ասում է, որ Զատյորտին ազնվագույն մարդ է, տասներկու տարի է՝ ծառայում է նրա հետ... Միայն մի փոքր կակազում է...

— Իսկ քո տանտիրուհու եղբայրն ի՞նքն ինչպիսի մարդ է։ Դու նրան ճանաչո՞ւմ ես։

— Ո՛չ. բայց նա, թվում է, այնպիսի՞ դրական, գործնական մարդ է, բացի այդ՝ ես ապրում եմ նրա տանը. կխղճահարվի՞ խաբե՞լ։

Օլգան լուռ էր և նստած էր աչքերը խոնարհած։

— Հակառակ դեպքում չէ՞ որ հարկ կլինի, որ ես ինքս գնամ,— ասաց Օբլոմովը,— խոստովանում եմ՝ ես այդ չէի ցանկանա։ Ես բոլորովին խամաքել եմ ճանապարհ գնալուց, մանավանդ ձմեռը... Նույնիսկ երբեք չեմ գնացել։

Օլգան շարունակ ներքև էր նայում՝ շարժելով կոշիկի քիթը։

— Եթե մինչև անգամ գնամ էլ,— շարունակում էր Օբլո-

մովը,— ապա չէ՞ որ դրանից բացարձակապես ոչինչ չի դուրս գա, ես բան չեմ հասկանա. գյուղացիներն ինձ կխաբեն, ստարոստան կասի՝ ի՞նչ ուզում է, ես պետք է ամեն բանի հավատամ, փող կտա՝ որքան խելքին փչի։ Ա՜խ, Անդրեյն այստեղ չէ. նա ամեն ինչ կարգի՞ կբերեր,— վշտացած ավելացրեց նա։

Օլգան քմծիծաղ տվեց, այսինքն՝ ծիծաղեցին նրա շրթունքները միայն, բայց ոչ սիրտը, սրտի վրա դառնություն կար։ Նա սկսեց լուսամուտից դուրս նայել՝ մի փոքր կկոցելով աչքի մեկը և հետևելով յուրաքանչյուր անցնող կառքի։

— Մինչդեռ այդ հավատարմատարը մեծ կալվածք է կառավարել,— շարունակում էր Օբլոմովը,— բայց կալվածատերը նրան հեռացրել է հենց այն պատճառով, որ նա կակազում է։ Ես նրան հավատարմագիր կտամ, պլանները կհանձնեմ. նա տան կառուցման նյութեղեն գնելու կարգադրություն կանի, կհավաքի բահրան, կծախի հացահատիկը, փող կբերի և այն ժամանակ... Որքա՜ն ուրախ եմ, սիրելի՜ Օլգա,— ասաց նա՝ համբուրելով նրա ձեռքը,— որ կարի՞ք չկա քեզնից հեռանալու։ Ես անջատմանը չէի դիմանա, առանց քեզ գյուղում, մենակ... սարսափելի՜ է։ Բայց հիմա մենք պետք է շատ զգույշ լինենք։

Օլգան լայն հայացք գցեց նրա վրա և սպասում էր։

— Այո՛,— սկսեց խոսել նա դանդաղ, համարյա կակազելով,— պետք է տեսնվել երբեմնակի միայն. երեկ նորից սկսել էին խոսել մեզ մոտ նույնիսկ տանտիրուհու սենյակներում... իսկ ես չեմ ուզում... Հենց որ բոլոր գործերը կարգի բերվեն, հավատարմատարը կառուցման վերաբերյալ կարգադրություններն անի՝ ու փողերը բերի... այդ բոլորը կվերջանա եղած-չեղած մի տարում... այն ժամանակ այլևս անջատում չի լինի, մենք կասենք մորաքրոջը, և... և...

Նա նայեց Օլգային. սա ուշագնաց էր եղել։ Նրա գլուխը թեքվել էր մի կողմի վրա, կապտած շրթունքների ետևում երևում էին ատամները։ Նա չէր նկատել, բերկրանքի ու երազանքների առատության մեջ, որ «երբ բոլոր գործերը կարգի բերվեն, հավատարմատարը կարգադրություն անի» բառերի ժամանակ Օլգան գույնը գցել էր և չէր լսել նրա նախադասության վերջը։

— Օ՛լգա... աստվա՜ծ իմ, իրեն վատ է զգում,— ասաց նա և քաշեց զանգը։

— Օրիորդն իրեն վա՜տ է զգում,— ասաց նա մոտ վազող Կատյային։— Շուտ ջո՜ւր հասցրեք... սպիրտ...

— Տե՜ր աստված։ Ամբողջ առավոտն այնպես ուրախ էր... Ի՞նչ է պատահել նրան,— շշնջում էր Կատյան մորաքրոջ սեղանի վրայից բերելով սպիրտը և մի բաժակ ջուր ձեռքին անհանգիստ շարժումներ անելով։

Օլգան ուշքի եկավ, Կատյայի և Օբլոմովի օգնությամբ վեր կացավ բազկաթոռի վրայից և, օրորվելով, գնաց իր ննջարանը։

— Կանցնի,— թույլ ձայնով ասաց նա,— նյարդերս են. դիշերը վատ եմ քնել։ Կա՜տյա, դուռը փակիր, իսկ դուք սպասեցեք ինձ. ես ուշքի կգամ ու դուրս կգամ։

Օբլոմովը մնաց մենակ. ականջը դեմ էր անում դռանը, փականքի ծակից ներս էր նայում, բայց ոչինչ չէր լսվում և ոչինչ չէր երևում։

Կես ժամից Օբլոմովը միջանցքով գնաց մինչև աղախնի սենյակը և հարցրեց Կատյային.

— Ինչպե՞ս է օրիորդը։

— Ոչինչ,— ասաց Կատյան,— պառկեց և ինձ դուրս ուղարկեց. հետո ես նորից ներս մտա. նստած է բազկաթոռի վրա։

Օբլոմովը նորից գնաց հյուրասենյակ, նորից նայեց դռանը. ոչինչ չի լսվում։

Նա շատ թեթև թխկացրեց մատով. պատասխան չկա։

Նա նստեց և մտքերի մեջ ընկավ։ Շատ բան միտք արեց այդ մեկուկես ժամում, շատ բան փոխվեց նրա մտքերում, շատ նոր որոշումներ ընդունեց։ Վերջապես նա կանգ առավ այն բանի վրա, որ ինքը հավատարմատարի հետ գյուղ կգնա, բայց նախ մորաքրոջ համաձայնությունը կխնդրի ամուսնության համար, կնշանվի Օլգայի հետ, Իվան Գերասիմիչին կհանձնարարի բնակարան փնտրել և նույնիսկ փող պարտք կվերցնի... մի քիչ, հարսանիք անելու համար։

Այդ պարտքը կարելի է վճարել հացահատիկի վաճառքից ստացված փողից։ Էլ ինչո՞ւ էր նա այդպես վհատվում։ Ա՜խ, տե՜ր աստված, ինչպե՞ս մի րոպեում ամեն բան կարող է կերպարանափոխվել։ Իսկ այնտեղ, գյուղում, նրանք հավատար-

մատարի հետ միասին կկարգադրեն բահրան հավաքել. և, վերջապես, Շտոլցին կգրի. նա փող կտա և հետո կգա և Օբլոմովկան հիանալի կարգի կգցի, ամեն տեղ ճանապարհներ կանցկացնի, կամուրջներ էլ կշինի, դպրոցներ էլ բաց կանի... Իսկ այնտեղ իրենք Օլգայի հետ... Աստվա՞ծ իմ, ա՛յ երջանկությունը որտեղ է... Ինչպե՞ս այս բոլորը նրա մտքով չանցավ։

Հանկարծ նա իրեն այնպես թեթև, ուրախ զգաց. նա սկսեց մի անկյունից մյուսն անցնել, մինչև անգամ թխկթխկացնում էր մատներով, քիչ մնաց՝ ուրախությունից բղավեր, մոտեցավ Օլգայի դռանը և կամաց կանչեց նրան ուրախ ձայնով։

— Օ՛լգա, Օ՛լգա։ Ի՞նչ պիտի ասեմ ձեզ,— ասում էր նա՝ շրթունքները կպցնելով դռան արանքին։— Երբեք չեք սպասի...

Նա մինչև անգամ վճռեց այսօր նրա մոտից չգնալ, այլ սպասել մորաքրոջը։ «Այսօրևեթ կհայտնենք նրան, և ես իրրև փեսացու կգնամ այստեղից»։

Դուռը կամացուկ բացվեց, և երևաց Օլգան. Օբլոմովը նայեց նրան և հանկարծ վհատվեց. նրա ուրախությունը միանգամից չքացավ. Օլգան կարծես մի քիչ մեծացել էր։ Դժգույն է, բայց աչքերը փայլում են. փակված շուրթերում, յուրաքանչյուր դիմագծում թաքնված է ներքին լարված կյանքը, որը սառցապատվել է բռնի հանգստությամբ ու անշարժությամբ։

Նրա հայացքում Օբլոմովը կարդաց վճիռ, բայց ի՞նչ վրճիռ. դեռ չգիտեր, միայն թե սիրտն այնպես էր բաբախում, ինչպես երբեք չէր բաբախել։ Այդպիսի բոպեներ նա իր կյանքում չէր ունեցել։

— Լսի՛ր, Օլգա, այդպես մի՛ նայիր ինձ, ես սարսափո՞ւմ եմ,— ասաց նա։— Ես միաքս փոխեցի. բոլորովին այլ կերպ պետք է դասավորել...— շարունակեց հետո, հետզհետե իջեցնելով տոնը՝ կանգ առնելով և ջանալով թափանցել նրա աչքերի, շրթունքների ու խոսող հոնքերի իր համար այդ նոր իմաստի մեջ։— Ես որոշեցի ինքս գյուղ գնալ, հավատարմատարի հետ միասին... որպեսզի այնտեղ...— հազիվ լսելի ձայնով վերջացրեց նա։

Օլգան լուռ էր և սևեռուն հայացքով, ուրվականի նման նրան էր նայում։

Օբլոմովը աղոտ կերպով կռահում էր, թե ինչ դատավճիռ էր սպասում իրեն, և վերցրեց գլխարկը, բայց դանդաղում էր հարցնել. նրա համար սարսափելի էր լսել ճակատագրական վճիռը և, գուցե, վճիռն առանց բողոքարկման։ Վերջապես նա հաղթահարեց իրեն։

— Արդյոք ճի՞շտ եմ հասկացել...— հարցրեց նա փոխված ձայնով։

Օլգան դանդաղ, հեզությամբ խոնարհեց գլուխն ի նշան համաձայնության։ Թեև Օբլոմովը նախքան այդ գուշակում էր նրա միտքը, բայց գույնը գցեց և շարունակ կանգնած էր նրա առաջ։

Օլգան մի փոքր նվաղկուն էր, բայց այնպես հանգիստ ու անշարժ էր թվում, կարծես քարե անդրի լիներ։ Դա այն գերբնական հանգստությունն էր, երբ կենտրոնացած մտադրությունը կամ հարված ստացած զգացմունքը մարդուն հանկարծ տալիս են ամբողջ ուժը՝ իրեն զսպելու համար, բայց միայն մի պահ։ Նա նման էր վիրավորվածի, որը ձեռքով սեղմել է վերքը, որպեսզի ասի-վերջացնի, ինչ որ հարկավոր է, և ապա մեռնի։

— Դու ինձ չե՞ս ատի,— հարցրեց Օբլոմովը։

— Ինչի՞ համար,— ասաց նա թույլ ձայնով։

— Այն ամենի համար, ինչ որ ես արեցի քեզ...

— Ի՞նչ ես արել։

— Սիրեցի քեզ. դա վիրավորա՞նք է։

Օլգան կարեկցությամբ ժպտաց։

— Այն բանի համար,— ասում էր նա՝ գլուխը կախ գցելով,— որ դու սխալվում էիր... Գուցե դու ինձ կներես, եթե հիշես, որ ես նախազգուշացնում էի, թե ինչ ամոթ կզգաս, երբ զղջալ սկսես...

— Ես չեմ զղջում։ Այնպես ցավալի է ինձ համար, այնպես ցավալի է...— ասաց Օլգան և կանգ առավ, որ շունչ քաշի։

— Իմ դրությունն ավելի վատ է,— պատասխանում էր Օբլոմովը,— բայց ես արժանի եմ դրան. դո՞ւ ինչու ես տանջվում։

— Ես պատժված եմ,— ասաց նա,— հպարտության համար, ես չափազանց շատ էի հույս դնում իմ ուժերի վրա.

ահա թե որն էր իմ սխալը, և ոչ թե այն, ինչից դու էիր վախենում։ Ես չէի երազում առաջին երիտասարդության և գեղեցկության մասին. ես կարծում էի, թե կաշխուժացնեմ քեզ, թե դու կարող ես դեռ ապրել ինձ համար, իսկ դու վաղուց արդեն մեռած ես։ Ես այդ սխալը չէի նախատեսել, այլ շարունակ սպասում էի, հույս ունեի... և ահա,— դժվարությամբ հառաչանքով վերջացրեց նա։

Օլգան լռեց, հետո նստեց։

— Ես չեմ կարողանում կանգնել. ոտքերս դողում են։ Քարը կկենդանանար այն բանից, ի՞նչ ես արեցի,— շարունակեց Օլգան նվազկոտ ձայնով։— Հիմա ոչինչ չեմ անի, ոչ մի քայլ, նույնիսկ Ամառային Այգի չեմ գնա. ամեն ինչ ապարդյուն է... դու մեռած ես։ Համաձա՞յն ես ինձ հետ, Իլյա՛,— ավելացրեց նա՝ մի փոքր լռելուց հետո։— Ջե՞ս կշտամբի ինձ երբեք, որ ես հպարտությունից կամ քմահաճույքից բաժանվեցի քեզնից։

Օբլոմովը բացասաբար շարժեց գլուխը։

— Համոզվա՞ծ ես, արդյոք, որ մեզ այլևս բան չի մնացել, ոչ մի հույս։

— Այո՛,— ասաց Օբլոմովը,— դա ճշմարիտ է... բայց, գուցե...— անվճռականորեն ավելացրեց հետո,— մի տարուց...

Նրան պակասում էր իր երջանկությանը վճռական հարված հասցնելու արիությունը։

— Մի՞թե դու կարծում ես, թե մի տարի հետո կարգի կգցես քո գործերն ու կյանքը,— հարցրեց Օլգան։— Մտածի՛ր։

Օբլոմովը հառաչեց ու մտածմունքի մեջ ընկավ, մաքառում էր ինքն իր հետ։ Օլգան այդ մաքառումը կարդաց նրա դեմքի վրա։

— Լսի՛ր,— ասաց Օլգան,— ես հիմա երկար նայում էի մորս նկարին և, կարծես, նրա աչքերից խորհուրդ և ուժ փոխառա։ Եթե դու այժմ, իբրև ազնիվ մարդ... Հիշի՛ր, Իլյա՛, մենք երեխաներ չենք և կատակ չենք անում. խոսքը ամբո՛ղջ կյանքին է վերաբերում։ Ուրեմն խստությամբ հարցրու քո խղճին և ասա. ես քեզ կհավատամ, ես քեզ ճանաչում եմ. ամբողջ կյանքի համար հերիք կանե՞ս։ Կլինե՞ս ինձ համար այն, ի՞նչ որ պետք է ինձ։ Դու ինձ ճանաչում ես, հետևապես հասկանում ես, թե ինչ եմ ուզում ասել։ Եթե դու հա-

մարձակ և մտածված կերպով ասես՝ այո՛, ես իմ որոշումը ետ եմ վերցնում, ահա իմ ձեռքը և գնանք՝ ուր ուզում ես՝ արտասահման, գյուղ, մինչև անգամ Վիբորգյան քաղաքամա՛սը։

Օբլոմովը լուռ էր։

— Եթե դու իմանայիր, թե ինչպես եմ սիրում...

— Ես ո՛չ թե սիրո հավաստիացումներ եմ սպասում, այլ կարճ պատասխան,— ընդհատեց Օլգան համարյա չոր-չոր։

— Մի՛ տանջիր ինձ, Օ՛լգա,— վհատությամբ աղերսում էր նա։

— Ի՞նչ կասես, Իլյա, իրավացի՞ եմ, թե ոչ։

— Այո՛,— լսելի ձայնով և վճռականորեն ասաց Օբլոմովը,— դու իրավացի՞ ես։

— Ուրեմն ժամանակն է, որ մենք բաժանվենք,— վճռեց Օլգան,— քանի՞ քեզ այստեղ չեն գտել և չեն տեսել, թե որքան հուզված եմ ես։

Օբլոմովը դեռ էլի չէր գնում։

— Եթե ամուսնանայիր էլ, հետո՞ ինչ,— հարցրեց Օլգան։

Նա լուռ էր։

— Դու օրեցօր ավելի ու ավելի խոր կննջեիր— այնպես չէ՞։ Իսկ ե՞ս։ Տեսնո՞ւմ ես՝ ինչպիսին եմ ես։ Ես չեմ պառավի, ապրելուց երբեք չեմ հոգնի։ Իսկ քեզ հետ մենք կսկսեինք ապրել օրեցօր, կսպասեինք ծննդյան տոներին, հետո բարեկենդանին, հյուր կգնայինք, կպարեինք և ոչ մի բանի մասին չէինք մտածի. կպառկեինք քնելու և փառք կտայինք աստծուն, որ օրը շուտ անցավ, իսկ առավոտյան կզարթնեինք այն ցանկությամբ, որ այսօրը նման լիներ երեկվան... ահա մեր ապագան, այո՞։ Մի՞թե սա կյանք է։ Ես կհյուծվեմ, կմեռնեմ... Ինչի՞ համար, Իլյա՛։ Երջանիկ կլինե՞ս դու արդյոք...

Օբլոմովը տանջալի հայացքը գցեց դեպի առաստաղը, ուզում էր տեղից շարժվել, փախչել, ոտքերը չէին հնազանդվում նրան։ Ուզում էր մի բան ասել, բերանը չոր էր, լեզուն չէր պտտվում, ձայնը կրծքից դուրս չէր գալիս։ Նա ձեռքերը մեկնեց Օլգային։

— Ուրեմն...— սկսեց նա հազիվ լսելի ձայնով, բայց չվերջացրեց և հայացքով եզրափակեց՝ «մնա՞ս բարով»։

Օլգան էլ էր ուզում մի բան ասել, բայց ոչինչ չասաց, ձեռքը մեկնեց նրան, բայց ձեռքը Օբլոմովի ձեռքին չդիպած ցած ընկավ. ուզում էր նույնպես «մնաս բարով» ասել, բայց նրա ձայնը խոսքի կեսում կտրվեց և կեղծ տոն վերցրեց. դեմքն այլանդակվեց չղաձգությունից, ձեռն ու գլուխը դրեց նրա ուսին և հեկեկաց։ Կարծես նրա ձեռքից խլեցին զենքը։ Խելոք կինն անհետացավ, հանդես եկավ պարզապես կինը, որ անպաշտպան է վշտի դեմ։

— Մնաս բարով, մնաս բարով...— դուրս պրծավ նրա բերանից հեկեկանքների միջոցին։

Օբլոմովը լուռ էր և սարսափով էր նայում նրա արցունքներին, չհամարձակվելով խանգարել դրանց։ Նա խղճահարություն չէր զգում ո՛չ դեպի նա, ոչ էլ դեպի ինքը. նա ինքը խղճալի էր։ Օլգան նստեց բազկաթոռի մեջ և, գլուխը սեղմելով թաշկինակին, հենվեց աթոռին ու դառնապես լաց էր լինում։ Արցունքները հոսում էին ոչ իբրև հանկարծական և ժամանակավոր ցավից վայրկենապես դուրս ցայտած տաք շիթեր, ինչպես այն ժամանակ զբոսայգում, այլ թափվում էին անմխիթար կերպով, սառը հեղեղով, ինչպես աշնանային անձրևը, որ անխնա ջրում է արտերը։

— Օ՛լգա, —ասաց նա վերջապես,— ինչո՞ւ ես քեզ տանջում։ Դու սիրո՞ւմ ես ինձ, անջատմանը չե՞ս դիմանա։ Վերցրու ինձ՝ ինչպես կամ, սիրի՛ր իմ մեջ այն, ինչ որ լավ է։

Օլգան բացասաբար շարժեց գլուխը, առանց բարձրացնելու այն։

— Ո՛չ... ո՛չ...— ջանք գործադրեց արտասանելու հետո,— ինձ համար և իմ վշտի պատճառով դու մի՛ վախենա։ Ես ինձ ճանաչում եմ. ես իմ վիշտը մի լավ լաց կլինեմ և հետո այլևս լաց չեմ լինի։ Իսկ այժմ մի՛ խանգարիր լաց լինելու... գնա... Ա՜խ, ո՛չ, սպասի՛ր... Աստված պատժո՞ւմ է ինձ... Ա՜խ, ցավում է, այնպե՞ս ցավում է... այստեղ, սրտիս մոտ...

Հեկեկանքները վերանորոգվեցին։

— Իսկ եթե ցավը չանցնի,— ասաց Օբլոմովը,— և քո առողջությունը խանգարվի։ Այդպիսի արցունքները թունավոր են։ Օ՛լգա, հրեշտա՛կս, լաց մի՛ լինի, մոռացի՛ր ամեն ինչ...

—Ո՛չ, թո՞ղ լաց լինեմ։ Ես լաց եմ լինում ո՛չ թե ապագայի, այլ անցյալի համար...— արտասանեց նա դժվարությամբ,— այն «թառամեց, անցավ»... Ե՛ս չեմ լաց լինում, հիշողություններ՝ են լաց լինում... Ամառը... զբոսայգին... հիշո՞ւմ ես։ Ես ափսոսում եմ մեր ծառուղին, յասամանը... Այդ բոլորը աճել-կպել են սրտիս. պոկելը ցա՜վ է պատճառում...

Նա հուսահատ շարժում էր գլուխն ու հեկեկում՝ կրկնելով.

— Օ՜, ինչ ցավալի է, ի՜նչ ցավալի։

— Եթե դու մեռնե՞ս,— հանկարծ ասաց Օբլոմովը սարսափով։— Մտածի՛ր, Օլգա...

— Ո՛չ,— ընդհատեց նա՝ բարձրացնելով գլուխը և աշխատելով արտասուքների միջից նրան նայել։— Ես միայն վերջերս իմացա, որ քո մեջ սիրել եմ այն, ինչ կուզենայի, որ քո մեջ լիներ, ինչ որ մատնանշել էր ինձ Շտոլցը, ինչ որ մենք հնարել էինք նրա հետ միասին։ Ես սիրում էի ապագա Օբլոմովին։ Դու հեզ ես, ազնիվ, Ի՛լյա՛, դու քնքուշ ես... աղավնի ես, դու գլուխդ թաքցնում ես թևիդ տակ և այլևս ոչինչ չես ուզում. դու պատրաստ ես ամբողջ կյանքդ զունդունալու տանիքի տակ... բայց ես այդպես չեմ, դա ինձ համար քիչ է, ինձ մի ուրիշ բան էլ է պետք, իսկ թե ի՞նչ, չգիտե՞մ։ Կարո՞ղ ես ինձ սովորեցնել, ասել, թե այդ ի՞նչ է, որ պակասում է ինձ, տալ այդ ամենը, որպեսզի ես... Իսկ քնքշություն... ո՞րտեղ չկա այն։

Օբլոմովի ոտքերը ծալվեցին։ Նա նստեց բազկաթոռի մեջ և թաշկինակով սրբեց ձեռքերն ու ճակատը։

Դաժան էր ասված խոսքը. այն խորապես խոցեց Օբլոմովին. ներքուստ կարծես այրեց նրան, արտաքուստ սառը քամի փչեց նրա վրա։ Որպես պատասխան նա ժպտաց մի տեսակ խղճալիորեն, հիվանդագին-ամաչկոտ կերպով, ինչպես մուրացկանը, որին կշտամբել են իր մերկության համար։ Նա նստած էր անզորության այդ ժպիտով, հուզմունքից և վիրավորանքից թուլացած. նրա մարած հայացքը պարզ ասում էր. «Այո՛, ես աղքատիկ եմ, խղճալի, մուրաց... խփե՛ք, խրփե՛ք ինձ...»

Օլգան հանկարծ նկատեց, թե որքան թույն կար իր խոսքի մեջ. նա արագ նետվեց դեպի Օբլոմովը։

— Ների՛ր ինձ, բարեկա՛մս,— ասաց Օլգան քնքշությամբ, կարծես արցունքներով։— Ես չեմ հասկանում, թե ինչ եմ ասում, ես խելագա՛ր եմ։ Մոռացի՛ր ամեն բան. լինենք առաջվա պես. թող ամեն ինչ մնա՝ ինչպես կար...

— Ո՛չ,— ասաց Օբլոմովը, հանկարծ վեր կացավ՝ վճռական շարժումով ետ մղելով նրա խոյանքը։— Չի՛ մնա։ Մի՛ անհանգստանա, որ ճշմարտությունն ասացիր, ես դրան արժանի եմ...— ավելացրեց վհատությամբ։

— Ես երազողի, ցնորամտի մե՛կն եմ,— ասում էր Օլգան։— Դժբախտ բնավորություն ունեմ։ Ինչու ուրիշները, ինչու Սոնեչկան այնպես երջանիկ է...

Օլգան լաց եղավ։

— Գնա՛,— վճռեց Օլգան՝ թաց թաշկինակը ծվատելով ձեռքերով։— Ես չեմ դիմանա. ինձ համար դեռ թանկ է անցյալը...

Օլգան նորից թաշկինակով ծածկեց երեսը և աշխատում էր խեղդել հեկեկանքը։

— Ինչու՞ խորտակվեց ամեն ինչ,— հանկարծ հարցրեց Օլգան՝ գլուխը բարձրացնելով։— Ո՞վ է անիծել քեզ, Իլյա։ Ի՞նչ արիր դու։ Դու բարի ես, խելոք, քնքուշ, ազնիվ... և... կործանվում ես։ Ի՞նչն է քեզ կործանողը։ Անուն չունի այդ չարիքը...

— Ունի,— ասաց Օբլոմովը հազիվ լսելի ձայնով։

Օլգան հարցական, արտասվալից աչքերով նայեց նրան։

— Օբլոմովականությո՛ւն,— շշնջաց նա, հետո վերցրեց Օլգայի ձեռքը, ուզեց համբուրել, բայց չկարողացավ, միայն ամուր սեղմեց շրթունքներին, և չերմ արցունքները կաթեցին Օլգայի մատների վրա։ Առանց գլուխը բարձրացնելու, առանց Օլգային իր դեմքը ցույց տալու, Օբլոմովը շուռ եկավ և գնաց։

XII

Աստված գիտե, թե ուր էր թափառում նա, ի՞նչ էր անում ամբողջ օրը, բայց տուն վերադարձավ ուշ գիշերով։ Տանտիրուհին առաջինը լսեց դարբասի թիկթիկոցն ու շան հաչոցը և քնից արթնացրեց Անիսյային ու Զախարին, ասելով, որ բարին վերադարձել է։

Իլյա Իլյիչը համարյա չնկատեց, թե ինչպես Զախարը հանեց նրա շորերը, քաշեց կոշիկները և վրան գցեց՝ խալաթը։

— Սա՞ ինչ է,— հարցրեց նա միայն՝ նայելով խալաթին։

— Տանտիրուհին այսօր բերեց. լվացել և կարկատել են խալաթը,— ասաց Զախարը։

Օբլոմովն ինչպես որ նստեց, այնպես էլ մնաց բազկաթոռի մեջ։

Նրա շուրջն ամեն ինչ ընկղմվեց քնի ու մթության մեջ։ Նա նստած էր՝ ձեռքին հենված, չէր նկատում խավարը, չէր լսում ժամացույցի խփոցը։ Նրա գիտակցությունը խեղդվում էր այլանդակ, աղոտ մտքերի քաոսի մեջ. այդ մտքերը սլանում էին ինչպես ամպերը երկնքի երեսին՝ անսպատակ և անկապակից. նա չկարողացավ դրանցից ոչ մեկը բռնել։

Սիրտը սպանված էր. այնտեղ առժամանակ դադար էր առել կյանքը։ Վերադարձը դեպի կյանք, դեպի կարգուկանոն, դեպի կենսական ուժերի ուղիղ ճանապարհով կուտակված թափի հոսանք՝ կատարվում էր դանդաղ։

Զգացմունքների հորդումը շատ դաժան էր, և Օբլոմովն ինքն իր մարմինը չէր զգում, չէր զգում ո՛չ հոգնություն, ոչ էլ որևէ պահանջ։ Նա կարող էր ամբողջ օրերով քարի նման պառկած մնալ կամ ամբողջ օրերով գնալ, շարժվել ինչպես մեքենա։

Հետզհետե, դժվար ճանապարհով մարդու մեջ մշակվում է կա՛մ հնազանդություն ճակատագրին,— և այդ ժամանակ օրգանիզմը դանդաղ և հետզհետե անցնում է իր բոլոր գործողությունների կատարմանը,— կա՛մ վիշտը խորտակում է մարդուն, և նա այլևս վեր չի կենա, նայած վշտին և նայած նմանապես մարդուն։

Օբլոմովը չէր հիշում, թե որտեղ է նստած, նույնիսկ՝ նըստա՞ծ է արդյոք. նայում էր մեքենաբար և չէր նկատում, թե ինչպես էր լուսանում առավոտը. ականջ էր դնում և չէր լսում, թե ինչպես հնչեց պառավի շոր հազը, ինչպես դռնապանն սկսեց բակում փայտ կոտրել, ինչպես աղմուկ ու շուրդ սկըսվեց տան մեջ, նայում էր և չէր տեսնում, թե ինչպես տանտիրուհին ու Ակուլինան շուկա գնացին, ինչպես ցանկապատի մոտ մի վայրկյան երևաց ծրարը։

Ո՛չ աքաղաղները, ո՛չ շան հաչոցը, ո՛չ դարբասի ճռճռոցը նրան չկարողացան կարկամախտից դուրս բերել։ Շխկշխկացին գավաթները, թշշաց ինքնաեռը։

Վերջապես, ժամը ինն անց Զախարը մատուցարանով բաց արեց առանձնասենյակի դուռը, ըստ սովորության ոտքը ետ գցեց, որպեսզի դուռը փակի և, ըստ սովորության, վրիպեց, բայց և այնպես մատուցարանը կարողացավ ձեռքին պահել. երկարատև պրակտիկայի շնորհիվ վարժվել էր, բացի այդ, գիտեր էլ, որ ետևից Անիսյան նայում է դռան միջով, և հենց որ նա մի բան վեր գցի, Անիսյան իսկույն վազելու է ու ամոթահար է անելու նրան։

Նա բարեհաջող կերպով հասավ մինչև անկողինը՝ մորուքը կոխած մատուցարանի մեջ և այն ամուր գրկած, և հենց այն է՝ ուզում էր գավաթները դնել մահճակալի մոտ գտնվող սեղանի վրա և զարթեցնել բարինին, մեկ էլ նկատեց, որ անկողնին ձեռք չի՞ տրված, բարինը չկա՞։

Նա ցնցվեց, և գավաթը թռավ հատակին, դրա ետևից էլ շաքարամանը։ Սկսեց օդի մեջ որսալ իրերը և օրորում էր մատուցարանը, այն ժամանակ ցած թափվեցին մյուսները։ Նա կարողացավ միայն գդալը պահել մատուցարանի վրա։

— Սա ի՞նչ ձախորդություն է,— ասում էր նա, նայելով, թե ինչպես է Անիսյան հավաքում շաքարի կտորները, գավաթի կտորտանքը, հացը։— Որտե՞ղ է բարինը։

Իսկ բարինը նստած է բազկաթոռի մեջ և նրա երեսին դույն չկա։ Զախարը բերանը բաց արած նայեց նրան։

— Այդ ինչո՞ւ, Իլյա՛ Իլյիչ, ամբողջ գիշերն անց եք կացրել բազկաթոռի մեջ, չեք պառկել,— հարցրեց նա։

Օբլոմովը գլուխը դանդաղ դարձրեց դեպի նա, ցրված նայեց Զախարին, թափված սուրճին, գորգի վրա թափթփված շաքարին։

— Իսկ դու ինչո՞ւ կոտրեցիր գավաթը,— ասաց նա և հետո մոտեցավ լուսամուտին։

Ձյունը թափվում էր փաթիլ-փաթիլ և խիտ ծածկում գետինը։

— Ձյո՞ւն, ձյո՞ւն, ձյո՞ւն— կրկնում էր նա անիմաստ կերպով, նայելով ձյանը, որ խիտ շերտով ծածկել էր ցանկապատը, վանդակապատը և բանջարանոցի մարգերը։— Ամե՛ն

ինչ ծածկեց,— շշնջաց, ապա հուսահատորեն անկողին մտավ և քնեց ծանր, անհաճո քնով։

Արդեն կեսօրից անց էր, երբ նրան զարթնեցրեց տանտիրուհու սենյակի դռան ճռռոցը. դռնից ներս մեկնվեց մի հոլանի ձեռք ափսեով. ափսեի վրա գոլորշի էր արձակում կարկանդակը։

— Այսօր կիրակի է,— ասում էր ձայնը սիրալիր կերպով,— կարկանդակ ենք թխել. չէի՞ք կամենա համտես անել։

Բայց Օբլոմովը ոչինչ չպատասխանեց. նա տենդի մեջ էր։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Մի տարի էր անցել Իլյա Իլյիչի հիվանդանալուց հետո։ Այդ տարին շատ փոփոխություններ բերեց աշխարհի զանազան վայրերում. մի տեղ վրդովեց երկրամասը, իսկ մի այլ տեղ հանգստացրեց. մի տեղ հանգավ աշխարհի որևէ մի լուսատու, մի այլ տեղ փայլեց ուրիշը. մի տեղ աշխարհը յուրացրեց կեցության նոր գաղտնիքը, իսկ մի այլ տեղ՝ հողմացրիվ խորտակվեցին բնակարաններն ու սերունդները։ Որտեղ դեպի անկում էր դիմում հին կյանքը, այնտեղ թարմ կանաչի նման, նորն էր դուրս գալիս։

Վիբորգյան քաղաքամասում էլ, այրի Պշենիցինայի տանը, թեև օրերն ու գիշերները խաղաղ էին անցնում, կատաղի և հանկարծական փոփոխություններ չմտցնելով միակերպ կյանքի մեջ, թեև տարվա չորս եղանակները կրկնեցին իրենց գործառնություններն, ինչպես՝ անցյալ տարի, բայց այնուամենայնիվ կյանքը կանգ չէր առնում, շարունակ փոխվում էր իր երևույթներում, բայց փոխվում էր այնպիսի դանդաղ աստիճանակությամբ, ինչպես տեղի են ունենում մեր մոլորակի երկրաբանական ձևափոխությունները. այնտեղ հետզհետե քանդվում է սարը, այստեղ ամբողջ դարեր ծովը տիրում է բերում կամ նահանջում է իր ափերից և հողի աճեցում է առաջացնում։

Իլյա Իլյիչն առողջացավ։ Հավատարմատար Զատյորտին ուղևորվեց գյուղ և լրիվ ուղարկեց հացահատիկի վաճառքից

ստացված փողը և ինքը գրանից ստացավ ուղեծախքերը, օրապահիկը և աշխատանքի վարձատրությունը։

Ինչ վերաբերում է բահրային, ապա Զատյորտին գրում էր, որ այդ փողերը հավաքել չի կարելի, որ գյուղացիները մասամբ քայքայվել են, մասամբ հեռացել են զանազան վայրեր և թե որտեղ են գտնվում, հայտնի չէ, և որ նա տեղնուտեղը գործուն տեղեկանքներ է ժողովում։

Ճանապարհի, կամուրջների մասին նա գրում էր, թե շտապելու բան՝ չկա, թե գյուղացիներն ավելի սիրով գերադասում են առևտրի գնալ սարերն ու ձորերն անցնելով, քան թե աշխատել նոր ճանապարհի և կամուրջների կառուցման վրա։

Մի խոսքով՝ տեղեկություններ ու փող ստացվել են բավարար, և Իլյա Իլյիչը ծայրահեղ կարիք չզգաց, որ ինքն անձամբ գնա և այդ կողմից հանգստացած էր մինչև հաջորդ տարին։

Հավատարմատարը կարգադրություն արեց նաև տուն կառուցելու վերաբերյալ. նահանգական ճարտարապետի հետ միասին որոշելով անհրաժեշտ նյութեղենի քանակությունը, նա հրաման տվեց ստարոստային՝ գարունը բացվելուն պես անտառանյութ կրել և հրամայեց սարայ շինել աղյուսի համար, այնպես որ Օբլոմովին մնում էր միայն գարնանը գալ և, երեսը խաչ հանելով, սկսել կառուցումն իր ներկայությամբ։ Մինչև այդ ժամանակը ենթադրվում էր հավաքել բահրան, և բացի այդ՝ մտադրություն կար գյուղը գրավ դնել. հետևաբար ծախսերը ծածկելու հնարավորություն կար։

Հիվանդությունից հետո Իլյա Իլյիչը երկար ժամանակ մռայլ էր, ամբողջ ժամերով ընկնում էր տանջագին մտախոհության մեջ և երբեմն չէր պատասխանում Զախարի հարցերին, չէր նկատում, թե նա ինչպես էր գավաթները հատակին գցում ու սեղանի փոշին չէր մաքրում, կամ տանտիրուհին, տոն օրերին ներկայանալով կարկանդակով, նրան արցունքների մեջ էր գտնում։

Հետո, կամաց-կամաց, կենդանի վշտի տեղը համր անտարբերությունը բռնեց։ Իլյա Իլյիչն ամբողջ ժամերով նայում էր, թե ինչպես էր թափվում ձյունը և բակում ու փողոցում ձնակույտեր կազմում, ինչպես էր ծածկում վառելափայ-

տը, հավանոցները, շան բունը, փոքրիկ պարտեզը, բանջարանոցի ածուները, ինչպես էին ցանկապատի սյուներից բուրգեր կազմում, ինչպես ամեն ինչ մեռել էր ու սավանով ծածկվել։

Նա երկար լսում էր սրճաղացի ձայնը, շան վազվզոցը շղթայի երկարությամբ և նրա հաչոցը, կոշիկների մաքրումը Զախարի կողմից և ճոճանակի միալար ձայնը։

Առաջվա նման նրա սենյակն էր մտնում տանտիրուհին՝ առաջարկելով որևէ բան գնել կամ որևէ բան ճաշակել. վազում-գալիս էին տանտիրուհու երեխաները. նա անտարբեր սիրալիրությամբ խոսում էր մեկի հետ, մյուսին դաս էր տալիս, լսում էր, թե ինչպես են կարդում և ալարկոտ ու անկամ ժպտում էր նրանց մանկական շաղակրատության վրա։

Բայց ամարը քանդվում էր քիչ-քիչ, ծովը նահանջում էր ափից կամ մակընթացություն կատարում դեպի այն, և Օբլոմովը կամաց-կամաց իր նախկին նորմալ կյանքն էր թևակոխում։

Աշունը, ամառը և ձմեռը անցան դանդաղ, ձանձրալի։ Բայց Օբլոմովը նորից գարնանն էր սպասում և երազում էր գյուղ գնալու մասին։

Մարտին արտուտաձև բուլկի թխեցին, ապրիլին հանեցին նրա սենյակի կրկնափեղկերը և հայտարարեցին, որ Նևան աղատվել է սառույցներից, և գարունը եկել է։

Նա թափառում է պարտեզում։ Հետո սկսեցին բանջարեղեն տնկել բանջարանոցում. եկան այլևայլ տոներ. հոգեգալուստ, համբարձում, մայիսի 1-ը. այդ բոլոր տոները կատարվում էին մատղաշ կեչիներով, պսակներով, անտառակում թեյ էին խմում։

Ամառվա սկզբից տանն սկսեցին խոսել առաջիկա երկու մեծ տոների մասին. Հովհաննես Մկրտչի օրը՝ եղբոր անվանակոչությունը, և Եղիա մարգարեի օրը՝ Օբլոմովի անվանակոչությունը. դրանք առաջիկայի երկու կարևոր դարաշրջաններն էին։ Եվ եթե պատահում էր, որ տանտիրուհին շուկայում կարողանում էր գնել կամ ուսանել հորթի մսի մի հիանալի կտոր կամ առանձնապես լավ էր հաջողվում կարկանդակը, նա ասում էր.

— Ա՜խ, եթե այսպիսի հորթի միս պատահեր կամ այս-

պիսի կարկանդակ հաջողվեր Հովհաննես Մկրտչի կամ Եղիա մարգարեի օրը։

Խոսում էին Եղիա մարգարեի ուրբաթի և ամեն տարի դեպի Պորոխովիե Զավոդի կատարվող զբոսանքի մասին, Սմոլենսկի գերեզմանատանը, Կոլպինայում կատարվող տոնի մասին։

Լուսամուտների տակ նորից հնչեց թխսի ծանր կոթոցը և ճտերի նոր սերունդի ծվծվոցը. սկսեցին կարկանդակ թխել ճտերով ու թարմ սնկերով, երևան եկան թարմ աղը դրած վարունգները. շուտով երևացին նաև հատապտուղները։

— Փորոտիքն հիմա այլևս լավ չէ,— ասաց տանտիրուհին Օբլոմովին,— երեկ երկու զույգ մանրերի համար յոթանասուն կոպեկ էին պահանջում, դրա փոխարեն կա թարմ սաղմոնի միս. թեկուզ ամեն օր էլ կարելի է ձկնով բանջարապուր պատրաստել։

Տնտեսական մասը Պշենիցինայի տանը ծաղկում էր, ո՛չ միայն այն պատճառով, որ Ագաֆյա Մատվեևնան օրինակելի տանտիկին էր, որ դա նրա կոչումն էր, այլ նաև այն պատճառով, որ Իվան Մատվեևիչ Մուխոյարովը գաստրոնոմիական տեսակետից մեծ էպիկուրյան էր։ Նա ավելի քան անփույթ էր զգեստի, սպիտակեղենի վերաբերմամբ. զգեստը հագնում էր քաղաքավարի տարիներ և նորը գնելու համար փող էր ծախսում զզվանքով ու սրտնեղությամբ, խնամքով չէր կախոտում շորերը, այլ գցում էր անկյունը։ Սպիտակեղենը, սեվագործ բանվորի նման, միայն շաբաթ օրերն էր փոխում, բայց ինչ վերաբերում էր ուտելիքին, նա ոչ մի ծախս չէր խնայում։

Այս բանում նա մասամբ ղեկավարվում էր իր սեփական, ծառայության մտած ժամանակից ի վեր ստեղծած տրամաբանությամբ. «Ջեն տեսնի, թե փորումդ ինչ կա և դատարկ բաներ չեն դուրս տա. մինչդեռ ժամացույցի ծանր շղթան, նոր ֆրակը, փայլուն կոշիկները՝ այդ ամենը ավելորդ խոսակցություններ են առաջացնում»։

Այդ պատճառով Պշենիցիններին սեղանին մատուցվում էր առաջին տեսակի հորթի միս, սաթագույն թառափենի, սպիտակ սալամբներ։ Նա ինքն էր երբեմն շրջում և որսկան շանպես հոտոտում շուկայում կամ Միլյուտինի խանութներում

և փնշի տակ գրած բերում լավագույն բտած հավ, չէր ափսոսում չորս ռուբլի տալ հնդուհավին։

Գինին նա առնում էր բորսայից և ինքն էր պահում ու ինքն էլ մեջտեղ էր բերում. բայց ճաշասեղանի վրա ոչ ոք երբեք ալինչ չէր տեսնում, բացի մի գրաֆին հաղարջի տերևով պատրաստած օղուց. իսկ գինին խմում էին վերնասենյակում։

Երբ նա Տարանտևի հետ միասին ձկնարան էր գնում, նրա վերարկուի մեջ միշտ պահված էր լինում մի շիշ բարձր տեսակի մագերա, իսկ երբ նրանք «պանդոկում» թեյ էին խմում, նա հեռը բերում էր իր ռոմը։

Եռվի հատակի աստիճանաբար նստելը կամ բարձրանալը և սարի քանդվելը տեղի էր ունենում բոլորի վերաբերմամբ և, իմիջիայլոց, Անիսյայի. Անիսյայի և տանտիրուհու փոխադարձ հրապուրանքը վերածվեց անխզելի կապի, միասնական գոյության։

Օբլոմովը, տեսնելով տանտիրուհու մասնակցությունն իր գործերում, մի անգամ կատակի ձևով առաջարկեց նրան՝ իր վրա վերցնել պարենավորելու բոլոր հոգսերը և իրեն ազատել ամեն տեսակ գլխացավանքից։

Մի բերկրանք ծավալվեց տանտիրուհու դեմքին. նա քըմծիծաղ տվեց նույնիսկ գիտակցաբար։ Ինչպե՞ս ընդարձակվում էր նրա ասպարեզը. մեկի փոխարեն երկու տնտեսություն, կամ մեկը, բայց որքա՞ն մեծը։ Բացի այդ՝ նա ձեռք էր բերում Անիսյային։

Տանտիրուհին խոսեց իր եղբոր հետ, և հետևյալ օրը Օբլոմովի խոհանոցից ամեն ինչ քարշ տվին Պշենիցինայի խոհանոցը. Օբլոմովի արծաթեղենն ու ամանեղենը մտավ Պշենիցինայի բուֆետը, իսկ Ակուլինան աստիճանազուրկ եղավ և խոհարարուհուց դարձավ թռչնապանուհի և բանջարանոցապանուհի։

Ամեն բան սկսվեց մեծ չափերով կատարվել. շաքարի, թեյի պարենամթերքների գնումը, վարունգն ապը գնելը, խրնձորն ու բալը թրջոց գնելը, մուրաբան. ամեն ինչ ընդարձակ ծավալ ստացավ։

Ագաֆյա Մատվեևնան ասեց, Անիսյան բաց արավ իր

ձեռքերը, ինչպես արծիվն իր թևերը, և կյանքը եռաց ու հոսեց գետի նման։

Օբլոմովը ճաշում էր ընտանիքի հետ ժամը երեքին, միայն տանտիրուհու եղբայրը առանձին էր ճաշում, հետո, մեծ մասամբ խոհանոցում, որովհետև նա շատ ուշ էր վերադառնում պաշտոնավայրից։

Թեյն ու սուրճը Օբլոմովին տանում էր տանտիրուհին ինքը, և ոչ թե Զախարը։

Վերջինս, եթե կամենում էր, մաքրում էր փոշին, իսկ եթե չէր կամենում, այն ժամանակ մրրիկի նման ներս էր թռչում Անիսյան, և մասամբ գոգնոցով, մասամբ մերկ ձեռքերով, գրեթե քթով միանգամից փչում, թափ տալիս, քաշում, կարգի բերում ու անհետանում կամ թե չէ՝ տանտիրուհին ինքը, երբ Օբլոմովն իջնում էր պարտեզ, մտնում էր նրա սենյակը, անկարգություն գտնում, գլուխը տարուբերում և քթի տակ ինչ-որ բան փնթփնթալով՝ բարձերը թափ տալիս սար շինում, տեղնուտեղը նայում բարձի երեսներին, նորից փընթփնթում ինքն իրեն, որ հարկավոր է փոխել ու հանում այն, սրբում լուսամուտը, նայում բազմոցի մեջքին ու դուրս գնում։

Եռվի հատակի աստիճանաբար նստելը, սարերի քանդվելը, բերովի տիղմը, վրան ավելացրած՝ թեթև հրաբխային պայթյունները, այս բոլորը կատարվեց ամենից ավելի Ագաֆյա Մատվեևնայի ճակատագրում, և ոչ ոք, ամենից ավելի քիչ նա ինքը, այդ չէր նկատում։ Դա նկատելի դարձավ միայն առատ, պնակնկալ ու անվերջ հետևանքների շնորհիվ։

Ինչո՞ւ որոշ ժամանակից ի վեր տանտիրուհու խելքը գըլխին չէր։

Ինչո՞ւ առաջ, երբ տապակածն այրվում էր, ձուկը չափից ավելի էր եփվում ձկնապուրի մեջ, ապուրի մեջ կանաչի չէր գցվում, նա խստորեն, բայց հանգիստ ու արժանապատվության գիտակցությամբ նկատողություն էր անում Ակուլինային ու մոռանում, իսկ այժմ, եթե նման որևէ բան պատահում էր, նա վեր էր թռչում սեղանից, վազում էր խոհանոց, դառնությամբ լի կշտամբանքներ թափում Ակուլինայի գըլխին և նույնիսկ Անիսյայի վրա փքվում, իսկ հետևյալ օրը ինքն էր հսկում, թե արդյոք կանաչի գցվա՞ծ է, ձուկը չափից ավելի չի՞ եփվել արդյոք։

Գուցե, կասեն, թե նա ամաչում է օտար մարդու առջև անճշտակատար երևալ այնպիսի մի գործում, ինչպիսին տնտեսությունն է, որի վրա էր կենտրոնացել նրա ինքնասիրությունն ու ողջ գործունեությունը։

Լավ։ Իսկ ինչո՞ւ առաջները երեկոյան ժամը ութից նրա աչքերը փակվում էին, իսկ ժամը իններին, երեխաներին քնեցնելուց և նայելուց հետո, թե արդյոք հանգցրա՞ծ են խոհանոցի կրակները, փակվա՞ծ են խողովակները, հավաքվա՞ծ է ամեն ինչ, նա պառկում էր, և ոչ մի թնդանոթ այլևս չէր կարող նրան զարթեցնել մինչև ժամը վեցը։

Իսկ այժմ, եթե Օբլոմովը թատրոն է գնում կամ երկար է նստում Իվան Գերասիմովիչի մոտ և երկար ժամանակ տուն չի գալիս, տանտիրուհու քունը չի տանում, նա մի կողքից մյուսն է շուռ գալիս, խաչակնքում է, հառաչում, փակում է աչքերը, բայց քունը չկա՞ ու չկա՞։

Մի փոքր թխկացնում են փողոցում, նա գլուխը բարձրացնում է; երբեմն վեր է թռչում անկողնից, բաց է անում օդանցքը և լսում է՝ արդյոք նա չէ՞։

Եթե թակում են դարբասը, նա արագ հագնում է շրջազգեստը և վազում խոհանոց, ձայն է տալիս Զախարին, Անիսյային և ուղարկում է դարբասը բաց անելու։

Գուցե, կասեն, որ դրանում արտահայտություն է գտնում բարեխիղճ տանտիրուհին, որը չի ուզում իր տանը անկարգություն լինի, որ կենվորը գիշերը փողոցում սպասի, մինչև հարբած դռնապանը կլսի ու բաց կանի, որ, վերջապես, երկարատև թխկթխկոցը կարող է զարթեցնել երեխաներին...

Լավ։ Իսկ ինչո՞ւ, երբ Օբլոմովը հիվանդացավ, ոչ ոքի նրա սենյակը ներս չէր թողնում, սենյակի հատակը ծածկել էր թաղիքներով ու գորգերով, վարագույրներով ծածկել էր լուսամուտները և կատաղում էր,— նա, որ այնքան բարի և հեզ կին էր,— եթե Վանյան կամ Մաշան մի փոքր ճիչ էին արձակում կամ բարձր ծիծաղում էին։

Ինչո՞ւ գիշերները, հույս չդնելով Զախարի ու Անիսյայի վրա, նա նստած էր մնում նրա անկողնի մոտ, առանց աչքերը նրանից հեռացնելու, մինչև վաղ առավոտյան ժամերգությունը, իսկ հետո, վրան գցելով սալոպը և թղթի մի

կտորի վրա խոշոր տառերով «Ինչա» գրելով՝ եկեղեցի էր վազում, թուղթն ուղարկում էր բեմ, որ առողջության համար աղոթք անեն, ապա հեռանում էր մի անկյուն, ընկնում էր ծնկների վրա և երկար մնում պառկած, գլուխը կպցրած հատակին, այնուհետև շտապ գնում էր շուկա և երկյուղով տուն վերադառնում, դռնից ներս նայում ու շշնջալով հարցնում Անիսյային.

— Ինչպե՞ս է։

Կասեն, թե դա ոչ այլ ինչ է, եթե ոչ խղճում, կարեկցություն, կնոջ էության մեջ տիրապետող տարրեր։

Լավ։ Իսկ՝ ինչո՞ւ, երբ Օբլոմովն առողջանալիս ամբողջ ձմեռը մռայլ էր, հազիվ էր խոսում նրա հետ, նրա սենյակը չէր մտնում, չէր հետաքրքրվում, թե ի՞նչ է անում նա, կատակ չէր անում, չէր ծիծաղում նրա հետ, նա նիհարեց, նրա վրա այնպիսի՞ սառնություն եկավ, այնպիսի՞ անկամություն դեպի ամեն ինչ. նա սուրճ է աղում և չի իմանում, թե ի՞նչ է անում, կամ այնքան շատ շաքար է գցում, որ չի կարելի խմել, և չի զգում, կարծես լեզու չունի։ Ակուլինան ձուկը թերխաշ է թողնում. նրա եղբայրը դժգոհում է, հեռանում սեղանից. նա, կարծես, քարացած լինի, չի էլ լսում։

Առաջները նրան ոչ ոք մտազբաղ չէր տեսել, և դա նրան չէր էլ սազի. նա շարունակ ման էր գալիս ու շարժվում, ամեն բանի նայում աչալրջորեն և տեսնում ամեն ինչ, իսկ հիմա հանկարծ, հավանգը ծնկներին, կարծես քնած է ու չի շարժվում, հետո հանկարծ այնպես է սկսում ծեծել հավանգակոթով, որ նույնիսկ շունն սկսում է հաչել, կարծելով թե դարբասն են թակում։

Բայց հենց որ Օբլոմովն աշխուժացավ, հենց որ նրա դեմքին բարի ժպիտն երևաց, հենց որ նա սկսեց տանտիրուհուն առաջվա նման նայել, սիրալիր կերպով նրա սենյակի դռնից ներս նայել և կատակներ անել, նա նորից գիրացավ, նրա տնտեսությունը նորից ընթացավ աշխույժ, առույգ, ուրախ, մի փոքրիկ ինքնօրինակ երանգով. պատահում էր, նա ամբողջ օրը շարժվում էր լավ սարքած մեքենայի նման, բարեկազմ, կանոնավոր, ման էր գալիս սահուն, խոսում ո՛չ բարձրը, սուրճ աղում, շաքար կոտորում, որևէ բան մաղում, կարանում, ասեղը նրա ձեռքին շարժվում էր հավասար, ժամա-

ցույցի սլաքի նման. հետո նա վեր էր կենում առանց իրարանցման. խոհանոց գնալիս կես ճանապարհին կանգ էր առնում, բաց անում պահարանը. մի բան հանում, տանում՝ ամեն ինչ մեքենայի նման։

Իսկ այժմ, երբ Իլյա Իլյիչը նրա ընտանիքի անդամ դարձավ, նա ուրիշ կերպ էր նույնիսկ ծեծում կամ մաղում, իր ժանյակները գրեթե մոռացել էր։ Սկսում էր կար անել, հանգիստ տեղավորվում էր, հանկարծ Օբլոմովը բղավում էր Զախարին, որ սուրճ տա իրեն,— նա երկու-երեք թռիչքով հասնում էր խոհանոց և ամենայն աշխուժությամբ այնպես նայում, կարծես որևէ բանի նշան է բռնում, վերցնում էր գրդալը, լույսի առաջ երկու-երեք գդալ սուրճ վերցնում ու նայեցնում, որպեսզի իմանա՝ եփվել է, սուրճը նստե՞լ է, արդյոք սուրճը նստվածքով չէի՞ն մատուցի, կնայի՝ արդյոք ներքի մեջ փրփուր կա՞։

Եթե նրա սիրելի կերակուրն է պատրաստվում, տանտիրուհին նայում է պղնձին, բարձրացնում է կափարիչը, հոտ է քաշում, համը տեսնում, հետո ինքը վերցնում է պղինձը և բռնում կրակի վրա։ Եթե նրա համար նուշ է տրորում կամ որևէ բան է ծեծում, այնպիսի եռանդով, այնպիսի ուժով է տրորում ու ծեծում, որ քրտինքը պատում է նրան։

Նրա ամբողջ տնտեսությունը՝ ծեծելը, արդուկելը, մաղելը և այլն, այդ բոլորը նոր, կենդանի իմաստ ստացավ. Իլյա Իլյիչի հանգիստն ու հարմարությունը։ Առաջ նա դրա մեջ պարտականություն էր տեսնում, այժմ դա դարձավ նրա հաճույքը։ Նա սկսեց ապրել իր տեսակի, լի և բազմազան կյանքով։

Բայց նա չգիտեր, թե ինչ է կատարվում իր հետ, երբեք իրեն հարց չէր տալիս, այլ քաղցր լծի տակ մտավ անպայմանորեն, առանց դիմադրության ու հրապուրման, առանց սարսուռի, առանց կրքի, առանց ազոտ նախազգուշացումների, առանց տանջանքի, առանց նյարդերի խաղի և երաժշտության։

Նա, կարծես, հանկարծ ուրիշ հավատ էր ընդունել և սկսել էր պաշտել այդ հավատը, առանց դատողություն անելու, թե ինչ հավատ է դա, ինչպիսի դոգմաներ ունի, այլ կուրորեն հնազանդվելով նրա օրենքներին։

Այդ բանը կարծես ինքն իրեն իջավ նրա վրա, և նա կարծես մտավ ամպի տակ, առանց նահանջելու և առանց առաջ վազելու, այլ սիրեց Օբլոմովին պարզորեն, կարծես թե մրսել և անբուժելի տենդ էր ստացել։

Նա ինքը ոչինչ էլ չէր կասկածում. եթե դա ասվեր նրան, նրա համար նորություն կլիներ. նա կծիծաղեր ու կամաչեր։

Նա լռելյայն պարտականություններ ստանձնեց Օբլոմովի վերաբերյալ, սովորեց նրա յուրաքանչյուր շապիկի կերպարանքը, հաշվեց գուլպաների կրունկների մաշված տեղերը, գիտեր, թե նա որ ոտքով է վեր կենում անկողնից, նկատում էր, թե երբ է ուզում աչքին գարեհատ դուրս գալ, ո՞ր կերակրից և որքա՞ն է ուտում նա, ուրախ է թե տխուր, շատ է քնել թե ոչ, կարծես թե այդ անում էր ամբողջ կյանքում, առանց հարցնելու իրեն, թե ինչո՞ւ, ի՞նչ է իր համար Օբլոմովը, ինչո՞ւ է նա այդպես իրար անցնում։

Եթե հարցնեին՝ սիրո՞ւմ է արդյոք նրան, նա դարձյալ կծիծաղեր և դրական պատասխան կտար, բայց նա նույն ձևով կպատասխաներ նաև այն ժամանակ, երբ Օբլոմովը դեռ ընդամենը մի շաբաթ էր ապրում նրա մոտ։

Ինչի՞ համար և ի՞նչ պատճառով նա հատկապես Օբլոմովին սիրեց, ինչո՞ւ առանց սիրելու ամուսնացել էր, ապրել էր մինչև երեսուն տարեկան հասակն առանց սիրելու, իսկ այստեղ կարծես հանկարծ մի բան մտավ նրա սիրտը։

Թեև սերը քմահաճ, անհաշվետու զգացմունք են համարում, որը առաջ է գալիս որպես հիվանդություն, բայց և այնպես այն էլ, ինչպես ամեն բան, իր օրենքներն ու պատճառներն ունի։ Իսկ եթե մինչև այժմ այդ օրենքները քիչ են ուսումնասիրված, ապա այն պատճառով, որ սիրով սիրահարված մարդու հոգը չէ, որ գիտական աչքով հետևի, թե ինչպե՞ս է տպավորությունը մտնում իր հոգու մեջ, ինչպե՞ս է կարծես քնով կաշկանդում զգացմունքները, ինչպե՞ս սկզբում կուրանում են աչքերը, ո՞ր վայրկյանից զարկերակը, իսկ նրանից հետո նաև սիրտն սկսում է ավելի ուժեղ բաբախել, ինչպե՞ս է մի օրվա մեջ հանկարծ երևան գալիս անձնվիրությունը մինչև գերեզման, իրեն զոհելու ձգտումը, ինչպե՞ս կամաց-կամաց անհետանում է իր եսը և անցնում տղամարդու կամ (կնոջ) մեջ, ինչպես և միտքը արտասովոր կեր-

պով բթանում կամ արտասովոր կերպով հնարագիտանում, ինչպե՞ս է կամքը ենթարկում ուրիշի կամքին, ինչպե՞ս են գալիս արտասուքներ, տենդ...

Ագաֆյա Մատվեևնան առաջները քիչ էր տեսել Օբլոմովի նման մարդկանց, իսկ եթե տեսել էր, ապա հեռվից, և, գուցե, նրանք դուր էին գալիս նրան, բայց ապրում էին ոչ թե Ագաֆյա Մատվեևնայի, այլ՝ ուրիշ շրջանում, և ոչ մի առիթ չէր եղել մոտ լինելու նրանց հետ։

Իլյա Իլյիչն այնպես չի նայում, ինչպես նայում էր գալիս նրա հանգուցյալ ամուսինը, կոլեգիական քարտուղար Պշենիցինը, մանր, գործարար արագությամբ, անընդհատ թղթեր չի գրում, ահից չի դողում, թե պաշտոնատեղից կուշանա, ամեն մեկին այնպես չի նայում, կարծես թե խնդրում է իրեն թամբել և հեծնել, այլ բոլորին և ամեն բանի այնպես համարձակ ու ազատ է նայում, կարծես հնազանդություն է պահանջում իր նկատմամբ։

Նրա դեմքը կոպիտ չէ, կարմրավուն չէ, այլ սպիտակ, քնքուշ ձեռքերը նման չեն եղբոր ձեռքերին. չեն դողում, կարմիր չեն, այլ սպիտակ են, մանրիկ։ Երբ նա նստում է այնպես ազատ, հանդարտ ու գեղեցիկ, խոսում է այնպես, ինչպես չեն խոսում եղբայրն ու Տարանտևը, ինչպես չէր խոսում նրա ամուսինը. նա շատ բան մինչև անգամ չի հասկանում, բայց զգում է, որ դա խելացի է, գեղեցիկ, արտասովոր, նույնիսկ այն էլ, ինչ ինքը հասկանում է, Օբլոմովը մի տեսակ ուրիշ կերպ է ասում, քան ուրիշները։

Հագնում է նուրբ սպիտակեղեն, որ փոխում է ամեն օր, լվացվում է հոտավետ օճառով, մաքրում է եղունգները. նա ամբողջովին այնքան լավն է, այնքան մաքուր, կարող է ոչինչ չանել և չի անում, նրա համար ամեն բան ուրիշներն են անում. նա Զախար ունի և էլի երեք հարյուր Զախարնե՞ր...

Նա բարին է, նա փայլում է, պսպղում։ Նա այնքան բարի է, որքա՞ն փափուկ է մանր գալիս նա, շարժումներ անում, ձեռքիցդ բռնում է՝ կարծես թավիշ լինի, իսկ երբ ամուսինն էր մի ժամանակ ձեռքը կպցնում, կարծես խփելիս լիներ։ Եվ նա նայում ու խոսում էլ է նույնպիսի՞ փափկությամբ, այնպիսի՞ բարությամբ...

Նա չէր մտածում, չէր գիտակցում այս բոլորը, բայց եթե մեկ ուրիշը միտք աներ հետևել և բացատրել այն տպավորությունը, որ արել էր նրա հոգու վրա Օբլոմովի երևան գալը, նա պետք է բացատրեր այսպես և ոչ թե այլ կերպ։

Իլյա Իլյիչը հասկանում էր, թե ինքն ինչ իմաստ է մտցրել այս անկյունը, սկսած եղբորից մինչև շղթայակապ շունը, որը, Օբլոմովի երևալով, սկսեց երեք անգամ ավելի շատ ոսկոր ստանալ, բայց Օբլոմովը չէր հասկանում, թե այդ իմաստն ինչ խոր արմատներ է գցել և ինչպիսի անակնկալ հաղթանակ է տարել տանտիրուհու սրտի վրա։

Տանտիրուհու անհանգիստ հոգացողության մեջ նրա ճաշի, սպիտակեղենի ու սենյակների վերաբերմամբ՝ նա տեսնում էր միայն տանտիրուհու բնավորության գլխավոր գծի դրսևորումը, որ նկատել էր դեռ իր առաջին այցելության ժամանակ, երբ Ակուլինան հանկարծ սենյակ էր բերել թպրտացող աքաղաղին և երբ տանտիրուհին, չնայած շփոթված էր խոհարարուհու անտեղի եռանդի պատճառով, կարողացավ նրան ասել, որ նա խանութպանին տա ոչ թե այս, այլ մոխրագույն աքաղաղը։

Ինքը Ագաֆյա Մատվեևնան անզոր էր ոչ միայն կոկետություն անելու Օբլոմովի հետ, նրան որևէ նշանով ցույց տալու, թե ինչ է կատարվում իր մեջ, այլև նա, ինչպես ասված է, երբեք չէր գիտակցում ու չէր հասկանում դա, մինչև անգամ մոռացել էր, որ կարճ ժամանակ առաջ ոչ մի այդպիսի բան տեղի չէր ունենում իր մեջ, և նրա սերն արտահայտվեց միայն մինչև մահ անսահման անձնվիրության մեջ։

Օբլոմովի աչքերը բաց չէին արվել տանտիրուհու դեպի ինքն ունեցած վերաբերմունքի բուն էության վրա, և նա շարունակում էր դա բնավորության տեղ ընդունել։ Եվ Պշենիցինայի զգացմունքը, որ այնքան նորմալ էր, բնական, անշահախնդիր, գաղտնիք էր մնում Օբլոմովի համար, տանտիրուհուն շրջապատողների և հենց իր՝ տանտիրուհու համար։

Այդ զգացմունքն իրոք անշահախնդիր էր, որովհետև տանտիրուհին մոմ էր վառում եկեղեցում, նրա առողջության համար հիշատակել էր տալիս միայն, որպեսզի նա առողջանա, իսկ Օբլոմովը երբեք չիմացավ այդ։ Տանտիրուհին նստում էր գիշերը նրա գլխավերևը և արշալույսը բացվե-

լուն պես հեռանում, և հետո այլևս խոսակցություն չէր լինում այդ մասին։

Օբլոմովի վերաբերմունքը դեպի տանտիրուհին շատ ավելի պարզ էր. նրա համար Ագաֆյա Մատվեևնայի մեջ, նրա համաչափ շարժվող արմունկների մեջ, ամեն բանի վրա հոգացողությամբ կանգ առնող աչքերում, մշտապես պահարանից խոհանոց, խոհանոցից մառան, այնտեղից նկուղ գնալու մեջ, բոլոր տնային և տնտեսական հարմարությունների ամենագիտության մեջ մարմնանում էր կյանքի այն, օվկիանոսի նման անծայրածիր և անխախտելի անդորրության իդեալը, որի պատկերը անջնջելի կերպով ընկել էր նրա հոգու մեջ մանկության ժամանակ, հայրենի հարկի տակ։

Ինչպես այնտեղ նրա հայրը, պապը, երեխաները, թոռներն ու հյուրերը նստում կամ պառկում էին ծույլ անդորրության մեջ, գիտենալով, որ տանը կան նրանց շուրջ շարունակ պտտվող և հոգատար աչք ու անդուլ ձեռքեր, որոնք կար կանեն նրանց համար, կկերակրեն, կխմեցնեն, շոր ու կոշիկ կհագցնեն և քուն կգնեն, իսկ մեռնելիս էլ աչքերը կփակեն, այդպես էլ այստեղ Օբլոմովը, նստելով բազմոցի վրա և տեղից չշարժվելով՝ տեսնում էր, որ մի ինչ-որ կենդանի ու ժիր բան շարժվում է նրա օգտին և եթե վաղն արեը չծագի, մրրիկները պատեն երկինքը, փոթորկալից հողմն անցնի տիեզերքի մի ծայրից մյուսը, այնուամենայնիվ ապուրն ու տապական կդրվեն նրա սեղանի վրա, իսկ սպիտակեղենը մաքուր ու թարմ կլինի, սարդոստայնը վերցված կլինի պատից, և նա չի էլ իմանա, թե դա ինչպես է արվում, չանք էլ չի գործադրի մտածելու, թե ինչ է ուզում ինքը, իսկ այդ ցանկությունը կգուշակվի ու կմատուցվի նրան ո՞չ թե Ջախարիկեղտոտ ձեռքերով, այլ առույգ ու հեղ հայացքով, խորին անձնվիրության ժպիտով, մաքուր սպիտակ ձեռքերով ու հոլանի արմունկներով։

Նա օրեցօր ավելի ու ավելի էր բարեկամանում տանտիրուհու հետ. սիրո մասին նրա մտքովն անգամ չէր անցնում, այլ ինքն՝ այն սիրո մասին, որ նա տարավ վերջերս, որպես մի տեսակ ծաղիկ, կարմրուկ կամ տենդախտ, և ցնցվում էր, երբ մտաբերում էր այն։

Նա մերձենում էր Ագաֆյա Մատվեևնային, կարծես մոտ

էր գնում կրակին, որից ավելի ու ավելի տաք էր զգում իրեն, բայց որքան սիրել չի կարելի։

Ճաշից հետո նա հաճույքով մնում էր ու ծխամորճ ծխում նրա սենյակում, նայում էր, թե ինչպես էր տանտիրուհին բուֆետում դասավորում արծաթեղենը, ամանեղենը, ինչպես էր հանում գավաթները, սուրճ լցնում, ինչպես էր գավաթներից մեկը առանձնապես խնամքով լվանալուց և սրբելուց հետո՝ ամենից առաջ լցնում, տալիս նրան և նայում, թե արդյոք գո՞հ է նա։

Օբլոմովը սիրով իր աչքերը հառում էր նրա գիրուկ պարանոցին և կլոր արմունկներին, երբ բացվում էր նրա սենյակը տանող դուռը, և մինչև անգամ, երբ այն երկար ժամանակ չէր բացվում, նա կամացուկ ինքն էր ոտքով բաց անում դուռը և կատակներ անում նրա հետ, խաղում երեխաների հետ։

Բայց Օբլոմովը տաղտուկ չէր զգում, եթե առավոտն անցնում էր և ինքը նրան չէր տեսնում. ճաշից հետո, փոխանակ նրա հետ մնալու, Օբլոմովը հաճախ գնում էր մի երկու ժամ քնելու. բայց նա գիտեր, որ հենց՝ որ ինքը զարթնի, նրա թեյը պատրաստ կլինի, մինչև անգամ հենց այն բոպեին, երբ զարթնի։

Եվ գլխավորն այն էր, որ այդ ամենն արվում էր հանգիստ կերպով. ոչ ուռուցք կար նրա սրտի մոտ, ոչ էլ թեկուզ մի անգամ նա հուզվում է այն տագնապից, թե արդյոք կտեսնի՞ տանտիրուհուն թե ոչ, ինչ մտածի նա, ի՞նչ ասել նրան, ինչպես պատասխանել նրա հարցին, ինչպես կնայի նա. ոչ մի բան, ոչ մի բան։

Նա ոչինչ չէր ճաշակել. ոչ կարոտ, ոչ անքուն գիշերներ, ոչ քաղցր ու դառն արտասուքներ։ Նստում էր, ծխում ու նայում, թե ինչպես է կարում նա, երբեմն որևէ բան էր ասում կամ ոչինչ չէր ասում, մինչդեռ հանգիստ էր նա, ոչինչ պետք չէր, ոչ մի տեղ չէր ուզում գնալ, կարծես ամեն բան կար այստեղ, ինչ հարկավոր էր իրեն։

Ագաֆյա Մատվեևնան ոչ մի խթանում, ոչ մի պահանջ չի առաջադրում։ Օբլոմովի մեջ էլ չի ծնվում սխրագործություն անելու ոչ մի ինքնասեր ցանկություն, դրդում, ձգտում, ոչ մի տանջագին մորմոք այն մասին, թե ժամանակն անցնում է,

թե իր ուժերը կորչում են, թե նա ոչինչ չի արել, ոչ չարիք և ոչ էլ բարիք. նա պարապ է և ոչ թե ապրում է, այլ գորշ կյանք է վարում։

Նեան, կարծես մի անտեսանելի ձեռք, որպես մի թանկագին բույս տնկել է ստվերի մեջ շոգից հեռու, հարկի տակ՝ անձրևից պաշտպանելու համար և խնամում, գուրգուրում է։

— Այդ ի՞նչ է ասեղն այդպես արագ-արագ գնում-գալիս ձեր քթի մոտ, Ագաֆյա Մատվեևնա,— ասաց Օբլոմովը։— Դուք այնպես աշխույժ եք տակից ասեղ խփում, որ ես, ճըշմարիտ, վախենում եմ, չլինի հանկարծ ձեր քիթը կարեք շըրջազգեստին։

Տանտիրուհին ծիծաղեց։

— Ա՛յ, այս մի տեղն էլ կարեմ,— ասում էր՝ տանտիրուհին գրեթե ինքն իրեն,— ընթրիք կանենք։

— Իսկ ի՞նչ կա ընթրիքի համար,— հարցնում էր Օբլոմովը։

— Թթու կաղամբ սաղմոնի հետ,— ասաց նա։— Ոչ մի տեղ թառափի միս չկա, ես ինքս եղել եմ բոլոր խանութներում, եղբայրս էլ է հարցրել՝ չկա։ Ա՛յ, գուցե կենդանի թառափ պատահի, կառքերի շարքից մի վաճառական պատվիրել է,— խոստացել են մի մասը կտրել-պահել մեզ համար։ Հետո հորթի միս, քաշովի՝ թավայով...

— Ա՛յ, դա շա՞տ լավ է։ Որքա՞ն սիրալիր եք դուք, որ մտաբերեցիք, Ագա՛ֆյա Մատվեևնա։ Միայն թե Անիսյան չմոռանա։

— Իսկ ե՞ս ինչի համար եմ։ Լսո՞ւմ եք, թշշում է,— պատասխանեց նա, մի փոքր բաց անելով խոհանոց տանող դուռը։— Արդեն տապակվում է։

Հետո կարը վերջացրեց, ատամով կտրեց թելը, աշխատանքը հավաքեց ու ննջարան տարավ։

Եվ այսպես, Օբլոմովը մոտենում էր նրան, որպես տաք կրակի, և մի անգամ շատ սերտ մոտեցավ, գրեթե հրդեհ առաջացնելու չափ, առնվազն մինչև բռնկում։

Նա ման էր գալիս իր սենյակում և, շրջվելով դեպի տանտիրուհու դուռը, տեսավ, որ արմունկները գործում են արտասովոր արագությամբ։

— Մի՞շտ զբաղված եք,— ասաց նա՝ մտնելով տանտիրուհու սենյակը։— Ի՞նչ է այդ։

— Դարչին եմ ծեծում,— պատասխանեց նա, նայելով հավանգի մեջ, կարծես անդունդի մեջ էր նայում, և անողորմ կերպով չխկացնելով հավանգակոթով։

— Իսկ եթե ես խանգարե՞մ ձեզ,— հարցրեց Օբլոմովը, բռնելով նրա արմունկներից և թույլ չտալով ծեծել։

— Թողե՛ք։ Դեռ պետք է շաքար ծեծեմ ու գինի տամ պուդինգի համար։

Նա շարունակում էր բռնած պահել տանտիրուհու արմունկները, և նրա դեմքը տանտիրուհու ծոծրակի մոտ էր։

— Ասացե՛ք, ի՞նչ կլինի, եթե ես ձեզ... սիրեմ։

Տանտիրուհին ծիծաղեց։

— Իսկ դուք ինձ կսիրեի՞ք,— նորից հարցրեց Օբլոմովը։

— Ինչո՞ւ չէի սիրի։ Աստված պատվիրել է սիրել բոլորին։

— Իսկ եթե ես ձեզ համբուրե՞մ,— շշնջաց Օբլոմովը՝ թեքվելով դեպի նրա այտը, այնպես որ Օբլոմովի շունչն այրում էր տանտիրուհու այտը։

— Հիմա զատկի շաբաթը չէ,— ասաց նա քմծիծաղով։

— Դե՛հ, համբուրե՛ք ինձ։

— Ա՛յ, աստուծով կապրենք մինչև զատիկ, այն ժամանակ կհամբուրվենք,— ասաց տանտիրուհին՝ չզարմանալով, չշփոթվելով, չքաշվելով, այլ ուղիղ և անշարժ կանգնելով ինչպես ձի, որի վիզը անուր են անցկացնում։ Օբլոմովը թեթևակի համբուրեց նրա պարանոցը։

— Տեսե՛ք, դարչինը կթափեմ, դուք բան չեք ունենա դընելու թխվածքի վրա,— նկատեց տանտիրուհին։

— Վնաս չունի՞,— պատասխանեց Օբլոմովը։

— Այդ ի՞նչ է՝ ձեր խալաթի վրա նորից բիծ կա,— հոգացողությամբ հարցրեց տանտիրուհին, ձեռքն առնելով խալաթի փեշը։— Կարծես՝ յո՞ւղ է։— Նա հոտոտեց բիծը։— Որտե՞ղ եք քսվել։ Կանթեղից հո չի՞ կաթել։

— Չգիտեմ՝ որտեղից եմ ձեռք բերել։

— Երևի դռա՞նն եք կպել,— հանկարծ գլխի ընկավ Ագաֆյա Մատվեևնան։— Երեկ յուղեցինք ծխնիները, շարունակ ճռճռում են։ Հանեք շուտով և տվեք ինձ, բիծը կհանեմ և կլվանամ. վաղը ոչինչ չի լինի։

— Բարի՜ Ագաֆյա Մատվեևնա,— ասաց Օբլոմովը՝ ծուլաբար ուսերից ցած գցելով խալաթը։— Գիտե՞ք ինչ. եկեք գնանք գյուղ՝ ապրելու. ա՜յ, այնտեղ է տնտեսությունը։ Ինչ ասես, որ չկա. սունկ, հատապտուղ, մուրաբա, թռչնանոց, անասնաբակ...

— Ո՜չ, ինչի՞ համար,— եզրափակեց տանտիրուհին հառաչելով։— Այստեղ ենք ծնվել, ամբողջ կյանքն ապրել, այստեղ էլ պետք է մեռնել։

Օբլոմովը նրան նայեց թեթև հուզմունքով, բայց նրա աչքերը չէին փայլում, արտասուքներով չէին լցվում, հոգին դեպի բարձունքները, դեպի սխրագործություն չէր ճախրում։ Նա ուզում էր միայն նստել բազմոցի վրա և շարունակ տանտիրուհու արմունկներին նայել։

II

Հովհաննես Մկրտչի օրը հանդիսավոր անցավ։ Իվան Մատվեևիչը նախօրյակին ծառայության չգնաց, գժի նման շրջում էր քաղաքում կառքով և ամեն անգամ տուն էր գալիս մերթ պարկով, մերթ զամբյուղով։

Ագաֆյա Մատվեևնան երեք օր ապրում էր միայն սուրճով, և միմիայն Իլյա Իլյիչի համար էր երեք տեսակ կերակուր պատրաստվում, իսկ մյուսներն ուտում էին որևէ կերպ և որևէ բան։

Նախօրյակին Անիսյան նույնիսկ չպառկեց քնելու։ Միայն Զախարն էր, որ նրա տեղ էլ, իր տեղ էլ կուշտ քնեց և այդ բոլոր նախապատրաստություններին նայում էր անփույթ կերպով, կիսարհամարհանքով։

— Մեզ մոտ, Օբլոմովկայում, այդպես պատրաստում էին բոլոր տոներին,— ասում էր նա այն երկու խոհարարներին, որոնց հրավիրել էին կոմսի խոհանոցից,— երբեմն հինգ տեսակ կարկանդակ էին մատուցում, իսկ սոուսներին թիվ ու համա՞ր չկար։ Եվ ամբողջ օրը պարոններն էին ուտում, մյուս օրն էլ։ Իսկ մենք հինգ օր շարունակ մնացորդներն էինք ուտում-վերջացնում։ Հազիվ էինք ուտում-վերջացնում, մեկ էլ տեսար՝ հյուրեր եկան. նորից սկսվեց, իսկ այստեղ տարին մի՛ անգամ։

Ճաշի ժամանակ նա առաջինը Օբլոմովին էր մատուցում և ոչ մի կերպ չէր համաձայնում մատուցել մի պարոնի, որը մեծ խաչ ուներ պարանոցի վրա։

— Մերը տոհմական ազնվական է,— ասում էր նա հը-պարտ,— իսկ դրանք ի՞նչ հյուրեր են որ։

Տարանտևին, որը նստած էր սեղանի ծայրին, բոլորովին չէր մատուցում կամ ինքն էր նրա ափսեն կերակուր լցնում, որքան կամենում էր։

Իվան Մատվեևիչի բոլոր ծառայակիցները ներկա էին, մոտավորապես երեսուն մարդ։

Վիթխարի կարմրախայտը, լցոնած ճտերը, լորերը, պաղպաղակն ու հիանալի գինին, այս բոլորն արժանավորապես հավերժացրին տարեկան տոնը։

Հյուրերը վերջում գրկախառնվեցին, գովաբանելով՝ մինչև երկինք բարձրացրին տանտիրոջ ճաշակը և ապա նստեցին թուղթ խաղալու։ Մուխոյարովը գլուխ էր իջեցնում ու շնորհակալություն հայտնում, ասելով, թե նա թանկագին հյուրերին հյուրասիրելու երջանկության համար չի խնայել ոռճիկի իբր թե մի երրորդը։

Առավոտյան դեմ հյուրերը հազիվհազ ցրվեցին ո՛րը կառքով, ո՛րը ոտքով, և դարձյալ ամեն ինչ լռեց տանը մինչև Եզիա մարգարեի օրը։

Այդ օրը կողմնակի մարդկանցից Օբլոմովի մոտ հյուր էին միայն Իվան Գերասիմիչն ու Ալեքսեևը, լռակյաց և հեզաբարո մի հյուր, որը մեր պատմվածքի սկզբում Իլյա Իլյիչին կանչում էր մայիսի մեկի տոնին մասնակցելու։ Օբլոմովը ոչ միայն չէր ուզում զիջել Իվան Մատվեևիչին, այլ աշխատում էր փայլել հյուրասիրության նրբությամբ ու շքեղությամբ, որոնք անծանոթ էին այս անկյունում։

Ցուղալի ձկնակարկանդակի փոխարեն հանդես եկան օդալից կարկանդակներ. ապուրից առաջ ոստրե մատուցեցին. ճտերը խոպոպկաթղթերի մեջ, գետնասնկերով, քաղցր միս, ամենանուրբ կանաչի, անգլիական ապուր։

Սեղանի մեջտեղ փայլում էր մի վիթխարի անանաս, իսկ շուրջը դրված էին դեղձ, բալ, ծիրան։ Ծաղկամաններում՝ կենդանի ծաղիկներ։

Հենց նոր էին սկսել ապուր ուտել, հենց նոր Տարանտևը

հայհոյել էր կարկանդակն ու խոհարարին՝ դրանց մեջ «չինչ չդնելու հիմար հնարանքի համար, որ լցվեց շան կատաղի վազվզոցն իր շղթայով ու հաչոցը։

Բակը մի կառք մտավ, և մեկը հարցնում էր Օբլոմովին։ Բոլորը բերանները բաց ՝արին։

— Անցյալ տարվա ծանոթներից մեկը հիշել է իմ անվանակոչությունը,— ասաց Օբլոմովը,— տանը չեմ, ասա՝ տանը չեմ,— շշուկով ասաց նա Զախարին։

Ճաշում էին պարտեզում, տաղավարի մեջ, Զախարը վազեց, որ մերժի եկողին և ճանապարհին հանդիպեց Շտոլցին։

— Անդրեյ Իվանիչ,— խռպոտ ձայնով ասաց նա ուրախացած։

— Անդրե՛յ,— բարձրաձայն դիմեց նրան Օբլոմովը և վազեց գրկելու նրան։

— Ի՞նչ տեղին եմ եկել, հենց ճաշի՞ ժամանակ,— ասաց Շտոլցը։— Կերակրի՛ր ինձ, քաղցած եմ։ Հազի՞վ գտա քեզ։

— Գնա՛նք, գնա՛նք, նստի՛ր,— գլուխը կորցրած ասում էր Օբլոմովը՝ նստեցնելով նրան իր կողքին։

Շտոլցի երևալու ժամանակ առաջինը Տարանտևը արագորեն ցանկապատի այն կողմն անցավ և մտավ բանջարանոց. նրա ետևից տաղավարի ետևում պահվեց Իվան Մատվեևիչը և անհետացավ իր սենյակում։ Տանտիրուհին նույնպես տեղից վեր կացավ։

— Ես խանգարեցի,— ասաց Շտոլցը՝ տեղից վեր թռչելով։

— Այդ ո՞ւր եք գնում, ինչո՞ւ։ Իվան Մատվեևիչ։ Միխե՛յ Անդրեյիչ,— բղավում էր Օբլոմովը։

Տանտիրուհուն նա նստեցրեց իր տեղը, իսկ Իվան Մատվեևիչին և Տարանտևին չկարողացավ ետ կանչել։

— Որտեղի՞ց, ինչպե՞ս, արդյոք երկա՞ր ժամանակով,— իրար ետևից թափվեցին հարցերը։

Շտոլցը եկել էր երկու շաբաթով, գործով, և ուղևորվում էր գյուղ, հետո Կիև և էլ աստված գիտե՝ ուր։

Ճաշի ժամանակ Շտոլցը քիչ էր խոսում, բայց շատ էր ուտում. երևում էր, որ նա իրոք քաղցած էր։ Մյուսներն ավելի ևս լուռ էին ուտում։

Ճաշից հետո, երբ ամեն ինչ հավաքեցին սեղանից, Օբ-

լոմովը պատվիրեց տաղավարում թողնել շամպայնն ու սելտերի ջուրը, և մնացին երկուսով Շտոլցի հետ։

Նրանք միաժամանակ լուռ էին։ Շտոլցը սևեռակի և երկար նրան էր նայում։

— Է՛հ, Իլյա՞,— ասաց նա, վերջապես, բայց այնպես խստորեն, այնպես հարցականորեն, որ Օբլոմովը ցած էր նայում ու լուռ էր։

— Ուրեմն՝ «երբե՞ք»։

— Ի՞նչ «երբեք»,— հարցրեց Օբլոմովը՝ իբր թե չհասկանալով։

— Դու արդեն մոռացե՞լ ես. «Այժմ կամ երբե՞ք»։

— Ես հիմա այնպիսին չեմ... ինչ այն ժամանակ էի, Անդրեյ,— ասաց նա վերջապես,— իմ գործերը փառք աստծու, կարգին են. ես պարապ չեմ պառկում. իմ պլանը համարյա թե ավարտված է, բաժանորդագրվել եմ երկու հանդեսի. բոլոր թողած գրքերը համարյա բոլորը կարդացել եմ...

— Իսկ ինչո՞ւ արտասահման չեկար,— հարցրեց Շտոլցը։

— Արտասահման գալուն ինձ արգելեց...

Նա կմկմաց։

— Օլգա՞ն,— ասաց Շտոլցը՝ արտահայտիչ կերպով նրան նայելով։

Օբլոմովը բռնկվեց։

— Ինչպե՞ս, մի՞թե դու լսել ես... Որտե՞ղ է նա այժմ,— արագ հարցրեց նա, նայելով Շտոլցին։

Շտոլցը, առանց պատասխանելու, շարունակում էր նրան նայել, խոր դիտելով հոգու խորքը։

— Ես լսել եմ, որ նա մորաքրոջ հետ արտասահման է գնացել,— ասում էր Օբլոմովը,— շուտով...

— Շուտով այն բանից հետո, երբ իմացավ իր սխալը,— խոսքն ավարտեց Շտոլցը։

— Մի՞թե դու գիտես...— ասում էր Օբլոմովը՝ չիմանալով ուր թաքնվի շփոթությունից։

— Ամեն ինչ,— ասաց Շտոլցը,— մինչև իսկ նաև յասամանի ճյուղի մասին։ Եվ դու չե՞ս ամաչում, քեզ ցավ չի՞ պատճառում, Իլյա։ Քեզ չի՞ այրում զղջումը, ափսոսանքը...

— Մի՛ խոսի, մի՛ հիշեցնի,— շտապով ընդհատեց նրան Օբլոմովը։— Ես ինքս՝ էլ ջերմախտի մեջ ընկա, երբ տեսա,

թե ինչպիսի անդունդ է ընկած իմ և նրա միջև, երբ համոզվեցի, որ ես արժանի չեմ նրան... Ա՜խ, Անդրե՛յ. եթե սիրում ես ինձ, մի՛ տանջիր ինձ, մի՛ հիշեցնի նրա մասին. ես վաղուց էի ցույց տվել նրան սխալը, նա չէր ուզում հավատալ... Ճշմարիտ, ես շատ էլ մեղավոր չեմ...

— Ես քեզ չեմ մեղադրում, Իլյա՛,— բարեկամաբար, մեղմորեն շարունակում էր Շտոլցը,— ես կարդացի քո նամակը։ Ամենից ավելի մեղավոր եմ ես, հետո նա, իսկ հետո արդեն դու, և այն էլ՝ քիչ։

—Ի՞նչ է անում նա այժմ,— վեհերոտ հարցրեց Օբլոմովը։

— Ի՞նչ. տխրում է, լաց է լինում անմխիթար արցունքներով և նզովում է քեզ...

Ամեն մի խոսքի հետ Օբլոմովի դեմքի վրա երևան էր գալիս երկյուղ, կարեկցություն, տարսափ, զղջում։

— Ի՞նչ ես ասում, Անդրե՛յ,— ասաց նա, վեր կենալով տեղից։— Աստծու սիրուն՝ գնանք իսկույն, այս րոպեիս. ես նրա ոտքերն ընկած ներողություն կհայցեմ...

— Հանգի՛ստ նստիր,— ընդհատեց Շտոլցը՝ ծիծաղելով։— Նա ուրախ է, մինչև անգամ երջանիկ է, պատվիրեց բարևվել քեզ և ուզում էր նամակ գրել, բայց ես խորհուրդ չտվի, ասացի, որ դա քեզ խիստ կհուզի։

— Դեհ, փա՜ռք աստծու,— համարյա արտասվելով արտասանեց Օբլոմովը.— որքա՜ն ուրախ եմ, Անդրեյ, թույլ տուր համբուրեմ քեզ և խմենք նրա կենացը։

Նրանք մի-մի բաժակ շամպայն խմեցին։

— Իսկ որտե՞ղ է նա այժմ։

— Այժմ Շլեյցարիայում է։ Աշնան դեմ նա մորաքրոջ հետ կգնա իր գյուղը։ Ես հիմա դրա համար եմ այստեղ եկել, հարկավոր է վերջնականապես կարգի գցել գործը պալատում։ Բարոնը գործը չի վերջացրել. նրա խելքին փչել էր առաջարկություն անել Օլգային...

— Մի՞թե։ Ուրեմն դա ճի՞շտ էր,— հարցրեց Օբլոմովը։— Է՞, իսկ նա ի՞նչ է ասել։

— Հասկանալի է, թե ինչ. մերժել է. բարոնը վշտացել է և հեռացել, իսկ հիմա ես պիտի վերջացնեմ գործերը։ Եկող

շաբաթ ամեն ինչ կվերջանա։ Էհ, դո՞ւ, ինչ ես անում։ Ինչո՞ւ ես այս խուլ անկյունում փակվել։

— Այստեղ հանգիստ է, խաղաղ, Անդրե՛յ, ոչ ոք չի խանգարում...

— Ի՞նչ բանում։

— Պարապելու...

— Աստծու սիրուն, այստեղ նույն Օբլոմովկան է, միայն ավելի գարշելի,— ասում էր Շտոլցը՝ նայելով շուրջը։— Արի՝ գյուղ գնանք, Իլյա՛։

— Գյուղ... լավ, թերևս. շուտով այնտեղ սկսվելու է կառուցումը։ Միայն թե ո՛չ հանկարծ, Անդրեյ, թող կշռադատեմ...

— Դարձյալ կշռադատե՞լ։ Գիտեմ քո կշռադատությունները, կկշռադատես, ինչպես երկու տարի առաջ կշռադատեցիր արտասահման գնալ։ Գնանք եկող շաբաթ։

— Ինչպե՞ս այդպես հանկարծ, եկող շաբաթ,— պաշտպանվում էր Օբլոմովը։— Դու արդեն պատրաստ ես, իսկ ես չէ՞ որ պետք է պատրաստվեմ... Ամբողջ տնտեսությունս այստեղ է, ինչպե՞ս թողնեմ։ Ես ոչինչ չունեմ։

— Դե ոչինչ էլ հարկավոր չէ։ Ասա՝ ի՞նչ է հարկավոր քեզ։

Օբլոմովը լուռ էր։

— Առողջությունս վատ է, Անդրե՛յ,— ասաց նա,— շնչառելությունը հաղթում է։ Նորից սկսել են գարեհատեր դուրս գալ մերթ մեկ, մերթ մյուս աչքիս, իսկ ոտերս սկսել են ուռչել։ Երբեմն էլ գիշերները քնում ես, հանկարծ մեկը կարծես խփում է գլխիդ կամ մեջքիդ, այնպես որ վեր ես թռչում...

— Լսի՛ր, Իլյա՛, ես քեզ լուրջ եմ ասում, որ հարկավոր է փոխել քո ապրելակերպը, հակառակ դեպքում ջրգողություն կստանաս կամ կաթված։ Ապագայի վերաբերյալ հույսերի բանը վերջացած է արդեն. եթե Օլգան, այդ հրեշտակը, իր թևերի վրա չկարողացավ քեզ հանել քո ճահճից, ապա ես ոչինչ անել չեմ կարող։ Բայց գործունեության մի փոքրիկ շրջան ընտրել քեզ համար, գյուղը կարգի բերել, գյուղացիների հետ զբաղվել, նրանց գործերին՝ միջամուխ լինել, կառուցել, տնկել՝ այս բոլորը դու կարող ես անել և պետք է անես... Ես քո օձիքը բաց չեմ թողնի։ Այժմ արդեն հնա-

զանդում եմ ո՛չ միայն իմ ցանկությանը, այլև Օլգայի կամքին. նա ուզում է, լսո՞ւմ ես, որ դու բոլորովին չմեռնես, կենդանի-կենդանի չթաղվես, և ես խոստացել եմ քեզ գերեզմանից փորել-հանել...

— Նա ինձ դեռ չի՞ մոռացել։ Բայց արժանի՞ եմ ես արդյոք,— ասաց Օբլոմովը հուզված։

— Ո՛չ, չի մոռացել և, կարծեմ, երբեք չի մոռանա. նա այնպիսի կին չէ։ Դու դեռ պետք է գյուղ գնաս նրա մոտ, հյուր։

— Միայն ոչ այժմ, աստծու սիրուն, ոչ այժմ։ Անդրե՛յ, Թող, որ մոռանամ։ Ա՜խ, այստեղ դեռ...

Նա ցույց տվեց սիրտը։

— Ի՞նչ կա այստեղ։ Սե՞ր չէ արդյոք,— հարցրեց Շտոլցը։

— Ո՛չ, ամո՞թ ու վի՜շտ,— հառաչելով պատասխանեց Օբլոմովը։

— Դե՛հ, լա՜վ։ Քո գյուղը գնանք. չէ՞ որ դու պետք է կառուցումներ անես. հիմա ամառ է, թանկագին ժամանակն անցնում է...

— Ո՛չ, ես հավատարմատար ունեմ։ Նա հիմա էլ գյուղում է, իսկ ես կարող եմ հետո գալ, երբ կպատրաստվեմ, կմտածեմ։

Նա սկսեց Շտոլցի առաջ պարծենալ, թե ինչպես ինքը, առանց տեղից շարժվելու, հիանալի կարգավորել է իր գործերը, թե ինչպես հավատարմատարը տեղեկություններ է հավաքում փախած գյուղացիների մասին, նպաստավոր գնով ծախում հացահատիկը և ինչպես իրեն հազար հինգ հարյուր ռուբլի է ուղարկել, և հավանորեն, այս տարի կհավաքի ու կուղարկի բահրան։

Շտոլցը ձեռքերն իրար զարկեց այդ պատմության ժամանակ։

— Քեզ բոլորովի՞ն թալանել են,— ասաց նա։— Երեք հարյուր հոգուց հազար հինգ հարյուր ռուբլի՞։ Ո՞վ է հավատարմատարդ։ Ի՞նչ մարդ է։

— Հազար հինգ հարյուր ռուբլուց ավելի,— ուղղեց Օբլոմովը,— նա հենց հացահատիկի վաճառքից ստացած արդյունքից էլ իր աշխատանքի վարձատրությունն է ստացել...

— Որքա՞ն։

— Չեմ հիշում, ճշմարիտ, բայց քեզ ցույց կտամ. հաշիվը ինձ մոտ կա մի տեղ։

—Է՛հ, Իլյա՛։ Դու իրոք մեռե՛լ ես, կործանվե՛լ,— եզրափակեց նա։— Հագնվի՛ր, գնանք ինձ մոտ։

Օբլոմովն ուզում էր առարկություններ անել, բայց Շտոլցը համարյա ուժով նրան տարավ իր մոտ, հավատարմագիր գրեց իր անունով, հարկադրեց Օբլոմովին ստորագրել և հայտարարեց նրան, որ նա վարձակալում է Օբլոմովկան մինչև այն ժամանակ, երբ Օբլոմովը ինքը գյուղ կգա և կվարժվի տնտեսությանը։

— Դու երեք անգամ ավելի շատ կստանաս,— ասաց նա,— բայց ես երկար ժամանակ չեմ լինի քո վարձակալը,— ես իմ գործերն ունեմ։ Գյուղ գնանք այժմ-կամ արի իմ ետևից։ Ես Օլգայի կալվածքում կլինեմ. այն երեք հարյուր վերստի վրա է, կգնամ քո գյուղն էլ, կվոնդեմ հավատարմատարիդ, կարգադրություններ կանեմ, իսկ հետո արի ինքդ։ Ես քո օձիքը բաց չեմ թողնի։

Օբլոմովը հառաչեց։

— Ա՜խ, կյա՜նք,— ասաց նա։

— Կյանքը ի՞նչ։

— Դիպչում է մարդու, հանգիստ չկա՜։ Կպառկեի ու կքընեի... ընդմիշտ...

— Այսինքն՝ կրակը կհանգցնեի՞ր ու մթում կմնայի՞ր։ Լա՜վ կյանք է։ Օ՜հ, Իլյա՛, գոնե մի փոքր փիլիսոփայություն անեիր, ճշմարի՛տ։ Կյանքը թռչում է ակնթարթի նման, իսկ նա՝ կպառկե՞ր ու կքնե՞ր։ Թող կյանքը մշտական այրո՞ւմ լինի։ Ա՜խ, եթե կարելի լիներ երկու հարյուր, երեք հարյուր տարի ապրել,— եզրափակեց նա։— Որքա՜ն գործ կարելի էր անել։

—Դու ուրիշ բան ես, Անդրե՛յ,— առարկեց Օբլոմովը,— դու թևեր ունես. դու չես ապրում, թռչում ես. դու ձիրք ունես, ինքնասիրություն, ա՛յ, դու հաստ չես, գարեհատերը չեն տանջում քեզ, ծոծրակդ քոր չի գալիս։ Դու ինչ-որ այլ կերպ ես կառուցված...

— Է, բավական է։ Մարդն ստեղծված է ինքն իրեն կառուցելու և նույնիսկ իր բնությունը փոխելու համար, իսկ սա

հաստացրել է փորը և կարծում է, թե բնությո՞ւնն է ուղարկել իրեն այդ բեռը։ Դու ունեիր թևեր, բայց ինքդ արձակեցիր դրանք։

— Որտե՞ղ են նրանք, այդ թևերը,— ասաց Օբլոմովը վրհատ։— Ոչինչ չեմ կարողանում...

—Այսինքն՝ չես ուզում կարողանալ,— ընդհատեց Շտոլցը։— Չկա այնպիսի մարդ, որը որևէ բան չիմանա անել, ասված վկա՝ չկա՝։

— Ա՛յ, ես անել չգիտեմ,— ասաց Օբլոմովը։

— Քեզ որ մարդ լսի, դու թուղթ էլ չես կարող գրել վարչությանը, ոչ էլ նամակ տանտիրոջը, իսկ Օլգային նամակ հո գրե՞լ ես։ Այնտեղ չես շփոթել որը (который) ու որ (что)։ Կարողացել ես ատլասե թուղթ էլ գնել, թանաք էլ անգլիական խանութից, գրության ձևն էլ ժիր է, հը՞։

Օբլոմովը կարմրեց։

— Երբ պետք է եկել, հանդես են եկել և՛ մտքեր, և՛ լեզու, կարելի է վերցնել և որևէ վեպի մեջ տպել։ Իսկ երբ կարիք չկա, ուրեմն և՛ չեմ կարող, և՛ ձեռքերս թույլ են։ Դու քո կարողությունը կորցրիր դեռ մանկությանդ ժամանակ, Օբլոմովկայում՝ հորաքույր-մորաքույրների, դայակների և վերակացու-ծառաների շրջանում։ Սկսվեց գուլպաները հագնել չկարողանալուց և վերջացավ ապրել չիմանալով։

— Այդ բոլորը, գուցե, ճիշտ է, Անդրե՛յ, բայց էլ ի՞նչ կարող ես անել, չես վերադարձնի,— վճռական հառաչանքով ասաց Իլյան։

— Ինչպե՞ս թե չես վերադարձնի,— բարկացկոտ առարկեց Շտոլցը։— Ի՞նչ դատարկ բաներ են։ Լսի՛ր և արա՛ այն, ինչ ես եմ ասում, ահա՛ և կվերադարձնես։

Բայց Շտոլցը մենակ գնաց գյուղ, իսկ Օբլոմովը մնաց, խոստանալով գալ աշնանը։

— Ի՞նչ ասեմ Օլգային,— հարցրեց Շտոլցը Օբլոմովին, մեկնելուց առաջ։

Օբլոմովը գլուխը հակեց և տխուր լռության մեջ էր. հետո հառաչեց։

— Մի՛ հիշեցնի նրան իմ մասին,— վերջապես ասաց նա շփոթված։— Ասա՛, որ չես տեսել, չես լսել...

— Չի հավատա,— առարկեց Շտոլցը։

— Դե՛, ասա՛, որ ես կործանվել եմ, մեռել եմ, կորել...

— Նա՛ լաց կլինի և երկար ժամանակ չի մխիթարվի. ինչո՞ւ տխրեցնենք նրան։

Օբլոմովը մտածմունքի մեջ ընկավ սրտաշարժված. աչքերը թաց էին։

— Դե՛հ, լա՛վ. ես կստեմ, կասեմ, որ ապրում ես նրա հիշողությամբ,— եզրափակեց Շտոլցը,— և խիստ ու լուրջ նպատակ ես որոնում։ Նկատի ունեցի՛ր, որ կյանքի նպատակը հենց կյանքն ու աշխատանքն է, և ոչ թե կինը. այդ բանում երկուսդ էլ սխալվում էիք։ Նա որքա՞ն գոհ կլինի։

Նրանք հրաժեշտ տվին միմյանց։

III

Տարանտևն ու Իվան Մատվեևիչը Ծղիա մարգարեի տոնի հետևյալ օրը երեկոյան նորից հանդիպեցին պանդոկում։

— Թե՛յ,— մռայլ հրամայեց Իվան Մատվեևիչը, և երբ սպասավորը մատուցեց թեյն ու ռոմը, նա սրտնեղությամբ շիշը վերադարձրեց նրան։— Դա ռոմ չէ, այլ մեխ,— ասաց նա և հանելով վերարկուի գրպանից շիշը՝ բաց արեց ու տվեց սպասավորին՝ հոտ քաշելու։— Մի՛ խցկվի քո շշով,— նկատեց նա։— Ի՞նչ ես ասում, քավոր, հո վատ եղավ,— ասաց նա՝ երբ սպասավորը գնաց։

— Այո, սատանան բերեց նրան,— կատաղի առարկեց Տարանտևը։— Ի՞նչ խաբեբան է, այդ գերմանացին։ Ոչնչացրե՛լ է հավատարմագիրը և կալվածքը վարձակալել։ Այդպիսի բան լսած կայի՞ք։ Կալոկի խեղճ ոչխարին։

— Եթե նա գործը հասկանում է, քավոր, ես վախենում եմ՝ այնտեղ մի բան դուրս չգա՞։ Հենց իմանա, որ բահրան հավաքված է, իսկ այն ստացել ենք մենք, գուցեև գործ ըսկըսի...

— Չէ մի՛։ Վախկոտ ես դարձել, սանահեր։ Առաջին անգամը չէ, որ Զատյորտին թաթը խցկում է կալվածատերերի փողերի մեջ, գիտե ծայրերը թաքցնել։ Նա հո գյուղացիներին ստացական չի տալիս. երեխ երես առ երես է ստանում։ Կոտաքանա գերմանացին, կբղավի, և դրանով կբավարարվի։ Թե չէ՝ գո՛րծ։

— Արդյո՞ք այդպես կլինի,— ուրախանալով ասաց Մուխոյարովը։— Դե, խմենք ուրեմն։

— Նա ոմ լցրեց իրեն էլ, Տարանտևին էլ։

— Նայում ես, կարծես թե աշխարհի երեսին ապրել էլ չի կարելի, բայց երբ խմում ես, կարելի է ապրել,— ինքն իրեն մխիթարում էր նա։

— Իսկ դու այդ միջոցին ահա թե ինչ կանես, սանահեր,— շարունակում էր Տարանտևը,— դու որևիցե հաշիվ մեջտեղ հանիր, ինչ հաշիվ ուզում է լինի, վառելափայտի, կաղամբի, ինչ ուզում ես. լավ է, որ Օբլոմովն այժմ սանամորս է հանձնել տնտեսությունը, և գումարը ցույց տուր իբրև ծախս։ Իսկ երբ Զատյորտին գա, կասենք, թե բահրայի փողերից բերել է այսքան և այդ փողերը ծախսվել են։

— Իսկ եթե նա հաշիվները վերցնի ու հետո գերմանացուն ցույց տա, նա հաշիվ անի, այն ժամանակ, գուցե, ը...

— Չէ՛ մի։ Նա այդ հաշիվները մի տեղ կճխտի, և սատանան ինքն էլ այլևս չի գտնի։ Մինչև մեկ էլ գերմանացին գա, կմոռացվի կգնա...

— Արդյո՞ք։ Խմենք, քավո՛ր,— ասաց Իվան Մատվեևիչը, ոմը լցնելով բաժակի մեջ,— ափսոս է բարիքը թեյի հետ խառնել։ Հլա հոտ քաշիր. երեք արծաթ մանեթ արժե։ Սելյանկա չպատվիրե՞մ։

— Կարելի է։

— Է՛յ։

— Չէ, հլա տես ինչ խաբեբան է։ «Վարձակալության տուր ինձ, ասում է»,— նորից սկսեց Տարանտևը կատաղությամբ,— ախր այդպիսի բան իմ ու քո, ռուս մարդկանց, մտքո՞վ էլ չէր անցնի։ Այդ գործից գերմանացու հոտ է գալիս։ Այնտեղ ամենուր ֆերմա ու վարձակալություն է։ Այ, սպասիր, նա Օբլոմովին դեռ բաժնետոմսերով էլ կդաղի։

— Ի՞նչ բան են այդ բաժնետոմսերը, ես դեռ չեմ կարողանում լավ հասկանալ,— հարցրեց Իվան Մատվեևիչը։

— Գերմանական հնարա՞նք է,— ասաց Տարանտևը գաղտագծ։— Օրինակ, սրիկայի մեկը կմտադրվի անկիզելի տներ շինել և հանձն կառնի մի քաղաք կառուցել. փող է հարկավոր, նա էլ թղթի կտորներ կհանի վաճառքի, ասենք՝ հինգ հարյուր ռուբլիանոց, իսկ տխմարների ամբոխը կգնի դրանք

և կվերավաճառի միմյանց։ Եթե լուր տարածվի, թե ձեռնարկությունը լավ է գնում, թղթերի գինը կբարձրանա, եթե վատ՝ ամեն ինչ կպայթի։ Քեզ մոտ կմնան թղթերը, իսկ փող չի լինի։ Կհարցնես՝ որտե՞ղ է քաղաքը, կասեն՝ այրվեց, կառուցումը չավարտվեց, իսկ գյուտարարը քո փողերն առած փախել է։ Ա՛յ քեզ, թե ինչ են բաժնետոմսերը։ Գերմանացին նրան մեջ կքաշի։ Զարմա՞նք բան է, թե ինչպես մինչև այժմ մեջ չի քաշել։ Ես շարունակ խանգարում էի, բարերարություն էի անում հայրենակցիս։

— Այո՛, այդ հոդվածը վերջացած է. գործը վճռված է և արդիվ հանձնված. հիմա մենք պաս պիտի բռնենք Օբլոմովկայից բահրա ստանալու վերաբերյալ...— ասում էր Մուխոյարովը մի քիչ հարբելուց հետո։

— Էհ, գրողի ծոցը լինի այն, սանահե՛ր։ Դու այնքան փող ունես, որ բահով չես կարող շուռ տալ,— առարկում էր Տարանտևը, նույնպես մի քիչ մշուշապատ գլխով։— Հաստատուն աղբյուր կա, քաշի՛ր միայն, մի՛ հոգնիր։ Խմե՛նք։

— Ի՞նչ աղբյուր կա որ, քավոր։ Ամբողջ կյանքդ հավաքում ես մի ռուբլիանոցով կամ երեք ռուբլիանոցով...

— Բայց չէ՞ որ քսան տարի է՝ հավաքում ես, սանահե՛ր, հոգուդ մեղք մի՛ անի։

— Որտեղի՞ց քսան,— լմլմացրեց Իվան Մատվեևիչը.— դու մոռացել ես, որ միայն տասներորդ տարին է, որ քարտուղար եմ։ Իսկ առաջները տասկոպեկանոցներ ու քսանկոպեկանոցներ էին լինում գրպանումս, իսկ երբեմն էլ խայտառակություն է ասելը, հաճախ հարկ էր լինում սև փող հավաքել։ Ի՞նչ կյանք է։ է՛հ, քավոր։ Այդ ի՞նչ երջանիկ մարդիկ կան աշխարհում, որ մի փոքրիկ բառի համար, որ նա շինում է մեկի ականջին, կամ տող է թելադրում, կամ պարզապես իր անունն է գրում թղթի վրա, և հանկարծ գրպանն այնպես է ուռում, կարծես բարձ լինի, թեկուզ գլուխդ գիր ու քնիր։ Ա՛յ, եթե այդպես աշխատեինք,— երազների մեջ ընկավ նա՝ ավելի ու ավելի հարբելով,— խնդրատուներն իսկի երեսդ չեն տեսնում և մոտ գալ չեն համարձակվում։ Կնոջդ կառք, կրղավի, իսկ ակումբում աստղավորները ձեռքն են սեղմում, խաղում է ոչ հինգ կոպեկով, իսկ ճաշում է, ա՜խ, ինչպե՞ս է ճաշում։ Սելյանկայի մասին խոսել

էլ կամաշի, դեմքը կկնճռոտի ու կթքի։ Ձմեռը դիտմամբ էրմեր են պատրաստում ճաշի համար, ապրիլին մորի են մառուցում։ Տան կինը մետաքսե ժանյակների մեջ, երեխաները դաստիարակչուհի ունեն, նրանք կոկիկ սանրված են, զարդարված։ Է՜հ, քավո՛ր, դրախտ կա, բայց մեղքերս չեն թողնում։ Խմե՛նք։ Ա՛յ, սելյանկան էլ բերում են։

— Մի՛ գանգատվի, սանահեր, հոգուդ մեղք մի՛ անի. կապիտալ ունես, և լավ...— ասում էր հարբած Տարանտևը կարմիր, կարծես արնակոլոլ, աչքերով։— Երեսունհինգ հազար արծաթով՝ կատակ բան չէ։

— Կամա՛ց, կամա՛ց, քավո՛ր,— ընդհատեց Իվան Մատվեևիչը։— Ի՞նչ է որ, շարունակ՝ երեսունհի՛նգ։ Ե՞րբ կհասցնես հիսունի։ Եվ հիսուն հազարով էլ դրախտ չես ընկնի։ Եթե ամուսնանաս, պետք է զգույշ ապրես, ամեն ռուբլին հաշվես, ջամայական ռոմի մասին մտածելն անգամ պետք է մոռանաս, դա ի՞նչ կյանք է։

— Դրա փոխարեն հանգիստ է, սանահե՛ր. սա մի ռուբլիանոց, նա երկու, մեկ էլ տեսար, օրական յոթ ռուբլի պահեցիր։ Ո՛չ քեզ կպչելու բան կլինի, ո՛չ բծախնդրություն, ո՛չ բիծ, ո՛չ ծուխ։ Իսկ եթե մի անգամ մեծ գործի տակ անունդ ստորագրում ես, ապա հետագայում ամբողջ կյանքում կոզերովդ ես քերում։ Ո՛չ, ախպե՛ր, հոգուդ մեղք մի՛ անի, սանահե՛ր։

Իվան Մատվեևիչը չէր լսում և վաղուց ինչ-որ բանի մասին էր մտածում։

—Հլա լսի՛ր,— հանկարծ սկսեց նա, աչքերը չռելով և ինչ-որ բանի վրա ուրախանալով, այնպես որ հարբածությունը համարյա անցավ,— բայց ո՛չ, վախենում եմ, չեմ ասի, գլխիցս դուրս չեմ թողնի այդպիսի թռչուն։ Ա՛յ թե գանձ թռավ-եկավ... Խմենք, քավո՛ր, շո՛ւտ խմենք։

— Չեմ խմի, մինչև չասես,— ասում էր Տարանտևը, մի կողմ հրելով գավաթը։

— Կարևոր բան է, քավո՛ր,— շշնջում էր Մուխոյարովը՝ դեպի դուռը նայելով։

— Դե՞...— հարցրեց Տարանտևն անհամբեր։

— Ա՛յ թե գյուտ արի։ Դե, գիտե՞ս ինչ, քավո՛ր, չէ՞ որ

դա միևնույն է, թե անունն ստորագրել մեծ գործի տակ, ասված վկա՝ այդպես է։

— Բայց ի՞նչը, ասելո՞ւ ես թե ոչ։

— Իսկ ի՞նչ մաղարիչ է լինելու, մաղարիչ։

— Դե՞,— դրդում էր Տարանտևը։

— Սպասի՛ր, թող մի քիչ էլ մտածեմ։ Եվ այստեղ ոչնչացնելու բան չկա, այստեղ օրենքով, որ դու հարկավոր ես առանց քեզ անհարմար է։ Ապա թե ոչ, ասված է վկա, չէի ասի, այնպիսի գործ չէ, որ մի ուրիշ հոգի էլ իմանա։

— Մի՞թե ես քեզ համար ուրիշ հոգի եմ, սանահե՛ր։ Կարծեմ, մի անգամ չէ, որ ծառայել եմ քեզ, վկա էլ եմ եղել, պատճեններ էլ... հիշո՞ւմ ես... ախ դու խո՛զ։

— Քավո՛ր, քավո՛ր։ Լեզուդ քեզ քաշիր։ Այ թե ի՞նչ մարդ ես. այնպես ես բղավում, կարծես թնդանոթ լինի։

— Ո՞ր սատանան է լսելու այստեղ։ Ի՞նչ է, մի՞թե խելքդս վրաս չէ։— սրտնեղությամբ ասաց Տարանտևը։— Ի՞նչ ես ինձ տանջում։ Ասա՛։

— Դե լսի՛ր. Իլյա Իլյիչը վախկոտ է չէ՞, ոչ մի կարգ չի իմանում. այն ժամանակ պայմանագրերից գլուխը կորցրել էր, հավատարմագիր էին ուղարկել, չգիտեր՝ ինչից սկսել, չի հիշում մինչև անգամ, թե որքան բահրա է ստանում. ինքն է ասում՝ «ոչինչ չգիտեմ»...

— Է հետո՞,— անհամբերությամբ հարցրեց Տարանտևը։

— Դե, նա շատ հաճախ է սովորություն դարձրել քրոջս մոտ գնալ։ Նորերս նստել էր մինչև ժամը մեկը, նախասենյակում հանդիպեց ինձ և իբր թե-չտեսավ։ Այդպես ուրեմն, մի քիչ էլ նայենք, թե ի՞նչ է լինելու, և ապա.... Դու կողմնակի կերպով խոսի՛ր նրա հետ, որ լավ բան չէ տան մեջ անպատիվ գործ բռնել, որ քույրս այրի է. ասա, որ այդ մասին իմացել են, որ նա այլևս մարդու գնալ չի կարող, որ մի հարուստ վաճառական էր հանդես եկել իբրև փեսացու, իսկ այժմ նա լսել է, որ Օբլոմովը երեկոները քրոջս մոտ է անցկացնում, էլ չի ուզում։

— Է, հետո ի՞նչ. նա կվախենա, կպառկի անկողնի վրա և կսկսի վարազի նման շուռումուռ գալ ու հառաչել, ահա և բոլորը,— ասաց Տարանտևը։— Ի՞նչ օգուտ կա սրանից։ Ո՞ւր է մաղարիչը։

— Ա՛յ քեզ բան։ Իսկ դու նրան ասա, որ ուզում եմ գանձ գտավել, որ իբր նրա վրա հսկող է եղել, որ վկաներ կան...

— Հետո՞։

— Դե, եթե շատ վախենա, ասա՛, որ կարելի է հաշտվել՝ մի փոքրիկ կապիտալ զոհելով։

— Նրան փող որտեղի՞ց է,— հարցրեց Տարանտևը։— Ահից նա կարող է թեկուզև տասը հազար խոստանալ...

— Այդ ժամանակ դու միայն աչքով արա ինձ, իսկ ես արդեն կպատրաստեմ պարտագիրը... քրոջս անունով. «Իբր թե՝ ես, Օբլոմովս, փոխ եմ առել այսինչ այրուց տասը հազար ռուբլի, այսինչ ժամկետով և այլն»։

— Ի՞նչ իմաստ ունի դա, սանահե՛ր։ Ես չեմ հասկանում. փողերը հասնելու են քրոջդ և նրա երեխաների՞ն։ Ո՞ւր է մաղարիչը։

— Իսկ քույրս ինձ կտա պարտագիր նույնպիսի գումարի, ես նրան ստորագրել կտամ։

— Եթե նա չստորագրի՞։ Համառի՞։

— Քո՞ւյրս։

Եվ Իվան Մատվեևիչը քրքջաց բարալիկ ծիծաղով։

— Կստորագրի, քավո՛ր, կստորագրի, իր մահվան դատավճիռը կստորագրի և չի հարցնի, թե ինչ է, միայն քրմծիծաղ կտա. «Ագաֆյա Պշենիցինա» կստորագրի մի կողքի վրա, ծուռ և երբեք չի իմանա, թե ինչ է ստորագրել։ Տեսնո՞ւմ ես, մենք երկուսս մի կողմ կքաշվենք, քույրս պահանջ կունենա կոլեգիական քարտուղար Օբլոմովից, իսկ ես՝ կոլեգիական քարտուղարի կին Պշենիցինայից։ Թո՛ղ գերմանացին տաքանա, օրինակա՞ն գործ է,— ասում էր նա՝ դողդոջուն ձեռքերը վերև բարձրացնելով։— Խմե՞նք, քավո՛ր։

— Օրինակա՞ն գործ է,— հրճվանքով ասաց Տարանտևը։— Խմենք։

— Իսկ եթե հաջող անցնի, կարելի է մի երկու տարուց հետո կրկնել, օրինա՞կան գործ է։

— Օրինակա՞ն գործ է,— հավանության նշան անելով արտասանեց Տարանտևը։— Կկրկնենք մե՞նք էլ։

— Կկրկնե՞նք։

Եվ նրանք խմեցին։

— Միայն թե քո այդ հայրենակիցը չհամառի և նախորոք գերմանացուն չգրի,— վախով նկատեց Մուխոյարովը,— այն ժամանակ, ախպե՛ր, բանը վա՛տ կլինի։ Ոչ մի գործ չի կարելի սկսել. քույրս այրի՞ է, ոչ թե աղջիկ։

— Կգրի՞։ Ինչպե՞ս չէ, կգրի՞։ Երկու տարուց հետո կգրի,— ասաց Տարանտևը։— Իսկ եթե համառել սկսի՝ կհայհոյեմ,...

— Ո՛չ, ո՛չ, աստված չանի՞։ Ամեն ինչ կփչացնես, քավո՛ր. կասի, թե հարկադրել են, գուցե հիշատակի նաև ծեծի մասին, քրեական գործ կդառնա։ Ո՛չ, այդպես լավ չէ։ Ա՛յ ինչ կարելի է անել. նախօրոք պետք է նրա հետ նախաճաշել և խմել. նա սիրում է հաղարջի արաղ։ Հենց որ արաղը գբլուխն ընկնի, դու ինձ իսկույն աչքով արա, ես ներս կգամ ասածս պարտագրով։ Նա իսկի չի էլ նայի գումարին, կըստորագրի, ինչպես այն ժամանակ պայմանագիրը, իսկ հետո, երբ մակլերի մոտ վավերացված կլինի, գնա ու հարցուփո՛րձ արա։ Այդպիսի բարինը կամաչի խոստովանել, որ հարբած վիճակում է ստորագրել. օրինակա՞ն գործ է։

— Օրինակա՞ն գործ է,— կրկնեց Տարանտևը։

— Թո՛ղ այն ժամանակ Օբլոմովկան ժառանգներին հասնի։

— Թո՛ղ հասնի։ Խմենք, սանահե՛ր։

— Տխմարների կենա՞ց,— ասաց Իվան Մատվեևիչը։ Նրանք խմեցին։

IV

Հիմա հարկավոր է փոխադրվել մի քիչ ետ, նախքան Շտոլցի գալն Օբլոմովի անվանակոչությանը, և մի ուրիշ վայր, Վիբորգյան ծայրամասից հեռու։ Այնտեղ կհանդիպեն ընթերցողին ծանոթ անձեր, որոնց մասին Շտոլցն ամեն բան չհաղորդեց Օբլոմովին, ինչ գիտեր, դրդված հատուկ նկատառումով, կամ, գուցե, այն պատճառով, որ Օբլոմովը հարցուփորձ չարեց նրանց մասին, հավանորեն, նույնպես հատուկ նկատառումներով։

Մի անգամ Շտոլցը Փարիզում անցնում էր բուլվարով և ցրված կերպով աչքերն այս ու այն անցորդի վրա էր գցում, խանութների ցուցանակներին էր նայում, առանց որևէ բանի վրա կանգ առնելու։ Վաղուց էր, որ նա նամակ չէր ստանում Ռուսաստանից, ո՛չ Կիևից, ո՛չ Օդեսայից, ո՛չ էլ Պետերբուր-

գից։ Նա ձանձրանում էր, և էլի երեք նամակ տարավ փոստ ու տուն էր վերադառնում։

Հանկարծ նրա աչքերը զարմանքով կանգ առան մի ինչ-որ բանի վրա, բայց հետո նորից սովորական արտահայտություն ընդունեցին։ Երկու տիկին բուլվարից թեքվեցին և խանութ մտան։

«Ո՛չ, չի կարող լինել,— մտածեց նա, ի՞նչ իմաստ։ Ես դիմանայի՛։ Այդ նրանք չեն»։

Բայց և այնպես նա մոտեցավ այդ խանութի լուսամուտին և ապակիների միջից դիտում էր տիկիններին. «ոչինչ էլ չես կարող տեսնել, նրանք կանգնած են մեջքները դեպի լուսամուտը»։

Շտոլցը մտավ խանութ և սկսեց ինչ-որ մի բան սակարկել։ Տիկիններից մեկը շուռ եկավ դեպի լույսը, և նա ճանաչեց Օլգա Իլյինսկայային, և չճանաչե՞ց։ Ուզում էր նետվել դեպի նա և կանգ առավ, սկսեց սևեռակի դիտել։

Աստվա՜ծ իմ։ Այդ ի՞նչ փոփոխություն է։ Նա է և նա չէ։ Դիմագծերը նրանն են, բայց նա դժգույն է, աչքերը կարծես մի փոքր ներս են ընկել, և չկա մանկական քմծիծաղը շրթունքներին, չկա միամտությունը, անհոգությունը։ Հոնքերի վերևում թառել է կարևոր ասեմ թե վշտալից մի միտք, աչքերը շատ այնպիսի բաներ են ասում, ինչ չգիտեին, չէին ասում առաջ։ Նա նայում է առաջվա նման՝ բաց, պայծառ և հանդարտ. ամբողջ դեմքին ընկած է կա՛մ վշտի, կա՛մ մշուշի մի ամպ։

Շտոլցը մոտեցավ նրան։ Օլգայի հոնքերը մի փոքր կծկվեցին. նա մի բոպե տարակուսանքով նայեց նրան, հետո ճանաչեց. հոնքերը հարթվեցին և համաչափվեցին, աչքերը փայլեցին խաղաղ, բայց խոր ուրախությամբ։ Ամեն մի եղբայր երջանիկ կլիներ, եթե նրան տեսնելիս այդպես ուրախանար իր սիրելի քույրը։

— Աստվա՜ծ իմ։ Դու՞ք եք արդյոք,— ասաց Օլգան մինչև հոգու խորքը թափանցող, նազանքով ու բերկրալից ձայնով։

Մորաքույրն արագ շուռ եկավ, և երեքն էլ միասին սկսեցին խոսել։ Շտոլցը կշտամբում էր, որ իրեն նամակ չեն գրել, նրանք արդարանում էին։ Նրանք ընդամենը երրորդ օրն է,

ինչ եկել էին և ամենուրեք նրան էին փնտրում։ Մի բնակարանում ասացին, թե նա Լիոն է գնացել, և նրանք չգիտեին՝ ինչ անեն։

— Բայց ինչպե՞ս անցավ այդ ձեր մտքով։ Եվ ինձ ո՞չ մի խոսք,— կշտամբում էր նա։

— Մենք այնպես արագ պատրաստվեցինք, որ չէինք ուզում ձեզ գրել,— ասաց մորաքույրը։— Օլգան ուզում էր անակնկալ անել։

Շտոլցը նայեց Օլգային. նրա դեմքը չէ՛ր հաստատում մորաքրոջ խոսքերը։ Նա է՛լ ավելի սևեռակի նայեց Օլգային, բայց սա անթափանցելի էր, անմատչելի՝ նրա հայացքին։

«Ի՞նչ է պատահել նրան»,— մտածում էր Շտոլցը։ «Ես մի ժամանակ միանգամից կռահում էի նրա մտքերը, իսկ այժմ... որպիսի՜ փոփոխություն»։

— Ինչպե՞ս զարգացել եք, Օ՛լգա Սերգեևնա, աճել եք, հասունացել,— ասաց նա բարձրաձայն,— ես ձեզ չե՞մ ճանաչում։ Իսկ ընդամենը մի տարի է, որ չենք տեսնվել։ Ի՞նչ էիք անում, ի՞նչ է պատահել ձեզ։ Պատմե՛ք, պատմե՛ք։

— Էհ... ոչ մի առանձին բան,— ասաց Օլգան՝ զննելով կտորը։

— Ձեր երգեցողությունն ինչպե՞ս է,— ասում էր Շտոլցը՝ շարունակելով ուսումնասիրել իր համար անծանոթ Օլգային և աշխատելով կարդալ նրա դեմքի իրեն անծանոթ խաղը, բայց այդ խաղը կայծակի նման փայլատակում էր ու չքանում։

— Վաղուց է, չեմ երգել, երկու ամիս կլինի,— ասաց Օլգան անփութորեն։

— Իսկ Օբլոմո՞վն ինչպես է,— հանկարծ հարց զցեց նա։— Կենդանի՞ է արդյոք։ Չի՞ գրում։

Այստեղ Օլգան, գուցե ակամայից, մատներ իր գաղտնիքը, եթե օգնության չհասներ մորաքույրը։

— Երևակայե՛ք,— ասաց նա՝ դուրս գալով խանութից,— ամեն օր լինում էր մեզ մոտ, հետո հանկարծ անհետացավ։ Մենք պատրաստվում էինք արտասահման մեկնել, մարդ ուղարկեցի նրա մոտ, ասել էին, թե հիվանդ է, չի ընդունում. այդպես էլ չտեսնվեցինք։

— Դուք է՞լ չգիտեք,— հոգացողությամբ հարցրեց Շտոլցը Օլգային։

Օլգան լորնետով սևեռակի նայում էր անցնող կառքին։

— Նա իսկապես հիվանդացել էր,— ասաց Օլգան՝ շինծու ուշադրությամբ դիտելով անցնող կառքը։— Նայե՛ք, ma tante, կարծեմ՝ մեր ուղեկիցներն էին, որ անցան։

— Ո՛չ, դուք ինձ հաշիվ տվեք իմ Իլյայի մասին,— պնդում էր Շտոլցը,— ի՞նչ եք արել դուք նրան։ Ինչու՞ ձեզ հետ չեք բերել։

— Mais ma tante vient de dire[1],— ասում էր Օլգան։

— Նա սարսափելի ծույլ է,— նկատեց մորաքույրը,— և այնպե՞ս վայրենի է. հենց որ մեզ մոտ երեք-չորս հոգի էին հավաքվում, նա իսկույն հեռանում էր։ Երևակայե՛ք, օպերայի աբոնեմենտ վերցրեց, բայց մինչև աբոնեմենտի կեսն էլ չլսեց։

— Ռուբինին չլսեց,— ավելացրեց Օլգան։

Շտոլցը գլուխը տարուբերեց ու հառաչեց։

— Այդ ինչպե՞ս վճռեցիք։ Երկա՞ր ժամանակով արդյոք։ Ի՞նչ անցավ հանկարծ մտքներովդ,— հարցնում էր Շտոլցը։

— Սրա համա՞ր, բժշկի խորհրդով,— ասաց մորաքույրը՝ ցույց տալով Օլգային։— Պետերբուրգն սկսել էր նկատելի կերպով ներգործել նրա վրա, դրա համար էլ մենք ձմեռը մեկնեցինք այնտեղից, բայց ա՛յ, դեռ չենք վճռել, թե որտեղ անցկացնենք այն՝ Նիցցայո՞ւմ, թե Շվեյցարիայում։

— Այո՛, դուք շատ եք փոխվել,— ասում էր Շտոլցը մտախոհ՝ աչքերը սևեռելով Օլգայի վրա, ուսումնասիրելով յուրաքանչյուր ջիղը, նայելով նրա աչքերի մեջ։

Իլյինսկայաները կես տարի ապրեցին Փարիզում. Շտոլցը նրանց ամենօրյա և միակ զրուցակիցն ու ուղեցույցն էր։

Օլգան սկսեց նկատելի կերպով կազդուրվել. մտածկոտությունից նա անցավ հանգստության և անտարբերության, գոնե արտաքուստ։ Թե ինչ էր կատարվում նրա ներսում, աստված գիտե, բայց նա կամաց-կամաց Շտոլցի համար դարձավ նախկին բարեկամուհին, թեև այլևս առաջվա նման չէր ծիծաղում բարձր, մանկական, արծաթե ծիծաղով, այլ միայն ժպտում էր զուսպ ժպիտով, երբ Շտոլցը նրան ծիծաղեցնում էր։ Երբեմն Օլգան կարծես սրտնեղում էր, որ չի կարողանում չծիծաղել։

[1] Բայց մորաքույրս նոր ասաց ձեզ (Ֆր.)։

Շտոլցն իսկույն տեսավ, որ նրան այլևս ծիծաղեցնել չի կարելի. հաճախ Օլգան հայացքով և մեկը մյուսի վրա անհամաչափ ընկած հոնքերով ու ճակատի վրայի ծալքով կլսեր ասած ծիծաղելի բանը և չէր ժպտա, կշարունակեր լուռ նայել Շտոլցին, կարծես կշտամբելով նրան թեթևամտության համար կամ անհամբեր դառնալով, կամ հանկարծ կատակին պատասխանելու փոխարեն մի խորին հարց կտար և այն կուղեկցեր այնպիսի համառ հայացքով, որ Շտոլցը կամաթահարվեր անփութի, դատարկ խոսակցություն սկսելու համար։

Երբեմն Օլգայի մեջ արտահայտություն էր գտնում այնպիսի ներքին հոգնածություն մարդկային ամենօրյա դատարկ վազվզոցից ու շաղակրատությունից, որ Շտոլցն ստիպված էր լինում հանկարծ ուրիշ ոլորտ թեակոխել, ուր նա հազվադեպ ու տհաճությամբ էր թեակոխում կանանց հետ։ Որքան միտք, խելքի հնարիմացություն էր գործադրվում միմիայն այն բանի համար, որպեսզի Օլգայի խոր, հարցական հայացքը պայծառանար ու հանդարտվեր, չծարավեր, հարցականորեն որևէ բան չփնտրեր ավելի հեռվում, որևէ այլ տեղում՝ Շտոլցից անկախ։

Ինչպիսի տագնապ էր զգում նա, երբ անփութի բացատրության պատճառով Օլգայի հայացքը դառնում էր չոր, դաժան, հոնքերը կիտվում էին և դեմքի վրա տարածվում էր անմռունչ, բայց խորին դժգոհության ստվերը։ Եվ Շտոլցին պետք էր լինում երկու-երեք օր շարունակ խելքի ամենանուրբ խաղ, մինչև անգամ նենգավորություն, կրակ և կանանց հետ վարվելու շնորհքի իր ամբողջ կարողությունը գործադրել, որպեսզի Օլգայի սրտից նրա դեմքի վրա դուրս քաշի, և այն էլ դժվարությամբ, հեռզհետե, պայծառության արշալույսը, հաշտության հեզությունն հայացքի և ժպիտի մեջ։

Նա օրվա վերջին երբեմն տուն էր գալիս այդ պայքարից խոշտանգված և երջանիկ էր լինում, երբ հաղթող էր դուրս գալիս։

«Ինչպե՞ս հասունացել է նա, տե՞ր աստված։ Ինչպե՞ս զարգացել է այդ աղջիկը։ Ո՞վ է եղել նրա ուսուցիչը։ Որտե՞ղ է նա կյանքի դասեր վերցրել։ Բարոնի՞ց։ Այնտեղ ամեն ինչ

հարթ է, նրա պճնազարդ ֆրազներից ոչինչ չե՞ս քաղի։ Իլյաշ յի՞ց արդյոք...»

Եվ նա չէր կարողանում հասկանալ Օլգային, և հետևյալ օրը նորից նրա մոտ էր վազում, ու արդեն զգուշությամբ, երկյուղով կարդում էր նրա դեմքը, հաճախ դժվարանալով և միայն իր խելքի և կյանքը ճանաչելու օգնությամբ հաղթահարելով հարցերը, կասկածները, պահանջները, այն ամենը, ինչ դուրս էր ցայտում Օլգայի դիմագծերից։

Փորձառության հուրը ձեռքին նա թափանցում էր Օլգայի խելքի, բնավորության լաբիրինթոսը և ամեն օր հայտնագործում ու ուսումնասիրում էր նորանոր գծեր ու փաստեր, և էլի հատակը չէր տեսնում, միայն զարմանքով ու տագնապով հետևում էր, թե ինչպես նրա միտքը ամեն օր կենսական հաց է պահանջում, ինչպես նրա հոգին չի լռում, շարունակ փորձ ու կյանք է խնդրում։

Շտոլցի ամբողջ գործունեությանը, ամբողջ կյանքին օրեցօր սերտաճում էր մի օտար գործունեություն և կյանք ևս. Օլգային շրջապատելով ծաղիկներով, չորս կողմը գրքեր, ալբոմներ և նոտաներ լցնելով՝ Շտոլցը հանգստանում էր, կարծելով, թե երկար ժամանակով լցրել է իր բարեկամուհու պարապ ժամանակը, և գնում էր աշխատելու կամ դիտելու որևիցե հանքահոր, որևիցե օրինակելի կալվածք, գնում-մտնում էր մարդկանց շրջանը՝ նոր կամ երևելի անձերի հետ ծանոթանալու, հանդիպելու համար. հետո վերադառնում էր Օլգայի մոտ հոգնած՝ նրա դաշնամուրի կողքին նստելու և նրա ձայնի հնչյունների ներքո հանգստանալու։ Եվ հանկարծ նրա դեմքին տեսնում էր արդեն պատրաստի հարցեր, հայացքի մեջ՝ հաշվետվություն լսելու հաստատակամ պահանջ։ Եվ նա աննկատելիորեն, ակամա, հետզհետե, Օլգային պատմում էր այն, ինչ տեսել էր, ինչի համար տեսել էր։

Երբեմն Օլգան ցանկություն էր հայտնում, որ ինքն էլ տեսնի ու իմանա այն, ինչ տեսել և իմացել է Շտոլցը։ Եվ նա կրկնում էր իր աշխատանքը. Օլգայի հետ գնում էր դիտելու շենքը, տեղը, մեքենան, պատերի, քարերի վրա կարդալու հին դեպքերը։ Հետզհետե, աննկատելիորեն, Շտոլցը սովորեց նրա ներկայությամբ բարձրաձայն մտածել, զգալ, և հանկարծ մի անգամ, խստորեն ստուգելով իրեն, իմացավ,

որ սկսել է ապրել ո՛չ թե մենակ, այլ երկուսով, և որ այդ կյանքով է ապրում Օլգայի ժամանելու օրվանից։

Համարյա անդիտակցաբար, ինչպես ինքն իր առաջ, նա Օլգայի ներկայությամբ գնահատական էր տալիս իր ձեռքբերած գանձին և զարմանում էր իր և Օլգայի վրա. հետո խնամքով ստուգում էր, թե արդյոք նրա հայացքի մեջ հարց չի՞ մնացել, արդյոք նրա դեմքի վրա բավարարված մտքի արշալույս կա՞ և արդյոք նրա հայացքն ուղեկցո՞ւմ է իրեն իբրև հաղթողի։

Եթե դա հաստատվում էր, նա տուն էր գնում հպարտությամբ, սարսռուն հուզմունքով և գիշերով գաղտնի երկար պատրաստվում էր հետևյալ օրվան։ Ամենատաղտկալի, անհրաժեշտ զբաղմունքները նրան չոր չէին թվում, այլ միայն անհրաժեշտ. նրանք ավելի խորն էին մտնում կյանքի հիմքի, հյուսվածքի մեջ։ Մտքերը, երևույթների դիտողությունները լուռ կերպով ու անփութորեն չէին դասավորվում հիշողության արխիվում, այլ յուրաքանչյուր օրվան պայծառ գույն էին տալիս։

Ինչպիսի՜ ջերմ արշալույս էր ընդգրկում Օլգայի դժգույն դեմքը, երբ Շտոլցը, առանց սպասելու հարցական ու ծարավի հայացքին, շտապում էր կրակոտ ու եռանդուն կերպով նրա առաջ թափել նո՛ր պաշար, նո՛ր նյութ։

Եվ նա ինքն էլ ի՜նչ երջանիկ էր լինում, երբ Օլգայի միտքը, նույնպիսի խնամքով ու սիրալիր հնազանդությամբ, շտապում էր որսալ նրա հայացքի, յուրաքանչյուր խոսքի մեջ եղածը, և երկուսն էլ աչալրջորեն նայում էին. նա՝ Օլգային՝ արդյոք հարց չի՞ մնացել նրա աչքերում, Օլգան՝ նրան՝ արդյոք որևէ բան չի՞ մնացել թերի ասված, արդյոք նա չի՞ մոռացել և, առավել ևս, աստված չանի, չի՞ աբհամարհել Օլգայի առաջ բաց անել որևէ մութ, նրա համար անմատչելի անկյուն, զարգացնել իր միտքը։

Որքան հարցն ավելի կարևոր էր, ավելի բարդ, որքան նա ավելի ուշադիր էր բացատրում այդ հարցը նրան, այնքան ավելի երկար ու սևեռակի էր կանգնում Օլգայի երախտագետ հայացքը նրա վրա, այնքան այդ հայացքն ավելի ջերմ, ավելի խոր, ավելի սրտագին էր լինում։

«Այդ երեխա՞ն, Օլգան»,— մտածում էր նա զարմացած։ «Նա գերաճու՞մ է ինձնից»։

Նա խորհում էր Օլգայի մասին, ինչպես երբեք և ոչ մի բանի մասին չէր խորհել։

Գարնանը նրանք բոլորը մեկնեցին Շվեյցարիա։ Շտոլցը գեռ Փարիզում վճռեց, որ նա այսուհետև առանց Օլգայի չի կարող ապրել։ Վճռելով այս հարցը, նա սկսեց վճռել նաև այն հարցը, թե արդյոք Օլգան առանց իրեն կարո՞ղ է ապրել։ Բայց այդ հարցը նա չէր կարողանում այդպես հեշտությամբ վճռել։

Նա այդ հարցին մոտենում էր դանդաղ, ետ-ետ նայելով, զգուշությամբ, երբեմն խարխափելով էր գնում, երբեմն համարձակ և կարծում էր, թե ահա նա մոտ է նպատակին, ահա որևէ անկասկածելի նշան, հայացք, բառ, տաղտկություն կամ ուրախություն կորսա. դեռ հարկավոր է մի փոքրիկ գիծ, Օլգայի հոնքերի հազիվ նկատելի մի շարժում, նրա հառաչանքը, և վաղը գաղտնիքը կբացվի. նա սիրու՞մ է Շտոլցին։

Օլգայի դեմքին նա կարդում էր երեխայության հասնող վստահություն դեպի ինքը. նա երբեմն նայում էր Շտոլցի վրա, ինչպես ոչ ոքի վրա չէր նայում, այլ գուցե այդպես կնայեր միայն մորը, եթե մայր ուներ։

Նրա գալը, հանգստաժամերն անցկացնելը, ամբողջ օրերով հաճույքները կատարելը Օլգան չէր համարում շնորհ, սիրո շոյիչ զոհաբերություն, սրտի սիրալիրություն, այլ համարում էր պարզապես պարտականություն, կարծես նա իր եղբայրը լիներ, հայրը, նույնիսկ ամուսինը. իսկ դա շատ բան է։ դա ամեն ինչ է։ Եվ ինքն էլ, ամեն խոսքի մեջ, նրա հետ արած յուրաքանչյուր քայլում այնպես ազատ էր ու անկեղծ, կարծես Շտոլցը նրա վերաբերմամբ անվիճելի կշիռ ու հեղինակություն ուներ։

Շտոլցը գիտեր, որ ունի այդ հեղինակությունը. Օլգան ամեն բոպե հաստատում էր դա, ասում էր, որ միայն ու միայն նրան է հավատում և կյանքում կարող է կուրորեն վստահել միայն նրան և ոչ ոքի այլևս ամբողջ աշխարհում։

Շտոլցն, իհարկե, հպարտ էր դրանով, բայց չէ՞ որ դրանով կարող էր պարծենալ նաև որևէ մի հասակն առած, խելոք ու փորձված մարդ, նույնիսկ բարոնը, եթե նա պայծառ գլխով, հաստատուն բնավորությամբ մարդ լիներ։

Բայց դա արդյո՞ք սիրո հեղինակությունն էր. ահա՛ հարցը։ Արդյոք այդ հեղինակության մեջ որևէ չափով մտնու՞մ էր սիրո հրապուրիչ խաբուսիկությունը, այն դուրեկան շլացումը, որի մեջ կինը պատրաստ է դաժան կերպով սխալվել և երջանիկ լինել սխալով...

Ո՛չ, Օլգան այնպես գիտակցաբար է հնազանդում նրան։ Ճիշտ է, նրա աչքերը վառվում են, երբ Շտոլցը որևէ գաղափար է զարգացնում կամ իր հոգին բաց անում նրա առջև. նա Շտոլցի վրա է թափում իր հայացքի ճառագայթները, բայց միշտ երևում է, թե ինչի համար. երբեմն նա ինքը հենց պատճառն էլ ասում է։ Իսկ սիրո մեջ ծառայությունը ձեռք է բերվում այնպե՞ս կուրորեն, անհաշվետու կերպով, և հենց այդ կուրության ու անհաշվետվության մեջ է երջանկությունը։ Եթե Օլգան վիրավորվում է, իսկույն երևում է, թե ինչից է վիրավորված։

Ո՛չ հանկարծական գույն, ո՛չ վախի հասնող բերկրանք, ո՛չ նվաղուն կամ հրաասարսուռ հայացք Շտոլցը երբեք չկարողացավ որսալ, և եթե դրա նման որևէ բան լինում էր, Շտոլցին թվում էր, թե նրա դեմքը այլանդակվում է ցավից, երբ ինքն ասում էր, թե մոտ օրերս Իտալիա է մեկնելու, նրա սիրտը մարում էր և արյունով լցվում այդ թանկագին և հազվադեպ բոպեներից, երբ հանկարծ ամեն ինչ դարձյալ ավելացնում էր.

— Ո՞ւրքա՞ն ցավում եմ, որ չեմ կարող ձեզ հետ մեկնել։ Իսկ շատ ու շա՞տ կցանկանայի։ Բայց դուք ինձ ամեն բան կպատմեք և այնպես կհաղորդեք, կարծես ես ինքս էլ եղել եմ այնտեղ։

Եվ սքանչացումը խորտակված էր այդ ակներև, ոչ ոքից չթաքցվող ցանկությունից և այդ գռեհիկ, իսկական գովասանքից նրա պատմելու արվեստի մասին։ Շտոլցը հավաքում էր բոլոր մանրագույն գծերը, հազիվ նրան հաջողվում էր ամենանուրբ ժանյակ հյուսել, մնում էր միայն որևէ մի հանգույց գցել-վերջացնել՝ այդ արդեն իսկույն...

Եվ հանկարծ Օլգան նորից դառնում էր հանդիստ, հավա-

սար, պարզ, երբեմն մինչև անգամ սառը։ Նստում, աշխատում, և լուռ լսում էր նրան, ժամանակ առ ժամանակ բարձրացնում՝ էր գլուխը, նրա վրա այնպիսի հետաքրքիր, հարցական, ուղիղ գործին վերաբերող հայացքներ գցում, որ Շտոլցը շատ անգամ գիրքը սրտնեղությամբ դեն էր նետում կամ ընդհատում էր որևէ բացատրություն, վեր էր թռչում տեղից ու գնում։ Շրջվում էր՝ Օլգայի զարմացած հայացքն էր ուղեկցում նրան. նա ամաչում էր, վերադառնում և որևէ բան էր հնարում իրեն արդարացնելու համար։

Օլգան լսում էր շատ հասարակ ձևով ու հավատում։ Նույնիսկ կասկած, նենգավոր ժպիտ չկար նրա դեմքին։

«Սիրու՞մ է, թե չի սիրում»,— այս երկու հարցն էր պտտվում Շտոլցի գլխում։

Եթե սիրում է, ինչու՞ է այդպես զգույշ, այդպես կասկածամիտ։ Ինչու՞ է այդպես պատրաստակամ, հնազանդ։ Նա մի շաբաթով Փարիզ, Լոնդոն էր գնում և եկավ այդ մասին Օլգային ասելու հե՛նց մեկնելու օրը, առանց սկզբից նախազգուշացնելու։

Եթե Օլգան հանկարծ վախենար, դեմքը փոխվեր՝ բանը վերջացած էր, գաղտնիքը բացված, Շտոլցը երջանի՞կ է։ Բայց Օլգան ամուր սեղմեց նրա ձեռքը, տխրեց. Շտոլցը հուսահատության մեջ էր։

—Ինձ համար սարսափելի ձանձրալի կլինի,— ասաց Օլգան,— պատրաստ եմ լաց լինել, ես հիմա կարծես որբ լինեմ։ Ma tante! Տեսե՛ք, Անդրեյ Իվանովիչը մեկնում է,— ավելացրեց նա լացակումած։

Օլգան սպանեց նրան։

«Դեռ մորաքրո՞ջն էլ դիմեց»,— մտածում էր նա։ «Այդ էր պակա՛ս։ Տեսնում եմ, որ նա ափսոսում է, սիրում է, թերևս... բայց այդ սերը կա՞ելի է, որպես բորսային ապրանք, գնել այսքան ժամանակվա ընթացքում, այսչափ ուշադրությամբ, հաճոյակատարությամբ... Չեմ վերադառնա»,— մռայլված մտածում էր նա։ «Ասացե՛ք խնդրեմ, Օլգան, այն աղջի՞կը։ Մի ժամանակ այնպես հլու-հնազանդ էր։ Ի՞նչ է պատահել նրան»։

Եվ նա խոր մտածմունքի մեջ ընկավ։

Ի՞նչ է պատահել նրան։ Նա մի հասարակ բան չգիտեր.

Որ Օլգան սիրել է մի անգամ, որ, ինչքան ընդունակություն ուներ, ապրել է այն կուսական շրջանը, երբ աղջիկը չի կարողանում զսպել իրեն, իր հանկարծական դիմագուշները, սրտի լավ չթաքցրած ցավը, սիրո տենդային նշանները, նրա առաջին տենդը։

Եթե նա այդ գիտենար, նա կիմանար եթե ոչ այն գաղտնիքը, արդյո՞ք Օլգան նրան սիրում է, թե ոչ, ապա, գոնե, կիմանար, թե ինչու այդպես դժվարացել է հասկանալը, թե ինչ է կատարվում նրա հետ։

Շվեյցարիայում նրանք ամեն տեղ եղան, ուր ուղևորվում են ճանապարհորդները։ Բայց ավելի հաճախ և ավելի մեծ սիրով կանգ էին առնում սակավ հաճախվող անդորր վայրերում։ Նրանց, կամ համենայնդեպս Շտոլցին, այնպես էր զբաղեցնում «սեփական գործը», որ նրանք հոգնում էին ճանապարհորդությունից, որը մղվում էր երկրորդ պլան։

Շտոլցը գնում էր Օլգայի ետևից լեռները, նայում էր քարափներին, ջրվեժներին, և ամեն շրջանակում էլ առաջին պլանում Օլգան էր։ Նա գնում էր որևէ նեղ կածանով նրա ետևից, մինչև մորաքույրը ներքևում նստած էր կառքի մեջ. նա գաղտնի կերպով աչալրջորեն հետևում էր, թե ինչպես էր Օլգան սարը բարձրանալիս կանգ առնում, շունչ քաշում և ինչպիսի հայացք է գցում նրա վրա, անպայման և ամենից առաջ նրա վրա. նա արդեն ձեռք էր բերել այդ համոզմունքը։

Եվ դա լավ էլ է. մարդու սիրտը ջերմանում է ու լուսավորվում, բայց հանկարծ Օլգան մի հայացք կգցի վայրի վրա և կսառչի, անձնատուր կլինի մոռացության՝ հայեցական թմրության մեջ ընկած, և նրա առաջ այլևս չկա Շտոլցը։

Հենց որ նա մի թեթև շարժում է անում, հիշեցնում իր մասին, մի խոսք ասում, Օլգան վախենում է, երբեմն ճչում. ակներև է, որ մոռացել է՝ այստե՞ղ է արդյոք Շտոլցը, թե հեռու, պարզապես՝ գոյություն ունի՞ նա աշխարհում։

Դրա փոխարեն հետո, տանը, լուսամուտի մոտ, պատշգամբում, նա խոսում է միայն Շտոլցի հետ, խոսում է երկար, երկար ընտրում է իր հոգուց տպավորությունը, մինչև որ ամբողջովին արտահայտում է ամեն ինչ, և խոսում է ջերմությամբ, հափշտակվելով, երբեմն կանգ է առնում, բառ է ջոկում և անցողակի որսում է նրա թելադրած արտահայտու-

թյունը, և նրա հայացքի մեջ կարողանում է առկայծել շնորհ հակալության ճառագայթը օգնության համար։ Կամ հոգնածությունից գունատված նստում է մեծ բազկաթոռի մեջ, և միայն ագահ, չհոգնող աչքերն են Շտոլցին ասում, որ նա ուզում է լսել իրեն։

Նա լսում է անշարժ, բայց ոչ մի խոսք չի ասում, ոչ մի գիծ բաց չի թողնում։ Շտոլցը դադարում է խոսել, Օլգան դեռ շարունակում է լսել, աչքերը դեռ հարցնում են, և Շտոլցն, այդ համար կոչին ի պատասխան, շարունակում է արտահայտվել նոր ուժով, նոր հափշտակությամբ։

Եվ դա լավ է. պայծառ է, տաք, սիրտը բաբախում է. նշանակում է՝ Օլգան ապրում է այստեղ. Օլգային այլևս ուրիշ ոչինչ պետք չէ. այստեղ է նրա լույսը, կրակը և բանականությունը։ Իսկ նա հանկարծ վեր է կենում հոգնած, և այս րոպեիս նույն հարցական աչքերը խնդրում են Շտոլցին հեռանալ, կամ Օլգան ուտել է ուզում, և ուտում է այնպիսի ախորժակով...

Այս ամենը հիանալի կլիներ. Շտոլցը երազող չէ. նա չէր կամենա պոռթկուն կիրք, ինչպես չէր ցանկանում այն նաև Օբլոմովը, միայն թե ուրիշ պատճառներով։ Բայց նա կկամենար, սակայն, որ զգացմունքն ընթանար ուզիղ հունով, սկզբում ջերմորեն եռալով աղբյուրի մոտ, որպեսզի նա քաղեր այնտեղից ու հագենար նրանով, իսկ հետո ամբողջ կյանքում իմանար, թե որտեղից է բխում երջանկության այդ աղբյուրը...

— Սիրու՞մ է նա արդյոք, թե ոչ,— ասում էր Շտոլցը տանջագին հուզմունքով, գրեթե մինչև արյուն-քրտինք մտած, համարյա արտասվելու չափ։

Նրա մեջ շարունակ ավելի ու ավելի էր բռնկվում այս հարցը, բոցի նման ընդգրկում նրան, կաշկանդում դիտավորությունները. դա արդեն ոչ թե սիրո, այլ կյանքի գլխավոր հարցն էր։ Այլևս ուրիշ ոչ մի բանի համար նրա հոգում տեղ չկար։

Թվում է, թե այդ կես տարվա ընթացքում միանգամից հավաքվել և նրա գլխին էին թափվել սիրո բոլոր տանջանքներն ու տվայտանքները, որոնցից նա այնպես վարպետորեն կարողացել էր իրեն պահել կանանց հետ ունեցած հանդիպումների ժամանակ։

Նա զգում էր, որ իր առողջ օրգանիզմն էլ չի դիմանա, եթե էլի ամիսներ տևի մտքի, կամքի, նյարդերի այս լարումը։ Նա հասկացավ,— մի բան, որ մինչև այժմ օտար էր իրեն,— թե ինչպես են ծախսվում ուժերը մարդկային աչքից հեռու՝ հոգու և կրքի պայքարում, ինչպես են մարդու սրտի վրա անբուժելի անարյուն վերքեր մնում, բայց հառաջանքներ առաջացնում, նաև՝ ինչպես է անցնում կյանքը։

Նա մի քիչ զրկվեց իր ուժերի վրա ունեցած ամբարտավան վստահությունից. այլևս թեթևամտորեն չէր կատակում, երբ պատմություններ էր լսում, թե ինչպես ոմանք խելքը կորցնում են, հյուծվում են զանազան պատճառներից, ի միջի այլոց... սիրուց։

Նա սարսափի մեջ էր։

— Ո՛չ, ես այս բանին վերջ կդնեմ,— ասաց նա,— ես նրա հոգու մեջ կնայեմ, ինչպես առաջ, և վաղը կա՞մ երջանիկ կլինեմ, կամ կհեռանա՞մ։

— Այլևս ուժ չկա՞,— ասում էր նա, նաչելով ~~հաչելա~~ մեջ։— Ես ոչ մի բանի նման չեմ... բավակա՞ն է...

Նա ուղղակի գնաց դեպի նպատակը, այսինքն՝ Ոլգայի մոտ։

Իսկ ի՞նչ էր անում Օլգան։ Նա չէ՞ր նկատում Շտոլցի վիճակը, թե՞ զգացմունք չէր տածում նրա նկատմամբ։

Այդ բանը չնկատել նա չէր կարող. նույնիսկ ոչ այնքան երբաղգաց կանայք, ինչպես Օլգան էր, գիտեն բարեկամական անձնվիրությունն ու հաճոյակատարությունները տարբերել ուրիշ զգացմունքի քնքուշ արտահայտումից։ Նրա կողմից կոկետություն ընդունել չի կարելի՝ ճիշտ ըմբռնելով նրա իսկական, անկեղծ, ոչ ոքի կողմից չթելադրած բարոյականությունը։ Նա բարձր էր այդ գռեհիկ թուլությունից։

Մնում էր ենթադրել մի բան, որ Օլգային դուր էր գալիս, առանց որևէ գործնական նկատառման, այնպիսի մաքուր անընդհատ խելքով ու կրքով լի երկրպագությունը, ինչպիսին Շտոլցն էր։ Իհարկե, դուր էր գալիս. այդ երկրպագությունը վերականգնում էր նրա վիրավորված ինքնասիրությունը և նրան կամաց-կամաց նորից դնում էր այն պատվանդանի վրա, որից ընկել էր, ~~կամաց-կամաց վերանվանում~~ էր նրա հպարտությունը։

Բայց ի՞նչ էր մտածում Օլգան. ի՞նչ լուծում պետք է սա՞տ նա այդ երկրպագությունը։ Հո չի՞ կարող մշտապես արտահայտվել Շտոլցի հարցախուզության այդ հավիտենական պայքարով՝ Օլգայի համար լռության դեմ։ Գոնե նախազգու՞մ էր նա, որ Շտոլցի այդ ամբողջ պայքարն իզուր չէ, որ նա կտանի այն գործը, որի մեջ այնքան կամք ու հաստատակամություն էր դրել։ Զո՞ւր է ծախսում նա արդյոք այդ բոցը, փայլը։ Արդյոք այդ փայլի ճառագայթների մեջ կթաղվի՞ Օբլոմովի և այն սիրո պատկերը...

Օլգան այս բոլորը չէր հասկանում, պարզ չէր գիտակցում և կատաղի պայքարում էր այս հարցերի դեմ, ինքն իր դեմ, և չգիտեր, թե ինչպես դուրս գա քաոսից։

Ինչպե՞ս վարվի։ Անորոշ դրության մեջ մնալ չի կարելի. կրծքում փակված զգացմունքների այդ համր խաղից ու պայքարից երբևիցե բանը կհասնի խոսքերին. ի՞նչ պիտի պատասխանի նա անցյալի համար։ Ի՞նչ անուն պիտի տա դրան և ինչպե՞ս պիտի անվանի այն, ինչ զգում է Շտոլցի նկատմամբ։

Եթե նա սիրում է Շտոլցին, հապա ի՞նչ էր այն սերը։ Կոկետությո՞ւն, թեթևսոլիկությո՞ւն, թե՞ ավելի վատ բան։ Այդ մտքից նա տենդի մեջ էր ընկնում և ամոթից կարմրում։ Այդպիսի մեղադրանք նա չի բարդի իր վրա։

Իսկ եթե դա առաջին, մաքուր սեր էր, հապա ի՞նչ են իր հարաբերությունները Շտոլցի հետ։ Դարձյա՞լ խաղ, խաբեություն, նուրբ հաշիվ, որպեսզի նրան հրապուրի իր հետ ամուսնանալու և դրանով ծածկի իր վարքի թեթևսոլիկությունը... Միմիայն այդ մտքից նա սառնություն էր զգում, սփրթնում էր։

Իսկ եթե խաղ չէ, խաբեություն չէ, հաշիվ չէ. ուրեմն... նորի՞ց սեր է։

Այդ ենթադրությունից նա իրեն կորցնում էր. երկրորդ սեր՝ առաջինից յոթ-ութ ամիս անցա՞ծ։ Ո՞վ կհավատա նրան։ Ինչպե՞ս նա ծպտուն հանի այդ մասին, առանց զարմա՞նք, գուցե... արհամարհա՞նք առաջացնելու։ Նա նույնիսկ մտածե՞լ չի համարձակվի, իրավունք չունի՞։

Նա պեղեց իր փորձառությունը. երկրորդ սիրո մասին ոչ մի տեղեկություն չգտնվեց։ Մտաբերեց հորաքույր-մորաքույրերի,

պառաված աղջիկների, զանազան խելոք կանանց, վերջապես գրողների, «սիրո փիլիսոփաների» հեղինակությունը. ամենն կողմից լսում էր անողոք մի դատավճիռ. «Կինն անկեղծ սիրում է միայն մի անգամ»։ Օբլոմովն էլ այդպես էր արտասանել իր դատավճիռը։ Մտաբերեց Սոնեչկային, թե նա ինչ կարծիք կհայտներ երկրորդ սիրո մասին, բայց Ռուսաստանից եկածներից լսել էր, որ բարեկամուհին արդեն թևակոխել է երրորդը...

Ո՜չ, իր մեջ սեր չկա՝ դեպի Շտոլցը, վճռում էր նա. և չի՞ էլ կարող լինել։ Նա սիրում էր Օբլոմովին, և այդ սերը մեռավ, կյանքի ծաղիկն ընդմի՞շտ թառամեց։ Նրա մեջ միայն բարեկամություն կա Շտոլցի հետ, որը հիմնված է սրա փայլուն հատկություններ վրա, հետո՝ նրա բարեկամության վրա դեպի ինքը, ուշադրության վրա, վստահության վրա։

Այդպես նա ետ էր մղում դեպի իր հին բարեկամը տածած սիրո միտքը, նույնիսկ հնարավորությունը։

Ահա պատճառը, որի շնորհիվ Շտոլցը չկարողացավ Օլգայի դեմքին կամ խոսքերի մեջ ոչ մի նշան գտնել. ո՛չ դրական անտարբերություն, ո՛չ հարևանցի կայծակ, նույնիսկ զգացմունքի կայծ, որը թեկուզ մազաչափ անգամ դուրս գար չերմ, սրտագին, բայց սովորական բարեկամության սահմաններից։

Այս բոլորը միանգամից վերջացնելու համար նրան մի բան էր մնում. նկատելով Շտոլցի մեջ նոր առաջացող սիրո նշանները՝ սնունդ ու ընթացք չտալ նրան, և շուտով ճանապարհ ընկնել, հեռանալ նրանից։ Բայց նա ժամանակն արդեն կորցրել էր. դա տեղի էր ունեցել վաղուց, բացի այդ, նա պետք է նախատեսեր, որ զգացմունքը Շտոլցի մոտ բռնկվելու, կիրք է դառնալու, և նա Օբլոմով չէ. նրանից ոչ մի տեղ փախչել չես կարող։

Ենթադրենք, թե դա ֆիզիկապես հնարավոր էլ լիներ, բայց բարոյապես մեկնումն անհնար էր. սկզբում նա օգտվում էր միայն բարեկամության նախկին իրավունքներից և Շտոլցի մեջ գտնում էր, ինչպես և առաջները, մերթ աշխույժ, սրամիտ, կատակասեր զրուցակցի, մերթ կյանքի երևույթների ճիշտ ու խոր դիտողի, այն ամենի, ինչ պատահում էր նրանց

հետ կամ անցնում էր նրանց կողքով, ինչ զբաղեցնում էր նրանց։

Բայց քանի նրանք ավելի հաճախ էին տեսնվում, այնքան ավելի էին մոտենում բարոյապես, այնքան Շտոլցի դերն ավելի աշխույժ էր դառնում. դիտողի դերից նա աննկատ անցավ երևույթները մեկնաբանողի դերին, Օլգայի ղեկավարի դերին։ Նա անտեսանելի կերպով դարձավ Օլգայի բանականությունն ու խիղճը, և՝ հանդես եկան՝ նոր իրավունքներ, նոր գաղտնի կապեր, որոնք կաշկանդեցին Օլգայի ամբողջ կյանքը, ամեն ինչ, բացի մի նվիրական անկյունից, որը նա խնամքով թաքցնում էր Շտոլցի դիտումներից ու դատաստանից։

Օլգան ընդունեց այդ բարոյական խնամատարությունն իր մտքի ու սրտի վրա և տեսավ, որ ինքն էլ իր հերթին ազդեցություն ձեռք բերեց նրա վրա։ Նրանք իրավունքները փոխանակեցին. Օլգան մի տեսակ աննկատելի կերպով լուսյայն թույլ տվեց փոխանակությունը։

Հիմա այդ բոլորն ինչպե՞ս հանկարծ խլել... Բացի այդ, դրա մեջ այնքան... այնքան զբաղմունք... հաճույք... կյանքի բազմազանություն կա... Ի՞նչ պիտի անի Օլգան հանկարծ, եթե դա չլինի։ Եվ երբ նրա՝ մտքով անցավ փախչել, արդեն ուշ էր, նա ուժ չուներ այդպես վարվելու։

Յուրաքանչյուր նրա հետ չանցկացրած օր, յուրաքանչյուր նրան չհայտնած ու նրա հետ չքաժանած միտք, Օլգայի համար կորցնում էր իր գույնն ու նշանակությունը.

«Աստվա՞ծ իմ։ Եթե կարողանայի՞ նրա քույրը լիներ»,— մտածում էր Օլգան։ «Որպիսի՞ երջանկություն է՝ հավիտենական իրավունքներ ունենալ այդպիսի մի մարդու նկատմամբ, ո՞չ միայն մտքի, այլև սրտի նկատմամբ, հրճվել նրա ներկայությունից օրինական, բացահայտ կերպով, դրա համար չկատարելով ոչ մի ծանր զոհաբերություն, չկրելով ոչ մի վիշտ, չհատուցելով ողորմելի անցյալը նրան վստահելով։ Իսկ հիմա ես ի՞նչ եմ։ Եթե նա մեկնում է, ես ո՞չ միայն իրավունք չունեմ նրան պահելու, այլ պետք է ցանկանամ այդ բաժանումը, իսկ եթե պահեմ՝ ի՞նչ պիտի ասեմ նրան, ի՞նչ իրավունքով եմ ուզում ամեն րոպե տեսնել, լսել նրան... որովհետև ես ձանձրանու՞մ եմ, թախծու՞մ եմ, որովհետև նա

ճնշորեցնու՞մ է, զվարճացնու՞մ է ինձ, որովհետև նա ինձ օգտակար է ու հաճելի՞։ Իհարկե, դա պատճառ է, բայց իրավունք չէ։ Իսկ ես ի՞նչ եմ տալիս նրան փոխարենը։ Ինձնով անշահախնդիր կերպով հիանալու իրավունք, միայն չհամարձակվի մտածել փոխադարձության մասին, մինչդեռ այնքան ուրիշ կանայք իրենց երջանիկ կհամարեին...»

Օլգան տանջվում էր ու մտմտում, թե ինչպես պիտի դուրս գա այդ դրությունից, և ոչ մի նպատակ, ոչ մի վերջ չէր տեսնում։ Առջևում կար միայն Շտոլցի հիասթափման ու հավիտենական անչատման սարսափը։ Երբեմն նրա մտքով անցնում էր բաց անել նրա առաջ ամեն բան, որպեսզի միանգամից վերջանա թե՛ իր և թե՛ նրա պայքարը, բայց նրա շունչը կտրվում էր, հենց այդպիսի բան էր մտածում։ Նա ամաչում էր, ցաված էր զգում։

Ամենից ավելի տարօրինակն այն էր, որ նա դադարեց իր անցյալը հարգելուց, մինչև անգամ սկսեց ամաչել նրանից այն օրից, երբ անբաժան մնաց Շտոլցի հետ, երբ սա տիրապետեց նրա կյանքին։ Եթե, օրինակ, բարոնը կամ մեկ ուրիշն իմանար, նա, իհարկե, կշփոթվեր, իրեն անհարմար կզգար, բայց նա այնպես չէր տանջվի, ինչպես այժմ է տանջվում այն մտքից, թե այդ բանը կիմանա Շտոլցը։

Նա սարսափով պատկերացնում էր, թե ի՞նչ կարտահայտվի նրա դեմքին, ինչպե՞ս կնայի Օլգային, ի՞նչ կասի, ի՞նչ կմտածի հետո։ Օլգան նրան այնքա՞ն չնչին, թույլ, մանր կթվա։ Ո՞չ, ո՞չ, ո՞չ մի գնով։

Նա սկսեց ինքն իրեն հետևել և սարսափով հայտնագործեց, որ ամաչում է ո՞չ միայն իր անցյալ սիրո, այլև այդ սիրո հերոսի համար... Այստեղ նրան այրում էր նաև զղջումն ապերախտության համար՝ իր նախկին բարեկամի խոր անձնվիրության փոխարեն։

Գուցե, նա վարժվեր իր ամոթին, ժամանակը սովորեցներ. ինչի՞ ասես չի վարժվում մարդ. եթե նրա բարեկամությունը Շտոլցի հետ ամեն տեսակ շահախնդիր մտադրություններից ու ցանկություններից զերծ լիներ։ Բայց եթե նա խեղդում էր սրտի նույնիսկ ամեն մի նենգավոր ու շողոքորթ շշնջյուն, ապա չէր կարողանում հաղթահարել երևակայության անուրջները. հաճախ նրա աչքերի առջև, հակառակ

կամքի, կանգնում և փայլում էր այդ մյուս սիրո պատ-
կերը. ավելի ու ավելի աճում ու հրապուրիչ էր դառնում
շքեղ երջանկության երազանքը, ո՛չ թե Օբլոմովի հետ, ո՛չ
թե ծույլ Ինջի մեջ, այլ բազմակողմանի կյանքի լայն ա-
պարեզում, նրա ողջ խորությամբ, բոլոր հաճույքներով ու
վշտերով. երջանկություն Շտոլցի հետ...

Ահա այդ ժամանակ նա արցունք էր թափում իր անցյալի
համար և չէր կարողանում լվանալ այն։ Նա սթափվում էր
երազանքից և է՛լ ավելի խնամքով էր փրկություն որոնում
անթափանցելիության, լռության և այն բարեկամական ան-
տարբերության պարապի եռեռում, որն այնպես տանջում էր
Շտոլցին։ Հետո, մոռացության մեջ ընկնելով, նորից անշա-
հախնդրորեն հրապուրվում էր բարեկամի ներկայությամբ,
լինում էր սքանչելի, սիրալիր, մտերիմ, մինչև նորից երջան-
կության ապօրինի երազանքը, որի իրավունքը նա կորցրել
էր, հիշեցնում էր նրան, որ ապագան կորած է իր համար,
որ վարդագույն ցնորքներն արդեն մնացել են ետևում, որ
կյանքի ծաղիկը թափվել է։

Հավանորեն, տարբերներն անցնելու հետ միասին նա էլ-
բողջանալ հաշտվել իր դրության հետ և կմոռանար ապա-
գայի վերաբերյալ հույսերը, ինչպես անում են բոլոր պառա-
ված աղջիկները, և կթաղվեր սառն ապատիայի մեջ, կամ
կսկսեր բաբի գործերով զբաղվել. բայց նրա ապօրինի երա-
զանքը հանկարծ ավելի ահեղ կերպարանք ընդունեց, երբ
Շտոլցի բերանից դուրս թռած մի քանի խոսքերից նա պարզ
տեսավ, որ հանձին նրա կորցրել է բարեկամի և ձեռք է բե-
րել մի կրքոտ երկրպագու։ Բարեկամությունը խեղդվեց սիրո
մեջ։

Նա դժգույն էր այն առավոտ, երբ հայտնագործեց սա,
ամբողջ օրը տնից դուրս չէր գալիս, հուզվում էր, պայքա-
րում ինքն իր հետ, մտածում թե ինչ անի այժմ, ինչ պարտք
է ընկնում իր վրա, և ոչինչ չկարողացավ մտածել։ Նա միայն
անիծում էր իրեն, թե ինչու սկզբում հենց չհաղթահարեց
ամոթը և Շտոլցին չհայտնեց անցյալը, իսկ հիմա պետք է
հաղթահարի նաև տարսափը։

Էինում էին երբեմն վճռականության բոպեներ, երբ նրա
դուրթը ցավն էր բռնում, արցունքները եռում էին, երբ ցան-

կանում էր նետվել դեպի Շտոլցը և ո՛չ թե բառերով, այլ
հեծկլտանքով, ջղաձգություններով, ուշաթափություններով
պատմել իր սիրո մասին, որպեսզի նա տեսներ նաև քավու-
թյունը։

Նա լսել էր, թե նման դեպքում ինչպես էին վարվում ուրիշ-
ները։ Օրինակ, Սոնեչկան իր փեսացուին ասել էր կոնեսի
մասին, թե ինքը նրա քթից բռնած ման է ածել, որ նա լակո-
տի մեկն է, որ նրան դիտմամբ սպասեցնել է տվել սառնա-
մանիքին, մինչև ինքը դուրս կգար կառք նստելու, և այլն։

Սոնեչկան չէր վարանի նաև Օբլոմովի մասին ասելու, որ
պարզապես զվարճացել է նրա հետ, որ այնքան տարօրինակ
է, որ մի՞թե կարելի է սիրել «այդ փալասին», որ դրան ոչ ոք
չի հավատա։ Բայց այդպիսի վարվելակերպը կարող էին ար-
դարացնել Սոնեչկայի ամուսինը և շատ ուրիշներ, բայց ոչ
Շտոլցը։

Օլգան կարող էր պատշաճ տեսք տալ գործին, ասելով, թե
ուզում էր միայն Օբլոմովին հանել անդունդից, և դրա համար
էլ դիմել է, այսպես ասած, բարեկամական կոկետության...
որպեսզի աշխուժացնի հանգչող մարդուն և ապա հեռանա
նրանից։ Բայց դա կլիներ արդեն չափազանց նուրբ, ձգձգված
և, համենայն դեպս, կեղծ... Ո՛չ, փրկություն չկա՞։

«Տե՛ր աստված, այս ի՞նչ փորձանքի մեջ եմ ընկել»—
տանջվում էր Օլգան ինքն իրեն։ «Բա՞ց անել... Ա՜խ, ո՛չ։ Թող
նա երկար ժամանակ, երբե՞ք չիմանա այդ մասին։ Իսկ բաց
չանել, միևնույն է թե գողանալ։ Դա նման է խաբեության,
հաճոյանալու։ Աստվա՞ծ իմ, օգնի՞ր ինձ...». բայց օգնություն
չկար։

Որքան էլ հաճույք էր ստանում նա Շտոլցի ներկայու-
թյունից, բայց լինում էին պահեր, երբ նա ավելի շուտ կցան-
կանար այլևս չհանդիպել նրան, անցնել նրա կյանքում հա-
զիվ նկատելի ստվերի նման, նրա պարզ ու բանական կյանքը
չմթագնել ապօրինի կրքով։

Նա դեռ թախիծով կհիշեր իր ձախողված սիրո մասին,
կողբար անցյալը, իր հոգու մեջ կթաղեր հիշողությունը նրա
մասին, հետո... հետո, գուցե, «պատշաճ զուգակից» կգտներ,
որպիսիները շատ են, և կլիներ լավ, խելոք, հոգատար կին
ու մայր, իսկ անցյալը կույսի երազանք կհամարեր, և ո՛չ

թե կապրեր իր կյանքը, այլ մի կերպ կանցկացներ։ Չէ՞ որ բոլորն էլ այդպես են անում։

Բայց այստեղ գործը միայն իրեն չի վերաբերում. այստեղ ուրիշ մեկն է խառը, իսկ այդ ուրիշ մեկը նրա վրա է դնում կյանքի լավագույն ու վերջնական հույսերը։

«Ինչու՞... սիրեցի ես»— տանջվում էր նա անձկությամբ և հիշում այն առավոտը պարկում, երբ Օբլոմովն ուզում էր փախչել, իսկ ինքն այն ժամանակ կարծում էր, որ եթե նա փախչի, իր կյանքի գիրքն ընդմիշտ կփակվի։ Նա այնպես համարձակ ու հեշտությամբ էր վճռում սիրո, կյանքի հարցը, այնպես պարզ էր թվում նրան ամեն բան. և ահա ամեն ինչ խճճվել. մի անլուծելի հանգույց է կազմել։

Նա խելքին զոռ էր անում, կարծում էր, թե բավական է պարզ նայել, ուղիղ առաջ գնալ, և կյանքը հլու-հնազանդ, գորգի նման կփռվի ոտքերիդ տակ, և ահա՞... Մարդ էլ չկա, որ մեղքը վրան գցես... միա՞յն ինքն է հանցավորը։

Օլգան չկասկածելով, թե ինչու է եկել Շտոլցը, անհոգ վեր կացավ բազմոցից, գիրքը ցած դրեց և ընդառաջ գնաց նրան։

— Ձե՞մ խանգարում ձեզ,— ասաց Շտոլցը, նստելով դեպի լիճը նայող լուսամուտի մոտ։— Դուք կարդո՞ւմ էիք։

— Ո՛չ, ես արդեն դադարել էի կարդալուց. մութն ընկնում է։ Ձե՞զ էի սպասում,— ասաց նա մեղմիկ, բարեկամաբար, մտերմորեն։

— Ավելի լավ. խոսելիք ունեմ ձեզ հետ,— նկատեց նա լրջությամբ՝ նրա համար երկրորդ բազկաթոռը մոտեցնելով լուսամուտին։

Օլգան ցնցվեց և տեղում սառեց։ Հետո մեքենաբար նստեց բազկաթոռին, և գլուխը վայրահակ, առանց աչքերը բարձրացնելու՝ նստած էր տանջալից վիճակում։ Նա կկամենար այդ պահին հարյուր վերստ հեռու լինել այդ տեղից։

Այդ րոպեին նրա հիշողության մեջ կայծակի նման փայլատակեց անցյալը։ «Դատաստանը հասա՞վ։ Կյանքի հետ չի՞ կարելի խաղալ, ինչպես տիկնիկների հետ»— հնչում էր նրա ականջին ինչ-որ մի կողմնակի ձայն։ «Կատակ մի՞ արա նրա հետ՝ կտուժե՞ս»։

Նրանք մի քանի րոպե լուռ մնացին։ Շտոլցն, ակներևաբար, իր մտքերն էր ամփոփում։ Օլգան վախվորած դիտում

էր նրա նիհարած դեմքը, կիտած հոնքերը, սեղմված շրթունքները, որոնց վրա վճռականության արտահայտություն կար։

«Նեմեզի՞դա...»— մտածում էր Օլգան՝ ներքուստ ցնցվելով։ Երկուսն էլ կարծես մենամարտի էին պատրաստվում։

— Դուք, իհարկե, կռահում եք, Օլգա Սերգեևնա, թե ինչի մասին եմ ուզում խոսել ես— ասաց նա, հարցական նայելով նրան։

Շտոլցը նստած էր պատախորշում, որը ծածկում էր դեմքը, մինչդեռ լույսը պատուհանից ուղղակի ընկնում էր Օլգայի վրա, և Շտոլցը կարող էր կարդալ, թե ի՞նչ կա նրա մտքում։

— Ինչպե՞ս կարող եմ իմանալ— պատասխանեց նա մեղմիկ։

Այս վտանգավոր հակառակորդի դիմաց նա այլևս չուներ ո՛չ կամքի ու բնավորության այն ուժը, ո՛չ խորաթափանցությունը, ո՛չ իրեն տիրապետելու կարողությունը, որպիսի հատկություններով նա միշտ կանգնում էր Օբլոմովի առաջ։

Օլգան հասկանում էր, որ եթե մինչև այժմ ինքը կարողանում էր թաքնվել Շտոլցի սրատես աչքից և հաջող պատերազմ մղել, ապա դա պարտական էր ամենևին ոչ իր ուժին, ինչպես էր Օբլոմովի դեմ մղած պայքարում, այլ միայն Շտոլցի համառ լռությանը, նրա գաղտնապահ վարքագծին։ Սակայն բաց դաշտում գերակշռությունն իր կողմը չէր, ուստի և «ինչպե՞ս կարող եմ իմանալ» հարցով նա ուզում էր միայն մի վերջին տարածություն և մի րոպե ժամանակ վաստակել, որպեսզի թշնամին ավելի պարզ դրսևորի իր մտադրությունը։

— Չգիտե՞ք,— ասաց նա պարզասրտորեն։— Լավ, ես կասեմ...

— Ա՜խ, ո՛չ— հանկարծ դուրս թռավ Օլգայի բերանից։

Նա բռնեց Շտոլցի ձեռքը և նայում էր նրան, կարծես աղերսելով խնայել։

— Ա՛յ տեսնում եք, ես գուշակեցի, որ գիտե՞ք,— ասաց նա։— Ինչո՞ւ «ո՛չ»— ավելացրեց հետո տխրությամբ։

Օլգան լուռ էր։

— Եթե դուք նախատեսում էիք, որ ես երբևիցե կարտահայտվեմ, ապա գիտեիք նաև, իհարկե, թե ի՞նչ պետք է պատասխանեք ինձ,— հարցրեց նա։

— Նախատեսու՞մ էի ու տանջվու՞մ— ասաց Օլգան՝ ետ

ընկնելով բազկաթոռի մեջքին և լույսից հեռանալով, մտքով ավելի շուտ մթնշաղն իրեն օգնության կանչելով, որպեսզի Շտոլցը իր դեմքին չկարդա շփոթության ու թախիծի պայքարը։

— Տանջվու՞մ էիք։ Դա սարսափելի խոսք է,— համարյա շշնջալով արտասանեց նա,— դա Դանտեի «Ընդմիշտ հույսդ կորիրն-է»։ Ինձ այլևս բան չի մնում ասելու. այստեղ ամե՞ն ինչ է։ Բայց շնորհակալ եմ նաև դրա համար,— ավելացրեց նա խոր հառաչանքով,— ես դուրս եկա քաոսից, խավարից, և գիտեմ, գոնե, թե ի՞նչ պետք է անեմ։ Մի փրկություն կա՝ շուտո՞վ փախչել։

Նա վեր կացավ տեղից։

— Ո՛չ, ի սեր աստծու, ո՛չ— նետվելով դեպի նա, նորից բռնելով նրա ձեռքից, վախեցած ու աղերսանքով ասաց նա։— Խղճացեք ինձ. ի՞նչ կլինի իմ դրությունը։

Շտոլցը նստեց, Օլգան նույնպես։

— Բայց ես ձեզ սիրու՞մ եմ, Օ՛լգա Սերգեևնա,— ասաց նա գրեթե դաժանորեն։— Դուք տեսնում էիք, թե այս կես տարվա ընթացքում ի՞նչ է կատարվում ինձ հետ։ Ի՞նչ եք ուզում դուք. լիակատար հաղթանա՞կ, որ ես հյուծվեմ կամ խելագարվե՞մ։ Խորապես շնորհակա՞լ եմ։

Օլգայի դեմքը փոխվեց։

— Մեկնե՞ք,— ասաց նա զսպված վիրավորանքի և միաժամանակ խոր վշտի արժանապատվությամբ, վիշտ, որ անզորը էր թաքցնել։

— Ներեցե՞ք, ես մեղավո՞ր եմ,— ներողություն խնդրեց Շտոլցը։— Ահա մենք, դեռ ոչինչ չտեսած, արդեն կռվեցինք։ Ես գիտեմ, որ դուք չեք կարող ցանկանալ դա, բայց դուք չեք կարող նաև իմ դրության մեջ մտնել, և այդ պատճառով էլ ձեզ համար տարօրինակ է իմ փախչելու ցանկությունը։ Մարդ երբեմն անգիտակցաբար եսասեր է դառնում։

Օլգան փոխեց իր դիրքը բազկաթոռում, կարծես անհարմար էր նրա համար նստել, բայց ոչինչ չասաց։

— Լա՛վ, թեկուզև մնամ. ի՞նչ դուրս կգա գրանից— շարունակում էր Շտոլցը։— Դուք, իհարկե, կառաջարկեք ինձ ձեր բարեկամությունը, բայց չէ՞ որ առանց այն էլ դուք իմ բարեկամուհին եք։ Ես կմեկնեմ, և մի տարի, երկու տարի

հետո էլ այն էլի իմը կլինի։ Բարեկամությունը լավ բան է, Օ՛լգա Սերգեևնա, երբ այն սեր է երիտասարդ տղամարդու և կնոջ միջև կամ սիրո հիշողություն է ծերունիների միջև։ Բայց աստված հեռու տանի, եթե այն մի կողմից բարեկամություն է, մյուս կողմից՝ սեր։ Ես գիտեմ, որ դուք ինձ հետ չեք ձանձրանում, բայց ի՞նչ է իմ դրությունը, երբ ձեզ հետ եմ։

— Այո՛, եթե այդպես է, գնացե՛ք, աստված ձեզ հետ,— հազիվ լսելի ձայնով շշնջաց նա։

— Մնա՛լ,— մտածում էր Շտոլցը բարձրաձայն։— Քայլել գանակի սուր բերանի վրա՝ լա՛վ բարեկամություն է։

— Իսկ ինձ համար մի՞թե հեշտ է,— անսպասելի կերպով վրա բերեց Օլգան։

— Ձե՞զ համար ինչու,— հարցրեց նա աշխուժությամբ։— Դուք... դուք չեք սիրում...

— Չգիտե՞մ, աստված վկա, չգիտե՞մ։ Բայց եթե դուք... եթե որևէ կերպ փոխվի իմ ներկա կյանքը, ի՞նչ կլինի ինձ հետ,— ավելացրեց նա վհատ, համարյա ինքն իրեն։

— Ինչպե՞ս հասկանամ ես դա։ Գլխի՞գցեք ինձ, աստծու սիրուն,— բազկաթոռը նրան մոտեցնելով ասաց Շտոլցը՝ մտահոգված նրա խոսքերից և այն խոր, անկեղծ տոնից, որով ասվեցին դրանք։

Շտոլցն աշխատում էր դիտել նրա դիմագծերը։ Օլգան լուռ էր։ Նրա կրծքում բուռն ցանկություն էր վառվում հանգստացնելու Շտոլցին, ետ կոչելու «տանջվում էի» բառը կամ այն այլ կերպ բացատրել, քան ինչպես հասկացավ Շտոլցը. բայց ինչպես բացատրել՝ նա ինքն էլ չգիտեր, միայն մութ կերպով զգում էր, որ նրանք երկուսն էլ ճակատագրական տարակուսանքի ճնշման տակ են գտնվում, կեղծ դրության մեջ, որ երկուսի համար էլ ծանր է, և որ միայն Շտոլցը կամ Օլգան ինքը, նրա օգնությամբ, կարող է թե՛ անցյալի և թե՛ ներկայի մեջ պարզություն ու կարգ մտցնել։ Բայց դրա համար հարկավոր է անցնել անդունդի վրայից, բաց անել նրա առաջ՝ ինչ որ պատահել է իր հետ. ինչպե՞ս ցանկանում էր նա և ինչպե՞ս էր վախենում Շտոլցի դատաստանից։

— Ես ինքս ոչինչ չեմ հասկանում. ես ավելի՞ եմ քաոսի, խավարի մեջ, քան դուք,— ասաց նա։

— Լսե՛ք, դուք ինձ հավատու՞մ եք արդյոք,— հարցրեց Շտոլցը՝ բռնելով նրա ձեռքից։

— Անսահման, ինչպես մորս, դուք դա գիտեք,— պատասխանեց նա թույլ ձայնով։

— Պատմեք ինձ, ուրեմն, ինչ է պատահել ձեզ այն ժամանակից, երբ չենք տեսնվել։ Դուք հիմա ինձ համար անթափանցելի եք, իսկ առաջ ես ձեր դեմքին կարդում էի ձեր մտքերը. թվում է, թե մեզ համար դա միակ միջոցն է՝ միմյանց հասկանալու համար։ Համաձա՞յն եք։

— Ա՜խ, այո՛, դա անհրաժեշտ է... պետք է որևէ բանով վերջ դնել...— ասաց նա անխուսափելի խոստովանության առաջացրած թախիծով։ «Նեմեզի՜ դա։ Նեմեզի՜ դա»— մտածում էր նա գլուխը հակելով կրծքին։

Օլգան գլուխը կախեց և լռեց։ Իսկ նրա հոգուն սարսափ պատեց այդ հասարակ խոսքերից և է՛լ ավելի՝ նրա լռությունից։

«Նա տանջվո՞ւմ է։ Տե՛ր աստված։ Ի՞նչ է պատահել նրան»— մտածում էր նա սառչող ճակատով և զգում, որ իր ձեռքերն ու ոտքերը դողում են։ Նա ինչ-որ սարսափելի բան էր երևակայում։ Իսկ Օլգան շարունակում էր լռել և, ըստ երևույթին, պայքարում ինքն իր հետ։

—Այդպես ուրեմն... Օ՛լգա Սերգեևնա...— շտապեցնում էր նա։

Օլգան լուռ էր, նորից մի ինչ-որ նյարդային շարժում արեց, որ չէր կարելի լավ տեսնել խավարի մեջ, միայն լսվում էր, թե ինչպես էր շրշում նրա մետաքսե զգեստը։

— Ես ուժ եմ հավաքում,— ասաց նա վերջապես,— եթե դուք գիտենայիք, թե որքա՞ն դժվար է,— ավելացրեց հետո՝ մի կողմ շրջվելով, աշխատելով հաղթահարել պայքարը։

Օլգան ցանկանում էր, որ Շտոլցն ամեն բան իմանա ոչ իր բերանից, այլ որևէ հրաշքով։ Բարեբախտաբար, ավելի մթնեց, և նրա դեմքն արդեն ստվերի մեջ էր. նա կարող էր միայն ձայնը փոխել, իսկ բառերը բերանից դուրս չէին գալիս, կարծես դժվարանում էր, թե ինչ նոտայից սկսի։

«Աստվա՞ծ իմ։ Որքա՞ն մեղավոր պետք է լինեմ ես, եթե այսպես ամաչում, ցավ եմ զգում»— տանջվում էր նա ներքուստ։

Իսկ վաղո՞ւց էր, որ նա այնպիսի՞ վստահությամբ տնօրինում էր իր և ուրիշի բախտը, այնպե՞ս խելոք էր, ուժե՞ղ։ Եվ այժմ եկել էր նրա դողալու հերթը, իբրև դեռատի աղջիկ։ Նրան տանջում էին՝ ամոթը անցյալի համար, ինքնասիրության կտտանքը ներկայի համար, կեղծ դրությունը... Անտանելի՜ է։

— Ես ձեզ կօգնեմ... դուք... սիրե՞լ եք... — դժվարությամբ արտասանեց Շտոլցը, այնպիսի ցավ պատճառեց նրան իր սեփական խոսքը։

Օլգան հաստատեց լռությամբ։ Իսկ Շտոլցին նորից սարսափ պատեց։

— Ո՞ւմ։ Գաղտնիք չէ՞ այդ,— հարցրեց նա՝ ջանալով բառերն ամուր արտասանել, բայց ինքն էլ զգում էր, որ շրթունքները դողում են։

Իսկ Օլգայի տանջանքն ավելի մեծ էր։ Նա կկամենար ուրիշ անուն ասել, ուրիշ պատմություն հնարել։ Նա մի րոպեի չափ տատանվում էր, բայց ի՞նչ կարող էր անել. ինչպես մի մարդ, որը ծայրահեղ վտանգի րոպեին զառիվայր ափից ցած է նետվում կամ իրեն կրակի մեջ է գցում, նա հանկարծ ասաց.

— Օբլո՛մովին։

Շտոլցը քարացավ։ Երկու րոպեի չափ տևեց լռությունը։

— Օբլո՛մովին,— կրկնեց նա զարմանքով։— Ճիշտ չէ՞,— ավելացրեց հետո հաստատապես, ձայնը ցածրացնելով։

— Ճի՛շտ է,— ասաց Օլգան հանգիստ։

— Օբլո՛մովին,— կրկնեց նա նորից։— Չի՞ կարող պատահել,— ավելացրեց կրկին վստահ։— Այստեղ մի ինչ-որ բան կա, դուք չեք հասկացել ձեզ, Օբլոմովին կամ, վերջապես, սերը։

Օլգան լուռ էր։

— Դա սեր չէ, դա մի ուրի՛շ բան է, ասում եմ ես,— պնդում էր նա համառորեն։

— Այո՛, ես կոկետություն էի անում նրա հետ, քթից բռնած ման էի ածում, դժբախտացրի... հետո, ձեր կարծիքով, ձե՛զ հետ եմ սկսում— արտասանեց նա զուսպ ձայնով, և նրա ձայնի մեջ նորից եռացին վիրավորանքի արցունքները։

— Սիրելի՜ Օլգա Սերգեևնա։ Մի՛ բարկանաք, պրպես մի՛ խոսեք, դա ձեր խոսելու կերպը չէ՝։ Դուք գիտեք, ես ոչ մի նման բան չեմ մտածում։ Բայց գլուխս չի մտնում, ես չեմ հասկանում, թե ինչպես Օբլոմովը...

— Սակայն նա արժանի՜ է ձեր բարեկամությանը. դուք չգիտեք, թե որքան բարձր գնահատեք նրան, իսկ ինչու՞ նա սիրո արժանի չէ— պաշտպանում էր Օլգան։

— Ես գիտեմ, որ սերն ավելի պակաս խստապահանջ է, քան բարեկամությունը,— ասաց՝ Շտոլցը,— այն հաճախ նույնիսկ կույր է, արժանիքների համար չէ որ սիրում է, այդ բոլորն այդպես է։ Բայց սիրո համար մի ինչ-որ բան է հարկավոր, երբեմն հասարակ բան, որ չի կարելի ո՛չ որոշել, ո՛չ անունը տալ և որը չկա իմ անզուգական, բայց դժվարաշարժ Իլյայի մեջ։ Ահա թե ինչու եմ ես զարմանում։ Լսե՛ք,— շարունակում էր նա աշխուժորեն,— այս ձևով մենք երբեք վերջին չենք հասնի, միմյանց չենք հասկանա։ Մի՛ ամաչեք մանրամասնություններից, մի՛ խնայեք ձեզ մի կես ժամով, պատմեք ինձ բոլորը, իսկ ես կասեմ ձեզ, թե ի՛նչ է եղել և նույնիսկ, գուցե, ի՛նչ է լինելու... ինձ շարունակ թվում է, որ այստեղ... այն չէ... Ա՜խ, եթե դա ճշմարտություն լիներ,— ավելացրեց նա ոգևորված։— Եթե Օբլո՜մովին, և ոչ թե մեկ ուրիշին։ Օբլո՜մովին։ Չէ՞ որ դա նշանակում է, որ դուք անցյալին չեք պատկանում, սիրուն չեք պատկանում, որ դուք ազատ եք... Պատմե՛ք, պատմեք շուտով,— եզրափակեց նա հանդարտ, համարյա ուրախ ձայնով։

— Դե, աստծո՛ւ սիրուն— դյուրահավատությամբ պատասխանեց նա՝ ուրախացած, որ շղթաների մի մասն իրենից վերցված է։— Ես խելագարվում եմ մենակ։ Եթե դուք իմանայիք, թե որքա՜ն խղճալի եմ ես։ Ես չգիտեմ՝ մեղավո՞ր եմ արդյոք թե ոչ, անցյալից պետք է ամաչե՞մ, նրա համար, ափսոսա՞մ, ապագայի հույս ունենա՞մ թե հուսահատվեմ։... Դուք խոսում էիք ձեր տանջանքների մասին, իսկ իմ տանջանքները ձեր մտքով էլ չէին անցնում։ Լսե՛ք, ուրեմն, մինչև վերջ, բայց միայն ո՛չ խելքով. ես ձեր խելքից վախենում եմ. ավելի լավ է՝ սրտով. գուցե, սիրտը կկշռադատի, որ ես մայր չունեմ, որ ես եղել եմ ինչպես անտառում...— մեղմիկ, ցածր ձայնով ավելացրեց նա։— Ո՛չ,— հապճեպ ուղղեց նա հետո,—

նի խնայեք ինձ։ Եթե դա սեր էր, ապա... գնացեք-մեկնեք։— նա մի բոպե կանգ առավ։— Եվ նորից եկեք, երբ ձեր մեջ կխոսի կրկին միմիայն բարեկամությունը։ Իսկ եթե դա թեթևսոլիկություն էր, կոկետություն,— ապա պատժե՛ք ինձ, հեռու փախեք և մոռացեք ինձ։ Լսեք։

Որպես պատասխան Շտոլցը ամուր սեղմեց նրա երկու ձեռքը։

Սկսվեց Օլգայի երկար, մանրամասն խոստովանությունը։ Նա որոշակի, բառ առ բառ իր մտքից ուրիշին էր հանձնում այն ամենը, ինչ այնքան երկար կրծել էր նրան, ինչից նա կաքմրում էր, ինչով առաջ խանդաղատում էր, երջանիկ էր, իսկ հետո հանկարծ ընկավ վշտի ու կասկածների հորձանուտը։

Նա պատմեց զբոսանքների, այգու մասին, իր հույսերի մասին, Օբլոմովի սթափման ու անկման մասին, յասամանի ճյուղի մասին, մինչև անգամ՝ համբույրի մասին։ Միայն լռության տվեց խեղդուկ երեկոն պարտեզում, հավանորեն, որովհետև դեռևս չէր վճռել, թե այն ինչ նվաղում էր, որ այն ժամանակ պատահեց իր հետ։

Սկզբում լսվում էր միայն շփոթված շշնջոց, բայց խոսելով՝ հետզհետե նրա ձայնն ավելի ու ավելի լսելի և ազատ էր դառնում. շշուկից նա անցավ կիսատոնի, ապա բարձրացավ մինչև լրիվ կրծքային հնչյունները։ Նա վերջացրեց հանգիստ, կարծես ուրիշի պատմությունն էր պատմում։

Հենց իր աչքերի առաջ վարագույրն ընկավ, ծավալվեց անցյալը, որի մեջ սեռեռակի նայել մինչև այդ բոպեն նա վախենում էր։ Շատ բաների վերաբերյալ նրա աչքերը բացվեցին, և նա համարձակ կնայեր իր զրուցակցին, եթե մութը չլիներ։

Նա վերջացրեց և դատավճռի էր սպասում։ Բայց պատասխանը մեռելային լռությունն էր։

Ի՞նչ է անում նա։ Ո՛չ մի խոսք, ո՛չ մի շարժում, նույնիսկ շնչառություն չի լսվում, կարծես Օլգայի հետ ոչ ոք չկար։

Այդ համրությունը նորից կասկած գցեց նրա սիրտը։ Լռությունը շարունակվում էր։ Ի՞նչ է նշանակում այդ լռությունը։ Ի՞նչ դատավճիռ է պատրաստվում նրա համար ամբողջ աշխարհի ամենախորաթափանց, զիջողամիտ դատավորի կողմից։ Մնացած բոլորը անողոքաբար կդատապարտեն նրան, միայն Շտոլցը կարող էր նրա փաստաբանը լինել,

Նա նրան կընտրեր... Նա ամեն բան կհասկանար, կկշռադատեր և իրենից ավելի լավ կվճռեր Օլգայի օգտին։ Իսկ նա լռում է. մի՞թե Օլգայի գործը տանուլ է տված...

Նրան նորից պատեց սարսափը...

Դռները բացվեցին և աղախնի ներս բերած երկու մոմերը լուսավորեցին նրանց անկյունը։

Օլգան վեհերոտ, բայց ագահ, հարցական հայացք գցեց նրա վրա։ Նա ձեռքերը խաչել է և Օլգային է նայում այնպիսի՞ հեզ, բաց աչքերով, հրճվում է նրա շփոթվածությամբ։

Նրա սիրտը հանգստացավ, տաքացավ։ Նա հանգստացուցիչ հոգոց հանեց և քիչ մնաց լաց լիներ։ Օլգային վայրկենապես վերադարձավ զիջողամտությունը դեպի ինքը, վստահությունը դեպի Շտոլցը։ Օլգան երջանիկ էր երեխայի նման, որին ներել են, հանգստացրել և փայփայել։

— Ա՞յդ է բոլորը,— հարցրեց Շտոլցը մեղմիկ։

— Բոլո՞ր,— ասաց Օլգան։

— Իսկ նրա նամա՞կը։

Օլգան թղթապանակից հանեց նամակը և տվեց նրան։ Նա մոտեցավ մոմին, կարդաց և դրեց սեղանի վրա։ Իսկ աչքերը դարձյալ հառեց Օլգային այնպիսի արտահայտությամբ, որպիսին նա վաղուց չէր տեսել Շտոլցի մոտ։

Նրա առաջ կանգնած էր նախկին, ինքնավստահ, մի փոքր ծաղրասեր և անսահման բարի, նրան երես տվող իր բարեկամը։ Դեմքի վրա ո՛չ տանջանքի նշույլ կար, ո՛չ կասկածի։ Նա բռնեց Օլգայի երկու ձեռքից, համբուրեց երկուսն էլ, հետո խոր մտածմունքի մեջ ընկավ։ Օլգան էլ իր հերթին սկվեց և անթարթ դիտում էր նրա մտքի շարժումը դեմքի վրա։

Հանկարծ Շտոլցը վեր կացավ։

— Ասված իմ, եթե ես իմանայի, որ բանը Օբլոմովին է վերաբերում, մի՞թե ես այնպես կտանջվեի,— ասաց նա՝ նայելով Օլգային այնքան սիրալիր, այնպիսի վստահությամբ լի, կարծես նա այդ սարսափելի անցյալը չէր ունեցել։

Օլգայի սիրտն այնպես ուրախացավ, որ տոնական դրություն ստեղծվեց։ Նրա սիրտը թեթևացավ։ Նրա համար պարզվեց, որ ինքն ամաչում էր նրանից միայն, իսկ նա լի՞

պատժում իրեն, չի՞ փախչում։ Էլ ի՞նչ բան ունի նա ամբողջ աշխարհի դատաստանի հետ։

Շտոլցն արդեն նորից տիրապետում էր իրեն, ուրախ էր. բայց դա Օլգայի համար քիչ էր։ Նա տեսնում էր, որ ինքն արդարացված է. բայց նա, որպես մեղադրյալ, ուզում էր գտավճիռն իմանալ։ Իսկ նա վերցրեց գլխարկը։

— Ու՞ր,— հարցրեց նա։

— Դուք հուզված եք, հանգստացեք,— ասաց Շտոլցը։— վաղը կխոսենք։

— Դուք ուզում եք, որ ես ամբողջ գիշեր չքնե՞մ,— ընդհատեց Օլգան՝ պահելով նրան ձեռքից բռնած և նստեցնելով աթոռին։— Ուզում եք գնալ, առանց ասելու, թե ի՞նչ էր... այդ, ի՞նչ եմ ես հիմա, ի՞նչ եմ... լինելու։ Խղճացե՛ք, Անդրեյ Իվանիչ։ Էլ ո՞վ կասի ինձ դա։ Ո՞վ կպատժի ինձ, եթե ես պատժի եմ արժանի, կամ... ո՞վ կների...— ավելացրեց նա և այնպիսի քնքուշ մտերմությամբ նայեց նրա վրա, որ նա գլխարկը մի կողմ նետեց և քիչ մնաց ինքն էլ նրա տոգն ծունկ չոքեր։

— Թույլ տվեք ասելու՝ ի՛մ հրեշտակ,— ասում էր Շտոլցը։

— Իզուր մի՛ տանջվեք. ձեզ հարկավոր չէ ո՛չ պատժել, ոչ էլ ներել։ Ես նույնիսկ ոչինչ չունեմ ավելացնելու ձեր պատմածին։ Ի՞նչ կասկածներ կարող եք ունենալ դուք։ Դուք ուզում եք իմանալ, թե ի՞նչ էր դա, անու՞ն տա։ Դուք վաղուց գիտեք։ Որտե՞ղ է Օբլոմովի նամակը։

Շտոլցը վերցրեց նամակը սեղանի վրայից։

— Դե՛, լսե՛ք,— և կարդաց.— «Ձեր այժմյան սիրում եմք ներկայիս սերը չէ, այլ ապագայի։ Դա մթայն սիրելու անգիտակցական պահանջն է, որը, իսկական սնունդ չգտնելու պատճառով, կանանց մոտ երբեմն արտահայտվում է փաղաքշանքով դեպի երեխան, դեպի մի ուրիշ կին, մինչև իսկ պարզապես արտասուքների կամ հիստերիկ նվաղումների մեջ... Դուք սխալված եք (կարդում էր Շտոլցը շեշտելով այդ բառը). ձեր առջև նա չէ, որին դուք սպասում էիք, որի մասին երազում էիք։ Սպասեք, նա կգա, և այն ժամանակ դուք կսթափվեք, դուք կսրտնեղեք և կամաչեք ձեր սխալի համար...»

— Տեսնո՞ւմ եք, որքա՞ն ճշմարիտ է,— ասաց Շտոլցը։— Դուք և՛ սրտնեղում, և՛ ամաչում էիք... սխալի համար։ Դրա

վրա ամբաստանելու բան չկա։ Օբլոմովն իրավացի էր, իսկ դուք չհավատացիք, և այդ է ձեր ամբողջ մեղքը։ Դուք պետք է հենց այն ժամանակ էլ բաժանվեիք. բայց նրան հաղթահարել էր ձեր գեղեցկությունը... իսկ ձեզ սրտաշարժել... նրա աղավնո՞ւ քնքշությունը,— մի փոքր ծաղրաբար ավելացրեց նա։

— Ես չհավատացի նրան, ես կարծում էի, թե սիրտը չի սխալվում։

— Ո՜չ, սխալվում է, և երբեմն ինչպե՜ս կործանարար է սխալվում։ Բայց ձեզ մոտ բանը սրտին չի էլ հասել,— ավելացրեց նա,— մի կողմից՝ երևակայություն և ինքնասիրություն, մյուս կողմից՝ թուլություն... Իսկ դուք վախենում էիք, որ կյանքում այլ տոն էլ չի լինի, որ այդ դժգույն ճառագայթը կլուսավորի կյանքը և ապա հավիտենական գիշեր կլինի...

— Իսկ արցունքնե՞րը,— ասաց Օլգան։— Մի՞թե դրանք սրտից չէին, երբ ես լաց էի լինում։ Ես չէի ստում, ես անկեղծ էի...

— Աստվա՜ծ իմ։ Ինչի՞ համար չեն լաց լինի կանայք։ Դուք հո ինքներդ եք ասում, որ ափսոսում էիք յասամանի փունջը, սիրելի նստարանը։ Դրա վրա ավելացրեք խաբված ինքնասիրությունը, փրկչուհու չհաջողված դերը, մի քիչ էլ սովորություն... որքա՜ն պատճառ կա լաց լինելու։

— Իսկ մեր տեսակցությունները, զբոսանքները նույնպե՞ս սխալ էին։ Դուք հիշում եք, որ ես... եղել եմ նրա մոտ...— վերջացրեց նա իր խոսքը շփոթմունքով և ինքն էլ կարծես, ուզում էր խեղդել իր խոսքերը։

Նա ջանում էր ինքն իրեն մեղադրել այն բանի համար միայն, որ Շտոլցն էլ ավելի ջերմորեն պաշտպանի իրենց, որպեսզի ինքն ավելի ու ավելի արդար լինի նրա աչքում։

— Ձեր պատմածից երևում է, որ վերջին տեսակցությունների ժամանակ դուք խոսելիք էլ չեք ունեցել։ Ձեր այսպես կոչված «սիրուն» պակասում էր նաև բովանդակությունը. այն չէր կարող շարունակվել։ Դուք բաժանվել էիք իրարից նախքան բաժանվելը և հավատարիմ էիք ո՞չ թե սիրուն, այլ նրա ուրվականին, որ ինքներդ էիք հնարել,— ահա՛ և ամբողջ պատմությունը։

— Իսկ համբո՞ւյրը,— շշնջաց նա այնքան մեղմիկ, որ Շտոլցը ո՞չ թե լսեց, այլ կռահեց։

— Օ՜, դա կարևոր բան է,— կոմիկական խստությամբ արտասանեց նա,— դրա համար պետք էր ձեզ ստիպել... ճաշին մի տեսակ կերակուրից։

Շտոլցը նայում էր նրան ավելի ու ավելի մեծ գուրգուրանքով, ավելի ու ավելի մեծ սիրով։

— Կատակը այդպիսի «սխալի» համար արդարացում չէ,— առարկեց Օլգան խստորեն՝ վիրավորված նրա անտարբեր ու անփույթ տոնից։— Ես ինձ ավելի թեթև կզգայի, եթե դուք իրավ կոպիտ խոսքով պատժեիք ինձ, իմ արարմունքն իր իսկական անունով կոչեիք։

— Ես կատակ չէի էլ ասի, եթե բանը վերաբերեր ո՞չ թե Իլյային, այլ մեկ ուրիշի,— արդարանում էր Շտոլցը,— այնտեղ սխալը կարող էր վերջանալ... աղետով բայց ես Օբլոմովին գիտեմ...

— Ուրիշը, երբե՞ք,— ընդհատեց Օլգան բունվելով։— Ես նրան ավելի ճանաչեցի, քան թե դուք...

— Ա՜յ, տեսնո՞ւմ եք,— հաստատեց Շտոլցը։

— Բայց եթե նա... փոխվեր, կենդանանար, ինձ լսեր և... մի՞թե այն ժամանակ ես նրան չէի սիրի։ Մի՞թե այն ժամանակ էլ սուտ, սխալ կլիներ,— ասում էր Օլգան, որպեսզի գործը նայվի բոլոր կողմերից, որպեսզի ոչ մի ամենաչնչին քիթ, ոչ մի առեղծված չմնա։

— Այսինքն՝ եթե նրա փոխարեն ուրիշ մարդ լիներ,— ընդհատեց Շտոլցը,— կասկած չկա՝ ձեր հարաբերությունները սիրո կփոխարկվեին, կամրապնդվեին, և այն ժամանակ... Բայց դա ուրիշ սիրավեպ է և ուրիշ հերոս, որի հետ մենք գործ չունենք։

Օլգան հառաչեց, կարծես վերջին ծանրություն ցած նետեց իր հոգուց։ Երկուսն էլ լուռ էին։

— Ա՜խ, ի՜նչ երջանկություն է... առողջանալը,— արտասանեց Օլգան դանդաղ, կարծես փթթելով, և դեպի Շտոլցը այնպիսի խորին երախտագիտության, այնպիսի ջերմ, շտեսնված բարեկամության հայացք նետեց, որ Շտոլցին թվաց, թե այդ հայացքի մեջ այն կայծն է տեսնում, որ նա համարյա մի տարի էր՝ ապարդյուն փնտրում էր։ Նրա մարմնով բերկրանքից սարսուռ անցավ։

— Ո՛չ, ես եմ առողջանում,— ասաց Շտոլցը և մտածմունքի մեջ ընկավ։— Ա՜խ, եթե միայն ես կարողանայի գիտենալ, որ այդ սիրավեպի հերոսը Իլյան է։ Որքա՜ն ժամանակ անցավ, որքա՜ն արյուն պղտորվեց։ Ինչի՞ համար։ Ինչու՞,— կրկնում էր նա գրեթե նրտնեղած։

Բայց հանկարծ նա կարծես զգաստացավ այդ սրտնեղությունից, սթափվեց ծանր մտախոհությունից։ Ճակատը հարթվեց, աչքերն ուրախությամբ լցվեցին։

— Բայց, ինչպես երևում է, դա անխուսափելի էր. դրա փոխարեն՝ որքա՜ն հանգիստ եմ ես այժմ և... որքա՜ն երջանիկ,— ավելացրեց նա հափշտակված։

— Կարծես երազ է, կարծես ոչինչ չի՞ եղել,— ասում էր Օլգան, մտախոհ, հազիվ լսելի ձայնով, զարմացած իր հանկարծական վերածնության վրա։— Դուք դուրս քաշեցիք ո՛չ միայն ամոթը, զզջումը, այլև դառնությունը, ցավը. ամեն ինչ... Ինչպե՞ս արեցիք դուք դա,— հարցրեց նա մեղմիկ։— Եվ այդ բոլորը կանցնի՞, այդ... սխալը։

— Ես կարծում եմ, որ արդեն իսկ անցե՛լ է,— ասաց Շտոլցը՝ առաջին անգամ նրան նայելով կրքոտ աչքերով և ցնցվելով դա,— այսինքն՝ այն ամենը, ինչ եղել է։

— Իսկ ինչ որ... լինելու է... սխալ չէ՞... ճշմարտություն է...— հարցնում էր Օլգան՝ առանց բառերը մինչև վերջ ասելու։

— Ահա այստեղ գրված է,— վճռեց Շտոլցը՝ նորից վերցնելով նամակը,— «Ձեր առաջ նա չէ, որին դուք սպասում էիք, որի մասին երազում էիք. նա կգա, և դուք կսթափվեք...» Եվ կսիրեք, կավելացնեմ ես, այնպես կսիրեք, որ ո՛չ թե մի տարին, այլ ամբողջ կյանքն էլ քիչ կլինի այն սիրո համար. միայն թե՝ չգիտեմ... ո՞ւմ,— վերջացրեց իր խոսքը՝ աչքերը հառելով նրա վրա։

Օլգան խոնարհեց աչքերը և սեղմեց շուրթերը, բայց կոպերի արանքից դուրս էին ցայտում ճառագայթները, շուրթերն ուզում էին ժպիտը պահել, բայց չկարողացան։ Նա նայեց Շտոլցին և այնպես ծիծաղեց սրտի խորքից, որ նրա աչքերը մինչև անգամ արտասուքով լցվեցին։

— Ես ձեզ ասացի, թե ի՞նչ էր պատահել ձեզ և նույնիսկ թ՞նչ է լինելու, Օլգա Սերգեևնա,— եզրափակեց նա։— Իսկ դուք ինձ ոչինչ չե՞ք ասի որպես պատասխան իմ այն հարցին, որ չթողիք վերջացնեմ։

— Բայց ի՞նչ կարող եմ ասել,— ասում էր Օլգան շփոթված։— Ես արդյոք իրավունք կունենայի՞, եթե կարողանայի ասել այն, ինչ այնպես հարկավոր է ձեզ և ինչին... դուք այնքան արժանի եք,— ավելացրեց շշնջալով և ամաչելով նայեց նրան։

Հայացքի մեջ Շտոլցին նորից թվաց չտեսնված բարեկամության կայծը. նա նորից ցնցվեց երջանկությունից։

— Մի՛ շտապեք,— ավելացրեց Շտոլցը,— ասացեք՝ ինչի եմ արժանի ես, երբ կվերջանա ձեր սրտի սուգը, վայելչության սուգը։ Ինձ որոշ բան ասաց նաև այս տարին։ Իսկ այժմ վճռեք միայն այն հարցը՝ գնա՞մ ես, թե... մնամ։

— Լսե՛ք, դուք կոկետություն եք անում ինձ հետ,— հանկարծ ասաց Օլգան ուրախ-ուրախ։

— Օ՜, ո՛չ,— նկատեց Շտոլցը ծանրությամբ։— Սա առաջվա հարցը չէ, այժմ այս հարցը ուրիշ իմաստ ունի. եթե ես մնում եմ, ապա... ի՞նչ իրավունքով։

Օլգան հանկարծ շփոթվեց։

— Տեսնո՞ւմ եք, որ ես կոկետություն չեմ անում,— ծիծաղեց Շտոլցը, գոհ, որ Օլգան բռնվեց։— Չէ՞ որ մենք, այսօրվա խոսակցությունից հետո, այլ կերպ պետք է լինենք միմյանց հետ. մենք երկուսս էլ արդեն այն չենք, ինչ որ էինք երեկ։

— Ես չգիտեմ...— շշնջում էր նա՝ է՛լ ավելի շփոթված։

— Թույլ կտա՞ք՝ մի խորհուրդ տամ ձեզ։

— Ասացե՛ք... ես կուրորեն կկատարե՛մ,— ավելացրեց Օլգան գրեթե կրքոտ հնազանդությամբ։

— Ամուսնացե՛ք ինձ հետ, սպասելով՝ մինչև ետ գա՛։

— Դեռ չեմ համարձակվում...— շշնջում էր նա՝ ձեռքերով ծածկելով դեմքը, հուզված, բայց երջանիկ։

— Իսկ ինչո՞ւ չեք համարձակվում,— նույնպես շշնջալով հարցրեց Շտոլցը՝ նրա գլուխը թեքելով դեպի ինքը։

— Իսկ այդ անցյա՞լը,— շշնջաց Օլգան նորից՝ գլուխը գնելով նրա կրծքին, ինչպես մոր։

Շտոլցը մեղմորեն ետ տարավ նրա ձեռքերը դեմքից, համբուրեց գլուխը և երկար հիանում էր նրա շփոթմունքով,

հրվանքով նայում էր դուրս ցայտած և աչքերի կողմից նոր ջրից կլանված արցունքներին։

— Կթառամի՞, ինչպես ձեր յասամանը,— եզրափակեց Շտոլցը։— Դուք դաս առաք. հիմա եկել է նրանից օգտվելու ժամանակը։ Սկսվում է կյանքը. ինձ հանձնեք ձեր ապագան և ոչ մի բանի մասին մի՛ մտածեք— ես երաշխավորում եմ ամեն ինչի համար։ Գնանք մորաքրոջ մոտ։

Շտոլցը տուն վերադարձավ ուշ։

«Գտա իմը»,— մտածում էր նա՝ սիրահարված աչքերով նայելով ծառերին, երկնքին, լճին, մինչև անգամ ջրից բարձրացող մշուշին։ «Երկա՜ր սպասեցի, մինչև հասա։ Զգացմունքի, համբերության,— հոգու ուժերի քանի՜ տարիներ անցան։ Որքա՜ն երկար սպասեցի— հիմա պարգևատրված է ամեն ինչ։ Ահա՜ այն, մարդու վերջին երջանկությունը»։

Այժմ նրա աչքերում երջանկությունը ծածկել էր ամեն ինչ. գրասենյակը, հոր սայլակը, զամշե ձեռնոցները, յուղոտված հաշիվները՝ ողջ գործարար կյանքը։ Նրա հիշողության մեջ հարություն առավ միայն իր մոր անուշաբույր սենյակը, Գերցի վարիացիաները, իշխանի պատկերասրահը, կապույտ աչքերը, պուդրա արած շագանակագույն մազերը. և այդ ամենը ծածկվում էր Օլգայի ինչ-որ քնքուշ ձայնով. նա մտքում լսում էր նրա երգեցողությունը...

— Օլգան իմ կի՞նն է,— շշնջաց նա՝ կրքոտ ցնցվելով։— Ամեն ինչ գտնված է, էլ որոնելու բան չկա, էլ գնալու տե՛ղ չկա։

Եվ երջանկության մտախոհ մոլուցքի մեջ նա տուն էր գնում՝ առանց նկատելու ճանապարհը, փողոցները...

Օլգան երկար ուղեկցում էր նրան աչքերով, հետո բաց արեց լուսամուտը, մի քանի բոպե շնչում էր գիշերվա զովությունը. հուզմունքը կամաց-կամաց անցավ, կուրծքը հավասար էր շնչում։

Նա աչքերը սևեռեց դեպի լիճը, դեպի Հեռուն և մտքերի մեջ ընկավ այնպես հանդարտ, այնպես խոր, կարծես քնեց։ Նա ուզում էր որսալ, թե ինչի՞ մասին էր մտածում ինքը, ինչ է զգում, և չկարողացավ։ Մտքերը սլանում էին այնպես հավասար, ինչպես ալիքները, արյունը հոսում էր երակների մեջ

այնպես սահուն։ Նա երջանկություն էր զգում և չէր կարողանում որոշել, թե որտեղ են սահմանները, ի՞նչ է նա ինքը։ Նա միտք էր անում, թե ինչու է այնպես անդորր, հանգիստ, ինչու է այնպես անխախտելի լավ զգում իրեն, ինչու է իրեն այնպես խաղաղ զգում, մինչդեռ...

— Ես նրա հարսնացուն եմ...— շշնջում էր նա։

«Ես Հարսնացո՞ւ եմ»,— մտածում էր աղջիկը հպարտ սարսուռով, երբ հասկանում էր այդ պահին, որ լուսավորում էր նրա ամբողջ կյանքը. և նա աճում էր և բարձունքից էր նայում այն մութ շավղին, որտեղով գնում էր նա երեկ միայնակ ու աննկատելի։

Ինչո՞ւ Օլգան չի սարսռում։ Նա էլ էր մենակ գնում անկատելի շավղով, նույնպես իրեն հանդիպեց նա, ձեռքը տվեց և դուրս բերեց ո՞չ թե շլացուցիչ ճառագայթների փայլի մեջ, այլ կարծես թե լայն գետի վարարած մասի, լայնածավալ դաշտերի ու բարեկամաբար ժպտացող բլուրների։ Նրա հայացքը չկկոցվեց, փայլեց, սիրտը չմարեց, երևակայությունը չբռնկվեց։

Նա անդորր բերկրանքով հայացքը հանգեցրեց կյանքի հեղեղման վրա, նրա լայն դաշտերի և կանաչ բլուրների վրա։ Նրա ուսերով դող չէր անցնում, հայացքը չէր վառվում հպարտությամբ. միայն, երբ նա այդ հայացքը դաշտերից ու բլուրներից փոխադրեց այն մարդու վրա, որը նրան ձեռք տվեց, նա զգաց, որ իր այտի վրա դանդաղ իջնում է արտասուքը...

Նա շարունակ նստած էր, կարծես քնած լիներ, այնպես անդորր էր նրա երջանկության երազը. նա չէր շարժվում, համարյա չէր շնչում։ Թմրության մեջ ընկղմված՝ նա մտավոր հայացքն ուղղեց դեպի ինչ-որ խաղաղ, կապույտ գիշեր, հեղ փայլով, ջերմությամբ ու բուրմունքով։ Երջանկության անուրջը տարածեց իր լայն թևերը և սահում էր նրա գլխին դանդաղ, ինչպես ամպը երկնքում։

Այդ երազի մեջ նա իրեն չտեսավ երկու ժամով շղարշների ու մետաքսե ժանյակների մեջ փաթաթված, իսկ ապա, ողջ կյանքը՝ առօրյա շորերի մեջ։ Նա երազում ո՞չ տոնական խնջույք տեսավ, ո՞չ կրակներ, ո՞չ ուրախ աղաղակներ. նա երազում երջանկություն տեսավ, բայց այնպիսի հասարակ

այնպիսի անպաճույճ երջանկություն, որ նա մի անգամ էլ առանց հպարտության սարսուռի, և միայն խորին խանդաղատանքով շշնջաց՝ հա նրա հարսնացո՞ւն եմ։

V

Աստվա՜ծ իմ։ Ի՞նչ մռայլ, տխուր էր ամեն բան Օբլոմովի բնակարանում մեկուկես տարի անց այն անվանակոչությունից, երբ, անակնկալ, նրա մոտ ճաշելու եկավ Շտոլցը։ Իլյա Իլյիչն ինքն էլ ուռել էր, տաղտուկը մտել էր նրա աչքերի մեջ և այնտեղից դուրս էր նայում որպես մի ինչ-որ տկարություն։

Նա ման կգար, ման կգար սենյակում, հետո կնստեր և առաստաղին կնայեր. գիրք կվերցներ դարակից, մի քանի տող աչքի կանցկացներ, կհորանջեր ու կսկսեր մատներով թմբկահարել սեղանը։

Զախարն ավելի ծանրաշարժ, ավելի փնթի էր դարձել. նրա արմունկների վրա կարկատաններ երևացին. նա այնպես խեղճ է երևում, սոված, կարծես վատ է կերակրվում, քիչ է քնում ու երեք հոգու փոխարեն աշխատում։

Օբլոմովի խալաթը մաշվել էր, և որքան էլ խնամքով էին կարվում նրա ծակերը. այնուամենայնիվ նա ամեն կողմից փրթվում էր և այն ոչ կարեքով. վաղուց էր հարկավոր նորը։ Տեղաշորի վերմակն էլ մաշել էր, տեղ-տեղ կարկատաններ ուներ. լուսամուտների վարագույրները վաղուց գույնը գցել էին և, թեև դրանք լվացված էին, բայց հին շորի էին նման։

Զախարը բերեց հին սփռոցը, փռեց սեղանի կեսի վրա, Օբլոմովին մոտ, հետո զգուշությամբ, լեզուն կծելով, բերեց սպասքը մի գրաֆին օղու հետ, հաց դրեց և դուրս գնաց։

Տարանտիրուհու բնակարանի կողմից դուռը բացվեց, և ներս մտավ Ագաֆյա Մատվեևնան, արագությամբ բերելով թավան՝ մեջը թշշացող ձվածեղով։

Տանտիրուհին էլ սարսափելի փոխվել էր, ոչ հագուստ իրեն։ Նա նիհարել էր։ Չկան կլոր, սպիտակ, շկարմր շ ու շգլուխավող այտերը. չեն պպզում նոսր հոնքերը, աչքերը խորն էին ընկել։

Նա հագել էր լիքե հին զգեստ, ձեռքերը ոչ այն է՝ վառվել էին արևից, ոչ այն է՝ կոշտացել աշխատանքից, կրակից կամ ջրից, կամ թե՛ սրանից և թե՛ նրանից։

Ակուլինան այլևս չկար տանը։ Անիսյան է թե՛ խոհանոցում, թե՛ բանջարանոցում, թե՛ հավերին է խնամում, թե հատակները լվանում և թե՛ լվացք անում. նա չի կարողանում մենակ անել բոլորը, և Ագաֆյա Մատվեևնան, կամա-ակամա, ինքն էլ աշխատում է խոհանոցում. նա քիչ է ծեծում, մագում, տրորում, որովհետև սուրճ, դարչին և նուշ քիչ է գործածվում, իսկ հաշիայի մասին մտածելն անգամ մոռացել է։ Հիմա նա ավելի հաճախ ստիպված է լինում սոխ կոտորել, խրեն և դրա նման համեմունքներ տրորել։ Նրա դեմքը խոր վշտություն է արտահայտում։

Բայց նա ո՛չ թե իր համար, իր սուրճի համար է հոգոց հանում, ո՛չ թե այն պատճառով է վշտանում, որ ինքն առիթ չունի դեսուդեն ընկնելու, լայն տնտեսություն վարելու, դարչին ծեծելու, վանիլ գցելու սուրճի մեջ կամ թանձր սեր եփելու, այլ այն պատճառով, որ ահա երկրորդ տարին է՝ դրանցից ոչ մեկն էլ չի ուտում Իլյա Իլյիչը, այն պատճառով, որ սուրճ նրա համար չի առնվում փթերով լավագույն խանութից, այլ գնվում է տասկոպեկանոցներով փոքրիկ կրպակից. սերը բերում է ո՛չ թե շուխոնուհին, այլ այն մատակարարում է նույն կրպակը, այն պատճառով, որ հյուրասիրի կոտլետի փոխարեն նախաճաշին նրան ձվածեղ է բերում՝ նույն կրպակում առնված կոշտ, երկար ժամանակ չվաճառված ապուխտով։

Իսկ ի՞նչ է նշանակում դա։ Դա այն է նշանակում, որ Շտոլցի կողմից Օբլոմովկայի համար կանոնավորապես ուղարկվող եկամուտներն ահա երկրորդ տարին է, որ գործադրվում են այն պարտագրի պահանջը բավարարելու, որ Օբլոմովը տվել էր տանտիրուհուն։

Տանտիրուհու եղբոր «օրինական գործը» սպասածից ավելի հաջող անցավ։ Նայտառակ գործի մասին Տարանտիևը տրած առաջին ակնարկի ժամանակ Իլյա Իլյիչը կարմրատակեց և շփոթվեց. հետո հաշտություն կայացրին, հետո երեքով խմեցին, և Օբլոմովը մի պարտագիր ստորագրեց չորս տարի ժամանակով. իսկ մի ամիս հետո Ագաֆյա Մատվեևնան նույնպիսի պարտագիր ստորագրեց եղբոր անունով, առանց

մտածելու, թե ի՞նչ բան է և ինչու է ինքը ստորագրում։ Եղբայրն ասաց, թե ոչ մի հարկավոր թուղթ է դա, և հրամայեց ստորագրել— «Այս պարտագրի ներքո այսինչը (ասենք՝ անունն ու ազգանունը) ստորագրեց»։

Տանտիրուհին դժվարացավ միայն, որ հարկավոր էր շատ գրել, և խնդրեց եղբորը՝ ավելի լավ է վանյուշային ստիպի գրել, որ նա «սկսել է ճարպկորեն գրել», և ինքը թերևս, որևէ բան շփոթի։ Բայց եղբայրը հարկադրական ձևով պահանջեց, և նա գրեց ծուռ, շեղ և խոշոր-խոշոր։ Այնուհետև դրա մասին այլևս երբեք խոսք էլ չեղավ։

Օբլոմովը, ստորագրելով, մասամբ մխիթարվում էր նրանով, որ այդ փողերը կծախսվեն որբերի վրա, իսկ հետո, մյուս օրը, երբ նրա գլուխը թարմ էր, նա ամոթով հիշեց այդ գործի մասին և աշխատեց մոռանալ, խուսափում էր եղբորը հանդիպելուց և եթե Տարանտևը խոսում էր դրա մասին, նա սպառնում էր անմիջապես հեռանալ բնակարանից և գյուղ գնալ։

Հետո, երբ նա փող ստացավ գյուղից, եղբայրը՝ եկավ նրա մոտ և հայտարարեց, որ Իլյա Իլյիչի համար ավելի հեշտ կլինի եկամուտից անմիջապես սկսել վճարումը. որ մի երեք տարվա ընթացքում պահանջը բավարարված կլինի, մինչդեռ ժամկետը վրա հասնելիս, երբ փաստաթուղթը կներկայացվի գումարը գանձելու համար, գյուղը պետք կլինի հրապարակային վաճառքի հանել, որովհետև Օբլոմովը կանխիկ գումար չունի և չի էլ նախատեսվում, որ կունենա։

Օբլոմովը հասկացավ, թե ինչ ճիրանների մեջ է ընկել, երբ Շտոլցի ուղարկած բոլոր փողերը գնացին պարտքի հատուցման հաշվին, իսկ իրեն քիչ քանակությամբ փող մնաց ապրուստի համար։

Տանտիրուհու եղբայրն՝ աշխատում էր այդ հոժարակամ գործարքն իր պարտապանի հետ վերջացնել մի երկու տարում, որպեսզի որևէ կերպ և որևէ բան չխանգարի գործին, և այդ պատճառով էլ Օբլոմովը հանկարծ նեղ դրության մեջ ընկավ։

Սկզբում դա շատ էլ նկատելի չէր շնորհիվ նրա այն սովորության, որ չգիտեր, թե գրպանում փող կա. բայց Իվան Մատվեևիչի խելքին փչեց ամուսնության առաջարկ անել

ինչ-որ ալրավաճառի աղջկա, առանձին բնակարան վարձեց և տեղափոխվեց այնտեղ։

Ագաֆյա Մատվեևնայի տնտեսական թափը հանկարծ կանգ առավ. թառափի միսը, ձյունի նման սպիտակ հորթի միսը, հնդկահավերն սկսեցին ուրիշ խոհանոցներում երևալ, Մուխոյարովի նոր բնակարանում։

Այնտեղ երեկոները վառվում էին լույսերը, հավաքվում էին տանտիրուհու եղբոր ապագա աղգականները, ծառայակիցները և Տարանտևը. ամեն բան այնտեղ էր լինում։ Ագաֆյա Մատվեևնան և Անիսյան բերանները բաց և պարապ ձեռքերը կախ ընկած մնացին դատարկ պղինձների ու պուտուկների առաջ։

Ագաֆյա Մատվեևնան առաջին անգամ իմացավ, որ նա ունի միայն տուն, բանջարանոց և ճտեր, և որ նրա բանջարանոցում ո՛չ գարշին է բուսնում, ոչ էլ վանիլ. տեսավ, որ շուկաներում խանութպանները հետզհետե դադարեցին ժըպիտներն երեսներին խոր գլուխ տալ իրեն և որ այդ գլուխ տալն ու ժպիտները բաժին ընկան նրա եղբոր նոր, հաստլիկ, զարդարված խոհարարուհուն։

Օբլոմովը տանտիրուհուն տվեց այն բոլոր փողերը, որ թողել էր նրան տանտիրուհու եղբայրն ապրուստի համար, և նա երեք-չորս ամիս էլ, առանց զգալու, առաջվա նման փրթերով սուրճ էր աղում, դարշին էր ծեծում, հորթի միս ու հընդկահավեր էր տապակում, և այդ անում էր մինչև վերջին օրը, երբ ծախսվեց վերջին յոթանասուն կոպեկը և եկավ նրան ասելու, որ այլևս փող չկա։

Օբլոմովն այդ լուրից երեք անգամ շուռ եկավ բազմոցի վրա, հետո նայեց իր սեղանի արկղը. նրա մոտ էլ ոչինչ չէր կար։ Սկսեց միտը բերել, թե ինչ է արել և ոչինչ չկարողացավ հիշել. սեղանի վրա ձեռքով փնտրտեց՝ արդյոք սև փող չկա՞, հարցրեց Զախարին, սա երազում էլ չէր տեսել։ Տանտիրուհին գնաց եղբոր մոտ և միամտորեն ասաց, որ ոչինչ փող չկա։

— Իսկ դուք ազնվատոհմիկի հետ միասին ինչի՞ վրա ծախսեցիք այն հազար ռուբլին, որ ես տվեցի նրան ապրուստի համար,— հարցրեց նա։— Որտեղի՞ց փող գտնեմ ես։ Դու գիտես, որ ես օրինական ամուսնության մեջ եմ մտնում.

երկու ընտանիք պահել չեմ կարող, իսկ դուք այդ աղայի հետ միասին ձեր վերմակին հարմար պարզեք ձեր ոտքերը։

— Եղբայր, ի՞նչ եք ինձ բարինով կշտամբում,— ասաց նա։— Նա ձեզ ի՞նչ է անում։ Ոչ ոքի ձեռք չի տալիս, իր համար ապրում է։ Ես չեմ նրան հրապուրել, բնակարանը բերել. դուք Միխեյ Անդրեյիչի հետ արեցիք դա։

Եղբայրը տվեց նրան տասը ռուբլի և ասաց, որ էլ չունի։ Բայց հետո, այդ գործի մասին «պանդոկում» քավորի հետ խորհրդակցելով, վճռեց, որ քրոջն ու Օբլոմովին այդպես թողնել-հեռանալ չի կարելի, որ, գուցե գործը հասնի Շտոլցին, նա հանկարծ վրա կտա, կքննի և ով գիտե, որևէ կերպ այնպես շուռ կտա, որ չես էլ կարողանա պարտքը գանձել, ինչ ասենք որ «օրինական գործ է». գերմանացի՞ է, հետևաբար, խորամանկ խաբեբայի մեկն է։

Նա սկսեց ամսական հիսուն ռուբլի ևս տալ, ենթադրելով այդ փողերը գանձել Օբլոմովի երրորդ տարվա եկամուտներից. բայց դրա հետ միասին նա բացատրեց և մինչև անգամ երդվեց քրոջը, որ այլևս ոչ մի կոպեկ չի տա, և հաշվեց, թե ինչպիսի սնունդ պետք է ունենան, ինչպես կրճատեն ծախքերը, մինչև անգամ նշանակեց, թե երբ ինչ կերակո՞ւր պետք է պատրաստեն, հաշիվ արեց, թե քույրը որքան կարող է ստանալ ճտերից, կաղամբից, և վճռեց, որ այդ բոլորով կարելի է հեշտ ու հանգիստ ապրել։

Կյանքում առաջին անգամ Ագաֆյա Մատվեևնան մտածմունքի մեջ ընկավ ո՛չ թե տնտեսության, այլ մի ինչ-որ ուրիշ բանի մասին, առաջին անգամ լաց եղավ ո՛չ թե շարքած ամանեղենի պատճառով Ակուլինայի վրա սրտնեղելուց, ո՛չ թե եղբոր նախատինքից՝ լավ չեփած ձկան համար, այլ առաջին անգամ նրա առջև կանգնեց ահեղ փարիզը, բայց ահեղ ո՛չ թե իր, այլ Իլյա Իլյիչի համար։

«Ինչպե՞ս պետք է այդ բարինը», մտածում էր նա, «հանկարծ ծնեբեկի փոխարեն կարագով շաղգամ ուտի, սալամբի փոխարեն ոչխարի միս։ Գատչինոյի կարմրախայտի, սպիտակ թառափի փոխարեն՝ աղած սուդակ, գուցե խանութից բերած դոնդող...»

Սարսափելի՞ է։ Նա մինչև վերջ չկարողացավ մտածելը, այլ շտապով հագնվեց, կատ վարձեց և գնաց ամուսնու աղ-

գականների մոտ, ո՛չ թե Զատկի ու Ծննդի ընտանեկան ճաշի, այլ առավոտյան վաղ հոգսով լի, անսովոր խոսք ու հարցով, թե ինչ պետք է անել, և նրանցից փող վերցնելու։

Նրանք փող շատ ունեն, իսկույն կտան, հենց որ իմանան, որ Իլյա Իլյիչի համար է։ Եթե դա պետք լիներ իր համար սուրճ, թեյ, երեխաների համար շոր, կոշիկ կամ նման այլ քմահաճ բաներ գնելու, նա ամենևին ծպտուն էլ չէր հանի, բայց հարկավոր է ծայրահեղ կարիքի պատճառով, չափազանց անհրաժեշտ է. Իլյա Իլյիչի համար պետք է ծնեբեկ գնել, սալամբ տապակայի համար, նա սիրում է ֆրանսիական սիսեռ...

Բայց այնտեղ զարմացան, փող չտվին նրան, այլ ասացին, որ, եթե Իլյա Իլյիչը որևէ իր ունի, ոսկեղեն կամ, թերևս, արծաթեղեն, նույնիսկ մուշտակ, ապա դրանք կարելի է գրավ դնել և որ, այնպիսի բարեգործ մարդիկ կան, որ ցանկացած գումարի մի երրորդը կտան, մինչև նա գյուղից նորից փող ստանա։

Ուրիշ ժամանակ այդ գործնական դասը կթռչեր հանճարեղ ատանտիրուհու վրայից, առանց նրա գլխին դիպչելու, և դա նրան ոչ մի կերպ կարելի չէր լինի հասկացնել, իսկ այժմ նա սրտի խելքով հասկացավ, ըմբռնեց ամեն ինչ և կշռեց... իր իրը օժիտ ստացած մարգարիտը։

Իլյա Իլյիչը, ոչինչ չկասկածելով, հետևյալ օրը հաղարջի ջրի էր խմում, հիանալի սյոմգա ճաշակում, ուտում էր իր սիրած ընդերքը և սպիտակ, թարմ սալամբը։ Ագաֆյա Մատվեևնան երեխաների հետ միասին կերավ ծառաների համար պատրաստված շչիից ու շիլայից և միայն ընկերություն անելու համար Իլյա Իլյիչի հետ երկու գավաթ սուրճ խմեց։

Մարգարիտից քիչ հետո նա իր նվիրական սնդուկից հանեց զարդաճարմանդը, հետո հերթը հասավ արծաթեղենին, ապա՝ ոսկուին...

Եկավ գյուղից փող ուղարկելու ժամկետը. Օբլոմովը բոլորը տվեց նրան։ Նա գրավից ազատեց մարգարիտը և վճարեց զարդաճարմանդի, արծաթեղենի ու մուշտակի համար ստացած փողերի տոկոսները, և նորից պատրաստում էր նրա համար ծնեբեկ, սալամբներ, և միայն ձեի համար նրա հետ սուրճ էր խմում։ Մարգարիտը նորից մտավ իր տեղը։

Շաբաթից-շաբաթ, օրեցօր նա ուժասպառ էր լինում, տանջվում էր, ծայրը ծայրին էր հասցնում, ծախեց իր շալը, ծախելու ուղարկեց հանդիսազգեստը և մնաց ամենօրյա չթե շորով, մերկ արմունկներով, իսկ կիրակի օրերը պարանոցը ծածկում էր հին մաշված թաշկինակով։

Ահա թե ինչու էր նա նիհարել, ինչու էին նրա աչքերը փոս ընկել և ինչու նա ինքն էր բերում Իլյա Իլյիչի նախաճաշը։

Նա մինչև անգամ տրամադրություն էր ունենում ուրախ դեմք ցույց տալու, երբ Օբլոմովը նրան հայտարարում էր, թե վաղն իր մոտ ճաշի են գալու Տարանտևը, Ալեքսեևը կամ Իվան Գերասիմովիչը։ Ճաշը լինում էր համեղ ու մատուցվում էր մաքուր։ Նա Օբլոմովին խայտառակ չէր անում։ Բայց այդ հոգսերը որքա՞ն հուզմունք, վազվզոց, խանութպաններին խնդրելու անախորժություն, հետո անքնություն էին պատճառում նրան։

Ինչպե՞ս նա հանկարծ խորատուզվեց կյանքի անհանգստությունների մեջ և ինչպե՞ս ճանաչեց նրա երջանիկ ու դժբախտ օրերը։ Բայց նա նիրում էր այդ կյանքը, չնայելով իր արցունքների ու հոգսերի ամբողջ դառնությանը՝ նա այն չէր փոխի նախկին, խաղաղ ընթացքի հետ, երբ նա դեռ չէր ճանաչում Օբլոմովին, երբ արժանապատվությամբ իշխում էր լիքը-լիքը, ճռճռացող ու թշշացող պղնձների, թավաների ու պուտուկների մեջ, հրամաններ էր տալիս Ակուլինային, դրոնապանին։

Նա սարսափից նույնիսկ կցնցվի, եթե հանկարծ իր առաջ կանգնի մեռնելու միտքը. թեև մահը միանգամից վերջ կդներ նրա չցամաքող արտասուքներին, ամենօրյա վազվզոցին և ամեն գիշեր աչքը չկպցնելուն։

Իլյա Իլյիչը նախաճաշեց, լսեց, թե ինչպես է Մաշան ֆրանսերեն կարդում, նստեց Ագաֆյա Մատվեևնայի մոտ, նայում էր, թե ինչպես է նա կարկատում Վանեչկայի կուրտկան՝ մի տասն անգամ մեկ այս, մեկ այն կողմը դարձնելով, և միևնույն ժամանակ անդադար վազում էր խոհանոց՝ նայելու, թե ինչպես է տապակվում ոչխարի միսը ճաշի համար, ժամանակը չի՞ արդյոք ձկնապուրը եփելու։

— Ի՞նչ եք շարունակ գլուխներդ ցավացնում,— ասում էր Օբլոմովը։— Բավակա՞ն է, թողե՛ք։

— Ո՞վ պիտի գլուխը ցավեցնի, եթե ես չանեմ,— ասաց նա։— Ա՛յ երկու կարկատան գցեմ այստեղ, ապա ձկնապուրը կեփենք։ Ինչ՞ անպիտան տղա է այդ Վանյան։ Անցյալ շաբաթ կարկատեցի-նորացրի կուրտկան, դարձյալ պատռե՞լ է։ Ի՞նչ ես ծիծաղում,— դարձավ նա սեղանի մոտ նստած Վանյային, որը հագել էր շալվար և մի ծայրը շալվարակալին ամրացրած շապիկ։— Ա՛յ, մինչև առավոտ չեմ կարկատիլ և չես կարողանա բակից դուրս գալ։ Երևի, տղաներն են պատռել, կռի՞վ ես արել, խոստովանի՛ր։

— Ո՛չ, մայրիկ, ինքն իրեն պատռվեց,— ասաց Վանյան։

— Հապա՞, ինքն իրեն։ Նստեի՞ր տանն ու դասերդ սերտեիր, փոխանակ փողոցներում վազվզելու։ Ա՛յ, եթե Իլյա Իլյիչը նորից ասի, որ դու ֆրանսերեն լավ չես սովորում, կոշիկներդ էլ կհանեմ, ակամայից կնստես ու դասե՞ր կսովորես։

— Ես չեմ սիրում ֆրանսերեն սովորել։

— Ինչո՞ւ,— հարցրեց Օբլոմովը։

— Ախր ֆրանսերեն շատ վատ բառեր կան...

Ագաֆյա Մատվեևնան կարմրատակեց։ Օբլոմովը քրքջաց։ Երևի, առաջ էլ նրանց մեջ խոսակցություն էր եղել «վատ բառերի» մասին։

— Լռի՛ր, անպիտան տղա,— ասաց նա։— Ավելի լավ է քիթդ սրբի՛ր, չե՞ս տեսնում։

Վանյուշան փոթկաց, բայց քիթը չսրբեց։

— Ա՛յ, սպասեք, գյուղից փող կստանամ, ես նրա համար երկու ձեռք կարել կտամ,— խառնվեց Օբլոմովը,— կապույտ կուրտկա, իսկ եկող տարվա համար՝ համազգեստ. գիմնազիա կմտնի։

— Է՛է, դեռ հնով կարող է ման գալ,— ասաց Ագաֆյա Մատվեևնան,— իսկ փողը պետք կգա տնտեսության մեջ։ Աղած մսի պաշար կտեսնենք, մուրաբաներ կեփեմ ձեզ համար... Գնամ տեսնեմ Անիսյան արդյոք հում սեր բերե՞լ է։

Նա տեղից վեր կացավ։

— Իսկ ի՞նչ ունենք այսօր,— հարցրեց Օբլոմովը։

— Յորշի ձկնապուր, ոչխարի տապակած միս և վարենիկներ։

Օբլոմովը ոչինչ չասաց։

Հանկարծ մոտեցավ մի կառք, դռնակը ծեծեցին, սկսվեց շան վաղվզոցը շղթայի ուղղությամբ և հաչոցը։

Օբլոմովը գնաց իր սենյակը, կարծելով, թե որևէ մեկը եկել է տանտիրուհու մոտ. մսավաճառը, կանաչեղեն ծախողը կամ դրանց նման մեկը։ Այդպիսի այցելություններն ուղեկցում էր սովորաբար փող ուզելը, մերժում տանտիրուհու կողմից, ապա սպառնալիք վաճառողի կողմից, հետո տանտիրուհու կողմից՝ սպասելու խնդիր, հետո հայհոյանք, հետո սենյակի դռների, դրսի դռնակի շրխկոց և շան կատաղի վազվզոց ու հաչոց. ընդհանրապես անհաճո մի տեսարան։ Բայց մի կառք մոտեցավ, ի՞նչ կարող է նշանակել դա։ Մսավաճառներն ու կանաչի ծախողները կառքերով չեն ման գալիս։

Հանկարծ տանտիրուհին վախեցած վազեց նրա սենյակը։

— Ձեզ մոտ հյո՞ւր է եկել,— ասաց նա։

— Ո՞վ, Տարանտևը, թե Ալեքսեևը։

— Ո՞չ, ո՞չ. նա, որ ճաշեց Եղիա մարգարեի օրը։

— Շտո՞լցը,— տագնապով ասաց Օբլոմովը, շուրջը դիտելով, թե ուր կարող է փախչել։— Աստվա՞ծ իմ։ Ի՞նչ կասի նա, երբ տեսնի,... ասացեք, որ ես տնից գնացե՞լ եմ,— շտապով ավելացրեց նա և գնաց-մտավ տանտիրուհու սենյակը։

Անիսյան իսկույն ընդառաջ վազեց հյուրին։ Ագաֆյա Մատվեևնան կարողացել էր հրամանը հաղորդել նրան։ Շտոլցը հավատաց, միայն զարմացավ՝ այդ ինչպե՞ս է, որ Օբլոմովը տանը չէ։

— Դե, ասա՛, որ ես երկու ժամից հետո կգամ. ճաշելո՞ւ եմ,— ասաց նա և գնաց մոտիկ տեղ, հանրային այգին։

— Ճաշելո՞ւ է,— վախեցած հայտնեց Անիսյան։

— Ճաշելո՞ւ է,— սարսափած կրկնեց Ագաֆյա Մատվեևնան Օբլոմովին։

— Պետք է ուրիշ ճաշ պատրաստել,— վճռեց Օբլոմովը, մի քիչ լռելուց հետո։

Տանտիրուհին սարսափով լի մի հայացք գցեց նրա վրա։ Նրա մոտ մնացել էր ընդամենը հիսուն կոպեկ, իսկ մինչև

ամսի մեկը, երբ եղբայրը փող է տալիս, դեռ տասն օր կա։ Պարտքով ոչ ոք չի տալիս։

— Ձենք հասցնի, Իլյա Ի՛լյիչ,— քաշվելով նկատեց նա,— թող ուտի ինչ որ կա...

— Նա այդ չի ուտի, Ագաֆյա Մատվեևնա. ձկնապուր բոլորովին չի սիրում, նույնիսկ ստերլետի ձկնապուր չի ուտում. ոչխարի միս նույնպես բերանը չի դնում։

— Երշիկի խանութից կարելի է լեզո՞ւ վերցնել,— հանկարծ ասաց տանտիրուհին, կարծես ոգեշնչված.— մոտիկ է։

— Դա լավ է, կարելի է. հետո պատվիրեք որևէ կանաչեղեն պատրաստել, թարմ բակլա...

— Բակլայի ֆունտը ութսուն կոպեկ է,— շարժվեց նրա կոկորդում, բայց լեզվից դուրս չեկավ։

— Լա՛վ, կանեմ...— ասաց նա՝ վճռելով բակլան փոխարինել կաղամբով։

— Պատվիրե՛ք մի ֆունտ շվեյցարական պանիր առնել— հրամայում էր նա, առանց իմանալու Ագաֆյա Մատվեևնայի միջոցները,— ուրիշ ոչի՞նչ։ Ես ներողություն կխնդրեմ, կասեմ, որ չէինք սպասում... հա՛, եթե կարելի լիներ՝ որևէ արգանակ։

Տանտիրուհին այն է՝ դուրս էր գնում։

— Իսկ գինի՞,— հանկարծ հիշեց նա։

Տանտիրուհին պատասխանեց սարսափի նոր հայացքով։

— Պետք է լաֆիտ բերել տալ,— եղրափակեց նա նառնագույն կերպով։

VI

Երկու ժամից հետո Շտոլցը եկավ։

— Ի՞նչ է պատահել քեզ։ Ինչպե՞ս փոխվել ես. ուռել, գունա՞տ ես։ Առո՞ղջ ես,— հարցրեց Շտոլցը։

— Առողջությունս վատ է, Անդրեյ,— ասում էր Օբլոմովը՝ գրկելով նրան,— ձախ ոտքս շարունակ մի տեսակ թմրում է։

— Որքա՞ն զզվելի է այստեղ,— ասաց Շտոլցը շուրջը նայելով։— Ինչո՞ւ այդ խալաթը դեն չես գցում։ Տե՛ս, ամբողջովին կարկատաններով է։

— Սովորություն է, Անդրեյ, ափսոսում եմ բաժանվել։

— Իսկ վերմա՞կը, իսկ վարագույրնե՞րը...— սկսեց Շտոլցը,— նույնպե՞ս սովորություն են։ Ափսոսո՞ւմ ես փոխել այդ լաթերը։ Ի սեր աստծու, մի՞թե դու կարողանում ես քնել այդ անկողնում։ Ախր ի՞նչ է պատահել քեզ։

Շտոլցը տեսակի նայեց Օբլոմովին, հետո նորից վարագույրներին, անկողնին։

— Ոչինչ,— ասում էր շփոթված Օբլոմովը,— դու գիտես, որ ես միշտ էլ փութաջան չեմ եղել իմ սենյակի վերաբերմամբ... Ավելի լավ է՝ ճաշենք։ է՞յ, Զախար։ Տո՛ւր արա՝ սեղանը գցիր։ է՞, դո՞ւ ինչպես, երկա՞ր ժամանակով ես եկել։ Որտեղի՞ց։

— Դե իմացիր՝ ինչպե՞ս եմ ես և որտեղի՞ց եմ գալիս,— հարցրեց Շտոլցը։— Այստեղ հո քեզ լուրեր չեն հասնում կենդանի աշխարհից։

Օբլոմովը հետաքրքրությամբ նայում էր նրան և սպասում, թե ի՞նչ կասի։

— Ինչպե՞ս է Օլգան,— հարցրեց Օբլոմովը։

— Ահա՛, չե՞ս մոռացել։ Ես կարծում էի, թե կմոռանաս,— ասաց Շտոլցը։

— Ո՛չ, Անդրեյ, մի՞թե կարելի է մոռանալ նրան։ Այդ կնշանակե մոռանալ, որ ես մի ժամանակ ապրում էի, դրախտում էի... Իսկ այժմ ա՛յ...

Նա հառաչեց։

— Բայց որտե՞ղ է նա։

— Իր գյուղում տնտեսություն է վարում։

— Մորաքրոջ հե՞տ,— հարցրեց Օբլոմովը։

— Եվ ամուսնու հետ։

— Նա ամուսնացա՞ծ է,— հանկարծ, աչքերը չռելով, արտասանեց Օբլոմովը։

— Ինչո՞ւ այդպես վախեցար։ Հիշողություններդ արդյոք...— մեղմիկ, համարյա քնքշությամբ ավելացրեց Շտոլցը։

— Ա՜խ, ո՛չ։ ի՞նչ ես ասում,— արդարացնում էր իրեն Օբլոմովը՝ ուշքի գալով։— Ես չվախեցա, բայց զարմացա, չգիտեմ ինչու դա ապշեցրեց ինձ։ Վաղո՞ւց է։ Երջանի՞կ է արդյոք, ասա՛, աստծու սիրուն։ Ես զգում եմ, որ դու իմ վրայից մի ծանր բեռ վերցրիր։ Թեև դու ինձ հավատացնում

էիր, թե նա ներել է ինձ, բայց, գիտե՞ս... ես հանգիստ չէի։ Ինչ-որ բան շարունակ կրծում էր ինձ... Սիրելի՛ Անդրեյ, որքա՞ն շնորհակալ եմ քեզնից։

Նա այնպես ուրախացավ, այնպես էր վեր-վեր թռչում իր բազմոցի վրա, այնպես աշխուժացել էր, որ Շտոլցը հրճվում էր նրանով և մինչև իսկ զգացված էր։

— Որքա՞ն բարի ես, Իլյա՛,— ասաց նա։— Քո սիրտն արժանի՞ էր նրան։ Ես-ամեն ինչ կպատմեմ նրան։

— Ո՛չ, ո՛չ, մի՛ պատմի,— ընդհատեց Օբլոմովը։— Նա ինձ անզգա մարդ կհամարի, որ ես ուրախությամբ լսեցի նրա ամուսնության մասին։

— Իսկ ուրախությունը մի՞թե զգացմունք չէ, և այն էլ դեռ առանց եսասիրության։ Դու ուրախանում ես միայն նրա բախտավորության համար։

— Ճի՞շտ է, ճի՞շտ է,— ընդհատեց Օբլոմովը։— Աստված գիտե, թե ինչեր եմ դուրս տալիս... Իսկ ո՞վ է, ո՞վ է այն երջանիկը։ Ես չեմ էլ հարցնում։

— Ո՞վ,— կրկնեց Շտոլցը։— Ինչպե՞ս գլխի չես ընկնում, Իլյա՛։

Օբլոմովը հանկարծ իր բաբեկամին հառեց իր անշարժ հայացքը. նրա դիմագծերը մի բոպե սառեցին և կարմրությունը թռավ դեմքից։

— Դո՞... չես արդյոք,— հանկարծ հարցրեց նա։

— Նորի՞ց վախեցար։ Ինչի՞ց,— ծիծաղելով ասաց Շտոլցը։

— Կատակ մի՛ անի, Անդրե՛յ, ճշմարիտն ասա,— հուզմունքով ասում էր Օբլոմովը։

— Աստված վկա՝ կատակ չեմ անում։ Երկրորդ տարին է՝ ես ամուսնացած եմ Օլգայի հետ։

Կամաց-կամաց երկյուղն անհետացավ Օբլոմովի դեմքից՝ իր տեղը զիջելով խաղաղ մտախոհությանը. նա աչքերը դեռ չէր բարձրացնում, բայց նրա մտախոհությունը մի բոպե հետո արդեն լի էր անդորր ու խորին ուրախությամբ, և երբ նա ղանդաղորեն նայեց Շտոլցին, նրա հայացքի մեջ արդեն հուզմունք ու արցունք կար։

— Սիրելի՛ Անդրեյ,— արտասանեց Օբլոմովը՝ գրկելով նրան։— Սիրելի՛ Օլգա... Սեռգեևնա,— ավելացրեց հետո՝

զոպելով հրճվանքը։— Ձեզ օրհնել է աստված ի՞նքը։ Աստվա՜ծ իմ։ Որքա՜ն երջանիկ եմ ես։ Դե ասա՛ նրան...

— Կասեմ, որ ուրիշ տեսակ Օբլոմով ես չեմ ճանաչում,— ընդհատեց նրան խորապես սրտաշարժված Շտոլցը։

— Ո՛չ, ասա՛, հիշեցրո՛ւ, որ ես հանդիպեցի նրան նրա համար, որպեսզի ճանապարհ դուրս բերեմ և որ ես օրհնո՛ւմ եմ այդ հանդիպումը, օրհնո՛ւմ եմ նրան նաև նոր ուղու վրա։ Ի՞նչ կլիներ, եթե ուրիշը...— սարսափով ավելացրեց նա։— Իսկ այժմ,— ուրախ-ուրախ եզրափակեց նա,— ես չեմ ամաչում իմ դերից, չեմ զղջում։ Ծանրությունն ընկավ հոգուս վրայից. պարզ է հիմա և ես երջանիկ եմ։ Աստվա՜ծ, շնորհակա՛լ եմ քեզնից։

Նա քիչ էր մնում նորից վեր-վեր թռչեր բազմոցի վրա հուզմունքից. մեկ արտասվում էր, մեկ ծիծաղում։

— Ջախա՜ր, ճաշի համար շամպայն կբերես,— գոչեց նա, մոռանալով, որ ոչ մի կոպեկ փող չունի։

— Ամե՜ն ինչ կասեմ Օլգային, ամե՜ն ինչ,— ասում էր Շտոլցը։— Ջուր չէ, որ նա քեզ չի կարողանում մոռանալ։ Ո՛չ, դու արժանի էիր նրան. քո սիրտը ջրհորի նման խորն է։

Ջախարի գլուխը երևաց նախասենյակից։

— Համեցե՛ք այստեղ,— ասում էր նա՝ աչքով անելով բարինին։

— Ի՞նչ կա,— անհամբերությամբ հարցրեց Օբլոմովը։— Դո՛ւրս գնա։

— Փո՛ղ տվեք,— շշնջում էր Ջախարը։

Օբլոմովը հանկարծ լռեց։

— Դե լավ, պետք չէ,— շշնջաց նա դռան միջից։— Ասա՛, որ մոռացել ես, չես հասցրել։ Գնա՛... Ո՛չ, այստեղ արի,— ասաց նա բարձրաձայն։— Նորություն գիտե՞ս, Ջախար։ Շնորհավորի՛ր, Անդրեյ Իվանիչն ամուսնացել է։

— Ա՜խ, տեր իմ։ Այս ուրախությո՞ւնն էլ արժանացրեց աստված։ Շնորհավորում ենք, տեր իմ, Անդրեյ Իվանիչ, աստված երկար կյանք տա ձեզ, շատ զավակներ ունենաք։ Ա՜խ, տեր աստված, այ քեզ ուրախությո՞ւն։

Ջախարը գլուխ էր տալիս, ժպտում էր, խզզում էր, խրոպոտ ձայնով խոսում։ Շտոլցը մի ասիգնացիա հանեց և տվեց նրան։

— Ա՜ռ և սերթուկ գնիր քեզ համար,— ասաց նա,— նայիր, կարծես մուրացկան լինես։

— Ո՞ւմ հետ, տեր իմ,— հարցրեց Ջախարը՝ որսալով Շտոլցի ձեռքերը։

— Օլգա Սերգեևնայի հետ, հիշո՞ւմ ես,— ասաց Օբլոմովը։

— Իլյինսկայա օրիորդի հե՞տ։ Տե՜ր աստված։ Ի՞նչ լավ օրիորդ է։ Տեղն էր, որ ինձ, քավթառ շանս, այն ժամանակ նախատում էր Իլյա Իլյիչը։ Մեղավոր եմ, ներողություն, ամեն ինչ ձեզ վրա էի շուռ տալիս։ Այն ժամանակ էլ Իլյինսկայաների սպասավորներին ե՞ս պատմեցի և ոչ թե Նիկիտան։ Իսկապես որ զրպարտության նման մի բան դուրս եկավ։ Ա՜խ, աստված իմ, ա՜խ, աստված իմ...— կրկնում էր նա՝ գնալով նախասենյակիը։

— Օլգան քեզ գյուղ է հրավիրում, քո սերը սառել է։ վերանգավոր չէ, չես խանդի։ Գնանք։

Օբլոմովը հառաչեց։

— Ո՛չ, Անդրե՛յ,— ասաց նա,— ո՛չ սիրուց եմ վախենում և ո՛չ էլ խանդից, բայց, այնուամենայնիվ, ձեզ մոտ չեմ գա։

— Հապա էլ ինչի՞ց ես վախենում։

— Վախենում եմ նախանձեմ. ձեր երջանկությունն ինձ համար հայելի կլինի, որի մեջ ես շարունակ կտեսնեմ իմ դարն ու մեռցրած կյանքը. իսկ չէ՞ որ ես այլևս ուրիշ կերպ չեմ ապրի, չեմ կարող ապրել։

— Բավակա՞ն է, սիրելի՛ Իլյա։ Ակամայից կսկսես այնպես ապրել, ինչպես ապրում են շուրջդ։ Հաշիվներ կանեն, անտեսություն կվարես, կկարդաս, երաժշտություն կլսես։ Ինչպե՞ս մշակվել է հիմա նրա ձայնը։ Հիշո՞ւմ ես Casta diva-ն։

Օբլոմովը ձեռքերը թափահարեց. որ նա չհիշեցնի։

— Ուրեմն՝ գնանք,— պնդում էր Շտոլցը։— Այդ է Օլգայի կամքը. նա ձեռք չի քաշի։ Ես կհոգնեմ, իսկ նա ոչ։ Դա այնպիսի մի կրակ է, այնպիսի կյանք, որ հաճախ նույնիսկ ինձ էլ է բաժին հասնում։ Նորից եփ կգա մեջդ անցյալը։ Կմտաբերես զբոսայգին, յասամանը և կշարժվես...

— Ո՛չ, Անդրեյ, ո՛չ, մի՛ հիշեցնի, մի՛ շարժի, ի սեր Աստծու,— ընդհատեց նրան Օբլոմովը լրջությամբ։— Դա ինձ ցավ է պատճառում և ոչ թե ուրախություն։ Հիշողությունները

կա՞մ մեծագույն բանաստեղծություն են, երբ նրանք հիշողություններ են կենդանի երջանկության մասին, կա՞մ այրող ցավ, երբ նրանք շորացած վերքերին են դիպչում... Ուրիշ բանի մասին խոսենք։ Հա՛, ես քեզ շնորհակալություն չեմ հայտնել իմ գործերի, գյուղի վերաբերյալ քո ունեցած հոգացողությունների մասին։ Բարեկա՞մս, Ես չեմ կարող, ուժ չունեմ. շնորհակալությունը փնտրիր քո սեփական սրտում, քո երջանկության մեջ. Օլգա... Սերգեևնայի մեջ, իսկ ես... ես... չե՞մ կարող։ Ների՛ր, որ ես ինքս մինչև այժմ քեզ չեմ ազատել հոգսերից։ Բայց ա՛յ, շուտով գարուն է գալիս, ես անպայման կուղևորվեմ Օբլոմովկա...

— Իսկ գիտե՞ս, թե ինչ է կատարվում Օբլոմովկայում։ Դու չե՞ս ճանաչի Օբլոմովկան,— ասաց Շտոլցը։— Ես քեզ չեմ գրել, որովհետև դու նամակներին չես պատասխանում։ Կամուրջը կառուցված է, տունը դեռ անցյալ ամառ շինված է և ծածկված։ Միայն ներքին սարք ու զարդարանքի մասին ինքդ հոգա, քո ճաշակով, դա հանձն չեմ առնի։ Տնտեսավարում է նոր կառավարիչը, իմ մարդը։ Տեղեկագրի մեջ ծախսերը տեսա՞ր։

Օբլոմովը լուռ էր։

— Դու չե՞ս կարդացել,— հարցրեց Շտոլցը՝ նայելով նրան։— Որտե՞ղ է այն։

— Կաց, ճաշից հետո կգտնեմ, պետք է Զախարին հարցնել...

— Ա՞խ, Իլյա՛, Իլյա՛։ Չգիտես ծիծաղես, թե լաց լինես։

— Ճաշից հետո կգտնենք։ Արի ճաշե՛նք։

Շտոլցը կնճռոտվեց սեղան նստելով։ Նա հիշեց Եղիսաբեթի մարգարեի օրը. ոստրեներ, անանասներ, կոցարներ. իսկ հիմա տեսնում էր հաստ սփռոց, քացախի և յուղի ամաններն առանց խցանների՝ թղթի կտորներով ծածկված. աթոռների վրա դրված էր մի-մի կտոր սև հաց, կոտրած պոչերով պատառաքաղներ։ Օբլոմովին ձկնապուր տվին, իսկ Շտոլցին ձավարով ապուր և խաշած ճուտ, հետո եկավ կոշտ լեզուն, ապա՝ ոչխարի միս։ Մեջտեղ բերին կարմիր գինի։ Շտոլցը կես բաժակ լցրեց, փորձեց, բաժակը դրեց սեղանի վրա և այլևս չփորձեց։ Իլյա Իլյիչը իրար ետևից երկու բաժակ հա-

զարշի օղի խմեց և ագահությամբ վրա պրծավ ոչխարի մսին։

— Գինին բոլորովի՞ն անպետք է,— ասաց Շտոլցը։

— Ների՛ր, շտապելու պատճառով այն կողմը չեն կարողացել գնալ,— ասաց Օբլոմովը։— Ա՛յ, չե՞ս ուզում հաղարջի օղի։ Շատ լավն է, Անդրեյ, փորձի՛ր։

Նա մի գավաթ էլ լցրեց և խմեց։

Շտոլցը զարմանքով նրան նայեց, բայց լռեց։

— Ագաֆյա Մատվեևնան ինքն է պատրաստում օղին. շա՞տ լավ կին է,— ասաց Օբլոմովը՝ մի քիչ հարբելով։— Ճիշտն ասած ես չգիտեմ, թե ինչպես պետք է գյուղում ապրեմ առանց նրա. այդպիսի տանտիրուհի չես ճարի։

Շտոլցը լսում էր նրան՝ հոնքերը մի քիչ կնճռոտելով։

— Դու կարծում ես՝ ո՞վ է այս բոլորը պատրաստում։ Անիսյա՞ն։ Ո՛չ,— շարունակում էր Օբլոմովը։— Անիսյան ճաներին է նայում, հետո կաղամբը ջրում բանջարանոցում, մեկ էլ՝ հատակները լվանում. իսկ այս բոլորն Ագաֆյա Մատվեևնան է անում։

Շտոլցը ո՛չ ոչխարի միս կերավ, ո՛չ վարենիկներ, պատառաքաղը ցած դրեց և նայում էր, թե ինչ ախորժակով է այդ բոլորն ուտում Օբլոմովը։

— Հիմա դու ինձ վրա այլևս թարս հագած շապիկ չես տեսնի,— ասում էր այնուհետև Օբլոմովը, ախորժակով ծծելով ոսկորը,— նա նայում է ամեն բանի, ամեն ինչ տեսնում է, ոչ մի չկարկատած գուլպա չունեմ— և այդ ամենը նա ինքն է անում։ Իսկ ի՞նչ սուրճ է եփում։ Ա՛յ, ճաշից հետո կհյուրասիրեմ քեզ։

Շտոլցը լսում էր լուռ, մտահոգված դեմքով։

— Այժմ նրա եղբայրը բնակարանից տեղափոխվել է, խելքին փչել է ամուսնանալ, այդ պատճառով էլ, գիտե՞ս, տընտեսությունն այլևս առաջվա նման մեծ չէ։ Իսկ մի ժամանակ ամեն ինչ եռում էր նրա ձեռքերի մեջ։ Առավոտից երեկո այսուայն կողմ էր թռչում՝ թե՛ շուկա և թե՛ Գոստինի դվոր... Գիտե՞ս, ես քեզ կասեմ,— եզրափակեց Օբլոմովը՝ դժվարությամբ շարժելով վեզուն,— երկու-երեք հազար ունենայի, քեզ լեզվով ու ոչխարի մսով չէի հյուրասիրի. ամբողջ մի թառափ կդնեի մեջտեղ, կարմրախայտ, առաջին տեսակի

սուկի։ Իսկ Ագաֆյա Մատվեևնան առանց խոհարարի հրաշքնե՞ր կգործեր, այո՛։

Նա մի գավաթ էլ օղի խմեց։

— Դեհ խմի՛ր, Անդրեյ, իսկապես խմի՛ր, շա՞տ լավ օղի է։ Օլգա Սերգեևնան քեզ համար այդպիսին չի՞ պատրաստի,— ասում էր նա կմկմալով։— Նա կերգի, Casta diva, բայց այդպիսի օղի պատրաստել չի՞ կարողանա։ Ձեռքերով ու սունկերով այդպիսի կարկանդա՞կ էլ չի պատրաստի։ Այդպես թքում էին մի ժամանակ Օբլոմովկայում, մեկ էլ ահա այստեղ։ Եվ մի բան որ լավ է, այն է, որ խոհարարը չի պատրաստում. նա ո՞վ գիտի ինչ ձեռքերով է սարքում կարկանդակը, իսկ Ագաֆյա Մատվեևնան ինքը մաքրությո՞ւնն է։

Շտոլցը լսում էր ուշադրությամբ, ականջները սրելով։

— Իսկ նրա ձեռքերն էլ սպիտակ էին,— շարունակում էր օղուց արդեն բավական շաղված Օբլոմովը,— մե՞ղք չէր համբուրելը։ Հիմա կոշտացել են, որովհետև ամեն բան ինքն է անում։ Ի՞նքն է օսլայում իմ շապիկները,— զգացմունքով, գրեթե արտասվելով արտասանեց Օբլոմովը։— Աստված վկա հիշտ է, ես ինքս եմ տեսել։ Ուրիշների նույնիսկ կինն այդպես չի նայում, աստվա՞ծ վկա։ Շա՞տ լավ կնիկ է Ագաֆյա Մատվեևնան։ Է՞հ, Անդրեյ։ Արի փոխադրվիր այստեղ Օլգա Սերգեևնայի հետ, այստեղ ամառանոց վաքձիր. ի՞նչ լավ կապրեինք։ Գուրակում թեյ կխմեինք։ Եղիա մարգարեի ուրբաթ օրը կգնայինք Գոլտխովին Զավոդի, մեր ձուկից կգար սալը պարենով ու ինքնաեռով։ Այնտեղ կպառկեինք խոտերի վրա, գորգերի վրա։ Ագաֆյա Մատվեևնան Օլգա Սերգեևնային էլ կսովորեցներ տնտեսություն անել։ Ճիշտ ոչ կբսովորեցներ։ Միայն հիմա գործերը վատ են գնում. եղբայրը տեղափոխվել է, իսկ եթե մեզ երեք-չորս հազար տային, ես քեզ համար այստեղ այնպիսի հնդկահավեր կշարեի...

— Դու ինձնից հինգ հազա՞ր ես ստանում,— հանկարծ ասաց Շտոլցը։— Ի՞նչ ես անում այդ փողերը։

— Իսկ պա՞տքս,— հանկարծ դուրս թռավ Օբլոմովի բերանից։

Շտոլցը վեր թռավ տեղից։

— Պա՞տք,— կրկնեց նա.— ինչ պարտք։

Եվ նա, ահեղ ուսուցչի նման, նայում էր իրենից թաքնվող երեխային։

Օբլոմովը հանկարծ լռեց։ Շտոլցը նստեց նրա մոտ բազմոցի վրա։

— Ո՞ւմ ես պարտք,— հարցրեց նա։

Օբլոմովը մի փոքր զգաստացավ և ուշքը վրան եկավ։

— Ոչ ոքի, ես սուտ ասացի,— ասաց նա։

— Ո՛չ, ա՛յ, դու հիմա ես սուտ ասում, այն էլ՝ անշնորհք լեռպով։ Ի՞նչ կա։ Ի՞նչ է պատահել քեզ, Իլյա։ Ա՜, ահա թե ինչ է նշանակում ոչխարի մի՞սը, թթու գինի՞։ Դու փող չունե՞ս։ Որտե՞ղ ես ծախսում փողերդ։

— Իսկապես պարտք եմ... մի քիչ, տանտիրուհուն՞ պարենամթերքների համար...— ասում էր Օբլոմովը։

— Ոչխարի մսի ու լեզվի համա՞ր։ Իլյա՛, ասա՝ ի՞նչ է կատարվում քեզ մոտ։ Այս ի՞նչ պատմություն է. եղբայրը տեղափոխվել է, տնտեսությունը վատ է ընթանում... Այստեղ ինչ-որ վատ բան կա։ Որքա՞ն ես պարտ։

— Տասը հազար ռուբլի, պարտագրով...— շշնջաց Օբլոմովը։

Շտոլցը նորից վեր թռավ տեղից և նստեց։

— Տասը հազա՞ր։ Տանտիրուհո՞ւն։ Պարենամթերքների համա՞ր,— կրկնեց նա սարսափով։

— Այո՛, շատ ենք վերցրել. ես շատ առատ էի ապրում... Հիշո՞ւմ ես՝ անանասներն ու դեղձերը... այ՛, դրա համար էլ պարտքերի մեջ եմ ընկել...— մրթմրթում էր Օբլոմովը։— Է՞հ, ի՞նչ խոսենք դրա մասին։

Շտոլցը նրան չէր պատասխանում։ Նա ինքն իրեն մտածում էր. «Եղբայրը փոխադրվել է, տնտեսությունն սկսել է վատ ընթանալ, և իսկապես էլ այդպես է. ամեն ինչից երևում է մերկությունը, աղքատությունը, կեղտոտությունը։ Իսկ ի՞նչ կին է այդ տանտիրուհին։ Օբլոմովը գովո՞ւմ է նրան։ Նա խնամում է Օբլոմովին. սա նրա մասին խոսում է ջերմությամբ...»

Հանկարծ Շտոլցը դեմքը փոխեց, կռահելով ճշմարտությունը։ Նրա վրայով սարսուռ անցավ։

— Իլյա՛,— հարցրեց նա։— Այդ կինը... քո ի՞նչն է...

Բայց Օբլոմովը դլուխը դրեց սեղանին ու նիրհեց։

«Տանտիրուհին նրան կողոպտում է, պոկում նրանից ամեն ինչ... դա մի ամենօրյա պատմություն է, իսկ ես մինչև այժմ գլխի չեմ ընկել»,— մտածում էր նա։

Շտոլցը վեր կացավ և արագ բաց արեց տանտիրուհու սենյակի դուռը, այնպես որ սա, տեսնելով նրան, վախից ձեռքից ցած գցեց գդալը, որով խառնում էր սուրճը։

— Ես ձեզ հետ խոսելիք ունեմ,— ասաց նա քաղաքավարի։

— Համեցե՛ք հյուրասենյակ, ես իսկույն կգամ,— պատասխանեց նա քաշվելով։

Եվ, գլխաշորը գցելով պարանոցին, Շտոլցի ետևից մտավ հյուրասենյակ ու նստեց բազմոցի ծայրին։ Նա այլևս վրան շալ չուներ և աշխատում էր ձեռքերը պահել գլխաշորի տակ։

— Իլյա Իլյիչը ձեզ պարտագիր տվե՞լ է,— հարցրեց նա։

— Ո՛չ,— զարմանքի բուռ հայացքով պատասխանեց նա,— նա ինձ ոչ մի գիր չի տվել։

— Ինչպե՞ս թե ոչ մի։

— Ես ոչ մի գիր չե՞մ տեսել,— կրկնում էր նա նույն բուռ զարմանքով...

— Պարտագի՞ր,— կրկնեց Շտոլցը։

Նա մի քիչ մտածեց։

— Ավելի լավ կլիներ՝ խոսեիք եղբորս հետ,— ասաց նա,— իսկ ես ոչ մի գիր չեմ տեսել։

«Ի՞նչ է, հիմա՞ր է սա, թե խաբեբայի մեկն է»,— անցավ Շտոլցի մտքով։

— Բայց նա ձեզ պա՞րտք է,— հարցրեց Շտոլցը։

Տանտիրուհին նայեց նրան բուռ հայացքով, հետո նրա դեմքը հանկարծ իմաստ ստացավ, մինչև իսկ տագնապ արտահայտեց։ Նա հիշեց գրավ դրած մարգարիտների, արծաթեղենի, սալոպի մասին և մտածեց, թե Շտոլցն այդ պարտքն է ակնարկում. միայն ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպես են իմացել դրա մասին, նա ինքն այդ գաղտնիքի մասին ոչ մի խոսք չի ասել, ո՛չ միայն Օբլոմովին, այլ նույնիսկ Անիսյային, որին հաշիվ էր տալիս յուրաքանչյուր կոպեկի համար։

— Որքա՞ն է նա պարտք ձեզ,— անհանգստությամբ հարցնում էր Շտոլցը։

— Ոչի՞նչ պարտք չէ։ Ո՛չ մի կոպեկ։

«Ինձանից ծածկում է, ամաչում է, ագա՜հ աղարած, վշխտուհի՜»— մտածում էր նա։ «Բայց ես կիմանամ-կգտնեմ»։

— Իսկ տասը հազա՞րը,— ասաց Շտոլցը։

— Ի՞նչ տասը հազար,— տագնապալից զարմանքով հարցրեց նա։

— Իլյա Իլյիչը ձեզ պարտագրով պարտք է տասը հազար ռուբլի, այո՞ թե ոչ,— հարցրեց նա։

— Նա ոչինչ էլ պարտք չէ։ Պաս շաբթին մսագործին պարտ էր տասներկու մանեթ ու կես, բայց երկու շաբաթ առաջ վճարել է. սերի համար կաթնավաճառուհուն նմանապես վճարված է. նա ոչինչ պարտք չէ։

— Մի՞թե դուք փաստաթուղթ չունեք նրա վրա։

Տանտիրուհին բուռ հայացք գցեց նրա վրա։

— Ավելի լավ կլիներ՝ եղբորս հետ խոսեք,— պատասխանեց նա,— նա ապրում է մի փողոց դենը, Զամիկալովի տանը. ահա այնտեղ, տունը նկուղ էլ ունի։

— Ո՛չ, թույլ տվեք ձեզ հետ խոսելու,— ասաց Շտոլցը վճռաբար։— Իլյա Իլյիչը իրեն պարտապան է համարում ձեր առաջ և ոչ թե ձեր եղբոր...

— Նա ինձ պարտք չէ,— պատասխանում էր տանտիրուհին,— իսկ որ ես գրավ եմ դրել արծաթեղենը, մալգալիտները և մուշտակեղենը, այդ ես ինձ համար եմ գրավ դրել։ Մաշայի և ինձ համար ոտնաման եմ գնել, Վանյուշայի համար շապկացուներ, մնացածն էլ կանաչեղենի խանութներին եմ տվել։ Իսկ Իլյա Իլյիչի վրա ոչ մի կոպեկ էլ չի ծախսվել։

Շտոլցը նայում էր նրան, լսում էր և թափանցում նրա խոսքերի մեջ։ Թվում է, թե միայն նա էր մոտիկ Ագաֆյա Մատվեևնայի գաղտնիքը գուշակելու, և քամահրանքի, գրեթե արհամարհանքի այն հայացքը, որ նա հետը խոսելիս գցում էր նրա վրա, ակամայից փոխվեց հետաքրքրության, մինչև անգամ կարեկցական հայացքի։

Մարգարիտների, արծաթեղենի գրավադրման մեջ նա կիսով չափ, աղոտ կերպով կարդաց զոհաբերությունների գաղտնիքը և չէր կարողանում միայն վճռել, դրանք մաքուր անձնվիրությունից էին բխում, թե՞ որևէ ապագա բարիքների ակնկալությունից։

Նա չգիտեր՝ տխրի՞ թե ուրախանա Իլյայի համար։ Բացահայտորեն պարզվեց, որ Օբլոմովը նրան պարտք չէ, որ այդ պարտքը նրա եղբոր կողմից կատարված ինչ-որ խաբեբայական արարք է, բայց դրա փոխարեն բացում էր շատ ուրիշ բան... Ի՞նչ են նշանակում արծաթեղենի, մարգարիտների այդ գրավադրումները։

— Ուրեմն, դուք պահանջ չունե՞ք Իլյա Իլյիչից,— հարցրեց նա։

— Նեղություն կրեք եղբորս հետ խոսելու,— պատասխանում էր նա միապաղաղ,— հիմա նա տանը կլինի։

— Դուք ասում եք, որ Իլյա Իլյիչը ձեզ պարտք չ

— Ո՛չ մի կոպեկ, աստված վկա՝ ճիշտ եմ ասում,— երդվեց նա՝ նայելով սրբապատկերին և խաչակնքելով երեսը։

— Դուք դա կհաստատե՞ք վկաների ներկայությամբ։

— Բոլորի ներկայությամբ, թեկուզ խոստովանությա՞ն ժամանակ։ Իսկ որ ես գրավ եմ դրել մալգալիտներն ու արծաթեղենը, այդ իմ ծախքերի համար եմ արել...

— Շա՛տ լավ,— ընդհատեց նրան Շտոլցը։— Վաղը ես կգամ ձեզ մոտ իմ երկու ծանոթների հետ և դուք չե՞ք հրաժարվի միևնույնն ասել նրանց ներկայությամբ։

— Ավելի լավ լիներ՝ դուք եղբորս հետ խոսեիք,— կրկնում էր նա,— թե չէ՝ ես այնպես հաղնված էլ չեմ... շարունակ խոհանոցում եմ լինում, լավ չէ, որ օտարները տեսնեն, լավ չեն խոսի իմ մասին։

— Ոչինչ, ոչինչ. իսկ ձեր եղբոր հետ ես հենց վաղը կտեսնվեմ, հենց որ ստորագրեք թուղթը...

— Գրելը ես վաղուց մոռացել եմ։

— Այստեղ շատ բան էլ չկա գրելու, ընդամենը երկու տող։

— Ո՛չ, ազատեք դրանից. ավելի լավ է՝ ա՛յ, Վանյուշան գրի. նա մաքուր է գրում...

— Ո՛չ, դուք մի՛ հրաժարվեք,— պնդում էր նա,— եթե դուք թուղթը չստորագրեք, ապա դա նշանակում է, որ Իլյա Իլյիչը ձեզ տասը հազար ռուբլի պարտք է։

— Ո՛չ, նա ոչինչ պարտք չէ, ո՛չ մի կոպեկ,— կրկնում էր նա,— աստվա՛ծ վկա։

— Այդ դեպքում դուք պետք է թուղթն ստորագրեք։ Մենք բարով, մինչև վաղը։

— Վաղը լավ կլինի դուք եղբորս մոտ մտնեք...— ասում էր նա, ճանապարհ դնելով Շտոլցին,— ա՛յ այնտեղ, անկյունում, մի փողոց դենը։

— Ո՛չ և ձեզ էլ խնդրում եմ, մինչև իմ խոսելը նրան ոչինչ չասեք, թե չէ Իլյա Իլյիչին շատ անախորժ կլինի...

— Լավ, ես նրան ոչի՛նչ չեմ ասի,— ասաց տանտիրուհին հնազանդ։

VII

Հետևյալ օրը Ագաֆյա Մատվեևնան Շտոլցին վկայական տվեց, որ ինքը ոչ մի դրամական պահանջ չունի Օբլոմովից։ Այդ վկայականով Շտոլցը հանկարծակի կանգնեց տանտիրուհու եղբոր առջև։

Դա մի իսկական կայծակի հարված էր Իվան Մատվեևիչի համար։ Նա հանեց փաստաթուղթը և աջ ձեռքի դողդողացող միջամատով, եղունգը դեպի ներքև բռնած, ցույց տվեց Օբլոմովի ստորագրությունը և մակերի վավերացումը։

— Օրենք է,— ասաց նա,— ես հեռու եմ դրանից, ես պահպանում եմ միմիայն քրոջս շահերը, իսկ թե ինչ փողեր է վերցրել Իլյա Իլյիչը, ինձ հայտնի չէ։

— Ձեր գործը դրանով չի վերջանա,— սպառնաց նրան Շտոլցը հեռանալով։

— Օրինական գործ է, իսկ ես հեռու եմ դրանից,— արդարանում էր Իվան Մատվեևիչը՝ ձեռքերը թաքցնելով թևքերի մեջ։

Հետևյալ օրը նա նոր էր ծառայության վայրը եկել, երբ եկավ գեներալի սուրհանդակը և հայտնեց, որ գեներալը նրան իսկույնևեթ իր մոտ է կանչում։

— Գեներալի մո՞տ,— սարսափով կրկնեց ամբողջ ատյանը։— Ինչի՞ համար։ Ի՞նչ է պատահել։ Որևէ գործ չի՞ պահանջում արդյոք։ Ո՞ր գործը հատկապես։ Շո՞ւտ, շո՞ւտ։ Գործերը կարի՛ր, ցուցակ կազմի՛ր։ Ի՞նչ է պատահել։

Երևկոյան Իվան Մատվեևիչը «պանդոկ» եկավ իրեն բոլորովին կորցրած։ Տարանտևը վաղուց արդեն սպասում էր նրան այնտեղ։

— Ի՞նչ կա, սանահեր,— հարցրեց նա անհամբեր։

— Ի՞նչ— ֆիրապաղազ արտասանեց Իվան Մատվեևիչը։— Իսկ դու ի՞նչ ես կարծում, ի՞նչ։

— Հայհոյեցի՞ն, ինչ է։

— Հայհոյեցի՞ն— տնազ արեց նրան Իվան Մատվեևիչը։— Ավելի լավ էր՝ ծեծեին։ Դո՛ւ էլ մի բարի պտո՛ւզ ես,— կըշտամբեց նա,— չասացիր, թե ի՞նչ գերմանացի է դա։

— Չէ՞ որ քեզ ասացի, որ խորամանկ խաբեբայի մեկն է։

— Ի՞նչ է՝ խորամանկ խաբեբայի մեկը։ Տեսել ենք խորամանկ խաբեբաներ։ Ինչո՞ւ չասացիր, որ նա ուժ ունի։ Նա գեներալի հետ դու-ով է խոսում, ա՛յ, ինչպես ես ու դու։ Եթե իմանայի՛, մի՞թե գործ կբռնեի ալդպիսի մեկի հետ։

— Բայց չէ՞ որ օրինական գործ է,— առարկեց Տարանտևը։

— Օրինակա՞ն գործ է,— նորից տնազ արեց նրան Մուխոյարովը։— Ապա գնա, այնտեղ ասա. մարդու լեզուն կբռնչում է կոկորդից։ Գիտե՞ս ինչ հարցրեց ինձ գեներալը։

— Ի՞նչ,— հետաքրքրությամբ հարցրեց Տարանտևը։

— «Ճի՞շտ է, որ դուք, մի ինչ-որ սրիկայի հետ, հարբեցրել եք կալվածատեր Օբլոմովին և ստիպել, որ նա պարտագիր ստորագրի ձեր քրոջ անունով»։

— Հենց այդպես էլ ասա՞ց՝ «սրիկայի հետ»— հարցրեց Տարանտևը։

— Այո՛, այդպես էլ ասաց...

— Իսկ ո՞վ է այդ սրիկան,— հարցրեց նորից Տարանտևը։ Սանահերը նայեց նրան։

— Իբրև թե չգիտե՞ս,— մաղձոտ ասաց նա։— Չլինի՞ թե դու չես։

— Ի՞նձ ինչպես խառնեցիք։

— Շնորհակալություն հայտնիր գերմանացուն, մեկ էլ քո հայրենակցին։ Այդ գերմանացին է ամեն ինչ հոտոտել, հարց ու փորձով իմացել...

— Սանահե՛ր, դու էլ մի ուրիշին ցույց տայիր, իսկ իմ մասին ասեիր, որ ես այստեղ չե՞մ եղել։

— Ա՛յ քեզ բան. ի՞նչ սուրբն ես,— ասաց սանահերը։

— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր, երբ գեներալը հարցրեց՝ «Ճի՞շտ է, որ դուք այնտեղ, մի ինչ-որ սրիկայի հետ...» Ա՛յ, հենց այդտեղ պետք էր խաբել նրան։

— Խաբե՞լ։ Կխաբես, ինչպե՞ս չէ։ Աչքերը մի տեսակ կանաչ էին դարձել։ Ջանք գործ դրի, ճիգ թափեցի, ուզում էի ասել. «Ճիշտ չէ, իբր, զրպարտություն է, Ձերդ գերազանցություն, ոչ մի Օբլոմովի երես էլ չեմ տեսել, այդ բոլորը Տարանտևն է...», բայց բառերը բերանիցս դուրս չեկան, միայն ընկա նրա ոտքերը։

— Իսկ նրանք ի՞նչ, գո՞րծ են ուզում սկսել, ինչ է,— խուլ ձայնով հարցրեց Տարանտևը։— Չէ՞ որ ես հեռու եմ դրանից, ա՛յ, դո՛ւ, սանահեր...

— Հեռո՞ւ ես։ Դո՞ւ ես հեռու։ Ո՛չ, քավոր, եթե արդեն պետք է կախվել, ապա դու պետք է առաջինը լինես. ո՞վ էր համոզում Օբլոմովին խմել։ Ո՞վ էր ամոթանք տալիս, ապառնում...

— Սխալ դու սովորեցրիր,— ասում էր Տարանտևը։

— Իսկ դու անշափահա՞ս ես, ի՞նչ է։ Ես ոչ մի բան չգիտեմ, ոչ մի բանից տեղեկություն չունեմ։

— Դա անխիղճ բան է, սանահե՛ր։ Ուրքա՞ն բաժին հասավ քեզ իմ շնորհիվ, իսկ ինձ միայն երեք հարյուր ռուբլի ընկավ...

— Ի՞նչ է, ամեն ինչ մենակ ինձ վրա՞ պետք է վերցնեմ։ Հլա տես՝ ի՞նչ ճարպիկն է։ Ո՛չ, ես ոչինչ էլ չգիտեմ,— ասում էր նա,— իսկ քույրս ինձ խնդրեց, իբրև կին՝ գործից անտեղյակ լինելով, պարտագիրը վավերացնել մակլերի մոտ, ահա բոլորը։ Դու և Զատյորտին եք վկա եղել, դուք էլ պատասխանատո՞ւ եք։

— Դու քրոջդ մի լավ ահ տայիր. ինչպե՞ս համարձակվեց եղբոր դեմ գնալ,— ասաց Տարանտևը։

— Քույրս հիմար է. ի՞նչ կարող ես անել նրան։

— Իսկ նա ի՞նչ է անում։

— Ի՞նչ։ Լաց է լինում և իր ասածն է պնդում. «Իլյա Իլյիչը պարտք չէ», ասում է, ու էլ ուրիշ ոչինչ, և ինքը նրան ոչ մի փող էլ չի տվել։

— Բայց դրա փոխարեն դու պարտագիր ունես նրա վրա,— ասաց Տարանտևը,— դու քոնը չես կորցնի...

Մուխոյարովը գրպանից հանեց քրոջ պարտագիրը, պատառ-պատառ արեց և տվեց Տարանտևին։

— Ա՛ռ, նվիրում եմ քեզ, չե՞ս ուզում արդյոք,— ավելացրեց նա։— Ի՞նչ կարելի է վերցնել քրոջից։ Չլինի՞ թե տունը՝ փոքրիկ բանջարանոցով։ Հազար ռուբլի էլ չեն տա. ամբողջը քանդվում է։ Հետո՝ ես անխի՞ղճ եմ, ինչ է։ Պետք է նրան երեխաների հետ միասին փողո՞ց նետեմ մուրացկանություն անելու։

— Ուրեմն, քննությո՞ւն է սկսվելու,— վախվորած հարցրեց Տարանտևը։— Ա՛յ, այստեղ է հարկավոր, սանահեր, էժան պրծնել. մի կերպ պետք է օգնես, ախպե՛ր։

— Ի՞նչ քննություն։ Ոչ մի քննություն էլ չի լինի։ Գեներալն ուզում էր քաղաքից արտաքսելով սպառնալ, բայց գերմանացին միջամտեց, չի ուզում Օբլոմովին խայտառակել։

— Ի՞նչ ես ասում, սանահե՛ր, կարծես մի սար ընկավ ուսերիցս։ Խմե՛նք,— ասաց Տարանտևը։

— Խմե՞նք։ Ի՞նչ եկամուտից։ Գուցե քո՞, հը՞։

— Իսկ քո եկամուտնե՞րը։ Այսօր երևի, մի յոթ մանեթ։ Ձեռք ես գցել։

— Ի՞նչ։ Մնաք բարով, եկամուտներ. թե ի՞նչ ասաց գեներալը, ես դեռ չեմ վերջացրել։

— Իսկ ի՞նչ ասաց,— հանկարծ նորից վախենալով հարցրեց Տարանտևը։

— Հրամայեց հրաժարական տալ։

— Ի՞նչ ես ասում, սանահե՛ր,— ասաց Տարանտևը՝ աչքերը չռելով նրա վրա։— Որ այդպես է,— եզրափակեց նա կատաղությամբ,— ես հիմա այնպես կհայհոյեմ հայրենակցիս, որ լսվա՞ծ չլինի։

— Դու էլ հենց միայն հայհոյե՞լ գիտես։

— Ո՛չ, պիտի հայհոյեմ, դու ինչ ուզում ես՝ ասա,— ասում էր Տարանտևը։— Սակայն, ճիշտ որ, ավելի լավ է՝ սպասեմ. ահա ինչ մտածեցի. հապա մի լսիր, սանահե՛ր։

— Էլի ի՞նչ կա,— կրկնեց Իվան Մատեևիչը մտածմունքի մեջ ընկած։

— Այնտեղ կարելի է լավ գործ անել։ Ափսոս միայն, որ դու բնակարանից տեղափոխվել ես...

— Ի՞նչ կա որ։

— Ի՞նչ,— ասում էր նա՝ նայելով Իվան Մատվեևիչին։— Լրտեսել Օբլոմովին ու քրոջդ, թե ի՞նչ կարկանդակներ են նրանք թխում այնտեղ, և ապա... վկանե՞ր։ Այդտեղ գերմանացին էլ ոչինչ չի կարող անել։ Իսկ դու հիմա ազատ մարդ ես. քննություն սկսել կտաս. օրինակա՞ն գործ է։ Անշուշտ գերմանացին էլ կվախենա, կուզենա հաշտվել։

— Եվ ի՞նչ, իսկապես որ կարելի է,— պատասխանեց Մուխոյարովը մտածկոտ։— Դու բան հնարելու հիմար չես, բայց գործի մեջ անպետք ես, և Զատյորտին էլ նույնպես։ Հա՛, ես կգտնեմ, սպասի՛ր,— ասում էր նա՝ աշխուժանալով։— Ես նրանց ցո՛ւյց կտամ։ Կուզարկեմ քրոջս խոհանոցը իմ խոհարարությունը. նա կբարեկամանա Անիսյայի հետ, ամեն բան դուրս կքաշի, իսկ այնուհետև... խմե՞նք, քավո՛ր։

— Խմե՞նք,— կրկնեց Տարանտևը։— Իսկ հետո արդեն ես կհայհոյե՞մ հայրենակցիս։

Շտոլցը փորձեց Օբլոմովին իր հետ տանել, բայց սա խնդրեց իրեն թողնել մի ամսով, այնպես խնդրեց, որ Շտոլցը չկարողացավ չխղճալ։ Օբլոմովին այդ ամիսը հարկավոր էր, նրա ասելով, որպեսզի վերջացնի բոլոր հաշիվները, բնակարանը հանձնի և Պետերբուրգում ունեցած գործերն այնպես կարգավորի, որպեսզի այլևս այնտեղ չվերադառնա։ Հետո, հարկավոր է ամեն բան գնել՝ գյուղի տունը սարքավորելու-կահավորելու համար. վերջապես, նա ուզում էր իր համար մի լավ տնտեսուհի գտնել։ Ագաֆյա Մատվեևնայի նման, մինչև անգամ հույսը չէր կտրում նրան էլ համոզելու, որ տունը ծախի և փոխադրվի գյուղ, բարդ ու լայն տնտեսության նրան արժանի ասպարեզը։

— Իդեպ՝ տանտիրուհու մասին,— ընդհատեց նրան Շտոլցը,— ես ուզում էի հարցնել քեզ, Իլյա՛, ի՞նչ հարաբերությունների մեջ ես դու նրա հետ...

Օբլոմովը հանկարծ կարմրեց։

— Ի՞նչ ես ուզում ասել,— հապճեպ հարցրեց նա։

— Դու շատ լավ գիտես,— նկատեց Շտոլցը,— հակառակ դեպքում կարմրելու բան չկար։ Էսի՛ր, Իլյա՛, եթե այս գործում նախազգուշացնելը կարող է որևէ բան անել, ապա ես մեր ամբողջ բարեկամությամբ խնդրում եմ՝ զգույշ եղիր...

— Ի՞նչ բանում։ Աստծո՜ւ սիրուն,— պաշտպանվում էր շփոթված Օբլոմովը։

— Դու նրա մասին այնպես կրակոտ էիր խոսում, որ ես, խակապես, սկսում եմ մտածել, թե դու նրան...

— Սիրո՞ւմ ես, ուզում ես ասել, ի՞նչ է։ Աստծո՜ւ սիրուն,— ընդհատեց Օբլոմովը բռնազբոսիկ ծիծաղով։

— Ուրեմն ավելի ևս վատ, եթե այստեղ չկա ոչ մի բարոյական կայծ, եթե դա միայն...

— Անդրե՛յ։ Մի՞թե դու ինձ անբարոյական մարդ ես ճանաչել։

— Հապա ինչո՞ւ կարմրեցիր։

— Նրա համար, որ դու կարող ես այդպիսի միտք թաքցնել։

Շտոլցը կասկածանքով շարժեց գլուխը։

— Տե՛ս, Իլյա՛, փոսը չընկնես։ Հասարակ կին է, կեղտոտ կենցաղ, խեղդուկ մթնոլորտ, քթամտություն, կոպտություն՝ թո՛ւհ...

Օբլոմովը լուռ էր։

— Դե՛, մնաս բարով.— վերջացրեց Շտոլցը,— ուրեմն՝ ես Ոլգային կասեմ, որ ամառը մենք քեզ կտեսնենք, թե ոչ մեզ մոտ, ապա Օբլոմովկայում։ Միտդ պահիր. Օլգան ձեռք չի՞ քաշի։

— Անպատճառ, անպատճառ,— դրական պատասխան տվեց Օբլոմովը,— մինչև անգամ ավելացրու, որ եթե նա թույլ կտա, ես ձմեռը ձեզ մոտ կանցկացնեմ։

— Ա՜յ թե ուրախություն կպատճառես։

Շտոլցը մեկնեց նույն օրը, իսկ երեկոյան Օբլոմովի մոտ եկավ Տարանտևը։ Նա չկարողացավ համբերել, որ մի լավ շհայհոյի նրան սանահոր պատճառով։ Միայն մի բան հաշվի չէր առել. որ Օբլոմովը, Իլյինսկայաների ընկերության մեջ մոռացել էր նման երևույթները և որ ապատիան ու զիջողականությունը կոպտության ու լպիրշության վերաբերմամբ փոխարինվել էին զզվանքով։ Այդ բանն արդեն վաղուց երևան կգար, և նույնիսկ մասամբ երևան էլ եկավ, երբ Օբլոմովը դեռ ամառանոցում էր ապրում, բայց այն ժամանակվանից սկսած Տարանտևը՝ ավելի հազվադեպ էր այցելում

նրան և այն էլ լինում էր ուրիշների ներկայությամբ, և երբեք միջև ընդհարումներ չէին լինում։

— Բարո՞վ, հայրենակից,— ասաց Տարանտևը շարությամբ՝ ձեռք չմեկնելով նրան։

— Բարև,— պատասխանեց Օբլոմովը սառն, լուսամուտից դուրս նայելով։

— Ի՞նչ, բարեբարքդ ճանապարհ դրի՞ր։

— Ճանապարհ դրի։ Ի՞նչ կա որ։

— Լա՜վ բարեբար է,— շարունակում էր Տարանտևը թունալից։

— Ի՞նչ է, քեզ դուր չի՞ գալիս։

— Ես նրան՝ կախե՛լ կուզի,— ատելությամբ ի մտաց Տարանտևը։

— Ա՜յ թե ինչ։

— Եվ քեզ էլ, միևնո՛ւյն բարդուց։

— Ինչի՞ համար այդպես։

— Ազնիվ գործ բռնիր. եթե պարտք ես, ապա վճարի՛ր, մի՛ խուսափիր։ Հիմա քո արածը ի՞նչ է։

— Լսի՛ր, Միխեյ Անդրեյիչ, ազատի՛ր ինձ քո հեքիաթներից. երկար ժամանակ ես ծուլությունից էր թե անհոգությունից, լսեցի քեզ. ես կարծում էի, թե գոնե խղճի մի կաթիլ կա քո մեջ, բայց այն չկա։ Դու խաբեբայի հետ միասին ուզում էիր ինձ խաբել. ով է ձեզնից ավելի վատթարը, ես չգիտեմ, միայն թե դուք երկուսդ էլ զզվելի եք ինձ համար։ Բարեկամս ազատեց ինձ այդ հիմար գործից...

— Լա՜վ բարեկամ է,— ասում էր Տարանտևը։— Ես լսել եմ, որ նա քո հարսնացուին էլ է թացրել. բարեբա՜ր էլ խոսք չունեմ։ Է՜հ, եղբա՛յր, հիմար ես դու, հայրենակի՛ց...

— Խնդրում եմ՝ թո՛ղ քո այդ քնքշությունները,— կանգնեցրեց նրան Օբլոմովը։

— Ո՞չ, չե՛մ թողնի։ Դու չուզեցիր ինձ ճանաչել, դա՛ս, ապերա՛խտ։ Ես տեղավորեցի քեզ, գտա կին՝ գանձ։ Հանգիստ, ամեն տեսակ հարմարություն, ամեն ինչ ճարեցի քեզ համար, բարերարեցի ամբողջությամբ, իսկ դու մատիդ անգամ շուռ տվիր։ Բարեբար ես գտել. գեղամանացա՜ն։ Կապվածդ վերցրել է վարձակալությամբ. ա՛յ, համբերիր. նա կպլոկի քեզ, դեռ ակցիաներ էլ կտա։ Ուրացիկ՜ն կդարձնի,

միտդ պահիր խոսքս։ Հիմար, ասում եմ քեզ, քիչ է հիմար, պետք է ավելացնեմ նաև անասո՜ւն, ապերա՜խտ։

— Տարա՜նտև,— ահեղ գոչեց Օբլոմովը։

— Լ՛ռչ ես բղավում։ Ես ինքս ամբողջ աշխարհով մեկ կգոռամ, որ դու հիմար ես, անասո՜ւն,— բղավում էր Տարանտևը։— Ես ու Իվան Մատվեևիչը հոգում էինք քո մասին, պահպանում քեզ, ճորտերի նման ծառայում էինք քեզ, մատների ծայրերի վրա էինք ման գալիս, աչքերիդ մեջն էինք նայում, իսկ դու վարկաբեկեցիր նրան իշխանության առաջ. այժմ նա անպաշտոն է և առանց մի կտոր հացի։ Դա ստորությո՜ւն է, գարշելիությո՜ւն։ Այժմ դու պետք է կարողությանդ կեսը նրան տաս. մուրհակ տուր նրա անունով. հիմա հարբած չես, խելքդ գլխիդ է, տո՜ւր, ասում եմ քեզ, առանց դրան ես դուրս չեմ գա...

— Ի՞նչ եք այդպես գոռում, Միխեյ Անդրեյիչ,— ասացին տանտիրուհին ու Անիսյան՝ դռնից ներս նայելով։— Երկու անցորդ կանգ առավ, լսում են, թե ի՜նչ գոռգոռոց է...

— Պիտի գոռամ,— աղմկում էր Տարանտևը,— թող այս տխմա՜րը խայտառակվի։ Թող պլոկի քեզ այդ խաբեբա գերմանացին, լավ է, որ նա հիմա խոսքը մեկ է արել քո սիրուհու հետ...

Սենյակում հնչեց մի ուժգին ապտակ։ Օբլոմովի կողմից ապտակված Տարանտևը վայրկենապես լռեց, նստեց աթոռի վրա և զարմանքով շուրջն էր նայում ապուշի աչքերով։

— Ի՞նչ բան է սա։ Ի՞նչ բան է սա, հը՞։ Ի՞նչ բան է սա,— գունատ, խեղդվելով ասում էր նա՝ այտը բռնած։— Անպատվությո՞ւն։ Դու դրա համար կհատուցե՜ս ինձ։ Իսկույն ևեթ խնդիր կգրեմ գեներալ-նահանգապետին. դուք տեսա՞ք։

— Մենք ոչինչ էլ չե՜նք տեսել,— միաձայն ասացին երկու կանայք։

— Ա՜։ Այստեղ դավադրություն կա, այստեղ ավազակային ո՜րջ է։ Սրիկաների մի խո՜ւմբ։ Կողոպտում են, սպանում...

— Դո՜ւրս, սրիկա՜,— բղավեց Օբլոմովը, գունատ, կատաղությամբ դողալով։— Այս րոպեիս, որ քո ոտն այստեղ չլինի, թե չէ ես քեզ շա՜ն նման կսատկացնեմ։

Նա աչքերով ձեռնափայտն էր փնտրում։

— Պարոննե՜ր։ Ավազակությո՜ւն։ Օգնեցե՜ք,— բղավում էր Տարանտևը։

— Զախա՜ր։ Այդ սրիկային դուրս շպրտիր, և նա չպետք է հանդգնի երևալ այստեղ,— գոչեց Օբլոմովը։

— Համեցե՜ք, ահա ձեզ աստված, իսկ ահա և դո՜ւռը,— ասում էր Զախարը՝ ցույց տալով սրբապատկերն ու դուռը։

— Ես քեզ մոտ չեմ եկել, այլ սանամորս մոտ,— բղավում էր Տարանտևը։

— Տե՜ր ձեզ հետ։ Դուք ինձ պետք չեք, Միխեյ Անդրեյիչ,— ասաց Ագաֆյա Մատվեևնան,— դուք եղբորս մոտ էիք գալիս և ոչ թե ինձ մոտ։ Դուք ինձ համար դառն բողկից էլ վատթար եք։ Խմում, ուտում եք, հետո էլ հաշում։

— Ա՜։ Այդպես ուրեմն, սանամեր։ Լա՜վ, ա՜յ, եղբայրդ քեզ ցույց կտա։ Իսկ դու կհատուցես ինձ անպատվությա՜ն համար։ Ո՞ւր է գլխարկս։ Գրո՜ղը տանի ձեզ։ Ավազակնե՜ր, մարդասպաննե՜ր,— բղավում էր նա՝ բակով անցնելիս։— Կհատուցես անպատվության համար։

Շունը վազվզում էր շղթայի երկարությամբ և հաշում։

Դրանից հետո Տարանտևն ու Օբլոմովը այլևս չէին տեսնվում իրար հետ։

VIII

Շտոլցը մի քանի տարի Պետերբուրգ չէր գալիս։ Նա մի անգամ միայն կարճ ժամանակով երևաց Օլգայի կալվածքում և Օբլոմովկայում։ Իլյա Իլյիչը նրանից նամակ ստացավ, որի մեջ Անդրեյը նրան համոզում էր անձամբ գնալ գյուղը և իր ձեռքը վերցնել արդեն կարգի բերված կալվածքի կառավարումը; իսկ ինքն Օլգա Սերգեևնայի հետ գնում էր Ղրիմի հարավային ափերը երկու նպատակով՝ Օդեսայում ունեցած իր գործերով և կնոջ առողջության պատճառով, որ քայքայվել էր ծննդաբերությունից հետո։

Նրանք բնակություն հաստատեցին մի խաղաղ անկյունում, ծովափին։ Նրանց տունը համեստ էր և ոչ մեծ։ Նրա ներքին սարքուկարգն էլ նույնպես ուներ իր ոճը, ինչպես արտաքին ճարտարապետությունը, ինչպես ամբողջ արդուզարդը, կրում էր տերերի մտքի ու անձնական ճաշակի կնիքը։ Նրանք իրենք

իրենց հետ ամեն տեսակ բարիքներ էին բերել. շատ բան էին ուղարկում նրանց Ռուսաստանից ու արտասահմանից հակերով, ճամպրուկներով, սայլերով։

Հարմարավետության սիրահարը, գուցե, ուսերը թոթվեր նայելով կահ-կարասիի, հին նկարների, ձեռքերն ու ոտքերը կոտրված անդրիների, երբեմն վատ, բայց հիշողությունների տեսակետից թանկագին փորագրությունների, մանրուքների արտաքին այլազանությանը։ Թերևս գիտակ մարդու աչքերը հաճախակի վառվեին ագահության հրով այս կամ այն նկարին, հնությունից դեղնած որևէ գրքի, հին հախճապակուն կամ քարերին ու դրամներին նայելիս։

Բայց այլադարյան այդ կահկարասիի, նկարների մեջ, ոչ ոքի համար նշանակություն չունեցող, բայց նրանց երկուսի համար երջանիկ ժամ, հիշողության արժանի բոպե նշող մանրուքների, գրքերի ու նոտաների օվկիանոսի մեջ տաք կյանք էր եռում, միտքն ու գեղասիրական զգացմունքը գրգռող մի բան. ամենուրեք ներկա էր կա՛մ անքուն միտքը, կա՛մ փայլում էր մարդկային գործի գեղեցկությունը, ինչպես որ շուրջն էլ փայլում էր բնության հավիտենական գեղեցկությունը։

Այստեղ տեղ գտավ նաև բարձր գրասեղանը, ինչպիսին ուներ Անդրեյի հայրը, զամշե ձեռնոցները, անկյունում կախված էր նաև մոմլաթե վերարկուն այն պահարանի կողքին, որի մեջ դրված էին հանքատեսակներ, խեցիներ, թռչունների խրտվիլակներ, զանազան կավերի, ապրանքների և այլնի նմուշներ։ Այդ բոլորի մեջ պատվավոր տեղում փայլում էր ոսկու մեջ ներդրվագով էրարի դաշնամուրը։

Խաղողի, բաղեղների և մրտենիների ցանցը ծածկում էր կոտեջը վերևից ներքև։ Սրահից երևում էր ծովը, մյուս կողմից՝ քաղաք տանող ճանապարհը։

Այնտեղ էր Օլգան սպասում Անդրեյին, երբ նա տնից գնում էր գործերով, և, տեսնելով նրան, ցած էր իջնում, վազելով անցնում հոյակապ ծաղկանոցը, կաղամախի երկար ծառուղին և նետվում ամուսնու կրծքին՝ միշտ ուրախությունից վառվող այտերով, փայլող հայացքով, անհամբեր երջանկության միշտ միատեսակ ջերմությամբ, չնայելով, որ անցել էր նրա ամուսնության արդեն ոչ առաջին և ոչ երկրորդ տարին։

Շտոլցը սիրտ և ամուսնության ձրա նայում էր, գուցե, յուրահատուկ ձևով, չափազանցրած, բայց, համենայն դեպս, ինքնուրույնորեն։ Եվ այստեղ էլ նա գնաց ազատ և, ինչպես թվում էր նրան, հասարակ ուղիով. բայց դիտումների, համբերության, աշխատանքի ինչպիսի դժվար դպրոց անցավ նա, մինչև սովորե՛ց այդ «հասարակ քայլերն» անել։

Իր հորից նա սովորել էր առանց կատակի նայել ամեն բանի վրա կյանքում, նույնիսկ մանրուքների վրա. գուցե, նրանից սովորեր նաև այն պեդանտական խստությունը, որով գերմանացիներն ուղեկցում են իրենց հայացքը, յուրաքանչյուր քայլը կյանքում, այդ թվում նաև ամուսնությունը։

Ինչպես քարետախտակի վրա գրված աղյուսակ, գծված էր ծերունի Շտոլցի կյանքը բոլորի և յուրաքանչյուրի համար բացահայտ կերպով, և նրա տակ այլևս ուրիշ ոչինչ չէր մնում ենթադրելու։ Բայց մայրը՝ իր երգերով ու քնքուշ շշշնջոցով, ապա իշխանական այլաքնույթ տունը, այնուհետև համալսարանը, գրքերը և հասարակությունը, այդ բոլորը Անդրեյին շեղում էին ուղիղ, հոր գծած աղուրից. ռուսական կյանքը նկարում էր իր անտեսանելի զարդերը և անգույն աղյուսակը դարձնում մի պայծառ, լայն նկար։

Անդրեյը պեդանտական կապանքներ չէր դնում զգացմունքների վրա և մինչև անգամ օրինական ազատություն էր տալիս աշխատելով միայն «ոտքերի տակի հողը չկորցնել», մտածկոտ երազանքներին, թեև նրանցից զգաստանալով իր գերմանական բնության համաձայն կամ որևէ այլ պատճառով, չէր կարողանում զսպել իրեն եզրակացություն հանելուց և որևէ կենսական դիտողություն էր դուրս բերում դրանից։

Նա առույգ էր մարմնով, որովհետև առույգ էր խելքով։ Նա ժիր էր, չարաճճի՝ մանկական հասակում, իսկ երբ չարություն չէր անում, ապա պարապում էր գործով՝ հոր հսկողության տակ։ Նա ժամանակ չուներ երազանքների մեջ կորցնելու իրեն։ Նրա երևակայությունը չապականվեց, սիրտը չփչացավ. թե՛ մեկի և թե՛ մյուսի մաքրությունն ու կուսությունը աչալրջությամբ պահպանում էր մայրը։

Պատանի հասակում նա բնազդորեն պահպանում էր իր ուժերի թարմությունը, հետո սկսեց արդեն շուտ հայտնաբե-

թել, որ այդ թարմությունը առույգություն ու ուրախություն է ծնում, այն առնականությունն է առաջացնում, որի մեջ պետք է կոփվի հոգին, որպեսզի կյանքի առաջ չգունատվի, ինչպիսին էլ լինի այդ կյանքը, նայի նրա վրա ո՞չ որպես ծանր լծի, խաչի վրա, այլ լոկ որպես պարտքի վրա, արժանավորությամբ մղի կռիվը նրա հետ։

Շատ մտածական հոգսեր նվիրեց նա թե՛ սրտին և թե՛ նրա դժվարիմաց օրենքներին։ Գիտակցաբար և անգիտակցականորեն դիտելով գեղեցկության արտացոլումը երևակայության վրա, հետո տպավորության զգացմունք դառնալը, նրա հայտանիշերը, խաղը, նլքը և, իր շուրջը նայելով, կյանքը թևակոխելով, նա իր համար համոզմունք մշակեց, որ սերն է Արքիմեդի լծակի ուժով շարժում աշխարհը, որ նրա մեջ կա այնքան ընդհանրական, անհերքելի ճշմարտություն և բարիք, որքան տուտ ու այլանդակություն կա այն չըմբռնելու և շարաշահելու մեջ։ Իսկ որտե՞ղ է բարիքը։ Որտե՞ղ է չարիքը։ Որտե՞ղ է սահմանը նրանց միջև։

«Որտե՞ղ է սուտը» հարցի ժամանակ նրա երևակայության մեջ իրար ետևից ձգվում էին ներկա և անցյալ ժամանակների խայտաբղետ դիմակները։ Նա ժպիտով, մերթ կարմրելով, մերթ խոժոռելով, նայում էր սիրո հերոսների և հերոսուհիների անվերջ շարանին. պողպատե ձեռնոցներով դոն քիշոտներին, նրանց մտքերի տիկիններին, որոնք բաժանման ժամանակ հիսունամյա փոխադարձ հավատարմություն էին պահպանում. կարմիր դեմքերով, դուրս պրծած պարզամիտ աչքերով հովվուհիներին և նրանց քլոյեներին՝ իրենց գառների հետ։

Նրա առջև էին գալիս պուդրի քսած մարկիզներ, ժանյակների մեջ, խելք առկայծող աչքերով և անառակ ժպիտով. հետո՝ իրենք իրենց գնդակահարած, կախած կամ խեղդած վերթերներ. այնուհետև՝ թառամած կույսեր՝ սիրո մշտական արցունքներով, կուսանոցով և մոտիկ անցյալի հերոսների բեղաձիր դեմքերը՝ կատաղի կրակն աչքերում, միամիտ և գիտակից դոն ժուաններ և այն խելքի տոպրակները, որոնք սարսռում են սիրո կասկածից և գաղտնի պաշտում իրենց մառանապետուհիներին... բոլո՞ր, բոլո՞ր։

«Որտե՞ղ է ճշմարտությունը» հարցի ժամանակ նա փընտրում էր թե՛ հեռվում, թե՛ մոտիկ, երևակայությամբ և աչքերով՝ կնոջ հետ պարզ, ազնիվ, բայց խոր և անխզելի կերպով մերձենալու օրինակներ, և չէր գտնում. եթե թվում էր, թե գտնում էլ է, ապա դա միայն թվում էր, հետո հիասթափվում էր, և նա տխրագին մտածմունքի մեջ էր ընկնում ու նույնիսկ հուսահատվում էր։

«Ինչպես երևում է, այդ բարիքն իր ամբողջ լրջությամբ չկա», մտածում էր նա, «կամ այն սրտերը, որոնք լուսավորված են այդպիսի սիրո լույսով, քաշվող են. նրանք վախվրխում են և թաքնվում, շաշխատելով ժխտել իմաստակներին. գուցե, խղճում են նրանց, ներում են նրանց հանուն իրենց երջանկության, որ նրանք կեղտի մեջ տրորում են ծաղիկը այնպիսի հող չունենալու պատճառով, որտեղ այն կարողանար խոր արմատներ գցել և աճել ու այնպիսի ծառ դառնալ, որը հովանի լիներ ամբողջ կյանքի վրա»։

Նայում էր նա ամուսնությունների, այլ ամուսինների վրա, և նրանց հարաբերությունների մեջ դեպի կին ամուսինները միշտ սֆինքս էր տեսնում իր առեղծվածով, միշտ կարծես մի ինչ-որ անհասկանալի, թերասված բան. մինչդեռ այդ տղամարդիկ կանգ չեն առնում դժվարիմաց հարցերի առաջ, գնում են ամուսնության ուղիով այնպիսի հավասար, գիտակից քայլով, կարծես վճռելու և որոնելու ոչինչ չունեն։

«Արդյոք նրանք իրավացի չե՞ն։ Գուցե, իսկապես էլ ուրիշ ոչինչ պետք չէ», մտածում էր նա անվստահությամբ դեպի ինքը, տեսնելով, թե ինչպես ոմանք արագ անցնում են սերը որպես ամուսնության այբուբեն կամ քաղաքավարության ձև, կարծես՝ հասարակություն մտնելիս բարև տվեցին, և՝ շուտո՞վ դեպի գործ։

Նրանք անհամբերությամբ իրենց ուսերից վայր են դնում կյանքի գարունը. շատերը մինչև անգամ հետո ամբողջ կյանքում խեթ են նայում իրենց կանանց, կարծես սրտնեղելով նրանից, որ մի ժամանակ հիմարություն են ունեցել սիրելու։

Ուրիշները սերը երկար ժամանակ, երբեմն մինչև ծերությունը, չեն կորցնում, բայց նրանք չեն կորցնում երբեք նաև սատիրի ժպիտը..

Վերջապես, մեծամասնությունն ամուսնանում է այնպես, ինչպես կալվածք են առնում, վայելում են նրա էական օգուտները. կինն ավելի լավ կարգ է մտցնում տան մեջ. նա տանտիրուհի է, մայր, երեխաների դաստիարակչուհի, իսկ սիրո վրա նայում են այնպես, ինչպես գործնական կալվածատերը նայում է կալվածքի տեղադրությանը, այսինքն՝ միանգամից ընտելանում է և հետո այլևս երբեք չի նկատում այն։

— Ի՞նչ է սա. բնածին անընդունակություն՝ բնության օրենքների հետևանքով,— ասում էր նա,— թե՞ պատրաստության, կրթության պակաս... Որտե՞ղ է այն համակրությունը, որ երբեք չի կորցնում բնական հրապույրը, խեղկատակի զգեստ չի հագնում, ձևափոխվում է, բայց չի մարում։ Որո՞նք են այդ ամենուրեք լցված և իրենով ամեն ինչ լցնող բարիքի, կյանքի այդ հյութի բնական գույնն ու երանգները։

Նա մարգարեորեն թափանցում էր հեռուն, և այնտեղ, ինչպես մշուշի մեջ, երևում էր նրան զգացմունքի և միաժամանակ նաև կնոջ պատկերը, որ հագնված է այդ զգացմունքի գույնով և փայլում է նրա երանգներով, այնքան հասարակ, բայց լուսավոր, մաքուր մի պատկեր։

— Ցնո՞ր, ցնո՞ր,— ասում էր նա ժպիտը դեմքին՝ սթափվելով մտքի պարապ գրգռմունքից։

Բայց այդ ցնորքի ուրվագիծը նրա կամքին հակառակ ապրում էր նրա հիշողության մեջ։

Սկզբում այդ պատկերի մեջ նա երազում էր առհասարակ կնոջ ապագան, իսկ երբ նա՞հետո աճած ու հասունացած Օլգայի մեջ տեսավ ո՛չ միայն փթթած գեղեցկության շքեղությունը, այլև այն ուժը, որ պատրաստ է կյանքի համար և ծարավի է կյանքի իմացությանն ու պայքարին, նրա ցնորքի բոլոր առհնվաստչյանները, նրա մեջ ծագեց սիրո վաղուցվա, նրա կողմից համարյա մոռացված պատկերը, և այդ պատկերի մեջ երազում էր Օլգային, և հեռու առջևում նրան թվում էր, թե ճշմարտությանը հնարավոր է նրանց փոխադարձ համակրության մեջ պառնց խեղկատակի զգեստի և առանց չարաբկումների։

Խաղ չանելով սիրո և ամուսնության հարցի հետ, նրա հետ չխառնելով ոչ մի այլ, դրամական կապերի, պաշտոնատեղի հաշիվներ, Շտոլցը, սակայն, մտմտում էր այն մասին,

թե ինչպես պետք է նրա արտաքին, մինչև այժմ անդուլ գործունեությունը հաշտվի ներքին, ընտանեկան կյանքի հետ, ինչպես պետք է նա տուրիստից, վաճառականից փոխարկվի ու դառնա տանը նստող ընտանիքավոր մարդ։ Եթե նա հանդիպեցնում է այդ արտաքին վազվզոցից, ինչո՞վ է լցվելու նրա կյանքն ընտանեկան կենցաղում։ Երեխաների կրթությունը, դաստիարակությունը, նրանց կյանքին ուղղություն տալը, իհարկե, թեթև և դատարկ խնդիր չէ, բայց այն դեռ հեռու է, իսկ մինչ այդ ի՞նչ պետք է անի ինքը։

Այս հարցերը վաղուց և հաճախ անհանգստացնում էին նրան, և նրան դժվարություն չէր պատճառում ամուրիի կյանքը. նրա մտքով չէր անցնում՝ հենց որ սիրտը խփի, զգալով գեղեցկության մոտիկությունը, ամուսնության շղթաներ դնել իր վրա։ Այդ պատճառով էլ նա կարծես քամահրում էր նույնիսկ Օլգային՝ աղջիկ եղած ժամանակ, հրճվում էր նրանով միայն իբրև սիրելի երեխայով, որ մեծ հույսեր է տալիս. կատակով, հարևանցիորեն, նրա ագահ և զգայունակ ուղեղի մեջ նետում էր նոր համարձակ միտք, սուր դիտողություն կյանքի վերաբերմամբ և նրա հոգու մեջ շարունակում էր, առանց մտածելու և գուշակելու, երևույթների կենդանի ըմբռնում, ճիշտ հայացք զարգացնել, իսկ հետո մոռանում էր թե՛ Օլգային և թե՛ իր անփույթ դասերը։

Իսկ ժամանակ առ ժամանակ, տեսնելով, որ Օլգայի մեջ առկայծում են մտքի ոչ բոլորովին սովորական գծեր, հայացքներ, որ նրա մեջ սուտ չկա, նա ընդհանուր երկրպագություն չի որոնում, որ նրա զգացմունքները գալիս ու գնում են պարզ ու ազատ կերպով, որ ոչ մի օտար բան չունի, այլ ամեն ինչ իրենն է, և այդ իրենն այնպես համարձակ է թվում ու հաստատուն, Շտոլցը տարակուսանքի մեջ էր ընկնում՝ որտեղից է այդ ամենը, չէր ճանաչում իր թոռուցիկ դասերն ու նկատողությունները։

Եթե նա այն ժամանակ ուշադրությունը կենտրոնացներ Օլգայի վրա, կըմբռներ, որ նա համարյա մենակ է գնում իր ճանապարհը, մորաքրոջ մակերեսային վերահսկողությամբ պահպանվելով ծայրահեղություններից, բայց որ նրա վրա որպես բազմաթիվ խնամակալություն չի ծանրանում յոթ դայակների, տատերի, հորաքույր-մորաքույրերի հեզինակությու-

նը՝ ցեղի, ընտանիքի, դասի, հնացած վարք ու բարքի, սովորությունների, սենտենցիայի ավադույթներով. որ նրան տրորված ճանապարհով չեն տանում բռնությամբ, որ նա ընթանում է նոր շավղով, որի վրայով նա իր համար հուն պիտի բաց աներ սեփական խելքով, հայացքով, զգացմունքով։

Իսկ բնությունը դրանցից ոչ մեկով նրան պակաս չէր օժտել. մորաքույրը բռնակալորեն չի ղեկավարում նրա կամքն ու խելքը, և Օլգան շատ բան կռահում է, ըմբռնում ինքը, զգուշությամբ թափանցում է կյանքի մեջ, ականջ է դնում... ի միջի այլոց, նաև իր բարեկամի ճառերին, խորհուրդներին...

Շտոլցն այս ամենից ոչինչ չէր հասկանում, այլ միայն նրանից շատ բան էր սպասում առաջիկայում, բայց հեռավոր առաջիկայում, երբեք մտքով չանցկացնելով, որ նա կարող է իր կյանքի ընկերը դառնալ։

Իսկ Օլգան ինքնասեր ամաչկոտության պատճառով երկար ժամանակ թույլ չէր տալիս, որ գուշակի իրեն, և միայն տանջագին պայքարից հետո արտասահմանում Շտոլցը զարմանքով տեսավ, թե պարզության, ուժի և բնականության ինչպիսի՞ պատկեր է դարձել այդ շատ բան խոստացող և նրա կողմից մոռացված երեխան։ Այստեղ կամաց-կամաց նրա առջև բացվեց Օլգայի հոգու խոր անդունդը, որ նա պետք է լցներ և երբեք չկարողացավ լցնել։

Սկզբում նա ստիպված էր երկար պայքարել նրա բնության աշխուժության դեմ, ընդհատել ջահելության տենդը, խոյանքներն ամփոփել որոշ չափերի մեջ, կյանքին սահուն ընթացք տալ, և այն էլ ժամանակավորապես. հազիվ էր Շտոլցը դյուրահավատությամբ աչքերը փակում, նորից տագնապ էր առաջ գալիս, կյանքը բխում էր աղբյուրի պես, լցվում էր անհանգիստ մտքի, վրդովված սրտի նոր հարցը. այնտեղ պետք էր հանգստացնել գրգռված երևակայությունը, զսպել կամ զարթնեցնել ինքնասիրությունը։ Եթե Օլգան սկսում էր մտածել որևէ երևույթի մասին, Շտոլցն շտապում էր նրան հանձնել այդ երևույթի բանալին։

Կյանքից անհետացան պատահականություններին հավատալը, պատրանքների մառախուղը։ Նրա առջև լուսավոր և ազատ բացվում էր հեռուն, և նա, ինչպես վճիտ ջրի մեջ,

տեսնում էր այնտեղ ամեն մի փոքրիկ քար, փոս և ապա մաքուր հատակը։

— Ես երջանի՞կ եմ,— շշնջում էր Օլգան, երախտագիտության հայացք գցելով իր անցյալ կյանքի վրա, և պատկերացնելով ապագան, մտաբերում էր երջանկության իր կուսական երազը, որ նա տեսել էր երբեմն Շվեյցարիայում, այն մտածկոտ, կապույտ գիշերը, և տեսնում էր, որ այդ երազը, ստվերի նման, անցնում է կյանքի մեջ։

«Ինչի՞ համար ինձ սա բաժին ընկավ»,— մտածում էր նա հեզությամբ։

Նա մտածմունքի մեջ էր ընկնում, երբեմն մինչև անգամ վախենում էր՝ չլինի թե այդ երջանկությունն ընդհատվի։

Անցնում էին տարիներ, և նրանք ապրելուց չէին հոգնում։ Վրա հասավ նաև խաղաղությունը, հանդարտվեցին նաև խոյանքները. կյանքի շեղումները հասկանալի դարձան, դրանք տանում էին համբերությամբ և առույգ, իսկ կյանքը դեռ էլի չէր մարում նրանց մեջ։

Օլգան պրդեն հասել էր կյանքի խիստ ըմբռնմանը. երկու գոյություններ, նրանն ու Անդրեյինը, ձուլվեցին մի հունի մեջ. վայրենի կրքերի սանձարձակություն չէր կարող լինել. նրանց մոտ ամեն ինչ ներդաշնակություն էր և խաղաղություն։

Կարծես ժամանակն էր նիրհելու այդ արժանի կերպով վաստակած անդորրի մեջ և երանություն վայելելու, ինչպես երանություն են վայելում խաղաղ անկյունների բնակիչները, օրական երեք անգամ իրար հանդիպելով, սովորական խոսակցության ժամանակ հորանջելով, բուռ նինջի մեջ ընկնելով, առավոտից մինչև երեկո տանջվելով, որ ամեն ինչ մտածված, խոսված, փոփոխված վերջացած է, որ էլ ոչինչ չկա ասելու կամ անելու և որ «այսպես է արդեն կյանքն աշխարհում»։

Արտաքուստ նրանց մոտ էլ ամեն բան կատարվում էր այնպես, ինչպես ուրիշների մոտ։ Նրանք վեր էին կենում թեև ոչ արշալույսը բացվելուն պես, բայց վաղ. սիրում էին երկար նստել թեյի, երբեմն նույնիսկ կարծես ծուլորեն լսում էին, հետո ամեն մեկն իր անկյունն էր գնում կամ աշխատում էին միասին, ճաշում էին, հանդերն էին գնում, երաժշտություն էին զբաղվում... ինչպես բոլորը, ինչպես նաև Օլգան ոչ էր երազում։ Միայն թե թմրած. վհատ չէին նրանք։ Երբեմն

էին կացնում առանց ձանձրույթի և առանց ապատիայի. չկար ալարկոտ հայացք, խոսք. նրանց խոսակցությունը չէր վերջանում, հաճախ՞տաք էր լինում այն։

Սենյակներում տարածվում էին նրանց զրնգուն ձայները, որոնք հասնում էին մինչև պարտեզ. կամ նրանք մեղմիկ հաղորդում էին, կարծես միմյանց առջև իրենց երազանքի զարդանախշն էին գծում, լեզվի համար անըմբռնելի առաջին շարժումը, ծագող մտքի աճումը, հոգու հազիվ լսելի շշնջոցը...

Եվ նրանց լռությունն էլ երբեմն մտածկոտ երջանկություն էր, որի մասին, պատահում էր, երազում էր միայն Օբլոմովը, կամ ամեն մեկի համար առանձնակի մտածական աշխատանք անվերջանալի, միմյանց տված նյութի շուրջ...

Հաճախ նրանք ընկղմվում էին անմոռուն զարմանքի մեջ բնության հավիտենապես նոր և փայլուն գեղեցկության առջև։ Նրանց զգայուն հոգիները չէին կարողանում վարժվել այդ գեղեցկությանը, երկինքը, ծովը՝ ամեն ինչ զարթեցնում էր նրանց զգացմունքը, և նրանք լուռ նստում էին կողք-կողքի, նույն աչքերով և մեկ հոգի դարձած նայում էին այդ ստեղծագործական փայլին և առանց խոսքի հասկանում միմյանց։

Նրանք անտարբեր չէին դիմավորում առավոտը. չէին կարողանում բուռ կերպով խորասուզվել տաք, աստղալից, հարավային գիշերվա աղջամուղջի մեջ։ Նրանց արթնացնում էր մտքի հավիտենական շարժումը, հոգու հավիտենական գրգռումը և երկուսով միասին մտածելու, զգալու, խոսելու պահանջը...

Բայց ի՞նչն էր այդ տաք վեճերի, հանդարտ խոսակցությունների, ընթերցումների, հեռավոր զբոսանքների առարկան։

Ամեն բան։ Դեռևս արտասահմանում Շտոլցը մոռացավ մենակ կարդալն ու աշխատելը. այստեղ, Օլգայի հետ դեմ առ դեմ, նա հենց նրա հետ էլ մտածում էր։ Հազիվ էր կարողանում հասնել Օլգայի մտքի ու կամքի հոգնեցնող հապճեպության ետևից։

Այն հարցը, թե ինչ պետք է անի նա ընտանեկան կենցաղում, արդեն լուծվել էր, որոշվել ինքն իրեն։ Նա ստիպված եղավ Օլգային հաղորդակից անել նույնիսկ իր աշխատանքային, գործնական կյանքին, որովհետև անշարժ կյանքում Օլգան խեղդվում էր, ինչպես առանց օդի։ Որևէ կառուցում, իր կամ Օբլոմովի կալվածքի վերաբերյալ գործեր, ընկերության գործառնություններ, ոչինչ չէր արվում առանց Օլգայի գիտության կամ մասնակցության։ Ոչ մի նամակ չէր ուղարկվում ադանց նրան կարդացվելու, ոչ մի միտք, ավելի ևս նրա իրագործումը չէր անցնում նրա կողքից. նա գիտեր ամեն բան և ամեն ինչ զբաղեցնում էր նրան, որովհետև զբաղեցնում էր Անդրեյին։

Սկզբում դա անում էր այն պատճառով, որ հնարավոր չէր թաքնվել նրանից, նամակ էր գրվում, խոսակցություն էր տեղի ունենում հավատարմատարի կամ որևէ կապալառուի հետ, ամեն ինչ տեղի էր ունենում Օլգայի ներկայությամբ, նրա աչքերի առաջ. հետո Անդրեյն սկսեց շարունակել ըստ սովորության, և վերջ ի վերջո դա անհրաժեշտություն դարձավ նաև նրա համար։

Օլգայի նկատողությունը, խորհուրդը, հավանությունը կամ անհավանությունը Անդրեյի համար անխուսափելի ստուգում դարձան. նա տեսավ, որ Օլգան հասկանում է ճիշտ այնպես, ինչպես ինքը, մտածում է, կշռադատում իրենից ոչ ավելի վատ... Զախաբը վիրավորվում էր իր կնոջ այդ ընդունակությունից, և շատերն են վիրավորվում, բայց Շտոլցը երջանի՞կ էր։

Իսկ ընթերցումն ու ուսո՞ւմը. մտքի մշտնջենական սընունդը, նրա անվերջ զարգացումը։ Օլգան խանդում էր ամեն մի իրեն ցույց չտված գրքի, ամսագրային հոդվածի համար, առանց կատակի բարկանում կամ վիրավորվում էր, երբ Անդրեյը չէր բարեհաճում որևէ բան ցույց տալ, որ իր կարծիքով, շափազանց լուրջ էր, ձանձրալի, Օլգայի համար անհասկանալի։ Օլգան դա անվանում էր պեղանոություն, գռեհկություն, նախատում էր Անդրեյին՝ անվանելով նրան «գերմանական հին կեղծամ»։ Այդ առթիվ նրանց մեջ տեղի էին ունենում կենդանի, զրգռիչ տեսարաններ։

Օլգան բարկանում էր, իսկ Անդրեյը ծիծաղում էր, նա ավելի

վի էր բարկանում և այն ժամանակ էր միայն հաշտվում, երբ ամուսինը դադարում էր կատակ անելուց, նրան հաղորդակից էր դարձնում իր մտքին, գիտելիքին կամ ընթերցմանը։ Վերջանում էր նրանով, որ այն ամենը, ինչ պետք էր Անդրեյին և նա ուզում էր իմանալ, կարդալ, այդ նույնը պետք էր լինում նաև Օլգային։

Անդրեյը նրա վզին չէր փաթաթում գիտական տեխնիկան, որպեսզի հետո հիմարագույն սնապարծությամբ հպարտանար «գիտական կնոջով»։ Եթե Օլգան խոսելու ժամանակ մի խոսք թոցներ, նույնիսկ ակնարկ այդ հավակնության մասին, Անդրեյն ավելի սաստիկ կկարմրեր, քան այն ժամանակ, եթե նա չգիտենալու բութ հայացքով պատասխաներ գիտության ասպարեզում սովորական, բայց կանացի արդի կրթությանը դեռևս անմատչելի մի հարցի։ Անդրեյը միայն ուզում էր, իսկ Օլգան կրկնապատիկ, որ ոչ մի անմատչելի բան չլինի. ո՛չ թե նրա գիտությանը, այլ ըմբռնմանը։

Անդրեյը նրա համար աղյուսակներ ու թվեր չէր գծում, բայց խոսում էր ամեն ինչի մասին, շատ բան կարդում էր, առանց պեդանտորեն խուսափելու նաև որևէ անտեսական թեորիայից, սոցիալական կամ փիլիսոփայական հարցից. նա խոսում էր հափշտակված, բուռն. նա կարծես Օլգայի համար նկարում էր գիտության անվերջ, կենդանի պատկերը։ Հետագայում Օլգայի հիշողությունից չքանում էին մանրամասնությունները, բայց զգայունակ մտքից երբեք չէր ջնջվում պատկերը, չէին կորչում ներկերը և չէր մարում այն կրակը, որով նա լուսավորում էր նրա համար ստեղծած տիեզերքը։

Անդրեյը հպարտությունից ու երջանկությունից դողում էր, երբ նկատում էր, թե ինչպես հետո այդ հրո կայծը փայլում է նրա աչքերում, ինչպես նրան հաղորդած մտքի արձագանքը հնչում է խոսակցության մեջ, ինչպես այդ միտքն անցել է նրա գիտակցության և ըմբռնման մեջ, վերամշակվել է նրա մտքում և դուրս է ցայտում նրա բառերի միջից, ո՛չ թե չոր ու դաժան, այլ կանացի նազելիության փայլով, և հատկապես, եթե բոլոր ասածներից, կարդացածներից, նկարածներից որևէ բեղմնավոր կաթիլ, որպես մարգարտահատիկ, ընկնում էր նրա կյանքի լուսավոր հատակին։

Որպես մտածող և որպես արվեստագետ՝ Անդրեյը հյուսում էր նրա համար բանական գոյություն, և իր կյանքում նա երբեք այնպես խոր կլանված չէր եղել. ո՛չ ուսման ընթացքում, ո՛չ այն ծանր օրերին, երբ պայքարում էր կյանքի դեմ, դուրս էր պրծնում նրա ոլորտներից ու ամրապնդվում, կոփելով իրեն առնականության փորձերում, որքան այժմ, խնամք տանելով իր ընկերուհու հոգու այդ երբեք չլռող, հրաբխային աշխատանքի մասին։

— Որքա՜ն երջանիկ եմ ես,— ասում էր Շտոլցն ինքն իրեն և երազում էր իր ձևով, վազում էր առաջ, երբ անցնում են ամուսնության մեղրատարիները։

Հեռվում նրան դարձյալ ժպտում էր մի նոր պատկեր ո՛չ թե եսասեր Օլգայի, ո՛չ թե բուռն կերպով սիրող կնոջ, ո՛չ թե մայր-դայակի, որ հետո թպռամում է անգույն, որևէ մեկի համար անպետք կյանքում, այլ ինչ-որ մի ուրիշ բան, բարձր, գրեթե չեղած...

Շտոլցի երազն էր ստեղծագործող-մայրը և ամբողջ մի երջանիկ սերնդի բարոյական ու հասարակական կյանքի մասնակից կինը։

Անդրեյը երկյուղով էր միտք անում, թե արդյոք Օլգան այդքան կամք ու ուժ կունենա՞... և շտապով օգնում էր նրան ավելի շուտով իրեն հպատակեցնելու կյանքը, արիության պաշար ժողովելու՝ կյանքի դեմ մարտնչելու համար,— հատկապես այժմ, քանի երկուսն էլ երիտասարդ են և ուժեղ, քանի կյանքը խնայում է նրանց կամ նրա հարվածները ծանր չէին թվում, քանի վիշտը խեղդվում էր սիրո մեջ։

Նրանց օրերը մռայլվում էին, բայց ոչ երկար ժամանակով։ Անհաջողություններ գործերի մեջ, նշանակալից չափով գումար կորցնելը. այս բոլորը հաղիվ էր դիպչում նրանց։ Այդ բաները նրանց ավելորդ հոգս էին պատճառում, հարկադրում մեկնումների, հետո շուտով մոռացվում էին։

Մորաքրոջ մահը դառն ու անկեղծ լացացրեց Օլգային և տվերի նման ընկավ նրա կյանքի վրա ընդամենը կես տարով։

Սանկտ-Պետերբուրգի երկյուղ և մշտական հոգսեր էին առա-

չացնում երեխաների հիվանդությունները, բայց հենց որ երկյուղն անցնում էր, երջանկությունը վերադառնում էր։

Անդրեյին ամենից ավելի անհանգստացնում էր Օլգայի առողջությունը. նա ծնողաբերությունից հետո երկար ժամանակ կազդուրվում էր, և թեև կազդուրվեց, բայց Անդրեյի անհանգստությունը չէր անցնում։ Ավելի տեսկաթի վիշտ նա չգիտեր։

— Որքա՜ն երջանիկ եմ ես,— կրկնում էր նաև Օլգան հանգիստ, հրճվելով իր կյանքով, և այդպիսի գիտակցության բոսկեներին երբեմն մտածմունքի մեջ էր ընկնում... հատկապես որոշ ժամանակից սկսած, ամուսնանալուց երեք-չորս տարուց հետո։

Մարդը տարօրինա՜կ է։ Որքան լիարժեք էր Օլգայի երջանկությունը, այնքան նա ավելի մտազբաղ և նույնիսկ... ավելի երկչոտ էր դառնում։ Նա սկսեց խստորեն հսկել իրեն և նկատեց, որ իրեն շփոթեցնում է կյանքի այդ անդորրությունը, նրա կանգառումը երջանկության բոսկեների վրա։ Նա բռնությամբ իր հոգուց թոթափում էր այդ մտածկոտությունը և արագացնում էր կյանքի քայլերը, սենդայնորեն որոնում էր աղմուկ, շարժումներ, հոգսեր, խնդրում էր, որ ամուսինն իրեն քաղաք տանի, փորձում էր հասարակության, մարդկանց մեջ մտնել, բայց ոչ երկար ժամանակով։

Հասարակության իրարանցումը թեթևակի էր դիպչում նրան, և նա շտապում էր իր անկյունը՝ հոգուց թոթափելու համար որևէ ծանր, անսովոր տպավորություն, և նորից զբաղվում էր մեթթ ընտանեկան կյանքի մանր հոգսերով, ամբողջ ժամերով չէր հեռանում երեխաների սենյակից, կատարում էր դայակ-մոր պարտականությունները, մերթ Անդրեյի հետ խորասուզվում էր ընթերցանության, գրույցների մեջ «լուրջ և ճանձրալի» բաների մասին, կամ կարդում էին բանաստեղծների գրվածքները, խոսում էին Իտալիա գնալու մասին։

Օլգան վախենում էր օբլոմովյան ապատիայի նման որևէ բանի մեջ ընկնել։ Բայց որքան էլ նա աշխատում էր իր հոգու վրայից թոթափել պարբերական ընդհանրացման, հոգու նինջի այդ ակնթարթները, նրա մեջ, ի վերջո, սողոսկում էր սկզբում երջանկության անուրջը, նրան պարուրում էր կապույտ գիշերը և նիրհով կաշկանդում, հետո նորից վրա էր

հասնում մտածկոտ կանգառումը, ասես՝ կյանքի հանգիստը, իսկ այնուհետև... շփոթմունք, երկյուղ, տանջանք, ինչ-որ մի խուլ տրտմություն, անհանգիստ գլխում պտտվում էին խառը, մշուշապատ հարցեր։

Օլգան նրբազգացորեն ականջ էր դնում, փորձում էր իրեն, բայց բան չէր հասկանում, չէր կարողանում ըմբռնել, թե ժամանակ առ ժամանակ ինչ է խնդրում, ինչ է փնտրում հոգին, այլ միայն խնդրում ու փնտրում է ինչ-որ բան, մինչև անգամ կարծես թե, սարսափելի է ասել, անձկության մեջ է ընկնում, կարծես քիչ է նրա համար երջանիկ կյանքը, կարծես նա հոգնում էր դրանից և պահանջում նոր, չեղած երևույթներ էլ, ավելի հեռուն էր նայում...

«Ինչ բան է սա»,— սարսափով մտածում էր նա։ «Մի՞թե դեռ կարելի է և հարկավոր է որևէ բան ցանկանալ։ Էլ ո՞ւր գնալ։ Ո՞չ մի տեղ չկա։ Ճանապարհ չկա այլևս... Մի՞թե չկա, մի՞թե դու կատարել ես կյանքի շրջանը։ Մի՞թե այստեղ է ամեն ինչ... ամեն ինչ...»— ասում էր նրա հոգին և ինչ-որ մի բան թերասած էր թողնում... Եվ Օլգան տագնապով իր շուրջն էր նայում՝ հո չիմացավ, ականջ չդրեց մեկնումեկը հոգու այդ շշնջոցին... Աչքերով հարցնում էր երկնքին, ծովին, անտառին... ոչ մի տեղ պատասխան չկա. այնտեղ տարածություն է, խորություն և խավար։

Բնությունը միշտ միևնույն բանն էր ասում. նրա մեջ Օլգան տեսնում էր կյանքի անընդհատ, բայց միակերպ հոսանքը, որ ո՛չ սկիզբ ուներ, ո՛չ վերջ։

Նա գիտեր, թե ում պետք է հարցներ այդ տագնապների մասին, և պատասխան էլ կգտներ, բայց ինչպիսի՞ պատասխան։ Իսկ եթե դա անպտուղ միտք կամ, որ ավելի վատ է, համակրության համար չստեղծված, ոչ կանացի սրտի տրտո՞ւնջ լինի։ Աստվա՜ծ իմ. Օլգան, նրա կուրքը՝ անսի՞րտ, չոր, ոչնչով չգոհացող խելքո՞վ։ Ի՞նչ պիտի դուրս գա նրանից։ Մի չոր ու ցամաք կի՞ն։ Ինչպե՞ս նա կընկնի, երբ Անդրեյի առջև բացվեն այդ նոր, չեղած, բայց, իհարկե, նրան հայտնի տանջանքները։

Նա թաքնվում էր Անդրեյից կամ մի հիվանդություն էր հնարում, երբ աչքերը իր կամքին հակառակ կորցնում էին

թավշե մեղմությունը, մի տեսակ չոր ու ջերմ էին նայում, երբ դեմքին ծանր ամպ էր նստում և Օլգան, չնայած բոլոր ջանքերին, չէր կարողանում հարկադրել իրեն՝ ժպտալու, խոսելու, անտարբերությամբ լսում էր քաղաքական աշխարհի ամենաթեժ նորությունները, գիտության մեջ կատարված նոր քայլի, գեղարվեստի մեջ տեղի ունեցած նոր ստեղծագործության ամենահետաքրքրական բացատրությունները։

Մինչդեռ նա չէր ուզում լաց լինել. չկար հանկարծական սարսուռը, ինչպես այն ժամանակ, երբ խաղում էին նյարդերը, արթնանում և արտահայտություն էին գտնում նրա կուսական ուժերը։ Ո՛չ, սա ա՜յն չէ։

— Հապա ի՞նչ է,— հարցնում էր նա հուսահատ, երբ հանկարծ տխուր, անտարբեր էր դառնում դեպի ամեն ինչ, գեղեցիկ, մտածկոտ երեկոյան կամ օրորոցի մոտ, մինչև անգամ ամուսնու փաղաքշանքների ու ճառերի միջոցին...

Նա հանկարծ կարծես քարանում է և լռում, հետո շինծու աշխուժությամբ իրար է անցնում, որպեսզի ծածկի իր տարօրինակ տկարությունը, կամ գանգատվում է միգրենից ու պառկում քնելու։

Բայց նրա համար հեշտ չէր թաքնվել Շտոլցի սրատես հայացքից. Օլգան դա գիտեր և ներքուստ նույնպիսի տագնապով էր պատրաստվում տեղի ունենալիք խոսակցությանը, ինչպես մի ժամանակ պատրաստվում էր խոստովանելու անցյալը։ Խոսակցությունը տեղի ունեցավ։

Մի անգամ երեկոյան նրանք զբոսնում էին բարդու ծառուղով։ Օլգան համարյա կախ էր ընկել նրա ուսից և խոր լռություն էր պահպանում։ Նա տանջվում էր իր անհայտ հիվանդությունից, և ինչի մասին էլ որ խոսում էր Անդրեյը, կարճ պատասխաններ էր տալիս։

— Դայակն ասում էր, թե Օլենկան գիշերը հազացել է։ Վաղը բժշկի ետևից չուղարկե՞նք արդյոք,— հարցրեց Անդրեյը։

— Ես նրան տաք բան եմ խմեցրել և վաղը ման գալու չեմ թողնի, հետո արդեն կտեսնենք,— պատասխանեց նա մի-պաղաղ։

Նրանք լուռ անցան մինչև ծառուղու վերջը։

— Ինչո՞ւ չպատասխանեցիր քո բարեկամուհի Սոնեչկայի նամակին,— հարցրեց նա։— Իսկ ես սպասում էի, քիչ մը-նաց փոստից ուշանալի։ Արդեն նրա երրորդ նամակն է անպատասխան մնում։

— Այո՛, ես ուզում եմ որքան կարելի է շուտ մոռանալ նրան...— ասաց Օլգան և լռեց։

— Ես քո կողմից բարևեցի Բիշուրինին,— նորից սկսեց Անդրեյը,— չէ՞, որ նա սիրահարված է քեզ, գոնե դրանով մի քիչ մխիթարվի, որ նրա ցորենը ժամկետին տեղ չի հասնի։

Օլգան չոր-չոր ժպտաց։

— Այո՛, դու ասել ես,— արձագանքեց նա անտարբեր։

— Ինչ է, քնե՞լ ես ուզում,— հարցրեց Անդրեյը։

Օլգայի սիրտը թրթռաց, և ոչ առաջին անգամ, հենց սկսվում էին գործին մոտիկ հարցերը։

— Դեռ ոչ,— արհեստական առույգությամբ ասաց նա,— ի՞նչ կա որ։

— Հիվա՞նդ ես,— հարցրեց կրկին Անդրեյը։

— Ո՛չ։ Ինչո՞ւ է քեզ այդպես թվում։

— Ուրեմն՝ ձանձրանո՞ւմ ես։

Օլգան երկու ձեռով պինդ սեղմեց նրա ուսը։

— Ո՛չ, ո՛չ,— ժխտում էր նա կեղծ-համարձակ ձայնով, որի մեջ, սակայն, կարծես իրոք ձանձրույթ էր հնչում։

Անդրեյը նրան դուրս բերեց ծառուղուց և դեմքը դարձրեց դեպի լուսնի լույսը։

— Ի՛նձ նայիր,— ասաց նա և սևեռակի նայեց Օլգայի աչքերի մեջ։

— Կարելի է կարծել, որ դու... դժբա՞խտ ես։ Քո աչքերն այսօր այնքան տարօրինակ են, և ոչ միայն այսօր... Քեզ ի՞նչ է պատահել, Օ՛լգա։

Անդրեյը նրա մեջքից բռնած նորից ծառուղի տարավ։

— Գիտե՞ս ինչ. ես... քաղցած եմ,— ասաց Օլգան՝ շանալով ծիծաղել։

— Սուտ մի՛ ասա, սուտ մի՛ ասա։ Ես չե՞մ սիրում,— շինծու խստությամբ ավելացրեց նա։

— Դժբա՞խտ եմ,— կշտամբանքով կրկնեց Օլգան՝ կանգնեցնելով նրան ծառուղում։— Այո՛, դժբախտ եմ գուցե նրանով... որ արդեն չափազա՞նց երջանիկ եմ,— վերջացրեց

Նա իր խոսքը ձայնի այնպիսի քնքուշ, մեղմ տոնով, որ Անդրեյը համբուրեց նրան։

Օլգան ավելի համարձակ դարձավ։ Թեկուզ թեթև, կատակի ձևով արված ենթադրությունը, որ ինքը կարող է զժբախտ լինել, անակնկալ կերպով նրան մղեց դեպի անկեղծությունը։

— Ես չեմ ձանձրանում և չեմ կարող ձանձրանալ. դու գիտես և ինքդ էլ, իհարկե, քո խոսքերին չես հավատում. հիվանդ չեմ, բայց... տխուր եմ... երբեմն լինում է... այ քեզ՝ անտանելի մարդ, եթե քեզանից թաքնվել չի՞ կարելի։ Այո՛, տխուր եմ, և ինքս էլ չգիտեմ՝ ինչո՞ւ։

Օլգան գլուխը դրեց նրա ուսին։

— Այ թե ի՞նչ։ Իսկ ինչի՞ց է,— հարցրեց նա Օլգային մեղմիկ՝ թեքվելով դեպի նա։

— Չգիտեմ,— կրկնեց Օլգան։

— Բայց և այնպես պետք է պատճառ լինի, եթե ոչ իմ մեջ, ոչ քո շուրջը, ապա ուրեմն հենց քո մեջ։ Երբեմն այդպիսի տխրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հիվանդության սաղմ... Առո՞ղջ ես արդյոք։

— Այո՛, կարող է պատահել,— ասաց Օլգան լրջորեն,— դրա նման մի բան է, թեև ես ոչինչ չեմ զգում։ Դու տեսնում ես, թե ինչպես եմ ուտում, զբոսնում, քնում, աշխատում։ Հանկարծ կարծես ինչ-որ բան է գալիս վրաս, ինչ-որ թախծոտություն... կյանքն ինձ թվում է... կարծես՝ ամեն ինչ չկա նրա մեջ..., Դե չէ՞, դու մի՛ լսի. այդ բոլորը դատարկ բան է...

— Խոսի՛ր, խոսի՛ր,— կպավ նա աշխուժորեն։— Էհ, ամեն ինչ չկա կյանքում. հետո է՞լ ինչ։

—Երբեմն ես կարծես վախենում եմ,— շարունակում էր Օլգան,— չլինի թե փոխվի այս ամենը, վերջանա... ինքս էլ չգիտեմ։ Կամ տանջվում եմ մի հիմար մտքով. էլ ի՞նչ է լինելու... ի՞նչ է այս երջանկությունը... ամբողջ կյանքը...— ասում էր նա ավելի ու ավելի ցածր, ամաչելով այդ հարցերից,— այս ուրախությունը, վիշտը... բնությունը...— շըշնջում էր նա,— այս բոլորը քաշում են ինձ էլի ինչ-որ տեղ, ես դժգոհ եմ մնում ամեն բանից... Աստվա՛ծ իմ։ Ես մինչև անգամ ամաչում եմ այս հիմարություններից... սա

նքաղկոտություն է., դու մի՛ նկատիր, մի՛ նայիր...— ավելացրեց նա աղերսող ձայնով, փաղաքշելով նրան։— Այդ տխրությունը շուտով կանցնի, և ինձ համար նորից այնպես լուսավոր, ուրախ կլինի, ինչպես ա՛յ, հենց հիմա եղավ։

Օլգան դպչում էր նրան այնպե՛ս վեհերոտ ու քնքշորեն, իբրև ամաչելով և կարծես նեբռդություն խնդրելով «հիմարությունների» համար։

Երկար հարցուփորձ էր անում նրան ամուսինը, երկար նա հաղորդում էր տխրության նշանները ինչպես հիվանդը բժշկին, աբստրահայտում էր բոլոր խուլ հարցերը, նկարագրում էր նրան իր հոգու շփոթմունքը և ապա, երբ անհետանում էր այդ պատրանքը, ամեն ինչ, ամեն ինչ, ինչ որ կարող էր մատաբերել, նկատել։

Շտոլցը նորից լռությամբ անցավ ծառուղով, գլուխը հակած երծքին՝ ամբողջ մտքով, տագնապով, տարակուսանքով խորասուզվելով կնոջ մութ խոստովանության մեջ։

Օլգան նրա աչքերի մեջ էր նայում, բայց ոչինչ չէր տեսնում, և երբ նրանք երրորդ անգամ հասան ծառուղու ծայրը, Օլգան թույլ չտվեց նրան դառնալ և իր հերթին նրան դուրս բերեց լուսնի լույսի տակ և հարցական նայեց աչքերի մեջ։

— Ի՞նչ,— ամաչկոտ հարցրեց նա։— Մտածողում ես իմ հիմարությունների վրա, հա՞։ Սիրտ տխրությունը շատ հիմար բան է, չէ՞։

Անդրեյը լուռ էր։

— Ի՞նչ ես լռում,— հարցրեց Օլգան անհամբեր։

— Դու երկար լռում էիր, թեև, իհարկե, գիտեիր, որ ես վաղուց եմ հետևում քեզ և նկատում. թող որ ես էլ մի քիչ լռեմ ու մտածեմ։ Դու ինձ հեշտ խնդիր չառաջադրեցիր։

— Ա՛յ, հիմա դու կսկսես մտածել, իսկ ես կտանջվեմ, որ դու մենակ ես մտածելու։ Ջո՞ւր ասացի,— ավելացրեց նա։— Ավելի լավ է՝ մի բան ասա...

— Ի՞նչ կարող եմ ասել ես քեզ,— ասում էր նա մտածկոտ։— Գուցե, քո մեջ դրսևորվում է դեռ նյարդերի քայքայումը. այն ժամանակ ո՛չ թե ես, այլ բժիշկը պիտի վճռի, թե ի՞նչ է պատահել քեզ։ Հարկավոր է վաղն ուղարկել... Իսկ եթե դա չէ...— սկսեց նա և մտածմունքի մեջ ընկավ։

— Ի՞նչ «իսկ եթե դա չէ», ասա՛,— ձեռք չէր քաշում նա անհամբերությամբ։

Անդրեյը գնում էր՝ շարունակ մտածելով։

— Դե լա՛վ,— ասում էր Օլգան՝ նրա ձեռքից քաշելով։

— Գուցե երևակայության առատությունից է. դու չափազանց աշխույժ ես... գուցեև հասունացել ես մինչև այն պահը...— վերջացրեց նա կիսաձայն, գրեթե ինքն իրեն։

— Խնդրում եմ՝ բարձր խոսիր, Անդրե՛յ։ Տանել չեմ կարող, երբ քեզ ու քեզ փնթփնթում ես,— տրտնջում էր նա։— Ես նրան հիմար բաներ ասացի, իսկ նա գլուխը կախե՛լ է և քթի տակ ինչ-որ բան է շշնջում։ Ես նույնիսկ սարսափում եմ քեզնից մթության մեջ...

— Ինչ ասեմ, չգիտեմ... «տխրություն է գալիս վրաս, ինչ-որ հարցեր անհանգստացնում են». ի՞նչ կհասկանաս դրանից։ Մենք դարձյալ կխոսենք այդ մասին և կտեսնենք. ինչպես երևում է՝ պետք է նորից լողանալ ծովում...

— Դու ասացիր քեզ ու քեզ՝ «Իսկ եթե... գուցե... հասունացել ես». ի՞նչ կար մտքիդ,— հարցնում էր Օլգան։

— Ես մտածում էի...— ասում էր նա դանդաղ, արտահայտվելով մտախոհ կերպով և ինքն էլ չվստահելով իր մտքին, կարծես նույնպես ամաչելով իր խոսքերից,— ա՛յ, տեսնո՞ւմ ես... բոպեներ են լինում... այսինքն՝ ուզում եմ ասել, եթե դա որևէ խանգարման նշան չէ, եթե դու բոլորովին առողջ ես, ապա գուցե, հասունացել ես, մոտեցել ես այն պահին, երբ կանգ է առնում կյանքի աճը... երբ առեղծվածներ չկան, այն բացահայտվել է ամբողջությամբ...

— Դու, կարծեմ, ուզում ես ասել, թե պառավե՞լ եմ,— ընդհատեց Օլգան աշխուժորեն։— Չհամարձակվե՛ս։— Նույնիսկ սպառնաց Անդրեյին։— Ես դեռ ջահել եմ, ուժեղ... — ավելացրեց նա՝ ուղղվելով։

Անդրեյը ծիծաղեց։

— Մի՛ վախենա,— ասաց նա,— դու, կարծեմ, տրամադրություն չունես երբե՞ք պառավելու։ Ո՛չ, այն չէ... ծերության ժամանակ ուժերը նվազում են և դադարում կյանքի հետ պայքարելուց։ Ո՛չ, քո տրտմությունը, տանջանքը,— եթե միայն այն է, ի՞նչ ես եմ կարծում,— ավելի շուտ ուժի նշան է... Աշխույժ, զրգռված մտքի որոնումները երբեմն դուրս են

գալիս կենցաղային սահմաններից, չեն գտնում, իհարկի, պատասխաններ, և գալիս է տխրությունը... ժամանակավոր դժգոհությունը կյանքից... Դա այն հոգու տխրությունն է, որը կյանքին հարց է տալիս նրա գաղտնիքի մասին... Գուցե, քեզ հետ էլ նույնն է տեղի ունենում։ Եթե այդպես է, հիմարություններ չեն դրանք։

Օլգան հառաչեց, բայց, կարծես, ավելի շուտ ուրախությունից, որ իր երկյուղները վերջացան և ինքը ամուսնու աչքում ո՛չ թե ընկնում է, այլ ընդհակառակը...

— Բայց չէ՞ որ ես երջանիկ եմ. միտքդ պարապ չէ, չեմ երազում, կյանքս բազմազան է, էլ ի՞նչ է պետք։ Ինչի՞ համար են այդ հարցերը,— ասում էր Օլգան։— Դա հիվանդություն է, ճնշում։

— Այո՛, թերևս, ճնշում է մութ, թույլ մտքի համար, որ նախապատրաստված չէ դրան։ Այդ տրտմությունն ու հարցերը, գուցե, շատերին խելագարեցրել են. ոմանց դրանք երևում են որպես այլանդակ տեսիլներ, որպես մտքի բանդագուշանք...

— Երջանկությունը ելնում է ափերից, այնքան լիքն է, այնպես ուզում ես ապրել... իսկ ապստեղ հանկարծ խառնվում է ինչ-որ դառնություն...

— Ա՜։ Դա հատուցումն է Պրոմեթևսի կրակի՞ համար։ Բավական չէ, որ պետք է դիմանաս, դեռ պետք է սիրես այդ տխրությունը և հարգես կասկածներն ու հարցերը. դրանք ծայրեծայր լցված ավելցուկ են, կյանքի շռայլությունը և ավելի հաճախ երևան են գալիս երջանկության գագաթներին, երբ կոպիտ ցանկություններ չկան. նրանք առօրյա կյանքի մեջ չեն ծնվում. այնտեղ դրանց տեղը չէ, այնտեղ վիշտ ու կարիք կա. ամբոխները գնում են և չգիտեն կասկածների այդ մշուշը, հարցերի անձուկը... Բայց ով դրանց հանդիպել է իր ժամանակին, նրա համար դրանք ո՛չ թե մեխի ցլուխ են, այլ սիրելի հյուրեր։

— Բայց դրանցից գլուխ հանել չես կարող. դրանք անձկություն ու անտարբերություն են առաջացնում... գրեթե ամեն ինչի նկատմամբ...— ավելացրեց Օլգան անվճռականորեն։

— Բայց երկա՞ր ժամանակով արդյոք։ Հետո նրանք թար-

մացնում են կյանքը,— ասում էր Անդրեյը։— Նրանք բեռում հասցնում են անդունդի ծայրին, որից ոչինչ հարցնելիմանալ չես կարող, և ս դպում են ավելի մեծ սիրով նորից կյանքին նայել... Նրան, իրենց հետ պայքարելու են դուրս կանչում արդեն փորձված ուժերին, կարծես, որպեսզի թույլ չտան նրանց ննջել...

— Տանջվե՞լ ինչ-որ մշուշի, ուրվականի պատճառով,— գանգատվում էր Օլգան։— Ամեն ինչ լուսավոր է, բայց մեկ էլ տեսար՝ կյանքի վրա չարագուշակ ստվեր է ընկնում։ Մի՞թե միջոցներ չկան։

— Ինչպե՞ս կարող է չլինել։ Նեցո՛ւկ կյանքում։ Իսկ եթե չկա այն, առանց հարցերի էլ զզվելի է ապրելը։

— Ի՞նչ անել։ Ենթարկվել և թախծե՞լ։

— Ոչինչ,— ասաց Անդրեյը,— զինվել հաստատակամությամբ և համբերությամբ, համառորեն գնալ սեփական ուղիով։ Ես ու դու տիտաններ չենք,— շարունակում էր նա՝ գրկելով Օլգային,— մենք մանֆրեդների ու ֆաուստների հետ հանդուգն պայքարի չենք ելնի խռովահույզ հարցերի դեմ, նրանց մարտահրավերը չենք ընդունի, կխոնարհենք գլուխներս և հեզությամբ կանցկացնենք դժվար րոպեն, և հետո նորից կժպտա կյանքը, երջանկությունը և...

— Իսկ եթե այդ հարցերը մեզնից երբեք ձեռ չքաշե՞ն, վիշտն ավելի ու ավելի անհանգստացնի՞...— հարցնում էր Օլգան։

— Ի՞նչ արած։ Կընդունենք այն իբրև կյանքի նոր տարբերք... Բայց ո՛չ, դա չի լինում, չի՛ կարող լինել մեզ մոտ։ Դա քո տրտմությունը չէ, մարդկության ընդհանուր տկարությունն է։ Քեզ վրա ցայտել է մի կաթիլը... Սոսկալի է, երբ մարդը կտրվում է կյանքից... երբ նեցուկ չկա։ Իսկ մեզ մոտ... Աստված տա, որ քո այդ տրտմությունը ա՛յն լինի, ինչ ես եմ կարծում, և ոչ թե որևէ հիվանդության նշան... դա ավելի վատ է։ Ահա մի վիշտ, որի առաջ ես կընկճվեմ առանց պաշտպանվելու, անզոր... Թե չէ՝ մի՞թե մշուշը, տրտմությունը, ինչ-որ կասկածներ, հարցեր կարող են մեզ զրկել մեր բարիքից, մեր...

Նա խոսքը չավարտեց, իսկ Օլգան խելագարի պես գիրկը

նետվեց և բաքոսի քրմուհու նման, կրքոտ նվաղման մեջ, մի ակնթարթ մարեց, փաթաթվելով նրա պարանոցին։

— Ո՛չ մշուշը, ո՛չ տրտմությունը, ո՛չ հիվանդությունը, ո՛չ... նույնիսկ մա՛հը,— շշնջում էր նա խանդավառությամբ, նորից երջանիկ, հանգստացած, ուրախ։ Նրան թվում էր, թե ինքը երբեք Անդրեյին այնպես բուռն սիրով չի սիրել, ինչպես այդ րոպեին։

— Տե՛ս, որ բախտը չլսի քո տրտունջը,— եզրափակեց Անդրեյը սնահավատ նկատողությամբ, որ ներշնչում էր նրան քնքուշ զգուշությունը,— և ապերախտություն չհամարի՞։ Նա չի սիրում, երբ չեն գնահատում իր պարգևները։ Մինչև այժմ դեռ դու ճանաչում էիր կյանքը, մինչդեռ պետք է տեսնել այն... Ա՛յ, սպասի՛ր, երբ կյանքը կծավալվի, վրա կհասնեն վիշտն ու աշխատանքը... իսկ դրանք կգան... այն ժամանակ... այդ հարցերը չեն լինի մարդու հոգսը... Խնայիր ուժերդ,— ավելացրեց Շտոլցը մեղմիկ, համարյա ինքն իրեն, որպես նրա բուռն խոյանքին պատասխան։ Նրա խոսքերի մեջ հնչում էր տրտմությունը, կարծես նա արդեն հեռվում տեսնում էր և՛ «վիշտը, և՛ աշխատանքը»։

Օլգան լուռ էր, բոպեապես զարմացած նրա ձայնի տրխուր հնչյունից։ Նա անսահմանորեն հավատում էր Անդրեյին, հավատում էր նաև նրա ձայնին։ Նա վարակվեց Անդրեյի մտախոհությունից, կենտրոնացավ, ամփոփվեց ինքն իր մեջ։

Հենվելով Անդրեյի վրա՝ նա մեքենաբար և դանդաղ ման էր գալիս ծառուղով, ընդկղմված համառ լռության մեջ։ Նա վախվխելով, ամուսնու ետևից նայում էր կյանքի հեռուները, այնտեղ որտեղ նրա ասելով, վրա է հասնելու «փորձությունների» պահը, որտեղ սպասում է «վիշտն ու աշխատանքը»։

Նա սկսեց ուրիշ երազ տեսնել, ո՛չ թե կապույտ գիշեր, բացվում էր կյանքի ուրիշ կողմը, ոչ թափանցիկ ու տոնական, անդորրության մեջ, անսահման առատության մեջ։ Նրա հետ միայնակ...

Ո՛չ, նա այնտեղ տեսնում էր կորուստների արցունքներով ողողված զրկանքների, անխուսափելի զոհերի մի շարան, պահեցողության և պարապության մեջ առաջացած քրմահաճույքներից ակամա հրաժարվելու մի կյանք, հեծկլտոցներ ու հառաչանքներ նոր, հիմա անծանոթ զգացմունքնե-

րից. նա երազի պես տեսնում էր հիվանդություններ, գործերի քայքայում, ամուսնու կորուստը...

Նա սարսուռ էր զգում, ուժասպառ լինում, բայց արի հետաքրքրությամբ նայում էր այդ նոր կենսաձևի վրա, սարսափով դիտում էր այն և չափում էր իր ուժերը... Միայն սերն էր, որ այդ երազի մեջ էլ չէր դավաճանում նրան և հավատարիմ պահապան էր նաև նոր կյանքի. բայց այդ սերն էլ ա՜յն չէր։

Չկա՞ նրա ջերմ շունչը, չկան լուսավոր ճառագայթները և կապույտ գիշերը. տարիներ անց ամեն ինչ երեխայական խաղ էր թվում այն հեռավոր սիրո առջև, որ հանձն էր առել իոր և ահեղ կյանքը։ Այնտեղ համբույր ու ծիծաղ չի լսվում, ոչ էլ դողդոջուն-մտախոհ զրույցներ պուրակում, ծաղիկների մեջ, բնության ու կյանքի տոնին... Ամեն ինչ «թառամել է ու անցել»։

Այն անթառամ և անկորույս սերը հզոր, ինչպես կյանքի ուժը, պատել էր նրանց դեմքերը. միահամուռ վշտի տարին լուսավորվում էր միատեղ տանջանքի ծանր ու դանդաղ փոխանակվող հայացքի մեջ, լսվում անվերջ փոխադարձ համբերողության մեջ կյանքի տվայտանքի դեմ, զսպված արցունքների և խեղդված հեկեկանքների մեջ...

Օլգային պաշարող մշուշապատ տրտմության և հարցերի մեջ մեղմիկ տեղավորվեցին ուրիշ, թեև հեռավոր, բայց պարզ, որոշակի և ահեղ երազներ...

Ամուսնու հանգստացուցիչ և հաստատուն խոսքի ազդեցությամբ, դեպի նա ունեցած անսահման վստահությամբ հանգստանում էր Օլգան թե՛ իր առեղծվածային, ոչ բոլորին ծանոթ տրտմությունից, թե՛ ապագայի կանխագուշակ ու ահեղ երազներից, աշխուժորեն առաջ էր ընթանում։

«Մշուշից» հետո եկավ պայծառ առավոտը մայրական հոգսերով, տանտիրուհու հոգսերով, այնտեղ նրան հրապուրում էր ծաղկանոցն ու դաշտը, այստեղ ամուսնու արանձնասենյակը։ Միայն թե նա ո՜չ թե անհոգ ինքնավայելքով խաղ էր անում կյանքի հետ, այլ ապրում էր թաքնված ու առույգ մտքով, պատրաստվում էր, սպասում...

Նա աճում էր ավելի ու ավելի բարձր... Անդրեյը տեսնում էր, որ կինարմատի ու կնոջ իր նախկին իդեալը անհասանելի

է, բայց նա երջանիկ էր և դրա դժգույն արտացոլումով Օլգայի մեջ, նա այդ էլ չէր սպասում։

Մինչդեռ, նրան էլ դեռ երկար, համարյա ամբողջ կյանքում հարկավոր էր քիչ ջանք գործ չդնել, որպեսզի միևնույն բարձրության վրա պահպանի ինքնասեր, հպարտ Օլգայի աչքերում տղամարդու իր արժանապատվությունը ո՜չ թե գրեհիկ խանդից դրդված, այլ նրա համար, որպեսզի այդ բյուրեղյա կյանքը չմռայլվի, իսկ դա-կարող էր տեղի ունենալ, եթե թեկուզ փոքր չափով խախտվեր նրա հավատը Անդրեյի վերաբերմամբ։

Շատ կանանց այս բոլորը պետք չէ. մի անգամ ամուսնանալով՝ նրանք հնազանդությամբ ընդունում են ամուսնու թե՛ լավ և թե՛ վատ հատկությունները, անպայմանորեն հաշտվում են իրենց համար պատրաստված դրության և շրջանի հետ կամ նույնպիսի հնազանդությամբ զիջում են առաջին պատահական հրապուրանքին, միանգամից ընդունելով նրան հակառակելու անկարելիությունը կամ հարկավոր չհամարելով հակառակվել նրան։ «Իբր ճակատագիր է, կրքեր, կինը թույլ արարած է» և այլն։

Նույնիսկ եթե ամուսինն ամբոխից բարձր է իր խելքով՝ տղամարդու այդ հմայիչ ուժով, այդպիսի կանայք հպարտանում են ամուսնու այդ առավելությամբ, որպես որևէ թանկագին մանյակով, և այն էլ այն դեպքում միայն, եթե այդ խելքը կույր է մնում նրանց խղճուկ, կանացի արարմունքների վերաբերմամբ։ Իսկ եթե նա հանդգնի թափանցել նրանց նենգավոր, չնչին, երբեմն արատավոր գոյության մանր կատակերգության մեջ, այդ խելքից նրանց դժվարն է գալիս և նեզված են զգում իրենց։

Օլգան չգիտեր կույր բախտին հպատակվելու այդ տրամաբանությունը և չէր հասկանում կանացի մանր կրքերն ու հրապուրումները։ Մի անգամ ճանաչելով ընտրած մարդու արժանապատվությունն ու իրավունքներն իր նկատմամբ, նա հավատում էր նրան և այդ պատճառով էլ սիրում, իսկ երբ դադարում էր հավատալուց, դադարում էր նաև սիրելուց, ինչպես պատահեց Օբլոմովի վերաբերմամբ։

Բայց այնտեղ նրա քայլերը դեռ անվճռական էին, կամքը՝ երերուն. նա հենց նոր էր սկսել թափանցել կյանքի մեջ և

խորհել նրա մասին, դեռ նոր էր իր մտքի ու բնավորության տարերքը գիտակցության վերածում և նյութը էր հավաքում. ստեղծերու գործը դեռ չէր սկսած, կյանքի ուղիները գաղափարված չէին։

Բայց այժմ նա վստահացել ու հավատացել էր Անդրեյին ո՛չ թե կուրորեն, այլ գիտակցաբար և այդպիսի կատարելության նրա իդեալը մարմնանում էր Անդրեյի մեջ։ Որքան ավելի շատ, որքան ավելի գիտակցաբար էր Օլգան հավատում Անդրեյին, այնքան ավելի դժվար էր Անդրեյի համար միևնույն բարձրության վրա մնալ, լինել ո՛չ միայն նրա մտքի ու սրտի, այլև երևակայության հերոսը։ Իսկ Օլգան հավատում էր Անդրեյին այնպես, որ նրա և իր միջև այլ միջնորդ, այլ ինստանցիա չէր ընդունում, բացի աստծուց։

Այդ պատճառով էլ Օլգան չէր դիմանա իր ճանաչած արժանիքները մազաչափ անգամ նվազեցնելուն. յուրաքանչյուր կեղծ նոտա նրա բնավորության կամ մտքի մեջ ցնցող դեսանանս կառաջացներ։ Երջանկության խորտակված շենքը Օլգային կթաղեր ավերակների տակ, կամ, եթե նրա ուժերն անվնաս մնային, նա կորոներ...

Բայց ոչ, այդպիսի կանայք երկու անգամ չեն սխալվում.. Այդպիսի հավատի, այդպիսի սիրո անկումից հետո վերածնությունն անկարելի է։

Շատոլցը խորապես երջանիկ էր իր բովանդակալից, հուզումնալից կյանքով, որի մեջ անթառամ գարունն էր ծաղկում, և խանդով, եռանդով, աշխարջությամբ մշակում, պահպանում ու զարգացնում էր այն։ Հոգու հատակից այն ժամանակ էր միայն սարսափը բարձրանում, երբ նա մտաբերում էր, որ Օլգան կորստից մի մազաչափ հեռու էր գտնվում, որ այդ կտրված ուղին՝ ի մի ձուլված նրանց երկու գոյությունները, կա՛ղող էին բաժանվել. որ կյանքի ուղիները չգիտենալը կարող էր թույլ տալ, որ կատարվի կորստաբեր սխալը, որ Օբլոմովը...

Նա ցնցվում էր։ Ինչպե՞ս, Օլգան ա՛յն կյանքի մեջ, որ պատրաստում էր նրա համար Օբլոմովը։ Նա՝ մի օրից մյուսը սողացող կյանքի մեջ, գյուղական տիկին, իր եգիպտացորենի դալակը, տանտիրուհի, և ուրիշ ոչի՞նչ։

Բոլոր հարցերը, կասկածները, կյանքի ամբողջ անդը

կծախսվե՞ր տնտեսության հոգսերի, տոներին, հյուրերին, ընտանեկան հավաքույթներին սպասելու վրա, ծնունդների, մկրտությունների վրա, ամուսնու ապատիայի և քնի վրա։

Ամուսնությունը միայն ձև կլիներ և ոչ թե բովանդակություն, միջոց և ոչ թե նպատակ. լայն և անփոփոխ շրջանակ կծառայեր այցելություններին, հյուրերի ընդունելության, ճաշերի ու երեկույթների, դատարկ շաղակրատության համար...

Ինչպե՞ս դիմանա նա այդ կյանքին։ Նախ, գեսուղեն կընկնի՝ որոնելով ու գուշակելով կյանքի գաղտնիքը, լաց կլինի, կտանջվի, հետո կվարժվի, կհաստանա, կուտի, կքնի, կբթանա...

Ո՛չ, այդպես չէր լինի. նա լաց կլինի, կտանջվի, կհյուծվի և կմեռնի սիրոջ, բաբի և անզոր ամուսնու գրկում... Խե՜ղճ Օլգա։

Իսկ, եթե կրակը չմարի, կյանքը չմեռնի, եթե ուժերը դիմանան և ազատություն պահանջեն, եթե նա թևերը բացանի, իբրև մի ուժեղ ու սրատես էգ արծիվ, որ մի վայրկյան գերի է ընկել թույլ ձեռքերի մեջ, և սուրա դեպի այն բարձր ժայռը, որտեղ տեսնում է արծվին, որն է՛լ ավելի ուժեղ ու սրատես է նրանի՞ց... Խե՜ղճ Իլյա։

— Խե՜ղճ Իլյա,— ասաց մի անգամ Անդրեյը բարձրաձայն, հիշելով անցյալը։

Այդ անունը լսելով՝ Օլգան հանկարծ ձեռքերը, ասեղնագործն էլ հետը, ցած դրեց ծնկներին, գլուխը ետ գցեց և խոր մտածմունքի մեջ ընկավ։ Բացականչությունը հիշողություն զարթեցրեց։

— Ի՞նչ է պատահել նրան,— հարցրեց նա՝ հետո։— Մի՞թե չի կարելի իմանալ։

Անդրեյը ուսերը թոթվեց։

— Կարծես,— ասաց նա,— մենք այն ժամանակներն ենք ապրում, երբ փոստ չկար, երբ զանազան կողմեր գնացող մարդիկ միմյանց կորած էին համարում և իրոք էլ անհետ կորչում էին։

—Նորից գրեիր քո բարեկամներից որևէ մեկին. գոնե, կիմանային...

— Ոչինչ էլ չէին իմանա, բացի այն, ինչ մենք արդեն գի-

տենք. կենդանի է, առողջ է, նույն բնակարանում. սա ես գիտեմ առանց բարեկամներիս էլ։ Իսկ ինչպես է նա, ինչպես է նա իր կյանքն անցկացնում, մեռե՞լ է արդյոք բարոյապես, թե դեռ մլմլում է կյանքի կայծը. կոզմնակի մարդն այդ չի իմանա...

— Ա՜խ, այդպես մի՛ խոսի, Անդրեյ. ես սարսափում եմ և ինձ ցավ է պատճառում լսե՞լ այդ։ Ես կուզենայի, և վախենում եմ իմանալ...

Օլգան պատրաստ էր լաց լինելու։

— Գարնանը Պետերբուրգում կլինենք, ինքներս կիմանանք։

— Իմանալը քիչ է, հարկավոր է ամեն բան անել...

— Իսկ ես մի՞թե չեմ արել։ Քի՞չ եմ համոզել նրան, նրա փոխարեն հոգացել, նրա գործերը կարգավորել, իսկ նա գոնե արձագանքեր դրան։ Տեսակցելու ժամանակ ամեն բանի պատրաստ է, իսկ հենց որ աչքից հեռանում ես՝ մնաս բարով, նորից քնեց։ Քարշ ես գալիս հետը, ինչպես հարբեցողի՝ հետ։

— Ինչո՞ւ աչքից հեռու,— առարկեց Օլգան անհամբեր։— Նրա հետ պետք է վճռաբար վարվել. պետք է նրան նստեցնել կառքի և տանել։ Չէ՞ որ հիմա կալվածքն ենք տեղափոխվում. նա մեզնից մոտիկ կլինի... մենք նրան կվերցնենք մեզ հետ։

— Լա՜վ հոգս ենք գտել մեզ համար,— դատում էր Անդրեյը, ետուառաջ քայլելով սենյակում։— Եվ վե՞րջ էլ չունի։

— Դու ճնշվո՞ւմ ես այդ հոգսից,— ասաց Օլգան։— Դա նորությո՞ւն է։ Ես առաջին անգամ եմ քեզնից տրտունջ լսում այդ հոգսի առթիվ։

— Ես չեմ տրտնջում,— պատասխանում էր Անդրեյը,— այլ դատում եմ։

— Որտեղի՞ց մեջտեղ եկավ այդ դատողությունը։ Ինքդ քեզ խոստովանեցիր, որ ձանձրալի է, անհանգստություն է պատճառում, այո՞։

Օլգան Անդրեյին նայեց քննական հայացքով։ Անդրեյը գլուխը շարժեց բացասաբար։

— Ո՛չ, ոչ թե անհանգստություն է պատճառում, այլ անօգուտ է. այդպես եմ մտածում երբեմն։

— Մի՛ ասա, մի՛ ասա,— կանգնեցրեց Անդրեյին Օլգան։— Ես դարձյալ, ինչպես այն շաբաթ, ամբողջ օրը կմտածեմ դրա մասին ու կթախծեմ։ Եթե քո մեջ հանգել է բարեկամությունը դեպի նա, ապա դեպի մարդը ունեցած սիրուց դու պետք է այդ հոգսը կրես։ Եթե դու հոգնես, ես մենակ կգնամ և առանց նրա դուրս չեմ գա. նա կզգացվի իմ խնդրանքներից. զգում եմ, որ դառնապես լաց կլինեմ, եթե նրան սպանված, մեռա՞ծ տեսնեմ։ Գուցե, արցունքները...

— Դու կարծում ես՝ հարությո՞ւն կտան,— ընդհատեց Անդրեյը։

— Ո՛չ, հարություն չեն տա գործունեության համար, գոնե կստիպեն նրան իր շուրջը նայել և կյանքը փոփոխել, ավելի լավ դարձնել։ Նա կեղտի մեջ չի լինի, այլ կլինի իրեն հավասարներին մոտիկ, մեզ հետ։ Ես այն ժամանակ երևացի միայն, և նա մի րոպեում արթնացավ ու ամաչեց...

— Արդյոք նրան առաջվա պես չե՞ս սիրում,— հարցրեց Անդրեյը կատակով։

— Ո՛չ,— առանց կատակ անելու, մտախոհ, կարծես անցյալը դիտելով՝ ասում էր Օլգան։— Ես նրան առաջվա նման չեմ սիրում, բայց մի բան կա, որ սիրում եմ նրա մեջ, որին կարծեմ, հավատարիմ եմ մնացել և չեմ փոխվի, ինչպես ոմանք...

— Այդ ովքե՞ր են ոմանքը։ Ասա՛, թունավո՞ր օձ, կծի՛ր, խայթի՛ր. գուցե ես՞։ Սխալվում ես։ Իսկ եթե ուզում ես ճշմարտությունն իմանալ, ես քեզ էլ սովորեցրի սիրել նրան և քիչ էր մնում բարի վերջի հասցնեի։ Առանց ինձ դու նրա կողքից կանցնեիր՝ չնկատելով նրան։ Ե՛ս քեզ հասկացրի, որ նա ուրիշներից քիչ խելք չունի, միայն թե այն թաղված, ճզմված է ամեն տեսակ անպետք բաներով և պարապությունից քնել է։ Ուզո՞ւմ ես, ասեմ քեզ, թե ինչու է նա թանկ քեզ համար, ի՞նչ բանի համար ես դու դեռ սիրում նրան։

Օլգան գլխով արեց իբրև համաձայնության նշան։

— Այն բանի համար, ինչ նրա մեջ ամեն խելքից էլ թանկ է. ազնի՞վ, հավատարի՞մ սիրտը։ Դա նրա բնածին ոսկին է. նա այն անվնաս անց է կացրել կյանքի միջով։ Նա վայր է ընկել հարվածներից, սառել է, քնել է, վերջապես, սպանված, հիասթափված, ապրելու ուժը կորցնելով, բայց

ազնվությունն ու հավատարմությունը չի կորցրել։ Նրա սիրտը ոչ մի կեղծ նոտա չի հնչեցրել, կեղտը չի կպել նրան։ Նրան չի հրապուրել ոչ մի զարդարուն սուտ և ոչինչ նրան դեպի կեղծ ճանապարհ չի շեղի, թող նրա շուրջը անպետքություն, չարության մի ամբողջ օվկիանոս փոթորկի, թող ամբողջ աշխարհը թունավորվի թույնով և գլխիվայր շուռ գա. Օբլոմովը երբեք չի երկրպագի ստության կուռքին, նրա հոգին միշտ մաքուր, լուսավոր, ազնիվ կլինի... Դա բյուրեղյա, թափանցիկ հոգի է. այդպիսի մարդիկ քիչ են. նրանք հազվագյուտ են. նրանք մարգարտահատի՛կ են ամբոխի մեջ։ Նրա սիրտը ոչնչով չես կաշառի, նրա վրա կարելի է միշտ և ամենուրեք հույս դնել։ Ահա թե դու ինչին ես հավատարիմ մնացել և ինչի համար հոգացողությունը նրա մասին ինձ երբեք ծանր չի լինի։ Շատ մարդիկ եմ ճանաչել բարձր հատկություններով, բայց երբեք չեմ հանդիպել ավելի մաքուր, ավելի պայծառ և ավելի պարզասիրտ. շատերին եմ սիրել, բայց ոչ ոքի այնպես հաստատուն ու ջերմ չեմ սիրել, ինչպես Օբլոմովին։ Մի անգամ ճանաչելով նրան՝ այլևս չի կարելի չսիրել նրան։ Այդպե՞ս է։ Գուշակեցի՞։

Օլգան լուռ էր և աչքերը հառել էր աշխատանքի վրա։ Անդրեյը մտածմունքի մեջ ընկավ։

— Մի՞թե այդ չէ բոլորը։ Էլ ի՞նչ կա։ Ա՜խ...— սթափվելով, ուրախ ավելացրեց նա հետո։— Բոլորովին մոռացել էի «աղավնու քնքշությունը»...

Օլգան ծիծաղեց, արագ թողեց իր ասեղնագործությունը, վազեց Անդրեյի մոտ, փաթաթվեց նրա պարանոցով, մի քանի րոպե ճառագայթափայլ աչքերով նայեց ուղիղ նրա աչքերի մեջ, հետո մտածմունքի մեջ ընկավ՝ գլուխը դնելով ամուսնու ուսին։ Նրա հիշողության մեջ հարություն առավ Օբլոմովի հեզ, մտախոհ դեմքը, նրա քնքուշ հայացքը, հլությունը, հետո նրա խղճալի, ամաչկոտ ժպիտը, որով նա անջատման ժամին պատասխանեց Օլգայի կշտամբանքին... և նա այնպե՞ս ցավ զգաց, այնպե՞ս խղճաց նրան...

— Դու նրան չե՞ս լքի, չե՞ս թողնի,— ասում էր նա՝ ձեռքերը չվերցնելով ամուսնու պարանոցից։

— Երբե՞ք։ Այն դեպքում միայն, եթե անակնկալ կերպով մեր միջև որևէ անդունդ բացվի, պատնեշ կանգնի։

Օլգան համբուրեց ամուսնուն։

— Պետերբուրգում ինձ էլ հետդ կտանես նրա մոտ։

Անդրեյն անվճռականորեն լուռ էր։

— Այո՞, այո՞,— համառորեն պատասխան էր պահանջում Օլգան։

— Լսի՛ր, Օլգա,— ասաց նա՝ աշխատելով պարանոցն ազատել նրա ձեռքերի օղակից,— նախ հարկավոր է...

— Ո՛չ, ասա, այո՞, խոստացի՛ր, ես ձեռք չե՞մ քաշի։

— Թերևս,— պատասխանեց նա,— բայց միայն ո՛չ թե առաջին, այլ երկրորդ անգամ. ես գիտեմ, թե դու քեզ ինչպես կզգաս, եթե նա...

— Մի՛ ասա, մի՛ ասա...— ընդհատեց նա։— Այո՛, դու ինձ հետդ կտանես, երկուսով մենք ամեն բան կանենք։ Դու մենակ չե՞ս կարողանա, չե՞ս ցանկանա։

— Թող այդպես լինի, բայց քո տրամադրությունը կփոխվի և, գուցե, երկար ժամանակով,— ասաց նա՝ ոչ բոլորովին գոհ, որ Օլգան իրենից համաձայնություն կորզեց։

— Միտդ պահիր, ուրեմն,— վերջացրեց խոսքը Օլգան՝ նստելով իր տեղը,— որ դու կնահանջես միայն այն դեպքում, երբ «անդունդ բացվի կամ պատնեշ կանգնի նրա և քո միջև»։ Ես այդ խոսքերը չեմ մոռանա։

IX

Խաղաղություն և անդորր է իշխում Վիբորգյան քաղաքամասի, նրա չսալահատակված փողոցների, փայտե մայթերի, աղքատ պարտեզների, եղնջապատ առուների վրա, որտեղ ցանկապատի մոտ մի այծ՝ կտրված թոկի կտորը վզին՝ շնասիրությամբ խոտ է պոկոտում կամ բութ կերպով ննջում է, մեկ էլ կեսօրին թխթխկում են մայթի վրայով անցնող գրագրի պճնամոլական, բարձրակրունկ կոշիկները, շարժվում է պատուհանի մուսլինե վարագույրիկը և խորդանոցի դուրս է նայում չինովնիկի կինը, կամ հանկարծ պարտեզում, ցանկապատի ետևից վայրկենապես դուրս է թռչում և նույն րոպեին անհետանում որևէ աղջկա թարմ դեմք, նրա ետևից դուրս պրծնում մի այլ. այդօրինակ դեմք և նույնպես ան-

հետանում է, հետո նորից առաջինն է երևում և նրան փոխարինում է երկրորդը. հնչում է ճռճռանակ նստած աղջիկների ճիչն ու հոհոռոցը։

Ամեն ինչ խաղաղ է Պշենիցինայի տանը։ Կմտնես փոքրիկ բակը և իսկույն կենդանի իդիլիան կպարուրի քեզ. հավերն ու աքաղաղներն իրար կանցնեն և կվազեն անկյուններում պահ մտնելու, շունը կսկսի դեսուդեն թռչել շղթայի երկարությամբ ու հաչել. Ակուլինան կդադարի կով կթելը, իսկ դռնապանը՝ փայտ կոտրելը, և երկուսն էլ հետաքրքրությամբ կնայեն այցելուին։

— Ո՞ւմ եք ուզում,— կհարցնի նա և, լսելով Իլյա Իլյիչի կամ տանտիրուհու անունը, լուռ ցույց կտա մուտքը և նորից կսկսի փայտ կոտրել, իսկ այցելուն մաքուր, ավազ փռած՝ շավղով կգնա դեպի մուտքը, որի աստիճանների վրա փռված է հասարակ, մաքուր փոքրիկ գորգ, կաշի զանգակիկի պղնձե լավ փայլեցրած բռնակը, և դուռը բաց կանի Անիսյան, երեխաները, երբեմն տանտիրուհին ինքը կամ Զախարը. Զախարը՝ բոլորից հետո։

Ամեն ինչ Պշենիցինայի տանը տնտեսության այնպիսի առատությամբ ու լիությամբ էր շնչում, որպիսին առաջ էլ չէր լինում, և երբ Ագաֆյա Մատվեևնան ապրում էր մի տընտեսությամբ իր եղբոր հետ։

Խոհանոցը, նկուղները, բուֆետը. ամեն տեղ դարակներ էին դրված ամանեղենով, մեծ ու փոքր, կլոր ու ձվաձև սկուտեղներով, գավաթներով, ափսեների կույտերով, չուգունե, պղնձե և կավե պուտուկներով։

Պահարաններում դարսված էր թե՛ իր, վաղուց արդեն գրավից վերցված և այժմ այլևս երբեք գրավ չդրվող արծաթեղենը, թե՛ Օբլոմովի արծաթեղենը։

Ահագին, լայնափոր և՛ փոքրիկ թեյամանների ամբողջ շարքեր ու մի քանի շարք հախճապակե գավաթներ, հասարակ, նկարազարդով, ոսկեզօծ, նշանաբանով, բոցավառվող սրտերով, չինացիներով։ Ապակե մեծ բանկաներ սուրճով, դարչինով, վանիլով, բյուրեղապակե թեյատուփերով, յուղի ու քացախի ամաններով։

Այնուհետև ամբողջ դարակներ բռնված էին լինում կապոցներով, սրվակներով, տնային դեղերի տուփիկներով, դեղախոտերով, թրջոցներով, սպեղանիներով, սպիրտներով, կամֆորայով, դեղափոշիներով, անուշաբույր նյութերով. հենց այդտեղ էին նաև օճառը, հաշիաները մաքրելու, բծերը և այլնը հանելու դեղերը. այն ամենը, ինչ կգտնես գավառական յուրաքանչյուր տան մեջ, ամեն մի տնարար տանտիկնոջ մոտ։

Երբ Ագաֆյա Մատվեևնան հանկարծ բաց էր անում այն պահարանի դուռը, որ լցված էր այս բոլոր պարագաներով, նա ինքն էլ չէր դիմանում բոլոր թմրեցուցիչ հոտերին և առաջին պահ դեմքը մի կողմ էր շուռ տալիս։

Մառանում առաստաղից կախված էին խոզի բղեր, որպեսզի մկները չփչացնեն, պանիրներ, շաքարի գլուխներ, ապխտած ու կախ արած ձուկ, չորացրած սունկով լի տոպրակներ, չուխոնից[1] գնած ընկույզով լի պարկեր։

Հատակին դրված էին յուղի տակառիկներ, հում ջերով լի մեծ, ծածկած կճուճներ, ձվերով լի զամբյուղներ և էլ ի՞նչ ասե՛ս, որ չկար։ Հարկավոր է մի այլ Հոմերոսի գրիչ, որպեսզի լիովին ու մանրամասնությամբ թվարկի այն ամենը, ինչ կուտակված էր տնային կյանքի այս փոքրիկ տապանի բոլոր անկյուններում, բոլոր դարակների վրա։

Խոհանոցը մեծ տանտիրուհու և նրա արժանավոր օգնականուհի Անիսյայի գործունեության իսկական առհավատչյան էր։ Ամեն բան կար տանը և ամեն ինչ ձեռքի տակ էր, իր տեղում, ամեն բանում կարգ կար և մաքրություն, կարելի էր ասել, եթե ամբողջ տան մեջ մի անկյուն չմնար, որտեղ երբեք չէր թափանցում ո՛չ լույսի ճառագայթը, ո՛չ թարմ օդի հոսանքը, ո՛չ տանտիրուհու աչքը, ո՛չ էլ Անիսյայի ժիր, ամեն բան սրբող ձեռքը։ Դա Զախարի անկյունն էր կամ բույնը։

Նրա փոքրիկ սենյակն անպատուհան էր, և հավիտենական խավարն օժանդակում էր մարդկային բնակարանից մուր որդ սարքելուն։ Եթե Զախարը այնտեղ հանդիպում էր տանտիրուհուն բարելավումների և մաքրումների որևէ պլանով, նա հաստատուն կերպով հայտարարում էր, թե կանացի գործ չէ քննել, թե որտեղ և ինչպես պետք է դրված լինեն խոզա-

[1] Չուխոն— ֆինն (հնացած)

նակները, վաքսը և կոշիկները, թե ոչ ոքի գործը չէ, ինչու է նրա զգեստը կույտ արած գցված հատակին, իսկ անկողինը՝ անկյունում վառարանի ետևը, փոշու մեջ, թե ինքն է հագնում շորերը և քնում այդ անկողնում և ոչ թե տանտիրուհին։ Իսկ ինչ վերաբերում է ավելին, տախտակներին, երկու աղյուսներին, տակառների տակերին և երկու կտոր փայտին, որ նա պահում է իր սենյակում, ապա առանց դրանց նա չի կարող կառավարվել իր տնտեսության մեջ, իսկ թե ինչու, նա չէր բացատրում. այնուհետև, թե փոշին ու սարդերը նրան չեն խանգարում և, մի խոսքով, նա իր քիթը չի խոթում նրանց խոհանոց, հետևաբար չի ցանկանում, որ նրան էլ անհանգստացնեն։

Անիսյային, որին նա մի անգամ այնտեղ գտավ, այնպիսի արհամարհանքով վերաբերվեց, արմունկով այնպես լուրջ սպառնաց կրծքին, որ սա վախենում էր նրա սենյակը մտնել։ Երբ գործը փոխադրեցին բարձրագույն ատյան, Իլյա Իլյիչի բարեհաջողությանը, բարինը փորձեց գնալ նայել և տնօրինել ինչպես պետք է, ավելի խստորեն, բայց Զախարի սենյակի դռնից միայն գլուխը կոխելով և մի րոպե դիտելով ամեն ինչ, որ կար այնտեղ, նա միայն թքեց և ոչ մի խոսք չասաց։

— Հը՞, կերա՞ք,— ասաց Զախարը Ագաֆյա Մատվեևնային և Անիսյային, որոնք եկել էին Իլյա Իլյիչի հետ, հույս ունենալով, որ նրա մասնակցությունը որևէ փոփոխության կհասցնի։ Հետո նա ծիծաղեց իր ձևի, ամբողջ դեմքով, այնպես որ հոնքերն ու այտամորուսները շարժվեցին դեպի զանազան կողմեր։

Մյուս սենյակներում ամենուրեք լուսավոր էր, մաքուր և թարմ։ Հին, գույնը գցած վարագույրներն անհետացան, իսկ հյուրասենյակի և առանձնասենյակի լուսամուտներն ու դռները ստվերապատվում էին կապույտ ու կանաչ դրապրիով և մուսլինի վարագույրներով՝ կարմիր ժանեզարդերով. բոլորը Ագաֆյա Մատվեևնայի ձեռքերի գործը։

Բարձերը սպիտակին էին տալիս ձյունի պես և սարի նըման բարձրանում համարյա մինչև առաստաղը. վերմակները մետաքսից էին, մգդակած։

Շաբաթներ շարունակ տանտիրուհու սենյակը լցված էր

լինում մի քանի բացված և իրար կպցրած թղթախաղի սեղաններով, որոնց վրա փռվում էին այդ վերմակները և Իլյա Իլյիչի խալաթը։

Ագաֆյա Մատվեևնան իր սեփական ձեռքերով ձևում էր, տակը բամբակ էր դնում և մգդակում դրանք, աշխատանքի վրա ընկնելով իր ամուր կրծքով, աչքերը հառելով վրան, մինչև իսկ բերանը կպցնելով, երբ հարկավոր էր լինում թելը կտրել և աշխատում էր սիրով, անխոնջ ջանասիրությամբ, իրեն համեստությամբ պարգևատրելով այն մտքով, թե խալաթն ու վերմակը պիտի ընդգրկեն, տաքացնեն, քնքշացնեն ու հանգստացնեն հոյակապ Իլյա Իլյիչին։

Իլյա Իլյիչն ամբողջ օրերով, իր բազմոցի վրա պառկած, հրճվում էր, թե ինչպես տանտիրուհու հոլանի արմունկները ետ ու առաջ էին շարժվում, ասեղի ու թելի ետևից։ Նա հաճախ էր ենթադրում ասեղը թելելու ու ֆշշոցի ու ատամով կտրած թելի ճթթոցի ներքո, ինչպես լինում էր մի ժամանակ Օբլոմովկայում։

— Հերիք է աշխատե՞ք, կհոգնե՞ք,— աշխատում էր նա զսպել տանտիրուհուն։

— Ատված սիրո՞ւմ է աշխատանքը,— պատասխանում էր նա, առանց աչքերն ու ձեռքերը աշխատանքից հեռացնելու։

Սուրճը նրան մատուցվում էր նույնքան խնամքով, մաքուր և համեղ, ինչպես սկզբում, երբ նա, մի քանի տարի առաջ, փոխադրվեց այս բնակարանը։ Ընդերքով սուպը, պարմեզանով մակարոնը, ձկնակարկանդակը, բանջարապուրը, իրենց ճտերը— այս բոլորը խիստ հերթականությամբ հաջորդում էին միմյանց և հաճելի կերպով բազմազանացնում փոքրիկ տնակի միապաղաղ օրերը։

Առավոտից մինչև երեկո լուսամուտին խփում էր արևի ուրախաբեր ճառագայթը, օրվա կեսը մի կողմից, կեսը՝ մյուս կողմից, որովհետև երկու կողմից էլ բանջարանոցներ էին և ոչինչ նրա առաջը չէր փակում։

Դեղձանիկներն ուրախ կչկչում էին. խորդենին և երբեմն կոմսի պարտեզից երեխաների բերած հիացքնթներն ուժգին հոտ էին արձակում փոքրիկ սենյակում, որը հաճելի կերպով խառնվում էր Հավանայի մաքուր սիգարի ծխի ու այն գաբլնի

կամ վանիլի հոտի հետ, որ ծեծում էր տանտիրուհին՝ եռանդուն կերպով շարժելով արմունկները։

Իլյա Իլյիչը կարծես ապրում էր կյանքի ոսկե շրջանակում, որի մեջ իբրև դիորամայում միայն փոխվում էին օր ու գիշերվա և տարվա եղանակների սովորական փուլերը. չէին լինում ուրիշ փոփոխություններ, առանձնապես խոշոր պատահականություններ, որոնք կյանքի հատակից թափ տային-դուրս հանեին ամբողջ տականքը, որ հաճախ դառն ու պղտոր է լինում։

Այն ժամանակվանից, երբ Շտոլցն Օբլոմովին ազատեց տանտիրուհու եղբոր գողային պարտքերից, երբ եղբայրն ու Տարանտևը բոլորովին քաշվեցին, նրանց հետ միասին Իլյա Իլյիչի կյանքից քաշվեց-հեռացավ նաև ամեն թշնամական բան։ Այժմ նրան շրջապատում էին այնպիսի՞ պարզ, բարի, սիրող դեմքեր, բոլորն էլ համաձայն էին իրենց գոյությամբ նեցուկ լինելու նրա կյանքին, օգնելու նրան, որ նա չնկատի, չզգա այդ կյանքը։

Ագաֆյա Մատվեևնան գտնվում էր իր կյանքի զենիթում, նա ապրում էր և զգում, որ ապրում է լրիվ, ինչպես առաջ երբեք չէր ապրել, միայն թե արտահայտել այդ, ինչպես և առաջ, երբեք չէր կարող, կամ, ավելի լավ է ասել՝ այդ բանը նրա մտքով չէր անցնում։ Նա միայն աղոթում էր աստծուն, որ նա երկարացնի Իլյա Իլյիչի կյանքը և ազատի նրան ամեն տեսակ «վշտից, ցասումից և կարիքից», իսկ իրեն, իր երեխաներին և ամբողջ տունը նա հանձնում էր աստծու կամքին։ Դրա փոխարեն նրա դեմքը շարունակ արտահայտում էր մ՛ևնույն երջանկությունը, լիուլի, բավարարված և առանց ցանկությունների, հետևաբար՝ հազվագյուտ և ամեն մի այլ բնավորության դեպքում անկարելի երջանկությունը։

Նա գիրացել էր. կուրծքն ու ուսերը փայլում էին նույն առատությամբ ու լիությամբ, աչքերում փայլում էր հեզությունը և միայն տնտեսական հոգացողությունը։ Նրան էր ս՛րադարձել այն արժանապատվությունն ու հանգստությունը, որով նա առաջ իշխում էր տան վրա՝ հնազանդ Անիսյայի, Ակուլինայի և դռնապանի միջավայրում։ Նա, առաջվա նման, ո՛չ թե ման է գալիս, այլ կարծես լողում է՝ պահարանից խոհանոց, խոհանոցից մառան, և համաչափորեն առանց շտապելու հրամաններ է տալիս, լրիվ գիտակցությամբ այն բանի, ի՛նչ որ անում է։

Անիսյան առաջվանից է՛լ ավելի ժրեց, որովհետև աշխատանքն ավելի շատացավ. նա շարունակ շարժվում է, իրարանցման մեջ է, վազվզում է, աշխատում է, բոլորը տանտիրուհու խոսքով։ Նրա աչքերը նույնիսկ ավելի պայծառ են և քիթը, այդ խոսուն քիթը, դուրս է ցցվում նրա ամբողջ անձնավորությունից առաջ, առաջվա պես կարմրատակում է հոգսով, մտքերով, դիտավորություններով, խոսում է, թեև լեզուն լռում է։

Նրանք երկուսն էլ հագնված են յուրաքանչյուրն ըստ աստիճանի և պաշտոնների արժանապատվության։ Տանտիրուհին մի մեծ պահարան էր սարքել՝ մետաքսե զգեստներով, մանտիլներով ու սալոպներով. գլխադիրները պատվիրվում էին գետի այն կողմում, համարյա թե Լիտեյնու վրա, կոշիկներն առնվում էին ո՛չ թե Ապրակսինից, այլ Գոստինի դվորից, իսկ գլխարկը, երևակայացեք, Մորսկա՛յա փողոցից։ Անիսյան էլ, կերակուրները եփելուց հետո, և հատկապես կիրակի օրերը, բրդե զգեստ էր հագնում։

Միայն Ակուլինան էր շարունակում ման գալ գոտու մեջ խրած փեշերով, մեկ էլ դռնապանը չէր կարողանում նույնիսկ ամառվա արձակուրդներին բաժանվել իր կիսամուշտակից։

Զախարի մասին խոսելն էլ ավելորդ է. սա գորշագույն ֆրակից իր համար կուրտկա կարել տվեց, և չի կարելի որոշել, թե նրա շալվարն ինչ գույնի է, ինչից է պատրաստված նրա փողկապը։ Նա մաքրում է կոշիկները, հետո քնում, նստում դարբասի մոտ, բութ հայացքով նայելով հազվադեպ անցորդների, կամ, վերջապես, նստում է մերձակա մանրավաճառի խանութում և անում է շարունակ նույնը և նույն ձևով, ինչ որ անում էր առաջ, նախ՝ Օբլոմովկայում, հետո Գորոխովայա փողոցում։

Իսկ Օբլոմովն ի՞նքը։ Օբլոմովն ինքն այդ անդորրի, լիառատության և անվրդով խաղաղության լիակատար և բնական արտացոլումն ու արտահայտությունն էր։ Դիտելով իր կենցաղը և մտմտալով նրա մասին և ավելի ու ավելի՛ վարժվելով նրան՝ նա, վերջապես, ուզեց, որ այլևս գնալու տեղ

չունի, բան չունի փնտրելու, որ իր կյանքի իդեալը իրագործեցել է, թեև առանց պոեզիայի, առանց այն ճառագայթների, որոնցով մի ժամանակ երևակայությունը նրա համար նկարում էր աղայական, լայն ու անհոգ մի կենսընթացք հայրենի գյուղում, գյուղացիների, սպասավորների ու աղախինների շրջանում։

Նա իր այժմյան կենցաղի վրա նայում էր որպես նույն օբլոմովյան գոյության շարունակության, միայն տեղի և մասամբ ժամանակի այլ կոլորիտով։ Եվ այստեղ էլ, ինչպես Օբլոմովկայում, նրան հաջողվում էր հեշտ պրծնել կյանքի ձեռքից, սակարկել և իր համար անվրդով խաղաղություն ապահովել։

Նա ներքուստ հաղթանակ էր տանում, որ հեռացել է կյանքի ձանձրույթ պատճառող, տանջալից պահանջներից ու փոթորիկներից, այն հորիզոնից, որի ներքո փայլատակում են մեծ ուրախությունների կայծակները և հնչում են մեծ վշտերի հանկարծական հարվածները, որտեղ խաղ են անում երջանկության սին հույսերը և հոյակապ ուրվականները, որտեղ մարդուն կրծում ու ուտում է իր սեփական միտքն ու սպանում է կիրքը, որտեղ ընկնում ու հաղթանակում է միտքը, որտեղ անընդհատ պայքարի մեջ մարտնչում է մարդը, և մարտի դաշտից հեռանում է խոշտանգված և էլի դժգոհ ու անկշտում։ Նա, չճաշակելով պայքարում ձեռք բերվող հաճույքները, մտքով հրաժարվեց նրանցից և հոգու անդորրություն էր զգում միմիայն մոռացված անկյունում, որ հեռու էր շարժումից, պայքարից ու կյանքից։

Իսկ եթե դեռ եռում էր նրա մեջ երևակայությունը, ոտքի էին կանգնում մոռացված հիշողությունները, շիրականացած երազանքները, եթե խիղճը ճշտամբանք էր արտահայտում այս և ոչ թե այն կերպ ապրած կյանքի համար, նա անհանգիստ էր քնում, զարթնում էր, անկողնից վեր թռչում, երբեմն լաց լինում անհուսության սառն արցունքներով՝ կյանքի պայծառ, ընդմիշտ մարած իդեալի մասին, ինչպես լաց են լինում թանկագին ննջեցյալի համար, գիտակցության այն դառն զգացումով, թե բավական բան չեն արել նրա համար կենդանության ժամանակ։

Հետո նա կնայեր իր շրջապատին, կճաշակեր ժամանակավոր բարիքներն ու կհանգստանար, մտախոհ կերպով դիտելով, թե ինչպես հանգիստ ու խաղաղ սուզվում է երեկոյան արևը վերջալույսի հրդեհի մեջ, վերջապես կվճռեր, որ նրա կյանքը ո՛չ թե դասավորվեց, այլև ստեղծված էր, նույնիսկ կանխասահմանված էր այդպես պարզ, անխորհրդավոր լինելու, որպեսզի արտահայտի մարդկային գոյության իդեալականորեն-խաղաղ կողմի հնարավորությունը։

Ուրիշներին, մտածում էր նա, բաժին է ընկել արտահայտելու կյանքի տագնապալից կողմերը, շարժել ստեղծագործող և կործանող ուժերը. ամեն մեկն իր կոչո՛ւմն ունի։

Ահա թե ինչպիսի՞ փիլիսոփայություն էր մշակել օբլոմովյան Պլատոնի մոտ և օրորում էր նրան պարտքի ու կոչման հարցերի ու խիստ պահանջների մեջ։ Նա ծնվել և կրթվել էր ոչ որպես գլադիատոր մրցահրապարակի համար, այլ որպես մարտի խաղաղ հանդիսատես. նրա վեհերոտ և ծույլ հոգին չէր դիմանա ո՛չ երջանկության տագնապներին, ոչ էլ կյանքի հարվածներին, հետևաբար, նա արտահայտում էր կյանքի մի կողմը միայն, և ձգտել, փոխել նրա մեջ որևէ բան կամ զղջալ՝ կարիք չկա։

Տարիներ անցնելուց հետո հուզումներն ու զղջումներն ավելի հազվադեպ էին երևան գալիս, և նա հանգիստ ու կամաց-կամաց տեղավորվում էր իր մնացած գոյության հասարակ ու լայն-դագաղի մեջ, որ նա պատրաստել էր սեփական ձեռքերով, ինչպես անապատական ծերունիները, որոնք, կյանքից երես դարձնելով, իրենց համար գերեզման են փորում։

Նա արդեն դադարել էր երազել կալվածքը կարգավորելու և ամբողջ տնով այնտեղ տեղափոխվելու մասին։ Շտոլցի նշանակած կառավարիչը ճշտապահ կերպով Ցենդյան տոների մոտերքը ուղարկում էր նրան բավական չափով եկամուտ, գյուղացիները հացահատիկ և անասուններ էին բերում, և տունը ծաղկում էր լիառատության ու ուրախության մեջ։

Իլյա Իլյիչը նույնիսկ մի զույգ ձի գնեց, բայց, իրեն հատուկ զգուշությունից, այնպիսի ձիեր, որոնք միայն երրորդ մարակից հետո էին տեղներից շարժվում, իսկ առաջին և երկրորդ հարվածից մի ձին էր շարժվում ու կողքի գնում, հետո երկրորդ ձին է շարժվում և կողքի գնում, հետո արդեն

լարված ձգելով վիզը, մեջքը և պոչը, շարժվում են ոռնալուսը միանգամից ու վազում՝ գլուխները թափահարելով։ Ձիերով Վանյային տանում էին Նևայի մյուս ափը գիմնազիա, մեկ էլ տանտիրուհին էր զանազան գնումների համար գնում։

Բարեկենդանին և զատկին ամբողջ ընտանիքը և Իլյա Իլյիչն ինքը կառքով գնում էին զբոսնելու և բալագանները. երբեմն լոժա էին վերցնում՝ և նույնպես ամբողջ տնով հաճախում թատրոն։

Ամռանը գնում էին քաղաքից դուրս, Եղիա մարգարեի ուրբաթ օրը՝ Պորոխովիե Զավոդի, և կյանքը հերթափոխվում էր սովորական երևույթներով, առանց կործանարար փոփոխություններ մտցնելու, կարելի կլիներ ասել, եթե կյանքի հարվածները բոլորովին չհասնեին մանր խաղաղ անկյուններին։ Բայց, դժբախտաբար, կայծակի հարվածը, ցնցելով լեռների հիմքերը և հսկայական օդային տարածությունները, ձայն է հանում նաև մկան բնում, թեև ավելի թույլ, ավելի խուլ, բայց բնի համար զգալի կերպով։

Իլյա Իլյիչն ուտում էր ախորժակով և շատ, ինչպես Օբլոմովկայում, ման էր գալիս և աշխատում ծուլաբար և քիչ։ դարձյալ ինչպես Օբլոմովկայում։ Նա, չնայելով աճող տարիքին, անհոգ կերպով գինի, հաղարջի օղի էր խմում և է՛լ ավելի անհոգ կերպով ու երկար քնում էր ճաշերից հետո։

Հանկարծ այս բոլորը փոխվեց։

Մի անգամ, կեսօրվա հանգստից ու նիրհից հետո, նա ուզում էր բազմոցից վեր կենալ և չկարողացավ, ուզում էր խոսք ասել՝ և լեզուն չէր ենթարկվում նրան։ Նա սարսափով միայն ձեռքն էր շարժում՝ օգնության կանչելով։

Եթե նա միայն Զախարի հետ ապրեր, կարող էր ձեռքով մինչև առավոտ հեռագրել և, վերջապես, մեռնել, որի մասին կիմանային հետևյալ օրը, բայց տանտիրուհու աչքը պտտվում էր նրա գլխին, ինչպես նախախնամության աչքը. նրան խելք չէր հարկավոր, այլ միայն սրտի կռահումը, որ Իլյա Իլյիչի դրությունը մի տեսակ լավ չէ։

Եվ հենց որ այս կռահումը փայլատակեց նրա մտքում, արդեն Անիսյան կառքով սլանում էր բժշկի ետևից, իսկ տանտիրուհին նրա գլխին սառույց դրեց և միանգամից նվիրական պահարանիկից դուրս հանեց բոլոր սպիրտները, թրջոցները,

այն ամենը, ինչ գիտեր ու լսել էր, թե պետք է գործադրե
այդպիսի դեպքերում։ Մինչև անգամ Զախարը կարողացա
այդ ժամանակ մի կոշիկը հագնել և այդպես, մի կոշիկը հա
գած՝ բժշկի, տանտիրուհու և Անիսյայի հետ միասին ծառա
յություն էր անում բարինի մոտ։

Իլյա Իլյիչին ուշքի բերին, արյուն առան և հետո հայտա
դարեցին, թե դա կաթվածահարություն է և որ նա պետք
ուրիշ տեսակ կյանք վարի։

Նրան արգելեցին օղի, գարեջուր և գինի, սակավ և հազ
վադեպ բացառություններով՝ սուրճ խմել, հետո ամեն տե
սակ յուղոտ բան, միս, թունդ համեմունքներ գործածել, իս
դրա փոխարեն պատվիրվում էր ամենօրյա շարժում և շա
փավոր քուն միայն գիշերը։

Առանց Ագաֆյա Մատվեևնայի աչքի այդ բոլորը չէր կա
տարվի, բայց նա կարողացավ այդ սիստեմը մտցնել, որով
հետև դրան ենթարկվեց ամբողջ տունը, և մերթ խորամանկու
թյամբ, մերթ քնքշությամբ հեռու էր պահում Օբլոմովի
դայթակղեցուցիչ ոտնձգություններից գինու, հետաճաշյա նինջ
ձկնակարկանդակի վերաբերմամբ։

Հազիվ էր նա աչքերը փակում, սենյակում վայր էր ընկ
նում աթոռը, հենց այնպես, ինքն իրեն, կամ շոնդալով կ
տրրվում էր հին, անպետք ամանեղենը հարևան սենյակու
կամ թե չէ՝ երեխաներն այնպես էին աղմկում, որ միայ
փախչելով կարող ես ազատվել։ Եթե այդ էլ չէր օգնում, հնչո
էր նրա հեզ ձայնը. նա ձայն էր տալիս Օբլոմովին և որ
բան հարցնում։

Պարտեզի շավիղը տանում էր դեպի բանջարանոցը,
Իլյա Իլյիչն՝ այնտեղ առավոտյան ու երեկոյան երկու ժա
զբոսանք էր կատարում։ Նրա հետ ման էր գալիս տանտի
րուհին, իսկ եթե նա չէր կարող, ապա Մաշան, կամ Վան
յան, կամ հին ծանոթ, ոչ մի բանի չընդդիմացող, ամեն ինչ
հնազանդ և ամեն բանի համաձայն Ալեքսեևը։

Ահա Իլյա Իլյիչը դանդաղ գնում է շավղով՝ հենվել
Վանյայի ուսին։ Վանյան գրեթե արդեն պատանի է, գի
նազիական համազգեստը հագին. հազիվ է զսպում իր ա
խույժ, հապճեպ քայլերը՝ հարմարվելով Իլյա Իլյիչի քայ

վածքին։ Օբլոմովը չի Կարողանում բոլորովին ազատ դնել մի ոտքը. կաթվածի հետևանք։

— Դե՛հ, Վանյուշա, սենյակ գնանք, —ասաց նա։

Նրանք այն է՝ ուզում էին ուղղվել դեպի դուռը։ Նրանց առջև դուրս եկավ Ագաֆյա Մատվեևնան։

— Էդ ո՞ւր էդպես վաղ,— հարցրեց նա՝ թույլ չտալով ներս մտնել։

— Էլ ի՞նչ վաղ։ Քսան անգամ ետ ու առաջ գնացինք, իսկ չէ՞ որ այստեղից մինչև ցանկապատը հիսուն սաժեն է, նշանակում է՝ երկու վերստ։

— Քանի՞ անգամ եք անցել,— հարցրեց մայրը Վանյուշային։

Նա ուզեց կմկմալ։

— Սուտ չասես, տես հա՛,— սպառնաց նա՝ նայելով տղայի աչքերին։— Ես իսկույն կտեսնեմ։ Հիշի՛ր կիրակին, չեմ թողնի հյուր գնաս։

— Ո՛չ, մայրի՛կ, ճիշտ եմ ասում, մենք... մոտ տասներկու անգամ գնացինք-եկանք։

— Ա՜խ դու, խարդախ,— ասաց Օբլոմովը։— Դու հենց միալար ակացիան էիր պոկոտում, իսկ ես ամեն անգամ հաշվում էի...

— Ո՛չ, մի քիչ էլ ման եկեք։ Զկնապո՛ւրն էլ դեռ պատրաստ չէ,— վճռեց տանտիրուհին և դուռը շրխկացրեց նրանց առջև։

Եվ Օբլոմովը կամա-ակամա ութ անգամ էլ համարեց, հետո արդեն սենյակ մտավ։

Այնտեղ մեծ կլոր սեղանի վրա գոլորշի էր արձակում ձկնապուրը։ Օբլոմովը նստեց իր տեղը, բազմոցի վրա մենակ, նրա մոտ, աջից աթոռին նստեց Ագաֆյա Մատվեևնան, ձախ կողմը փոքրիկ մանկական սողնակավոր աթոռի վրա նստեցրին մի երեք տարեկան երեխայի։ Նրա կողքին նստեց Մաշան, արդեն տասներեք տարեկան մի աղջիկ, հետո Վանյան, և, վերջապես, այդ օրն Ալեքսեևն էլ նստեց Օբլոմովի դիմաց։

— Այ, սպասեք, տվեք՝ ես ձեզ պերկես էլ տամ, լավ չաղլի՛կը պատահեց,— ասում էր Ագաֆյա Մատվեևնան՝ Օբլոմովի ափսեի մեջ դնելով պերկեսը։

— Սրա հետ լավ կլիներ կարկանդա՞կը,— ասաց Օբլոմովը։

— Մոռացա, ճիշտ եմ ասում՝ մոռացա։ Ես դեռ երեկոյին էի ուզում, բայց հիշողությունիցս կարծես թռավ,— խորամանկություն բանեցրեց Ագաֆյա Մատվեևնան։— Ձեզ համար է նույնպես, Իվան Ալեքսեևիչ, մոռացել եմ կոտլետի հետ կարդամբ պատրաստել,— ավելացրեց նա՝ դառնալով Ալեքսեևին։— Ներողամիտ եղեք։

Եվ նորից խորամանկություն բանեցրեց։

— Ոչինչ, ես կարող եմ ամեն բան ուտել,— ասաց Ալեքսեևը։

— Այդ ի՞նչ է իրոք, ինչո՞ւ նրա համար ապուխտ չեն պատրաստում սիսեռով կամ բիֆշտեքսով,— հարցրեց Օբլոմովը։— Նա սիրում է...

— Ինքս եմ գնացել, տեսել, Իլյա՛ Իլյիչ, տավարի լավ միս չկար։ Դրա փոխարեն պատվիրել եմ ձեզ համար բալի հյութից կիսել պատրաստել. գիտեմ, որ դուք դրա սիրահարեք,— ավելացրեց նա՝ դառնալով Ալեքսեևին։

Կիսելն անվնաս էր Իլյա Իլյիչի համար, և այդ պատճառով էլ այն պետք է սիրեր ու ուտեր ամեն բանի համաձայնությամբ Ալեքսեևը։

Ճաշից հետո ոչ ոք և ոչինչ չէր կարող Օբլոմովին ետ կանգնեցնել պառկելուց։ Նա սովորաբար հենց այդտեղ էլ պառկում էր բազմոցին մեջքի վրա, բայց միայն մի ժամ պառկելու համար։ Որպեսզի նա չքնի, տանտիրուհին հենց այդտեղ էլ, բազմոցի վրա, սուրճ էր ածում, հենց այդտեղ էլ գորգի վրա խաղում էին երեխաները, և Իլյա Իլյիչը կամա-ակամա ստիպված էր մասնակցություն ունենալ։

— Բավական է ջղայնացնեք Անդրյուշային. հիմա նա լա՞ կլինի,— հանդիմանում էր նա Վանեչկային, երբ սա ջղայնացնում էր երեխային։

— Մաշենկա, նայի՛ր, Անդրյուշան կդիպչի՞ աթոռին,— հոգացողությամբ նախազգուշացնում էր նա, երբ երեխան աթոռների տակ էր մտնում։

Եվ Մաշան հետևում էր դուրս հանելու «եղբորը», ինչպես անվանում էր նրան։

Ամեն բան լուռ մի բոպե, տանտիրուհին գնաց խոհանոց

տեսնելու, թե սուրճն արդյոք պատրաստ է։ Երեխաները սկվեցին։ Սենյակում լսվեց խոմփոց, սկզբում մեղմ, կարծես շշնջոցով, հետո ավելի բարձր, և երբ Ագաֆյա Մատվեևնան երևաց գոլորշիարձակ սրճամանով, նրան ապշեցրեց խոմփոցը, կարծես փոստային խրճիթում լիներ։

Նա կշտամբանքով գլուխը թափահարեց Ալեքսեևի վրա։

— Ես զարթնեցրի, բայց նա չի լսում,— ասաց Ալեքսեևն իրեն արդարացնելու համար։

Տանտիրուհին սրճամանն արագությամբ դրեց սեղանին, հատակից վերցրեց Անդրյուշային և հանդարտությամբ նրան դրեց բազմոցի վրա, Իլյա Իլյիչի մոտ։ Երեխան սողաց նրա վրայով, հասավ դեմքին և քթից բռնեց։

— Ա՜։ Ի՞նչ է։ Ո՞վ է սա,— անհանգստացած խոսում էր արթնացած Իլյա Իլյիչը։

— Դուք ննջել էիք, իսկ Անդրյուշան բարձրացավ ու արթնացրեց ձեզ,— սիրալիր կերպով ասաց տանտիրուհին։

— Ծ՞րբ եմ ննջել,— արդարանում էր Օբլոմովը՝ Անդրյուշային առնելով իր գիրկը։— Մի՞թե ես չէի լսում, թե ինչպես էր նա թաթիկներով մագլցում դեպի ինձ։ Ես ամեն բան լսո՜ւմ եմ։ Ա՜խ դու, շարաճճի. քթի՜ցս բռնեց։ Ա՜յ, քեզ։ Սպասի՜ր, սպասի՜ր,— ասում էր նա՝ գգվելով ու փաղաքշելով երեխային։ Հետո նրան ցած դրեց հատակին և ամբողջ սենյակով մեկ հառաչեց։— Մի բան պատմեք, Իվան Ալեքսեևիչ,— ասաց նա։

— Ամեն բանի մասին էլ խոսեցինք, Իլյա Իլյիչ, պատմելու բան չկա,— պատասխանում էր նա։

— Է՛, ինչպե՞ս թե չկա։ Դուք լինում եք մարդկանց մեջ. որևէ նոր բան չկա՞ միթե։ Կարծեմ՝ կարդո՞ւմ եք։

— Այո՛, երբեմն կարդում եմ, կամ ուրիշները կարդում են, խոսում են, իսկ ես լսում եմ։ Ա՜յ, երեկ Ալեքսեյ Սպիրիդոնիչի մոտ նրա ուսանող որդին բարձրաձայն կարդում էր։

— Ի՞նչ էր կարդում։

— Անգլիացիների մասին, որ նրանք ինչ-որ մեկին հրացաններ ու վառոդ են տարել։ Ալեքսեյ Սպիրիդոնիչն ասաց, թե պատերազմ է լինելու։

— Իսկ ո՞ւմ են տարել նրանք։

— Իսպանիա թե Հնդկաստան, չեմ հիշում, միայն գնալը շատ դժգոհ է մնացել։

— Ո՞ր դեսպանը,— հարցրեց Օբլոմովը։

— Ա՜յ, դա մոռացե՞լ եմ,— ասաց Ալեքսեևը՝ ցիթը բացելով դեպի առաստաղը և աշխատելով հիշել։

— Իսկ պատերազմն ո՞ւմ հետ պետք է լինի։

— Կարծեմ թուրքական փաշայի հետ։

— Դե, էլ ի՞նչ նորություն կա քաղաքականության մեջ,— մի քիչ լռելուց հետո հարցրեց Իլյա Իլյիչը։

— Հա, գրում են, թե երկրագունդը շարունակ սառչում է. կգա ժամանակ՝ բոլորովին կսառչի։

— Ա՜յ քեզ բան։ Մի՞թե դա քաղաքականություն է,— ասաց Օբլոմովը։

Ալեքսեևը շփոթվեց։

— Դմիտրի Ալեքսեևիչն առաջ հիշատակեց քաղաքականությունը,— արդարանում էր նա,— իսկ հետո ամեն ինչ կարդաց հերթով և ասաց, թե երբ է վերջանում քաղաքականությունը։ Ես գիտեմ, որ այդտեղ արդեն սկսվել է գրականությունը։

— Իսկ ի՞նչ էր կարդում նա գրականության մասին,— հարցրեց Օբլոմովը։

— Կարդում էր, թե ամենալավ հեղինակները Դմիտրիևը, Կարամզինը, Բատյուշկովն ու Ժուկովսկին են...

— Իսկ Պո՞ւշկինը։

— Պուշկինը չկա այնտեղ։ Ես ինքս էլ մտածեցի, թե ինչո՞ւ նա չկա։ Չէ՞ որ նա խանճաթ է,— ասաց Ալեքսեևը ճ-ն արտասանելով խ-ի նման։

Հետևեց լռություն։ Տանտիրուհին բերեց աշխատանքը և սկսեց ասեղը ետուառաջ տանել՝ ժամանակ առ ժամանակ նայելով Իլյա Իլյիչին, Ալեքսեևին և զգայուն ականջներով հետևելով, թե որևէ տեղ անկարգություն, աղմուկ չկա՞, արդյոք խոհանոցում Զախարն Անիսյայի հետ կռիվ չի՞ անում, արդյոք Ակուլինան լվանո՞ւմ է ամանները, բակի դռնակը չճռռա՞ց արդյոք, այսինքն՝ դռնապանը հո «պանդոկ» չգնաց։

Օբլոմովը հանդարտորեն խորասուզվեց լռության և մոռա

խոհության մեջ։ Այդ մտախոհությունը ո՛չ քուն էր և ոչ էլ արթնություն. նա անփութորեն իր մտքերն ազատ թողեց թափառելու, չկենտրոնացնելով նրանց որևէ բանի վրա, հանգիստ լսում էր արտի համաչափ բաբախումը և երբեմն հավասարաչափ թարթում էր աչքերը նման այն մարդուն, որը աչքը ոչ մի բանի չի հառում։ Նա ընկավ մի անորոշ, տեղծվածային վիճակի, մի տեսակ հալյուցինացիայի մեջ։

Երբեմն մարդու վրա իջնում են հազվադեպ ու կարճ մտախոհ վայրկյաններ, երբ նրան թվում է, թե վերապրում է մի ժամանակ և ինչ-որ տեղ ապրած պահը։ Նա երազո՞ւմ էր տեսնել իր առջև կատարվող երևույթը, ապրել էր երբևիցե առաջ ու մոռացել, բայց նա տեսնում էր. նույն մարդիկ են նստած իր շուրջ, որոնք նստած էին այն ժամանակ, նույն խոսքերն արդեն մի անգամ արտասանվել են. երևակայությունն անզոր է նորից այնտեղ փոխադրել, հիշողությունը չի վերակենդանացնում անցյալը և վարանման մեջ է գցում։

Նույնն էր կատարվում այժմ Օբլոմովի հետ։ Նրան համակել էր արդեն մի տեղ եղած անդորրությունը, տարուբերվում էր ծանոթ ճոճանակը, լսվում էր ատամով կտրած թելի ճթթոցը, կրկնվում էին ծանոթ բառերն ու ձայները։

— Ա՛յ, չեմ կարողանում ոչ մի կերպ ասեղը թելել, արի՞ Մաշա, քո աչքերն ավելի սուր են։

Օբլոմովը ծուլորեն, մեքենայաբար, կարծես ինքնամոռացության մեջ նայում էր տանտիրուհու դեմքին, և նրա հիշողությունների խորքից բարձրանում էր ծանոթ, մի տեղ արդեն տեսած պատկերը։ Նա ձգտում էր իմանալ, թե երբ և որտեղ է լսել այդ...

Եվ նրան երևում էր ծնողական տան մեծ, մութ, ճարտի մոմով լուսավորված հյուրասենյակը, կլոր սեղանի շուրջ նստած հանգուցյալ մայրն ու նրա հյուրերը. նրանք լուռ կար են անում. հայրը լուռ ման է գալիս։ Ներկան ու անցյալը ձուլվեցին ու իրար խառնվեցին։

Նրա աչքին երևում էր, թե հասել է այն ավետյաց երկիրը, որտեղ մեղրի ու կաթի գետեր են հոսում, որտեղ չաշխատած հաց են ուտում, շրջում ոսկու և արծաթի մեջ։

Նա լսում էր երազների, նշանների պատմությունները, ափսեների աղմուկն ու դանակների թխկոցը։ Հպվում էր դայակին, ականջ դնում նրա պառավական, զողդոջուն ձայնին.

— Միլիտրիսա Կիրբիտենա,— ասում է դայակը՝ ցույց տալով նրան տանտիրուհու պատկերը։

Նրան թվում էր, թե նույն ամպիկն է սահում կապույտ երկնքում, ինչպես այն ժամանակ, նույն զեփյունն է փչում լուսամուտից ներս և խաղում նրա մազերի հետ. օբլոմովյան հնդկահավը ման էր գալիս ու կանչում պատուհանի տակ։

Ահա հաչեց շունը. երևի՝ հյուր եկավ։ Արդյոք Անդրեյը չեկա՞վ իր հոր հետ Վերխլյովոյից։ Դա Օբլոմովի համար տոն էր։ Իրոք, երևի նա է. քայլերը մոտենում են, ավելի մոտենում, բացվում է դուռը...— «Անդրե՛յ»,— ասում է նա։ Իրոք, նրա առջև կանգնած է Անդրեյը, բայց ոչ մանուկ, այլ հասուն տղամարդ Անդրեյը։

Օբլոմովը սթափվեց. նրա առջև հարթմնի, ոչ հալյուցինացիայի մեջ, կանգնած էր իսկական, իրական Շտոլցը։

Տանտիկինն արագ վերցրեց երեխային, քաշեց իր աշխատանքը սեղանի վրայից, տարավ երեխաներին. անհետացան նաև Ալեքսեևը։ Շտոլցն ու Օբլոմովը մնացին երկուսով լուռ և անշարժ նայելով միմյանց։ Շտոլցը աչքերով նետահարում էր անում նրան։

— Դո՞ւ ես արդյոք, Անդրեյ,— հարցրեց Օբլոմովը հուզմունքից հազիվ լսելի ձայնով, ինչպես միայն երկար անջատումից հետո սիրահարն է հարցնում իր ընկերուհուն։

— Ես եմ,— ասաց Անդրեյը մեղմիկ։— Կենդանի՞ ես առո՞ղջ ես։

Օբլոմովը գրկեց Անդրեյին՝ ամուր հպվելով նրան։

— Ա՜խ,— արտասանեց նա երկար որպես պատասխան այդ ախ-ի մեջ լցնելով հոգու երկար թաքնված վշտի և ուրախության ամբողջ ուժը, և, գուցե, երբեք, անջատման ժամանակից սկսած, այն չէր արտացայտել ոչ ոքի և ոչնչի վրա։

Նրանք նստեցին և նորից սկսեցին հայացքով նայեցին միմյանց։

— Առո՞ղջ ես արդյոք,— հարցրեց Անդրեյը։

— Այո՛, հիմա փառք աստծու։

— Իսկ հիվա՞նդ էիր։

— Այո՛, Անդրեյ, կաթված տուցա...

— Հնարավո՞ր բան է։ Աստվա՞ծ իմ,— վախեցած և կարեկցությամբ ասաց Անդրեյը,— Բայց առանց հետևանքների՞ անցավ։

— Այո՛, միայն ձախ ոտքս ազատ չեմ շարժում...— պատասխանեց Օբլոմովը։

— Ա՜խ, Իլյա՛, Իլյա՛։ Ի՞նչ է պատահել քեզ։ Ախր դու բոլորովին ընկել ես։ Ի՞նչ էիր անում այսքան ժամանակ։ Հանաք բան է, հինգ տարուց ավելի անցել է, ինչ մենք չե՞նք տեսնվել։

Օբլոմովը հառաչեց։

— Ինչո՞ւ Օբլոմովկա չգնացիր։ Ինչո՞ւ նամակ չէիր գրում։

— Ի՞նչ ասեմ քեզ, Անդրեյ։ Դու ինձ ճանաչում ես և այլևս մի՛ հարցնի,— ասաց Օբլոմովը վշտալից։

— Եվ շարունակ այստե՞ղ ես, այս բնակարանո՞ւմ,— ասում էր Շտոլցը՝ դիտելով սենյակը.— Եվ չտեղափոխվեցի՞ր։

— Այո՛, շարունակ այստեղ եմ... Հիմա արդեն էլ չեմ փոխադրվի...

— Ինչպե՞ս, վճռականորե՞ն ոչ։

— Այո՛, Անդրեյ... վճռականորեն։

Շտոլցը սևեռակի նայեց նրան, մտածմունքի մեջ ընկավ և սկսեց ման գալ սենյակում։

— Իսկ Օլգա Սերգե՞ևնան։ Առո՞ղջ է։ Որտե՞ղ է։ Հիշո՞ւմ է արդյոք...

Օբլոմովը խոսքը չվերջացրեց։

— Առողջ է և հիշում է քեզ, կարծես երեկ եք բաժանվել։ Ես իսկույն կասեմ քեզ, թե նա որտեղ է։

— Իսկ երեխանե՞րը։

— Երեխաներն էլ առողջ են... Բայց ասա՛, Իլյա, դու կատա՞կ ես անում, թե մնալու ես այստեղ։ Իսկ ես եկել եմ քո եռևից, որ տանեմ մեզ մոտ, գյուղ...

— Ո՛չ, ո՛չ,— ձայնը ցածրացնելով և դուռը նայելով խոսեց Օբլոմովը՝ ակներև անհանգստացած։— Ո՛չ, խնդրում եմ, մի՛ էլ սկսի, մի՛ խոսի...

— Ինչո՞ւ։ Ի՞նչ է պատահել քեզ,— սկսեց Շտոլցը։— Դու ինձ ճանաչում ես. ես վաղուց եմ առաջադրել ինձ այս խնդիրը և չեմ նահանջելու։ Մինչև այժմ ինձ զբաղեցնում էին զանազան գործեր, իսկ հիմա ազատ եմ։ Դու պետք է մեզ հետ ապրես, մեզ մոտիկ. մենք Օլգայի հետ այդպես ենք վճռել, և այդպես էլ կլինի։ Փառք աստծու, որ քեզ այնպես գտա, և ոչ թե ավելի վատ։ Ես հույս չունեի... Դե, գնա՞նք... Ես պատրաստ եմ զոռո՞վ տանելու քեզ։ Պետք է այլ կերպ ապրել, հասկանո՞ւմ ես, ինչպես...

Օբլոմովն անհամբերությամբ լսում էր այդ տիրադը։

— Մի՛ բղավի, խնդրում եմ, կամա՞ց,— աղերսում էր նա։— Այնտեղ...

— Ի՞նչ այնտեղ։

— Կլսեն... տանտիրուհին կկարծի, թե ես իրոք ուզում եմ գնալ։

— Հետո, ի՞նչ կա։ Թո՛ղ մտածի։

— Ա՜խ, ինչպե՞ս կարելի է,— ընդհատեց Օբլոմովը։— Լսի՛ր, Անդրե՛յ,— հանկարծ ավելացրեց նա վճռական, լցված տոնով.— զուր փորձեր մի՛ անի. ինձ մի՛ համոզի. ես կմնամ այստեղ։

Շտոլցը զարմանքով նայեց իր բարեկամին։

Օբլոմովը հանդարտ և վճռականորեն նրան էր նայում։

— Դու կործանվել ես, Իլյա,— ասաց նա։— Այս տունը, այդ կինը... այս ամբողջ կենցաղը... Չի կարող լինել. գնա՞նք, գնա՞նք։

Նա բռնեց Օբլոմովի թևքից և քաշում էր դեպի դուռը։

— Ինչո՞ւ ես ուզում ինձ տանել։ Ո՞ւր,— ասում էր Օբլոմովը՝ դիմադրելով։

— Դո՞ւրս այս փոսից, ճահճից, դեպի լույսը, լայնարձակությունը, որտեղ առո՞ղջ, նորմա՞լ կյանք կա,— պնդում էր Շտոլցը, խստորեն, գրեթե հրամայողաբար։— Որտե՞ղ ես դու։ Ի՞նչ ես դարձել։ Սթափվի՛ր։ Մի՞թե քեզ այս կենցաղի համար էիր պատրաստում, որ քնես, ինչպես խլուրդն իր փոսում։ Հիշի՛ր բոլորը...

— Մի՛ հիշեցնի, անցյալը մի՛ վրդովի, չե՞ս վերադարձնի,— ասում էր Օբլոմովը՝ իմաստալից դեմքով, խելքի ու

կամքի լրիվ գիտակցությամբ։— Ի՞նչ ես ուզում անել ինձ հետ։ Ես կապերս ընդմիշտ խզել եմ այն աշխարհի հետ, ուր ուզում ես ինձ հրապուրել, դու չես կարող զոդել, իրար միացնել երկու մասնատված կեսերը։ Ես այս փոսին կպել եմ իմ հիվանդ տեղով. փորձիր պոկել՝ մահ կլինի հետևանքը։

— Մի շուրջդ նայիր՝ որտե՞ղ և ո՞ւմ հետ ես։

— Գիտեմ, զգում եմ... Ա՜խ, Անդրեյ, ամեն ինչ զգում եմ, ամեն ինչ հասկանում. վաղուց է, որ ամոթահար եմ լինում այս աշխարհում ապրելուց։ Բայց չեմ կարող քեզ հետ քո ճանապարհով գնալ, եթե նույնիսկ կամենայի էլ։ Գուցե, վերջին անգամին դեռ հնարավոր էր... Այժմ... (Նա աչքերը խոնարհեց և մի րոպեի չափ լռեց) այժմ ուշ է... Գնա՛ և ինձ վրա ժամանակ մի՛ կորցրու։ Ես արժանի եմ քո բարեկամությանը, այդ տեսնում է աստված, բայց արժանի չեմ քո հոգացողություններին։

— Ո՛չ, Իլյա, դու ինչ-որ բան ես ասում, բայց մինչև վերջ չես ասում։ Բայց և այնպես ես կտանեմ քեզ, հենց այն պատճառով կտանեմ, որ կասկածում եմ... Լսի՛ր,— ասաց նա,— մի բան հագիր և գնանք ինձ մոտ, երեկոն ինձ մոտ անցկացրու։ Ես քեզ շատ-շատ բաներ կպատմեմ. դու չգիտես, թե ի՞նչ է այժմ եղում մեզ մոտ, չե՞ս լսել...

Օբլոմովը հարցական հայացքով նրան էր նայում։

— Դու մարդկանց հետ չես տեսնվում, ես դա մոռացել էի. գնանք, ես ամեն բան կպատմեմ քեզ... Գիտես, ո՞վ է սպասում ինձ այստեղ դարբասի մոտ, կառեթի մեջ... Ես նրան այստեղ կկանչեմ։

— Օ՜լգան,— հանկարծ դուրս պրծավ վախեցած Օբլոմովի բերանից։ Նա նույնիսկ գունատվեց։— Ի սե՛ր աստծու, նրան այստեղ մի՛ բեր, գնա՛։ Գնաս բարով, գնաս բարով, ի սե՛ր աստծու։

Նա Շտոլցին համարյա դուրս էր մղում. բայց Շտոլցը չէր շարժվում։

— Ես չեմ կարող առանց քեզ նրա մոտ գնալ. խոսք եմ տվել, լսո՞ւմ ես, Իլյա՛։ Եթե ոչ այսօր, ապա վաղը, դու միայն կհետաձգես, բայց ինձնից չես ազատվի... Վաղը. վաղը չէ մյուս օրը, բայց մենք այնուամենայնիվ կտեսնվե՞նք։

Օբլոմովը լուռ էր, գլուխը կախ էր գցել և չէր համարձակվում Շտոլցին նայել։

— Զլեմն ե՞րբ։ Օլգան կհարցնի ինձ։

— Ա՜խ, Անդրեյ,— ասաց Օբլոմովը քնքուշ, աղերսական ձայնով, գրկելով նրան և գլուխը նրա ուսին դնելով։— Թո՛ղ ինձ բոլորովին... մոռացի՛ր...

— Ինչպե՞ս, ընդմի՞շտ,— զարմանքով հարցրեց Շտոլցը՝ խուսափելով նրա գրկախառնումից և նրա երեսին նայելով։

— Այո՛,— շշնջաց Օբլոմովը։

Շտոլցը մի քայլ ետ գնաց նրանից։

— Մի՞թե դու ես, Իլյա՛,— կշտամբում էր նա։— Դու ինձ վանում ես քեզնից, և նրա համար, այդ կնո՞ջ համար... Աստվա՛ծ իմ,— գրեթե գոռաց նա, ինչպես հանկարծական ցավից։— Այդ երեխան, որ ես հիմա տեսա... Իլյա՛, Իլյա՛։ Փախի՛ր այստեղից, գնա՛նք, գնա՛նք շուտով։ Ինչպե՞ս ընկել ես դու։ Այդ կինը... քո ի՞նչն է...

— Կի՞նս,— հանգիստ արտասանեց Օբլոմովը։

Շտոլցը քար կտրեց։

— Իսկ այդ երեխան իմ որդի՞ն է։ Նրա անունն Անդրեյ է, քո հիշատակին,— վերջացրեց Օբլոմովն իր խոսքը միանդամից և հանդարտ շունչ քաշեց, թոթափելով իրենից բացատրության բեռը։

Հիմա էլ Շտոլցը գունատվեց և զարմացած, համարյա անմիտ աչքերով իր շուրջն էր նայում։ Նրա առջև հանկարծ «բացվեց անդունդը», կանգնեց «քարե պատնեշը», և Օբլոմովը կարծես այլևս չկար, կարծես նա կորավ Անդրեյի աչքից, գետնի տակ անցավ, և նա միայն այն այրող կարոտն զգաց, որ ապրում է մարդ, երբ անջատումից հետո հուզմունքով շտապում է տեսնելու բարեկամին, և իմանում է, որ նա վաղուց չկա այլևս, որ նա մեռել է։

— Կործանվե՞լ է,— մեքենաբար շշնջաց նա։— Ի՞նչ ասեմ ես հիմա Օլգային։

Օբլոմովը լսեց վերջին բառերը, ուզում էր մի բան ասել և չկարողացավ։ Նա ձեռքերը մեկնեց Անդրեյին, և նրանք գրկախառնվեցին լուռ, ամուր, ինչպես գրկախառնվում են

մարտից առաջ, մահից առաջ։ Այդ գրկախառնությունը խեղդեց նրանց խոսքերը, արցունքները, զգացմունքները...

— Ջմոռանա՞ս իմ Անդրեյին,— եղան Օբլոմովի վերջին խոսքերը, որ նա ասաց մարած ձայնով։

Անդրեյը լուռ, դանդաղ դուրս եկավ, դանդաղ, մտախոհ անցավ բակով և նստեց կառեթ, իսկ Օբլոմովը նստեց բազմոցի վրա, արմունկներով հենվեց սեղանին և երեսը ծածկեց ձեռքերով։

«Ո՜չ, ես քո Անդրեյին չեմ մոռանա», մտածում էր Շտոլցը վշտալի, բակով անցնելիս։ «Դու կործանվեցիր, Իլյա՛. կարիք չկա քեզ ասելու, որ քո Օբլոմովկան այլևս խուլ անկյուն չէ, որ հերթը նրան է հասել, որ նրա վրա ընկել են արևի՛ ճառագայթները։ Չեմ ասի քեզ, որ մի չորս տարի հետո այն ճանապարհի կայարան կլինի, որ քո գյուղացիները կգնան աշխատելու ուղեթմբերի վրա, իսկ հետո քո հացահատիկը երկաթուղով դեպի նավահանգիստ կսահի... Իսկ այնտեղ... դպրոցներ, գրագիտություն, իսկ այնուհետև... Ո՜չ, դու կվախենաս նոր երջանկության արշալույսից, անսովոր աչքերիդ այն ցավ կպատճառի։ Բայց կտանեմ քո Անդրեյին այնտեղ, որտեղ դու չկարողացար գնալ... և նրա հետ կիրագործենք մեր պատանեկան երազանքները»...— Մնաս բարո՞վ, հին Օբլոմովկա՛,— ասաց նա, վերջին անգամ ետ նայելով փոքրիկ տնակի պատուհաններին։— Դու քո դարն ա՞նց ես կացրել։

— Ի՞նչ կա այնտեղ,— հարցրեց Օլգան սրտի ուժգին բաբախումով։

— Ոչի՛նչ,— չոր, ընդհատ-ընդհատ պատասխանեց Անդրեյը։

— Նա ո՞ղջ է, ապո՞ղջ է։

— Այո՛,— ակամա պատասխանեց Անդրեյը։

— Հապա ինչո՞ւ այդպես շուտ վերադարձար։ Ինչո՞ւ ինձ այնտեղ չկանչեցիր և նրան չբերիր։ Թո՛ղ ինձ։

— Չի՛ կարելի։

— Ի՞նչ է կատարվում այնտեղ,— վախեցած հարցնում էր Օլգան։— Մի՞թե «անդունդ բացվեց»։ Ասելո՞ւ ես ինձ։

Նա լուռ էր։

— Ախր ի՞նչ է կատարվում այնտեղ։

— Օբլոմովականությո՞ւն,— մռայլ պատասխանեց Անդրեյը և Օլգան հետագա հարցերի վերաբերյալ մինչև տուն մտնելը տխուր լռություն պահպանեց։

X

Անցավ հինգ տարի։ Շատ բան փոխվեց նաև Վիբորգյան քաղաքամասում. Պշենիցինայի տունը տանող դատարկ փողոցում ամառանոցներ շինվեցին, որոնց միջև բարձրանում էր մի երկար, քարե, պետական շինություն, որը խանգարում էր արևի ճառագայթներին՝ ուրախ խաղալու ծուլության և անդորրության խաղաղ ապաստանի ապակիների հետ։

Տնակն ինքն էլ մի քիչ հնացել էր, անփույթ, անմաքուր կերպարանք ուներ, ինչպես չսափրված և չլվացված մարդը։ Ներկը թափվել էր, անձրևատար խողովակները տեղ-տեղ կոտրատվել էին. դրա համար էլ բակում ցեխի փոսեր էին գոյացել, որոնց վրայով, ինչպես առաջ, նեղ տախտակ էր գցված։ Երբ մեկը դռնակով ներս է մտնում, պառաված շունը աշխույժ չի թոչկոտում շղթայի վրայով, այլ հաշում է խոպոռ ու ծուլլ, առանց բնից դուրս գալու։

Իսկ տան ներսում ինչպիսի՞ փոփոխություններ էին եղել։ Այնտեղ իշխում էր ուրիշ կին, խայտում էին ոչ առաջվա երեխաները։ Այնտեղ նորից ժամանակ առ ժամանակ երևում էր մոլի Տարանտևի կարմիր, չորացած ղեմքը, և չկար այլևս հեզ, անխոս Ալեքսեևը։ Չէին երևում ո՛չ Զախարը, ո՛չ էլ Անիսյան. խոհանոցում տնօրինում էր նոր հաստլիկ խոհարարուհին, որն ակամա և կոպիտ կերպով էր կատարում Ագաֆյա Մատվեևնայի մեղմաձայն հրամանները, մեկ էլ նույն Ակուլինան էր, որ փեշերը գոտկի մեջ խրած՝ լվանում էր տաշտերն ու կճուճները. նույն քնակոլոլ դռնապանը, հենց նույն քուրքով՝ պարապ անց էր կացնում կյանքը իր բնի մեջ։ Վանդակավոր ցանկապատի մոտից վաղ առավոտյան և ճաշվա պահի որոշյալ ժամերին նորից երևում էր «եղբոր» կերպարանքը, մի մեծ ծրար կռնատակին, ձմեռ ու ամառ ռետինե կրկնակոշիկներով։

Իսկ ի՞նչ է եղել Օբլոմովը։ Որտե՞ղ է նա։ Որտե՞ղ. մերձակա գերեզմանատանը՝ համեստ անշունչակալի ներքո, թփերի միջև, անդորրության մեջ հանգչում է նրա մարմինը։ Բարեկամական ձեռքով տնկված յասամանի ճյուղերը նիրհում են գերեզմանի վրա, մեկ էլ՝ անվրդով բուրում է օշինդրը։ Թվում է, թե խաղաղության հրեշտակն ինքն է պահպանում նրա քունը։

Որքան էլ աչալրջությամբ էր պահպանում նրա կյանքի ամեն մի վայրկյանը կնոջ սիրող աչքը, բայց հավիտենական հանգիստը, մշտական խաղաղությունն ու ծուլորեն օրեց օր սողալը կանգնեցրին կյանքի մեքենան։ Իլյա Իլյիչը մեռավ, ըստ երևույթին, առանց ցավի, առանց տանջանքների, կարծես կանգ առավ ժամացույցը, որ մոռացել էին լարել։

Ոչ ոք չտեսավ նրա վերջին՝ բոպեները, չլսեց մահամերձ տնքոցը։ Կաթվածահարությունը կրկնվեց մեկ անգամ ևս, մի տարի անց, և նորից բարեհաջող անցավ. միայն Իլյա Իլյիչը դարձավ դժգույն, թույլ, քիչ էր ուտում, սկսեց քիչ դուրս գալ պարտեզ և ավելի ու ավելի լռակյաց ու մտախոհ դարձավ, երբեմն նույնիսկ լաց էր լինում։ Նա նախազգում էր մոտակա մահը և վախենում էր նրանից։

Նա մի քանի անգամ իրեն վատ զգաց և անցավ։ Մի անգամ էլ, առավոտյան, Ագաֆյա Մատվեևնան ըստ սովորականի ուրճ էր բերում նրա համար և՝ գտավ նրան հեզ հանգչած մահվան մահճում, ինչպես քնի անկողնում, միայն գլուխն էր մի քիչ շարժվել բարձի վրայից, մեկ էլ՝ ձեռքը ջղաձգորեն սեղմված էր սրտին, որտեղ, ըստ երևույթին, կենտրոնացել ու կանգ էր առել արյունը։

Երեք տարի է՝ այրիացել է Ագաֆյա Մատվեևնան, այդ ժամանակամիջոցում ամեն ինչ դարձել էր առաջվա պես։ Եղբայրը կապալներով էր զբաղվում, բայց քայքայված և մի կերպ, զանազան խորամանկություններով ու երկրպագություններով ընդունվեց քարտուղարի նախկին պաշտոնին այն գրասենյակում, «որտեղ գրի են առնում գյուղացիներին», և նորից ոտքով պաշտոնավայրն էր գնում և տուն բերում քսանհինգկոպեկանոցներ, հիսունկոպեկանոցներ և աբասանոցներ, նրանցով լցնելով իր խոր պահված անդունդը։ Մկվեց

նույնպիսի կոպիտ, պարզ, բայց յուղոտ ու առատ կյանք, ինչպես առաջները, նախքան Օբլոմովը։

Տանը առաջնակարգ դեր էր խաղում եղբոր կինը՝ Իրինա Պանտելեևնան, այսինքն՝ նա իրեն իրավունք էր վերապահում ուշ վեր կենալ, երեք անգամ սուրճ խմել, օրական երեք անգամ զգեստը փոխել և տնտեսության մեջ միայն մի բանի հետևել. որպեսզի իր շրջազգեստները որքան կարելի է պինդ օսլայված լինեն։ Ուրիշ ոչ մի բանի նա չէր խառնվում, և Ագաֆյա Մատվեևնան, առաջվա նման, կենդանի ճոճանակ էր տան մեջ, նա էր հսկում խոհանոցին ու սեղանին, թեյ ու սուրճ էր խմեցնում, կարում էր, նայում էր սպիտակեղենը, երեխաներին, հսկում էր Ակուլինային և դռնապանին։

Բայց ինչո՞ւ է այդպես։ Չէ՞ որ նա տիկին Օբլոմովա է, կալվածատիրուհի. նա կարող էր ապրել առանձին, անկախ, ոչ ոքի և ոչ մի բանի կարիք չզգալով։ Ի՞նչը կարող էր հարկադրել նրան իր վրա վերցնել ուրիշի տնտեսության բեռը, հոգալ ուրիշի երեխաների մասին, այն բոլոր մանդուքների մասին, որոնց իրեն դատապարտում է կինը կա՛մ սիրուց դրդված, ընտանեկան կապերի սրբազան պարտականությունից, կա՛մ օրական մի կտոր հաց ձեռք բերելու համար։ Որտե՞ղ են Զախարը, Անիսյան, նրա ծառաներն ըստ բոլոր իրավունքների։ Որտե՞ղ է, վերջապես, նրա ամուսնու թողած կենդանի գրավականը, փոքրիկ Անդրյուշան։ Որտե՞ղ են նրա առաջին ամուսնուց մնացած երեխաները։

Նրա երեխաները դասավորվել էին, այսինքն՝ Վանյուշան վերջացրել էր գիտությունների դասընթացը և ծառայության էր մտել, Մաշենկան ամուսնացել էր ինչ-որ պետական տան վերակացուի հետ, իսկ Անդրյուշկային խնդրել-տարել էին կրթություն տալու Շտոլցն ու նրա կինը և նրան իրենց ընտանիքի անդամ էին համարում։ Ագաֆյա Մատվեևնան իր երկու առաջին երեխաների բախտը երբեք չէր հավասարեցնում և չէր խառնում Անդրյուշայի վիճակի հետ, թեև իր սրտում, գուցեև անգիտակցաբար, նրանց բոլորին էլ հավասար տեղ էր տալիս։ Բայց Անդրյուշայի կրթությունը, կենսաձևը, ապագա կյանքը նա ամբողջ մի անդունդով բաժանում էր Վանյուշայի և Մաշենկայի կյանքից։

— Նրանք ի՞նչ են որ։ Նույնպիսի մոխրոտներ, ինչպես ես ինքս,— անփութորեն ասում էր նա,— նրանք ծնվել են նեղության մեջ, իսկ սա,— ավելացնում էր նա գրեթե հարգանքով Անդրյուշայի մասին և մի փոքր, եթե ոչ վեհերոտությամբ, ապա զգուշությամբ փաղաքշելով նրան,— սա՝ աղա՛յի՛ զավակ է։ Ա՛յ, ինչպես սպիտակ է նա, թութուշիկ. ի՞նչ փոքրիկ թաթիկներ ու տոտիկներ ունի, իսկ մազերը կարծես մետաքս լինեն։ Հանգուցյալին է քաշել ամբողջովին։

Այդ պատճառով էլ նա առանց առարկության, մինչև անգամ որոշ ուրախությամբ, համաձայնեց Շտոլցի առաջարկությանը, որ նա Անդրյուշային վերցնի կրթություն տալու, ենթադրելով, որ այնտեղ է նրա իսկական տեղը և ոչ թե այստեղ. «սև կյանքի մեջ՝ նրա քեռու կեղտոտ տղաների՝ իր եղբորորդիների հետ։

Օբլոմովի մահից հետո մոտ կես տարի նա Անիսյայի և Զախարի հետ տանն էր ապրում, կրելով իր վիշտը։ Նա շատ գնալուց շավիղ էր հարթել դեպի ամուսնու գերեզմանը և լաց լինելուց կուրացել էր, համարյա ոչինչ չէր ուտում, չէր խմում, սնվում էր միայն թեյով և հաճախ գիշերներն էլ աչք չէր խփում և բոլորովին ուժասպառվել էր։ Նա երբեք ոչ ոքի չէր գանգատվում և, կարծես, քանի ավելի հեռանում էր անցյալի բոպեից, այնքան ավելի ինքնամփոփ էր դառնում, ամփոփվում էր իր վշտի մեջ և առանձնանում բոլորից, մինչև անգամ Անիսյայից։ Ոչ ոք չգիտեր, թե ինչ էր կատարվում նրա հոգում։

— Իսկ ձեր տանտիկինը շարունակում է սգալ ամուսնուն— շուկայում խոհարարուհուն ասում էր խանութպանը, որից տան համար մթերքներ էին առնում։

— Շարունակ տխուր է ամուսնու պատճառով,— ասում էր ստարոստան նշխարագործուհուն՝ մատնանշելով Ագաֆյա Մատվեևնային գերեզմանատան ճկեղեցում, ուր ամեն շաբաթ անմխիթար այրին գալիս էր աղոթելու և լաց լինելու։

— Շարունակում է մորմոքվել,— խոսում էին եղբոր տանը։

Մի անգամ հանկարծ եղբոր ամբողջ ընտանիքը, երեխաների, մինչև իսկ Տարանտևի հետ միասին արշավանք կատարեց նրա մոտ. կարեկցության պատրվակով։ Սկսեցին մխիթարական գոհիկ խոսքերը, խորհուրդները «չկործանելու իրեն՝ երեխաների համար պահելու». այն ամենը, ինչ նրան ասված էր տասնհինգ տարի առաջ, առաջին ամուսնու մահվան առթիվ, և ինչը այն ժամանակ ցանկալի ներգործություն էր ունեցել, իսկ այժմ ինչ-որ պատճառով նրա մեջ թախիծ ու զզվանք էր առաջացնում։

Նա իրեն շատ ավելի լավ զգաց, երբ սկսեցին ուրիշ բանի մասին խոսել և հայտարարեցին, որ հիմա կարող են նորից միասին ապրել, որ նրա համար էլ հեշտ կլինի «յուրայինների մեջ դարդ քաշել», և նրանց համար էլ լավ կլինի, որովհետև ոչ ոք նրա նման չի կարող տունը կարգին պահել։

Նա ժամանակ խնդրեց մտածելու, հետո մի երկու ամիս էլ մորմոքվեց և, վերջապես, համաձայնեց միասին ապրելու։ Հենց այդ ժամանակ Շտոլցը Անդրյուշային վերցրեց իր մոտ, և նա մենակ մնաց։

Ահա նա, մուգ գույնի զգեստով, բրդե սև գլխաշորը պարանոցին, գնում է սենյակից խոհանոց, ստվերի նման, առաջվա պես բաց է անում և փակում է պահարանները, կարում է, արդուկում հագուստները, բայց հանդարտ, առանց եռանդի, խոսում է կարծես ակամա, ցած ձայնով և առաջվա պես չի նայում շուրջը մի առարկայից մյուսը անփույթ վազող աչքերով, այլ նայում է կենտրոնացած արտահայտությամբ, թաքնված ներքին իմաստն աչքերում։ Այդ միտքն անտեսանելի կերպով նստեց նրա դեմքին, թվում է թե, այն ակնթարթին, երբ նա գիտակցորեն և երկար դիտում էր իր ամուսնու մեռած դեմքը, և այն ժամանակվանից այդ միտքն այլևս չէր հեռանում նրանից։

Նա ման էր գալիս տան մեջ, ձեռքերով անում ամեն բան, ինչ որ հարկավոր էր, բայց նրա միտքը չէր մասնակցում։ Ամուսնու դիակի վրա, նրան՝ կորցնելով, նա, կարծես, հանկարծ ըմբռնեց իր կյանքը և մտմտաց նրա նշանակության մասին, և այդ մտախոհությունը ստվերի նման ընդմիշտ մընաց դեմքին։ Հետո՝ երկար լաց լինելով հովացնելով կենդանի վիշտը, նա կենտրոնացավ կորուստի գիտակցության վրա.

ամեն այլ բան մեռավ նրա համար, բացի փոքրիկ Անդրյուշայից։ Միայն երբ տեսնում էր նրան, իր մեջ կարծես արթնանում էին կյանքի նշանները, դիմագծերն աշխուժանում էին, աչքերը լցվում էին ուրախության փայլով և հետո՝ հիշողությունների արցունքներով։

Նա օտար էր իր ամբողջ շրջապատին. կբարկանար արդյոք եղբայրը զուր ծախսած կամ լավ չսակարկած ռուբլու համար, տակը այրած տապակայի համար, ոչ թարմ ձկան համար, կնեղանար հարսը թույլ օսլայած շրջազգեստի համար, ոչ թունդ և սառը թեյի համար, կոպիտ խոսքեր կասեր հաստլիկ խոհարարուհին, Ագաֆյա Մատվեևնան ոչինչ չի նկատում, կարծես խոսքը նրա մասին չէ, չի լսում մինչև անգամ խայթիչ շշնջոցը. «Տիկի՜նը, կալվածատիրուհի՜ն...»

Նա ամեն ինչի պատասխանում է իր վշտի արժանապատվությամբ և հնազանդ լռությամբ։

Ընդհակառակը, ծննդյան տոներին, զատկին, բարեկենդանի ուրախ երեկոներին, երբ տանը բոլորը հրճվում են, երգում, ուտում ու խմում, նա հանկարծ, ընդհանուր ուրախության միջոցին, ջերմ արցունքներ է թափում և իր անկյունը քաշվում։

Հետո նորից է կենտրոնանում և երբեմն եղբոր ու նրա կնոջ վրա նայում է կարծես հպարտությամբ, զզջումով։

Նա հասկացավ, որ իր կյանքը ցոլացել ու անց է կացել որ աստված նրա կյանքի մեջ հոգի դրեց և նորից հանեց այն, որ արևը վառվեց նրա մեջ և ընդմիշտ մարեց... Ճիշտ է՝ ընդմիշտ. բայց դրա փոխարեն ընդմիշտ էլ իմաստավորվեց նաև նրա կյանքը. այժմ նա գիտեր արդեն, թե ինչու է ապրել ինքը և որ իզուր չի ապրել։

Նա սիրում էր այնպես լիարժեք ու շատ. սիրում էր «Օբլոմովին՝ որպես սիրեկանի, որպես ամուսնու և որպես բարինի. միայն թե այդ բանը նա երբեք չէր կարող որևէ մեկին պատմել, ինչպես և առաջ։ Եվ իր շուրջն եղածներից ոչ ոք նրան չէր հասկանա։ Որտեղի՞ց պետք է նա լեզու գտներ։ Եղբոր, Տարանտևի, հարսի բառապաշարում այդպիսի խոս-

քեր չկային, որովհետև հասկացողություններն էլ չկային։ Միայն Իլյա Իլյիչը կհասկանար նրան, բայց ինքը նրա մոտ երբեք չէր արտահայտվում, որովհետև այն ժամանակ ինքն էլ չէր հասկանում և չէր կարողանում։

Տարիներ անցնելով՝ նա իր անցյալը հասկանում էր ավելի շատ և ավելի պարզ, և ավելի խորն էր թաքցնում, ավելի ու ավելի լռակյաց ու կենտրոնացած էր դառնում։ Նրա ամբողջ կյանքի վրա տարածվեցին մի ակնթարթի նման թռած յոթ տարվա ճառագայթները, խաղաղ լույսը, և նա ասես ցանկանալու բան չուներ, էլ գնալու տեղ չուներ։

Միայն երբ ձմռանը Շտոլցը գալիս էր գյուղից, նա վազում էր տուն և ագահ աչքերով նայում Անդրյուշային, քնքուշ ամաչկոտությամբ փայփայում նրան և ապա ուզում էր որևէ բան ասել Անդրեյ Իվանովիչին, շնորհակալություն հայտնել նրան։ Վերջապես, նրա առաջ բաց անել ամեն ինչ։ ամեն ինչ որ կենտրոնացել և անմեկին ապրում էր նրա սրտում։ Նա կհասկանար, բայց Ագաֆյա Մատվեևնան չգիտի ինչպես անի և միայն նեռվում էր դեպի Օլգան, շրթունքները ճպում էր նրա ձեռքին և տաք արցունքների այնպիսի հեղեղ թափում, որ Օլգան էլ նրա հետ միասին լաց էր լինում, իսկ Անդրեյը, հուզված, շտապ հեռանում էր սենյակից։

Նրանց բոլորին կապում էր մի ընդհանուր համակրություն, մի հիշողություն հանգուցյալի բյուրեղի նման մաքուր հոգու մասին։ Նրանք խնդրում-համոզում էին նրան իրենց հետ գյուղ գնալ, միասին ապրել, Անդրյուշայի կողքին։ բայց նա մի բան էր կրկնում.— Որտեղ հնվել ենք, կյանքներս անցկացրել, այնտեղ էլ պետք է մեռնենք։

Զուր էր Շտոլցը նրան հաշիվ ոալիս կալվածքի կառավարման մասին, ուղարկում նրան հասանելիք եկամուտը. նա բոլորը վերադարձնում էր, խնդրում պահել Անդրյուշայի համար։

— Դա նրանն է և ոչ թե իմը,— համառորեն ջնդում էր նա,— նա բարին է, իսկ ես այսպես էլ կապրեմ։

XI

Մի անգամ, կեսօրին՝ մոտ, Վիբորգյան քաղաքամասում, փայտե մայթերի վրայով երկու պարոն էին անցնում. նրանց ետևից հանդարտ գալիս էր կառքը։ Նրանցից մեկը Շտոլցն էր, մյուսը նրա բարեկամը՝ գրող, գեր, ապատիկ դեմքով, մտախոհ, կարծես քնակոլոլ աչքերով։ Նրանք հասան մի եկեղեցու. պատարագը վերջացավ և ժողովուրդը դուրս թափվեց փողոց. բոլորից առաջ մուրացկանները։ Նրանց հավաքածուն մեծ էր և բազմատեսակ։

— Կուզենայի իմանալ՝ որտեղի՞ց են առաջ գալիս մուրացկանները,— ասաց գրողը՝ նայելով մուրացկաններին։

— Ինչպե՞ս թե որտեղից։ Դուրս են սողում զանազան ճեղքերից ու անկյուններից...

— Ես այդ չեմ հարցնում,— առարկեց գրողը,— ես կուզենայի իմանալ, ինչպե՞ս կարելի է մուրացկան դառնալ, այդ դրության մեջ ընկնել։ Արդյոք դա հանկա՞րծ է կատարվում, թե հետզհետե, անկեղծորե՞ն, թե կեղծ...

— Ինչի՞դ է պետք։ Չլինի՞ ուզում ես «Mystères de Pèterbyrg»[1], գրել։

— Գուցե...— ծուլորեն հորանջելով ասաց գրողը։

— Այ քեզ մի առիթ. հարցրու, որին ուզում ես. մի արծաթ մանեթով նա քեզ կծախի իր ամբողջ պատմությունը, իսկ դու գրիր այն և վերավաճառիր օգուտով։ Ահա մի ծերունի, կարծես՝ ամենանորմալ մուրացկանի մի տիպ։ Է՛յ, ծերո՛ւկ։ Այստե՛ղ արի։

Ծերունին շուտ եկավ կանչին, վերցրեց գլխարկը և մոտեցավ նրանց։

— Ողորմա՛ծ պարոններ,— ասաց նա խռպոտ ձայնով։—

[1] «Պետերբուրգի գաղտնիքները» (Ֆր.)։ Շտոլցը նկատի ունի ֆրանսիացի գրող է. Սյուի «Փարիզի գաղտնիքները» վեպի բազմաթիվ ընդօրինակումները։

Օգնեցեք երեսուն ճակատամարտերում խեղանդամ դարձած խեղճ, ծերացած զինվորին...

— Զախա՞ր,— ասաց Շտոլցը զարմանքով։— Դո՞ւ ես։

Զախարը հանկարծ լռեց, հետո աչքերը ձեռքով արևից պաշտպանելով՝ սևեռակի՞նայեց Շտոլցին։

— Ներեցեք, ձերդ գերազանցություն, չեմ՞ ճանաչում... բոլորովի՞ն կուրացել եմ։

— Մոռացել ես քո բարինի բարեկամ Շտոլցին,— կշտամբեց Շտոլցը։

— Ա՜խ, ա՜խ, տեր իմ, Անդրեյ Իվանիչ։ Տե՜ր աստված. կուրությունը հաղթահարե՞լ է։ Տե՜ր իմ, հարազա՜տ հայր։

Նա իրար անցավ, Շտոլցի ձեռքն էր փնտրում, և չգտնելով՝ համբուրեց նրա հագուստի փեշը։

— Աստված ինձ, նզովված շանս, այսպիսի ուրախ օրվա արժանի արեց...— աղաղակեց նա՝ ոչ այն է լաց լինելով, ոչ այն է ծիծաղելով։

Նրա ամբողջ դեմքը կարծես դաղած էր բոսորագույն կնիքով, ճակատից մինչև կզակը։ Քիթը, բացի դրանից, ծածկված էր կապույտ գույնով։ Գլուխը բոլորովին ճաղատ էր. այտամորուսները առաջվա նման մեծ էին, բայց տրորված ու խճճված, թաղիքի նման, կարծես յուրաքանչյուրի մեջ մի գունդ ձյուն էր դրված։ Նա հագին ուներ մի հին, բոլորովին գույնը գցած շինել, որի մի փեշը չկար. բոբիկ ոտքերին ուներ հին մաշված կրկնակոշիկներ, ձեռքին բռնել էր բոլորովին քրքրված մորթե գլխարկը։

— Ա՜խ, ողորմած աստված։ Ի՜նչ շնորհ արեց ինձ այսօր տոնի համար...

— Այդ ի՞նչ վիճակի մեջ ես։ Ինչո՞ւ։ Քե՞զ ամաչում,— հարցրեց Շտոլցը խստորեն։

— Ա՜խ, տեր իմ, Անդրեյ Իվանիչ։ Ի՞նչ անեմ— ծանր հառաչելով ասաց Զախարը։— Ինչո՞վ ապրեմ։ Այն ժամանակ, երբ Անիսյան կենդանի էր, ես չէի թափառում, մի կտոր հաց կար. իսկ երբ նա խոլերայից մեռավ, աստված հոգին լուսա-

վորի, տիրուհու եղբայրը չուզեցավ ինձ պահել, Ձրիակեր էին կանչում։ Միխեյ Անդրեյիչ Տարանտևը առիթ էր փնտրում, երբ կողքից անցնում էի, ետևից ոտքով խփում էր. հնարավո՞ր չէր ապրել։ Ինչքան նախատինք եմ կրել։ Հավատո՞ւմ եք, պարոն, հացը կոկորդովս կուլ չէր գնում։ Եթե տիրուհին չըլիներ, աստված նրան առողջությո՞ւն տա,— ավելացրեց Զախարը խաչակնքելով երեսը,— ես վաղուց սառնամանիքի բաժին դարձած կլինեի։ Նա ձմեռը հագնելու շոր էր տալիս և հաց, որքան ուզես, և վառարանի վրա էլ մի անկյուն. բոլորը տալիս էր իր ողորմածության շնորհիվ։ Բայց իմ պատճառով նրան էլ սկսեցին նախատել, և ես հեռացա, ուր աչքս կտրում էր։ Ահա երկրորդ տարին է, որ շարշարվում եմ...

— Ինչո՞ւ պաշտոնի չէիր մտնում,— հարցրեց Շտոլցը։

— Հիմա որտե՞ղ պաշտոն կգտնես, տեր իմ, Անդրեյ Իվանիչ։ Երկու տեղ եղա, բայց չկարողացա հավանեցնել։ Հիմա ամեն ինչ առաջվա նման չէ. վատացել է։ Լակեյի պաշտոնի համար գրագետ մարդ են պահանջում. և երևելի պարոննեբի մոտ էլ այլևս այնպես չէ, որ նախասենյակը լիքը լինի մարդկանցով։ Ամեն տեղ մի հոգի է, քիչ է պատահում, որ երկուսը լինեն։ Կոշիկներն իրենք են հանում, ինչ-որ մեքենա են հնարել,— շարունակում էր Զախարը մորմոքված։— Ամո՞թ, խայտառակությո՞ւն, կորչո՞ւմ է աղայությունը։

Նա հառաչեց։

— Ա՛յ, ծառայության մտա գերմանացի վաճառականի մոտ, պետք է նախասենյակում նստեի. ամեն բան լավ էր գնում, իսկ նա ինձ ուղարկեց ծառայելու բուֆետո՞ւմ։ Դա իմ գո՞րծն է։ Մի անգամ տանում էի ամանեղենը, բոհեմական են ասում՝ ինչ է, հատակները հարթ, սլլան. գրո՞ղը տանի նրանց։ Հանկարծ ոտքերս զանազան կողմեր գնացին, ամբողջ ամանեղենը մատուցարանի հետ միասին, ինչպես կար, շրխկաց գետնին. դրա համար էլ դուրս արին։ Մի ուրիշ անգամ կերպարանքս դուր եկավ մի պառավ կոմսուհու. «տեսքով պատկառելի է»— ասաց և վերցրեց որպես շվեյցար։

Լավ, հին պաշտոնդ է, նստիր աթոռի վրա որքան կարելի է կարևոր դիրք տալով քեզ, ոտդ դիր ոտիդ վրա, տարուբերիր այն, բայց միանգամից մի՛ պատասխանի, երբ գալիս է մեկը, այլ սկզբում մոնչա, իսկ հետո ներս թող կամ վզակոթին տուր, ինչպես որ հարկավոր լինի. իսկ լավ հյուրերին, հայտնի բան է, գուրզով աջ ձեռքով ձախ ուսից դեպի հակառակը շարժելով համեցե՛ք անել, ա՛յ, այսպես,— Զախարը ձեռքով հակառակ շարժում արեց։— Դա դուրեկա՞ն է, ի՞նչ ասել կուզի։— Բայց տիրուհուն գոհացնել հնարավոր չէր, աստված նրա հետ։ Մի անգամ նայեց իմ խուցը, փայտոջիլ տեսավ, ոտքերը գետնին խփեց, բղավոցը դրեց, կարծես ե՞ս եմ հընարել փայտոջիլներին։ Ե՞րբ է առանց փայտոջիլի տնտեսություն լինում որ։ Մի ուրիշ անգամ անց էր կենում մոտովս, նրան թվաց, թե՝ ինձնից արաղի հոտ է գալիս... Ճիշտ եմ ասում՝ այդպիսի՞ տիրուհի էր։ Եվ դուրս արեց։

— Չէ՞ որ իսկապես հոտը գալիս է, այնպե՞ս է փչում,— ասաց Շտոլցը։

— Դարդից է, տեր իմ, Անդրեյ Իվանիչ, աստված վկա, դարդից է,— դառն կերպով կնճռոտվելով ասաց Զախարը խրոպոտ ձայնով։— Փորձեցի կառապանի պաշտոն էլ կատարել։ Վարձվեցի տիրոջ մոտ, բայց ոտքերս ցուրտը տարավ. ուժերս պակասել են, ծերացել եմ։ Շատ չար ձի պատահեց. մի անգամ կառեթի տակ ընկավ, քիչ մնաց ինձ ջարդուխուրդ աներ. մի այլ անգամ ոտնատակ տվեց մի պառավ կնոջ, տարան ոստիկանական մասը...

— Դե, բավական է, մի՛ թափառի և հարբեցողություն մի՛ անի. արի ինձ մոտ, ես քեզ մի անկյուն կտամ, գյուղ կգնանք, լսո՞ւմ ես։

— Լսում եմ, տեր իմ, Անդրեյ Իվանիչ, բայց...

Նա հառաչեց։

— Բայց ցանկություն չկա այստեղից, գերեզմանից հեռանալու։ Մեզ կերակրողը, Իլյա Իլյիչը,— ողբաց նա,— այսօր

նորից հիշել եմ նրան, աստված հոգին լուսավորի։ Այդպիսի բարինի խլեց աստված։ Ապրում էր մարդկանց ուրախության համար, թող հարյուր տարի էլ ապրեր...— հեծկլտում և ասում էր Զախարը կնճռոտվելով։— Ա՛յ, այսօր գնացել էի նրա գերեզմանը տեսնելու. հենց որ այս կողմերն եմ գալիս, իսկույն գնում եմ այնտեղ, նստում եմ ու նստած մնում, արտասուքներս հոսում են ու հոսում... Երբ այդպես երբեմն մտքերի մեջ եմ ընկնում, ամեն ինչ հանդարտվում է, այնպես է թվում, կարծես կանչում է՝ «Զախա՛ր, Զախա՛ր»։ Նույնիսկ սարսո՛ւռ է անցնում մարդու մարմնով։ Այդպիսի՛ բարին գտնել չի լինի։ Իսկ ձեզ, ինչպե՞ս էր սիրում, տե՛ր աստված, նրան քո արքայությանն արժանի արա։

— Դե, կգաս Անդրյուշային տեսնելու. ես կպատվիրեմ քեզ կերակրել, հագցնել, իսկ հետո՝ ինչպես կուզես,— ասաց Շտոլցը և փող տվեց նրան։

— Կգամ. ինչպե՞ս կարելի է չգալ և Անդրեյ Իլյիչին չտեսնել։ Երևի մեծացե՞լ է։ Տե՛ր աստված։ Ի՞նչ ուրախության արժանի արեց ինձ։ Կգամ, տեր իմ, աստված ձեզ քաջառողջություն և անհամար տարիներ պարգևե...— մրթմրթաց Զախարը հեռացող կառքի ետևից։

— Է՛, լսեցի՞ր այդ մուրացկանի պատմությունը,— ասաց Շտոլցն իր բարեկամին։

— Իսկ այդ ի՞նչ Իլյա Իլյիչ է, որի մասին նա հիշատակում էր,— հարցրեց գրողը։

— Օբլոմովը. ես շատ անգամ եմ ասել քեզ նրա մասին։

— Այո՛, անունը հիշում եմ. նա քո ընկերն ու բարեկամն էր։ Ի՞նչ եղավ նրա վերջը։

— Կործանվեց, կորավ իզուր։

Շտոլցը հառաչեց և մտածմունքի մեջ ընկավ։

— Իսկ ուրիշներից հիմար չէր, հոգին ապակու նման մաքուր էր ու պարզ, ազնիվ, քնքուշ, և՝ կորա՛վ։

— Ինչի՞ համար։ Պատճառն ի՞նչ էր։

— Պատճա՞ռը... ի՞նչ պատճառ։ Օբլոմովականությո՛ւն,— ասաց Շտոլցը։

— Օբլոմովականությո՛ւն,— տարակուսանքով կրկնեց գրողը։— Ի՞նչ բան է դա։

— Իսկույն կպատմեմ քեզ. թող մի մտքերս ու հիշողություններս ամփոփեմ։ Իսկ դու գրի առ. գուցե, որևէ մեկին պետք գա։

Եվ Շտոլցը պատմեց նրան՝ ինչ որ այստեղ գրված է։

1857 և 1858 թթ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս 5
Երկրորդ մաս 194
Երրորդ մաս 373
Չորրորդ մաս 486

Իվան Ալեքսանդրովիչ Գոնչարով
ՕԲԼՈՄՈՎ
Վեպ

Иван Александрович Гончаров
ОБЛОМОВ
Роман
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван—1981

Խմբագիր՝ Գ. Գ. Հովսեփյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլճակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Ս. Կարապետյան

ИБ № 2949

Հանձնված է շարվածքի 26.06.81։ Ստորագրված է տպագրության 8.10.81։
Ֆորմատ 80×108¹/₃₂։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն բարձր։ 34.02 պայմ. տպ. մամ., հրատ. 29.75 մամ.։ Պատվեր 3010։ Տպաքանակ 50 000։ Գինը՝ 2 ռ. 80 կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.